

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿ. ԳԱԶԱՓՅԱՆ

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՏՈՐ Ը.
ԺԹ ԴԱՐ

.4(47.925)
Գ-17

910.4(47.925)
Ա-17
10 NOV 2011

ՀԱԿՈ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՑ

ՀՈՎՀ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՏՈՐ Զ.

ԺԹ. ԴԱՐԻ ԱՒՍՏՐԻՆ ՔՍԱՆԱՄՅԱԿ

(1800 — 1820)

3ԹԿՈ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1934

30 MAY 2013

22159

Պետհրատի տպարան
Գլավլիտ № 9208(բ).
Պատվ. № 1041
Տիրաժ 1500

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՐՄԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

13004-53

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ուղեգրություններին» ներկա Զ. հատորը պարունակում է XIX դարի առաջին քսան տարիների չվերապացի ուղեգրները, թեև հակառակ այդքան սակավ տարիների և հակառակ հատորիս ծավալության՝ պարտավորված ենք տեղի սղության պատճառով, այդ ժամանակամիջոցի մի քանի ուղեգրություններ հետաձգել հաջորդ հատորում զետեղելու համար։ Այսպես, այս հատորից դուրս են մնում կլապրոթի (1807—1808), Սըր Հարաֆորդ Ջոնս Լորդ Բրիջի (1811), Ջան Մակդոնալդ կինների (1813—1814), Դուպրեի (1819) և ուրիշներու։ Այս առթիվ ավելորդ չենք համարում հայտնել, որ առաջին հատորում հակառակ մեր ցանկության մեզ չեր հաջողվել տալ Ոգերիկի և Փորտանուսի ուղեգրությունները, բնագրերը մեր տրամադրության տակ չունենալու պատճառով, սակայն թե այդ հատորում և թե հաջորդական հատորներում բաց մնացած հեղինակները ապագայում ամփոփվելու են հավելվածական առանձին մի գրքում։

Վերջիվերջ ավելի պարզ լինի մեր այս աշխատության բնույթը, հայտնում ենք մեր հարգելի ընթերցողներին, որ «Ուղեգրություններ»ի այս շարքը պարունակում է միմիայն չվերապացի ուղեգիրները։ Սակայն մենք անուշադրության չենք մատնել նաև հին հեղինակները և արար ու այլ արևելքցի ուղեգիրները, որոնց գործերի հավաքման ձեռնարկված և արդեն ապագայում նրանց թարգմանությունն ու համագրությունը կհանձնվի հմուտ ու ձեռնհաս գիտական աշխատավորների։ Այս ուղղությամբ արդեն առաջին քայլը առնված և և ներկա տարում Մելքոնյան ֆոնդի հրա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՐՄԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

տարակութեան լուսս կը տանի Պրոֆ. Լեոն Մելիքսեթբեկի «Վրաց պրլուրները հայերի և Հայաստանի մասին» աշխատութեան Ա. հատորը։

Պարտք եմ համարում իմ խոր շնորհակալութիւնը հայտնել այն անձնաւորութիւններին, որոնք նամակով կամ գրախոսականով գնահատական ու խրախուսանքի խոսքեր ունեցին «Ուղեգրութիւններս»-ի Ա. Հատորի հրատարակութեան առթիվ, և մանաւանդ չեմ կարող չշնչել իմ անկեղծ շնորհակալութիւնները նախկին Լուսժողկոմ ընկ. Դրաստամատ Սիմոնեանին, առանց որի անվերապահ աջակցութեան «Ուղեգրութիւնների» հրատարակութեան հարատեւութիւնը կարող էր շատ դժվարութիւնների մատնվել։

Փետրվարի 12
1934 թ.

ՀՈՎՀ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ Հովհ. Հակոբյան	III
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՔ. ԴԱՐԻ ՄԻՒՏՔԻՆ ՅԵՎ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՆԵՐԱԾԱԿԱՆ)	1—25
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԸՐ ՋՈՆ ՄԱԼԿՈԼՄԻ	26
Առաջին այցելութիւնը (1800)	26—52
Յերկրորդ այցելութիւնը (1810)	53—73
ՄԱԼԿՈԼՄԻ «ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»	74
Ծաթ Ալի Շահ	74—78
Իշխանութեան իրաւունքը Պարսկաստանում	78—79
Պարսկաստանի բնակչութիւնը	79—81
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՆԵՐԱԼ ԴԱՐԴԱՆԻ (1807 և 1808)	82
Ա. Կ. Պոլից Պարսկաստան	84—105
Բ. Պարսկաստանում	106—119
Գ. Թեհրանում	120—135
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԻԵՐ ԱՄԵԴԷ ԺՈՒԲԵՐԻ (1805—1806)	137—140
ԴԵՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ	
Գլուխ Ա.	141—146
Գլուխ Բ.	147—154
Գլուխ Գ.	155—159
Գլուխ Դ.	160—166
Գլուխ Ե.	167—172
Գլուխ Զ.	173—176
Գլուխ Է.	177—184
Գլուխ Ը.	185—189
Գլուխ Թ.	190—196
Գլուխ Ժ.	197—201
Գլուխ ԺԱ.	202—210
Գլուխ ԺԲ.	211—215
Գլուխ ԺԳ.	216—221
Գլուխ ԺԴ.	222—226
ԺՈՒԲԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ	
Գլուխ ԺԵ.	227—231
ՎԵՐԱԴԱՐՁԸ	
Գլուխ ԺԶ.	232—240
Գլուխ ԺԷ.	241—245

ԳԱՐԱԳԱՄՅԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ ԺԸ. . . . . 246—251

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՋՅՈՒՄՈՒ ՄՈՐԻՆԵՐԻ

(Ա. 1808—1809. Բ. 1810—1816) . . . . . 253—255
Ա. Թավրիզից Երզրում . . . . . 256—282
Բ. Երզրումից Ամասիա . . . . . 283—295

ՅԵՐԿՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Թավրիզից Յերևան . . . . . 297—319
Բ. Յերևանից Ղարաքիլիսա . . . . . 320—334
Գ. Ղարաքիլիսայից Թավրիզ . . . . . 335—356
Դ. Վերադարձը . . . . . 357—366
Ե. Նոր Զուգայի հայ գաղութը . . . . . 367—373
Զ. Պարսկական բանակի վերակազմությունը . . . . 374—379
Է. Ռուս-պարսկական բանակցությունները . . . . 380—392
Ը. Հիշատակություններ հայերի մասին . . . . . 393—394

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՖՐԵՅԶԱՆԻ (1812 թ.) . . . . . 395—396

Ա. Թիֆլիսից Յերևան . . . . . 397—413
Բ. Յերևանից Թավրիզ . . . . . 414—423
Գ. Բանակցությունները . . . . . 421—429

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՐ ՈՒԻԼԻՄ ԱՈՒՍԼԵՅԻ (1810—1812) 430—432

Թավրիզից Կ. Պոլիս . . . . . 433—495
Նոր Զուգայի հայերը (ոգոստոս 1811) . . . . . 496—497

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՐԻՑ ՅՕՆ ԿՈՅՆԻՊՈՒԻ (1817) 499

Ա. Կացությունը Վրաստանում . . . . . 500—509
Բ. Յերմոլովի գեսպանությանն ընկնելը . . . . . 510—526
Գ. Յերմոլովի գեսպանությունը Հայաստանում . . . 527—545
Դ. Յերևանից Թավրիզ . . . . . 546—557
Ե. Յերմոլովի և Աբբաս Միրզայի անձնակցությունը . . 558—574
Զ. Հանդիպում Ֆաթ Ալի Շահի հետ . . . . . 575—603
Է. Վերադարձը . . . . . 604—612

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴՆԵՐ. ՋՈՆ ՋՈՆՍԸՆԻ (1817) 613

Ա. Հանդիպում Յերմոլովի գեսպանության . . . . 615—621
Բ. Թավրիզում . . . . . 622—627
Գ. Թավրիզից Յերևան . . . . . 628—640
(Դ. Յերևանից Թիֆլիս) . . . . . 640—656
Ե. Թիֆլիսից Վլադիկավկազ . . . . . 657—672
Զ. Հայերը Նոր Զուգայում . . . . . 673—675

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԲԵՐՏ ԿԵՐ ՓՈՐՏԵՐԻ (1817—1820) . 677—679

Ա. Վլադիկավկազից Թիֆլիս . . . . . 680—711
Բ. Թիֆլիս . . . . . 712—729
Գ. Թիֆլիսից Յերևան . . . . . 730—759
Ե. Յերևան . . . . . 760—769
Զ. Յերևանից Թավրիզ . . . . . 770—783
Է. Նոր Զուգա . . . . . 784—792

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ա. Թավրիզից Յերևան . . . . . 793—813
Բ. Յերևանից Երզրում . . . . . 814—838

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 839—844

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ . 845—848

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ . 849—85

ՅԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ . . . . . 857—884

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

1. Ֆաթ Ալի Շահ (գունավոր նկար կեր Փորտերի) . . . մուտքին
2. Ագնվական պարսկուհի (գունավոր նկար կեր Փորտերի) . . . . . եջ 793-ի դիմաց
3. Ագա Մահամեդ խան (պարսկական մի հին նկարից) 10
4. Վրաստանի թագավոր Հերակլ II 13
5. Ֆաթ Ալի Շահ (պարսկական մի հին նկարից) 31
6. Պիեր Ամեդե Փորեր 136
7. Բայազիդի բերդը (արտ. «Այրարատից») 164
8. Մի խումբ քուրդեր (լուսանկար Յեր. Լալայանի) 176
9. Աբարատ լեռը՝ Բայազիդից (նկար Զեյմս Մորիերի) 179
10. Վանա լճի առափնատանդավերը, Ամանց նավահանգստում . . . 221
11. Սուլթանիե (նկար Զեյմս Մորիերի) 230
12. Խոջաբի բերդը (լուսանկար Յեր. Լալայանի) 233
13. Խոջաբի բերդի դուռը (լուսանկար Յեր. Լալայանի) 235
14. Պարսիկ արքայական ձի (նկար Զեյմս Մորիերի) 251
15. Պարսիկ ազնվականի վրան (նկար Զեյմս Մորիերի) 255
16. Պարսկական նախաճաշ (նկար Զեյմս Մորիերի) 299
17. Պարսիկ նվագածուներ (նկար Զեյմս Մորիերի) 303
18. Քեյհ Մինաշ (նկար Զեյմս Մորիերի) 305
19. Չիրիկի խաղ (նկար Զեյմս Մորիերի) 322
20. Յերեք քուրդ ցեղապետներ (նկար Զեյմս Մորիերի) 336
21. Սեմոնի կղզին (նկար Զեյմս Մորիերի) 343
22. Դեկարդի վանքը (նկար Զեյմս Մորիերի) 345
23. Գառնիի զարդանկարներ (նկար Զեյմս Մորիերի) 347
24. Լորամարզի վարարդություն (նկար Զեյմս Մորիերի) 351
25. Պարսիկ նվագածուհի (նկար Զեյմս Մորիերի) 356
26. Պարսիկ ազնվականի խոնարհությունը (նկար Զեյմս Մորիերի) . 394
27. Թախտ ի Ռավան (նկար Զեյմս Մորիերի) 396
28. Թիֆլիս, մեծ դերեզմանատունից (նկար Ֆրեյզոնի) 398

29. Վայրան Ախոզ Ձիավորներ (նկար Ֆրեյդանի) 408
30. Սանահնի կամուրջը (նկար «Христ. Востокъ», Томъ VI) . . 412
31. Սանահնի կամուրջի արձանագրությունը 413
32. Ջուղայի կամուրջի ափերակները (նկար Ասպլեյի) 443
33. Որխորդի աշտարակի մեսրոպյանները (նկար Ասպլեյի) 445
34. Այրարատ լեռը (նկար Զեյմս Մորիերի) 459
35. Երզրումցի Թուրքեր (նկար Կեր Փորտերի) 482
36. Պարսիկ ուղտավար Խոսանամաճիկ (նկար Կոցեբուե) 498
37. Արարատ Երևանի Մարզերի պարտեզից (նկար Կոցեբուե) . . 541
38. Ջամի Ալի Շահի մուտքը ի Թեհրան (նկար Զեյմս Մորիերի) . . 576
39. Սուլթանիեյի գյուղը (նկար Կեմպեռի) 587
40. Բուրգեր (նկար Ջոնսընի) 614
41. Պարսիկ գյուղացիներ (նկար Ջոնսընի) 617
42. Երվաիներ (նկար Ջոնսընի) 631
43. Արարատ լեռը (նկար Ջոնսընի) 639
44. Աբբաս Միրզա (նկար Կեր Փորտերի) 676
45. Երևանի բերդը և Արարատ՝ նորբից (նկար Կեր Փորտերի) . . 763
46. Արաքսյաի ափերակների հատակագիծը, (նկար Կեր Փորտերի) 771
47. Պարսիկ սարբազ (նկար Կեր Փորտերի) 783
48. Կույսի դերեզմանը (նկար Կեր Փորտերի) 796
49. Տապանաքար Ջուղայում, (նկար Կեր Փորտերի) 797
50. Բազալդի ձորը և Տրպատի դահը, (նկար Կեր Փորտերի) . . . 806
51. Գառնիի հեթանոսական տաճարի ճարտարապետական բեկորները, (նկար Կեր Փորտերի) 807

ՔԱՐՏԵԶՆԵՐ

1. Դևնեբայ Գարգանի ուղեգիծը 83
2. Յերևանի և Նախիջևանի խանությունները 252
3. Զեյմս Մորիերի ուղեգիծը 296
4. Անդրկովկասը XIX դարասկզբին (գունավոր), հատորի վերջում



Բար Պետ Եան

(Եկ. Յեր. Քուրտրի)

Լիթ. Պետուսոյ

Լիթ. Ա. Ե. Դանկո

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԸ. ԴԱՐԻ ՄՈՒՏՔԻՆ ՅԵՎ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ)

Տասնուվեցերորդ դարի վերջին, երբ ֆրանսական բուրժուազիական հեղափոխութիւնը պարտութեան էր մատնում ավատական կարգերը, երբ պատերազմները տարածվում էին Ֆրանսիայի սահմաններից դուրս եվրոպական ամբողջ ցամաքամասի վրա, երբ անգլիական իմպերիալիզմը, իր նորատունկ արդյունաբերութեամբ և իր զորեղ գաղութային քաղաքականութեամբ, իր ամբողջ ծովային ու ցամաքային ուժերը ասպարեզ էր բերում կասեցնելու համար ֆրանսական բուրժուազիայի նվաճումները, անկասկած, Մերձավոր Արևելքն ու Առաջավոր Ասիան չեին կարող դերծ մնալ այդ ընդհանուր իրադարձութիւններից և չենթարկվել իմպերիալիստական այն պետութիւնների քաղաքական ազդեցութիւններին, որոնք Ասիայում գաղութներ ունեին, առևտրական հարաբերութիւններ էին հաստատել և կամ նվաճողական ծրագրեր էին մշակում։

Անգլիան արդեն տեղավորված էր Հնդկաստանում, Ֆրանսիան, Նապոլեոն Բոնապարտի վեհավարութեամբ, ձգտում էր ոչ միայն եվրոպական ցամաքամասին, այլ նաև տարածվել Աֆրիկյան հյուսիսային ծովափնյա երկրներում, տիրել Սուրիային և, իր խնամակալութեան տակ առնելով Պարսկաստանը՝ հարվածել Հնդկաստանի անգլիական կալվածներին։ Մյուս կողմից ցարական Ռուսաստանը վոտք էր կոխել Կովկասի շեմքը և վճռականապես

որոշել էր՝ պահելով Պարսկաստանի ներքին պայքարներից ու ընդհանուր քայքայված կացութիւնից, սերտանալ Անգլիկովկասին ու Հայաստանին և իր սահմանները տարածել առնուազն մինչև Արաքսի ափերը։

Բայց թէև էր քաղաքական կացութիւնը Եվրոպայում ժթ-րդ դարի մուտքին, կարևոր և պատասխանել այս հարցին, ավելի հասկնալու համար Մերձավոր Արևելքի և մասնավորապես Անգլիկովկասի ու Հայաստանի կացութիւնը այդ շրջանին, և այն պայմանները, որոնց մէջ դիվանագիտական ձեռնարկութիւններ էին կատարվում և քաղաքական մեքենայութիւններ էին լարվում Արևելքի մէջ։ Մենք պիտքերի մանրամասնութիւնների մէջ չենք մտնում, միայն բավականանում ենք ուրվագծել այն անցուդարձերը, որոնք լույս են սփռում մեր առաջադրած նյութի վրա։

Բոնապարտը 1798-ին եգիպտական իր արշավանքով, — որի նպատակն էր խորտակել անգլիական տիրապետութիւնը Հնդկաստանում, — ատնում էր մի քանի փայլուն հաղթանակներ։ Սակայն, նրա նավատորմը խորտակվեց Նեղոսի գետաբերանում, անգլիական նավատորմի կողմից, որի հրամանատարն էր Նելսոն։ Նապոլեոնը այս պատճառով էլեց իր բանակը և փախավ Ֆրանսիա։ Պատերազմը եվրոպական ցամաքամասում վերսկսեց։ Դիրեկտորիան փոփոխութեան էր ենթարկել Հիմնադրական կառավարութիւնը և կազմակերպել էր այդ ժամերում, 1798-ին, Հելվետիական Հանրապետութիւնը։ Նա ջնջել էր Պապին Հռոմից և պատրաստվելիս էր իտալական այլ իշխանների, որպեսզի ճանապարհ բանա նոր հանրապետական պետութիւնների։ Յեվրոպական ֆեոդալական պետութիւնները սարսափած էին այս կատարված իրողութիւններից։ Անգլիան, որի շահերին ամենից ավելի վտանգ էր սպառնում, հաջողեց Ռուսաստանի և Ավստրիայի հետ կազմել մի նոր դաշնակցութիւն, և ավելի ուժեղ դիմադրութիւն կազմակերպել Ֆրանսական հարձակողականի դեմ և փոխել պատերազմի բախտը։

Միևս կողմից Ֆրանսական ժողովուրդը հոգնել էր պատերազմից, չէր ցանկանում մարդկային ու նյութական նոր զոհողութիւններ կատարել և անձկանոք սպասում էր հաշտութեան, մինչ Դիրեկտորիան, հակառակ ամենախիստ բռնապետութեան, անկարող էր այլևս ճնշել իր դերքի վրայ զորավիգների մասսաները ձանձրացել ու չէրևս նրին դարձրել նրան։ 1795-ի սահմանադրութեան համաձայն, ամեն տարի Դիրեկտորներից մեկը և Որենսդիր պալատի մեկ հինգերորդը պետք էր փոխվելին, սկսած 1797 թվի գարնանից։ Այդ տարվան ընտրութիւններին Սահմանադրական Միապետականները այնքան մեծ հաջողութիւն էին ձեռք բերել, որ հին Դիրեկտորիան՝ վախենալով Բուրբոնների վերահաստատումից, դիմեց coup d'État-ի։ Նախ, ապահովելով Բոնապարտի և պետական գործերի ազդեցութիւնը, ձերբակալեցին նորընտիր Որենսդիր Պալատի անդամներից հետևողներ և առանց դատավարութեան նրանց աքսորեցին Հարավային Ամերիկա։ Հաջորդ տարին (1798) նույնքան վատ կար ժակոբինների վերակենդանացման, և Դիրեկտորիան դիմեց մի այլ coup d'État-ի, հայտարարելով բազմաթիվ ընտրութիւններ անվավեր, և նրանց տեղ հաստատելով իր կողմնակիցներին։ 1799-ի ընտրութիւնները աննպատակ էին կառավարութեան համար. և պարզ էր, որ տիրապետող դասակարգը դեմ էր տիրող իշխանութեան։

Միաժամանակ նաև պարզ էր, թե կառավարութեան անկումը պետք կատարվեր գործողականութեան ձեռքով։ Սիեյս ընտրվել էր որպես Դիրեկտոր։ Նա ծրագրում էր մի նոր սահմանադրութիւն, ապահովելից վանելու համար իր պատասխանակիցներին։ Նա ակնկալում էր իրագործել իր նպատակը մի քանի հաղթական զորավարների աջակցութեամբ, բայց Նապոլեոնի հանկարծական վերադարձը, մեկուսացրեց իրեն՝ Սիեյսին, և Նապոլեոնը դարձավ գրութեան տերը։ Զինվորները Որենսդրի բոլոր անդամներին վտարեցին սրահից, Բոնապարտի կուսակիցները ջնջեցին Դիրեկտորիան, և ընտրեցին Նապոլեոն Բոնապարտին, Սիեյսին և մի ուրիշ վոր-

պես կոնսուլներ, նրանց հանձնելով նոր սահմանադրության պատասխանատվությունը: Սա կոչվում է Բոնապարտի ներքին հեղափոխություն: Գործադիր իշխանությունը, մանավանդ պատերազմի և խաղաղության ժամանակ, հավաստում էր իր ուրույն վերահսկողությունը խորհրդարանի, և երեք միլիոնից ավելի քվեով Բոնապարտը ընտրվում էր իրական կոնսուլ, և հաստատվում պետական դիկտատուրա:

Փոխանակ խորհրդարանի, պատերազմը ավելի ընդարձակվում էր և Ցավրոպա վերադառնում էր արյան բաղնիքի: 1800-ի կոալիցիան պատճառ գտնելու ինչպես պետական ցրման: Բոնապարտը Մարենգոյի հաղթանակը տարավ ավստրիացիների դեմ Իտալիայում, և գնդապետ Մարոն ջախջախեց ավստրիական մի ուրիշ բանակ Բավարիայի մեջ՝ Հոհենլինդենում: Ավստրիան և Ռուսաստանը հաշտություն կնքեցին, և Նապոլեոնը, կեղծավոր մյուս կերկրների մեջ իր չափավորության մասին տպավորություն գործելու համար, համաձայնվեց վերահաստատել Կամպո Ֆորմիոյի հաշտության պայմանները: Ապա 1802-ին Ֆրանսիա ու Անգլիա գնդերը վար գրին Ամիենսի դաշնագրության, և մի պահ արյունահեղությունը վերջ էր գտնում: Այսպես, Նապոլեոն Բոնապարտը ներկայանում էր վարպես խաղաղության վերահաստատող, «բարեկործիչ» ու արհեստիկ, և այսպիսով շահում էր ժողովրդականություն, խոսում էր մասսաներին և 1804-ին հայտարարում ինքն իրեն «Ֆրանսացիների կայսրը»:

Տարակույս չկա, թե Նապոլեոն 1800-ին ցանկանում էր խաղաղությունը, որպեսզի ամրացնի իր իշխանությունը և վերակազմեր Ֆրանսիան: Իսկ 1802-ին նա իր խորհրդականներին հայտարարում էր, թե ինքը սիրով պետք ընդառաջի պատերազմի և սպասում է դրան: Գործիքյան ունեցող խաղաղությունը, ասում էր նա, միայն պինդապար է: 1804-ին նա հայտարարեց թե Ցավրոպան պետք ունի մի գլուխի, մի կայսեր, որ կառավարի դանազան կերկրները իր սեղակալներով: Նա պղում էր, որ լինելու համար իր բանապետական ուժերի դեմ կռտակվող դժգոհությունները, անհրաժեշտ էր հաղթանակներ ու պինդարական փառք: Մյուս կողմից, մյուս ազգերը պղում էին որ կամ պետք էր յենթարկվեին Նապոլեոնին՝ մշտական հաշտություն հնարավոր պարձնելու համար և կամ պետք դիմեին՝ հաղթանակով վերջ տալու համար իրենց անկախության սպառնացող վտանգին: Նախապատվություն տրվեց պատերազմին: Անգլիան ու Ֆրանսիան վերսկսեցին իրենց պայքարը 1803-ին և գնդերը վար չդրվեցին մինչև Նապոլեոնի անկումը՝ 1814-ին: Հաջորդական տասնյակ տարիներում Նապոլեոն ունեցավ կերեք պատերազմ Ավստրիայի դեմ, կերկու Պրուսիայի, կերկու՝ Ռուսիայի, կերկարատև կռիվ Սպանիայում, և ուրիշ մանր ընդհարումներ:

Յերբ պատերազմը վերսկսեց Անգլիայի հետ, Նապոլեոնը պատրաստեց մի հզոր նավատորմիղ և մի հսկա բանակ Բուլոնիայում և ամրոցջ մի տարի Անգլիան գոնդվում էր արշավանքի սպառնալիքի տակ, չնայած նա կորցներ Մանշի կանալի տիրապետությունը, թեկուզ մի քանի ժամով: Բայց, Նապոլեոնի բոլոր փորձերը՝ Անգլիա արշավելու համար, ի դերև կլան, և 1805 թվին Ավստրիան և Ռուսիան միացան Անգլիային: Նապոլեոնը արագ վճռականությամբ իր բանակները տեղափոխեց կանալից Դանուբ, բնաջինջ արեց կերկու մեծ բանակ Ուլմում և Ավստերլիցում (հոկտեմբերին և դեկտեմբերին), և վարպես հաղթական, մուտք գործելով Վիեննա, պատրաստվեց Ավստրիային նվաստացուցիչ մի հաշտություն, վորով պարտավորվում էր Նապոլեոնին տալ՝ Իտալիայում իր ճնացած հողամասերը, Իլլիրիական նահանգները, ինչպես նաև իր գերմանական կալվածների շատերը:

Պրուսիա հաջողել էր տասնմեկ տարիներից ի վեր պահպանել իր չեզոքությունը, բայց այժմ Նապոլեոնը ստիպեց նրան պատերազմի մտնել և չարդուփշուր արեց նրան Յենայում (հոկտեմբեր 1806), գրավեց Բեռլին, և թիլզիտից մի հաշտություն, վորով Պրուսիա կորցնում էր իր հողամասերը

կեսից ավելին և վերածվում էր Ֆրանսիայի վասալ մի պետության։

Նվազ վճռական կռիվներից հետո, սակի և ավելի նաև Ռուսաստանը։ Ալեքսանդրը առաջին ցարը, որ՝ Բարդենշտայնում հանդիսավոր կերպով ուխտել էր «պահպանել Հիվրոպայի հավասարակշռությունը», և որ պարծենում էր լինել Հիվրոպայի վոսեիկանը և ջախջախել Ֆրանսիայի խռովարար ասրրերին, որոնք սպասնում էին միապետության հիմքերը խախտել, այդ միևնույն ցարը Թիլսիտում 1807 թ. հուլիսին հանդիպում է Նապոլեոնին, և կիրկու միապետները համաձայնում են աշխարհը բաժանել իրենց միջև։ Նրանք ձեռք ձեռքի են տալիս, Թիլսիտի դաշնագրության գաղտնի հոդվածներով՝ վրկ միայն հրա հպատակության մեջ պահել կենտրոնական Հիվրոպայի ժողովուրդներին, այլ նաև ուխտում են բնաջնջել ծովային մեծ ուժը՝ անգլիական ծովային սիրատպետությունը։ Ռուսաստանը պրա փոխարեն պատրաստ էր ստանում՝ իրագործելու Պետրոս Ա-ի և Եկատերինա թագուհու ծրագիրը Շվեհիայի և Թուրքիայի վերաբերմամբ։ Ֆինլանդիա և Դանուբյան նահանգները՝ Մոլդավիա ու Վալաքիա արվում էին իրրև առաջին վարձատրություն, և Նապոլեոն խոստանում էր զենքի ուժով միջամտել այն պարագային, երբ Ավստրիա շարժվեր ի նպաստ ռամանցիների՝ ընդդեմ Ռուսաստանի։ Բայց, Ալեքսանդրը դեռ չէր այս ավարով, նա ցանկանում էր վերականգնել Արևելյան կայսրությունը՝ իր սիրատպետությունը տարածելով մինչև Վավերի ափերը։ Սակայն, նա տեղեկացել էր որ Նապոլեոն համամիտ չէր Թուրքիայի բաժանման և պահանջում էր կցել Սիլեզիան Ֆրանսիային, եթե Ռուսաստանը պահեր Մոլդավիան ու Վալաքիան։ Սակայն, Սպանիայի ըմբոստացումը, պատճառ դարձավ որ Նապոլեոնը տեղի տա, հրաժարվի այս ծրագրից, և դիմի Թուրքիայի բաժանման ծրագրին (1808), որովհետև Ալեքսանդրը պնդում էր որ Թուրքերը վտարվեին Հիվրոպական քամքամասից։ Բայց, եթե Սպանիան մոտքի կանգնած չլիներ, անտարա-

կույս Նապոլեոնը պիտի ուղղվեր դեպի Արևելք, որովհետև 1808 թվի սկզբներին նա հաճախ կրկնում էր թե կ. Պոլիսը իր քաղաքականության կենտրոնն է։ Հիրավի, 1808 թվի մայիսի իր թղթակցությունները ցույց են տալիս, որ Փոլնեֆ Բոնապարտին Սպանիայում հաստատելուց հետո, նա ծրագրում էր կործանել անգլիական առևտուրը, կազմելով Ֆրանքո-ռուսական մի արշավանք ցամաքային ճանապարհով դեպի Հնդիսատոս, Պարսկաստան ու Հնդկաստան, մինչ Ֆրանսական ու սպանիական զորամասերը պիտի գնային Բարհնուստ Պոլսի՝ շրջաբերության մատնելու համար անգլիական ծովային ուժերը։ Սակայն, դեպքերը Սպանիայում փոխեցին այս բոլորը։

Հնդհարումը Թուրքիայի հետ այժմ չափից ավելի անցանկալի էր։ Ամեն ժամանակից ավելի Ռուսաստանի աջակցություն կարևոր էր ստանձնարհու համար կենտրոնական Հիվրոպան, երբ Ֆրանսիայի Պիրենեից այն կողմ կրած ձախողության հետևանքով, Հաբսբուրգիանները պատրաստ էին ծառանալու Նապոլեոնի դեմ, վախենալով վոր վերջին Բուրբոնների անկումից հետո, հերթը իրենց պիտի գար։ Ըստ այնմ, Ավստրիան սկսեց զինվել։ Արևելքի գրավման իր ձեռագրերից Ֆրանսացիների կայսրը հանկարծ գտնվում էր նոր իրականության առաջ և անհրաժեշտ պահանջ էր իր համար նորոգել Թիլսիտի իր համաձայնությունը ցարի հետ, վորից կախում ուներ կենտրոնական Հիվրոպայի իր սիրատպետության պահպանությունը։ Հիմ այսպես, երեքուրնի տհասկությունից հետո, կնքվում էր կիրկու իմպերիալիստական միապետների միջև նոր համաձայնությունը 1808 թ. հոկտեմբերի 13-ին։ Դիվանագիտական հաղթանակը, այսպես, ինչպես Թիլսիտում, տանում էր Նապոլեոն։ Ցարը համաձայնում էր հետաձգել Թուրքիայի և Արևելքի դեմ ծրագրված արշավանքը, սակայն նա հանձն չէր առնում մասնակցելու Ավստրիայի պինաֆեմման, միայն խոստանում էր ոչնչել Ֆրանսիային, եթե հարձակում կրեր, մինչև Նապոլեոն խաղաղեցներ Սպանիան։

Միաժամանակ, Անգլիան ապագույցը ամած եր ծովերի իր ներագեցության, ինչպես Նապոլեոն դամաքի վրա։ 1805 թվին ազանեական ծովեզերքում, Թրաֆալգարում, անգլիացի ծովակալ Նելսոն վոչնչացրել եր Նապոլեոնի մեծ նավատորմը։ Բիչ հետո, ճշմարիտ է, վոր Թիլսիթի դաշնագրության գագաթնի մի հոդվածով, համաձայնված եր, վոր Դանիմարկա, վոր այդ միջոցին նավային բավական աչքառու մի ուժ ուներ, պիտի տրամագրեր իր նավատորմիղը Ֆրանսային, բայց անգլիական իմպերիալիզմը արագ շարժումով ի գերև հանեց այդ ծրագրի իրականացումը։ Նա նախ, պահանջից վոր դանիական նավատորմիղը անգլիացիներին հանձնվի մինչև պատերազմի վերջավորության, և ապա ամրակոծելով Կոպենհագենն՝ հաջողեցրեց իր պահանջը։

Սրանից հետո Նապոլեոնի բանակները չկին կարող հարվածել Անգլիային, ուստի նա այլ միջոցների դիմեց խորտակելու համար նրա առևտուրը։ Ցամաքամասի բոլոր նավահանգիստները պետք եր վոր փակվին նրա ապրանքների առաջ, և ամեն հարաբերություն խզվի Անգլիայի հետ։ Սակայն, այս բլոկադը, վոր ծանոթ է պատմության մեջ «ցամաքային սիստեմ» անունով, մեծագույն հարվածը ավել վչ թե Անգլիային, այլ Ֆրանսային, և Նապոլեոնի անկման գլխավոր պատճառներից մեկը հանդիսացավ։ Անգլիան միակ կերկիրն եր այդ ժամանակ, վոր առևտրել եր բավական ընդարձակ ճարտարարվեստ, արդյունաբերություն, և կիվրոպական կերկիրները չկին կարող ապրել առանց անգլիական արդյունաբերական ապրանքների. այնպես վոր մաքսանենգությունը ծայրահեղորեն ընդարձակ ծավալ առավ, և մինչև իսկ ֆրանսական գինվորների հագած հագուստներն ու կոշիկները, Անգլիայից մաքսանենգաբար ներմուծված ապրանքներ կին։ Ջուր կին այս առիթով Նապոլեոնի ձեռք առած խիստ միջոցները և գրանք այն հետևանքն ունեցան, վոր առիթ տվին Փորտուգալիային և Ռուսաստանին դառնալ նրա դեմ։

Ռուսաստանը Թիլսիթից հետո զգում եր Լեհաստանի ծառնակի վերանստատումից, և հավատում եր վոր Նապոլեոն մեծ նպատակներ եր լարել Գերմանիայում ու Թուրքիայում ռուսական գրավումների դեմ։ Մյուս կողմից «ցամաքային սիստեմը» ծանր եր Ռուսաստանի համար, և 1811 թվին ցարը մերժից այլևս գործադրել այդ։ Նապոլեոն անմիջապես պատերազմ հրատարակից և 1812-ին արշավից Ռուսաստան։ Սակայն, հրկիղված Մոսկվայից Նապոլեոնի կես միլիոնանոց բանակի միայն իսկականները հաջողեցան վերադառնալ։ Ռուսական բանակը հետապնդից Նապոլեոնին մինչև Գերմանիա, ուր նրան միացան պրուսական և ավստրիական բանակները։ Հակառակ վոր Նապոլեոնը հաջողել եր նորից ուժեղներից մի նոր բանակ կազմել, նա չախչախվեց Լայպցիգում 1813 թ. հոկտեմբերին։ Այնուհետև «դաշնակիցները», գլխավորությամբ Անգլիայի, խորտակեցին Նապոլեոնի համառությունը և 1814 թվին մտան Փարիզ։

* * *

Ահա, այս շրջանում եր, վոր անգլիական, ֆրանսական և ռուսական դիվանագիտական առաքելությունները, քաղաքական գործակալները և Արևելք «ուսումնասիրողները» հաջորդաբար այցելում կին Թուրքիա ու Պարսկաստան, ընդհանրապես անցնելով Հայաստանից ու Անդրկովկասից։ Սրանք բոլորն էլ ընդհանրապես գրի կին առել իրենց ճանապարհորդական հուշերը, քաղաքական դեպքերի ու հարաբերությունների նկարագրությունները և ուսումնասիրությունները, վորոնք հաճախ պատկերազարդված են իրենց պատրաստած նկարներով ու քարտեզներով։ Ահա, այս հրատարակություններն են, վոր թարգմանաբար ամփոփված են «Ուղեգրություններ»-ի այս հատորում։

Սակայն, ուղեգրների կատարած գործն ու նրանց ճամփորդությունների դրդապատճառները ըմբռնելու համար, կարևոր և միաժամանակ հանդուգն գործ կլինի Պարսկաստանում կատարված իրադարձությունների ու այդ կերկրի քաղաքական կացության։ Մենք կենք խոսում Ասմանյան կայսրության մասին, և նկատի ունենալով վոր Անդրկովկասն



Ա. Գ. Ա. ՄԱՀԱՄԵԴ ԽԱՆ

(Պարսկական մ. հին նկարից, արտատպված Malcolm, «History of Persia», (1815, Հատ. Բ.) *գրքից)*

ու Հայաստանը այդ շրջանում դանվում էին Պարսկաստանի տիրապետության տակ։

Նադիր Շահի սպանությունից հետո, Պարսկաստանը թատերավայր հանդիսացավ ավատական խաների արյունահեղ մրցակցություններին՝ գահին տիրանալու համար։ Չինգիզ Քարխի Ծանր հաջորդից բավական չերկար տարիներ (1750—1779), մոտ չերեսուն տարի, իշխանությունը իր ձեռքը պահել, սակայն, ոչ թե պես Շահ, այլ իբրև վեհիլ՝ տեղակալ։ Նրա մահից հետո, մրցակցությունները վերսկսեցին և Պարսկաստանի կայար ցեղից ներքինի ու կիսախելագար Ագա Մահամեդ խան հաջողեց, կարճ ու արագ շարժումով, տիրանալ ամբողջ Պարսկաստանին և հիմնադիր հանդիսանալ Կայար հարստության։

Հիշատակության արժանի չի Ագա Մահամեդի արշավանքը դեպի Վրաստան։ Նադիր Շահի մահից հետո Վրաստանի թագավոր Հերակլը, ոչ միայն իր չերկրի անկախությունը հայտարարեց, այլ նաև նա իր իշխանությունը տարածեց պարսկական հողամասի վրա մինչև Արաքսը։ Սակայն, նա լավ գիտեր, որ չերբ իշխանությունը վերահաստատվեր Պարսկաստանում, առաջին առթիվ Վրաստանը արշավանքի թատերավայր պիտի հանդիսանար։ Ապահովելու համար իր չերկիրը այդպիսի դեպքում, Հերակլը 1783 թվին մի դաշնադրություն ստորագրեց Ռուսաստանի հետ, որով գրժում եր ամեն կապակցություն Պարսկաստանի հետ, և հարձակողական ու պաշտպանողական դինակցություն եր կնքում հյուսիսային այդ քրիստոնյա պետության հետ։ Յեկատերինա կայսրուհին պարտավորվում եր պաշտպանել Վրաստանի հողային անձեռնմխելիությունը։

1795 թվին Ագա Մահամեդն Հերակլին հպատակության հրավիրելուց հետո, վախտն հազարնոց մի բանակով Արդաբելից առաջացավ դեպի Վրաստան, չերեք ուղղությամբ։ Մի բանակ անցավ Մուղանի դաշտից, չգանված տուրքը գանձելու համար, չերկրորդը՝ քայլեց Յերևանի վրա, որ պաշտպանում եր տասնհինգհազար վրացական դինվոր, և

երրորդը Շահի հրամանատարությամբ, շարժվեց դեպի Շուշի։ Ագա Մահամեթ չհաջողեց գրավել Շուշին և նա մի ուժ թողնելով այնտեղ՝ պաշարումը շարունակելու համար, մյուսով Ջերնան պաշարող բանակին։ Այսուհետև նա Շահը չկարողացավ գրավել քաղաքը, ստիպվեց մի ուժ թողնելով Ջերնանի պարիսպների առաջ, գնալ բանակի գլխավոր ուժով դեպի Գանձակ, որտեղ մյուսայլ Մուղանից առաջացող բանակի հետ Հերակլը, փոխանակ ապավինելու իր բերդերին և ապահովելու ռուսական օգնության, և առանց հաշվի առնելու, որ ձմռանային ցուրտ չորս անգամ ավելի կար, քան գաշտում գտրա լեռնային Շահի բանակի դեմ և պարտվեց։ Թիֆլիսը անձնատուր եղավ առանց դիմադրության։ Բոլոր ձերբունդներին ու ակարներին կատարելյալ, իսկ բնակչության մեծագույն մասին, քան հազար հոգու վերի վարկյին դեպի Պարսկաստան։ Թիֆլիսից հետո Ջերնանը անձնատուր եղավ, իսկ Շուշին շարունակեց դիմադրել։

Անդրկովկասյան այս արշավանքից հետո, մինչ Ագա Մահամեդը պրպտված էր Խորասանի գրավումով և Շահ Ռուխի գահերը կողոպտելով, ռուսական մի բանակ 1796 թվին գրավեց Դերբենդը, Բագուն ու այլ ամրացած վայրերը, և բանակից ձմռան համար Մուղանի դաշտում։ Ագա Մահամեդը պատրաստվում էր գարնանը հարվածել ռուսներին, յերը Յեկատերինա թագուհին մեռավ և ռուսական բանակը հետացավ։ Շահը, հրճված թշնամու այս անակնկալ հեռացումից, վրուշից կրկին արշավել Վրաստան։ Նա Արաքսից մոտ հարյուր կիլոմետր հեռու էր գտնվում, յերբ Շուշիի բնակիչները վտարեցին իրենց կառավարչին և խնդրեցին որ Շահը ընդունի բերդը։ Նա անցավ Արաքսը ու գրավեց բերդը, սակայն, յերևք որ հետո Ագա Մահամեդը սպանվեց (1797 թ.) իր յերկու պահակներից, որոնց նա մանկան էր պատպարակ և վճիռը պիտի կատարվեր հաջորդ առավոտը, մինչ նրանք այդ գիշերը տակավին մեռում էին իրենց պարտականության վրա։ Գահին տիրանալու համար մի շարք կռիվներից ու ներքին խլրտումներից հետո, սպանված Շահի



Վրաստանի թագավոր ՀԵՐԱԿԼ II
(Արտատպված W. E. D. Allen, «History of the Georgian People» գրքից)

յեղբոր որդին. Ֆաթ Ալի Շահը, ժառանգից Պարսկաստանի թագը և իշխեց մինչև 1834 թ.։

* * *

Ահա, այս շրջանումն և որ ռուսերը տիրացան Անդրկովկասին և իրենց սահմաններր տարածեցին մինչև Արաքսը, և այս շրջանումն և որ անգլիացի, ֆրանսացի ու ռուս դիվանագիտական ներկայացուցիչները և քաղաքական ու զինվորա-

կան գործակալները, որոնց ուղեգրությունները ստորագրած են այս հատորում, հաջորդաբար այցելում են Պարսկաստան։

Այդ գործակալներից առաջինն էր Տարյատպատ, հետագայում գնելթալ,— Մալկոմ, 1800 թվին։ Նա լինում էր Հնդկաստանի անգլիական կառավարչի, և քաղաքական լուրեր տեղեկություններ ուներ կառավարչից. այն է, առաջին, համոզել Շահին, որպեսզի ճնշում գործ դնի Աղվանիստանի վրա, Հնդկաստանի դեմ ծրագրված արշավանքը կանգնեցնելու համար. յետոյ, խանգարել ֆրանսա-ռուսական ծրագրված արշավանքը Հնդկաստանի դեմ. և յետոյ. վերականգնել բրիտանական և Բրիտանական Հնդկաստանի առևտուրը Պարսկաստանի հետ։

Աղվանիստանի Ամիր Զաման Շահը ծրագրում էր, Հնդկաստանի դժգոհ վեզիրների հետ ձեռք ձեռքի տված, վտարել անգլիացիներին Հնդկաստանից։ Մյուս կողմից Նապոլեոն Բոնապարտի գործակալները պրպտել էին Տիպու Սուլթանին, որ կռվում էր անգլիացիների դեմ։ Միաժամանակ Ջաբ Ալի Շահը Ռուսաստանի դրավանքից հետո բացահայտորեն ծրագրում էր վերականգնել Սեֆևվի հարստության շրջանի Պարսկաստանի սահմանները, այսինքն Աղվանիստանը վերստին պարսկական տերությանը տակ առնել և ջնջել այդ երկրի անկախությունը։ Այս տարբեր տեսակետներից շահերի նույնության կար անգլիացիների ու պարսիկների մեջ, և Հնդկաստանի անգլիական իշխանության կողմից առաջին բանակցությունը վարում էր Արևելյան Հնդկաստանի Ընկերության (East India Company) Բուշիրի ներկայացուցիչ Մեհտի Ալի Խանը։ 1799 թվի աշնանն այս անգլիական գործակալ Մեհտի Ալի Խանը ընդունվեց Շահի կողմից։ Նա, իբրև նվեր խոշոր գումարներ ծախսելով, հաջողեց պարսից միապետին, թշնամությունները շարունակելու Աղվանիստանի դեմ, և Բուշիր վերադարձին այնտեղ գտավ Մալկոմին իր սովարաթիվ շքախմբով։

Նվազ մտահոգություն չեր պատճառում նաև Նապոլեոնի ֆրանսական ծրագիրը՝ Ռուսաստանն ու Պարսկաստանը ոգ-

տագործելու Հնդկաստանի դեմ։ 1800 թվին Ռուսաստանի Պավել կայսրը և Նապոլեոնը համաձայնել էին մի արշավանք ուղարկել Բագու և Կասպից ծովից Աստրախան, որտեղից պիտի առաջանային Մեշեդ ու Հերատ, և պարսիկներն ու աղվաններն պիտի հրավիրվելին միանալու իրենց Հնդկաստանը կողոպտելու հրապուրով։ Տարակույս չկա, թե ի նկատի ունենալով աշխարհագրական հեռավորությունը և կերկրի աննպաստ պայմանները ու ժողովրդի տրամադրությունը, այսպիսի մի արկածախնդրություն պիտի դատապարտվեր ոչնչացման վերջավորության, սակայն և այնպես այդ միջոցին անգլիացիները լրջորեն վախենում էին և հավատում սպառնալիքին, մանավանդ որ այնքան էլ զորավոր չեր նրանց դիրքը Հնդկաստանում, որովհետև անզգայ ապերախտությունը, առավելապես տիրող դասերը թշնամաբար էին տրամադրված բնդհանրապես նրանց հանդեպ։

Մալկոլմը Պարսկաստան մտավ մեծ շուքով։ Նրան ընկերանում էին անգլիական մի զորամաս և թնդանոթաձիգների մի չոկատ։ Նա տանում էր արժեքավոր նվերներ Ջաբ Ալի Շահին։ Առաջորեն պրած էր բաժանում իր ճանապարհի բնակչությին, և մի փոքր էլեկտրական գործիքով ոչավորություն էր գործում ու զարմացնում պարսիկներին։ Տակավին Թեհրան չհասած՝ նրա համբավը տարածվել էր ամբողջ Պարսկաստանում։ Շահը սիրալիր ընդունելություն ավավ նրան։ Բանակցությունները կատարվեցին Մալկոլմի և վեզիր Հաջի Իբրահիմի միջև։ Շահը համաձայնեց հաշտություն չկնքել Աղվանիստանի Ամիրի հետ, մինչև որ նա հրապարակով չդրժե իր մտադրությունը անգլիական կալվածների վերաբերմամբ Հնդկաստանի մեջ։ Անգլիական ներկայացուցիչը համաձայնվեց ռազմամթերք հայթհայթել Պարսկաստանին, այն պարագայում, եթե հարձակում կլեր աղվաններից կամ ֆրանսացիներից։ Կնքված դաշնագրության մասնավոր մի հոդվածով Պարսկաստանը հանձն էր առնում չերկրից վտարել բոլոր ֆրանսացիներին։ Հետո, անգլիացի ու հնդիկ վաճառականներին արտոնություն էր տրվում ազատորեն հաս-

տասիվ նավահանգիստներում և վերջ լինել մոբևի առաջքից: Անգլիական կառավարն, ընդհակառակը, պողպատ և կապար պիտի ներածվեր Պարսկաստան առանց մաքսի:

Միջոցն այդ հնար, 1805 թվին, Ֆրանսիա և Ռուսիա պատերազմի մեջ էին: Վրաստանի պրոբլեմը առնելությամբ լցրել էր պարսիկներին Ռուսաստանի դեմ: Այս կացությունից օգտվելով Նապոլեոնն ներկայացուցիչ գնդապետ Ռոմիո (Romieu) անվն թվին ղրկեց Թեհրան: Ֆրանսիան առաջարկում էր, լինել Շահը պրծնի անգլիական դաշնակցությունը և համաձայնություն տրվեր ֆրանսական ու պարսկական միացյալ բանակով արշավելու Հնդկաստան. Նապոլեոնը պատրաստ էր զենքի ուժով ազատագրել Պարսկաստանին՝ վերապրավելու համար կորսված նահանգը: Ծախ Ալի Շահը այնքան էլ սրամտորեն չէր ընդառաջելու այս առաջարկությանն, սակայն, վորովհետև գործնականորեն Անգլիան վորևե աջակցություն չէր տվել Պարսկաստանին, և Պարսկաստանին օգնելու ծրագիրը ղրկու տարուց ավելի ժամանակ էր անգլիական կառավարության համար, վերջ ի վերջո նա ևեթ ավել ասաց:

Շահի կողմից վորպես ներկայացուցիչ մեկնում էր Յեվրոպա Մըրզա Ռեզա խան և գնում էր մինչև Թիլսիտ: Շահը առաջարկում էր Նապոլեոնին հարձակում գործել Ռուսաստանի դեմ, այն բոլոշն ինքը կարշավեր Վրաստան, միաժամանակ Շահը պատրաստակամություն էր հայտնում արշավել Հնդկաստան: Նախնական մի դաշնագրություն էր կընքվում 1807 թվի մայիսին, վոր Ֆանտի և Ֆինկենշտեյնի (Finkenstein) դաշնագրություն անունով և ուղարկվում Թեհրան:

Միքանի ամիս հետո ֆրանսական դիվանագիտական մի կարևոր առաքելություն, դիվանագիտական դեներալ Գարդանի, յոթանասուն սպաների հետ, հասնում էր Պարսկաստան և գործի էր անցնում պարսկական բանակը մարզելու ցիվրոպական ցեղանակով: Դեներալ Գարդանին հրահանգված էր կազմակերպելու Շահի բանակը, վորպես ոժանդակ ֆրանսական բանակի՝ Հնդկաստան արշավելու համար: Նապոլեոնի

ներկայացուցիչը անցնում էր կ. Պոլսից և Թրքական կառավարությանն առաջարկում էր՝ թուլացնել ֆրանսական բանակին անցնել Օսմանյան հողերից Պարսկաստան գնալու համար: Միաժամանակ Նապոլեոնը մտադիր էր իր ցեղակից Լուսինին ուղարկել Թեհրան իբրև իր ներկայացուցչի: Բայց այդ միջոցին տեղի ունեցավ Թիլսիտի տեսակցությունը և ցերկու կայսրեր՝ Ալեքսանդրն ու Նապոլեոնը, համաձայնեցին Արևելքը բաժանել իրենց միջև: Թիլսիտի համաձայնությունը հուսահատ արեց Ծախ Ալի Շահին, վորովհետև ֆրանքո-ռուս համաձայնությամբ այլևս Վրաստանի վերագրավման հավանականությունը անհետանում էր, թեև Նապոլեոնը տակավին հետապնդում էր Պարսկաստանի հետ պաշտպանողական ու հարձակողական դաշինք կնքելու ծրագիրը:

Բրիտանական կառավարությունը թե՛ Անգլիայում և թե՛ Հնդկաստանում վրդովեցուցիչ ժամանակ էր մտանվել՝ տեսնելով ֆրանսական ազդեցության զորացումը Պարսկաստանում, և հետևաբար սպառնացող վտանգը Հնդկաստանի համար: Մինչ հնդկական մի քանի միապետներ կաշառվում էին և համաձայնություններ էին կնքում անգլիացիների հետ Պարսկաստանի դեմ գործելու համար, մյուս կողմից անգլիական կառավարությունը վորպես լիազոր դեսպան էր ուղարկում Թեհրան Սըր Հարֆորդ Ջոնսին, (հետագայում լորդ Բրիջս), Շահի կառավարության հետ դաշնագրություն կնքելու համար: Միաժամանակ Հնդկաստանի կառավարիչ լորդ Մինտո, վոր ծանոթ չէր կենտրոնական կառավարության այս նշանակման, ուղարկում էր մեկնուլն պաշտոնով Մալկոլմին, այժմ գեներալ Մալկոլմ, վոր մի ուժեղ զորամասով ժամանում էր Պարսկական ծոցը 1808 թ. մայիսին, այն միջոցին երբ գեներալ Գարդանի ազդեցությունը Թեհրանի արքունիքում իր գագաթնակետին էր հասել: Նա իր պալատականությամբ մարզում էր պարսկական բանակը, կառուցում էր ամրություններ և հուսկե տալիս պարսիկներին՝ վերազրավելու Վրաստանը: Այս պայմաններում անգլիական ներկայացուցչի հանդեպ սրամտությունները նպաստավոր

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ZUUՈ-Арм ССР
ՀՀ ԱՍՏՂԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

չէլին, և նրան չհուսյատրեցին անգամ Թեհրան գնալ։ Մալկոլմը, վիրավորված այս վերաբերմունքից, վերադարձավ Հնդկաստան և առաջարկեց որ անմիջապես հնդկական մի զորամաս ուղարկվի՝ գրավելու համար Խարակ (Kharak) կղզին։ Լորդ Մինտոն ընդունեց այս առաջարկը և կերը նախապատրաստություններ եղին տեսնվում այս զինվորական արշավանքի համար Պարսկաստանի դեմ, կացություն փոփոխության եր կենթարկվում Եվրոպայում և Ֆրանսական արշավանքի վտանգը Հնդկաստանի դեմ այլևս անհետացում եր։

Նույն տարվա աշնանը, կերը անգլիական ներկայացուցիչ Սըր Հարֆորդ Ջոնս ժամանում եր Պարսկաստան, Մալկոլմի հեռացումից մի քանի ամիս հետո, գեներալ Գարդանի Ֆրանսական մխիթարն արդեն վարկաբեկված եր։ Անգլիան պատերազմում եր Ռուսաստանի դեմ։ Այնպես որ, կերը Ջոնս առաջարկեց անգլիական դաշնակցություն և տարեկան 160.000 թուման (120.000 ֆունտ ստերլինգ) նպաստ, այնքան ժամանակ որ Բրիտանիա պատերազմի մեջ գտնվեր Ռուսաստանի դեմ, և անգլիական սպանների ծառայությունը՝ մարզելու համար պարսկական բանակը, Ֆաթ Ալի Շահը համաձայնվեց, և անմիջապես գեներալ Գարդանին ու նրա շքախմբին անցագիր տվավ։ Այս նպաստավոր պայմաններում, առանց հապաղման, 1809 թ. մարտին, դաշնագրի նախնական պայմանները տորագրվեցին կերկու կառավարությունների միջև, որոնք ընդունվեցին թե կենտրոնական և թե Հընդկաստանի կառավարությունների կողմից, և հետք ծառայեցին վերջնական դաշնագրության։ Ջոնսին ընկերանում եր Ջեյմս Մորիեր, որպես քարտուղար, որ դաշնագրի նախնական պայմանները անձամբ Անգլիա տարավ, անցնելով Հայաստանից։ Նա հետևնակն և ուղեգրական կերկու մեծ հատորի, և նշանավոր «Հաջի Բաբայի» Մորիերի ուղեգրությունը տալիս ենք այս հատորում։

Հաջորդ տարի, 1810 թվին, Մալկոլմը կերրորդ անգամ ուղարկվում եր Պարսկաստան՝ Հնդկաստանի անգլիական

կառավարության կողմից, աննախընթաց շուքով։ Նրան ընկերանում եին բազմաթիվ սպաներ, որոնց մեջ Մոնտիեթ և Լինդսել։ Վերջինս, մի հսկա եր, 6 ոտք 8 ինչից բարձր հասակով։ Նա թնդանոթաձիգ սպա եր, և այնպիսի ազդեցություն գործեց պարսիկների վրա, որ նրան համեմատում եին Ռուստամի հետ, և որին անմիջապես նշանակին պարսիկ բանակի ընդհանուր հրամանատար։ Մալկոլմը արժանացավ աննախընթաց շքեղ ընդունելության Շահի կողմից, ինչ որ նա նկարագրում եր իր «Sketches of Persia» երկհատոր փոքրածավալ գրքում։ Նա գրեց նաև իր հայտնի «History of Persia» (Պարսկաստանի պատմությունը), և նրա ընկերակիցներից Kinneir, իր «Geographical Memoir»ը։

Դաշնագրության վերջնական վավերացումից հետո անգլիական կառավարությունը վորպես միայուն գեսպան եր ուղարկում Թեհրան Սըր Գոր Աուզլեյին, վորին ընկերանում եին վորոշ թվով անգլիացի սպաներ, ինչպես նաև նրա կեղբայրը՝ Սըր Ուիլիըմ Աուզլեյ, վորի դասական գործերը Պարսկաստանի մասին ճանաչ են արևելագետներին, և վորի հետաքրքրությունը մենք ամբողջությամբ ոգտագործել ենք, մեր առաջադրած նպատակի սահմաններում։

Յերկու կերկրների մեջ դաշնագրությունը վերջնականապես տորագրվեց 1814 նոյեմբերի 25-ին, և դաշնագիրը Ջեյմս Մորիերը անձամբ տարավ Անգլիա, այս անգամին էլ անցնելով Հայաստանից։ Այս դաշնագրությամբ Պարսկաստանը հանձն եր առնում ջնջված հայտարարել բոլոր այն պաշնագրությունները, վոր Պարսկաստանը կնքել եր կեվրոպական այն կառավարությունների հետ, վորոնք թշնամի եին Անգլիային, և արգելել Անգլիային թշնամի վորևե բանակի մուտքը Պարսկաստան։ Շահը միաժամանակ հանձն եր առնում համոզել Խարեզմի, Թաթարիստանի, Բուխարայի և Սամարղանդի խաներին, վոր արգելեն վորևե բանակի, վոր փորձե պարսկական սահմաններից անցնել՝ հարձակելու համար Հնդկաստանի դեմ։ Հարձակում կրելու պարագային

փոխադարձ դիվանագիտական ոգեւորություն պիտի տրվեր, և Պարսկաստանի ու Ռուսաստանի սահմանագիծը պիտի վերջվեր Մեծն Բրիտանիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի համաձայնությամբ։ Անգլիա հանձն էր առնում տարեկան նպաստ տալ 200.000 թուման (150,000 ֆունտ ստերլինգ), վորը պիտի շարունակվեր մինչև այն պարագային, երբ Պարսկաստանը հարձակողական պատերազմ վարեր։ Այս գումարը պետք էր ծախսվեր անգլիական դեսպանի վերահսկողությամբ։ Մի այլ հոդվածով Անգլիա պարտավորվում էր վրան կիրառական թշնամի կառավարության հետ հաշտություն կնքելու պարագային, եթե Պարսկաստանը ևս պատերազմի մեջ գտնվեր այդ կառավարության հետ, նույնպես մասնակից դարձնել հաշտության, հակառակ պարագային պետք է դիվանագիտական ժամանակավոր ընծայներ։ Ապահանիստանի վերարերմամբ, եթե Պարսկաստանը պատերազմի դաշնակից այդ կերկրի հետ, Անգլիա չպիտի միջամտեր, իսկ եթե Ապղանիստանը հարձակում գործեր Հնդկաստանի դեմ, Պարսկաստանը պարտավորվում էր պատերազմ հայտարարել այդ կերկրի դեմ։

* * *

Այս համառոտ ներածականն ամբողջացնելու համար, վորպեսզի «Ուղեգրությունները» այս հատորը ոգտագործող ընթերցողի համար ավելի պարզ լինի, կարևոր է նաև մի կարճ ուրվագիծ տալ յարական Ռուսաստանի կողմից Անդրկովկասի ու Հայաստանի հոգեմտավոր գրավման։

Հերակլի վորդին Գեվորգ XIII իր թիկունքը դարձրեց Ռուսաստանին և վերստին դարձավ դեպի Պարսկաստանը, հպատակություն հայտնելով Ծաթի Ալի Շահին։ Ռուսաստանը առիթի էր սպասում դեպի Անդրկովկաս տարածվելու իր ծրագիրը իրագործելու համար, և 1800 թվին, տեղից Գեորգին հրաժարվել իր գահից, և նպաստ Ռուսաստանի յարին։ Այս անձնատվությունը բնականորեն ընդունելի չէր վրացական ազնվականների համար, և Գեորգի կրտսեր եղբայր Ալեքսանդրը վորձեց թուրքերի կամ պարսիկների

ժանդակությամբ դիմադրել ռուսներին, բայց ձախողեց։ Մի ընդհանուր ըմբոստացում, աջակցությամբ Ղարաբաղի խանի և ավարների, պատճառ եղավ նշանվեց գնդերալ Լազարովի բանակի կողմից և Վրաստանը կցված հայտարարվեց Ռուսաստանին։

Անկասկած, Վրաստանի կցումը ընդհանուր հուզում առաջ բերեց Պարսկաստանում, սակայն հարձակողական կողմը դարձյալ Ռուսաստանն էր։ 1804 թվին գեներալ Ցիցիանովը, առանց պատերազմի պաշտոնական հայտարարության, առաջացավ դեպի Յերևան, վատահելով վոր Սարդարը դավաճանության կերթը պիտի հանձնի իրեն։ Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Էջմիածնի մոտ, բայց առանց վճռական արդյունքի։ Սակայն, անակնկալ մի հարձակումով պարսկական բանակը փախուստի մատնվեց։ Այս հաղթանակից հետո Յերևանը պաշարվեց, սակայն Սարդարը անձնատուր չեղավ, և ռուսները ստիպված եղան լքել երկրի պաշարումը և հեռանալ, երբ Ծաթի Ալի Շահը յերեվաց պատերազմի դաշտում զինվորական մեծ ուժով։

Ռուսական հաջորդ քայլը յեղավ հառաջացում մինչև Ռեշտ, գրավելու համար Գիլանը։ Սակայն, գեներալ Ցիցիանովը ստանվեց Բագվի առաջ, մինչ պարսից գահաժառանգը գրավում էր Գանձակը, թեև քիչ հետո ռուսները վերագրավեցին այն։ Կռիվը շարունակվեց, թեպետ առանց վճռական արդյունքի, սակայն ռուսները գրավել եղեն վիճելի հողամասերի մեծագույն մասը, միայն յերկրորդ անգամ ձախողել եղեն Յերևանի պարիսպների առաջ, տալով բավական թվով կորուստ։

Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1812-ին, յերբ Անգլիա հաշտություն էր կնքել Ռուսաստանի հետ և անգլիական դեսպան Սըր Գոր Աուզլեյ կարգադրել էր, վոր անգլիացի սպաները հեռանան պարսկական բանակից, բացի յերկուքից։ Ճակատամարտը տեղի ունեցավ Արաքսի յերկրագործում, յերբ Աբբաս Միրզայի բանակը հանկարծակիի յեկավ ռուսական 2300 հոգինոց մի վոգը ուժի

առաջ և խուճապահար փախուստ տվավ։ Ռուսները տարվա վերջին գրավեցին Լենքորանը, որից հետո պարսիկները հաշտություն խնդրեցին։

1813 հոկտեմբեր 12-ին անգլիական դեսպանի միջամտությամբ հաշտություն կնքվեց Գյուլիստանում։ Պայմանները ապիտակ էին Պարսկաստանի համար։ Պարսկաստանը կորցնում էր Վրաստանը, Դերբենդը, Բաքուն, Շիրվանը, Նուխին, Գանձակը, Ղարաբաղը և Թալիշի մի մասը։ Հանձն էր առնում նավատորմիղ չունենալ Կասպից ծովում։ Ռուսաստանը ի փոխարեն պարտավորություն էր առնձնում պաշտպանել Աբբաս Միրզայի հաջորդությունը Պարսկաստանի գահին։ Ռուսաստանը հավանորեն ավելի խստապահանջ կլիներ, եթե տեղ չունենար Նապոլեոնի արշավանքը, և զրաղված չլիներ Ցեվրոպայում։ Մյուս կողմից Պարսկաստանը համաձայնում էր այս պայմաններին ժամանակ շահելու՝ իր բանակը վերակազմելու համար, մանավանդ որ այդ շրջանում ընթացությունները ծայր էին ավել յերկրի ներսում։

Գյուլիստանի հաշտությունից հետո Շահի կառավարությունը դուր հուսներ էր առնում, որ անգլիական միջամտությամբ հնարավոր պիտի դառնար կորցրած հողատարածքի մի մասը յետ առանալ։ Ցարական կառավարությունը, 1817 թվին, գեներալ Յերմոլովին մեծ շքախմբով ուղարկեց Պարսկաստան։ Յերմոլովը ընդունվեց ծաթ Ալի Շահից Սուլթանիեյում, սակայն մի թիզ անդամ հող չզիջեց Պարսկաստանին, և առաջարկեց դաշնակցել Թուրքերի դեմ։ Ապա, Ռուսաստանը պահանջում էր Թուլյատրել, որ ցարական բանակը անցնի Ատրպատականից ու Խորասանից Խիվա արշավելու համար, ինչպես նաև մի գործակալության հաստատումը Ռաշտի մեջ։ Բոլոր այս առաջարկները, ինչպես նաև ռուսական սպաներով պարսկական բանակը վերակազմելու առաջարկը՝ մերժվեց Շահի կողմից, և Յերմոլովը վերադարձավ Թիֆլիս։

Միաժամանակ Գյուլիստանի դաշնագրությունը այնպես էր խմբագրված, որ Յերեվանի և Սեվանա լճի միջև տարածվող շրջանը, մասնավորապես Գյոքչան, մնում էր վեճի առարկա։ Այս մասին բանակցություններ էին կատարվում Կովկասի ընդհանուր կառավարիչ գեներալ Յերմոլովի և Աբբաս Միրզայի միջև, սակայն վերևե համաձայնություն անկարելի լինելով, ռուսական բանակը գրավեց Գյոքչա (1815 թ.)։ Ցարական կառավարության այս հարձակողական ընթացքը ընդհանուր ցասում առաջ բերեց Պարսկաստանում և պատերազմն անխուսափելի դարձավ։ Աբբաս Միրզան ցանկանում էր բարձրացնել իր կոտրած համբավը, յերբ Պարսկաստանի ամեն կողմերից հազարավորներ գալիս ու միանում էին իր բանակին և բարձրացնում մարտական տրամադրությունները։ Յերբ Նիկոլա Ա. գահ բարձրացավ՝ իշխան Մենշիկովին ուղարկեց Թեհրան՝ համաձայնության մի յեզր գտնելու համար, բայց վորովհետև ռուսական ներկայացուցիչը Գյոքչան վերադարձնելու հրահանգը չուներ, նա վոչ մեկ հաջողություն ձեռք չբերեց, հանդարտեցնելու համար վրդոված մտքերը։

Առաջին հարձակումը ռուսների դեմ սկսեց Թալիշի խանը, ապա Լենքորանը գրավվեց։ Ռուսները անպատրաստ էին պատերազմի համար։ Ռուսական մի վաշտ Շուշու շրջակայքում գերի ընկավ, և պատերազմական գերիների կեսը մնաց պարսից ծառայության մեջ։ Գանձակի խալաթները կոտորեցին ռուսական պահակազորը, և պարսիկները արշավեցին Թիֆլիս։ Պարսիկները այնքան հաջող էին, վոր մի ամսվա ընթացքում գրավեցին Շիրվան, Նուխի, Թալիշ և Գանձակ։ Սակայն Շուշին դիմադրեց Աբբաս Միրզայի բոլոր հարձակումներին։

Միաժամանակ ռուսները կենտրոնացնում էին մի բանակ Թիֆլիսում. առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Շամխորում, Գանձակից վոչ հեռու։ Պարսիկները պարտվեցին և հրամանատար Մուհամմեդ Միրզան, հետագայում Մուհամմեդ Շահ, գերի ընկավ, բայց ազատվեց Շահ Սևանների մի գլխավորի կողմից։

Աբրաս Միրզան լուրեանն հապար պորբով շտապեց դեպի հիւսիս, դարմանելու համար այս ապետ և հանդիպեց գնդապետ Պասկեվիչի բանակին Գանձակի արևելյան դաշտում, (սեպտեմբեր 26, 1826 թ.)։ Սակայն, պարսկական բանակը շատով բարելալքվեց ու փախուստ ավավ. առանց իրապես կռվի գաշտը մանելու։ Նոր բանակ կազմելու բոլոր փորձերը ի զուր անցան Պարսկաստանում։ Յերկրի անտանական վիճակը քայքայված եր, Շահը իր վիրաւ գանձերը պինդ եր պահում և կոպեկ անգամ չեր ուզում արտաթրել յերկրի պաշտպանության համար։ Մինչ գնդապետ Յերմոլովի բանակները որից որ ուժեղանում եյին, նորանոր ռազմական ուժերի ժամանումովը, Աստրախանից առաջացող բանակը Դերբենդից վտարեց Շահի վիճակորներին։ Ռուսական մի այլ զորամաս անցալ Արաքսը և պատնում եր Թավրիզին։

Հաջորդ տարի, 1827 թվին, գնդապետ Պասկեվիչը նշանակվեց ընդհանուր հրամանատար, և յերբորդ անգամ Յերևանը պաշարվեց։ Քիչ հետո Աբբասաբատ գրավվեց։ Պարսիկները հուսալքված եյին և ի զուր փորձեր արին հաշտություն կնքելու համար։ Սակայն, Աբբաս Միրզան հաջողեց մի հարթանակ տանել Եջմիածնի մոտ, գնդապետ Մարկովսկիյի դեմ, որի հրամանատարության տակ գտնվում եյին հինգ հազար հետևակ, մի հազար հեծելազոր և տասնչերկու թնդանոթ։ Պարսիկները հավասար թվով հետևակ ունեյին, բայց ավելի զորավոր եյին նրանց հեծելազորն ու հրետանին։ Ռուս գնդապետը սպանվեց և բանակի մի մասը մեայն ազատվեց՝ ապաստանելով Եջմիածին։ Հակառակ այս հարթանակին, Յերևանը գրավվեց (1 հոկտեմբերի 1827 թ.)։

Պասկեվիչի հինգհազար զինվորները Արաքսը անցան և Թավրիզը գրավեցին առանց դիմադրության։ Ռուսներին ծանում եր հաշտության պայմաններ թելադրել, թեև թշնամությունները սկսվում եյին մեռժամանակ թուրքերի դեմ և ռուսական շտաբը պահանջում եր շուտով գործը վերջացնել Պարսկաստանի հետ։

Հնգվեց Թուրքմենչայի դաշնագրությունը 1828-ին, վորով Յերևանի ու Նախիջևանի բարերեր շրջանները անցնում եյին Ռուսաստանին, և Պարսկաստանը հանձն եր առնում վճարել տասնչերկու միլիոն արծաթ ռուբլի պատերազմական տուգանք վճարել։

Դաշնագրության 4-րդ հոդվածի տրամադրության համաձայն, սահմանը կազմում եր Աբբաս գետը մինչև գետաբերանը։ Այստեղ ուղղվում եր դեպի հարավ՝ տալով Թալիշի մի մասը, Լենքորանով մինչև Ռուսաստանին, և այնտեղից նորից դեպի արևելք մինչև Կասպից ծովը, որ հասնում եր մինչև Աստարա։ 7-րդ հոդվածով Աբբաս Միրզան պաշտոնապես ճանաչվում եր, որպես Պարսկաստանի գահաժառանգ, և 10-րդ հոդվածով Ռուսաստանը իրավունք եր ձեռք բերում նշանակել հյուպատոսներ և առևտրական գործակալներ, «ուր որ առևտրի տոհմեր և առևտրական գործակալներ, «ուր որ առևտրի շահն եր պահանջում»։ Առանձին մի պայմանագրությամբ ճշտվում եր՝ «Առևտուրը և հպատակների ապահովությունը», որի համաձայն արտաքսության ու ներաքսության մասը եր նշանակվում 5 տոկոս, ռուսական պաշտոնյաները իրավունք ունեյին իրենց անձնական գործածության համար ապրանք ներածել Պարսկաստան առանց մաքսի, և իրավունք ունեյին պաշտպանելու իրենց պարսիկ ծառայողներին։ Վերջապես Ռուսաստանը իրեն եր վերապահում Պարսկաստանում ապրող իր հպատակների ամեն իրավունքը։

Այս դաշնագրությունը ապետալի չեզավ Պարսկաստանի համար, որովհետև այս capitulation-ով կորցնում եր իր գիշխանական անկախությունը, և որինակ եր ծառայում որ յեվրոպական պետությունները մեկը մյուսից հետո նման իրավունքներ ձեռք բերեյին, և Պարսկաստանը յենթարկվեյին քաղաքական ու տնտեսական կամքն ու կիսագաղութային վիճակի։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՐ ՋՈՆ ՄԱԼԿՈԼՄԻ

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ*

(1800)

Դեսպանի համբավը՝ ձեռականութիւնների վերաբերմամբ հմուտ և դիվանագիտական հարաբերութիւնների մէջ նրանց կարևորութեան գիտակից լինելու մասին, հարթեց պալատում նրա ընդունելութեան ճանապարհը[1]: Սակայն, տակավին կային մի քանի փոքր հարցեր, որոնց կարգադրութիւնը շատ լուրջ բանակցութիւններ էր պահանջում: Այս բանակցութիւնների սկզբնավորութեան մի առիթ ներկայացավ, որ բոլորին մեծ զվարճութիւն պատճառեց:

Շիրազում մեր հագուստի մասին շատ նկատողութիւններ եղին արել, բայց նահանգի մայրաքաղաքում վոչ մի նախընթաց գոյութիւն չուներ, որ իրավունք վերապահեր իշխանի[2] [Շահի որդու] նախատրաբին առարկելու, որ դեսպանը ներկայանար իր համազգեստով: Մեր գլուխների արտաքին տեսքը, մեր մազերի վերջերս խուզված լինելը, շատ մեծ կոմպլիմենտներ վաստակեց մեզ համար, և ինձ մեր ուսա բարեկամների: Այդ ազգը տարբերապէս արշալոյծ էր պարսկական հոդամասը, և նրա բանակները սպառնում եղին մի նոր հարձակում գործել: Հետևաբար այն էր եղել, որ արքայից արքայի պալատականների և նախարարների մէջ թշնամական զգացում էր առեղծվել նրանց դեմ: Յետը մենք Շիրազումն եղինք, Զիրաղ Ալի Խան (Chirâgh Ali Khan) մեր սովորութիւնները ընդունում էր շատ ավելի մաքրակեաց, քան հյուսիսի մեր քրիստոնեա յեղբայրներինը: «Ներանք վոչ մի բան չեն սիրում, ասում էր նա, բացի ղորավոր խմիչքից և խոզի մսից, և հավատում եք դուք, — խոսքը ուղղելով դեսպանին, — ներանք այնքան սիրում են այդ կեղտոտ կենդանուն, որի մսով ապրում են, որ ներանք իրենց մազը կապում են նրանց պոչի նման»: Դեսպանը նայեց այնպես, իբր թե անհավատալի չեր այս վերջին ձևը, թեև, ես գիտեմ որ տասնյերկու ամիս չկա, որ նրա պլուխն էլ միևնույն զարդարանքն ուներ:

Հիմնվելով անցյալի վրա, մենք կարծում եղինք, թե ապահով ենք հագուստի վերաբերմամբ, բայց սխալվում եղինք: Ապահան ժամանելուց յերկու որ հետո, Հաջի Իբրահիմի (Hajee Ibrahim) կողմից մի միրզա յեկավ՝ դեսպանի հետ խոսելու այս նյութի մասին: Պարսկական պալատում արարողութիւնների վրա մանրակրկիտ ուշադրութիւն դարձնելու վերաբերմամբ շատ չքմեղանքներ անելուց և բացատրութիւններ տալուց հետո, նա նկատեց, թե դա վերաբերում է մինչև իսկ հագուստին, և որովհետև դեսպանը պիտի ներկայացվեր թագավորին, ապատվում եր, որ նա կրեր պարտադիրն պատշաճ հագուստ: Դեսպանը պատասխանեց, թե ինքը չեր հասկանում թե ի՞նչ եր նշանակում այդ, բայց նա չեր կարող իր յերկրի և բանակում իր ուղեկցած ասպիճանի հագուստից տարբեր հագուստ կրել: Միրզան ժպտաց, և ասաց թե այդպիսի նյութերի մասին իրենք ավելի գիտակ են, քան դեսպանն և յերևակայում: Ապա, նա մեջտեղ հանեց մի կապոց, և բազմաթիվ ծրարներ բանալուց հետո, ցույց տվավ փոքրիկ պատկերներն այն դեսպանների, որոնք յերկու դար առաջ այցելել եղին Պարսկաստան: Նրանցից մեկը, — որ համարում եր անգլիական ներկայացուցչի նկարը և հավատում թե Սըր Անթոնի Շերլեյն[3] եր, — կրում եր Յեղիսաբեթ թագուհու ժամանակի լիակատար տարազը: «Այս, ասաց միրզան, այն ձևն է, որ հույս ունինք՝ դուք էլ պետք է որ կրեք. նորին վեհա-

* Sketches of Persia, գլ. XVIII. էջ 122—156:

վտառութիւնը [Շահ Ալի Շահը] ցանկանում է բոլոր կերպերում հետևել Անգիեվի թագավորների սովորութիւններին, որովհետև նրանք լավ էլին հասկանում Պարսկաստանի գործ արժանապատվութիւնը»։

Դեսպանը չեր կարող չժպտալ այս առաջարկութեան, բայց տեսնելով որ մերոյն շատ էր մտահոգված, ներողութիւն խնդրեց և նրան ասաց, թե ինքը՝ չերը տեսնի Հաջի Իբրահիմին, այս մասին լուրը գոհացում կտա նրան։ Նախարարը շուտով ներս մտավ սենեակը. նա շատ զարմացավ, որ այնքան փոփոխութիւն էր կրել մեր հպատակը Յեղիսաբեթի թագուհու օրվանից ի վեր։ «Լավ, լավ, — ասաց նա կարճ, բայց ազդու կերպանակով, — մեր սովորութիւնները այնքան տարբեր են ձեզանից այս կետում, որ զարմանալի չէ սխալվելը, թեև չես բոլորովին չեմ սիրում մի սովորութիւն, որ ամեն և ամեն, որդիներին ծիծաղելու իրենց մեծ հայրերի վրա, բայց յուրաքանչյուր չերկիր իրավունք ունի ունենալու իր սովորութիւնները, որոնց պետք և հետևեն նրա ներկայացուցիչները»։...

Բոլոր խնդիրները,—այն է՝ մինչև այն վայրը ուր դեսպանը պիտի իջներ ձիուց, շքախմբի առաջացումը՝ ավիճակարձ, սուսերամերկ ու փողերը հնչեցնելով, թագավորին ժառանգելու կարգը, և նրա նստելու տեղը,—բոլորը կարգադրվեցին և գոհացում դեսպանին։ Սկզբում առարկութիւն չեղավ հետևորդների նստելու մասին, սակայն բազմաթիվ գրքեր ու պատկերներ մեջտեղ բերին՝ ապացուցելու համար Անգիեվի մեծապատիվների սովորույթն այս մասին, և ապա այս կետում դիջեցին։

Շատ լուրջ վիճաբանութեան տեղի տվավ՝ այն անձնավորութեան աստիճանի մասին, որ պիտի դիմավորեր դեսպանին սենյակի մուտքի առաջ, ուր ըստ սովորույթի՝ նա կանգ պիտի առներ մինչև որ հայտարարվեր թե նորին վեհափառութիւնը պատրաստ եր ընդունելու նրան։

Թագավորի առաջին զարմիկ և փեսան, որ չերբեմն հետամտել եր գահին, Սուլեյման Խան Կաջար (Sûliman khan Kajir), այն մարդն եր, որ նշանակվեց կատարելու դրամայի այս մասը։ Ավելի մեծ պատիվ չեր կարող տրվել դեսպանութեան, քան նրա նշանակումը, բայց կար մի անպատեհութիւն. — պնդում էլին թե վերոհիշյալ Սուլեյման խանը լինելով բարձր աստիճանի անձնավորութիւն, չկար աշխարհի վրա մարդ, որի համար նա վոտքի կանգներ ընդունելու համար, բացի թագավորից կամ արքայազուններից. բացի սրանից նա պալատի իշխան եր (Deevân Beg), մի պաշտոն, որ թագավորի բացակայութեան, նրան տալիս եր նորին վեհափառութեան տեղը։ Հակառակ այս հավակնութիւնների, համաձայնեցին, որ նա թեթև մի շարժում անի կամ կես բարձրանա, չերբ դեսպանը մտնի սենյակը. և որ վերջինս պիտի նստի կապերտի վրա հավասար աստիճանով,

Ամեն ինչ կարգադրված եր, չերբ մենք մեկնեցինք դեպի «Աշխարհի փառքի շեմքը», նոյեմբերի 6-ի առավոտը և մեր թվականի հազար ութը հարյուր տասում։ Մենք բոլորս հագել էինք մեր լավագույն զգեստները։ Մի ամբոխ հավաքվել եր Հաջի Իբրահիմ ասն մոտ և փողոցները լի էլին բազմութեամբ, տեսնելու համար առաքականներին։

Դեսպանի առաջից գնում էլին շքախմբի մաս կազմող հետևակազորը, իրենց թմբուկներով ու զլակներով (fife), և Հնդկաստանի (Hindustannee) բոլոր հանրային ծառայողները՝ կարմիր ու վոսկեգույն զգեստներով. դեսպանը հեծել եր արաբական գեղեցիկ մի ձի, փարթամորեն թամբված, բայց ամբողջովին անգլիական ոճով. նրան հետևում էլին իր խնդի պարոնները և իր հեծելազորը։

Ձերը մենք պալատից կես մղոն հեռու էլինք, ամեն ինչ լուռ եր ու կանոնավոր. այդ Ասիայի վիճակն եր ներկայումս կարգապահութեամբ։ Մենք անցանք հետևակների ու հեծելազորի շարքերից, և նույն իսկ վերջիններս վախենում էլին շարժել իրենց գլուխը։ Պալատը մտնելուց առաջ, միջնաբերդի առաջին հրապարակում, տեսանք բազմաթիվ մարդկանց, որոնք ճոխորեն հագնված էլին, և ձիերից մի քա-

նրա զարդարված էին մեծարժեք սանձերով, թամբերով և ասպազեններով, բայց պարսկական պալատի փառավորության մասին մենք միայն այն ժամանակ գաղափար կազմեցինք, երբ պալատի դռնից ներս մտանք և տեսանք թագավորի ընդունելության ընդարձակ ու պճնազարդ դահլիճի դիմացի պարտեզը։

Պարտեզի կենտրոնում հոսում էր մի ջրանցք, որ ջուր էր հայթհայթում բազմաթիվ աղբյուրների. նրա այ ու ձախ կողմերում կային սալահատակված լայն մայթեր, և նրանց տեսնում ծառերի շարքեր։ Ծառերի և պալատը շրջապատող բարձր պարսպի միջև կանգնել էին հին ձևի հրացանակիրները, և պողոտաներում, դռնից մինչև ընդունելության դահլիճը՝ բոլոր իշխաններըը, պետականները, պալատականները և պետական պաշտոնյաները դասավորված էին անշարժ կարգերով, համաձայն իրենց աստիճանի, սկսած արքայական թիկնապահների ամենաստորին սպայից մինչև զահաժառանգը՝ Աբբաս Միրզան[4], որ կանգնել էր իր հայրայրների այ կողմը և մի քանի քայլ հեռու զահից։ Այս բոլորի մեջ, չկար մեկը, որ չկրեր վսեմյա դաստապահով սուր, քաշմիրի շալ՝ իր գլխանոցի շուրջը և մի ուրիշը իր մեջքի շուրջը։ Իշխաններից ու պետականներից շատերը փառահեղորեն հագնված էին, բայց ամեն ինչ մոռացվեց, երբ ուշադրությունը դարձավ թագավորի կողմը։

Նա մյուսներից բարձր էր կերևում. տարիքը չկեռասունից քիչ անց, գույնը բաց, գիմագիծը կանոնավոր ու հոյակ. նա ուներ մի արտահայտություն, որ ցույց էր տալիս արագաշարժություն ու մտացիություն։ Ամենից ավելի մեր ուշադրությունը գրավեց նրա մորուքը, որ լեցուն էր, սև ու փայլուն և իջնում էր մինչև նրա գոտին։ Դժվար է նկարագրել նրա հագուստը։ Նրա վերարկուն հիմնականում ապխտակ էր, բայց ծածկված էր այնքան արտակարգ մեծությամբ գոհարներով, և նա հագած էր այնպիսի մի տեղ, որ արևի ճառագայթները անդրադառնում էին նրանց վրա և տալիս այնպիսի մի փառահեղ փայլուն, որ անկարելի էր



ՖԱԹ ԱԼԻ ՇԱՀ

(Պարսկական մի հինավուրց արտատպված Sykes «History of Persia» գրքից)։

պանապանել մանրամասները, որոնք մնացել էին տալիս նրա պատկերին։

Արարողության երկու պլեհավոր պաշտոնյաները, որոնք կրում էին մակկա գավազաններ, երկուսն էլ կանգ առին, երբ նրանք առաջանում էին գնալ դեպի դահը, քան խոնարհության անելու համար, և դեսպանը նույն միջոցին հանեց իր գլխարկը։ Երբ դահլիճի մուտքի մոտ էինք, թափորը կանգ առավ և արարողապետն ասաց. «Հարյուրապետ Ջոն Մալկոլմ չեկել ձեր վեհափառության, որպես դեսպան Հնդկաստանի բնդհանուր կառավարչի»։ Թագավորը նայելով դեսպանին, հաճելի ու առնական մի ձայնով ասաց. «Բարի եր գնկել» (Khoosh Amedee)։

Ապա մենք դահլիճի աստիճաններից վեր բարձրացանք, և նահանգինք ինչպես կարգադրված եր նախապես։ Ընդհանուր կառավարչի նամակը, որ թափորում տարվում եր մի մակկա սափորի վրա, բաց արին ու կարդացին։ Թագավորը հարցրեց Անգլիայի թագավորի և Հնդկաստանի իշխողի առողջության մասին։ Նա ցանկանում եր մասնավորապես դիտենալ թե իր տերության մեջ ինչպես էին վարվել դեսպանի հետ, թե նա, [դեսպանը], հավանում եր այն ամենը, ինչով տեսել եր Պահկաստանում։

Այս բոլոր հարցումներին պատշաճ պատասխաններ արվեցին։ Մոտ քսան րոպե նահանգից հետո, մենք հետացանք նորին վեհափառությունից, շատ գերախտապարտ լինելով մեր ընդունելությունից, և այն վստահությունից, որ ինչպես մեր միհմանդար[5] Ֆաթհ Ալի Խան Նուվի (Fatteh Ali Khan Noovee) հպարտեց, և ապա նախարարապետը հաստատեց, թե արքայից արքան շատ գոհ եր մնացել, որի պերճ ու վեհանձնությունը պղում եր թե ավելացնում եր իր համբավը և իր հպատակների մեջ տալիս եր իրեն հոչակ ու ժողովրդականություն։

Մեր երկրորդ ընդունելությունը տեղի ունեցավ քանի որ հետո, երբ դեսպանը տարավ [Հնդկաստանի] ընդհանուր կառավարչի նվերները, որոնցից մի քանիսը շատ արժեքավոր էին, մասնավորապես հայելիները, որոնք արդեն հիշատակված են[6]։ Հերկրորդ այցելության [ժամանակ] մի փոփոխություն կատարվեց. առաջին անգամվան նման մենք կանգ չառինք այն սենյակում, ուր հանդիպեցինք Մուհլման խան Կաջարին, [որովհետև] այդ մեծավորը դեսպանին վայել հարգանքը ցույց տված չլինելուն համար, երբ մոտքի չեղած չեր դեսպանի հարկադրաժեշտ մուտք ու ելք կատարած միջոցին, և հետագա վեճի առաջն առնելու համար, դեպի դահը առաջանալիս կանգնելը արարողությունը բոլորովին ջնջվեց։ Պատահար այս անգամ առաջին անգամից ավելի բազմամարդ եր, և լեհն կարելի չի ասել, թագավորը ավելի փառահեղորեն դիմատավորված։

Մեր նահանգից քիչ հետո նվերները հայտարարվեցին։ Նա մի քիչ անձկություն զգացի, երբ նախարարներից մեկը սկսեց կարդալ ցանկը։ Մեծ ցանկություն կար՝ նրանց [այդ նվերներին] տալ մի անուն, որ ցույց տար ուղարկողի ավելի ցածր աստիճանը. բայց դեսպանը չեր ուզում թույլ տալ, որ այդպիսի մի անուն դործածվի, և նա նախարարապետին ասաց՝ լեհն այդ տեսակ մի փորձ կատարվի, ինքը՝ հակառակ պարսկական պալատի խիստ սովորության, վայրկենապես պիտի դիմի թագավորին և ասի նրան, թե իր բնթած նվերները վնչ տուրք եյին և վնչ էլ ընծայաբերություն, ինչպես իր քարտուղարը անզգուշությամբ անվանել եր, այլ Հնդկաստանի բրիտանական իշխողի կողմից հաղվագյուտ և հետաքրքիր իրեր, ի նշան հարգանքի ու բարեկամության Պարսկաստանի թագավորի հանդեպ։ Այս հայտարարությունը, իր ցանկալի արդյունքը ունենալով. մեր նվերները անվանվեցին՝ հաղվագյուտ իրեր, և ընդհանուր կառավարչի բարձր աստիճանը, որպես մի անձնավորություն, որին վստահված և գերիշխան իրավունքները, այս պարագային նույնպես հիշատակվեց։

Այս այցելությունը սկզբում շատ պաշտոնական եր, բայց թագավորը՝ ցանկանալով մի ուրիշ երևույթ տալ, դեսպանին ասաց. «Այս մի տեղեկություն եմ ստացել, վո-

բին չես չեմ կարող հավատալ, այն է՝ ձեր թագավորը միայն մի կին ունի»։ «Ոչ մի քրիստոնյա իշխան չի կարող ավելին ունենալ», ասաց գեսպանը։ «Ո՛, չես այդ պիտի, բայց նա կարող է ունենալ մի փոքրիկ տիկին*»։ «Մեր բարեշնորհ թագավոր Ջորջ Յերրորդը, — պատասխանեց գեսպանը, — ինչպես այս, նամանավանդ ամեն բանի վերաբերմամբ բարեկամի ու կրոնի որինակ է հանդիսանում իր հպատակներին»։ «Այս բոլորը կարող է շատ պատշաճ լինել, — յեզրակացրեց նորին պարոկական վեհափառությունը, — բայց ճշմարտապես չես չեմի ցանկանա այդպիսի մի յերկրի թագավորը լինել»։

Մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ, յերբ մենք մեկնում էինք պալատից։ Թագավորի հսկան, ուժը վոտաչափ բարձր մի մարդ, և համեմատաբար գեր, կանգնեցրել էին պրան պատին, վորով մենք պետք եր անցնեինք, և նա իր ձեռքին ուներ ահագին մեծությամբ մի լախտ։ Սպասում էին, վոր գեսպանը նրան տեսնելիս պիտի գարմանա, եվ ես չանենք վախենա, բայց նա անցնելիս ուշադրության անգամ չարժանացրեց այս ահագին մարդուն, բացի մի թեթև ակնարկից։ Իրոգությունն այն եր վոր, ինչպես նա հետագայում խոստովանեց, նա չեր յերեակայել անգամ թե դա մարդկային արարած է։ Ռուստամի (Roostem) և իր լախտի, (վորի նմանությամբ հագնված եր հսկան) նկարները շատ սովորական են Պարսկաստանում, և արագորեն անցնելիս նա կարծել եր, թե նրանցից մեկն է։ Առաջին անգամ նա խելքի ընկավ և հասկացավ իր սխալը, յերբ իր մեհմանդարը գովեց նրան. «Հիանալի՝ — ասաց վերջինս նրան, — ավելի լավը չեր կարող լինել, հիմարները ցանկանում էին փորձել վախեցնել ձեզ՝ հսկաներ և լախտներ կանգնեցնելով պատի դիմաց, նրանց այդ և վայելում. ձեր աչքը հագիվ մի վայրկյան զարձավ դեպի նա, համոզվելով վոր նա ձեր ուշադրության արժանի չեր։ «Յես պիտի ասեմ նրանց, (ավելացրեց

* «Amma Keneczekee», բառացի արտահայտությունը նորին վեհափառության, վոր արձանագրած է բառացիորեն՝—«բայց մի փոքրիկ տիկին»։ (Ծանոթ. Մալկոլմի)։

նա, մի գգայուն վոր ցույց եր տալիս, թե ինչպես իր կարծիքով իր պատիվը ընկերանում եր նրան, վորին նա ապատարկում եր), թե այդ տեսակ հսկաները շատ սովորական են ձեր յերկրում, և այս հսկան հագիվ թե այնքան բարձրահասակ լինի, վորքան Անգլիայի թագավորի թիկնապահներից վորևե մեկը»։

Թեհրանից մեկնելուց առաջ, գեսպանը բազմաթիվ տեսակցություններ ունեցավ թագավորի հետ, վոր ընդհակառակն շատ բարեացակամ եր, անգամ մի քանիսի ընթացքում մտերմական. նա շատ եր խոսում և շատ հարցումներ եր ուղղում Անգլիայի բնության ու սովորությունների, և նրա կառավարության հատկանիշների մասին։

Մասնավոր Հնդկական կայսրության մասին, նա հարցրեց, թե, «ճիշտ և վոր ամեն տարի այդ յերկրից տասը նավ լի վաճառով և արծաթով ուղարկում են Անգլիա»։ Գեսպանը ասաց, թե շատ հավանգություն բան և վոր Արևելքի մեր յերկրներից ձուլ վաճառ ուղարկվի Անգլիա, միայն ապրանք և ուղարկվում։ «Ի՞նչ տուր, — ասաց նորին վեհափառությունը, — բայց այդ ինձ ասաց գեսպանը*, վոր նախորդում եր ձեզ, սակայն, (տեսնելով վոր գեսպանը նեղվում է), մի ֆուզվեք ամենքը ձերը չեն, այլ մերը, ձեր նախորդը մի պարսիկ եր. մենք բոլորս չափազանցում ենք, — դուք խոսում եք ճշմարտությունը։ Բայց դուք ինչո՞ւ մի պարսիկի ուղարկիք իմ արքունիքը։ Յենթադրում եմ, — շարունակելով պապախանել ինքն իրեն, — լսանալու համար թե ինչ տեսակ պարահ եմ յես, և թե իմ յերկիրը կայունացած է, և ապա դուք ուղարկեցիք ձեր ազգից մեկին»։

«Ֆրանսացիները, հարցրեց նա, զորավոր մի ժողովուրդ են»։ Անտարակույս, — պատասխանեց գեսպանը, — հակառակ պարագայում նրանք արժանի չպիտի լինեին անգլիացիների թշնամին կոչվելուն»։ «Ահա նորից, — ասաց

* Մենդի Ալի Խան, վորին մի տարի առաջ Բոմբեյի կառավարիչ Մր. Դուկան ուղարկել եր պարսից արքունիքը։

Թագավորը, դառնալով իր նախարարներին, — ինչ մեղ ասել են, որ Ֆրանսացիները մի սակաւ ու արհամարհելի ազգ են, մի բան որ անհամառասլ չի. գնացեք, ճշմարտութիւնը ասելով, արդարութիւն արեք նրանց, միաժամանակ բարեթացրեք և իր կերկիրը»:

Հարավային Ամերիկայի հանգիստ և Եվրոպայի արհեստների ու արդիւնաբերութեան մասին բազմաթիվ հարցումներ անելուց հետո, Թագավորը ասաց. «Այս բոլորը զարմանալի չեն. Պարսկաստանը բոլի պղպատից վոչինչ չունի»: «Պղպատը չեմն լավ արդիւնաբերվի,— ասաց դեսպանը, — աշխարհի սկզբից մինչև մեր օրերը մեջտ ել դի բազանցել և բոլոր մյուս հարստութիւնները»: «Շատ ճշմարիտ է, ասաց Թագավորը, բավական դոհ այս հանդիպումից, — դա շատ ճիշտ նկատողութիւն է. հետևաբար պետք չե որ մենք դանդաղենք, այլ շարունակենք դոհ լինել, ինչպես մեր նախնիքն են եղել, մեր օրերում ու մեր նիստակներում»:

Թագավորը տեղեկացել եր, որ դեսպանը նախարարի հետ ունեցած իր խոսակցութեան ընթացքում ցույց եր տվել բավական շատ ծանոթութիւն իր ընտանիքի պատմութեան մասին Աստրապատում (Asterabad). և այս առիթով նրա հետաքրքրութիւնն արթնացած լինելով, նա կանկութիւն հայտնեց ընդունել նրան: Մեզ ընդունելին առանձին հետաքրքրում, որ միայն մի քանի պալատականներ կային, այնտեղ ելին նաև բազմաթիվ կաջար ցեղապետներ և այդ ցեղի չորս կամ հինգ ավագները (Reesh-e-Seffeed):

Հարցաքննութիւնը սկսեց. և որովհետև դեսպանը իր տեղեկութիւնները քաղած եր այն մանրակրկիտ ու ճշմարտախոս ճանապարհորդ Զոնաս Հանվեյից[7], ապա նրա պատասխանները բոլորովին զարմացրին ներկաներին, և կարծ նա նրանց հաղորդեց ոչ միայն այն դեպքերը, որ կատարվել ելին հետո վեց* տարի առաջ, այլ նաև նկարագրեց տարբեր ցեղապետների անձնական տեսքը, սրամտութիւնը՝ կապակցութիւնները և նկարագիրը. ավագներն իրենց զարմանքն ելին հայտնում հառաչ կրկնելով՝ «Յա Ալի», մի բացականչութիւն, որ մի պարսիկի բերանում, արտահայտում և զարմանքի զգացում: Թագավորը ավելի քան գոհ եր. նա հրճվում եր իր ընտանիքի պատմութեան մասին դեսպանի ունեցած տեղեկութիւնից, նա հավատում եր, թե իրենց համբավը հասել եր Եվրոպա, և թե ինքն այդ կերկրամասի ժողովուրդներին այնքան ծանոթ եր, որքան Գուրգանի (Goorgân) թուրքմեններին ու Մազանդարանի (Mazenderen) բնիկներին:

Դեսպանը այս պարագայում ասաց ճշմարտութիւնը, բայց ոչ ամբողջ ճշմարտութիւնը: Այն արքունիքի նկարագիրը, որտեղ վկայութիւն եր տալիս նա, հավանորեն վերջինին պահանջը չեր զգում, և նա կարող եր նվազեցնել ընդհանուր հաճույքը, լեթե խոսեր կողոպտված հակերի և թուրքմեններին սարսափի մասին, որ այնքան ազդել եր խեղճ Զոնաս Հանվեյի մարմնի վրա: Ինչվոր և, Թագավորը հրճված եր, և մանրամասն խոսից զանազան նյութերի մասին: Ի միջի այլոց նա մանավորապես հարցրեց անգլիական կառավարութեան կազմի մասին:

Դեսպանը բացատրեց նրան, որքան որ կարող եր: Յետը նա խոսում եր հպատակի ազատութեան մասին, նորին վեհափառութիւնը շվարած չեր իմանում թե ինչ եր նշանակում այդ, բայց կերը ասեց, թե ոչ մի մարդ այնքան բարձր չե, որ կարողանա կերկրի որենքների դեմ վերև բան անել, թվում եր, թե նա հասկացավ ինչպես այս, այնպես էլ նրան բացատրված մնաց կետերը:

«Հասկանում եմ, ինչ որ դուք ասացիք,— նկատեց նա, և մի քիչ մտածելուց հետո ավելացրեց, — Յես տեսնում եմ, որ ձեր Թագավորը միայն կերկրի առաջին դատավորն է (Ket-Khûdâ-e-avvel): «Ճիշտ վեհափառութիւնը, ասաց դեսպանը, ճիշտ և սահմանում նրա դերքը»: «Իշխանութեան այդ վիճակը, ասաց նա ժպտալով,— մշտական է, բայց վայելք

* Զոնաս Հանվեյ Աստրապատում եր 1744 թվին, Ֆաթ Ալի Շահի նախանոր ապստամբութեան ժամանակ:

չունեն. իմս վայելք եւ Տիեզ Մուհիման խան կաղարին, եւ թագավորութեան առաջնակարգ պետավորներին, ես կարող եմ կարել նրանց գլուխը: Ձեմ կարող», — հարցրեք նրանց: «Անկասկած, Աշխարհի պաշտամունքի կետ, (Kibla-e-Alem), նեղն այդ հանգելի չի ձեզ»:

«Դա է իրական իշխանութիւնը, ասաց թագավորը, բայց դա հարատև չեր: Ձերը ես չգամ, իմ զորքերը պետք է կռվեն թագի համար, և ամեն ինչ խառնաշփոթի պետի լինի, սակայն մի մխիթարութիւն կա, այն է՝ Պարսկաստանը պետք է կառավարի մի գինուոր»:

Այս այցելութեան ընթացքում թագավորը չերեսում էր լավ տրամադրութեան մէջ, և իր գոհունակութիւնը արտահայտեց՝ ցույց տալով նրան իր ամենահարուստ գոհարեղենները, որոնց մէջն էր «Լոյսի Ծովը» (Darîâ-e-Noor), որ՝ ինչպես երեսում էր, աշխարհի ամենաարժեքավոր ու ամենամաքուր ադամանդներից մեկն էր: Մյուսները նմանապես գրամանալորին փառահեղ կային:

Այս այցելութիւնից հետո, չերեկոյան, իմ հարգելի բարեկամը՝ որին հիշել եմ նախապես, այն անձը, որ բազմ ծառայութիւնը գերազանցում էր Պերսեպոլիսի ավերակների տեսարանից, — ասաց թե ինք սիրով կլիներ Պարսկաստանի թագավորը: Գիտենալով որ նա ազգային փառասիրութիւն չունեն իր մաքում, ես նրան հարցրի, թե ինչ պետք աներ նեղն հաներ այդ գերքին: «Թագն առնել ու փախչել», ինձ նրա արագ պատասխանը:...

Ջաֆթ Ալի Շահի կացութիւնը, առաջին անգամ չերը տեսա նրան, իր մահմեդական հպատակների կողմից համարվում էր այնքան չերջանիկ, որքան մարդկային մի արարած կարող է ունենալ այս աշխարհում: Բացի չերեսասարդութիւնից ու անձնական ձերքերից, նա ունի չորս կին, և ավելի տիկիններ քան ես կարող եմ թվել, և գրեթե մի հարյուր զավակ, մի փառավոր գահ, և հետևանքով չերկար ապրելու և վայելելու, որովհետև իր անգութ, բայց կարող հորեղբայրը՝ Ագա Մահամեդը վոչնչացրել էր բոլոր նրանց, որոնք կարող էին գահին տիրելու պահանջ ունենալ: Գործածելով նրա խոսքերը՝ «Նա բարձրացրած է մի արքայական պալատ, շագանակած արյունով, որպեսզի մանուկ Բարախանը, (անունը, որ նա միշտ տալիս էր իր չեղբորորդուն), այս պարիսպների ներսում կարողանա հանգիստ քնել»:

Թագավորը ունի վայելուչ վարվելակերպ և շատ ձերքեր: Ի միջի այլոց, նա բանաստեղծ է, և գրել է տաղերի մի գերք, որի մասին պարսիկ քննադատները մեծ գովեստով են խոսում:...

Ձեռ հարցումներ արի նրա սովորութիւնների ու ժամանցների մասին: Նա շատ կանոնավոր կատարում է իր հասարակական պարտականութիւնները, և որպես Պարսկաստանի թագավորը, անհոգ չեր: Նա գրամարում է որակական չերկու ավագաժողով՝ մեկը հրապարակային և մյուսը ներքին: Առաջին (ժողովում) նա ընդունում է իր զորքերի, պետվականների, նախարարների և հասարակական պաշտոնյաների զոլջույնները. սրան ոտարականներն էլ կարող են ներկա լինել: Ձերկրորդում ներկա են իր նախարարներն ու վստահելիները և գործնական բնույթ ունի:

Այս թագավորը, ինչպես նույն տարիքի ու նույն բնավորութեան ուրիշ շատերը, իր պարապ ժամերը հատկացնում է այն ձևականութիւններին, որ սովորութիւնը պարտավորեցնում է իրեն, չերբ նա հասարակութեան աչքի առաջ է գտնվում: Նա սիրում է գաշտային սպորտ, հետևելի ձիավար է և լավ վարորդ:

Նա սիրում է գրական մարդու իր համբավը, և վորոշ ժամանակ է տրամադրում ուսեալ մարդկանց ընկերութեան, և հաճույքով լսում է բանաստեղծութիւններ ու պատմվածքներ: Սակայն, ինձ ասացին, թե նա ունի նաև մանկական վարձութիւններ, որոնց ընթացքում իր մտերիմները, հետևորդներն ու ծառաները մասնակցում են մեծ ընտանութեամբ: Հոլի Իբրահիմի տարիքը և նկարագիրը բնականապես վորոշ տարբեր է աղդում թագավորին, և անսովոր մի

կաատակ չեն, որ՝ կերը նորին վեհափառությունը գոռում-գոչում են, արտասվալ անձնավորությունները մեկը բացականչում է. «Հաջին, Հաջին», իբր թե տեսել են, որ նախարարը մառնում է: Բայց կերիությին այդ անունը խալխանի ապիկությունն է թողնում. բոլորը լրջանում են և մի րոպեում նառում իրենց տեղերը, մինչև որ ընդհանուր ծիծաղը կերևան և բերում թե դա սուտ մի կաատակ է:

Յետ առիթ ունեցա նկատելու, որ թագավորը շատ է սիրում ծիծաղել իր ամենամոտիկ նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների հաշվին. Հաջի Իրրահիմը վատահությունից ինձ, թե նա կերիկը նրան այնքան գոհ ու ուրախ չի տեսել, որքան կերը այս ուղղությամբ պատահությունն է ունենում, ինչպես մեզ պատահած կերիու դեպքեր առիթ են ընծայած:

Սուլեյման կաղար Յանը, որի ամբարտավանության մասին ես արդեն խոսել եմ, իրեն տակաւ զգալով, լուր ուղարկեց՝ պահանջելով որ անգլիական առաքելության բժիշկը այցելի նրան: Այս պարոնը գնաց, բայց վերադառնալով նա պարզեկներն չեր խոսում, նրան ընդհատյալ գեսպանի ազգականներից մեկը: Իմ այս սիրելի բարեկամը, (որ ավելի, այժմ վոչ ևս է), լցվել իր ունեցած ծանոթությամբ և իր հաճելի վարվելակերպով, ընդհանրապես սիրված եր պալատում, և հայտնի եր մանավանդ կոչումով Ֆեյզ Ալի (Feiz-Ali), որ ավել եյին նրան, նրա անգլիական անվան նմանության համար: Պարսիկ մեծավորը նրան և բժշկին ընդունել եր այնպիսի սառնության և հպարտության, որ կերը նա ցանկացել եր, որ մի կերկրորդ այցելություն տրվի, նրանք չեյին ուզում այդ անել, սակայն գեսպանը, նախանձախնդիր լինելով, որ ամեն ուշադրություն ընծայվի թագավորին այնքան մոտ մի ազգականի, պնդեց որ նրանք գնան: Նրանց ընդունելությունն այս անգամ ճիշտ առաջինի հակառակն եղավ: Սուլեյման խանը պահանջել եր, որ նրանք իր մոտ նառին, նրանց հյուրասիրել եր անուշեղենով ու սուրճով և ծիծաղել բժշկի վրա, որին առաջարկում եր բուժել իր մի աչքի [ցավը], որ ուժգ եր կնկել մառով խառնելուց, և կերը բժիշկը հայտարարել եր, թե անկարող է, նա ասել եր, թե ինքը ուրախ է որ կնվրոպացի բժիշկները չունեն այն մոգական ուժը, որ իր հայրենակիցները իրենց ոգիտությամբ վերագրում են նրանց:

Յերկու պարոնները վերադարձան ճիշտ այն պահուն, կերը մենք ճաշի եյինք նառում Հաջի Իրրահիմի հետ: «Լավ— ասաց նախարարը, խոսքը ուղղելով գեսպանի ազգականին, — ինչպես գտար Սյուլեյման խանին»: Ինչվոր պատասխանել եր, կրկնեցին: «Ինչո՞ւ, ասաց Հաջին, խանը պետք է որ հարբած լիներ»: «Շատ հավանական է, ասաց իմ բարեկամը, ինչ որ կես կարող եմ ասել, այն է որ նա շատ քաղաքավարի եր և շատ հաճելի, և շատ եմ ցավում, որ նա հարբած չեր մեր առաջին այցելության ժամանակ»:

Այս պատասխանը մեծ զվարճություն պատճառեց Հաջիին, և միևնույն կերեկոյան նա նույնությամբ պատմել եր Թագավորին, և մենք տեղեկացանք, որ նորին վեհափառությունը հաջորդ որը ծաղրանքի առարկա եր գտնելու իր ազգականին, ասելով նրան թե Ֆեյզ Ալին նրա մասին ասել է, թե «հաճելի ընկերակից է և շատ քաղաքավարի պարոն, կերը հարբած է»:

Մյուս դեպքը ավելի մեծ հրճվանք պատճառեց «արքայից արքային»: Բազմաթիվ ազնվականներ և նախարարներ խնդրել եյին, և արտոնություն առացել ճաշի հրավիրելու գեսպանին: Սրանց մեջ կար մեկը, որ շատ մոտ ազգական եր նորին վեհափառության և կոչվում եր Մահամեդ Հյուսեյին խան: Սպասվում եր, որ այս ազնվականը այցելի գեսպանին, բայց նա ղացավ տալ հարկանքի այս նշանը: Հետևանքն այն եղավ, որ գեսպանը մերժից հարգել նրա հրավերը: Սա առաջ բերից մեծագույն շվոթություն. թագավորը բազմաթիվ անգամ հայտարարից թե, կերթե գեսպանը գիջի այս պարագային, նորին վեհափառությունը այդ պետի նկատմամբ իրեև անձնական շնորհ, և ուշք պետի դարձնել, որ նա վերստին չդրվի այդպիսի դրության մեջ: Հա-

Չին ավելացրեց իր անձնական ադեքսը. «Եթե դուք չգնաք, այս հարցը կաջարի անձնական արժանապատվության տրված վերաբերմունքը պետք վերագրվի իմ խորհրդին»: Նախարարի մասին ունեցած նկատումը ավելի ազդեց գեներալի վրա, քան ուրիշ վերևն պատճառ, և նա համաձայնեց ընդունել հրավերը, հայտարարելով թե ինքը բնդ առաջ է գնում Թագավորի ցանկության:

Գեներալը, երբ մուտք գործեց ճաշի հարկարաժինը, թեև նա պետք և ճանաչեր իր հյուրընկալին, հենց այն հանգամանքից վոր նա պատվավոր կերպով նստել եր հյուրերից հետու, այնուամենայնիվ նրան ցույց տալու համար, թե վերջան անտեղի չեր ճաշի գնալ մի մարդու տո, վորի հետ գեռ ծանոթացած չեր, դարձավ դեպի մեհմանդարն ու ասաց. «Այս Umrahներից (Omrah) վերն և Մոհամեդ Հուսեյնն Խան Դուդախին»: Մեհմանդարն այնքան շփոթվեց, վոր չկարողացավ պատասխանել, միայն նշանով ցույց տվեց վեհաշուք անձնավորությունը, վորն այժմ վերագրված հարգությամբ առաջ չիկավ, մինչդեռ ամենքը ապշած նայում եյին:

Հակառակ այս վատ սկզբնավորության, ամեն ինչ լավ անցավ շնորհիվ նախարար Ռիզա Կուլի խանի հաճելի վարվեկերպին և ծանոթության, վորն ամեն ճիգ թափեց լավ սթենոլորտ ստեղծելու համար:

Մինչև մենք վերադարձանք տուն, նա [գեներալը] պատակ չեր այն անակնկալի պատճառին, վոր մեհմանդարին ուղղված հարցումը տեղի եր ունել: Գեներալը, վոր հասկանում եր պարսկերեն, բոլորովին անտեղյակ եր Թուրքերենին, և հետևաբար չգիտեր վոր դուդախի (Doodâkee) սիստեմը, վոր նա ավելց իր հյուրընկալին, — լսել եր, վոր այդպես են անվանում նրան, — պատվի սիստեմ չեր, այլ մի մակնուն, վոր նշանակում և «հաստաշուրթ»: Այդ [մականունը] ավել եյին գրավելով նրա կերպարանքից, և վորը կարող եր զանազանելու համար նրան ուրիշ հարյուրավոր

Մոհամեդ Հուսեյնին խաներից, վորոնք պատկանում են Թրքական կաջար ցեղին:

Տիղեկացանք, վոր Թագավորը շատ եր զվարճացել այս պատահարով և գործ եր ածել քիչ հետո, երբ մեր հյուրընկալը կանգնած եր գահի մոտ, ուրիշ մեծավորների հետ, նա բացականչել եր. «Այս բոլոր Ոմրաներից վեր ն Մոհամեդ Հուսեյնն Խան Դուդախին»:

Թագավորը ամեն որ մի քանի ժամ անց և կացնում հրեաների կամ կանանց հարկարաժնում: Եհեն իմ փոքրիկ լերկի նկարագիրը Թույլ տար, ես կարող եյի այստեղ ազատություն տալ իմ լերևակայության և ստեղծել մի շարք տեսարաններ, վորոնք թեև անլերակատ, բայց կարող եյին հաճելի թվալ և հետաքրքրել իմ ընթերցողներին: Ես կարող եյի նկարել չերքեզուհիներ ու վրուհիներ գերազանց դեղեցկությամբ, հագցնել նրանց անզուգական շքեղության պատմուճաններ ու զոհարներ, վոնց տալ անգյալի անմոռանալի նախկին սերերի խորհրդյան դուբ վիշտը, մյուսներին նախանձի խայթոցները, և անուշադրության փոխված սիրո պատմությունը: Ես կարող եյի գծել լավ ծրագրված ինտրիգներ, մազապուրծ խուսափումներ, և կատարված ոճիրների ակնարկներ, ուր մի աչք չի կարող թափանցել, և վոչ մի լեզու չի կարող պատմել սարսափի պատմությունը, բայց բոլոր այս գրգռիչ նյութերը արգելված են ինձ, համաձայն այն անմոխ կանոնի, վոր ես գծել եմ ինձ համար և վոր սահպում և ինձ, չանցնել վեպերի սահմանից, ինչ վոր ես անձնապես պատմում եմ:

Ինչ վոր ես լսել եմ պարսից Թագավորների հարեմի մասին, այնտեղ տիրող ձևականությունները միևնույնն են, ինչպես մյուս հարկարաժիններում:

Թագավորը, ինչպես ամեն բարի մահմեդական, պարապում և կանուխ, վորովհետև առաջին պարտքը պետք և ասի աղոթքը, սպասուհիները ոգնում են նրան հագնվելու: Հագնվելուց հետո, նա ուտելիք և մի ընդունելություն, վորին ներկա են գտնվում տարբեր աստիճանի ներք հարյուր

կանայք: Յուրաքանչյուրը իր ասիճանի կամ նպաստավորման համապատասխան կանդնում է գահին մոտ կամ հեռու: Տեղևկանում եմ, որ յերկուքը միայն արտոնություն ունին նստելու, — պահաժամանդի մայրը և Շաւշի Իբրահիմ Խանի դուստրը:

Հարեմում ամեն կարգի կին պաշտոնյաներ կան: Համարտավության ախչին, արարողական ախչին և պլխավոր վերահսկիչ ախչին: Առաջինի պարտականություններից մեկն և յերիտասարդ ռաբահականներին ներկայացնել սերոյ ու վեհապետին, յերկրորդն առաջնորդում և ամենքին իրենց տեղը, համաձայն նրանց արժանապատվության կամ նախասահման, և յերրորդը պինդած և հեղինակություն, որ յեթե ճիշտ և, բիչ անգամ չե որ գործի չե անցնում:

Մի քանի ախչիների պատկություն շատ մեծ և: Այն իշխանների մայրերը, որոնք հեռավոր նահանգներում են պաշտոնավորում, սովորաբար ընկերանում են իրենց որդիներին, և ինարիկներով ճգնում են պահպանել այն ուժը, որ յերբեմն հրապուրը ավել և իրենց. գրեթե բոլորն էլ ամեն տարի այցելություն են գալիս թագավորին:

Ներքին հարկաբաժնում կան յերգիչների ու պարողների, ծպրտածուների ու միմոների խմբեր, որոնք ծառայում են զվարճացնելու թե նորին վեհափառությանը և թե նրա ախչիներին: Կան նաև կանայք, որ զանազան ապրանքների առուտուր են անում, և սրանցից շատերը արտոնություն ունեն քաղաք հաճույս ներս մտնել և դուրս գալ:

Բացի սրանցից՝ Պարսկաստանի թագավորը կարող և ամուսնանալ միայն չորս կանանց հետ. սրանք ընտրվում են քաղաքական և ոչ թե սիրո նկատումներով: Հարեմում գտնվող մյուս կանանցից նրանք տարբեր դիրք ունեն. նրանք ունեն անջատ հաստատություններ, և միշտ ուշադրության ու հարգանքի առարկա են, թեև շատ քիչ անգամ սիրո: Բայց իրական սերը գժվար և յերևակայել որ տեղ գտնի նկարագրված իրականության մեջ, սակայն ինձ պատմեցին մի կարճ, բայց արտառուչ պատմվածք, այնքան հանգամանորեն հաստատելու համար ճշմարտությունը, որին չես կասկածում, և արդյոք արդյո՞ք մի ժամանակ գիտեր այս նվիրական բառն, [սիրո], նշանակությունը:

Շերազից մի յերիտասարդ պարոն, Թուֆի* անունով, իր խոնարհ ասիճանից բարձրացավ՝ դրավելու համար մի տեղ արքայական հարեմում: Թուֆին, որ իր արհեստի բերմունքով պետք եր որ ճանոթ լիներ շատերին, ասում եին, թե շատ նուրբ ու վայելուչ կազմվածք ուներ, գեղեցիկ ձայնով և մի գիմագիծ, որ արտահայտում եր զգացում և մտայնություն: Նա վաստակից արքայական սիրահարն սիրաբ, և ըստ համբավի, նրան ավավ դրա փոխարեն իր ամբողջ կյանքը: Յերբ նա ապրում եր, մյուսներն անտեսված եին, բայց այդ սիրուն ծաղիկը չուտով թոշոմից ու մեռավ: Թագավորի վիշտը ծայրասահման եր: Նա հրամայեց, որ նրան թաղեն սուրբ Շահ Արդուլ-Ազիմի խորանի մոտ, որ մայրաքաղաքից հինգ մղոն հեռու չե: Այս դիպքից ի վեր նրա այցելությունները գեպի այդ խորանը գառել են շատ ավելի հաճախակի, քան առաջ. թե այդ րոպեում և սրբի մասունքների հանդեպ ունեցած հարգանքից, թե իր սիրեկան Թուֆիի խոր վշտից, կարելի չե վճռել, բայց շատ հաճախ տեսել են նրան՝ նստած նրա շիրիմի վրա, մի մելամաղձոտ հաճույքի յերևութական վայելքի մեջ:...

Թագավորը մեկնում և Ներքին հարկաբաժնից ժամի ուբին: Նախաճաշից առաջ մեկ կամ յերկու ժամ նա անց և կացնում իր ժառերի ընկերակիցների հետ, որոնցից Մահամեդ Հուսեյնն Խան Մերվին ամենից նշանավորն և, որին նա արժանի չե՝ թե իր ասիճանով և թե իր գերազանց հատկություններով:

Ներքին վեհափառության նախաճաշը մատուցվում և մեծ շքով. պնակները զուտ վոսկի չեն, սա սովորաբար առավոտները ժամի տասին և լինում, ճաշը՝ յերեկոյան ժամի ութին:

Այն ափսեները, որ պարունակում են արքայական ճաշը,

* Թուֆի պարսկերեն նշանակում և թուֆակ (Ծանոթ. Մալկոմի):

կնքվում են գլխավոր մասակարարի կողմից, մի պաշտոն, որ պահանջում է մեծ վստահություն, և մինչդեռ այս նախզգուշություններ ձեռք է առնվում թունավորման դեմ, մի բժիշկ ապասարկում է, որպեսզի արքայական ախորժակը չափազանցություններ չգործե և չվնասե նրա առողջությանը:...

Վոչ վոքի չի թուլատրվում ճաշելու թագավորի հետ, բայց ընդհանրապես նրա փորը յերեխաներից մեկ կամ յերկուսը գանվում են նրա մոտ, որոնց նա ասլիս է այն պնակներից, որ կարծում է թե նրանք շատ են սիրում. նա նմանապես իր համար պատրաստված կերակուրներից յերբեմն ուղարկում է ուրիշներին, իբրև շնորհի նշան: Հաճախ դեսպանին պատահում եր՝ իբրև նվեր ուղարկելով հաց, բրինձ և փիլավ:...

Յերբ առաջին դեսպանությունը մեկնեց Թեհրանից, թագավորը շատ առատաձեռն գանվեց: Մենք բոլորս նորին վեհափառությունից ընդունեցինք պեղպեկ հագուստներ, դեսպանին արվածը ամենից շքեղն եր, բայց որանից նա ընդունեց նաև մի ձի, և մի զաշույն վարքամարին ընդլուզված գոհարներով: Մեծ նախանձախնդրություն կար, որ նա [դեսպանը] հագներ այս հագուստները, բայց նա ասաց թե կամենում է կրել այդ հագուստներից այնպիսի մեկը, որ կարելի կե հագնել իր հագուստի վրա, բայց չի կարող հանել իր համազգեստի վորևե մասը: Թագավորը, մեր յերկերորդ այցելության ժամանակ յերդիծանքով ակնարկեց նրա այս մասնավոր համառության. «դուք անարդար եք ձեր սեփական տեսքի նկատմամբ, ելչի, ասաց նա, յեթե այն գլխանոցը որ կես ուղարկեցի ձեզ, դուք կրեյիք, դուք Պարսկաստանում ամենատարածրահասակ մարդը պիտի կեիք»:

Մեր բաժանումը Հաջի Իբրահիմից, վորոշ հանգամանքների պատճառով ճշմարտապես հուզիչ եր: Այս արտակարգ մարդը շատ մտերմացած եր դեսպանին, որին նա հայտնեց իր նախատեսությունը, թե շուտով ինքը մահվան պիտի դատապարտվի: «Թագավորը և իր նախարարները, ասաց նա, բոլորը նախանձախնդիր են վոչնչացնելու ինձ: Ջեր ժամանումը մի ու ժամանակ հետաձգեց նրանց ծրագիրը, բայց այդ ել միայն կարճ ժամանակամիջոցով: Դյուրությամբ կարող եմ ազատել կես ինձ, բայց Պարսկաստանը կրկին պատերազմի մեջ պիտի մերձվի: Իմ նպատակը, շարունակեց նա, — մի թագավոր սալն եր իմ յերկրին, ինձ համար նշանակություն չուներ թե նա լիներ Զենդ կամ Կաջար, միայն թե վերջ գտներ ներքին քայքայումը: Բավական և ինչքան արյան տեսարանների ականատես եմ յեղել, այլևս չեմ ուզում, որ կրկնվին, հուսս ունեմ թե կես իմ հաշտությունը կնքել եմ ասածու հետ, և հետևաբար պոհ կը մեռնեմ»:

Դեսպանը, — որ հաջողած եր արտաքին մի համաձայնություն ստեղծել Հաջի Իբրահիմի և մյուս նախարարների՝ Միրզա Սեֆիի և Միրզա Կուլիի մեջև, — առիթից ոգավեց՝ խնդրելու իր բարեկամից, որ նա ավելի հարգանքով վերաբերվի և նկատառում ունենա այս անձնավորություններին հանդեպ: Նա նմանապես թախանձանքով հորդորեց նրան, որ նա թագավորի վատ տրամադրություններն ու կատաղությունը ստանի ավելի չափավորությամբ, քան այդ անում և ներկայացնա:

«Ձես չեմ կարող փոխել իմ բնավորությունը, ասաց Հաջին, պարզ և և վորոշ, այն ընթացքը, որ դուք հանձնարարում եք, ոգուտ չունեմ. դա միայն պիտի վտանգեի իմ ճակատագիրը: Իմ թշնամիների վախը նրանց այն յեղրակացության պիտի բերի, թե դա բարդ ծրագիրներ թագցնելու համար եր»:

Այս խոսակցությունը տեղի ունեցավ մեր մեկնումից յերկու որ առաջ, և մեկնումի որը Հաջին յերևում եր շատ մելամաղձոտ: Դեսպանը սովորություն ուներ մեծ ուշադրություն նվիրել և խաղալ նախարարի փոքր զավակի հետ. նա հինգ տարեկան մի տղա յեր: Յերեխան, որ լավ դաստիարակված եր պարսկական սովորությով, հանդարտ սպասեց մինչև դեսպանը շարժվեց դեպի դուռը, այն ժամանակ վազեց նրա յետևից, և փորձելով բռնել նրա հագուստը, ընկավ

իր կրնան վրա և սկսավ լալ։ Հաջին, մոռանալով հայրական պատժման բոլոր ձևերը, նմանապես գնալ առաջ վազեց, և գրկի մեջ առնելով իր մորքուրն, ասաց.— «դու սիրտ ունես, ապա, դու սիրտ ունես (Dil dāree tifl. dil dāree), բայց ասվածդ,— ասաց նա գեսպանին յուր ձայնով — տեղեկացրել և նրան թե ինքը շատով պիտի կորցնի իր հորը, և աղաչեցրել և նրան, ուր պետք եր վճռական մի բարեկամ»։

Նախարարի նախատեսությունները իրականացան, թեև նրա ճակատագիրը հետաձգվեց կրկու տարով, գլխավորապես Թագավորի մոր ազդեցության շնորհիվ, որ լավ եր ճանաչում Հաջի Իբրահիմի պես մի ծառայի արժեքը։ Նրա, [Թագավորի մոր], մահը տպավորեց բոլոր արևց նրա թշնամիների առաջ, որոնք հնարավորեցին այնպիսի ամբաստանություններ, որ կարող եյին ազդել Թագավորի հպատակության վրա կամ վախ առթել նրան, և այս բոլորը՝ վոչնչացնելու համար նրան, որից միաժամանակ և՛ սարսափում եյին և՛ ատում։ Ինտրիգները հաջող եյին, և այն իրողությունը, որ այս խնդրում մեծ մարդը արհամարհանքով դրժեց իր դեմ ուղղված ամբաստանությունները, պատճառ դարձավ նրա անկմանն ճանապարհին։ Պարսկաստանի բարբարոս սովորության համաձայն, նրա կեղբայրներն ու մորքինները եվ չհնթարկվեցին այս դատավճռին։ Սրանք, թեև բնակում եյին Թագավորության տարբեր մասերում, [սակայն] բոլորն եվ ձերբակալվեցին միևնույն որում, և միևնույն ժամում, այնքան լավ կազմակերպված եր ծրագիրը։ Վոմանք մահվան դատապարտվեցին, վոմանք կորցրին իրենց աչքը. նրանց բոլորին ինչքերը հարքունիս գրավվեցին։ Հերթով, ուրիշ պատճառների հետ, կրկար տարիներ իշխանության վարող այս ընտանիքի հարստության կողոպուտը՝ նվազ մի ահեղ չեր այս համբավի ու հարստության մեկամտաձոռ վերջավորության։

Ասում են, թեև Թագավորը փորձում և համոզել ինքն իրեն, թե Հաջի Իբրահիմը մատիր եր ապստամբել, և իր գահը վտանգի մեջ եր այս ուժեղ հպատակի գոյությամբ, սակայն, նա հաճախ խղճահարվում և իր սխալական վերաբերմունքի համար։ Պետության գժվարությունների պարագաներում, շատ հաճախ նա հանդիմանում և իր ներկա նախարարներին, Պարսկաստանի այս կորուստին համար, որի պատճառը նրանց մեքենայությունն ու նախանձն են յեղել, բացականչելով. «Ո՞ւր և Հաջի Իբրահիմը, նա միայն կարող եր խորհուրդ տալ միապետին»։

Թերևս այս նյութի մասին Թագավորի զգացման մի ապացույց կարելի յե ընդունել այն, որ նա տեղյակ լինելով այն հուզիչ տեսարանին, որ կատարվել եր 1800 թվին, Հաջի Իբրահիմի ամենափոքր տղայի կողմից գեսպանի թեհրանից մեկնումին առթիվ,— այժմ գեպի Պարսկաստան կատարված կրկրորդ դեսպանության միջոցին, նա [Թագավորը] հրամայել եր այդ աչազուրկ պատանուն, որ այնքան խնամք եր վայելել իր մանկության օրերին, դիմավորել մեզ, և ընդունել, ինչպես և յեղավ, իր նախկին բարեկամի ուշադրությունն, համակրությունը և մխիթարությունը, ինչպիսի կարելի յեր տալ մի անձնավորության, նրա այս մելամաղձոտ վիճակում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սըր Ջոն Մալկոլմ դյուզացու տղա յե. ծնվել և Դումֆրիսջայրում, Սկոտլանդ, 1769 թ. և սատկել և պինվորական կրթություն 178[illegible]-ին նա գնաց Հնդկաստան, որպես պինվորական 1799-ին Հնդկաստանի կառավարիչ Լորդ Ուելսլեյ նրան ուղարկեց Պարսկաստան, որտեղից Բաղդադի ճանապարհով վերադարձավ Բոմբեյ, և այնուհետև սկսում և նրա պինվանապետական գործունեությունը Հնդկաստանում, յերբ նա բանակցություններ և վարում հնդկական յեղապետների հետ Պարսկաստանում նրա կատարած դերի մասին խոսած և այս հատորի ներածականի մեջ։ Պարսկաստան կատարած յերկրորդ առաքելությունից հետո նա վերադարձավ Անգլիա և հրատարակեց իր «History of Persia» (յերկու հատոր, 1815)։ 1827 թվին նա նշանակվում և Բոմբեյի կառավարիչ, որի ընթացքում նա մտցրեց մի շարք տնտեսական ու վարչական բարենորոգություններ։ Հնդկաստանից հետացավ 1830-ին և ընտրվեց անգլիական պար-

յամենայն անգամ։ Նա մեռավ 1833 թվին։ Բացի Պարսկաստանի պատմությունից և Պարսկաստանի ուղեվորական տպավորություններից, նա գրել է մի կարգ այլ գրքեր Հնդկաստանի մասին։ Ավելի մանրամասնությունների համար, տես Life and Correspondence of Sir John Malcolm, by J. W. Kaye, 2 հատոր, 1856։ Նա իր ուղեգրությունը՝ «Sketches of Persia» գրել է անանուն և ներկայանում է մորից մի ուրիշ անձնավորություն, ինքն իրեն անվանելով մյուս կես կամ դեսպան։

2. Իշխան (Prince) ասելով Մալկոլմը ակնարկում է Շիրազի կառավարիչ Մահամեդ Ալի Միրզային, որ Ֆաթ Ալի Շահի անդրանիկ որդին էր և գեմ էր իր հորեղբոր՝ Աբբաս Միրզային, բարենորոգչական փորձերին։ Նա մինչև անգամ դավում էր իր հորեղբոր դեմ և գրգռում մահմեդական մոլեռանդություններ, ամբաստանելով իր հորեղբորը, թե նա հիվրոպական գինվորական կարգեր մտցնելով և հիվրոպացիների հետ հարաբերություն հաստատելով՝ արբապղծություն և կատարում և վրդովորում ազգային արժանապատվությունը։ (Տես. Kotzebue, «Narrative of a Journey into Persia», London, 1819. եջ 160—161)։

3. Սըր Անթոնի Շերլեյ և նրա հորեղբայր Սըր Ռոբերտ Շերլեյ, անգլիացի հերկու հորեղբայրներ, 1598 թվին քանիսից հետևորդների հետ Պարսկաստան գնացին և մտան Շահ Աբբասի (1557—1628) ծառայության մեջ։ Նրանք աժանդակեցին պարսկական բանակի վերակազմության, մասնավորապես ուժեղացրին հրետանին և նպաստեցին Շահ Աբբասի հաղթանակներին ոսմանցիների դեմ։ Այն քաղաքականությունը, որ վիննափիկցիները վարում էին Ժե. դարում, նպատակ ունենալով օգտագործել Պարսկաստանը և խորտակել ոսմանցիների ուժը, այժմ Անգլիա եր վարում։ Ոսմանցիները կարել էին առևտրական ճանապարհները։ Ջենքինսոնը փորձել եր առևտրական հարաբերություններ հաստատել Արևելքի և մանավորապես Պարսկաստանի հետ Մոսկվայի ճանապարհով, սակայն փորձը ցույց եր տվել, որ անգլիացիները հաժար այնքան էլ շահավետ չեր Ռուսաստանից անցնել, մանավանդ որ Արխանգելսկի ճանապարհը այնքան էլ հեշտ չեր ձմռան սառնամանիքի պատճառով։ Մյուս կողմից, չկին հնարավոր գտնել ապատ յերթևեկություն կատարել Տրապիզոնի կամ Հալեպի ճանապարհով, անտարակույս շատ ավելի հեշտ պիտի լիներ հարաբերությունը Արևելքի հետ, շատ ավելի ժամն և հեռավոր ավելի շահավետ անգլիական առևտրի համար։ Սըր Անթոնի Շերլեյ ուղարկվում եր Յեվրոպա, որպես դեսպան Շահ Աբբասի, համաձայնություն կնքելու արևմտյան կառավարությունների հետ, ոսմանցիների դեմ միացյալ ճակատով կռվելու համար։ Շերլեյ յեղբայրների ուղեգրությունը տես «Ուղեգրություններ»-ի Բ. հատոր։

4. Աբբաս Միրզան յերրորդ որդին եր Ֆաթ Ալի Շահի, և մոր կողմից կաջար թագավորական ցեղին պատկանելու համար նա նշանակված եր Պարսկաստանի գահաժառանգ, սակայն նա մեռավ իր հորից առաջ և նրա որդին Մահամեդ Միրզան ժառանգեց գահը։ Աբբաս Միրզայի մասին խոսում են բոլոր ժամանակակից ուղեգրները. նրանց վկայությունները պարսիկ այս արքայազնի մասին դեհեղված են այս հատորում։

5. Մեհմանդար պարսկերեն նշանակում է հյուրընկալ. այդպես էլին կոչվում այն պաշտոնյաները, որոնք պարսից Շահի կամ սարդարների ու խաների կողմից նշանակվում էլին, որպես հյուրընկալ ոտար դեսպանների կամ ականավոր ոտարականների։ Նրանց պարտականությունն եր ընկերանալ այդ ոտար հյուրերին, և ճանապարհորդության ընթացքում հայթհայթել նրանց փոխադրական միջոցներ, ոթևան և ուտելիք։ Առհասարակ այս ծախքերը կատարվում էլին աշխատավոր գյուղացիության հաշվին, բայց միջոցներով հաճախ պատահում եր Պարսկաստանում, յերբ գյուղացիները իմանալով, որ մի ոտար դեսպան է ճանապարհորդում, լքում էլին իրենց գյուղը և փախչում։ (տես Letters Edilian, հատ. II. եջ 410—411)։

Բայց Մալկոլմ առատորեն վճարում եր իր և իր շրթամբի համար հայթհայթված մթերքների արժեքը։ (տես Malcolm, Sketches of Persia, հատ. Ա. եջ 245)։ Յեվ սա, տարակույս չկա թե հետևանք եր այն քաղաքականության, որ նա այդ միջոցով ուզում եր տպավորություն թողնել պարսիկների վրա և ցույց տալ նրանց թե անգլիացիները հարուստ են ու առատաձեռն։ Այս եր պատճառը, որ նրա համբավը տարածվել եր Պարսկաստանում և ամենուրեք ժողովուրդը գիմավորում եր նրան։ Մի յամն Սպահանում, ասում է նա, յերկու հարյուր հազար հոգի դուրս էլին յեկել գիմավորելու դեսպանին (Ibid. Ա. հատ. 250)։

6. Այդ շրջանում չափազանց գնահատում էլին հայելիները, և այդ պատճառով Մալկոլմ վորպես նվեր Շահին բերում եր բազմաթիվ մեծ հայելիներ, վորոնք յերեխայի նման ուրախացնում էլին պարսից արքայից արքային։ Ռուսները հետևեցին անգլիացիների որինակին, և Յերմոլովն իր նվերների մեջ ուներ նույնպես մեծ հայելիներ. (տես, Kotzebue «Journey into Persia», եջ 250—253)։

7. Ջոնաս Հանվեյ Պետերբուրգի անգլիական առևտրական ընկերության կողմից 1743-ին Աստրապատումն եր գտնվում, յերբ Կաջար ցեղապետ Մահամեդ Հուսեյնն Խանը դրավեց այդ վայրը։ Այս Կաջար ցեղապետի հետ գտնվող Թուրքմենները կողոպտեցին Հանվեյի ապրանքները։ Նրանք վճռել էլին նրան սպրուկ դարձնել, սակայն Կաջար Խանը պատանց նրան և թույլ տալ վոր մեկնի Աստրապատից։ Մեծ դժվարու-

թյամբ նա կարողացավ հասնել Համառան, ուր գանվում էր Նադիր Շահը, և հրաման առացավ, որ կամ նրա ապրանքը և կամ արժեքը վերադարձվի։ Նա վերադարձավ Աստրախան և ականատես չեղավ ապստամբների գատապարտության, որոնց գլուխներից չինված նյին յերկու բրգաձև դեզեր։ Նա գրել է իր ապավորությունները, տես, Jonas Hanway. «An Historical Account of the British Trade over the Caspian Sea: With a Journal of Travels from London through Russia into Persia», 4 vol. First ed. 1753:

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ*

(1810)

Պարսից արքունիքին իմ ուած առաջին այցելությունից առաջ տարի յեր անցել, և շատ փոփոխություններ եյին կատարվել թե մարդկանց և թե քաղաքականության մեջ։ Թուրքները, կարճ ժամանակի ընթացքում, կովկասի հյուսիսից իրենց սահմանները տարածել եյին մինչև Արաքսի ափերը, ավելի քան չորս հարյուր մղոն մի տարածության։ Բոնապարտն իր դրագրներն եր կարմել՝ շղթայելու համար ռուսական արջին և պարսկական առյուծին, նրանց իր պատերազմական կառքին կապելու համար, վորպեսզի ինքը կարողանա հաղթանակով առաջանալ Հնդկաստանի հարուստ դաշտերի վրա։ Նրա անունը ծանոթ եր շատերին Պարսկաստանում, բայց քչերն եյին հասկանում նրա իշխանության նկարագիրը։ Սրանց թվումն եր իմ ճարպիկ բարեկամը՝ Սպահանցի Ագա Մահամեդ Քազիմ-վալան (Aga Mahomed Câsim-Wâlâ), վոր միևնույն ժամանակ և՛ պրոֆեսոր եր, բանաստեղծ ու փիլիսոփա և շատ հարցասեր քաղաքագետ։ «Բոնապարտը, — ասաց նա ինձ մի առավոտ, յերբ այցելեցի նրան կոլեջի իր հարկաբաժնում, — մի զարմանալի մարդ է. նա շարժում է կայսրությունները, կարծես թե նրանք լախտեր լինեյին։ Թուրքիայի հետ իր գործը կարգադրելուց հետո, նա Ռուսաստանի հետ միասին հարված պիտի տա Պարսկաստանի գլխին, յեթե միայն մեր թագավորը նրա յանկության համապատասխան չձևակերպե իր քաղաքականությունը, և ապա յերկուքին էլ (Ռուսաս-

* Sketches of Persia, գլ. XIX. եջ 157—188։

ատանին ու Պարսկաստանին) պիտի ոգտագործվի խորհրդակցական իշխանությունը Հնդկաստանում, ինչ վոր էլ պատահի, — ասաց ալիվոր Ագա Մահամեդը, — նա մի հրաշալի մարդ է, մի կատարյալ Ֆրանկի (Faringee) Ջինգիզ խան»:

Յես վոտք եմ դնում արդեմված հողի վրա. պետք չէ վոր խոսքս քաղաքականության մասին, սակայն, կարծում ենք, ագա այս դեպքը պիտի լիներ ավելի դժվարացնել: Յես կարող եմ պատմել Ֆրանսական և անգլիական ծրագրերները՝ այն խնդիրների փոփոխությունների մասին, վոր իմ պարսիկ բարեկամներին, բացի իրենց մտքից, բարբարոսության ճնացորդներ չպիտի թողնվեին. մահմեդական իշխանները պիտի դառնային բարենորոգիչներ, հանկարծակիորեն պիտի նեղմտածիվ դեղարվեստը, և Թաթարստանի թափառական ցեղերը և Ֆարսի վայրենի լեռնականները՝ մի քանի ծածկագրական (cabalistical) ֆրազների պատշաճ գործածության համար, պիտի վերածվելին կարգապահ վաշտերի: Այս և նման շատ կերպարանափոխությունները պիտի նշանակելին ագացույցներ, թե մենք ապրում ենք մի դարում, երբ վրեժ կրկված կամ լուսավորված մի անձնավորություն կարող է, եթե նրան հայթայթվին դրչի, թանաքի և թղթի անհրաժեշտ գործիքներ, իրագործել վորևե այս կամ այն փոփոխություն, մի վորևե ապրի մեջ, մեկայն մի քանի ամսվան ընթացքում:

Այս առաջին անգամը չէ, վոր նման փորձեր են կատարվել Պարսկաստանում, վորովհետև բացի Յեվրոպայի քաղաքացիական ու զինվորական արվեստների դիտությունից, առաջ էլ ջանքեր են եղել Սեֆեվի միապետներին և նրանց ազնվականներին սովորեցնելու՝ հասկանալ ավելի քաղաքակիրթ աշխարհի որենքները, հատատուկությունները և կառավարությունները: Հեղնող ու սրամիտ Փիրրեն[1] խոսելով այս փորձի մասին, նկատում է. «Շատերն ասում են յեվրոպացի ճանապարհորդները պարսիկների մեջ ատածել են ազատության մի շարք գաղափարներ և մեր կառավարությունների չափավորությունը. — նրանք շատ վատ ծառայություն են մատուցել: Սա կարող է չափազանց խիստ լինել, բայց եթե կրթությունն այն հատկությունն ունի, վոր նվազեցնում է կրքյանկությունը, առանց բարեփոխում առաջացնելու, հանգուցն է նա, վոր այդ անվանում է որենություն: Մի գեղ առանձին վերցրած կարող է գերազանցորեն լավ լինել, սակայն, հիմանդի մասնավոր սովորությունների ու կազմվածքի պատճառով՝ նա կարող է թուլնի պղեցություն գործել: Այս ու նման շատ իմաստության խոսքեր արտասանել եմ յերբեմն-յերբեմն, յերբ առիթ է յղել խոսելու արևելյան աշխարհի հանկարծական վերածնության մասին, բայց յերբեկն չեն կամեցել լսել ինձ: Դանդաղ և գրեթե աննշմարելի փոփոխության իմ ծրագիրը, վոր չի սահմանափակվում կես յերկտասնյակ անհատների ուսուցմամբ, այլ ընդգրկում է ամբողջ ժողովուրդը իր առօրյայում, ծաղրի առարկա է դարձել, իրրև ապացույց իմ դանդաղամտության ու հակացոդության... Յես համոզել եմ ինքս ինձ և փորձել եմ համոզել ուրիշներին, թե ասիացիները՝ թեև այնքան ապիտակամորթ չեն, վորքան մենք, թեև նրանք պատկանում են տարբեր կրոնի, խոսում են տարբեր լեզու, և պետության կամ քաղաքակրթության մեջ էլ չեն կատարել միևնույն առաջադիմությունը, բայց հակառակ այս անպատեհություններին, նրանք բոլորովին զուրկ չեն թե մարդ և թե որոշ լավ ու մեծ հատկություններից...»

Յերբ յերկրորդ առաքելությունը ժամանեց նրա, [Շահի], արքունիքը, Պարսկաստանի թագավորը բանակած էր Սուլթանիեհի իր ամառնային ճամբարում, մի ընդարձակ դաշտում, վորի բարձրությունը տաք յեղանակին նրան տալիս է հաճելի բարեխառնություն[2]: Դեսպանին բարի գալուստ մաղթեց նրա հին բարեկամ Նու Ռոզ խանը (Nou Roz Khan), յերբ նա մոտենում էր ճամբարին. նրա արտաքին տեսքը չէր վոխված տասը տարվան ընթացքում, յերբ մենք այս անգամ հանդիպեցինք նրան: Սովորականի նման, նրա վարվելակերպը քաղաքավարի էր ու պարզ, և թվում էր

քե նա մանուկորապես ուրախ եր դեսպանին տեղեկացնելու, քե Թագավորը պահում և իր բարեացակամությունը նրա հանդեպ։ «Նորին վեհափառությունը, — ասաց Նու Հոզ խան, — ցանկանում և ինձ ասեմ ձեզ, քե ինքը ուրախ կլինի տեսնելու ձեզ, և խնդրում և աղաչում ձեզ, քե ցնծի դուք այս առաքելության առթիվ հանդիպելիք ոչ չնչին դժվարությունների, զրանց առիթը ինքը չե ուժած»[3]։

Պալատ գնալու, Թագավորին, իշխաններին և նախարարներին այցելելու արարողությունը՝ ճիշտ միևնույնն եյին, ինչպես առաջին առաքելության ժամանակ։ Ցնծի կարելի չե ասել՝ Թագավորը ավելի բարեկամական եր և ավելի շնորհաձիր։ Իրրև ապացույց իր բարեացակամության, և մինչ այլոց նա պնդեց իրր նշան իր նկատառման պատվել դեսպանին, տանելով այդ նպատակով Ալուժի և Արևի շքանշանը (պարսկական դինանշանը)[4]։ *Այս շնորհաբաշխությունը տեղի ունեցավ մեր մեհմանի առթիվ կայացած այցելության ժամանակ։ Պատվո հանդերձներ ուղարկվեցին դեսպանին և նրա շքախմբին։ Ցետը մենք մոտեցանք Թագավորի վրանի մուտքին, մեզ դիմավորեց պլխավոր նախարարներից մեկը, և մի Ֆերմանի կամ արքայական հրամանագիր կարդաց, որով դեսպանին տրվում եր Խան կամ իշխան (Lord) տիտղոս, Սիպահ-Սիլար (Sipâh-Silâr = սպասալար) կամ զինակալի տասիճան։ Այս ֆերմանը գրին նրա գլխարկի մեջ. դա պարսիկ ազնվականի մի սովորություն և, յերբ նա՝ իր Թագավորից պատվո տիտղոս ընդունելով, հրամանագիրը կրում և գլխարկում, գնում և պալատ շնորհակալություն հայտնելու։ Ցետը մենք նստեցինք, նորին վեհափառությունը շնորհավորեց [դեսպանին], այս առիթանին քարձրացման առթիվ։ «Ցերը դուք առաջին անգամ այստեղ յեկաք, — ասաց նա, — դուք հարյուրապետ եյիք, այժմ դուք զինակալ եք ձեր սեփական յերկրում, յես ձեզ զարձրի խան ու Սիպահ-Սիլար իմ [յերկրում]։ Ձեր հաջորդ այցելության ժամանակ, վոր շուտով պիտի տեղի ունենա, յես ապա-*

սում եմ, վոր դուք կը լինեք Ֆերման-Ֆերմայի (Fermân-Fermâee) կամ իշխող. բայց յեկեք ավելի մոտ»։

Դեսպանը վոտքի յելավ և դիմեց դեպի գահը, վորի վրա Թագավորն եր նստել, և նորին վեհափառությունը վերցնելով մի ոսկեմանդ-աստղ, սկսեց փակցնել դեսպանի վերարկուին։ Հայտնապես առաջին անգամն եր վոր արքայական ձեռքը այդպիսի գործ եր կատարում։ «Թագավորը, — մի տիտղոս վոր հաճախ ինքը տալիս և իրեն, — Թագավորը, — ասաց նա, — այս տեսակ գործից բան չի հասկանում», և նա կուշտ ծիծաղեց իր ձախկիության վրա։ Այսուհանդերձ, նա թույլ չտվեց վոր վորևե մեկը ոգնի իրեն. վերջապես հաջողած լինելով, նա վերատին շնորհավորեց դեսպանին, ասելով. «Դուք այժմ հաստատված եք իմ ծառայության մեջ, յես սրանից ավելի բարձր բարեացակամություն չեմ կարող ցույց տալ, և ձեր կրծքի այդ ոսկեղը պիտի համոզե ամբողջ աշխարհին այն համարումը, վոր Թագավորն ունի ձեր վերաբերմամբ»։

Վոչ մի բան չեր պակասում վողջերթի այս տեսակցությունը ավելի ու շնորհալի դարձնելու համար։ Ցերբ վոտքի յելանք մեկնելու, նորին վեհափառությունը հույս հայտնեց դեսպանին նորից տեսնելու համար. և ասաց. «Յուրաքանչյուր յերկրորդն ունի իր յերրորդը», և յերբ մենք հիսուն յարդա հեռու եյինք գահից և մեր վերջին խոնարհությունն եյինք անում, նա հակառակ սովորության, բարձր ձայնով եյինք անում, նա հակառակ սովորության, բարձր ձայնով բացագանչեց դեսպանին. «Մի անգամ ևս ասված պահե ձեզ»։ Պալատականներին զարմացրեց այս շեղումը հաստատված ձևից. նախարարապետը դեսպանին ասաց, նա պետք և իրեն տրված բոլոր պատիվներից դերազատե այս վերջինը։

*Բավական բան և ասված Թագավորի մասին. ճիշտ և խոսել գահաժառանգի մասին։ Մի որ յես դեսպանին ընկերացա նրկրա

պահակախումբը, որ կազմված եր մի խումբ ընտրված անգլիացի դրագոններից (dragoon = վիշապազոր), հնդիկ հեծելազորից և մի վաշտ ձիավոր Թնդանոթաձիգներից։ Նա մեծ հետաքրքրություն հայտնեց այս փոքրիկ զորախմբի կատարած շարժումների համար, և [դեսպանը] ասաց թե հույս ունի որ շուտով այդ որինակով մի լավ բանակ կունենա։ Դեսպանի այս պատասխանը քաջալերական չեր, որովհետև միայն հույս եր հայտնում։ Իշխանին տրված մի այլ այցելության ժամանակ, այդ նյութի մասին նորից խոսակցությունը բացվեց, և նա շատ զարմացավ որ դեսպանը մեծ նուէրներ հայտնեց իշխանին, որի ականջները մինչև այդ ժամանակ սարսափ խոսքեր եյին լսել։ Աբբաս Միրզան լսեց մեծ համեստությամբ. բայց հայտնի չեր որ նա նեղվում եր։ «Ինչու, ինչ որ դուք ասում եք, — նկատեց նա բավական հուզված, — կես ծերացած պիտի լինեմ, իմ զրագիրները իրագործելուց առաջ, և վերջ ի վերջո նրանք կարող են ի դերև չելնել»։ Դեսպանը ասաց, թե նորին բարձրության հանդեպ ասած հարգանքը պարտավորեցնում է իրեն ասել ճշմարտությունը։ «Շատ չերախտապարտ եմ ձեզ, — պատասխանեց իշխանը. — տեսնում եմ, որ դուք կարծում եք թե Պարսկաստանի անկանոն հեծելազորը, չերկրի լավագույն պաշտպանն է, բայց նրանք չեն կարող անել այն, ինչ որ կարող են կանոնավոր բանակը և Թնդանոթը»։ «Բայց, նրանք կարող են անել շատ բան, ինչ որ կանոնավոր բանակն ու Թնդանոթը չեն կարող», պատասխանեց դեսպանը։ «Ճիշտ է» ասաց իշխանը, և այդտեղ վերջ դրավ խոսակցությունը։ Յերկու կողմն էլ համոզված չեյին չերևում։ Աբբաս Միրզան շարունակում եր հաստատ մնալ՝ բարենորոգման իր ծրագրների հետապնդման վճռի վրա, և դեսպանը թվում եր, թե հավատարապես համոզված եր, որ այս ծրագրները վոչ մի դեպքում հարմար չեյին Պարսկաստանի նեղկա պայմաններին, կամ ժողովրդի նկարագրին։

Այս միջոցին Աբբաս Միրզան չերիտասարդ մի իշխան եր գրավիչ վարվելակերպով, գեղեցիկ անձնավորությամբ և

պատմական ու դատողական ժողոված։ Յեվրոպացիների հետ իր ունեցած շփումի շնորհիվ, նա մի կողմ եր նետել շատ պետական ու արարողական սովորություններ, որ այնքան մանրակրկիտ կերպով պահպանում են Պարսկաստանում բարձրատոհման անձինք։ Այժմ նա մարզանք եր կատարել տալիս իր վաշտերին, և ձիավարում եր շարքերի առջևից, առանց մեկի ընկերակցության։ Մարզանքից հետո, տեսնելով յերկու արաբական ձիերով լծված գեսպանի կառքը, նա փափագ հայտնեց քշել այն։ Առաջին անգամն եր, որ նա նստում եր մի կառք, և լիակատար հրճվանք զգաց։ Յերբ ձիերը գնում եյին դեպի Թեհրան տանող ճանապարհով, նա հրամայեց իր պատասխանատուներին վերադառնալ։ «Գնացեք, — ասաց նա ձիաղեկով, — և ասեք իմ հորը, թե չես գեսպանի հետ գալիս եմ իր մայրաքաղաքը»։

Այն կառքը, որ այնքան հաճույք եր պատճառել իշխանին, հետո տրվեց Թագավորին, որ հավատարապես հրճված եր նրանով, և դրանից ավելի յերկու ձիաքարշ Թնդանոթների արագ շարժումով ու արագ կրակումով, որոնք նվիրվեցին նրան։ «Սրանք, — ասաց նա, — պիտի վոչնչացնեն իմ բոլոր թշնամիներին»։ Դեսպանը հայտարարեց, թե ինչ որ ինքը բերած եր, միայն մոդելներ եյին, որոնք շուտով պետք է ընդարձակվեն նորին վեհափառության հպատակների կողմից, և թելադրեց, թե անհրաժեշտ եր ճանապարհներ շինել՝ անիվավոր կառքերի համար, և ճանապարհները, ավելացրեց նա, յեթե ընդհանրապես կատարվեն, ոգտակար պիտի լինեն թե հաճույքի, թե առևտրի և թե պատերազմի համար։

Յերկինք բարձրացող գովեստներ շռայլվեցին այս խորհրդի համար։ Ընդունվեց, որ ճանապարհը [նշանակում է] մեծ ու ակնհայտ բարենորոգում, միանգամայն բարեպատշաճ ու շահավետ Պարսկաստանի համար։ Ճանապարհներ շինելու և դրանք կանոնավոր [վիճակում] պահելու համար ծրագիրներ պահանջվեցին և պատրաստվեցին։ Դեսպանին ասին, որ արքայական հրովարտակը անմիջապես պիտի հրատարակվի, և նա շատ գոհ եր, որ այսպիսի մի լավ գործի

պատճառ եր դարձել, և որ նա խորհում եր, թե ճանապարհ պետի բանար յերկրի միայն բարեվաճման համար։ Բայց պետնախով այն գժվարությունները, որոնք խոչընդոտ պետի հանդիսանան այս ծրագրին, նա խնդրից յելնմատական նախարար Ամին-ուդ-Դաուլեյից (Ameen-ood-Doulch), առաջին ուշադրությունը նվիրել Սուլթանիեյի, Քեհրանի և Թավրիզի հպատրպակցության ճանապարհի վրա, և ասաց, թե այս փորձարկության արդյունքը պետի վճռի ծրագրի պատրաստության ապագան։

Յելնմատական նախարարը, որ այնքան նշանավոր եր իր պարզասիրությամբ, որքան իր վողջմտությամբ, ընդունեց այս թելադրության իրավացիությունը։ «Բայց, ասաք ճանաչում եք Պարսկաստանը», յեզավ նրա յեկրակացնող նշանակալից պետությունը, որ բավական եր տեղեկացնել դեսպանին, թե ճանապարհաշինության իր այս ծրագրի, թեև հնար եր գործադրության համար, յերկրի և կլիմայի բնության պատճառով, բայց և այնպես մյուս ծրագրների բախտին պետի սպասանար, որ այդ ժամանակ պարսկական արքունիքի սովորությունն եր՝ ընդունել, ակնել և լրել։ Այս ճանապարհները պահանջում եին աշխատանք, և աշխատանքը՝ քաղաքական անհատապետների պետի տանեին թագավորին, պետք և որ վճարվի գրամով, մի երբ նվերով, և կամ այլ միջոցների գործադրության համար։ Բայց այս տեղեկությունը անպատ պետի լիներ, որովհետև յես չեի ճանաչում մի այլ մարդ, որ իր բոլոր լավ հատկություններով հանդերձ, պետի լսի այնքան քիչ համբերատարությամբ քաղաքական անհատապետներին, որքան արքայից արքան՝ Ֆաթհ Ալի Շահը, որովհետև այդ միապետը, բացի իր դերքին հետ կապված սովորություններից ու նախապաշարումներից, անձնապես անդրդվելի առարկություն ունի բոլոր այն միջոցառումների դեմ, որոնք ծախքի կարոտ են։

Ժամանակը կարող և շատ բան կատարել իմ պարտիկ բարեկամների հետ, բայց մենք պետք չե որ սպասենք այդ դանդաղկոտ հրաշագործներից որևե շատապանք։ Մենք կարող

ենք վոմանց ներշնչել այն իրական փառքի ծարավը, որ ցանկանում և առեղծել, և վոչ թե վոչնչացնել, ուրիշներին կարելի յե սովորեցնել պետություն, բայց մինչև իսկ նրանք, որոնց մենք միր պետի բարեփոխելենք իրենց հայրենակից՝ ներից, սակավն նրանց մեջ շատ զորավոր են սկզբնական սովորություններ և ազգային նախապաշարումներ։ Նրանց խոսքերն ու պրությունները կարող են լուսավորված մարդ պատահաբար լինել, բայց նրանց գործերը պետ բնությանն իրենց հատատված սովորություններով և սովորական կերպով, և նրանց բնությունը նախկիններից տարբեր չպետ լինի։ Նրանք պետ նմանին առակի այն կաղվին, որ մուկը տեսնելուն պես ցատկում և այն սպանից, որ նրա համար պատված և չգիտե։

Յերբ առաջին դեսպանությունը Քեհրանում եր, մենք այնտեղ գտանք մի մեծավոր, Ալի Մահամեդ անունով, որ մի կարգ փոքրաքական հեղափոխությունների հետևանքով պետված եր յեղել հեռանալ Բաղդադից և ապաստանել Պարսկաստան։ Աստիճանավոր մի մարդ եր նա, թագավորը նրան ընդունել եր և վերաբերվել հյուրասիրությամբ ու պատվով։ Նա դեսպանին հայտնեց իր փափագը, որ այս ապնվականին իր հետ տանի Չնգլիաստան, յեթե նա ցանկանա գնալ։ Այս պահանջը պատրաստակամությամբ ընդունվեց, որովհետև դեսպանը Ալի Մահամեդին համարում եր հաճելի և յերևելի թագվա մարդ։ Յես շատ մտերմացա նրան և յերբ կալկաթա հասանք, մեծ հաճույքով նրան ցույց տվի Բրիտանական արևելյան կալվածների այդ վսեմավոր մայրաքաղաքը։ Յես նրան մատնանշեցի նշանավոր գետում խոնված նավերը, շքեղ փողոցները լի կառքերով, յերկրի իշխողի հանդեսավոր նոր կառուցված պալատը, կոլեջը, հանրային պաշտոնյանների ու վաճառականների փառավոր բնակարանները, և վերջապես այն ամենը, որոնք կարող եին նրան տպավորել քաղաքակրթության յերջանիկ արդյունքների մասին։

Տեսնելով որ իմ բարեկամը հրճված եր այս հարուստ տեսարանի խոհուն, ուրախությամբ հարցրի նրա կար-

ծիքը այս մասին. «Մի հրաշալի վայր՝ կողոպտելու համար» (Ajeb jâhee chappau) յեղավ նրա պատասխանը, և նրա աչքերը փայլատակվեցին, վորովհետև ներքին հրճվանքով եր խոսում։

Այս բանը յես պատմեցի իմ քրիստոնյա բարեկամ Հոջա Արաթունին[5] (Arratoon). մեր դանձապետին, «Ես, ես, — ասաց ծերունին, — ներքին մարդն է խոսում։ Ինչ վոր դուք պատմում եք, հաստատում է մեր հայկական առակը. ամառան եկին քարոզում մի գալլի գլխին. սպասեցեք, ասաց, տեսնում եմ վոչխարի մի հոտ և անցնում»։

Ինչվոր յես ասել եմ այտեղ, դա չի նշանակում թե պատրաստում եմ ազգային ջանքերը՝ լուսավորության տարածելու համար, վոչ էլ ժխտում եմ թե կատարված այդ ջանքերը ապագայում ապարդյուն պիտի լինին, բայց այդ արդյունքները պիտի դանդաղն և վոչ թե փութացվեն՝ արագ ու կանխահաս փոփոխությունների միջոցով։ Այս իրականացնելու համար, հաճախ մենք անմտորեն հիանում ենք այն անձնավորությունների վրա, վորոնք մեր լուսավորության բարիքներից մի փոքր բան են ստացել, ինչպես նաև մեղադրում ենք նրանց, վորոնց համարում ենք իրենց նախնական ազնվության մեջ միացած։ Մենք բոլորովին մոռանում ենք, թե բնակչության նկարագիրը կազմվում և գլխավորապես կրկին ընդհանուր պայմաններից։ Դահլ ժառանգական ու անվիճելի հաջորդությունը, — թեև կարելի չի վոր չնվազեցնի ոտար պատերազմների կրկնությունը, վոչ էլ արգելի մարդկային արյան հեղումը, — տալիս և ներքին ապահովություն վոր առաջնորդում և հաստատելու մի սիստեմ, վոր հնարավորություն և տալիս պետության՝ ունենալու ազգ և միացյուն քաղաքացիական ու զինվորական հաստատություններ, և նա տալիս և նմանապես, իր հպատակների մեծագույն մասին արժեքավոր ժամանակ, հետևելու գիտության ու գրականության, վորպեսի [հանգամանք] առաջնորդում և հասարակության բարելավման։ Բայց Պարսկաստանի նման երկրներում կառավարությունը ամբողջովին անձնական և. հաստատություններն ու հիմնարկները ծնունդ են առնում ու կործանվում վեհապետի քմահաճույքով, և յենթադրելով վոր նա հարատև և իր հպատակների մեջ, տակավին հավանականություն այն և, վոր նրանք բարգավաճում ու անհետանում են իրենց հիմնադրի հետ, մինչ նրանց հիմքերն անհաստատ են, նրանց հարատևությունը նույնքան անորոշ, — նրանք չեն կարող մշտապես ազդու կամ ոգտակար դառնալ։

Այդ տեսակ հեղափոխությունների բնույթը, ինչ վոր մենք ենք ցանկանում, կարող և վերածվել գործի, [միայն այն դեպքում], երբ ժամանակը փոխում և մարդու զգայությունը, և պատրաստում և ժողովրդին նրանց համար, բայց մենք շատ հաճախ, մեր գիտության համար ունեցած հպարտությամբ, շտապում ենք դեպի վերջը, շատ քիչ կամ բնավ նկատի չառնելով միջոցները։ Մեր կանխահաս ծրագրներում, մենք միշտ պատրան ենք բարդում նրանց վրա, վորոնք ցանկանում են բարեփոխվել։ Վորովհետև մարդիկ իրենց նախնիքների նման շարունակում են ապրել մի կամայական միապետի տակ, և չունեն այն հատկությունները, վորոնցով մենք արժեքավորում ենք մեզ, մենք շտապ յեզրակացություններ ենք անում, թե սուրհներ ու բարբարոսներ են նրանք, վորոնց սովորության ու նախապաշարումի ուժը միայն կազդեի այնքան թշվառ լինելուց, վորքան նրանք վտանգված են։ Այս լույսով դիտելով, մենք խղճում ենք նրանց, մի բան վորին նրանք արժեք չեն տալիս և վորը չեն էլ հասկանում. յեթե մենք այդ էլ քննության չենթարկենք, ապա դա էլ վերևի իրավացի հիմք չունի։ Թեև նրանք անձանձիր են քաղաքական ազատության, թեև մակերեսային՝ գիտության մեջ, և թեև չգիտեն հունարեն կամ լատիներեն, սակայն նրանք էլ անպաշտպան չեն անարդարության կամ բռնապետության դեմ, և նրանց հասարակական վիճակը առեղծում է նրանց մեջ մի պայծառ աշխուժություն և ըմբռնման մի հստակություն, վոր հնարավորություն և տալիս նրանց բոլոր հարցերում պաշտպանելու իրենց, իրենց ընտանիքներին ու

բարեկամներին, և այդ հրաշալի է կերևում քաղաքակրթությունից վրիացած մարդկանց համար։...

Յես շատ եմ ճանապարհորդել, բայց քիչ տարբերություն եմ գտել մարդկային կրքյանկության հանդեպ։ Հաճախ իմ հպարտությունն ու հայրենասիրությունը շոյված են լեզվի գժտոնների գանգատներով և բազմատեսակ նեղով, բայց կարիք չեմ հանդիպել մի ազգի կամ լեզվի [պատկանող] բավական թվով մարդկանց, որոնք կամենային փոխել իրենց վիճակը, կերկրագնդի վրա ապրող ուրիշ ժողովրդի հետ։ Յերբ ինձ հաջողվել է, ինչպես հաճախ է պատահել, բրիտանական կառավարության առավելությունները մասին զրգռել ուրիշների հետաքրքիրը կամ նախանձը, յես անխուսափելիորեն գտել եմ, որ այդ զգացումները գլխավորն են, կերը յես բացատրել եմ ավելի մանրամասնաբար անգլիական ազատության գոհողությունները, որոնք կաշկանդումները և հարկերի ծանրությունը, որոնցով այս առավելությունները ձեռք են բերվում։ Արաբ առնտուրի հին պատմությունն է, որը չեր կարող դիմանալ Անգլիային, որովհետև այնտեղ արմավի ծառեր չկային։ Պարսկաստանի թագավորը, որը թեև զգում է իր սեփական թագի անապահովությունը, չի կարող մի րոպե հաշվել այն մարքի հետ, թե ինք կարող է կրել Անգլիայի [թագը], որն իրեն պետք պարտավորեցնեն ունենալ միայն մի կին։

Այսպիսի նկատողությունները պետք է որ նկատողություն չեին ինձ, բայց այդպես չեր։ Յես շարունակում եի արժեք տալ ինձ իմ գերազանցության համար, և կերը Պարսկաստանում գտնվում եի, նախանձախնդիր եի մեր խմբի ամեն մեկ անդամի նման, ցուցադրել իմ հմտությունը, մասնավորապես գիտության մեջ, (որը խոսքը մեր մեջ, իմ ակար կողմն է), և վայելել այն զարմանքը, որ նրա ցուցադրությունը առաջ է բերում։

Առաջին դեսպանության ժամանակ պարսիկ բարեկամներին զարմացնելու դժվարը մի չորացներից մեկն եր մի ելեք-

տրականացնող մեքենա, որի փորձարկություններով մենք զարմացնում ու վախեցնում եինք բոլորին՝ սկսած վեհափառությունից մինչև ամենաստորին գյուղացին։

Յերբ Շիրազում ցուցադրում եինք այդ՝ պարտավորեցնելու համար Զերազ Ալի խանին (Cherâgh Ali Khan), որ այցելության եր եկել դեսպանին, այս պաշտոնական նախարարը իր գոհունակությունը հայտնեց՝ տեսնելով ելեքտրական կայծերը և այն թեթև ցնցումները, որ հաղորդվեցին ուրիշներին։ Նա մերժեց ընդունել ցնցումը, թեև նա հայտարարեց թե՝ տեսնելով ուրիշների վրա կատարված փորձը, ինքն էլ նրանց նման ցնցվեց։ Այս մեծ մարդը թեև պիջից քաշել դեպի պարտեզը, որպեսզի պատեհություն տա իր սպասավորներին՝ տեսնելու հրաշալի մեքենայի ազդեցությունը, սակայն վերադարձավ կերը նրանք շրջապատել եին դործադրողին, (մեր բժշկին), և բռնել եին իրար ձեռքը, սպասելով ցնցումին։ Պարսկաստանում շատ անվայել բան է կռնակ դարձնել, կերը մի ստեիճանավոր մարդ է մտնում հարկաբաժին, իսկ ծառաների համար, նման վերաբերմունքը գրեթե աննկարելի մի հանցանք է։ Սակայն, այդ բարի մարդիկ, որոնց մասին խոսում եմ, շունչ բռնած սպասում եին իրենց տիրոջ մոտենալուն, որը այս հայտնի կոպտությունից զայրացած, բռնեց նրանցից մեկի ուսերը, պատժելու համար նրան։ Հենց այս րոպեին, պատահաբար թե ծրագրված, կերբեք հայտնի չկրավ, ցնցումը հաղորդվեց։ Ամենքը բաց թողին իրենց դրացու ձեռքը և ցնցվեցին դեպի յետ, մինչ Զերազ Ալին անակնկալի գալով ավելի զգաց, գլորվեց պատի դեմ, և նմանում եր սարսափի պատկերին։

Դեսպանը, որ նրա հետ ներս եր մտել սենյակից, չկարողացավ զսպել իր ծիծաղը։ Սա մի նշան եր բոլորի համար, և նույնիսկ ծառաներից ամենաստորինները հեռացան, խընդալով այն բանի վրա, ինչ որ պատահել եր իրենց հզոր տիրոջը, որը կարճ դադարից հետո կերբ նրա արժանապատվությունը պայքարում եր ազգության հետ, թույլ

ավեց վոր վերջիններըը հաղթանակ տանեն, և ուրիշների նման, ինքն էլ խնդաց պատահարի վրա։...

Վորովհետև Պարսկաստանում ամենքը կիվրոպացիների հետ ունեցած սերտ շփման հետևանքով ծանոթացել էին նվեքտրական մեքենաների հետ, դեսպանը, իր կերկրորդ առաքելության, այլևս չընարեց վատահել նրանց, [նվեքտրական գործիքներին], իր բարեկամները հյուրասիրելու համար։ Հետևաբար այս նպատակի համար նա գնեց մի մեծ անչափ լավ մոգական լապտեր (phantas-magoria), վորն ուներ բազմաթիվ ապակիներ, վորոնց վրա նկարված էին՝ ուրվականներ, հրեշային ձևերով, մարմնավորված՝ բանտատեսի կենդանակայությունից վեր։

Յերկատասերդ ու ծեր, հարուստ ու աղքատ հիանում էին մեր մոգական լապտերին։ Շերազի իշխանը, արքայական արյունից, առաջինն էր, վորին ցուցադրվեց, և նա իր հիացումն ու հրճվանքը հայտնեց այս արտակարգ դյուտի համար։ Մի քանի մարդկանց սովորեցրին՝ ցուցադրելու այն ավելիններին, վորոնք, ինչպես տեղեկացանք, հրապուրված էին նրանով, և նրա [իշխանի] մայրը, — մի կարող իշխանուհի, վոր յերկար ժամանակ բարձրագույն հովինակություն ուներ նրա և Ֆարսի [նահանգի] վրա, — անսահման կերախատություն հայտնեց իր տեսած հրաշալիքի համար։

Մոգական լապտերը ավելի ուշադրավ դարձնողը, հնդկաստանցի մի կերիտասարդի տպավորն էր ու այն հնարագիտությունը, վորով նա վարում էր այդ գործիքը։ Բացի այն, վոր նա վարպետ ցուցադրող էր, ըստ պահանջի նա շինում էր շրջանակներ և նկարում ապակիների վրա ամեն տեսակ պարսկական դեմքեր և որվան անցուդարձը, դրանք մասամբ նա ցուցադրում էր դեսպանի կերևոյան ընդունելություններին, վորին հաճախ ներկա էին դառնում բարձրաստիճան անձավորություններ, վորոնք նախապես արարողական բծախնդրությունների հետևանքով հեռու էին մնացել, սակայն այժմ չէին կարող դիմադրել իրենց հետաքրքրության։ Այսպիսով մեր մոգական լապտերը դիվանագիտության կարևոր մի գործիք էր։

Պարսկաստանի իշխանը նախանձախնդիր էր պիրանալու այս դանձին, բայց վորովհետև նրա համբավը տարածվել էր, քաղաքականություն չէր համարվում հուսախար անել վեհափառության լարված սպասողականությունը, հետևաբար մեր մոգական տուփը ընկերացավ մեզ, և մեծ ազդեցություն գործեց Սուլթանիեում հավաքված մեծ արքունիքին, ինչպես առաջ՝ Շերազում։

Դեսպանը մասնավոր հաճույք էր զգում իր մոգական լապտերի առաջացրած հիացման համար։ Մի որ կես այն միտքը հայտնեցի, թե խմաստուն ու լուրջ մարդիկ, բարձր դիրքեր գրավող մարդիկ, կարող են ծաղրի առարկա դառնալ, զվարճանալով այդպիսի աննշան բաներով, և գործածելով այդ իր միջոց ուրիշներին զվարճացնելու և պարտավորեցնելու համար։ Նրա անմիջական պատասխանը կեղավ. — «Այն մարդը, վոր միշտ խմաստուն և, հիմար և, և նա չի ամենից ավելի հիմարը, վորը շղթայված պաշտոնականության և նկատառումներով, դանդաղում է գործադրել այն բոլոր պարկեշտ միջոցները, վոր մարդկային բնությունը ավել և իրեն, առաջ տանելու համար ուղիղ ու պատվավոր նպատակներ։ Բացի սրանից, — ավելացրեց նա, — սա այնքան հաճույք է պատճառում ինձ, վորքան վորևե մեծացած կերեխայի Պարսկաստանում. իմ սրտաին հյուրերն այնքան հրճվում են, վորովհետև տեսնում են, վոր իմ բերկրանքն իրական է»։...

Այս պատասխանից հետո, նրանք, ովքեր ճանաչում են նրան, [դեսպանին], այնքան, վորքան կես, պիտի տեսնեն, վոր դեսպանին հաջողվել է համոզել ինքն իրեն թե հաճույքի իր բնական սերը դիվանագիտական արժեքավոր մի հատկություն է,... հետևաբար կես հանձնարարում եմ՝ ապագայում Պարսկաստան գնացող բոլոր դեսպանություններին, թե հաջողության համար՝ եական կարևորություն ունեն մոգական լապտերներ և նրա նման բաներ։

Յերկրորդ առաքելութեան ժամանակ, — Հաջի Իբրահիմի մահից հետո, — դուս վոր նրա պարտականութիւնները յուժանված եղին րազմաթիվ նախարարների վրա։ Իմ հին բարեկամ Հաջի Մահամեդ Հուսեյինը, վոր առաջին առաքելութեան ժամանակ այնքան բարի չեր կեցել մեր հանդեպ, յերբ նա Սպահանի Բեկլեր-բեկ եր, այժմ Ամին-ուդ-Դուլե* տիտղոսով ֆինանսի և կեսամսի բաժանմունքի պետն եր։ Նա բարձրացել եր առաջին ծագումից, այն է Սպահանում նա մի վորբրիկ խանութպան եր կեցել։ Պարսիկները, վորոնք հրճվում են հրաշալիքով, խոսում են նրա անսահման հարստութեան մասին, և նրանք նրա հարստութեան ծագումը, (վորով նա հաջողեց պահպանել թագավորի բարեացակամութիւնը, զոհացնելով նրա ընչաքաղցութիւնը), համարում են մասամբ այն արբայական գանձին տեր դառնալուց, վոր Զաֆեր Խան Զինդը կորցրեց Սպահանում, յերբ նա փախավ 1785 թվին այդ քաղաքից, այնպիսի շփոթութեան մեջ, վոր վոչ միայն իր բեռներն ու գանձերը, այլ նաև արբայական զրոշակները կողոպտվեցին բնակիչների կողմից։...

Այս պատմութիւնը կարող և վորոշ հիմք ունենալ, բայց քննութիւնն կատարելով և իմ դիտողութիւնների վրա հիմնվելով՝ յես համոզվեցի, վոր այս խելացի նախարարի հարըստութիւնն ավելի պատճառվոր աղբյուրից և և առեղծված և իր չանասիրութեամբ ու լավ դեկավարութեամբ։ Այս վարաին իրը ապացույց բավական և ասել, թե նրա վարչութեան տակ գանվող ամեն մի նահանգ բարգավաճ վիճակումն և, և Սպահան քաղաքն ավելի քան կրկնապատկել և իր բնակիչների թիվը, և քառապատկել և հարուստ մեատաքսի ու դիպակի իր արդյունաբերութիւնը վերջին քսան տարվա ընթացքում, յերբ նա յեղել և այդ տեղի կառավարիչը։

Հաջի Մահամեդ Հուսեյինն ունի շատ պարզասեր վարվելակերպ, սակայն վոչ սրամտութիւն ունի և վոչ էլ փայլուն խոսակցութիւն, մի բան վորով պարսիկներից շատերը նշանավոր են։ Վորպես ընկերակից նա անհետաքրքիր և, և չի-
րևում է, ինչ վոր ճիշտ և, զործի մի պարզ մարդ։ Իմ բարեկամներից մեկը մի որ նրա հետ նախաճաշելիս՝ զարմանքով լսել եր, վոր նա մի աղքատ մարդու, — վորը մի զույգ հողաթափ եր բերել վաճառելու նրան, — ասել և. «Նստիր, իմ պարկեշտ բարեկամ, և նախաճաշիր, հողաթափի մասին մենք հետո կսակարկենք»։

Ավելի շատերին դասի մարդկանց իրենց ընկերութեան մեջ ընդունելն անտանելի բան չի աստիճանավորների համար Պարսկաստանում։ Դա առաջ և գալիս հյուրասիրութեան վերաբերական զգացումից...։ Բացի դրանից, նրանց նկարագիրը և վիճակը հաճախ պարտավորեցնում և, վոր մեզ վերաբերմունք ունենան իրենցից ցածր գտնվողների հանդեպ, նույնիսկ ծառաների նկատմամբ, վորոնց հետ վարվում են ընտանեբար։ Այս պարագան առաջին հայացքից հակասական և թվում այն տպավորութեան, վոր մարդ կազմում և նրանց ամբարտավան նկարագրի մասին։ Մի որ Ագա Միրը (Aga Meer) զրեթե հանդիմանեց ինձ մեր այս առթիվ ունեցած վերաբերմունքի տարբերութեան համար, վոր մենք ուենք ավելի ցածր աստիճանի վրա գտնվող մեր հայրենակիցների հանդեպ։ «Դուք խոսում եք այն խնամատար վերաբերմունքի մասին, վոր դուք ունեք ստորադրեալների հանդեպ, — ասաց ինձ, — բայց դուք նրանց շատ ավելի հեռու եք պահում ձեզնից քան մենք։ Ա՛յս և այն ազատութիւնը, վորով դուք պարծենում եք»։ «Յես նրան ասացի, թե ճիշտ այդ մեր պարծենցած ազատութիւնն և, վոր մեզ սանիպում և այդ վերաբերմունքն ունենալ»։ Դուք այնպես դաստիարակված եք Պարսկաստանում, ասացի, վոր կարող եք իջնել ձեր վիճակից ինչպես կամենաք. ձեզնից վար մի անձ, յերբեք ձեր ընտանի վերաբերմունքից մի րոպե թույլ չի տածում, թե միևնույն աստիճանի վրա չե գտնվում նրանց հետ, վորոնք հասարակութեան մեջ իր դասակարգից այնքան պատրոշված են։ Անգլիայում որենքի առաջ մենք բոլորս հավասար ենք, բայց մարդկանց իրավունքները միևնույն չեն։ Վորպես ընկերակից նա անհետաքրքիր և, և չի-
րևում է, ինչ վոր ճիշտ և, զործի մի պարզ մարդ։ Իմ բարեկամներից մեկը մի որ նրա հետ նախաճաշելիս՝ զարմանքով լսել եր, վոր նա մի աղքատ մարդու, — վորը մի զույգ հողաթափ եր բերել վաճառելու նրան, — ասել և. «Նստիր, իմ պարկեշտ բարեկամ, և նախաճաշիր, հողաթափի մասին մենք հետո կսակարկենք»։

Ավելի շատերին դասի մարդկանց իրենց ընկերութեան մեջ ընդունելն անտանելի բան չի աստիճանավորների համար Պարսկաստանում։ Դա առաջ և գալիս հյուրասիրութեան վերաբերական զգացումից...։ Բացի դրանից, նրանց նկարագիրը և վիճակը հաճախ պարտավորեցնում և, վոր մեզ վերաբերմունք ունենան իրենցից ցածր գտնվողների հանդեպ, նույնիսկ ծառաների նկատմամբ, վորոնց հետ վարվում են ընտանեբար։ Այս պարագան առաջին հայացքից հակասական և թվում այն տպավորութեան, վոր մարդ կազմում և նրանց ամբարտավան նկարագրի մասին։ Մի որ Ագա Միրը (Aga Meer) զրեթե հանդիմանեց ինձ մեր այս առթիվ ունեցած վերաբերմունքի տարբերութեան համար, վոր մենք ունենք ավելի ցածր աստիճանի վրա գտնվող մեր հայրենակիցների հանդեպ։ «Դուք խոսում եք այն խնամատար վերաբերմունքի մասին, վոր դուք ունեք ստորադրեալների հանդեպ, — ասաց ինձ, — բայց դուք նրանց շատ ավելի հեռու եք պահում ձեզնից քան մենք։ Ա՛յս և այն ազատութիւնը, վորով դուք պարծենում եք»։ «Յես նրան ասացի, թե ճիշտ այդ մեր պարծենցած ազատութիւնն և, վոր մեզ սանիպում և այդ վերաբերմունքն ունենալ»։ Դուք այնպես դաստիարակված եք Պարսկաստանում, ասացի, վոր կարող եք իջնել ձեր վիճակից ինչպես կամենաք. ձեզնից վար մի անձ, յերբեք ձեր ընտանի վերաբերմունքից մի րոպե թույլ չի տածում, թե միևնույն աստիճանի վրա չե գտնվում նրանց հետ, վորոնք հասարակութեան մեջ իր դասակարգից այնքան պատրոշված են։ Անգլիայում որենքի առաջ մենք բոլորս հավասար ենք, բայց մարդկանց իրավունքները միև-

* Այս տիտղոսը (Ameen-ood-Douleh) նշանակում և պետութեան ապահովութիւն (Ծանոթ. Մալկոլմի)։

նույնն են, տարբերություններ պարզապես հարաբերության մեջ և, որ մեկ տերոջ ու ծառայի հարաբերության մեջ է դնում, բայց այնտեղ ուր ուրիշ տարբերություն չկա, մենք տեսել ենք խնամքով պահել այդ, հակառակ պարագային բոլոր ձևակերպություններն ու հարգանքը շուտով պիտի կորչեին։

Բարի Միրզան ընդունեց, թե կարող է որոշ ճշմարտություն լինել իմ ասածի մեջ։ «Սակայն, տարտրինակ է ձեր կերկիրը, ասաց նա, կես կերկիր չպիտի հասկանամ նրա կերպերն ու սովորությունները»։

Միրզա Շեֆին (Meerza Shefee), որ ինքն իրեն անվանում է վարչապետ (Premier), կարելի չէ անվանել արքունի նախարար. նա ինտրիգների ու հաշտակերության բոլոր ձևերի մեջ վիզերան է։ Չվարթ, աշխույժ ու ճկուն, նա հասկացել է իր կերկար կյանքում կառավարել իր ծուռ ու մուռ ընթացքը, և տակավին մնում են նրա աչքերն ու գլուխը, թեև կերկուքն էլ, անկասկած, հաճախ վտանգի տակ են եղել։ Թագավորը կապված է նրան, որպես իրենց ընտանիքի հին ծառայի։

Ռիզա Կուլին (Riza Koolee) նույնպես կարևոր իշխանների հին ծառան է։ Նա տպավորիչ մարդ է, նրա վարվելակերպը մասնավորապես հաճելի է. նա Պարսկաստանում իմ լսած մարդկանցից ամենահարատարախոսներից մեկն է։ Յես մինչև այն պահը չունեցա մտերմորեն ծանոթանալու այս նախարարի հետ, ինչպես ուրիշների հետ, բայց կեցի հավատաք ընծայենք ընդհանուր տեղեկություններին, շատ քչերն են գերազանցում նրան վարպետությամբ ու բարի դպացումներով։ Նա չի ցուցաբերել այն վաղահաս վատասրտությունը, որ այնքան սովորական է իր հայրենակիցների մոտ։ Նա համեստ ու արժանավոր մարդու համբավ ունի, և նրա ունեցած հարստությունն ու բարեկեցիկությունն այնպիսի միջոցներով չեն ձեռք բերված, որ թշնամիներ ստեղծելին նրա դեմ։ Առաջին շարքը հասնելու համար ինքնիրեն առաջ մղած չլինելուն պատճառով, հաջողած է ձեռք բերել ապահովություն և առաջացում։

Սրանք են թագավորի գլխավոր նախարարները, բայց քաղաքական կյանքի մեջ ամենքից ավելի մեծ ազդեցություն ունի Միրզա Բուզուրգը (Meerza Boozoorg), որ յերկար ժամանակից ի վեր նախագահում է պատժառանդի Ավագ-ժողովին, Կայմական (Kâim Mekâm) [տեղակալ] տիտղոսով։ Նա ավելի մեծ վորձառություն ունի, և իր յերկրի արտաքին շահերն ավելի լավ է հասկանում, քան ուրիշ վերևնախարար, կատարյալ գիտակցություն ունի իր անփակ կացության բնույթին, և ճանաչում է այն մարդկանց նկարագիրը, վորոնց ծառայելն ու հնազանդելն իր պարտականությունն է։ Մի որ նա ինձ զարմացրեց, պատմելով այն կանոնը, [վորով նա դեկավարվում եր], և վորով նա հաջողած է խուսափել, և վատահ է, վոր պիտի շարունակե գերծ լինել, այն ճակատագրից, վոր սովորական է պարսիկ նախարարների համար։ «Յես յերբեք, ասաց նա, չեմ կուտակում ղրամ կամ կալվածք. ժառանգական մի փոքրիկ կալվածք ունեմ, վոր պարկրից ի վեր իմ ընտանիքին է պատկանել. այս, ըստ սովորության, չի կարելի բռնագրավել, իսկ ուրիշ բաները, յես առանալուս պես ծախսում եմ։ Իմ այս սկզբունքը [ըղղորին] հայտնի յե. թագավորը, — ավելացրեց նա, — հաճախ ծիծաղում է և ասում, յես մի դահեկան անգամ շահ չեմ ունենար այդ շռայլ մարդու՝ Միրզա Բուզուրգի մտովը և նրա կողոպուտից»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիբբոնը, Edvard Gibbon *(1737—1794)*, անգլիացի պատմաբան, հեղինակը «The Decline and Fall of the Roman Empire», հինգ հատոր նշանավոր պատմական աշխատության։ Նրա աշխատությունը, վորպես դասական մի գործ, այժմ էլ պահում է իր կարևորությունը։ Նա ոգտագործել է մի. դարում ծանոթ բոլոր պղյուրները։ Աշխատելով և մանրամասն նրա յերկասիրության առաջին մասերը 180—641 թ., իսկ վերջին

մասերը պահասավոր են, վորովհետև միայն ԺԹ. դարում հրատարակվեցին հունական, լատինական, սլավոնական, հայկական և արաբական բազմաթիվ աղբյուրներ, վորոնք անծանոթ էին Գիբբոնին։ Նա իր պատմության հատորներում հաբմածում ու յերգիծանքի առարկա յե դարձնում քրիստոնեությունը։ Գիբբոն իր կյանքի մեծ մասը անց կացրեց Չվիցերիայի Լոզան քաղաքում։ Այստեղ նա ավարտեց իր պատմական այդ մեծ աշխատությունը։

2. Սուլթանիե, հին քաղաք պարսկական Իրաքում։ Այդ շրջանի պարսկական հին անունը Շահրուտեազ էր։ Նախապես նա կախում ուներ Ղազվինից։ Այս վայրը ծովի մակերևույթից 5.000—5.500 ոտք բարձր է։ Ամառվան ընթացքում տեղի կլիմայի զովությունը և շրջակայքի արոտավայրերի առատությունը մոնղոլների ուշադրությունը հրավիրեց այս տեղի վրա։ Արղուն ձեռնարկեց քաղաքի կառուցման, իր հաջորդները շարունակեցին և շինարարությունը վերջացավ 1313 թ.։ Հետզհետե առևտրական կարևոր կենտրոն հանդիսացավ և Արևելքի բոլոր ճանապարհները անցնում էին Սուլթանիեյից։ Փառավոր ու շքեղ շենքեր, մասնավորապես հայկական մզկիթներ, զարդարում էին նոր քաղաքը, վորի հետ միայն Թավրիզը կարող էր մրցել։ Ուղեգրություններից շատերն են հիշատակում Սուլթանիեն, ինչպես Կլավիխո, Ալեաբրտս, Պիետրո Դելա Վալա, Տավառնիե և ուրիշներ։ Սեֆևիի հարստության որով, յերբ մայրաքաղաքը փոխադրվեց Ղազվին և ապա Եսպահան, Սուլթանիեն անշքացավ ու ամայացավ։ Սուլթանիեն միմիայն Ջաֆ Ալի Շահի որով մի քիչ կենդանություն առացավ, այն էլ վորպես ամառանոց։ Նա Յեվմոլովին էլ ընդունեց Սուլթանիեյում 1817 թվին։ Սակայն 1828-ի ռուս-պարսկական պատերազմից հետո, քաղաքը լքվեց ու մոռացության մատնվեց։ Մնում է միայն մի փառավոր մոսկիում, վոր բարձրանում է մի վողորմելի գյուղի մեջտեղ։

3. Սա ակնարկում է այն անպատեհության, վոր առաջացել էր յերկու անգլիական ներկայացուցիչների միաժամանակ Պարսկաստանի արքունիքն ուղարկված լինելուց։ Սըր Հարֆորդ Ջոնս ուղարկված էր Անգլիայից, իսկ Մալկոլմը՝ Հնդկաստանի կառավարչի կողմից, վոր տեղյակ չեր կենտրոնական կառավարության այդ կարգադրության։ Այդ շրջանում հեռագիրը չկար, հաղորդակցությունը հեռավոր յերկրների հետ տևում էր ամիսներ ու տարիներ։

4. Ավելի հետաքրքրական բան չկա քան այն, վոր մահմեդական իշխաններն ասպետության պատվանշաններ են տեղծում քրիստոնյաների համար։ Այս սովորությունը առաջին անգամ սկսավ Կ. Պոլսի արքունիքում և շուտով նրա օրինակին հետևեց Թեհրանը։ Պարսկաստանի թագավորն

տարեվ չքանչանը տեղծեց Բռնապարտի դեսպան Գիներալ Գարդանի հատար։ Այս չքանչանը առաջարկվեց Սըր Հարֆորդ Ջոնսին, Անգլիայի թագավորի դեսպանին, բայց մերժվեց, նրա ծագման պարագաների պատճառով։ Ապա դեսպանին [Մալկոլմին] տեղեկացին, վոր նա ընդունի, բայց նա պատճառ նկատեց հետևելու Անգլիայի թագավորի դեսպանի որինակին։ Սակայն, Պարսկաստանի թագավորը վճռեց, ինչպես ինքն ասաց, վոր իր առաջին յեվրոպացի բարեկամը կրի իր ստեղծած մի չքանչանը և այսպես հիմնեց Առյուծի և Արևի [աստիճանը], վոր շատ հին ժամանակներից ի վեր յեղած է Պարսկաստանի դինաշանը։ (Մանոթ. Մալկոլմի)։

5. Մալկոլմ հաճախ հիշատակում է Ջոջա Արաքունին, հավանորեն Հարությունն, վոր Թիֆլիսեցի եր, և ծառայում եր Մալկոլմի դեսպանության մեջ, վորպես դանձապահ։ Նրան հիշատակում և նաև Մորիեր։ Նրան անվանում էին կապտամորուս (Blue-Beard), շատ զորավոր գույնով ներկած մեղքերը ինքնալուն համար իր մորուքը։ Արուշիրում նրանց ներկայանում և Շիրազի կառավարչի թիկնապահներից մեկը, վոր վրացի յեր և վորին Ջոջա Հարությունը ճանաչում է, վորպես Թիֆլիսի իրենց հարևանի վորդին։ Աղա Մահամեդը նրան գերի յեր վարել Թիֆլիսից, նա մահմեդականացել եր։ Այս վրացին գաղտնի տեսակցում է Ջոջա Հարությունի հետ և հարյուր թուման և տալիս նրան՝ ուղարկելու համար Թիֆլիս իր մորը (Sketches, I. եջ 76—81)։ Մեր ուղեգիրն այս հայ խոջայի մասին ասում է. «Այս խելացի ու պարկեշտ մարդը, իր ցեղի վերապահության հատկանիշն ունեցել, ապրելով մի յերկրում, ուր նրանք [հայերը] յենթակա յին հարստահարության, փոքրությունից սովորում են զգույշ լինել իրենց խոսքերում և գործերում։ Այս բարի մարդը սիրում է կատակ անել, բայց այնքան կամաց և ասում, կարծես դա մի պետական գաղտնիք լինի». (Sketches, I. 110)։

ՄԱԼԿՈԼՄԻ «ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

[Մալկոլմ բացի իր ճանապարհորդական յերկու հատորից, 1829 թվին հրատարակած է նայեվ յերկու հատոր Պարսկաստանի պատմություն, «History of Persia», որ թարգմանված է մի շարք յեվրոպական լեզուների, ինչպես նայեվ պարսկերեն: Հնդկաստանի Լաոոր քաղաքում 1888 թվին գնդապետ Կուրս (Lieut. Colonel M. H. Court) աչքի առաջ ունենալով Միրզա Հեյրատի պարսկերեն թարգմանությունը յեվ անգլերեն բնագիրը, վերահրատարակել է այս յերկի յերկրորդ հատորը, ավելացնելով բազմաթիվ ծանոթագրություններ յեվ հավելվածներ: Այս հրատարակությունն է, որ մենք ձեռքի տակ ունենք: Անհրաժեշտ նկատեցինք Մալկոլմի այս յերկից թարգմանել այն մասը, որ վերաբերվում է Ֆաթ-Ալի-Շահին, նկատի ունենալով որ նեղինակը ոչ միայն ականատես է, այլ նայեվ շատ կարևոր պեր է կատարած այդ շրջանի Պարսկաստանի քաղաքական կյանքում]:

ՖԱԹ ԱԼԻ ՇԱՀ*

Աղա Մահամեդ խանի (Aká Muhammad Khan) *մահից հետո,* [*1797 թ.*] *նրա բանակը մեծագույն խառնաշփոթության մեջ ընկավ, Շուշին լքվեց, և միապետի դիակը թողնվեց, որ իր ամենաստորին ծառաների կողմից նախատինքի յենթարկվի: Սադիք խան Շաքաքին* (Sadik Khan Shakaki) *իր ցեղով միասին հեռացավ, և մի շարք ուրիշ*

* Malcolm's «History of Persia (Modern)» *էջ 111—113:*

պետներ նետեցին նրա որինակին, բայց առաջին քայլ նպաստությունը անցնելուց հետո, վարչապետ Հաջի Իբրահիմը իր հավատարմությունը հայտնեց [նախապես] վոչնչացած գահաժառանգին, և բավական մեծ թվով զինվորական ուժ հավաքելուց հետո՝ առաջացավ դեպի մայրաքաղաքը, վորի դռները փակել եր Միրզա Մահամեդ խանը, սպասելով Ֆաթ Ալի խանի (Fath 'Ali Khan) ժամանմանը Շիրազից: Նա մեռած վեհապետի յեղբորվորդին եր և նշանակված եր վորպես հաջորդը: Միրզա Մահամեդ Խան Դավալուն մի ժամանակ կառավարել է նեղ Ազա Մահամեդ խանին, բայց հետո այդ քաղաքական միությունը նեղել և բարձր պաշտոնները եր վատահել նրան: Այս պարագայում նրա ընթացքը ըղհում եր նրա յերախտապարտությունից և նվիրվածությունից: Ֆաթ Ալի խանը, թեև անմիջապես հայտարարվեց թագավոր, բայց միայն հաջորդ տարվա սկզբին թագադրվեց [1798 թ.]: Մոտաղրություն չունենք գրելու Պարսկաստանի նեղկայումս իշխող թագավորի պատմությունը, բավական է միայն հանգամանքի կերպով հուշագրել նրա գահ բարձրանալուց հետո կատարված դեպքերը:

Սադիք խանը թույլ ջանքեր արեց գինադրելու համար նրան, բայց պարտվեց: Ընդհատակյան այս որինակը հետագայում փորձեց թագավորի յեղբայր Հուսեյին Կուլի խանը (Hussein Kuli Khan) և մի իշխան՝ Մահամեդ խան, Զենդ ընտանիքից, բայց այս փորձերը նվաճվեցին, առանց գործողության: Մահամեդ խանը Զենդի խանի որդին եր, և մի ժամանակից ի վեր նա ապրում եր Բասրայում: Նա առաջացավ մինչև Սպահան միմիայն քանի կամ երեսուն հետևորդներով, սակայն նրանք բավական եյին վախեցնելու և հպատակեցնելու բնակիչներին: Մահամեդ խանը միայն մեկ-յերկու որ տիրեց քաղաքին. նրա հետևորդները ցրվեցին և նա ստիպված եր փախչել: Նրան հաջողվեց հասնել թրքական սահմանը: Դրանից հետո կայսրության ներքին անդորրությունը այլևս չխանգարվեց: Ֆաթ Ալի Շահը մի քանի կռիվներով կարողացավ իր իշխանությունը հաստատել Խորասանի (Khu-

rīsān) անձագուշն մասում։ Այդ յերկրի գլխավորները, որոնց նա վերջնականապես չեր հպատակեցրել, — անվանական հնազանդություն հայտնեցին, և պատահարար աւերք եկին վճարում նրան, որպեսզի կարողանան նրա բարեացակամությունն ու պաշտպանությունը շահել։ Ազվաններբ տարբեր շարունակ, իրենց ներքին պատճառով, դանվում են այնպիսի խառնաշփոթ վիճակում, որ չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները այդ նահանգի վրա, մի բան որ նրա միապետները հավակնություն ունեն եղել ժառանգել են Անմեղ Շահից։ Այդպիսի անզորությունն այժմ չի խանգարվում ուզբեկների պարբերական արշավանքներից. նրանց իշխանն այնս Բեգի Ջանը (Begi Jan) չե։ Նա մեռավ Ագա Մահամեդից անմիջապես հետո. նրա փոխարեն Հայդար Տուրա (Haidar Turah), որ հաջորդեց նրան, տակավին ոչ մի գործ չի կատարել, որ ներշնչի այն հավատը, թե նա ժառանգել և իր պատակարգ ծնողի և նախորդի տաղանդը կամ ուժը։

Պարսկական միապետին նույնպես չի հաջողվել պահպանելու իր թագավորության հյուսիս-արևմտյան սահմանը։ Վրաստանը շատ տարիներ, յերբեմն հաջող և յերբեմն անհաջող կռիվներ մղելուց հետո, վերջապես վերածվեց ռուսական մի նահանգի։ Այդ ազգի բանակները այժմ գտնվում են Արաքսի յեզերքին և Կասպյան ծովի հարավային ափերին։

Վերջին տասնհինգ տարվա ընթացքում Պարսկաստանի արքունիքը սկսել են այցելել յեվրոպական ազգերի դեսպանները։ Այն ուժը, որ այդ յերկրի վհատական ուներ՝ յետ մղելու համար ազվաններին, որոնք սպառնում եյին արշավել Հնդկաստան, և նրա կարողությունը՝ ոչնչելու համար դրժելու Ֆրանսիայի վտառասիրական տեսակետները այդ յերկրամասի վերաբերմամբ, պատճառ դարձան, որ Բրիտանական Արևելյան Կալվածների Ընդհանուր Կառավարիչը Ջաթ Ալի Շահի հետ դաշնակցություն կնքի (1800)։ Այս քաղաքականությունը ժամանակավոր հաջողություն ունեցավ, ինչ որ ցանկալի յեր հետացրեց ազվանների ուշադրությունը՝ Հնդկաստանի վրա

հարձակելու իրենց մտադրությունից, և անգլիական ազգի ուժի մասին տպավորություն թողեց թե Պարսկաստանի թագավորի և թե նրա հպատակների մտքի վրա, նպաստավոր այն պայմանների գործադրության համար, որ այդ միապետը հանձն եր առել, պահանջ զգացվելու դեպքում դիմադրելու Մեծն Բրիտանիայի յեվրոպական թշնամիներին։ Այս դաշնակցության հաստատությունը նպաստեց Հնդկաստանի և Պարսկաստանի հարաբերությունների զորացման և առևտուրի զարգացմանը։

Բոնապարտը ձգտում եր տիրել աշխարհին. գլխավոր ուժը՝ անգլիական ազգը մի խոչընդոտ եր նրա ճանապարհի վրա և նա գործադրեց բոլոր միջոցները, որքան էլ դրանք հեռավոր լինեին, չախչախելու այդ ուժը։ Յեվ որքան էլ հեռավոր լիներին, չախչախելու այդ ուժը։ Յեվ որքան էլ յերևակայական թվա այդ ծրագիրը, նրանց որոնք ծանոթ են այն անսահման դժվարություններին, որ նա պիտի դաներ իր ճանապարհի վրա, նա [Բոնապարտը] անկասկած սնուցանում եր իր մտքում՝ Բրիտանական Հնդկաստան արշավելու հեռանկարը։ Նա փորձեց սիրաշահել Պարսկաստանի թագավորի բարեկամությունը, որպես անհրաժեշտություն՝ հնարավոր դարձնելու համար իր ձեռնարկը։ Ռուսաստանի և Ֆրանսիայի այդ շրջանի հարաբերության բնույթն էլ, դերապահպանապես նպաստում եյին նրան հետապնդելու իր այս նպատակը։ Այս ձեռնարկումները մեծ հուզում առաջ բերին Լոնդոնի արքունիքում, և այն չանքերը, որ անհրաժեշտ եյին համարվում հակազդելու համար նրանց, ավելի եյին ավել ավելի մերձ շփում ստեղծելու Պարսկաստանի կառավարության հետ։ Այդ և պատճառը, որ հինգ տարվա ընթացքում Անգլիայի թագավորը պատվել և այդ յերկիրը՝ յերկու դեսպանություններ ուղարկելով այնտեղ։

Պարսկաստանում իշխող թագավորը ընդառաջել եր Բոնապարտի առաջարկներին, հուսալով որ Ֆրանսիայի միջնորդությունը կամ նրա ուժը հնարավորություն պիտի տա իրեն վերստին ձեռք բերել Վրաստանի նահանգը, բայց յերբ Յեվրոպայի պայմանների փոփոխությունը ստիպեց Ֆրան-

ախալի կայսեր լքելու իր ասիական ծրագիրները, Ծաթի Ալի Շահը վերահաստատեց իր դաշնակցությունը Անգլիայի հետ [1808 թ.]։

Կարևոր չեն մանրամասնությունները այն բանակցությունների, որ կատարվել են անգլիական և պարսկական կառավարությունների միջև, կամ ասել ավելին քան այն, որ այս երկու երկրի միջև ընդհանուր բարեկամական հարաբերություններ գոյություն ունեն և հաստատված են դաշնագրություններով։ [Անգլիան] միայն ուժ և բարգավաճում կարող և ցանկալ մի թագավորության, որ պատվար և Յեվրոպայի և իր ասիական կալվածների միջև։ Բարեբախտաբար Պարսկաստանը ներկայումս [1814 թ.] ավելի երջանիկ և ավելի անդորր վիճակումն և գտնվում, քան նա եղել և երկար ժամանակ, և նրա իշխող միապետը, որ 17 տարի շարունակ գրավում և գահը, շնորհիվ իր համեմատաբար ավելի մեղմ և արդար կառավարության, բարձր դիրք և գրավել Պարսկաստանի թագավորների շարքի մեջ։

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Մալկոլմի «*History of Persia*», եջ 182)

Բնակության վայրի ընտրության մասին Պարսկաստանից դուրս չկա ուրիշ մի երկիր, ուր մարդիկ վայելեն ավելի անձնական ազատություն։ Բոլոր աստիճանի մարդիկ, բացի հանրային ծառայության մեջ գտնվողներից կամ տարուկներից, (որոնք բաղմաթիվ չեն), ազատ են գնալու թագավորության սահմաններում, ուր որ ընտրեն, և կամ մեկնելու երկրից, երբ որ ցանկանան այդ։ Անցագիր չի պահանջվում, կառավարությունը երբեք այս ուղղությամբ անհատական միտումների դեմ վճռեւ արգելք չի հարուցանում, և այն դրությունը, որ մարդիկ կարող են հեռանալ բռնության ազդեցությունից, կարելի չի համարել նրանց ապահովություններից մեկը՝ հարստահարության դեմ։ Այս

կանոնից վորոշ բացառություններ կան։ Պարսկաստանում հայ ազամարդիկ կարող են հեռանալ այդ թագավորությունից, բայց իրենց ընտանիքի կին անդամներին չեն կարող տանել իրենց հետ առանց անցագրի, որ քիչ անգամ ձեռք և բերվում, այն էլ մեծ դժվարությամբ ու ծախքով։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

(«*History of Persia*», եջ 193)

Այդ երկրի մասին մեր ունեցած տեղեկություններից դատելով՝ դրեթե անկարելի չի թվում տալ Պարսկաստանի բնակչության ճիշտ թիվը։ Այն հաշվառումը, որ պարսիկները իրենք են կատարում իրենց երկրի բնակչության մասին, անկասկած չափազանցված և։ Մի ձեռագրում, որը ասում են սուլթան Շահ Հուսեյնի թագավորության շրջանի պետական թղթերից և քաղված, և որը տալիս և մանրամասնություններ բոլոր ցեղերի և քաղաքացիների թվի մասին, Պարսկաստանի միապետի հպատակների ամբողջական թիվը լրջորեն հայտարարում և 200.000.000-ից ավելի։ Մի յեվրոպացի ճանապարհորդ, որ մի դար առաջ արել և իր գնահատումը, հավատում և, թե այդ թագավորության բնակիչների թիվը մոտավորապես 40.000.000 և, բայց մի ականավոր աշխարհագրագետ, Պինկերտոնը, հիմնվելով այն յեզրակացության վրա, թե Պարսկաստանի և Կանդահարի բնակչությունը Ասիական Թուրքիայից ավելի չե, նրա թիվը համարում և տասը միլիոն, որից նա կարծում և չորսը [միլիոն] պատկանի կանդահարին և վեցը, ինչպես ինքն և անվանում Արևմտյան Պարսկաստանին, կամ այլ խոսքով, ներկա թագավորության սահմաններին, այս գնահատումը հավանորեն շատ հեռու չե ճշմարտությունից։ Դա նշանակում և հարյուր բնակիչ մի քառակուսի մղոնի վրա, և թեև կարող և Պարսկաստանի մի շարք մասերում այդ թվից ավելին լի-

նել, սակայն կան ընդարձակ անապատներ, որոնք ամբողջությամբ անբնակ են։

Անկասկած շատ ու զորավոր պատճառներ կան Պարսկաստանի բնակչության աճման դեմ, այն է՝ կառավարության անկայունությունը, նրա հարստահարությունները, շարունակական ներքին ու արտաքին պատերազմները, և ամենից ավելի, իրենց զավակների լքումը։ Բայց, մյուս կողմից, չեմ ի նկատի ունենանք կլիմայի առողջապահիկ հատկությունը, կենսամիջոցների ժամանության, սովի հազվագեպ դեպքերը, նրանց քաղաքացիական կռիվների անտեղյակ լինելու հանգամանքը, պարարտ ամուսնության, և համեմատաբար պռոնիկների սակավության, կարող ենք չեզրակացնել, թե այս չերկրի բնակչությունը նվազած չի վերջին զարի ընթացքում, ինչպես ընդհանրապես կենթադրվում է։ Բազաքների վիճակի մեջ մեծ փոփոխություններ են կատարված, և բազմաթիվ չեղեր անհետացած են իրենց նախկին բնակավայրերից, շատ դեպքերում նրանք փոխադրված են Թագավորության մի այլ հողամաս։ Վերջին տասնչերկու տարվան ընթացքում Սպահանի բնակչության թիվը մոտավորապես կրկնապատկված է։ Չերբ դա Շահ-Աբբաս Թագավորների մայրաքաղաքն եր, չեմ ձանձ հավատանք այնտեղ այցելող չեվրոպացի ճանապարհորդներին, այդ քաղաքի բնակչության թիվը մոտավորապես վեց-յոթ հարյուր հազար եր։ 1800 թվին, չերբ չես գնացի Պարսկաստան, 100.000-ից ավելի չեր համարվում, և այժմ հաշվվում է մոտավորապես 200.000։ Սակայն, սա հետևանք է տեղական գերազանցորեն լավ վարչության, որ համոզել է իր նախկին բնակիչներին վերադառնալ լռներին մերձակա գյուղերից, ուր նրանք ապաստան եկին գտել խուսափելու համար բռնություններից և հարստահարություններից։

Պարսկաստանում, ինչպես նաև Պարսկաստանի այլ մասերում, ամեն չերջանկություններից ավելի արու զավակ են ուզում, նույնիսկ ամենաաղքատները ամուլության վրա գանվողները, բայց, աղջիկ զավակները, թեև հավասարապես հարգի

չեն, բեռ չեն համարվում իրենց ծնողներին մի չերկրում, ուր ամուրիությունն անծանոթ է և ուր ամենաաղքատն իսկ շատ քիչ անպատուհասիքի պակասություն ունի.... Այն հանգամանքը, որ պարսիկները պատրաստ են ըստ կամս գաղթելու մերձակա չերկրները, ուր նրանցից շատերը շահարեր աշխատանք են գտնում, նույնպես հաշվում է, թեև քիչ թվով, ավելացնում է նրանց թիվը, որովհետև նրանց ամման դեմ չեղող արգելքներից մեկը վերացվում է։

Թեև աղվանների արշավանքից ի վեր Պարսկաստանի բնակչությունը թերևս նվազած է բավականին մեծ չափով, սակայն անկասկած վերջին տասը տարվան ընթացքում աճել է, և կարելի չե ասել թե այս ժամանակաշրջանում արագորեն աճում է։ Բայց այս նկատողությունը վերաբերում է միայն այդ չերկրի մահմեդական բնակիչներին։ Ասված հրեաները թվով շատ են նվազել, և հայածական Գաբրերը, որոնք արտոնված են ապրել միայն Յեզդի մի քաղաքում, հավանորեն չափազանցություն է, չերբ 4.000 ընտանիք են հաշվում։ Սպահանի արվարձան Ջուղայում հաստատված հայ գաղութը, որ նախապես հավասար եր 2500 ընտանիքի, որոնցից վոմանք մեծ հարստության տեր եյին, այժմ 500 չեն հաշվում. վոչ վոք հարուստ չի նրանցից. այս գեղը կայսրության բոլոր մասերում ավելի մեծ համեմատությամբ նվազած է։ Ջուղայի չեպիսկոպոսի հրամանով Պարսկաստանի բոլոր հայերի հաշվառում է կատարված և հավասար է 12.383 հոգու. ասում են, որ [այդ թիվը] աղվանների արշավանքից առաջ նրանց թվի մեկ վեցերորդն անգամ չի կազմում։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԵՐԱԼ ԳԱՐԴԱՆԻ

(1807 և 1808)

Նապոլեոն Բոնապարթի դեսպան և լիազոր ներկայացուցիչ Գեներալ Գարդանի Պարսկաստան կատարած դիվանագիտական առաքելության մասին խոսված և այս հատորի ներածականում։ Գարդանը, իր շքախմբով 1807 թ. սեպտեմբերի 19-ին մեկնում է Կ. Պոլիից և մի տարի պարսկական արքունիքում մնալուց հետո՝ Բաղդադի ճանապարհով վերադառնում է Ֆրանսիա։

Նրա ուղեգրությունը հրատարակված է Փարիզում, 1809թ. հետևյալ խորագրով. «Journal d'un voyage dans la Turquie d'Asie et la Perse, fait en 1807 et 1808, Paris, 1809». (Որպիսի Ասիական Թուրքիայում և Պարսկաստանում կատարված ճանապարհորդության՝ 1807-ին և 1808-ին)։ Այս գործը հրատարակված է անանուն։ Մենք թարգմանել ենք գրեթե ամբողջությամբ Գարդանի օրագրի այն մասը, որ վերաբերում է նրա ճանապարհորդության. սկսած թրքական մայրաքաղաքից մինչև նրա Թեհրանից մեկնումը ու վերադարձը Բաղդադի ճանապարհով։



Ա. Կ. ՊՈԼՍԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ահա գտնվում ենք Ախալցխայում։ Աչքարներն այս մասում ամեն ինչ նոր են՝ բնակիչներ և բարքերը։ Արդյունավետ կերպով ճանապարհորդելու համար, անհրաժեշտ է իմանալ սուրբ ու ազգագրական, հին ու նոր պատմություններդ։ Ամեն կերպով, ես պրի չեմ առնելու այն բոլորը, ինչ մոր կնկատանք օրվա ընթացքում և ինչ մոր պատահի։ Ինչքան կերևույթներ են աչքիդ վրիպելու։ Հերիքեն թախտավոր մի դիպվածով գտնելու եմ այն, ինչ մոր մի ուրիշը չպիտի գտներ։ Ճանապարհորդության ժամանակ առարկաների բազմազանությունը զմարճացնում է. դու եմ եմ, մոր այսպիսի մի շատ աշխատանք ներողամտությամբ կարդալու համար պետք է զրված լինի Ախալցխում։

Հայի Իրահիմ Ագան, մեր մհմանդարն (Mm-Mander) է, այսինքն Բ. Դատն կողմից ընտրված մի անձնավորություն մեզ ընկերակցելու։ 38 տարեկան է, խիստ աշխույժ. նա ուզարկվել է Ս. Պետերբուրգ, որպես առևտրական, իսկ հետո Բոմբեյ։ Ավստրիայի հետ տեղի ունեցած վերջին պատերազմի ժամանակ գերի ընկնելով, ազատած է գերմանների կողմն. մի փոքր էլ իմանում է թատերներն։

Քաղաքավարություններ, մեր վճռապահին ծառայելու ընդհանուր ցանկություններ և ապա պետության բոլոր անդամների հետ ունեցած ծանոթությունը՝ սիրտ կապիր առիթներին։

Ակնաարի շրջակայքը մշակված է և արտադրում է մեծ քանակություններ ցորեն։ Ճանապարհ հավանորեն Ատրին կայարության մի գործն է, որը Ջնովացիք վերանորոգել են։

Կարավանը Ակնաարից մինչև Բայտաղի (Caetachi) [Քարթալ] հինգ ժամում է գնում. ունի 600 տուն։ Գիտեմ թե ժամանակին ինչպես են լեզել քարվանսարայները, սակայն այժմ կիսատանգ ախոռներ են, ուր հազիվ թե կարելի է գիշերել մեծ լեզանակի խառնություններից։

Մեծ բավականություններ պատահում ենք, մեկը մյուսից քիչ հետու, լավ շինված և նույն իսկ զարդարված աղբյուրներին։ Վերջին օթևանարանն է և վերջին հանգստարանը այս կերկրում, ուր ճանապարհորդությունը կարավանով է կատարվում, այսինքն գանգատների և ձիով։ Առավոտյան դեմ լինելիք կամ չորս ժամ գնալուց հետո՝ նախաճաշելու համար կանգ ենք առնում մի աղբյուրի մոտ։ Հանգստանում ենք սավիրի տակ, իսկ ձիերն էլ գնում են գաշտում արածելու։ Ձեռ շատ եմ լսել ասիական մզկիթի գովասանքը, սակայն մինչև այժմ լեզածները հավատար չեն մեր ունեցածին։ Թուրքերը գեռ ևս ծանոթ չեն [մզկիթ] վորակը բարելավելու արվեստին և մշակությին։ Գեռ նոր ենք սկսել մեր ճանապարհորդությունը, և արդեն զգում եմ թուրքերեն չիմանալու անհարմարությունը։ Ամեն ուզում են արդյունավետ ճանապարհորդություններ կատարել, պետք է սովորեն ոտար լեզուներ։ Ինչպիսի տանջանք է, երբ չես կարողանում արտահայտել քո միտքը և զրկված ես մի ժողովրդի ընկերակցության հաճույքից, վորի միջից անցնում ես։ Բացի այն նեղություններից և դրամից, վոր պահանջում է ճանապարհորդությունը։

Մտնում ենք Միջրդատի թագավորության մեջ, այսինքն հին Բյութանիա (Bythinie)։ Քարթալից (Caetachi) մինչև Գիլեբիզե (Giebizé) վեց ժամ է, ունի 1000 տուն։ Անցնում ենք Փենդիկ (Pendic), նախկին Պենտիկապեում (Penticapeum). շրջակայքում հազվի այգիներ կան, քիչ բնակչություն։ Ամբ Գիլեբիզեից մինչև Իզմիտ (Ysmith) կամ Նիկոմիդիա (Nicomedie) տասնմեկ ժամ ու մի քառորդ է. ունի 5300 տուն, Իզմիտ գետի վրա։ Տեսնում ենք Մահմեդիանոսի պալատի բեկորները. նույնպես այս քաղաքում է գտնվում

Անդիրթալի գերեզմանը։ Այցելում ենք փաշային. նրա դռան մուտքի առաջ կա մի կախվածի և մեկ պլխատվածի դիակ։

Ամասիայի ապստամբ փաշայի վախը մեզ ստիպում է շարունակել ավելի խոտորնակ և ավելի սակավ բանուկ ճանապարհով։

Նիկոմիդիայից մինչև Կարամուսալ (Karamussal) անցնում ենք ինը և կես ժամից. ունի 300 տուն։ Մշակում են սեխ ու սերկեվիլ, որ արտահանում են Կ. Պոլիս։ Այստեղ չկան վոչ հույներ և վոչ էլ հայեր։

Կարամուսալից մինչև Կրիսդերվենտ (Krisdervent) վեց և կես ժամ է, ունի 150 տուն։ Բուլղարական գաղութ է. տեղացիք զբաղվում են մետաքսի և կանեփի առևտրով։ Անցնում ենք Պոյալիդիա (Poialidiya) գյուղի միջով, Չինիկիտ (Tchinikit) կոչված ձկնառատ լճի ափին, որ ունի ութ մղոն երկարություն և երկու մղոն լայնություն, և տարեկան տալիս է 1200 դուկատ Սուլթանին։

Կրիսդերվենտից մինչև Իզնիկ (Ysnik) կամ Նիկիա (Nicée) անցնում ենք վեց և կես ժամից. ունի 225 տուն։ Ճանապարհը դժվարանցանելի է և կտրված բազմաթիվ հեղեղատներից։ Այս քաղաքը, ուր Յերուսաղեմից հետո տեղի ունեցավ առաջին տիեզերական ժողովը, յոթն անգամ քրիստոնյաները գրաված և վերագրաված են։ Մոտ 500 տարի է, որ թուրքերը տերապետել են այս երկրին. ողը վատառողջ է։ Պարիսպը ամրացված է 360 աշտարակներով։ Ներկայումս մնում է միայն 4 տուն հույն։ Մեծ քանակությամբ նռնենիներ և թզենիներ կան։ Մի մղկիթի դռան առաջ երևում է գեղեցիկ կանաչագույն մի սյուն. լավ պահպանված մի հաղթական կամար։ Հունական եկեղեցում տեսանք Կոստանդիանոսի քարից կերտված գահը։ Յերբ սբ. Գրիգորը այնտեղ հասավ, միայն 14 կաթոլիկներ կային։

Նիկիայից մինչև Աք-սերայ (Ak-seraie) տասնհինգ ժամ է, ունի 150 տուն։ Անցնում ենք Ազարի (Azar) գեղեցիկ հովտի միջով, որն ունի երեսուն գյուղ, որոնց գլխավորն է Բուլա-բան-կադե (Bula-ban-kadé), որի իշխանությունը

ժառանգական է։ Մշակում են բամբակ, ոխան յերկու դուբուշ, կենդինարը 45 դուբուշ։ Գինը (gén) բուսնում է առատորեն, ինչպես նաև շուշմալի յուղալի տունկը։

Աք-սերայից մինչև Գևյվե (Geivé) չորս ժամ է, Սաքարիա (Sacharia) գետի վրա. ունի 400 տուն։ Իշխում է մի Աղա։ Առևտրի առարկաներն են տախտակ, մետաքս, բամբակ, ցորեն, գարի և շուշմա։

Գևյվեյից մինչև Թերաքլի (Terachli) յոթ և կես ժամ է. ունի 400 տուն։ Այդ անունը ցույց է տալիս սանտրի և փայտե դգալի առևտուր։

Թերաքլիից մինչև Թորբալի (Torbali) ութ ժամ է. ունի 700 տուն։ Ունի ցորենի և պարկի առևտուր։ Թարբալի, նշանակում է պարկերի բաղաք։

Թորբալիից Կյոզթեբե (Kioztebé) տասը ժամ է. ունի 45 տուն։ Գյուղին չհասած, դեպի վեր ցցված մի ժայռ կորում է ճանապարհը։

Կյոզթեբեից մինչև Նալե-խան (Nalé-khan) գնում ենք 9 ժամից. համանուն գետի վրա յե. ունի 300 տուն։ Ջորը պայտի չե նման։ Առևտրի առարկաներն են ցորեն, բրինձ, մետաքս, ոպի. 100 տուն հայ կա։

Նալե-խանից մինչև Սիվրի-հիսար (Sevri-hissar) անցնում ենք վեց և կես ժամից. ունի 60 տուն։ Սիվրի-հիսար նշանակում է սպիտակ յեվ գորշ*։ Այս քաղաքը շրջապատող ամայի լեռները այս գույներն ունեն։ Այստեղ արտադրում են դորգ. բուրդը տեղումն են հերկում. ունի մեծ քանակությամբ պտուղ։

Սիվրի-հիսարից մինչև Բեյբազար (Beybazar) յոթ ժամ և մի քառորդ է. ունի 1000 տուն։ Քաղաքը շրջապատված է մի պաշտով, որի միջից անցնում է Ալադաղ (Aladage) գետակը, որ թափվում է Սակարիայի մեջ։ Մոտ 4000 կենդինար բրինձ է արտադրում. վոչ մի ծառ չի երևում մինչև հինգ ժամ հեռավորության վրա։

* Սիվրի հիսար նշանակում է սուր, ցցված քերդ և վոչ թե սպիտակ և գորշ։

Մեզ ընկերացող քահանաները խոսում են թուրքերեն և յերբեմն թարգմանի դեր են կատարում վաշանների կամ ագանների մոտ. մեծ ծառայություններ են մատուցանում դեսպանության, և առանց արտունչի անում են ճանապարհորդության դրկանքները և հոգնությունները. անվախ են միշտ գոհ և արամադիր բոլորին սիրալիր լինելու....

Բեյ-Բազարից մինչև Այաս (Aias) տասնևեակ ժամ է, համամուն դետի վրա. ունի 600 տուն. Այասով արծաթի և պղնձի հանքեր կան. տարեկան արտահանվում է հազար հատ յեղ. Յերկիրը արտադրում է բամբակ և բրինձ, և պահում է 45 000 այծ. Այծի մազի մեծ առևտուր ունի։

Այասից մինչև Անգորա[1] (Angora) կամ Ենկյուրի (Ancyre), Թաբանա (Tabana) գետակի վրա, տասներկու ժամ է. ունի 6000 տուն։ Մ. Տուրնեֆոր ճշգրիտ կերպով նկարագրած և Հռոմեական ատյանը, Պոմպեյի կոթողը և մի քանի հետնական արձանագրություննները։ Ունի այծի մազի և թպիլքի առևտուր։

Շրջակայքի գինին շատ ընտիր է. կա մոտ իներ հազար կաթոլիկ։ 1780-ին Մ. դը Սենտ Պրիստ (Mr de St. Priest) ուղարկել է Անգորա Դոմ Սերժիո Պերսիչին (Dom Sergio Persici), վորպես Ֆրանսիացի առևտրականների յերես, բայց այլևս վոչ մի Ֆրանսիացի չկա Անգորայում, և կաթոլիկները հաճախ ստիպված են թպտնվելու։ Ազգատ մի կնոջ թպտման համար նրանցից պահանջել են 250 դուրուշ։

Անգորայից մինչև Հայրի-քեոյ (Haïri-kieui) տաս ժամ է. 280 տուն։ Թաշտավայրը անուցանում է 10000 այծ, վորի մազը ուղարկում են Անգորա, իսկ այնտեղից էլ Իզմիր (Smyrne)։ Մզկիթի մոտ կա մի քար, վորի վրա քանդակված են շուշանի ծաղիկներ և մի խաչ։

Հայրի-քեոյից մինչև Հազա-խան (Haza-han) տասը ժամ է. Կիզիլ-Սիմակ (Kizil-Simak) գետի վրա. ունի 160 տուն։ Կիզիլ նշանակում է մանել*. բնակիչները մանում և վաճառում են իրենց բամբակը. մեծ մասամբ տառապում են աչքի ցավից։ Նախքան Կիզիլ Սիմակ գետը հասնելը, անցնում ենք մեռած պարունակող լեռներից։ Կապարի և յերկաթի պապուն քարերի վրա բնկնող արևի ճառագայթներից մարդու աչքը ուղղակի շլանում է։

Ակում ենք ծանոթանալ հին ասիական պարզ և բարի նկարագրի հետ։ Հազա-խանի բնակիչները իմանալով, վոր մեր կարավանից յերկու հոգի մոլորվել են, իսկույն բարեացակամությամբ, առանց մեր առաջարկության, շրջակայքը ուղարկեցին պինված մարդկանց՝ մոլորվածներին վարձնելու համար։

Հազա-խանից մինչև Բալըխոկ (Baletcheuk) [Բիլեջիք?] վեց ժամ, Քուրուսու (Korousu) գետակի վրա. ունի 260 տուն։ Բնակիչները այծի մազից պարկեր են պատրաստում։ Պահում են մատակ ձի և վաճառում են մատաղ ձի, յուրաքանչյուրը 700 ից մինչև 1000 դուրուշ։

Զապան-ողլուն (Chapan Oglou), այս յերկրի տերը, տարեկան յերեք կամ չորս անգամ գալիս է այցելության այս գյուղը, և ամեն անգամ յուրաքանչյուր հոգուց բռնազանձում է յերեսուն դահեկան. դրամը այնքան հազվագյուտ է, վոր փոխառության համար վճարում են հարյուրին հարյուր տոկոս։ Այստեղ կարելի յե գտնել մեծ քանակությամբ Սաորին կայսրության հին դրամներից։

Պատահում ենք խաշնարած և թափառական ժողովուրդներին, վորոնք իրենց հոտերով թափառում են մի տեսակ անկախ դրության մեջ։ Անցնում ենք վոլորապտույտ մի ճանապարհով և բարերար դաշտերի միջից։ Յորենը տալիս է մեկին տասնըյոթ։

Բալըխոկից մինչև Քաթիբ-ունու (Katib-ounou) անցնում ենք ինը ժամից. ունի 60 տուն։ Գյուղը կառավարվում է ոտար մի ազգի կողմից, ինչ վոր հազվադեպ է։ Շատ հարուստ յե նրանց յեղական ձին, վոր պահում են Դելիջե (Déligé) գետակի մոտ։

Տասնևհինգ ժամից անցնում ենք Քաթիբ-ունուից մինչև Յոզղատ (Yeuzgatt), Զապան-Ողլուի բնակավայրը, մի սիրո-

* Կիզիլ նշանակում է կարմիր կամ վոսկի և վոչ թե մանել

ված և ապրելիք իշխան, որը հաջորդած և իր հորը։ Տասը գավակ ունի. իր պալատը գեղեցիկ և, մեզ ընդունում և դահլիճում, ուր առաջնորդվում ենք մի լերկար միջանցքով. նա ժոռ 54 տարեկան և. իր արբունիքը բազմաթիվ և և շքեղ. իր կալվածքը տարածվում և մինչև Թոքաթ և կեսարիա։ Իր վորդիներից լերկուսը փաշաներ են. կարող և քառասուն հազար ձիավոր զուրս բերել և իր տիրոջ մեջ կա հազար ձի։ Չիները գնահատվում են բուռ իրենց արագընթացության։ Յոզղատ ունի 3000 բնակիչ, վորոնց մեջ տասը կաթոլիկ։ Մրգեղենն ու հացահատիկը առատ են։

Յոզղատից մինչև Դիշլիջի (Dichlige) վեց ժամ և. 60 տուն ունի։ Դիշլերը հպիվ ապած, մի փոքրիկ մեզ հանկարծակիի լն բերում և իրարից բաժանում մեզ։ Բարեբախտաբար մեր առաջից գնացող պարսից գեսպանը լուլյեր և վառել տալիս, ուղարկում և մարդկանց և կես գիշերից առաջ արդեն հասարվում ենք։ Կապին [գառատրը] և հյուրասեր բնակիչները մեզ շատ լավ են ընդունում, տալիս են բանջարեղեն և միրգեր, առանց բնդունելու փոխարժեքը։ Սկյուտարիից հետո ասլական այդ կապուտակ լերկնքի վրա վոչ մի ամպ չեյինք տեսել։ Դժվար չև հավատալ, վոր աստղերի առաջին բնթացքը ուսումնասիրողները կցած են հիացմունքից հափշտակված հովիվներին։

Դիշլիջլիից մինչև Սուր-Կուն (Sour-Koun) վեց ժամ և. 100 տուն ունի և մի գեղեցիկ մզկիթ, գեթ արտաքինով։ Յեղանակը ամպամած և և անձրևալին։

Իսը ժամ և մեկ քառորդից հասնում ենք Հաջի-Քեոյ (Haggi-Kieui). 100 տուն։ Բնակիչները պարտավոր են ամեն տարի վորոշ քանակությամբ փայտ և հարդ տանել Զապան-Ողլուին, իրենց իշխանին։ Նրն կարող վաճառել իրենց ձիերը և սահմանված են պահել ճանապարհորդների համար, վորոնց նույնպես կենսամթերքներ են մատակարարում. իրենց համար միայն մի քանի կովեր և վոչխարներ ունեն։ Գյուղը գտնվում և փոքր կաղնիներով ծածկված սարերի վրա։

Իսը և կես ժամից հասնում ենք Հաջի-Քյոյից՝ Կիզիլջիկ (Kizilgik). համանուն գետակի վրա. ունի 50 տուն։ Ճանապարհն անցնում և կաղնու անտառի միջով, ուր մեծ քանակությամբ գայլեր և վարազներ կան։ Հոկտեմբերի 5-ին մի քանի որ լերևում և մի գիսավոր աստղ։

Կիզիլջիկից մինչև Բազար-քյոյի (Bazar-kieui) ինը ժամ. ունի 500 տուն։ Այստեղից սկսում ենք թուրքմենների (Turcomans) լերկիրը։ Այ կողմից լերևում և Քիլեն (Kile). վոր 1000 տուն ունի և մի ամրոց 160 անով։ Այստեղ հիանալի լեփած պինդ լին պատրաստում։ Մշակում են ձմեռնոտ, վորպեսզի մեզրաձանձերին հեռացնեն։ Բազար քյոյը Սամսոնի բերդից (Fort-Samson), Սև ծովի վրա, չորս որ հեռու լև։ Բազաքից մեկնելիս լերևում և մի պերիզմանատուն։

Բազարքյոյից Թոքաթ (Tocat) լոթը ժամ և, Կիզիր-Մաշ (Kizir-Mach [Կրպել բրմագ] գետի վրա. ունի 3300 տուն։ Բազաքը գտնվում և գեղեցիկ մի ձորի մեջ և լերկրի տեսքը շատ հրապուրիչ և։ Շրջակա գյուղերի բնակիչները հագնվում են հին հռոմեացիների նման, և նրանց նման հյուրընկալ են։ Նրանք խնամքն առաջարկում են իրենց տունն ու պարենը և շատ են պարծանում, լերբ նրանց փող են առաջարկում։ Բազաքի վրա զուրս ցցված ժայռի սրածայր մասում կա մի շատ հին բերդ, ուր կա մի պահակախումբ և ուր բանտարկված են Յեզիպտոսում գերի ընկած տասնհինգ ֆրանսացիները։ Հաղար կաթոլիկ հայեր կան այդտեղ։ Պատրաստում են կտավներն, սակայն առևտրի գլխավոր նյութերն են 500,000 ոխա անագ և խոշոր քանակությամբ պղինձ։ Այս քաղաքը մի պահեստ և իմմերի ապրանքների համար, վորոնք հետո տարածվում են գետի երկրում, կեսարիա և Մոսուլ։ Մեկ պղնձի վրա գտնվում և ավերակ մի մատուռ, ուր քարոզում եր Սբ. Հովհան Վոսկեբերանը և ասում են թե այնտեղ նլ վախճանված և։

Մտնում ենք սովորական ճանապարհը։

Թոքաթից Նոր կեսարիա (Néo Césarie) կամ Նիկսար (Niksar) տասնմեկ ու կես ժամ և. ունի 1100 տուն։ Ունի մեծաքանակ և բրնձի առևտուր։ Լեռները ծածկված են կաղնի և սոսի

ծառերով։ Երկարից Իրման բյոյ (Irman kieui) առանձին մեծ և մեկ քառորդ. ունի 120 տուն։ Բնակիչները բնաիր ձիեր ունեն։ Այս ամենի համապարփակ տեսքը իսկ անասունների միաբերան մռնչոցից մեջով և անցնում։ Տեղ տեղ այնքան խիտ են, որ արևի լույսը գետին չի անցնում։ Այստեղ կան մեծ քանակությամբ վայրի պտղատու ծառեր՝ խնձորենի, տանձեր, ընկուզենի և այլն։ Կան նաև հաճարենի և հին կաղնի ծառեր, որոնցից խոշորները կարում են միայն ճանապարհի վրա գտնվածները, իսկ ուրիշները բնկնում են փայտից։

Իրման Բյոյից մինչև Քրիսգեուզերլեր (Krisgeuzerler) վեց ու կես ժամ է. ունի 60 տուն։ Ճորը ծածկված է վայրի պտղատու ծառերով և ձիերի լեռամակներով։ Երկիրը ալեսաղ է և ցորեն ու գարի։ Հանապ են կրկնում խոպերը, սակայն բնակիչները և տարեկանին են, որ չարունակ կրկնվում են։ 1807 հոկտեմբերի 12-ին մեկ փոթ ձյուն կար։

Քրիսգեուզերլերից մինչև Մելլեմ (Mellem) ութ ժամ. ունի 80 տուն. նկատելի չի բնակիչների առատաձեռնությունը, որոնք հանդուրժով մեզ հայիհոյում են մի բան կտրան և մի կենսամիջոցներ։

Մելլեմից Քուլլեյ հիսար (Kulley-hissar) տասը ժամ հանդուրժ պետք վրա մի կամուրջով. ունի 60 տուն։ Ամրոցը որը ձյան և անասունների մեջ ելինք։ Տարի վրա կա մի ամրոց, որ իշխում է պարտեզներով և այգիներով շրջապատված պլատների վրա. հայտնաբեկ չունի։ Բնակիչները գողի համբավ ունեն. հանդում ենք նրանց մատրոլորովին կրկնված, չորացնում ենք մեր հագուստները, սակայն այս խառնակ պրոցեսյան մեջ ոչ մի իր չի կորչում։

Քուլլեյ-հիսարից մինչև Ենդերես (Andéres) տասը ժամ. 140 տուն։ Ճանապարհը դժվարին է, անցնում է բարձր լեռներից, որոնց գագաթը միայն մագլցելով կարելի է բարձրանալ։ Արևի ճառագայթներ՝ ընկնելով տարերի մետաղային մասերի վրա, առաջացնում է գեղեցիկ մի տեսարան։ Կան

մեծ քանակությամբ կարավ, կաչաղակ, ճնճղուկ և խոշոր։ Ենդերեսում Իսուֆ փաշան (Issouf-pacha) մի գեղեցիկ պալատ ունի. ամեն ինչ ցույց է տալիս առատություն և բարեկեցություն։ Չրված պարտեզներ, մեծ քանակությամբ պտղատու ծառեր, մանավանդ ձիերի, վորի պատրաստ բացում են ձմեռը ուտելու համար, պարզապես լեփ-լեցուն են մեջ. բնակիչները խոշոր տուրք են վճարում։ Բ. Դռան կողմից մեզ ընկերացող սպան հաճախ գավազանի կամ մարակի օգնությամբ և պինում, ժողովուրդը հնազանդեցնելու համար։

Ենդերեսից Կարա-հիսար (Kara-hissar) (Մեկ ժայռ*) մեծ և կես ժամ. ունի 2200 տուն։ Այնտեղ հասնելու համար անցնում ենք Կելգի (Kalgui) [Գալգիա] գետի վրայի մի կամուրջից՝ հենված ժայռերի վրա, որոնց բարձր գագաթը ծածկ և, թե պետք բնակի կամուրջի վրա. այդ անցքը սարսափելի է։ Այդ սարերում մեծ քանակությամբ գտնվող պղպեղը արտահանվում է Կ. Պոլիս, Իզմիր և Չալիք, և կազմում է հանքի պլեսավոր ճյուղը։ Փաշան այդ արտահանությունից շահում է 100.000 դահեկան։ Տեղացիք պատրաստում են կտավեղեն, նույնպես պատվական քղքղրավեղենքներ։ Չգյուղում հասիկ չունեն, իսկ հագուստեղենը առնում են Իզմիրից։ Քաղաքը շրջված է մի սարի լանջին, որի գագաթին մի ամրոց կա, տուն են կառուցված 7—800 սարի առաջ. հավանական և չնայած կառուցած լինեն։ Դեռևս կրկնակի լիքը կավից է, իսկ վրևում կա լիքկլիանի մի աթոռ, նման ավաբելական կայսերական աթոռին։ Դեպի այդ ամրոցը տանող ճանապարհը բավական հարթ և սինչև մի աստիճանակի հարմարության համար հրեաների բարձրացնելու։

Տասնվեց հոգիների կարա-հիսարից մինչև Զիել (Ziel) [Զիլե] ութ ժամ. 30 հատ գեղանավոր տուն։ Ապրում են անասունների կոպին. շրջակայքի հողը փայլուն է. անցնում ենք մեծ պարտեզով լեռներից, որոնցից մեկը կոչվում է անհավատների լեռ, [Գյավուր դաղ ?]։

Զիլեից մինչև Սարակաիր (Sabactair) տասնչորս ժամ.

* Պետք է լինի Սև ամրոց։

ունի 20 տուն։ Ճանապարհը չի անցնում այլևս ասրերի միջից, այլ շոճիներով ծածկված բլուրներից։ Պատահում ենք Ուզան (Ouzan) և մի քանի այլ աննշան գյուղերի, որոնց տները ցրված և գետնափոր են։ Այդ մասի և ամառատեղի բնակարաններում, ուր ապրում են կովերի ու ձիերի հետ, գիշերները մառում են տեսակ պարսատկով փայտեր, այդ լույսի օգնությամբ և, որ պրում եմ որպիսու։

Սարականերից մինչև Քերքիճ Kerkič [Գալլիա] գնում ենք չոր ժամից. ունի 130 տուն։ Անցնում ենք խոպան դաշտերից այս գյուղաքաղաքը հասնելու համար. նրա շրջակայքը մշակված է։ Մենք տեսանք, թե ինչպես պարի հին ցանում, բնակիչները վճարում են հողի արտապրության մեկ հինգերորդը, նույնպես յուրաքանչյուր տուն տարեկան 300 դահեկան։

Տասնհինգ հոգեմարների. Քերքիճից մինչև Լոռի (Lori) տասնմեկ ժամ. ունի 100 տուն։ Լավ մշակված անծայր դաշտեր։ Սադդադ (Sachdac) [Սադադ] գետը անցնելուց հետո, բարձրանում և իջնում ենք ձյունապատ մի սարով՝ հասնելու համար այս գյուղաքաղաքը, որը Տրապիզոնից չորս օրվա կարավանի ճանապարհ է։ Հոգով դուրս ենք գալիս, կերը պարսից դեսպանը, որը հետ միասին ճանապարհորդում ենք, իր մարդկանց ուղարկում է մեր հետևից ոգնություն խնդրելու։ Վեճ և ծագում ձիերի շուրջ տեղացիների և իր ծառաների միջև, որոնցից կերևը վիրավորված էին։ Գինը բալը հրամայում է որ մեհմանդարը և մեկ ապա գնան գյուղը իսկ մյուս գինվորականները, առանց մտնելու, պատրաստ սպասեն։ Հրամանը լավ չի հասկացվում և բոլոր սպանները մտնում են գյուղը։ Նրանց ներկայությունը և խոհեմ վերաբերմունքը հանդարտեցնում է այս խռովությունը, և պարսկական դեսպանին բավարարելու համար Ագան խոստանում և ձերբակալել հանցավորներին և ուղարկել Երզրում։

Շարունակում ենք մեր ճանապարհը, և բարձունքների վրա նկատում ենք քուրդերի (Curdes) բազմաթիվ խմբեր, որոնք հետևում են՝ մեր կարավանը թալանելու։ Մեր կառավար ընթացքը նրանց յետ և կասեցնում. մի քանի որ առաջ նրանք ավելի բախտավոր էլին եղած։ Արհետով այս գողերը, Քուրդիստանի (Curdistan) բնիկները, թափառում են Թուրքիայի ամայի սարերի վրա։

Տրապիզոնից մի քանի մղոն հետու դեպի Լոռի կողմը, կա մի լիս Արծաթյա Տուն (Maison d'argent) կոչված, [Ինչու՞ միշ խանն]։ Ձիերը փոխվում և որ այստեղ արծաթի հանքեր կան, Գյուրիչ-խանա (Guiruch-ghana) անվամբ։

Լոռուց մինչև Տոլոս (Tolos) հինգ ժամ. այս գյուղակում կա 35 տուն։ Ունի ձիու առևտուր. մի ձին վաճառվում է մինչև 1500 դահեկան, որակով ապնվացիկ են։ Տեղացիք Խուզի-փաշային վճարում են տարեկան 100 դահեկան։ Պարսկական դեսպանը քարշ և տալիս իր յետևից յերկու կամ յերեք կնոջ, որոնց գնել և կ. Պոլսում և որոնք յոթ-ութ ժամ ձիով գնալուց հետո, ձաշ են պատրաստում։ Թուրքիայում ամենավատ սարկության գատապարտված և հարեմում փակված կանայք անձանոթ են քե ընկերության քաղցրության և քե ամուսին լինելու բախտավորության։ Ինչպիսի խորհրդածություններ առիթ և տալիս այդ դրությունը, յերը համեմատության ենք գնում մեր գամանների կնոջ հետ։

Տոլոսից մինչև Փեքերիկ (Pekériek) [Բագատիճ] վեց ժամ. 65 տուն։ Անցնում ենք Կարասուն (Karasou)։ Յերկիրը մերկ և, կատարյալ անապատ. ոչ մի ծառ։ Տեղացիք վառում են աթար, և հաճախ փաշայի կողմից կեղեքվում են։ Տների համար վրպես շինանյութ գործ են ածում porphyre։ Շրջակայքում ապահանքեր կան։ 12 մղոն դեպի հարավ գտնվում և Իքերեան (Ikerean) քաղաքը այնքան մեծ, որքան Երզրումը (Erzerum)։ Յերեք մղոն դեպի աջ, Մայրանի (Maïran) պղնձահանքերն են, ուր վեց հարյուր հոգի են աշխատում։ Այստեղ պատրաստում են կախա և ցածր սեղան՝ ճաշելու համար։

Փեքերիկից Աշկալա[2] (Ascala) տասնյերկու ժամ. ունի 100 տուն։ Ճանապարհի կեսին կտրում ենք Յեփրատի մի ճյուղը։ Ճանապարհը գնում և նրա ընթացքով։ Լեռների

վրա վոչ մի ֆուֆ, վոչ մի բուսականություն: Ապեսակ մարմարից ժայռերը ցույց են տալիս բնագրական հանգամանքներ:

Բանվորների հոգեհանգիստը: Ջուն և գալիս, խնամ ցուրտ քամու հետ: Աչկալոյից մինչև Իլիջա (Ilidzia) ութ ժամից ավել պետք է գնում, ուր 72 աստիճան ցուրտ է: Ճամփորդությամբ բնակավայր ենք գտնում: Տեղացիք փակում են իրենց դռները և հավաքվում անկի կաուրի վրա: Մեր պարկեշտ վերաբերմունքից հետո կարծես հաշտվում են, ու մեզ հյուրընկալում են իրենց գեղատիպ բնակարաններում: Իլիջա նշանակում է առողջություն [?]: Ամեն տարի ջերմաչափի 34 աստիճան տաք ջրի ակրյուներ ունի: Ջնայած չեղանակը խնամ ցուրտ էր, սակայն տեսանք մի թուրք, որ մինչև վիզը ջրի մեջ լողանում էր. պետք է չափազանց առողջ լինել, որպեսզի տաք ժամանակ կարելի լինի խնամ ցրտից այդքան ուժ տաքություն անցնել: Իլիջայի պաշտոնատունն էր, որ Պամպեցոր պատանդ Մերդարին և հոգին նրան:

Իլիջայից մինչև Երզրում [՝] յոթ ժամ է. ունի 130.000 բնակիչ. վարձից հինգ հարյուրը հայկահոլիկ են: Մեզ դիմավորում է 25 ձիավորներից բաղկացած մի խումբ, զինավորությամբ մի սպայի, որ Իսուֆ փաշայի կողմից ուղարկված է ֆրանսական և պարսկական դեսպաններին ժողովելու և մարզարտյա ասիղնագործ ծածկոցով մի ձի, բազաբ մուտք գործելու համար: Հակառակ հյուրասիրին ուժեղ քամու, պարսկական դեսպանն ուզում է, վարպես հարգանք, ճանապարհը գնալ ոտով: Երզրումը վատ է շինված, փողոցները խնամ կեղտոտ են. պարիսպների վրա կերևում է ավերակ մի ամուր, որը հաստատված է բուրանների համար: Այս բոպիկին ժամանակ կատարում է քաղաքը. որսկան քանից մինչև քսան հինգ հոգի մնում են: Իսուֆ-փաշան 65 տարեկանից անց է. կեղև է ձև վիզը, բանակի հրամանատար՝ պարտավոր կլինելի դեմ, մեքանը որ է միայն որ վերադարձել ռուսների դեմ վարած պատերազմից: Նա մեզ ձիեր ուղարկեց իր պալատը գնալու համար, որն ընդարձակ է, սակայն առանց մարմնի ճարտարապետական գեղարվեստների: Ծխամորճով, սուրճով, քաղցր բմպելիքով և քաղցրավենիներով մեզ հյուրասիրելուց հետո, նա մեզ պատմեց ռուսների դեմ վարած իր վերջին կռիվների մասին*: Մեծ հիացումով խոսում կայսեր [Նապոլեոնի] մասին, որին մանկանալուց և ուժի սիրու խոսքի փաշան միշտ էլ հարգված է եղել: Ինչ որ Թուրքիայում տեղավորություն կերևույթ է: Նրա մանկավիկներից մեկը, Ջիլիա** խաղալու ժամանակ, հանում է նրա մեկ աչքը. իշխանը նրան հեռացնում է, բայց բարիք և անում: Ճաշում ենք նրա մոտ. ուտելիքներով լիքը սափնները անվերջ հայտնվում են մեկը մյուսին: Ճաշից հետո անցնում ենք մեծ բակի վրա բացվող մի հարկաբաժին, ուր հեծելազորը փոքր պատերազմ է վարում: Թնդանոթը արձակվում է, հետո մեքանի ձիավորներ ցույց են տալիս իրենց ունեցած համարձակությունը ջերմ խաղի մեջ: Մեզ համար սա կռվի հանդեսի մի պատկեր է: Բազմաթիվ ժողովուրդ ջրջապատում է մրցապաշտը և մասնակցում առնակատարությանը: Ծրանական դեսպանը ընծայում է փաշային վիճակ, սալի սարճանակներ և Անգրիայի նկարած կայսեր [Նապոլեոնի] պատկերը: Փաշան իսկույն ևեթ հրամայում է պատրաստել վոկկա մի շրխա, իր հարկաբաժնում [այդ նկարը] կախ տալու համար: Իշխանը ցանկանում է իմանալ դեսպանության բոլոր անդամների անունները և յուրաքանչյուրին մեկ-մեկ ձի է նվիրում: Ինձ ձին փարթամորեն քամբեցված է: Հեռանալ որը ձի չենք հեծնում գնալու Իսուֆ փաշային հրաժեշտ առնելու. մեզ ընդունում է քաղաքից դուրս մի վրանում, որ շրեղորեն ասեղնագործված է: Փորգեր, վոսկի և արծաթ թելից ասեղնագործված բարձեր, և ամեն կողմը պիպականներ: Ձերեկվա բոլոր պինվորական մարզանքները կատարել և տալիս, սակայն ամենազվարճալին և մեզ

*) Նա պլեատել էր կարսի փաշային, վորովհետև բռնել են Թշնամուն տված նրա հետագրերը:

**) Սա մի գավազան է, վոր նետում են և կամ աշխատում են պաշտպանվել: Ասլըն մասնակցողները պինված են վահաններով, ձի հեծած և արշավում են. (Ծանոթ. Փարգանի):

համար անապատելին մեր վրա կատարված կեղծ հարձակումն եր։ Մինչև առաջները մերկացրած սրերով և սպառնալից հայացքով թաթար ձիավորներ քառասմբակ արշավում են վրանի վրա, իրենց հրացաններից կրակ են բաց անում. իսկ փաշայի պահակները իրի են ուզում պաշտպանվել։ Խուճ-փաշան հնծնում և իր ձին և մեզ ցույց է տալիս Չերքիզ խապում իր հմտությունը. հակառակ իր տարիքին, շատ լավ և գցում իր գավազանը և նրա հարվածը չի վրիպում։ Հրամայում և, վորպեսզի իրեն չենթակա ամբողջ չերկրում դեսպանության ծախքերը հոգացվին։

Բանլոթի հովանավորի։ Երզրումից մինչև Ալվար[4] (Alvar) հինգ ժամ և մեկ քառորդ ե. ունի 50 տուն։ Ճանապարհը մի հովի մեջ և, վորի մեկ մասը արոտպրում և ցրեն, իսկ մյուս մասը անմշակ և։ Տեղացիք հարուստ են անասուններով հոտերով։ Ալվարը Հասան-Կալեյի (Hassan-Kalé) մոտ և, վորի բերդը շինած են քրիստոնյաները։ Թուրքերը նրան համարում են անառիկ. ունի տասնչորկու թնդանոթ։

Ալվարից մինչև Հիահան[5] (Hiahan) յոթ ժամ. 60 տուն ունի։ Անցնում ենք Արաքսը։ Այս գետը, ինչպես և Յեփրատը իրենց ակունքը առնում են Հայաստանի Բինգեոլ (Beingeuel) լեռնից[6] և հոսում են՝ առաջինը դեպի արևելք, իսկ չերկրորդը դեպի հարավ, ինչպես Սևն Գոթարդից ըզխում են Հենոսը և Ռոնը, վորոնք հակառակ ընթացք են առնում։ Մեր ժամանումից չերկու ժամ անց, տեսնում ենք, վոր ժանտախտը այստեղ շրջակայքում սիրում և։ Գիշերվալը հրամայում և վրան կանգնեցնել քաղաքից դուրս, դաշտում. Թուրքերը մեր նախապատրաստության վրա սկսում են ծիծաղել և ծաղրել։ Գիշերն սկսելու ժամանակ խրտուչ ենք վառում վրանից դուրս մնացորդների համար։

Ֆրանսիացի սպան ամեն տեսակ պոռոտությունների և անձնվիրության ընդունակ և։ Այդ պարոններից մեկը ժանտախտից վախենում և, մանավանդ մի ուրիշին վարակելուց։ Հակառակ իր ընկերների և գիտերալի հրավերներին, գիշերն անցնում և բացօթյա, չենթարկվելով ուժեղ ցրտի, վո-

րի հետևանքով չերմ և առանում։ Նրա անունը տալը, գուցե վիրավորի նրա համեստությունը, բայց չեմ կարող թագցնել նրա անունը. դա Գ. Բերտուլն և (Reboul). հրետանու սեղեկալը։

Այս չերկրամասում սպիտակ մարմարի բազմաթիվ քարահանքեր կան։ Գյուղերից մեկնելու ժամանակ դուք պատահում եք բազմաթիվ մարդկանց, պատրաստ ձեզ ամեն տեսակ ծառայություն մատուցանելու։ Դրա համար նրանք պահանջում են բախշի (bachi) [բախշիշ]. այսինքն ընծա։ Յեթե տեսք թուրք սպաներ, վորոնք ընդունում են [բախշիշ]. դրա համար չպետք մեզադրել նրանց վատկանկատության. սովորությունը և բարքերը բացատրում են ամեն ինչ։

Հիահանից մինչև Դելիբաբա[7] (Delibaba) տասը ժամ. 120 տուն ունի։ Բրդերի պատճառով ասիպված ենք լինում մի որ ապասել։ Այս ավազակ ժողովուրդը ուզում և մեր կարավանը կողոպտել։ Ժանտախտի վախը մեր դրությունն ավելի ևս վատթարացնում և։ Դաշտերը մշակված են, սակայն չկա վոչ մեկ ծառ։ Ընդամենը տեսա չերեք հատ։ Ջուրն էլ հազվագյուտ ե. այն էլ կարելի չե Արաքսից չրանցքով բերել տալ։

Դելիբաբայից մինչև Թոփրակ-կալե[8] (Topra-calé) տասնվեց ժամ ե. ունի 500 տուն։ Հոպաշին մի գղյակ կա, վոր ծառայում և տեսակցելուն իրենց թանգարժեք իրերը թագցնելու, չերբ թուրքերի կողմից հարձակման են չենթարկվում և պաշտպանվում։ Այդ 16 ժամվա ճանապարհին, բնությունն ամենատխուր վայրում, մենք պատահեցինք միայն մի գյուղի և ժայռից բղխող մի վոխ աղբյուրի։

Թոփրակ-կալեյից մինչև Ենջալի[9] (Jungelli) ութ ժամ ե. ունի 120 տուն։ Այսորվանից չերկրի տեսարանը փոխվում ե. լեռները հետանում են և կորչում հորիզոնում։ Դեղեցիկ պաշտեր, վորոնց միջից բազմաթիվ գետակներ են անցնում և ծածկված են գյուղերով։ Դրանցից չերեքը կաթոլիկ են, վորոնց բնակչությունը չերջանիկ և թվում։ Յերեվում են մեծ քանակությամբ ադռնի, արտ, բաղ, կտավենկ, ճայ և գինի։

Նոնջալիից մինչև Դիադեմ (Diadem) [Դիադին] տասնչորս ժամ մեկ քառորդ է. ունի 600 տուն։ Ամբողջ մեջ ապրում է բերդ։ Ճանապարհի վրա, միմյանցից հեռու, լինում են փոքր քառակուսիներով պատեր։ Դրանք գյուղացիների համար առաջապահ պիրքեր են քրդերի դեմ, որոնք տարածվել են մասնած մոզջ լերկիրը։ Գյուղերը թալանում և ավերում են. բնակիչները, ապամարդիկ և կին, տեխված փախուստի են դիմել հանարյա մերկ։

Անցնում ենք հայկական վանքի մոտով, որ հարձակման և յենթարկված քրդերի կողմից։ Կրոնավորները պարիսպների բարձունքից պաշտպանվում էին։ Վանդի մեջ գտնվողներին ոդնութիւն հասցնելու առաջին դժվարությունքը մեզ մղում և դեպի այնտեղ։ Քառասմրակ գնում ենք դեպի վանքը։ Տարտված կրոնավորները մեզ ընդունում են որպես քրդերի ոդնական ուժ և մեզ վրա կրակում են. բարերախտաբար վոչ վոքի վնաս չի հասնում։ Մեր մոտենալովը, իսկական քրդերը ցրվում են։ Մեր մնեմանգարը, որը հայերեն խոսում է, հասկացնում է նրանց մեր ով լինելը. վանքի դռները բաց են անում մեր առաջ։ Առաջին բակում գտնում ենք մոտ հարյուր կրոնավորներ, պինված իրենց հրացաններով։ Այս տեսարանը մեզ համար բոլորովին նորություն եր։ Այդ վանքը կառուցված է վրաստանի Հերակլ իշխանի կողմից։ Ներկայումս գեղեցիկ ճարտարապետության է, բայց շքեղ և մեծ հարստություն[10].

Կանգնած ենք Արարատ սարի դեմը, ուր հանգչել է Նոյի տապանը. հավիտենական ձյունով ծածկված և գագաթը, ուր ամպերը իջնում են և որը, ըստ հին ավանդության, անմատչելի է։ Տուրնեֆոր վստահացնում է, թե վոչ մեկ ճանապարհորդ չի կարողացել բարձրանալ այնտեղ։ Թուրքերը և պարսիկները ավելի հեռու չեն գնում. ասում են թե միայն վորոշ բարձրության կարելի է հասնել և թե ճանապարհորդները լեռան յերեք քառորդ բարձրության վրա հասնելուց և քնելուց հետո, զարթնել են սարի ստորոտում։

Դեպտանը միտք է հղանում կայսեր մի հիշատակարան

կանգնեցնել։ Դեպի Պարսկաստանի կողմը, մի քարի վրա քանդակել է տալիս Նապոլեոնի անունը, և թողնում է նրա պատկերով վոսկի և արծաթ դրամներ։ Այս լեռան ստորոտումն է գտնվում Էջմիածնի վանքը (Etzmiatzin), Թուրքերն անվանում են Իչ-Քլիսա (Utch-Klissé)։ Ռուսները յերբ 1805-ին գրավեցին Էջմիածինը, թալանեցին յեկեղեցին, դանձարանը և մատենադարանը։ Ավելի ուշ յերբ պարսիկները վերագրավեցին, գրքերից փամփուշտներ պատրաստեցին և տպարանի տառերը հալեցնելով գնդակներ շինեցին[11*]։

Այս լուսնի հետ սկսվում է բամազանը։ Պարսկական դեսպանը հաճախ կանգնում է և բարձրաձայն աղոթում շուռ գալով դեպի Մեկկե։ Արևածագից մինչև մայրամուտ վոչինչ չի ուտում և նույնը պարտադրում է նաև իր մարդկանց։

Դիադինից մինչև Բայազիդ (Bagazied) տասնվեց ժամ է. 3000 տուն ունի։ Թուրքիայի սահմանային այս քաղաքը փայլուն բնակավայրն է։ Ունի կատվեղենի արտադրություն, կառուցված և բարձրավանդակի վրա. շրջակայքում կան մի քանի պարտեզներ, ինչ վոր հաճելի տեսարան է ներկայացնում, հիասն մզոն ամայի տարածություն անցնելուց հետո։ Ունի սալորի բազմաթիվ ծառեր։ Արտադրվում է ցորեն, գարի և կորեկ։ Փաշան ուղարկում է մի ձիավոր խումբ դեսպանին, վոր այցելում և նրան յերեկոյան ժամի 9-ին։ Դա ամենահարմար ժամանակն է, վորովհետև բամազանի ժամանակ, մայրամուտից հետո, մնծամնծները ծխում, սուրճ են խմում և ուտում։ Այդ զրկանքները չդգալու նպատակով, յերեկոները քնում են։ Այս քաղաքի ամրոցումն եր, վոր Մ. Ժուբերը (Joubert), վոր հայտնի է Պարսկաստան կատարած իր ճանապարհորդությամբ և արևելյան լեզուների իր ծանոթությամբ,—ուժը ամես բանտարկված եր[12]։

Արդի փաշան Մ. Ժուբերին բանտարկողի վորդին է։

---

* Բազմածք առաջին թարգման. Մ. Ժուանենկի նոթագրություններ. (Ծանոթ. Գարդանի)։

Նրա պալատը մի ամրոց և կառուցված ժայռի կատարին, որ իշխում է քաղաքի վրա։ Շատ պետք է բարձրանալ այնտեղ հասնելու համար։ Իրարանցը մեզ ընդունում է մի լիակազմ սրահում, ուր լիակու շարք պետերներ նյին կանգնած և որ վատ լուսավորված եր լիակը մեծ աշտանակներով։ Լուսինները, այդ ընդարձակ սրահի մռայլ լույսը, այդ պինված պետերները՝ մեզ զարմացնում էին։ Սովորական մեծ բանդիներից հետո, հյուրասիրում են բնակիչները, քաղցրավենիներով և սուրճով։ Հետաքրք մատուցանում և վարչին կոչում նկարը և Յենոյի հակառամարտի տեղիքը, Թրքերեն թարգմանությամբ։

ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անգորա կամ Ենկյուրի, պատմական Ancyra, այժմ Թրքական հանրապետության մայրաքաղաքը, գետնյան և պարիսպ բարձրացը մի բլուր վրա, որ գալյց 500 ոտք բարձր և և գանվում և Ենկյուրուսու գետակը ափին, որ մի ձյուղն և Սակարյա լեռը Բյուր կատարին գտնում են հին մրջնաբերդի ավերակները։ Շատերը յոլ չեն կառուցված, ուշ, Նեղ փողոցներ և տներդ շատերը ապուրծ են չրհեղձ, բայց կան հոյակապ, հռոմեական ու Հին Հարատարդ տեղյան մնացորդներ։ Մանդրներդ Ենկյուրին գրավեցին 1360 թ. Անգորա Հանդամարտում եր, որ 1402 թվին Տամերլան Բայազիդ պերճ թոռով Լենկիխանը, ձեռքը Այժմ կառուցվում են բազմաթիվ հասարակական ու մասնավոր շենքեր Բնակչության թիվը 107, 111 և, բան 1927 թվ մարդահամարյա Թուրքերը այժմ վերանվանել են այս քաղաքը Անգարա։

2. Աչիալա կամ Ադաչկալե գյուղ երգրուժը արևմտակողմը 8 ժամ հեռավորությամբ։ Կոչվում և նաև Աչգալար Ունի 500 բնակիչ, վորոնցից 200 հայ եյին 1914-ի իմպերիալիստական պատերազմից առաջ։ Մերձ բլրի վրա, անցյալում յեկել և մի ամրոց։ Կա նաև մի այլ Աչկալե կամ Աչգալե գյուղ Բազրևանդը Ադաչկալա գավառում։ Անցյալում 300 500 տուն հայ բնակիչ և ունեցել 1914-ի պատերազմից առաջ այնտեղ բնակում եյին 100 տուն քուրդ և 14 տուն հայ, սակայն ներկայումս հայ բնակչություն չունի։

3. Երգրուժ, Կարին կամ Քեղոսոպոլիս, տես «Ուղեգրություններ», Ա. հատ. եջ 50 ծանոթ. 2։

4. Ալվար հին գյուղ վերին Բասենը ահջ, հատան կալեյի հարավակողմը Ադիեքակաց անուն գաշտում վրան Մամիկոնյանին հետապնդող պարսից զորավար Մրնրան Շապուհ բանակել եր այս գյուղում։ Ամիպարից զորավար Մրնրան Շապուհ բանակել եր այս գյուղում։ Ամիրկացի յերկու միսիոներ հանապարհորդներ՝ Smith և Dwight 1830 թ. Տունախի 22-ին իջևանել եյին այս գյուղը, յերբ այս տեղի 16 տուն հայ բնակիչներդ պատրաստվում եյին գաղթել դեպի Ռուսահայաստան։

5. Հիասիսը հավանորեն ազատագրեցին և Յազան գյուղը, վոր համապատասխանում և Գարգանի գյուղ տված հետավորությանն Ալվարից, և մտա և Աբաթին, վորտեղից ֆրանսական պատվիրակությունը անցել մտա և Աբաթին, վորտեղից ֆրանսական պատվիրակությունը անցել և գետը, և գանվում և Ալվարի և Դելիբաբայի ճանապարհի վրա, ավելի մտա Ալվարին։

6. Բինգեալ, Սրմանց կամ Բյուրակնյան լեռներ, երգրուժի վիրահեռում, պատմական Հայաստանի Բարձր Հայոց և Տուրուբերան նահանգի միջև։ Այս լեռներից են սկիզբ առնում Յեփրատ ու Արաքս գետերը։

7. Դելիբաբա այցելած և նաև կլավինեն, վոր անվանում և Դելիբեքքինդ։ Տես, «Ուղեգրություններ», Ա. հատ. եջ 107։

8. Թափրակ-Կալեն Ակաչկերան և, մանրամասնությունների համար տես, «Ուղեգրություններ», Ա. հատ. եջ 145, ծանոթ. 3։

9. Եռնջալի մի փոքր գյուղ և Ակաչկերտից Դրագին տանող ճանապարհի վրա, Կաբաբլյան ավանի հարավ-արևելյան կողմը։

10. Գարգանի հիշատակած այս վանքը Բազմաբերդի Ս. Հովհաննեսի վանքն և, վոր Ժուրքերն անվանում են Իչ-Քելիսե։ Հիշատակվում և թե հնքնանոսական և թե քրիստոնեական շրջաններում։ գանվում և Բազբերդ պատմում, Յեփրատ գետը ձախ ափին։ Հայ պատմագրներդ անվանում են Պիցուան և Բազանց ատան։ կառուցված և եղած լեռան հյուսիսային սարոտի վրա։ Այնտեղ կատարվում եր նավատորը առնը։ Մերևանում և, թե Տերքանը շինել տված այս բազրնը և իջևանը, նայն ատում և, թե Տերքանը շինել տված այս բազրնը և իջևանը, նայն ատում և, թե Տերքանը շինել տված այս բազրնը և իջևանը, վորպեսզի ճանապարհորդները գիշերեն այնտեղ և ոգտվեն գոնից։ Դա հնքնանոսական շրջանում գլխավոր բազրնն եր վանատուր ատում։ Արտեր Սասունցիներ հրամայեց մշտապես պահել գիշերն Որմզդական որ և վերայ Բազրնին, որ և Բազատան։ (Մորենացի Բ. Հիշ.)։ Յոթերորդ զարում, 634 թվին հերակլ կայսրը պարսիկների դեմ արշաված ժամանակ նորոգել և վերաշինել և ավել այս վանքը, վոր արձանագրված և յեկեղեցու վորմերի վրա։ Շենքը սրբատաշ քարից և կառուցված, բնազրձակ և և հոյակապ ճարտարապետան և յեղել Իսրայել անուն մեկը։ 778 թ. Յեզիտ վոստիկան ճարտարապետան և յեղել Իսրայել անուն մեկը։ 778 թ. Յեզիտ վոստիկան

տիկանի Սիմի դրծակայր կոտորել և վանքի միաբաններին, որոնց թիվը քառասունից ավելի չեր։ Բազմաթիվ ունի հասա պարիսպներ, մեծ ու չեքկաթապատ դռներով և մարակոցաձև բուրդերով։ Վանքը չարունակ քրիստոնյան հարձակումների չենթակա չի չեղել, մանավանդ ԺԲ. դարու առաջին քառորդում, ինչպես ականատես են չեղել Տարոնն ու իր բնակիչները։ 1877 թ. պատերազմի ժամանակ կրուստի մատնված են վանքի բանդարժեք ձեռագրերը։ Վանքի պարսպի արևմտյան կողմը դանվում է Վանի գյուղը, իսկ դրսից մի մզոն հեռու դեպի վրա կա քարաչեն մի կամուրջ, որ կառուցված է Ժէ. դարու առաջին կեսին։ Կարծում են թե հին Բագավանի տեղը դանվում է այժմյան վանքի դիմաց, կարավանի ճանապարհի վրա, Ձիփրատի աջ կողմը, ուր տեսնվում են բազմաթիվ ավերակներ, ինչպես նաև մի մեծ չհկեղեցու հիմքերը (Ալիշան, «Այրարատ» 527—533. «Ստորագրություն Հին Հայաստանի» 406—410. «Տեղագրություն Հայաստանի», 221—222. Բագրեվանդ», 272—283)։

11. Այդ թվականին գնեցրալ Ձիցիանովը, չերը նահանջում եր, իր հետ եր տանում եջմիածնի հարստութիւնը բազմաթիվ հակերով, առաջկերով թե չիմն, ինչը չտաներ պարտիկները պիտի գրավիչին եջմիածնի պետարխիում բավական հարուստ նյութեր կան 1804 թվի և հետագայում ռուսների կատարած գրավումների մասին։ Իմ նախկին ուսանողներից Կ. Ղափատարյան ինձ հայթայթել և մի քանի կարևոր վավերաթղթերի պատճենները, որոնցից մի քանիսը տալիս եմ այստեղ։

(Եջմիածնի Պետ. արխիվ, վավերագիր № 1144, 1804 թ. հայերեն լեզվով.—

Եջմիածնի միաբան Բարսեղ չեպ. գրում է Թիֆլիսի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին. «Վասն հացի զոր առեալ են ռուսաց առ Ձիցիանովից».

...«Այսօր Աչաառաբի օտայի չեամի ամբարն իսպառ առել ածեալ սրբեցին [ռուս զինվորները] եւ առ ի լցուցանել զպակասն Ձիացեալն բանից, գՎարդան վարդապետի օտայի չեամի ամբարն ևս բացեալ հանին անտի քանի մի սօմար, և գարձեալ կնքեցին, որոնց զումարն եղև 396 սօմար ցորեան, զոր առեալ անա բերին, և Ձիաց վասն մեր ուտելիք արտաքոյ մօտի 3 կամ 4 աւուր հայցե...

Նույն վավերագրի (№ 1144) մեջ ցույց և տրված 1804 թվի ընթացքում ռուսաց տրված հացամթերքի չափը.

«... 4330 կօտ ցորենայ դումարն
1624 կօտ ալիւրի դումարն
600 կօտ չալթուկի դումարն

6554 կօտ երից դումարն
130 կօտ ևս Գայանեայէն է առեալ»

Մի այլ վաստաթուղթ.

№ 1144 վավերագրի տվյալները հաստատվում են Թիֆլիսի առաջնորդ Հովհ. արքեպ. ի դրաֆ Ձիցիանովին ուսերեն լեզվով գրած գրությամբ. (Եջմ. պետ. արխիվ № 1153. 1804 թ.), բայց այս վավերագրի մեջ ալյուրի չափն ավելի չե գրած, փոխանակ 1624-ի գրված է 2000 կօտ, ցոր անում է 1000 չերեվանյան սմար (Չերեվանյան մեկ սմարը հավասար է 2 կոտի)։

«տրուած է...
2175 սմար կորեկ
1000 սմար ալիւր
300 սմար գրուպա

Բացի սրանից նույնպես տրուած է կորեկ 65 սմար ս. Գայանեի վանքից»...,

Նմանապես ռուսների եջմիածնից խլած հացամթերքին և վերաբերվում եջմիածնի Պետ. արխիվ № 1151 վավերագիրը 1804 թ. ցորը Դուբնովը գրում է Հովհաննես արքեպիսկոպոսին Ստորև բերում ենք ամբողջությամբ, թարգմանելով ռուսերենից.

Վ կ ա յ ա կ ա ն

«Սույնը արժում է նորին սրբազնության հայոց արքեպիսկոպոս տեր Հովհաննեսեին առ այն, զոր նորին պայծառափայլության, հետևակի գեներալ, Վրաստանի գլխավոր կառավարիչ և զինագան չքանչանների ասպետ պարոն իշխան Գավել Դմիտրիևիչ Ձիցիանովի ռուսական զորքերի հետ Ցարևանի պարսկական բերդի պաշարման ժամանակ, կենսամթերքի սակավության պատճառով, նորին պայծառափայլության հրամանով, նորին սրբազնությունից գանագան ժամանակներում ստացված եջմիածնի վանքից բերված կենսամթերքները.—

1804 հուլիսի 29-ին.

Ալյուր 150 չեամվերտ 7 չեամվերտից. չեամվերտը 7 փութ 10 ֆունտ, ուրեմն 1130 փութ 3 3|4 ֆունտ։

Ցորեն 5548 փութ 11 1|2 ֆունտ.

Պաքսիմատ (սուխարի) 169 փութ.

Սույն քանակությունը մուրք և արված ժապավինյալ մատյանում, Սևվաստոպոլի հրացանակիրների գնդի մատակարարման բաժնի պետ, կենթասպա պարոն Պանտիլեյեոմովի կողմից, որ հաստատում եմ 14 հոկտ. 1804-ին։

Մատակարարման չտաբի 1-ին կարգի հանձնակատար՝
ԴՈՒԲՆՈՎ.»

12. Ժուբերը մանրամասնաբար նկարագրում է իր բանտարկության, տես նրա ուղեկրության, որ զետեղված է այս հատորում Գնեցրալ Գարդանի ուղեկրությունից անմիջապես հետո։

Բ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Բայազիդից մինչև Արաբ-Դալեսի (Arabe Dalesi) ութ ժամից ենք անցնում. ունի 50 տուն։ Այստեղ դեռ չհասած [ճանապարհին] գտնվում է Քլիսան (Clissa), որի անունը հավանորեն ծագում է առել հունական եկեղեցու ավերակներից։ Սա առաջին պարսկական գյուղն է։ Պարսիկ մի պահակախումբ ընդառաջ է գալիս։ Ահա մենք գտնվում ենք հին պարթևների հայրենիքում...

Յերբ Հոմը իշխում էր աշխարհին, նրա հյուպատոս կրասոսը հափշտակիչ պարսիկներից։ Սարարոնը, Պլուտարքոսը, Հերոդոտոսը, մանավանդ Արրիանը, Քսենեփոնը, Հիպոկրատը գրում են այս երկրի մասին։ Ժէ. դարում, կարծեմ 1611-ին, հայր Պասիֆիկը, Կապուչին և միսիոնար, գալիս է Սպահան։ Թագավորը նրան շատ լավ է ընդունում և առնում է նրան մի բարեկամական նամակ ուղղված Լուդովիկոս ԺԴ-ին։ Այս կրոնավորը քառասուն որմա ընթացքում Սպահանից Հալեպ է գնում մի հզոր, որ թագավորը ուղարկել էր նրան. նա նավ է նստում Ալեքսանդրիայում, իջնում է Մարսելլ և գնում է Լուդովիկոս ԺԴ-ին։ Այս միսիոնարն էր, որ պարսկաստանի հետ մեր առաջին քաղաքական հարաբերությունների հիմքը դրեց։ Ով ուզում է ծանոթանալ այս կայսրության հետ, կարող է կարդալ Ոլեարիուս, Տավերնիե, Շարդեն, Ֆորտեսք, Ջոնս, որ գրել է պարսկերենից թարգմանված Թահմազ Ղուլի խանի պատմությունը, գնդապետ Ռեննել, Ոքսֆորդ, Ֆիզերուա, Ժան Դիվայե, Լա Մամժի-Կլարակ, և Գարդանը, Բրուերի և Ոլիվիեի հուշերի վրա 1703-ին կազմված պատմությունը։ Հատարակությունը անհամբերու-

թյամբ սպասում է Մ. դը Սաի պարսկերենից թարգմանված աշխատասիրությանն։

Շարունակենք մեր որագիրը։

Արաբ-Դալեսի հասնելով մեզ շատ բախտավոր ենք զգում։ Գնդապետին բերում են մեծ քանակությամբ միրգ և Շիրազի գինով լի տիկեր։ Դա արգյունքն է Արբաս Միրզա իշխանի ուշադրության, որ տեղեկանալով մեր գնդապետը միրգ և սիրում, հրամայել էր մոտակա խանին ուղարկել մեզ համար։

Արաբ-Դալեսից մինչև Կարա-ինե (Kara-iné) ենք ժամ. ունի 60 տուն։ Ամրացված և տեղական պարզ ձևով։ Դա մի վայր է շրջապատված պարիսպով, աշտարակներով և մի մեծ խրամով, ուր կարող են տեղավորվել բնակիչները իրենց հանդարժեք իրերով։ Յերկու որից ի վեր քուրդերը մեզ վախ չեն ազդում, իսկ այստեղ նրանք մեր առաջնորդներն են։ Թուրքիայում նրանք ավազակներ են, իսկ յերբ անցնում են սահմանից, փոխում են իրենց պրոֆեսիոնը և դառնում հյուր հպատակ։

Վեց նահիմբերի։ Կարա-ինեյից մինչև Զորավա (Zorava) [Զօրավանք?] յոթ ժամ. ունի 15 տուն։ Ունի մուշկ մշակություն։ Նկատվում է, թե տեղացիք ինչպիսի հմտությամբ ջուր են բաժանում պարտիզներում։ Անցնում ենք Ալի-քիոյ (Ali-khi) կոչված գյուղակի մոտից։ Այդտեղի ձիերի ցեղը համբավավոր է։ Պարսիկները հիանալի ձիավորներ են։ Այս յերկրում է, որ առաջին անգամ սուրհանդակներ ունեցան։ Դա սկսում է Կյուրոսի ներքաշությունից։ Հավատացնում են թե նրանցից լավագույն սուրհանդակներ չկան։ Թեհրանում Ամատերլեյի հաղթանակի լուրը առաջվել էր քառասունհինգերորդ որը։ Ժողովուրդը հյուր չի և վախենում է իշխանությունից։ Գյուղերի տարեցները մեկ մղոն ընդառաջ են գալիս յերկու գնդապետներին՝ հարգանքներ մատուցանելու։ Ջևրքը մոտենում էն ճակատին և գլուխ են տալիս խոնարհաբար։ Ժողովուրդը նվեր չի խնդրում, նույնիսկ մերժում է վերցնել։ Հավիվ ժամանած, պարսկական գնդապետը խիստ փափկանկատությամբ մեզ նկատել և տալիս

այդ տարբերությունը ասելով. «այստեղ կգանեք միայն ծառաններ և մի ժողովուրդ, որը լայնորեն անձնվիր է»:

Թուրքիայում և Պարսկաստանում հնարավոր չի ցանկացած տարածությամբ ճանապարհ կտրել: Անհրաժեշտ է կանոն առնել [նախօրոք] նշանակված պյուտերում:

Զորավարից մինչև Մուշ[1] (Qu-oyc) գնում ենք ինչ և կես ժամից. ունի 5000 շունչ: Ճանապարհը մարմարե և պորփյուրե լեռների միջից և [անցնում]: Ճանապարհին մեզ տալիս են նախաճաշ: Փռված են գորգեր, մատղ ու բրինձով լի աման-ներ և մեծ քանակությամբ պտուղ: Մեր շրջիկ ընդունելությունն ընդհատվում է Մ. Բերնարի մասով, ճարտարապետ-աշխարհագրագետ տեղակալ: Նա իր դիերին համապատասխան ճաշակ և տպավորություն ուներ: Յերեսունչերկու տարեկան հասակում ժանտախտը վերջ դրեց նրա կյանքին: Նրան հոգին հանձնեցինք Մուշի հայկական գերեզմանատանը, պինվորական պատիվներ տալով: Նրա հիշատակը պիտի միշտ մնա մեր հիշողության մեջ: Դիմերալը հրամայել և այրել նրա հագուստեղենը: Այստեղ պատահում ենք Մ. Բոնտեմո Լեֆորին (Bontemo Lefort) և Մ. Ոգյուստ դը Ներսիալին (Auguste de Nerciat), որոնք Աբրաս Միրզայի հովանավորության ներքո կին և նրան ոտաակար ծառայություններ են մատուցել Ռուսաստանի դեմ վարած պատերազմում:

Ճաշում ենք խանի մոտ մի զարդարված դահլիճում, որի պատուհանները գույնզգույն են: Սեղանները ծածկված են գեղեցիկ պարսկական գործվածքներով: Ճաշի ժամանակ ակնատես ենք լինում պարի մի տեսարանի, որ կատարում են յերիտասարդ տղաներ՝ կանացի զգեստներ հագած: Այստեղ պատահում ենք Հաստիր-խանին (Hastire-khan), պարսկական նոր դեսպանին, որ գնալու կ Փարիզ, [տանելով] փարթամ ընծաներ: Յեվրոպացի հպատակին [Նապոլեոնին] ուղարկում են Ասիայի աշխարհակալների՝ Լենկթիմուրի և Թահմազ Դուլի խանի թուրերը:

Մուշը շրջապատված է պարիսպներով և աշտարակներով, բոլորովին նման են Յերիքովի պատկերներին, որոնց պատ-

ահում ենք ատոմածաշնչի մեջ: Այս քաղաքը չինթիակա չե յերկրաշարժներից: Տների մեծամասնությունը ճեղքվածքներ ունի: Պատրաստում են թուր, բրգե կաթսաներ և կոավիղներ: Այստեղ դռները փակում են փոչ թե փականքներով, այլ կողպեքներով: Յեթե սեղանի կամ նստարանի պետք ունիք, առաջադրվեք բերում և ձեզ մոտ իր գործիքները և փայտի կոճղը և աշխատում ձեր աչքերի առաջ:

Մուշից մինչև Թերսուչ (Tersouch) տասներկու ժամ է: Այս քաղաքը տակավին յերկու ամիս առաջ ուներ յերկու հազար տուն, սակայն այժմ յերկրաշարժից միայն հարյուր տուն է մնացել: Դաշտերը ժշակված են: Այստեղ մշակում են բամբակ, որը զարկ է տալիս առևտրին և արդյունաբերությանը: Հողը ամեն տեղ պատած է ադով և այնքան մեծ քանակությամբ, որ առավոտները յերևում են ձյան շերտ նման: Գետինը արձագանք է տալիս ձիերի վոտքերից: Ամեն տեղ մեզ մեծ պատիվներով են ընդունում և վարվում են մեծաշուք կերպով: Այսօր վայելում ենք վանա լճի տեսարանը*, որ ընկնում է հորիզոնի աջ կողմը: Ասում են, թե շրջապատը հարյուր հնուն մղոն է: Ջուրը այնքան ապի չե, որ յերբ փորձել են ձկներ պահել, բոլորը վոչնչացել են: Այդ լճի վրա կան բազմաթիվ կղզիներ, որոնցից մեկը բնակելի չե: Մեկ ուրիշի մեջ էլ ապրում են վայրի վոչխարներ:

Տասը նոյեմբերի: Թերսուչից մինչև Շերիստեր (Chébister) անցնում ենք տասը ժամից. 100 տուն: Ունի բամբակի և խաղողի մշակություն: Յերևում են նշենիների պարտեզներ: Այս ծառը այստեղ շատ տարածված է: Պարսիկների մոտ, զույգ պտուղով նուշը, յերկու բարեկամների միության նշանն է:

Շերիստերից մինչև Թավրիզ[2] (Terbis) գնում ենք տասնմեկ ժամից. ճանապարհը ճանճային հարթավայրի մեջ

* Պարզանի տեսած լիճը Ուրմիայի լիճն է և վոչ թե Վանա, որը բավական հեռու չի գտնվում և անկարելի չե տեսնել այդքան հեռավորությունից:

և Անցնում ենք Ադիսոն (Adjison) գետի վրա լավ կառուցված մի կամրջից։ Գահավառանդ, բազավորի կերրորդ որդին, Աբրաս Մերզան մեզ պիտավորելու համար ուղարկում է հինձևպարի տասը մի խումբ և նվիրում է Գենեռալին վառվռան տանձով մի նռ.... Պարսկական ձիերը ուժեղ են, սակայն բնդհանրապես ապիկարում են, վատվհան չեն նայում ոտ են գնում ճամբերը։ Մեզ ասացին, թե այստեղ կան մի քանի խանդարժեք հնապիրներ, անկր Ալեքսանդրի պատմությունն և և մյուսը՝ աշխարհի պատմությունը։

Այստեղ Աբրաս Մերզան և իջնում։ Տասարակական հրամաններով կատարվում են նրա անուններ։ Նա ձգտում է բարձրացնել իր ազգը և ունի գիտնական վատասիրություն։ Ձիին մի զորավար կամ ազգիկ և կոչնում նա, պատասխում է իր հարցասանները և ամենայնը վշտ նշաններ և արտահայտում։ Վերջերս կորցրել է իր մի քանի զավակներին, սակայն վշ մի վիշտ չի արտահայտել։ Այս անտարբերությունն բերնելու համար, պիտի ծանրի լինել բարքերին։ Հարցնում ենք մի մեծ ախոհականից իր զավակների թվից. ամենայն մխամսությամբ պատասխանում է, թե չգիտեն, և գոռնալով գնալ իր քարտուղարը, նրան և հարցնում. իսկ նա պատասխանում է տեսնելով։

Մի մզկիթի ավերակներ։ Տեղացիք ասում են թե հարյար տարիա հնություն և։ Մոզայների գեղեցիկ հատիկներ տեսնում։ Ընթրում ենք վեզիրի մոտ, որը սիրալիր և Գեներալը հայտնում է, թե Աբրաս Մերզային պրավոր հանձնարարություններ չի բերած, այլ բանավոր։ Վեզիրը պատասխանում է, համակները մեզին թղթեր են, իսկ գեներալի խոսքերը՝ խանդարժեք քարեր։

Ընթրիքից հետո, կատարվում են պարեր։ Վեզիրը մեզ ասում է. «իմ աներ պարոններին չի սիրում, բոլորին արտաքսել է Թավրիզից։ Սրանց չես բերել համ ավել մոտակ գյուղերից, պարսկական գեներալից տեղեկանալով. որ այս ժամանակը հաճելի չի ձեզ. վեզիրն ունի մի որդի, Մերզա Հասան անունով, քսան տարեկան մի չերեսասարդ։ Իր հոր

ներս մտնելու ժամանակ, նա սենյակի խորքում նստած եր։ Հասանը վեր կացավ, խոնարհվեց և կանգնեց դռան մոտ։ Վորդիները ամենախոր հարգանք ունին իրենց հոր հանդեպ։ Ձերը մեկը տալիս և նրանց անունը, իսկույն վտարի լին կանգնում։

Տասնչերեք նոյեմբերին։ Աբրաս Մերզան ունկնդրություն և տալիս մեզ, նրա պալատը գտնվում և մի մեծ քառակուսի բակի խորքում, որի չորս կողմը շարված են իր զորքերը։ Այստեղ ձիերից իջնում ենք։ Վոտքով անցնում ենք ավելի վորը մի բակի միջից, հասնելու համար այն դահլիճը ուր Թավրիզի ձերբանի նահանգապետը մեզ հրավիրում և հանդիսավոր։ Նա հարցնում և մեր անունը։ Սուրճից և քաղցրավենիներից հետո մեզ առաջնորդում են կանոնավոր մի բակի մեջ, շրջապատված պինվորներով. որի միջտեղում կա մի պեղեցիկ ավազան և խորքում մի տաղավար, որի առաջ գտնվում և ճոխորեն ասեղնագործված մի վրան։ Աբրաս Մերզան վրանի խորքում նստած և մենակ։ Մեծամեծները կանգնում են և շատ հեռու։ Դեսպաններին առաջնորդողը մեզ ընկերակցում և. բակի մուտքից մինչև վրանը խոնարհ վոտքերով ենք տալիս։ Իշխանը մոտ քսան տարեկան և. դուրսից նրա դեմքով, կայտառ աչքերով և շնորհալի հայացքով։ Դեսպանությունն իր ունեցած ճաշակն արտահայտող փայլուն խոսքերից հետո, հրաժեշտ ենք առնում և նույն ծիսակատարությամբ վերադառնում։ Մայրամուտին նույն վրանն ենք գնում ընթրելու։ Մեզ պատվում են կայսերական առանձ իրենց պինվորական քաչությունները հայտնի վեց հոգի։ Ճաշի ժամանակ Աբրաս-Մերզան մարդ և ուղարկում հարցնելու գեներալին, թե ինչպես և պղում իր արքունիքում։ Բոլոր մեծամեծները շարքով կանգնած են ըստ իրենց տարիքի։ Ձեվրապատում առնակատարությունների ժամանակ տարիքների մեջ խտրություն չի դրվում, Ընթրիքից հետո գեներալը առանում և մի պեղեցիկ թուր, իսկ մեզանից յուրաքանչյուրը, (քսան չերկու հոգի ենք), մի շալ և մի վոսկյա պիպակ։

Տաճկաստան նոյեմբերի իշխանը կանչել և տալիս մի քանի ֆրանսացի սպաների, տեսնելու, թե իր զինվորներին ինչպես են մարզանքի հրամաններ տալիս։ Մեզ ուղարկում են՝ փախաններ, կաքավներ, պատուղ և քաղցրավենիք։ Հաժարում է ընդունել մի զույգ ատրճանակ և կայսեր ու կայսրուհու շքագրաւիները։ Մեզ հրաժեշտի ունկնդրութիւն է տալիս մի տապավարում, ուր միայն ութ հոգի ելինք. հրաժեշտից առաջ գինեթալին խնդրում է զինավարժութեան հրամաններ տալ։ Նա հրացանը դնում է ուսին և մեզ զարմացնում է զենք գործածելու իր համաութեամբ։ Իր հերթին նա ուզում է գինեթալին զինավարժութեան հրամաններ տալ, և դա կատարվում է շատ հաջող կերպով։

Այցելում ենք Թավրիզի Բեկլերբեյ Ամմեզ խանին, որ նայելով գինեթալին, ասում է. «Իմ տեղը այստեղ կլիներ առաջինը, սակայն ես նախընտրում եմ այս տեղը, ուր ձերը վանմութեան կարող եմ տեսնել գեմ առ գեմ»... Մեծամեծները սրամիտ և սիրալիր են։ Նրանց չափազանցրած խոնարհութիւնը սկզբում հաճո չէ թվում և զարմացնում, սակայն երբ տեսնում եմ, որ դա հասարակ և սովորական զարմանք է, այլևս զրանք համարում եմ սոսկ ամենապարզ արտահայտութիւններ։

Թավրիզում կա թնդանոթի մի ձուլարան։ Այնտեղ նուռի և վշտաի ծառեր շատ կան։

Թավրիզից մինչև Սեյիդապատ (Said-abad) վեց ժամ է երեք քառորդից ենք գնում. ունի 45 տուն։ Արտադրում է ցորեն, գարի, իսկ ձիեր բոլորովին չկան, որովհետև արոտավայր չունի։ Մի մղոնի վրա գտնվում է մի տաճարի ավերակներ. տակավին մնում են այուների բնակորնները և ալաբաստյա սեղաններ։ Մոտը կա մի քարվանսարա։ Ամայի ճանապարհի վրա կարող եք պատահել միաժամանակ թե՛ ադրբեջանցիի և թե սիևանի։ Յերկու ժամ առաջ գնալուց հետո, պատահում ենք սալահատակված ուղղաձիգ փողոցներով մի հսկայական քաղաքի, որի անունն անհայտ է։ Պարսիկները չեն թարգմանում որ դա Դարեհապոլիսն է (Dario-

polis), ուրիշներ Հուգանը (Hougan)։ Դա յերկրի անունն է։ Գիտնականները թող վորոշեն։

Սեյիդապատից մինչև Թիքմի-թաշ (Tikmi-tach) ինը ժամ և մեկ քառորդ. ունի 30 տուն։ Այստեղի ջուրը պարզ է և առողջ, մի բան վոր Պարսկաստանում հազվագյուտ է։ Կան շատ պտղատու ծառեր, մանավանդ նռենիներ, վորոնց պտուղը հիանալի է։ Մեկ մղոնի վրա գտնվում են մի քարվանսարայի ավերակները, իսկ վերևի կողմը, գեպի ձախ՝ մի ամբողջ ավերակներ, վորի մնացորդները պատկառելիորեն Թուրքիայում մեր անցքը հաճախ կանանց հետաքրքրութիւնն էր շարժում, մինչդեռ այստեղ՝ հավատարիմ իրենց յերկրի հին բարքերին, Պարսից դուստրերի նման, կանայք վախենում են մեր հայացքից։

Թիքմիթաշից մինչև Թուրքմեն (Turkmaun) տասը ժամ. ունի 40 տուն։ Արտադրում է առատորեն բրինձ, բամբակ և վուշ, վորից ձեթ են պատրաստում։

Թուրքմենից մինչև Մոյնա (Moina) [Մեյանե] ինը և կես ժամ. 400 տուն։ Ունի ագնվացեղ ձիեր։ Յերկիրը տարածվում է մինչև Լեոպարդ (Leopard) լեռը։ Գյուղացիները շատունակ դիմավորում են մեզ յերաժշտութեամբ։ Կենդանական կյանքի համար սակավ աղբյուրներ կան։ Անվում ենք յեղջերուի մսով, վոր համեղ է։ Վերջապես մտնում ենք մեր ճանապարհորդութեան վախճանին, վոր հոգնեցնում և նույն իսկ ամենաուժեղ մարդկանց, հակառակ լավ աննդի և նախապատրաստութեան վախճանին։ Սակայն, նրանց պատճառով կանգ չենք առնում։ Գեսպանը յերբեմն ինքն էլ ճանապարհ և ընկնում ջերմով։ Շատ յեղանակի չենք պատահում, սակայն բնակարանները վատառողջ են և անմաքուր։ Այս յերկրում մեզ սպասում են զորշագույն կարիճները, որոնց խայթվածքը մահացու է[3]։ Տեղացիք ասում են, վոր նրանք հարձակվում են միայն ոտաբոբիկացիների վրա։ Բժիշկ Սալվատորին (Salvatori) մեզ վստահացնում է, վոր քիրիաֆի [գեղձաթ] և աղջրային թթվատի (acide muriatique) բավական պաշար ունի։ Այստեղ և վախճանվել ճանապար-

հորդ Թևենոն (Thevenot)։ Ասում են, նրա թղթերը և գրքերը պահին վերցրել ու պահել են։

Մեյանեից մինչև Ար-քեուի (Ar-keui) գնում ենք տասը ժամից. 30 տուն ունի։ Այստեղ են ամրացել վերջին հեղափոխությունների ժամանակ։ Ունի բրինձի մշակություն։ Ճանապարհին պատահում ենք հին և գեղեցիկ ճարտարապետությամբ շինված մի կամուրջի։ Դա համարվում է գմայլելի մի գործ. բարերախտաբար ժամանակին ընդդիմացել են, որովհետև Պարսկաստանում յերկար ժամանակից ի վեր վոչ մի նորոգություն չի կատարված։

Բամադանից սկսած՝ մեր ճանապարհը ավելի արագ է ընթանում։ Վորովհետև մեր պարսիկները արևածագին և մայրամուտին են միայն ուտում։ Աշխատում են մայրամուտին շտապ տեղ հասնել։

Արքեուից մինչև Հերմանղհանե (Hermanghané) ինը և կես ժամ, Կարա-շալ (Cara-schal) գետի վրա։ Այս 40 անից բաղկացած գյուղը կառավարում է մի վեզիր։ Ճանապարհը անցնում է ժայռերի միջից, իսկ յերկրի տեսքը ախուր է և ձիերընակ։

Հերմանղհանեից մինչև Զինջան (Zinghian) ութ և կես ժամ և. 15.000 բնակիչ ունի։ Այս քաղաքը կործանվել է հեղափոխությունների ընթացքում, բայց նորակազմա վերաշինվում է։ Իշխանում ենք խանի ընդարձակ պալատում։ Խանը դիմավորում է դեսպանին։ Այնտեղ դիպակեղենի գործարաններ կան։ Կտորեղենը բերում են Երզրումից և Ասորխանից։ Յերկիրը արտադրում է խաղող և նուշ, սակայն գինի բոլորովին չեն արտադրում։ Մեր ճանապարհորդության ընթացքում մենք չպատահեցինք վոգևից ըմպելի գործածողների և վոչ էլ բամպան զանցառնողների։...

Զինջանից մինչև Սուլթանիե[4] (Sultanié) ճանապարհը ինը ժամ և յերեք քառորդ է։ 80 տուն բնակիչ ունի։ Փչում է և ցուրտ քամի։ Մի պարսիկ գալիս և նորոգություն խնդրում դեսպանից՝ յեղանակի վատության համար։ Այս քաղաքը հին պատմության մեջ հայտնի է Քսենեփոնի նահանջով։

Ասում են թե տասնյակ մղոններ շրջապատ է ունեցել։ Այս քաղաքն անցյալում քրիստոնյա բնակչություն է ունեցել և բարգավաճ վիճակ։ Նրա յեկեղեցիները վերածվել են մզկիթների։ Ախալցում Մուհամմեդի համար կառուցված ամենաշքեղ մզկիթը Սուլթանիեյումն է։ Ավերակների մեջ սքանչացումով տեսանք ալաբաստրից սյուներ և շքեղ մոզայիքներ։ Հողի վորակը լավ է և վոռոգվում է բազմաթիվ վտակներով։ Թագավորը և իր արքունիքն ամառը այնտեղ վրաններին տակ են անցկացնում։

Սուլթանիեյից մինչև Երհեր (Erher) տասնյերկու ժամ և մեկ քառորդ. 1000 տուն ունի։ Յեղանակը ցուրտ է։ Մի խեղճ գյուղում, ուր կանգ եյինք առել նախաճաշելու համար, մի քանի բեռնակիր ձիեր հոգնածությունից այլևս չեն կարողանում առաջ գնալ։ Խանը սպառնում է այրել տալ ամբողջ գյուղը, յեթե ամենափոքր մի իր իսկ կորչի։ Շատ ուշ ենք հասնում։ Չաճախ նկատել եմ, վոր ճանապարհորդին հաճույք պատճառելու համար, յերբ վերջինս հարցնում է մի վայրից մյուսը հեռավորության մասին, պակաս են ցույց տալիս, առանց անդրադառնալու թե ճանապարհորդին կարող են յենթարկել անախորժության և վտանգների։

Երհերից մինչև Ղազվին[5] (Caswin, Casbin), հին Արսասյա (Arsacia), յոթը ժամվա ճանապարհ է. ունի 60.000 բնակիչ։ Յերկիրը տափարակ է և բարերեր։ Իշխանում ենք խանի մոտ։ Նրա պալատը ընդարձակ է, բնդհանրապես միահարկ, մի բան վոր ինձ հիշեցնում է ընտանեկան մի պատմություն։ Իմ մեծ հայրը պարսից թագավորի և նրա պալատականների մոտ նկարագրում եր վիբրայլը, և վորպեսզի գաղափար կազմեն նրա շքեղության մասին, չեր մոռացել նաև մարմարյա անդրուխը։ Թագավորը անդրուխի նշանակությունը նրան բացատրել տալուց հետո, ասում է. «Դու ասացիր, թե քո կայսրը այդքան հզոր է, ապա ինչպես է, վոր գետնի վրա պղպեղ համար տեղ չի գտնում»։

Տեղական պղպատից Ղազվինում և Խորասանի մայրաքաղաք Հերատում թրեր են պատրաստում։ Սպահանում և

Շիրազում (Շիրազ) պատրաստում են հնդկական պղպատից։

Ղազվինում բազմերանգ ապակե կտորտանքներով պատրաստում են գորգ, ծաղիկների կամ ուրիշ առարկաների գծանկարներով։ Այդ գորգերն այնքան հազվագյուտ և այնքան թանգ են, որ մի պարսիկ մեզ ասաց, թե մենք ի վիճակի չենք գնելու։ Այդպես են նաև Ջերբանի մազափնները, որոնք պատրաստվում են թագավորների համար։ Այստեղ յերկրագործական գործիքների գործարաններ կան։ Այս յերեկո մենք ընթրում ենք պարտեզի վրա բացվող մի վրանում, լուսավորված վոքր լապտերներով։ Վառում են արհեստական հուր։ Հրե խուրձերը և հրաբխանման բոցը հիանալի յեն։ Դրանից հետո կատարում են ձեռնածություններ, վորոնք ընդհանրապես գվարճալի յեն։ Մեզ նվիրում են նույնիսկ պաճուճապատանքներ։ Այդ ժամանցը վայելում ենք խանի և մեծ թվով պարսիկների հետ, վորոնք մեծ հետաքրքրությամբ մասնակցում են։

Բաղարը նշանավոր է իր գեղեցիկ կառույցվածքով։ Գինեբալը այցելում է շուկան խանի հետ, վոր ստիպից ոգտվում է նրան ընծայելու զանազան կվրպատների կտորներ։ Վաճառականներին խոտով արգելված եր վորևե փոխարժեք առնուլ։

Գլխավոր մզկիթը լավ շինված է։ Թեհրանի շրջապատում քան մեզ ստրածություն վրա, թագավորը միայն կարող է գնալ պահավորակով։ Նույնիսկ նրա վորդիները իրավունք չունեն։ Գինեբալը ստիպված է թողնել իր պահավորակը։ Նրա յեղբայրը, վորը վիրավորված է ձիու վոտքի մի հարվածից, գժվարությամբ է թուլլատվություն առնում։

Ղազվինում վաճառքի առարկաների մեջ ամենից ավելի գնահատվում են ամեն տեսակ դենքերը, մանավանդ հրազենները, գեղեցիկ կերպասները, ժամացույցները և քանդակված քարերը։ Կուլմա (Kulma) գետը այդ քաղաքից քիչ հեռու է անցնում, ուր տակավին յերևում է Պարսկաստանի հին թագավորների պալատը։

Մ. դը Բոշանի (M. de Beauchamp) քարտեզը լինած թվում է

վավերագրեր։ Յես համեմատեցի այն հանրապետարանի և Մանթելլի քարտեզների հետ։ Վերջինս և Բոշանը Ղազվինի յերկայնության աստիճանին համաձայն են, սակայն նրանք մոտ հինգ աստիճան տարբերվում են հանրապետարանից։ Ռեյի (Ray) ավերակները Բոշանը քարտեզում գետեզած և Թեհրանի արևելյան կողմը և այդպես էլ և, իսկ հանրապետարանը գետեզում է տասը մղոն դեպի հարավ։

Ղազվինից Հասարապատ (Hassar-Abad) յերեք և կես ժամ է. ունի 40 տուն։ Յերեկվանից ի վեր պահանջում ենք ձի և ուղեցույց Թեհրան սուրհանդակներ ուղարկելու համար, բայց վոչինչ չենք ստանում։ Մեծավորները ուզում են իրենց պարտականությունները կատարած լինել, բայց սիրում են նաև հանգիստ ու հաճույքը. իսկ ում վոր հրամաններ են տալիս, նույն նկարագիրն ունեն։

Ղազվինի խանը մինչև այստեղ ընկերակցում է մեզ. շարունակ տրամադիր է ֆրանսիացիներին ծառայություններ մատուցանելու. սիրում է նրանց։ Կեսորից հետո պարսիկները պատրաստում են տեսնել լուսինը, վորովհետև նրա յերևալը բամազանի վերջանալն է նշանակում։ Այստեղ կան պիստակի ու նուշի ծառեր և յերիտների յերամակներ։ Մի ականավոր պարսիկ խորհրդակցության է հրավիրում բժիշկ Սալմասեին, վոր նրան գեղեր է ուղարկում։ Սառնալուն պես նա սկսում է իր համբերը ձեռքի մեջ դարձնել. իր կարծիքով պրպտունքը աննպատակ եր, ուստի իսկույն գեղերը վերադարձնում է։

Մեկն գեկտեմբերի։ Հասարապատից մինչև Կարբուզապատ (Carbous-abad) կամ Ամերուկի-գյուղ, տասը ժամ է. այնտեղ իսկապես մեծ քանակությամբ ամերուկ կա. ունի 60 տուն։ Հողը անմշակ է, ծածկված յեղեգներով ու անշարժ ջրերով, ճանապարհները անանցանելի յեն անձրևի ժամանակ։ Հասնելուց մի ժամ առաջ նախաճաշում ենք Քիազհայում (Kiazha)։ Մեծ վեզիր Միրզա Շեֆիի (Mirza Chefi) ապրանքում, վոր շինել է ավել արքայորդի Շահ Մահմուդի (Chah Macmoud) համար, և վորին ստիպված է վորդեգրել, գավակ չունենալուն պատճառով։

Կարբուզապատից մինչև Քեմալապատ (Kiemal-abad) տասը ժամ. ունի 20 տուն։ Հողերը թեև լավ են, սակայն լքված։ Ծաղիկներն աճում են բնական կերպով։ Պարսկաստանում բժիշկ Սալվատորին տակավին վոչ մեկ բժշկական բույս չի հայտնաբերել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մոյ քաղաքը պատմական Հայաստանի Պարսկահայոց Հեր գավառի գլխավոր քաղաքն է։ Մոյի շրջանը գտնվում է Ատրպատականի հյուսիս-արևմտյան անկյունում, Ուրմյայի լճի և Արաքս գետի մեջ։ Շրջանը պարունակում է բազմաթիվ ջեն դյուղեր, տարածված 16—18 մղոն յերկար և ութ մղոն լայն մի հովտի մեջ, վոր լավ մշակված է ու լավ վոռոգված, և արտադրում է ցորեն, գարի, բրինձ, բամբակ և առատ պտուղ։ Մոյը գտնվում է Տրապիզոն—Թավրիզ ճանապարհի վրա։ Գտնվելով Թուրքական սահմանագլխի վրա՝ նա ամրացված է Պարսպապատ և ունի չորս մեծ գռներ։ 19-րդ դարի սկզբում Աբբաս Միրզան մի շարք ամրություններ շինել տվավ ֆրանսացի մի ճարտարապետի ղեկավարությամբ։ Ջեյմս Մորլիերը, վոր 1810 թվին Մոյից եր անցել, նկարագրում է այդ ամրությունները։ Սակայն, 1827 թվին ռուսները առանց դիմադրության գրավեցին Մոյը, և Թուրքմենչայի դաշնագրությունից հետո 3000 գինվոր եչին պահում այստեղ, վորպես լիաջոխիք պատերազմական տուգանքի վճարման։ 1911 թվին իրրական գինվորները գրավեցին Մոյը, սակայն ռուսները անմիջապես 4000 գինվոր ուղարկեցին այնտեղ, վորոնց թիվը հաջորդ տարում 9—10,000-ի բարձրացավ։

Մոյը իր շրջակայքով մրասին 60,000 բնակչություն ունի։ Քաղաքը ունի լայն ու ծառազարդ փողոցներ։ Հայերը բնակում են քաղաքի պրիսանների դուրս Մահիա արվարձանում և հաշվում են մոտ 500 ընտանիք։ Հայարնակ է նաև Սեյդավար դյուղը։ 1827-ին ռուս-պարսկական պատերազմից առաջ Մոյը թե՛ քաղաքի և թե՛ շրջանի բնակչության մեծամասնությունը հայ եչին, սակայն հաջորդությունից հետո հայերը դաղթեցին Արարատյան դաշտը։ Անգլիկովկաս ու Հայաստան այցելող ուղեգրներից շատերն անցել են նաև Մոյից։

2. Թավրիզ, Թեհրիզ կամ Դաւրեժ Ատրպատականի մայրաքաղաքը և իր մեծությամբ այժմ Պարսկաստանի յերկրորդ քաղաքն է։ Գտնվում է Աջլի չայի հովտում, վոր թափվում է Ուրմյայի լճի։ Թեհրանից 536 կիլոմետր հեռու չի և գտնվում է հյուսիս-արևմտյան կողմը։ Թավրիզը ծովի յերեսից 4.400 վոտք բարձր է և նրա հարավում գտնվում է Սահանդ լեռը, 12.000 վոտք բարձր։ Բոլոր ուղեգրները այցելել են այս քաղաքը և նկարագրում են մանրամասնաբար։ Անցյալում Թավրիզը առևտրական կենտրոն եր, գտնվելով Արևելքի առևտրական ճանապարհների վրա։ Այժմ կորցրել է իր նախկին կարևորությունը, թեև յերկաթուղով կապված է Անդրկովկասի հետ։ Կոչվել է նաև Դանձակ։ Արևելքի պատմագիրները Թավրիզի հիմնադրությունը վերագրում են 791 թվին Հարուն-ել-Ռաշիդի Զոբեյդա կնոջը, սակայն նա միայն վերանորոգել է։ Տրդատը 321 թ. գրավեց պարսից Շապուհ Թագավորից այդ քաղաքը և նորոգելով ամրացրեց։ Նա մոնղոլների ժամանակ գարձավ Պարսկաստանի մայրաքաղաք և բարգավաճ վիճակում եր գտնվում։ Հուլաուն ԺԴ. գարում այստեղ հաստատեց իր գահը, այդ և պատճառը, վոր ժամանակակից հայերն անվանում էին Հուլավու թախտը։ Սեֆեվի Իսմայիլ Շահը Ուզուն Հասանի հաջորդներից խլեց Պարսկաստանի գահը և այնտեղ հաստատեց իր իշխանությունը։ 1514-ին Օսմանցիների Սելիմ Ա. գրավեց և 1534-ին՝ Սուլթան Սուլեյմանը։ Շահ Աբբաս Ա. 1618-ին վերագրավեց Թավրիզը, սակայն Սուլթան Մուրադ Դ.-ի օրով Թուրքերը վերագրավեցին ու կողոպտեցրին։ Նադիր Շահը վտարեց Թուրքերին 1730 թվին և Թավրիզը նոց պարսիկների ձեռքը մինչև 1827 թ., յերբ ռուսները գրավեցին և մի տարի հետո Թուրքմենչայի դաշնագրությամբ վերադարձրին պարսիկներին։ Այս քաղաքը շատ անգամ յերկրաշարժից կործանվել է։ Աղետալի յերկրաշարժեր են պատահել 634 թ., 1441 թ., 1527 թ. և 1780 թ.։ Անցյալում ունեցել է բազմաթիվ չքեղ շենքեր, այժմ մեռում և մրայն կապույտ մզկիթը։ Քաղաքի հյուսիս արևմտյան կողմը՝ Աջլի գետի վրա կա 18 կամարով մի հոյակապ կամուրջ։ Թավրիզում բնակում են 700 տուն հայ։ Քաղաքից վեց-յոթ ժամ հեռավորության վրա գտնվում են՝ Մաժամքար, Սհահիուլ և Ալչամուլք հայաբնակ դյուղերը։ Թավրիզը ունի գորգի և չոր պտուղի մեծ առևտուր (Տես, Թավրիզ, Հովհ. Հակոբյանի, «Ուղեգրություններ», Ա. Հատոր)։

3. Այս թուներով մեջատի մասին խոսում են բոլոր ուղեգրները, ինչպես կեր Փորտերը, Ջեյմս Մորլիերը, Առզլեյ, Կոցեբու և ուրիշները, ինչպես պիտի տեսնի ընթերցողը այս հատորում։

4. Տես, եջ 72 ծանոթ. 2։

5. Ղազվին Թեհրանից 160 կիլոմետր հեռու չի և գտնվում է ելբուրզ լերան հարավային լանջի վրա, 4.165 վոտք բարձր։ Բնակչության թիվը համարվում է 50,000—100.000։ Քաղաքը հիմնել է Շափուր Բ.։ Հնում զարավոր ու ծաղկյալ մի վայր եր։ Հարուն-ել Ռաշիդը մի մզկիթ կառուցեց այնտեղ։ ԺԴ. գարի սկզբնավորության թեև մոնղոլական արշավանքների պատճառով քարուքանդ յեղավ, սակայն Սեֆեվի Թահմասպ Ա. (1524—1576) իր գահը փոխադրեց այնտեղ մինչև ԺԷ. գարի սկիզբը, յերբ Շահ Աբբաս Ա. փոխադրեց իր մայրաքաղաքը Սպահան։ 1723 թ. Ղազվինի բնակիչները ապստամբեցին յեվ մորեցին։

Գ. ԹԵՀՐԱՆՈՒՄ

Մեր մուտքի որը նշանակված եր դեկտեմբերի չորսին, վերը Թագավորի առաջադիմը ընտրած եր, որպես բարեսիրտ որ։

Յերեք դեկտեմբերի։ Ջուն և յուրա անձրև։ Բնամատակարարից մինչև Ալի-ապատ (Ali-abad) յոթ ժամ է. ունի 60 տուն։ Ճանապարհը կավային հողերի և թավուտներ ունեցող դաշտերի միջով է [անցնում]։ Ճանապարհին մի կոմում հավաքում ենք դրանիան, ոձաքարի և յասպիսի կտորներ։ Մեր ձիերը ցեխից հոգնած քայլում են դանդաղորեն։ Անկարելի է Պարսկաստանում հաճույքով և հարմարություններով ճանապարհորդել։

Չորս դեկտեմբերի։ Յեղանակը պարզ է։ Ալիապատից մինչև Թեհրան[1] (Teheran), Թագավորանիստ քաղաքը, վեց ժամ է։ Վեց հարյուր քսան մղոն ճանապարհից հետո, փառք աստծո, հասնում ենք մեր ճանապարհորդության ցանկալի վերջավորության։ Մեր մուտքը փայլուն է։ Քաղաքից մի մղոն հեռու դեսպանին ընդունում է մի գեներալ, չորս հարյուր ձիավորի գլուխ կանգնած և ընկերակցում է նրան մինչև մեծ վեզիրի պալատը, ուր կար պատվո պահակը։ Մ. Ռուսոն դիմավորում է մեզ։ 1715-ին, նրա պապը ընկերացել է գեներալի պապին Պարսկաստանում։

Այցելում ենք Միրզա Շեֆիին։ Այս մեծ վեզիրը բավականի տարիքոտ է, իր վարվելակերպը շատ ազնվական է և դուրեկան. նա աշխատասեր է և վարժ աշխատանքի մեջ։ Իր միակ հանգիստն առավոտները ձիով շրջագայությունն է։ Իր տիրոջ մասին խոսում է զգուշավորությամբ և անկեղծորեն։

ասում է դեսպանին, թե Փարիզը Պարսկաստանի մայրաքաղաքն է յեղած, թե պարսիկները միշտ էլ սիրել են Ֆրանսացիներին. ինչպես չորացած գետի հունը առատ ջրով կրկին լցվում է, այնպես էլ բարեկամական հարաբերությունները, որոնք Պարսկաստանի հեղափոխությունների բերմամբ վոչնչացել էին, պիտի վերածնվեն յերկու ազգերի միջև, և թե Թագավորի առաջին իսկ հայացքից մենք պիտի տեսնենք այն բարեկամությունը, վոր նա ունի մեր հանդեպ։

Վեց դեկտեմբերի։ Գեներալը տեսակցում է վեզիրի հետ, Թագավորին ներկայանալու արարողությունը վորոշելու համար։ Խոսակցության ընթացքում Միրզա Շեֆին չի թաքցնում այն մեծ ապավորությունը, վոր թողել եր Պարսկաստանում Լորդ Մալկոլմը[2], Հնդկաստանի ընկերության դեսպանը։ Նա ուներ հազար հետևորդ, յերաժշտախումբ, և ժողովրդին առատ վոսկի և արծաթ եր բաշխում։ Չակառակ խոսուվանների և քաղաքավարական դարձվածքների, սպանները միայն չորրորդ որն են առանում հարմար բնակարան։ Պարսիկները դեռ ևս գաղափար չունեն գինվորական աստիճանին տրված մեծարանքի մասին։ Միրզա Շեֆին հարց և տալիս սպաներին, թե արդյոք կարդալ գիտե՞ն։

Այստեղ բոլոր գործերը դանդաղ ընթացք ունեն։ Մոսք չկա նախարարների բարի ցանկության մասին, բայց հանգստության վայելքի համար նրանք ամեն բան աչքաթող են անում։ Մի ժամ է հարկավոր մի գրություն գրելու համար։ Մեծ վեզիրը չի շտապում վորևե գործի գնալու։ Այդ մեղկությունը մեծավորների բարոյական ախտն է։

Յոթ դեկտեմբերի։ Յեղանակը պարզ է։ Դեսպանը առաքելության քարտուղարների և սպաների ընկերակցությամբ Թագավորի պալատն է գնում։ Դա մի ամբացված դղյակ է, շրջապատված խրամներով և հոգե պարիսպներով. ներքնամասը խիստ ընդարձակ է։ Դեսպանը և իր շքախումբը, այդ նպատակի համար պատրաստված մի դահլիճում հանգստանալուց հետո, արարողապետի կողմից առաջնորդվում են Թագավորի մոտ։ Շահ Ալի Շահը[3] մոտ քառասուն և վեց

տարեկան և, դլխի վրա միշտ կրում է ադամանդյա մի զարդամանակ, որպես արքայական նշան։ Նա նստել է դահլիճի մի անկյունում, շքեղորեն զարդարված մի դահի վրա։ Վոսկեթել կերպասից հագուստները ծածկված են ադամանդներով և թանկագին քարերով։ Վոսկեղեն անոթներ, ադամանդազարդ քսուտիններ, ամենագեղեցիկ գորգեր և ջահեր զարդարում են այս դահլիճը, և ինչ որ խիստ դուրեկան և յեզակի յե, բազմաթիվ շատրվաններ բարձրանում են մարմարյա ավազաններից միջից։

Թագավորի յերկու որդիները և նախարարները նեղկա են այս արարողության։ Դեսպանը ներկայացնում է իր հավատարմագրերը։ Թագավորը նրան խան ուիտոան և տալիս։ Նրա յեղբայրը և Մ. Ռուսսոն նույն պատիվներին են արժանանում։ Այս յերկու ընտանիքները արդեն հայտնի յեն Պարսկաստանում։ Ֆրանսիայի արքունիքի հանդեպ այդ իշխանի ունեցած բուռն համակրությունն արտահայտող խոսքերից հետո, վերադառնում ենք միևնույն արարողությամբ։

Հյուրանոց վերադառնալուց հետո առնում ենք յերեք կաքավ, հավճապակեղեն և Շերբպի դինի։ Թագավորը լուր և ուղարկում դեսպանին, թե ըստ իր ասողագեսի, լուսնի առնելութը բախտավոր օր է, այդ որը նա ընտրում է խոսելու նրա հետ գործերի մասին։

Յերբեմն դատապարտում ենք պարսիկների դանդաղկոտությունը. նրանք էլ յերևի նկատում են մեր անհամբերությունը։ Սակայն այդ հակառակ նկարագիրն արդիւք չի հանդիսանում լավ բարեկամության և հասկացողության։

Տասնչորս դեկտեմբերի։ Յերեկոները և գիշերները ցուրտ են, սակայն յերեկը արևը ավելի տաք է, քան Պրովանսում սեպտեմբեր ամսին։ Ոդի չերմության փոփոխականությունը զարմանալի յե։ Բժիշկ Սալվատորին նկատել է ժամը յոթից մինչև կեսօր տասնութ աստիճան տարբերություն։

Յերբ մեծավորները դուրս են գալիս, նրանց հետևում են բազմաթիվ ծառաներ, որոնց գործ են ածում որպես աթոռակ և ոչինչ չեն վճարում։ Մի ժողովուրդ, որ սիրում է

պերճանք, նրա համար մարդու կարևորությունը կապված է այս արտաքին շքեղության հետ։ Ստիպված ենք հետևել այս ձևականությանը։ Դուրս ենք գալիս միշտ հետևորդներով։

Թեհրան է հասնում Բուխարայի (Bokara) թագավորի դեսպանը։ Սինդի (Sinde) վալիդը (Vaïd), որի մայրաքաղաքը Թաթթան (Tatta) է. նա նույնպես ունի այս արքունիքում իր պատգամավորները։

Տասնվեց դեկտեմբերի։ Դեսպանը և առաքելության անդամներն այցելության են գնում արքայորդի Հասան Ալի-Միրզային. նա Թեհրանի նահանգապետն է. քանիսեկ տարեկան։ Գեներալը նրան ուղարկում է ոդով գործող մի հրացան. մատուցող սպան առանում է շքեղ մի նվեր։

Դեսպանության անդամներից շատերը առաջվում են ջերմով։

Ամեն յերեկո հարսանիքի, խնճույքի կամ մի բարեկամի վերադարձի համար քաղաքում կրակում կամ արհեստական ջահեր են վառում։

Մի քանի գիշերներից ի վեր, մեծ վեզիրի պարտեզում, ուր ապրում ենք, ահագին ժողովուրդ է խռնվում և ուրախության ազազակներ և բարձրացնում։ Ամբողջ պարտեզը հրո մեջ էր կորած։ Պարսիկները հոժարակամ անձնատուր են լինում աղմկալի գինովության։

Թագավորի պալատի դռան առաջ ընկած են չորս գիակ, որոնց գլուխը կտրված է։ Յուրաքանչյուր անցորդ պարտք է համարում այդ գլուխներին վոտքի մի հարված տալ։

Քանչերկու դեկտեմբերի։ Գնում ենք պալատը. արարողակետը մեզ առաջնորդում է դեպի ներսը։ Այդ պատիվը մեզնից առաջ վոչ վոքի չի շնորհված[4]։ Բազմաթիվ բակերի և պարտեզների միջից անցնելուց հետո, ուր նռնիների ու սոխենների բարձրությունը ապշեցուցիչ է, հասնում ենք թագավորի տաղավարը։ Մեծ վեզիրը մեկը մյուսի յետևից մեզ առնում է դեպի գահը։ Իշխանը ամենաշնորհալի ձևով շնորհում է Արևի շքանշանը դեսպանության քարտուղարներին

և սպաններին: Դեսպանը մի որ առաջ առացել եր Մեծ շքանշաններ, որի վրա պարսկերեն առաւերով հետևյալ նշանաբաններ կար... «Թող թագավորը բարձրացնի դեսպանին ձկից մինչև լուսինը»: Սովորական խաչի վրա կարդացվում է պարսկերեն մի վստանավոր. «Իր բարեկամներին սիրող մի իշխանի բարեացակամության նշան. Ծառ Ալի Շահ, թագավոր, որը գրում և վայելչացնում է իր թշնամիներին»:

Նրա հատուկ թուլյավության համար նախարարը մեզ մեծ ածում պալատում: Այն սպասավորը, ուր մեզ բնդունում են, քառակուսի չի և շրջապատված է գեղեցիկ առուներով ու պարտեզներով: Բայց դժվար և նկարագրել ճոխությունն ու պերճանքը: Գորգերի տեղ մոկկա դիպակներ կան, ծածկված մոկեթել ասեղնագործությամբ: Բյուրեղյա առաստաղներ, հայելավոր պատեր՝ արտացոլում են ծառերը և շատրվանները: Դռները լեռնոսի և սատափի վրա քանդակված մոզայիկներ են: Նրա ալաբաստրյա պահի շուրջը, մեծավորները բռնած են մոկեղեն անոթներ և սպասանպակուա ծխամորճներ:

Դուրս ենք գալիս պալատից շլացած արևելյան այս շքեղության վեհությունից ու փայլից, և գնում ենք այցելելու դեսպան Իսմայիլ Խանին: Մեզ հյուրասիրում են պտուղով և քաղցրավենիքով և դեսպանը սառնում և հնդկական մի թուր և մի գորգ:

Չեմ հիշում, թե արդյոք նկատել եմ, որ մեծ վեզիրի և նախարարների մոտ ամենակարևոր գործերի մասին վիճաբանում են մինչ թե դիվանական գաղտնապահությամբ, այլ դռներից մի հարկաբաժնում: Պահակները, քարտուղարները և հետաքրքրվողները ներկա չեն: Շատ հաճախ խնդրել ենք հեռացնել նրանց, բայց նախարարները շարունակ թողնում են մարդկանց իրենց մոտ: Չի կարելի նրանց հետ մենակ մնալ:

Բանչերեք դեկտեմբերի: Ցուրտ քամի և անձրև: Թագավորը հարցնում է մեր բժիշկին, թե այս եղանակը կերակուր պիտի շանուննակվի, որովհետև նա ուզում է վորսի

գնալ Դիբախտաբար բժիշկի բարոմետրը ճանապարհին կոտրվել և. Պոլսում սուլթանը կերրեք վորսի չի գնում: Պարսկաստանում շատ են սիրում այդ գրոսանքը:

Թեհրանը 50 000-ից ավելի բնակիչ ունի ձմեռը: Ամրան միայն պզքատներն են մնում: Ժողովուրդը հուլիսին և ոգոստոսին ցրվում է մոտակա դյուղերը: Ջերմությունը հասնում է քսանյոթից քսան ութ աստիճանի: Հիպսոկրատը ասում է, թե Թեհրանից կարելի եղածին չափ շուտ պետք է մեկնել և հեռանալ այնքան, որքան հնարավոր է:

Պարսկաստանը սահմանակից է Հնդկաստանին, Բաշմիրի հետ նպաստավոր է: Նավերը հինգ ամսվա ընթացքում Բենգալից մինչև Բենդեր-Աբաս են հասնում, բարձած շաքարով, որդան կարմիրով, մուսլինով և բամբակով: Վերադարձին Արևելքի համար առնում են՝ գինի, գորգ, Ռուսաստանի կովի կաշի և Հորմոզի աղ: Պատերազմի ժամանակ քաղաքականության շահերը հաճախ հակասում են առևտրական շահերին, բայց խաղաղ ժամանակ Պարսկաստանի առևտուրը՝ Հալեբի վրայով հին Փյունիկեին պիտի վերադարձնի իր փայլը, իսկ Տիրոսին և Սիդոնին իրենց հարստությունը:

Ֆրանսիայից Պարսկաստան արտահանված ապրանքներն են՝ կերպաս, ասլիկեն, մետաքսյա կտորներ, հայելի, բյուրեղ, բուտա, ժամացույց, անագ, կապար, գինի, թղթեղեն և դոմարկեղեն: Պարսկաստանը դրանց փոխարեն կարող է տալ՝ մետաքսեղեն, ծխախոտ, բուրդ, գառան մորթի, մուշտակեղեն, գորգ, ներկված կաշվեներ, դիպակներ, գեղարաչք, ոսկին, պերսղակ, ակատ, լազվարթ, ադամանդ, սուտակ և մարգարիտ: Արևելքի մեր առևտրի մի մասն և կազմում այդ, որ սակավ Ֆրանսիային տալիս և վաճառն միլիոնի չուտ շահ: Մարսիլը այդ առևտրի գլխավոր քաղաքն է: Թող ինձ թույլ տրվի հիշատակել այդ, հայրենիքիցս հազար հինդհարյուր մղոն հեռավորության վրա:

Թագավորը վորսի չի գնում քսան մղոն հեռու: Նա կար-

գաղթում և մեծավորներին իր բացակայության ժամանակ դեսպանին ուշադիր լինել։ Արքունիքում մի տեղ կա բանտարկյալների և մեկ ուրիշը՝ իշխանի առաջին նկարչի համար։

Այցելում ենք Սպահանի բեկլերբեկին։ Այս իշխանը անասնային հարուստ է. ասում են թե 3000 ծառա ունի։ Խոտ վարթամ նախաճաշից հետո, դեսպանին նվիրում է մի թուր և մի դաշույն, նույնպես մեկ մեկ թուր դեսպանության բոլոր անդամներին և ապաներին։ Այդ պենքերը պատրաստվում են Սպահանում։ Տասնևութերորդ դարում, Ղումի թուրերի հատկությունը նշանավոր եր, բայց արվեստները հիմնովին կործանեցին այս քաղաքը, համբավավոր Մուհամմեդի մեծ ապստամբ՝ Ջաֆարական դերեզմանով, որ նրա հորեղբորորդի Ալիի կինն եր։ Ներկայումս թշվառությունը տիրում է բնակիչներին, որոնք ապրում են Ջաֆ Ալի Շահի 1802 թվին վերաշինած չքնդ մզկիթը այցելող ուխտավորների տված ողորմությունով։

Դեկտեմբերի կեսերն։ Դիշերները սառնամանիք են։ Պարսիկները արհամարհանքով դիտում են մեր ապրելակերպը և մեր հագնվելու կեպանակը։ Ուզում են մեզ, կանանց հանդեպ մեր ունեցած վերաբերմունքի և ընթացքի համար։ Նրանց մեջ կինը միայն սարսափ է։ Ձերբեք չկարողացա համոզել մեծ վեզիրին, որ Ֆրանսիայում կինը բաժանում է իր ամուսնու հոգսերը։ Հարեմը կերբեք չի կարող ընտանեկան կյանքի ճիշտ պատկերը տալ։

Թագավորի պալատի դիմացը կառուցում են մի մզկիթ, որ շատ դիզեցիկ պիտի լինի։ Յես տեսա հազվագյուտ վրաքի մարմարներ, որոնք պատրաստ էին գործածության համար։ Շուկան տալիս է բնակիչներին Հնդկաստանի ճոխ կերպասներ։ Պերոզակը գնվում է շատ աժան։ Մարգարիտները թանգ են։ Ասում են, թե Բաղդադում և կ. Պոլսում ավելի աժան են և գեղեցիկ։ Յերկար ժամանակից ի վեր Պարսկաստանի թագավորն ամեն տարի գնում է թանգարժեք քարեր, յերկու միլիոն արժողությամբ։

Թահմազ-Ղուլի խանի մահվանից հետո յերեք կամ չորս

տարի թագավոր չի յեղել։ Ծուրաքանչյուր նահանգապետ իշխանությունն իր ձեռքն եր առել։ Վերջում Շիրազի նահանգապետ Քերիմ խանը գրավեց բարձրագույն իշխանությունը և յերեսուն տարի տիրապետեց։ 1774-ին իր մահվանից հետո հաջորդեց նրա որդին։ Թեհրանի նահանգապետը,— Թահմազ Ղուլի խանի դեմ ապստամբվողի որդին,— խլեց նրանից գահը, և սկեց իր յեղբորորդուն՝ Ջաֆ Ալի Շահին, ներկայումս թագավորող իշխանին։

Ջաֆ Ալի Շահը իշխում է քսան միլիոն հպատակների վրա։ Նրա բանակը բազկացած է վաթսուն հազար հետևակ զորքից և կրկնակի քանակությամբ հեծելազորից։ Հրետանին այնքան էլ մեծ չէ։ Պարսիկ զինվորը ուժեղ է, լավ կազմվածքով, ժուժկալ, հեշտալի ձևավոր և հավատարիմ իր խոսքին։ Կոմս դը Վիլսեկը (Comte de Willeseck) վիճակում էր կոմս դը Վիլսեկը (Comte de Willeseck) վիճակում էր պատմեց, որ Հովսեփ Բ. կայսրը տեսակցության ընթացքում՝ ցույց տալով մի զինվորի, ասաց. «Այս զինվորը պարսիկ է, որին յես յերեք տարով արձակուրդ եյի տվել։ Նա գնաց Սպահան տեսնելու իր ընտանիքը, և իր արձակուրդը լրանալուն պես ճշտապահությամբ վերադարձավ և անցավ իր ծառայության։

Ջաֆ Ալի Շահն իր շուրջն ունի հյուր վորդիներ, տավար մի բանակ, հարուստ դանձարան և վայելում է մեծամեծների մեծարանքը։ Նրա վորդիներից յերրորդը, Աբբաս Միրզան, վորին տեսանք Թավրիզում, իր հորեղբոր և հոր կողմից ծնած որից նշանակված և գահաժառանգ։ Նա իր յեղբայրների վրա այն առավելությունն ունի, վոր նրա մայրը Պարսկաստանի ամենաազնվական կաջար ցեղից է։

Ռուսաստանի հետ պատերազմը սկսեց 1803-ին։ Վերջին իշխան Հերակլը վրաստանը գիջել եր Ռուսաստանի կայսեր, վոր հաճախակի նավեր ուղարկելով Ռիոնի գետաբերանը, այնտեղ հաստատեց զինվորական կայաններ։ Սկզբնական կռիվների ժամանակ ռուսական զենքերը մեշտ հաղթող եյին հանդիսանում։

Ջանք և զարմանալ Ռուսաստանի այդ հաղթանակների

համար։ Տասնեւութերորդ դարում, ազդապիտութիւնը սկսեց կատարելագործվել։ Թուրքիան և Պարսկաստանն այդ ուղղութեամբ չհետեւեցին ընդհանուր առաջդիմութեան և յետ մնացին։

Այցելեցինք Պարսկաստանի պատվիրակ գեներալ Մ. Բոժիյոի գերեզմանը։ Ապրատ չորս սուներ և մի փոքր գմբեթ ծածկում են այդ դամբարանը։ Դեսպանը մատիր և նրան մի ուրիշ հուշարձան կանգնեցնել։

Այստեղ և Մերը Ղալա Ալի խանը, Սինդի Վալիյի դեսպանը, որի մայրաքաղաքն և Թաթթա։

Քաղաքացիական կռիվը շարունակվում և կանգահարում։ Այս նահանգից եկին այն համբավավոր ապստամբ ազվանները, որոնք բախտի բերմամբ, 1730-ին գահը տապալեցին։

Թահմազ Ղուլի խանի [Նադիր Շահի] մահվանից հետո, իր գեներալներից մեկը, Ահմեդը ճանաչվեց ինքնակալ և փառքով գահակալեց մինչև 1774 թ.։ Նրա մահվանից հետո թուռների մեջ վեճ ծագեց թագի համար։

Մեկ հունվար 1808։ Պայծառ եղանակ է։ Պարսիկների նոր տարին սկսում է մարտին, երբ արեւը մտնում է Խոյ հաստատուքյան մեջ։ Նեվրուզ կոչված այդ ժամանակաշրջանում, արքունիքում կատարվում են ամենաշքեղ տոնակատարություններ։ Մեծամեծներ, խաներ յերկրի ամեն կողմից հավաքվում են այնտեղ։ Թագավորը նրանց ճոխ ընծաներ և տալիս և նրանց հետ ճաշում։ Նոր տարին սկսում է հասարակական տոնակատարություններով։ Թագավորը մեզ ուղարկում է վայրի եղներ, որոնց սպանել և փորել ժամանակ։ Այդ կենդանիների մսը խարույկի և, միայն մի սև ժապավեն և անցնում վողնաշարի վրայից և փորի տակից։ Միսը այնքան էլ լավ չէ։

Այցելում ենք նախարար Միրզա-Ղուլին, որին անցյալ տարի թագավորը դատապարտել է՝ գանձարանին վճարել մեր ղրամով մեկ միլիոն։ Հակառակ այս վարկաբեկման, նա պահում է իր պաշտոնը։ Առանց քաղաքականության

նորութիւններին դիմելու, շարունակ նա հետապնդում է իր նպատակը ուղիղ ճանապարհով։ Նույնիսկ խոսում են, թե շուտով շնորհի պիտի արժանանա։ Վորքան դժվար է դատել մի ազգը։ Պետք է ճանաչել նրա լեզվի հարստությունը, նրա կառավարության ոգին, մեծամեծների նկարագիրը և ժողովուրդների սովորությունները։

Մ. Տրեզել, ֆրանսական մի սպա, մեզ հայտնում է Սպահանից, վոր այդ քաղաքը վերածվել է ամայի մի վայրի, ուր ավերակների միջից անցնում եք չորս ժամ։ Հարուստ մզկիթներ, կանոնավոր և ընդարձակ հրապարակներ՝ վկայում են հին թագավորների շքեղությունը։ Ընտանիքների նման կայունություններն ևս ունեն բախտի դարձվածքներ։ Այնտեղ մեծ թվով ընդարձակ բազարներ կան, բոլորովին ամայացած։ Շրջակայքի հողերը բավականին լավ մշակված են և բազմաթիվ ջրանցքներով վառոգված. վոչ մի վառելանյութ չկա. վառում են չոր բույսեր և անասունների աղբ։

Թագավորի կրտսեր յեղբայր Հուսեյին Ղուլի խանը մեռավ մոտ քառասուն տարեկան։ Այս իշխանը վախճանվեց Բեստամում (Bestam), Մեշհեդի ճանապարհի վրա, այնտեղից գալու ժամանակ։ Նրա բժիշկը անմարտողության պատճառով նրանից արյուն եր վերցրել։ Հուսեյին Ղուլի խանը քանի սպստամբել եր թագավորի դեմ, վոր նրան ներել եր մորը կենդանության ժամանակ։ Յենթադրվում է, թե մայրը նրանց հաշտեցնում եր, վորին իբրև ապացույց պատմում են, թե իշխանուհու վախճանած որը թագավորն ուղարկել է մի փարաշ, նույն պալատում ապրող իր յեղբոր աչքերը հանելու համար։ Յերբ հայտնում են այդ դժբախտ իշխանին այդ տանջանքի մասին, «Ով մայրը», ագաղակում է, և դառնալով դեպի փարաշը, ասում է. «կատարեցեք հրամանը»։

Հուսեյին Ղուլի խանը քաշվեց Թեհրանից մի քանի մղոն հեռու լեռների ստորոտում գտնվող մի գյուղ, ուր զբաղվում եր աղքատների ոգնության գործով, վորոնց հանդեպ առատաձեռն եր։ Մեծ ծախքերով արտադրել եր տալիս մոլլաների համար կրոնական գրքեր։ Պահել եր իր հարստու-

թյունը և վայելում եր թագավորի բարեկամությունը, որ հաճախ նրան այցելում եր. նրա մահվան լուրը վիշտ պատճառեց իրեն: Նա փակել ամավ բազարը:...

Թևերանից դեպի արևելք գտնվում են Ռեյի ավերակները, հին Ռագեսը (Rhages), Հարուն ել Ռաշիդի հայրենիքը: Պարսիկները ասում են, թե Ռեյ յերեք միլիոն բնակիչ ուներ: Հեղափոխությունը բառը բացատրում և բոլոր պետությունները, սակայն դժվար և ըմբռնել, թե ինչպես հանգստությունն և հաճույք սիրող մի ժողովրդի մեջ հեղափոխությունները այդքան յերկարատև և սարսափելի յեն:

Յերեկոյան դեմ յերեում են չաքալները, որոնք թափառում են փողոցներում և որոնց հարձակումը և կծվածքը վտանգավոր և: Պարսիկները բարձր ազդակներով հալածում են նրանց և գավազանի հարվածներով սպանում:

Յերեկ մեծ վեզիրը խորհուրդ եր տալիս վերադառնալ Վրաստանի ճանապարհով, իսկ այսոր Բաղդադի վրայով: Սրանք շատ թեթևորեն փոխում են իրենց վորոշումը: Հաճախ ավելորդ բաներ եմ հուշադրում, սակայն յերբ ուսումնասիրում եք մի ժողովրդի նկարագիրը, ամենափոքր բաները կարող են ոգտակար լինել:

Բժիշկ Սալմասորին առաջարկում և մեծ վեզիրին պատվաստվել և մի խորհրդակցության մեջոցին աշխատում և դրա առավելությունները ապացուցել: Բազաքավարության համար մինիստրը մեր քեֆին չծխածակեց, և հարցը անդադար թողավորի բժիշկի մոտ:

Դեսպանատանը բոլորը աշխատում են: Մեր բարի հայրերը կաթոլիկների թվի մասին տեղեկագիր կազմեցին: Սպասները խմբագրում են տեղագրական որագիրը: Բժիշկ Սալվատորին կազմում և մի տեղեկագիր կլիմայի և հիվանդությունների մասին: Զբաղվում և նաև հին դրամներով: Ձեռք և բերած մի վսեմ դրամ Տիտոս-Կուինտոս-Ֆլամինիոսի, վոր Հունաստանի ազատությունը հռչակեց: Մ. Ռուսսոն գեղեցիկ կերպով պարսկերեն բանաստեղծություններ և դրում: Ուրիշները ուսումնասիրում են պատմությունն ու աշխարհագրությունը, Մ. դը Լաժառ՝ հանքարանությունը և քանդակված քարերը: Յեթե որագրություն տեղեկություններ կա, այդ վերցրել եմ այդ պարոնների խոսակցությունից: Բոլորն աշխատում են խոսել պարսկերեն: Վորքան տխուր և լինել խոսք և համր: Մի քանի պարսկերեն բառեր հասկանում եմ, վորովհետև անգլիերենից են վերցված: Վորտեղից և այս կապակցությունը:

Թագավորի գազանանոցում մի քանի փղեր կան: Նա ունեի բազմաթիվ վորսորդական բազեներ: Բազեյի կյանքի տեղությունը քսան տարի յե, յերբ լավ և պահվում, տասնհինգ տարի կարելի յե ոգտագործել վորսորդության համար. նրան կերակրում են վորսի ժամ: Ներկայումս նրանց տասը են յերկու որվա համար մի կաքավ:

Յերբ Պարսկաստանի արքունիքից հեռանում եք, թագավորը նվերներ և տալիս: Այս սովորությունն արևելքում հին և: Մամլեն կամ Լայսի (Laës) տեսիները հազվագյուտ հատկություններ ունի. ասում են ամեն տարի մի ժայռից տանում են ութից տասը ունկի (ounce), բոլորը վերապահված և թագավորի համար: Քարայրը կնքված և:

Յես տակավին չեմ հիշատակել այն խոր հարգանքը, վորը արտահայտում են մեծ վեզիրին ներկայանալիս: Յես տեսա շատերին, վորոնք նրա դռան շեմքի առաջ ծնկաչոք կանգնած եյին:

Հարեմը փակ և բոլոր ոտարականների առաջ: Ամենամեծ անարգանքն և այդ վայրից բռնությամբ ներս մտնելը: Մի ֆրանսացի անզգուշությամբ մտեցել եր հարեմին: Խուզն կանայք սկսել եյին ազաղակել և ոգնություն խնդրել: մի քանիսը գինքեր եյին վերցրել: Սա առաջացրեց մի ընդհանուր աղմուկ, վոր դեսպանը մեծ դժվարությամբ կարողացավ հանդարտեցնել, նույն իսկ հանցավորին պատժելով:

Մեծամեծների տները ուրախ տեսք ունեն. հարկարժիննները բարձր են և պատուհանները բացված դեպի արևելք ուղղված արևմուտք և նայում են գետնահարկի վրա:

Նան տիպոսը ժառանգական և. այդ տիպոսի ծագումը

թաթարական է, և տրվում է ցեղերի վինվորական պետերին։

Թեհրանից մեկնելուց առաջ խոսանք լսրջանիկ Ֆաթ Ալի Շահի ընտանիքի մասին։ Նրա աղջիկների թիվը անհայտ է, և չենթադրում են, թե խիստ շատ են։ Տղաների թիվը լեռնում է։

Անդրանիկը, Մահամեդ Ալի խանը, բնակում է Քերմանշահում, կառավարում է Լորիստանը և Իրաք Աջեմի արևմտյան մասը։ Բավ է և գործունյա։

Յերկրորդ որդին՝ Մահամեդ Վելի Միրզան, կառավարում է Խորասանը և բնակում է Մեշհեդում*։

Յերրորդը, Աբբաս Միրզան, որի մայրը կաջար ընտանիքից է, և իր հոր ու հորեղբոր կողմից նշանակված է թագաժառանգ. նա թավրիզումն է ապրում և պարսկական բանակը զեկավարել և Վրաստանի ռուսների դեմ. բավական հայտնի անձնավորություն է, մանավանդ Ֆրանսացիների համար։

Զորրորդը, Հուսեյին Ալի Միրզա, Թեհրանի կառավարիչն է։

Հինգերորդը, Հուսեյին Ալի Միրզան, կառավարում է Շիրազը։

Վեցերորդը, Մահամեդ Ղուլի Միրզան, թագավորազուն ընտանիքի հայրենիք Մազանդարանումն է ապրում։ Մնացյալ որդիները ծնում են նորին վեհափառության մոտ և անդորձ են։

Ֆաթ Ալի Շահը սիրում է բանաստեղծությունը, և պրում է տաղեր, որոնցով ընդհանրապես անմահացնում է իր բոլոր զեղեցկությունը։

---

* Մեշհեդ նշանակում է նահատակության վայր։ Այս քաղաքը ծագում է առաջ Ֆաթմեյի յեղբայր Իմամ Բիզայի գերեզմանից։ Հաճախ Մեշհեդը շփոթում են Թուսի հետ, որ գտնվում է դեպի հյուսիս, յերեք փարսախի վրա և ուր այլևս բնակիչ չկար։ Դա յեղել է Պարսկաստանի հոփառոսի, համբավավոր Ֆիրդուսիի հայրենիքը։ (Բաղվածք, Սրևի ասպետ և Ֆրանսիայի առաջին թարգման Մ. Ժուաննենի նոթագրություններից)։ (Ծանոթ. Դարդանի)։

Պարսկաստանում կան տասը նահանգ.

Ազերբեյջան (հին Մարաստան), մշակությունը խնամված է. անտառներ բոլորովին գոյություն չունեն։

Գիլան, տալիս է մետաքսեղեն։

Մազանդարան, վստահացնում են, թե անսպառ գանձեր կան թաքնված։

Խորասան, ունի պիրուզակ, վոսկու և արծաթի հանքեր։

Քուրդիստան, վորի մայրաքաղաքն է Սին։

Իրաք-Աջեմի, նախկին Պարթեվաստան։

Լորիստան։

Ֆարսիստան, վորի մայրաքաղաքն է Շիրազը։

Այս քաղաքի հյուսիսային կողմում գտնվում է Պերսեպոլիսը։

Կերինան (Kerinan), Կարամանիան։

Դերհտիստան (Derhtistan)։

Պարսիկները չափազանց սիրում են իրենց թագավորին, նրա հատկությունները խարուսիկ հույսեր են ներշնչում։

Կարավանները հաճախակի յերթևեկում են Իզերդից (Iserd) Կանդահար և Հերատ. ստիպված են անցնել զազրելի անձայր անապատներից. այնտեղ ամեն ինչ փոխադրվում է ուղտերով։

Ըստ Բոշանի քարտեզի, Թեհրանը գտնվում է կասպից ծովից յերեսուն ութ մղոն հեռու։ Ջնայած վոր ռուսները տերացել են ծովեզերքի կեսին միայն, սակայն միակ նավատնացներն են։ Պարսիկները առում են ծովը։ Ռուս նավերը ունեն մատնավոր կայմ, վոր անհրաժեշտություն է այս ծովի հաճախակի մրրիկների և փոթորիկների պատճառով։

Հունվարի 27 ին մեկնում եմ Թեհրանից, հետս ունենալով ուղեկից մի թարգման, պարսիկ մի սպա և մի քանի ծառաներ։ Վերցնում հանք բաղդադ գնալու ամենակարճ ճանապարհը։ Սպահանի ճանապարհը ամենաերանուկն է։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարսկաստանի մայրաքաղաք Թեհրանը գանվում է Ելբուրզ լեռների լանջի վրա։ 1919 թ. մարդահամարով 250.000 բնակիչ ունի, որոնցից 5000 հայ, յնենթադրվում է, որ նախորդ մի քանի տարիների սովի ու տարափոխիկ հիվանդությունների պատճառով բնակչությունից 100.000 հոգի նվազել է։ Թեհրանը թեև պատմականորեն հին է, բայց յիրկար ժամանակ մի աննշան վայր է յեղել։ Առաջին անգամ հիշատակում է Յակութ ժբ. դարում, որ խոսում է նրա ատրպկերկրյա տների մասին։ ԺԲ. դարում Համդուլլա Մուստաֆին նկարագրում է, որպես կարևոր և մի մեծ քաղաք։ Սեֆեվիների վերջին շրջանում ժէ. դարի վերջերին և ԺՀ. դարի սկզբնավորության, յերբ նա ծառայում էր որպես Շահերի աբբուռնիբ։ Սըր Թոմաս Հերբերտ (Thomas Herbert, Travels in Persia, 1627—1629-ին էջ 194—195) ասում է, թե Թեհրան ունի 3000 տուն։ Աղվանները գրավելին Թեհրանը և կողոպտելին 1723 թ.։ Ջոնաս Հանվեյ հիշատակում է 1744 թվին ԺՀ. դարու վերջավորության, յերբ կաջար հարստությունը սկսյալ Պարսկաստանի դահին, Աղա Մահամեդ 1788 թվին Թեհրանն ընտրեց որպես մայրաքաղաք, Մազանդարանի մոտ գտնվելուն պատճառով, սակայն նա չինարարական որևէ գործ չիատարեց քաղաքում։ Նրա հաջորդ Ֆաթհ Ալի Շահն սրով եր, որ Թեհրանը կարևորություն ստացավ և նրա բնակչության թիվը աճեց։ Այդ մրջոցին (1810) եր, որ Ասուզեյ և Մորիեր այցելելին Թեհրան և նրանք ասում են, թե քաղաքը ուներ 12.000 տուն և 40.000—60.000 բնակիչ։ Գարդանը 30.000 և հաշվում բնակչության թիվը։ Հաջորդ յոթանասուն տարիների ընթացքում, Թեհրանը որևէ զարգացում չունեցավ, մինչև Նասրեդդին Շահը, որ ընդարձակեց ու բարեզարդեց քաղաքը։ Տես, G. N. Curzon, «Persia and Persian Question», (1892)։ Dr. Feuvrier, «Trois ans à la cour de Perse» (1906)։ A. V. William Jackson, «Persia Past and Present», և «From Constantinople to the Home of Omar Khayyam (1911)։ W. Mittelholzer, «Persinflug Mit einen Nachwort von O. Fluckiger», (1926)։

2. Գարդանն ակնարկում է Մալկոլմին և նրան անվանում է լորդ մինչդեռ նա պլենիպոտենտ եր և հետագայում միայն դեսպան։ Նրան վորակում է որպես Հնդկաստանի ընկերության (East India Company) դեսպան։ Մալկոլմի կենսագրությունը տես էջ 49 ծանոթ 1։

3. Ֆաթհ Ալի Շահի մասին խոսում են այս հատորում հիշատակված գրեթե բոլոր ուղեգիրները։ Կաջար հարստության հիմնադիր Աղա Մահամեդի սպանությունից հետո գահ եր բարձրանում նրա յեղբորորդին Ֆաթհ Ալի Շահը (1797—1834), որ առաջին անգամ քաղաքական դեպքերի բերմունքով հարաբերության մեջ եր մտնում իմպերիալիստական պետությունների հետ և դաշնագրություններ եր կնքում, որով Պարսկաստանը կորցնում եր իր բացարձակ անկախությունը, և այնուհետև ապագրեց եր դառնում դիվանագիտական մերձեցությունների ու չհաղորդման։ Ժամանակակիցները Ֆաթհ Ալի Շահին ներկայացնում են, որպես ազան, ընչաքաղց մի անձնավորություն, որ սիրում եր կաշառներ ստանալ ու հարստություն դիզել։ Անգլիացիները, ռուսները և ֆրանսացիները մրցման մեջ եյին թանգարժեք նվերներով գրավելու Ֆաթհ Ալի Շահին և նրան գործիք դարձնելու իրենց քաղաքական նպատակներին։ Մոլիոլմ, Գարդան, Մորիեր, Ասուզեյ, Կոցիբու, Կեր Փորտըր և ուրիշ ուղեգիրներ տալիս են նրա բնութագիրը։

4. Բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներն էլ Գարդանի նման պարծենում են, թե Ֆաթհ Ալի Շահի կողմից տրված պատիվը բացառիկ է յեղել, և վոչ վոքի այդքան կարևորություն չի ընծայած։ Նույն իսկ Կոցիբուի անգլիացի թարգմանիչը մի քանի ծանոթագրություններով վճռում է և ասում, թե անգլիացի դեսպաններին ավելի մեծ պատիվ է տրված, քան Յերմոլովին։



Պիեր Ամեդե Ժոբեր (1779—1847)
(Արտատպված նրա ուղեգրության յերկրորդ հրատարակությունից)

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԻԵՐ ԱՄԵԴԵ ԺՈԲԵՐԻ

(1805 — 1806 թ.)

Ժոբեր մեկն էր Նապոլեոն Բոնապարտի այն գործակալներից, վորոնք Պարսկաստան էին ուղարկվում հող պատրաստելու համար Հնդկաստանի դեմ ծրագրված արշավանքին։ Պիեր Ամեդե Ժոբեր (Pierre-Amédee Émilien-Probe Jaubert) ծնած է 1779 թ. հունիսի 3-ին Պրովանսի Եքս քաղաքում և մեռած է Փարիզում 1847 թ. հունվարի 27-ին։ Նա իր ժամանակի նշանավոր արեվելագետներից էր. ունի բազմաթիվ լեզվաբանական աշխատություններ, յերկար ժամանակ պրավում էր Փարիզի Արևելյան կենդանի լեզուների ինստիտուտի թուրքերենի և ապա պարսկերենի ամբիոնները վորպես պրոֆեսոր, իսկ վերջի շրջանում նա նշանակվեց անորեն այդ հիմնարկության։ 1798 թվին Ժոբեր ընկերանում է Նապոլեոնին, յեգիպտական արշավանքի ընթացքում, վորպես քարտուղար և թարգման, և Արուքիրի նավալին պարտությունից հետո, Բոնապարտի հետ վերադառնում է Փարիզ։ Ապա դիվանագիտական մխիթարով ուղարկվում է Սուրիա և կ. Պոլիս, միաժամանակ ծառայելով արտաքին գործոց նախարարության մեջ, վորպես թարգման՝ հմուտ լինելով թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներին։ 1805 թ. Սան Պետերբուրգում Մեծն Բրիտանիա բանակցություններ էր վարում ցարական կառավարության հետ՝ դաշնակցություն կնքելու Ֆրանսիայի դեմ։ Այդ միջոցին Փարիզում տարածվում էր Ջաթ Ալի Շահի մի նամակը, ուղղված Նապոլեոնին, վորով աջակցություն էր խնդրում Ռուսաստանի դեմ պատերազմելու համար։ Այս նամակը, ասում է Ժոբեր իր ուղեգրության մեջ, «կ. Պոլիս բերել էր մի հայ,

վոր ասում եր թե ինք վաճառական եր։ Ի պատասխան Շահի այս դիմումին, միաժամանակ իր արևելյան ընդարձակ ծրագրերի իրագործումը նախապատրաստելու համար՝ Նապոլեոն ընտրում և ժողովին, վորպես գործակալ մեկնելու Պարսկաստան, և բանակցելու Ֆաթ Ալի Շահի հետ։ Սակայն, գրում և ժողովը, իր ճանապարհորդության առաջ ծառանում էին հակա դժվարություններ։ Նախ, Ռուսաստանը բացարձակապես դեմ եր Ֆրանսական արվեստի քաղաքականության, անգլիական և ռուսական դիվանագիտությունը հաղթանակում եր սուլթանի մայրաքաղաքում և «անգլիացիների ու ռուսների գործակալները վխտում էին Թուրքիայում և վորոնք ամեն միջոցի պիտի դիմեին անգործության մատնելու նման մի մեխանա»։ Բացի այդ դժվարություններից, Թուրքիայում տիրում եր նեղքին խռովություն, առևտրական կապիտալի՝ ֆեոդալիզմի դեմ սկսած սուր պայքարի հետևանքով, և հետևաբար, այն միակ ճանապարհը վոր ժողը պետք եր անցներ Պարսկաստան գնալու համար, բացարձակապես անապահով եր ու վտանգավոր։ Սակայն, հակառակ այս բոլոր դժվարություններին 1805 թ. մարտի 7-ին նա մեկնում և Փարիզից դաշտնորեն, անցնում և Գերմանիայից, Հունգարիայից ու Թրանսիլվանիայից և հասնում Բուխարեստ ապրիլի 2-ին, ուր իշխան Իպսիլանտին դյուրություններ և ընծայում նրան կ. Պոլիս գնալու համար, ուր ժամանում և ապրիլի 10-ին, Փարիզից մեկնումից չորեքուն հինգ որ հետո։ Նա մեծ դժվարությամբ հաջողում և ներկայանալ սուլթան Սելիմին, ֆյատվադհանեցում, և առանում և վորոշ հանձնարարականներ Թուրքիայից անցնելու և Պարսկաստան գնալու համար։ Թեև սուլթանը քիչ հետո ապանվում եր յենիչերիների կողմից։ ժողը տեսնվում և այն հայի հետ, վոր Շահի նամակն եր բերել, և վերջապես վորոշում և, վորպես համեմատաբար ավելի ապահով՝ մեկնել Տրապիզոնի ճանապարհով։ Նա հաջողում և գնալ մինչև Բայազետ, ուր լավ ընդունելություն և գտնում, սակայն չորս նա պատրաստվում և մեկնել դեպի Յերևան, ձերբակալում

են նրան և ուղի ամեն պահում գնդանում, չենթարկելով տակավին տառապանքների ու զրկանքների։ Վերջապես պարսկական կառավարության միջամտությամբ ժողը ազատվում է բանտից և Թուրքիայում թափառումներից հետո գնում և վան և այնտեղից անցնում է Պարսկաստան։ Արրաս Միրզայի ու Ֆաթ Ալի Շահի հետ տեսակցելուց հետո մեր ուղեգիրը վերադառնում է վան, և այնտեղից երզրումի ճանապարհով գնում է կ. Պոլիս, և այսպես վերջանում է նրա միսիան։

Ժողը կատարից նաև մի յերկրորդ այցելություն դեպի արևելք, թեև այս անգամ նա անցավ Անդրկովկասից, սակայն, հակառակ իր ցանկության առիթ չունենալ այցելելու Հայաստան։ Ֆրանսական կառավարությունը 1818 թ. նրան ուղարկում է Արևելք, բերելու համար վորոշ թվով Բաշմիլի բուրդ ունեցող վոչխար, նրա ցեղը Ֆրանսիայում տարածելու համար, արդյունաբերական ու առևտրական նպատակներով։ Ժողը անցնում է Ոդեսա և ապա Թիֆլիս, ուր նրան մեծ ժանդակություն և տալիս գեներալ Յերմոլովը։ Շարունակելով իր ճանապարհը, կասպից ծովից անցնելով հասնում է Բուխարա և գնում Բաշմիլի ցեղին պատկանող յերեք հարյուր վոչխար, և հետո վերադառնալով նույն ճանապարհով՝ Արխանում ռուսական յերկու շոգենավերով վոչխարները փոխադրում է Ֆրանսիա, ժամանելով Մարսեյլ 1819. թ. մայիսին։ Այս ուղեվորությունը հրատարակված չե առանձին հատորով, միայն իր վերադարձին ժողը գրեց իր տպավորությունները «Revue encyclopédique»-ում։

Հետաքրքիր և վոր այս ճանապարհորդության ընթացքում նա հանդիպում և Ներսես Աշտարակեցուն, ինչպես յերևան և գալիս Էջմիածնի Պետարխիվում պահված յերկու վավերագրերից։ Սրանցից առաջինը գրված և Փարիզից և կրում և 1818 թ. ապրիլ 8 թվականը։ Նամակագիրն և Հակոբ Շահան Ջրպետյանը և գրությունը ուղղված և Ներսես Աշտարակեցուն, հետևյալ տողերով.—

«Յանկարծադեպ իմն բերմամբ ճանապարհէ աստիւ յայդոսիկ կողմանս՝ երեւելի այրն պարոն Ժօպեր ասո-

պետն, որ է պաշտօնակից ինձ ի մերում պրպտման ժամերիմ բարեկամ եւ միանգամայն հաւատարիմ Տէրութեան, որեւ արդեն լուեալ է ձեր գնալ նր. երթեմն ի Պարսիկս»...

Ինչպես կերեւում է ծորերը այս գրութիւնը անձամբ հանձնում է Ներսես Աշտարակեցուն՝ բայց Շահան Չրպետյանը նույն անձնավորութեան մի կերկրորդ նամակ է ուղղում՝ որ նույնպես պահված է Ընմիածնի Պետարխիւում (№.3421), գրված նմանապես Փարիզից 1818 թ. ապրիլի 16-ին։ Այդ գրութիւնը հետևյալն է. —

«Ի 8 ամսոյս գրեալ զյանձնարարական նամակ առ խոհականութեան Ձեր՝ եառ առ պրն. ծօպերն, այն՝ որ կերթեմն ի Պարսկաստան եւ գալ այժմ եւս յայդոսիկ կողմանս հրամանաւ կառավարութեան. ի պատս վաճառական եւ գիտնական գործոց։ Ասելոց է սա ընդ Սրբազանին մերոյ առ ի հաստատել զսէր եւ զիրաւութիւն անվտանգ բարեկամութեան. ի մէջ Գաղղիոյ եւ ազգին Հայոց եւ Աբգարոյն մերոյ, յիրս վաճառականութեց. եւ գիտութեց։ Յառաջարկելոց է նաեւ, եթէ հաճելի թուիցի Ձեզ առաքել ասա ի Փարիզ զկէթ զճ հայազուն մանկունս առ ի ուսանել զամ. ազգ գիտութեց. ի Թգերկն. դպրոցս.....»։

Ծորերի ուղեգրութիւնը հրատարակված է Փարիզում առաջին անգամ 1821 թ. և ապա 1860-ին (?)։ Մեր տրամադրության տակ ունենք կերկրորդ հրատարակութիւնը, Սեդիլոյի հառաջաբանով, որով տալիս է ծորերի կենսագրութիւնը։ Այդ ուղեգրութեան խորագիրը հետևյալն է. —

P. Am. Jaubert. «Voyage en Arménie et en Perse, Fait dans les années 1805 et 1806) Précédé d'une notice sur l'auteur, par M. Sedilot, membre de la Societé Asiatique, etc. Paris. (տպագրութեան թվականը նշանակված չէ, սակայն առաջաբանում հիշատակվում է 1859 թ., հետևաբար գործի հրատարակութիւնը այդ թվականից հետո պետք է լինի)։

ԴԵՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԳԼՈՒԽ Ա.*

Հեղինակը մեկնում է Կ. Պոլսից յեվ անցնում Սեվ ծովը. — Ցամաք է իջնում Տրապիզոն. — Նեղութիւններ՝ վտոնց յեվրոպարկվում է. — Ճանապարհորդութիւն շարունակութիւնը. — Երզրում. ժամանումը. — Ցնախատեսված հանդիպում, վորտեղի յե ունենում այս հաղորդ.

... Բավական նեղութիւններով և վոր յես և ընկերներս անցանք կովկասի այն մասը, վորը բաժանում է Երզրումի փաշայութիւնը Տրապիզոնի սահմանից։ Մեր ճանապարհի վրա պատահած բոլոր կամուրջները քանդված ու գյուղերը թալանված էին ապստամբների կողմից[1]։ Հունիսի 18-ին հասանք Կոջահ-Պունար (Codjah-Pounhar) Երզրումից մոտ յոթ մղոն հեռավորութեան վրա մի փոքր գյուղ։ Նախագուշութիւնները կրկնապատկելով, իբրև տեղավորեցի յեզներից լծված յերկու արաբանների վրա (մի տեսակ սայլ)։ 19-ին, մայրամուտին մեկնեցինք դեպի քաղաքը, վորպեսզի դիշեր ժամանակ հասնենք այնտեղ։ Իմ առաջնորդը վստահացնում եր, թե Երզրումի բնակիչները վերին աստիճանի մոլեռանդ և անհանդուրժելի մարդիկ են և ինձ հանձնարարում եր իր տեղական հայրենակիցներից, հայերից, կասկածոտ լինել, և նրանց մասին բավական աննպաստ եր խոսում։

Երզրումից յերեք մղոնի վրա գտնվող առաջին ժամքանան գործակալների այցելութիւնը այնքան էլ խիստ չեր։

* Jaubert էջ 6—14։

Մի վոքը հասուցումով ազատվեցի և Յեփրատի կամուրջը անցա առանց վարևի խոչընդոտի կամ դիմադրության։ Քաղաքում մուտք գործելիս ավելի բախտավոր եյի։ Փաթաթված մի թանձր մուշտակի մեջ և գլխիս կիսով չափ ծածկած խոշոր ապարոշի (սապրք) մեջ, ընկողմանած եյի սայլերից մեկի մեջ փռված թաղիքների վրա, որոնք ծածկում եյին իրերը։ Դարբասի պահապանը ինձ ընդունելով հիվանդ մի մուսուլմանի տեղ, վախեցավ ինձ անհանգստացնելու։ «Ձեզ բայը, ասաց, կերևում է որ առատապես ես։ Դուքն վիրավորված լինես։ Գնա, շաբաունակիր ճանապարհդ և թող կերկնքի օրհնությունները քեզ հետ լինեն»։ Հասնելով Դերվիշ ագա խան կոչված կարվանսարայը, Պարսկաստանի մասին տեղեկություններ առացա։ Լսեցի որ արքունիքը գտնվում է Թավրիզում, ուր կարող եյի հասնել առանց մեծ ծախքի կամ առանց վնաս որևէ։ Հետևաբար ցանկանում եյի երկրամիս մնալ շատ կերպով, սակայն իմ երբ կառավարության գործակալները Պարսկաստանի սահմանագլխի վրա վերին աստիճանի կասկածոտ են։ Մաքսատան վերակացուն, որին իմ հայ առաջնորդը ներկայացրել եր՝ որպես չափազանց խիստ մի անձնավորության, հրամայեց որ ես հսկողության տակ մնամ, պարտիկ վաճառականների վերարերմամբ ընդունված սովորության համաձայն։ Առավոտյան ադեքիս քիչ հետո ինձ կանչեց։ Ես նրան գտա գրպված գրելով։ Ծպտուն տետրով մի կերևոսասրդ եր, Ամենք բնկ անուշով և համարում եր խիստ հարուստ։ Ես նրան սկսա (վողջույն) ավի արաբերեն. ուշի ուշով ինձ նայեց և ասաց. «Ես գիմքը լինձ անծանոթ չե. կարծում եմ մի վորևե տեղ պատահել եմ։ Արդյոք Բաղդադում, Յերուսաղեմո՞ւմ, թե սուրը քաղաքի կարավանում։ Բայց վոչ, սխալվում եմ. Յեգիպտոսումն եմ տեսել, կերը ֆրանսացիք գրավել եյին այդ նահանգը»։ Ամեն մեղը բոլոր ներկաներին նշան արեց դուրս գնելու, և կերբ մենակ մնացինք, կրկին անգամ սկսեց ուշադիր զննել և զարմացմամբ ինձ ասաց. «Դու ֆրանսացի ես. ի դուր մի աշխատիր ժխտել։ Ի՞նչ գործ ունես այս կերկրում։ Զգուշացի

թե բացի ինձնից ուրիշներն ես կարող են քեզ ճանաչել։ Մոռացել ես այն անողոք ատելությունը, որ տածում ենք դեպի քրիստոնյաները և չգիտես թե մոտ հարյուր տարի չե, որ վոչ մի կենդանացի չի մտած այս կերկիրը։ Սակայն ինձնից բնավ մի վախենա. ես բարեկամ եմ քո հայրենիքի։ Ատելություն չեմ անում։ Անձեռը ապերախտ չե. իր ատացած լավությունները միշտ կենդանի կեն իր հիշողության մեջ»։ Չնայած որ ես սովոր եյի գժվարին հանգամանքներում իսկ արևելյան ձևով հանդարտություն պահպանել, ինձ անհնար եղավ չարտահայտել իմ զարմանքս։ Մաքսատան վերակացուն նկատելով այդ, ասաց. «Իմացիր թե ինչ դիպվածով քեզ ճանաչեցի։ Մանկության ուսուցչությունից վերադառնում եյի, կերբ ֆրանսացիները գրավեցին Յեգիպտոսը։ Կամենալով վերադառնալ իմ կերկիրն առանց անցնելու Սվեզից, որ դրավել եյին, Ջեդդայում նավ նստեցի մյուս ափը գնալու համար։ Կոսեյրում (Cosséir) ցամաք իջա նավից և այնտեղից գնացի Կենե (Keneh) անցնելով ընդարձակ անապատների միջից։ Ինձ վատահեցրել եյին և ես շատ հեշտությամբ հասղված եյի, թե ֆրանսացիները անդիմադրելի կերպով կռվում են բոլոր մուսուլմանների հետ, մասնավորապես իմ հայրենակիցների՝ ռամանդիների դեմ։ Յես հարմար գտա նրան ծպտվել, ինչպես դու ինքդ ես արել։ Ինչքան մեծ չեղավ զարմանքս, կերբ կրկին տեսնելով Սայիդի (Saïd) գեղեցիկ հովիտը, իմացա որ այնտեղ կառավարում եր Նեղոսի ջրերի նման բարեբար մի մարդ (Դեսնեբալ Դեզե, Desaix)։ Նրան ավել եյին սուլթան եվ ասել (արդարադատ) մականունը։ Միանգամայն ազատով, ես վոչնչով ճամբորդել գետով։ Քամին մեր նավին հակառակ ուղղությունն ունենալով, ես և ընկերներս ամեն նավեցինք Մանֆալութի (Manfalouth) մոտ, ամայի մի տեղ։ Քիչ հետո Աբարդի արաբները մեզ վրա հարձակվեցին և կողոպտեցին։ Ամեն ինչ կորցրած ճանապարհվեցինք դեպի Կահիրե, հույս ունենալով այնտեղ ոգնություն գտնել։ Սակայն, դժբախտ մարդիկ, կերբ համբյա մերկ վիճակում հասնում են շքեղ մի քաղաք, այնտեղ հազվագյուտ և բարեկամներ գտնել։ Այդ դառն փորձը

պատճինք և կահիրեյում մենք ֆրանսացիներից ավելի ուսուցական եյինք։ Յեզիպտոսը կառավարող զեներալներից մեկը, լսելով մեզ հետ պատահած դժբախտության մասին, մեզ կանչեց և ասաց. «Ուխտավորներ, մենք ձեզ հետ չենք պատերազմում. վերադարձից եք, ուր եք գնում. ինչպիսի կարիքներ ունեք։ Այդ դու եյիր, շարունակից Ահմեդը ժպտալով, որ այդ մխիթարական խոսքերն ասացիր։ Մենք զարմանքից լուռ մնացինք. դու պետք է հիշես այդ։ Մեր հավատքը դանդողներից ի զուր հաց և ապաստան խնդրելուց հետո, բոլորովին չեյինք ապատում մի անհավատի, քրիստոնեայի կողմից, այդպիսի բարեացակամություն։ Մեզանից մեկը պատասխանեց, թե մեր ծրագիրն եր գնալ Կ. Պոլիս, անցնելով Կրետե կղզուց։ Մեզ ավելն մի նավակ, զրամ, կենսամթերք և հանձնարարական նամակներ Դամիեթի վրա, ուր մեզ սիրալիր ընդունեցին և նավ նստանք դեպի Ակր։ Այստեղ տեսանք Ջեզար փաշային (Djezzar-Pacha), որ մեզ հարցրեց թե ինչ կարծիք ունենք ֆրանսական բանակի մասին։ Մենք չվախեցանք ծանոթացնելու փաշային, նրա ամբողջ ուժը։ Յերեք տարվա բացակայությունից հետո, վերստին տեսա Կ. Պոլսի պարիսպները և կրկին գտա իմ հարեմին ու բարեկամներին։ Այդ ժամանակից հետո չես մեծ հարստություն ձեռք բերի. իմ ստացած բարիքները ինձ չերջանկացրին։ Մեկնիր, ուրեմն, չերը որ ցանկանաս։ Յեթե դու հարմար գտնես ճանապարհորդությանդ նպատակը ինձ վստահել, կաշխատեմ քեզ ոգտակար լինել։ Յեթե որոշած ես լսել պիտի հարգեմ քո գաղտնիքը և պիտի բավականանամ արտահայտելու իմ իղձերը, որ չերկինքը քեզ արագ վերադարձնորհն գնալ քո հայրենիքը»։ Յես նրան պարզապես պատասխանեցի, թե գնում եմ Յերևան՝ կատարելու մի կարևոր ուխտագնացություն և առևտրական գործեր։

Այստեղ հիշատակված ճառից հետո, Ահմեդ պանդպան ֆրանսացի զեներալների մասին ինձ տեղեկություններ հարցրեց, որոնց մասին Յեզիպտոսում լսել եր։ Խիստ մեծ վիշտ արտահայտեց, չերբ չես նրան հայտնեցի զեներալ

Կեսի մահը, կանչեց իր մարդկանց՝ իմ մասին մի քանի հրամաններ տալու համար և ինձ խորհուրդ տալ չերկար չմնալ Երզրումում։

Մաքսատան վերակացուի մոտից վերադարձին քարվանսարայը լցված գտա ամեն ազգի վաճառականներով՝ արաբ, հայ, թուրք ու պարսիկ։ Կային նաև մի քանի վահաբիներ, պաղտդավորներ, որոնք Մուհամմեդին չերբեք չեն ընդունում որպես մարգարեի, այլ որպես մի իմաստուն մարդու և որոնք հարգում են թե Մովսեսին, թե Հիսուս Քրիստոսին և թե Ալիին։ Այս ուսարականների ընկերակցությունը ինձ մշտական չերկյուղի մեջ եր պահում, սակայն նրանց խորամանկությունից և հետազոտությունից կասկածելուս պատճառով, ձևացնում եյի թե նրանց տեսնելն ինձ հաճելի չեր։ Մի քանի որ անց կացրի փոխադրական միջոցներ ձեռք բերելու համար. ծառայության վերցրի մի չերկրորդ հայի և երը պատրաստությունները վերջացան, վերադարձա Ահմեդի մոտ, որն ինձ սիրեց ընդունել ի նշան բարեկամության, թաթարական ազնվացեղ մի ձի։ «Շտապիր մեկնել, ասաց ինձ, ոգտվիր գիշերվա մթությունից։ Այս չերեկո զրամի ուժով քարվանսարայի դռները բաց անել տուր. դա այնքան էլ դժվար չե. չես էլ իմ կողմից քաղաքից դուրս գնալու միջոցները կհեշտացնեմ քեզ համար. (փաշան քաղաքից բացակայում եր)։ Կես գիշերին գնա Թավրիզի դարպասի մոտ. այնտեղ կգտնես իմ մարդկանցից մեկին, որ բաց կանի դարպասը, և դու առանց արգելքի կանցնես։ Թող չերկնքի որհնությունները ամեն տեղ քեզ ընկերանան»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Սա վերաբերում է այն ընդհանուր ապստամբության, որ Ֆեոդալ տերերի կողմից սկսված եր տասընինների դարի սկզբնավորության, Ոսմանյան Սուլթան Սելիմ Գ-ի (1789—1807) բարենորոգչական ձեռնարկների դեմ։ Ֆրանսական բուրժուական հեղափոխությունը իր ազդեցությունը գործել եր նաև Մերձավոր Արևելքի ժողովուրդների վրա։ Սելիմ Գ. կբենած

առևտրական դասի վրա՝ փորձեց վերակազմել օսմանյան պետականությունը. գլխավորաբար կոչով հայտարարելով դերվիշների (ազատապետների) և ֆեոդալական բանակի դեմ, ինչպես յենիչերիների, սպահիների և զինվորական այլ կարգերի դեմ։ Սուլթանի բարեկարգչական իրագեծ հայտնի և Նիզամ-ի-ջեդիդ անունով և նրա կազմած կանոնավոր բանակը կոչվում է Նիզամ, որ մարզված եր Ֆրանսացի սպաների դեկավարությամբ։ Նա կատուցեց զորանոցներ և հիմնադիրը յեղավ կամ վերակազմեց զինվորական ու նավային վարժարաններ։ 1805 թ. Սելիմ Գ-ի Շերիֆը հրովարտակով հայտարարեց ընդհանուր զորակոչ Նիզամի բանակը զորացնելու համար։ Սա ընդհանուր ապստամբություն հրահրեց ֆեոդալ տարբեր ուլեմանների (կրոնավորների) և յենիչերիների կողմից, որ ավելի զորավոր եր յեվրոպական Թուրքիայում, քան Փոքր Ասիայում։ Մասնավորապես ուժեղ պայքար եղավ մղում Ռումելիայում մեծ ֆեոդալներ Փազվան Ողլու և Յանիայի Ալի փաշաների դեմ։ Այս շրջանում եր որ ժողովուրդները անցնում եր Փոքր Ասիայից և ականատես եր լինում ընդհանուր տակնուվրայության։ Ի վերջո ֆեոդալ տարբերը հաղթանակ տարան և 1807 թ. մայիս 2-ին Սելիմ Գ. գահազուրկ յեղավ ու մի տարի հետո 1808 թ. հունվիս 28-ին գլխատվեց, այն պահուն, յերբ նրա կուսակիցները հաղթանակում և սուլթանական պալատը մուտք եղին գործում։ Նրա հաջորդ Մահմուդ Բ. շարունակեց այդ պայքարը և հաղթանակեց բնաջնջելով յենիչերին և բազմաթիվ ֆեոդալ կալվածատեր փաշաներին։ Այս շրջանի պատմության լավագույն ապրյուրն և ժամանակակից պատմագիր Մուրադջա դ'Ոհսոնի աշխատություններ։ Հեղինակը Պոլսի Շվետական դեսպանության թարգմանն եր և ապա 1796—1799 թ. դեսպանը։ Տես, Mouradgea d'Ohsson, «Tableau de l'Empire Ottoman», Paris, 1788 և 1820. Thornton, «Etat actuel de la Turquie», Paris, 1812. Jorga, «Geschichte des Osmanischen Reiches», Gotha 1913. V. 77—181:

ԳԼՈՒԽ Բ.*

Երզրում.—Մեկնում այս քաղաքից.—Կողոպտված յեվ սպանված ճանապարհորդներ.—Քյոսե-Դաղ, Կարա-Քիլիսա.—Ճեփրասի յերկու ափերի բարեբերությունը.—Այդ գետի գլխավոր ակունքը.—Արարատ լեռան տեսքը.—Երզ-աբ.—Այդ գյուղի հյեհիայի դավանանությունը.—Բայազիդի փաշան ուղարկում է ձիավորների մի խումբ հեղինակին դիմավորելու.—Բայազիդ ժամանումը:

Երզրում անունը բազկացած է Երզ կամ Արզ բառից, վորը գործ է ածվում Հայաստանի շատ քաղաքների մեջ և Ռում մակդիրից, վոր նշանակում է հռոմեական։ Այս քաղաքը, վորի բնակչությունը յոթանասուն հազար հոգի կա[1], վոչ մի նշանավոր շինք չունի. ով տեսել է թրքական մի քաղաք, կարող է գաղափար կազմել մյուսների մասին, բացի Կ. Պոլսից։ Ափրիկեի Տրիպոլիսը և Դանուբի վրայի Իսմայիլովը միայն Սփրիկեի Տրիպոլիսը և Դանուբի վրայի Իսմայիլովը մուսավորապես նույն յերևույթն ունեն։

Ամեհի բևեր ընձեռած փախուստի միջոցը հաջողությամբ պսակվեց։ Հունիսի 29-ին, որվա վերջին, արդեն Երզրումից հեռացած եյինք։ Այդ քաղաքի վրա իշխող լեռների գագաթը հասնելով, շարունակեցինք մեր ճանապարհը, կարծելով թե այլևս վախենալու վոչինչ չկա, սակայն մեր ապահովությունը յերկար չտևեց։ Շուտով պատահեցինք հայերի, վորոնք թալանված եյին և վորոնք մեզ հաղորդեցին քուրդերի ձեռքով սպանված յերկու ճանապարհորդի մասը։ Վերջապես, վորոշ հեռավորության վրա կային քարեր, վորոնք վոչ թե ցույց եյին տալիս ճանապարհը, այլ սպանության կատարված վայրերը։

* Jaubert, էջ 15—25.

Անցնելով Արաքսը կամ Արագը, Հասան-կալեյի մոտ, նկատեցինք ձիավորների մի խումբ, որ դեպի մեզ էր գալիս։ Այդ խումբը մոտեցավ մեր ինքնաթիռները ուսումնասիրելու համար, հետո յուր քաշվեց, հավանորեն [վախենալով] մեզ ընկերացող Բ. Դռան թաթարի ներկայությունից, (որ ճանաչվում էր իր սև և դեղին գլխի փաթաթոցով)։ Մենք շատ առաջ եկինք շարժվում, որքան հնարավոր էր մեր հոգնած ձիերով, յերբ հովխից մի շրջան եկինք կատարում, մեր փոքր կարավանի թվի չափ քուրդերի մի խմբի պատահեցինք։ Նրանք մեր մոտից անցան, դաժան հայացքով դիտելով մեզ, առանց վրաներ մի խոսք արտասանելու։ Մենք չվախեցանք, իսկ նրանք հեռացան մեզնից։ Նրանց դեմքից մենք ճանաչեցինք վոր յեզիդիներ եյին, մի ցեղ, որ ասում են թե պաշտում է սատանային, և որոնց վարդապետությունը ատրասի և ներշնչում արաբներին, թուրքերին և մանավանդ պարսիկներին։

Քուրդերը ճանապարհորդների վրա հարձակում են միայն առավոտյան կամ մայրամուտին։ Յերեկոյան նրանք մեծ թվով սկսեցին յերևալ բլրակների գագաթի վրա։ Մեր սարափահար առաջնորդները թողին ճանապարհը և շտապ մտան մեկուսացած մի խոր հովտի մեջ։ Հայ առաջնորդը, որ լեռների բոլոր անցքերին ծանոթ էր, մեզ տարավ դժվարին արահետներով մինչև մի վտակի ափը, որ ոձապտույտ անցնում էր ծաղկազարդ մարգագետինների միջից և ձևացնում մի թևերակղզի։ Սեպաձև ժայռեր և անթափանց մուտքով մի քարայր, մեզ հույս ներշնչեցին, թե այս նահանջը մեզ կարող էր ավազակների հետապնդումից ազատել։

Հանգստությունը, դիշերային խաղաղությունը և բուռնավետ տունկերի անուշահոտությամբ լցված ոդի զովությունը՝ այս ամենը հրավեր եյին կարդում հանգստի, սակայն շրջապատված լինելով անհագ թշնամիներով, մեզ անհնարին էր քնել։ Բայց և այնպես մեր ձիերի վրայից կապոցները վերցրինք և նրանց ազատ թողինք արածելու։ Դիշերին մեր մարդկանցից մեկը, անշրջուկ գնացել էր ձիերին հավաքելու և բերելու։ Մթության մեջ նրան քուրդի տեղ

ընդունելով կարաբիններից կրակեցինք նրա վրա, վորից բարեբախտաբար նա չվիրավորվեց։ Վախենալով մեր նահանջը հայտնաբերել, իսկույն ևեթ ճանապարհ ընկանք. արևածագին հասանք Բեռսե-Դաղի* (անմազ լեռ) ամենաբարձր գագաթը։...

Կարծելով թե պետք է Թոփրակ-կալեյից[2] (Toprac Caleh) խուսափել և մոտենալ Ձեփրատի մեծ ճյուղին, գիշերեցինք Ղարաքիլիսե[3], հայկական մի գյուղ, ուր մեզ լավ ընդունեցին։ Տեղացիների հետ ունեցած խոսակցություններից պարզվեց, վոր հակառակ այն գովասանքներին, վորոնք իմ խոսակիցները վախից արտահայտում եյին, Բայազիդի փաշան, վորի տիրապետության սահմաններից պիտի անցնեյինք, անարդար և անգութ մի մարդ էր։

Վոչ Ձեզիպատոսում և վոչ այլուր յես չեմ տեսել այնպիսի բարերեր հող, ինչպիսին է Թոփրակ-կալեյի շրջակայքը և Ձեփրատի յերկու ափերը Ղարաքիլիսեյից մինչև Դիադին[4] (Diadin), սակայն այնտեղ ծառեր բոլորովին չկան** Հայերը դա վերագրում են առատ ձյան և ծովի մակերեսից խիստ բարձր լինելուն, (ավելի քան 1500 գրկաչափ)։ Բնակիչները սահիկաված են վորպես միակ վառելիք գործ ածել կովի թրիք, պլլուսաձև կտրված և արևում տակ չորացրած։ Յերանի թե այս անպատեհությունը վաթարագույնը լիներ այն բոլորից, վորոնց յենթարկված են իրենց թշվառության մեջ։ Ձերկրի կլիման շատ առողջարար է։

Հունիսի 3-ը անցավ առանց վորևե նշանակալից դեպքի։ Պատահեցինք մի քանի քուրդերի, նույնպես մի մարդու, վոր

* Հին հայկական անունով՝ Սուկավետ։

** Երզրումի շրջակայքը ընդհանրապես ծառերից զուրկ է և թեպետ ղալար ու բաբերեր, այն դաշտերը ուր հոսում են Ձեփրատը և Արաքսը իրենց ընթացքի այս մասում, չափազանց մերկ յերևույթ ունեն։ Այս նկատությունը չեր վրիպել նաև նախնիքներից։ Պլուտարքոսի մեջ արդեն կարդում ենք. «Որքան վոր Ասիայի բարձր նահանջները չունեն վոչ բարձր և վոչ յերկար ծառեր» և այլն։ Տես նաև Հայկ Խալֆա, հիշատակված պ. Մալդե Բոխոնի «Համառոտագրություն համաշխարհային աշխարհագրության» մեջ, հատ. III. եջ 103. (ծանոթ. ժողովի)։

ծնկին կպցրած եր մի տեսակ փոքր զանգակ և այդ նշանից իմ առաջնորդը ճանաչից թե նա փաշայի սուբհանդակն եւ

4-ի առավոտյան տեսա Արարատ լեռը, որի ձյունապատ գագաթը գծագրվում եր մյուս լեռների վրայից։ Յեփրեկյան ժենք հասանք Յեփրատի գլխավոր ակունքին, որ յերկրի տակից հաղիվ դուրս յեկած, վեհորեն թավալում եր իր ջրերը ընդարձակ և խոր ժի հովտում։ Ժբախտարար այդ հովիտը յենթարկված և քրդերի ասպատակություններին։ Ի դուր հողագործը այնտեղ սերմեր և ցանում. հունձքը խլում են չհասունացած։ Նա ստիպված և լքել այդ դաշտերը, փախչել ընտանիքով և հոտերով, ազատվելու ավազակների կատաղությունից և նահանջում իշխող փաշաների հարստահարութիւններից։ Այսպես, այդ ժբախտ յերկրում գոյութիւն չունի վոչ հայրենիք, վոչ ապահովութիւն, վոչ հանգիստ։

Գետի աջ ափին բարձրանում և քրիստոնյաների մի վանք, որի բարձր պարիսպները և հնագույն աշտարակները հեռվից տեսնելիս, ամրոցի տպավորութիւն և թողնում։ Այնտեղ ապրում են մի քանի բարեպաշտ անապատականներ, որոնց աղքատ վիճակն իսկ մինչ չի ապահովում հարձակումներից։ Գիշերը յերեկ փակված այդ պարսպներից ներս, իրենց կյանքը անցնում են աղոթքով։ Յեթե, որևե ճանապարհորդ ներկայանա, պարսպի վրայից գցում են պարանի մի սանդուխ, որի միջոցով կարելի յև մտնել այդ բնակավայրը և նրան տալիս են մի քիչ հաց և կաթ, մինակ մեծերը որ նրանց հայթայթում և հավատացյալների գթասրտութիւնը [6]։

Մեր ձիերը յերկար ճանապարհից ուժասպառ, համրաբար առաջանում եյին։ Վախենալով որ հարձակման դեպքում մեզ անհնար լինի առավելագույն չափով պաշտպանվել և կամ արագ կերպով փախչել, վանքի մոտ կանգ առինք։ Շրջակայքում տիրող լռութիւնը և հրկիզված ու լքված բազմաթիվ գյուղերի յերևույթը, իմ մեջ ներշնչեցին ամենահասու խորհրդածութիւններ։ Յեթե նախապատրաստվել նրանց հավատացող լինեյի, պիտի կարողանայի նախատեսել այն սարսափելի ճակատագիրը, որին ինձ վերապահված եր

Յես համարյա մենակ եյի, հազար հարյուր [?] մղոն հեռու, ավազակներով վխտացող, մի յերկրում։ Բայց, ինչ եյ լիներ նրանց կատաղութիւնը, վորոշել եյի արհամարհել ամեն ինչ, կատարելու համար այն առաքելութիւնը, վորի արդյունքները կարող եյին Ֆրանսիայի համար ոգտակար հանդիսանալ։

Արևի ճառագայթների տապը և դժվարին մի ճանապարհորդութիւնը սպառած լինելով մեր ուժերը, Յեփրատի մեջ լողացինք. հետո գիշերը անցկացրինք գետի ափում գտնվող մի գյուղակում։ Այդտեղ նկատեցի վոր իմ պարսկական տարազը բավական չեր իմ ծպտման համար, ուստի հայկական տարազներ վերցրի։ Հետևյալ որը արևածագից առաջ, ճանապարհ ընկանք, նույն որն ևեթ Թուրքիայի սահմանները անցնելու հույսով։ Յանկանալով բայազիդից խույս տալ գնացինք զարտուղի արահետներով։ Թողնելով այդ քաղաքը յերկու մղոն դեպի աջ, առաջացանք դեպի Արարատ լեռը։ Հանդիպելով Արզ-աբ [6] (Arz-ab), հայկական մի մեծ ավան, բոլոր դռները փակ գտանք։ Կանայք տների կտուրների վրա եյին. մեր մոտենալուց սարսափահար, սոսկալի աղաղակներ արձակում և աղերսում եյին հեռանալ։ Մենք պատրաստվում եյինք տեղի տալ նրանց թախանձանքին, յերբ ալեվոր մի ծերի, որը քահյան եր կամ գյուղի ավագը, այդ աղմուկի վրա յերևաց, բարկացավ այդ կանանց վրա և հրամայեց նրանց հեռանալ։ Մեզ հրավիրեց իր մոտ և ասաց. «Բարի գալուստ, հանգստացե՛ք այստեղ մինչև արևի մայր մտնելը։ Այս յերեկոյան, վորովհետև այս յերկրում լավագույն և գիշերով ճամբորդել քան ցերեկով, մենք ձեզ կտանք, լեռան վրայից անցնելու համար, վստահելի առաջնորդներ և հավատարիմ ուղեկիցներ։ Սիրելիների մեծավորը, Աբդուլլահը, վորի հանդգնութիւնը և ուժը համբավոր է ամբողջ Հայաստանում, այստեղից յերեք փարսախ հեռու յե։ Լեռան անցքին տերն ու տիրականն է, և վորովհետև այս բոպեիս վաշա նվիրնդիի հետ նա կռվի մեջ է, Բայազիդից Յերեվան գնացող բոլոր կարավանները ձերբակալում է։ Այդ ապստամբը ցորեկը

անցնում է շրջակայքում թափառելով. այս առավոտյան մեր դյուղին էր մոտեցել, մի հրացանի հեռավորության վրա. յերեկոները նրա կայանն են տանում թալանված հոտերը և ուրիշ ավարները, և նրա վրանն են բերում սարկուհիներ, պարուհիներ ու յերաժշտուհիներ, վորոնք ամեն տեղ նրան հետևում են։ Այսպիսի դեղխության մեջ նա անց և կացնում գիշերվա մի մասը։ Դուք պետք է խուսափեք նրան հանդիպելուց և իր կայանի շրջակայքից անցնեք այն ժամանակ միայն, յերբ ինքն ու իր մարդիկը խոր քնի մեջ թաղված լինեն»։ Ալիվոր քահանան այս խոսքերից հետո, կաղամախիներով հովասուն մի բակում բերել տավ փսխաթներ, գորգեր, ջուր, կաթ և բրինձ։ Մեր կորցրած ժամանակը թանգ եր, և այս հայի կարծիքը, ինչպես նաև իմս այն եր, վոր մենք ամենակարճ միջոցում մեկնենք Արզ-Արից։ Գիշերն սկսելու ժամանակ յես արթնացրի իմ մարդկանց, վորոնք քնել եյին։ Իրերը բարձել տվի և գնդքերս վերցնելով պատրաստվեցի մեկնելու։ Դուռն շեմքին հասնելով տեսա, վոր քյահյան գալիս և դեպի ինձ, մի խումբ զինված գյուղացիների հետ։ Կրկին անգամ ուզեց ինձ պահել ավելորդ պատրվակներով, բայց տեսնելով վոր այդ միջոցառումները ապարդյուն եյին անցնում, ասաց. «Լավ, վորովհետև դուք ցանկանում եք, ուրեմն պետք է ձեզ հայտարարել. այս տեղից դուրս չպետք է յելնեք։ Մահմուդ փաշան տեղյակ է ձեր անցքի մասին. սպասեցեք նրա հրամաններին և մանավանդ ավելորդ դիմադրություն ցույց մի տաք»։ Միանգամայն ինձ վրդոված ցույց չտալով, այնպես ձևացրի իբրև թե համամիտ եմ այդ դավաճանի հետ, և ասացի թե նա միայն ինձ նախազգուշացրել եր, և իմ մտադրությունն եր դնալ վողջունել փաշային։ Շարունակում եյինք խոսել, յերբ տեսա աստճանակներով և դաշույններով զինված և ցնցոտիներով ծածկված յոթը ձիավորներ ևս։ Սարսափ ազդող յերևույթ ունեյին նրանք և նրանց հայացքի մեջ անհագություն կար։ Բոլորը նստեցին շուրջս և առանց վորևե խոսք ուղղելու, սկսեցին իրենց ծխամորճերը վառել։ Մինչև մի քառորդ ժամ

նրանց ազան, վորը ուշադրությամբ զննում եր ինձ, արհամարհական ձևով, վերջապես բաց արեց բերանը և հարցրեց թե ով եմ յես և ինչ նպատակով եմ կատարում իմ ճանապարհորդությունը. «Ինձ պետք է տեղակացրած լինեն, պատասխանեցի նրան, յես հայ եմ։ Գալիս եմ Կ. Պոլսից և գնում եմ Յերևան կրկնակի ծրագրով՝ ուխտավորություն կատարելու և յերեք յեկեղեցիների [Եջմիածին] պատրիարքից պահանջելու ինձ հասանելիք մի գումար»։ Ազան, ջանալով ինձ վստահություն ներշնչել, կակղեց և հրավիրեց հանգստանալ։ «Այս թեթև հապաղումը, դուցե և ձեզ նպաստավոր լինի, ասաց նա։ Արշալույսին կգնանք Բայազիտ. մեր տերը ձեզ լավ կընդունի և դուք կազատվեք ավազակներով վխտացող մի ճանապարհի վտանգներից»։ Այսպես խոսելուց հետո, ազան վեր կացավ և մեկնեց։ Ընկերակիցները հետևեցին նրան և փակեցին մեր դռները և ուշադիր կերպով հսկեցին ամբողջ գիշերը։ Այդ րոպեյից ոգավեցի քանալու համար իմ պայուսակները և դուրս հանելու պարսից արքունիքին ընծայելու համար հատկացված դոհարեղենները և իմ թղթերը, վորոնք դժբախտաբար մոտս եյին։ Յես նրանք թաքցրի իմ լայն զգեստների մեջ. ամապարանքով մի տոմս գրեցի յերեք յեկեղեցիների պատրիարքին, տեղեկացնելով նրան ինձ պատահածի մասին։ Հազիվ վերջացրել եյի գրել, յերբ հանկարծ ձրագը հանգավ, մի պատահար, վորը թաթարը և հայը համարեցին վորպես չարաբաստիկ մի դուշակություն և նրանց սարսափը ավելացրին։

Արևածագից մի ժամ առաջ Արզ-Արից մեկնեցինք շատ կասկածելի մի պահակախմբով և շատ կանուխ հասանք Բայազիտ, մի քաղաք՝ կառուցված մի նեղ ձորի խորքում, լերկ լեռների մեջ։ Տները ցրված են ժայռերի մեջ, վորոնք յերկու կողմից յեզերում են կիրճը։ Ջախ կողմում, անմատչելի մի սրածայր ժայռի վրա, յերևում է մի հին միջնաբերդ։ Ս կողմը մի բարձունքի վրա բարձրանում է գեղեցիկ մի շենք, ուր բնակում է փաշան, վոր մեր գալստյան ժամանակ դեռ հարեմում եր և միայն կեսորին մեզ ընդունեց ունկնդրության։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ջեյմս Մորլեյը Երզրումի բնակչության թիվը համարում է յերկու հարյուր հիսուն հազար, բայց հայերից. վորոնց թիվը հինգ հազար ընտանիք և հաշվում: Ըստ յերևույթին ժողովրդի ամած թիվը, 70.000 հոգի, ավելի ճիշտ և և համապատասխանում և այլ տվյալներին:

2. Թովրաք-Կալե, Ալաշկերտ, տես, ծանոթ. 8 եջ 103

3. Ղարաքիլիսե կամ Կարակիլիսե, շրջան և ավան պատմական Այրարատի Բագրեւանդ գավառում: Նախապես մի փոքր գյուղ եր Քավրիզ—Երզրում կարավանի ճանապարհի վրա, սակայն անցյալ դարի կեսերին ընդարձակվից և դարձավ մի մեծ գյուղաքաղաք ու կառավարչական կենտրոն: 1860—70 թվականներին այնտեղ հաստատվեցին մի քանի բազմյուղ հայ առևտրականներ և գարկ տվին առևտրի զարգացման, այնպես վոր այդ շրջանում հայ բնակիչների թիվը բազմացավ, հասնելով մինչև յերկու հարյուր տուն 1878-ի ռուս թրքական պատերազմից հետո հայերի մեծագույն մասը գաղթեց Ռուսահայաստան: Սակայն, այնուհետև հայերի թիվը հետզհետե սակաբացավ Բագեշից, Բուլանըխից, Մանազկերտից և այլ տեղերից յեկվոր գաղթականներով: Թուրք կառավարությունը 1890—1891 թվականներին այնտեղ հաստատեց զորանոց և այնուհետև բնակչության թիվը ավելի բազմացավ: Դիրքը հիանալի յե, ոչնչ ամեն կողմից բաց տեսարան և առատ ջուր: Ներկայումս բնակիչները ամբողջությամբ թուրք են: (Տես, Բագրեւանդ 253—257):

4. Դիադին, Բայազիդից Երզրում ճանապարհի վրա գյուղաքաղաք: Բագրեւանդի Դիադին գավառի կենտրոնը, ուր նստում և կառավարիչը, վորի վարչության ներքո գտնվում են 160—165 գյուղ, վորոնցից 3—4 գյուղ նախապատերազմյան շրջանում գուտ հայաբնակ եյին, իսկ այժմ հայ բնակչություն չկա:

5. Բագավան կամ Ուչ Քիլիսե. տես ծանոթ. 10 եջ 103:

6. Արզ-ութ, պետք է լինի Արծափ բերդավան՝ Բայազիդից ավելի քան 19 կիլոմետր հեռու արևմտյան հյուսիսային կողմ, Ջինգելի լեռնահովտում, մի գետակի յեզերքը: Գտնվում և պատմական Այրարատի կողովիտ գավառում, հիշվում և առաջին անգամ Ջ. դարում, և ապա 643 թ. արաբական արշավանքների ժամանակ դիմադրել և արշավողներին: Վորպես ամուր բերդ Արծափը հիշվում և նաև ԺԵ. դարում: Համաշխարհային պերիպետիական պատերազմից առաջ ուներ 50 տուն հայ բնակիչ: (Տես Ալիշան, «Այրարատ» եջ 509—510):

ԳԼՈՒԽ Գ.*

Բայազիդի փաշա Մահմուդի բնութագիրը. — Առաջին տեսակցությունը. — Հեղինակին ուղղված նենգամիտ խոսակցությունը. — Ձերեվան ուղեկցելու համար, իբրեվ բե տալիս և մի պահակախումբ:

Բայազիդի փաշան, Մահմուդը յերեսուն, յերեսուն յերկու տարեկան մի անձնավորություն և. դիմագծերը ազնիվ և կանոնավոր, հայացքը խիստ, դեմքը սառն, և սիրալիր մի արտաքինի տակ թագցնում և նենգ ու սուր մի սիրտ: Ամբողջ նահանգում հայտնի յե իր նենգամիտ գործերով և անլուր անգթություններով: Ինչ չեն դեպքեր, յերբ թշնամի մի ցեղի հետ հաշտություն կնքելուց հետո, յերդումների հավատքի տակ պարապլուխներին բերել և սվել իր մոտը, վատահացրել անթիվ փաղաքշանքով, վոդոզել նվերներով, իսկ հետո անգութ կերպով նրանց կոտորել: Բայազիդ ժամանակիս, խնջույքի ժամանակ սպանել եր իր ռաղմիկ յեբիսասարդ հոբյեղբորվորդուն, վորի միակ հանցանքն եր ժողովուրդից սիրված լինելը: Վերջապես պատերազմի մեջ եր իր հարազատ յեղբոր՝ Իբրահիմ փաշայի հետ, վորի մասին քիչ հետո կխոսեմ:

Բացօթյա մի պատշգամում նստած, Մահմուդը իր սովորական չոր և սառն յեղանակով մեզ ընդունեց. նայեց իմ ունեցած ֆերմանին և դառնալով դեպի իր թաթարները պետը, ասաց նրան. «Այս բոլորն ինձ կասկածելի յեն թվում-

* Jaubert, եջ 26—30.

գնա և տես կարող ես ճանապարհորդին ընկերացող չենթադրյալ չենիչերիին։ Նրան առաջնորդ լինող հայկն այստեղ պահիր. իսկ ինչ վերաբերում է նրան [ժողովրդին], լեթե կուզենա, թող գնա քաղաքի մի քարվանասարայը»։ Դնացի այնտեղ, սակայն ծայրահեղ անհանգիստ դրության մեջ. Զնայած վոր զրկված եյի թաթարից և ինձ առաջնորդող հայկից, վորոշեցի իսկույն ևեթ ճանապարհ ընկնել։ Ձոեր ծրագիր։ Ձիերս փաշայի հրամանով բռնված եյին. բոլորը հեռանում եյին ինձնից, մանավանդ քրիստոնյաները, վորոնք վախենում եյին ինձ ոգնելու մեջ մեղադրվելուց և դողում եյին ինձ մոտենալու։ Ցես ինձ այնքան լքված զգացի քարվանասարայի մեջ, վոր անհնար եղավ մի կտոր հաց և մի փոխաթ ձարել քնելու համար։ Սակայն, փաշան զաղտնի կերպով հարցաքննել եր իմ թաթարին և առաջնորդիս։ Առջինը մուռուվման լինելով, հետը քաղցրությամբ եյին վարված. նրան սոխակել եյին նույն իսկ ինձ լքել, բայց նա մերժել եր։ Գալով հայկին, վորի հետ ակնածությամբ վարվելու վորևե պատճառ չկար և վորի մասին կարծում եյին թե իրագեկ և իմ ճանապարհորդության իսկական նպատակին, գցել եյին մի նեղ բանտի մեջ, առանձանքների ենթարկել, վորի ժամանակ խլել եյին մի քանի խոստովանություններ, և ի վերջո դժվելի Մահմուդի հրամանով խեղդել եյին մի վոճիր, վորի մասին տեղեկացա հետագայում։

Հետևյալ որը գնացի փաշայի մոտ, վորին շրջապատված գտա մոլլաներով և քուրդ ազաներով։ Ինձ ընդունեց մի քիչ ավելի դահլիճում, շատ ակնածությամբ և մինչև իսկ կեղծված սիրալիրությամբ. «Յերիտասարդ, ասաց ինձ, ես ուզում եմ բոլոր ճշմարտությունն իմանալ. վոչնչից մի վախենար, ասա ինձ թե ինչն և քեզ այստեղ բերել և վոր ես կերկրում սովորել ես մեր լեզուն. իմացիր վոր ես կարող եմ բռնությամբ ձեռք բերել այն, ինչ վոր քաղցրությամբ հարցնում եմ»։ Յերբ ես համառում եյի վոչինչ չխոստովանել. «Յերդվում եմ անմահի և մարգարեյի անունով, զայրացած տոնով գոչեց Մահմուդ, ամեն ինչ կիմանամ և հենց քո բերանից։

Դու քրիստոնյա ես, դու ծնած ես Յեվրոպայում. դու միայն Յերևան չես գնում, գնում ես պարսից արքունիքը և քեզ վրա կրում ես հարուստ ընծաներ և գուցե կարևոր նամակներ։ Պիտի հանդգնի՞ս ժխտել այն, ինչ վոր քո հայը հենց նոր հայտնաբերեց»։ Փաշայի յուրաքանչյուր խոսքը ավելացնում եր իմ անհանգստությունը և հուզումը։ Տեսնելով վոր արդեն մատնված եմ, հանկարծակի թողի դահլիճի անկյունը, ուր կանգնել եյի և շպրտելով սև վերարկուն, վոր ծածկում եր հայկական տարազս, ուղիղ գնացի դեպի Մահմուդը, վոր այս շարժուձևից սարսափած թվաց. «Վոչ, ասացի նրան իր կողքին նստելով, վոչ, այլևս վոչինչ չեմ ժխտելու, քանի վոր առորություն են ունեցել ամեն ինչ ասելու։ Ցես պատրաստ եմ վերադառնալ կ. Պոլիս. բայց, լեթե կարծում ես թե պետք է ինձ արգելես Պարսկաստան անցնել, մտածիր թե պատասխանատու կլինես այդ մեղքի համար։ «Կ. Պոլիս վերադառնա՞լ, — կեղծ ժպիտով հարցրեց փաշան։ Տերը թող քեզ ազատի այդ մտքից։ Դու չգիտես թե ըստ յերևույթին Բ. Դռան հպատակ, բայց իրոք Պարսկաստանի փաստիշահի ավատառու չես։ Մեթե կուզենայի անխնամատ մի ընթացքով նման հարևանի տհաճությունը հրավիրել ինձ վրա։ Մի յեվրոպացի գնում է նրա արքունիքը, նրան տանում է նամակներ, նվերներ և մեթե չես կհանդգնիր արգելք հանդիսանալ այդ քայլին։ Ի հարկե վոչ։ Ցես փառք կտայի յերկինքին, լեթե այս առիթով կարողանայի մեծ թագավորին իմ յեռանդն արտահայտել։ Ապահով յեղիր. հետու քեզ ձնասելու մտքից, յես քեզ ոգտակար կլինեմ և ձեռքերիս վրա կտանեմ ինչպես մի ծաղիկ՝ պաշտպանված քաղցրություններից։ Ցես յերջանիկ կլինեմ քեզ Պարսկաստան հասցնելով։ Գնա ուրեմն Յերևան։ Անցիր, լեթե ցանկանում ես, Պարսկաստանից և Հնդկաստանից, բայց վերադարձիր անպայման անցիր իմ նահանգից. շատ ուրախ պիտի լինեմ կրկին տեսնելով քեզ և նույն իսկ քեզ հանձնարարելով Կ. Պոլսի և Յուսուֆ-փաշայի հետ կարգադրելիք մի քանի գործերս։ Քեզ վորպես ուղեկից տալիս եմ իմ ամենահավա-

տարիս ծառաներիս. նրանք պատասխանատու կլինեն քեզ համար: Հույս ունեմ, որ նրանցից գոհ կմնաս, իսկ որպես իմ հոգատարության վարձատրություն, ինձ խույս տվիր մի շնորհ խնդրել. դա կլինի այն, որ վերջին վայրկյան հանելուց կերրեք Մահմուդ անունը չանիծես: Այս պիշեր խակ դու կմիանաս քո առաջնորդին»:

Յետ կերրեք չըմբռնեցի Մահմուդի խոսքերի կրկնակի իմաստը, և գնո ևս չգիտեցի թե ամենապզտկի նախատինքն որինակացնելու համար, քուրդերը հաճախակի գործ են ածում կերկդիմի արտահայտություններ: Ինչ որ փաշան ցանկանում էր, կերդումով կերաշխավորել տվի: Այն ժամանակ թողնելով իր ծանրախոհությունը և նույն խակ գորովալիր կերպարանք առանալով. «բարեկամս, — շարունակեց նա, — մի մոռանար փրկարար մի կարծիք. պարսիկները վորքան որ մեր մարդարեյին աշակերտներն են, սակայն մեզնից նվազ մուսուլման են: Ջունեն այն անկեղծությունը, ուղղամտությունն ու ազատամտությունը, վորոնք մեր հատկանիշն են: Քաղցրաբարբ կին, շոգոտրիճ, սիրալիր. ճիշտ և, սակայն այս հրապուրիչ ձևերի տակ, համարյա միշտ թաքցնում են պատասխ ծրագիրներ: Չգուշացիր առանձին ապավորություններից: Ասար կերկրում ամենախորամիտներից մեկը կաց և. և զգուշացիր պարսկին հավատալուց, նույն խակ կեթե քեզ ճշմարտությունը խոսի: Բացի այդ, կես պահանջում եմ քո ստրած բոլոր իրերի ճշդիւ ցուցակն ինձ ատաս. կես պատասխանատու կեմ նրանց համար: Հակառակ սովորության, այսուհետ վոչ մի նվեր չառաս. կես պետք և քեզ նվեր մատուցեմ, և քո վերադարձին քեզ անպայման հիշատակի մի նշան պետք և տամ»: Այս խոսքերից հետո, փաշան կանչեց Յասիլ անունով իր ադաններից մեկին: Իմ ներկայությամբ նրան հանձներ տվավ Յերևանի նահանգապետի վրա, նույնպես ինձ այդ քաղաքը տանելու հրամանը: Բացի այդ, նրան պատվիրեց հսկել, վոր ինձ հետ լավ վարվին: Յասիլ ադան ծնկաչոք ընդունեց Մահմուդի հրամանը, նրա

ընդազգեստի փոխանցքը համբուրեց և հրաժեշտ խնդրեց: Հետևեցի նրան և առանց խորհրդածելու թե այդպիսի հանկարծակի վորոշման փոփոխությունը ինչպիսի հետևանքներ կարող եր ունենալ, վճռեցի անմիջապես մեկնել:

ԳԼՈՒԽ Դ. *

Բայազիդից մեկնում. — Մի հուրդի յեզակի գործը. — Պահակախումբը սպառնում է.— Նրա հրամանատարի դավանությունը. — Հեղինակը ձերբակալվում յեվ առաջնորդվում է ամայի մի տուն. — Այնտեղ գտնում է փաշային. — Այս նոր տեսակցության մանրամասնություններ. — Նրան փակում են Բայազիդի միջնաբերդի մի գետնափորում:

Կես որից անց եր, յերբ Բայազիդից դուրս յեկանք. Հեռանալով այդ քաղաքից, ուրախությամբ ու սրտմտությամբ խառն մի զգացմունք ունեի. ինձ ընկերացող քուրդերը տեսնելով դեմքիս վրա յերեսացող անհանգստությունը, իմ ուղեկցի բացակայությունը և նրանց մեջ մենակ լինելս, ձիդեր եին թափում ինձ զրաղեցնել զինամարժություններով, վորոնք սովորաբար կատարում են ճանապարհորդության ընթացքին. Իրենց թաթարական ձիերին թռիչքներ եին կատարել տալիս իմ շուրջը, և իրենց փետրազարդ նիզակները արձակում եին հեռու. Ջանիցս ինձ հրավիրեցին մասնակցել այդ մարզանքներին. նույն իսկ նրանցից մեկը սանձը բաց թողած, ինձ մոտենալով և մեկ ձեռքով իր նիզակը բռնելով, մի ծաղկեփունջ մատուցեց ինձ և ասաց. «վերցրու այս ծաղիկները. նրանց վաղանցուկ փայլը կյանքի մի պատկերն է, մոտենում և նրանց թառամելու րոպեն շուտով կփչի անապատի քամին և նրանց թերթիկները ցիրուցան կանի. Սելիվանում[1] (Sélivan) [Սլիվան] *մեր ճամփորդությունը կտևի մոտ երեք ժամ. այնտեղ մենք կհանդիպենք մի ուրիշ քարավանի, վորը կգնա Վանի կողմը. Ես կուզեի, վոր դու ինձ հետ գայիր, վորովհետև ճանապարհը շատ անապահով է. Ես ունեմ հարյուր հոգի, վորոնք ինձ ուղեկցում են Վան, և ես կարող եմ քեզ ապահովել ամեն տեսակ պաշտպանությամբ»:*

Ես շնորհակալություն հայտնեցի նրան նրա առաջարկության համար, բայց ասացի, վոր ինձ համար անհնարին է ընդունել նրա առաջարկությունը, վորովհետև ես ստիպված եմ Բայազիդում սպասել մի ուղեկցի, վորին ինձ համար վարձել է տեղական իշխանությունը. Ես չեմ կարող նրան թողնել, վորովհետև նա ինձ հետ ունի իմ ամբողջ ունեցվածքը, և ես չեմ կարող վստահել նրան ուրիշի ձեռքը. Ես նրան կսպասեմ մինչև յերեկո, և յեթե նա չգա, ապա ես ստիպված կլինեմ մենակ շարունակել իմ ճանապարհորդությունը:

Նա ինձ հարցրեց, թե ինչ ազգի եմ ես պատկանում, և յերբ ասացի, վոր ֆրանսիացի եմ, նա ինձ հարցրեց, թե ինչ կրոնի եմ ես պատկանում, և յերբ ասացի, վոր կաթոլիկ եմ, նա ինձ հարցրեց, թե ինչ կարծիքի եմ ես Մուհամեդի մասին, և յերբ ասացի, վոր ես նրան համարում եմ մարդկության մեծագույն բարեկամներից մեկը, նա ինձ հարցրեց, թե ինչ կարծիքի եմ ես Հիսուս Քրիստոսի մասին, և յերբ ասացի, վոր ես նրան համարում եմ մարդկության մեծագույն բարեկամներից մեկը

դեպի ինձ՝ սպառնալ կրակել։ Ինձ ազատելու բոլոր ջանքերս ապարդյուն անցան, աչքերս կապեցին, ինձ շուռ ավին՝ դեմքս դեպի դեպինը և այդ թշվառականներից մեկը այս դիրքին մեջ ինձ պահից վոտքը դնելով ինձ վրա։ Այդ սարսափելի րոպեին վոչ մի վախկոտ մտածում չունեցա. չեյի մոռանում վոր հազուստիս տակ պահում եյի այն շքանշանը, վորի շուրջը մակագրված եյին՝ «Պատիվ և Հայրենիք» բառերը և հայրենիքիս վտանգին և առաջադիմության համար յերկնքին ուղղում եյի իմ իղձերս, վորոնք թվում եր թե կյանքիս վերջիններն կլինեն։

Յերբ իմ մարդիկս, այսինքն թաթարն ու յերկու ծառաներս նույնպես դինաթափ արվեցին և կաշկանդվեցին, քուրդերը մեզ վերցնելով տեղավորեցին ձիերի վրա և սկսեցինք ճանապարհը շարունակել՝ առանց կարողանալ իմանալու թե վոր ճանապարհն ենք բռնում և թե ինչ պատճառով մեզ այսպես տանում են, փոխանակ լսեդելուբ։

Այդ անմարդաբնակ լեռների մեջ, վորոնց շղթան ձգվում է դեպի Կովկաս, խոր ու ամայի մի ձոր կա, շրջապատված ցից ժայռերով։ Վոչ մի ճանապարհորդ այդտեղից չի անցնում. նույն իսկ հովիվը հազվադեպ տանում է այնտեղ իր հոտը, և ինձ թվում եր թե այս վայրը հարմար է միայն վայրի անասուններն կամ ավազակների թաքստոցի։ Այնտեղ հասնելով, քրդերը համոզված թե չեյի կարող փախչել, ձիերից հանեցին կապը և վտահացրին, թե ինձ համար ամեն չի սահմանված։ Նրանցից մեկը վերցրեց իմ ժամացույցը և քառասմբակ ալացավ դեպի Բայազիդ, վաշային իմ կալանավորման լուրն ու ազատույցը տանելու համար։ Մյուսները դեռևս վրա տարածեցին իրենց բրդյա վերարկուները և դառնալով դեպի Մեկկե յերկյուղածությամբ յերեկոյան աղոթք կատարեցին։ Այսպիսով, այս սրիկաները բռնաբարում եյին

*Մահմուդ վաշան մեծ կարևորություն եր տալիս մեր ձերբակալությանը պատճառ պահվելուն։ Դրա համար մեզ քաղաքում բանտարկել չտվեց, այլ Պարսկաստանի սահմանի վրա, Բայազիդից չորս մղոն հեռու։ (Ծանոթ. Ժողովրդի)։

այն հյուրընկալությունը, վոր համարում են վորպես որենքներից ամենասուրբը. և չեյին վախենում անպատվել յերկինքը, այդպիսի իղձեր ուղղելով նրան։

Արևը մայրը մտնելուց հետո, հեռվից լսեցինք մի քանի հրացանազարկեր։ Քուրդերը վեր կացան ասելով. «Ագդանշանն եբ։ Մեզ առաջնորդեցին սարսափելի անդունդների միջով և անանցանելի տեղերով։ Մթության մեջ յերկար ժամեր գնալուց հետո, հասանք մեկուսացած մի բնակավայր, վորի դռները բացվեցին, յերբ մոտեցանք։ Յես առանձին առաջնորդվեցի այս տան մեջ, ուր տիրում եր խոր լռություն։ Ծարավս հագեցնելու համար խնդրեցի մի քիչ ջուր, վոր մերժեցին տալ։ Ինձ տարան լայնատարած և քիչ լուսավորված մի սրահ. այնտեղ տեսա մի քանի մարդկանց կանգնած և պատի յերկարությամբ շարված։ Նրանցից մեկը միայն նստած եր, վատ հագնված, առանց զենքի, առանց գլխի վրաթաթոցի, ճակատը հենված ձեռքին և մտախոհ տեսքով։ Սկզբում նրան չճանաչեցի. փաշան եր։ Շփոթությունը նկարված եր նրա դեմքի վրա։ Այլայլված ձայնով ինձ հայտնեց թե առավոտյան յերբ յես մեկնում եյի, կ. Պոլսից հրաման եր յեկել առուգել իմ անձնավորությունը, բայց թե յես կարող եյի հանգիստ լինել։ «Եֆենդի, պատասխանեցի նրան սառը կերպով, — յես վոչնչից չեմ վախենում, բայց դու, արդյոք անհանգիստ չե՞ս։ Կարծում ես թե քո վոճիրը անպատիժ կմնա և մթին չե՞ս վախենում վոչ աստծուց և վոչ էլ մարդկանցից։ Յես գիտեմ, դու ինձ սպանել կուզես. բայց հիշիր իմ վերջին խոսքերը։ Վրեժի ժամը հասնելու յե։ Մի որ իմ արյան գինը պահանջելու յեն և այդ գինը, Մահմուդ, դու պետք ե հատուցանես։ Այս սպառնալից խոսքերը, վորոնք թերևս փաշան համարեց վորպես մարգարեություն, նրան շփոթեցրին։ Անտարակույս սարսափով պատկերացրեց այդ վոճրի հետևանքները, և ինձ մի քանի ամիս ևս կենդանի թողնելու ծրագիրը կազմեց, պահելով սակայն, կապանքների մեջ, վորպեսզի լինի Պարսկաստանում, անպիտանային իմ վիճակի մասին,



Բաղդադի վերին, ամրոցամերձ (ներքին) քաղաքի տեսարանը։

ոգեվելու համար իմ իրեղեններից, այն դեպքում չեթե ինձ չպահանջելին։ Կապանքներս ինքը քանդեց և առաջարկեց համբերաւոր լինել։ Նա իրեն, թաթարին ուղարկել եր Կ. Պոլիս, քառասուն որվա ընթացքում պատասխան բերելու։ «Պետի հարգեմ քո կյանքը, — ասաց նա, — չեթե նույնիսկ բարձրագույն դռւռը այլ կերպ հրամայե»։ Ինձ այսպես վառահացնելուց հետո, նրա պահապանները ինձ քարշ ավին անից դուրս, և ինձ մտցնել ավին վոտքերով այն բարձրությունը, վորի վրա կառուցված և Բալադիի մյջնաբերդը։ Կես գիշեր եր, յերբ դարբասներից անցանք. մանևով առջին հարկաբաժինը, ուսանք բազմաթիվ բոզարկված կանանց, վորոնք ձևերով աչքերը ծածկած, արտասվում էին. նրանք կարծում էին թե մեզ կորստյան են մատնելու։ Հասնելով մի ուրիշ սրահ, ուսանք մի ծերունի, նստած և շրջապատված իր զավակներով, վոր ուրուր և վշտալի հայացքով մեզ դիտեց. սա զղյակի կառավարիչն եր. կոչվում եր Մամուդ, ինչպես փաշան։ Պահապանները հարգանքով վողջունեցին նրան, հետո, դառնալով դեպի ինձ. «Ահա, ասացին, ձեր նոր հյուրընկալը և ձեր նոր բնակավայրը»։ Հետո վերցրին պարանի մի կապոց, վորը անկյունում եր, և անցկացին մարմնիս շուրջը։ Նրանց առաջին շարժումը, խոստովանում եմ, ինձ սարսափեցրեց։ Փախչելուն տակ թափված մի կավարիչ բարձրացրին և ինձ ստիպեցին իջնել պարանի ոգնությամբ, մի հոլի մեջ, վորի հատակը չհարցրացա տեսնել, հակառակ նրան վոր այս սարսափելի տեսարանը լուսավորող ջահերը մեր շուրջը լույս էին սփռում։ Բայց և այնպես, մի քանի վայրկյան հետո, վոտքերիս տակ զգացի հողը. փաշայի մարդիկն ինձ ասացին վոր կարող եմ կապը քանդել։ Հետո, նույն միջոցով իջեցրին իմ ցնծից բախտակից ընկերներիս. այսինքն Բ. Դուան թաթարին, վոր իր Ոմար անունը փոխել եր Ալի աղայի (պարսիկների դեմ Ոմար խալիֆան ունեցած առելության պատճառով), յերիտասարդ հային և իմ ֆրանսացի ծառային։ Այդ անելուց

կափարիչը վակեցին և հեռացան, թողնելով մեզ խոր մթության մեջ և անձնատուր այնպիսի խորհրդածությունների, որոնց բնույթը գուշակել հեշտ է։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամանոցները յերբ գրավեց Հայաստանը, ժԶ դարում, Բայազիդի իշխանությունը հանձնեցին մերձաբնակ բրդերին, որոնք պատկանում էին Ալիմանլի աշիրաթին (ցեղին) և այս պատճառով Բայազիդի գավառը կոչվում էր Ալիվան։ Այս բրդերը կրանկախ կառավարում էին այս գավառը, մինչև անցյալ դարի յերկրորդ կեսը, թեև անվանապես Բայազիդը համարվում էր Երզրումի կուսակալության մաս (Տես Ալիշան, «Այրարատ» եջ 500)։

2. Սա մի խոր գուբ էր, փորված բերդի ժայռի մեջ։ Բանտարկյալներին պարանով էին վար իջեցնում մի բացվածքից, որ փակում էին կափարիչով։ Այս գնդանի մոտ՝ պատի և քարայրան միջև մի նեղ անցուղի նշանավոր մի հնություն կա քանդակված ժայռի մեջ. սա ներկայացնում է յերկու բուրմերի պատկերը, որոնք կանգնած են Բագինի յերկու կողմը, որի վրա դանվում է մի յեղջերուի ոտաջակողմ կանգնած քուրմ անտորուս և ձեռքում ունի մի պատգան, իսկ մյուսը ալեւոր մի քուրմ յոգևի հագին, ձեռները տարածած ազոթում է։ («Այրարատ» եջ 502)։

Գեհենափորի ևկարագրությունը. Հեղինակին համեմատած դուրս են բերում. — Մամմոդ ադայի յեվ իր ազգականության հաղորդած մխիթարական լուրերը. — Փոքրայի ձեռ առած միջոցներ մեր բանտարկության հեռանալու թագցնելու համար. — Գեհենափորում մեր զգացած բռնադատության պատկերը։

Այդ որան գնալքերը և հոգնածությունը, որից խիստ ճնշված եյինք, յերկար ժամանակ մեզ արգելք հանդիսացան դննելու այն գնդանը, ուր թաղվել եյինք. լսում եյինք, ընդմիջումներով, ձկլիճների մոլլանների ազազակը և ազոթքի ժամը հայտնելու համար հայ քահանաների քրխտոնյաների դռներին փայտերով զարկի ազմուկը։ Միայն արևածագից հետո՝ պատի վերևի մասում փոքրիկ մի անցքի ինեև լույսով, վորտեղից մի քիչ ոդ եր մտնում մեր խուցը, կարողացանք նրա ձևը և սարածությունն իմանալ։

Դա մի տեսակ փոքր նկուղ եր, չորացած մի հոր կամ ջրամբար, փորված ժայռի մեջ, մոտ յերեսուն վոտնաչափ հողի տակ, յերկարությունը տասնվեց վոտնաչափ եր, լայնությունը հինգ։ Վեչ մահճակալ կար, վեչ սեղան, վեչ նստարան. այնտեղ պատանք անկյունում միայն մի քիչ հարդ, մի սափոր և մի թաս։ Վերջապես այս սպառնալից բացարձակ զրկանքներն ու ժժքախտությունը կարծես բավական չեյին մեր դրությունը արգահատելի զարձնելու, վերևի հրամանով վերջերս սպանված մի բեկի դիակը թաղված եր հողի մեջ, վորի վրա մենք տարածված եյինք։

* Jaubert, եջ 38—45։

Առավոտյան ագռաքից հետո, հակող բանտապահը կափարիչը բաց արեց և պարանի միջոցով վար իջեցրեց դույլի մեջ դրված մի փոքր հաց և մածուն։ Առաջվա պես ամեն որ պալ, և արևածագին, կեսօրին ու լուսնկայան նույնքան [քան] բերել։ Մեր կալանավորման ընթացքում, մեր խղճալի գոյությունը պահպանելիք այդ անուղղակի։

Սակայն, ժամանակն անցնում էր և մեր ճակատագրի փոփոխության մասին մոչ մի լուր չկիներ առաջում։ Մի որ, լուրը բանտապահը բացակա էր, Մանմուշ պապի ազգականուհին՝ Սալխիչն, թույլտվություն առացավ մեր անունից մեզ հացն ու կաթը մի հայուհու հետ բերելու։ Նա թղարկված էր և մեզ հետ մոչինչ չխոսեց. բայց հետո, հարգելի պապի նման, դույց տվեց թե վերքան ցավակցում և մեր վշաերին, և մխիթարելու համար նա քանիցս լսկավ մեզ հետ խոսակցելու. ճիշտ և որ ամեն լուրջում խանդապատանքը կանանց է վերապահված։

Մեր բանտարկության առաջերորդ գիշերը, գետնափորին վրա պահլիճի դռան լսկինք մի ուժեղ զարկ և կափարիչը բացվեց։ Հանկարծ ուժեղ լուսավորություն տիրեց և լսկինք ձայներ, որոնք մեզ անծանոթ չէին։ Մեզ ձերբակալող քուրդերն էին։ Նրանցից մեկը մոտեցավ նկուղի բացվածքին և անպատկառորեն ինձ ասաց. «Ինչպես եք անցնում ձեր ժամանակը։ Իսկ դու, Պետրոս ապա, (քրդերը ինձ այդ անունն էին ավել), ինչ ես անում այդտեղ։ Ի՞նչպես և քեզ թվում Բայազիդի քո ոխերանը»։ Զայրույթից պատասխան չավի նրան։ «Վատահ կեղծ, — շարունակեց քուրդը, — մենք չենք լսկել քեզ վնաս պատճառելու, մեր եղբոնդին քո անուսկների մեջ գտել և թվիր, որոնց քովանդակությանը ուզում և ծանոթանալ. նույնպես առաքհանքեր, որոնց գործածության կերպը չի իմանում. պետք և վեր բարձրանաս և մեզ ցույց տաս։ Վերցրու այս պարանը, ուժեղ կապիր մեջքիդ, և քեզ վեր բարձրացնենք»։

— «Թակարդը կոպիտ և, պատասխանեցի. դուք վախենում եք իջնել այս գնդանը, որովհետև գիտեք, թե

մենք թույլ չենք տա վոր գուք մեզ խեղդեք առանց գիմադրության։ Բայց վոչինչ. այժմ կյանքիս քիչ արժեք եմ տալիս, գալիս եմ ձեզ մոտ»։ Ձեվ լերը թախտաբ Մարթը ձգնում էր այս ծրագրից ինձ չետ պահել. «Գետք և իմանամ թե ինչ են ուզում, ասացի նրան, լսկին վերևում իմ ձայնս այլևս չլսես. ուրեմն գիտցիր վոր այլևս կենդանի չեմ, և այն ժամանակ քո աննկիրը կ'իմանաս»։ «Հասնելով վերևի սրահը, ապրատիով գնամ ես գնամ լսկամ այն քուրդերին, վորոնք ինձ պղել եկին առաջապահքի այս անգունդը. մոտավորապես մի ժամու չափ նրանց բացատրեցի ինձ նկրկայացրած գանազան գնդքերի, ժամացույցների, հեռադիտակների և հետաքրքրական առարկաների գործածության եղանակը, հետո պարսկերեն լեզվով կարգացի իմ հրամանագրերի այն մասը, վոր ինձ թվում եր ամենատարմարը նրանց վախեցնելու համար։ Այս բոլոր բացատրությունները առլուց հետո, ինձ կրկին իջեցին գետնափորը։

Բարի Սալխիչի հետ ունեցած մի խոսակցության միջոցին, նա հայտնեց թե փաշան ինչպիսի միջոցներով գաղտնի եր պահում մեր բանտարկությունը։ «Նա լերբվեց, — ասաց — վոչնչացնել մեր ամրողջ գերդաստանը, լսկին մեզանից վորևե մեկը հայտնարերեր ձեր այստեղ լինելը։ Վերջերս բազարում լերկու հոգի միմեանց հետ խոսելիս, մեկն ասում և մյուսին՝ «Ալիսի ազատվեն»։ Այս բառերը բավական եղին նրանց ձերբակալելու համար։ Առաջին ձեզ նրանց՝ իմանալու համար, թե ինչ եղեն նշանակում այդ խոսքերը, և լերբ պարզվեց թե նրանք նույնիսկ տեղյակ չեղին ձեր գոյության մասին, այդ ժամանակ միայն ազատ արձակեցին։ Մեկ ուրիշ անձ, վոր լերբ ձեզ այստեղ եղեն բերում, տեսել եր ձեր անցքը, նույնպես ձերբակալվեց։ Վոչ վոր չգիտեր թե ինչ լսկավ նա։ Փաշան կարուկ կերպով արգիլեց ձեզ լույս տալ։ Նա վախենում և, թե վորևե ճեղքից լույսը կարող և լերևալ և կասկած առաջացնել թե այստեղ ևք բանտարկված։ Ազատեն նույնպես պատվիրած և, որքսորեն պահպանել ձեր անունը, վորպեսզի լսկին հանկարծակի մեռնելու լսնիք,

նախախնամության առաջ բոլորովին պատասխանատու չզգա իրան։ Սակայն վատահ լեզնք, նախախնամությունը պիտի հակի ձեր կյանքին, այս վայրը նա որոնել եւ։

Ցերբենն կառավարիչը նույնպես այցելության եր գալիս մեզ։ Ջնդանի բացվածքի մոտ նստած՝ վար նայելով, նա ավելի քիչ բան եր հարցնում Ցվերոպայի հրաշքների մասին, քան մեր կրոնի սկզբունքների, բարքերի և օրենքների մասին։ Ամեստարանի բարոյականության վրա հիանում եր և գովարանում եր մարդկանց կյանքի և սեփականության հանդեպ ունեցած մեր հարգանքը։ Իրավացի կերպով դատում եր, թե ոստիկանությունն ու մոլեռանդությունը կայունությունների ակարությունն են ապացուցում և նախագուշակում նրանց կորուստը։ Մեր հետաքրքրությունը հագեցնելու համար, ցերբենն դրսում կատարված անցքերի մասին տեղեկություններ եր տալիս։ Բարերախտ մի դեպք հպվելու եր պատահում։ Մերթ ցերկու ցեղերի մեջ կռիվ եր ծագել, մերթ մի կարավան եր կողոպտվել և կամ մի ճանապարհորդ սպանվել։ Երթե մի վճռապործություն եր տեղի ունեցել, համարյա միշտ ել կասկածում եյին թե պլխավոր հեղինակը փաշան և։

Մահմուդ ազան յուրաքանչյուր անգամ ցերը մեզ մոտ եր գալիս, մի վորևե բան եր բերում՝ ծաղիկ, միրգ, մի քիչ խունկ մաքրելու համար ոդը, վորը շնչում եյինք մեր նեղ և խոր բնակավայրում. հուղիչ խնամքներ, սակայն նվազ թանգարժեք, քան այն մխիթարիչ սպեղանին, վոր այս ալեղ մարդու ներկայությունը մացնում եր դժբախտությունից թառամած և ըզկտված մեր սրտերի մեջ։ Վեհանձն մարդ. ինչքա՜ փ ինձ թուլլատրված չեր հայտնելու քեզ իմ ցերախտագիտությունը։ Դու ազքատ եյիր, և սակայն մինդոց եյիր գտնում բարիք անելու։ Այն փոքր կարողությունը, վոր ցերկինք քեզ շնորհել եր, դու բաժանում եյիր դժբախտների հետ։ Քո գթառատ ոգնությունները կյանքս ազատեցին։ Քո հայրական որհնություններն ընկերացան ինձ ամենուրեք։ Ինչպես վոր դու գուշակիցիր, ցես վերստին տեսա հայրենիքս,

ծնողներիս և բարեկամներիս։ Դու այլևս չկաս, բայց քո իմաստության, քո վեհանձնության և քո քաջասրտության հիշատակը քանդակված պիտի մնա իմ սրտում[1]։

Սակայն, մեր դրությունը օրըստօրե վատթարանում եր. մեր գգեստները, վորոնք մեզ վրա եյինք կըռում ցերկու ամսից իվեր, անտանելի կերպով կեղտոտվել եյին և կտոր կտոր ընկնում։ Մի ցերկար մորուք մեզ անճանաչելի եր դարձրած և մահվան ժժգունությունը արտացոլում եր մեր ճակատի վրա։ Այնքան ժամանակ վոր արևը հորիզոնի վրա եր, կառավարիչն և Սալհիյեի տեսակցությունը կամ նրանց վերստին տեսնելու հույսը, մեր գերության տառապանքներին դադար եյին տալիս։ Սակայն, գիշերները վճռքան անգութ եյին։ Նրանք համարյա անցնում եյին առանց աչքիս կոպերը քնով թարմացնել կարողանալուս։ Ընդհանրապես առավոտյան դեմ իմ հյուրընկալների գթասրտությամբ ձեռք բերված պողպատի մի կտորով ցայտեցնում եյի մի խճաքարից կայծեր և վառում եյի ծխախոտի տերևներ, վորոնցից ցերբեք ինձ անպակաս չարիցին։ Նրանից արտահոսող ծուխը, ինձ համար նույնքան հաճելի եր, վորքան Արաբիայի և Հնդկաստանի անուշահոտությունները, և ինձ տալիս եր կարճատև մի թմրություն։ Բայց զարթնելուց հետո, նորից դառն հիշատակներ և ցավալի վիշտեր սրտումս վերածնվում եյին։ Միանգամայն իմ բանտակիցների թուլլատրելի գանգատներն ու հանդիմանությունները կրկնապատկում եյին իմ վիճակի ահավորությունը։ Ցերբ իմամների ազազակները ընդհատում եյին լռությունը, — այնտեղ չե, ասում եյի ինձ, իմ բարեկամների ձայնը. նրանք չգիտեն իմ ճակատագրի մասին. իմ տրտունջը չի կարող հասնել նրանց. այլևս չպիտի տեսնեմ նրանց։ Ցերբ արևի ճառագայթները ցերևում եյին ցերբենն գնդանի պատերի վրա, մտածում եյի կամ արևածագի և կամ ծննդավայրիս ծիծաղկոտ բլուրների ու ցերջանիկ ծովափերի մասին։ Թռչունների առավոտյան ուրախ ցերգը խլում եր ցերբենն ինձնից արցունքներ և ընդհակառակը, փոթորկալից քամիների կատաղությունն ու սու-

լոցը առաջ եկին բերում իմ մեջ անսահման մի հաճույք: Հաճախ տարված լերազանքներով, ինձ թվում էր թե իմ ամենաուժեղ խանդավառանքների և վշտերի առարկաները՝ հայրս, մայրս, քույրերս և մեկ լեղրայրս հավաքված են ուրախ մի ոթևևանում. թվում էր թե պալիս են սրրելու արցունքներս, վորոնք հակառակ կամքիս, թափվում եյին աչքերիցս: Այս բոլորը պատրանքից պրդոված լերևակայութիյուններ, հասցնում էր մինչև ականջս լեղբոր ձայնը, վոր ասում էր ինձ. «Վառան լեղիր, առաջապանքներդ վերջ պիտի դանեն: Մարդկանց կատարելիյան դեռ դարձած, շուտով նրանցից ընդմիշտ պիտի բաժանվես: Ինչ վուլմ, լեթե նախանձաուիյունն բոլոր դահավիժում և կյանքիդ ընթացքը գուցե մի որ ազատելու լե քո անունը մոռացութիյունից»....

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Յերևանն հինդ տարի հետո Տեսիե այցելել և Բայազիդ և տեսել Ժորների բանտապահին, վոր տակավին ապրում էր, և ասում է թե նա հայ և և գաղտնաբեն ոգնել ու նպաստել և նրա ազատման: Ժորնը ինքը չի հիշում հայ բանտապահին, այլ բերդի կառավարիչ Մանմուդի մասին խոսում և մեծ համակրութիյամբ և իր ազատումը վերագրում և նրան: Մանմուդի հայ ծագման մասին ոչ մեկ հիշատակութիյուն չկա և նա, ինչպես Ժորնեն և հաղորդում, սպանվեց 1806-ին: Ժորնեն իր բանտապահին անվանում և Հուսեյին, վորի մասին շատ անբարեսա և խոսում:

ԳԼՈՒԽ Զ.*

Մահմուդ փաշայի երգրումում տարածած լուրերը. — Բանտապան Հուսեյինի հետ հեղինակի ունեցած խոսակցությունը. — Այս վերջինի խիստ հսկողությունը:

Մեր կալանավորումը տեվել էր լերեք ամիս, լերբ մի որ Մանմուդ աղան լեկավ մեզ հաղորդելու թե փաշայի թաթարը, Հասանը, երզրումից լեկել էր: «Նա պատմել է, — ասաց: — վոր այդ քաղաքի դատավորը ստիպել է Ռուսաստան ուղարկված մի անգլիացու վերադառնալ կ. Պոլիս, առանց թուլատրելու վոր նա կատարի իր առաքելութիյունը: Ասում են նաեւնպես, թե մի ուրիշ լեվրոպացու, վորպես պատգամավոր ուղարկված պարսկական արքունիքը, թալանել և սպանել են հայդարանլիները, Յերևանի մերձակայքում: Ի հարկե լերբեք ֆրանկները այսքան հաճախ չեն այցելած Բուրդիսատան: Ի՞նչ ես կարծում»:

— Կարծում եմ, — պատասխանեցի Մանմուդին, մի րոպե խորհրդածելուց հետո, — վոր այդ Անգլիացին, այդ մյուս լեվրոպացին և լես նույն անձնավորութիյունն ենք»: Արդարև, ինչպես հետո տեղեկացա, փաշան, վոր շարունակ վախենում էր թե իր վոճիրը կհայտնաբերվի, վատահելի մեկին ուղարկել էր Երզրում, այնտեղ տարածելու համար վերոհիշյալ լուրերը: Անտարակույս նա լինթագրում էր, վոր լեթե պարսիկները իրենց հետազոտութիյունները տարածելին մինչև այդ քաղաքը, կարող եյին մտածել թե լես վերադարձել եյի, իսկ մյուս կողմից, լեթե ոսմանյան զորը ուղևնար

* Jaubert, եջ 46—50:

իմանալ Պարսկաստանում մեզ հետ ինչ և պատահած, հասարակական ձայները նրան պիտի հավատացներ թե մենք քուրդերի ձեռքով սպանվել ենք պարսկական հողամասի վրա։

Բանտապահ Հուսեյինը ամեն յերեկո գալիս եր մեզ հետ խոսակցելու. սակայն, ձևացնելով թե կամենում եր մեղմել մեր վշտերը, իսկապես ավելացնում եր իր խոսքերի յերկդիմությամբ ու լակոնականությամբ։

«Բարի յերեկո, Հուսեյին, ասացի նրան մի որ, ինչ լուր կա աշխարհում»։ — Ամեն ինչ լավ և գնում, — պատասխանեց։ — Կ. Պոլսից վորևե թաթար ժամանե՞լ ե։ — Ասված գիտե։ — Այսոր ձեր քուրդերը չե՞ն կռվել Արդուլլահի հետ։ — Այո, նրանց վախուստի մատնեցինք։ — Շատ սպանեցի՞ք։ — Հիսուն գլուխ բերեցին մեր եֆենդիին։ — Ի՞նչ լուր կա Պարսիկների և Ռուսների պատերազմի մասին։ — Շատ լավ, ասում են թե հերետիկոսներին Յերևանից վռնդել են։ — Ի՞նչ հերետիկոսներ։ — Պարսիկները։ Ավելացնում են, թե թավրիզը շուտով անհավատների իշխանության տակ պիտի լինի։ — Իսկ այս լուրերը հաճելի չեն փաշային։ — Անտարակույս, հերետիկոսները նրա ամենավատանգավոր թշնամիներն են։ — Վերջապես մեր մասին մի վորևե վորոշում կայացրած ե։ — Վոչ։ — Մտադիր ե մեզ խեղդել տալ։ — Ասված գիտե. յես չգիտեմ։ Ինչո՞ւ ես ուշացնում, — Մեր եֆենդին խելացությամբ և վարվում։ — Նրան տեսե՞լ ես այս առավոտ։ — Այո։ — Մեր մասին քեզ հետ խոսե՞ց։ — Վոչ։ — Նրա պալատում ինչ գործ ունեիր։ — Ինձ արդելված ե ձեզ հայտնել։ — Դու հակասում ես քեզ Հուսեյին, բայց յեթե սիրում ես քո ստածուն և մարգարեին, ասա փաշային թե նրանից մի շնորհ ունենք խնդրելու։ — Ի՞նչ։ — Թող ինձ մահացնե։ — Աստված չանե։ — Այս խղճալի կյանքը մահվանից հազար անգամ ավելի տանջալի չե։ Մյեթե անհանգիստ ու տխուր կյանքից նախընտրելի չե՞ հավիտենական հանգիստը։ Ուրիշ յելք չեմ տեսնում իմ տանջանքներին և ուրիշ փրկություն չեմ սպասում, ուրիշ ապասելիք չունեմ։ Յենթադրելով վոր փաշան ին որ վախից կամ գթասրտությունից դրդված ազատ

արձակե ինձ, առանձ նեցուկի, առանց ոգնության, ինչ կլինի իմ վիճակը։ Մյեթե կարող եմ յես գնալ պարսից արքունիքը և մուրալ ամոթալի մի ապահովականություն։ Նամակների և ընծաների փոխարեն, մյեթե կարող եմ Շահին ցույց տալ իմ շշված վիճակը։ Յեվ մյե՞թե խաղաղության խոսքերի և բարեհոգաստ լուրերի փոխարեն նրան պետք է տանեմ տապակալի գանգատներ և ավելորդ հառաչանքներ։ Դերեզմանի ունայնությունը գուցե սարսափելի յե իշխանության ունեցողի համար, սակայն ինձ նման մի դժբախտ, մոտալ մի գետնափորում կենդանի թաղված մի մարդու համար, վոր նախատինքներով լցված և մոռացության ե դատապարտված, կյանքը անհանդուրժելի մի բեռ ե։ Սակայն, Հուսեյին, ինձ մի հուսա և ինեա։ Աստված թույլ չպիտի տա վոր վոչ մի յերկրում, նույնիսկ այստեղ, այսպիսի անլուր մի վոճիր յերկար ժամանակ անպատիժ մնա։ Ինձ այստեղ պահող դավաճանը խղճալ ե կարծում, կամ ձևացնում ե կարծել թե իր կրոնը թույլատրում ե նվիրական մի հյուրի կապանքի մեջ պահել և վոչնչացնել։ Իրա՞ւ ե հուսա տածում թե քավության միջոցով կարող ե մարգարեյի արդար զայրույթը մեղմացնել. թող նա սարսափի։ Ճակատագիրը նրան դահավիժելու չե դեպի դժոխքի կամուրջը, դաշույնի բերանից ավելի սուր այդ զահրուրելի կամուրջը, վորի վրայից, ըստ ձեր հավատքի, բոլոր մարդիկ պետք է անցնեն։ Արդարը դյուրությամբ պիտի անցնի յերկաթապատ կամարների և առանց ցավի պիտի հասնի հուրիների ու հրեշտակների բնակավայրը, իսկ հանցավորին վոտքերը պիտի պատռվեն և պիտի ընկնի հավիտենական բոցերի մեջ։ Բայց ինչ եմ ասում։ Հյուսեյին, վոչ, Մահմուդը մուսուլման չե։ Յես անիծում եմ նրա անունը և ասված վրեժ պիտի լուծե իմ կրած նախատինքի համար»։

Բանտապահը հուզված եր, յեթե վոչ վշտակցությունից, գոնե զարմանքից ազդված, յերբ նման խոսքեր եյի ուղղում նրան։ Համոզում եր ինձ համբերել և յերբեք չհուսահատվել իմ ճակատագրից. հետո գնում և ուշպիր քննում եր

պլյակի բոլոր դռները և գալիս փնտում էր մի փախչի վրա այն գտնլիճում, որի տակը մենք բանտարկված էինք։ Գիշերվա ընթացքում հաճախ զարթնում էր հանկարծակի և արագորեն վերցնում էր գնդիրը։ Այդ ապտակի վրա չորս էլ մեր էյինք կենում, կարծելով թե հասել և մեր վերջին ժամը։



Մի խումբ հայրեր (տասնմեկ հոգի) Բայազիդում

ԳԼՈՒԽ Ը.*

Ժանտախտը Բայազիդում.—Մահմուտ փաշայի կանանցից մեկը վարակվում է չիվ մահանում.—Սալիխյեն մեզ միջոցներ է հայթայթում մեր գերության մասին տեղեկացնելու պարոն արոուենիիին.—Փաշան նույնպես վարակվում է ժանտախտից.—Ուզում են մեզ կոտորած մատնել.—Մահմուդ ապայի հաջողությունն ու վհատությունը.—Փաշան մահանում է.—Նրա վորդին Ահմեդ բեկը հաջորդում է. նա չեվս մտածում է մեզ վոչնչացնել.—Ժանտախտը նրան էլ է վարակում.—Նրա չարությունը ու զղջումը.—Նա մեռնում է.—Նրա հարյեղբայրը, Իբրահիմը, հաջորդում է։

Ժանտախտը, այդ սարսափելի չարիքը, վոր Արևելքում հակառական ավերումներ է գործում, քան և չորս տարիներից իվեր խնայել էր այդ հոգամասը և Բայազիդ քաղաքը։ Սակայն, մեր բանտարկության միջոցին ուժեղ կերպով այնտեղ ճարակից և նրա չերևան գալը համարվեց վորպես չերկնային ցասման պարզ մի նշան. ըստ չերևույթին ժանտախտը բերվել էր Զեզիրեյից (Djezireh), Միջագետքից չեկած վաճառականների մի կարավանի միջոցով, վորոնք գնում էին Թիֆլիս վաճառելու ցորեն, արմավ և Ասիայի այդ կողմի զանազան արտադրանքներ։

Բայազիդը բաժանված է վերևի քաղաքամասի, ուր ապրում են քուրդ ցեղեր, վորոնցից յուրաքանչյուրը գրաված է առանձին մի թաղ, և վարի քաղաքամասի՝ ուր բնակում են հայեր։ Վերևի մասում եր վոր ժանտախտը առհասարակ

* Jaubert, եջ 51—59։

ավերներ եր գործում, քրդերից քչերը առողջացան, հայերի և պարսիկների մեծ մասը փախուստի մեջ վորոնեցին իրենց փրկությունը։

Մեր բանտապահը, վոր հոգևոր մի պարտականություն կատարելու համար ամեն որ գնում եր մուսուլման թաղերը, նույնպես վարակվեց, սակայն չմեռավ. այս պարագան մեզ հաճախ մխիթար ավալ ընդունելու հայտնռ և Սալխլիկի այցելությունը։ Նրանք տեղեկացրին, թե մեզ ձերբակալող քուրդերի մեծամասնությունը հիվանդ կամ հոգևարք եր։ Փաշան սակայն, հակառակ մահմեդականների սովորական անտարբերության, նախազգուշական միջոցների եր դիմում չարիքից ազատվելու համար։ Սարսափը տիրել եր հարեմում. մի սարկուհի եր մեռել և մի ուրիշը նոր եր վարակվել։ Վերջապես Մահմուդը շատ եր անհանգստանում Զուլեյխայի, իր սիրեցյալի առողջության մասին, և նա հրամայեց արձակից հասարակական մոլեմանդներ կատարել, վորոնք պետության բաժանից և քուրդերի սովորության համաձայն մի ուղտ մատաղ արնից մարդարեյի մոր գլխին։ Ջուրը հուշեր. Զուլեյխան վախճանվեց և անմխիթար Մահմուդը իր պալատից այլևս դուրս չեկավ։

Յերկինքը թույլ չտավ, վոր ժանտախտը մեռաք դադարի մեր գնդանը։ Մի բոպե մտածեցինք ոգտվել քաղաքում տիրող խառնաշփոթությունից և փորձել փախուստի մեջոցով ազատվել սպառնացող վտանգներից, սակայն Սալխլին, վոր հաճախ գալիս եր մեզ հետ խոսակցելու, մեր սրտերում հույս եր ներշնչում՝ ազատությունն ձեռք բերել փախուստից ավելի մեջոցով։ Մեր մխիթարիչը մի որ մեզ ասաց.—

«Յեթե կարողանայիք Պարսից սրքունիքին մի կերպ հասցնել, անպայման նրանք ձեզ կպահանջեն և հետևաբար կազատվեք»։ Այդ բարեսիրտ կինը, վորի խորհրդին հակառակ հետևելը, ինձ հայհոյեց թուրք, մուր (poudre à canon) և մի վեպուր. շտապով մի տոմս գրեցի թրքերեն լեզվով։ Նա վերցրեց դողդողալով, թաղցրեց իր կրծքում և խոստացավ հանձնել մի պարսիկի, վոր ժանտախտից փախչելու համար վերադառնում եր իր յերկիրը։



(Ջեյրան որդու մահը լսելիս Մահմուդի)

Ինչպիսի անհամբերությամբ եյինք հաշվում այն անհրաժեշտ ժամանակը, մինչև վոր պարսից արքունիքը կարողանար իր հրամանները հասցնել Բայազիդ։ Այս հույսով եյինք որորվում, ևերբ աղալի ապրականուհին յեկավ մեզ տեսության։ Նա վերին աստիճանի հուզված եր և մեզ ասաց. «Ձերկինքը պիտց ձեր տառապանքներին. ձեր հալածիչը ժանտախտից վարակվեց»։ Զորաս ևս հանկարծակի վեր թռանք տեղերից։ Հուզմունքը, վորով բռնված եյին, մի պահ չթողեց ինձ խոսել և աչքերս արտասուքով լցվեցին։ Փաշայի մահը կարող եր ազատվել մեր վերկությունը, սակայն այդպիսի մի դեպք վճռքան անհավանական եր թվում։ Արդարև, փաշայի հիվանդության կերպարդ որը, նրա մեջ բարվոքման նշաններ յերևացին։ Ինչ հետո բանտապանը, վոր առողջացել եր, շտապից մեզ հայտնելու թե իր տերը վեր եր կացել, գնացել եր իր դիվանատունը և բոլորովին ազատվել եր. այդ լուրն առնելով, նրան խնդրեցի վոր Մահմուդ աղան, վոյի անկեղծության վրա վստահ եյի, գա մեզ այցելելու։ Ծերունին դժվարացավ վորոշում տալ, բայց և այնպես հեռացավ որը յերևաց։ Հենց վոր նրան տեսա, հարցրի թե փաշան ինչպես և։ Նա նշան արեց վոր լռեմ և ինձ զգացրեց վոր նման տպավորալի կացության բոպեին մեզ համար վտանգավոր եր ուրախությունն արտահայտել։ «Զավակներս, — ասաց խիստ կերպարանքով, — մի ցանկաք ձեր թշնամու մահը, նման իղձը վոճիր կլիներ։ Նրա և ձեր ճակատագիրը այս բոպեիս անձանի կշռոքի մեջ կշռվում է։ Շուտով ստվածային կամքը կհայտնվի։ Մեր եվենդին ձիշտ և վոր այսոր վեր և կացել, սակայն զառանցանքների մեջ է։ Նա ցասումով դեն շպրտեց իրեն մատուցված ջրամանը, վախենալով թունավորումից։ Բանից նա արտասանեց ձեր անունը և այդ բառը կրկնապատկում եր նրա հուզմունքը։

Բարի Մահմուդը մեզ ամեն ինչ չեր հայտնում։ Խիստ [փաշան] ջերմի յերբեմն ընդհատվող հանդստությունը բոպեյում կանչել եր յերկու ուլեմաների և Բայազիդի դատավորին։ Նրանց պարտավորեցրել եր թե, յեթե մեզ նման չարչարանքի յենթարկված քրիստոնյաները ազատություն պահանջին, անողոք պիտի լինելին իրենց հանդեպ։ «Շտապեցեք ուրեմն, նրանց վռնդել յեթե ուզում եք վոր քաղաքին նորանոր դժբախտություններ չպատահին», ասել եր Նրանց։ Ուլեմաները մի վճիռ եյին կայացրել, համաձայն փաշայի ցանկության և նրանց գործակալներից ամենաարյունարբու Ռուստամը յեկել եր մեր պլուխները պահանջելու։ Սակայն հարգելի Մահմուդ աղան քաջարար մերժել եր հնազանդվել հակամարդկային մի հրամանի՝ որված զառանցանքների մեջ պահվող մի ձարդուց, վորն իր վերջին շունչը տալու մոտ եր։

Այդ նույն որը, մեր շուրջը շարունակ տիրող լռությունը հանկարծ խզվեց աղաղակներով, վորոնք մեզ թվացին թե գալիս են հարեմից, չնայած, վոր քիչ ժամով եյինք թե պահապանը վոր կոչին եր գոնվում։ Ինչ հետո ազան, համարյա պլխաբաց, ի նշան սգո, յեկավ մեզ հայտնելու թե փաշան մեռած եր [1].

Այդ լուրը մեր մեջ առաջացրեց ուրախության մի շարժում, վոր սակայն, մեր զառդությունը չափավորեց այդ։ Ձիշտ և, թե մենք տեղեկանում եյինք մի մարդու մահվան մասին, վոր մեծ շահ ուներ մեզ կորստյան մատնելու, սակայն մեր ճակատագիրը կախված եր նրա հոյոցից. իսկ ով եր լինելու վորովհետև նահանգին իրավունք եր վերապահված ընտրելու իր կառավարչին, Բ. Դրան հավանությունը ստանալուց հետո։ Բայազիդ քաղաքը Մահմուդի մահից հետո խսկույն յերկու հատվածի բաժանվեց։ Մեկը, վոր կազմված եր ընիկներից, կողմնակից եր Իբրահիմին, հանդուցյալի յեղբորը։ Ձերկար ժամանակ դժբախտ ապրած մի մարդուց նպաստավոր ակնկալություններ ունեյին։ Իսկ քուրդ ցեղերը, վորոնք յերկու յեղբայրների միջև տեղի ունեցող կռիվների ընթացքում զենք եյին բարձրացրել Իբրահիմի դեմ, վորպես իշխանավոր ուզում եյին Մահմուդի վորդուն՝ Ահմեդ բեկին, մի յերիտասարդ, վորի կռվասեր նկարագիրը նրանց մեջ հույսեր եր ներշնչում։ Վերջինների ազդեցու-

թյունը դերապանցնեց։ Ամենքը հայտարարվեց փաշա, և խոսքն նրա անվան մոգեմանքներ և ազոթքներ կատարելիս։ Իբրահիմի հետ հաշտություն կնքվեց և նրան հանձնվեց Թոփրաք-Կալեյի [Ալաշկերտի] կառավարությունը, որքան ակունքից դեպի արևելք քաղաքն մոտն հեռու գտնվող մի քաղաք։

Նոր փաշայի առաջին հոգսը եղավ իր հոր վատնությունը պրաված քուրդերով շրջապատավել։ Կանչելով գաղտն Ռուստամին, որ յեթե վոչ դրդիչը, գոնե մեղսակիցն եր Մահմուդի բոլոր վոճիրներին, հարցաքննեց նրան փաշայության գաղտնի գործերի վերաբերմամբ և նրանից տեղեկացավ մերբանտարկության մասին։ Ռուստամը մեզ ներկայացրեց վորպես խալամության թշնամի, վորպես կասկածելի մտապրություններով ճանապարհորդող մարդիկ, վորոնք պարսկաստան եյին տանում թանգարժեք իրեր, վորոնց մասին յերիտասարդ փաշային խորհուրդ տվավ պրավիլ։ Նրա ասածին համաձայն բանը հեշտ եր, պատնիքի մասին վոչ վոք չգիտեր և անպատիժ մնալը ապահով եր։ Ամենին վերջնականապես հավոտելու համար, նրա առաջ դրեց իննից խլված գինքերն ու գոհարեղենները։ Այդ իրերի փայլից շլացած, փաշան հավանություն տվավ Ռուստամի խորհրդին և մերկորուստը վճռվեց։ Ամենը մեզ խնդրեց ապանել կատը, յերբ թե չմտածեր թե բերդի հանդուգն հրամանատարը, Մահմուդ աղան, սույն վոճրի կատարմանը ուժեղ դիմադրություն ցույց պիտի տար։ Վորոշեց ուրեմն նրան հեռացնել բայազիդից, պատվավոր մի հանձնարարությամբ։ Յերկար ժամանակից խլեր Ամենի մայրը աքսորված եր Թոփրաք-կալե։ Հրամայեց Մահմուդին գնալ և մորը բերել տալ բազմաթիվ ուղեկիցներով։ Ազան չեր կարող չհնազանդել նրան. բայց մեր դեմ նյութված դավադրությունից կասկածելով և ցանկանալով մեզ պաշտպանել վորքան հնարավորություն ուներ պահանջից յերդում տալ իր բացակայության մեջոցին մեր կյանքը հարգելու։

Ամենը յերբեք մտադիր չեր պահել իր խոստումը, սա-

կայն, յերբ պատրաստվում եր դրժել իր ուխտը, իր կարդին ղազ ժանտախտի հարվածները և շուտով ցավերը հասան ամենասաստիկ աստիճանի։ Բազմաթիվ թաթարներ ուղարկեց մոր վերադարձն արագացնելու համար։ Ամեն հնարավոր հոգատարությամբ մորը Բայազիդ փոխադրեցին պատդարակի վրա, սակայն, յերբ նա ժամանում եր, մահամերձ վիճակում գտավ իր տղուն։ «Իմ սիրելի Ամենդ, ասաց նա, մի՞թե քո մահը տեսնելու համար եր վոր ազատվեցի այսպիսի յերկար աքսորից»։ Աղայի կողմից հրահանգված լինելով, նա շարունակեց. «Վորդիս, մի կասկածիր, թե աստվածային արդարադատությունը ծանրացած եր հորդ գլխի վրա։ Դու նույն բախտին կ՚արժանանաս, յեթե հետևես նրան։ Թող քո ձեռները ավելի մաքուր լինեն և քո սիրտը անմեղ»։ Ամենը իսկույն կանչեց Մահմուդ աղային և նրան ասաց հետևյալ խոսքերը. «Չգիտեմ թե ինչ վոգի յե պաշտպանում այդ քրիստոնյաներին և թե ինչ գերբնական մեջոցներ են գործածում յերկինքի զայրույթը հրավիրելու այս քաղաքի վրա։ Ովքեր վոր ուզում եյին նրանց վոչնչացնել, կորան։ Հայրս նրանց մոգական դիվակոչության զոհ դարձավ, և ես ել բռնված եմ մի ցավով, վոր հազվադեպ խնայում է։ Մահմուդի թափառական ստվերը հազար ու մի սարսափելի յերազներով պատկերանում է աչքիս առաջ։ Միթե իր գերեզմանում չկարողացավ հանգիստ գտնել։ Դեռ այս գիշեր ինձ թվաց թե նրան տեսա. տժգույն և այլանդակված եր, ձեռքիցս բռնելով տարավ ինձ դեպի մի գնդան և ցույց տվավ ինձ կենդանի թաղված այդ թշվառ ոտարականներին, կարծես նրանցից սարսափում եր տակավին և ինձ նշան եր անում նրանց շղթաները փշրել։ Այդ ճակատագրական տեսիլը քանի կրկնվեց։ Գնացեք, Մահմուդ, գնացեք։ Ասացեք այդ քրիստոնյաներին, վոր վերջ տան իրենց անեծքներին, և ջանան մեզ դեմ զայրացած յերկինքը հանգստացնել։ Վստահացրեք նրանց, վոր յեթե վողջ մնամ, վերջ պիտի տամ նրանց տառապանքներին և ազատ արձակեմ, գոհացնելով և առատ բարիքներ շնորհելով նրանց»։

Մահմուդ ապան հավատարմորեն այս խոսքերը մեզ հաղորդեց։ Նրա դեմքը ուրախությունից փայլում էր։ Հույս ուներ վոր յերկուսադրդ փաշան շուտով պիտի ազատվեին, սակայն ճակատագիրը, վոր կարծես հրճվում էր մեր անօրինություն ու դերությունը յերկարացնելով, այլ կերպ անորինեց։ Մեր հանդեպ արդար լինելու մտադրությունը հայտնելուց հետո Ահմեդ մահացավ և մայրը քիչ հետո հետևեց նրան։ Իբրահիմ, հագիվ Թոփրաք-Կալե հասած, իմացավ իր յեղբորմորդու ժահը։ Շուտով վերադարձավ և առանց դժվարության հայտարարվեց Բայազիդի փաշա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1 Բայազիդի կառավարիչ Մահմուդ փաշան հիշատակվում է նաև հայ ձեռագրերում։ Նա հայտնի յե իր բռնակալությամբ ժողովրդի և ուրիշ ուղեղների նկատմամբ փաշայի ապարանքն ու մզկիթը Մահմուդը կառուցել էր ավել մի հայ ճարտարապետի, վորի ձեռքերը հետադայում կտրել տվավ, վորպեսզի նա նման հոյակապ շենքեր ուրիշների համար ևս չշինե։ («Այրարատ» էջ 500 և 502)։

ԳԼՈՒԽ Ը.*

Պարսից արքունիքը պահանջում է մեզ. — Իբրահիմ փաշան տանում է Բ. Դուռն նրանցները. — Գետնափարիզ դուրս են քերվում. — Բ. Դուռն պատասխանը. — Յուսուֆ-փաշայի յեվ Իբրահիմ փաշայի բանակցությունները. — Մեկնում Բայազիդից։

Մահմուդ ապայի ազգականությունն ճշտությամբ կատարել էր տված խոստումը։ Իր գրած տոմսը նրա հոգածությամբ հասել էր Պարսկաստան։ Յերևանի խանը կամ նահանգապետը, իր արքունիքի հրամանների համաձայն, մեզ պահանջել էր՝ սպաներ ուղարկելով նոր փաշային։ Այդ պատգամավորությանը, վոր վոչ մի հաջողություն չունեցավ, հետևեցին մի շարք ուրիշները, վորոնց միջոցով Պարսից Շահը սպառնացել էր Բայազիդ քաղաքի վրա թափել իր բոլոր զայրույթը, յեթե իսկույն մեզ ազատ չարձակեին։ Իբրահիմը մեծ շփոթության մեջ էր գտնվում։ Պարսիկ պատգամավորներին նա պատասխանել էր թե իր իշխանության տակ չեյինք գտնվում, թե Բ. Դուռը տեղյակ էր մեր ուր գտնվելու մասին և անպայման պիտի շտապեր տեղեկացնելու մեզ արքային [Շահին]։

Պալատը առելի էր ժողովրդին, Մահմուդ փաշայի կատարած հարստահարությունների ու կողոպուտի արդյունքով կարողացված լինելուն համար։ Այս պալատումն էլին մեռել Թըվաորեն նա և իր վորդին, իսկ Իբրահիմը կամենալով այդ շքեղ ու վայելուչ բնակարանի վայելքները թողնել իր յեղբոր կանանց և վորդիներին, վորոշեց ապրել մի[ջ]նաբերդում,

* Jaubert, էջ 60—65։

իր նախնյաց հին բնակավայրը, որ հակառակ իր ավերակ վիճակին, կրնում էր գեպքերի ժամանակ պաշտպանության ավելի հարմար։ Իր բնակիչներ հաստատեց այնտեղ, ուր հաճախում էին մեծ թվով պիտվորականներ և հայեր։ Այդ ժամին մենք անգլիական ափերը և աշխատակիցներ, որ նրանցից [հայերից] մեկը մեզ նկատեր։ Այդ նպատակին հասնելու համար, պատի ներսի մասում, միմիանցից քիչ հեռու փոսեր փորեցինք, որպեսզի գարշապարներ բարձրանալ միևչեվ այն բացվածքը, որի միջով մի քիչ ոդ և լույս էր մտնում մեր գնդանը։ Բավական ժամանակ անցավ և մեզ վոչ վոք չնկատեց։ Վերջապես մի հայ, որ պատահմամբ աչքերը հառել էր գեպի աշտարակը, մեկնից մեկին նկատեց հայտնեց այս մասին նրան բնակեցնող մի ուրիշ քրիստոնյայի և շուտով մեր բանտարկության լուրը տարածվեց ամբողջ Բայազիդում։ Այն ժամանակ Իրրահիմը անհրաժեշտ գտավ մեր մասին Բ. Դռան կարգադրության դիմել։ Կ. Պոլսից և մինչև պատասխան ստանալը խոստացավ մեր բանտարկության խստությունը մեղմացնել։ Իր խոսքը շուտով հարգեց և դուրս թերվեցինք սարսափելի գետնափորից, ուր այնքան երկար ժամանակ թաղված եյինք։ Հիացմունքով վերահին տեսանք արևի լույսը։ Մեզ տեղափոխեցին Մահմուդ աղայի տան կից գտնվող մի սենյակի մեջ. մենք բավականություն ունեցանք վոդջագուրվելու այդ հարգելի հյուրընկալի հետ...

Թեև տակավին մեր ճանապարհը շարունակելու ազատությունը չունեյինք, ազատան, սակայն, մեզ ժպտում էր ժանտախտը գադարել էր ավերներ գործելուց Բայազիդում։ Մեր հյուրընկալի ազգականները, բարեկամները և նույնիսկ քրիստոնյաներ թույլտվություն ստացան գալու և մեզ տեսնելու։ Յերրևին ազան մեզ տանում էր իր դիվանատունը, ուր գտնվում եյին քաղաքի ամենահարգելի շեյխերը, ուրախանում էր նրանց պատմելով մեր գժբախտությունների մասին, նրանց հաղորդելով յեվրոպացիների բարքերի, սովորությունների և ճարտարարվեստի մասին։ Յերեկույթը

ընդհանրապես վերջանում էր մի ընթրիքով, որի ժամանակ նրա կողքին եյի նստում։ Թուրգուբանդով դիտելով ինձ, ասում էր. «Տեսնում ես, զավակ, ասված միշտ վոգորմած և գթասիրտ եյ։ Ինչ վերաբերում է ազայի աղգականությունն, նա պատասխանի գալիս էր մեր նոր բնակարանի դռնից հեռու, նա պատրաստ էր մեզ նոր բնակարանի դռնից մեզ տեսնելու, առանց սակայն շեմքից ներս անցնելու։ Այն որվանից, երբ իմացել էր թե մեր նամակը Պարսկաստան և հասել և որ շուտով մենք հույս ունեյինք ազատ արձակվելու, մեզ հետ այլևս չէր խոսում, սակայն նրա ուշադրությունը մեր վերաբերմամբ մի րոպե անդամ չպակասեց։

Փաշայի սպասած հրամանները կ. Պոլսից ստացվեցին վերջապես։ Կարգադրված էր որ իմ թղթերն ու իրերը վերադարձնեյին ինձ և ես պատվավոր կերպով առաջնորդվեմ, ուղեկիցներով սակայն, գեպի Յուսուֆ-փաշայի բանակատեղը, որ երկարատև շնորհագրկությունից հետո, ստացել էր բեյլերբեյի աթոռոսը և Տրապիզոնի, Երզրումի և Մամղենի իշխանությունը։ Նա շարժվում էր գեպի մեծ Հայաստան, որըստորև ամող մի բանակի գլուխ կանգնած և որ հրաման էր ստացել ձնշել նախկին Սոֆինի (Sophene) երկրում գտնվող Ջանիկի և Գյուլիկի երկար ժամանակից իվեր ապստամբ ժողովուրդները։ Ենդերեսի (Endres) գաշտավայրը հասնելով, բեյլերբեյը լսել էր Մահմուդի և նրա վորդու Ահմեդի մասին։ Վորովհետև Թուրքիայում փաշաների հաջորդության ընտրությունը պատկանում է սուլթանին, Յուսուֆը արքունի գանձի իրավունքները գնահատել տվավ։ Սկսեց հինգ միլիոն դուրուշ (յոթ և կես միլիոն ֆրանկ) պահանջել։ Բուրգերը այդ գումարը գտան այնքան չափազանց, որ սպառնացին ավելի շուտ Շահի ծառայությանն անցնել քան թե վճարել։ Նրանք առաջարկեցին 500.000 դուրուշ։ Բեյլերբեյը ամբողջովին զբաղված լինելով իր ռազմական ծրագրներով, որոշեց նրանց հետ բանակցել։ Նրանց ուղարկեց իր գլխավոր սպաներից մեկին, իր սիլահդար աղային, Բայազիդ հասնելով, նա գտավ որ Իրրահիմ պատրաստակամ էր հնազանդվելու ավելի քան սպասվում էր։ Յեր-

կու որվա ընթացքում պրամի հարցը կարգադրվից և համաձայնություն կայացավ վոր նա անկնկլի Յաւուզի պատվիրակի հետ[1]։

Մեր անկնումի նախընթաց որը, Իրրահիմ փաշան, շրջապատված շեյխերով, մոլլաներով և թիկնապահներով, սիլահդարի ներկայությամբ ինձնից ընդունեց բանավոր և գրավոր կերպով՝ նրա ազնվության և անցյալի անհիշաչարության մասին։ Հետո հրամայեց՝ վոչ միայն վերադարձնել իմ թղթերն ու այն բոլորը, ինչ վոր իր նախորդները սեփականացրել էին իմ իրերից, այլ նաև այն բոլորը, ինչ վոր բաժանել էին նրանց արքունականներին։ Ինձ ձերբակալող զորքերը, վորոնք ժամանակից ազատվել էին, Մամուդի տան մի դահլիճը գալով ինձ վերադարձրին այն՝ ինչ վոր իրենց բաժին էր ընկել։ Սարսափով էր վոր նրանց կես վերադին տեսա։ Նրանցից մեկը, կերը նկատից այդ հանդգնությունն ունենալով ինձ ասելու. «Հիշիր վոր կյանքդ մեզ ես պարտական։ Յեթե ուզենայինք, կարող էինք քեզ սպանել, կերը կալանավորեցինք քեզ և կարող էինք ձեռացնել թե դիմադրություն էիր ցույց տվել»։

Այն որը, կերբ կես Բայազիդից պետք մեկնելի, Մամուդ աղան և ամբողջ իր ընտանիքը կազմող անձնավորությունները իրենց տոնական զգեստները հագան՝ ինձ արտահայտելու համար իրենց ուրախությունը։ Նա լինելով ավելի պիտոիրա քան շահասեր, հակառակ իմ խիստ պնդումներին, վոչ մի նվեր չուզից ընդունել ինձնից։ Սակայն, Ֆրանսա վերադառնալուց հետո, կառավարությունը իր դոհունակության ապացույցները ավալ նրան։ Յես նրանցից ամենագործնականը հրաժեշտ առի և արտահայտած ցանկության համաձայն, կես նրանց թողի լատիներեն և թրքերեն լեզուներով մի գրություն, վորի թարգմանությունը հետևյալն է. —

«1805 թվի Հիջրեի Բրիստոսի և 1220 թ. հիջրեթի։ Պարկատանի Ֆաթ Ալի Շահն մոտ դիվանագիտական մի պատվիրակությամբ հանձնարարություն ունեցող մի Ֆրանսացի անգլիացին մատնված, կալանավորված և Բայազիդի միջնաբերդում նետված եր մի զնդանի մեջ։ Իր կյանքի պահպանությունը նա պարտական և բերդի հրամանատար Մամուդ աղայի վհռանձնության։ Իզիվ էի այս յերկիրն այցելող ճանապարհորդները այդ պատկառելի ասպետականին գոնեն կյանքով և ինջնանկության լիառատ»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Թուրքիայում փաշայության կամ վիլայեթների կուսակալության պաշտոնները ընդհանրապես վաճառվում էին առավելագույն վճարողին։ Հաճախ այս փաշայությունները ժառանգական էին վորդուց վորդու։ Փաշաները պարբերաբար հարկ էին վճարում սուլթանի կառավարության և դրա փոխարեն իրենց կարգին ստորադասների ու գործակալների միջոցով, անվերջ կողոպտում էին ու հարստահարում աշխատավոր ժողովրդին՝ վորպեսզի այդ միջոցով մի կողմից հայիհայթեն այն գումարը, վոր վճարում էին կենտրոնական կառավարության և մյուս կողմից դիզելու համար անսահման հարստություն և չարունակելու կաշառքի միջոցով պահել իրենց դիրքն ու պաշտոնը։

ԳԼՈՒԽ Ը.*

Մեկնում Բայազիդից.— Ժամանում Թոփրաք-Կալե.— Գեղիկ կամ Բեռան-Դաղի կիրճը.— Անցքի վտանգներ.— Ժամանում Յուսուֆ-փաշայի բանակատեղը.— Այդ զորավարի բնութեան յատկութիւնները յիշ ևրա բնութագիրը:

Ինչպես արդէն վարոշված եր, Բայազիդից մեկնեցինք, 19 փետրվար 1806 թ., Յուսուֆ վեզիրի սերասկարի հետ, որի չհաւատից դնում էին զրամով բռնադատված մի չնչին վեցչակ չորիններ: Վարովհետև գետինը ձյունով ծածկված եր և քուրդերը փակված էին դյուղերում, կարող էինք առանց պահակախմբի ճանապարհորդել. սակայն սերասկարը, կամենալով զորութիւնս վորևե փորձից նրանց կողմից կամ վախենալով վոր ցանկութիւնն հայտնելին ուղղակի Պարսկաստան անցնելու, Իրրահիմ փաշայի մի խումբ ձիավորներ ուղեկցեցին մեզ մինչև Երզրում:

Մեր ընթացքը խիստ դանդաղ եր: Բանի մոտենում էինք Երզրումին, ավելի վեր էինք բարձրանում. ցուրտը ավելի ուժեղ եր և ձյունը ավելի թանձր: 22-ին Թոփրաք-կալե հասնելով, իջևանեցինք մի քուրդ ազայի տանը, վոր իմ նկատմամբ հայտարարեց. «Յեթե այս անհավատին պատահեի դաշտում, կհարձակվեի վրան և կթալանեի. այստեղ իմ հյուրն է և պարտավոր եմ նրան լավ ընդունել»:

Գիշերը քնեցինք Թոփրաք-Կալեյում և հետևյալ առավոտյան այդ քաղաքից մեկնեցինք անցնելու համար Գեղիկը կամ Բեռան-Դաղի կիրճը [Սուկավ լեռ][1] և հետո իջնելու բա-

* Jaubert, էջ 79—87:

ձունը ճանապարհը անանցանելի եր դարձնում: Կարավանից շատերը կամենալով ձյան արտացոլած արևի ճառագայթների շլացումից պաշտպանվել, գլուխներն ավել քողերով ծածկեցին և կամ մի տեսակ ակնոցներ դրին, վորոնց մեջ ապակին փոխարինված եր գորշ բրդյա մի գործվածքով. վոմանք էլ այս նախազգուշացումներին ավելացրին քիթերնին լցնելով: Նրանք համոզված էլին, թե դա ապահով միջոց եր կանխելու համար վերոհիշյալ ցոլացումից առաջացող խիստ ցավատիպ աչքացավը:...

Մեր փոքր խումբը համրաքայլ բարձրացավ Գեղիկը: Ոդի ամենափոքր շարժումը անհանդստացնում եր իմ ուղեկիցներին. սառնիկ վախենում էին վոր դա մրրիկի մի ազդանշան կարող է լինել: Հազիվ անցել էինք լեռան ամենաբարձր զագաթը, յերբ ձյան մեջ տեսանք ցիրուցան յեղած մարդկանց և ձիերի դիակներ և պարկեր: Նախընթաց որը պարսկական մի կարավան հանկարծակի փոթորկի յեր բռնվել: Մեր քուրդերը, ուրախացած այդ ավարից, հարձակվեցին պարկերի վրա, սակայն նրանց մեջ միայն չոր միրգեր կային:

Բանեցին նկարագրում և այն դժվարությունները, վոր հուղները կրեցին այդ անցքը կատարելու համար: Գեղիկի լեռնաշղթան այսոր ծառայում է վորպես սահման Սեվիվանի կերկրի [Բայազիդի] և Երզրումի փաշայության միջև: Բասենի[2] դաշտավայրում տեսանք թրքական չորսհազար հոգինոց մի հեծելազոր, վոր սահմանված եր հարձակելու Բայազիդի փաշայի վրա, յեթե վերջինս դիմադրություն ցույց տար:

Յուրաքանչյուր մեզ պահից Երզրումում հինգ որ, այսինքն մինչև մարտի 3-ը: Այնտեղ այլևս չգտա մաքսատան վերակացու Ահմեդ բեկին, վոր ինձ այնքան սիրալիր ընդունել եր առաջին անգամ անցնելիս: Բաջարի և դժբախտ ծովակալ Հուսեյին փաշայի կողմնակիցներից մեկը համարվելով, իմ բացակայության ընթացքում նրան աքսորել էին Արշիպելագոսի կղզիներից մեկում:

Ինձ բնակիչքին երբրուսի պիտավոր ներկայիներից մեկի տանը։ Այնտեղ բոլորովին ապատ չեյի, սակայն հանդիպում եյի քաղաքի ականավոր անձանց, որոնք խիստ մտադրված եյին վահարիների դեմ բողոք կատարած առաջ խաղացումից։ Ինձ թուլյաարմից Տրապիզոնի ֆրանսական հյուպատոս պարոն Իլուպրիին մի նամակ գրել և անից դուրս գալ մի քանի դնուժներ կատարելու համար։

Բելլեր-բելի բանակատեղը, ուր դնում եյինք, գտնվում եր Ենգերևա գյուղի մոտ, Երզրումից դեպի արևմուտք ուղտաուն մղոն հեռավորության վրա։ Տասնեակ որվա ընթացքում կարեցինք այդ ճանապարհը։ Ջնայած որ մեր անցած տեղերը լեռնային եյին, բայց մշակության համար ինձ շատ հարմար թվացին, սակայն հնձելազորը այն աստիճան ավերել եր, որ գյուղերը ամբողջությամբ լքված եյին։

Բայազիդից մեր մեկնման քսան և չորրորդ որը հասանք բանակատեղին, այսինքն ապրիլյան 1806 թ.։ Յուսուֆ փաշան անձնապես ճանաչում եր ինձ. իրրև մեծ վեզիր, նա յեր որ ինձ նեղկայսրել եր սուլթան Սելիմին, իմ նախկին առաքելության ժամանակ։ Նա նոր եր տեղեկացել այն հաղթություններին մասին, որ մեր բանակները տարել եյին Ամասերիայի դաշտում. նա ինձ ընդունեց բարյացակամությամբ և իր շքախմբին ֆրանսացու անունը հարգելի դարձնելու համար հրապարակով հարգանքի մեծ նշաններ արտահայտեց իմ հանդեպ. «Բարեկամս, ասաց նա, դու այլևս այստեղ քաղքերի մեջ չես։ Ցես ք. Դրան ծառան եմ, որն ինձ հանձնել և Հայաստանի իշխանությունը։ Ցես ամեն հնարավորը պիտի անեմ իմ ճամբարում անցկացրած ժամանակդ հաճելի դարձնելու համար։ Շատ եմ ցավում, որ Երզրումում չեմ գտնվում, ուր կարող եյի քեզ ավելի լավ ընդունել և արտահայտել դեպի ձեր քաջ ու վեհանձն ազգն ունեցած համակրությունս. այստեղ քեզ կարող եմ պահել միայն որպես մի զինվոր, սակայն հուսս ունեմ, որ դու դոհ կլինես իմ զինվորական անկեղծությունից և իմ ընդունելությունից։ Ցեթե տերը կամենա, Պոլսից իմ սպասած հրաման[ները] շուտով կատարվին և քեզ համար նպաստավոր կլինեն։ Դու կդնաս պարսից արքունիքը. կտեսնես թագավորին և իշխանազուններին. դու ինքդ պիտի գնահատես այդ անարժան շքեղության պատճառները, այդ անկեղծությունից զուրկ քաղաքավարությունը, այդ այնքան խարեբա բարքերի դեղեցկությունը, որոնք, սակայն, այնքան գովաբանված են ձեր կայսրության մեջ։ Ցեվ Ֆրանսա վերադառնալով, կես հույս ունեմ որ ամանցիներից լավ հիշատակներ կպահես և մանավորապես Յուսուֆ փաշայից»։ Մեր ժամանած որվա յերեկոյան մի նամակ գրեցի Պ. Ռուֆենին (Ruffin), որը հրատարակվեց «Մոնիթեուռում» 21 մայիսի 1806 թվին։

Յուսուֆ փաշան, թեև յոթանասուն տարեկանից անց է, սակայն տակավին պահում է մտքի ու մարմնի մի տարորինակ ուժ։ Հաղթանդամ կազմվածք ունի, իր դիմագծերը կանոնավոր չեն. նրա մորուքը սպիտակ է և նոսր, իսկ հայացքը կենդանի ու խորաթափանց։ Ծնած լինելով վրաստանում, մանուկ հասակից նրան բերել են կ. Պոլիս որպես սարուկ։ Նրան տվել են դուռ դինվորական կրթություն, որ լիովին համապատասխանում և նրա պատերազմական բնավորության, և դինվորի ամենացածր աստիճանից հասել և կայսրության ամենաբարձր դիրքին։ Պալատական պաղտնիքների մեջ թափանցելու ճարպիկություն ունենալով և լինելով քաջ հրամանատար, կարողացել է ձեռք բերել Սուլթան Սելիմի հարգանքն ու վստահությունը, որի մանկության ծանոթ եր և որի հանդեպ տածում եր սեր ու հարգանք։ Յերևում է, որ նա ք. Դրան մոտ մեծ ազդեցություն է վայելում, որովհետև հակառակ այն պարտությանն, որ նա կրել եր Յեզիպատոսում ֆրանսացի զորավար Կլեբերի բանակից և հակառակ արքունիքից հեռացվելուն և բազմաթիվ մրցակիցների մեքենայություններին, նա հաջողել է ամբողջ յոթը տարի վարել մեծ վեզիրության պաշտոնը։ Բայց և այնպես նրա պաշտոնանկությունը տեղի ունեցավ կ. Պոլիս իմ ժամանման միջոցին, յերբ գնում եյի դեպի Պարսկաստան։ Վորևե մի ուրիշ վեզիր, նման դեպքում

կյանքից կղրկվեր և կամ առնվազն աքսորի կդատապարտվեր։ Բավականացան Յուսուֆից պահանջելով միայն չերկու միլիոն դահեկան և նրան մի ժամանակ զորից հեռու պահելով։ Նա քաշվեց Վասիորի իր ամառանոցը։ Հայաստանում բռնկված խռովությունները ճնշելու համար... միայն Յուսուֆ փաշային վստահեցին և նրան նշանակեցին բելլերբեյ։

Յերբ նրա բանակատեղը հասա, այդ զորավարը տակավին զբաղված եր զինվորական մարզանքով։ Շատ և սիրում մարզանքը, թեև խաղերի մեջտեղին առացել և ջիրիդի մի հարված, որից իր մի աչքը կորցրել և։ Նրա վրա մեծ ազդեցություն ունեին նրա մեհտուրդարը (կնքապահը) մի չերիտասարդ՝ անբաղդատելի ճարպիկությամբ ու թեթևաշարժությամբ..., նրա զանձապետը, ֆինանսական գործերը վարողը, աստիճանավոր իմամը, որ կարդում և դուրանը և բաշ չոհադարը (ամենագործոնի և չերբևիմն անպատվաբեր հանձնարարություններ վարող աստիճանավորը)։ Նրա մոտն եյին գտնվում նաև Երզրումի նահանգապետը, հանքերի վերակացուն և ուրիշ անձնավորություններ, որոնք վոչ մի առիթ չեյին վրիպցնում նրան ուղղելու ամենաչափազանցված շողոքորթություններ և ծափահարություններով ծաժկում եյին, չերբ նա իր ուժն ու ճարպիկությունը հայտնաբերում եր թե սկուտեղ նետելու, թե նիզակախաղի ժամանակ։ Վերջապես հոպիտի նման մի խափշիկ սորուկ ուներ, որ նման առիթներում ճառեր եր խոսում և անմեղսաբանթեթև ձևերն եր առնում, և որ իր տիրոջ կողմից համարյա միշտ արժանանում եր մի քանի վոսկի նվերի։

Յուսուֆ փաշայի ճամբարը գտնվում և ընդարձակ ու բարեբեր մի դաշտի ծայրում։ Ասիայի լավագույն հոտերը զետեղված են այս ավանի շրջակայքը, որի մեջ՝ այդ զորավարը բնակում և և ուր կառուցել և մի մզկիթ և մի մեծ պալատ, բաժանված բազմաթիվ հարկաբաժիններով վրաններով տակ, հողե հյուղակներում և շրջակա գյուղերում տեղավորված են [նրա զինվորները]՝ գժվար կառավարելի ալբանացիներ, կիսաթափառաշրջիկ թուրքմեններ, որոնք հնձելազոր են, և կարամանիայի զանազան նահանգների անառակները... (այդպես են անվանում կ. Պոլսում փոքր Ասիայի մահմեդականներին)։ Այդ զինվորները վոչ լավ հագնված եյին, վոչ լավ զինված և վոչ էլ վարժ լավ կարգապահություն։ Սակայն, Զանիկի բնակիչների վրա ներշնչած վախը և գլխավորապես Ասիական Թուրքիայում ուրիշ կարևոր մի անձնավորություն, Զափան ողլուի հետ նրա [Յուսուֆ փաշայի] վարած խելացի բարեկամությունը պատճառ եյին հանդիսանում, վոր այդ զինվորները զգուշանային անկարգություններ գործելուց։

Ենդերես ժամանման հետևյալ որը, Յուսուֆ փաշան լինձ առաջնորդեց իր բանակի մի զորահանդեսին, որից հետո լինձ տարավ իր պալատը։ Այնտեղ, անուններով կանչելով այն սպաներին և զինվորներին, որոնցից ամենից ավելի գոհ եր մնացել, լիարուն բաժանեց Բայազիդից իր սլաշահարքի բերած գումարների մեծ մասը։ Այդպիսով ձեռք բերելով իր հրամանատարության տակ գտնվողների սերը, Զանիկի բնակիչների դեմ զինվորական գործողություններ սկսելու տրամադրություն առեղծեց։ Այդ պատերազմի պատճառը պարզելուց առաջ, մի քանի խոսքով նկարագրում եմ այն չերկիրը, որ կռվի բեմ և հանդիսացել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բեռան գաղ, հին հայկական անունով Սուկավ, Սուկավետ կամ Ջրաբաշի լեռներ, բազրևանդ գավառում։ Ըստ Լինչի ունի ծովի մակերեսից 11262 վոտք բարձրություն։ Կոնաձև ու բարձր մի տեսք ունի, վոր շատ նման է Մասիսին, և իջնում է շրջակա լեռների վրա։ Առատ է ջրով, Նրանից բղխող չերկու աղբյուրներ խառնվում են Արածանիին և Արաքսին (Տես «Այրարատ» էջ 536—538, Lynch, «Armenia», հատ. II էջ 384,)

2. Բասեն հին Այրարատ նահանգի ամենաընդարձակ գավառն եր, բաժանված Վերին և Ստորին Բասենի։ Հայ մատենագիրները հաճախ գրում են Բասեանք, ինչպես նաև թուրքերը ասում են Բասենիր։ Ընդարձակ հովտաձև մի դաշտավայր է, ծովի չերեսից մոտ 5000 վոտք բարձր։ Նորենացին գրում է. «Հովիտ մեծ Բասենոյ» կամ «քաջ ընդարձակ հովիտն Բա-

անվից։ Հինգերորդ գարում Բասենի սահմաններն էին, հյուսիսից Տայք արևելքից՝ Վանանդ և Յերասխաձոր, հարավից՝ Բագրեվանդ և Տուրուբերան, իսկ արևմուտքից՝ Բարձր Հայոց Կարնո գավառ։ Իմպերիալիստական պատերազմից առաջ Վերին և Ստորին Բասենների հայ բնակչության թիվը եր 12.000։ (Տես, Ալիշան, «Այրարատ» 15—44 «Ստորագրություն հին Հայաստանի» 380—387. Lynch, «Armenia», II. 193—196։

3. Ենկերևա, Շարին կարասիսարի շրջանում Անգիրիա գյուղը, որը հիշատակում է նաև Նյուբերին (տես, «Ուղեգրություններ» Ա. Հատ. եջ 458)։ Իմպերիալիստական պատերազմից առաջ ուներ 240 տուն հայ, և 60 տուն թուրք բնակչություն

ԳԼՈՒԽ Ժ։ *

Ջանիկի նկարագրությունը. — Այդ յերկրում ծագած պատերազմը. — Ցուցմունք փաստաթղթերի և դիմել խորամանկությանը՝ ճնշելու համար բնակիչներին. — Ջանիկի վիճակը, թափառելու, վախուստի յե դիմում. — Ճերմակի գրավումը։

Ջանիկը կրկին Ըրմակից [Ալիս գետից] տարածվում է մինչև Կերասոն, որ Կերասոս (Cerasus) կամ նախկին Փառնակիան և (Pharnacie)։ Դա մի լեռնապատ յերկիր է, կտրված բազմաթիվ գետերով և որի կլիման խիստ խոնավ է, այդ պատճառով էլ բուսականությունը անհամատարած է և այն աստիճան, որ յերբեք ամբողջ պակաս չեն լինում ընդհանուր հատնում է իր բարձրության։ Ծաղոդը և ձիթապտուղը նույնպես Ջանիկում աճում են զարմանալի արագությամբ, սակայն պտուղը միշտ խակ է...։ Բնիկները յերկրագործությամբ քիչ են պարապում։ Սիրում են միայն հանգստավետ կյանքը և անվում են շագանակով, յեգիպտացորենով և կաթնեղնով։ Կեռասենին, կաղնին և ընկուզենին, Ջանիկի սեփական ծառերը, նույնպես հայթհայթում են նրանց սնունդի մի մասը։ (Ինչպես հայտնի յե, այստեղից է որ հռոմայեցիք Յեվրոպա փոխադրեցին կեռասենին, սակայն մեզ մոտ այդ ծառի պտուղը՝ մշակության շատ աղնվացավ)։

Նախնիք, այս յերկրների բնակիչներին ճանաչում էին Մոզինոյք (Mosynoeques), Շալիբ (Chalybes) և Տիպարենացի (Tibareniens) անուններով։ Պատմությունը նրանց ներկայացնում է վորպես խիստ վայրենի։ Բաժանված լինելով

* Jaubert, եջ 88—94։

մարդկության մնացյալ մասից, նրանց քիչ են ճանաչում և նրանցից էլ քիչ են ճանաչված։ Նույնն է նաև այսօր։ Թեպետ և վաղուց շրջապատված քաղաքակրթված հարևան ազգերով, սակայն Ջանիկի բնակիչները մեզ համար խորհրդավոր էակներ են նրանց հետ։ Նրանց մասին հարյուր պատճառներ ունեցողը հարուստ է համարվում։ Նրանց կյանքում ձի բուծելուն չկա և կարավաններ չանցնելու հետևանքով, քուրդերի նման գողության անձնատուր չեն և ոչ էլ Լիպիների ու Արխադների նման սուրհանդակ պահելու սովորություն ունեն։ Ջանիկում դերիվաճառություն չկա։

Վորովհետև այնտեղ ապրում են կառավարչական ապահովության մեջ, բնակարանները կառուցված են ցրված լեռների գագաթում, դեպի ծովի ափերը և այն բոլոր վայրերում, վորտեղ տալիս են վորևէ բնական առավելություն։ Նրանք շինված են վայրից և կանոնած ձորերի վրա։ Յերբեք նրանք նահարկում չեն բնակում, գիտեն խոնավության պատճառով, իսկ վերնահարկը շրջապատված և ծածկված մի պատշգամով |անկյակներից| մի բանիսը հատկացված են տղամարդկանց բնակության և առարկաների ընդունելության համար։ Այսեղները ծառայում են վորպես հարեմ (կանանոց)։

Ինչպես Սարաբոնի ժամանակ, այսօր էլ Ջանիկում կարևոր քաղաքներ քիչ կան։ Դրանցից գլխավորն է Բաֆրան (Bafra), վոր չափազանց շփոթել մեր գիտնական Անվիլի հին աշխարհագրության մեջ նշանակված Զաֆրա (Zafra) անվան հետ. գտնվում է ծովեզերքում և կիզիլ Իրմակի գետաբերանի մոտ, վուշի և բրինձի բարերար մի դաշտում։ Մի գեղեցիկ կամուրջ, հասարակաց աղբյուրներ և լավ սարքավորված բազարները ցույց են տալիս, վոր այդ քաղաքը բավական ծաղկյալ մի վիճակի մեջ է։

Սամսոն, Տերմե (Termeh), Ունիե (Eunieh), Ֆաթսա (Fatsa), և Վոնա (Vona) քաղաքները շինված Սեվ ծովու այս մասում, պատկանում են Ջանիկին, և մեծ մասամբ հունական գաղութներ են։ Նրանք այնքան էլ վաճառաշահ չեն համեմատած Ղրիմի Ոսմանյան կայսրությունից անջատվելուց

հետո։ Բացի այդ, նրանց նավահանգիստները շատ անապահով ապաստարաններ են արևմտյան քամիների դեմ, վորոնք տարվա մեջ ամենա ընթացքում փչում են այս մասում։ Ինչպես Անվիլը նկատում է այդ, նախկին Պոնտոսի այս մասը կապադովկիայից բաժանված է մի մեծ լեռնաշղթայով... Լեռների գագաթի վրա շղթին դիզվելով, անդադար վերածվում է հորդառատ անձրևների և դրանից է առաջանում այն խոնավությունը, վորի մասին խոսեցինք։

Ջանիկի ծովեզերյա մասը չունենալով հարմար ճանապարհներ, շատ քիչ ճանապարհորդներ են փորձել այնտեղից անցնել, և թուրքերն իսկ այդ կերկրի բնակիչներին համարում են բարբարոսներ. սրանք մի գարուց իվեր ապրում են կերջանիկ անհայտության մեջ։ Հարուստ ու ազդեցիկ մի ընտանիք, կառավարիչներ եր հայթհայթում Ջանիկին, փաշայի տիտղոսի տակ. սրանք հայրական իշխանություն ունեին և ճշտությամբ կ. Պոլիս եին ուղարկում մորթի |պետական հողերի| տարեկան արտադրանքը և մյուս հասարակական հարկերը։ Բ. Դուռը գոհ եր նրանց հնազանդությունից, և բացի այդ, Լազերի նախկին կերկրի կողմից մտահոգ լինելով, ուր ապստամբությունները համարյա տեվական եղին, Ջանիկի փաշայության |սահմանները| տարածեց մինչև Տրապիզոն, վոր հետագայում հասավ բարգավաճման բարձր աստիճանի։ Յուսուֆ փաշան, կերը ստանձնեց Մեծ Հայաստանի իշխանությունը, նախանձով տեսավ իր հարևանների կերջանիկ կյանքն ու անկախությունը։ Թվում է նաև վոր Ջանիկի փաշան, թահիրը, անձնապես նրան արշարացի պատգամներ եր ներկայացրել։ Տրամադրված լինելով նրան նկատել վորպես մի ապստամբի, Յուսուֆը իրավունք ստացավ սուլթան Սելիմից այս կերկիրը միացնելու իր կառավարության։ Սակայն, ավելի հեշտ եր կ. Պոլսից ֆերմաններ ձեռք բերելը, քան գործադրելը։ Թահիրը մերժեց հնազանդվել։ Նրա որինակին հետևեցին քաղաքների և գյուղերի բոլոր այանները և պատերազմը պայթեց։

Յուսուֆ փաշան քսանից քսանհինգ հազարոց մի բա-

նակի պլուխն անցած, ուզում էր փորձել վճռական մի ճակատամարտով լուծել իր վախճանին հասցնել։ Սակայն ցրված ու առանձնակի կուխլներին վարժ մի ժողովուրդին թնչպես պիտի կարողանար կենտրոնացած դնել։ Թրքական հնձելաղորը լուռ պիտի փորձեր թափանցել լեռնային մի յերկրում, ծածկված անմատչելի անտառներով և կարված բազմաթիվ գետերով։ Յուրաքանչյուր լեռնանցք, յուրաքանչյուր ժայռ Զանիկի բնակիչներին ընծայում էր նպաստավոր մի դիրք կամ ապահով մի թաքստոց։ Թաքնված անտառների մեջ կամ պատկած գետնի վրա, իրենց յերկար հրացանները դնում էին ծառերի կամ քարերի վրա։ Այդպիսով նշան էին բռնում թուրք պինդարներին, որոնք հանկարծակիի յեկած իրենց շուրջ սուլող գնդակներից, չէին տեսնում թշնամիներին։ Այս տակտիկան առաջացնում էր պատերազմական գործողությունների մեջ այնպիսի մի դանդաղություն, որ նեղացնում էր Բեյլերբեյին։ Յուսուֆը անհամբերությամբ ուզում էր այդ պատերազմը վերջացնել, որպեսզի հետո դեներն ուղղի Դիարբեքիրի հյուսիսում, լեռների մեջ գտնվող Գյուջիքի (Gudjik) քուրդերին, ուր, ինչպես վերևում հիշեցինք, հարուստ վոսկեհանքեր են գտնվում։ Նա Զանիկ ուզում էր սկսել գործակալներ, հանձնարարելով նրանց բնակիչներին հասկացնել թե Բ. Դռան հրամաններին ընդդիմանալը լուռ եր և իրենց շահը պահանջում էր խնդրին հնազանդվել։ Այդ պատվիրակները դրամ ցրվեցին, բեյլերբեյի ազատամտությունն ու բարեսրտությունը գովարանեցին, չափազանցրեցին նրա ուժը և հաջողեցին իրենց կողմը շահել ամենից անհաշտելիներին։ Ուրիշները, սարսափած այս քայքայումից, ապաստանեցին ծովեզերյա քաղաքները։ Թշնամական մի նավատորմիղ յեկավ այս դեպքերի վայրը և շատ տեղեր հրկիզեց, մասնավորապես Սամսոնը և Ունիյեն։ Ծայրահեղ դրության հասնելով, Թահիր-փաշան նստեց մի նավակ, ապաստան գտնելու համար Աբխազների մոտ, որոնք անձնվեր եյին իր վերաբերմամբ.... Սակայն, հակառակ քաղաքական մինչև Թահիրին բերին Տրապիզոն։ Բարերախտաբար քաղքի ազան, հարցնելով նրան որպես դժբախտ ու քաջարի մի պետի, մի՞ոցներ հայթհայթեց նրան գնալ Ֆաշ (Fasch) կամ Ֆազը (Phase) [Փոթի] համարյա առանց հետևորդների։ Նա հասավ Սուխում, Փիլիչ-բեկի մոտ։

Ոսմանցիները համոզված են թե անհրաժեշտ է գործադրել մեծ խստություն նոր նվաճված ժողովուրդների հանդեպ։ Հետևաբար Յուսուֆ փաշան մահապատժի յենթարկեց բազմաթիվ ապստամբների, խոշոր տուգանք պահանջեց այն բոլորից, որոնց կյանքին խնայեց, և իր դրբքը Զանիկի գյուղերում բնակիչների ըստ կամս։ Դրանից առաջացան նոր ապստամբություններ, որոնք սակայն, բոլորովին թերևս անկարելի էին հետևանքը չէին։ Նա գանկանում էր լիներ խաղաղ, մխիթարական արդար, մանավանդ կարգը վերանել խնդրում, այդ դժբախտ նահանգում, բայց իր հրամանատարությանն ատկ գտնվող դիվիզիաները անգութ գործած [թշնամու] պարտությունից, որբերացած հաջողությունից և մանավանդ խաղաղ ձմռավ։ չէին կարող չափավորությամբ վարվել։ Նրանցից առաջին մի ընթացք պահանջելը կնշանակեր անհնարինը ուզել։ «Հավատա, յեթե կցանկանայի, նակիր անհնարինը ուզել։ «Հավատա, յեթե կցանկանայի, ասում է Թրքական մի առած, թե լեռները փոխել են իրենց տեղը, բայց մի հավատար վոր մարդիկ կարող են փոխել իրենց բնավորությունը»։

ԳԼՈՒԽ ԺԱ. *

Ենդերեսի դաշտում հայերի վայելած ապահովությունը՝ Յուսուֆ փաշայի պաշտպանության տակ. — Գյուղերի յեվ դաղթականների հայերի տարբերությունը, — Յուսուֆ փաշային Բ. Դռան տված հրամանները. — Այս զորավարի վերաբերությունը. — Հերդենակը մեկնում է ոսմանյան հարաբերից փաշայի մի ապահենց. — Ցերզնկա. — Տավրոսի յերկու լեռնաշղթաների բաժանումը. — Իլիջա. — Չեննենս. — Աշ-կալե. — Երզրումի շրջակայքը. — Թողնում ենք ալ դիծը. — Ալավիր. — Գյուլլի գյուղացիների մերժումը. — Վանի շրջակայքը։

Ոսմանյան բանակատեղում անկապրած ժամանակ ազատությունն առավ շրջել Ենդերեսի դաշտավայրը և այնտեղ տարածված քրիստոնյա գյուղերն այցելել։ Հաճույքով հաստակել փաշայի նրանց ցույց տված պաշտպանության արդյունքները։ Հակառակ պատերազմի դործած ավերումներին, հայերը խաղաղ կերպով մշակում էին իրենց դաշտերը. նրանց կանայքը չէին վախենում առանց զույի յերևալ գինվորների ներկայության։ Նրանց յեկեղեցիները հարգված էին, նույն իսկ գիշերները ցերեկվա նման բաց էին։

Արևելքում քրիստոնյա յեկեղեցիները չունեն մեր տաճարների պատկառելի տեսքը։ Մուտքի դուռը միշտ դեպի արևելք է նայում և սովորական տների դռներից զանազանվում է միայն մի խաչով։ Ներսի մասում, մի պարզ խորան և մի քանի կոպիտ նկարներ միակ զարդարանքն են կազմում. սակայն հայերը այնտեղ մտնում են վոտաքորիկ։ Քահանաները հագնում են սպիտակ շապիկ և արևածագին սկսում են լսվել նրանց առավոտյան մեղեդիները։ Յեթե իսլամի կախարդիչ մեղեդիները չունեն, համենայն դեպս նրանց չափ վեհ ու հուզիչ են։ Մի յեվրոպացի առանց հուզմունքի չի կարող չլսել նրանց. լինի դա հոգու խորքը թափանցող պարզության պատճառով կամ իր հայրենիքը հիշելուն համար և կամ մանկության առաջին տպավորությունների վերարտադրման հետևանքով, քաղցր և ուժեղ տպավորություններ, մանավանդ հեռավոր յերկրներում։

Գյուղացի հայեր ընդհանրապես բարեացակամ և քաղցրաբարո յեն։ Արդարև նրանց մեջ միայն կարելի չի գտնել նահապետական պարզությունը և մանուկ հասակի յերջանիկ անմեղությունը։ Բնության և հոգ կինը հոգով համարձակվում և նայել իր ամուսնուն, իսկ ուրիշի հետ խոսելիս կարմրում և. նոր ներկայության ազդիկը յերբեք չի նստում, և ծերունին մի հայացքով հասկացնում է իր միտքը և խնդրելով տալիս[իր հրամանը]։ Քաղաք տեղափոխվելուց հետո հայերը կորցնում են այս թանգարժեք հատկությունների մեծ մասը։ Սակայն և այնպես պետք է ընդունել, որ առևտրի մեջ ցույց են տալիս մեծ խելացություն և ուղղամտություն։ Ինչպես հույները Յեվրոպական Թուրքիայում և գպտիները Յեգիպտոսում, այնպես էլ սրանք [հայերը] սեր են ձախանձ Թուրքիայի հասարակաց յեկամուտներին։ Նրանք գտնվում են համարյա ամբողջ Ասիական ցամաքամասի վրա մինչև Հնդկաստան։ Նրանք իրենց հետ ամեն տեղ տանում են հնազանդություն և կարգապահություն, որով ձեռք են բերում վարկ ու հարստություն։ Առ վոչինչ համարելով հոգսը, տոկունությունը, աշխատությունն ու նախատինքը, նրանք մեծ հարստություն են դիզում, առանց մտածելու այն վտանգների մասին, որոնք չըջապատում են նրանց այդ յերկրներում, ուր օրենքները ուժ չունեն և մարդիկ անարդար են։

Հակառակ Յուսուֆ փաշայի բարեացակամության և հոգածողության, նրա ճամբարում հազար ու մի տեսակ գաղտնի հոգսեր ունեյի։ Սահմված եյի ապրել մոլեռանդ մարդկանց

* Jaubert, *էջ 95—106։*

շրջանում, վորտեղից շատերը փառք էլին համարում Յեգիպտոսում ֆրանսացի գիտնական Կլերիի սպանության իրենց մասնակցությունը։ Կ. Պոլսից սպասված հրամանը վերջապես սառցակեց և յերկու թաթարներ բերին ինձ վերաբերող ֆերմաններըը։ Ամենամեծ անհամբերությամբ ցանկանում էի իմանալ բովանդակությունը, սակայն բեյլերբեյը նախ զգուշացավ ինձ հայտնելու նրանց մասին։ Նա չեր ուզում, վոր իր բանակում իմացվեր թե Բ. Դուրը այդքան գրաղվում է մի քրիստոնյա մարդով և ուզարկում սուրհանդակներ։ Ուզենալով նույնպես մի ևս քայլով ծածկել իմ ճանապարհորդության նպատակը, և իր արքունիքի սրամադրությունը այդ մասին, յերեք որ ինձ թողեց բացարձակ անգործության մեջ։ Այդ հապաղումից հետո, վոր ինձ թվաց չափազանց յերկար, առաջին անգամ լինելով ինձ հրավիրեց իր պալատը ճաշի և ինձ ետևերից իր մոտը, չնայած վոր իր գլխավոր սպանները կանգնել էլին սեղանի շուրջը։ Ճաշի ժամանակ, ժպտուն դեմքով ինձ ասաց, թե շուտով կտեսնեմ Կ. Պոլսին ու իմ հայրենիքը. «Ի՞նչ գործ ունես պարսիկների հետ։ Յես արդեն քեզ ասացի, շարունակեց նա, նրանք Յեվրոպայում քիչ հարգանք են վայելում։ Յերեսուն տարուց ավելի է, վոր նրանց հետ հաճախակի հարաբերություններ եմ ունեցել և անկասկած նրանց ազնվության մասին լավ կարծիք չեմ կազմել։ Վերջերս նրանց դեսպաններից մեկը իրրև շքեղ մի բան ինձ նվիրեց պարսկական մի ձեռագրեր, վոր տասը տարուկներ կրում էլին մեծ ցուցքով։»

Փաշան շատ հաճույք եր զգում խոսելով իր չսիրած մի ժողովուրդի մասին։ Յերբ ճաշը վերջացավ, պահանջեց Բ. Դուռն ֆերմաններըը և մի հայացքով իր մարդկանց հետանալու նշան տալուց հետո, ինձ հանձնեց Կ. Պոլսի ֆրանսական գործակատար պ. Ռուֆինի կողմից ինձ ուղղված պաշտոնագիրը. շատով բաց արի և ուրախությամբ կարդացի յերջանկարեր լուրերը։ [Նկատելով] իմ շարժումը, փաշան ձեռքը դեպի բերանը տանելով, հանձնարարեց վոչ մի ձևով չարտահայտել զգացած գոհունակությունս։ «Անխոհեմ

ասաց ինձ ցածր ձայնով, մինչև չգիտես թե այստեղ ամեն ինչ գաղտնի պիտի մնա։ Դու պետք է անցնես Պարսկաստան թագնված մի այլ անվան տակ։ Պատրաստվիր մեկնելու, սակայն ձևացրու թե տախտված ես Կ. Պոլիս վերադառնալ։ Պետք է նույնիսկ այդ ճանապարհով գնաս։ Այս գիշեր մի սպա պիտի ուղեկցի քեզ։ Այդ դեռ բոլորը չէ։ Դու անշուշտ չես ստացած չես գտնված բոլոր թանգարժեք իրերը։ Յես ուզում եմ պակասը լրացնել։ Բավական չէ միայն քեզ տեղ հասցնել, պետք է վոր դու ներկայանալի լինես»։ Այդ ժամանակ բեյլերբեյը բերել տավ Հալեբի հարուստ կերպասներ, մուշտակներ և զանազան գոհարեղեններ, վորոնք տախտից վոր չես ընդունիմ, վորքան չես դժկամություն ես հայտնում առնելու այդ իրերը, նա ավելի ևս ավելացնում էր նրանց թիվը։

1806 ապրիլի 1-ին մեկնեցի Թրքական ճամբարից, տասնըվեց որ այնտեղ մնալուց հետո։ Յուսալի փաշան ինձ ավելի քան վստահելի մարդկանցից բաղկացած մի պահակախումբ, վորի հրամանատարն եր Մուստաֆա անունով մի աղա։ Համաձայն բեյլերբեյի առացած հրահանգի, այդ սպան ամբողջ որը բռնեց Կ. Պոլսի ճանապարհը, սակայն հետևյալ որը Մադենի ճանապարհով դնացինք, Պարսկաստանի ճանապարհի վրա գտնվող մի քաղաք, հարուստ վոսկեհանքերով, վորոնք շահագործվում են։ Մենք խուսափեցինք կարասհիսարից, վորի դիրքը բավականի մոտ է հին կաբիրա (Cabira) կամ Սեբաստիային (Sebaste), նեղկայում Սվազ (Sivas)...։

Շատաքլիլի (Chadakli) անտառը, վոր Մեծ Հայաստանի հին կապադովկիայի սահմանն է, դեռ մինչև այսոր էլ ծառայում է վորպես սահման Սվազի և Յերզնկայի բեյլերբեյությունների միջև։ Մենք անցանք նրա միջով։ Վորովհետև հաճախ ավազակների կողմից ասպատակություն է յենթարկվում, Թուրք կառավարությունը ճանապարհի վրա հաստատած է պահականոցներ, սակայն այդ միջոցառումը ուղիղորներին ավելի վտանգավոր է քան ոգտակար, վորովհետև զինվոր-

նները գրեթե միշտ թալանում են նրանց, ովքեր թվով իրենցից ավելի սակավ են: Այս չերկրի գյուղացիները ապքաո են: Նրանք ուղեկցում են կարավաններին և զրաղվում են չեզվենի ծառերից խեժ կամ goudron հանելով: Ձմեռվա չերկար գիշերները զրաղվում են կաոավ գործելով, ծխելով և հեքիաթներ լսելով: Այդ միջոցին նրանց չերեխաներից մեկը ձեռքում բռնում է մի տեսակ ջահ՝ չեզենի փայտից, որ այրվում և պայծառ մի բոցով: Այս լեռնականները, ինչպես նաև Ալպյան և Ապենինյան լեռներում ապրողները, գիշերը լուսավորվելու ուրիշ միջոց չունեն:

Յերնք որից հետո հասանք Յերզնկա (Erzinghian) (նախկին Սաթալա) (Satala) մի փոքր քաղաք [գետնված] մի դաշտավայրում, որ շրջապատված է լեռներով, ասաներկու մղոն տարածության վրա, որոնք կազմում են մի պարիսպ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ: Այս քաղաքի կլիման ավելի մեղմ է Հայաստանի բոլոր մյուս վայրերից: Նրա գիրքն ու Յեփրատի մերձավորությունը Յերզնկան գարձնում են հաճոյալի մի վայր: Բնակչությունը բազկացած է միայն մահմեդականներից: Շրջակա գյուղերում ապրում են քրիստոնյաներ, որոնցից ամենահարուստները զրաղվում են առևտրով, մյուսները մշակում են պտղատու տեսակի արմաիք և ծառեր. ինչպես գեղձ, թթենի և թզենի, որոնք այդ լայնության աստիճանի վրա, բարձր վայրերում, չեն կարող աճել:

Տավրոսը Յերզնկայի և Երզրումի միջև բաժանվում է յերկու գլխավոր շղթաների: Առաջինը գնում է դեպի հարավ-արևելք, և միանում է այն լեռներին, որտեղից Տիգրիսի ակունքն են սկիզբ առնում: Մյուսը ուղղվում է դեպի հյուսիս-արևելք և տարածվում է դեպի Կովկաս: Դա է պատճառը, որ Երզրումից դեպի արևելք գտնվող բոլոր ջրերը թափվում են Արաքսի մեջ և ուղղվում դեպի Կասպից ծովը, մինչդեռ մյուսները խառնվում են Յեփրատի ջրերի հետ և գնում դեպի ովկիանոսը:

Հինգ որ ճանապարհ գնացինք Յերզնկայից մինչև Իլիջա՝ Երզրումից յերեք մղոն հեռու տաք ջրի մի աղբյուր: Անցանք Ջեննիսից (Djennis), որի մասին Բանննֆոնը կարծում է թե Գիմնիսան (Gymnisa) է, և Աշ-կալեյից (Ach-Caleh)[1]: Մի ակնարկ նետելով քարտեզի վրա, նման մի հետազոտություն Յեվրոպայում կարելի չի կարել ամենաշատը քառասուն ժամից, սակայն նույնը չի ասվական Թուրքիայում: Գելվների մի գումարտակ ճանապարհի վրա կանգնած եր, պետք եր խուսս տալ նրանից: Սաման-սու (Saman) գետը չափազանց խոր եր, որպեսզի նրա հունից կարողանայինք անցնել, այդ պատճառով բարձրացանք մինչև նրա ակունքը: Վերջապես ապայի խիստ ծանրաշարժությունը, որ հաճախ կանգնում եր ձիուց՝ ծխամորճը վառելու կամ հանգստանալու համար, անպիտն ժամանակ կորցնելու պատճառ եր դառնում:

Երզրումի մինարեները կրկին տեսա, սակայն ինձ չթույլատրվեց մտնել քաղաքը: Բեյլերբեյի հրամանն եր, որ քաղաքից մեկ մղոն հեռու հայկական մի գյուղում իջևանեյինք, որպեսի կարգադրություն ինձ համար միանգամայն ձեռնտու լիր: Յեվրոպայում ուղևորը քաղաքներին մոտենում և հաճույքով, սակայն Թուրքիայում գրեթե միշտ վախը պատում է նրան: Ագահ այանների կամ ամբարտավան դատավորների կողմից չանհանգստանալու համար, նախընտրելի

ցինք լերկու որ։ Դեվերոյնու կիրճն անցնելով, գնացինք գիշերելու Ալավիր[2] (Alavir), մի գյուղ, զետեղված վերև հիշատակված լեռների լանջի վրա։ Բայազիդից խուսափելու մտադրությամբ մեր քայլերն ուղղեցինք դեպի հարավ արևելք, Ագղլերի (Aghzler) ուղիղ դիծը թողնելով և առանց շրջունակելու ուղիղ ճանապարհը, անցանք սեպաձև լեռների մեջ։ Հաճախ վտանգով մոտցում եյինք այնպիսի բարձունքներ, որոնք առաջին հայացքից անմատչելի եյին թվում։ Մեր ջորիներից մեկը, ձյան վրա սահելով, ընկավ Արածքի մեջ։ Այդ գետը, իր ընթացքի այս մասում, հոսում է խիստ նեղ և խոր մի պարանոցի միջից և Հասան-կալեյից դեպի արևելք մինչև լերկու և կես մղոն անցնում է հարավից հյուսիս...

18-ի լերեկոյան, խիստ հոգնած, հասանք Քյուլլի (Kulli), երբրումից առանձնից մղոն հեռու հայկական մի մեծ գյուղ, նույն գետի ակունքից վոչ հեռու և ձախ ափի վրա։ Ամառը նրա հունով հեշտությամբ կարելի յե անցնել, սակայն ձյունը հալի ժամանակ գործածում են սոսի խուրձերից շինված լաստեր կամ ուռցրած մեկեր։ Ակ-Դաղ (Ak-Dagh) կոչված լեռը բարձրանալուց հետո, որի գագաթը, ինչպես անունից յերևում է, շարունակ ձյունով ծածկված է[3], իջանք Խնուսի[4] (Khenis) ավազանը, որը նշանավոր է իր աղնվացող ձիերով։ Գնացինք գիշերելու Քոզլի[5] (Couzli) հայկական մի գյուղ, որի բնակիչները, հակառակ Յուսուֆ-փաշայի հրամաններին, համառորեն մերժեցին մեզ ապաստան տալ, յերեք չհամաձայնելինք վարձատրել նրանց։ Առաջին անգամն եր որ պատահում եյինք քրիստոնյաների, որոնք թուրքերին ընդդիմադրություն եյին ցույց տալիս. սակայն Հայաստանի այս մասում, կառավարության իշխանությունը համարյա թե չնչին է։ Գյուղացիք զինված են և պատրաստ կռվելու քուրդերի հարձակումների դեմ, որոնց հետ հաճախակի կռիվներ են մղում և չեն վախենում վոչ սպառնալիքից, վոչ նահանջից և վոչ էլ մահից։ Նրանց մերժումը հիմնավորը վորովհետև թուրք սպաները, չբավականանալով ցույց տրված հյուրասիրությունից, հաճախ մեկնում են գյուղերից, պահանջելով վարձատրություն, փոխարեն այն բանի, որ ինչ հասցրած չեն գյուղին։

Քանի առաջանում եյինք, յերկիրը հետզհետե ամայի եր դառնում։ Մուշի, Վանի և Բայազիդի փաշաները ստիպված եյին քրդերին թողնել վոչ միայն լեռնային մասը, այլ նաև հնուանից այն կողմ տարածվող դաշտավայրերը։ Վոռոգված բազմաթիվ գետերով և ծածկված բնական մարգագետիններով, այդ դաշտավայրերը ժամանակին յեղել են, և այսոր ել կարող են լինել, շատ բարեբեր, սակայն քրդերը աշնան այրում են ամեն տեսակի չոր խոտերը, հողը պարարտացնելու նպատակով։

Ենդերեսից մինչև Վան, մրգեղեն, գինի և ողի քիչ է դանվում, այդ քաղաքներից վերջինի [Վանի] շրջակայքում ամեն տեսակ հիանալի մթերքներ կան։ Թուրքերը ասում են թե այդ պատճառով է, որ մեծ թվով հայեր կան այնտեղ։

Ամեն տարի այդ յերկրի բանվորների բազմաթիվ կարավաններ մեկնում են Կ. Պոլիս, նավատորմիղի զինարանները աշխատելու։ Մի քանի տարի հետո նրանք վերադառնում են հատատավելու իրենց հայրենիքում։ Թեև Վանի լիճը հարմար է նավարկության և հայերը լավատեղյակ են նավաշինության արվեստի մեջ, սակայն տակավին հաջողած չեն ձեռք բերել այնքան հատատուն նավեր, որոնք կարողանային դիմանալ աննշան փոթորիկներին։ 1806-ին այդ վոջբիկ ծովի վրա կային միայն յոթ կամ ութ առագաստանավ, որոնք հաղիվ բավարարում եյին Բիթլիսի հետ կատարվող առևտրին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աշկալե, տես ծան. 2 էջ 102։
2. Ալավիր, տես ծան. 4 էջ 103։
3. Ակ-դաղ, Սպիտակ լեռ կոչվում և վոչ թե ձյունով ծածկված լինելուն համար, ինչպես գրում է «Բնաշխարհիկ բառարանը», այլ վորովհետև ապարները, որոնցից կազմված է լեռը, սպիտակ գույն ունեն։

հետև կրային և և բուսականութիւն չունի (Տես, Lynch, «Armenia», հատ. II. եջ 256)։

4. Խնուսը՝ երզրումի վիլայեթում մի գավառ, որ դանվում է Բաանեի, Ալաշկերտի, Վարդոյի, Մանազկերտի և Վերին ու Ներքին Բուլանըղի միջև։ Խնուսի գավառը յերկար ու լայնատարած մի հովիտ է, արևելքից արևմուտք 8—9 ժամ յերկարութիւնամբ և 1—1 ½ ժամ լայնութիւնամբ։ Հողը բարեբեր է և լավ վոռոգված։ Նախապես այս գավառում մոտ քսանհինգ հայ գիւղեր կային 20.000 բնակչութիւնամբ։ Կենտրոնն է Խնուս բերդաքաղաքը, կառուցված Բյուրակնյան լեռների արևելյան սառըոտում մ, լեռնաձորակի մնջ։ Ունի 4—5000 բնակիչ, վորից մոտավորապես կիսը հայ կրո (Տես, Lynch «Armenia», հատ. II. եջ 186—188 և 254—255. «Նկարագրը. Ուղեվորութիւն», Գ. 103—128)։

5. Բոզլի, նախապես հայկական մի մեծ գիւղ, Աբ-դաղ լեռան սառըոտում (Տես Lynch, II. 256)։

ԳԼՈՒԽ ԺԲ.*

Անցք Ցեփրաի հարավային բազուկից դեպի Մանազկերտ.— Ցեզիդիները. — Հանդիպում ավազակների մի խմբի. — Մեր առաջնորդի նարպիկությունը փրկում է մեզ նեղ դրությունից.— Մահմեդական մի շեյխ. — Վանի լճի տեսարանը. — Հայաստանի ձյունիալը։

Մեծ Հայաստանի ամենաբարձր սարահարթերից մեկից, մշտական ձյունապատ ու սեպաձև լեռներից անցնելուց հետո, իջանք դեպի Ցեփրաի հարավային բազուկը, վոր Թուրքերը անվանում են Մուրադ-չայ (Mourad-Tchai), ի հեշատակ Բաղդադի և Ջեզիրեյի հաղթական Մուրատ Դ.-ի...։

Գետից անցանք Մանազկերտ[1] մոտ, վերոհիշյալ վեհապետի հրամանով կառուցված մի կամրջի վրայով, վորի մասին վանի մուսուլմանները հետևյալն են պատմում։ Մուրադը անցնելով իր տիրապետած յերկրների միջից, ընդունում եր նվաճած ցեղերի ընծաները, միայն վանի բնակիչներն ելին վոր վոչ մի բան չուղին։ Այդ մոռացությունից զարմացած, սուլթանը հրավիրում է մեծամեծներին և նրանց հարցնում, թե ուր են իրեն մատուցվելիք ընծաները։ «Ահա, պատասխանում են, սրանք վայել են թե մեզ և թե ձեզ»։ Այս խոսքերի վրա բաց են անում իրենց վերարկուները և ցույց տալիս նրա թշնամիների արյունալի զլուխները։ Մուրադ գոհ այդ նվերից, վանի բնակիչներին տալիս է զանազան առանձնաշնորհումներ, վորոնք մինչև այս էլ վայելում են։

* Jaubert, եջ 107—114։

Մանավկերտը կառուցված է հրաբխային ժայռերի վրա։ Տեսարանը նրա շրջակայքին, որ քար ու քանդ և չեզած սարյերկրյա բնակութիներից, ներշնչում է մի տեսակ մելամաղձություն, որ շատ և ավելանում է երբ մտնում եք այդ կիսավեր քաղաքը։ Նա զետեղված է Սիխան-Դաղից (Seiban) ոտքը մղոն հեռու, որի գագաթը ինձ խիստ բարձր թվաց, թեև անհնարին է թվում ինձ, թե կարելի է տեսնել հիւսն վարսախ հեռավորութիւնից, ինչպես պնդում է Չալֆ Խալֆան։ Նա միշտ ձյունապատ է։ Տասը մղոն տարածութեան վրա այդ լեռը շրջապատված է գորշագույն լավայի հսկայական կույտերով...։ Տեղ տեղ այդ ժայռերի վրայից բխում են սառը վճիտ աղբյուրներ։

Սիխան-Դաղի ստորոտում բնակում են չեզիդիներ՝ քրդական հորդաներ, որոնք պաշտում են չարիքը և մարդկային ու աստվածային օրենքներով արգելված ամեն բան հավատում են թե ներելի չե իրենց համար։ Նրանք վերին աստիճանի անտիապաշտ են և քրդերը շատ անգամ ինձ ասացին, թե, չեթե նրանց շուրջ դեռևս վրա մի բոլորակ գծեն, իրենց հավատքի խորհրդանշան, նախընտրում են մեռնել քան այնտեղից դուրս գալ։ Նրանց արգելված է գրել ու կարդալ սովորել, իսկ գողութեան ու մարդասպանութեան վրա նայում են վորպես թուլյատրելի արարքների։ Նրանք կրում են սև գլեստ և սև կամ կարմիր գլակ, հուսալով հաճոյանալ սատանային, վորին համարում են աստվածային կամքի կատարողը, և վորին չեն անիծում և նրա անունը չեն համարձակվում արտասանել։...

Անցնում եյինք վանից քիչ հեռու գտնվող Թաշկունի (Tachcoun) կիրճից, վոր ճանապարհորդներին սարսափ է ազդում՝ այնտեղ կատարված ավազակութեյունների պատճառով, եյերբ տեսանք եյերեսունի չափ չեզիդիներ նստած գետնի վրա, ծխում և սուրճ եյին խմում։ Մեր առաջին մտածումը եղավ փախչել, սակայն շատ ուշ եր։ Մեր առաջնորդ ծեր Թաթարը, վոր նման հանդիպումների վարժված եր և այդ ավազակներին անձնապես ճանաչում, այդ նեղ րոպեին վորոշեց գնալ նրանց մոտ, եյերբ վոտքի կանգնած՝ նրանք զենքերը վերցնում եյին մեզ վրա հարձակելու համար։ «Թող որհնութեյունը ձեզ վրա լինի, — ասաց նա բարեկամական և խորհրդավոր ձևով, — ինչ գալիս ենք կ. Զոլսից մի աղայի հետ, վոր ձեր յերդվյալ թշնամի վանի փաշայի պաշտոնանկութեյան հրամաններն է տանում։ Յեթե կամենաք կարող եք մեզ կողոպտել, սակայն պիտի գնանք միայն ֆերմաններըս։ Բ. Դուռը մեզ յերբեք մեծ հարստութեյուններով չի ծանրաբեռնել։ Յեթե մեզ սպանեք, գործը անպայման վատ հետևանքներ կառանա։ Մեզ վողջ թողնելով, դուք կազատվեք մի կառավարչից, վոր ձեր կորուստն է ցանկանում։ Բացի այդ, պետք է բարեկամաբար հայտնեմ ձեզ, վոր ինձ հետ ուղեկցող անձնավորութեյունները տրամադիր են պաշտպանվելու. նրանցից յուրաքանչյուրը կրում է բազմահարված հրացաններ, և թեև թվով ձեզնից սակավ, սակայն իրենց կյանքը թանգ պիտի ծախեն։ Հավատացեք ինձ և մնանք բարեկամներ։ Մենք վոչ թե ընտրակար, այլ ոգտակար պիտի լինենք ձեզ։ Նույնիսկ քան վոսկի դրամ նվեր պետք է տանք»։ Կարճ վիճաբանութեյունից հետո առաջարկութեյունը ընդունվեց. բայց չեզիդիները պահանջեցին, վոր թաթարը յերդումով պարտավորութեյուն տանձնի, վոչ վոքի չհայտնել այդ հանդիպման մասին։ Նա յերդվեց և ճանապարհը շարունակեցինք, չափազանց յերջանիկ զգալով նման մի փորձանքից ազատվելնուս համար։

Սակայն Թաշքունի շրջակայքում կա մի թեքյե կամ իսլամական մի վանք, վորտեղ ամեն կողմից հազար վտանգներ աչք առած ուխտավորներ են գալիս։ Այդ վանքի շեյխը ապրում է շրջապատված ավազակներով, անվրդով՝ ինչպես կյանքի փոթորիկների մեջ գտնվող իմաստունը։ Առանց խորհրդապետութեյան չեմ կարող չհիշել, թե ինչպես այդ խեղճ վանականը, [մեր խումբը] նոր հարձակումներից զերծ պահելու համար, մեզ առաջնորդեց մինչև Ախլաթի[2] (Akhlat) մոտերը։ Բրդյա պարզ մի վերարկու հագած, ձեռքին բռնած կաղամախի մի ճյուղ, ... ամբողջ հինգ մղոն ճանա-

պարհ առաջնորդեց կարավանը։ Քուրդերն ու յեզիդիները վախենում էին նրա ներկայությունից և հեռանում, երբ նա մոտենում էր. սակայն նրանց կանայքն ու յերեխաները դուրս էին գալիս իրենց ծխատաս վրաններից, բերում էին կաթով լի ամաններ ու տալիս մեզ և խնդրում էին շնչի որնուելիքն ու մալթանքները։

Վանքից այն կողմ գտնվում է անապատ և վայրենի մի յերկիր, որի միջով անցանք։ Հետո հասանք բլրակների դափաթը, որտեղից առաջին անգամ տեսա Վանի լիճը։ Մուստաֆա աղան, որ ծնած և վանում է մի քանի տարի, նրանից ի վեր բացակա չէր, երբ ծովափը տեսավ, ցած իջավ ձիուց, գետնի վրա փռեց մի գորգ և ջերմեռանդորեն դուրանի առաջին գլուխն արտասանեց. հետո մի շարք տուներ կարդաց այդ գրքից, յերևի հայրենիքը անվտանգ վերադառնալուն համար։

Յերբ մոտենում եք Վանի լճին, տեսարանը փոխվում է ամենագրավիչ յերևույթն է ընդունում։ Անսահման տարածությունն ու կապուտակ ջրերի հանդարտությունը յենթադրել են տալիս, թե դա մի ծով է առանց փոթորիկների։ Կաղամախիներով, արմավենիներով[3], մրտենիներով և դափնեվարդերով ծածկված բարձունքներով շրջապատված, ունի բազմաթիվ կանաչազարդ կղզիներ, ուր ապրում են խաղաղ անապատականներ։ Շրջակայքում ապրում են հայեր, որոնք իրենց հազուստով, լեզվով և սովորություններով տարբերվում են Եզդրումցիներից. այնտեղ բնակում են նաև շատ քուրդեր, հրապուրված հողի բարերերությունից և կլիմայի քաղցրությունից։ Դրացի Պարսկաստանում չեն սիրում քուրդերին և վտարում են նրանց դեպի Վանի հողամասը։ Բացի այդ, Մուշի փաշան և Բիթլիսի ու Խնուսի մյութեսելիմները[4], [մյութեսերիֆները], որոնք հաճախ միմիանց հետ կռվի մեջ են, նրանցից շատերին ընդունում են իրենց ծառայության մեջ։

Հետևյալ ցուցակը ցույց է տալիս այն ժամանակաշրջանի, 1806 թվի, Հայաստանից մեր անցած ղանապան վայրերի

ձյունհալի ժամանակը. դրանից կարելի յե մոտավորապես իմանալ համապատասխան ջերմության աստիճանը։

Ենդերեսի և Եզբիդերլերի (Ezbiderlar) դաշտավայրերում մարտի 15-ին։

Ավանեսում (Avanès), մարտի 15-ից 20. Յերզնկայում մարտի 20-ից 25. Թերջանում մարտի 25-ից 30. Ներվիվանում (Nerdivan), ապրիլի 5-ից 10. Զեննեսում, ապրիլի 5-ից 10. Երզրումում, ապրիլի 10-ից 15. Բասենում, ապրիլի 10-ից 15. Քալլիյում (Kalli), ապրիլի 15-ից 20. Խնուսում, մարտի 5-ից 10. Մանազկերտում, մարտի 20-ից 25։

(Երզրում նախորդ տարում հունիսի 27-ին ձյուն յեկավ, որին ականատես էյի)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանազկերտ, Մելազկերտ, Ռուբրուքն անվանում է Մարզինկան («Ուղեգրություններ» հատ. Ա. եջ 22)։ Մանազկերտի դաշտը գտնվում է Սիփան լեռան ստորոտում վանի լճի հյուսիսային արևմուտք։ Մանազկերտն անցյալում յեղել է մի նշանավոր բերդ, նրա հրմնարկությունը վերաբերում է Խալդյան շրջանին և հավանորեն կատարված է Մենուասի անունով։ Ծանոթ և Արշակունյաց շրջանում և ապա հետագայում կարևոր առևտրական կենտրոն եր Անիի նման։ Այստեղ եր որ Բյուզանդական կայսր Ռոմանոս Դիոգենես պարտվեց Ալփ-Արսլանից ու գերի ընկավ Սելջուքների ձեռքը (1071 թ.)։ Ալփ-Արսլանը գրավեց Մանազկերտը, որ ժԱ. դարից սկսած ունեցավ անկախ իշխանություն։ Այժմ աննշան մի գյուղ է, և այնտեղ միայն մնում են մզկիթների ու մի քանի հայկական յեկեղեցիների ավերակները միայն (Lynch, «Armenia», հատ. II, եջ 268—275)։

2. Ախլաթ, Խլաթ, տես «Ուղեգրություններ» Ա. հատոր, եջ 306 ծանոթ. 5։

3. Ախլաթի շրջանում, ինչպես նաև Վանի ծովի շրջապատում արմավենի չի աճում, հետևաբար մեր ուղեգիրը շփոթում է մի որևէ այլ ծառ արմավենու հետ։

4. Մյութեսելիմ եր կոչվում նախապես գավառապետը Թուրքիայում այժմ մյութեսերիֆ։

ԳԼՈՒԽ ԺԳ.*

Վան ժամանումը.—Այցելություն Ջեյդ-ուլլահ փաշային.—Նրա դեմ կազմակերպված դավադրությունը.—Ջերբակվում է յեվ դատապարտվում մահվան.—Վանի եկարագրությունը.—Մեկնում այդ քաղաքից:

Յերբ Էնդերեսի բանակատեղից մեկնում եյի, Յուսուֆ փաշան ինձ հանձնել եր յերկու նամակ, մեկը թրքերեն և մյուսը պարսկերեն, [որոնք պարունակում եյին] լավագույն հանձնարարություն իմ մասին: Առաջինը ուղղված եր վանի փաշա Ջեյդ-ուլլահին և յերկրորդը Մոլի խան Հուսեյինին: Բացի այդ, բեյլերբեյը իր հետևորդ հայ սեղանավորի միջոցով, ինձ տվել եր փոխանակագրերներ, թե Թավրիզի և Ղազվինի (Casbin) վաճառականների հասցեյին և թե Ջեյդ-ուլլահի սեղանավոր Ստեփանոս Կարապետի (Stephano Karabet) վրա: Վան հասնելով գնացի բնակվելու այդ սեղանավորի պարտեզում: Նրան դուռ չափազանց վրդովված, այն մոտալուտ վտանգի համար, որին իր տերը, փաշան, յենթարկված եր, ինչպես և ինքը: Համենայն դեպս, տեսնելով որ բեյլերբեյը հանձնարարած եր մի ոտարականի և ցանկանալով [հետագայում] պարսկաստանում նպաստավոր մի ապաստան գտնել՝ այն դեպքում, յեթե տիպվեր այնտեղ փախչել նա ինձ ամեն տեսակ խնամքներ շռայլեց, և վայելեցի կատարյալ հանգստավետություն:

Հաջիվ վոտս գետին եյի դրել, յերբ գնացի Ջեյդուլլահին ներկայացնելու Յուսուֆի փաշայի նամակը: Նա հիսուն տարեկանի մոտ մի մարդ եր, միջահասակ, ժժգույն,

* Jaubert, եջ 115—123:

ու տկար կազմվածքով: Սարսափ դրոշմված եր նրա դեմքի վրա: Այնպիսի հարգանքով ընդունեց ինձ, վոր մուսուլմանները հազվադեպ պարագային արտահայտում են քրիստոնյաների հանդեպ: Սովորական վողջույնի խոսքերից հետո, խոսեց կ. Պոլսի և Բ. Դռան ու պալատի այն անձնավորությունների մասին, վորոնց յենթադրում եր թե ճանաչում եյի: Այդ առթիվ զգացրեց Վոսփորի ափերի և իր կառավարած բարբարոս յերկրի միջև գոյություն ունեցող տարբերությունը: Նա ծնվել ու մեծացել և պալատում և հաճախ բարձր պատիվ և ունեցել՝ բռնելու նորին վեհափառության ասպանդակը: Սրա շնորհիվ և նա բարձրացել: Վերջապես նա զորավոր պաշտպանություններ ունենալու հավակնությամբ, հարստություն եր դիզում, հակառակ նրան սպառնացող վտանգին: «Անշուշտ ձեզ հայտնի չեն, ասաց նա, այն ապստամբի մասին, վոր ծանոթ և իր հանդգնությամբ և վորի գլուխը գնահատված և Բ. Դռան ֆերմաններով: Նա հաջողած և իր նման մի քանի ավազակներ հավաքել իր շուրջը, և նրանց ոգնությամբ թալանում և կարավաններ, և ասում են թե նպատակ ունի հարձակում գործել իմ պալատի վրա: Բայց յես նրանից չեմ վախենում. վորքան ժամանակ որինական իշխանությունը և մարգարեյի հաջորդին [խալիֆայի] պաշտպանությունը վայելեմ, կարող եմ հույս դնել աստվածային շնորհի վրա և ցերուցան անել իմ թշնամիներին, ինչպես անապատի քամին ցրում և ավազը»:

Մեկնումից առաջ, խորհուրդ տվի այդ փաշային հակադրությունը կրկնապատկել: Գաղտնաբար հայտնեցի նրա դեմ սարքված դավադրության մասին և խնդրեցի շտապ կերպով պարսկաստան անցնելու միջոցներ տալ ինձ: Սակայն, ինձ հետևորդներ տալու պարագայում վախենալով նվազեցնել իր ուժերը, վորոնց պետք ուներ իր անձի պաշտպանության համար, կամ իմ անցքը վանից համարելով բեյլերբեյի կողմից վատահության մի նշան, կամ մտածելով վոր իմ ներկայությունը այդ քաղաքում մի տեսակ պաշտպանություն

կարող եր լինել իր համար և կամ վերջապես ուզենալով հայտնարերել, թե արդյոք իր վոխերիմ Թշնամու արբանյակներից վոմանք քաղաք չեկեր մտել իմ մարդկանց հետ, նա դանազան պատրվակներով ինձ պահեց մինչև ապրիլի 30-ը, ճիշտ մի քանի որ առաջ այն ադետի որից, վորի մասին պիտի պատմեմ։

Ֆեյզուլլահի վանի նահանգապետ նշանակվելը տհաճելի եր քուրդերին և դալրացրել եր յերիտասարդ Դերվիշ բեկին, վորի հայրը, հորյեղբայրը և աները կարևոր պաշտոններ դրաված եյին [անցյալում]։ Դերվիշ բեկը ապաստանել եր Երզրում, ուր ապրում եր թաղնված, և գաղտնաբար վայելում եր Յուսուֆ փաշայի պաշտպանությունը։ Կարծելով թե ինձ նման հարգելի մի ոտարականի աջակցությունը նրա համար նպաստավոր կլորդ եր լինել, հրամայել եր իր սպաներից մեկին Կյան (Kian) քաղաքից [դյուղից] իմ անցած ժամանակ, դիշերով ծպտյալ գալ իմ մոտ, ատիպելու վոր իր ծրագիրները կատարմանը աջակցեմ։ Պատասխանեցի, թե վոչ մի մասնակցություն չեմ կարող և չեմ ուզում ունենալ այդ գործում։ Բայց ինձ ընկերացող մեհմանդարը չկարողացավ արգելել, վոր Դերվիշ բեկի կողմնակիցներից վորոշ թվով մարդիկ միանային իմ պահակախմբին։ Նրանցից վոմանք հրահանգ եյին ստացել վանի շրջակա քրդերին վոտքի հանել, իսկ վոմանք ինձ հետ միասին քաղաք մտնել։ Յերբ քաղաքից քիչ հեռու եյինք, թրքական պահակախմբի ձիավորները առանց իմ դիտության ցրվել եյին, վորպեսզի կարավանի մարդկանց թիվը խոշոր չի յերևա։ Նրանք բոլորն եյ դավադիրներին համակիր եյին։ Պարսկաստան գնալու համար վանից իմ հեռանալուց հետո տեղեկացա, վոր Դերվիշ բեկը հաջողում է մի քանի լմբեր հավաքել և մտնել քաղաքը, վորի դռները բացվել եյին մեզ հետ քաղաք մտած քրդերից և Ֆեյզուլլահի Թշնամիների կողմից։ Վերջինս նահանջում է և միջնաբերդը։ Շուտով առաջարկում է անձնատուր լինել և մերժվում։ Նրա զինվորներից մի քանիսը բռնում են նրան ու բերում Դերվիշ բեկի մոտ։ Սարսափահար, նա շնորհ է

խնդրում և առաջարկում հրաժարվել իր դիրքից և հարստահարություններով ձեռք բերած իր հարստությունը հանձնել, լեթե խնայվի իր կյանքին։ Դերվիշ բեկը, կամենալով փաշայի դանձերի թագցրած տեղն իմանալ, կեղծում է թե համաձայն է։ Նրանից կորզելով իր ցանկացած խոստովանությունը, գնում է անձամբ ստուգելու թե արդյոք Ֆեյզուլլահը չէ՞ խաբել։ Վերադարձին կրկին բերել է տալիս նրան իր ներկայության և ձեվացնում է թե նրան շնորհում է կ. Պոլիս վերադառնալու թույլտվություն։ Փաշան մեկնում է, հույս ունենալով թե իր կյանքը պիտի խնայվի։ Սակայն, հազիվ պատի առաջին բակը հասած, յերկու հոգի հարձակվում, պարանով կապում են նրա վիզը և խեղդում. նրա գլուխը կտրելով տանում են Դերվիշ բեկին։ Ֆեյզուլլահի մահը մի ազդանշան յեղավ նրա բոլոր կողմնակիցների [կորստյան]։ Քուրդերը կրկին անգամ տեր դարձան քաղաքին և վանի հոգամասին։ Ինչ վերաբերում է սեղանավոր Ստեփանոս կարապետին, վորի մոտ իջևանել եյի, հազիվ հաջողում է փախչել Պարսկաստան, ուր նրան պատահեցի մի քանի ամիս հետո, սակայն կործանվել եր ու հասել վողորմություն մուրալու աստիճանին։

Վան հայերեն նշանակում է բնակավայր, ամրացած վայր, վանք։ Զգիտեմ թե այս անունը այդ քաղաքին տրված է շրջակայքում գտնվող բազմաթիվ վանքերի պատճառով, թե կոչվում է վան թագավորի անունով, վոր ապրել է Ասիայում Աղեքսանդրի արշավանքից քիչ առաջ։ Ինչ եյ վոր լինի, հայերը պնդում են թե այդ քաղաքը գտնվում է նախկին Շամիրամակերտի վայրում։ Այդ կարծիքը նրանք հիմնում են գլխավորապես հինգերորդ դարու հայ պատմիչ Մովսես Խորենացու գտնածների վրա, վոր հավաստիացնում է թե Շամիրամը ամեն տարի գալիս եր ամառն անցկացնելու Հայաստանի այդ մասում։ Նրա նկարագրությունը ճշտորեն համապատասխանում է մեր պատմածին։ Նույն պատմիչը հիշատակում է մի խոշոր պատնեշի մասին, վորի ավերակները մինչև իր ժամանակները գոյություն ունեյին

և ծառայում եյին վորպես ապաստանավայր այդ խիստ վտանգավոր համարված ցերկրի ավազակների համար։ Այդ պատնեշի գտնված վայրը այժմ կոչվում է Բենդի-Մահու (Bend-Mâ)։

Վան քաղաքը, վոր գտնվում է համանուն լճի արևելյան ափում, շրջապատված է բավական լավ վիճակում մնացած սառամնձով պարիսպներով և պաշտպանված է բարձր ու կոնաձև ժայռի վրա ամրացած մի բերդով։ Այդ բերդը համարվում է խիստ անառիկ։ Յերկար տարիների ընթացքում նա դիմադրել է Աբբաս Ա.-ին, վոր 1636-ին վերջապես գրավեց։ Նման յերկարատև մի դիմադրություն առիթ է տվել այն ավանդության, թե պաշարումը այնքան յերկար է տևել, վոր պաշարողները կարողացել են պարսպի տակ իրենց տնկած ծառերի մրգերը քաղել։

Վանը ունի տասնհինգից մինչև քսան հազար բնակիչ, մեծ մասամբ հայ։ Այս քաղաքը շրջապատված է պարտեզներով, վորոնց մեջ շինված են շքեղ տաղավարներ, և ուր բնակում են ամառը բարեկեցիկ քաղաքացիներ։ Վոչինչ այնքան հաճելի չի վորքան բազմաթիվ վտակներով վոռոգված և գեղեցիկ ծառերով հովանավորված այդ մրգատատանների տեսքը։ Ինչպես Պարսկաստանում, այստեղ ել այդ պարտեզները հողե պատերով շրջապատված են։

Լճի միջոցով Մուշի և Բիթլիսի հետ կատարվող առուտուրը, և Բաղդադից, Մուսուլից, Կարա Զիոլանից (Qara-Tchiolan) Մերդինից (Mardin) և Դիարբեքիրից Թիֆլիս և Պարսկաստանի հյուսիսային մասը գնացող կարավանների անցքը մեծ առավելություններ են ընծայում Վանի բնակիչներին։ Լճում կատարվող ձկնորսությունը տարեկան նրանց հիսունից վաթսուն հազար ղուրուշ յեկամուտ է տալիս։ Այդ ձկնորսությունը սկսում է մարտի 20-ին և վերջանում մայրիսի 30-ին։ Ջուկը խիստ առատ է, սակայն միայն մի տեսակ է, վոր նմանում է սարդինին, թեև քիչ ավելի խոշոր։... Տարվա մնացած ընթացքում ձկնորսություն չկա, ձկները անհետանում են ջրի հատակում, վոր շատ աղի չե։ Մի ուրիշ նշանակալից յերևույթն այն է, վոր ամեն կողմից ջրերը

խուժում են դեպի ցամաք։ Այդ վոլորմանն հետևանքով, ամեն տարի Վանի արվարձանների տարածությունը պակասում է և Արճեշ քաղաքը հետզհետե անբնակելի յե դառնում։

Վանը շրջապատող հողամասի կլիման շատ մեղմ է և ունի գրեթե մշտական պայծառ յերկինք։ Բավականաչափ ցորեն և արտադրում բնակիչների պահանջը բավարարելու համար, և բավականաչափ ցորեն արտահանման համար։ Յես տեսա մի քանի նարինջի և կիտրոնի ծառեր, սակայն մեծ խնամքի պետք կա այդ պտուղները հասունացնելու համար։ Այս յերկրում վոչ ձիթապտուղի և վոչ ել արմավի ծառեր չկան։ Հյուսիսային Պարսկաստանի պտղատու ծառերը այնտեղ հաջող կերպով աճում են։



Վանա լճի առագաստանավերը, Ավանց նավահանգստում
(լուսանկար Ցեր. Լալայանի)

ԳԼՈՒԽ ԺԴ.*

Մի պահակախմբով վանից մեկնում եմ. — Բդեռի մի պարապլուխը հյուրընկալում է մեզ. — Մուսա բեկի սիրալիր ընդունելությունը. — Այս յերիտասարդ իշխանի նկարագիրը. — Մտնում եմ Պարսկաստանի սահմանը. — Տեսարանը փոխվում է. — Ժամանում եմ Խոյ:

Մենմանդարից և Թուրք գինվորներից բաժանվելուց հետո, — վորոնք Ենդիրեսից մեզ ուղեկցել էին և պետք է վերադառնային բնչ-լերքին բանակատեղը, — մեկնեցինք վանից ապրիլի 20-ին, քրդական մի նոր պահակախմբով, վորի հրամանատարն եր Սուլեյման անունով մի տարիքոտ աղա: Թողնելով հարավում Հեքիարիյի բարձր ու կանաչազարդ լեռները, մեր կարավանը ուղղվեց դեպի Եվեջիկի (Evedjik) կամ Արջակի (Erdjek) փոքր լիճը, վորի ափերի մոտ առջին անգամ հանդիպացանք: Այս լեռները այնքան անպտուղ են, վոր յեղը չի կարող բարձրանալ, սակայն գագաթը լինելով բավականի բարևերը, հեքիաթները սովորություն ունեն իրենց ուսերի վրա փոքր հորթեր տանել այնտեղ, և վորոնցով յերկու տարուց հետո վարուցան են անում: Այդ սովորության գոյությունը արժանահավատ անձեր ինձ պատմեցին:

Հաջորդ որը մենք պատահեցինք նոր թալանված բազմաթիվ պարսիկ վաճառականների և գյուղացիների: Մահմուդիեից (Mahmoudieh) քիչ հեռու մեզ մոտ յեկավ մի քուրդ ցեղապետ, վորի վրանները հեռու չեյին: Ծածկված ժուշտակներով և հագնված մետաքսյա հարուստ կերպասներով, նա հնծել եր հազվագյուտ գեղեցիկ մի ձի և նրան հետևում եյին մի հարյուրյակ ձիավոր: Համաձայն յերկրի սովորության, նա մեզ առաջարկեց իր հյուրասիրությունը: Մենք ընդունեցինք և նրա ճամբարում տեսանք Խորասանի գորդեր, հախճապակի, անուշահոտություն, յերաժշտություն և առհասարակ Արևելքի մեղկության հատուկ բոլոր շքեղությունը: Քրդերի այս ցեղապետն ուներ, բացի ուրիշներից, մի չերքեզ ստրկուհի, վորին շատ կապված եր և վորին մի քանի որ առաջ ոճը խայթել եր, Թուրդիստանում սովորական մի դեպք՝ վոր ընդհանրապես շատ ցավալի հետևանքներ է ունենում: Վախենալով թե կկորցնի այդ ստրկուհուն, ինձ խնդրեց նրան դարմանել: Նրա խնդիրքը ինձ մեծ շփոթության մեջ թողուց, սակայն ծեր Սուլեյմանը, վոր նման պարագային շփոթվող մարդ չեր, ուզեց տեսնել հիվանդին: Նա քննեց վերքը լուրջ և բանիմաց կերպարանքով, մի քիչ կտրեց, ապա վերքի վրա դրավ մի սպեղանի ժածունից և կակղեցնող բույսերից պատրաստված: Վորովհետև վատահ չեր հաջողության և ցավը կարող եր ավելի սաստկանալ, առաջարկեց ինձ դիշերը գաղտնաբար մեկնել: Ցես նրա տանդի մասին ավելի լավ կարծիք ունեյի քան ինքը, և ճնացինք: Բարեբախտաբար հետևյալ առավոտ յերիտասարդ աղջիկը ավելի լավ եր զգում:

Շարունակեցինք մեր ճանապարհը Կոտուրի (Gotourah) կիրճով, վոր վորքան Պարսկաստանի սահմանին եյինք մոտենում, այնքան նեղ ու ծուռ ու մուռ եր դառնում: Ժայռի վրա կանգնած մի բարձր աշտարակի մոտով անցանք, շինված մոտ մի դար առաջ մի բեկի հրամանով, վոր նպատակ եր ունեցել հետազոտել անցնող կարավանները և վճռել թե վոր կարավանների վրա առանց մեծ վտանգների կարելի յեր հարձակել ու թալանել: Գիշերեցինք Կոտուրի մեջ, վոր Թուրքիայի վերջին գյուղն է: Կոտուրի վրա իշխում է մի մինյանբեկը, ուր բնակում է սահմանապահ յերիտասարդ Մուսա բեկը, վորի առատաձեռնությունը հավասար եր իր քաջու-

---

* Jaubert, *եջ 124—130:*

թյան։ Նրա սև ու գանգուր մազերով ասվերված ճակատի վրա դրոշմված եր մի ազնվական հպարտություն։ Հագնված քրդի նման, գլխին կրում եր ծիրանագույն կերպասից մի գոտկ և մետաքսյա մի շալ, զարդարված բազմաթիվ ծոպերով։ Նրա զենքերն ու հագուստը այնքան համեստ էին, որքան իր կարողությունը։ Թեև հարուստ չեր Մուսա բեկը, բայց շատ հյուրընկալ մարդ եր, և թեև քուրդ եր, սակայն չեր ապրում ավազակությամբ։ Յերբ իմացավ մեր ժամանումը, իսկույն մեզ ուղարկեց ամեն տեսակի պարեն, ինչպես նաև մեր վրանները զարդարելու հաժար գորգեր ու բարձեր։ Հետո մեզ ճաշի հրավիրեց, որտեղ ամեն ինչ առատ եր, հակառակ իր միջոցների միջակությանն։ Մեզ հյուրասիրեցին, դետնի վրա սփռված նկարազարդ բեհեզյա մի ծածկոցի վրա, փլավով, կաթով և բեկի ուղեցած վերջին դառնուկի մսով, որ հատկապես մորթել էլին մեզ համար։ Նա չմերժեց այն փոքրիկ նվերը, որ իմ թաթարի միջոցով ավի նրան, բայց, նա վորևե բան չունենալով վերջինիս տալու համար, խնդրեց մի փոքր սպասել և իր մոտ իջևանած պարսիկ մի վաշխառուից մի քիչ ղրամ փոխ վերցրեց մեծ տոկոսով [և տվավ թաթարին]։

Մուսա բեկը իր մարդկանցից մի քանիսին ընկերացրեց մեր պահակախմբին։ Մենք շարունակեցինք ձորի ոռմպտույտ ճանապարհով և դառնք ճանապարհները իշխանության կողմից վերանորոգված. սա մի յերևույթ է, որ հազվադեպ է Բուրդիստանում։ Կոտուր գետը, որ Մահմուդիայի լեռների միջից է բղխում, այս կերպի միջով հոսում է հեղեղային արագությամբ։ Նա ընդունում է հանքային ջրեր, որոնք ջրվեժանման ընկնում են կամ հոսում ժայռերից։ Յերբ ձորը լայնանում է, այս գետը ավելի հանդարտ ընթացք է ստանում և վոռոգում է Սոյի դաշտը։ Այդտեղ տեսարանը ավելի հրապուրիչ է դառնում։ Բարձրաբերձ կաղամախիներ և կաղնիներ, կարծես կախված յերկնքից, հայտնում են թե մոտերքում, և մենք մի պարսկական քաղաքի։ Գարնան՝ ողջ բուսականությունը ե. աշնան՝ հողը ծածկվում է ամենահարուստ

բերքով. վորթատունկը, ծիրանին, թթենին աճում են գետակների ափերում, և բնակիչների գլարթությունը ներդաշնակում է կլիմայի քաղցրության հետ։ Ծաղկյալ և շնորհալի մի լեռու ուղեորին համոզում է թե մոտենում է ավելի քաղաքակիրթ մի յերկրի սահմաններին։ Հայաստանի դաժան լեռներից հազիվ դուրս յեկած, նա զմայլվում է իր առաջ բացված տեսարանով։ Տեսնելով այդ դաշտերը կատարելապես մշակված, նա վստահ է վոր աշխատասեր ու հարուստ մարդիկ պետք է լինեն նաև պարկեշտ ու խաղաղասեր։ Ամեն ինչ ժպտում է նրան և ամեն ինչ նախազգացնել է տալիս լերջանիկ մի հետանկար։

Մայիս 4-ին հասանք Սոյի դռների մոտ. նրանք պահպանված էլին մեծ խնամքով։ Բրդական տարազը, որ ապահովության համար ենդերեսից մեկնելիս վերցրել էյի, և մեզ ընկերացող ձիավորների թիվը, նախ տարափոխար արին բնակիչների։ Սակայն վստահություն ներշնչելուց հետո, սկսեցին մոտենալ ինձ և տալ անխորհրդապատ հարցումներ. «Ո՞վ եք դուք։ Վիրտեղից եք գալիս։ Ձեր ճանապարհորդության նպատակն ինչ է։ Յերևի թագավորի համար նամակներ ունեք։ Կարելի՞ է բովանդակությունն իմանալ։ Ցույց տվեք մեր վեհապետին բերած ձեր նվերները»։

Մի քանի ժամ դռների առաջ մեզ սպասեցնել տալուց հետո, պահապանները մեզ մեծ ուժերին քաղաքում՝ բնակարան գտնելու համար. սա մի տեսակ անհարմարություն է, վոր պետք չեր Թուրքիայում, վորովհետև այնտեղ կարելի էր առաջին հանդիպողի մոտ իջևանել։ Ի վերջո մեզ ցույց տվին Սուլեյման անունով մի ազգի տունը։ Զիմանալով թե ովքեր ենք մենք կամ մեզ համարելով քուրդ, ազգն իսկապես ընդունեց մեզ, մի բան վոր շատ անախորժ էվաց վանից մեզ ընկերացող պահակներին, ինչպես նաև Մուսա բեկի մարդկանց։ Հետևյալ որը, պարսիկ մի սպա հանկարծ մտավ մեր հարկարաժինը և հրամայեց քաղաքից հեռանալ. «Մուրախաս շուտուղ, ասաց, այսինքն արտաքսված եք»։ Այդ խոսքի վրա, Սուլեյմանը սարսափելի գայրացավ։ Նա

վազեց նահանգապետի պալատը. «Ի՞նչ, — ասաց նրան, — մենք Ասիայի մյուս ծայրից գալիս ենք Շահի համար նամակներ և նվերներ բերող մի մարդու ուղեկցելու, մի մարդու, որին թալանել էին ավազակները և զնգան դրել, մի մարդու որ վերջապես ձեզ համար հարյուր անգամ իր կյանքը վտանգի է ենթարկել, և դուք համարձակում եք մեզ արտաքսել ամոթալի կերպով և առանց պատճառի։ Կորե՛ք, անարգ հերետիկոսներ, անիծյալ ուրացողներ, չես միշտ էլ ասել եմ, դուք արժանի չեք մարգարեի ցասումին և իսկական հավատացյալների կշտամբանքին»։ Պարսիկները և նույն իսկ նրանց մեջ ամենաակնառու անձինք, անհասկանալի մի պաղատյունությամբ հանդուրժում են ամենակոպիտ անարգանքներին։ Այդպես էլ նահանգապետը, առանց վիրավորվածի զգալու այդ խոսքերից, ամենախոր ցավը արտահայտեց դեպի մեզ ցույց տրված այդ վատ վերաբերմունքի համար։ «Ի՞նչ պես, — գոչեց, նա, — մի՞թե այդ ոտաբականը, որի մասին խոսեցիք, այն Ֆրանսացին է, որին այնքան չերկար սպասում էինք։ Մի՞թե ճի՞շտ է որ նրան կամեցել են արտաքսել։ Գնացեք այդ դեսպանի մոտ։ Ցեսս իսկույն նրանից ներողություն կխնդրեմ մի ոսկի միջոցով։ Ինչ վերաբերում է այն թշվառականին, որ առանց իմ հրամանին հանդգնել և ներկայանալ նրա [դատաստանին] կհանձնեմ։ Թող այդ անզգամին չների, որ ըովհեան նրա վարմունքը արժանի է խիստ պատժի»։

Մեր հյուրընկալը, որին այս պատասխանը հաղորդվեց շատ ոչ բավարարել մեր բոլոր պահանջները։ Կանչեց չերեք ժիշաններին, ամեն կերպ աշխատում էր մեր ամենաչնչին ցանկություններին անգամ ընդառաջել, և ստորին, շողոքորթ ու քծնող մի պալատականի նման, խանի շնորհներին արժանանալու նպատակով, մեր մասին գովասանական տողեր հրատարակեց։

ԳԼՈՒԽ ԺԵ·

ԺՈՒԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ժուկերի ուղեգրությունը Պարսկաստանում և նրա տեսակցությունները Աբբաս Միրզայի ու Ջաֆթ Ալի Շահի հետ չենք թարգմանում, ինչպես ուշ ենք տալով այս հատորի ծավալը, որը արդեն բավական ստվար և ուղեգիրների բազմությանը պատճառով։ Բավականանում ենք միայն տալով շատ համառոտ մի ամփոփում։

Մեկնելով Խոյից, նա իջևանում է Ահմեդապատ, ապա տանկերկու մղոն ճանապարհորդելուց հետո, ժամանում է Մարանդ։ Թեև, ասում է նա, Թավրիզի ամենակարճ ճանապարհը Խոյից գնում է Թեհրան և Դիզի-Խալիլ, Ուրմիայի լճի չերկարությամբ, բայց իրեն ընկերացող պաշտոնյան նախընտրում է Մարանդի ուղին։ Անցնելով Սոֆիանից, մեր ուղեգիրը ժամանում է Թավրիզ, որի մասին ասում է թե, թեև չունի իր նախկին ճոխությունը, սակայն կարևոր առևտրական կենտրոն է և ունի հետևյալ հազար բնակիչ։ Ցերբ Աղա Մահամեդ ձեռնարկել եր գրավել Ատրպատականը, գրում է Ժուկը, ժողովուրդը հակառակ լինելով նրան ցույց եր տվել ձեռ դիմադրություն, և այս պատճառով այդ բռնապետը անդթորեն վերաբերված եր նրանց հանդեպ։ Գեղեցիկ կանանց ու չերեխաներին նա գերի եր վարել, իսկ հայերին, «առանց սեռի ու տարիքի խորության կոտորածի մատնել»։

Այդ միջոցին Աբբաս Միրզան գտնվում եր Ատրաբիլում։ Ժուկը մեկնում է Թավրիզից դեպի գահաժառանգի բանակատեղը և անցնում է Ղարա-դաղի ստորոտում գետեղված Սալիդապատ գյուղից, որտեղ բաժանվում են Ատրաբիլի ու

Թեհրանի ճանապարհները։ Յերկրորդ կայանը Չելեբիան (Tchélébïan) և ապա Սեր-աբ (Ser-Ab), տասը մղոն հեռու Արաաբլիից, վոր գտնվում և Թեհրանից ու Սպահանից՝ Թիֆլիս, Դերբենտ ու Բագու տանող առևտրական ճանապարհի վրա։ Արաաբլի բազարում ապրանքը առատ և, սակայն ամրությունները աննշան են, և բնակարանները այնքան խղճուկ, վոր Արբաս Միրզան «տասիպված և լինել 1805 թվի ամրողջ ձմռան ընթացքում ապրել վրանի տակ»։ Գահաժառանգը սիրալիր ընդունելություն և տալիս Նապոլեոնի ներկայացուցչին, հետաքրքրվում և եվրոպական հարցերով և դանդաղում և, վոր պարսկական բանակը անկազմակերպ լինելու պատճառով իմիճակի չի կարող ուժեղ առնական առաջխաղացում։ Ժորերը շատ գոմիսում և խոսում Արբաս Միրզայի մասին, վոր ասում և թե տասնինն տարեկան և և կրա տարի չի վոր կառավարում և Ատրպատականի նահանգը։ Թե նա վճռքան ուշիզ վերաբերմունք ունի անխաիր բոլոր հարատակների հանդեպ, պատմում և մի դեպքի մասին։ Արբաս Միրզայի ականավոր պաշտոնյաներից մեկը՝ Նազար Ալի բեկը, բանտարկված իր վրանն և տանում շատ գեղեցիկ մի հայ աղջիկ և բռնաբարում։ Արբաս Միրզան, տեղեկանալով այդ արարքի մասին, չարագործին անմիջապես մահվան և դատապարտում։ Ժորերը ներկա լե գտնվում պինդորական մարդանքների և մեքանի տեսակցություններից հետո մեկնում և Թեհրան։

Ժորեր Պարսկաստանի մայրաքաղաքն և մտնում ընկերակցությամբ Սպահանցի ու Բաղդադցի գոհարեղենի հարուստ հայ վաճառականների։ Պարսիկները նրան լավ ընդունելություն են ցուցց տալիս և գոհունակություն են հայտնում, վոր Ֆրանսական ներկայացուցիչ Ռոմիոլի մահվանից հետո մի ուրիշը փոխարինում և նրան։ «Անգլիայի գաղտնի գործակալ զանազան հայեր ու պարսիկներ» լուրեր են տարածում նրա առաքելությունը կասկածելի դարձնելու համար։ Հունիսի 5-ին (1806), Թեհրան ժամանումին նա հանդիսավոր կերպով առաջնորդվում և վեզիր Միրզա

Քնակարանը։ Հաջորդ որը, ըստ սովորության, նա այցելում և վարչապետ Միրզա Շեֆիին, և յերկարատև տեսակցությունից հետո, կարգադրվում և ընդունելություն Ֆաթ Ալի Շահի կողմից։

Ժորերի ընդունելությունը կատարվում և հանդիսավոր կերպով։ Արևածագին հատուկ պաշտոնյաներ առաջնորդում են ֆրանսական ներկայացուցչին դեպի պալատը։ Նրա առաջից գնում են բազմաթիվ հեծելազոր և տարուկներ, վորոնք իրենց դլխի վրա կրում են նվերները ափսեների մեջ՝ զինքեր, կտորեղեն և գոհարեղեն, ծածկված հնդկական շալերով։ Փողոցներում կանգնել են յերկկարգ հրացանակիր զինվորներ, նրանց թիկունքում, հետաքրքիր բազմություն, և կտուրները ծածկված են կանանցով ու յերեխաներով։ Ջաֆար Կուլի խանը նրան առաջնորդում և դահլիճ, «ուր գտնվում են Միրզա Ռիզա Կուլին և բազմաթիվ ուրիշ անձնավորություններ»։ Ընդունելության արարը նա մտնում և բազմաթիվ միրզաների, խանների, շահզադաների և ուրիշ պալատականների պաշտոնյաների շարքից անցնելով։ Ջաֆար Կուլի խանը ծանոթացնում և Շահին Ֆրանսիայի ներկայացուցչի զալուստը, արևելյան ծանոթ ճոռոմաբանությամբ և Շահը բավականանում և պատասխանելով «Բարի լինիք»։ Ժորերը հանձնում և Նապոլեոնի նամակը, սակայն չի պատժում այն բանակցությունների մասին, վոր նա կատարից պարսից արքունիքի հետ, միայն բավականանում և նկարագրելով պալատը և տալով իր տպավորությունները Ֆաթ Ալի Շահի մասին։ Այս առաջին ընդունելության ներկա լեն նաև Շահի յերեք վորդինները։

«Թեհրան բնակության ընթացքում, — գրում և Ժորը, — յես բնակում եյի Միրզա Ռիզա Կուլիի պալատում, ուր իջևանել եյին։ Մեծ թվով պարսիկ ու հայ մեծամեծներ այցելում եյին ինձ, առաջնորդված հետաքրքրությունից և ինձ ավարտել Շահին հանձնելու համար։» Հունիսի 24-ին Շահը մեկնում և Սուլթանիե և Ժորերը հետևում և արքունական շքախմբին։ Նախապես մեկնել եյին, առևտրականներ՝



Սուլթանիեհ, (Ընդհանուր տեսարան)

իրենց բեռներով և ուրիշները։ Հատուկ հրովարտակով արգելված եր թե մահմեդականներին և թե քրիստոնյաներին Շահի անցած ճանապարհից կես մղոնից ավելի մոտ գտնվել։ Թեհրանից Սուլթանիեհ ուղեգիծը հետևյալն է ներկայացնում. — Թեհրան, Ալի-Շահ-Աբբաս, Հաջի-Ապատ, Ղազվին, Սինադեհուն, Սային-կալե, Սուլթանիեհ։ Ճանապարհորդությունը վերջանում է հուլիսի 5-ին, և շքախումբը կլիմայի տաքության պատճառով հանգչում է ցորեկը և ուղևորում գիշերը։ Այդ միջոցին Պարսկաստան է գալիս մի ուրիշ ֆրանսացի՝ Մ. Դուպրե, Տրապիզոնի ֆրանսական հյուպատոսի վորդին, և տեղեկացնում է, վոր հաշտությունը կնքվել է Սան Պետերբուրգում։

Սուլթանիեհում փոքրերը բազմիցս ընդունվում է Շահից. նույն իսկ ընկերանում է նրան վորսորդության և նկարելու և գտնվում մի զորանդեսի։ Քառասուն որ այնտեղ ապրելուց հետո, հուլիսի [ոգոստոսի] 12-ին հրաժեշտ է առնում Շահից, վոր նրան տալիս է բազմաթիվ նվերներ, վորոնց կարգին բազմաթիվ պարսկական ձեռագրեր։ Շահը ցանկություն է հայտնում վոր Պարսկաստան ուղարկվեն մեծ թվով ֆրանսացի մասնագետներ՝ բժիշկ, զինվորական հրահանգիչներ և առևտրականներ, խոստանալով նրանց ընծայել լավագույն ընդունելություն։ Այս վերջին տեսակցությունը տևում է յերկու ժամ։ Մեհմեդ խանը նշանակվում է մեհմանդար, և պարտավորություն է հանձնվում նրան ընկերանալ փոքրերին մինչև Երզրում։ Մեհմանդարին հրահանգ է տրվում, լեթե ճանապարհին նա մեռնի, վերցնի նրա բոլոր իրերն ու Մ. Դուպրեյի ու թաթարի ընկերակցությամբ գնա մինչև կ. Պոլիս և այնտեղ զեկուցի ֆրանսական դեսպանին փոքրերի առաքելության արդյունքի մասին։

Հուլիսի [ոգոստոսի] 14-ին մեկնելով Սուլթանիեհից մեր ուղեգիրը գնում է Թավրիզ և ապա Ահմեդ Խան, Դիզի-Խաալի, Թեհուլ ճանապարհով Խոյ, և այնտեղից կոտուրի ճանապարհով ուղղվում է դեպի Վան, Երզրում, Տրապիզոն, կ. Պոլիս։ Ուղեգրության այս մասը տալիս ենք ամբողջությամբ հաջորդ գլխում։

ՎԵՐԱԴԱՐՁԸ

ԳԼՈՒԽ ԺԶ. *

Կոտուրի ճովիտը. — Այցելություն Մուսա-բեկին. — Աստուչի, հոտաբ, Արջակ, Վանի ժամանումը. — Այցելություն Դեվիփաշային. — Ցոր յեկեզեցիների վանքը. — Վանից մեկնում. — Արջակ Առնիսի կիրճը. — Ականց, Հորոմ, Թաշկուն. — Անցք Ցեփրաից. — Սուլթանիե. — Բոցավառ մի դաշտ. — Անցք Թուզլայի վրայից տիկով. — Կաուա Ջոբան. — Ակ-դաղ. — Արամոր. — Գյուլլի-Տատու. Թեք-դաղի գագաթը. — Երգրումի դաշտավայրը — Կյանք:

Շարունակելով մեր ճանապարհը, [ամսի] 4-ին մտանք Կոտուրի նեղ ու մանվածապատ ձորը, որի հեղհեղից ակտուած հատակը խիստ քարոտ է: Սա ամենադժվարանցանելի կիրճերից մեկն է, որի միջով մեր ճանապարհը շատ տաժանելի չեր: Նախորդ անցքի ժամանակ Մուսա բեկի իմ տված խոստման համաձայն, գնացի նրա հյուրընկալությունը խնդրելու: Նրան գտա այնքան սիրալիր, որքան առաջին անգամ: Նա նոր եր վերադարձել քուրդերի դեմ կատարած արշավանքից, որից մեծ ավար եր ձեռք բերել: Դրա համար եւ առատաձեռնությունը սիրում եր նրա պալատում: Նա ինձ հարցրեց թե ինչպես գտա պարսիկներին և չափազանց գովաճտալ նրանց մասին խոսելիս: Իմ մեհմանդարը, որ արդեն մի քանի տարի եր, կատակով նրան պատասխանեց քուրդերի ծանրաբարոյության, կոպտության և ամբարտավանության մասին:

* Jaubert, էջ 317—324.



Խոշորի բերդը, (տեսարան ձեր. կողմից).

Այդ յերիկոն շատ հաճոյալի անցավ։ Հետևյալ որը, մեկնելուց առաջ, ուզեցի բեկին հայտնել իմ յերախտագիտությունը իր արած ընդունելության համար, սակայն նա մերժեց ընդունել վորևե նվեր։

5-ին մեր ճանապարհը շարունակեցինք ձորի միջից։ Այդտեղ հիանալի արոտավայրերում արածում են մեծ քանակությամբ այծյամներ, վորոնց բազմաթիվ հոտեր տեսանք։ Մուսա բեկը վորպես առաջնորդ մեզ ընկերացրել եր իր ցեղակիցներից մեկին, դրա համար էլ ճանապարհին պատահած քուրդերը մեզ չանհանգստացրին։ Դիշերեցինք Աստուջիում[1], վանից լինը մղոն հեռու լաճուկ մի գյուղ և Խոշաբից յոթ մղոն հեռու, փոքր մի ավան կառուցված սարահարթի վրա, վորտեղից բղխում են Կոտուր և Խոշար գետերը։ Սրանցից առաջինը Խոյի բարևրեր գաշտերն և վոռոգում, իսկ մյուսը թափվում և վանի լճի մեջ։ Խոշարի վրա իշխում և մի դղյակ, ուր ապրում և բավական ազդեցիկ մի բեկ։ Այդ ավանում կա հայկական մի յեկեղեցի, ուր շատ հեռվից ուխտագնացության են գալիս, և վորտեղ իբրև մի նշանավոր ու յեզակի յերևույթ, բեկը մշտապես վառ և պահում մի ջահ, կուլսի պատկերի առաջ[2]։

Խոշարի սարահարթը մի մասն և կազմում այն լեռների վորոնց վրա իշխում են Հեքյարի յեղերը։

6-ին առիպված եյինք մի քանի ժամ կանգ առնել քուրդերի մոտ, մեր ձիերին մի փոքր հանգստության տալու համար. այդ որը միայն հինդ մղոն կարողացանք անցնել։ Դիշերեցինք Արջակի տների տանիքների վրա։ Սա մի գյուղ և կառուցված Մահմուդիյեի կլորձև յեզբի մոտ և աղի մի լճի յեզերքում, վորի շրջապատը յերկու կամ յերեք մղոն եր։ Մեր անցած յերկրամասում վխտում եյին Շաքաքի ցեղի ըմբոստ հրոսակախմբերը։

[Ոգոստոսի] 7-ին վաղ առավոտյան հասանք վան և իջևանեցինք Դերվիշ փաշայի վերակացուի պարտեզում։ Հետևյալ որը այցելեցի այս կառավարչին, վոր ինձ ընդունեց նեց վերին աստիճանի սիրալիր, նրա համար վոր գուցե նա



Խոշաբի բերդի դուռը, (լուսանկար Ցեր. Լալայանի).

պատվի խնդիր եր համարում հյուրասեր լինել, որպես քուրդ և կամ տակավին Պոլսից առացած չլինելով իր իշխանութիւնը հաստատող ֆերմանը, ցանկանում եր որ մեր լիազորի միջոցով նպաստավոր կերպով ներկայացնէի հեղափոխութիւնը, որի միջոցով իշխանութիւնը անցել եր իր ձեռքը: Ինձ հրավիրեց ոչ միայն իր հետ նախաճաշելու, այլ և նույն իսկ ոգևորելու իր սեփական բաղնիքից, Թուրքիայում ամենահազվագյուտ քաղաքավարական ձևերից մեկը: Վերջապես ինձ առիթից մանր գալ լճի կղզիները և այցելել վանքերն ու շրջակա քրիստոնեական հնութիւնները, որ գործադրեցի [ամսի] 9-ին: Սքանչելի լեր այն հմայիչ տեսարանը, որը մարդ վայելում է յոթ եկեղեցիների վանքում, կառուցված մի բարձրութեան վրա, որտեղից երևում է լիճը, քաղաքը և վանի պարտեզները: Պետք չէ տառապի հասկանալ յոթ եկեղեցիների անունը, որովհետև այդ վանքում կա միայն մի հատ, սակայն այնտեղ կան վեց մատուռ, հետևաբար յոթ խորան: Շատ ընդարձակ չէ: Այնտեղ նկատեցի շատ վոսկեչական գործեր և հայերի նկարած բավականի հաջող պատկերներ: Ինձ ցույց տվին եկեղեցական զգեստներ, ավետարաններ, պատարագամատույցներ և ուրիշ եկեղեցական գրքեր, որոնք բոլորն էլ ձեռագիր էին և ներկա եղած պատարագին: Վանքի մեծավորը սպիտակամորուս մի ալևոր եր: Նրա մխիթարութիւնը բաղկացած եր չորս կամ հինգ կրոնավորից, որոնք հայ, որոնք վրացի[3]: Ճաշեցինք այն առատաձեռն վոզորմութեան արդյունքից, որ նոր եր առացել: Սոխոված եյլի նկատել թե սակավակերութիւնը չի հանդիսանում այն գլխավոր առաքինութիւնը, որով պարծենում է հայ հոգևորականութիւնը: Ճաշը առատ եր և երկար տևեց, գինին և ողին նույնպես խմեցինք առատ կերպով:

Դերվիշ փաշան ինձ ընծայեց մի գեղեցիկ սև ձի և ինձ ընկերակցելու համար նշանակեց մի քուրդ սպայի, որին անցյալում մասնակից եր եղել իր դժբախտութեան: Մեկնեցինք 10-ին: Քանի առաջանում եյինք, պարսիկ ուղեկիցներս ավելի ուժեղ կերպով զգում եյին Ասիական Թուրքիայում կատարվող ճանապարհորդութեան վտանգներն և մյուս անհարմարութիւնները: Այլևս մեզ եյին չեյին երթում. կարոտել եյին թամբաքին, սառն շերբեթը և առհասարակ իրենց երկրի հատուկ ախորժագրգիռ երբութիւնները:

Ամբողջ որը անցանք վանի լճի եզերքով, ուղղվելով դեպի հյուսիս արևմուտք: Գիշերեցինք Արջակում [4], մի գյուղակ, որը համանուն է այն գյուղին, ուր գիշերեցինք [ամսի] 6-ից 7-ը:

11-ին ուղղութիւնը փոխեցինք և գնացինք դեպի արևմուտք: Գիշերվա մի մասը անցկացրինք Կարզու[5] (Karzou) անունով մի գյուղում, որտեղից 12-ին առավոտյան ժամը 1-ին մեկնեցինք, Առնիսի վտանգավոր կիրճի պատճառով: 13-ին գիշերեցինք Ագանում[6] (Agnes) [Ագանց], Արճեշի (նախկին Արտիա) մոտ գտնվող մի գյուղ: Գիշերվա կեսին, քուրդերը փորձեցին խլել մեր ձիերը: Մի քանի հրացանապարկեր տեղի ունեցան, բայց մենք ազատվեցինք կորցնելով մի ջորի, որի վրա բարձված եր մեհմանդար Մեհմեդ խանի իրերը, ինչ որ մի գեղեցիկ առիթ ավեց նրան՝ Թուրքիան անիծելու:

Վանից մեկնելուց առաջ, Բայազիտի Իբրահիմ Փաշային գրել եյի, հանձնարարելով նրան Մահմուդ Ագային և այն բոլոր անձնավորութիւններին, որոնք ինձ այնքան բարյացակամութիւն և անձնվիրութիւն ցույց եյին տվել բանտարկութեան ընթացքում. միևնույն ժամանակ նրան ուղարկել եյի մի քանի նվերներ: Իբրահիմը ինձ պատասխանեց քաղաքավարութեամբ: Նրա նամակը 13-ին ինձ բերեց Դերվիշ փաշայի թաթարը, որ տարել եր նրան իմ նամակը: Այդ որը յես իմացա Բայազիդի միջնաբերդի կառավարչի մահվան տխուր լուրը: Այդ հարգելի ծերունին, իմ փրկարարը, պարսիկների դեմ մղված մի կռվի ընթացքում սպանվել եր նիզակի մի հարվածով:

14-ին մեկնեցինք Հորշուն (Horchoun) և գիշերեցինք Թաշկուն (Tachcoun)[7]: Այստեղ եր բնակում ծերունի մուսուլման այն շեյխը, որ մեզ առաջնորդել եր առաջին անցը

քի ժամանակ։ Նրան վերստին պատանք իր վանքում և մեզ այնտեղ հյուրընկալեց։

15-ին Մանազկերտի մոտով կրկին անցանք Յեփրատի հարավային բազուկը և շարունակեցինք մինչև Սուլթանիե[8] (Sultanieh), վաղորմելի մի գյուղ՝ զետեղված լայնատարած մի դաշտավայրում..... Նրա միջից անցնում էր մի մեծ գետի լայնությամբ հրվանդ մի հեղեղ։ Արոտավայրերը պարարտացնելու նպատակով, քուրդերը վառել էին չոր խոտի ճնացորդները, աշխատելով այրել յերկու զուգահեռ գծերի վրա, մի մյանցից քիչ հեռու։ Յերը քամին կատաղի չե, բոցը այնպիսի արագությամբ և տարածվում, որ մի ձիավոր դժվարությամբ կարող և հասնել։ Այդ հրկիզումը յերբեմն յերկու կամ յերեք որ և տևում։

16-ին անցանք Թուզլայից[9] (Touzla) բավականի մի մեծ գետ, վորի յեզերքը գտնվող աղահանքից ստանում և իր անունը։ Գետի վրայով անցքը կատարվում և ուռած տիկերով, վորոնք կապում են իրար և ծածկում հարդով և յեղեգով։ Ճանապարհորդը նստում և յետևի մասում. առաջի կողմում նստած և մի մարդ, վորի ձեռքում կա մի տեսակ թի կամ դեկ, նավին ուղղություն տալու համար։ Այս անցնելու յեղանակը թե յերկար և, թե անհարմար և շատ հաճախ ծնկները թրջվում են։ Ինչ վերաբերում և ձիերին, նրանք լողալով են անցնում։ Պարսիկներից մեկը, վոր չեր ուզում ձիուց իջնել ցած, ընկավ Թուզլայի մեջ, սակայն կարողացանք նրան ազատել, ինչպես և իր ձիուն։ Գիշերեցինք Կարա-Զորանում (Cara-Tchoban)[10]։

17-ին անցանք Սալտաակ լեռնից [Ա.-դաղ]։ Յերեկոյան անցանք Արաքսի հունը։ Գիշերեցինք Քուլլիում[11] (Kulli), ուր ավելի լավ ընդունելություն գտանք, քան մեր առաջին ճամբորդության [ժամանակ]։ Այնտեղ ավելի շատ կենսամթերքներ կային, քան մեր նոր անցած վայրերը, վոր տեղերը քուրդերը ամբողջովին ասպատակել էին։ Մեզ հայթայթեցին առատ քանակությամբ հաց, կաթ և ձու։

18-ին գիշերեցինք Թաթու (Tatou), վոր վաղորմելի մի գյուղակ և։ 19-ին անցանք Թեք-Դաղի (Tek-Dagh) լեռնաշղթան, վորի գագաթները ինձ խիստ բարձր յերևացին։ Կիրճի գագաթը հասնելով, մի կողմից յերևում և մինչև վան տարածվող յերկրամասը, իսկ մյուս կողմից, դեպի հեռուն, Դիարբեքիրի դաշտավայրերը։ Վոչ Ալպյաններում, վոչ Ապենինյաններում, վոչ Պիրենյաններում, վոչ Հիմալա լեռան վրա և վոչ էլ այն լեռնային յերկրամասերում, վորտեղից անցել եմ, յես չեմ տեսել այնպիսի սքանչելի մի տեսարան, վորպիսին ներկայացնում էին մեր շուրջը բարձրացող լեռների այդ զանգվածները հյուսիսում, արևելքում, արևմուտքում և վորոնց գագաթները ավելի ցածր լինելով քան մեր կանգնած վայրը, տակավին ձյունապատ էին։ Այս լեռների միջից և, վոր սկիզբ են առնում Տիգրիսը, Յեփրատը և Արաքսը։

Նույն որը՝ 19-ին, հեռացանք այդ բարձրավանդակից, վորից անցել էինք սկսած Մանազկերտից, անթիվ նեղուցներ կրելով, մանավանդ վերջին չորս որերը և վերջապես իջանք Երզրումի դաշտավայրը։ Յուսալի փաշայի տված հրամանի համաձայն, բոլորովին չմտանք այդ քաղաքը, այլ գնացինք իջևանելու Կյան[12] (Kian), մի մեծ ավան, վոր մեկ մղոն հեռու էր։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վանի Մահմուդիե, (Խոշաբ), գավառակում մի փոքր գյուղ Աուջլ, Սարայի արևմտյան կողմը։

2. Խոշաբ՝ Վանի վիլայեթի գավառակներից մեկը, վոր կոչվում և նաև Մահմուդիե։ Պատմականորեն Անձևացյաց և Մարդաստան գավառի մի մասն եր կազմում, այժմ բաժանված և Վերին և Ներքին Խոշաբների, վորոնք յերկուքը մլիասին առնելով, շրջապատված են արևելքից Աղբակ, արևմուտքից Վան-Տոսպ, հարավից մասամբ Յերվանդունիք և հյուսիսից Առբերանի (Բերկրի) գավառներից։ Այս գավառից և բղխում Խոշաբ կամ Անդպա գետը, վոր թափվում և Վանի լիճը։ Այս գավառում նախապատերազմյան շրջանում 30.000 բնակչությունից 20.000 հայ էին։ Հին պատմական Խոշաբ բերդաքաղաքը, այժմ գրեթե ավերակ և և ունի սակավ բնակչություն։ Մինչև անցյալ դարի առաջին կեսը, այստեղ ապրում էին

անկախ քուրդ բեկեր և 1847 թվին եր միայն, վոր Թուրքերը նվաճեցին այն։ Այստեղ տակավին մնում են հայ յեկեղեցիների կիսակործան պատերները («Նկարագրական Ուղևորություն», ք. 123—126)։

3. Վարագի վանքում վրացի մլոթան կրոնավորներ գտնվելու պատճառը, միայն ժողովրդի և հիշատակում, այլ աղբյուրները հանդիպած չենք։

4. Այդ ճանապարհի վրա՝ Վանից հյուսիս արևմուտք, ինչպես ժողովրդի և ասում, Աթթակ անունով դյուղ չկա։ Ճանապարհի վրա վորպես առաջին կայարան, կա Ահմականց, կամ քիչ ավելի հեռու Քոչանի, Ջանիկ և Շամդալի դյուղերը։ Ճանապարհից քիչ հեռու գտնվում են Ալուր, Գյուլու, Նորավանց, Նորշեն, Անոնա վանք, Ամենաշատ, Ջրբաշեն և այլն դյուղերը։

5. Կարգու, համանուն այժմու Կարախանն և, վոր գտնվում և Բենդիմահու գետաբերանում։

6. Ականց, մի հին դյուղ, պատմական վասպուրականի Արձնիանովիտ գավառում, Երզրում-Վան ճանապարհի վրա, Վանից 99 կիլոմետր հեռու։ Ականց ավելի ընդարձակվեց հին Արձնի ծովի ջրերի տակ թաղվելուց հետո, կոչվում և նաև Արձնի։ Նախապես հայերը ամենամասնություն էին կազմում՝ 2179 հոգուց 1490 հայ էին։ (Lynch, II. 26)։

7. Ականցից Մանազկերտ տանող ճանապարհի վրա այժմ Հորջուն և Թաշկուն անունով դյուղեր չկան։ Առնվազն Լինչն և մեր ձեռքի տակ ունեցած այլ քարտեզների վրա նշանակված չեն։ Այդ ճանապարհի վրա յեն գտնվում Մարգին և Թոստն դյուղերը, վորտեղից յերբեմն ընդհանում են կարավանները։

8. Նույնպես նշանակված չէ արդի քարտեզների մեջ։

9. Բինկյոլ կամ Բասին գետը, վոր մլռնում և Մուրատին։

10. Կարաչոբան, Բինկյոլ գետի ափերում, Մուսի գավառում, (պատմական Տուրուբերանի Հարք գավառ), բավական մեծ մի դյուղ։ (Lynch, «Armenia» II. 257)։

11. Գուլի՝ քրդարնակ դյուղ, ծովի մակերևույթից 6000 ոտք բարձր։ Նախապես հայաբնակ և յեղել։ Բրանոը գրում և 1838-ին. «Նախապես բազմաթիվ հայ ընտանիքներ եյին ապրում այստեղ։ Ինձ ասին 200 [ընտանիք] գաղթեցին Վրաստան և այժմ միայն 15 մանմեղական ընտանիք և ապրում ընդարձակածավալ ավերակներում». Լինչը այնտեղ վոչ մեկ հայ չի տեսել։ (Lynch, «Armenia», հատ. II. եջ 190)։

12. Կյան կամ Կան՝ Երզրումի արևմտյան հյուսիսային կողմ, կես ժամվա ճանապարհ հեռու, բավական ընդարձակ մի դյուղ։ Պատերազմից առաջ ուներ չորս հարյուր տուն բնակիչ, վորից յերեք հարյուր տուն հայ եյին։ Այս դյուղի հայ բնակիչները համարվում եյին Անիի գաղթականներ, և ընդհանրապես զբաղվում եյին հողագործությամբ։

ԳԼՈՒԽ ԺԷ.*

Պարսկական պահակախումբը վերադառնում է.—Մեկնումը Կանից.— Իլիջայի ջերմուկները. Աբեյան, Ջիմեյիմ.—Հանդիպումը Մ. Ժուանճինի հետ.—Սահան սու.— Գյումուշ-խանե.— Ստավրոս.—Սեվ ծովի մոտակա լեռները.— Ոդեբեվույր.— Չեվիզլիմ.— Տրապիզոն ժամանումը։

Պարսկաստանում ինձ տրված պահակախումբը Երզրումից այն կողմը չպիտի գնար, այդ պատճառով անհամանդար Մեհմեդ խանը այդ քաղաքի կառավարչին գնալով հայտնեց մեր ժամանումը, ինչպես նաև Տրապիզոնի ճանապարհով Պոլիս վերադառնալու իմ ցանկությունը։ Կառավարիչը, վոր պատրվակով թե կարուկ հրաման և ստացել, վոր յես գնամ Կարա-հիսարի ճամբով, ուր գտնվում եր այդ ժամանակ փաշան, անմիջապես ընդառաջել իմ ցանկության. համաձայնեցինք բեյլերբեյին գրություն ուղարկել մեր յերկուսի կողմից։ Մեր նամակները հանձնեցինք խելացի մի հայի, վոր խոստացավ ամենամեծ փութկոտություն ի գործ դնել։ Նրա վերադարձին, մենք պետք և ընդառաջ գնայինք մինչև Չիֆթլիք, գեղեցիկ մի դյուղ, յերկու ճանապարհների ճյուղավորման վայրում, վորոնցից մեկը տանում և դեպի Տրապիզոն, իսկ մյուսը՝ կ. Պոլիս Փոքր Ասիայով։ Առողջության վատթարացման հետևանքով շատ եյի ցանկանում ծովի ճանապարհով գնալ։ Պարսիկները ոչ պատրոի 20-ին վերադարձան դեպի Երևնց հայրենիքը, ստանալով ինձնից գանազան նվերներ։ Մեհմանդարին հանձնեցի նամակներ Շահի նա-

---

* Jaubert, եջ 325—333։

խարտիներին և ուրիշ բազմաթիվ անձնավորութիւնների ուղղված, որոնց հետ Պարսկաստանում պտնված միջոցին հարաբերութիւններ եմ ունեցել։

Կյանքից մեկնելի 20-ին յոթ կամ ութ թուրք ձիավորների հետ, որոնց ինձ ավել եկին որպես պահակախումբ։ Այդ որը միայն մեկ մղոն գնացինք, որպեսզի հայկական տանք վերադառնալու և նույն իսկ ճանապարհի մյուս մասը անցանք խիստ պանդագորեն, թե թուրքերի անոգութեան պատճառով և թե նրա համար, որ մի առաքելութեան կատարման ընթացքում, նրանք իրենց անցած գյուղերի վրա հարկեր են դնում, և շահագրգռված են կերակրացնել իրենց ճանապարհը։ Ոչինչ այնքան տագնակալի չէ, որքան նման մի պահակախմբի հետ ճանապարհորդել։

Դիշերն անցկացրինք Իլիջայում, փոքր մի գյուղ, որ իր անունը առանում է ձմերային մի աղբյուրից, ուր լողացինք։ Այդ աղբյուրը պարփակված է ութանկյուն մի ավազանի մեջ, ութսունից մինչև հարյուր վոտնաչափ շրջանակով և տասնչորսուսից մինչև տասն հինգ վոտնաչափ խորութեամբ։ Լոգանք ընդունելու համար նստում են շուրջը շինված մարմարյա նստարանի վրա։ Այս ավազանը փակված է միջակ բարձրութեամբ պատերով։

21-ին փոխանակ կոչա Փուհարի և Բարերդի ճանապարհը բռնելու, ուղեվորվեցինք դեպի Զինննես և Աշքալե, վորտեղ և գտնվում կայարանը։ Այդ վայրի մոտերը հանդիպեցի Մ. Ժուաննինին, վորին Մ. Ռուֆինեն եր ուղարկել։ Չեմ կարող բացատրել այն հաճույքը, վոր արտահայտեցի սեղմելով կրծքիս վրա այդ չերիտասարդ ֆրանսացուն, վոր լուրեր եր բերել իմ ընտանիքի և Ցեվրոպայի գործերի դրութեան մասին։ Նա ինձ հանձնեց նաև գրաված, վորնին մեծ կարեկ եկի ղգում, վորովհետև այն մեծ նվերները, վոր ստիպված եկի տալ վոչ միայն իմ պահակախմբի ձիավորներին և Երզրումի կառավարչին, այլ նաև ուրիշ բազմաթիվ անձանց, թե Պարսկաստանում և թե Թուրքիայում, համարյա թե քսակս սպառել եկին։

Մինչև ուշ գիշերը տևող տեսակցութեունից հետո, վոչոշեցինք վոր Մ. Ժուաննինը գնար Պարսկաստան և Շահին տաներ իմ գրած նամակը, վորովհետև Պարսկաստանում Թուլլատրվում և և նույն իսկ ընդունված և գրել վեհապետին ուղղակի և հաճախ նա պատասխանում և առանց վերջերների միջամտութեան։ Մ. Ժուաննինին տվի այն բոլոր խորհուրդները, վորոնք ինձ անհրաժեշտ թվացին իր կատարելիք ուղեգծի մասին, շարունակելու իր ճանապարհը հյուսիսային Քուրդիստանի միջով, և պարսիկների հանդեպ իր վերաբերմունքի մասին։ Դրանից հետո մի փոքր հանգստացանք և հետևյալ առավոտ մեմիանցից բաժանվեցինք։

Չիֆթլիքը, ուր գիշերեցի 22-ին, կառուցված և ծիծաղկոտ մի դաշտում, փոքր մի գետակի եզերքում, վոր Անվիլը անվանում և Սորման սու, սակայն իսկական անունը Սաման սույ է։ Այս գետակի ջուրը թափվում և Սև ծովը։... Ի վրուհն իմ ներկայանալուն, նույն երեկոյան իսկ, Յուսուֆ փաշայի մոտ ուղարկված հայու ձեռքով ստացա մի նամակ, վորի մեջ բեյլերբեյը հայտնում եր իր ցավակցութիւնը՝ յաղաքային ճանապարհով չկարողանալ գնալուս համար, վոր ինքը համարում եր, վոչ առանց պատճառի, վորպես ամենից ապահովը. ինձ թույլ եր տալիս գնալ Տրապիզոնի վրայով և հայտնում եր թե այդ քաղաքի կառավարչին հանձնարարում եր Կ. Պոլիս մեկնելուս առթիվ անհրաժեշտ դյուրութիւններն ընծայել։ Այս բոլոր բարեացակամութեան նշանները վորպես թե բավական չլինելին, Յուսուֆ փաշան իր նամակի հետ ուղարկել եր մի նոր նվեր։

Հետևյալ որը, 23-ին, ուղեվորվեցինք Գյումուշխանե, մեծ գյուղաքաղաք, ուր բնակում են գլխավորապես հայեր, վորոնք մշակում են նրա հանքերը և արգասաբեր հովիտը։ Նրանք զբաղվում են նաև վաճառականութեամբ, վոր նպաստում և տեղի բարգավաճման և անհիշատակելի ժամանակներից ի վեր նրանք շահագործում են քիչ հեռավորութեան վրա գտնվող արծաթի հարուստ հանքերը։ Գնացի աշխատանքները տեսնելու և հակառակ այս մասին իմ ունեցած քիչ

ծանոթութեան, ինձ համար դժվար չեղավ դատելու, թե այդ աշխատանքները տարվում են ապիկար կերպով։ Անցյալում շահագործման արդյունքը գնահատվում էր ամսական յերկսուն հազար դահեկան (piastre). այսօր չեմ կարծում թե այդ դումարի մեկ քառորդը լինի։ Դյումուշխանեյի շրջակայքը, ըստ ամեն յերևույթի, հանքաբանի հետազոտության համար շատ հարուստ հող կարող է ընծայել։

Դյումուշխանեյից մեկնելով 24-ին հասանք Ստավրոս(խաչ)ի վոր Երզրումից դեպի Տրապիզոն առաջին հույն գյուղն է, այսօս բոլոր գյուղերը հայեր ու թուրքեր են բնակում։ Ունի նկարագիր մի վիրք, լեռան լանջին վրա և հեղհղատի յեզերքին, վորի ջրերը վառգում են հովիտը։ Պետք է յենթադրել թե հին ժամանակ Ստավրոսը յենթակա յեր Տրապիզոնին։

25-ին բարձրացանք հարավից Սև ծովի գոտին կազմող լեռնաշղթան։ Հասնելով դրանցից մեկի գագաթը, մեր վոտներն տակ տեսանք ալիտակ ամպերի մի կույտ, վորոնք ուժգնորեն մխմխանց բախվելով կայծակներ էին ակոսում Տրապիզոնի և շրջակա հովիտների վրա ժայթքող մի վոխրիկ եր։ Արևը ճաճանչում եր մեր գլխի վերևում և շնչում էլինք պարզ ու կենսալի ոդը։ Այս ոդերևույթը հաճախ կրկնվում, մանավանդ գարնան սկզբին, աշնան և ձմրան, յերբ քամիները մղում են ամպերը դեպի վերոհիշյալ լեռները։ Այն ժամանակ նրանք այնքան ծանրաբեռնված են, վոր հակառակ ծովի շատ մոտ լինելուն, գագաթից անդամ դժվար և տեսնվում [ծովը]։

Լեռների գագաթից մինչև հյուսիս տարածվող յերկրամասը խիստ անտառային է։ Բուսականությունը այնտեղ խիստ ուժեղ և ե ծառերը տարօրինակ հասակ են և բարձր։ Դրանք կաղնի, փեկան, հացի, ցարասի, թղկի և յեղևնի են։ Վոչ միայն յերկիրը ընծայում է հաճելի մի գյուղանկար քանի առաջանում ես դեպի Տրապիզոն, այլ նաև դժվար չե հատատել, վոր այդտեղի մարդիկ ունեն շատ ավելի վայելք քան թե լեռների մյուս կողմ գտնվողները։ Հովի խորքում կան կղզիացած բնակարաններ, վոր ապահովության նշան

է։ Վերջապես այդ գեղեցիկ յերկրի վայրերը հիշեցնում են Զվիցերիան կամ Սավոյը, մինչդեռ Երզրումի հողը քարոտ է, խոպան և համարյա լերկ։

Գետնի խոնավությունը և մեծ քանակությամբ թափված տերևները սովորականից ավելի սահուն էլին դարձրել լեռների ձիգ զառիվայրը. դրա համար ստիպվեցինք ձիերից ցած իջնել։ 25-ին գիշերեցինք Ջիվիզլիքում (Djivizlik), ուր Երզրումից հետո առաջին անգամ լինելով գտանք բավականի հարմար մի կարվանսարա և մի լավ սրճարան։ Այստեղից Տրապիզոնի հյուպատոս Մ. Դյուպրեյին գրեցի, վոր հետևյալ որը, 26-ին սիրալիրություն ունենալ ընդառաջ գալու մինչև այն վայրը, վորտեղից առաջին անգամ յերևում է ծովը՝ անհուն մի տարածության մեջ....

ԳԼՈՒԽ ԺԸ *

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Անկասկած Քանդեֆոն, Դիոդոր, կենդ-կլուբ և ուրիշ հին հեղինակներ շատ են չափազանցրած Պարսկաստանի հարստությունն ու նրա բնակչության թիվը։ Շարդինը նմանապես դիրք չի այդ նկատողություններից. սակայն, չնայած որ այս ընդարձակ լերկիրը Ալեքսանդրի, Արշակունների և նույն իսկ խալիֆների ու Սեվիֆիների իշխանության ժամանակ այնքան էլ ծաղկյալ վիճակ չուներ, բայց և այնպես չի կարելի համարել առաջադիմություններից զուրկ և բնակչության նվազման վիճակում, երբ նկատի ունենանք թե քանի տարիա բնիացքում Սպահանի բնակչությունը պրեթե կրկնապատկված եւ։

Անցյալ դարի վերջերում Պարսկաստանից անցնող մի քանի անձնավորություններ սխալների մեջ են ընկել, հանելով իրենց դիտողությունները հիմնելով բազմաթիվ ավերակների գոյության վրա։ Այս քայքայման վիճակի գլխավոր պատճառներն են հանդիսացել հաճախակի երկրաշարժերը և պարսիկների այն սովորությունը, ըստ որում ամուսնանալուց հետո նրանք թողնում են իրենց հայրենական հարկը և կառուցում են նոր բնակարաններ ըստ իրենց ցանկության։ Մասամբ երկրորդ պատճառի հետևանքով պիտի բացատրել Սուլթանիյեի դաշտավայրի վրա գտնվող մեծաքանակ ավերակները։ Այս քաղաքի պարիսպը անզգալի կերպով այն աստիճանի տեղափոխվել և դեպի արևելք, որ

* Jaubert, եջ 233 -240։

այսօր այդ անունով կոչվող քաղաքը նախկին Սուլթանիեյի տեղից մոտավորապես յերեք մղոն հեռու է գտնվում։ Այդ տարածությունը ծածկված է շենքերի մնացորդներով, գեղեցիկ հուշարձանների բեկորներով, որ համապատասխանում է պատմության վկայության և ապացուցում է այդ քաղաքի անցյալ շքեղություն։ Տասնևհինգերորդ դարում [այդ քաղաքը] Հնդկաստանի հետ կատարվող հակայական առևտրի պահեստն եր։ Բայց, որքան էլ այդ յինթադրյալ մեծությունը լինի, դժվար է հավատալ որ այդպիսի մի խոշորատարածություն միևնույն ժամանակում լրիվ բնակված լիներ։ Բացի այդ, պետք է նկատի ունենալ որ մշակման հարմար հողերը Պարսկաստանում մեծ պատեհություններ են ներկայացնում և հետևաբար յերկար ժամանակ չեյին կարող բնակչությունից զուրկ լինել։ Թավրիզ, Սպահան և Համադան, որոնց շրջակայքում ջուրը առատ է, մշտապես կարևոր ու խիտ մարդաշատ քաղաքներ պետք է որ լինեյին։ Կլիմայի առողջապահությունը, պրոտավայրերի գեղեցկությունը և շրջակայքի թարմությունը վոչ մի կասկած չեն թողնում, որ այնտեղ գոյություն են ունեցել հին քաղաքներ...։

Հենվելով արևելքցիների վկայությունների վրա, Պարսկաստանի ներկա բնակչության թիվը և յեկամուտները փորձում են շատ ավելի ներկայացնել, քան այդ տերության տարածությունը, հողի բնույթը և կառավարությունը կարող են ունենալ։ Պարսիկները, նույն իսկ ամենակրթվածները, վիճակագրական տվյալների քիչ ծանոթություն ունեն և, տեղյակ կամ անտեղյակ, որոշ են իրենց յերկրի յեկամուտները չափազանցել. սակայն, յեթե նրանց հաշիվները զուրկ են թվական ճշտությունից, ունեն որոշ հարաբերական ճշտություն և նույնիսկ հնարավոր է նրանց հակասությունները ոգտվել։ Մենք աշխատեցինք հետևյալ ցուցակում միացնել այն տեղեկությունների արդյունքը, որ ձեռք բերինք Պարսկաստանում, Կ. Պոլսում, Ամստրախանում և կամ Փարիզում։ Այդ տվյալները մենք ոգտագործեցինք ամենաժանրահավատ ուղեգիրների հայտնի տվյալների հետ

միասին և ընդհանրապես կարող ենք ընդունել, վոր նրանց գնահատականները շատ են մոտենում մեր թվերին։

ՄՈՏԱՎՈՐ ՑՈՒՑԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇԱՀԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՆԹԱԿԱ ՆԱՀԱՆԴՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ

Նահանգների անուն	Ցենթաղբյալ թիվը	Աղբյուրները
Նստակյաց բնակիչներ		
Յերևան . . .	120.000	Հայկական տեղեկություններ
Ատրպատական	1.400.000	Պարսկական տեղեկություններ
Գիլան	250.000	Մ. Տրեզելի ձեռագիր հուշերից
Մազանդարան	750.000	» » »
Իրաք	1.500.000	Պարսկական տեղեկություններ
Ֆարսիստան	700.000	» » »
Բուրդիստան	—	— —
Քերման . . .	—	— —
Խուզիստան .	300.000	Պարսկական տեղեկություններ
Խորասան . .	700.000	» » »
Թափառական բնակիչներ		
Թրքախոս . .	420.000	Պարսկաստանի զինվորական ցեղերի ցուցակ[1]
Քրդախոս . .	88.000	» » » »
Արաբախոս .	130.000	» » » »
Լուրախոս . .	124.000	» » » »
Հայ	70.000[2]	Պարսկաստանում ապրող ազգությունների ցուցակ[3]
Գնչուներ . . .	20.000	The History of Persia, (Malcolm).

[1] Համաձայն պ. Ժուաննինի տված տեղեկություններին, վորոնք գնահատված են 1807, 1808 և 1809 ուղեգրական հուշերում։

[2] Մալկոլմ («History of Persia», Հատ. II. էջ 521) Պարսկաստանի հայերի թիվը գնահատում է միայն 12.383։ Ավելի քան համոզված ենք, վոր այդ գնահատությունը սխալ և կատարված, քանի վոր վերջերս թեհրանում ստեղծված էլչին մի նոր հայկական յեկեղեցի կառուցել։

[3] Precis de la Geographie Universelle, Հատ. II. էջ 521։

Ամփոփում

Նստակյաց-ներ կամ տաճիկներ	5.720.000
Թափառա-կաններ . .	752.000
Հայեր	70.000
Գնչուներ . .	20.000
Լրեհաններ և Զուբլենները	—
Անհայտ ցեղեր[1]	
Ընդամենը	6.562.000

Շահի յեկամուտի աղբյուրներն են. — Ա. իր կալվածների արտադրությունը, Բ. նահանգների կառավարիչների վճարած հարկը, Գ. գանազան ապրանքներից գանձված մաքսային տուրքը, Դ. թափառաշրջիկ ցեղապետների և հարևան յերկրների խանների վրա դրված գլխահարկը, Ե. նվերներ, տրված բնիկ կամ ուրիշ կառավարիչների կողմից նրա բարեացակամությունը սիրաշահելու համար, մասնավորապես Աղվանստանի, Հերատի նահանգի կառավարիչներից, վորոնք մշտապես կուժում են իրար դեմ։

Ա.յդ յեկամուտների մոտավոր ցուցակը. —

Աբքայական կալվածների յեկամուտ	700.000 թուման
Իշխաններին, խանների վճարած մալիաթի հայլ հարկեր	500.000
Մաքսային և ճանապարհի հարկեր	—
Այդինների և պարտեզների հարկեր	—
Տների, կարվանսարայների, բաղնիքների, ջրաղացների և այլնի հարկեր	—
Շուկաներում վաճառվող ապրանքների և դործարանների վրա դրված հարկեր , ...	400.000
Բաղաքի և նահանգի վճարած գանազան տուրքեր .	700.000
Ինդիարկուներից ստացված նվերներ և գանազան բացառիկ յեկամուտներ	600.000
	2.900.000
Վոր հավասար է	58.000.000 ֆրանկի։

[1] Այս ցուցակում բաց թողնված կամ անհայտ թափառաշրջիկների քանակը, առանց չափազանցության վրանելու, կարելի յե հավասար 3 կամ 400.000։

Թափառաշրջիկ ցեղախմբերը իրենց հարկերի մեծագույն մասը վճարում են ձիով, անասուններով, թաղիքով, գորգով և ուրիշ բազմաթիվ այլ իրերով, միայն մի քանի տարուց իվը և մոր Շահը պահանջում է, որ գեթ մի հինգերորդ մասը դրամով վճարվի։ Այս հարկի վրա չեթե ավելացնենք վերևհիշված դումարներն ու մոռացված մուրքերը, Պարսկաստանի ընդամենը կարելի չի գնահատել վաթսունից մինչև ութսուն միլիոն ֆրանկ, մի դումար, որ գրեթե կրկնապատկվում է պանձման հակառական ծախքերի պատճառով և մոր միջոցով Շահը պետք է պահի իր բանակը, հոգա իր արքունիքի ծախքերը, և մեծ վարձատրություններ տա իրենց ծառայություններով արժանի հպատակներին։ Ինչ վերաբերում է հասարակական հաստատությունններին, ինչպիսիք են դպրոցները, մզկիթները, ամրությունները, ջրմուղները և կամուրջները, դրանք մեծ մասամբ նահանգների վրա չեն ծանրաբեռնված և հետևաբար վատ վիճակում են պահվում. կառավարիչները մտածում են միայն հարստություն դիզելու, թե իրենց անհատական առավելությունների համար, թե մեծամեծների և թե իրենց մոտ ուղարկված դոլամ-շահերի կամ հրամանների բերողների անհապաղությունը հագեցնելու համար, մորովհետև այս վերջինները շարունակ պահանջում են իրենց հանձնարարված առաքելության կարևորության համապատասխան մի վարձատրություն, որ շատ հաճախ սկզբից և գանձվում։

Յեթե Շահն գանձարանը մտած գումարները Պարսկաստանի տարածության և բնակչության համեմատությամբ այնքան էլ հսկայական չեն, սակայն այդ գումարները միայն անհրաժեշտ ծախքերի համար են և հազիվ հավասար կեսին։ Մնացորդը վերածվում է ձույլ ոսկու, գոհարեղենի և զանազան մեծարժեք առարկաների, որոնք պատահարի ժամանակ հեշտությամբ են փոխադրվում. դա բավական և ապացուցելու թե Պարսկաստանի արքունիքի շքեղության մասին բոլոր ուղեգիրների վկայությունները չափազանցված չեն։ Ճիշտ է, այդ հարստությունը կարող և ավելի ոգտավետ

ձևով գործադրվել յերկրին և նույն իսկ իշխանի համար, բայց հայտնի չե բռնապետական յերկրներում հասարակաց շահը առ վոչինչ և համարվում և քաղաքական տնտեսություն, վարչական իմաստություն, կարգ և հետաքրքրություն բառերը այնտեղ անծանոթ են և առաջին անթափանցելի։ Պարսիկները, ուրեմն, շարունակ չենթակա չեն կառավարության յերկրորդական գործակալների հարստահարություններին և բռնություններին։



Պարսիկ արքայական ձի. (Ըստ Ջեյմս Մորիերի)։



ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՋԵՅՄՍ ՄՈՐԻԵՐԻ

(Ա. 1808 – 1809. Բ. 1810 – 1816)

Ջեյմս Մորիեր (James Morier) անցյալ դարի առաջին կեսի անգլիական տիրող դասակարգի ներկայացուցիչներից մեկն է։ Նա ծառայել է վորպես դիվանագիտական ներկայացուցիչ գլխավորաբար Պարսկաստանում 1808-ից մինչև 1816, և նշանավոր է իր «Հաջի Բաբա» գրքով, վոր կազմված է երկու հատորից, «The Advantures of Hajji Baba of Ispahan» (1824), և «The Advantures of Hajji Baba of Ispahan in England», (1828)։ «Հաջի Բաբան» հրատարակված է բազմաթիվ անգամներ և թարգմանված է բազմաթիվ լեզուների, ինչպես նաև հայերեն։ Մորիեր ծնվել է 1780 թվին և մեռել է Բրայթընում 1849 թ. մարտի 23-ին։

Ջեյմս Մորիեր մեկն եր անգլիական իմպերիալիզմի այն գործակալներից, վորոնք աշխատում էին պարսկական իշխանությունն ոգտագործել ֆրանսական և ռուսական իմպերիալիզմի դեմ, և վոչ միայն ապահովել Հնդկաստանի գաղութն ամեն հավանական հարձակման դեմ, այլ նաև զորացնել անգլիական ազդեցությունը Պարսկաստանում, ծավալել առևտուրը և աստիճանաբար այդ յերկիրը վերածել գաղութային վիճակի։

Մորիեր առաջին անգամ դեպի Պարսկաստան է մեկնում 1807 թ. հոկտեմբերի 27-ին, վորպես քարտուղար Պարսկաստանի անգլիական դեսպան Սըր Հարֆըրդ Ջոնսի, և թեհրան է ժամանում 1809 թ. փետրվարի 14-ին։ Կարճ ժամանակում անգլիական միսիային հաջողվում է դաշնակցություն կնքել պարսից կառավարության հետ, և Մորիերը Լոնդոնի

պարսկական դեսպան նշանակված Մըրզա Աբուլ Հասանի հետ մեկնում է դեպի Անգլիա, անցնելով՝ Թավրիզ, Ղոչ, Բայազիդ, Երզրում, Թոքաթ, Կ. Պոլիս ճանապարհից և Լոնդոն և ժամանում նույն տարվա նոյեմբերին: Նրա այս ուղեգրությունը հրատարակված է Լոնդոնում 1812-ին, անվյալ խորագրով, «A Journey through Persia, Armenia, and Asia Minor to Constantinople, in the years 1808 and 1809, in which is included some account of the proceedings of his Majesty's Mission, under sir Harford Jones, Bart. K. C. to the Court of the King of Persia». By James Morier, Esq., His Majesty's Secretary to the Gourt of Persia. London, 1812:

Մորիեր մի քանի ամիս հետո վերադառնում է Պարսկաստան, իբրև անգլիական կառավարության վավերացնում եր նախնական դաշնագրությունը: 1811-ին դեսպան եր նշանակվում Սըր Գոր Աուզլեյ, որին ընկերանում է Մորիերը: Սա վերջնական դաշնագրություն եր կնքում և ստորագրում պարսիկ կառավարության հետ 1814 թ. նոյեմբերի 25-ին: Անգլո-պարսկական հարաբերությունների մասին մանրամասն չենք խոսում, որովհետև այդ առթիվ գրել ենք ընդարձակորեն ներածականում, այստեղ կարևոր և միայն շեշտել, որ Մորիերը Գյուլիստանի դաշնագրությունից առաջ պարսից կառավարության կողմից բանակցություններ և վարել ռուսական պետական իշխանությունների հետ՝ հաշտության նախնական պայմանների մասին: Նա յերկու անգամ այցելել և Թորթդային Հայաստանի այժմյան հողամասը, մի անգամ ընկերացած անգլիական դեսպանին, և յերկրորդ անգամ 1816-ին՝ Յերևանից անցնելով դեպի Երզրում, վերադառնում և Անգլիա: Նրա յերկրորդ ուղեգրությունը հրատարակված է Լոնդոնում 1818 թվին, հետևյալ խորագրով, «A Second Journey through Persia, Armenia and Asia Minor to Constentinople, between the Years 1810 and 1816. With a Journal of a Voyage by the Brazils and Bombay to the Persian Golf, together with an account of the proceedings of his Majesty's Embassy under his excellency Sir Gore Ousley, Bart. K. L. S.» By James Morier, late his Majesty's secretary of Embassy and minister plenipotentiary to the Court of Persia. London 1818.

Այս յերկու հատորներից թարգմանել ենք ամբողջությամբ Հայաստանի և Անդրկովկասի վերաբերյալ մասերը ինչպես նաև Մորիերի ռուսական հրամանատարության հետ կատարած բանակցության տեղեկագրությունը: Ուշագրավ են Մորիերի նկարագրականները Գեղարդի, Գառնիի տաճարի Սեվանի և Հայաստանի այլ հնագիտական վայրերի մասին: Նվազ արժեք չեն ներկայացնում նաև Յերևանի խանության կացության մասին տրված տեղեկությունները:

Մորիերն ինքը նկարել և նաև մի քանի տեսարաններ Հայաստանից, որոնք նույնպես տրատարակում ենք այս հատորում:



Պարսիկ ազնվականի վրան. (նկար Ձեյմս Մորիերի):

Ա.

ԹԱՎՐԻԶԻՑ ԵՐԶՐՈՒՄ

Պարսկաստանում ճանապարհորդության պայմանները հեշտ են ու հանգիստ: Ձմռան ընթացքում նրանք սովորաբար ճանապարհ են ընկնում արևածագին: Նախ բեռները են մեկնում ուղարկում: Ուղևորը նախաճաշում է նախապես և կամ ճանապարհի վրա ավելի հաճելի մի վայրում, (ըստ պարզգալին նախապատվության և տրվում հոսուն ջրի մի վտակի), և այսպես ժամանակ է տալիս, որ իր բեռները իրենից առաջ ոթևան հասնեն, և մարդիկ պատրաստություն տեսնեն ընդունելության համար, սփռեն նրա կապերտները և պնակ անհրաժեշտ մթերքները՝ ճաշը պատրաստելու համար: Ժամանումին նա ուտում է իր չոշտաճ (choshtá) կամ նախաճաշիկը և ապա քնում: Արևմուտքին նա ընթրում է (noshtá), և այնուհետև նրա ծառաները կապում են ամեն ինչ, պատրաստ՝ հաջորդ առավոտյան մեկնումի համար: Նա առավոտում է որևէ հինգից վեց վարսախ (league), որ սովորական չափանիշ է ճանապարհորդության համար: Յեթե նրա հետ մեհմանդար[1] (Mehmandar) կա, նա ճանապարհորդում է, կիրակվում և պատսպարվում հասարակաց ծախքով: Յերբ մեհմանդարը հասնում է մի գյուղ, ցույց է տալիս իր ֆերմանը, (որի մեջ մատնանշված են մատակարարվելիք առարկաների վորակն ու քանակը), և բնակիչներից պահանջում է համապատասխան մթերք:*

Հուլիսի 1, 1809, ժամը 7-ին մեկնեցինք Թավրիզի խոյ դռնից և վեց ու կես ժամից հետո հասանք Ալի Շահ (Ali Shah), մի հեռավորություն, որ տեղացիները համարում են վեց փարսախ, որ ըստ իս քսան չորս մղոն է:...

Թավրիզի մոտ, ձախ կողմում կան մի շարք պարտեզներ ու տներ, կոչված Հուճնավար (Hucknavar) և հետո Մեյան (Mayan) գյուղը: Քաղաքի արևելակողմը գտնվում է Բահալիլ թափե (Bahalil tapé) աչքառու լեռը, որ ամեն տեսակ առատ վորս ունի: Ճանապարհվելով Թավրիզից մոտավորապես յերեք մղոն գրեթե դեպի հյուսիս՝ անցանք ինը մեծ և յերեք փոքրիկ կամարով մի կամուրջից, Աջի գետի վրա, որ հոսում է արևելքից արևմուտք և թափվում է Շահի (Shahee) [Ուրմիայի] լիճը: Գետը ծագում է Արդաբիլից (Ardabil), և կարելի չէ ձիով անցնել այնտեղից, բայց մենք նախընտրեցինք կամուրջը, որ հիրավի ավելի լավ վիճակում էր գտնվում, քան ուրիշները Թեհրանի ու Թավրիզի միջև: Քաղաքից մոտավորապես չորս մղոն այն կողմ անցանք Ալվար (Alwar) կոչված գյուղից, յերեք մղոն այն կողմ մեհմանդարն անունով մի ուրիշից, յուրաքանչյուրը շրջապատված է մշակված հողամասով, կտրատված հազարավոր առուներով: Դաշտի մեծագույն մասի հողն ունի աղային հատկություններ... Ալի Շահ հասնելուց մոտ չորս մղոն այս կողմից, անցանք չորս կամարով մի կամրջից, [կառուցված] աղի ջրի մի լճակի վրա: Այբի յե ընկնում հրկրագործության արդյունաբերությունը, և ցորենի ու գարու հունձքը առատ է ու խոստումնալից:...

Ալի Շահից մոտ յերեք չորս մղոն դեպի հյուսիս, լեռան լանջի վրա կան բազմաթիվ սիրուն գյուղեր, վորոնք դեպի արևմուտք [տարածվող] մի շարք գյուղերի հետ միասին կազմում են Ղուճեյի (Ghunéh) մահալեն կամ շրջանը: Շահիի [Ուրմիայի] լիճը Ալի Շահից մոտավորապես յոթը փարսախ է:...

Հունիսի 2. — Յեթե մի վեպի հեղինակը կամենա նկարագրել մի գեղեցիկ տեսարան, նա կարող է ընտրել մեր մեկնումը Ալի Շահից: Հրապուրիչ լուսնի լուսով սկսանք մեր ճանապարհը, և յերկինքն ուներ թովիչ մի լրջություն:

* League *կամ փարսախ 3 անգլիական մղոն և կամ 4,83 կիլոմետր:*

ճիշտ կիսր արևը ծագում եր, հասանք մի պարտեզ, (մի ամեն տեսակ պտուղներով, մանաւորապես նուշով), Շեբեսթը (Shebester) ավանի կողքում, վոր գտնվում եր մեր աջ կողմը, դեռևիված սարալանջի վրա։

Շեբեսթը մի մեծ ավան ե, շրջապատված բազմաթիվ պլուղերով, և ավելի ծառաստան ու մշակութիյուն ունի, քան Պարսկաստանում իմ տեսած վորևե այլ տեղ։ Այնտեղ, հիրավի, ծառեր չկան՝ ճանապարհի տակերի համար, կամ բարձունքների անհարթութիյան վորպես զանազանութիյուն, ամեն տեղ միորինակ ե ու ընդհանուր։ Հետևաբար մենք կրկնակի հիանում եյինք մեր այժմյան ճանապարհի վրա։ Հոսուն ջրի վտակները վազում եյին ամեն ուղղութիյամբ՝ ուռենու, կամախենի, նշենու և ուրիշ ծառերի միջից, վորոնք չեզերում եյին մեր ուղին, տեղ-տեղ արվեստական խրամներ եյին բացված, ջուր տալու համար բրնձի արտերին։ Ցերկրի մեծ ծագույն մասը ծածկված և կանաչութիյամբ, վորովհետև ցանքը առատ և մոտ հասունանալու։ Գյուղացիութիյունը աշխատում և դաշտերում՝ բանով կամ արորով։

Շեբեսթրից մեկնելուց հետո մեր առաջ բացվեց Շահի լճի հրապուրիչ տեսարանը։ Նա իր անունն առնում և շրջանի պատի մահալեյից [շրջանից], վոր պարունակում և քսան գյուղ։ Ինձ ասացին վոր նրա ջուրը ծովի ջրի նման աղի եյ և թե նրա ափերի վրայից հավաքված աղն ե, վոր գործ են ածում Թավրիզում։

Շեբեսթրից վոչ հեռու անցանք Միսոլե (Misholéh) գյուղից, և ավելի վար հոլոում, ճանապարհի ձախ կողմ Առսալե (Arsalèh) և Հալի (Halee) գյուղերից։ Ամեն անգամ մի կողմ դառնալիս, հիրավի, նոր գյուղեր են տեսնվում, իրար մերձ, ճանապարհի յերկու կողմում և բոլորը Ղուռնեյի մահալեյում։ Նրանց մեջ են Բեշ-Կեֆելուտը (Besh-Kefelout), ձախ կողմում, Խոմիե (Khomyéh), գեղեցկորեն շրջապատված կաղնաչութիյամբ, աջ կողմում՝ Շինվարը (Shinwar), նորից ձախ, Կուզեֆ-դուզար (Kuzec-dunar), աջում, մեր կացանը՝ Թասուջ (Tasouj) հասնելուց յերեք մղոն առաջ, ձախ կողմում, լճի

յեզերքից մոտ յերկու մղոն հեռու՝ Ալիբանգլուն (Alibanglou)։ Այստեղ կանգ առանք ու կերակրեցինք կենդանիներին ու մեզ...։

Թասուջից մոտ հինգ մղոն դեպի առաջ գտնվում և Ռահդար խանե (Rahdar Khanè) գյուղը. և ապա ռահդարների կամ մաքսային պաշտոնյաների կայարանը։ Ցերը սովորում եյինք այնտեղից, նրանցից մեկը, ըստ յերևույթին ավելի հարգելի մի մարդ, քան այդ դասին պատկանող վորևե անձ, վոր տեսել եմ այլ պարագաներում, [մոտեցավ] և ասաց թե մի ձիապան և անցել յոթը ջորու բեռով և մերժել և մաքսը վճարել, հայտարարելով, թե իր կենդանիները կրում եյին մեր բեռների մեկ մասը, հետևաբար գտնվում եյին թագավորի ծառայութիյան մեջ, և վորպես այդպիսին զերծ են տուրքից։ Սակայն իրողութիյունն այն եր, վոր իմ չարվադարը (կամ ջորեպանը) այս թիվը ավելացրել եր իմ հաշվին, ավելի քան հարկավոր եր իմ պետքերի համար, և նրանց վարձը մասամբ ինձնից գանձելուց հետո, այժմ ոգտագործում եր դրանց իր անձնական շահի համար, իմ անունով ազատելով տուրքից Թավրիզի մի շարք վաճառականների ապրանքը։ Այս խարդախութիյունը հայտնաբերելով՝ յես նրան հանձնեցի պաշտոնյային, ազատութիյուն տալով գանձելու իր տուրքը, վորից հետո նա սկսեց գանակոծել հանցավորի թիկունքը։ Մաքսն այստեղ բարձր և. յուրաքանչյուր բեռան համար հինգ ռեալ։

Թասուջ հասնելուն մի քանի մղոն մնացած, լիճը ընդունեց ձվաձև մի վերջավորութիյուն, և ճանապարհը ուղղվեց դեպի ավելի հյուսիսային մի անկյուն։ Ալի Շահից ուղիը ժամ ճանապարհորդել եյինք, դա անում և յերեսուն յերկու մղոն։ Ի շրջապատի ավերակների մեծ տարածութիյունից թվում և, թե յերբեմն մի մեծ տեղ և յեղել, բայց հիմա յերկրաշարժներից վեր և ածվել մի գյուղի։ Ամեն կողմ տարածված կան ավերակ բազարների և մզկիթների մնացորդներ։

Յունիսի 3. — Թասուջից մինչև Խոյ[2] հեռավորութիյունը համարվում և ուղիը փարատ, բայց և այնպես մենք ինը

ժամ ճանապարհորդեցինք և հեռավորությունը հաշվեցինք յերեսնուվեց մղոն։...

Թասուջից մեկնեցինք լուսնի լուսով, հետևաբար մենք ճշտորեն չկրինք կարող նկատել յերկրի բնությունը։... Լեռնանցքի կատարից Մոլի դաշտի տեսարանը հրաշալի յե։ Ցածրադաք և նրա անմիջական շրջակայքը յերևում են դեպի հյուսիս, բայց նրանք բաժանվում են դաշտի մնացյալ մասից կանաչազարդ բլուրներով, վոր թվում է թե ընդարձակ տարածությունը բաժանում և յերկու մասի։ Մոլին յերկու փարաղ մնացած, մենք անցանք աջից Դիսաջիզ գյուղը՝ շրջապատված ցորենի ու գարու արտերով։ Դաշտի ձախ կողմում կան ուրիշ գյուղեր ել և մի հետաքրքիր կարմիր հողե բլուր, վորի կատարին ապի մի բլրակ կա, բայց բազմաթիվ ուրիշ սպիտակ բլուրներից, վորոնք ասում են թե նույնպես միևնույն նյութից են պատկանում։ Մենք անցանք փոքր բլուրների մի շղթայից և անմիջապես մտանք Մոլի դաշտը, վոր բացվում և յոթը կամարյա մի կամրջով, յեզերված յերկու կողմից ժայռերով, և վոր ներքևի սիրուն գետի հետ կազմում և մի [ամբողջական] պատկեր։ Գետը կոչվում և Որոտ. նա հոսում և արևմուտքից արևելք և թափվում և Արագի կամ Արաքսի մեջ, մոտ տասներկու մղոն գեպի արևելք։

Մոլի դաշտը, (հյուսիսից հարավ հինգ մղոն լայն և տասը մղոն յերկար), մեր տեսած հոդամասերից ամենահարուստն և։ Նա ծածկված և հացահատիկով, տեղ-տեղ բաժանված պարտեզների կանաչությամբ։ Մենք համարձակվեցինք նկատել այս պարտեզներից մեկը, վոր համարավոր և այդ յերկրում իր գեղեցկությամբ և պտղաբերությամբ։ Նա գտնվում և ճանապարհի ձախ կողմում, Մոլի պարիսպներից մոտ յերկու մղոն հեռու, և տնկված և քաղաքի կառավարիչ Հուսեյին Խանի կողմից, Ագա Մահամեդ Խանի ժամանակ, բայց հիմա կառավարության սեփականությունն և դարձել։ [Մեր ուղեգիրն այստեղ մանրամասն նկարագրում և այս պարտեզը. հմ 298—299]։

Մոլը շրջապատված և մի պարսպով, և պարակատանի ու փիչ ավրացված քաղաքներից տարբեր կառուցվածքի աշտարակներով։ Ճակատում նրանք յեռանկյուն են, նրանց յեռեվում կա միացնող մի մասնավոր կառուցվածք։ Ունի չորս դուռ, վորոնք քարից են, և շատ գեղազանց ուրիշ վայրերում իմ տեսածներից։ Պարիսպների ներսում կան քսան մզկիթ և վեց բաղնիք։ Ասում են թե տասը հազար տուն կա, և հետևն հազար բնակչություն, վորի մեծամասնությունը հայեր են։ Մուսուլմաններն ապրում են իրենց առանձին մահալեյում [թաղամաս]։ Հողը այնքան բարեբեր և, վոր Մոլը, շրջապատի գյուղերով միասին, հասարակաց գանձարանին վճարում և տարեկան հարյուր հազար թումանի (tomouns) մի գումար։

Մոլը ավելի տաք և Թավրիզից, իր դիրքի պատճառով։ Վարդը այստեղ արդեն ծաղկել և, մինչդեռ Թավրիզում կոկոնը հազվադյուտ եր։...

Մոլից վեց փարսախ դեպի հարավ գտնվում և հավասարապես մեծ ու բազմամարնակ մի քաղաք, կոչված Սալմաս (Salmas), ուր, ինչպես յես հետո իմացա Երզրումում, կան «արձանագործված ժայռեր և շատ ավերակներ»։ Իմ տեղեկատուն ավելացրեց, թե այդ արձաններից մեկը ներկայացնում և յերկու մարդ, վորոնցից մեկը նայում և իր ձախ ուսից և իր ձեռքով մատնանշում և մի կետ, ուր, ինչպես բնակիչներն են հաստատում, թագնված գանձ կա, թեև ընդունում են, թե բոլոր փնտռուքները իզուր են անցել։

Հունիսի 4, 1809. — Իշխանը [գահաժառանգը] հրամայել եր, վոր չորս հոգի ընկերանան մեզ Թրքական սահմաններում, և վորովհետև նրանք մեզ չհասան Մոլում և պետք եր վոր մենք սպասեյինք այնտեղ նրանց ժամանման, և յեթե յես չընդդիմանայի այդ տեսակ կարգադրության, հայտարարելով, թե նախընտրելի յե մի մղոն առաջ գնալ, քան մեր պայմաններում մի ամբողջ որ անգործ մնալ։ Հետևաբար, հակառակ կառավարիչ Նեջեֆ Կուլի Խանի պնդումներին, վոր հրավիրում եր այդ որն անցկացնել իր հետ, մենք մեկնեցինք Փերե (Péréh), Մոլից յերկու փարսախ հեռու մի գյուղ,

վոր վեց մղոն եւ Գարնան ամենաբերուն որեւէից եր, և Թեֆենեան ամպամած։...

Ամեն ինչ վարթամ եր ու գեղեցիկ։ Լեռները մինչև իրենց կատարը ծածկվել էին կանաչով, և նրանց խորդուբորդութիւնները այստեղ ու այնտեղ վայրի ծաղիկների ածուներով հարստացած էին։ Մոյից հազիվ կիրկու մղոն այն կողմ տների ու պարտէզների մի խմբավորում կա, վոր քաղաքի խիտ բնակված մի մասիպեն կամ թաղամասն է։ Լեռներից մի գետ անցնում և նրա միջից. հյուսիսային ծագամասերում աղբուսյա կիրկու կոթողներ կան, ուր առում են, թե գերեզմանն է կամ հուշարձանը (cenotaph) Թավրիզի մի նշանաւոր բանաստեղծ և ուսումնական մոլլայի, Շեմսե (Shemse) անունով։ Փերեն մի գեղեցիկ գյուղ է, պատված բլուրների գառիվայրի վրա, վորոնք աստիճանաբար հիմք են կազմում մերձակա լեռների. այս բլուրներից մեկի կատարին մի քառակուսի բերդ կա, այժմ ավերակ, և նրա շրջակայքում կան կիրկու գյուղեր, վորոնք կոչվում են Պեզե (Pésé) և Զեյդե (Zaidé)։ Այնտեղ կան ընկուզենի, ուռենի, կաղամախի, կնձնի և ամեն տեսակ առաջնակարգ պտղատու ծառեր, առատ բուսականութեամբ։

Թավրիզի այս կողմում, ինչպես նաև մյուս կողմում գյուղացիները իրենց բնեռները կրում են ցեղներով, վորոնց վրա հաճախ իրենք էլ են նստում։ Փերեյում առաջին անգամ տեսա անիւավոր կառք, (բայց թնդանոթի կառքից), վոր կես տեսել էի Պարսկաստանում։ Դա կատարելապես նման եր թրքական արաբայիի (araba)։ Բայց իրենց արտրից, վոր արգելն նկարագրել եմ, պարսիկներն ունեն մի մեծ փոցխ, վորը գործ են ածում վորպես ցաքան (տափ), և վոր ամրացրած մի ձողի, լծված ցեղները քաշում են արտրի նման. նրանք ցերկրագործական մի ուրիշ գործիք ունեն, վոր անտարակուսս կարելի է շատ բարեփոխել։ Մի ձող է լայնքին ամրացրած մի ուրիշ ձողի վրա, վորին լծված են ցեղները, և այս աննշան բանները հողի վրա քաշում են իրրև տափան։

Հունիսի 5. — Փերեյից գնացինք Զաուվիե (Zauvieh) վեց

ու կես ժամում, վոր կարող է քան չորս մղոն լինել։ Նախորդ ամբողջ գիշերը անձրև եր գալիս, վորոտով ու կայծակով։ Հետևաբար մեր ճանապարհը ցեխոտ եր։ Փերեյից մենք անցանք դյուրամատչելի լեռներից և Զաուվիե հասնելուց մոտ տասը մղոն առաջ, մտանք մի գաշտ՝ շրջապատված լեռներով։ Դաշտի մուտքի լեռան ալ գառիվայրի վրա գտնվում է Սելավան (Selawan) գյուղը, և ձախ կողմում՝ մի փոքր գյուղ, վոր կոչվում է Խորե (Khoré). գեպի այն [գյուղը] տանող ճանապարհի վրա կիրկու աղյուսձներ կան, կոպիտ ուհին գերեզմանաքարերի մեջ։ Դաշտի բնակիչների մեծագույն մասը բաղկացած է հայերից։ Արևմտյան կողմում կան շատ բարձր լեռներ, վորոնց կատարները ծածկված են ձյունով։...

Ձյունը հալչում եր և հաճախ վտակներ էին վազում լեռներից։ Այսուամենայնիվ մեր մի քանի որվան փորձառութեամբ կլիման այստեղ տարբեր եր. արևածագից առաջ խայթող ցուրտ եր։ Դաշտի բոլոր մասերը մշակված էին։ Մեր անցած վայրը ամբողջութեամբ սևահող եր, այնպես վոր բացի լեռների կատարից, գետինը ծածկված եր համատարած կանաչ կապերտով։

Մենք հանդիպեցինք Ելվաբների[3] (Elauts) կամ թափառական ցեղերի մի խմբի, բաղկացած ընդհանրապես կանանցից ու կերեխաներից, վոր գնում էին մի ավելի նոր ճամբով։ Մի կին, վոր կիրկու կերեխաներ ուներ, ձիուց վար եր իջել, և այն ծայրահեղ արագաշարժութիւնը, վորով նա կրկին հեծավ իր ձին, առանց վորևե ուրիշի ոգնութեան, ցույց եր տալիս թե նա վորքան վարժված եր այդ կյանքին։

Մենք առաջուց ուղարկեցինք մեր մեհմանդարին ցանկութիւն հայտնելով, վոր վրաններ տրամադրվեն մեզ, վորովհետև խորհուրդ էին տվել մեզ խուսափել գյուղերից ժանտախտի պատճառով, վոր կերբեմն հաճախում է այս մասերը։ Ըստ այնմ գտանք չորս վրան՝ զարնված մեզ համար, վորոնցից կիրկուսը ձիու մաղից և կիրկու սպիտակ վրան, հիրավի, բավական կոպիտ, բայց այնքան հաճելի կերպով

գետեղված դաշտում, շրջապատված ցորենի արտերով վոր մի խրախճանք եր մեզ համար։

Հաղիվ թե մենք գրավել եյինք մեր խոնարհ ճամբարը, յերբ սկսվեց մի փոթորիկ, կայծակ ու կարկուտ, այնպես վոր մեր ներքին հանգիստը բոլորովին խանգարվեց։ Կարկուտի հատիկները լցվեցին մեր վրանի ամեն անկյունը, և այնպես մնացին, մինչև վոր արևի ճառագայթների սակ հալվեցին։ Մերձակա սարերը ձյան մի նոր պատյան ընդունեցին, և յերբ փոթորիկը վերջացավ՝ նրանց կատարները վհհապանծ մի տեսարան եյին ներկայացնում։ Գյուղացիները մեզ ասացին, թե այս յեղանակը սովորական և իրենց համար։ Թեև անշնորհալի մի սկզբնավորություն եր այս հովվական կյանքի համար, սակայն ինձ շատ ավելի հաճելի եր, քան գյուղերի բնակարանները, և հակառակ բոլոր անպատեհությունների, յես նախընտրում եմ այն Պարսկաստանի քաղաքների վորևե բնակության։ Նրա առավելություններից մեկն և մեջատներից դերծ լինելը, վորոնցից, (մասնավորապես լուից), մենք մինչև հիմա շատ ենք տառապել, վոչ թե նրա համար, վոր մարդիկ յեղակլորեն կեղտոտ են, բայց այդ արարածները [լուները] տեղի և յեղանակի արտահայտություններ են։ Մի պարսիկ, վոր մեր վրանում խոսում եր մեզ հետ, տեսնելով, վոր իմ ծառան գավազանով ծեծում եր իմ վերարկուն՝ մաքրելու համար մեջատներից, շատ լրջորեն հարցրեց. «Խնդրեմ, ինչ վոճիր և գործել այդ վերարկուն, վոր Ֆրանսիցի, [Ֆրանքը] յեվրոպացին], այդպես ծեծել և տալիս նրան»։

Հունիսի 6. — Որվան ընթացքում մեծ քանակությամբ տեղացող անձրևը թրջել և մեր հագուստի և բեռան մեծագույն մասը, և նպատակահարմար համարեցինք մեր ջորիների բեռների ծանրությունը։ Փառք աստծու, գիշերը անձրև չեկավ, և մենք խոր քնեցինք մինչև լուսաբացից մի ժամ առաջ յերբ մեկնեցինք մեր ևս վրաններից դեպի Կարա-նյեե (Caraainé)։ Հեռավորությունը հինգ փարսախ և, սակայն, թեև մենք մոտ վեց ժամ ճանապարհորդեցինք, յես այդ համարում եմ տասնութը մղոնից ավելի, վորովհետև ցեխը ար-

գելք եր հանդիսացել մեր առաջընթացման։ Մեր ճամբարից ուղղվեցինք դեպի արևելք և յեկանք մի գյուղ, վոր կոչվում եր Ցեկաֆթի (Iekaftee), մի լեռնային հեղեղատի յեզերքում, վոր վերջին փոթորիկի հետևանքով հորդել եր և այնքան արագընթաց եր դարձել, վոր մեր ջորիներից յերկուքը-յերեքը քշվեցին նրա կատաղության։

Մեր վերջին կայարանից հինգ մղոն հետու, ճանապարհի աջ կողմում կա մի աղբյուր, վորից քիչ քանակությամբ ջուր և թորում և թրքերեն կոչվում և Աք-բուլաղ (Ak-bolagh) կամ «սպիտակ աղբյուր», և յերեք մղոն դեպի այն կողմը, ճանապարհից յերկու մղոն հետու, դեպի ձախ մի քանի վողոմանի հյուղակների խումբ կար Քուրքենդեի (Kurkendéh) անունով, շրջապատված մշակված դաշտերով։ Մոտավորապես այս կետում ճանապարհը այնքան եր վիտում քուրդ ավազակներով, վոր յերբեք կարելի չեր անվտանգ անցնել, բայց այն որից ի վեր յերբ իշխան Աբբաս Միրզան Ատրպատականի (Aderbigian) կառավարությունը իր ձեռքն և առել, նա այնքան արմատապես մաքրել և այս վայրը ասպատակներից, վոր չկա մի շրջան, վոր այնքան ապահով լինի։ Մենք անցանք մի կիրճից, վոր լեռների ստորոտների աստիճանական մոտեցումից և առաջացել, և ապա մտանք մի ձվաձև հովիտ.... Մեր իջևանը, Կարա-նյեե գյուղը այս տեղից անմիջապես տեսնվում և և աչքի չի ընկնում մի քառակուսի բերդով, վոր բարձրանում և խզճուկ հյուղակների միջից, և վոր բաղդատաբար նման և մի պալատի։ Այս գյուղը նույնանուն մի շրջանի (mahalé) կենտրոնն և, վոր բաղկացած և քսանևմեկ գյուղերից, վորոնցից գլխավորներն են՝ Հայդերլու (Hiderlou), Նաբեկենդի (Nabekendi), Գելիշ Աղա (Gelish Acha), Սեդել (Sedel), Զեյվե (Zaiveh), և Աք-դեզե (Ak-dezeh)։ Կարա-նյեեից մի ճանապարհ կա դեպի վաճ, հետևյալ մղոն հետու, դեպի հարավ-արևմուտք։

Այժմ մենք հասել եյինք Պարսկաստանի տականքներին։ Ցուրից և փեղկից դեպի այն կողմը թե բնակարանները և թե մարդիկ թշվառ յերևույթ ունեն, դա հետևանք և յերկրի

դանցաւոած լինելուն։ Այս խեղճութիւնը հավանորեն անբաժան և յերկու պետութիւնների սահմաններից, որոնք վորպես հողամաս և սեփականութիւն այգաթող են արված։ Միայն Քեթխուդան (Ketkhoda) [գյուղապետը] ներկայանալի մի վերարկու ունի, ճեացյալները ցնցոտիների մեջ են ու մերկացիկլի [տպավորութիւն են թողնում]։

Կարա-Եյնիից Թաուբեր (Thaubet). [գյուղապետը] մեր ժամանումից մի որ առաջ նշանակված եր իր պաշտոնին, և այդ պատճառով նա չքմեղում եր, վոր չեր կարող բավարարութիւն տալ մեր մի շարք պահանջներին։ Նրա տեսքը, հիրավի, խոսում եր նրա չքմեղանքի իսկութեան մասին, վորովհետև նա վոտից գլուխ նոր հագել՝ նոր գլխարկ, նոր վերարկու, նոր կոշիկ, անտաբակուսա գյուղացիութեան վրա իր գերազանցութեան մասին տպավորութիւն թողնելու համար։ Ամբողջ որը անձրևից և անդադար վորոտից ու կայծակից։ Մեր անցած ճանապարհը, հիանալի հող ուներ, բայց մեծ մասամբ անմշակ։ Սակայն, տեսանք անթիվ հոտեր, մի քանիսը թեևս հազար վոչխարից ելին կազմված, վորոնք արածում ելին լեռների դառիվայրերում և ծմակներում, [տեսանք] ձիերի մեծ յերամակներ, իրենց մորուկներով։ Սրանք Ելիսաբեթի սեփականութիւնն ելին...

Հունիսի 7. — Այս առավոտ խավար եր և ամբողջ յերկինքը ծածկված եր ամպով։ Մենք մեկնեցինք Կարա-Եյնիից մեր խղճուկ բնակարանից, մի վորոշ ելի ճանապարհով, վոր թաց եր ու կեղտոտ, և ավելի վատթարացավ անձրևի տեսարաի պատճառով, վոր գյուղից հեռանալուց քիչ հետո սկսեց։ Դաշտի դրեթե ծայրամասում կա մի ճահիճ, վորի ջրերի յերեսին կայնն անթիվ բազեր և այլ վայրի թռչուններ։ Հողը անչափ հարուստ եր և հիանալի արոտավայր։ Մենք անցանք Աբ-Դեզե գյուղից, և ապա թողնելով դաշտը, դարձանք ձորերի միջից, վորոնք կազմված ելին արևմտյան լեռներից...

Բլուրներից անցնելով՝ մենք մտանք մի դաշտ, վորի ծայրամասում գետղված և Աղաջիկ(Agajik)հայկական խղճուկ

գյուղը։ Մենք ճանապարհորդել ելինք վեց ու կես ժամ, կորելով քսան-յերկու մղոն... Գյուղը բաղկացած և հյուղակներից, վորոնք շրջապատում են բլրի վրայի հին քառակուսի բերդը։ Մեր սենեակը ծածկով մի շենք եր, վորի կտուրին՝ կայլին յերկու փոքր ծակեր՝ լուսի համար, և ներսում մոտ քսան քառակուսի վոտք բաժանված եր յերկու վոտք բարձր մի պատով, տիրոջ բնակութեան համար, մինչդեռ միացյալ մասը հատկացված եր կենդանիների համար։ Յերկրի բնակչութեան հագուստը արագորեն փոխվում և և Պարսկաստանի վոչխարի սև մորթից գլխարկը հազվագյուտ և։

Մինչև մայրամուտը որը ամպոտ եր. յերբ հյուսիսակողմի յերկինքը մի քիչ պարզվեց և յերևաց վեհապանծ ու պատկառելի Արարատ լեռը։ Նա գտնվում եր մեր կայարանի հյուսիս-արևելյան կողմում։ Պարսիկները ինձ ասացին, թե նա մեզնից ութը ժամով հեռու չե, և պատմեցին նրա մի շարք հրաշալիքների մասին։ Այսպես, թե ով վոր փորձել և բարձրանալ [Արարատը], յերբեք չի վերադարձել, և թե Եզրաւմի փաշան հարյուր մարդ եր ուղարկել փորձելու համար և բոլորն էլ մեռել ելին։ Հայ քահանան վստահացրեց ինձ, շատ լուրջ դեմքով, թե Նոյի տապանը տակավին այնտեղ և։ Նույն շղթայում կա ավելի փոքր մի լեռ, վորը Թուրքերը կոչում են Քիչուք Աղրի-տաղ (Cochuk Agri-dagh), ինչպես մեծ Արարատը կոչվում և Աղրի-դաղ։ Արարատը հայերի Մասիսն և։ Յեկբատան աղբյուրները Աղաջիկից սասնյերկու ժամ հեռու յեն, Հայերն ինձ ասացին, վոր այդ աղբյուրներում նրանք ունեն մի գիաուբ (Zeeauret), կամ ուխտատեղի, Wes kionk [Վոսկեանք?] անունով։

Հունիսի 8. — Աղաջիկից հինգ հոգի ընկերացան մեզ, վորոնք ըստ սովորութեան պիտի առաջնորդեն մեզ պարսկական հողից Թրքական սահմանը։ Աղաջիկից մոտավորապես յերկուս ու կես մղոն այն կողմը կա մի ուրիշ հայ գյուղ, Քիլսե (Kilsé) անունով, մի քանդված յեկեղեցու ավերակներ, վոր աչքառու մի առարկա յե վողորմելի հյուղակների մեջ,

չավ կառուցված սպիտակ քարից, կամարակապ դռներով ու լուսամուտներով։ Նրա ավերակների մեջ անգամ ներկայումս գյուղացիները շարունակում են կատարել իրենց պաշտամունքը։

Աղաջիկից մոտ յերեք ու կես մղոն հյուսիս-արևմուտք գտնվում են Պարսկաստանի և Թուրքիայի սահմանները, վորոշված ձորի կենտրոնում գետեղված մի ավերակ աշտարակով։

Յերբ արածեցնում եյինք մեր ձիերը, այն անձը, վորին մենք ուղարկել եյինք Բայազիդ, (մեր գալուստը զեկուցանելու համար ԻԲՐԱՀԻՄ ՓԱՇԱՅԻ տեղակալին, վոր այդ մի ջոգին անձամբ քրդերի դեմ եր գնացել), վերադարձավ, և ասաց թե կառավարչի տեղակալը չի ուզում մեզ ընդունել քաղաքում, և վոչ էլ անցք տալ այնտեղից, վորպես պատճառ ներկայացնելով, թե իր տերը՝ փաշան խիստ հրաման և տվել՝ իր բացակայության վոչ մի ոտարականի և մանավորապես վոչ մեկ պարսիկի չընդունել։ Այս անակնկալ լուրը նախ վարանում պատճառեց մեզ, բայց հետո վորոշեցինք Միրզայի [գահաժառանգի] մարդկանցից մեկին ուղարկել՝ իր տիրոջ դիրքը ոգտագործելու համար ի նպաստ մեզ։ Մենք հետևեցինք մեր պատգամավորին. ճանապարհը ուղղվում եր դեպի հյուսիս-արևելք. մի անգամ էլ յերևաց Աբարատը ավելի վառավոր...

Մենք կանգ առանք հայկական մի փոքրիկ գյուղում Կերդեկ (Kerdek) անունով, (ճանապարհի ձախ կողմում, Բայազիդից մեկ փարսաղ այս կողմ), սպասելու համար մեր յերկրորդ պատգամավորին։ Յերկար չսպասեցինք, յերբ նա յերևաց, թեև նա էլ հաստատեց իր նախորդի տեղեկությունը։ Նույն իսկ Թուրքերը թույլ չեյին տվել, վոր նա առանձին քաղաք մտնի, վորովհետև նրա յերևալուն պես, մի կամ յերկու հրացան եյին պարպել, համոզելու համար նրան, վոր իրենց դիմադրությունը սոսկ սպառնալիք չեր, և յերբ նա փորձել եր բանակցություն սկսել, նրանք պատասխանել եյին հայհոյանքով ու նախատինքով։ Հետևաբար, վճռեցինք

խուսափելու համար Բայազիդից, մի շրջան կատարել և գտնել Իբրահիմ փաշայի անձնապես, վորից մենք լավ ընդունելություն եյինք սպասում, քանի վոր պարսիկները նրան ներկայացնում եյին, վորպես իշխան Աբբաս Միրզայի վասալը, վորից ավելի եր վախենում քան իր տիրոջից։ Մեր այսորվան ճանապարհը տասը մղոն եր դեպի հյուսիս-արևմուտք և այժմ չորս մղոն ևս ավելացավ։ Ինչպես տեղեկացա, Բայազիդը գտնվում է Արարատ լեռան ստորոտում, և բնակիչները գլխավորապես հայ են։ Նրա մոտ մի բլրի վրա կա մի բերդ, վորի պաշտպաններն ասում են թե շատ զորավոր է, սակայն նրանք շատ կասկածոտ են պարսիկների հետաքրքրության հանդեպ։

Հունիսի 9.— Այն յերեք անձնավորությունները, վորոնց մենք այնքան անհամբերությամբ սպասում եյինք իշխան Աբբաս Միրզայի կողմից, 8-ի յերեկոյան միացան մեզ, և այս տեսակետից մեր հապաղումը այս վոլորմիկի գյուղում իր ոգուտն ունեցավ։ Նրանց մենք ժամանակ տվինք միայն իրենց ձիերը կերակրելու, և ապա մայրամուտից մոտ մի ժամ առաջ, վերսկսեցինք մեր ճանապարհորդությունը՝ գիշերելու համար մի գեղեցիկ գետակի ափին. հարուստ արոտն այնտեղ կազդուրեց մեր կենդանիներին, իսկ մենք սոխլված եյինք գիշերն անցնել բաց դաշտի մեջ, պարզ յերկնքի տակ, թեև առատ ցողն իջնում եր անընդհատ։ Գիշերը՝ Բայազիդից մի Թուրք յեկավ, և ասաց թե ինքը ուղարկված է Քեհիայի (Kiayah) [տեղակալի] կողմից՝ սպասարկելու մեզ և առաջնորդելու իր տիրոջ մոտ, վորպես մեր մեհմանդար. նա ավելացրեց թե, հիրավի, փոխ-կառավարիչը ցավում է տեղի ունեցած այն թյուրիմացության համար, վորից առաջնորդված լավ չի վերաբերվել մեր հանդեպ. վորովհետև իրեն ասել եյին, թե մեզ հետևում եր ձիավորների մի մեծ խումբ։ Նորանոր հարցումներ ուղղելով Թուրքին մենք տեղեկացանք, թե Իբրահիմ փաշայի կլինը, (լսելով վոր մի եյչի, մի դեսպան առանց քաղաքի [ապաստանի] յե մնացել, և թե նրա մուտքը մերժված է), խիստ նկատողություն եր արել քե-

հյուրին նրա անպատշաճ ընթացքին համար, և մինչամեն որ ինպատաս մեզ այնքան, որ նա ուղարկել որ այս չքմեղանքը։ Թեև մենք դժգոհ եյինք այդ անձի վերաբերմունքից, խորհեցինք ավելի լավ որ չմերժել և ընդունել այն մարդու ծառայությունը, որ ուղարկվել որ իրրև մեր առաջնորդ, որովհետև գանվում եյինք մի վայրենի ու անկառավարելի ժողովրդի մեջ։

Մի շատ պարզ ու շատ դեղեցիկ առավոտ մենք ճանապարհ ընկանք, և անցնելով մեր ձախ կողմի լերկու գյուղերից՝ Դիզզե (Dizzéh) և Կիզիլ Դիզզե (Kizzil Dizzéh) հասանք մի փոքր դաշտի մուտքին, որ ծածկված որ նլվաքցերի (Elauts) վրանով ու կենդանիներով։ Այստեղից նույնպես տեսնվում և Արարատը...։ Գնացինք դեպի դաշտի մեծագույն վրանը, և այնտեղ պատիվ ունեցանք իմանալու, որ այս ժողովրդի հյուրասիրությունը չափազանցված չե։ Յերբ հայտնի եղավ վրանում, թե ոտարականներ են գալիս, ամեն ինչ շարժման մեջ դրվեց. վոտանք մեր ձիերը տարան լավագույն արոտատեղերը, ուրիշները կապերտներ փռեցին մեզ համար, մի ուրիշի ուղարկեցին հոտը՝ մի գեր գառնուկ բերելու, կանայք անմիջապես եփելու պատրաստությունների տեսան, և մենք լերկար չեյինք նստել, լերբ լերկու մեծ ափսե եփված գառնուկի միս և մածունի բազմաթիվ կաթսաներ դրին մեր առաջ։ Ճեղի ավազը, մի ծերունի, (իր ասելով, հիրավի, ավելի քան ութսունհինգ տարեկան), հագած իր լավագույն հագուստը, մեզ մոտ եկավ, և բարի գալուստ մաղթեց իր վրանում, այնքան բարությամբ, և տակավին այնքան հարգանքով, որ իր անկեղծությանն մասին կարելի չեր կասկածել։...

Մենք բաժանվեցինք մեր հյուրասեր բարեկամներից, (որոնք թվում եր, թե ավելի շնորհապարտ եյին մեր այցելության համար, քան մենք նրանց բարության համար), և անցանք դաշտի միջից։... Վեց ժամից հետո հասանք Դիադին[4] (Diadin): Բերդով ու աշտարակներով մի մեծ գյուղ և, վորի ներքևում ուղղահայաց ժայռով մի խոր ջրանցք, քանի վոտք լայն ծանծաղ ջրով, հոսում և արևելյան Յեփրատի մեջ, վոր բղխում և մոտավորապես չորս աղաչ (agatch) կամ տասներկու մղոն Դիադինից հեռու, և այս յերկրում կոչվում և Ֆրատ (Frat)։

Դիադինում մեզ թուլլ տվին մոտենալ իրենց վողորմելի բերդին։ Այս տեղի տները շինված են ցեխից ու քարից, սենեակները այնպես են հարմարեցրած, որ այնտեղ կարողանան բնակել կենդանիները, ինչպես նաև ընտանիքի [անդամները]։ Միայն մի փոքրիկ մաս կա պահված տիրոջ համար, և ընդհանրապես ինացած տարածությունը հատկացված և կենդանիներին։ Հիրավի, մենք նրանց բնակարանից ներս չմտանք, վորովհետև բոլոր դռները փակվել եյին մեր առաջ, և յերբ մեծ դժվարությամբ ապատան ճարեցին մեզ, մեր մարդկանց ու մեր կենդանիների համար, տեսանք վոր նույնքան դժվար եր ուտելիք ճարելը։ ԱԲԴՈՒԼԼԱ ՓԱՇԱՆ (Abdulla Pacha), ապատամբ մի քուրդ, վորի դեմ ԻԲՐԱՀԻՄ ՓԱՇԱՆ եր կռվում, հափշտակել եր բոլոր հոդերը, և վոչնչացրել այս գյուղի ամբողջ հունձքը։ Նույնիսկ մենք չեյինք կարծում բավականաչափ գարի գտնել մեր ձիերի համար, բայց յերկար բանակցությունից հետո մի քիչ ձեռք բերինք, վորի համար մեծ գումար վճարեցինք։ Մի տեսակ գարու նաց ավելի յուրաքանչյուր ժողովուրդ, և առանձին բարեացակամությամբ մի քանի ձու ու մի աման մածուն։

Այստեղ, ինչպես նաև Թուրքիայի բոլոր տեղերում, կոճակները (conaks) կամ ոտարականների հյուրանոցները վոչնչացված են, բայց յերբ Միրզան ու ես մտնում եյինք այնտեղ, վոր հատկացված եր մեզ, դրան վրա մեզ դիմավորեց մի կին, վորի յերեսը բոլորովին բաց եր. նա արգելց մեր մուտքը և սպառնալից նայվածքով յերդվեց, թե Թուլլ չպիտի տա վերևը մեկին մտնելու իր բնակարանը։ Սակայն, մի փոքր բանակցությունից հետո մենք հանդարտացրինք մեր հյուրընկալուհուն, և վերջապես ընդունվեցինք նրա սենյակում, ուր փռեցինք մեր կապերտները և պատրաստվեցինք քնելու։ Կանայք այստեղ համարյա թե չեն

ծածկում իրենց յերեսը, և ինչպես հետո իմացանք սխրահռչակ են իրենց անբարոյականութեամբ։ Ներանք առողջ տեսք ունեին։ Անկախ իրենց անմիջական թշուառութիւնից, նրանց անհոգրնկալ վերաբերմունքը՝ պարսիկների հանդեպ, շատ բնական է։ Բազմաթիւ [պարսիկ] դեսպանները ուղարկված են Կ. Պոլիս, և դրանից ի վեր ամեն մի ճանապարհորդ, որ յերկու յերեք ապաստաւորներ է ունեցել, իրեն ներկայացրել է նոյն դիրքով։ Այս խարդախութեան հայտնաբերումը, բնականաբար, տեղի է ունեցել որ թուրքերը լինեն աւելի զգուշաւոր։

Հունիսի 10.— Մենք ինը ժամ ճանապարհորդեցինք Ցուցկալի[5] (Youngali) [Յոնջալի] գնալու համար, որ ասում են, ինը աղաչ է, իսկ իմ հաշուով յերեսուն յերկու մղոն դեպի հիւսիս արեմուտք։ Ամբողջ ճանապարհին Ցեփրաւը ընկերանում էր մեզ. մի կանաչազարդ յերկրից, բայց շատ քիչ մշակված։ Դիադինից չորս մղոն այն կողմը՝ մենք անցանք Զուգան (Zugan) [Զուջան][6] գիւղից, մոտաւորապես մեկ ուկես մղոն մեր ձախ կողմից, ապա չորս մղոն, և այն էլ նոյնպես դեպի ձախ. Ցեփրաւի մյուս ափում [գտնվում է] Ուչ Քլիսե[7] (Utch Klissé)։ Այստեղ յերեւում է մի բարձր ու ձյունապատ լեռ Քոսե Դաղ անունով (Kussé Dagh), և դեպի հարաւ ու արեւմուտք տարածվում է Ալա-Դաղի[8] (Ala-Dagh) շրջանը։ Գիւղում կա մի հայ եկեղեցի, շատ պատկառելի տեսքով մի շինութիւն, շատ նման եվրոպական կառուցվածքի։ Յերկու թեւ ունի և մի փոքր քարե գմբեթ յերեւում է վոչ շատ քայքայված։

Այս լեռների շղթայի վերջաւորութեան մոտ գտնվում է Ուչ Քլիսե։ *Ցեփրաւի վրա մի քարե կամուրջ կա։ Մենք շարունակեցինք մեր ուղին գետի յեզերքով, որ դառնում է արեւելքից արեւմուտք, տեղիզելով իր յերկու ափերում կանաչեղեն դաշտեր։ Անցանք մի գիւղից, այժմ ավերակ, Ալակու (Alaku) անունով, և լերան գառիվայրի վրա, (ճանապարհից յերեք մղոն դեպի ձախ) Քոմուլջա (Comoulja), մի ուրիշը Բելասու (Belasou) գետի ափին, և մոտաւորապես*

ուղը մղոն դեպի առաջ անցնելով Քափի-Կեոյի (Cadi Kieu) խղճալի հիւղակներից, հասանք Յոնջալիի մեր կօնակը (Conak)։ Բոլոր այս գիւղերը գտնվում են Ալաշկերտի շրջանում (mahalé)։

Յերբ մենք մոտ մեկ ժամ ճանապարհ էինք գնացել, յես գտա, վոր իմ բեռներից կորցրել եմ մի փոքրիկ կապերտ, և հետևաբար իմ ապաստավորին յես ուղարկեցի Դիադին պահանջելու այն մեր հիւրընկալից։ Այն ակնարկները, վոր նա ուղղում էր մեր ունեցածներին, յես հաճախ կասկածում էի նրա պարկեշտութեան մասին, բայց պետք էր վոր խնայեի իմ կասկածներն ու նեղութիւնները, վորովհետև բացի յերդումից, վոչինչ չտեսայ։ Ուչ Քլիսեի մոտ հանդիպեցինք Իբրահիմ փաշայի հրանոթներին, վոր բաղկացած էր յերկու դաշտային թնդանոթներից, վորոնք վերադառնում էին իշխանութեան դեմ ապստամբած Թիմուր Բեկի (Timur Beg) բերդի՝ Թոփրակ Կալեյի (Torpa Caléh) [Ալաշկերտի] պաշարումից։

Տեղեկացանք, թե հինգ ամսվան պաշարումից հետո, վորի ընթացքում փաշան իր թնդանոթներն արձակել էր բերդի ու ամանի վրա հարյուր հիսուն անգամ, նրան հաջողվել էր սպանել մի հավ ու մի շուն։

Իբրահիմ փաշան, վոր Յոնջալի [գիւղից] յերեք մղոն հեռու մի ուրիշ գիւղում էր գտնվում, ուղարկեց իր խազնադարին (Haznadar) կամ գանձապահին, մեզ առաջնորդելու համար մեր ոթեւանը։ Թշուառութիւնը այստեղ ավելի մեծ էր, քան նախորդ օրվան վայրում։ Գարի չկար մեր ձիերի համար, և վոչ իսկ կանաչ խոտ, ուստից բոլոնցքի հարվածները [գործադրելու]։ Բրդերի արշավանքներից ամբողջ յերկիրը բացարձակ ավերակ վիճակում էր գտնվում, մենք գտնվում էինք մեծ դժվարութեան մեջ, վորովհետև Իբրահիմ փաշան կռվի մեջ էր ամբողջ շրջապատի հետ։ Նա հայտարարեց, թե հիւրավի հարգում է Աբբաս Միրզայի ֆերմանը (firman), և յերբ մենք նրան պարզեցինք մեր կացութիւնը, նա անմիջապես հայտնեց, թե ինքը իշխանի [Աբբաս Միր-

դալի] ծառան և ամեն բանի մեջ, և պատրաստ և ամեն բան-
նում ծառայել նրան: Սակայն, մենք ավելի վատ ընդունե-
լություն չեյինք ունեցել, քան այս պտուղում: Մեր շրջապատի
մարդիկ վայրենի յերևույթ ունեյին, և նրանց ընդհանուր
վերաբերմունքը համապատասխանում եր իրենց յերևույթին:

Յոնջալիի հարավակողմում, ինչպես ինձ ասացին այն-
տեղ, գտնվում և վան, և դեպի հարավ-արևմուտք՝ Խնուսի
շրջանը (Mahalé of Kensus):

Հունիսի 11. — Մենք մեկնեցինք Յոնջալիից դժգոհ մեր
հյուրընկալից: Պարսիկները, հիրավի, շշվաս եյին այս գյու-
ղում իրենց ընդունած աննշան հյուրասիրության համար:
Այն յերկու պաշտոնյանները, որ մեզ առաջնորդեցին իրենց
սիրոյ սահմանից, յերբ բաժանվեցին, խորհուրդ տվին մեզ
չմոտենալ Թուրքակ Կալեյին, իբրև թե մենք անկասկած
հարձակում պիտի կրեյինք: Այսուամենայնիվ այն կացու-
թյունը, որի մեջ գտնվում եյինք հակառակորդ յերկու
գլխավորների կողմից պատճառով, այնքան դժվար եր, որ
հավատարիմս վտանգավոր եր անցնելու Թիմուր Բեկի ամ-
րոցից, առանց մեր հարգանքը մատուցանելու նրան, կամ
նրա Թշնամու յերկրից գալով գնալ նրա մոտ: Հետևաբար
վճռեցինք պարզորեն պատմել նրան մեր կացությունը և
ապավինել նրա հյուրընկալությանն: Անցանք ամենադիպուկ
մի դաշտից ծածկված պտուղներով, և վոռոգված բազմաթիվ
առուներով: Հյուսիսային լեռնից իջնում եյին յերեք մեծ հեղե-
ղատներ, որոնք ուռճացած եյին հալչող ձյունի հետևան-
քով, և որոնք թափվում եյին Յեփրատի մեջ, որ հոսում
և դաշտի հարավային ծայրամասից՝ արևելքից դեպի արև-
մուտք: Յոնջալիից [ճանապարհորդելով] յերեք մղոն յեկանք ու
կարաքլիսա, մի մեծ գյուղ, ուր բնակում են քուրդեր ու
հայեր, և ապա դարձանք դեպի հյուսիս, խուսափելու համար
դաշտի կենտրոնի ճահճախուտ ճանապարհից: Անցանք բազ-
մաթիվ գյուղերից, որոնց բնակիչները տեսնելով մեր բազ-
մությունը, սխալմամբ կենթադրում եյին թե մենք կովոդ
կողմերից մեկին ենք պատկանում, և յերբ մենք մոտենում

եյինք, խռնվում եյին իրենց կառուցների վրա: Այս վայ-
րերից գլխավորներն եյին Դաբե Թափե, Կեսիբ և Աբեյաթ:

Թուրքակ Կալե՞ (Turpa Kaléh) գտնվում է Յոնջալիի
հյուսիս արևմուտք, տասնհինգ մղոնի կամ չորս ժամվան
հեռավորությամբ: Ճոյից ի վեր մեր տեսած գյուղերից ամե-
նամեծն եր: Ամանը տարածված է կոնաձև մի բլրի գագա-
վայրի վրա, որի կատարին գտնվում է ամրոցը: Սա քուր-
քերին թվում է անառիկ, և իրավացի, յեթե վերջին պաշար-
ման ձախողանքը ընդունենք իբրև կրիտերիոն (չափանիշ),
թեև ինձ թվում է թե բերդը ամեն մասով ինդանոթի մատ-
չելի չեր: Ցյուսե Դաղ (Kussé Dagh) [Սուկավ] լեռները նատում
են ամանի վրա: Մենք առաջ գնացինք հոգնաբեկ, և ժաման-
ման մի մղոն հետացած կանգ առինք, և մի մարդ ուղարկե-
ցինք՝ առուգելու համար մարդկանց տրամադրությունն ու
կերևույթը, և տեղեկացնելու մեր մուտքի նպատակահար-
մարությունը: Նա վերադարձավ այն տեղեկությամբ, թե
մենք վախենալու պատճառ չունենք, և հետևաբար ուղղվե-
ցինք դեպի Քեյայի (Kiayah) կոթակը (conac) կամ բնակա-
րանը. [այս քեհյան] Թիմուր բեկի գլխավոր պաշտոնյան
եր: Այստեղ ձիերից վար իջանք և առաջնորդվեցինք մի
մուք սենյակ, ուր քանի թաղած թուրքեր անձնատուր եյին
ծխելու խաղաղ հաճույքին: Քեհյան նստել եր անկյունում,
բայց յերբ Միրզան մոտ, նա վոտքի յելավ և սովորական
խոշ պլալդըն (բարի յեկաք) ասելուց հետո, փակեց իր շըր-
թունքը և ապատ թողեց իր հյուրին՝ ցուցադրելու կոմպլի-
մենտներ և հրապուրիչ շողոքորթություն, որ այնքան
բնական և նրա [պարսիկ] ազգին: Պարսիկի շատախոսությունն
ու աշխուժությունը անորինակ մի հակադրություն եր թուրքի
անհոգաբերքին ու ծանոթ լակոնականության հետ:

Յերբ մենք ծխեցինք ու սուրճ խմեցինք, մի մարդ յեկավ
հայտնելու Թե Թիմուր բեկը պատրաստ է ընդունելու մեզ:
Միրզան ու յես անմիջապես գնացինք, թողնելով մեր մարդ-
կանց քեհյայի մոտ: Մի սանդուխից ու մի դժվար ճանա-
պարհից բարձրացանք բերդ և ներս մտանք մի մեծ յերկաթ

զոնից։ [Բերդի] պապերին մեզ տարին մի ընդարձակ անկյունը, շրջապատված եր իր պետական սպամիներով, նստել եր մի պատուհանի մոտ, որ տեսարան եր մեր անցած ճանապարհի տեսարանին, ինչպես նաև մասնավորապես իր հակառակորդի՝ փաշայի շրջանին։ Ձերը մենք նույնպես նստեցինք, և սովորական կոմպլիմենտներ փոխանակեցինք։ Մերզան սկսավ [արտասանել] մի պատրաստի ճառ, պարզելով մեր կացութիւնը, հայտարարելով թե մենք մեզ հանձնում ենք իր գթութեան, խնդրելով նրանից հյուրասիրութեան իրավունքները և յերբեմն խառնելով խիստ լուտանքներ նրա հակառակորդի, փաշայի, հասցեին։ Այս յեղանակը հաջողվեց, և Թիմուր բեկը վայրկենապես պատասխանեց, թե մենք վախենալու պատճառ չունենալինք, թե իր պաշտպանութեան տակ մենք ապահով կլինք, թե մեր պահանջները պիտի հայթհայթվեին, և թե իր պաշտոնյաները հրաման պիտի ընդունեին հարգանքով ու բարութեամբ վարվելու մեզ հետ հարևան մի գյուղում, որովհետև նա հույս ուներ և վորպես մեկ շնորհ, վորը նա խնդրում եր մեզնից, այն եր վոր մենք այդ դիշեր չմնայինք իր ամրոցում։

Ձերը այս բանակցութիւններն ելին կատարվում, յես մեջտեղ ունեցա նկատելու, թե շատ հետևալու արժանի կողմեր ուներ մեր հյուրընկալը։ Նա մոտավորապես քառասուն տարեկան եր, յեզակիորեն պարզ ու առնական կերպարանքով, և շատ շնորհալի ու լուրջ վարվելակերպով։ Նա պատմեց իր պատմությունն ու իր տարբերությունը Իրրահիմ փաշայից, այնքան պարզ, արտահայտիչ լեզվով, վոր մենք լոր շահագրգռությունն զգացինք նրա բախտի մասին, մանավորապես յերբ նա պարզաբանեց փաշայի բռնապետությունն ու ապրուն հարստությունը, և այն թշվառությունը, վորի մեջ գտնվում ելին շրջանի գյուղացիները նրա կողոպուտների հետևանքով։ Սակայն, Մերզայի հետ իր ունեցած խոսակցության ընթացքին, յես նկատեցի նրա նկատողության հատկություններից մեկը, վոր շատ հատկանշական և կիսաբարբարոս հասարակության։ Նա հարցրեց թե ով եմ յես, և տեղեկացած լինելով թե յես Իսայի (Isau = Հիսուս) ազանդին եմ պատկանում, կամ այլ խոսքով քրիստոնյա յեմ, նա շարունակեց (խղճացող հայացքով, նկատած լինելով վոր յես մերժել եյի ծեսել). «Այս մարդիկ, ասում են, վոչ ծխամորճ ունեն և վոչ էլ ծխախոտ իրենց յերկրում, հիվան դեր (haivan der), նրանք անասուն են», այսինքն ասել եր ուզում, թե մենք պիտակցություն կամ մեջտեղ չունինք [վայելելու] իրենց սիրելի հաճույքը, և «նրանք վոր չեն ծխում, վորքան ցածր են մեզանից»։

Մեր հյուրընկալը խոսորեն պահեց իր խոսքը, մեզ ուղարկեցին չորս մղոն հեռու խոսացված գյուղը՝ Մոլա-Սուլեյման (Molah Suleiman), առաջնորդությամբ նրա պաշտոնյաներից յերկուսին, և մեզ հայթհայթելին ինչվոր ճարտություն տեղի վրա, մի վոչխար, հավերեն ու բրինձ՝ մեզ համար և գարի՝ մեր ձիերի համար։

Հունիսի 12. — Մոլա Սուլեյմանից մինչև Դելի-Բաբա[10] (Deli-Baba) անցանք լեռնոտ մի յերկրից, ճանապարհորդելով դեպի հյուսիս արևմուտք տասը ժամ, այսինքն յերեսուն հինգ մղոն։... Մեզ տեսին վոր ճանապարհը լի յեր քուրդերով, մասնավորապես Գերդինա (Gerdina) կոչված կիրճում, և հետևաբար մենք պաշտպանողական դիրք բռնեցինք։ Բայց, անցանք ամբողջ տարածությունը առանց հանդիպելու մարդկային վորևե հակի, մինչև հասանք Դահար (Dahar), քրդական մի գյուղ լեռներում, Մոլա Սուլեյմանից քսան մղոն հեռու։ Ապա գարձանք դանադան ուղղությամբ։...

Մանելով դաշտը տեսանք բազմաթիվ գյուղացիներ իրենց արաբանիերով (arabahs) կամ սայլերով։ Նրանք մեզ ասին, վոր փախել են իրենց գյուղից՝ վախենալով Աբդուլլա Աղայից (Abdulla Aga), վոր Յերևանի մոտակա իր կայանից ասպատակային արշավանքներ և կատարում ամբողջ յերկիրը։ Նրանք ավելացրին, թե Դելի-Բաբա բոլորովին անմարդաբնակ և դատարկ տակայն, մենք չհավատացինք նրանց, և շարունակեցինք մեր ուղին։ Հիրավի, շատ վատ ընդունելություն գտանք [այնտեղ], բնակիչները սխալմամբ մեզ թշնամու տեղ

գրին, և երբ մենք մոտեցանք, հավաքվեցին ու մերժեցին մեր մուտքը, և բազմաթիվ հրացաններ պարպեցին մեր վրա։ Վերջապես գյուղի գլխավորը առաջ լսկավ հանդիպելու մեզ, և մենք համաձայնվեցինք իջևանել [գյուղից] բավական հեռու, կերակրել մեր կենդանիներին և մնալ։ Արդուլա Աղայի վախը այնքան անվստահություն էր առիթել, որ ոմն որ հանդիպում էինք խուսափում էր, և նույնիսկ նրանք որ մոտենում էին մեզ, մեր բոլոր վստահացումները վերաբերյալ հավատքյան չէին ներշնչում։ Թեև մենք մեր պահանջների համար մեծ գումարներ առաջարկեցինք, սակայն ապրիլի չէին կամենում մեզ վաճառել որևե բան, և այն մի քանի կաթ հացն ու հավկիթը, որ մեր ճաշը կազմեցին Դելի-Բաբայում, ձեռք բերինք շատ մեծ դժվարությամբ։

Թեև լերկիրը աստիճանի խառնակ վիճակում է գտնվում, [սակայն] կարավանները հաճախ անցնում են ճանապարհից։ Մենք հանդիպեցինք մի մեծ կարավանի, որ ուղիը որ առաջ մեզնից էր երկրումից։ Պատահից որ մեր ջորեպանը սպանեց մի ոձի, նա անմիջապես լերկու մասի բաժանեց և մեզնից մի ոտի, սակայն «բախտավոր նշան է», սերը նեռից տարբեր կոպիտ, ասելով «բախտավոր նշան է», մեր թշնամիները չպիտի հաղթեն մեզ»։

Մեր անցած տոպը հիանալիորեն հարուստ էր, և լեռնային կատարին ամենագրավիչ գարուն էր սիրուն...

Հունիսի 13. — Առավոտ կանուխ մեկնեցինք Դելի-Բաբայից, ամբողջ գիշերը անցնելով բացօթյա, սարսափելի մեծ ու գիշատիչ, որոնցից մեկ ասել էին, թե սպանով չենք և կարող էր պատահել որ հարձակում կգործեին, թեև փառք աստծու ոչ մեկ բան չպատահեց մեզ։ Մենք առաջացանք դեպի արևմուտք Ամրա Քեոյ (Amra Kieu), մի գյուղ գեղեցկորեն գտնվված դաշտի ծայրամասում և շրջապատված ուռի ու չինարի ծառերով, մի բան որ վերջերս հազվագյուտ էր մեր ճանապարհի ընթացքում։ Մենք անցանք մի գեղեցիկ լերկրից մեծ մասամբ մշակված և բարգավաճ լերևույթով, բայց բնակչությունը ծայրահեղ թշվառության մեջ էր գտնվում։ Գարունը նոր էր բացվել, ցանքը հազիվ մի քիչ

բարձր, դաշտերը այնպես գարնանային նման խրամներով չեին վառոգվում, որովհետև արվեստական վառոգման պետք չի զգացվում։ Դաշտի հյուսիսակողմի բլուրները, որոնցից մենք անցանք, բարձրանում են անզգալիորեն, և մեր աչքին պատկերանում էին բնակություն և մշակություն, բայց որովհետև ճանապարհին վոչ մեկ անձի չհանդիպեցինք, գտնված գյուղերի անուններըը չկարողացա իմանալ։ Դելի-Բաբայից լերկու ժամ, (յոթը մղոն) և ճանապարհից մոտ մեկ մղոն հեռու գտնվում է Բաթման Քեոյ (Batman Kieu), գետնված մի հովիտի կրծքում, հրապուրիչ կերպով վառոգված ու մշակված։ Մեր հանդիման՝ Ամրա Քեոյի տները շինված են յիղնափայտից, և նրանց կատարները կազմված են բարակ գերաններով, հետո ծածկված ցեխով։ Սա մեր մինչև հիմա տեսածներից ավելի լավ էր կառուցված, Այստեղ գյուղացիները գործածում են վոչխարների լերկար սպիները։ Գիպեցիկ են վոչխարները, մեծ գմակով և լավ բրդով։

Հունիսի 14 — Ամրա Քեոյից գնացինք տասը մղոն դեպի արևմուտք Ալվար (Alwar)։ Ամրա Քեոյից լերեք մղոն այն կողմ լեկանք Արաքսի ափը, որ մոտակա լեռներից իջնում է դաշտ, Յագհանի (Yaghan) մոտ, մի մեծ գյուղ, մոտ լերեք մղոն ճանապարհից հեռու։ Գետը հոսում է այստեղ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք։ Նա բղխում է Խունուսի (Khunus) շրջանից Բին Գյոլ (Bin Gieul) կամ հազար աղբյուր [Բյուրակնյան] լեռներից... Հարևան դաշտերը շատ քիչ ջուր են առանում նրանից [Արաքսից] վառոգման համար։ Մենք անցանք [Արաքսը] լավ կառուցված յոթը կամարով քարե մի կամրջից, որի չափումից, [գտանելով], գետը մոտավորապես հարյուր վաթսուն քայլ լայն էր։ Ճիշտ այս կետում մի գետակ հոսում է նրա մեջ արևմուտքից, իր ընթացքը առնելով Հասան Կալեի մոտից։ Կամուրջը անցնելով, անմիջապես հետո լեկանք Քեոփրու Քեոյ (Kupré Kieu) գյուղը և ապա շարունակեցինք շատ լավ ճանապարհից և գիպեցիկ մի դաշտից սփռված գյուղերով, ընդհանրապես լերկու լերեք մղոն իրարից հեռու։ Սրանցից գլխավորներն են՝ Արամուխ

(Arsunjéh) ձախ, Գումեբ (Gumec) ու Միաջեն (Miagen) ճանապարհի աջ կողմը։ Ամբողջ դաշտը լավ հերկված, և գյուղացիները այստեղ ցանում էին իրենց հացահատիկը։ Մենք անցանք Հասան Կալեյից (Hassan Caléh), մի մեծ ավան գետնված մի բլրի շուրջ, որի կատարին գտնվում է մի հին բերդ։ Գետը անցանք չորկու կամարով մի կամրջից։ Մի աղբյուրի վրա, կամրջի մոտ, շինված է մի բաղնիք, որի ջուրը այրելու ասիճան տաքություն ունի, այնուամենայնիվ՝ տեսանք բազմաթիվ մարդկանց մինչև իրենց կզակը մտած այդ ջրի մեջ։ Ավազանը չորսուն վոտք տրամագիծ ունի, և ծածկված և մի հին կառուցվածքով։ Նրա մոտ կան բազմաթիվ նույնքան տաքություն ունեցող ջրեր։

Հասան Կալեյի կառավարիչը (Cazi) մի մարդ կարգած եր մեզ առաջնորդելու Ալվար (Alwar), բայց այդ տեղի Աղան վճռականապես մերժից մեզ ընդունել և կամ ոթևան տալ, և կտրականապես ավելացրեց, թե ինք կարևորություն չեր տալիս կապիի, փաշայի կամ վորևե ուրիշի, և թե մենք կլսող ենք գնալ, ուր վոր կամենանք, միայն չխանգարենք իր հանգիստը։ Յերկուստանք նախատական խոսքերի փոխանակումից հետո, մենք գոհ եյինք վոր առաջվա նման կարող ենք իջևանել բաց դաշտում, մի ծառի տակ, — վոր բարեբախտաբար գտնվում եր գյուղի մոտ, — և պաշարպանվել կիզիչ արևից։

Յերբ նստել եյինք ծառի տակ, ուխտելով վրեժխնդիր լինել Ալվարի Աղայից, (մի մարդ եյինք ուղարկել Արզ-ռումի կառավարիչին հայտնելու համար մեր դրությունը), այցելության եկավ մի հարգելի, բայց խորամանկ չորեքսյոթով մի Թուրք, վոր հանդարտորեն նստեց մեր կապերտի վրա։ Նա սկսեց պատմել թե ինքն էլ մեզ նման մի յոլչի (ճանապարհորդ) և, հարցրեց թե ինչու մենք վրդովվել եյինք։ Մենք խոսք կերպով արտահայտվեցինք գյուղի Աղայի դեմ, վոր սոխակել եր մեզ մեր ձիերի ու ջորիների նման ինալ մի ծառի տակ, մերժելով մեզ հյուրասիրության ամենասովորական պարտականությունը, և ավելացրինք, թե մի պատգամավոր

եյինք ուղարկել Արզ-ռումի կառավարչին՝ բողոքելու համար այս նախատինքի դեմ, հուսալով վոր անհրաժեշտ Աղան պիտի կորցնե կամ իր գլուխը կամ չենթարկվի բանտարգելի [ֆալախա]։ Մենք կասկածներ ունեյինք թե այն անձնավորությունը, վոր խոսում եր մեզ հետ նույն ինքն այդ Աղան եր, և հետևաբար չեյինք խնդրում նրան նախատիրություն։ Պարզվեց վոր մեր կասկածը արդարացի եր. մեր այցելուն սկսեց Աղային կողմնակցություն անել, ասելով թե չերկիրը գտնվում եր խիստ խառնակ վիճակում և մարդիկ վախենում եյին այնքան մեծ թվով ոտարականներին ընդունել իրենց ավանում, մանավորապես պարսիկներին, և խնդրեց մեզ չդրկել Արզռումի կառավարչին։ Հետևաբար նա ոտրտփահար բաժանվեց մեզանից, և թուլլատրեց վոր պարսն վերցնենք իր գյուղից, մի արտոնություն վոր նախապես նա մերժել եր։

Սակայն, պիշերը մենք անցկացրինք բացօթյա, վախենալով անձրևից, վորովհետև ամեն կողմ անձրև եր գալիս՝ վորոտումով ու կայծակով։

ԾԱՆՕԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Տես էջ 51 ծանոթ 5։*

2. *Տես, էջ 118 ծանոթ. 1։*

3. Ելվաթ (Eeluat) *Թուրքմեն ֆաժաուականներ, քոչվոր։ Արաբերեն* ել *նշանակում է ցեղ, վար հոգնակի, ցեղեր, աշիրեթ։*

4. Դիադին, *Բայազիտից երկրում տանող ճանապարհի վրա գյուղաքաղաք, Բագրևանդի Դիադին գավառի կենտրոնը, ուր նստում և կառավարիչը, վորի վարչության ներքո գտնվում են 160—165 գյուղ, վորոնցից 3—4 գյուղ նախապես գուտ հայարնակ եյին, իսկ այժմ հայ բնակչություն չկա։*

5. Ցռնիջալի, *դեներալ Պարսկան եյ այստեղից անցավ 1808-ին, (տես, էջ 103 ծանոթ. 9)։ Այս գյուղը գտնվում է Բագրևանդ գավառի Կարաքլիսա վանքի շրջանում։ 1914 թ. իմպերիալիստական պատերազմից առաջ այստեղ բնակվում եյին 53—60 տուն հայ, վորոնք բավական բարեկեցիկ վիճակ ունեյին, շնորհիվ չերկրի բարեբերության։ Ունի առատ ջուր ու ծա-*

ռատան և իր ընակած դիրքի ու հարմարութիւնների համար կարա-
ւանների իջևան եւ Առատօրեն աճում և առատ, որից առած և իր
անունը. յանիջա Թուրքերեն նշանակում և առատ։ Համանական և որ
Յունջալուն հին Առաւիտոց գյուղն և, (Բագրեանդ, եջ 260—261)։

6. Ջուջան մի փոքր գյուղ և Դիադինից չորս մղոն հեռու, Նպատ
լեռան առորոտ։

7. Ուչ-Քիլիսե, Բագավան, տես եջ 103 ծանոթ. 10։

8. Ալա-դաղ հայկական անունը Մոկաց լեռ, պանվում և Բագա-
վանի (Ուչ Քիլիսե) հարավ, կիսեռուն մղոն հեռու և տարածվում և մին-
չև պատմական Վասպուրականի հոգևոր գավառ։ Հարավային սահմանի
լեռները, որոնք նամանավես Ալա դաղ են կոչվում, ինչպես նաև Բայազիտի
լեռները, որ կցված չև սրանց, — հին հայ և լատին մատենագիրները ան-
վանում են Նպատ կամ Նպատական լեռներ։ Իսկ Ալա դաղ լեռների կենտ-
րոնը կամ գլուխն և Մոկի կամ Մոկիս լեռ, որից իր անունը առել և
Մոկական գավառ։ Այս լեռը 10.330 ոտք բարձրութիւն ունի։ Այս
լեռից և սկիզբ առնում Յեփրատի Արածանի (Մուրատ սու) գյուղը։ (Ալի-
շան, «Վարագա» եջ 511—513, Lynch, «Armenia» հատ. II. եջ 401)։

9. Թոփրակ Կալե, Ալաշկերտ, տես եջ 103 ծանոթ. 8 և «Ուղեգրութեան-
ներ» Ա. հատ. եջ 145 ծանոթ. 3։

10. Դելի-Բաբա, կլավխան անվանում և Դիլիլերքենդ և առում և
թե այնտեղ բնակում եյին դերվիշներ, որոնք ունեյին իրենց սեփական
վանքը և նրանց գլխավորը դյուղի տերն եր։ Այդ դերվիշները կոչվում
եյին դելի, այսինքն, խենթ, ապրում եյին անասխատ և մահ եյին գալիս
ցնցոտիների մեջ փաթաթված։ (Տես, Հակոբյան, «Ուղեգրութեյուններ»
Ա. հատ. եջ 107)։

Բ.

ԵՐԶՐՈՒՄԻՑ ԱՄԱՍԻԱ

1809, Հունիսի 15. — Դեպի արևմուտք կրայինք մի ճա-
նապարհից տասնհինգ մղոն ձիավարելուց հետո հասանք
Երզրում[1] (Arz-roum)։ Քաղաքի կիրճուկքը հեռվից նկարա-
գիր և։ Նրա մինարեթներն ու աշտարակները խիզախորեն
ներկայանում են մեր աչքին։ Հակառակ մեր բողոքներին
ու [մեր ունեցած] արտոնութեյան իրավունքին մեր բեռները
տարին մաքսատուն։ Թուրքերի զգուշավորութեյունը, թեև
այս պարագայում վոչ անհրաժեշտ, անիրավացի չեր, վորով-
հետև պարսկական նախկին մի դեսպան վաճառականներին
թագցրել եր իր խմբում, և իր անունով նուրբ ապրանքներ
անցկացրել եր [առանց մաքսի]։

Երզրում կառուցված և մի բարձունքի վրա, վորի ամե-
նաբարձր տեղը բերդն և, շրջապատված քարե կրկնակ պարս-
պով։... Ունի չորս դուռ, վորոնք ծածկված են յերկաթ
ափսեակով։ Ամրոցութեյամբ լավ և կառուցված և ինձ թվում և
թե մուսուլմանները չեն շինել։ Նրա կողքով մի խրամատ
կերկարում և հարավից արևմուտք, վորի մոտ կա մի խաղա-
հրապարան և ավելի հեռուն մի շարք գարբնոցներ, վորոնք
թվում և թե լավ են աշխատում։ Այս ուղղութեյամբ, քա-
ղաքի հյուսիս արևելք գտնվում և մաքսատունը, մի ընդար-
ձակ շինք։ Փաշայի բնակարանը բակի վրա բացվող մի մեծ
դուռ ունի։ Տները ընդհանրապես շինված են քարից, ունեն
փայտեայ առաստաղ և պատշգամ։ Կառուցներում խոտ և բուս-
նում և վոչխար ու հոտի արածում են այնտեղ, այնպես վոր
յերը դիտում ևք մի բարձր դիրքից, տանրի կառուցները

դժվարությամբ են զանազանում դաշտից։ Յետ մանելիկա դրեթե բոլոր բազարները, մի քանիսը միայն կամարակապ են, մնացյալները տերասներ ունեն, բնակարանների նման, բայց նրանք ծառայում են հետիոտնների անցուդարձի համար, որոնք բարձրանում են սանդուխներով։ Ուր որ մի փողոց և անցնում, մի կամարջ և շինված, և այսպես շարունակվում և անընդհատ։ Բազարներում խանութները լիքն են ապրանքով, և թվում և թե այստեղ բարգավաճ արդյունաբերություն ունի։ Փողոցներն ընդհանրապես ասֆալտակված են, բայց, ինչպես Թուրքիայի հասուկ, այնպիսի կերպով, որ ծառայում են անցորդի ոտքին հանելու քան դյուրացնելու նրա քայլվածքը։ Տանիից բազմիքները կան և մի հարյուր մզկիթ, որոնցից շատերը աչքառու շինք ունեն, գմբեթները ծածկված են կապարով, և գարշարված վոսկեզօծ գնդերով ու մահիկներով։

Այս և Երզրումի նեղկա վիճակը. թերևս ապագայում որի որ անցյալում դա ավելի նշանավոր և չեզել։ Ամեն ինչ վկայում և տեղի հնության մասին, բնակիչները նրա հիմնարկությունը համարում են Նոյի ժամանակից... կամ առնվազն նրա կառուցվածքների մի մասը պյավուբների (Giaours) կամ անհավատների գործը։ Մասնավորապես մեկը վերագրվում և վերջիններիս, դա կամարակապ մի դարպաս և, հետաքրքրորեն շինված կարծր քարից և պոնտում և բերդի հյուսիս արևմուտքը, շատ մոտ հին ու փլփլած մի մինարեթ։ Սակայն, հին կառուցվածքներից շատերը, [գատելով] իսկական մզկիթների կամարից, անկասկած սարակինոսյան ծագում ունեն, և մզկիթների շատ մնացորդները նմանում են Պարսկաստանի նման շենքերին, հետաքրքիր պղյուսով ու ճենապնարակված կղմինարով, որոնք հատկանշական են մահմեդականության առաջին դարերին։ Երզրումում այս բոլորի մեջ նկատելի չեր մի կլոր աշտարակ, բավական ծավալ կառուցով, ամբողջությամբ ծածկված պղյուսով։ Տակավին կանգուն են բազմաթիվ մինարեթներ, հայտնորեն հին մահմեդականների գործ։ Բերդի արևելյան դռան մոտ կան

պղյուսե ու կղմինարե կառուցված չերկու մինարեթներ. մի դուռ, (սարակինոսյան կամարով և Cufic արձանագրությամբ) և շուրջը բազմաթիվ զորավոր քարե շենքեր. մի մզկիթի դեղեցիկ կամարակապ սրահ։ Քաղաքի արևելակողմը պղյուսից մի հին աշտարակ կա, ամենաբարձր շենքը, որ ծառայում և վորպես դիտարան. ինչպես նաև վորպես չենիչերիների[2] աշտարակ։ Նրա կատարին կա մի ժամացույց, որ բավական կանոնավորությամբ գարնում և ժամերը։

Երզրումում չորսից հինգ հազար հայ ընտանիք կա և մոտավորապես հարյուր հույն, առաջիններն ունեն չերկու չեկեղեցի և վերջիններիս մեկ։ կա թերևս հազար պարսիկ, վորոնք ապրում են քարվանսարայում և զեկավարում կարավանով իրենց չերկրի առևտուրը։ Սև ծովի նավահանգիստն և Տրապիզոն, վորտեղից տարվում և կ. Պոլսի առևտուրը։ Երզրումի թրքական բնակչությունը հիսուն հազար ընտանիք և։ Այս տեղեկությունը չես տալիս ես հիմնված մի լավատեղյակ հալի հաղորդագրության վրա, բայց այս չերկրում մանրամասնությունները միշտ չափազանց կասկածելի չեն, և մեկ չերրորդը պետք և զիջնել թրքական ընտանիքների թվի հաշվառումից։ Բայց այս զիջքը կատարելուց հետո, չեն չորքանչյուր ընտանիքը համարենք հինգ հոգուց բաղկացած, գումարը կը լինի չերկու հարյուր հիսուն հազար, բայց հայերից[3]։

Երզրումի կլիման շատ փոփոխական և, և ձմեռը պետք և վոր սաստիկ ցուրտ լինի։...

Ամսի 18-ին այցելեցինք կառավարչին։ Նա մեզ հյուրընկալեց Թուրքիայում այնպիսի պարագաներում ընդունված սովորական քաղաքավարությամբ, այն և, ծխամորճ, սուրճ, անուշեղեն ու շերբեթ, վորոնց համար մենք շատ Թանգ վճարեցինք՝ առլոյ բազմաթիվ բախշիշներ։ Այդ միջոցին ԵՄԵՆ ԱՂԱՆ եր. կառավարչը և քաղաքի մուսելիմ (musselim), ինչպես նաև մաքսային գործակատար կամ գումրուկչի (Gumruckchee), մի պաշտոն, վոր Պարսկաստանում պրվում և շատ սուորին մարդկանց, և այս պատճառով պար-

սիկները արհամարանքով ու ծաղրանքով են նայում այդ դիրքի վրա։ Սակայն, երբ նա [կառավարիչը] մեզ բոլորիս ճաշի հրավիրեց, նրանք [պարսիկները] նախ նախանձախնդիր չէին, ամենապատշաճ կերևույթով ներկայանալու նրան։ Պարսիկ դեսպանը ամբողջ օրը զբաղված եր իր հագուստի կարգավորությամբ, նա իր բոլոր ծառաների խորհրդին դիմեց ընտրելու համար ամենահարմար հագուստը, և վերջապես ընտրեց վոսկեայ դիպակ վերարկուն։

Ըստ այնմ [հունիսի] 20-ին գնացինք ընդունելության։ Ծխելուց ու սուրճ խմելուց հետո Աղան հրավիրեց ճաշի։ Նախ, ջուր բերին լվացվելու համար, նկատեցի վոր թուքերը լվանում էին միևնույն ավազանի մեջ, իսկ պարսիկները միայն աջ ձեռքը։ Շոնիզ ու քսխանին (տես յեվ բբրբ) թերող ծառաներին, հետևում էին կերկու ուրիշները, մեկը վոր սրբիչը սփռում եր ծնկների վրա, և մյուսը վոր պատրաստ եր վերցնելու և տալու համար մի ուրիշը ձեռքի համար։ Սրանից հետո կերկուս ու կես վոտք բարձր ուքանչյունն մի աքծոտակ դեսերկին բազմոցի մի անկյունում, վորի վրա դրին անագյա մի սփռոց, ամեն կողմ ծաղկապարզված գանագան ձևերով։ Սրա վրա ամեն կողմ տեղավորեցին հացի մի կես, սոխ, հնդրդ (ռադիքս) ու մածուն, կաթ, պանիր և մեջտեղերում կերկու փայտե պղպ հյուրերնկալների համար։ Յերբ ամեն ինչ պատրաստ եր, մեր հյուրընկալները ասաց. «բույուրուն» (bouyouroun) կամ «հրամեցեք», և մի տեցանք սեղանին։ Ամեն մեկ հյուրին ապասարկում եր մի մանկլավիկ, վոր իր ուսերի վրա նետել եր վոսկեզարդված չեղերքով անձեռոցիկներ, և նման մի ուրիշը դրված եր մեր ծունկերի վրա, վոր չեր տարբերվում ածիլվելուց առաջ կատարածից։ Ամեն մի կերկարոնում մի փոքր լաթ էին դրել վորի վրա դանվում եր ամանը։ Նախ, բերին ապակեայ ամանով մի սեսակ քացղը ապուր, վոր անախորժ չեր՝ ապուր խորոված մի գառնուկ, փորը լցված բրինձով ու նուշով, հետո տանձի շոգեփ մրգանուշ, հետո շոգեփ վոչխար, հետո պտուղի բանդակ (jelly), կարճ խոսքով հաջորդաբար առնվազն

հարյուր տեսակ կերակուր, սովորաբար ձեկներից հետո մի անուշեղեն, բայց ամեն անգամվան խմորեղենից։ Մեր հյուրընկալը ասում եր՝ «բույուրուն» կերը ներս եր բերվում, և «վալդըը» կամ «վերցրուս», կերը կերել էինք կերկու կերիք բերան, և ամբողջ խնճույքի ընթացքում հազիվ թե այս կերկու բառից դուրս ուրիշ խոսք եր լսվում։ Ամեն հյուրի դեմուդեմ սպասարկում եր մի ծառա, մի ձյան լվանոցով կամ շերբեթով։ Կերակուրները ընդհանրապես վատ չեփված չէին, թեև ավելի կոպիտ քան Պարսկաստանում։ Ամեն ինչ վերջացավ մի հսկայական փլավով։ Գլխավոր կերակուրներն էին՝ յախնի (yakné) [շոգեփ], վոր նմանում է մեր Irish stew-ին, դոլմա, վորթաատունկի տերևի մեջ փաթաթված միս, fաբաբ (kabob), վոր խորոված միսն է, չորբա (chorbah) կամ ապուր, բաքլավա (baklavah) կամ մեղրի կարկանդակ, խմորեղեն և ուրիշ քաղցրավենիք, լոկմա (lokma), թեթև ուռած խմորեղեն, և փլավ, վոր պարզապես բրինձ է, կերեն խառնված աղտրով, նուշով և միշտ լավ համեմված ու պղպեղված։ Յերբ ամեն ինչ վերջացավ, մեր ձեռքերը լվացինք ոճառով և տաք ջրով. ծխեցինք, սուրճ խմեցինք և մեկնեցինք, տալով սովորական բաքշիշներ։

Երզրումից մի տարբերնակ մարդ ընկերացավ մեզ. նա բոռնիացի էր, և առաջից ոգտվեց մեզ հետ գնալու կ. Պոլիս, թվում եր թե նա վախենում եր մեր անցնելիք կերկրի վայրենի բնակիչներից, և այդ պատճառով իր հագուստի տակից կրում եր զրահ, և իր գլխի վրա՝ մի փայլուն սաղավարտ. գինված եր կերկու ծանր հրացանով. [ուներ] մի դուդդ տարճանակ, մի կերկար դաշույն (Kunjur) և մի սուր, բացի վառոդի այլազան կեղյուրներից և այլն, վորոնք բոլորը միասին նրան տալիս էին կերեսուն քարի (դաշ=stone) ծանրություն։

[Հունիսի] 21-ին մեկնեցինք Երզրումից և դաշտից անցնելով գնացինք Իլիջա[4] (ilija), հինգ մղոն միայն հեռու գեղի հյուսիս արևմուտք։ Դաշտը ծածկված և պլուղերով. մի կողմում միայն կերեսուն հատ համրեցի և մշակության համեմատ

մաստական և ընակչութեան։ Յեղանակը առաջացած եր. ցանքը մեկ վոտք բարձր եր գետնից. կար նաև շատ գեղեցիկ արոտ։

Գյուղի մոտից անցանք մի կամրջից, մի սիրուն գետի վրա, վոր այստեղ կոչվում և Կարա սու (Kara sou), ու հոսում և արևելքից արևմուտք, և թափվում և Յեփրատի մեջ։... Նրա ափերը գտնվում են Սուզդանի (Suzdan) լեռներում, մոտ ինը մղոն հեռու Երզրումից և միանում և մի ուրիշ գետի Սերխեմբեյի (Serchembéh) մոտ...

Իլիջայում կան տաք աղբյուրներ, վորոնցից յերկուսը առնված են պատերի մեջ, մարդկանց և կանանց առանձին առանձին գործածութեյան համար։ Մեծ խմբեր եկին հավաքվել այնտեղ լողանալու համար, և ժայռերի մեջ գարկել եկին իրենց վրանները՝ դիշերը անցկացնելու համար։ Դիշերվան ընթացքում անազանդ տրվեց գյուղում, թե մի խումբ դելիներ (Delhis), — վորոնք համարվում են թրքական բանակի enfants perdus»-ներ, — սպեհանել եկին մեր մեջ, և հետևաբար ամեն մարդ պետք և զգույշ լիներ իր սեփականութեյունների վերաբերմամբ։ Հավանորեն այս desperadoe-ները յերկու հարյուրից ավելի չելին, այսուամենայնիվ նրանք ավելի ևնդութեյուն եկին պատճառում Երզրումի կառավարութեյան, քան տասն հազարնոց մի բանակ յեվրոպական վորևե յերկրում։ Անպատիժ, նրանք կատարում են ամեն տեսակ անպիսութեյուն ու հարստահարութեյուն. վոչ վոք չի համարձակվում կշտամբել կամ պատժել նրանց, և մեր նրանց հանդիպելուց մի քանի որ առաջ, նրանք գժգոհ լինելով Երզրումի կառավարչի ընթացքից, հայտնել եկին թե իրենք դասալիք պիտի լինեին։ Նա պարտավորվել եր բեռներով հինսամթերք ուղարկել՝ զոհացում տալու համար նրանց։ Սակայն, դիշերը խաղաղ անցկացրինք, և շնորհիվ գյուղի հյերի բարութեյան՝ մենք բավարարված եկինք։ Այստեղից բավ դեպի Բին Գյոլ (Bin Gieul), Արաքսի աղբյուրները, վից թրքական ժամ (sahat) և։ Մեր ճանապարհի մոտիկ գյուղերն եկին՝ Գիզ (Gez), Բելուր (Belour) և Արուճի (Arouni)։

Հունիսի 22.— Մեր ուղին դեպի Պուրթուճ (Purtun) քաղաք

մղոն հեռավորութեյուն ուներ՝ դեպի արևմուտք։ Նախորդ որվա նման, իլիջայից աջ ու ձախ սփռված եկին գյուղեր, հարուստ մշակութեյամբ։ Բայց [ճանապարհը] զրեթե ծառազուրկ և, մի քանի մացառներ և փոքրիկ ծառեր միայն են տեսնվում այստեղ ու այնտեղ բլուրների վրա, և բազմաթիվ արաբացիներ բեռնավորված փայտով, վորոնց մենք հանդիպեցինք մեր ճանապարհին, գալիս եկին հեռու տեղից։ Մոտավորապես վեց մղոն դեպի աջ գտնվում և Ալաջա (Alaga) գյուղը և ձախ կողմը՝ Արրանլի (Arranli)։ Մեր վերջին կայանից հինգ մղոն առաջ գնալուց հետո կանգ առինք Ջեննիս (Jennis), շատ գեղեցիկ մի վայր, ուր հայերը նախաճաշի համար մեզ բերին ձու, տապակած հաց, մածուն և սեր (kymack)։ Ջեննիսից մեկնելիս Նարդիրան (Nardiran) գյուղը լեռան գագաթի վրա և գտնվում։ Մենք այստեղ թողինք դեպի աջ ընթացող ճանապարհը, վոր տանում եր դեպի Ակ Կալե (Ak Caléh), վոր կանոնավոր իջևան և (menzil khanéh), և հետևեցինք կողմնակի մի ճանապարհի, վորովհետև լեռնային անցքը պրավել եկին մի խումբ քուրդ ավազակներ։ Մենք հասանք Պուրթուն, մոտ չորս մղոն հարավ Ակ Կալեյից և այնտեղ մարդ ուղարկեցինք մեր տասնհինգ ձիերի համար գնելու, ինչ վոր անհրաժեշտ եր մեր ուղեվորութեյան։ Մեր իջևանը մի փոքր գյուղ եր լեռան կրծքում, մի գեղեցիկ գետակի կողքին, վոր յերեք նկարագեղ ծառերի արմատից հոսում եր դեպի վար, ձևացնելով մի ջրվեժ, և ներքևում գարձնում եր մի ջրաղաց։ Մոտավորապես ժամը տասներկուսին հարավ արևելքից ամպերը կուտակվեցին և առաջ բերին վորոտում, կարկուտ ու անձրև, մի յերևույթ, վոր յես նկատել եկի Երզրում հասնելուց ի վեր։ Յերեկոյան կողմ յեղանակը բացվեց և հաջորդ որը առավոտ պարզվեց գրեթե անամպ մի յերկինք։

[Հունիսի] 23-ին մեկնեցինք Պուրթուճից, և յերկու ու կես մղոն տեսք վերստին անցանք նախորդ որվան ճանապարհից, յերբ ուղղվեցինք ընդհանրապես դեպի արևմուտք քաղաքը մղոն։ Մեր ճանապարհը ընթանում եր լեռների

երկար մի շղթայից, դյուրանցանելի, թեև անձրևի պատճառով դեռևս ցեխ ու այդ առիթով իր դժվարություն. Հողը հիանալիորեն հարուստ է, փարթամ բուսականությամբ, ծածկված արոտով, վայրի խոտով ու ծաղկով: Այստեղ երկիրը այլևս անտառային չէ, բազմաթիվ առվակներով...: Սակայն մերձակա շրջանը՝ դելիճեի (Delhis) հարստահարությունների և քրդերի վերջին արշավանքների հետևանքով, բոլորովին անմարդաբնակ էր դառել, և առիթ ունեցանք վերմամախաթունը (Mamakhatoun), ուր պետք էր վերջնելինք այդ դիշերը, նույնպես ամայացել էր:

Վերի բարձունքից մենք վայելում էինք մի դիպուկ տեսարան: Անձրևից ու հալված ձյունից ուռճացած մի գետ էր վազում լեռներից և վոլորվում երկու հիանալի ժայռերի առորոտում, և մեր ներքևն էլին այն մեծ շենքերը, վորոնցից այս անդը առացել էր իր անունը: Նրանք գտնվում են դյուղի մոտ և ունեն մի քարվանատուն, մի մզկիթ, մի բաղնիք ու մի շերիմ, բոլորն էլ կառուցված նուրը սպիտակ քարից, և այնպիսի վարպետությամբ, վոր արժանի են լավագույն գործերի: Քարվանատան նման կառուցվածքների ձևն ունի, քառակուսի և արևելքից մի մուտքով: Բակի շուրջը շինված են փոքրիկ սենյակներ, բոլորն էլ կամարակապ հիանալի վաճով: Կան նմանապես երկու նկուղներ, հիասքան երկար և քառասուն լայն, ձմեռնապարհորդների կենդանիների համար: Քառակուսի կենտրոնում կա կամարակապ մի ոթյակ, հավանորեն շինված ամառվան տաք որերի համար, վորպես մի զով անկյուն: Թեև շենքի շատ մասերը փլչում են, սակայն քարվանատան կարելի չէ համարել ընդհանրապես լավ պահպանված: Մզկիթը գտնվում է աջ կողմը: Նրա մուտքը մի բակ է, վորտեղից մի նկուղը առաջնորդում է դեպի գլխավոր սրահը, ուր քարե մի բեմ կա: Թեև գմբեթը ծածկված է խոտով, և մինարեթի վերին մասը վլած է, [սակայն] գլխավոր կառուցվածքը տակավին կանգուն է, և նրա գեղեցիկ շինանյութերը, նրա հիանալի քարակոփությունը, շատ աչքառու կերպով նշմարվում են երկաք շենքերի մեջ: Քարվանատան մոտ գտնվում է բաղնիքը, և մյուս կողմը մի շենքի մնացորդը, վորի ինչ բան հատկացված լինելը չես կարողացա առուգել: Գրեթե քարվանատան դիմացը գտնվում է մի տեսակ կլոր խորան, հավանորեն մի շերիմ, շրջապատված մի շուրջանակի պատով, վորի մուտքը արաբական ճարտարապետությամբ է կառուցված: Համալի դրսի կողմը ունի մի արձանագրություն: Փոքրիկ շենքը նեղսից փոքրիկ պերանններից մի առատատ ունի, նման երկրումի շատ շենքերի: Ներսը կամարակապ է, փոքր բաղկված են շատ զարդանկարներ և ներքևում կա սովորական մի սենյակ: Բակը ծածկված է կտորտանքներով, վոր թեպետև տալիս թե նախապես ծածկված եր: Շուրջը կան բաղմաթիվ գերեզմանաքարեր քուֆի (cufic) տառերի[6] արձանագրություններով:

Այս պանդոկի շենքերի կառուցման մասին ժողովրդական պատմվածքը հետևյալն է. — Մի հարուստ թուրք սիրահարվել եր այս գյուղի մի հայ կնոջ, և վորովհետև նա կասկածում եր նրա սիրո անկեղծության մասին, ամուսնանալու համաձայնություն տալուց առաջ, նա պահանջից վոր ապացուցց տա նրա ծննդավայրում կառուցանելով մի քարվանսարա, մի մզկիթ և այլն: Թուրքը անմիջապես ընդունից պայմանները, և ապացուցանելու համար թե իր սերը հավասար եր իր հարստության, բարձրացրեց այս շենքերը և նրանց տվեց նրա անունը Մամա Խաթուն: Ժողովուրդը ավելացնում է թե քարվանսարայի մի անկյունում մի դանձ կա թաղված, վոր մի արձանագրության համաձայն, սահմանված է ամբողջի վերակառուցման համար, նորից շինքերի քանդումից հետո:

Ամսի 24-ին մեկնեցինք դեպի Կարա-Բուլաղ (Kara Colagh), վոր համարվում է տասներկու ժամվան ճանապարհ, մինչ մենք կարողացանք տասը ժամում, վորը կարելի չէ համարել երեսուն երկու մղոն:....Մոտ քսան մղոն ճանապարհորդելուց հետո հասանք մի մեծ, բայց կատարելապես ամայի, գյուղ, Մոս (Moss) անունով: Մի որ առաջ բնակիչները քրդերի

հալածանքից փախել հին լեռները։ Նրա մոտ կան շատ հին պերեզմաններ, որոնց մի մասը քրիստոնեաններին և, որ բոլոր ժամանակ պարզ նշաններ կան։ Մեկը ունի հայերեն արձանագրություն։ Այստեղ ու այնտեղ իրար վրա տարածված քարի դեզեր կան։ Գյուղի մյուս կողմը գտնվում է Փեքեսիջ (Pekesidge), մի ավան, որ կոնաձև մի բլրի գլխին ունի մի ամրոց։ Սա գտնվում է Ակ Կալեյից (Ak Caléh) կ. Պոլիս տանող գլխավոր ճանապարհի վրա, Շողոմ Դերեի (Shoghoum Daréh) անցքից, որ գրավել են քուրդերը։ Սրանից հետո Ակ Դոհան (Ak Doghan) գյուղն է, և ապա Կիսմիսոր (Kismisore), բայց ջերմուկն էլ լքված։ Սակայն մշակությունը շատ առատ է։

Կարա Բուլաղ մի մեծ գյուղ է և Մելիզիլ խանին այնտեղ է։ Շրջակա լեռները տակավին հանքային ջերմուկ ունեն... [Այնուհետև մեր ուղեկիրը գնում է Զիֆլիք (Chiflic), Քարաջա (Caraja), Կարահիսար (Carahissar), Իսկեր սու (Isker Sou), Նիկսար (Nikser) և հուլիսի 5-ին ժամանում է Թոքաթ (Tocat) քաղաքը, որ հարուստ է պղնձի հանքերով և պղնձյա ամանեղենի արդյունաբերությունը շատ զարգացած է այստեղ։ Նա գրում է. «Ասում են թե քաղաքը պարունակում է մոտ քսան հազար տուն, կամ հարյուր հազար բնակիչ։ Հայ վաճառականները մեզ դանդաղեցրին առևտրի չափազանց անկման համար, և մանավորապես այն առևտուրին, որ կապված է հանքերի հետ։ Այս հանքերը, որ գտնվում են Քեբբանում (Kebban), Թոքաթից ութ որվան ճանապարհ հեռու, և ավելի մոտ Մալաթիայի քան ուրիշ որևէ այլ քաղաքի, (բայց արծաթից, որ ուղարկվում է կ. Պոլիս), արտադրում են տարեկան հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար օկա պղինձ։ Պղնձի հետ կապված գործերը, և որոնց համար չերեք հարյուր արհեստանոցներ կան, մեկ մասնավոր արդյունաբերությունն, և որի համար քաղաքը նշանավոր է։ Այս տեղից պղնձե ամանեղեններ ուղարկվում են Թուրքիայի բոլոր մասերը»։ Հուլիսի 7-ին Մր. Մորիեր մեկնում է Թոքաթից և իր ճանապարհը շարունակում ու ժամանում նույն որը Թուրխալ (Turkal) և հաջորդ որը Ամասիա։ Ցեղ ապա Ամասիայից կ. Պոլիս նա գնում է տասը որում, ուր վերջանում է իր ուղեգրությունը հետևյալ ակնարկով. «1809 հուլիս 18-ին ես Սկյուտարից անցա Պերա լրացնելով իմ ճանապարհորդությունը Թեհրանից՝ չերկու ամիս և տասը որում, որ ժամանակում ես միշտ գնել եմ առանց հանգելու իմ հագուստը»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եր լրտեմբ գտնվում է մի բարձր գագաթում 6.250 ոտք բարձր ծովի մակերևույթից։ Մինչ շրջակա լեռները 10.000 ոտք բարձր են։ Գաշտը 30 մղոն չերկար է և 12 մղոն լայն։ Գաղաքը նրա արևելքը բարձրանում է Գեվի Բոյնու (Ուզուն վիզ) լեռը, որի վրայից է անցնում կարսի ճանապարհը։ Հարավակողմը գտնվում է Փալան-Դյուրան շղթան, որից բղխում են քաղաքի վտակներ և չուր են հայթայթում քաղաքին։ Գաշտում հյուսիսից անցնում է Կարա-սուն՝ երկրամբ գտնվելով Արևելքի առևտրական գլխավոր ճանապարհի վրա, անցյալում չեղել է շատ կարևոր կենտրոն։ Գա հայկական հին Կարին քաղաքն է, ե. գարում Բյուզանդական Թեոդոսիոպոլիս կամ Թեոդուպոլիս։ 628 թ. հերակլ Պարսկաստան արշաված ժամանակ նորոգել տվավ քաղաքի պարիսպները։ 674 թ. արաբները գրավեցին և մի դար ձեռք նրանց ձեռքում։ Ապա Բյուզանդիան կրկին տեր դարձավ երկրամբին և այդ ժամանակից սկսած է կոչվել Արզ-ի-ռում կամ Երզռում կամ Աբզեն-ել-Ռում, այսինքն Արզն հունաց, հույների չերկիրը, դանդեզի համար մյուս Արզնեն, որ Դուզրիլը գրավեց և ավերակ դարձրեց ժ. դարի սկիզբներում Վրաստանի Թամար թագուհու զորքերն և Իվանե զորավարները գրավեցին երկրամբը։ Սելջուկները գրավեցին 1201 թ. և սամանցիները տեր գարձան 1517 թվին և այնուհետև ձեռք Ռուսները գրավել են երկրամբը ժամանակավորապես 1829 թ., 1878 թ. 1916 թ. փետրվարի 16-ին (Տես, Հակոբյան, «Ուղեգրություններ», Ա. Հատ. եջ 50, ծանոթ. 2.)։

2. Յենիչերի կոչվում էին քրիստոնյա մանուկներից կազմված սուլթանական հատուկ զորամասի զինվորները։ Առաջին կազմակերպություն կատարված է սամանյան Եմիր Մուրատ Ա-ի ժամանակ (1359—1389)։ Նրանք ենթակա էին կարգապահական խիստ օրենքների։ Սկզբնական շրջանում նրանց արգելված էր ամուսնանալ, բայց ժ-ջ. գարում չերբ ամուսնանա-

յու իրավունք ստացան, նրանց վորդիները չկին կարող յենիչերի դառնալ։ Յերկաք դարի ընթացքում ավելի քան 500.000 բրիտանյա մանուկներ առնված են յենիչերիների մեջ։ Սրանք պատկանում եյին Բեկդաշի դերվիշների ուխտին և կրում եյին այդ դերվիշների նման յերկար սպիտակ թաղիքյա գլխարկ։ Յենիչերիների թիվը սկզբնական շրջանում հազարից ավելի չեր։ Կ. Պոլսի գրավման ժամանակ (1453 թ.) տասնյակ հազարի բարձրացած եր նրանց թիվը և ժ.Զ. դարում քառասունից հինսուն հազար։ Նրանք այնուհետև սուլթանների անկման շրջանում վերածվեցան զորավոր դասակարգի, որ կազմակերպում եյին պետական դանձի, թալանի եյին մատնում իշխող դասակարգի ներկայացուցիչների բնակարանները, ըստ կամենում իրենց պահանջները սուլթանին պարտադրում եր մեծ դումարներ վճարել յենիչերիներին, և այդ դումարը վեց միլիոն վոսկի ռուբլուց հասնում եր մինչև յերեսուն միլիոն վոսկի ռուբլու։ Մուստաֆա Ա. և Սման Բ. յերեք ամսվա ընթացքում յերեք միլիոն վոսկի դուրս վճարեցին յենիչերիներին, ժամանակավորապես վերջ տալու համար նրանց ըմբոստացմանը։ Վերջին շրջանում յենիչերիները ընդհանրապես չէին զորանոցները կողմնակից ու պաշտպան եյին։ 1826 թ. հունիսին սուլթան Մահմուդ Բ. ընդմիշտ յենիչերիներին, նրանցից վերապրողները վոչ վորպես իրենց զորանոցում

3. Երզրում այժմ ըստ վերջին վիճակագրության (1927 թ.) ունի 77.966 բնակիչ ամբողջությամբ գրեթե թուրք։ Վերջին իմպերիալիստական պատերազմից հետո այլևս հայեր չկան այս քաղաքում։ Ըստ ինքնության ժ.Զ. դարում կատարված մարդահամարով Երզրումում կային 90 000 տուն թուրք և 10.000 հայ. անկասկած անճշտությամբ տուն գրված եր։ Անցյալ դարում Բարունակ Ֆերուհանի իր կատարած ճանապարհորդության մեջ (1847 թ.) այս քաղաքի բնակչության թիվը պաշտոնական աղբյուրներից առնելով տալիս և հետևյալը.—

Մահմեդական և պաշտիկ	9350	տուն	57.100 հոգի
Հայ լուսավորչական	1300	»	6,950 »
Հայ կաթոլիկ	290	»	600 »
Հայ բողոքական	25	»	150 »
Հուն	35	»	200 »
Բոլոր	60	»	400 »
			64.500 »

Ըստ Գ. Բինեյի.— Գումար 11.060 » 26.564 անձ

Մահմեդական		
Հայ լուսավորչական	9422	
Հայ կաթոլիկ	717	10.435 »
Հայ բողոքական	296	

Հուն		484 »
Այլը և ոտարահպատակներ		1.423 »
Ընդամենը		38. 66 »

9

1853—1856 տարիների ընթացքում պաշտոնապես հավաքված տեղեկություններով Երզրումն ուներ 60.000 բնակիչ, վորից 10.300 հայ լուսավորչական, 500 հայ կաթոլիկ, 180 հուն, 10 հրեա և 100-ից ավելի յեվրոպացի, հիմնականում թուրք, քուրդ ու պարսիկ։

1829 թվին, յերբ ռուսները հետևում եյին Երզրումից, 4000 տուն հայ խմբովին գաղթեցին Անդրկովկաս կարապետ յեպիսկոպոսի առաջնորդությամբ։

4. Իլիջա, Իլիջն, նշանակում և տաք աղբյուր, հարյուր տուն բնակիչ ունեցող մի գյուղ. Երզրումի հյուսիսային արևմտյան կողմը, յերեք ժամվա ճանապարհ հեռու։ Դանդում և Թավրիզ-Տրապիզոն և Թավրիզ կ. Պոլիս կարավանի հին ճանապարհի վրա։ Հանքային տաք ջրի յերեք աղբյուրները կան, վորոնք ոգտագործվում են։ Ընդհանրապես թե հին և թե նոր ուղղությունները հիշատակում են Իլիջան։ 1914 թ.-ի պատերազմից առաջ 50 տուն հայեր կային այնտեղ։

5. Դելի, բառացի նշանակում է խենթ, իսկ այստեղ Դելիներ, այն զորամասին և ականարկում, վոր մաս եր կազմում Երքական ֆեոդալական բանակին։ Նրանք ընդհանրապես հետախույզներ եյին ակինջիների նման գնում եյին բանակից առաջ և թալանի ու կոտորածի եյին մատնում ճանապարհները։

6. Քուֆի (Cufic) արաբական գրության մի ձև։

7. Փևքևանջ. հավանորեն Բագաուչն է բնագրում r տառի տեղ տպագրված է s։ Տես, «Աշխարհագրություններ», Ա. հատոր, եջ 118 ծանոթ. 4։



ՅԵՐԿՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

ԹԱՎՐԻԶԻՑ ՅԵՐԵՎԱՆ *

Պարսից թագավորի դեսպանը Թեհրան վերադարձավ անգլիական դեսպանի վերադարձից քիչ հետո, և իր հետ բերից ռուսների հետ կնքված դաշնագրության նախնական պայմանները[1]: Դաշնագիրը գրված եր սովորական ձևով, միայն այնքան նվազ արհեստյան ներհակությամբ ու պճնազարդուժով, վորքան թուլլատրելի չե պարսկերեն վոճին: Ուռուջարանում, ուր չերկու կողմերի լիազորների աստիճանները հիշատակվում են, գեներալ Ռտիշեվ (Rtischeff) Ռուսաստանի կողմից, բացի վորպես ընդհանուր հրամանատար Վրաստանի, հիշատակված եր նաև վորպես ասպետ շատ աստիճանների, վոր հակառակ այդ մանրամասնությունները պարսկերենով հասկանալի դարձնելու դժվարության, գրված եր ընդարձակորեն: Սակայն, Պարսկաստանի լիազորը ասպետության աստիճանները չունենալով, իր ախտղոանները ավելի նվազ եյին վերևում քան ռուսականինը. սկզբում նա, [Պարսկաստանի լիազորը], շփոթվել եր և չեր իմանում ինչպես իր անձնական նշանակությունը հավասարեցնի մյուս կողմի բանակցողին, բայց հիշելով վոր իր մեկնումից առաջ իր վեհապետը պատվել եր իրեն նվիրելով իր սուրերից մեկը, և գոնարազարդված մի դաշույն, վոր կրելը մասնավոր պատիվ և Պարսկաստանում, և բացի նրան հագցրել եր իր շալ վերարկու-

* Morier, Հատ. Բ. գլ. XX, եջ 299 — 317:

ներից մեկը, տակավին ավելի արժեքավոր մի պատիվ այնպես վոր նա պաշտպրութիյան առաջարանում ինքնին հիշատակել եր. «Մխաիել հատուկ նվիրով պատված, տեր պահպանող պաշտպան, թանգագին քարերով զարդարված սուրի և ոսկեճ հագնված ազդ վեզիրի»...

Այս պաշտպրութիյամբ չորիւ կայսրութիյունների սահմանը սկսում եր Ադինե Բազարի (Adineh Bazar) պաշտից և չորկարաձգվում և ուղիղ Մուղանի անապատից մինչև Յեղիբոլուքի (Yebiboluk) արևմուտք, Արաքս գետի վրա, և ապա այդ գետի ամենամերձն հյուսիսային ափերից մինչև կապանակ չայի (Kapanek chai) միացումը, Մեղրիի բերի լեռներքին, կապանակ չայի աջ ափից Ղարաբաղի ու Նախիջևանի սահմանները գծված են Փամբակ և Արագած լեռների կատարներից։ Սահմանագիծը ապա շարունակվում և Փամբակ լեռներից Շուրագիլի (Shuragil) սահմանի անկյունը, ապա ձյունապատ լեռներից անցնելով Աքեդից (Aked), Շիրակի ծայրամասի և Միստերա (Mistera) [Մաստարա] գյուղի մոտ, հասնում և Արփաչայը։

Վերջնական հաշտութիյունը կնքելու համար անհրաժեշտ եր վոր մի դեսպանութիյուն ուղարկվեր Ռուսաստանի կայսր, և Միրզա Աբուլ Հասան խանը նորից նշանակվեց՝ հետ կայացնելու նորին պարսկական վեհափառութիյունը, և հետևաբար նա անվանվեց արտակարգ դեսպան ու լիազոր։ Իր հաճելի ու հաշտարար բնավորութիյամբ, և շնորհիվ այն իրողութիյան, վոր նա յեվրոպական կերպերին ծանոթացել եր Անգլիա իր կատարած առաքելութիյան առթիվ, նա շահել եր վրաստանի ռուսների բարեկամութիյունը, և այս պարագան շատ մեծ կշիռ ուներ նրա ընտրութիյան մեջ, միաժամանակ Շահն փափագն եր իր բարեկամութիյունը ընդունելի դարձնել [Ռուսաստանի] կայսեր։

Մեծ պատրաստութիյուններ տեսնվեցին այս դեսպանութիյան տպավորիչ դիրք տալու համար։ Դեսպանին արամադրվեց տասնավորների մի մեծ խումբ, վորոնց հագուստներով և ամեն տեսակ ճոխ առարկաներով կայսեր համար



Ջեհելիմ Ղարիբ. Շահ Աբբաս (Ներս Ղուլի) Շահսեվեն ցեղախումբ

ամեն կողմից նվերներ հավաքվեցին։ Արաբական ձիեր, եվրոպական սարուկներ, մարգարիտներ՝ Բահրեյնից (Bahrein), շալեր՝ Կաշմիրից, դիպակներ ու մետաքսեղեններ՝ Սպահանից, կապում էին գլխավոր առարկաները, որոնց ավելացրին Հերաթից թագավորին նվեր ուղարկված երկու փիղերը։

Թագավորն [Շահը] անգլիական դեսպանին առաջարկեց Ռուսաստանի ճանապարհով վերադառնալ Անգլիա, պաշտպանելու համար նրա շահերը, և որովհետև նպատակահարմար չէր վոր երկու դեսպանները, իրենց բազմաթիվ հետևորդներովը, միասին ճանապարհորդեին այդ երկրից, Սըր Գոր Աուզլեյը, [անգլիական դեսպանը], նախ մեկնեց, և երկու ամիս հետո նրան հետևեց պարսից դեսպանը։

Վճռված լինելով վոր ռուսական և պարսկական երկրների սահմանների մեր գործերի վարչությունը հանձնվի ինձ, ես ընկերացա նորին գերազանցության, և մենք թավրիզ հասանք 1814 թ. մայիսի 18-ին, և վերջացնելով մեր այն տեղի գործերը, 26-ի առավոտ վերատին ճամբա ելանք։

Աղբի երկար կամուրջը անցնելուց հետո, փոխանակ հետևելու դեպի ձախ տանող ճանապարհին, վոր առաջնորդում է լճի եզերքները և Խոյ, մենք գնացինք դեպի հյուսիս, դեպի Սոֆիան, Մարանդ և այլն։ Ճանապարհի ձախ կողմը մենք կանդ առինք մի դյուղում, տասնչերեք մղոն հեռու Թավրիզից կոչվածՍալահան (Salahan), շրջապատված մեծ տարածությամբ հացահատիկի արտերով։ Ամբողջ դաշտը մինչև [Ուրմիայի] լիճը այնքան ազատ է, վոր յերբ չրվում է շատ խոր ցեխ է [գոյանում]։

Հաջորդ առավոտը տասնչերկու մղոն առաջ չերթալով, հասանք Սոֆիան, 400 տուն պարունակող մի մեծ դյուղ, վոր պատկանում է Միրզա Բոզուրկին (Mirza Bosurk) և գետեղված է յերկու լեռների սառոտում...։ Նրա մոտ սինջիտ (sinjid) ծառի մի յերկար պուրակ կա, վորի դույնն ու ընդհանուր յերևույթը ձիթենու չի նմանում։ Յերբ մոտենում եյինք, մեզ դիմավորեցին մոտավորապես հարյուր հետևն զինվոր, մարզված յեվրոպական յեղանակով, անգլիական հրացաններով (musket), վորոնք բարևեցին դեսպանին, յերբ նա անցնում եր, և շարունակեցին քայլել ու թնդրակահարել մինչև վոր նա մտավ իր վրանը, յերբ նրանք դիզեցին իրենց զենքերը և հսկողություն կատարեցին ամբարի շուրջը, որվան ներկայիս ժամերին և հաջորդ գիշերը։

Ամսի 28-ին հասանք Մարանդ, 17 մղոնի հեռավորության։ Մենք ճանապարհորդեցինք մի նեղ ձորից, ուր մի կարպ տեղեր ճահճային են, մինչև մեր առաջ տարածվեց մի արոտավայր կամ չիմեն (chemen), վորի կենտրոնում կանգնած և մի քարվանսարա։ Այս չիմանի մի կողմում բարձրանում է մի լեռ, վորի կատարին, տեղ տեղ ցցված են քարաժայռեր. այստեղ Իշխանի ամարանոցներից մեկն է, Առաջ արոտը հատկացված եր տարամերժորեն նրա տավարի ու ձիերի համար։ Այս տեղից հանկարծակի դարձանք դեպի աջ, դեպի Մարանդի կանաչազարդ գեղեցիկ հովիտը, ծածկված դյուղերով և ամենուրեք փարթամորեն մշակված։ Դեսպանին դիմավորեց կառավարիչ Նեզեր Ալի Խան (Nezer Ali Khan), վորին հետևում եյին մոտ մի հարյուր լավ հեծելազոր, և յերբ մոտեցանք քաղաքին, կրկին նորից պարտավորվեցինք հետևել հետևակների մի մեծ խմբի մինչև մեր իջևանը։ Այս մարդիկ վատ զինվորներ չեյին, վորովհետև նրանք լավ եյին քայլում շարքով, նրանք կրում եյին կանաչ կտորի պենջակ (jacket) և կարմիր ոձիք (facings)։ Թվում եր թե նրանք իրենց զենքերը փայլուն և լավ վիճակում եյին պահում։ Նրանցից մի խումբ հատկացված եր նախորդ որվա նման հսկելու մեր վրաններին։

Մարանդ մի մեծ հետաքրքիր գյուղ է, վորի մի կողմում բլրի վրա գտնվում է մի բերդ։ Շարդենի ժամանակից ի վեր չափազանց նվազած է, վորովհետև յերբ նա անցնում եր այնտեղից 2500 տուն ուներ, այժմ հազիվ թե 500 ունի։ Այդ գատարկ տեղեկությունը թե Նոյի մոր հանգստարանը այնտեղ է, տեղի տվավ վոր մենք գնայինք այդ վայրը, ուր գտանք յերկու տգետ մոլլա (Mollah), վորոնք մեզ տա-

բին՝ մի մղկիթի անկյուն, և ասին թե ավանդութիւնը ասում է թե այստեղ է, բայց թե ինչ հիմնավորութեամբ, չեմին կարող ասել։ Հետո, նրանք ցույց տվին մի մեծ շենք, որի կառուցվածքի ծայրահեղ սակուռնութիւնը ցույց էր տալիս թե նա ներկայից ավելի բարդավաճ մի շրջանի գործ էր։ Դա ունի բազմաթիվ գմբեթներ, և յուրաքանչյուր գմբեթ հանգչում է հսկա մեծութիւնամբ քառակուսի սյուների վրա։ Նրա վորմնախորշներից մեկում կա զարդանկարված մի ճակատ, որ չափերի նման և քրիստոնեական խորանի, քան վորևե մահմեդական բանի, և սա հաստատում է այն պատմվածքը թե այդ վայրը նախապես հայկական ազոթավայր է եղել։

Հաջորդ որը առաջացանք դաշտի եզերքից դեպի լեռների զառիթափի վերջավորութեան գետեղված մի գեղեցիկ գյուղ՝ Խոսֆ Սերայի, (Khoshk Serai) որի վերևում կա կոնաձև զարմանալի մի քարաժայռ, ... որը տեղացիները անվանում են Քեչ խալեսի* (Ketch calehsi) կամ Այծերի լեռը, որովհետև ասում են թե միայն այծերը կարող են մագլցել այնտեղ։

Ամսի 30-ին լեռների կրծքից գնացինք Զենջիրե (Zenjireh), գեղեցիկ մի գյուղ, նկարագեղ ձևերով քարքարոտ մի բարձրավանդակում։ Հիրավի, այստեղ լեռները այնպիսի հրաբխային ու լերկ տեսութիւն չունեն, ինչպես ամբողջ Պարսկաստանում։ Մինչև գագաթը նրանք կանաչ են, և գիշերվա խիտ մեղասարսափ անձրևը ավել էր նրանց թարմութիւն մի տեսութիւն, կրկնակի գեղեցիկ, տերը տեղ տեղ բաժանվում էին դանդաղաթին ժայռերով կամ կարմիր հողի լայն շերտով։

Ամսի 31-ին մեկնեցինք այս գաշտից և վայրի ու կոպիտ լեռների միջից ուղղվեցինք դեպի Վալղիան (Valdian) գյուղը, որի վերքը կատարելապես գեղեցիկ է։ Զենջիրեից վեց և տեսնք քառորդ մղոն այն կողմ մեր աչքին պարզվեց Աբարաքը։...

* Գեաք և լինի թեզևս Գեչի բեղեսի, այծի գլուխը, կամ ավելի հիմնական Գեչի կալեսի, որը նշանակում է այծի բերդը։



Վերակառուցված տեսք Զենջիրեի կիրճում

Յերկրի այս մասում առատ և վայրի խոզ, և այնքան շատ վոր իշխանը վերջերս բաց դաշտում վոտորդական մի պրոտանքի [ժամանակ] սպանել եր տասնութը հատ։ Գյուղացիները ուր վոր տեսնեն նրանց, վոչնչացնում են՝ պաշտպանելու համար իրենց ցորենի ու բամբակի դաշտերը, բայց չեն ուտում։...

Հունիսի 1-ին ճանապարհորդիկինք շարունակաբար լեռների միջից մինչև վոր աստիճանաբար իջանք Մուլե հովիտը, վոր իր մշակութեյան հարստութեյամբ, ջրով, արոտավայրով ու բնակչութեյամբ հավանորեն գերազանցում է նույնքան տարածութեյամբ վորևե տեղ Պարսկաստանում և թե ուրիշ վորևե յերկրում։ Գրեթե ձվաձև է, մոտ տասնհինգ մղոն յերկար և տասը մղոն լայն, և շրջապատված է լեռներով, թեև, ինչպես սովորաբար, զարդարված չէ անտառներով, սակայն գեղեցիկ է իր ձևովը ու հեռավորութեյամբը։ Արտադրում է մեծ քանակութեյամբ հացահատիկ, բացի բամբակից ու բրնձից։ Հողը այնքան կարծր է, վոր յերբեմն պահանջում է նույնիսկ տասը զույգ գոմեշ քաշելու համար արորը։ Յերբ վարում են, յերկու յերեք հոգի նստում են լծերի վրա, գրգռելու համար կենդանիներին մի բարձրաձայն յերգով, վոր առավոտյան լուռթյան մեջ շատ հաճելի է լսել։ Նրանից արորը ավելի մեքենայացված է այստեղ քան հարավային Պարսկաստանում, և ավելի լավ է վարում հողը։ Մեր նկատած հունձքը ավելի խիտ եր ու ավելի լավ քան [Պարսկաստանի] այլ մասերում, վոր անտարակույս մասամբ շնորհիվ այս գործիքին է, վորոշ աստիճանով շնորհիվ առատ ջրին, վորով ոժտված է այս հովիտը։

Գյուղերի բնակչութեյան մեծագույն մասը հայ է, ևպես գյուղերից մեկից անցնելիս, տեսանք մի տան կառուցին յերկու ցողերի մեջ կախված մի տախտակ։ Դա զանգակի փոխարեն է, վոր յերբ զարնում են, լսվում է հեռվից և հրավիրում խեղճ մարդկանց աղոթքի։

Քաղաքի պարիսպների մոտ զարկին մեր վրաններըվորտեղ հանդիպեցինք առաջ, նորից մեզ վողջունեցին կարմիր հագած զինվորները։ Այստեղ կառավարում է Ֆաթտե Ալի Խան (Fatteh Ali Khan) Ռեիզ Սեֆիդ (Reish Sefid) կամ կաչաղ ցեղի ավագը, վոր արքայական կապակցութեյան պատվակով նա չուզեց զինավորել դեսպանին, և նույնիսկ առաջին այցելութեյունը տալ։ Սակայն, յերեկոյան կողմ նա ուղարկեց մի ափսե հաղարուկ, յերկու ափսե անուշեղեն, մի քիչ ծաղիկ և գեղեցիկ խոսքեր, վորոնք բոլորն էլ մեծ ժեշտով նորին գերազանցութեյունը, նրա անբացատրելի վերաբերմունքին պատասխանով։

Փորձեր են կատարվել ամբացնելու համար Մուլը, գիննբալ Պարսկանի սպանների պատրաստած պլանի համաձայն։ Դա մեծ դժամարներ և արժել իշխանին, ավելի աշխատանքի ու ղրծածված շինանյութի քերութեյան, քան ուրիշ պատճառով։ Նա [Արրաս Միրզան] վճռել և այժմ ամրոզջացնել ամրութեյունները, և այնտեղ դուռնը մի քանի հարյուր բանվորներ, վորոնք աշխատում էին Միրզա Բաուքըր (Mirza Bauker) անունով մի յերևելի պարսիկի ղեկավարութեյամբ, վոր Ֆրանսացի ու անգլիացի սպաներից անկասկած



Քեղե Միհար, (նկար Զեյմս Մորիերի)։

կերպով ձեռք է բերել մի քիչ ճարտարապետական գիտելիքներ։

Յերեկոյան ձիավարեցինք՝ տեսնելու համար Քեվե Մինարը (գանկերի սյուներ), որոնք Շահ Իսմայիլի մի արտակարգ վորսորդության հիշատակություններն են, վոր ասում են թե մի որ սպանել եր բազմաթիվ վայրի յեզների և նրանց գլուխները ու կոտոշները շարել եր աղյուսե յերկու սյուների շուրջը։ Ավելի թերահավատները հաստատում են, թե այս գլուխները արդյունք են մի տարվան վորսորդության, վոր յես ավելի հավանական եմ գտնում։...

Խոյից առաջանալով հինգ ժամն, մի դաշտի ծայրում, հասանք Փարսչի (Parschee) գյուղը, զետեղված մի գեղեցիկ հարթ մարգագետնում։ Յեվ վորովհետև ավելի մոտ գյուղ չկար մինչև վեց փարսախ..., մենք ստիպված եյինք իջևանել այստեղ։...

Դեսպանը հասկանալի կերպով իմաց եր տվել Խոյի կառավարչին, իր գգացումը նրա անքաթաքավարության վերաբերմամբ, և սրա հետևանքը շուտով արտահայտվեց գյուղի մարդկանց ընթացքով։ Փարսչիլի քեդխուդան (գյուղապետը) մերժեց մեր մեհմանդար Յուսուֆ խանի պահանջը՝ մեր ճամբարի (camp) դիշերային սովորական պահակները [տալու] համար։ Պատահաբար իմ վրանը գտնվում եր մեհմանդարի [վրանի] մոտ, վոր ինձ արթուն եր պահում՝ իր վեճով քեդխուդայի հետ, և յես կարող եյի յերբեմն յերբեմն լսել յերկու կողմերի վիճաբանությունը։ Մեհմանդարը առաջ եր քշում Իշխանի հեղինակությունը, իսկ քեդխուդան՝ կառավարչինը։ Առաջինը բացատրում եր. «Յես ունեմ Իշխանի ֆերմանը, վոր յեթե դնեմ մի ժայռի վրա, այդ ժայռը վախից ջրի կը փոխվի. ոչ կարող և դրա դեմ մի բան ասել»։ «Բայց կառավարիչը այլ հրաման և տվել», ասում եր մյուսը։ Ապա, մյուսը. «կառավարիչը Գո խորդ (Goh Khord)», վորին նա ավելացնում եր սովորական նախատինքի համարակ տեղի արտահայտություններ կառավարչի ընտանիքի հասցեին. — Նրա հորը, մորը, կնոջ, աղջիկներին և այլն,

վորոնք գազազած մի պարսիկի սովորական զեղումներն են։ Վիճաբանությունը վերջ գտավ, յերբ քեդխուդան և կառավարչի սպասավորներից մեկը ընդունեցին կռուվի խիստ հարվածներ, վորի անմիջական հետևանքն յեղավ պահանջված պահակների հայթհայթումը։

Հաջորդ որը գնացինք խանաֆա[2] (Khanáka), քսան մղոն հեռու։ Մեր ճանապարհը անցնում եր մի լեռնային հողամասից, վորի մի մասը քարքարոտ եր։ Նախ մենք գնացինք արևմտյան հյուսիս՝ Չհել խոնե (Chehel khoneh) կոչված լեռան ստորոտը, և ապա աստիճանաբար փոխեցինք մեր ուղղությունը դեպի արևելյան հյուսիս։...

Խանաքա նշանակում է ճգնարան, (a place of religious retirement), և մեզ ասին թե տակավին ճնում են այն սրբի խուցի ճնացորդները, վորի անունով կոչվում է գյուղը։ Շրջակայքի գլխավոր վայրն է Խորս (Chors), մեր ճամբարից մեկ ու կես մղոն հեռու։ Յերեկոյան մենք ձիավարեցինք այդ վայրը, հրապուրված հնությունների մասին զարմանալի պատմվածքներից։ Խորս հայկական գլխավոր վայրն եր, յերբ այդ ժողովուրդը ծաղկում եր այս մասերում, և նրա անկումից ծագում առավ Խոյը։ Տակավին տեսնվում են յեկեղեցիներն և ուրիշ հայկական հատատատությունները, բայց այնքան արագ և կատարվել այս ժողովրդի ցրվումն ու անկումը, վոր այնտեղ միայն մահմեդականներն են բնակում, և այն էլ բաղդատմամբ տարածության՝ նրանց թիվը շատ քիչ է։ Նրանից դեպի արևելք բարձրանում են յերկու սպիտակ հերձաքարի զանգվածներ, վորոնց վրա ամրություններ ընդարձակ ավերակներ կան, վորոնք շատ ավելի լավ են իրենց կառուցվածքով, քան ներկայի [ամրությունները], բայց նրանք այնքան հին չեն, վորքան բնիկները ուզում են ցույց տալ։ Քարե մի լավ անդուլ առաջնորդում է դեպի մի քարե դուռ, վորի վրա պարսկերեն մի արձանագրություն կա, վոր հայտնում է, թե այս զանգվածները իրենց ձևովը ու պարիսպներովը արտասովոր են, ... և նրանց ստորոտում տարածվում են բազմաթիվ ծառեր ու մշակված

դաշտեր, և այստեղ ու այնտեղ գյուղացիների հոգե հյուղակներ։ Ամրոսում, ինչպես նաև մեր անցած բոլոր գյուղերում, գյուղացիները դուրս եկին գալիս ճանապարհի վրա՝ նվիրելու իրենց գյուղը դեսպանին, ասելով. «Այս գյուղը ձերն է և մենք ձեր սարուկներն ենք»։

Հունիսի 4-ին մենք հասանք Նազիկ (Nazik), և մինչև այնտեղ մեզ ընկերացավ Ամրոսի հաքիմը (կառավարիչը), բավական բանիմաց մի մարդ, որ ի միջի այլոց մեզ ասաց թե ինք ուսումնասիրել և նվբլիկոս։

Մեկնելով Ամանաթլից մտանք մի բարերիր հովիտ, վոսպված մի սուտ գետակով, Ջայ Փերե (Chai Pereh) անունով և վոր հոսում է Կարա Զիադին (Kara Ziadin) անունով հայկական մի գյուղի մոտից։ Բնակիչները այստեղ նույնպես դուրս եկան իրենց տները նվիրելու համար դեսպանին։ Ճանապարհն ձախ կողմում կային ձիերու կամ ձիերք մեծ գյուղեր։ Ձերը մենք մոտեցանք Նազիկին, մի փառավոր տեսարան բացվեց մեր առաջ, վորովհետև տեսանք լայն ծավալով Araxenii campi (Արաքսի դաշտը), այնքան նշանավոր իր բարերերությամբ, վորի մեջից մենք նշմարում էլինք Արաքսի վոլորապտույտ անցքը։ Մի հեռավոր ծովցույց եր տալիս Նախիջևանի ճիշտ տեղը, մինչ ձյունապատ լեռների հետևում մի շղթա՝ տարածված կիսաշրջանաձև արևմուտքից արևելք, լրացնում եր տեսարանը։

Այս լեռները կոչված՝ Կափան դաղի, (ավելի հավանական Կաիլան դաղ կամ վագրի լեռ)[Ղափան], բաժանում և այս շրջանը Ղարաբաղից և Մողրիից։ Ներանցից այս կողմ մի նշանավոր քարաժայռ կամ լեռ աչքի չի ընկնում, իսկ դաղ կամ ձի լեռը անունով, վորի մոտ բնակիչներն ասում են թե ամեն տարի բավական մեծ թվով ոձեր են հավաքվում, և բաժանված ձիերու բանակի, պատերազմում են, և դաշտում դիզվում են նրանց մեռելները։

Այս լեռան հյուսիսակողմը գտնվում և Ալանջիկ[3] (Alanjek) [Յերնջակ], բնական զորավոր մի դիրքի վրա դեռևս մի բերդ, ուր հաճախ բնակիչները ապաստան են գտել անիշխանության ժամանակ։ Դա հիշատակված և Թիմուրի կամ Լենկթիմուրի պատմության մեջ, վոր հրամայեց իր զորավար Միրզա Միրանչային (Mirza Miranchа) պաշարելու, բայց գրավման մասին հիշատակություն չկա*։ Հավանորեն սա հին Ոլանայի (Olana) վայրումն է, Արտաշատի մոտ, վոր բաժանում եր Սարաբոնի, Բաբերդայի հետ միասին Տիգրանի ու Արտավազդի պահնձի քաղաքն եր։ Մենք տեսանք նաև Արարատը,... և դեպի հարավակողմը լերևում էին շատ դեղեցիկ լեռներ, վորոնցից մեկը N. 69° W. ծածկված եր ձյունով, Սոքերի (Soker) շրջանում... Դումբելու (Dumbelu) ցեղը բնակում է այնտեղ, վորի ցեղապետն է Ջաֆեր Կուլի (Jafer Küli) խան, այժմ վրաստանում՝ ապաստան է գտել ռուսների մոտ։...

Յերկրի այս մասում քառասուն որից իվեր անձրև չի լինել և մեր վատ բախտից, մեր ժամանումի որը սկսեց անձրև տեղալ անդադար վորոտումով ու կայծակով։ Անձրևից ամբողջ գիշերը և այնպես թրջեց մեր վրանը, վոր փոխադրելու վիճակում չեր, և հետևաբար, մենք ստիպված էլինք [ամսի] 5-ին մնալու Նազիկում (Nazik)։...

Վերջին մեկնեցինք և հասանք մեր վրաններին, վոր զարնված էլին մեր արոտավայրում, Արքասապատի և Նախիջևանի (Nakhjuwan) միջև։ Նախ, մենք աստիճանաբար իջանք դեպի Արաքսը, և ապա մի ժամանակ, ճանապարհի դժվարության պատճառով ուղղվեցինք դեպի արևելք։ Նազիկից գրեթե չորք մղոն այն կողմ դարձանք դեպի ճանապարհի աջը, տեսնելու համար այն, վոր հեռվից նմանում եր մի ամրոցի, բայց դառնք վոր ոձև մի ժայռ եր։ Դա տեղում կոչվում է Կիզ-Կալե (Kiz-Caleh) և նախապես կարակոյունլու ցեղի սահմանապահն եր։ Գտնում ենք վոր այն բոլոր վայրերը, վոր իրենց բնական դիրքով անառիկ են, կոչվում են կիզ կամ կույս։

Արաքսի անցքը ամենամեծ դժվարությունն եր, վոր սպասնում եր դեսպանին և իր ընտանիքին Պարսկաստանից

* Chereffdin Ali, գիրք III, C, 62 թերթ. Petit de la Croix.

մեկնելուց իվեր։ Անդուսպ գետը ձմռան ընթացքում խորտակել եր նավակների կամուրջը, և Աբրասապատի անցքում վոչինչ չեր մնացել, բացի անհարմար կառուցվածքով մի նավակից։ Մեր անցքը դյուրացնելու համար, մեր մեկնումից առաջ, Թավրիզից մի անգլիացի արհեստավոր ուղարկված եր՝ նորոգելու համար կամուրջը կամ շինելու համար մի լաստ։ Նա այնքան քայքայված վիճակում եր գտել [կամուրջը], վոր ձեռնարկել եր կառուցելու մի նավակ, վոր մեր ժամանման գոհանք դրեթե ավարտված։ Դա քառասուն վոտք յերկար և տասնյերկու վոտք լայն հարթ հատակով մի նավակ եր, ունենալով յերկու ծայրերում կայմեր, վորոնց կապված եր, ունենալով յերկու ծայրերում կայմեր, վորոնց կապված եին պարաններ։ Գետի յերկու յեզերքում մարդիկ եյին կանգնել՝ քաշելու, և յերբ յերևացանք, գոհանք վոչ միայն անսահման թվով գյուղացիներ հավաքված ալակցելու համար մեր անցքին, այլ նաև լավ մարզված զինվորների մի յերկար շարք պատրաստ վոչնչելու դեսպանին, նրա ցամաք իջնելուն...

Աբրասապատի բերդը[4] կառուցել և Աբբաս Միրզան զեներալ Գարդանի հրամանատարության տակ գտնվող ֆրանսացի ճարտարապետների տված պլանին համաձայն։ Շատ զորավոր պիտի լիներ, յեթե միայն կառուցվածքը հավասար լիներ պլանին, բայց պարսիկներին հատուկ ճարտարապետական մի կարգադրության համաձայն, փոխանակ ամենածանր քարերը հիմքերի մեջ դնելու, դեռևս են կատարին, այնպես վոր ամեն տարի պատերի մեծ մասը վրնջում և, իջնում [Աբբաս Միրզային] անընդհատ ծախքի դուռ բանում։ Կենտրոնում կանգնած և մի հայ յեկեղեցի, ամենից աչքառու մի առարկա, վոր պարսիկները վերածել են վառոդի մթերանոցի։ Նրանք այնտեղ պահում են մի փոքրիկ պահեստ, և դանազան կալիբրի քսան թնդանոթներ դեռևս պահված են այնտեղ։

Մենք իջևանեցինք Աբրասապատից մոտ յերկու մղոն և Նախիջևանից վեց մղոն հեռու մի արուարձանում, մի փոքրիկ գետի յեզերքում, վոր բխում և արևելքից մոտ չորս փարսախ հեռու մի տեղից և թափվում և Արաքսի մեջ։ Շատ

ուշ յերեկոյան մեր բեռներն ու ձիերը անցան գետից, այնպես վոր հաջորդ որը մենք հարմիր կարող եյինք ճանապարհորդել մինչև Նախիջևան։ Այստեղ դեսպանին դիմավորեց Քերիմ խան, քաղաքի և շրջանի կառավարիչը, շատ հարգելի մի մարդ, վոր այնքան ուշադիր ու քաղաքավարի յեր մեր հանդեպ, վորքան անքաղաքավարի եր Մոյի կառավարիչը Նախիջևան[5], վոր ունի մոտավորապես 2000 բնակիչ, նույն անուն կրող շրջանի գլխավոր վայրն և, բաժանված փոքրիկ բաժանմունքների՝ Ալանջիք (Alanjek), Որդուբաթ և Ալիգեզ (Aligez)։ Այս շրջանի յեկամուտը ներկայումս հաշվում և տարեկան 2000 թումանի։ Քաղաքը յերկար ժամանակից իվեր քայքայված և և այժմ էլ շարունակում և քայքայվել։ Մանավորապես Աբրասապատի կառուցումից հետո։ Դատելով նրա դիրքից ու ընդհանուր յերևույթից մեծ նշաններ ունի հին քաղաք լինելուն։ Կառուցված և Արաքսի դաշտի վրա նայող մի բլուրի վրա. ունի լավ կլիմա ու լավ ջուր։ Նրա մահմեդական շրջանի հին մեծության շատ նշաններ տակավին տեսնվում են, սակայն այդ շրջանից առաջ մենք վորևե նշան չեյինք գտնում և վոչ էլ լսում այդ մասին։ Մի հայ քահանա, վոր ավելի գիտե ուներ իր գլխում քան իմաստություն, մեզ առաջնորդեց մի տեղ, վորնա անվանում եր Նոյի շիրիմը, ուր տեսանք արդիական աղյուսե մի պատ, և ուր նա իր [կրած] նեղության համար՝ ծիծաղելի լինելու գոհացումը ստացավ։ Շատ մահմեդական շենքեր մնում են քայքայված վիճակում, սրանցից մեծ մասը պատկված են արագիլի նկարուն բունով, և միակ ամենաուշքառու [շենքը] ծայրահեղորեն նուրբ կոմինարե կառուցվածքն և, վոր կոչվում և Ատթաբեկի (Atta-Beg) շիրիմը, նշանավոր Ուզուն Հասանի վեզիրը։

Յերբ մենք անցնում եյինք դաշտից՝ Աբրասապատից Նախիջևան, Արարատի ամենափառավոր տեսարանը պարզվում եր մեր առաջ, վոչ մի բան չի կարող այնքան գեղեցիկ լինել վորքան նրա ձևը, և այնքան անավոր՝ վորքան նրա բարձրությունը։ Շրջապատի բոլոր լեռները աննշան են յերևում՝ բաղդատելով նրա հետ։ [Ապա մեր ուղեգիրը

նկարագրում է Արարատը և ասում է թե փոքր Արարատը վորևե այլ տեղ պիտի համալրվեր մեծ լեռ, յեթե չգտնվեր մեծի քովը։ Թվում է թե ջրհեղեղից իվեր վոչ վոք չի բարձրացել նրա կատարը, վորովհետև ուղղահայաց վերելքի ամեն մի փորձ պիտի նրա ձյունապատ կատարը, կարծես անկարելիություն է։ Սրան մենք պիտի վատահ լինենք, թե վոչ վոք մեր ժամանակներում չե բարձրացել այնտեղ, վորովհետև Տորնֆորի նման մի հանդուգն ու համառ ճանապարհորդ ձախողվից, հավանական չե վոր այս յերկրի վախկոտ ու նախապաշարված բնակիչներից վորևե մեկը հաջողի։ Մեզ հաղորդեցին թե մարդիկ բարձրացել են փոքր Արարատի, (կամ ինչպես ասում են այստեղ Ղուչուկ Աղրի դաղ), կատարը, բայց քանի վոր նրանց բերած բոլոր տեղեկությունները հորինածո յեն, (Սավալանի պատմածի նման), ինչպես սառած մարդու և պաղ աղբյուրի մասին, թող թուլլ տրվի մեզ հավատ չընծայել այս նյութին վերաբերող այն բոլոր տեղեկություններին, վոր մենք ցարդ լսել ենք բնակիչներից։

Նախիջևանից մենք ճանապարհորդեցինք յերկար ու ամայի մի ուղիով դեպի Խոկ[6] (Hok), մի գյուղ, վոր ասում են թե իր անունը առնում է շրջակայքի բազմաթիվ վայրի խոզերից (wild hogs)։ Այս վատը և այնքան մոտ նմանություն hok և hog (խոզ) բառերի, միևնույն կենդանու համար, կարող և լեզվաբաններին ուշադրությունը հրավիրել լեզուների կապակցության վերաբերմամբ։... Սա սպիտակացրած պարիսպով մի փոքրիկ գյուղ և, քիչ բնակիչով, վորոնց թիվը նվազած և յերկու տարի առաջ ժանտախտի պատճառով։ Յերկու մղոն այն կողմը, լեռների ստորոտում, կան շինքեր, վորոնք Պերսեպոլիսի կոթողներին իրենց ուշեցած նմանությամբ կարող են հրավիրել հնագետի անմիջական ուշադրությունը։ Նրանք սակայն մահմեդական մի մզկիթի մնացորդներն են։

Խոկից ուղղվեցինք դեպի Նորաշեն[7] (Narashin) կոչված գյուղը, Շարուրի (Sherour) շրջանում։ Այստեղ մենք մտանք Յերևանի սարդար կամ գինվորական կառավարիչ Հուսեյնխանի (Hossein Khan) հողամասը, Պարսկաստանի ամենազորավոր գլխավորներից մեկը, վոր իր յերկիրը կառավարում է մոտավորապես այնքան հեղինակորեն և այնքան անկախաբար, վորքան Աբբաս Միրզան կամ Թագավորի վորևե ուրիշ մեկ վորդին։ Նրա պատմությունը ամեն տեսակետից արժանի յե արձանագրելու, վորովհետև նա մասնավորապես հատկանշում է այս յերկրի կառավարության վոգին։ Նրան կարելի յե անվանել Պարսկաստանի Ալի փաշան։ Նրան նշանակել են Յերևանում, պաշտպանելու համար սահմանները Ռուսաստանի դեմ, բայց նա այնքան է ամրապնդել իր դիրքը, շնորհիվ իր ձեռք առած միջոցների և իր հավաքած դրամի, վոր նա կարող է մրցել Թագավորի իշխանության հետ, և նրա յենթակա լինելը շատ քիչ չափով ավելի յե պարզ խոսքից ու հայտարարությունից։ Նա իր հպատակների վրա կյանքի ու մահվան իշխանություն ունի և պահում է դրեթե արքայական դիրք։ Այնպիսի մի անձնավորություն, վորպիսին նա յե, վորի ձեռքումն է նրա հողամասում մեր ճանապարհորդության ամաճելի, կամ բոլորովին հակառակը, պետք չե վոր նրա հետ վարվեյինք ընդհանրապես Պարսկաստանի մյուս կառավարիչների նման, և այն յեղանակը վոր նա ընտրեց ծանուցանելու համար մեզ իր ցանկություններն ու ակնկալությունները՝ հավասարապես ինքնատիպ եր ու ազդու։ Նախ, նա գնաց Արաբաթաի դրեթե կես [բարձրության վրա գտնվող] մի գյուղ և ապա դեսպանին իմաց տվավ թե ինքը նախապատրաստել է նրա [դեսպանին] և նրա խմբի ընդունելությունը, իր հողամասում նրանց մնալու տևողության ընթացքի համար, թե ինքը մտադիր եր դիմավորել նրան, յերբ նա մոտ լիներ Յերևանին. սա մի տեսակ ուշադրություն եր, վոր նա յերբեք կամովին ընծայած չեր վորևե ուրիշ անձնավորության, և թե նա [դեսպանը] իր ժողովրդի բոլոր խավերից պիտի ընդունվի մեծագույն պատվով ու հարգանքով։ Նա ասում եր, թե ինքը պիտի անի այս և սրանից ավելին, յեթե հնարավոր լինի, պայմանով, վոր դեսպանը ընդունի Սուր-

սար (Sursat) կամ մթերք, յերեք վոչ՝ [այսինքն յերեք ժերժի], այն ժամանակ փոխանակ դիմավորելու նրան, նա ավելի վեր պիտի բարձրանա լեռնից, և ելչին [elchee=դեսպանը] կարող է անցնել յերկրից, ըստ իր հնարավորության։ Այս պատճառաբանությունները անդիմադրելի եյին, հետևաբար դեսպանը ընդունեց նրա առաջարկը, վորի հետևանքները շուտով յերևան յեկան, վորովհետև մենք հազիվ թե Նորաշենի ճանապարհին եյինք, յերբ մեզ դիմավորեցին յերեք կամ չորս հարյուր ձիավոր՝ ռագամուֆիններ (ragamuffins), առաջնորդված Շարուրի գլխավոր մարդկանց կողմից, վորոնք չնորհավորեցին դեսպանին իր ժամանման համար, և հանուն սարդարի առաջարկեցին կատարյալ իրավասություն ունենալ իրենց յերկրի և նրա բնակչության կյանքի ու սփոփականության վրա։

Մենք դարձանք դեպի աջը, խուսափելու համար բրնձի դաշտերից, և արագընթաց Արփաչայը անցնելուց հետո, ուրախ եյինք հասնելով մեր վրաններին, արագ ձիավարությունից հետո։

Շարուրի շրջանը կամ բոլուքը (boluk) ամենաբարեբեր-ներից մեկն է Պարսկաստանում, և մասնավորապես հարուստ է բրինձի դաշտերով։ Արևմուտքից նրա սահմանն է [գծում] ցած լեռների մի շղթա, և բաժանում Սադրեքի[8] (Sadrek) [Սադարակ] շրջանից.. ։ Արփաչայը առաստրեն վոռոգում է [Շարուրի դաշտը], մի գետ վոր ծագում է ութը փարսախ հեռու ձյունապատ լեռների շղթայից և վոր դաշտի ստորոտում թափվում է Արաքսի մեջ։ Արփաչայը ավելի լեռնային մի հեղհեղատ է, քան մի ճնշյուն գետ։ Այս յեղանակին, յերբ ձյունը հալչում է, նա ընդհանրապես ամենախորն է և ամենաարագը, ամառվան ընթացքում դրեթե չոր է։ Մենք անցանք [գետից], յերբ ամենացածն եր, արևածագից մոտ յերկու ժամ հետո, և այդ միջոցին ջուրը հասնում եր մեր կենդանիների կրծքին։

[Ամսի] 10-ին փոխանակ ճանապարհորդելու դաշտի կենտրոնից և անցնելու Շարուրի անցքից, վոր կանոնավոր ուղին է, մենք գնացինք աջից, գրեթե լեռների ստորոտից, բազմաթիվ մեծ ու բարգավաճ գյուղերից անցնելուց հետո,

հասանք մեր վրաններին Սադարակում, մի գյուղ, վորի անունով կոչվում է նաև շրջանը։ Հեռվից տները յերևում եյին խառնված փոքրիկ սպիտակ վրաններին հետ, բայց տեղեկացանք, վոր մեծերը այնքան չափազանց շատ և այստեղ, վոր բնակիչները ստիպված են միջոցներ ձեռք առնել նրանց հաձախման դեմ՝ քնանալով կտավյա սենյակներում, կամ մոծակների ցանցերում, վոր նրանք կառուցում են իրենց տների կտուրների վրա յերկու յողերի մեջ։...

Հաջորդ որը միևնույն ուղղությամբ հասանք Դավալու[9] (Develú), մի մեծ գյուղ, վորի քեհխուդան (ketkhoda) մի ծերունի պինավոր եր, վոր ծառայել եր Աղա Մահամեդ Խանին նրա բոլոր պատերազմներում։...

Հաջորդ առավոտը, 12-ին, մենք մտանք մի այլ ընդարձակ բարձրեր հողամաս՝ Գառնի[10] (Gerni) կոչված, մի գետանունով, վոր հոսում է նրա միջից։ Նա տարածվում է մի կողմից դեպի լեռների մի շղթա, վոր յեղերում է Սևանա լիճը, և մյուս կողմից Արարատ լեռը։ Ամեն մեկ ակրը * (acre) թվում է թե մշակված և ցորեն կամ բրինձ, և գյուղերը այնքան խիտ են, վոր դժվար և անցնել մի մղոն առանց հանդիպելու մեկին։ Մեր ճանապարհն ձախ կողմում, յերկու ցած լեռների մոտ գտնվում է Վիրաբի[11] (Virab) վանքը, կառուցված մի հորի վրա, վորի մեջ հայերը ասում են թե իրենց սուրբ Գրիգորը բանտարկված եր և հրաշքով անուցված։

Մեր վրանները կանգնեցրին Ակ-բաշ[12] կամ սպիտակ գլուխ (Ak-bash) գյուղի մոտ, Գառնի գետին մերձ, վոր բղխում է հարևան լեռներից և թափվում է Արաքսի մեջ։ Մեր [վրաններին] հասնելուց առաջ, յերբ մենք տակավին յերկու մղոն հեռու եյինք, արագ մի պատկառ կառավարչին Արտաշատի (Ardaxata) նշանավոր ավերակներում. հիմա կոչվում է Ardasht, վորն մեկ ծայրում կա մի բարձր բլուր, վոր բնիկները անվանում են Թախս Տիրիդաս (Takht Tiridat) կամ Տրդատի գահը[13]։ Այս ավերակները նմանում են

* Եյբը, անգլիական հողաչափ, ակրոն, չափար։

Ռեյլ (Rey) [ավերակներին], բակկացած քանդված հողե պարիսպների բլուրներից, և այստեղ ու այնտեղ գունավոր կղմինտրի և ամանեղենի փոքրիկ կտորտանքներ կան։ Գտնվում է շատ վաղ ներկայություն՝ ներկա մեացորդներից մնծ ու փառահեղ պալատներ կազմելու համար, և բացի անվան հնություննից ու ավերակների ընդարձակությունից, վոչ մի կերպ չի պատասխանում ներկա ժամանակների կործանված քաղաքներից։ Գլխավոր ավերակների շատ մոտ գտնվում և Արտաշիր[14] (Ardashir) անունով գյուղը, և շատ ուրիշ [գյուղեր] սփռված են նկատելի պարիսպներից ներս։ Սրանից հետո անհրաժեշտ չէ ասել, թե մենք չգտանք այն ներսում վոչ մի մարմարի կոթողները, վորոնց մասին Շարդեն ասում է թե կային այնտեղ։

Այս ավերակների տեղը չի համաձայնում Սարաբոնի* Արտաշատի դիրքի հետ։ Նա ասում է թե Անդեբալն է կառուցել այս քաղաքը հայոց թագավոր Արտաշեսի (Artaxias) համար, վոր հետո հարձակման և չհնթարկվել Լուկուլլոսի կողմից, և գտնվում է Արաքսի կազմած մի թերակղզու վրա. քաղաքի պարիսպները գալիս են դեպի ջրերին կամ դեպը հոսում է նրա շուրջը, և ծառայում վորպես պատնեշ, վորովհետև անցքը մուտի է և ներսուտքատեղ պակասավոր։ Այս ավերակները Արաքսից 10 մղոն հեռու չեն, թեև ծանոթ և թե դեպերի ընթացքը փոխվում է, սակայն այնպես և ներկի քննության այստեղ, վոր հավանական չի թե Արաքսը ջրերը փոխել և իր ներկա ընթացքը։ Հին Արտաշատի[15] ավելի հավանական դիրքը գտնվում է դեպի արևելքյան մեջ, վոր կազմում է մի թերակղզի, վորի վիզը միայն 60 յարդա լայն է, գտնվում Արաքսի ու Արփաչայի միացման և Արտաշատի բերդի կիսում։ Այստեղ, ըստ հարյուրապետ Մոնտեիթի (Monteith), վորին ես պարտական եմ այս տեղեկության համար, Արաքսի վրա մի կամրջի մեացորդներ կան։ Գետինը թվում է թե հղկված է, և տեսնվում է մի մեծ

* Strapo, Lib. XI., p. 529.

հողե բլուր, վոր թերևս կազմվել է շենքերից։ Այս, (բացի Սարաբոնի Արտաշատի նկարագրության նմանությունից), համապատասխանում է Մովսես Խորենացու ճանփեի, բլուրի ու կամրջի նկարագրականին*։ Խոսելով Արտաշեսի վորդի Արտավազդի մասին, տեղեկանում ենք թե Արտաշատում մի կամուրջ կար**։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ակնարկում է Գյուլիստանի պայմանագրին, վոր կնքվեց Իռանաստանի և Պարսկաստանի միջև 1813 թ. Հոկտեմբերի 12-ին, միջամտությամբ Պարսկաստանի անգլիական դեսպան Սըր Գոր Աուզլեյի։ Այս դաշնագրի պայմանները ազեցություն եին Պարսկաստանի համար, վոր կորցնում էր վրաստանը, Դերբենդը, Բաքու, Շամախի, Նուխի, Գանձակ, Ղարաբաղ և Թալիշի մեկ մասը, և հանձն էր առնում նավատորմիղ չպահել Կասպից ծովում։ Սակայն այս հաշտություններ ժամանակավոր եր։

2. Խանախա, Խանակյան կամ Խնկի՝ Ատրպատականի Ղարադաղի Դըրզամար գավառակի անվանի հայաբնակ գյուղը։ Ունի 91 տուն կամ 543 անձ բնակիչ։ Մերձակայքում գտնվում և դրեթե անվնաս մնացած աշտարակաձև մի շենք, վոր կարծվում է թե հին ժամանակներում ատրուշան է յեղել։

3. Ալանջիկ, Ալաջախանա, հայկական Երնջակ, Յերնջակ, Նախիջևանի հյուսիսակողմն։ Անցյալում գորավոր ամրոց եր և յերկրի ընդհանուր խռովությունների ժամանակ ժողովուրդը ապաստանում եր այնտեղ։ Ալանջիկ հիշատակում են Կլավիխոն, («Ուղեգրություններ» Ս. հատ. եջ 116) Վենետիկցի ուղեգրներից Ջոզեֆա Բարբարոն (Ibid եջ 206) Անտոնեո Վանճատակցը (Ibid, եջ 323) և ուրիշները։ Այնտեղ հայերի մի մասը, կաթոլիկ եյին և գրավում եյին ընդհանրապես առևտրով։ Որբելյան՝ բերդի կառուցման մասին գրում է. «մի ոմն ի կանանց Նահապետաց (Սիւնեաց) Երնջիկ անուն՝ շինէ և պանծալին ամուր երնջակ յիւր անուն՝ բերդն և գաւառն կոչի Երնջակ, և զնեն ի նմա տուն գանձու և հարկաց աշխարհին» (Տես, Ալիշան, «Սիսական», եջ 348—51. 363—65, 378—80)։

* Մովսես Խորենացի, Գիրք Բ. Գլ. 46։

** Ibid. Գիրք Բ. Գլ. 58։

4. Աբբաթապատ՝ Աստապատն է, Արաքսի յեղերքը, Նախիջևանում։ Պատմության մեջ առաջին անգամ հիշատակում է Թովմա Արծրունին, և ապա Մաշիկ կաթողիկոսի կոնդակում 976 թ.։ Որբելյան անվանում է դյուղ ԺԲ. դարի կեսին։ ԺԲ. դարի վերջերին բարգավաճ դյուղաքաղաք եր։ ԺԷ. դարի սկզբնավորության Շահ Աբբաս Աստապատի բնակիչներին էլ գերի վարեց Պարսկաստան։ Այստեղի բնակիչները առևտուր ունեին Եվրոպայի հետ և Վենետիկում հիշատակվում են մի քանի աստապատցի հայ վաճառականներ։ ԺԲ. դարու սկզբնավորության Աբբաս Միրզան, ինչպես Մորիերն և պատմում, հեռացրեց այստեղի բնակիչներին և այնտեղ Ֆրանսացի սպաների գնհավարության մի բերդ կառուցեց, և անվանեց Աբբասաստապատ, որ գրավեցին ռուսները 1827 թվին։ Տավերնիե ԺԷ. դարի կեսին յերկու որ մեաց Աստապատում, որին և անվանում է մի գեղեցիկ փոքր քաղաք (Tavernier I. 47)։ (Տես, Ալիշան, «Սիսական» եջ 507—514. Շահխաթունյանց, «Ստորագրություն», հատ. Բ. եջ 297—304)։

5. Նախիջևան գտնվելով առևտրական ճանապարհի վրա, անցյալում յեղել է բավական ընդարձակ ու կարևոր մի քաղաք։ Առհասարակ բոլոր ուղեգիրները հիշատակում են Նախիջևան։ Պարսկական տիրապետության ջրջանում առանձին խանության կենտրոնն եր, իսկ այժմ մայրաքաղաքը Ասրբրջային Նախիջևանի ինքնավար հանրապետության։ Նախիջևան 1830 թ. 5470 բնակիչ ուներ, որից 1829 հայ, իսկ 1926 թ. մարդահամարով 10.296 բնակիչ, որից 1.065 հայ և 1376 ռուս (Տես, «Ուղեգրություններ» Ա. հատ. եջ 20, ծան. 1. (Տես, Ալիշան, «Սիսական», եջ 496—505)։

6. Խոէ, մի փոքր գյուղ և պատմական Այունյաց նահանգի Նախիջևան գավառում։ Հին Խոքը ավերակ է։ Ներկայումս Խոքը գտնվում է Ասրբրջային Նախիջևանի ինքնավար հանրապետության սահմաններում, Շահթախթի մոտ դեպի արևելք։ Խոք 1830 թ. ուներ 278 թուրք բնակիչ, իսկ 1926 թ. մարդահամարով 1293 բնակիչ։ (Տես, «Սիսական» 505—506)։

7. Նորաշեն գտնվում է Արփաչայի մոտ և յերկուք են՝ վերին Նորաշեն կամ Ստորին Նորաշեն, գետի մյուս ափում գտնվում է Համզալի գեղ և գյուղ։ Նորաշեն գտնվում է Թավրիզի առևտրական ճանապարհի վրա և հիշատակվում է ուղեգիրների կողմից։ Գետի հյուսիս մեկ ու կես կիլոմետր հեռու մի քարալերի վրա գտնվում է կալեջիկ Բերդի ավերակները, և լքված տներ։ Վերին Նորաշենից յերեք կիլոմետր դեպի արևմուտք գտնվում է աստրին Նորաշեն, որ նախապես Շարուր — Դարմոտաք գավառի կենտրոնն եր և դրա համար կոչվում է Բաշ Նորաշեն, 1673 թ. ապրել 10-ին Շարդենը իջևանել եր Նորաշենի քալվանատանն։ Ըստ 1873 թվի մարդահամարի՝ վերին Նորաշեն ուներ 143 տուն 820 անձ, բոլորն էլ հայ։ Աստրին կամ Բաշ Նորաշեն 50 տուն 311 անձ թուրք, իսկ 1926 թ. մարդահամարով 594 բնակիչ։ (Ալիշան, «Այրարատ» եջ 448—450)

8. Սաղդրեխ, Սադարակ և Շարուրի դաշտի հյուսիսային մասում։ վրտեղից անցնում է Ջանախչի գետը և թափվում Արաքս։ Հետու չէ Ջանախչի գյուղից։ Հին հայ մատենագիրները Սադարակը չեն հիշատակում։ 1673 թ. ապրիլի 10-ին Շարդեն անցել և այստեղից և անվանում և Սադարեք մեծ ավան և կենտրոն հայոց Շարուր գավառի, ուր բնակում և յերկրի սուլթանը. (Chardin. Vol. II. p. 303)։ Սուլթան կոչվում հին պարսկական գինվորական հրամանատարները։ Կեր Փորտերը ասում և թե գնվում և Յերևանի ու Նախիջևանի կես ճանապարհի վրա։ Յերբ ուսները այս ջրջանը գրավեցին Սադարակում կային 140 տուն թուրք։ Ալիշան ասում և թե այժմ (այսինքն 1890 թ.) 400 տուն բնակիչ ունի։ 1926 թ. մարդահամարով 2498 բնակիչ։ (Տես, «Այրարատ» եջ 449)։

9. Դավալու. գտնվում և Ղամարլու և Սադարակ ավանների միջև առևտրական գլխավոր ճանապարհի վրա։ Դավալու թուրքերեն նշանակում և ուղտավոր։ Կարավանները կանգ հին առնում այստեղ և բոլոր ուղեղիրները հիշատակում են Դավալուն։ Նախապես ուներ 250 տուն բնակիչ, կեսը թուրք, կեսը հայ։ Ռուսական գրավումից հետո Պարսկաստանից 40 տուն հայեր գաղթեցին այստեղ։ Դավալուն 1830 թ. 661 հայ բնակիչ ուներ, այժմ (1926 թ. մարդահամարի համաձայն) 1936 բնակիչ։

10. Գառնի գետ կամ Ազատ գետ բղխում և Գեղամա լեռներից (Նալբևից), որ 11.167 ոտք բարձր և, անցնում և Գառնիի և Արտաշատի ավերակների մոտից և թափվում և Արաքսի մեջ, Հրազդանի միախառնումից վեր կիլոմետր արևելք։

11. Վիրապ, Խորվիրապ, հավանորեն պատմական ջրջանում այս վայրը գեղել և քրիստոնեական հանգստարանների բանում։ Գտնվում և Արաքսից մեկ ու կես կիլոմետր հեռու։ Վորձաքարի մի բլուրի վրա գտնվում և Խորվիրապի վանքը, պարսպապատ և նման հին դղյակի։ Ուղեղիրներից շատերը այցելած են Խորվիրապ։

12. Գառնի գետի աջ կողմ, արևմտյան կողմից կատարին սահմանակից կան յերկու գյուղեր՝ վերին Աղ-Բաշ և ներքին Աղ-Բաշ ձորագետի բերանում լավային քարաժայռերի ստորոտը, վեց կիլոմետր հեռու Աստրի Գվինից։ Աղ-բաշ ծառաստան և և քիչ հեռու գլխավոր ճանապարհից։ Վերին Աղբաշ 1926 թ. մարդահամարով ուներ 392 հայ բնակիչ, իսկ ներքին Աղբաշը 729, մինչ 1830 թվին ուներ 247 հայ բնակիչ։

13. Հին Հռոմեական տաճարի մնացորդները։ Մորիերից հետո այս վայրը այցելից կեր Փորտերը, տես, Travels, հատ. II. եջ 624—639։

14. Արտաշատ կամ Արտաշատ, հին Աշտաշատի հյուսիսային ծայրի պատվարին ու միջնաբերդին մեջ։ Բնակիչները հայեր են, որոնք 1828 թվին գաղթել են Պարսկաստանից։ Նախապատերազմյան ջրջանում 140 տուն հայեր կային այստեղ, 1926 թ, մարդահամարով 1663 բնակիչ։

15. Արտաշատի ավերակները նկարագրում և նաև կեր Փորտերը. տես Travels, հատ. I. եջ 198. 203—206, II. 619—622։

Բ.

ՅԵՐԵՎԱՆԻՑ ՂԱՐԱՔԼԻՍԵ *

Սարգարի սահմանը մանելու որից ի վեր ամեն քայլափոխում աչքի կը ընկնում նրա ուշադրութիւնը, և Յերևան հասնելուն պես նա իր բոլոր ջանքը ի գործ դրավ վողջունելու ու պատիվ. համար իր հյուրերին։ [Ամսի] 13-ին շատ կանուխ ճամբա յելանք, վորպեսզի յեթե հնարավոր կը խուսափելինք իսթակբալից [1] (Istakball), բայց մենք այնքան ևլ րախտավոր չեյինք, վորովհետև հազիվ թե արշալուսյը բացված կը, յերբ յերևցան ձիավորների մեծ խմբեր, պլխավորութիւնամբ սարբեր հրամանատարների, վորոնք իրենց մեծարանքը մատուցին դեսպանին։ Ամենից աչքառու մի խումբ քուրդերն եյին, վորոնց արտակարգ հագուստն ու յերևութիը, այնքան սարբեր պարսիկներից, տեսարանին տալիս եյին մի նորութիւն, վոր չափազանց զվարճալի կը։ Նրանց հագուստը, զենքը, նրանց ձիերի սարքավորումը, և ընդհանուր յերևութիը թուրքերին կը նմանում, բայց նրանք վայրի ու կատաղի մի կերպարանք ունեն, վոր շատ հատկանշական և նրանց թափառական կյանքին։ Նրանցից մի մեծ խումբ, սարգարի վարձկանն եր։ Նրանց ցեղապետը՝ Հոսեյին ազան մի փառավոր ու պատկառելի մարդ եր, ձիավարում եր մի գեղեցիկ սպիտակ ձի, և հագել եր մի լայն թիկնոց, բոսորագույն կերպասից, ազատորեն ձգված իր վրա գեղեցկագույն ծալքերով։

* Morier, *Հաա. բ. գլ.* XXI. *եջ 318—329։*

Հակադրութիւնը քուրդերի ու պարսիկների մեջ, առանձին կամ խմբովին առնելով, բարձրորեն ի նպաստ առաջիններին եր։ Նրանց հագուստի վառ գույները, բազկացած կերպասից, մետաքսից ու թավիշից, շատ և գերազանցում պարսիկների բամբակյա կամ մորթեղեն [հագուստի] մութ երանգներից։ Քուրդերը գվարճացրին մեզ իրենց պատերազմելու կերպերի ցուցադրութիամբ, մեծ գանգվածով քառասմբակ անցնելով մեր առջևից, շարժելով իրենց նիզակները, արձակելով իրենց սարճանակները և բարձր ձայնով աղաղակելով, մի բան վոր ամբողջովին պատկերացնում եր նրանց բարբարոսական կռիվները։

Յերբ մոտենում եյինք քաղաքին, նկատեցինք վոր սարդարը գալիս և դեպի մեզ, շրջապատված սպասարկողների մի մեծ րազմութիամբ։ Այս առիթով կառուցված վրանից նա առաջացավ յերեք հարյուր քայլ, վորտեղ կարգադրվել եր վոր նա հանդիպի դեսպանին, և այնտեղից նրանք ամեն հնարավոր արարողութիամբ գնացին դեպի վրանը, ուր մենք ըստ սովորութիան ձեռքերնիս, սուրճ խմեցինք և անուշեղեններ կերանք։ Այն կարճ ժամանակ, յերբ մենք նստած եյինք այնտեղ, ականատես յեղանք այս վայրենի մարդկանց բարբարոսութիան։ Նրանք ըստ սովորութիան խաղում եյին, իրար վրա ջիրիդ գցելով և սարճանակ արձակելով, յերբ մի վեճ ծագեց մի քուրդի ու մի պարսիկի միջև, վոր տեղի ավավ ընդհանուր իրարանցման, յերբ յերկու մարդ սպանվեց։ Միեզ ասին թե այս խաղերը շատ քիչ անգամ վերջանում են առանց նման ավետի։

Հաջորդ որը մնացինք Յերևանում, բայց տաքը այնքան մեծ եր, վոր մենք շատ քիչ պատեհութիուն ունեցանք տեսնելու քաղաքը։ Դա բազկացած և մի անպարիսպ ավանից ու մի բերդից։ Յերկուքն ել զետեղված են մի ձորում, յեզերված բլուրների մի շարքով, գեղեցկորեն մշակված այգիներով ու հացահատիկի դաշտերով։ Քաղաքը կեղտոտ և ու հետաքննաց։ Բերդը Պարսկաստանում ամենազորավորը լինելու համբավը ունի, և մի քանի տարի առաջ ռուսների կողմից այն գրա-

վելու ձախողանքը, հարյուրապետական և նրա համբավը, այնքան վոր սարդարը խոսելով նրա մասին, լրջորեն ասաց. «Յեթե Ֆրանկի [Fireng = յևրոպացի] յերեք չորս թագա-



Ֆրեդի խաղ, (Վերս Ֆրեդ Մորթերի)։

վոր միանան՝ գրավելու համար այս ամրոցը, նրանք միայն նեղությունն պիտի կրեն կրկին յեա յերթալու, վորովհետև նրանց աշխատանքը ի զուր պիտի լինի»[2]։ Մեկ

կողմից (բերդը) կանգնած և մի մեծ, գրեթե ուղղահայաց, ժայռի անդունդի յեզերքին վորի ստորոտից հոսում է Զանգու գետը, և մյուս կողմից շրջապատված և մի չոր խրամատով, վորի վրա ժամանակավոր կամուրջներ կան։ Ունի յերկու շարք հողե պարիսպներ և կլոր աշտարակներ, վորոնք յերեք ժամվա լավ ռմբակոծման չեն կարող դիմանալ։ Բերդի ներսը մեծ չափով բաղկացած է քանդված տներից։ Կենտրոնում աչքառու կերպով կանգնած է թուրքերի կողմից կառուցված մի արտակարգորեն լավ մզկիթ, կղմինտրից ու քարից, և պսակված կապարով ծածկված գմբեթներով։ Այժմ գործածվում է վորպես մթերանոց։ Նրանից վոչ շատ հեռու գտնվում է մի վայր, ուր սարդարը թնդանոթներ է ձուլում և արձակում։ Նրա պալատը նույնպես գտնվում է բերդի ներսում և ամեն յերևույթ ունի թե յերբեմն յեղած է գեղեցիկ ու կարևոր մի շենք։ Նրա գլխավոր հարկաբաժինը բացվում է գետի անդունդի վրա, տիրապետում է մի շատ գեղեցիկ տեսարանի, և Զանգուն հոսում է նրա մոտից։ Այս հարկաբաժնի մի լուսամուտից է վոր սարդարը զվարճանում է՝ մի հրացանով փորձելով իր վարպետությունը և գնդակահարում է գետի մյուս կողմի ճանապարհից անցնող գյուղացիների եշերին։

Պալատը գրավում է գրեթե բերդի կեսը, գետի կողմից, և կանանց հարկաբաժինը, վորի պատուհանները ցանցապատ են, նայում է անմիջապես անդունդի վրա։ Ռուսների դեմ պատերազմի ընթացքում մի գեպք պատահեց, վոր մի վեպի լավ հիմք կարող է ծառայել։ Վրաստան կատարված նախկին արշավանքների մեկի ընթացքում, սարդարը գերի վերցրեց և դրեց իր հարեմում, մի յերիտասարդ վրացի աղջկան, վոր նշանված եր և պիտի ամուսնանար մի սիրուն յերիտասարդի։ Յերիտասարդը հետևեց իր սիրուհուն գեպի Յերևան, և խնացրած լինելով նրան իր ժամանումը, նրանք հաջողեցին փախչել քիչ հետո, բայց գտան նրանց հետքերը և յետ բերին։ Հրաման տրվեց սիրահարին հեռանալու Յերևանից, և յերբ նա անցնում եր Զանգվի կամրջից, սիրուհին տեսավ

նրան, և հակա բարձրութիւնից իրեն վար նետեց, վճռած լինելով կամ մեռնել նրան և կամ մեռնել: Նրա անկումը արգելվից յերկու ուռենիներով և նրան վերջերին այնտեղից բավական ջախջախված, բայց վոչ վտանգավոր կերպով ձեռնված: Պետք է ասել, թ պատիվ սարդարի, թե նա ավելի հեռուն չտարից իր բռնապետութիւնը. ապատութիւն տվավ նրանց, և պաշտպանութիւն՝ վերադառնալու համար իրենց տունը[3]:

Յերևանում մենք մեր որը անցկացրինք սարդարի ընկերակցութեամբ, վոր իր պալատի մեծ սրահում մի խնճույք տվավ պետպանին: Շատ հաճելի եր նրա խոսակցութիւնը և հաղորդակից եր բոլոր նյութերի վերաբերմամբ: Նրա հրամանատարութեան տակ դանվող յերկիրը 140 մղոն յերկար և 80 մղոն լայն: Սարդարի յեղբայր Հասան Խանի կատարած սուպի (súm) կամ հաշվառման համաձայն, վոր հատկապես ուղարկված եր յուրաքանչյուր գյուղի բնակչութեան հաշվումը կատարելու համար, արու բնակչութեան թիվը, 15—50 տարեկան, այդ ժամանակ 18.700 եր, վոր չորսով բազմապատկելով կանանց յեվեխանների ու ծերունիների թիվը, ընդհանուր գումարը անում է 74.800 հոգի: Սրանց մեջ հաշվում են բոլոր Ելիաթ (Eelaut) ցեղերը, բացի քրդերից, վորոնք լինելով հեռավոր ու պատահական բնակչութիւն, հաշվում են անջատաբար: Սրանցից ներկայումս Յերևանի կառավարութեան ներքո գտնվում են 5000 ընտանիք, բոլորը 74.800-ի հետ միասին հաշվելով անում է 100.000 մարդ:

Սարդարը իր նշանակումը ստացել է թագավորից, վորի համար նա շատ մեծ մի գումար է վճարել: Նա իր կառավարութեան մեջ ունի ամենաբացարձակ իշխանութիւն, ամենքի կյանքն ու մահը իր ձեռքումն է, հանցավորներին պատժում է ամենակտրուկ կերպով: Հիրավի, նրա ունեցած իշխանութիւնը քիչ պակաս է թագավորից և [արքայազուն] իշխաններից: Պատժում են պարագաները, յերբ նա իշխանութիւն և գործ դրել, մինչ թագավորը զգուշացել է, վորովհետև նա այնքան ծանոթ է Յերևանի մուսուլման կղերա-

կանութեան հանդեպ իր տածած արհամարհանքով, վոր նա ձեծում է նրանց և նրանց հետ վերաբերվում է ամենամեծ բռնութեամբ:

Մեզ տեղեկացրին, թե նրա կառավարութեան յեկամուտը հաշվվում է 180.000 թուման, կամ 135.000 ֆունտ ստերլինգ*, մի գումար, վոր հարատահարութեամբ և պարսկատանին հատուկ միջոցով ու ճանապարհով շատ ավելի յե, քան այն ինչվոր նա պիտի ստանար իրավունքով:

Յերևանի և նրա յենթակա հոգամասի կանոնավոր յեկամուտը 100.000 թուման է, վոր նա բարձրացրել է 150.000-ի: Մի կարգ շրջաններից տուրքը կապալի յի տրվում սահմանված գումարով, վորտեղից լինքն և գանձում յեկամուտը: Շարուրի շրջանը նա տալիս է 40.000 թուման, վորից ավելին կամ պակասը պատկանում է կապալառուին, վոր ասում են թե նրա համաձայնութեամբ շահում է 4000 թուման:

Բոլոր վճարումները կատարվում են ապրանքով, բացի այն շրջաններից ուր կապալի են տրվում դրամով: Սարդարը առնում է բամբակի, բրնձի և վոսպի արտադրութեան մեկ հինգերորդը և հացահատիկի մեկ տասներորդը, ինչպես պատկանում է մշակողին, վոր պարտական է հայթհայթել

---

* Ասում են թե նրա յեկամուտը հետևյալն է. —

150.000	թուման	մալիաթ (maliat), սադեր (sader) և այլ հողային հարկեր, և այլն:
12.000	»	. . . . . Ներածութեան մաքսեր:
6.000	»	Իջարե (Ijareh), կամ կողբի ապահանքերի վարձակալութիւն:
6.000	»	Դուզագիա Պարսից կառավարութենից արտակարգ ծախքերի համար:
600	»	Սարդարի ռոճիկը թագավորից:
174.600	թուման	

Մնացորդը, լրացնելու համար 180.000 ստացվում է նվերներով և գաղմաթիվ tours de bâton[4], վոր այնքան լավ հասկանում է պարսիկ կառավարիչը: (Ծանոթութիւն Մորլիերի):

իր սերմնացուն, [լծկան] գավարը, գործիքները և ջուրը։ Սերմնացանի ժամանակ իր հայթհայթած սերմնացուն, հունձքին նա չետ և ստանում։ Յերևանի հողամասում գետերը այնքան առատ են, որ վտոդումը համեմատաբար քիչ ծախքի չի կարոտ։ Զանգուն, Շարուրի մոտ Արփաչայը, Գառնին, Աշտարակի գետը, բոլորը հնշատացնում են վտոդումը, բայց Արաքսի հոսած հունի խորությունը, նրա ջրերը անգործածելի են դարձնում հողագործի համար։ Մի քանի չրանիվ պիտի գարմանն այս պակասությունը, բայց այդ ոգտակար գործիքը, որ մեզանում ծանոթ և պարսկական անունովը, հազիվ թե ծանոթ և այստեղ։

Սարդարը հայ գյուղացիների հետ վարվում է արտակարգ խստությամբ, որովհետև նրանցից հարկ և վերցնում արտադրության մեկ յերրորդը, նրանց թողնելով մշակության բոլոր ծախքերը։ Նվաքցներից նրանք, որ հողամշակությամբ են զբաղվում, նրանց հետ վարվում և այնպես, ինչպես այլ գյուղացիների հետ, բայց նրանք, որոնց սեփականությունը միայն կենդանիներն են, հարկ են վճարում յուրաքանչյուր կենդանու գլխի համար։ Արոտավայրի [ոգտագործման] իրավունքի համար նրանք ոչինչ չեն վճարում, թեև նրանց շարժուձևները կառավարվում են նրա հրամանի համաձայն։

Բացի յեկամուտի այս աղբյուրից, նա մեծ քանակությամբ առևտուր և անում իր ապրանքով։ Նա մենաշնորհ է դարձրել Յերևանի բամբակը, որ ուղարկում և Վրաստան, և փոխարեն ներածում է եափունջիներ, (yapunchéhs), վրացական սովորական վերարկուն, որ գործածվում և ամբողջ հյուսիսային Պարսկաստանում։

Ներանք որ մի ջամուում են նրա առևտրին, վատահորին ամենախիստ զրկանքի են յենթարկվում, սակայն նրա ընչաքաղցությունը միշտ էլ հաղող չի ընթանում, ինչպես հաստատում և տեղի վրա մեզ հաղորդված մի պատմություն։ Ռուսաստանի հետ պատերազմը վերջանալուց հետո, իր պալատի հրամանով, հակառակ իր կամքին արգելեց բոլոր չափուներ[5] (chappows) կամ ավազակային արշավանքները,

որին սովոր եյին իր գինվորները։ Բայց, իմացած լինելով որ մի մեծ կարավան, հարուստ բեռնով, ճանապարհորդում եր Թիֆլիզից, իր մոտ կանչեց իր գինվորներից վոմանց և ասաց. «Գիտեք որ մենք խստորեն արգելած ենք չափուռուսական հողամասի վրա, և հիմա Թիֆլիսից մի կարավան ե մեկնել»։ Ակնարկը բավական եր, և նրանք անմիջապես մեկնեցին, տեսնելու համար թե ինչ կարող են անել։ Մի քանի որ հետո, սարդարի ճանապարհորդող վաճառականը ժամանեց մեծ արտաբեկումով, ասելով թե, յերը ինքը կարավանի հետ գալիս եր Թիֆլիսից, իր հետ բերելով սարդարի համար հարուստ ապրանք, ավազակների մի խումբ կողոպտել և ամեն բան, հարձակելով կարավանի վրա։ Փաստորեն սարդարը կողոպտել եր ինքն իրեն։ Իր սեփական ապրանքը իր գինվորներին ավար եր դառել. տրամադիր լինելով անգամ պատժել նրանց, նա ստիպված եր իր վարկին համար աչք փակել կատարված հանցանքին։

15-ին մեր ճամբարը հաստատեցինք Ուչ-քլիսեյում, կամ յերեք յեկեղեցում, ինչպես ասում և թուրքերենով, թեև իրավ չորս հատ են։ Հայերը գլխավոր յեկեղեցին անվանում են Եջմիածին (Etchmiatzin), որ վանականներից մեկը բացատրեց վորպես «մեծին վորդու իջումը», այդպես անվանված, վորովհետև նրանք հավատում են թե Հիսուս Քրիստոս այնտեղ յերևցած և Ս. Գրիգորին, որ առաջին պատրիարքն եր։

Յերբ մոտենում եյինք այս տեղին, պատրիարքը դիմավորեց գեսպանին, գլխավորելով գեր ու կարմրաթուշ վանականների մի թափորն, որոնք սև եյին հագել և կրում եյին սև վեղար, մի ցուցադրություն որ կատարելապես նորություն եր մեզ համար։ Պատրիարքի շքախումբը բաղկացած եր յերեք գրասուց, ծածկված թավշյա տապճակով, ասեղնագործված վոսկով à la Turque, յերեք շարիից կամ հեռևակից, մի ժարդուց որ բռնած եր դրոշակը, մի վանականից, որ կրում եր մի յերկար արծաթապատ գավազան, և վեղարավոր ծառաների մի փոքր բազմությունից։ Նրա

դեմքը պայծառ եր ու գեղեցիկ, վոր ցույց և տալիս լավ ապրածի նշաններ, և անկեղծությանն ու բարեհամբույրության արտահայտությունն։ Նա մի կատարյալ ջենտլմենի վարվելակերպը և ընդհանուր կիրևույթն ուներ, և սրա համար պետք չեմ զարմանալ, վորովհետև նա շատ և ճանապարհորդել. այցելել և ռուսական պալատը, ուր ընդունվել է մեծ հարգանքով։ Հիրավի, նա ցույց եր տալիս դրա փաստը, վորովհետև առաջին բանը նրա կիրևույթից, վոր մեր ուշադրությունը գրավեց, ռուսական Ս. Աննայի ատիճանի շքանշանն եր, վորով պատվել և նրան [ռուսաց] կայսրը, և այժմ փայլում է նրա ծիրանի վերարկուի վրա։

Յերբ մենք մոտեցանք նրա կեդրոնին, յեպիսկոպոսների, քահանաների, սարկավագների և կերգեցիկների մի շարք պատրաստ եր թափորի անցքին համար. ապա նրանք սկսան առաջ շարժվել իրենց դրոշակներով, խաչերով, մեծ աշտանակներով և իրենց բոլոր հանդիսավոր հանդերձանքով, կերգելով à gorge-deployé[6] իրենց արարողության մեկ մասը, վոր մենք չկրնք կարող հասկանալ։ Գեսպանն ու պատրիարքը, կանայքն ու կերեխաները, հայերն ու անգլիացիները. թուրքերն ու պարսիկները՝ բոլորը հրմշտակում եյին իրար, կերը պանդակներն սկսան հնչեցնել սոսկալիորեն, և քահանաներն ու կերգիչները առաջվա նման շարունակեցին իրենց խմբերգը։ Կատարվեց մի կարճ արարողություն, կերբ պատրիարքը վոտկյա խաչը իր ձեռքում՝ շարժեց, [խաչակնքեց], գեսպանի ու իր խմբի վրա և իր որհնությունները ավավ մեզ։

Ապա նրանք մեծ արարողությամբ մեզ ցույց տվին կեկեղեցու թանկագին մասունքները։ Առաջինը և ամենագլխավորը ասում եյին թե գլուխն եր այն նիզակին, վորով հռոմեացի զինվորը ծակեց մեր տիրոջ կողքը։ Յերբ բերին այն ու դրին խորանի վրա, բոլոր հայերը խոր խոնարհեցին իրենց գլուխը։ Նրա ձևը այսպես եր,* մոտ մեկ վոտք կերկար։ Այս մասունքը,— վորի վրա նրանք նայում են

* Հեղինակը գեռևս և գեղարդի պատկերը։

վորպես իրենց ունեցածներից ամենաառաջինի վրա, բացի ուրիշ հրաշքներից, ասում են թե, կարող և կասեցնել ժանտախտի տարածումը. նոր եր այնտեղ բերված, վորովհետև հիշատակված չե այն բաների մեջ, վոր Շարդենը* տեսավ Ս. Գրիգորի բազուկը և Ս. Հռիփսիմեի գանկը տակավին այնտեղ են, բայց այնքան փաթաթված վոսկու ու զարդարանքի մեջ, վոր նրանցից և վոչ մեկը կարելի չե վորոշ տեսնել։ Այս կեկեղեցու նկարագրականը, վոր Շարդենը արել և, այլապես կարելի յե վերագրել նաև ներկա վիճակին, կառուցված և գերազանցորեն լավ շինանյութից և ամենահատուկն կերպով. վոչինչ կարող չե կործանել այն, բացի յերկրաշարժից ու ամբակոծումից։

Պատարագը շատ աշխատեց վոր գեսպանը մի որ ևս մնա, բայց տաքը այնքան անհանգուրժելի եր, և մենք այնքան ցանկանում եյինք լինել լեռներում, վոր խնդրեցինք վոր ներվի մեզ։ Բատ այնմ, հաջորդ առավոտը գնացինք մի մեծ հայ պուղ, կոչված՝ Աշտարակ[7], գեռևս բավական մեծ մի գետի յեղերքին, վոր հոսելով ժայռի շատ խոր մի ջրանցքից, վոլորապտույտ անցնում և գաշտից, և ի վերջո թափվում և Արաքսի մեջ։ Աշտարակը կարևոր մի տեղ լինելու բոլոր նշաններն ունի, վորովհետև այնտեղ կան շենքեր՝ մի քանիսը կանգուն և ուրիշները քանդված, վորոնք կարող են պատիվ բերել ամենաքաղաքակիրթ յերկրներին։ Քարե մի կամուրջ կա գետի վրա, վորի կառուցվածքն ու հարատևությունը արտակարգորեն լավ և։ Մի ավերակ կեկեղեցի, նույնպես կառուցված հիանալի շինանյութից, ու ամենանուրբ վարպետությամբ, այժմ ուղ կերպով կանգնած և մի բլրի վրա. քիչ հեռու գերազանցն և, վորի մի կարգ շերմենները ցույց են տալիս թե այնտեղ են հանգչում յեկեղեցիները։ Յերկրի այս մասում ափսոսած են տարրեր մեծու-

* Նախապես պահում եյին գա Գեղարդի կեկեղեցում, ասում են թե շինված հատկապես դրա համար, բայց [վանքը] լսված լինելով, նիզակը ղևսեր փոխադրված և եջմիածին։ Տես, Տավերնիեյի ուղեգրությունը։ (Հանոթ. Մորկերը)։

թյամբ ու չափով յեկեղեցիներ ու վանքեր, բոլորը քարաշեն և բոլորն էլ գրեթե միևնույն պլանով։ Նրանք գտնվում են աչքի ընկնող բարձունքների վրա...։ Նրանցից մեծ մասը լքված է ու ավերակ, և դառնալով նրանց վրա գտնված արձանագրություններից, որ մենք տեսանք մեկ-յերկուսի վրա, վոչ մեկը յոթը կամ ութը հարյուր տարուց ավելի հնություն չունի։ Այս արձանագրությունները ընդհանրապես պարունակում են յեկեղեցիների հիմնադիրների անունները, վորովհետև Հայաստանում, ինչպես նաև մի կարգ ուրիշ յերկրներում, պաշտամունքի մի վայրի կառուցումն ու ապահովումը՝ թողություն և համարվում կյանքի ամբողջ մեղքերի համար։

[Ամսի] 17-ին մենք սկսանք մեր բարձրացումը դեպի այլին տաք շրջանից դեպի լեռները։... Մեր բարձրացումը աստիճանական եր...։ Մեր վրանները զարկին մի բարձրության ամենապեղեցիկ ու հարուստ արոտավայրի վրա, հարևան թափառական ցեղերի բազմաթիվ սև վրանների մոտ, վորոնք այս յեղանակին խուժում են այս հաճելի շրջանը։ Աշտարակ գեղը հոսում եր մեր մոտից միևնույն ժամանակ հունով, մինչդեռ վորքան վոր աչքը կարող եր տեսնել լեռներն ու ձորերը, վորոնք շրջապատում էին մեզ, բոլորը ներկայացնում էին միակատար կանաչ մի դորպ։ Այս բարձունքը կոչվում է Ապարան[8]* (Aberan), յենթադրում են թե վերագրվում է այն պարագային, վոր ընդհանրապես այդ վայրը ծածկված է ամպերով։ Դեպի հարավակողմը և դեպի արևելակողմը Ալագազ (Aligez) [Արագած] կանաչ լեռն է, ներկա յեղանակին ծածկված ձյունով, և նշանավոր՝ պսակված լեռնելով յերկու կատարով։ Դեպի արևելք յերևում է բարձր լեռների մի յերկար շղթա, վորոնք յեզերում են Սևանա լիճը, վորի վորոշ մասեր ծածկված են ձյունով։ Ապարան, ձմռան յերեք ամենախիստ ամիսներին, իր խիստ ցրտին ու խոր ձյունին պատճառով անանցանելի է։ Փուր-

* aber պարսկերենում նշանակում է ամպ։ (Ծանթ. Մորիեր)։

դերի և ուրիշ թափառականների ամենասիրելի յայլախն (yeylak) է, և նրանք տեսնվում են բոլոր ժամերում, նրանց սև վրանները, շրջապատված վոչխարի ու այծի բազմաթիվ հոտերով, աչքի յեն ընկնում կանաչության վրա։...

Հաջորդ որը Աշտարակ գեղից անցնելուց հետո մեր ճամբարից մոտավորապես յերեք մղոն այն կողմ, մեզ դիմավորից կազակների մի խումբ, գլխավորությամբ մի ռուս սպայի, և հաջորդ կայանից յերկու մղոն հետո անցանք մի փոքր գետից, վոր Ռուսաստանի ու Պարսկաստանի սահմանն է։ Այս գետակի յեզերքի մոտ ռուսական հետևակների մի խումբ կար շարքով կանգնած և մի թնդանոթ մի կողմում։ Բարևելու անհրաժեշտ պատվառումը տեղի ունենալուց հետո, մենք առաջացանք մեր ճամբարը և այնուհետև դեսպանը ռուսների տրամադրության տակն եր։

Կարևոր չե հաջորդ կայանների տեղագրությունը մանրամասն, վորովհետև մինչև Ղարաքլիսե[9] (Kara Kliseh), վոր սահմանի վրա ռուսների զինվորական գլխավոր կայանն է, մենք բնակության հետքերը միայն տեսանք, ամեն ինչ կատարյալ ամայության մեջ եր, շնորհիվ վերջին տասնհինգ տարվա յերկու ազգերի մեջ մղվող քայքայիչ պատերազմին։ Նույնիսկ բուսականությունը հաստատում եր այս, վորովհետև այստեղ սփռված էին մարդու և ձիու վոսկրներ։

Ապարանի մեր ճամբարից գնացինք լեռ, Գավմիշլու (Gavmishlú) կոչված մի տեղ, մի գյուղի անունից, վոր յերեսին կար այն տեղ։ Գավմիշլուից [գնալով] մեր վրանները զարկինք Համամլուի մոտ, մի գյուղ, վոր տակավին մի քանի բնակիչներ ունի, և նշանավոր է վորպես Աբբաս Միրզայի կրած պարտությունների մեկի տեղը։ Այստեղ տեսանք մի քիչ մշակված հող։ Հաջորդ որը իջանք Ղարաքլիսեի մոտ, և այս իմ ճամբորդության վերջն եր դեսպանի հետ։

Մինչև Համամլու յերկիրը ծածկված է բլուրներով ու ձորերով և ամբողջությամբ կանաչ է։ Համամլուից սկսած անտառները, վոր մեր աչքի համար ավելի հաճելի ու հանդիսացնող այլ տեսարան չեր կարող լինել, յերբ մենք վարժ-

վիզ եյինք Պարսկաստանի քարքարոտ բլուրների ու լեռների ամայութեան։ Մենք հետևյինք փամբակ գետինչերկու յղկերքից անատառապատ, որ ներկայացնում եր մի տեսարան այնքան քաղցր վորքան յերևակայել կարելի չե։ Մեր ճամբարը հասնելուց առաջ գեսպանին դիմավորելին Ղարաքլիսեյի հրամանատար գնդապետը և բազմաթիվ սպաներ, բոլորը յեվրոպական կերպարանքով, և յերբ նվագախումբը ածեց մի աշխույժ յեղանակ, հեռացավ մեղնից Պարսկաստանը ու նրա բարբարոսութիւնը, և յերևում եր թե մենք վերսին հաստատված եյինք մեր ճիշտ տեղը։

Ղարաքլիսեն վիպականորեն գետնվված և մի խոր ձորում, կազմված բարձր բլուրների տատրոտից, վորոնք մինչև իրենց կատարը ծածկված են անտառով։ Փամբակ գետը, որ հոսում և նրա մոտից և ապա թափվում և կուրի մեջ, կենդանացնում և ամբողջ բնանկարը։ Դա փամբակի շրջանի գլխավոր տեղն և, և ռուսները այստեղ պահում են տասը հազար մարդու մի ուժ, և նույն համեմատութեամբ հրետանի։ Մի բարձունքի վրա գտնվում և մի հին հայ յեկեղեցի, ուր կան մի քանի վանականներ։ Ամանը պաշտպանված չե պարսպով, բայց ռուսները կառուցել են փայտից մի բերդ, որի վրա գետնել են ձոտ քսան թնդանոթ, և դա անառիկ և, ի նկատի ունենալով այն թշնամին, որի դեմ կռվում են Ղարաքլիսեյի, ինչպես նաև յերկրի այս մասի բոլոր դյուղերի տները շինված են առարկերկրյա, որ նրանց վայրենի մի յերևույթ և տալիս, յեթե կարելի չե ասել նույն իսկ ավելի խղճուկ քան Պարսկաստանի հողե տները, բայց թվում և թե նրանք լավագույն պաշտպանութիւն են ձյունի և բարձր շրջանի ցրտի դեմ։ Ղարաքլիսեի ռուս սպաները իրենց համար վայելյա ժամանակավոր տներ են շինում, վորոնք շատ հարմար են, և լինձ հիշեցնում են Հունգարիայի ու Թրանսիլվանիայի տները։

Պարսկաստան մեր գալուց ի վեր, այստեղ առաջին անգամ խոզ տեսանք, վորոնցից մեծ հոտեր արածեցնում են բլուրների վրա։ Բնիկ պարսիկները այնքան տգետ են այս կենդանու վերաբերմամբ, վոր մի թավրիզցի, (մեր ծառաներից մեկը), տեսնելով նրանց, բացականչեց. «Տեսեք ինչ տեսակ վոչխար ունեն այս յերկրում»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խրակթալ (Istakhall), Խրիկթալ կազմված և խոտ մանրիկից և կարուլ, ընդունել բայից, հետևաբար նշանակում և ընդունելութիւն։

2. Ռուսները առաջին անգամ պաշարեցին Յերևանը 1804 թ. հուլիսին Յիսյանովի հրամանատարութեամբ, սակայն պարտավորվեցին լքել սեպտեմբերի 2-ին և հետևյալ գեպի ելմիածին և այնտեղից վերադառնալ Թիֆլիս։ Յիսյանովը իր հետ տանում եր վանքի բոլոր գանձերն, պատվակելով թե դրանք կարող են պարսիկները ձեռքն ընկնել։ Գեներալ Գարդանը, վոր իր ուղեգրութեան մեջ ասում և թե ռուսները 1805 թվին ելմիածնի վանքը կողոպտեցին, սխալվում և Յիսյանովի կատարած ավարառութեան, (տես եջ 101 և եջ 104 ծանոթ. 11)։ Յերևանի յերկրորդ պաշարումը կատարեց Ֆելտ-մարշալ Գուդովիչը 1808 թվին, վոր նույնպես անհաջող անցավ, և ռուսական այս յերկու անհաջողութիւնները հին, վոր բարձրացրել եյին Յերևանի բերդի համբավը, վորպես անառիկ, և սարսափ հուսկյին Խանը այնքան խրտնած և խոսում Մորների հետ։ (Տես, Յեր. Շահադիզ «Հին Յերևանը», եջ 129—138)։

3. Այս պատմվածքը պատմվում և զանազան վարիանտներով։ Յե. Շահադիզ խոսելով Յերևանի վերջին սարդար Հուսեյին խանի մասին, գրում և. «Սակայն նրա հյուպատակը պահպանվել և մի վիպասանական ավանդութեան մեջ, վոր պատմում և, թե մի յերկուսաթդ վրացի դնացել և բերդ և կանդնել այդ կատրջի վրա, յերդել այն հույսով, վոր կարողանա մի անդամ ել տեսնել իր խոսեցյալին, վորին քաշած տարած են յեղել սարդարի հարեմը։ Աղջիկը լսելով իր սիրեցյալի յերդը, վազել և գետի յուսամուտը և այնտեղից իրեն վայր ձգել ու բռնվել ձորալանջին բուսած ուռենու ճյուղերի վրա։ Սիրահար զույգը բռնվել, բանտարկվել և բերդում, բայց սարդարը հրամայել և արձակել նրանց, ասելով, «Քող վոչ վոք չհամարձակվի բաժանել այդքան անանջատ սիրով միմիանց հետ կապված յերկու սիրող սրտերը»։ («Հին Յերևան», եջ 185)։

4. Tours de bâton, նշանակում և կաշառք։

5. Չափու (chapow), կողոպուտի, թալանի համար կատարված արշավանք։

6. A gorge-deployé, նշանակում և կոկորդալից, կոկորդը պատռելով պոռալ, յերգել

7. Աշտարակ ավանը գտնվում և պատմական Արագածոտն գավառում Վաղարշապատից 20 կիլոմետր հեռու կառուցված և Քասախ գետի ձախ կողմը. հյուսիսային և արևմտյան կողմից բարձրանում են Արագած լեռան հյուղերը, իսկ հարավակողմը դյուղի ընդարձակ այգինները և այնուհետև լայնատարած դաշտը 60 մղոն յերկարությամբ մինչև Արաքսի յեզերքը: Աշտարակի հյուսիսային կողմը դրնված կես ժամ հեռու գտնվում և Մուղնի և հարավակողմը Ոշական, մեկ ժամ հեռավորությամբ: Մերմատենագրության մեջ հիշատակվում և Թ. գարում. բայց նրա հիմնադրությունը ավելի հին և: Մորիների հիշատակած կամուրջը գտնվում և դյուղի արևելյան կողմը, խոր ձորի մեջ, Քասախ գետի վրա, յեռակամար, կոփածո խարտյաշ քարից կառուցված: Այս կամուրջը հիշատակում և նաև Զաքարյա սարկավագը ԺԷ. դարի սկզբներում: Հին բերդատեղին կոչվում և Բերդաթաղ, որի արևմտյան կողմը տակավին մնում և հին պարիսպների մի մասը: Նախապատերազմյան շրջանում Աշտարակը ուներ 3500 շուրջ բնակիչ: Այժմ (1933 թ.) նրա բնակիչների թիվը և 5.00:

8. Ապարան գտնվում և արևելքից Ղազախ, Եշեկ Մեյդան և Դերեքիչեկ անտառապատ լեռների արևմտյան ճյուղերի, արևմուտքից Արագածի և հարավից մասամբ Արայի լեռան միջև: Դլխավոր կենտրոնն և Բաշ Ապարան: Ապարանի միջից անցնում և Քասախ գետը: Ջրերը գժղդակ են ու յերկարատև: Ամառվան ընթացքում լանջերը ծառապում են վորպես արոտավայր: Սխալ և Մորիների կարծիքը թե Ապարան անունը ծագում և պարսկերեն արեր, ամպ բառից: Ապարան հայերեն և և նշանակում և պալատ: Ապարանը իր անունը ստացել և Մոկաց ապրանից Ս.Խաչի մասունքը այդ շրջանը փոխադրվելու առթիվ: Բաշ Ապարանն այժմ (1933 թ.) ունի 2740 բնակիչ:

9. Ղարաքիլիսե պատմական Գուգարաց Տաշիր գավառում, Փամբակի շրջան Թիֆլիս–Լենինական յերկաթուղու դծի վրա: Անցյալում գտնվում և Դիլիջանից Կյումրու տանող ճանապարհի վրա: Հարավային կողմը գտնվում են անտառապատ լեռները, իսկ հյուսիսային կողմը մերկ և դրեթե անդարար սարավանդներ: Նախապատերազմյան շրջանում ուներ 2896 բնակիչ, վորոնց մի մասը 1830 թվի Երզրումի պայմանագրից: Հիմնադրության թվականը հայտնի չե: Այժմ խորհրդային իշխանության որով կուլտուրական կենտրոն և ընդարձակվում և ու վերածվում և արդյունաբերական քաղաքի: Նրա բնակչության թիվը և 14.017 (1933 թ.):

Գ.

ՂԱՐԱՔԼԻՍԵՅԻՑ ԹԱՎՐԻԶ *

Ղարաքլիսեյում գեսպանից բաժանվելուց, և հաջորդ որը (22-ին) գնդապետ Պեստելի (Pestel) հետ անցնելուց հետո, — վոր գեներալ Լիսանովիչի բացակայության այդ շրջանի հրամանատարն եր, — [ամսի] 23-ին վերադարձանք Ապարանի արոտավայրերը, անցնելով լեռների շղթայի մի կարճ ճանապարհից, վորի մի մասը տակավին ծածկված եր ձյունով:

Գեսպանը հանրայլն ծառաների մեծագույն մասը տարած լինելով իր հետ Թիֆլիս, յես սպասեցի Ապարանում մինչև նրանց վերադարձը: Իմ վրանը նախապես զարնված եր մի հին ավերակ հայ յեկեղեցու կողքին, մի գետի մոտ, (այն վոր հոսում և Աշտարակի մոտից) [Քասախ գետը], և հարևան՝ սարդարի թնդանոթաձիգներին, վորոնք գիշերները պահակ եյին պահում իմ վրանի առաջ: Իմ ժամանումից մի քանի որ հետո, սարդարը յեկավ Յերևանից և հաստատվեց Արնագած լեռան ստորոտում, և հրավիրեց ինձ հետևելու իրեն: Նախ, նա իր վրանի հաստատման վայրը ընտրելուց հետո այցելեց ինձ, և յերկրի սովորության համաձայն բերեց իր նախաճաշն իր հետ, վոր բաղկացած եր մի մեծ ամանի լեփած բրնձից ու մսից: Յերբ նա հաստատվեց իր ճամբարում, յես ևս փոխեցի մեր գիրքը նրանից գրեթե կես մղոն հեռու մի արոտավայրում, և բացի մեկ-յերկու ճաշից, վոր նա ուղարկեց ինձ, վոչ մի այլ բան չպատահեց՝ պատելու հանգստությունս:

* Morier, հատ. Բ. գլ. XXII. եջ 330—348:

մար մեզ մեր հովվական կյանքի ձանձրանալի միօրինակութ-
թյունից։



Ալեքսեյ Սավրասով. «Հոտերը հասան»։

Մենք ծանոթացանք քրդական մի մեծ ցեղի ցեղապետ Հուսեյնին Ազայի հետ, որ իր բազմաթիվ ազգականների հետ, հաճախ այցելում էր մեր ճամբարը։ Այս մարդկանց դեմքերը բնականորեն այնքան կատաղի էին, այնքան կռիվատուրային, որ փորձեցի նկարել նրանցից ամենաաչքառուներից յերեքին։ Այն մարդը, որ նիզակ ուներ իր

ձեռքում, խնամի չե սարդարին, և կոչվում է Ոkouz (Okouz), յոզ, իր մեծ ուժ. պատճառով։

Սակայն, չեմ ուզում մոռացութ յան տալ մի դեպք, որ լայնորեն հատկանշում է պարսիկների ճաշակն ու զվարճութ յան [յեղանակը]։ Այն որը, յերբ սարդարը այցելեց ինձ, մատնանշեց Արագածի ձյունապատ յերկու գագաթները, և ասաց. «Գիտեմ որ դուք սիրում եք ցուրտ կլիման, մենք այս օրերին կգնանք վերև՝ այնտեղ, կնստենք ձյան վրա և կուտենք fեբաբ (kabob)»։ Ըստ այնմ մի որ վորոշեցինք և առավոտյան մոտավորապես ժամը ութին հեծանք մեր ձիերը և միանալով սարդարին, — որ շրջապատված եր բազմաթիվ սպասավորներով, — բարձրացանք լեռն ի վեր։...

Նախ մտանք մի խոր ձոր, առատորեն ծածկված վայրի խոտերով ու ծաղիկներով, և որի միջից հոսում եր ձյունհալից կազմված մի վտակ։ Հազիվ թե այս ձորի կեսը հասել էինք, յերբ ամենակատաղի մի տեղատարափ սկսավ, և մենք մինչև մեր վոսկորները սկսան թրջվել։ յեթե բարեբախտաբար հասած չլինեյինք քուրդերի մի ճամբար, և անմիջապես չապաստանեյինք նրանց վրաններից մեկում։ Սպիտակ մորուքով մի ծերունի, ճամբարի գլխավորը, անմիջապես վազեց սարդարին, համբուրեց նրա ձեռքն ու թեզանիքը հետևն անգամ, և բացականչեց. «Յես ձեր սարուկն եմ, իմ վրանները, իմ հոտերը, ինչ վոր ունեմ ձերն է»։ Սարդարը, վոր թվում եր թե դժգոհ չեր ընդունելու նրա նվերը, հրամայեց իր մարդկանց վոր բերեն յերկու գառնուկ, խոստացված fեբաբի համար, և պահանջեց ծերունուց տալուց, վոր նրանց տանե մեզ համար մինչև ձյունը։ Ծերունին, ըստ յերևույթին անկեղծորեն, նորից կրկնեց իր ամբողջական նվիրվածությունը, և հրամայեց իր զավակին լեռ բարձրանալ գառնուկների հետ։ «Վերջան ժամանակ, ասաց սարդարը, դու այստեղ կաս»։ Յես, պատասխանեց ծերունի քուրդը, ինչո՞ւ, իմ հայրը, իմ մեծ հայրը, և իմ ամբողջ նախնիքը, ուրիշ տեղ չեն տեսել այստեղից դուրս, այստեղ և վոչ մենք միշտ արածացրել ենք մեր հոտերը»։ «Յեվ դուք

չ՞ք վախենում»։ «Ի՞նչից վախենանք, վորքան ժամանակ մենք սարդար ունենք մեզ պաշտպանելու»...

Յեղանակը բացված լինելով, մենք առաջացանք դեպի մեր վորոշած վայրը։ [Այնուհետև հեղինակը մանրամասն նկարագրում է Ելբաբի խնճուղքը ձյուների մեջ, վոր կարևոր չենք համարում թարգմանել]։

Բացի Արագածի այս ալեկոծությունից, Ապարանում իմ կեցած ժամանակ ուրիշ մի դեպք ել տեղի ունեցավ, վոր հիշատակության արժանի է։ Դա մի ալեկոծություն էր ընդմիջին, հայերի պատրիարքին։ Այս, ալեկոծության իմ գլխավոր նպատակն էր՝ քննել վանքի մատենադարանը ուր, կես լսել եյի, թե գրական գանձեր կան թաղված, վոր վոչ մի ուսումնական պեղած չէր։ Ընկերացած գեսպանատան վիրաբուժին, իջանք տաք գաշտը, և առանց նախազգուշացման յեկանք բարի ծերունի պատրիարքին, [Եփրեմին], վոր խվում էր թե շատ ուրախ էր մեր այցելության համար, և պնդեց վոր մեր բնակության համար ընդունենք իր սենյակը։ Այստեղ մենք գրեթե հոշոտվեցինք մժեղներից...

Պատրիարքը վոչ մեկ դժվարություն չարեց՝ արտոնելու համար վոր մենք քննենք մատենադարանը։ Նա կատարելապես անտեղյակ էր նրա բովանդակության, գրքերի մասին նա այնքան գիտեր միայն թե, նախապես շատ ավելին կար այնտեղ։ Իր հարկաբաժնին կից մի նեղ անցքից նա անձնապես ինձ առաջնորդեց այնտեղ։ Մի մութ փոքր սենյակի կողքերին գրքերը խիտ շարքերով շարված եյին, առաստաղին ծածկված փոշով, և յերևութապես նրանց ներկ տերերը այնքան ել ձեռք չեն տվել նրանց։ Ջուր տեղ մի ցուցակ ուղեցի, գրքերի մեծագույն մասը կրոնական եր, վարք սրբոցներ, ավետարանների որինակներ։ Վորպես հազվագյուտ գիրք նրանք ինձ ցույց տվին Պոպլի Հռոմերոսի մի հին հատոր։ Նրանք ավետարանի բազմաթիվ հին ձեռագիր ունեն, բայց վորոնք վոչ մեկ հիշատակության արժանի չեն։ Շատ դժվար եր, իմ առաջնորդների ծայրահեղ տգիտության ու անտարբերության պատճառով, ամենափոքր

տեղեկություն անգամ քաղել գրքերի մասին, վորքան յերբ և ձգի եր հավաքել, և ինչ և նրանց մասնավոր բովանդակությունը։ Ավելի հավանական և վոր գրադարանը միմիայն հայ կղերականների համար արժեք ունի, և գտնվի իմ աչքի առաջ ունեցածներից, յերևում եր թե այնքան ել նշանակություն չունի թե այդ գրքերը գոյություն ունենան, կամ ուղարկվեն տաքացնելու մուսուլմանների քաղնիքները։

Այն որը, յերբ մենք պատրիարքի մոտ մնացինք, առիթ ունեցանք ծանոթանալու հայերի նախապաշարման աստիճանին։ Յես արդեն ասել եմ թե այն նվիրական նիզակի պլուխը [գեղարդը], վոր պահվում և վորպես մասունք յերկրպագվում, նրանք վստահ են վոր նա իր շնորհների մեջ ուժ ունի նաև զայրացնելու ժանտախտի առաջացումը։ Այս սարսափելի ախտը կատաղորեն տարածված եր Թիֆլիսում և մեծ ավեր եր գործում բնակչության մեջ։ Այս պատճառով մի պատվիրակություն ուղարկված եր պատրիարքին, խնդրելու վոր փոխ տրվի գեղարդը, վորպեսզի չարիքը արագորեն վերջ գտնի։ Պատահեց վոր մենք ներկա գտնվեցինք, յերբ պատվիրակությունը ժամանեց, պատրիարքը նրանց ընդունեց մեծ պաշտոնականությամբ, և կատարվեցին յերկար խորհրդակցություններ այն մասին թե պետք և թույլատրել վոր նվիրական գործիքը ենթարկվի պարիսպներից դուրս հանվի թե վոչ։ Վերջապես վճռվեց թույլատրել, վոր դա կատարի իր սուրբ պաշտոնը, և բազմաթիվ արարողությունից հետո՝ ինչպես սաղմոսերգություն, յերկրպագություն, համբուրում և զանգակների հնչուածը, [գեղարդը] հանձնվեց պատվիրակներին, վորոնք անմիջապես վերադարձան Թիֆլիս։ Մենք հետո տեղեկացանք, թե Թիֆլիսում վոմանք շատ ջերմեռանդորեն հավատում եյին թե, գեղարդը քաղաքի մեկ դռնից ներս մտնելուն պես, ժանտախտը՝ մարդկային գլխով մի կովի կերպարանքով, դուրս և յեկել մյուսից, և ախտը անմիջապես վերջ և գտել։

Մենք խոստացել եյինք պատրիարքին հաջորդ որը մնալ

նրա մոտ, բայց ցերը անկողին մտանք չկինք գիտեր գիշերվա համար մեզ ապաստան ընդունելու բնության փաթաթված մժեղների դեմ պաշտպանող ցանցերի մեջ մենք մի կերպ հաջողվել էինք քնել, ցերը մոտավորապես կես գիշերին չկկոցյուն բոլոր դանդակները սկսան հնչել, (մեր ականջին վոչ հիասն յարդա հեռու), և վորին ավելացավ վանականների խմբերդը։ Ցեվ վորովհետև մենք պարժվել էինք լեռնների հանդարտության ու առանձնության, այս տարորինակ ձայները զարմացրին մեզ։ Ի դեր մենք ապաեցինք վոր չուտով վերջ գաներ նրանց չհանդը. աղմուկը շարունակվից մինչև արշալույս, ցերբ անկարող քնելու, մենք կամացուկ վեր կացանք, թամբեցինք մեր ձիերը, և մինչև վոր հայ չկկոցյուն բարի ծերունի գլխավորը հասկնար քինչ և պատահել, մենք դեպի մեր վրաններն կես ճանապարհին եյինք։

Մի չերկու որ հետո, նա ինձ ուղարկեց մի հոյակապ նամակ, զարդարուն ու վոսկեզոծ, թիֆլիզյա մի տուփի հետ լի մի կարդ բաններով, վորոնք նա անվանում եր հնություններ, վորոնց համար նա իմացել եր թե անգլիացիները խնդիր եյին։ Սրանք բաղկանում եյին, առաջին՝ բուտով վրա փորագրված մի [մարդու] պատկեր հնձած ձկան վրա. նա անվանում եր մի հին հայ թագավոր, Սամսոն անունով վոր սակայն մի նեպտոն եր (Neptune)։ Յերկրորդ, մի քիմա խոտի տուփ բաղադրյալ քարից, վոսկյա շրջանակով, մոտ տասը շրլինդ արժողությամբ, և այնքան հին, վորքան նորին բարձրաշնորհությունը։ Յերրորդ, չերեք հատ սասանյան դրամ, և մի մեծ սպանիական դոլար, մի հայ քահանայի դրպանում լավ մաշված։ Ի հարկե իմ շնորհակալությունը հավասար եր նվերին և մենք նորից լավ բարեկամներ եյինք։

Յերբ մենք Ասլարանում եյինք, Չերքեզիատանից բերին չերկու հարյուր տաճիկ ուղտ (dromedary) վաճառելու համար։ Նրանց տերերը, վորոնք չհբեզներ եյին, ցույց տվին սարդարին, վոր գնից մեծ թվով...

Հուլիսի 21-ին ծառաներն ու բեռները հասան Թիֆլիսից և կարանթինալից անցնելուց հետո, նրանք միացան մեզ։ չերկու որ հետո մեկնեցինք դեպի Թավրիզ և մեր առաջին կայարանն եր Քանաքիռ[1] (Kinakir), բարձունքի վրա մի գյուղ, գրեթե չերեք մղոն հեռու Ցերևանից։ Մեր ժամանման առավոտը, մի թաթար[2] յեկավ կ. Պոլսից և տեղեկությունն հաղորդեց ինձ Թե Մր. Ելլիս (Ellis), իրանից մի քանի որ հետո պիտի գա, նշանակված մասնավոր առաքելությամբ Պարսկաստանի Թագավորի մոտ։ Հետևաբար, յես վճռեցի նրկայումս չշարունակել իմ ճանապարհը, և ըստ այնմ ավելի մի բարձր տեղ ընտրեցի ճամբարի համար և վերջապես հաստատվեցի այն տեղ...

Ոգոստոսի 6-ին յես մի արշավանք կատարեցի դեպի Սևանի լիճը, ճշտելու համար նրա աշխարհագրական դիրքը և տեսնելու չերկրի մի մասը, ուր հազիվ Թե այցելած են յեվրոպացի ճանապարհորդները։ Ինձ ընկերանում եր փարսիզ ազան, մեծապես հարգված մի հայ, վորի դեկավարության ներքո են գտնվում այս շրջանի շատ գյուղերը։ Մենք արևը մար մտնելուց մոտ չերեք ժամ առաջ ճամբա յելանք և կանգ առինք Գեոք քլիսե[3] (Guk klisseh) կոչված գյուղում, ուր մենք անց կացրինք գիշերը, յուրաքանչյուրս մի փոքրիկ վրանում։ Այս գյուղը ամբողջովին հայ են, վորոնց տները վրաստանի նման շինված են սոսրչերկրյա։ Նրանք նախ ընտրում են զառիվայր մի գետին, և փորում են իրենց բնակարանի չափին համաձայն, ապա շինում են ճակատը և ամբողջ ծածկում են մի sbrասով, այսպես ցրտի դեմ կուննան քիչ տարածություն, տան չերեք կողմերը կազմած լինելով փորված գետնից։ Արշալույսը բացվելուն մեկնեցինք այնտեղից, և վոչ մի բնակված վայր չտեսանք մինչև հասանք լիճը։

Այն հողամասը, վորտեղից անցանք, մեծ մասամբ արոտավայր եր, տեղ-տեղ ժայռի շերտերով։ Դա ուներ Ասլարանի բարձրությունը, վորին հավասար լինելը մենք յեզրակացրինք կլիմայի ցրտությունից։ Գառնիյարիք[4] (Karnirekh) լեռը մեր ձախ կողմն եր, մինչ մեր աջ կողմը շատ

մոտ կային բլուրներ։ Լիճը չեր յերևում, մինչև վոր մենք յերկու յերեք մղոն մոտեցել եյինք նրան։ Շրջապատված է վայրի լեռներով, և բնակչություն չունի։ Նրա ամենաուշագրավ պատկերը մի փոքր կղզին է, գեռեվված հյուսիսային ծայրը, և վորի գագաթին հեռվից տեսնվում են հայկական յերկու յեկեղեցիների կոնաձև կտուրները։

Այս լճի յերկարությունը մոտավորապես յերեք անգամ մեծ է նրա լայնությունից. նրա դիրքը, վորքան տեղեկացա, մերձավորապես հյուսիս ու հարավ է։ Նրա շրջագծի մասին դրական տեղեկություն չկարողացա ստանալ։ Իմ ընկերակիցը, Փարսեղ աղան, ասաց թե յերեք որում կարելի յե դառնալ նրա շուրջը, չափավոր կերպով ճանապարհորդելով, բայց նա չեր կարող ավելի ճիշտ չափը տալ, շրջապատը կարելի յե դառնալ հոգնությամբ յերկու օրից։ Հետևյալով սրանից և ուրիշ պարագաներից, կա յենթադրում եմ, թե նրա հեռավորությունը չորանասուն մղոն է։ Հյուսիսից և արևելյան կողմից՝ լիճը յեզերված է խորդուբորդ լեռներով, բարձրանալով ուղիղ ափից, լերկ ու ամրողջությամբ դուրկ անտառից։ Դեպը հյուսիսակողմը կազմում է մի ծովախորշ, նույնպես յեզերված լեռներով, վորոնք նվազ խորդուբորդ են, մասամբ ծածկված լինելով անտառով և կանանչազարդ են մինչև իրենց կատարը։ Այս ուղղությամբ կա մի հողմաս, նշանավոր իր արոտավայրով և նկարագեղ գեղեցկությամբ, կոչվում է Դարաչիչեկ (Derehchichek) կամ Ծաղկաձոր, թափառական ցեղերի շատ սիրելի հաճախավայր։ Նրա [լճի] հարավային ծայրամասերը շրջապատված են նվազ բարձր հողաժասերով, քան հյուսիսայինը, բայց ծայրահեղորեն խորդուբորդ ու լերկ, և յերևութապես վայրի գազանների ապաստարան։ Այս լճի հատկություններից մեկն է հարատևորեն ամպերով պատված լինելը, վոր հետևանք է շոգիացման, և վոր հաճախակի տեղատարափով յեթ և դառնում։ Նրա ջուրը յերևում էր կատարելապես թարմ և խմելու հարմար, թեև բնիկները չեն կարծում թե առողջարար է։ Վխտում է ձկով, վորոնցից ամենանախընտրելին և կարմրախայտը, պարս-

կերենում կիզիլ ալլահ՝ (Kizil allah) [իշխան ձուկը], վոր լիճը թափվող գետերի բերանում բռնվում է անսահման քանակությամբ։... Տարբեր մեծությամբ տասնյերեք գետեր թափվում են լճի մեջ, և մի բավական մեծ գետ՝ Զանգուն (Zengui) դուրս է գալիս նրանից։ Այնտեղ, ուր հոսում է լճից նրա առուն, մոտ մեկ վոտք խոր է, բայց շուտով ուռճանում է ընդունելով իր մեջ ուրիշ չրեր և ի վերջո թափվում է Արաքսի մեջ Արարատի ստորոտում։ Ասում են թե Զանգվի ջուրը միտում ունի քարացման։ Վորոշապես ծանր է և շատ վատառողջ խմելու համար։



Սեվանի կղզին, (նկար Ջեյմս Մորիեթի).

Կղզին յեզերքից մոտ կես մղոն [հեռու] յե, և այնտեղ բնակվում են հայ վանականներ, վորոնք իրենց վատ ընթացքի համար, ելմիածնից ուղարկվում են վորպես աքսոր։ Մեր այցելության ժամանակ տասնյերեք մարդ եյին ապրում այնտեղ, յերեքը կամ չորսը քահանա, և մնացյալները բանվոր։ Նրանք յեզերքի հետ հաղորդակցում են մի լաստե մեջոցով, վոր յերկու թիով յեթ ու առաջ են թիավարում, և յերբեք ոտարականներին չեն վերցնում։ Յերբ իմ առաջնորդ Փարսեղ աղան հասավ կղզու հանդիպակաց ափը,

* Կարմիր աստված։

Կսաւ բարձր ձայնով պոռալ, շարժելով միաժամանակ իր գլխարկը, և այսպես աքսորականների ուշադրությունը հրավիրից մեզ վրա. քիչ հետո տեսանք վոր նրանք իրենց լաստը թիավարում են դեպի մեզ։ Գլխավոր քահանան [վարդապետը] յեկավ ստուգելու մեր ինքնությունը, և յերբ հաստատից մեր ով լինելը, մոտեցավ լճափին, և մենք բոլորս մտանք լաստի մեջ, նստելով մի տեսակ պլատֆորմի վրա, և ապահով կերպով հասանք կղզին։ Քահանան, վոր ցնցոտիների մեջ եր, կրում եր մի մաշած վեղար, և նրա դեմքը ցույց եր տալիս վոր նա արժանի եր աքսորի. անմիջապես վազից դեպի յեկեղեցին և սկսավ հնչեցնել զանգակը իր ամբողջ ուժովը, իր հյուրերին պատվելու համար, և ապա վառից յերկար ճրագ ու մոմ, պատարագ մատուցանելու մտադրությամբ։ Շենքի հոտը այնքան վատ եր, վոր մենք հրաժարվեցինք սպասելու արարողության վերջավորությանը, և քալեցինք դեպի կղզու կատարը, տեսնելու համար յերկու յեկեղեցիները, վորոնք շատ հին լինելու համբավը ունեին։ Նրանք նմանում են Յերևանի շրջանում տեսնված [յեկեղեցիներին], — հաստատուն կերպով կառուցված, բայց քիչ արժանի ուշադրության։ Նրանք հիրավի վկայում են ժամանակավորապես թե նախկին ժամանակներում վճռքան ծաղկած և յեղել Հայաստանի վիճակը, վոր կարողացել և քաջալերել ու պահպանել մի կրոնական հնմնարկություն, այնքան վառավոր ու մեծ չափով, ինչպես վկայում են այս բազմաթիվ ու հիանալիորեն կառուցված շենքերը։

Կղզին գտնվում և լայնության 40° 30′ հյուսիս, ըստ հարյուրապետ Մոնտիսիթի նկատողության։ Յենթադրում եմ վոր մոտ մի մղոն շրջափակ ունի։ Նրա մակերեսը հողի ու ժայռի խառնուրդ և, և աքսորականները մի կտոր հողամասի վրա մշակում են բանջարեղեն ու պտուղ։

Հաջորդ որը վերադարձանք մեր ճամբարը։ Ոգոստոսի 14-ին Մր. Ելլիս ժամանեց, և 27-ին մեկնեցինք դեպի Թավրիզ, մտադրված լինելով գնալ այն ճանապարհով, վոր մենք գտել եյինք մինչև Նախիջևան, և Արաքսից անցնել Գարգարից (Gerger)։ Բայց, դժբախտաբար մեր ճանապարհորդության ակզբնավորության կանգ առինք, Մր. Ելլիսը ծանրորեն հիվանդացած լինելով, և պարտավորվեցինք առաջին կայարանում, Գառնի գետի ափին, իջևանել։



Գեղարդի վանքը, նկատ Գեղամ Մոլիների։

Այս հապաղման առիթը կ՚ես ոգտագործեցի տեսնելու Գեղարդի (Keghort) յեկեղեցին, վոր այս յերկրում համարվում է շատ հետաքրքիր մի վայր, և հայտնի է հայերի մեջ, վորպես յերկար ժամանակ սրբազայրը այն նշանավոր մասունքի, վորի մասին արդեն հիշատակված է, այն գեղարդը վոր ծակած է մեր փրկչի կողքը։

Ընկերացած մեհմանդարի հետ մենք գնացինք գրեթե արևելյան ուղղությամբ, ճանապարհորդելով Գառնիի ափերից, մինչև այն տեղ ուր [գետը] բղխում է մի ձորից, վորի միջից անցնում է, սկսած իր աղբյուրից։ Թողնելով այն մեր աջ կողմը, մենք անցանք մի ծայրահեղ ամայությունից, քարոտ յերկիր, վորի հողը ընդհանրապես կրային է, զուրկ բուսականությունից, մինչև հասանք Գառնիի մեծ դյուղը, վորից գետը այժմ առնում է իր անունը, ուր թվում է թե վերտին մտնում էլինք բնակված մի շրջան։

Այս վայրը զեռելված է մի անհուն անդունդի յեզերքին, վորի հանդիպակաց կողմը բարձրանում է մի լերկ ուղղահայաց լեռ։ Գյուղի կողմը գետինը կազմված է զանազան գահավանդներից ու զառիվայրերից, ուր տեսնվում են մի բերդի ավերակներ, բաղկացած մի գռնից, և յերկար տարածության պարիսպներից։ Նրա մի անկյունում, մի գահավանդի անմիջական յեզերքում, կան Հոնիական վոճի (Ionic order) մի շենքի մնացորդները, միջին դարերի ճարտարապետության նշանները, ունենալով հռոմեական վարպետության բոլոր նշանները, և բոլորովին ոտար պարսկական կամ հայկական վորևե բանի։ Ինձ թվաց թե դրանք մի փոքր տաճարի մնացորդներն եյին, թեև նրա կատարյալ կործանումից, անկարելի պիտի լինի ճշտորեն վորոշել թե ինչ և ինչպես եղել նրա որիգինալ ձևը։ Կոթողների տրամագիծը յերկու վոտք եր։ Հոնիական սյունագլուխը, ծոփորի զարդարանքները, ձեղունի մասերը, և նրա բոլոր մնացորդները, բոլորը ցույց եյին տալիս կատարյալ ճաշակ, և տակավին մնացքան լավ պահպանված, վոր ցույց եր տալիս թե դա վարպետորեն կառուցված մի շենք եր։

Բերդի գուռն ու պարիսպները նմանապես իրենց ծագումով պատկանում են ավելի մեծ հնության, քան ընդհանրապես հայկական ավերակներն են, և դատելով իրենց վորմնադրության տոկունության, չափից, հարմարության, և դանգվածի լավ վարպետության, նրանք փաստորեն ժամանակակից են հոնիական շենքին։



Գառնիի զարդաքանդակներ, (նկար Ջեյմս Մորիերի)։

Այս յերկրում գրեթե բոլոր հնությունները ծածկված են առասպելով ու տգիտությամբ։ Սակայն Մովսես Խորենացին պատմում է Գառնիի, և մոտավորապես բերդի և վերև հիշատակված հոնիական շենքի մասին։ Նրա Ա. գրքի 71ւրդ ժԲ.-ում նա ցանկանում է, վոր մենք հավատանք թե Հաբեթի լիններորդ հաջորդ Գեղամը առաջին անգամ շինեց այն, կոչեց իր անունով*։ Նա ասում է նաև կառուցված է Հրազդանի ափերում, ուրեմն պետք է վոր լինի մեր որերի Գառնին։ Գիրք Բ. Գլ. Ղ. հիշատակում է. «Զայսու

* Տե՛ս, Մովսես Խորենացի, (Ղուկ. Մատ). եջ 45։

ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթապատ և կապարով ածուցեալ, յորում շինեալ է տուն հովանոց, մանարձանօք, աքանչելի զրօշուածովք բարձր քանդակաւ, ի համար քեռի իւրոյ Խոսրովադխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրովք*։ Տրդատ ապրում եր Դիոկղետիանոսի ժամանակ, ըստ հայ պատմագրի իր գործի վերջում ասած յուցակի։

Գառնիից, (որ մոտավորապես տասն վեց մղոն կամ յերեք փարսաղ հեռու է մեր ճամբարից), մենք գնացինք ավելի հեռավոր լեռներ, որոնք ծայրահեղորեն վայրի ու վիպական մի յերևույթ ունէին, և իջանք մի խոր ձոր, որտեղից հոսում և գնում։ Այնտեղ կա մի հայ գյուղ, որի դիմաց աչքառու և գրեթե անմատչելի լեռան մի մասի վրա պոնվում է մի հին քառակուսի բերդ, աշտարակներով, կոչված Կիզ Քալեսի (Kiz Galehsi) և նրա մոտ մի հայ յեկեղեցի։ Հարյուրապետ Մոնտիեթը ինձ տեղեկացրեց թե, ինչ այցելել և Բիրս (Byrs) կոչված մի ավերակ, զետեղված այս լեռնաշղթայի մի բնական զորավոր դիրքի վրա, և թե շատ մեծ հնութեան նշաններ ունի։ Հավանորեն Բաբիրսայի (Babyrsa) ավերակները լինեն, Տիգրանի և Արտավազդի գանձի քաղաքներից մին**։

Սրանից այն կողմ տեսարանը մինչև յեկեղեցին ու գիղարդի վանքը վայրի չե ու մեծաշուք։ Լեռները նեղկայացնում են հողի, ժայռի ու մացառի խառնուրդի հսկա պանդուխներ։ Մի կարգ տեղերում ժայռերը գրեթե ուղղահայաց են, կարծես թե մի ցնցում արմատախիլ և արել նրա հիմքի ամբողջ զանգվածը։ Գնդարդ գնալու համար անհրաժեշտ է անցնել մի նեղ ճանապարհից, որ ոլորվում է լեռան կողքին. վանքը յեղակարծորեն յերևում է ժայռի մի անակնկալ գարձվածքի վրա, զետեղված վիպականորեն հիանալի ժայռերի մի ամփիթատրոնում, որոնք բարձրանում են նրա

* Խորենացի, եջ 243։
** Strabo, lib. XI p. 529 (Morier. եջ 341)։

շուրջը. կառուցված և քարից լինչպես մյուս բոլոր յեկեղեցիները Յերևանի ամբողջ հողամասում, և մի շարք կոպիտ սենյակներ կան նրա շուրջը, որոնք ծառայում են կրկնակի, այն և պաշտպանության և վանականների բնակության համար։ Այս յեկեղեցու հետաքրքրական մասերն են մի կարգ փորված սենյակները, որոնք նմանչներ են այն նեղուցներին ու աշխատանքին, որ պետք են ածվել այս վանքի ամբողջացման համար։ Այս սենյակները թվով յերեք են, լուսավորված վերևից ժայռի մեջի բացվածքով, և հղկված են ու վերածված խորաններին, մեներաններին ու խոտովանարաններին, բոլորը այնքան կոպիտ ու բարբարոս ճաշակով, որ կարող է կատարվել կամ հավանվել միայն այժմյան մի հայի կողմից։ Յեկեղեցու անմիջական շրջակայքի լեռներն ու ժայռերը շատ վայրերում փորված ու տաշված են, կամ ժամանցի համար և կամ իբրև հետեվանք վանականների ապաշխարողական աշխատանքի, բայց բոլորն էլ միևնույն կոպիտ ու բարբարոս ճաշակն ունեն։

Յեկեղեցու պատերը՝ թե դրսից և թե ներսից փորագրված են հայկական արձանագրություններով, գլխավորապես իբրև հիշատակարան բարեգործական նվիրատվությունների, կամավոր նորոգումների և բարեպաշտ անձնավորությունների կողմից տրված յեկեղեցու զարդարանքների։ Գլխավոր խորանի ճակատի վրա մի յերկար արձանագրությունը՝ արտահայտում և բառեր հետևյալ նպատակի համար. «Թող հայտնի լինի, որ մեր մեծ ու բազմապատիկ մեղքերի համար, մեզ այցելեցին Լենկթիմուր և իր կործանիչ բանակները, որոնք բազմաթիվ դժբախտ քրիստոնյաներին սպանեցին ու գերի վարեցին, յեկան այս յեկեղեցին, քանդեցին այն և կողոպտեցին այն մեծ գանձը, որ կուտակվել եր բարեպաշտ ու բարեգործ անձերի յեռանդի շնորհիվ»[6],

Հայերը լքել են այս վայրը քառասուն կամ հիսուն տարիներից իվեր։ Գոնվում է տակավին բավական լավ վիճակում, շնորհիվ իր կառուցվածքի ամրության, և շատ քիչ դանքով կարելի կե այն կատարյալ դարձնել։ Տարվան վո-

ղող յեղանակին հայերը հաճախում են այստեղ վորպես ուխտավայր, և յես նկատեցի խորանի վրա ցիցերից կախված ճյուղերից ու թելից շինված աղիղներ, վոր յենթադրում եմ թե ուխտանվեր մատուցումներ եյին, բայց նրանց նշանակության մասին վորևե տեղեկություն չկարողացա առանալ։

Վերադառնալով Գեղարդից մենք այցելեցինք վիրաբի հայոց յեկեղեցին, մեր ճամբարից մոտավորապես լինը մղոն հեռու։ Ճանապարհը անցնում է քարմաթիվ ծաղկյալ գյուղերից և առատորեն մշակված հացահատիկի դաշտերից։ Արաքսից քառորդ մղոն հեռու յե վիրաբը, գետեղված մի կարգ բլուրների հարավային կողքին, վորի մերձակայքում կա մի գեղեցիկ մարզպետին, տեղ տեղ ճախճախուտ և տարվան այս յեղանակում առատ վայրի սագերով։

Ամբողջ հիմնարկը լքված է, բայց յեկեղեցին լավ վիճակում է, և մի քիչ մաքրելուց հետո կարող է գործածության համար հարմար լինել։ Ներսը մի անկյունում ս. Գրիգորի վիրապի վրա, կա սուրբ էջմիածնի մի մատուռ, նեղ ու մութ, վորտեղ մեր լամբից վոչ վոք չէջավ, սակայն ներսից լսեցինք խարխուլ վիճակին պատճառով։

Գառնիի ավերի վրա մեր արգելափակումը, շատ ձնառակար յեղավ մեր ճամբարի ընդհանուր առողջության համար, վորովհետև հազիվ թե մեզնից մի յեվրոպացի, մի հնդիկ կամ մի պարսիկ գտնվեր, վոր հիվանդացած չլիներ ջերմով կամ դողով։ Ձեռ յերջանիկ եյի, վոր ազատ մնացի հիվանդությունից, ժամանակին դեղ առնելով, ինչպես նաև ժարզանքով, վոր յես կատարում եյի շարունակ ամեն առավոտ։ Այս յեղանակին Ցերևանի դաշտը վխտում են լորամարգիներով, վորոնցից շատերին եյին սպանում մեր ճամբարի շուրջը։ Պարսիկները այս թռչունը վորսում են շատ հետաքրքրքիր և, հիրավի, հաջող յեղանակով։ Նրանք յերկու ցորեղեր են անցնում իրենց գոտին, վորոնց վրա նրանք ղեղում են կամ իրենց վերարկուն և կամ տափատը, և սրանց հետևից վորպես թե նմանում են մի կենդանու կոտորներին։ Ապա, ձեռքի մի ցանցով նրանք թափառում են արտերում,

և լորամարգին տեսնելով մի կերպարանք ավելի նման կենդանու քան մարդու, թռչել և տալիս վորսորդին այնքան մոտ, վոր նա կարող և գցել իր ցանցը նրա վրա...



Լորամարգի վորսորդություն, (նկար Ջեյմս Մորիեթի)։

Այն յերկար ժամանակի ընթացքում, վոր մենք գտնվում եյինք Արարատ լեռան մերձակայքում, թեև մենք հաճախակի ծրագրեր պատրաստեցինք վեր բարձրանալու համար, սակայն այս ու այն պատճառով միշտ արգելվեցինք։ Մենք այնտեղ եյինք այդպիսի ձեռնարկի համար ամենաարմար ղեղանակում, ոդոստոս ամսին, վոր ժամանակ ամենաքիչ ձյուն ունի։

Ամենաբարձր գագաթը հասնելու անկարելիությունը, նույնիսկ այն կողմից, վոր ամենից ավելի մատչելի յե, մեզ վստահացրին թե, վճռված եր միքանի տարի առաջ Բայազիդի փաշայի կողմից։ Նա ձիավորների մի մեծ խմբի հետ մեկնած եր այդ քաղաքից, ամենանպաստավոր յեղանակին և հաջողի կողմից բարձրացել եր լեռը այնքան, վորքան հնարավոր եր ձիով։ Վերելքի ճանապարհին յերեք կայարաններ նշանակված եյին, վոր տեղեր հյուղակներ եր շինել

ավել և հավաքած եր մթերք։ Յերկրորդ կայանը ձյունն եր։ Նա դժվարություն չեր ունեցել բարձրանալու ձյան շրջանը, բայց չերը նա հասել եր սառույցի մեծ ծածկոյին, վոր պատում է կատարի կոնը, չեր կարող այլևս առաջ գնալ, վորովհետև իր մարդկանցից շատերը բռնվել եյին սոսկալի շնչարգելությամբ, ոդի մեծապես նոսրացման պատճառով։ Նա, նախապես մեծ վարձատրություն եր խոստացել նրան՝ ով վոր հասներ կատարին, բայց թեև շատ քուրդեր, վորոնք ապրում են նրա ստորոտում, փորձել են, բայց նույնպես ձախողել։ Բացի ոդի մեծապես նոսրացումից, նրա մարդիկ վատանդի տակ եյին ընկնում սառույցից, վորի մեծ կտորները պոկվում են գլխավոր զանգվածից և գլորվում ներքև։ Ամառվան ընթացքում գագաթի սառույցի պատյանը բավական հովից տեսնվում է փայլելիս, և չեթե ծերունի բնակիչները հավատանք, սառույցի այս մեծ զանգվածը նկատելի կերպով ավելացել է։ Այս լեռան գլխավոր դիմագիծը այն հակայական վիհն է, վոր տարածվում է գրեթե նրա կեսը և վորշակի տեսնվում է Յերևանից ու շրջակա հողամասերից։ Հողի մի մեծ բլուր, յերևութապես ոտար լեռան որիգինալ և բնական կազմության, տեսնվում է վիհի միջձակալքում, վորի առենապոր բացվածքում սառույցի մի զանգված կա, վորի մեծությունը, ըստ բնիկների, հավասար է մի մեծ տան կամ աշտարակի։ Փաստորեն դա վայր է ընկել մի առագաստից, նշմարելի հեռվից, վոր բավական ծռված է անդունդի վրա։ Հայերը, վորոնք գիտեն, այս սառցակույտի վրա հետևյան ավելացող սառույցը, սպասում են վոր նախկինի մեծության հավասար մի այլ զանգված շուտով պիտի բաժանվի լեռնից և գլորվի անդունդի մեջ։ Փորձառությամբ նրանք սովորել են վոր այն անկումը տեղի չե ունենում ամեն քսան տարին մի անգամ և պետք և հավատք ընծայել նրանց վկայության, վորովհետև նրանք Արարատի վրա նայում են վորպես ամենանվիրական մի վայրի, և հետևաբար կանոնավորաբար ու հաճախակի կատարում են նվատողություններ նրա վերաբերմամբ։ Սառույցի այն զանգվածը, վոր այժմ տեսնվում է անդունդի մեջ, ընկել է այնպիսի մի դիրքի մեջ, վոր իր մակերեսի վրա արևի տաքությունը ընդունում է որևէ գրեթե յերկու ժամ, և այնքան և հալեցնում, վոր չերը վերստին տակերի տակ է ընկնում անմիջապես սառչում է։

Ձյան վորդը, վոր այնքան վատահորեն հիշատակում և Մարաբոն (գիրք XI), վոր իբր թե գոյություն ունի կովկասում, և ընդհանրապես պարսիկներն ու հայերը հավատում են թե նեղկա որերում գոյություն ունի Արարատի ձյունների մեջ, չերևում և առասպելական։ Մենք հաճախակի վարձատրություն առաջարկեցինք նրանց, վոր մեկ հատ բերեն, բայց չերբեք չհաջողվեցինք։ Պարսիկները նեղկայացնում են այն վորպես մի փոքրիկ սպիտակ վորդ, այնքան ծայրահեղորեն սառն, վոր բավական կլինի մի մեծ ամանը շերբեթ սառեցնելու։ Ոգոստոս ամսին, մոտենալով Արարատի կատարին, մինչև իսկ Ակոռի[7] (Akhora) գյուղի մոտ, լսվում և սառույցի կոտրվելու աղմուկը, որվան ամենատաք ժամերին, վոր և ժամը յերկուքից չորսը։ Յերբ ձյան մոտ և, ասում են, թեև ձայնը սոսկալի յե...

Մեծագույն տաքության նշանը այն և, յերբ ձյունը բոլորովին հալչում և Փոքր Ակռռատի կատարից։ Յերբ մենք Ապարանի բարձունքումն եյինք, դիտում եյինք նրա որևէ նվազումը, մինչև վոր բոլորովին անհետացավ։ Այս շրջանում սեղ մշակողները կտրում են իրենց պտուղը, և ընդհանրապես Յերևանի յերկրագործները Արարատի ձյունը գործ են ածում վորպես որացույց, վորով նրանք առաջնորդվում են սերմանելու, տնկելու և հնձելու համար իրենց արտերը։ Ելևէջները (Eelauts) նույնպես առաջնորդվում են այս լեռան վրա կատարվող յեղանակի փոփոխություններից, միայով յայլևայներում և կամ այնտեղից վար իջնելով ըստ ձյունի տեղալուն։

Այս մեծ լեռան հողը յերևում և քարերի հակա մի կուտ, խառնվելուն դիզված իրար վրա. չկա և վոչ մեկ բուսականություն։ Այստեղ ու այնտեղ արդարև կան բույսեր, բայց

Տուրնֆորի մանրակրկիտ նկատողությունը ցույց է տալիս թե վերքան հազվագյուտ է բուսաբանի հասկացողը։ Փոքր Արարատի շատ մասերում կան շատ փուխր քարի շերտեր, և այլ տեղերում ապակեքարի տեսակները։ Տեսնվում է նաև լավա, բայց ժայռի մեջև դանվող հողը խոր ավազ է։

Այս շրջանում ապրող վայրի կենդանիներն են՝ արջ, փոքրիկ վագր, լուսան (lynxes) և առյուծ։ Թերևս ամենավտանգավորն ոձերն են, որոնցից վոմանք շատ խոշոր, ամենաարագաշարժ սողունների թունավոր են։ Նրանք այնքան կատաղի չեն, վոր հարձակվում են ճամբորդների վրա։... Արարատի սառրոտը Արաքսի ափերում տարածվում են ընդարձակ ճահիճներ, վորոնց մեջ կան մեծ քանակությամբ վայրի վարազներ։ Սրանցում, ինչպես նաև գետի ափերում կան մեծ թվով վայրի թռչուններ։ Լուսան վրա կան արծիվ և պանդան տեսակի բազե։

Տուրնֆոր թվում է թե ծիծաղելի չի համարում (Հատ. II. եջ 147) այն տեղեկությունը թե ճգնավորներ կան Արարատ լուսան վրա, բայց մեծ անդունդի մեջ կա մի քարայր, մասամբ կառուցված, հավատում են թե մի ճգնավոր ապրում եր այնտեղ։ Այս լուսան ամայությունը ապաստան է տալիս շրջակա յերկրի ավազակներին ու որինազանցներին, և մեծ ուշ փոքր Արարատի մեջ մի քարայր կա, այնքան զորավոր դիրք ունի, վոր շատ առաջ մի կարգ խուռվահույզ քուրդեր զրավել եյին այն, և պահել հակառակ սարդարի և նրա զինվորների։

Վերջապես Մր. Ելլիս բավական ապաքինած լինելով, մենք մեկնեցինք դեպի Թավրիզ և Արաքսի անցանք Գարդարից (Gerger)։ Այստեղ ու Թավրիզի միջև շատ տեղերում ճանապարհի մեջում տեսանք ջրաղացի քարեր, վոր կտրված եյին լուսներից, և դանդաղորեն գլորել եյին մինչև այստեղ՝ Թավրիզ տանելու համար։...

Յերբ շարունակում եյինք մեր ճանապարհը, մեր հետվանդների թիվը ավելանում եր քան պակասում։ Մեր թիկ-

նապահ հնդիկ հեծելազորից չերեսուն հոգուց, մի միայն վերկուքը սպասարկեցին մեզ՝ յերբ մուտք գործեցինք Թավրիզ, բոլոր մյուսները չեյին կարող ծառայել, և մենք շատ ժամանակ չեր վոր ժամանել եյինք, յերբ ստիպված եյինք վողբալ մեր ընկերակիցներից մեկի կորուստը։ Բոմբեյի բանակից հարյուրապետ Սնոդգրաս (Snodgrass), կյանքի գարնան մի սիրուն յերիտասարդ [մևռավ] և թաղեցինք հայկական եկեղեցում։ Արբաս Միրզային մեր հարգանքը մատուցելուց հետո, մեկնեցինք Թեհրան, ուր կարճ բանակցություններից հետո Մր. Ելլիս ու չես պարսկական կառավարության հետ կնքեցինք վերջնական դաշնագրությունը։ Այդ ջենտլմենը, սպասարկությամբ Մր. Ուիլոքի, վոր պարսկական մխիթարի պարսկերենի քարտուղարն եր, հաջորդ դեկտեմբերին մեկնեցին Անգլիա և ինձ թողեցին Թեհրանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քանաքեռ, Խաչատուր Աբովյանի ծննդավայրը, հայ մատենագրության մեջ ժե. դարուց առաջ հիշատակված չեր Առաջին հիշատակությունը Շահ Աբբասի արշավանքի ժամանակն է, յերբ Դավիթ Քանաքեռցին նշանակվում է կոտայքի մելիք։ Մի ժամանակ այս ավանը Ճեբեվանի խանների ամառանոցն եր։ Յեկեղեցիների և այլ արձանագրություններից ամենահինը 1695 թվականն է կրում. միայն քաղաքից քիչ հեռու դեպի Սևան տանող ճանապարհի վրա, մի հին գերեզմանատան մեջ քառակուսի մի գերեզմանաքարի վրա 1265 թվական կա։ Քանաքեռը այժմ (1933 թ.) ունի 2870 բնակիչ (տես, Ալիշան, «Այրարատ», եջ 294—298)։

2. Թաթար կոչվում եյին ձիավոր թափառաշրջիկներ, վորոնք փոսաթափառություն եյին Թուրքիայի բոլոր գլխավոր կենտրոններում ձմեռնադարձին կայարաններում նրանք փոխում եյին իրենց ձիերը, յերբեմն արագ ճանապարհորդության համար, պաշտոնական անձնավորությունները ճանապարհորդում եյին այս սուրհանդակների հետ։

3. Գյուղ Ելիսաե 1873 թվի մարդահամարի համաձայն ուներ 92 տուն, 713 շունչ բնակիչ։

4. Գառնի Յաբրըք Արաքսի լեռն է, կա նաև Գառնի Յաբրըք կամ Քարվանսարա գյուղը, վոր գտնվում է պատմական Վարաժնունյաց գավա-

ռում, այժմ Ծաղկաձոր կամ Դարաչիչակ ըջջանի Ինդամալ գյուղի հարավային և Մայրավանից հյուսիսային կողմը։

5. Գառնիի հնէաճոռագական տաճարը նկարագրում և նաև կեր Փորտըրը, որի ուղեգրութիւնը տրված՝ և այս հատորում. (Տես, Ker Porter, «Travels», Հատ. Բ. էջ 629)։

6. Բացի Մորիևրից ուրիշ ոչ ոք չի հիշատակում Գեղարդի կամ Այրի վանքի այս արձանագրութեան մասին։ Վանքի կառուցման մասին կան հետևյալ արձանագրութիւնը 1214 թ. «Ի ժամանակս թագաւորացոյն Զաքարիայի եւ Իւանէի նորին հարազատի եւ որդւոյ նոցին Շահնշահին եւ Աւագին ու յառաջնորդութեան Բարզի մխայտաւորին եւ աշխատութեամբ եղբարցս շինեցաւ Կաթուղիկէս մեծափառ. ՈՒԳ...»։ Կան բազմաթիվ ուրիշ վիմագիր արձանագրութիւններ. (տես, «Այրարատ» էջ 336—351)։ Բացի Մորիևրից Գեղարդի վանք այցելած են կեր Փորտըր 1819 թ. (Ker Porter, «Travels», Հատ. Բ. էջ 630), Աբբաս Միրզայի բանակի հրահանգիչներից Մոնտիեթ, և Դեբուա 1834 թ.։

7. Ակռի ավանը, որ հիշատակում են Ղազար Փարպեցին և հետագա պատմագիրները, չէն եր մինչև 1840 թ., յերբ Մասխի բնակութենից հիմնահատակ կործանվեց, ավերակների տակ թաղելով մոտ յերկու հազար հոգի։ Միայն մի քանի տասնյակ անձեր ազատվեցին գյուղից բացակայելու հետևանքով։ Ակռի, Արարատի հյուսիսային ամենամոր վիճի յերեքքը, գտնվում և 5000 ոտաք բարձրութեան վրա և կործանումից առաջ ուներ պարսիկներ ու խաղողի այգիներ։



Գարսիկ ձվագածուհի, (ընկար Մորիեթի)։

Դ.

ՎԵՐԱԴԱՐՁԸ*

Նոյեմբերի 1-ին, 1815 թ. մեկնեցի Թավրիզից, վերադառնալու ուղևորվելի յերկու թրքական թաթար[1] և յերկու ծառա. մեզ ընկերանում եր նաև մի պարսիկ մեհմանդար, որ ֆերմանում մասնավորված թվով ձի եր հավաքում գյուղերից մեզ համար։

Մեր առաջին կայանը Սահալանն եր, Թավրիզի մոտ, մի գյուղ որ սեփականութիւն և Մարադալի Ահմեդ խանի կնոջ։... Հաջող կերպով գնացինք Մարանդ, Գարգար, (որ տեղից անցանք Աբաքսը), և Նախիջևան (Nakhjuwan)։ Ինձ հետ շատ քաղաքավարութեամբ վարվեց Նախիջևանի կառավարիչ Քերիմ խանը, որ ինձ տվավ պարսկական նախաճաշ, որին մասնակցեցին իմ մեհմանդարն ու յերկու յընդ ուրիշ պարսիկները։... Նախիջևանից մեկ որում հասանք Դավալու (Develú), բայց բռնվեցինք մի սաստիկ անձրևի. մութ եր յերբ հասանք գյուղը։ Դժվարութեամբ յես ու մեհմանդարը ճանապարհը գտանք, բայց մեր խմբի մյուս մասը շատ եր յետ մնացել. վորովհետև վախենում եյինք վոր նրանք թափառեն ամբողջ գիշերը դաշտերի մեջ, պարսիկները, վոր թվում եր թե ծանոթ եյին այդ տեսակ արկածներին, անմիջապես հարցի մի կրակ վառեցին մեր տան կտուրի վրա, և հարատևորեն բոցավառ մոխիրը գցում եյին ողի մեջ. սա ծառայում եր իրը ազդանշան մյուսների համար, վորոնք վերջապես ապահով կերպով հասան մեզ։

Յերբ անցնում եյինք Յերևանի դաշտից, հանդիպեցինք քազմաթիվ քուրդերի, վորոնք թրքական հողամասից փա-

* Morier, Հատ. Բ. Գլ. XXV, էջ 393—400։

ևել եկին Պարսկաստան, և գնում եկին տիրանալու այն գյուղերին, որոնք Յերևանի Սարդարի կողմից հատկացված եկին նրանց բնակության համար։ Յերևան հասնելու որը յես այցելեցի նրան [Սարդարին]. Նա տեղեկացրեց ինձ այդ հանգամանքը, որ տեղի ևր ունեցել քրդերի այս պղպինջ Բաբա փաշան (Baba Pasha), երբ նա նոր էր սկսել իր կառավարությունը, յերբ առաջին անգամ սահմանեց իր կառավարությունը Բայազիդ քաղաքն ու հովտամասը գտնվում եր Իրբահիմ փաշայի տիրապետության տակ, մի մարդ որ առել եր թե պարսկական և թե թրքական կառավարություններին, որովհետև նրա պատճառով յերկու յերկրների միջև տարածվող սահմանը գտնվում եր անկայուն վիճակում։ Բարա փաշան բարեկամական հանդիպումներ եր ունենում Իրբահիմ փաշան պաշտոնական յեղավ և նրա տեղը նշանակվեց Արդուլլահ, մի մարդ որ հանձնարարված եր սարդարի կողմից, որպես հարմար մի առիթ՝ նրան վտանգելու համար սահմանի կառավարության մի ժամանակ Իրբահիմ փաշան արդիլափակվեց Երզրումում, յենթակա Բարա փաշայի կամքին. որովհետև նա [Իրբահիմը] կապակցություններ ուներ հարուստ բարեկամների հետ, հզոր յենթրիզով ու կաշառքով մի անգամ ևս իրեն նշանակել տալ փաշայության։ Սա իհարկե ամեն կերպով անհանդուրժելի մի քայլ եր պարսիկ կառավարության. որ շատ զորավոր մի պղպարություն ուղիղ Բարա փաշային, որ ասում են թե, շատ ամբարտավան մի պատասխան ավել փաշան գրել եր պարսիկ կառավարության. «Ձի՞ք գիտեր որ ոմանցինների իշխանությունը հաստատված և դարերից իվեր՝ Ձեվ նրան փոխադարձաբար պատասխանել եկին. «կարող եք խոսել ոսմանցինների հնության մասին, բայց մի մոռանաք որ Պարսկաստանի թագավորությունը սկսվում և աշխարհի առաջին թագավոր Կայումերսից (Kaiumers)». [Կայումարս][2]։

Վորովհետև սարդարին յեկող քրդական ցեղի ցեղապետ Հասան աղան թշնամի եր Իրբահիմ փաշային և ամուսնու-

թյամբ ազգական եր սարդարին, նա անմիջապես իր բոլոր ցեղը Բայազիդի հովտամասից բերեց Յերևան։

[Ամսի] 7-ին տեղատարափ անձրևով հասա Եչմիածին, և բոլորովին առանց նախազգուշացման գնացի հայ կաթողիկոսությունը, պատկառելի մեծավորին, որ ինձ ընդունեց շատ բարեկամաբար, և իր հարկաբաժինը տալով բնակվելու համար։ Նա ինձ տեղեկացրեց, թե յերկար ժամանակ չե որ վերջացրել ե պղպեկոսը, և արտազրված գինին այնքան մեծ և, որ ինք ստիպված և յեղել իր այգու բոլոր ջրամբարները լցնել և կնքել մի տեսակ զորավոր ցեմենտով, որ կթեթ մաքուր պահվի չի փչասում գինուն։ Ջրամբարում նույն կերպով կնքված գինի պահելու յեղանակը հիշատակում և Քսենոփոն, յերբ Տաս հազարը գտնվում եր Կորդվաց և Հայաստանի սահմանակից յերկրներում, (Anabasis, lib. III. C. 2)։ Պատրիարքը ինձ հրավիրեց ճաշի. սեղանը դրված եր յեվրոպական յեղանակով, և գինին մատակարարվում եր առատորեն։ Բացի նորին բարձրաշնորհությունից և ինձնից, կային յերկու հայ եպիսկոպոս, որոնցից մեկը ճաշի նստելուց առաջ մի քանի րոպե ժամ յերկար մի աղոթք ասաց։ Պատրիարքի խոսակցությունը մինչև համեմված եր առակով, և նա յերբեք առանց յերկար մի առակաբանի չեր հրամցներ ինձ մի տեսակ կերակուր և կամ մի բաժակ գինի։ Ճաշից հետո հյուրասիրելու համար, հրամայեց որ իր յերգեցիկ խմբից յերկու յերիտասարդներ իր ներկայության գան, և նրանց յերգել ավել իրենց ամենատիպական յեկեղեցական յերաժշտությունից մի քանի մասեր. հայկական մի յերգ, թրքական յեղանակով, և վերջապես մի ռուսական, շարադրված եր ի պատիվ Ալեքսանդր կայսեր։ Վաս յեղանակի պատճառով ստիպված լինելով յերկու որ մնալ Եչմիածնում, մեկնեցինք 9-ին և հասանք Հաջի Բայրամլու[3], գտնվված Արփաչայ գետի յեզերքում, որ կազմում և Թուրքիայի և Պարսկաստանի սահմանագիծը։ Յես ոթեվանելի մի հյուրասեր մարդու տան, որ խոսում եր յերկրի այս մասի թշվառության մասին։ Հաջորդ առավոտը անցանք մի լայն ու արագ գետ՝ Արփա-

Հայ կամ Արփասու (հին Հարբասուս = Harpasus), լի սահող քարերով, որոնք հաճախ գետի կատաղի ուժով քշվում են դեպի առաջ։ Մեր անցած տեղը կարող էր լինել մոտ հարյուր յարդա, որ ավելանում է, յերբ մոտենում է Արաքսին։ Հարփասուս, այնտեղ որ հուլյները տեսան, 400 վոտք լայն էր, բայց այս գետի լայնությունը, ինչպես նաև ասիական գետերի մեծագույն մասի, յեղանակին համաձայն զանազանվում է համապատասխան լեռներում տեղացած ձյունի կամ անձրևի քանակին։ Իմ մեհմանդարը բոնեց յերկու գյուղացիների, սաիպեց նրանց մերկանալ և գետից անցնել՝ կանգնած մեր բեռնակիր ձիերի կողքին, որպեսզի թուլլ չտան որ ընկնեն, մի ծառայություն, որ նրանք հաջողեցան կատարել բավական դժվարությամբ ու վտանգով, բայց այս խեղճ մարդկանցից մեկը, ջուրը այնքան սառն էր գտել որ մյուս ափը հնարելուն պես, յերբ հեռու էր մեհմանդարի հասողությունից, վախալ ու թագնվեց խոտերի մեջ, մինչև որ մենք բոլորս անցանք։ Յես յերբեք չեմ գտնվել այնքան տհաճելի դիրքի մեջ, որքան այս գետից անցնելիս։ Ջուրը իմ կոշիկների յերեսի վրա էր, և մեծ դժվարությամբ իմ ձիու գլուխը պահում եմ ջրից վեր, որովհետև գլորվող մեծ քարերի վրա վոտք դնելիք ապահով տեղ չգտնելով, յուրաքանչյուր քայլափոխին [ձին] սայթաքում էր և ընկնելու վտանգի մեջ էր գտնվում։ Իմ թաթարներից մեկը տեղեկացրեց, թե մի անգամ նա ընկել էր այս գետում և քշվել հոսանքից, պաշտոնական թղթերի կապոցների հետ միասին, բավական հեռու, բայց որովհետև նրանք փաթաթված էին մոմլաթի մեջ, յերը ջրից հանվել եկին, վնասված չեկին։

Արփաչայը անցնելուց անմիջապես հետո, մենք սկսանք բարձրանալ կիրճերի միջից, որտեղ ընդհանրապես վխտում են ավազակներ. այս պատճառով մեզ առաջնորդում էր մի յերկտասանյակնոց պարսիկ հետևակախումբ, առնված Չաղիբայրամլուի մարզված զորամասից։ Այս բարձունքի կատարից իմ առաջ պարզվում էր տիրապետող մի տեսարան Արփաչայի ու Արաքսի միացման, որ այնքան էլ մեծ գետ չեր, վինչև առաջնի ջրերի ընդունումը։ Միացումը կատարվում է Չաղի Բայրամլուից մոտ յերկու մղոն ներքև, մի կղզիացած կարմիր քարաժայռի մոտ, որ վայրի ու նկարագեղ մի տեսք ունի։ Արաքսի ջուրը ընդհանրապես հստակ է, սակայն այժմ կարմիր մի յերանգ ուներ։ Դա հետևանք եր նախապես տեղացած անձրևի, որ շրջակա հողերը լվալով թափվել եր նրա մեջ։

Մենք հասանք Եքրեկ[4] (Ekrek), մի հայ գյուղ, որի տները նմանում են Բեհենիփոնի Հայաստանում նկարագրածին, և կարելի յե նկատել, թե նույնանման տներ ունեն Հայաստանի ամբողջ հողաժասում, ներառյալ Վրաստանի մի մասը, որ նշանավոր է իր ցրտի խստությամբ։ Բնակիչները կատարում են բավական ընդարձակ պեղում, որ գետնի բնույթին համաձայն տալիս է նրանց տան մեկ, յերկու կամ յերեք կողքերը, և հետո մնացյալը կառուցում են կիկլոպյան պարիսպների նման վիթխարի քարերով։ Սրանց վրա դնում են շատ հաստ գերաններ, և ապա ամբողջությունը ծածկում են հողով, այնքան հաստատուն կերպով, որ յերբ ձյան եք գալիս գյուղում, դժվար է ասել թե դուք քայլում եք մի տան կտուրի, թե մի պարզ գետնի վրա։ Նրանք միայն մի անցք են թողնում կատարին, որ լուսավորում է ընդհանրական սենյակը։ Այս սենյակը բաժանված է հաստ տախտակներով ու ճաղերով ներքնամասի մեծ մասից, որ ծառայում է որպես անուս կենդանիների համար։ Մի կարգ պարագաներում բնակիչները իրենց բնակարանն են իջնում վերևից, բայց ընդհանրապես նրանք ու կենդանիները հասարակաց մի մուտք ունեն, ինչպես բնակության համար ընդհանուր մի վայր։ Բնակիչներն ու կենդանիները իրար տաք են պահում, առաջիններս կրակ վառելով իրենց հարկաբաժնում, և վերջիններս իրենց շնչառության տաքությամբ։

Եքրեկից մինչև Կարս, որ համոզված եմ թե Հայաստանի ամենաբարձր մասն է, ամբողջ յերկիրը ծածկված եր խոր ձյունով։ Այս միայն նոյեմբերի 11-ն եր, և ձյունը

տաճարից որից լավը նաև էր գեղին։ Երբեմն այն կողմ ամենաբարձր կաթարին, ուրը մատախուղը փարատվեց, իմ առաջ պարզվեց Թեղուտ աշխարհի ամենաընդարձակ ու ամենահափանձ տեսարանը։ Արարատի մեծ ուրվագիծը մեկ կողմն էր, Յերևանի ընդարձակ դաշտը, լեզերված Արաքսով դիմացը, և Արագածն ու Վրաստանի լեռները ձախ կողմը, մինչ իմ ներքևում գտնվում էր Արաքսի ու Արփաչայի միացումը, կարծես գծված մի քարտեսի վրա։

Յես նկատում եյի նաև կարս գետի միացումը Արփաչայի հետ։ Ծայրահեղ ու խայթող ցուրտը, որ յես զգում եյի այս բարձրության վրա, ամբողջովին անկարող դարձրեց ինձ գործածելու համար իմ մատիտը, և կամ իմ կողմնացույցի միջոցով աշխարհագրական տոթեր առնելու. ափսոսանքի յե արժանի, որ կորցրի այնքան լայնածավալ ու վեհապանծ մի տեսարանի նկարը առնելու այնքան լավ պատեհություններ։

Յես այդ ժամանակ հավանորեն գտնվում եյի այն լեռների վրա, ուր Տաս հազար հոլյները քան և մեկ որ թափառում եյին, առանց մի առաջնորդի, մի ազեատ, որ խիստ մատաղուղը՝ այնքան սովորական Հայաստանի այս մասի համար, մնծապես պետք և որ ավելացրած լիներ։

Ամբողջ որը ձյունի միջից ճանապարհորդելուց հետո վերջապես նշմարեցինք կարս քաղաքը[5], բավական հեռու մեր ժամանումից առաջ։ Ձեռնոցված և մի շատ նկարագիր ժայռի վրա ու նրա շուրջը։ Շուրը սառնում և բավական մեծ մի գետից, որի վրա կան մի քանի հաստատուն կամուրջներ, ժայռի կատարին շինված պարսպապատ ամբողջ պաշտպանված և փոքր կալերի վեց թնդանոթով։ Մեր ժամանած որը արձակեցին այս [թնդանոթները], պատահաբար այդ որը լինելով բայրամի առնչ։ Բոլոր տները կառուցված են քարից, ամրոցին նման հաստատուն, և լուսավորված են փոքրիկ ծակերով, ծայրահեղ ցրտի պատճառով։ Յես ոթևանեցի մի հայ ներկարարի մոտ, մի մեծ ու հաստատուն քարե տուն, որ ուներ հինգ կամ վեց սենյակ, բացի մթերանոցից, լուսավորված էր կտուրից բացված մի անցքից։

հանոցից, և այլն։ Նա ինձ ասաց թե գնել եր [այդ տունը] թրքական 1000 դահեկանի (մոտ 40 ֆունտ ստերլինգ), բայց [ինքը չեր կարող կատուցանել այդպիսի մի շինք] 3000 [դահեկանով]։ Կանանց հարկաբաժինը, ներառյալ խոհանոցը, լուսավորված եր կտուրից բացված մի անցքից։

Կարսը յերեք հերձանի փաշալի կենտրոնն է, որ պահում է աննշան վիճակում, որովհետև այնքան հեռավոր մի տեղ այնքան էլ ցանկալի չի թուրք պաշտոնյաների համար, հետևաբար հուսալով որ միշտ պիտի նշանակվի մի այլ տեղ, նրանք այս վայրում շատ ծախքեր չեն անում։

12-ին մեկնեցինք կարսից և կանգ առինք Դելի Ահմեդ (Deli Ahmed) գիշերվան համար, թեև կառնավոր կայարանն և Ջավլաք (Javlak), յեղանակը շարունակում եր լինել ծայրահեղորեն ցուրտ... 13-ին անցանք Սավանլու Դաղից (Savanlou Dagh), մի յերկար տարածուն լեռ, ծածկված յեղևնի ծառերով, որ շրջապատի յերկրին տատակարարում և վառելափայտ ու շինանյութ։ Նշանավոր և վորպես քուրդ ավազակների թաքստոց, վորոնք ամառն ընթացքում, յերբ նրանք ու նրանց կենդանիները կարող են ապրել ծառերի տակ ու արոտավայրերի մեջ, մշտապես սպասում են ճանապարհորդների կամ կարավանների։ Սակայն, նրանք վերջերս բարա փաշալի խստության հետևանքով պահվում են տարսափի մեջ։

Մենք հասանք Մինղիկերտ[6] (Minsigird) [Մժնկերտ], որ տում են թե անվանապես տասներկու տասիար կամ ժամ է, որ այստեղ չափվում է յեղան տարայի կամ սայլի գնացքի չափով։ Մեր ամբողջ ճանապարհը կարսից ծածկված եր ձյունով, մինչև որ հասանք Մժնկերտի հովիտը, որ [ձյունն] չուներ։ Այս տեղից վերև կա մի առանձնացած ու բլթակաձև մի ժայռ, որի կատարին կան քարաշեն մի ամրոցի ավերակներ։ Սովորականի նման յես ոթևանեցի մի մեծ ախոռում, որի մի անկյունում բաժանված մի տեղ կար բնակության համար, և որտեղ ընկերակցությամբ չորս հինգ հոգիների ու նույնքան կովի գոմ տնաճելիորեն տաք։ Իմանալով կողմնը տարածեցի մի քանի տախտակների վրա, որոնց

ծայրերը հենված եին չոր խոտի դեզերի վրա, և յերբ յես քնել եյի, հանկարծակի զարթնեցի վայր ընկնելով։ Մի պարկեշտ գոմեշ իմ անկողնի ներքևի խոտը կերել եր այնքան, որ տախտակները բնականորեն վայր եյին ընկել։

Մժնկերթից մեկնեցինք մտադրված լինելով գնալու մինչև Հասան կալե, բայց մեր կենդանիները հազիվ կարողացան հասնել Քյոպրի-Քեոյ[7] (Kupri Kieu), մի հայ գյուղ, մերձ Քորբան Քյոպրուի (Korban Kupri) [Զորան քյոպրու] Արաքսի վրայի կամուրջը։

Մենք փոխեցինք ձիերին Հասան կալեյում, և յերբ յես նստել եյի փոստատան վարիչի սենյակում, մի խեղճ ուղտավար թուրք ինձ նվիրեց մի քանի խնձոր, և ապա նստելով գետնի վրա, փիլիսոփայաբար բացականչեց՝ Դուենիա բոշ (Duniah bosh), աշխարհը վոչինչ է, կամ այլ խոսքով ամեն ինչ ունայն է։ Միևնույն որը հասանք Երզրում (Arzeroum), և այցելեցի փաշային, վոր պատերազմիկի մեծ համբավ և վայելում թուրքերի մեջ։ Ծագումով նա փեհլեվան և կամ ըմբիշ, և ռուսների դեմ մղված պատերազմում մի քանի քաջություններ գործած լինելուն համար՝ նրան նշանակել եյին գնդապետ։ Դրանից հետո նա յեյկու հերձանի փաշա դարձավ, և գերի ընկած լինելով ռուսների ձեռքը, ազատվելուց հետո հավելվածական մի հերձան ավին նրան, և նշանակվեց սերասքյար կամ գլխավոր հրամանատար պարսկական և ռուսական սահմանների վրա, և իր կառավարության կենտրոնը հաստատեց Երզրումում։ Նա ինձ ուղարկեց մի ձի ճոխորեն թամբված, բազմաթիվ սպասավորներով, առաջնորդելու համար ինձ նրա պալատը, և յերբ մտա այն սենյակը ուր նա նստել եր, նրան գտա մի անկյունում բազմոցի վրա, թաղված բարձերի մեջ, և շալերի մի դեզ իր գլխի վրա։ Նա յերևում եր կատարելապես թմրած, բայց անկասկած յեթե դրդռվի, յերևան պիտի բերի առյուծի ուժ։ Նրա ամենամեծ զվարճությունն և իր ներկայությամբ ըմբշամարտ կատարել տալ։ Հուրդ ավազակները ապրում են նրանից, վորոնց աղած գլուխները ձիու բեռ-

ներով ուղարկում և կ. Պոլիս, ցուցադրելու համար [Սուլթանի] պալատի դռան առաջ։ Նա շատ քաղաքավարի եր, մի յերկար ծխափող տվավ ինձ ծխելու, և առատորեն՝ թրքական սուրճ։ Թուրքերը յերբեք չեն ամաչում իրենց ծագումից, վորքան ել մեծ լինի ապագայում նրանց աստիճանը։ Այս վորովհետև նրա կնիքի արձանագրությունն է. — փեհլեվան, իբրահիմ փաշա, — կամ Իբրահիմ փաշա, ըմբիշը։...

1816 դեկտեմբերի 17-ին հասա կ. Պոլիս, ճանապարհորդելով այն ճանապարհով, վոր յես նկարագրել եմ իմ նախկին ուղևորության առիթով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես, նչ 355 ծանոթ. 2։

2. Kaiumers պետք է լինի Kayumars Քայումարս, մականվանեալ դեվքաճեղ, այսինքն «դեվերին կապող», Պարսկաստանի ավանդական թագավորը։

3. Մի փոքր պյուզ Ախուրյանի ափում, Արաքսի հետ միացման կետից յերեք կիլոմետր հեռու։ Հաջի Բայրամլուն 1931 թ. ուներ 411 բնակիչ։

4. Եքրեկը՝ Ագրակ պյուղն է, Տիկոր գետի յեղերքը և Տիկորից վոչ շատ հեռու, Թալինի շրջանում։ 1931 թվին ուներ 319 բնակիչ։

5. Կարս, Ղարս, հայկական կարուց քաղաք, պատմական Աբրաատի Վանանդ պահառում. հինարկության թվականը անհայտ է։ Բերդաքաղաքը քառակուսի յերկարաձև է. հազար մետր յերկար և հինգ հարյուր մետրից ավելի լայն, ունի կրկին պարիսպներ 5—6 մետր բարձրությամբ, հրաբխային քարերով և քառակուսի աշտարակներով ամրացած։ Աշտարակների վրա ժբ. դարից ավելի հին արձանագրություն չկա։ Խրիմի պատերազմի ժամանակ 1854—55 թ. անգլիացի ժանդարմները ամրացրին բերդը։ Մինչև ռուսական տիրապետությունը (1877 թ.) կարսը թրքական քաղաք եր և ուներ մոտ 5000 տուն թուրք և 3000 տուն հայ բնակչություն։ 1901 թ. 11.108 բնակիչ և 8200 զորք։

Մեր պատմության մեջ կարս քաղաքը կամ բերդը թ. դարի կեսից առաջ չի հիշատակվում, և այնուհետև այստեղ ապրել և մի ժամանակ

Աշոտ Բագրատունին, որ հիմնադրեն յեղավ Բագրատունյաց հարա-
թյան։ Նրա յեղբայր Աբասն այստեղ հաստատվեց. և 961 թ. Մուշեղ հիմ-
նից կարուց թագավորություններ, որ տևեց վորդոց վորդի մինչև 1054 թ.
930—942 թ. Աբաս կառուցել տվավ Ամաթելոց յեկեղեցին, որ կանգուն
և մինչև հիմա Սկյութների կարսը գրավիցին 1052 թ.։ Յերբ կիլիկիայի
թագավոր Հեթում Ա. այցելության եր գնում թաթարների բանակ, նա-
նին, 1254 թ. կարսում հանգիպից Բաչու Նոյինն Լենկթիմուր գրավից
1294 թ. և ոսմանցիները գրավեցին 1556 թ. և այնուհետև մնաց ոսման-
ցիների ձեռքը մինչև ռուսական պրավուժը։ Այժմ թրքական քաղաք
(«Այրարատ» 79—88. «Նշմարքք» Ղ. 95—100. «Փորձ» ազգագիր, Ղ. 106—123)։

6. Մոբիների Մինղելիկերար Մժնիկերան և. որ հիշատակվում է ԺԴ. դա-
րում, բերդը այժմ ավերակ է։ 1694 թ. իտալացի ճանապարհորդ Չեմելին
այտեղից անցավ և ասում է թե չնն ու բարդավաճ էր։ 1829 թ. ռուս
թրքական պատերազմից առաջ 500 տուն հայ բնակչություն կար, վորոնք
յերուցան յեղան, և յերկու տարի հետո Դուալթ ու Սմիթ ամերիկացի
ճանապարհորդները միայն 35 տուն գտան այստեղ։ 1877 թ. պատերազ-
մին վերսին ավերակ դարձավ Մժնիկերա յերկու գյուղ և, վերին և ստո-
րին, և գանվում է Շիր Ամնդ փոքրիկ գյուղի մոտ (Տես, «Այրարատ»
ևջ 38)։

7. Քոպրի-Քեոյ գանվում է Արաքսի յեզերք՝ Մուրց գետի միացման
տեղի մոտ։ Գյուղը նշանավոր է Արաքսի վրա ձգված կամրջով, վոր ժա-
մանակով և Ջոբան-Քոպրի (Հովվի կամուրջ) անունով. մինչ Մոբիները սխալմամբ
անվանում և Գաբրան։ Գյուղը 30 տուն բնակիչ ունի։ Գյուղից բիչ հեռու
գանվում է 120 վոտը յերկայն և 70 վոտը լայն մի ավերակ, վոր համար-
վում և վաղարշավանի մնացորդ. վոմանք սա համարում են մի ոքենան
կառուցված Ջենգիսյան վաճառականների կողմից կարավանի համար
(«Այրարատ» ևջ 24—25)։

Ե.

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ*)

Սահմանագլուխը, մեր բնակության վայրը, գտնվում է Ջուղայի մոտ՝ հայկական արվարձանը։ Ջուղան շրջապատող ավերակների ընդարձակ տարածությունը և նախկին տների պատերի մնացորդներում տակավին նշմարելի փառահեղությունը՝ հաստատում է Շարդենի և ուրիշ ճանապարհորդների նկարագրած նրա շքեղությունը։ Նորա հայերի վիճակը, բազդատելով Շահ Աբբասի ժամանակ նրանց բարվաճման հետ, բոլորովին վողբալի չէ։ Նրանց այն ժամանակ ունեցած սեփական գեղեցիկ տները, վորոնց մեծ ցորդները ցույց են տալիս թե նրանց տերերը վորքան հարուստ են եղել, այլևս չեն տեսնվում։ Թեև մի քանի հայեր, վորոնք տակավին մնում են, ունեն մի մեծ պաշտպան, հանձնին Ամին-ադ-Դովլայի (Ameen-ad-Dawlah), վոր քաջալերում է ուրիշներին հաստատվելու Ջուղայում, այսու ամենայնիվ ընդհանուր թշվառության մի յերևույթ կա նրանց շուրջը, վոր նշանակում է թե նրանք վատության չունեն այն կառավարության վրա, վորի ներքո ապրում են։ Փոխանակ յերեք հազար չորս հարյուր տան, վորով պարծենում եր Ջուղան՝ Շահ Աբբասի որերում, այժմ հազիվ թե յերեք հարյուր [տուն] կարելի լինի հաշվել։ Գլխավոր եկեղեցին մի գեղեցիկ շինք է, ներսից գեղեցկորեն զարդարված, և վայելում է զանազան գործածության իրավունքը, մի բան՝ վոր մեծ առանձնաշնորհ է համարվում մահմեդականի յերկրներում։ Նրանց մյուս եկեղեցիներից մի քանիսը

* Morier, հատ. Բ. Գլ. IX. եջ 146—152։

նույնպես զանգակ ունեն, բայց յերկրորդականները, ինչպես նաև Կուսանաց վանքին կից [յեկեղեցին], ունեն միայն մի տախտակ՝ կախված յերկու փայտյա սյուների մեջ, որ պարնում են մի թակով, ժողովուրդը աղոթքի հրավիրելու համար: Հակառակ ներկա հայ համայնքի սակավութեան, տակավին տասնյերկու յեկեղեցի հաստատված և նրանց պաշտամունքի համար:

Մենք չգիտենք իմանում որ Սպահանում Հռովմեական կաթոլիկ մի յեկեղեցի կար, մինչև այն որը, յերբ փոքրիկ թարմ ու զվարթ յերեսլթով մի մարդ իտալերեն լեզվով խոսեց մեզ հետ: Նրա քահանան եր նա, և Պրոպականդայի միսիոնարներից վերջինը, որ յերկար ժամանակից ի վեր հաստատված եր Սպահանում: Նրա անունը հայր Յուզուֆ (Padré Yusuf) և, ծնունդով Հռոմից. նա ապրած և տասնհինգ տարի Սպահանում, որ մինչև նա սովորել և մի բառ պարսիկ լեզվից, բայց շատ սահուն խոսում և հայերեն և Թուրքերեն: Մենք առաջին պատեհութեանից ոգտվեցինք այցելելու համար նրան, և դժվարութեան չկրեցինք գտնելու համար նրա ապրած տեղը, վորովհետև թվում և թե ամենքը ճանաչում են նրան Ջուղայում: Առավոտ կանուխ գնացինք, և բավական յերկար ժամանակ թակեցինք նրա տան դուռը, մինչև վոր մի ձայն լսեցինք ցուցնող թե ներսում բնակիչ կար: Վերջապես մեծ զգուշութեամբ Հայրը (Padré) բացավ դուռը, նա առել եր այդ հանդուգն քայլը միայն լավ տեսնելուց հետո իր այցելուների ով լինելը: Նրա նախազգուշացումները շատ բնական եյին, վորովհետև ինքը իր ընկերակիցը՝ մի կատու, միակ բնակիչներն եյին նրա տան ու յեկեղեցուն, վոր ներկայացնում և մեկ ամբողջական ընդարձակ շենք, և հագվի և առնված ներկայից ավելի մեծ թվով բնակիչների համար: Մահմեդական յերկրներից մեծ գուշն մասում, ուր քրիստոնյաները մշտապես հալածված ու հարստահարված են, նրանք շատ զգուշավոր են թե վորի առաջ բաց են անում իրենց տան դուռը: Մեր այնքան կանուխ ինքնահրավերը արթնացրած եր այս բարի մարդուն

իր քնից, վորովհետև տեսանք, վոր նրա անկողինը փռված եր աղյուսե հատակի վրա, և շտապանքի հետևանքով ժամանակ չեր ունեցել կարգի բերելու իր հագուստը: Նախ, ցույց տալ յեկեղեցին, վոր ի նկատի ունենալով նրա նյութական սուղ միջոցները, գտանք լավ վիճակում՝ մաքուր, կանոնավոր և մեր սպասածից ավելի լավ հարդարված: [Շենքը] պատկանում և Դոմինիկյան կարգին, վորից սովորաբար չորս կամ հինգ վանականներ ապրելիս են յեղել Սպահանում, և կառուցած և մի կաթոլիկ տիկին, 1700 թվին, վոր մի կտակ և արել այդ նպատակով և վորի գերեզմանը ալժմ տեսնվում և յեկեղեցու ներսում: Նախապես կարմելիտներ և Ջեզվիտներ ունեյին իրենց առանձին յեկեղեցին ուվանքը Ջուղայում, մինչ Ոգոստինյանները ունեյին իրենցը Սպահանում, բայց յերկար ժամանակ և վոր նրանք դադարել են պոյուբյուն ունենալուց:

Հայր Յուզուֆը տեղեկացրեց մեզ թե իր հոտը ներկայումս տասնհինգ հոգուց ավելի չի հաշվում, բայց Պարսկաստանի լավ որերին կլիրակի ու տոնական որերում բազմաթիվ յեվրոպացիներ մաս եյին կազմում հավատացյալներին: Մենք գրեթե կարող եյինք յերևակայել, թե պտնվում եյինք Յեվրոպայում, այսպես խոսելով իտալերեն մի յեկեղեցում, վորի ներսը այնքան նման եր կաթոլիկ յերկրների [յեկեղեցիներին]: Հայր Յուզուֆը տեղեկացրեց մեզ, նաև թե վերջան ժամանակ վոր Պապը իշխանություն ուներ, ինք գրամական ոժանդակություն եր ստանում, բայց այժմ նրա նեղությունները այնքան շատ եյին, վոր ինքը չեր իմանում թե ինչպես ապրեր: Ասաց, թե ինքը մյուս վանականների նման շատոնց վերադարձած պիտի լիներ իր սեփական յերկիրը, բայց պարտականություն և զգում հոգալու կաթոլիկների այն փոքրիկ հոտը, վոր տակավին պտնվում Սպահանում: Ապա Մոհամմեդ խանի իշխանության գնացումների որերում, նա հրացանը իր ուսին ապատում եր յեկեղեցու կտուրում, և ամեն անգամ յերբ նա

վախենում եր թե հարձակման պիտի չենթարկվի, նա չեր վարանում դիմադրության նշան ցույց տալուց։

Ապա, նա բաց արեց գրադարանը, մի փոքրիկ քառակուսի սենյակ, չորս բոլորը դարակներով, որոնց վրա դիզված հին փոշեպատ ամեն տեսակ գիրք։ Հատակին նույնպես սփռված հին գրքեր, հին լրագրեր, նամակներ, հաշվեններ, բոլորը նախկին միսիոներներին պատկանող, գրված տարբեր լեզուներով, և մոմանք շատ հին թվականի։ Գրքերը՝ Ֆրանսերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն և յերբայեցերեն լեզուներով հին, մեծ մասամբ կրոնական նյութերի վրա, բայց այնքան պանդուխտած ու խառնիխուռն, որ ամբողջ հավաքածուի մեջից մեկ ամբողջական գործ անգամ չկար։ Ինչևիցե Հայր Յուղուճը գնահատում եր ամենից ավելի, դա մի բազմակողմ ասուվածաշունչ եր, որ պարունակում եր հին կտակարանը յերբայեցերեն, քաղդեերեն, հունարեն, լատիներեն, գերմաներեն և իտալերեն [լեզուներով]։ Մենք չոկեցինք մի քանի գիրք և առաջարկեցինք որ մի գին առաջարկե նրանց համար, բայց բարի մարդը, թեև գնեթե սովահար և չունենալով վոչ մի հավանականություն որ մի ուրիշ քահանա հաջորդե իրեն, վճռականապես մերժեց մեր առաջարկը, ասելով թե նրանք չեին պատկանում իրեն, այլ յեկեղեցուն։ Բայց այս, նա վստահացրեց մեզ թե լսած լինելով, որ մի կարգ գրքեր դողացել եին գրադարանից, և գործածվում եին պարսիկների կողմից վորպես ավելորդ թուղթ, ինչ պարտականություն եր դրդում ջանադիր լինելու վերադնելու համար, մի բան որ ինքը գործադրում և, յերբ միջոց և ունենում։ Շատ հրաժարվում եր այսքան խղճամիտ մի մարդու հանդիպելուց, մի յերկրում, ուր խիղճ բառը անծանոթ է*։

Մենք ընկերացանք դեսպանատան վիրաբույժին՝ գնալու համար Ջուղայի հայ կուսանաց վանքը։ Նրանց խնդրանքով

* Այս գրելուց հետո Հայր Յուղուճը այլևս չկա. նա մեռավ Սպահանում (Ծանոթ. Մորիերի)։

նա յեղել եր մի անգամ այնտեղ, և այժմ վերադառնում եր դեղ տալու համար նրանցից շատերին, որոնք ոգնություն եին խնդրել։ Կույսերը թվով յոթն եին, բոլորը պառավ, և բոլորն ել տգեղ՝ բացի յերկուսից։ Նրանք գլխից մինչև վոտք հագնված եին մի կապիտ մուխ կապույտ կտոր, բոլորի վոտքով, և մի կաշյա գոտի իրենց մեջքում, վորոնցից կախել եին իրենց բանալիները և այլն։ Նրանցից և վոչ մեկը չեր խոսում պարսկերեն։ Վանքից դնացինք մի հայ քահանայի տուն, վորի ընտանիքը բժշկի ոգնությունը խնդրած եր։ Մենք ընակարանը մտանք մի յած ու խղճուկ դռնից, վոր մեզ առաջնորդեց մի մաքուր բակ՝ սովորված որթատունկով, վոր ածել եր մի treillage-ի վրա և տարածվել ցանկապատի շուրջը։ Մենք մտանք մի կոկիկ սենյակ, ծածկված լավ գորգերով, վորի մի անկյունում կար մի ճոճվող որորոց, նման նավատի hամոգի (hammock), վորի ծայրերից մեկը մի կողմից կապված եր պատին մի գամից և մյուս կողմից՝ պատուհանի յերկաթին։ Մեր մուտքին՝ կինը, վոր խնամում և որորոցի յերեխան, նրան փոխադրեց ներքին մի հարկաբաժին։ Վիրաբույժը նախ քննեց քահանայի մորը, վոր մի աչքում ուներ աչքի վարագույր (cataract), վոր վիրահատությամբ միայն կարելի յեր մաքրել, վորին նա չեր կամենում յենթարկվել։ Հետո յերեց քահանայի քույրը, վոր ուրիշ գանգատ չուներ բացի գլխացավից, և ամենից հետո |յեկավ| քահանայի կինը, պարզապես մեզ տեսնելու հետաքրքրության համար, վորովհետև նրա գանգատը սրտի ցավն եր, dil-dardi։ Յերբ հայտնի յեղավ վոր վիրաբույժը քաղաքացի և, յեկան նաև շատ ուրիշ կանայք, վորոնք իրական կամ յերևակայական հիվանդություններ ունեյին, և յեկել եին վորպեսզի նրանց զարկերակը նայվեր կամ աչքը քննվեր։ Ընդհանրապես գանգատվում եին աչքի ցավից, բայց թվում և թե նրանք զարմանման ազդու միջոցներ չունեն, թեև նրանք գործ են ածում շատ ծիծաղելի պառավական դեղեր (nostrums), ի միջի այլոց ամենասովորականն և իրար խառնված կնոջ կաթը և շաքարը։

Հայ կանայք մահմեդականների նման ամբողջական քող չեն գործածում։ Նրանք աչքերը կատարելապես ազատ են թողնում և ծածկում են միայն քիթը, վորով կարելի չի դեմքի կերպարանքի ու արտահայտության մասին մի գաղափար կազմել։ Այն վոր ծածկում և դեմքի ներքևի մասը, այնքան ամուր և կապված և այնքան տափակացրած և յուրաքանչյուր հայ կնոջ քիթը, վորքան մի սևամորթի (negro) [քիթը]։ Նրանց դեմքը լայն և ու կոպիտ, նրանց գույնը սպիտակ և ու կարմրագույն, աչքը սև, բայց նրանց արտահայտությունը ընդհանրապես շատ քիչ հետաքրքրություն և առթում։ Յերբ նրանք անիլ գուրս են գնում, ծածկվում են գլխից մինչև վոտք մի մեծ սպիտակ քողով։ Տան մեջ նրանք նորից կրում են իրենց քթի կապը, վոր յերբեք չեն վերցնում, նույնիսկ անկողնում։ Նրանց հագուստը կազմում և՝ մի մեծաքա շապիկ, մի մեծաքա անդրավարտիկ, վոր հասնում և մինչև վոտքը, մի նեղ ներքնազգեստ, վոր ամբացնում են կոկորդին արծաթե կոճակներով, և մի գրսի հագուստ, շինված ընդհանրապես լցված հընդկակտավով (chintz) և բացված առջևի կողմից վերից վար։ Նրանք կապում են մի արծաթե գոտի, վոր ունում և ազգրի վրա, և ընդհանրապես հետաքրքիր կերպով շինված։ Նրանց վոտքը բորիկ և. և վոմանք կրում են արծաթե ապարանջան իրենց բռամբերի վրա։ Վոչ մեկ մազ չի յերևնում, բացի յերկար հյուսված պոչից, վոր կախվում և կռնակի վրա մինչև գոտին։ Իրենց գլխի վրա գնում են մի տեսակ բարձիկ, վոր գազաթին լայնանում և։ Վերև հիշված քահանայի կինը, ամենից ավելի բախտավոր լինելով, հագել եր կարմիր մետաքս, ուրիշները հագել էին բամբակյա ապածոներ։

Ոգոստոսի 31-ին թողեցինք գեսպանի կառապանին, հաղիվ քսան մեկ տարեկան մի յերիտասարդ, վոր գնաց մի համառ ջերմի, հակառակ նրան ազատելու համար կատարված բոլոր ջանքերին։ Նրան թաղեցինք հայերի գերեզմանոցում, վոր գտնվում և Ջուղայի ծայրամասում, և վոր իր տարածությամբը հատատում և նախկին ճանապարհորդների

նկարագրությունը՝ հայ բնակչության մասին, Սեֆեվի հարըստության ծաղկման որերում։ Գերեզմանաքարերը ընդհանրապես մի կատր յերկայնաձև սև քարից են, արձանագրությամբ, հաճախ ննջեցյալի արհեստը հատկանշող փորագրված պատկերով։ Այսպես, յերը հյուսն և յեղել, փորագրված և մի սղոց, մի ուրագ, յեթե մի ուսումնական մարդ՝ մի գիրք ու գրակալ։ Այս գերեզմանոցի ծայրամասում լեռների մոտ, տակավին տեսնվում են շիրիմներ հոլանդացիների, անգլիացիների, ֆրանսացիների և ռուսների, վորոնք մեռած են այստեղ այն ժամանակ, յերը յեվրոպական ազգերը պահպանում հաստատված գործակալություններ ունեյին և վաճառականներ։ Ի միջի այլոց նկատեցինք մի վոմն Ռոդոլֆի շիրիմը, մի գերմանացի ժամագործ, վորին հայերը համարում են նահատակ, վորովհետև նա մերժել եր ուրանալ իր կրոնը, (վոր բողոքական եր), և դառնալ մահմեդական։ Շարդինը, վոր պատմում և այս մասին, ասում և թե նա մահվան դատապարտվեց Շահ Սեֆի Ա.-ի կողմից, սպանած լինելու համար մի պարսիկի, թեև ինքնապաշտպանության համար, և յեթե նա ընդուներ մահմեդականությունը, (ինչ վոր թագավորը յերկար ժամանակ առյալում եր նրան), պիտի խնայվեր նրա կյանքին։ Նրա շիրիմի վրա կա այս պարզ տապանագիրը. — «Ci git Rodolphe»։

Կառապանը փաթաթեցին մի ծածկոցում, (վորովհետև դագաղ չեն գործածում Պարսկաստանում) և այսպես դրին հողի մեջ։ Մենք հետևեցինք նրա հուղարկավորության մեծ թափորով։ Դեսպանը կարդաց արարողությունը նրա վրա, և հայերն եյին փորել նրա գերեզմանը։

9.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ*

Ասիայի արդի պատմության ամենանշանակալից փաստերից մեկն է եվրոպական դիվցիպլինայի ներմուծումը պարսկական բանակում։ Այդպիսի դիսցիպլինան մի մահմեդական պետության մեջ, — հակառակ նրա պահպանության համար կառավարության կատարած ջանքերին, ի նկատի ունենալով մահմեդական կրոնի նախապաշարումները, և մասնավորապես նախախնամության վարդապետության նրա ընդունումը, — մի անակնկալ եր թե ինչպես սկսեց, պահպանվեց ու զորացավ դա Պարսկաստանում։ Ճիշտ և վորթյուրքիայի նման յենիչերիներ չկային վորպես հակառակորդ, բայց իշխաններից վոմանք պահարակում եյին այդ, շատ աղնվականներ հեգնում, և յերեք չլինելին Աբբաս Միրզայի անձնական ջանքերը, անպայման պիտի ձախողեր։ Փաստորեն Աբբաս Միրզան և հիմնադիր, պաշտպան և գլխավոր քաջալերողը դրան, և հետևաբար իր յերկրի բարերարը։

Դեպանի հետ իր տեսակցությունից մեկում նա նկարագրեց շատ մեծ պարզամտությամբ այն առաջին դրդապատճառները, վոր համոզեցին իրեն իր բանակում [դիսցիպլինա] ներմուծելու վորձը կատարել։ Նա ասաց, թե ինքը գահ և վոր ի զուր և կռվել ռուսների դեմ, առանց նրանց նման զինվոր ունենալու, թե նրանց հրետանու դեմ կարելի յե դուրս գալ միմիայն հրետանով, և թե իր բոլոր ջանքերը նրանց [ռուսների] վրա տպավորություն գործելու համար, իր անկարգապահ ամբոխով, կատարելապես ձախողած են

* Morier, հատ. Բ. գլ. XIV. եջ 211—215։

Դիսցիպլինա մտցնելու իր առաջին փորձերը շատ քիչ հաջողության են հանդիպել, վորովհետև առաջին քայլին իսկ նա պետք եր պայքարեր նորակոչիկների նախապաշարումների դեմ, վորոնք միշտ եյին վորևե կերպով խառնվել ֆրանջինների (Firengees) [յեվրոպացիների] կերպերին, և մասնավորապես ռուսների, վորոնց դեմ իրենց ազգային ատելությունը առիթ ծնել և արհամարհանք, կամ թերևս նրանց վախը տեղի յե տալիս ատելության, ավելի քան մյուս յեվրոպացիների հանդեպ։ Ջնջելու համար այսպիսի տպավորությունները, իշխանը [Աբբաս Միրզան] ասաց թե, ինքը ստիպված եր հաղթել հասարակ զինվորի համազգեստ, և յենթարկվել մի ռուսի՝ զինվորական մարզանք սովորելու համար, թե նա սկսեց յուրաքանչյուր անգամ քան կամ յերեսուն մարդով, վորոնց մարզանքը կատարվում եր անչյա մի բակում, վորպեսզի նրանք ժողովրդի ծաղրանքին առարկա չդառնան, և նա վերևե հաջողություն չկարողացավ ձեռք բերել մինչև վոր հրամայեց իր աղնվականներին՝ հետևելու իր որինակին և վերցնելու մի հրացան։ Մինչ այդ նա հաջողած եր իր սարդկանցից քիչերին սովորեցնել վաշտային մարզանքը, ուղիղ քայլել, դառնալ ըստ հրամանի բառին, և զարնել թմբուկը, բայց նա պետք ուներ սպաների, և հավանորեն նա սրանից ավելի առաջ չպիտի գնար, յեթե այդ ժամանակ Բոնապարտի կողմից ֆրանսական դեսպանությունը հասած չլիներ Պարսկաստան, յերբ այդ [դեսպանության] կից սպաները նշանակվեցին վորպես հրահանգիչ մեծ խմբերի վրա, և նրանք նրա ակնկալությունները լիովին արդարացրին, ինչ վոր նախատարերքն եյին զինվորական գիտության՝ թվում եր նրան վորպես կատարելություն, և հակառակ վոր նա հետագայում գտավ, վոր իր առանձին զորակոչիկները շատ քիչ բան են սովորել, սակայն հիշելով նրանց առաջին տեսքից իր ստացած հաճույքը, հետագայում նա միշտ ավելի կողմնակցություն եր պահում նրանց վերաբերմամբ, քան իր մյուս զինվորների։

Անգլիական առաքելությունը, վոր հաջորդեց ֆրանսա-

ցիներին, նույնպես սպաներ հայթհայթեց նրան, և նրա առաջին ցանկությունն եր պատրաստել թնդանոթաձիգների մի գունդ, որ կատարեց տեղակալ Լինդսեյ (Lindsay), մի սպա Մադրասի բանակից, հիրավի, շատ զարմանալի մի յեղանակով:... Այս սպայի յեռանդին հավասարում եր միայն իշխանի քաջալերությունը, որ իրեն ամեն նախապաշարումից վեր դասելով, դիմադրելով իր սպաների նախանձին և իր պատասխանների ավանդություններին, ազատամտորեն ընդունեց առաջարկված բոլոր մեթոդները, և պաշտպանեց տեղակալ Լինդսեյին այն բոլոր դժվարություններից, որ հարուցվեցին նրա դեմ: Նրան տված կատարյալ իշխանություն՝ պատժելու իր զորակոչիկներին, ինչպես որ կամենար, և անսահման կոնտրոլի իրավունք իր զինվորների վրա: Միայն մտրուքը ածիլելու պահանջի դեմ իշխանը անզորվելի եր, և յերբեք զրանց [մտրուքների] դոհողությունը չպիտի կատարվեր, յեթե չպատահեր որ իշխանի ներկայության թնդանոթի արձակման միջոցին, վառոդի մի կոտոր պայթեր թնդանոթաձիգ մի զինվորի ձեռքում, որ բախտի բերությամբ ոժտված եր մի յերկար մորուքով, որ մի վայրկյանում հոգս ցնդեց նրա կզակից: Տեղակալ Լինդսեյը չկորցրեց այս պատեհությունը՝ ապացուցանելու իր փառասիրությունը զինվորների մորուքի խոչընդոտ լինելու մասին և անմիջապես խանձած ու խեղանդամված թնդանոթաձիգ զինվորին առաչնորդեց իշխանի ներկայության, որ այնքան ազդվեց նրա վողբալի տեսքից, որ զինվորական մորուքները արգելումը անմիջապես վերոշվեց:

Սերբազ կամ հետևակազորը գրվեց Բոմբեյի բանակից հրամանատար Քրիսթիի (Christie) հրամանատարության տակ, նա իր զինվորներին ներշնչեց զինվորական վոգի (esprit de corps), հայտնաբերված շատ պարագաներում: Աբբաս Միրզան, որ կողմնակից եր մասամբ ֆրանսացիների և մասամբ իր կողմից մարզված զորամասին, խորհելով թե դա ավելի տոկունություն և ձեռք բերել քան հազարապետ Քրիսթիի [զորամասը], մի որ առաջարկեց մի կեղծ պատերազմ, որի

ընթացքում նա պիտի վարեր իր բանակը և Քրիսթին՝ իրը՝ Նրանք դաշտ բերվեցին, և իշխանի զինվորները մեծ կորով հարձակվեցին Քրիսթիի [զինվորների] դեմ, վորոնք սակայն, ավելնամարտի դիմելով, մյուսներին փախուստի մատնեցին: Քրիսթիի մարդիկը, վորոնք հավանորեն չեյին հասկացել թե սա մի խաղ եր, և վոգևորվել եյին իրենց հաղողություններով, իմացվեց վոր գոչում եյին. «Ո՞, յեթե միայն մենք լյուած փամփուշտներ ունենայինք»:

Իշխանը պետությին գանգատեց թե, նույն իսկ հիմա իր ներմուծած սիստեմը բազմաթիվ թշնամիներ ունի, և նրանցից ամենազորավորը իր յեղբայրն է՝ Մոհամմեդ Ալի Միրզան, վոր փորձած եր իրեն և իր ճիզամը մեղ

սպայինն: Շատ չկրկնար անգամ մինչև վոր նա ըմբռնեց ծառայության ճիշտ սովորությունը, և նա դանդաղ եր խղճմտորեն ըմբռնելու կանոնադրությունների անհրաժեշտությունը, վորոնք իրեն թվում էին թե ավելի արգելք էին քան դյուրություն: Մի որ, կերը նա համբերատարությամբ լսել եր մեր[զինվորական] ծառայության որենքների ու կանոնների մասին, խոր հառաչանքով բացականչեց. «Այս դիսցիպլինան ամենադժվար բանն եր:... Մեր սպանների ամենամեծ դժվարությունը պարսիկ սպանների սորունությունների ու մեքենայությունների էին, վորոնք իշխանի կողմից նշանակված էին՝ ոգնելու համար նրանց տարբեր հրամանատարությանց մեջ: Զինվորին նրանք գտնում էին ամենից հնազանդ ու կառավարելի. և մարդանքը ընդունում էին ավելի շուտ, քան նույնիսկ անգլիացիները, բայց նույն րոպեին կերը մի մերդա կամ մի խան միջամտում եր. ամեն ինչ վերածվում եր խռովության ու վեճի: Որինակի համար, մի մերդա, վոր նշանակված եր զինվորներին [ռոճիկ] վճարելու, ամեն մարդուց վորոշ տոկոս եր պահում իր համար, այն գումարներից վոր նա առանում եր՝ հագուստի, կարասիի և այլնի հայթհայթման համար, նա պահում եր առևտուր անելու համար նրանով և կամ գործածելու վաշխառուական շահերի: Մի որ բավական դերք ունեցող մի անձնավորության գողացել եր կերկու հրացան, և սրա նման սորության դեպքերը անվերջ կարելի կ՚հիշատակել:

Բացի այս դժվարություններից, սպանները գտնում էին, վոր զորակոչիկների հայթհայթման գործը պակասավոր եր: Նրանք վերցվում էին ընդհանրապես Ատրպատականի (Aderbigian) թափառական ցեղերից, վորոնք իրար կապված են տոհմային կապերով, և միշտ պատրաստ են իրար ոգնելու ամենից աննշան պարագայում: Այս առաջացնում եր մի միտում, վոր մենք անվանում ենք խռովություն, և վոր նրանք համարում են arq (arz), մի խնդիր: Զինվորության համար, վորպես մասերյալ դերազանցող չունեն ելվածները (Eelants): Իրենց մանկությունից վարժված լինելով ճամբարի կյանքին, ամեն տեսակ դժվարություններին և յոլաննակի

փոփոխություններին, նրանք զինվոր են բնությունից: Նրանք կատարել են անհավատալի չվերթներ (marches), առանց հագիվ թե վերևի ուտելիքի, և առանց վերևի վրմունջի: Այդպիսի հատկություններով հավանորեն նրանք հավասար լինեն վերևի այլ զինվորի աշխարհում, բայց նրանք մեծապես պակասավոր են զինվորի առաջին արվեստի՝ մնալու արվեստի մեջ: Սովորած լինելով իրենց կռվելու տեղն կերպարերին, ուր ամեն մարդ, անկախ մյուսից, նախ հոգատար և իր սեփական ապահովության, իր թշնամուն սպանելու մտածումից առաջ, նրանք չէին կարող սիրել մեր սիստեմը: Մի պարսիկ այդ նյութի մասին մեր սպաներից մեկի հետ խոսելիս, ասել և շատ հանճարեղ կերպով. «Յերբ այս պարագայում մեռնելը չլիներ, վերքան վտառավոր կերպով կկռվեյին պարսիկները»: Ինչության մասին նրանց ունեցած գաղափարները հիրավի բոլորովին տարբեր են մեզանից: Նրանք քաջության վրա նայում են վորպես մի հատկության, վոր մի մարդ կարող է ունենալ կամ չունենալ, ինչպես վոր նա զգաց այդ րոպեին: Թափավորի սորուկներից մեկը, վոր քաջ մարդ լինելու համբավը ուներ, չեր ամաչում պատմել վոր ինքն ու բազմաթիվ զինվորներ չեն կարող պահվել յերկու ռուս զինվորների կողմից, վորոնք փոխընդփոխ կրակում էին հրացաններ իրենց վրա և վերջապես ստիպել էին իրենց հեռանալ: Խոսելով ռուսների մասին, պարսիկները ասում են թե նրանք այնքան զուրկ են զգացումից, վոր իրենց դերքը լքելուց նախընտրում են մեռնել տեղի վրա:

Աբբաս Միրզայի համար ասում են թե անձնապես քաջ և, և ռուսների դեմ տարբեր հանդիպումների նա վտանգել է իր կյանքն ավելի քան անհրաժեշտության պահանջը յեղել: Նա պատժում և վախկոտությունը, վորի մի դեպքին մենք ականատես յեղանք: Իր գեներալներից մեկը՝ Մոհամեդ բեկ, մի վտանգի պարագայում լքել եր դերքը և փախուստ տվել: Իշխանը զրկեց նրան իր աստիճանից, կապել տվավ նրա ձեռքերը յետևում, մի փայտյա սուր կախեց նրա կողքից, նստեցրեց մի եշի վրա, յերեսը դեպի պոչն կողմը, և այսպես շրջեցրեց նրան ամբողջ Թավրիզում:

Ի.

ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ *

Յերբ Թավրիզ հասանք, այստեղ գտանք մի ռուս սպա, որ Վրաստանի ռուսական զլխավոր հրամանատար գեներալ Ռտիսչեֆի (Rtischeff) կողմից ուղարկված եր Սըր Գոր Առսլեյին [անգլիական դեսպան] նամակներով, որով ռուսական կառավարությունը փափագ եր հայտնում բրիտանական միջնորդությամբ հաշտության բանակցություններ վարելու Պարսկաստանի հետ **։ Պարսիկները իրենց համար նպաստավոր համարելով՝ Վրաստանում վերջերս տեղի ունեցած մի կարգ խռովությունները, այնքան եյին փքացել, որ նրանք տրամադիր չեյին լսելու ռուսների այդ ուղղությամբ արած առաջարկները, բայց որովհետև շատ բան կար կատարելիք մեր միջամտությամբ, իշխանը [Աբբաս Միրզան] չմերժից դեսպանի ցանկությունը ռուս սպայի հետ միասին յարգելի Ռոբերտ Գորդընին (Honourable Robert Gordon) ուղարկելու Թիֆլիս, որպեսզի գեներալ դը Ռտիսչեֆից ճշդրիտ կերպով հասատատեր թե ի՞նչ եյին ռուսական վերջնական պայմանները, և թե նա լիազորական իշխանություն ունե՞ր բանակցություն վարելու համար։ Միրզա Բոզուրքի (Mirza Bozurk) հետ ունեցած խորհրդակցությունից մեկում, յերբ մենք առարկում եյինք Վրաստանի պարսկական սահմանակցություն լինելու ոգտակարության մասին, նա մի նկատողություն արեց, որ իսկական հատկանիշն եր մի ասիացու

* Morier, Հատ. Բ. եջ 217—220. 233. 241—250։

** Այս սպան Ֆրեզերն եր, որի ուղեգրությունը մենք հա-

տրամաբանության։ Իր մորուքը ձեռքում առնելով ասաց. «Սա վոչ մի բանի ոգուտ չունի, բայց մի գարդարանք է»։

Քիչ ժամանակ հետո մենք նամակներ ստացանք Թիֆլիսից Մր. Գորդընից, որ տեղակացնում եր դեսպանին, թե գեներալը բանակցության համար ուներ կատարյալ լիազորություն, թե նա հանձնարարում եր, որ անմիջական պինդադար կնքվի, որպեսզի ուժ տալու համար նա հրամայել և որ բոլոր հարձակումները պարսկական հողամասի վրա դադարեցվեն, և թե նա պատրաստ և հանդիպելու իշխանին սահմանագլխի վրա, բանակցություն սկսելու նպատակով։ Յերբ այս նամակը ստացվեց, դեսպանը ինձ ուղարկեց Աբբաս Միրզային, որ մի ժամանակից ի վեր իր բանակի մի մասի հետ բանակած եր Յամի (Yam) արոտավայրում, մոտավորապես ութը փարսախ հեռու Թավրիզից, Մարանդի և Նախիջևանի ճանապարհի վրա։

Աբբասը ինձ ճամբա ելավ յերկու ծառայի և յերկու առաջնորդի հետ, և ժամը 10-ին հասա Սոֆիան, ուր անհրաժեշտ եր որ ես ու ձիերը հանգչեյինք։ Բնակարան կար վրանում կապերանք վռնեցին ինձ համար, ուր նստեցի մի ժամ լուսնի լուսով... և յերեք ժամ հետո հասանք իշխանի բանակատեղը, որի սպիտակ վրաններն արդեն հեռվից մենք նշմարում եյինք լուսնի լուսով։ Մեզ ընդունելության եկավ մի մեծ ամբոխ ճամբարում. ինքն ինձ եր նախադուռ տրում ամբողջ ճամբարում, ինչպես նաև շուքյան պահապանները, որ մենք «ձյունի նման սպիտակ հազար վրաններով» կենտրոնում եյինք, առանց մի մարդու իսկ հանդիպելու։ Պատահաբար յես գտա իշխանի վերաբերյալ Մր. Քամբելի վրանը, ուր հանդչեցի մինչև առավոտ, յերբ շատ կանուխ վերջինիս զարթեցրին իշխանի հրավերով, վորին նա կանչել եր ընկերանալու իրեն վորսորդության համար։

...Քիչ հետո նրա [Աբբաս Միրզայի] սպաներից մեկը յեկավ ինձ հրավիրելու։ Սովորական ձևակերպությամբ ներկայանալուց հետո, յես նստեցի իշխանի դիմաց թաղիքի (nummud) վրա։ Նա նստել եր գերձակի նման, վրանի մի-

ծայրամասում, նրա գլխարկը նետված էր մի կողմը և ինքը ծռել էր իր ծունկերի վրա։ Նրա մի կողմում կար մի թանաքաման և մի քիչ թուղթ, և վրանի մյուս ծայրամասում էր Հայդար Ալի Խանը, նրա համակրած սպաներից մեկը։ Մի քանի քաղաքավարական խոսքերից հետո, նա պահանջեց իմ բերած նամակները, որոնք իրեն հանձնեցի։ Դրանցից մեկը պարունակում էր պատճենը այն դաշնագրության, որ վերջերս կնքված էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որ բավական ուշադրությամբ չորեքար ժամանակ կարդաց առանց իր շրթունքը բանալու։ Ապա, նշան արեց Հայդար Ալի Խանին մեկնելու, և պահանջեց որ ես իր մոտ գնամ, մի քանի սուր ակնարկություններ արեց դաշնագրության դանադան հոդվածների մասին, ցույց տալով որ նա կատարելապես տիրապետում էր երկու պետությունների քաղաքական հարաբերությունների ընդլայնին, իմ բերած նամակների մեջ կար Մր. Գորդընի նամակը Թիֆլիսից, որի բովանդակության ամենամանրակրկիտ ուշադրությունն նվիրեց, և չորը նրան տեղեկացրի թե ռուս գեներալի ցանկությամբ Մր. Գորդընն պիտի վերադառնար Ղարաբաղի վրայով, հանդիպելով Գանձակ (Ganja) և Շուշի (Shisheh). վորպեզի տեսնի ռուսական տիրապետության այդ երկրամասը, բացականչեց. «Ա՛հ, ես ճանաչում եմ այդ վարպետորդիներին, նրանք պիտի փորձեն Մր. Գորդընին հավատացնել թե իրենք շատ զորավոր են, չորը բոլորովին հակառակն է։ Մի որ մի խումբ գինվորներ կանցնին նրա մոտից, և հաջորդ որը, փոխելով նրանց հագուստը, մի ուրիշ խումբը ներկայացնում են, վորպես նոր հասած թարմ գինվորներ։» Նա վերջացրեց խորհրդակցության այս մասը ասելով, թե պիտի խորհի թե ինչ պետք է անել, թե պիտի գրե գեսպանին, և այդ գիշերը պիտի կանչեր ինձ նորից ասելու համար թե ինչ եր իր վճիռը։...

...Մոտավորապես կես գիշերին մի վատահավի ծառա, մեծ լապտերով, ինձ առաջնորդեց իր տիրոջ, գորը ես գտա նստած միևնույն տեղում, ինչպես առավոտյան, և

նրա վրանը լուսավորված էր մի ճրագով։ Նա ինձ նստեցրեց իր դիմաց, մոտ մեկ երրորդ հետու, լույսի մոտ, թելադրեց մինչ ես գրում էի հուշատետրում, ինչ որ պետք էր ասեյի գեսպանին։ Հետո մեկնեցի, և անմիջապես հնձնելով իմ ձին, հաջորդ առավոտ ժամը ութին հասա Թավրիզ, ձիու այն պահուն երբ գեսպանը նախաճաշում էր։

Այս շրջանում Պարսկաստանի և Թուրքիայի գործերի դրությունը շատ կրիտիկական էր, և պահանջվում էր մեր [Անգլիայի] ամբողջ ազդեցությունը թե կ. Պոլսում և թե Պարսկաստանում, նրանց հետու պահելու համար պատերազմից։...

Վերջապես վրաստանի ընդհանուր կառավարչից ստացվեցին պաշտոնագրեր, որով նա իմաց էր տալիս իր մտադրությունը՝ մեկնելու սահմանագլուխը հաշտություն կնքելու համար։ Հետևաբար գեսպանը թողեց քաղաքը և սեպտեմբերի 7-ին մեկնեցինք միանալու համար արքայազուն Իշխանին, որ առաջարկեց սպասել [ռուս] գեներալին Ախալ

չեր պարսկական կերպերին, հագել եր համազգեստ, նեղ տարատ և պինվորական կոշիկ։ Անգլիական դեսպանը բարեկամաբար տեղեկացրել եր նրան, թե դա հարգանքի նշան կը լինի, — և նկատի ունենալով վոր պարսիկների կապերը վոչ միայն նրանց աթոռն եր, այլ նաև նրանց սեղանը, — իր կոշիկները փոխարինել չարչուրով (chakchour) կամ կարմիր կաշիից դուլպայով, վոր սովորաբար հագնում են այսպիսի պարագաներում։ Դեսպանը ասաց թե ինքը կը կրեն այն համազգեստը, վորով նա կարող և ներկայանալ իր սուվերան վեհապետին, պահից իր ամբողջական համազգեստը և իր կոշիկներովը նստեց իշխանի կապերտի վրա։ Պարսիկները ամենամեծ անարգանքն են համարում կոշիկը հանելու դռնցառաջ, և ուրեմն իշխանը այնքան զայրացավ պատահածին համար, վոր դեսպանի մեկնելուն պես նա հրամայեց վոր իր արաբոզապետը մահամերձ լինելու ասելիքն ծեծի ենթարկվի։

Գտնելով վոր իշխանի և ընդհանուր հրամանատարի պաշտոնական կամ դիվանագիտական հանդիպումը կարելի չեր, ռուսները առաջարկեցին վոր յուրաքանչյուր կողմը ուղարկի մի լիազոր, վորոնք պիտի հանդիպելին Արաքսի ձեղերքը՝ Ալանդուզում։ Սրան պարսիկները համաձայնեցին և իշխանի վեզիր Միրզա Աբդուլ Քասիմ նշանակվեց պարսիկների կողմից. վորոշվեց նաև վոր յես անմիջապես գնայի ռուսական բանակը, հաղորդակցելու ընդհանուր հրամանատարի հետ և վերադառնալու կոնգրեսի վայրը, նրա լիազորի հետ։

Ինձ ընկերանում եյին՝ դեսպանատան դռնձապահը, վոր Թիֆլիզեցի մի հայ եր, հրետանիի տասը պինվորներ, և իշխանի հեծելազորից տասը հոգի։

Հոկտեմբերի 4-ի առավոտ շատ կանուխ մեկնեցինք, մի խիտ մշուշով, վոր շատ սովորական և Ղարադաղի այս մասում, և վոր սակայն, արև ծագելուն պես պարզվեց, թույլ ավտ վայելելու մի հրապուրիչ գետակի շրջապատը, վոր բխում և Աք Թափեյի մոտից և ի վերջո թափվում և

Անաը Ջայ, վոր Ալանդուզի մոտ միանում և Արաքսին։ Մենք մտանք մի հովտաձոր, ուր սիրված եյին եյլավթներ (Eclauts), վորոնք սիրով ընդունեցին մեզ իրենց վրաններում, և հյուրասիրեցին իրենց հոտերի արտադրություններով։ Մի կին կապերտ փռեց նստելու համար, և չոր խոտից ու ցախից մի կրակ վառեց մեզ շատ մոտ։ Այս թափառականն հասարակության մեջ պրեթե բոլոր գործերը կանայքն են կատարում...։

Անձրևի փոթորիկով հասանք պարսկական հեծելազորի մի բանակատեղ, վոր գտնվում և Արաքսից յերեք փարսախ այս կողմ։

...Յես մտադրված եյի անմիջապես գնալ Ալանդուզ, բայց լեռնակը շարունակում եր լինել աննպաստ, մեռնելի դիշերը միայն այնտեղ, ուր վոր եյի և [ճանապարհը] շարունակել հաջորդ առավոտ։ Որվան մեծագույն մասը յես անցկացրի պարսիկ սպաների ընկերակցությամբ, վորոնք շատ հաճախ եյին գալիս ինձ մոտ։ Նախանձախնդիր եյին տեղեկանալու իրենց կառավարության և ռուսների միջև կատարվող բանակցության բնույթի մասին, և ինչպես իրենք փորձառությամբ գիտեյին թե ինչ անհնազող պայքար եյին մղել մինչև հիմա ավելի գերազանց ուժի թշնամու դեմ, թվում և թե նրանք անկեղծորեն հույս ունեյին վոր հաշտությունը պիտի կնքվի...

Ալանդուզ հասանք հաջորդ առավոտ կանուխ, ու փոխանակ մի պտուղի, պտանք մի հավաքածու նեղվից ու խոլերից շինված ժամանակավոր նյութալինների, վորոնց մեջ տեղ եյին մի քանի թշվառ եյլավթներ, վորոնք փորձեցին վախեցնել ռուսական հոդամասից։ Այստեղ արվեստական կենաձև մի բլուր կա, վոր վերապրվում և Ինկերմանին, և վոր ամրացվում և հիմա պարսիկների կողմից։...

Մեր ճամբի մեծագույն մասը միաց Ալանդուզ, մինչ նորը, իմ անգլիացի ծառան, թնդանոթաձիգներ և մեկ կամ երկու պարսիկներ ընկերացան ինձ գետի ռուսական բանակատեղը։ Մենք Արաքսից կես մղոն հեռու չեյինք, յերբ հանդիպանք ափը, պատք ծառի ընից շինված մի նավակ, պատ-

բաստ մեզ փոխադրելու։ Նախ, հայն ու չես տարվեցինք մյուս ափը, վորովհետև բացի մակույկավարից, վոր թիավարում էր մեկ ծայրում, ավելի մարդու տեղ չկար։ Հետո բերին մեր բեռները մի քանի անգամից, վերջը մեր կինդանիներին, վորոնց մայրին պետի մեջ և աղաղակելով տախտեցին վոր լողալով գան դեպի մեզ։

Գետը անցնելուց հետո մենք անմիջապես մտանք ռուսական հողամասը՝ Ղարաբաղի գավառը, վոր հողի, ջրի ու կլիմայի տեսակետից հավանորեն աշխարհում ամենագեղեցիկներից մեկն և, բայց չերկար ժամանակից ի վեր պարսիկներից մեզ ծանոթ պատերազմի հետևանքով, ամայացել և։ Մենք սիկների մղած պատերազմի հետևանքով, ամայացել և։ Մենք չտեսանք և վոչ մի բնակիչ, կամ վոչ մեկ բնակված տեղ, մինչև վոր նշմարեցինք հեռավոր մի բլրի վրա ռուսական հեծապահակներին (videttes)։ Վայրի այծերի ու յեղջերուների հոտեր թափառում էին մեծ քանակությամբ, և վայրի, բոլորովին հանդարտեցին, չերբ գտան վոր Սակայն, նրանք բոլորովին հանդարտեցին, չերբ գտան վոր առաջապահները բարեկամաբար սրամադրված կողակներ էին, չերբ նրանք տեսան նրանց սպայի քաղաքավարությունը, վոր տեղեկացրեց թե նա չեկել եր ռուսական ընդհանուր հրամանատարի կողմից վոլջունելու մեր ժամանումը։ Վերջապես հասանք բանակատեղը, վոր իր դիրքովը ամենագեղեցիկն եր, վորովհետև շրջապատված եր կանաչ բլուրներով, և մոտ եր չերկու նշանավոր հողակույտերի, վոր ասում են թե Լենկթիմուրն և շինել, վորպեսզի նա մի հիշատակ թողնի ապագային իր հրամանի տակ գտնվող քանակի անսահմանության մասին, հրամայելով վոր ամեն

մեկ գինվոր հողով լցնի իր ձիու portmanteau (tobrah) կամ գարու պարկը և թափի մի տեղում։

Ինձ առաջնորդեցին մի վրան, վոր հատկապես պատրաստված եր ինձ համար, և քիչ հետո ներկայացվեցի ընդհանուր հրամանատարին՝ գինեթալ գը Ուխիչևին, վոր ինձ ընդունեց ամենամեծ քաղաքավարությամբ, և ասաց թե առայժմ մենք պետք և հետաձգենք գործի մասին խոսել։ Քիչ հետո նրա վրանը չկան իր ճամբարի գինեթալներն ու գլխավոր սպաները, վորոնց ինձ ներկայացրին հաջորդաբար։ Բոլորը պարզհատված եին ասպետերով, խաչերով և ժապավեններով, և նրանց մեջ գտնվում եր մի նշանավոր վրացի, քաջ իշխան Բագրատունու ազգական, և վոր նույնպես կոչվում եր իշխան։ Գուցե վոր այս տիտղոսը տրվում է վրաց վրացու, վոր հին ընտանիքների հետ ազգականություն ունի, և թե հաճախ տրվում և մարդկանց, վոր ինչպես ֆրանսացին պիտի ասեր, qui ne payoient pas d'apparence, [նեղճ չերևույթ ունի]։

Ընթրիքը ծանուցված լինելով, մենք գինեթալի վրանից անցանք նրան կից մի չերկար վրան, ուր մի չերկար սեղան եր դրված. Այստեղ բացի ծաղկոցից, պնակներից, դանակից, պատառաքաղից, գինու բաժակներից, ուտելու համար վոչինչ չկար, բացի միայն մի մեծ թանաման ապուրից, վոր գինեթալն իր ձեռքով բաժանեց բոլորին։ Սեղանը զարդարվել եին բազմաթիվ սպաներ, վորոնք նստել եին իրենց աստիճանի համաձայն՝ շքանշաններով պճնված մի գինեթալից մինչև կողակների մի տեղակալ կամ նույն իսկ մինչև մի վրացի իշխան։ Սակայն, վորքան արտակարգ թվի այս խառնուրդը մեզ, դա իմ ուշադրությունը գրավից, մանավորապես չերբ ձերունի գինեթալը բարությամբ, բարձր ձայնով ինձ ասաց, վորպեսզի բոլորը լսելին. «Լավ, տեսնում հք այս ընկերությունը ու այս բանակատեղը, ինչպես վոր ևնք, մենք ամենքս ունենք մեկ սոված, մեկ վհատած և մեկ սիրտ»։

Այս ապուրից հետո հաջորդական պնակներ ընդունեցին,

վոր հաճախ ընդհատվում եր կենացներով գեներալի կողմից. մի քանիսը ան ի քաղաքավարութիւն ուղղված եր նոր հյուրին, և բոլորը միասին անելին առիղծելու լավ համբաշխութիւն։

Հաջորդ առավոտ յես պարիզեցի պլենիպոտենտին նվագով, վոր ածում եր աշխուժ լեզգինկներ. դուրս նայելով տեսա՝ փոխանակ ջրերների ու ուղտերի, սայլեր ու կառքեր. յերկար մորուքներն ու վոչխարի մորթիները փոխարինված եյին ժապավենապատ վերարկուներով ու ցցված փետուրներով, և պզտիկ մի տեսակ թարմացում, այնքան յեվրոպականի նման պզտիկ մի տեսակ թարմացում, այնքան յեվրոպականի նման մարդկանց ու բաների ներկայութիւնը, վորովհետև այժմ ասիական կեպքերի ու մարդկանց հետքերը գրեթե անհետացել եյին, և քիչ յեղբի պետք կար յերևակայութիւնդ պատրանքը ունենալու համար, շատ հեռու լինք Պարսկաստանից և նրա բարբարոսութիւններից։ Այն ուրախները, վորոնք յերկար ժամանակ ապրում եյին այս յերկրներում, չեն թվում թե իրենց սովորութիւններին ուրախ վորևե բան յուրացրել են, բայց յերկար ծխամորճից, վոր նրանք ընդհատակել են թուրքերից։

Մի փոքր գավաթ սուրճ խմելուց հետո, յես մի խորհրդակցութիւն ունեցա գեներալի հետ, կատարյալ գաղտնապահութիւնդ։ Յես պետք նրան անհրաժեշտական համարեցի, սուրը կողքին, գլխարկը ձեռքում, և տեղակացա թե այս եր նրա սովորութիւնը, յերբ խոսում եր պարոնայք, վորովհետև մեր հաստատակամ գործը վերջացնելուն պես, նա ուրախութիւնդ ծախսարկից, ասելով՝ այժմ հանգիստ ձեր սուրը և հանպատրաստից, և ինքը անմիջապես հանեց իրենը և դրեց իր գլխարկի կողքին։ Հանդարտեցրի գործի դաղտնապահութիւնը այսուհետև, գերապետից մի հակառակներն եր պարսիկների հրապարակայնութիւնդ։ Յես բերանս բանալուս պես գեներալը անմիջապես փակում եր իր դռանը, մինչ Պարսկաստանում ամենածանր հարցերը միշտ միջամտում եյին ծառաների կողմից, վորոնք նստ եյին խոժոռում [գերելով] ծխամորճ։

Նման նախորդ յերեկոյան ընթրիքի մի ընկերութիւն հավաքվեց կեսգիշեր ճաշի համար, և մեկը մյուսին նման եր, բացի նրանից վոր ճաշը շուտով վերջացավ։ Յես հեռացա գեներալից, մի մրափ առնելու համար, կամ թղթախաղ խաղալու, և դուրս սողոսկելի գիտենալու համար ճամբարի վայրերը։ Յերբ մանեյի գալիս, ժամացույց մի բարձր մացառի, վորի ետևում կային յերկու ռուս գինվոր, վորոնք, թեև բավական շատ անձրևում եր. նստել եյին թաց խոտի վրա, առանց վերարկուի և առանց գլխարկի, և խուզվ եյին խաղում իրենց վերադասների նման։

Հաջորդ առավոտը յես մեկնեցի Գեներալ Հախվերդովի (Akverdoff) հետ, վոր լիազորված եր ընդհանուր հրամանատարի կողմից, ներկայացնելու նրան առաջ բանակցութիւնի մեջ, բայց պետք չեմ մոռանամ հիշատակել, վոր մեր մեկնումից առաջ բարի ծերունի գեներալ Ռահոյնով, վոր անսպասելի եր իր քաղաքավարութիւնդ, ինձ ավել ինչ վոր ինքը անվանում եր անգլիական նախանձաշ, բազկացած հետևյալներից՝ թեյ բլիթներով, պուդինգ, ձկնապուր, մսեղեր և պորտվեյն։

Մեր շքախումբը կազմված եր շատ ազգերից, վորովհետև բացի ռուսներից և անգլիացիներից, մեզ հետ եյին Դանի կողակներ, Թերեքի կողակներ, չերքեզներ, վրացիներ, Տալեր, պարսիկներ և կալմուկ թաթարներ։

Գեներալն ու յես նրա կառքով գնացինք մինչև Արաքսը, մինչ մյուսները ցրված եյին ամեն կողմ, վորս փնտռելու համար, Գեներալի շները բռնեցին յերկու յեղջերուի...։

Յես անցա գետից և գնացի իմ վրանը, իսկ գեներալին Թողի ջրի մյուս ափում, ուր նա հաստատեց իր վրանը, Նրա կողակները, պաշտպանվելու համար արևից, շուտով ժամանակավոր վրաններ շինեցին՝ խրելով իրենց նիզակները գետնի մեջ, միացնելով վերևից և նետելով իրենց վերարկուները նրանց վրա։...

Հաջորդ որը վեղերը ժամանեց, և ռուս գեներալը գետն անցավ։ Ըստ համաձայնութիւնդ, առաջին այցելութիւնը

կատարեց վեզիրը, որ ժամանակ նա ապահով կեղծավորության բոլոր տերմիններըը, գովաբանելու համար գեներալին և նրա յերկիրը, յես որ մի ժամ առաջ լսել եյի ինչ ծայրահեղությամբ նա հայհոյել եր ռուսներին, այս բանը ինձ սովորեցրեց թե ինչ արժեք պետք և տալ պարսկական հայտարարություններին։ Նույն յերեկո գեներալը փոխադարձ այցելության յեկավ, և կողմերը սկսան բանակցության, իրենց լիապորության պաշտոնական փոխանակություններից հետո, բայց յերկու կողմից հավակնությունները այնքան մեծ եյին, որ գործերի ներկա վիճակում հույս չկար հաշտության, նրանք վճռեցին խզել և համաձայնեցին որ քննամությունները վերսկսելն սահմանված օրերի լրանալուց հետո։

Այցելության սկզբին տեղի ունեցավ հյուրասիրություն։ Նեղ բերին սուրճ առանց շաքարի, որ պարսիկները կոչում են թալխի (talkhee) կամ դառն և մեկ քաղցրացրած, որ նրանք կոչում են շիրին (shireen) քաղցր։ սովորաբար նախ տալիս են առաջինը և ապա յերկրորդը։ վեզիրը ցույց տալով ինձ գեներալին ասաց. «քանի որ մենք տակավին հաշտություն կնքած չենք, սկսեցինք շիրինով, որպեսզի հաջողակ լինի մեր գործը, և մեր խոսքերը քաղցր լիննեն»։ Բայց, յերբ կոնֆերանսը անհաջող վերջավորություն ունեցավ, այն ժամանակ վեզիրը առաջարկեց սուրճ և ասաց. «հիմա մենք պետք և որ խմենք միասին թալխին, դառնը»։ և մի գավաթ ավալ գեներալին...

Յես վերադարձա իշխանի բանակատեղը հոկտեմբերի 11-ին... Դեսպանը իմ վերադարձից յերեք որ հետո... սկսեց իր ճանապարհորդությունը յեթ գեպի Թեհրան, Արդաբելի ճանապարհով։

[Բանակցությունների այս խղումից հետո անգլիական դեսպանը հաստատվում և Համադան ու հետևում և դիվքերին, և վրաստանից սեղևկություններ ստացած լինելով, հաջորդ տարի (1813) հունիսի 16-ին մեկնում և պարսից Շահի հետ անմիջական խորհրդակցության համար։ Շահը

ժամանում և Ոջան (Ojan) հուլիսի 9-ին և անգլիական դեսպանը Թավրիզ՝ նույն ամսի 23-ին։ Ոջանում կատարված բանակցության մասին Մորիերը գրում և հետևյալը.— (Հատ. Բ. եջ 270—280)։]

Մեր Ոջան ժամանման՝ այնտեղ գտանք ռուսական թիկնապահին, որ մեզնից առաջ յեկած և ավելանք ապատում եր մեր գալստյան։ Նա ապրում եր մի փոքր վրանում, որ իրեն հալածհալածել եր մեծ վեզիրը։ Նրան լավ եյին հյուրասիրել, բայց նա գանգատվում եր իրեն տրված անուշեղենների քանակի չատության համար։ Շատ ու գանազան խորհրդակցություններ տեղի ունեցան այս ապակի հետ, մինչև վոր իրողությունները ի գոհացուցի յերկու կողմերի կարգադրվեցին, և յերբ ամեն ինչ կարգադրված եր, և պարսկական լիապորնեբի մեկնումը վճռված, ամբողջ գործը գրվեցավ քանդվելու վտանգի մեջ եր պարսկական մի սովորության պատճառով։

Յերկար բանակցությունից հետո, թագավորը համաձայնվեց վոր ռուս ապային ներկայանալ իրեն, և այս առթիվ մոտեցման հեռավորության չափն եր, վոր տեղի ավալ ամբողջ դժվարության։

Անգլիական դեսպանը ցանկանալով հանձինս թիկնապահի պատվել վրաստանի ընդհանուր կառավարչին, պնդեց վոր նա կանգնի այն տեղ ուր ինքն եր լինելու, բայց պարսիկները չեյին կամենում այդպիսի մտերմություն, և առաջարկում եյին պարտեզի կենտրոնը, ամենից շատ վոր ռուսը կարող եր ապահով։ Կարծիքն այս տարբերությունը տեղի եր տալիս կատարի խոսքերի, յերբ նորին վեհափառությունը դժվարության առաջն առավ մի հնարքով։ Նա վճռեց նստել Շահ-նիշինում (Shah-nisheen), մինչ դեսպանը և ռուսը պետք և կանգնեյին ներքևի անկյունում։ Յեվ վորպեսզի այս հանգանակալի դառնա, անդրաժեշտ և բացատրել թե Շահ-նիշինն մի տեսակ դարակ և [ոթյակ], առանձնացած սենյակի կիսում մի կողքի վրա, վոր գորգ և ածվում մասնավոր պարագաներում։ Այնտեղ գնաց թագավորը, և յերբ մենք առաջնորդում եյինք ռուսին, խոնարհելով սովորական

ընդմիջումներով, կերկար պողոտայից դեպի ընդունելության դահլիճը, մինչ հազիվ սահնում էինք նորին վեհափառության պլաշն ու ուսերը, որ բարձրանում էին Շահ-նիշինի ցցվերքից վերև։

Յետը մենք մտանք սենյակը, թագավորը՝ նայելով վար մեզ վրա, շատ քաղաքավար խոսքեր ուղղեց Թիկնապահին, մանուկներին պնդելով որ Բոխչիվի առաջնության վերաբերմամբ, բայց կերը մենք անկնելու վրա էինք, նորին վեհափառությունը ինձ կանչեց իմ անուհոմը և գեսպանի ներկայության առաց, որ չես վկա լինելու թե ամենայն նորին գերապանցության [գեսպանի] հանդեպ տածած բարեացակամության համար եր, որ ծառայության եր այս շեղումը, և թե ոչ մի պարապային նա թույլ չպիտի տա որ կրկնվի։

Անմիջապես մենք վերադարձանք Թավրիզ, և միայն մի քանի որ եր անցել կերը ուսա ու պարսիկ վագոնները մնկնել էին դեպի Զաղխաստան, կոնֆերանսի վայրը։ Մենք մնացինք Թավրիզ մինչև հոկտեմբերի 21-ը, հույս ունենալով լսելու պաշտպանության առորագրությը, բայց ամեն շաբաթվան ավելի զժվարություններ կային նրա հաջող վերջավորության, քան ինչ որ մենք սպասում էինք, մնկնեցինք Թեհրան Մարտական ճանապարհով։

[Դաշնագրության մասին, տես Մորիեր, Հատ. Բ. էջ 299 և շար.]։

Ը.

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հենրի Մարտին. — Մենք կերկար ժամանակ չեր որ Թավրիզումն էինք, կերը մեզ մոտ կեհան վիր. Ռեխլեմ Քանենկ և ՀԷր. Հենրի Մարտին։ Առաջինը կցված եր դեսպանատան վորպես հովիվ, կերկրորդը, վորին մենք թողել էինք Շերազում, Թարգմանելու համար նոր կառավարանը պարսկերենի, լրացրած լինելով այդ աշխատանքը, նա գնում եր Կ. Պոլիս։ Բայց այս պրոբլեմների առաջնությունը խանգարված եր Շերազից վերադարձի ճանապարհին։ Մր. Մարտին հաղիվ թե ժամանակ ունեցավ վերադառնելու իր ուժը, կերը նա նորից մեկնեց։ Նա մի ժամանակ մնաց հայ պատրիարքի և նրա վանականների մոտ ընդհատ նում, և նրանք բարձրորեն հարգում էին նրա հիշատակը։ Նրա կյանքը կրկնվեց Թուրքիայում, և վորովհետև նա ճանապարհորդում եր մի Թախտարի հետ, վոր չափազանց ծանր եր նրա ակար կազմվածքի համար, նա ստիպվեց մնալ Թոքատում, ուր մնաց։ (Ք. Հատ. էջ 223)։

Պատերազմական գերբենը, առնված ռուսներից, պահում են արևում [Թավրիզի բերդում]։ Քանից կերևաւն հայ գյուղացիներ, Ղարաբաղի բնիկներ, գանգատվ վոր պարսիկ հնձելագործ կողմից իրենց դաշտերում կատարված արշավանքների պատճառով իրենք յենթարկված եյին սոսկամահ մի վիճակի, վորոշեցին գաղթել Աբբաս Միրզայի կերկիրը։ Ճանապարհին նրանք հանդիպեցին հնձելագործից Թալանչիների մի խմբի, վորոնք սպանից մոկ անելու նրանց, ձերբակալեցին վորպես գերի

և ուղարկեցին Թավրիզ, ուր նրանց, կապված ու շղթայված, դրին մի պնդանոցում։ Յորեկ ժամանակ դուրս եկին հանում նրանց և կենդանիների հոտի նման քշում եկին քաղաքից դուրս՝ աշխատելու համար շենքերի վրա, սկսեն նրանք դիմադրություն անելին և կամ չուզեին աշխատել, ձեռքում եկին անխիղճ կերպով։ Դիշերները նրանց վերահին բանտարկում եկին պնդանոցում։ Յեվ սկսեն արտնաղում ապրող մեր անպլխայի վարպետների մարդասիրությունը չկիներ, այդ խեղճ մարդիկ պետք մեռնելին անհոգությունից ու վատառողջ բնակությունից։ (Բ. Հատ. եջ 227—228)։

Համադանի հայերը. — Ուրիշ ոտարականների մեջ մենք այստեղ գտանք մի հույն, Զանթա կղզու բնակիչ, որը բոլոր յերեսուչիներից գտանելով մի սուր ջերմից պետք մեռներ, սկսեն չազատվեր մեր դեսպանատան վիրաբույժ կողմից։ Նա հիվանդացել եր Ատրպատականից-Բաղդատ կատարած ճանապարհորդության ընթացքում, որտեղ նա ճամբորդում եր ծախելու համար դաֆրան ու խավյար, բոլորը յերեք հազար ռուբլի արժողությամբ, և նա ձեռնարկել եր այս յերկար ուղեվորության բացի իր լեզվից, առանց որևե ուրիշ լեզվի մի բառ անգամ գիտնալուց։ Հայերը նրան իրենց խնամքի տակն եկին առել, և տեղ եկին տվել իրենց յեկեղեցում, որ մեծ բարեգործություն և նրանց կողմից, որոնք հույների վրա նայում են որպես հերետիկոսների, (Բ. Հատ. եջ 269—280)։



Պարսիկ ազնվականի խոնարհությունը, (նկար Ջեյմս Մորիերի)։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՓՐԵՅԳԱՆԻ

(1812 թ.)

Փրեյգան (Freygan) վորդին եր գերմանացի մի բժշկի և գտնվում եր ռուսական յարի ծառայության մեջ՝ վորպես դիվանագետ և խորհրդական։ 1811 և 1812 թվերին նա հատուկ միսիայով ուղարկվում և Թավրիզ՝ հաշտության բանակցություններ վարելու Պարսկաստանի պատժաոանդ Աբբաս Միրզայի հետ։ Ռուսաստանը այդ շրջանում տագնապալի օրեր եր ապրում Նապոլեոնի արշավանքի պատճառով և որամադիր եր առժամապես դիջումներ կատարել Կովկասյան ճակատի վրա։ Այդ այն մեջոցին եր, յերբ անգլիական դեսպան Սըր Գոր Աուզլեյ գտնվում եր Պարսկաստանում և աշխատում եր մեջնորդել Ռուսաստանի և Պարսկաստանի մեջև հաշտություն կնքելու համար։ Կովկաս եր գնում միևնույն ժամանակ Մ. Փրեյգանի կինը, որ գրել և իր ուղեգրությունը՝ «Կովկասյան նամակներ» խորագրով 1811 և 1812 թվերին, որին կցված և Փրեյգանի ուղեգրությունը Թիֆլիսից Թավրիզ ու վերադարձը, ուր խոսում և նաև նրա կատարած բանակցությունների մասին։ Այս տեղ մենք տալիս ենք Փրեյգանի ուղեգրության այն մասերը միայն, որոնք համապատասխանում են մեր առաջադրած նպատակին։ Այս աշխատությունը հրատարակված և անունն և միաժամանակ գերմաներեն, ֆրանսերեն ու անգլիերեն լեզուներով։ Մենք մեր որամադրության տակ ենք ունեցել ֆրանսերեն և անգլիերեն թարգմանությունները։ Փրանսերեն թարգմանությունը կատարել և Համբուրգի ռուսական

հյուպատոս Սարուվը (M. de Struve): Անգլիերեն հրատարակությունը կրում է հետևյալ խորագիրը. —

«Letters from the Caucasus and Georgia, to which are added, the account of a Journey into Persia in 1812, and an abridged History of Persia, since the time of Nadir Shah. Translated from the french and illustrated with maps and engravings.» MDCCCXXIII (1823):



Խոխոռ ի Թավաղ, (Նկար Ջեյմս Էդվարդի)

Ա. ԹԻՖԼԻՍԻՑ ՅԵՐԵՎԱՆ*

Թիֆլիսից մեկնեցի 1812 թ. ապրիլի 28-ին, ընկերակցությամբ մի թարգմանի և բազմաթիվ կոզակների: Մենք հանապարհորդում էինք ձիով, վասնզևտև այլապես անկարելի էր: Հաճելի մի առավոտ կանուխ թողինք քաղաքը... Առաջին կայարանն էր Սագանլուղ[1] (Sakanlook), կուրի ձախ ափերք մի փոքրիկ գյուղ. Թիֆլիսից ութ վերստ հեռու: Այստեղ պահվում են բանական մի մեծ շինքի ավերակները, որ հավանորեն նախապես մի քարվանսարա է եղել, ուր այժմ բնակում են բյուրավոր կարիճներ ու թունավոր սարդեր: Այնտեղից գնացինք մի դեղեցիկ հովտում գետեղված Կոդի[2] (Kodi) գյուղը, որ Սագանլուղից տասնհինգ մղոն հեռու կը: Այնտեղից տասնհինգ մղոն դեպի առաջ մեկնեցանք մի ուրիշ գյուղ Քոլագար[3] (Kolagar) անունով: Ճանապարհի այս մասում Ալգատ[4] (Algat) գետը կրում և մի շարք գեղեցիկ ու ընդարձակ դաշտեր, որոնց հողը շատ բարեբեր և և լավ մշակված: Այս գեղեցիկ շրջանից մեզ առաջնորդեցին Շուլավեր[5], մի փոքրիկ ամրոց, ուր բնակում են կոզակները, սա նույնպես տասնհինգ վերստ [հեռու] և Քուլապարից, այստեղ մենք մուտք գործեցինք Սոմխեթիա[6] (Somhetia):

Գրամ[7] (Gram) գետը հոսում և այս շրջանից, և սովորաբար ձյունհալից հետո հեղեղում և իր ափերից դուրս, կերբեմն բավական մեծ վնաս պատճառելով:

Առաջին որը վաթսուն չորս մղոն հանապարհորդելուց հետո, պիշիրելու համար կանգ առի Սադախլու[8] (Sadakhlou), Շուլավերից տասնմեկ մղոն հեռու մի գյուղ: Հաջորդ կերկու

* Բաժանումները կատարված են մեր կողմից: Freygan եջ 265—290:



Թիֆլիս, տեսարան Մետեխի կողմից (նկար Ֆրեյգանգի)։

որվան ճանապարհը համարվում եր ավելի դժվար և իրապես վտանգավոր անտառների ու լեռների պատճառով, ուր ուղևորները, հակառակ իրենց հետ պահակախումբ ունենալուն, յերբեմն յենթարկվում են թուրքերի հարձակման, վորոնք Ախլցխայի[9] (Akilstk) իրենց բերդից դուրս են գալիս՝ կողոպտելու նպատակով, ինչպես նաև լեզգիների [հարձակման] վորոնք արշավով գող են, և պարսիկների, վորոնց Յերևանի սարդարը ուղարկում է՝ կողոպտելու և սպանելու հաղվադեպերին դործածելի ու հետ ընկած ճանապարհների ու արահետների վրա պտնվող հյուղակներն ու ճանապարհորդներին։

Ամեն քանի արշալույսին մեկնեցի Սաղախլուից, ինձ հետ վերցնելով քան կոզակ ևս, թեև ասկյերները սովորաբար հարգում են դեսպաններին, սակայն պետք է պղույշ գտնվել պավաճանության դեմ։ Այս որվան ճանապարհը այնքան հոգնեցուցիչ եր, վոր թեև յերեսուն հինգ վերստ յերկարություն ուներ, սակայն մենք ուշ ժամանակ հաղիվ կարողացանք հասնել Ուդունլար[10] գյուղը, ճանապարհը մասամբ անցնում է բարձր ու դահավանդ լեռներից, ապա խիտ անտառներից և ապա դաշտավայրերից, կտրատված վտակներով, վորոնցից պետք է անցնել. հաճախ ճանապարհը այնքան նեղ է, վոր ձիավորը ստիպված է իջնել և վոտքով քայլել։...

Այսոր նախ անցա Զոփի (Zopi) գետը [Զորագետ], վորից հետո Փամբակ, ծայրահեղորեն արագ մի գետ, վորի վրա գտնվում է մի հին կամուրջ, կառուցված գեղեցիկ վոճով ու սրբատաշ քարից։ Դա ունի մի կամար, վոր արդեն գլուխ գործոց է. յերկու ծայրում կան փորագրված յերկու աֆինքաններ, ինչպես նաև բազմաթիվ խաչեր։ Վերջինքս թվագրում են թե դա հույն քրիստոնյաների գործ է։ Ամենաբարձր դիրքերի վրա գտնվում են տաճարների ու մատուռների ավերակները, վորոնք կարելի չե հավանորեն վերադրել վիհնուչն ժողովրդին[11]։

Ուդունլարից քան վերստ հեռու կան պղնձի հանքեր[12], վեճերված գրեթե անմատչելի մի լեռան վրա, բայց վորտեղ

տեսարանն լեզգականորեն նկարագրել եւ։ Այնքան հետաքրքրվեցի, որ մոռացա իմ հոգնութիւնը և յերկու ժամ նվիրեցի այցելելու հանքերը և քննելու աշխատանքը։ [Ամսի] յերեսունին Ուզունլարից գնացի դեպի Ղարաքլիսա[13], թողնելով Բորչալուի շրջանը մոտիկ Փամբակ, որտեղ անցա հոմանուն գետից և մի ուրիշից, որ առեսերը անվանում են Քամենաջա (Kammenaja)։ Յերեի մոտենում եր Ղարաքլիսային, որ քառասուն հինգ վերստ և Ուզունլարից, յերկիրը աստիճանաբար զառնում և ավելի լեռնոտ, և արդարև մոտամբ գծում և Յերևանի նահանգի սահմանը կազմող լեռնաշղթան։ Այս լեռները կոչվում են Արագած (Aliguz) և տարվան մեծագույն մասում ծածկված են ձյունով։ Ջորերում վիրավոր են վայրի կենդանիներ, որոնց մեջ կան վագր և բրիոնի, բայց փոքր սեռակ։

Ղարաքլիսան մի մեծ գյուղ և, պատկված Արագածի ստորոտի հովտում, փոչ հեռու Յերևանի սահմանից, և բնակվածքն և պետական հրամանատարության։ Այստեղ յես իջևանեցի ռուսական պետական բանակատեղը։ Փամբակի շրջանի կլիման ցուրտ և, շրջապատված լինելով բարձր լեռներով և նուշենիկ ամռան տաք չե։ Իմ Ղարաքլիսան գտնված միջոցին ձյունը չերերեր չպատրեց, և մեզ մեր տուր քամի պատճառ եր տալիս ձնառն խառնություն։ Ղարաքլիսան ժամանումիս ինձ տեղեկացրին թե պարսիկները մոտերս հարձակվել են մերձակա Չամամլու և Բեկհանա [Մեծ Գարնի] գյուղերի վրա, առաջինը բոլորովին ավերակ են գործել և տարել են բոլոր անասուններին։ Յերևանի սարդար Հուսեյին Ղուլի Խանը գտնվում էր պետական խմբիր նշանակած և՝ հարձակում գործելու ռուսական հոգածության տարբեր կետերի վրա։

Ղարաքլիսայից Յերևան ճանապարհը, ուղիղ գծով լեռների վրայից թեև ամենակարճն և, [սակայն] շատ դժվար՝ ձյան պատճառով, որ այս միջոցին ծածկում և Պարսկաստանի լեռնային սահմանը. հետևաբար ռուս պետերալը խորհուրդ տվավ ինձ գնալ Գյումրիի ճանապարհով, սակայն,

վորովհետև վտանգավոր և մի փոքրիկ խմբով չգնեմ պատվիրել պարսիկների հարատև հարձակումներին, ես հարկադրված եմ ապասել մի գորավոր պահակախմբի ժամանմանը։

Ղարաքլիսայից մեկնումից մի որ առաջ ես ականատես եղա մի մեծ հուզման։ Սա առաջ եր չեմ ասել այն բանից, վոր յերեկոյան կողմը պարսկական բավականաչափ մի մեծ խումբ յերևցել եր այդ տեղի մերձակայքում, բայց նրանք հեռացել եին լեռների կիրճերում։ Ռուսական պետերալները անմիջապես գնացին հետապնդելու թշնամուն, վոր բավական մարդիկ կորցնելուց հետո, վատաբեց մի շտապ նահանջ։

Ղարաքլիսայից մեկնելի մայիսի 2-ին, 1812 թ., յերկու խումբ պետերալների, յերկու թնդանոթի և հետևակ կազակների հետ։ Համամլու ավերումի վորբալի մի տեսարան եր ներկայացնում, վատաբված մի քանի որ առաջ պարսիկների կողմից։ Գեղացիք ուժով նրանք հարձակվել եին գյուղի վրա, սպանել եին բնակիչներին կամ գերի վարել և տարել եին նրանցից հազար դրամ անասուն։ Բեկհանա, վոր Ղարաքլիսայից յերեսուն հինգ վերստ հեռու չե, հասա յերեկոյան, շնորհիվ [ռուսական] հետևակայորի ու թնդանոթի։ Այս գյուղը այնքան վնասված չեր, և գտա մի քանի բնակիչների, վորոնք վերադարձել եին իրենց տունը, պարսիկների անակնկալ հարձակումը դադարելուց հետո։ Այս խոշոր մարդիկ իմանալով վոր ես գնում եմ Պարկատան, ինձ յերին այնքան պարին, վորքան կարողացել եին հավաքել, և մաղթանքներ արին իմ ձեռնարկի հաջողության համար։

Հաջորդ որը շարունակեցի մեկնումն պահակախմբերով, անցնելով Շորակալի (Shuragil) նահանգից դեպի Գյումրի։ Այս յերեսունհինգ վերստը մենք անցանք առանց վորևե վտանգի, բայց այն զինվորները՝ վոր ընկերացել եին ինձ դեպի Բեկհանա, դեպի Ղարաքլիսա իրենց վերադարձի ճանապարհորդության հարձակում եին կրել պարսկական բազմաթիվ մեծաթիվ մի խմբի կողմից։ Այս գործի հետևանքն եր յեղել թշնամու շատ փախուստը, բայց ռուսները դժբախտություն եին ունեցել կորցնելու իրենց հրամանատարը։

Հավանորեն յես եւ նույն բախտը պիտի ունենայի, եթե պարսիկները մի քանի ժամ առաջ հարձակում գործած լինեյին, վորովհետև նրանք միշտ սպանելին են նշան առնում, և շատ լավ նշանառու են, բայց զինվորական կարզապահության բացարձակ բացակայությունը նրանց մեջ, այս ճարտարությունը դարձնում է ապարդյուն։

Ճանապարհը դեպի Գյումրի շատ հաճելի յե, անցնում է Փամբակի [Ջրով] վոռոգված մի ընդարձակ դաշտից, յերբ կիրը սահիճանաբար բարձրանում է գյուղի մոտ, վոր կանգնած է մի բարձունքի վրա, վորտեղից վայելում ենք մի հիանալի տեսարան։ Մի կողմում, դեպի հեռու Թրքական հողամասի վրա յերկարում է լեռների յերկար մի շղթա, վորոնց առորոտներում նշմարվում են Ախալքալայի բերդը, Կարսի փաշայությունը, և Ղարաբաղի հողամասը, Մագազբերդը (Magasbert), [Մժնկերտ], վորտեղից գլխավոր ճանապարհը անցնում է այս բարձր լեռնաշղթայի վրայով դեպի Կ. Պոլիս։ Մյուս կողմում Արագած լեռն է, ճանապարհը դեպի Պարսկաստանը և յերկու վերստ դեպի Գյումրի՝ Արփաչայ գետը, վոր գծում է Թուրքիայի սահմանը։ Այս ալեպատ առարկաները կազմում են շատ հետաքրքիր մի տեսարան, վոր ավելի սրվում է՝ Արփաչայի հովտում Թրքական մի սարասքյարի (Serasquir) դեմ ռուսների տարած կատարյալ մի հաղթանակի հիշողությամբ։ Գյումրիում պատկառելի կառուցվածքով մի բերդ կա, վորի դիրքը գլխացել է Թուրքերի ու պարսիկների հարձակումներին։ Գյումրիից քիչ հեռու տեսնվում են մի գյուղի ավերակները, վորտեղ յերբեմն յերկու հարյուր Թուրք խնդրել էին տեղի հայ բնակիչների հյուրասիրությունը, և մինչեւ այն գիշերը այս բարոնները կոտորել էին նրանց։...

Գտնվելով պարսկական հողի վրա, այլևս յես պահանջ չեյի զգում պահակախմբի. իմ դիվանապետական դիրքը զերծ էր պահում ինձ հարձակման վտանգից։ Սակայն, տասնհինգ Թաթարներ պատրաստված եյին ինձ առաջնորդելու Յերևան, վորտեղ սարդար Հուսեյին Ղուլի խանը պարսկական տեղակալություն ուներ, ըստ սովորության, ճանապարհ դնել ինձ դեպի Թավրիզ։ [Ամսի] չորսին առավոտ շատ կանուխ ճամբա ընկա և մոտավորապես կեսորին հասա այն լեռնաշղթային, վոր բաժանում է Յերևանի նահանգը ռուսական կալվածներից։ Այս լեռների կատարում տեսա բազմաթիվ դրանիտյա շիրիմներ, վորոնք Թվում էր Թե շատ հին եյին. նրանց վրա փորագրված պատկերներն ու արձանագրությունները գրեթե ջնջված եյին։

Հազիվ Թե իջել եյի այս կատարներից, տեսա իմ առաջ [պարզված] Յերևանի բարերեր ու ընդարձակ դաշտը, ինչպես նաև Արարատի յերկու կատարները, վորոնք վեհափառորեն բարձրանում են ամպերից վեր։

Կարծում եյի Թե արդարև այսոր իսկ պիտի ժամանեյի Եջմիածնի (Eitchmaiadzin) նշանավոր վանքը, վոր գտնվում է Գյումրիից մոտավորապես հարյուր վերստ հեռու, բայց ձիերը լեռների ճանապարհից հոգնած լինելով, չկարողացան կարել այդ հեռավորությունը։ Արդեն կես գիշեր եր, յերբ մենք հասանք մի գյուղ, վոր տակավին տասը մղոն հեռու եր Եջմիածնից, ուր ստիպվեցինք գիշերել։

Իմ առաջին տեսակցությունը պարսիկների հետ հեռու եր հաճելի լինելուց։ Ի դուր եր, վոր իմ Թարգմանի միջոցով յես հայտնեցի Թե Թավրիզ եյի գնում՝ հաշտության բանակցության համար. գյուղացիները՝ արթնացած իրենց քնից, դուրս վազեցին իրենց զենքերով և պատրաստ եյին կրակել մեզ վրա, պռոալով Թե, յեթե յես ռուսական դեսպան եյի, սահմանապահները պետք է վոր ազդարարած լինեյին իրենց։ Նրանք իրավունք ունեյին, վորովհետև սահմանապահները իրենց զանցառությամբ բացակայել եյին, այնպես վոր իմ անցքը աննկատ եր մնացել նրանց կայանների։ Ամենասովորական զուգմունքների զորությամբ բանտերից։ Ամենասովորական զուգմունքների զորությամբ միայն վերջապես հաջողեցինք ընդունվել գյուղում, ուր սակայն, ամբողջ գիշերը գտնվում եյինք զինված մարդկանց հսկողության ներքո. այս պարագայում, յես եւ իմ կարգին սոխպված եյի իմ առաջնորդներին ու հոգակներին նույնպես

պատրաստ պահել, վորպեսզի պարսիկները հարգանքով վերաբերվեն մեր հանդեպ։

Արշալույսը բացվելուն պես, իմ անքաղաքավար հյուրընկալներին բավական նվերներ տալուց հետո, — վորոնք սկսան հասկանալ իրենց կասկածների սխալ լինելը, — շտապեցի դեպի Եչմիածին, վորտեղ Լչևանեցի պատրիարք Յեփրեմի (Efreme) բնակարանը. նա մի հարգելի ծերունի է, վոր լինձ ընդունեց շատ պարտավորիչ կերպով։ Մի քանի րոպեի հանդստից հետո, փառավորապես նախաճաշեցի, և ապա գնացի տեսնելու վանքը և նրա հետաքրքիր իրերը։ Այս տաճարը, վոր հայերեն լեզվով կոչվում է Եչմիածին (Eitchmai-adzin), մոտավորապես տասն հինգ վերստ հեռու է Յերևանից։ Դա անցյալում եղել է և այսօր էլ է հայերի սրբավայրը. մեծ է նրա հարստությունը, թեև նա տուժել է հինամյակների ընթացքում... վանքի տեսարանը գեղեցիկ է ամեն կողմից, բայց ավելի ուշագրավ է Արարատի կողմը, ուր լերան կոնաձև կերպու կատարներն են երևում, վորոնք տարբեր բարձրություն ունեն։

Ընդհանրապես ծանոթ է վոր Արարատը երկրագնդի ամենաբարձր լեռներից մեկն է։ Կեսից ավելի դեպի կատարը ծածկված է մշտական ձյունով, և նրանք վոր ցանկացել են բարձրանալ գագաթը, կեսին չհասած կանգ են առել ծայրահեղ ցրտի պատճառով։ Այսպես բնիկներից շատերը գագաթը բարձրանալու և Նոյի տապանի մնացորդները փնտռելու իրենց փորձն մեջ ձախողել են։

Թեև [Արարատը] առնվազն յերեսուն մղոն հեռու չէ, սակայն եչմիածնի մոտից լեռը աչքի խարկանքով թվում է թե շատ մոտ է։ Ընդարձակ մի դաշտ տարածվում է լեռան ստորոտում, վոր դեպի վորոշ բարձրություն ծածկված է անտառներով, և ապշեցուցիչ թվով վայրի կենդանիներով...

Հաջորդ որը յես մեկնեցի՝ գնալու համար սարդարին, վոր մի ժամանակ առաջ հեռացել էր Յերևանից, գտնվելու համար իր բանակի հետ, բերդից քիչ հեռու։ Իմ ժամանման՝ սարդարի պաշտոնյաները, — վորոնք ուղարկված էին դիմավորելու համար մեզ, — մի փառավոր վրան հատկացրին իմ հանգստյան համար, և այնտեղ յես առարկա դարձա պարսկական քաղաքավարության։ Վրանում յես հանդչեցի վարդերի վրա. ճոխ կապերտներ էլին փռել, և շուտով տվին հոլակապ մի խնճույք։ Սարդարի քեռորդին՝ մի խան, վոր նշանակված էր ինձ առաջնորդելու համար մինչև Թավրիզ, յեկավ մատուցելու իր մոլյեղբոր հարգանքները և խնդրելու վոր ճամբորդական հոգնածությունից հետո՝ որը անցկացնեմ հանգստանալու համար։ Մինչդեռ ժամանակ եղմիածնից մի տեսակ թիկնաթոռ էլին բերել, ծառայելու համար վորպես նստարան՝ հաջորդ որվան սարդարի հետ իմ ունեցած տեսակցության ընթացքում, և սա համարվում էր վորպես մասնավոր պատվի մի նշան։ Իմ վրանի շուրջը պատվո պահակ էլին կանգնեցրել և պարսկական մի վաշտ հրաման էր ստացել յեվրոպական ձևի մարզանք կատարելու՝ իմ զվարճության համար, (կամ ավելի ճիշտ՝ իրենց ուժի մասին իմ վրա տպավորություն գործելու համար)։

Սարդարը տեղեկացրեց ինձ, թե այն սպան, վոր հատուցած էր իմ անցած սահմանի վրա, և վոր ինձ տեսած չվինելով՝ ձախողած էր հաղորդել իմ ժամանումը, առանց հապաղման նրա ականջը պիտի կարվեր։ Յերկար ժամանակ ի զուր յես փորձեցի ներողություն ստանալ այս հանցավորի համար. սարդարը անդրդվելի մնաց, նա չի կարող, ասաց, աչքաթող անել իր յերկրի որենքը։ Միմիայն իմ կրկնվող սրտիպողական միջամտության վրա յերբ, վոր հաջորդ որը հաջողեցա ազատել խեղճ մարդու ականջները։

Յես շատ եյի լսել արևելյան ճոխության մասին, բայց այն գաղափարը վոր յես կազմել եյի իրականությունից պակաս եր։ Պարսիկները նույն իսկ ճակատի վրա հեշտալի կյանք են անցկացնում, և նրանց զինվորական մարզանքներն ըստանքի յերևույթ ունեն միայն։ Պետք է ընդունել վոր կլիմայի տաքությունը և բնության գեղեցկությունը թվում է թե գրգռում է ամեն ցանկություն և տալիս ավելի հեղգ սովորություններ։ Պարսկական բանակատեղի ընդհա-

նաւը յերեւույթը առանձնապես հաճելի չի, այդտեղ սարդարի ամեն մեկ վրանը գեղեցիկ եր, բայց այն վրանը, որ մեծաւորն եր գրաւում և այն որ ինձ եր [հատկացվել], մանաւորապես փառահեղ եյին։ Մարդ փորձւում է յերեսակայել թե փոխադրված և պարիկների աչքարէը, տեսնելով վրանների մի քաղաք, շքեղ ձեով ու զարդարված յերեսակայելի ամեն գույներով. առանձնակի մի կանոնաւորութիւն, մեծացած արեւելյան շքեղութեան՝ լրացնում է մոգական տեսարանը։ Այս կարգը նեղմուծված չեր պարսիկների մէջ ֆրանսացի գեներալ Գարդանի ժամանակից առաջ, որ պատմում է, թե յերբ ինք այցելեց Պարսկաստանը, վրանները համբարում զարնված եյին բացարձակ խառնակութեամբ։

Պարսիկի նման մի որ անցկացնելուց հետո, — ուտելով հիանալի փիլաւ առանց դգալի, դանակի կամ պատառաքաղի, նստելով ծալապատիկ, ծխելով կալյոն և խմելով ախորժալի շերբեթ, — հաջորդ որը յես մի տեսակցութիւն ունեցա սարդարի հետ, որի ընկերակցութեամբ յես անցկացրի ամբողջ որը։ Ինձ ներկայացրին շուքով. պաշտոնական ձեւականութիւնները կատարելուց հետո, սարդարը բարեկամաբար առաջարկեց ինձ մոտենալ իրեն և սկսեց ունայն մի զրոյց ճախոսութեյուն, որ նրա իրական նկարագիրն եր։ Հուսկին Ղուլի խանը Պարսկաստանի ախոյանն է.. նա այն [մարդն] է, որի հանդգնութիւնը իշխող Շահին գահ բարձրացրեց. նա պարսկական ուժերի գլուխն է և վայելում է իր տիրոջ կատարյալ վստահութեյունը։ Պատերազմը իր տարրն է, նա սոսկում է Ռուսաստանի հետ հաշտութեյուն կնքելուց, և ամեն միջոցի դիմում է համոզելու համար Շահին և Աբբաս Միրզային՝ շարունակելու համար թշնամութեյունները։ Նա պատերազմական արվեստից որևէ տեղեկութեյուն չունի, բայց նրա ամբողջ արժանիքը կայանում է նրանում, որ նա հանդուգն է և նույնիսկ հախուռն, թեև հիմուն տարեկան է։ [սակայն] ամենալավ ձիավորն է Պարսկաստանում։ Սա այն Ղուլի խանն է, որ 1800 թվին Ախլքալաքում կատարյալ պարտութեյուն կրեց գեներալ Պավլուչիի (Paulucci) կողմից,

լինելով շատ անժուժկալ, հապճապտուտ և նրան տեսնել բոլորովին չհարթած, և մի յերեկո ընթրիքի կեսին նկատեցի որ նա գինու ապղեցութեյան տակ մրափեց։

Նրա զորաբանակը բազմաթիվ չէ. հեծելազորը ութը հազարից ավելի չէ և սարբազների (Sarbazes) թիվը վեց հազար է։ Սա պարսկական հետեւակազորն է, որ վերջերս կազմակերպել են բրիտանական սպաները։ Մի անգլիացի հարյուրապետի հրամանատարութեյամբ տասնյերկու կոոր թեթև հրետանի այս զորաբանակի մասն է կազմում։ Սարդարը զորահանդես կատարեց իմ ներկայութեյան, ներքնապես շրջելով ինքն իրեն, թե տպավորութեյուն պիտի գործի իմ վրա՝ իր զինվորների մասին բարձր դատափետ կազմելու համար, բայց յես առաջին անգամից նկատեցի որ նույն իսկ սարբազները, թեև յեվրոպացի սպաների հրամանատարութեյան ներքո, հաջողապես չեյին կարող մրցել ռուսների հետ։ Այսու ամենայնիվ սարդարը վոգեւորված է այս զինվորներով, որոնց նա գերազանց է համարում իր բրիտանական հրետանուց, որ սակայն հիանալի չի։ Նա շատ լրջորեն վստահացրեց ինձ, թե ինքը անկեղծորեն ցանկանում է հաշտ ապրել ռուսների հետ, այս է, — ասաց նա, — նաև իր տիրոջ [Շահի] ցանկութեյունը, ինչպես նաև գահաժառանգի։ Միաժամանակ յես գիտեյի, թե դրա հակառակն եր ճշմարտութեյունը. սակայն պատասխանեցի միևնույն յեղանակով։ Ապա հրաժեշտ առի, վերպետի շարունակեմ իմ ճանապարհը, ատուգած լինելով՝ թե այս ժողովրդի մեջ մի սպա, իր մեծ թնդանոթներով, ավելի ազդեցութեյուն պիտի գործի, քան դիվանագետների բոլոր խոսակցութեյունները։

Սարդարը ինձ հանձնարարեց իր քեռորդուն, որ մինչև Թավրիզ իմ մեհմանդարը պիտի լիներ։ Մեհմանդարը պարզիկ մի պաշտոնյա չի, որ պարտականութեյուն ունի խնամք տանել՝ հանրային պարտականութեյուններ ունեցող ուտարականին, ինչպես դեսպան կամ պատգամավոր, կամ ուրիշ վորևե նշանավոր անձնավորութեյուն։ Նրա գործն է հայթհայթել բնակարան, կենսամթերք և ձի, կարճ խոսքով գո-

հացում տալ իր առաջնորդած [անձնավորութիւն] բոլոր պահանջներին։ Այս առաջնորդները լավ են վճարվում իրենց կրած նեղութիւնների համար. նման պարտականութիւն չնորհվում է վարևի մեկին, որպես վարձատրութիւն։ Նրանց անցած դյուղերից բռնահարկեր են պրվում [դյուղացիների] վրա, որի հետևանքով կատարվում են սոսկալի կոտորածներ։ Նրանք, [մեհմանդարները], իրենց պաշտպանութեան տակն են առնում նաև վաճառականներին, որ միայն ապահովելով նրանց ավազակութեան դեմ, այլ նույնիսկ [ազատում են] նրանց մաքսային վճարումից։ Այսու հանդերձ այս պաշտոնյանների գլխավոր շահը այն նվերն է, որ առաջնորդված անձնավորութիւնն է տալիս։



Պայտաւ ձիաւոր ձիավորներ, (նկար Ֆրեյզաքի)։

Իմ մեհմանդարին ընկերանում էին բազմաթիվ ձիավորներ, նրանց մեջ կար մի ծառա, որի պարտականութիւնն էր կրել՝ շարունակ վառ վիճակում ածուխ և միշտ պատրաստ պահել կայլոն՝ նեղկայացնելու համար իր տիրոջ։ Նա հաճախ [կայլոն] էր հրամցնում ինձ, նույնիսկ երբ քառասմակ առաջ էինք գնում։ Կայլոնի ծխափողը շատ երկար է, այնպես որ պվարճալի է տեսնել ծառային որ բավական հավից այս գործիքը իր ձեռքին հետևում է ծխողին։

Յերևան ժամանմանս ես վճռեցի այդ որը ճամբայ գնալ այնտեղ, խնայ տաքին պատճառով, որովհետև մենք ճամբա չէինք եկել առավոտը ժամը տասին։... Յերևանը Թավրիզից յերեք հարյուր վերստ հեռու մի մեծ քաղաք է, որի գլխավոր տարածութիւնը գրավում են պարտեզները։ Նրա մոտից անցնում են լերկու գետ, այսինքն Զանգուն (Zengui) և Քըրք-Բուլաղը (Querk-Boolak) կամ Բառառուն աղբյուրը, և ասում են թե արդարև այս վտակը այդքան աղբյուր ունի։ Բերդը գերազանցորեն լավ գործ է, և ինձ թվում է թե դժվար է հարձակումով գրավել, թեև հեշտ է պաշարել։ Հյուսիս արևելքից(?) յեզերված է ավելի քան հազար յերկու հարյուր վոտք խոր ընդարձակ մի պահավանդով, որի խորքից Զանգուն է հոսում։ Վերջին մի քանի տարվա ընթացքում ֆրանսացի ճարտարապետները և ապա անգլիացի սպաները հարթարել են ամրութիւնները։ [Բերդի] պաշտպանութեան ավելի վստահ լինելու համար, պարսկական կառավարութիւնը տեղացի ընտանիքներին աքսորել է նեռսերը, ուր նրանք պահվում են իբրև պատանդ։

Թուրքերը Յերևանին տիրեցին 1582 թվին, որ ժամանակ էլ նրանք կառուցին նեռկա բերդը։ Պարսիկները վերադրավեցին 1594 թվին և ամրացրին՝ դիմադրելու համար Թնդանոթի և 1515 թվին դիմացան չորս ամսվա պաշարման։ Պարսպները թեև միայն հողից, դիմադրեցին Թրքական թնդանոթներին և Թշնամին պարտավորված եր նահանջել, որ, սակայն, Աբբաս Մեծի մահից հետո, վերադարձավ և գրավեց քաղաքը. Շահ Սեֆին 1635 թվին վերագրավեց, որից հետո յերբեք հարձակման յենթարկված չե, բացի ռուսներից։

Յերևանի լիճը[Սևան] յերեք կարճ կայարան միայն հեռու է Յերևանից։ Պարսիկները անվանում են Դերիա Շիրին (Deria Chirin), որ նշանակում է անուշ [ջրի] լիճ։ Հարյուր վերս-

տից ավելի շրջապիծ ունի և առատ է ձկներով։ Ջանգուն իր ակիզբն առնում և այս լճից է թափվում Արաքսի մեջ։ Հայերը կարծում են թե Յերևանը աշխարհի առաջին գաղութն է... Նրանց, [հայերի], ավանդությունը ավելացնում է թե Նոյը վորթատունկ տնկից Յերևանի մոտ, և նրանք այնքան առաջ են գնում, վոր ցույց են տալիս տեղը՝ քաղաքից մի քանի վերստ հեռու։

Հայաստանը Ասիայի ամենաբարձր բարձրավանդակներից մեկն է. բաժանված է Մեծ և Փոքր [Հայաստանի]. Մեծ Հայաստանը գտնվում է Յեփրատի արևելյան կողմը, Փոքր Հայաստանը տարածվում է այդ գետի արևմուտքը։ Մեծ Հայաստանը, վոր սխալ կերպով կոչվում է Թուրքմենիա (Turcomania) տարածվում է Սև ու Կասպից ծովերի, վրաստանի և Միջագետքի, (այժմ կոչվում է Դիարբեքիր), միջև։ Բաժանվում է Արաղով (Arras) հնում Արաքս (Araxes). արևմտյան մասը պատկանում է Թուրքերին, արևելքը պարսիկներին։ Սակայն և այնպես Մեծ Հայաստանում կան շատ շրջաններ և նույն իսկ ամբողջական նահանգներ, վորոնք պահել են իրենց անկախությունը և ունեն տեղական կառավարություններ գլուխ կամ հայ իշխանավորների ներքո։ Տիգրիսի ու Յեփրատի աղբյուրները այս լերկրումն են, ուր բացի Մասիս սարից կան Տավրոսի (Tauris) և Կորդվաց (Gordyan) լեռնաշղթաներ։

Երզրումը (Arzeroum) Հայաստանի արևմտյան մայրաքաղաքն է, նշանավոր պահեստը Թուրքական առևտրի, վոր այստեղից անցնում է դեպի Հնդկաստան, իսկ Յերևանը արևելյան բաժանմունքի մայրաքաղաքը։ Փոքր Հայաստանը գտնվում է Թուրքական իշխանության ներքո. բաժանված է չորս նահանգների, վորոնց մայրաքաղաքներն են՝ Սվազ, Թոքաթ, Կեսարիա և Սիս, Կիլիկիայի գլխավոր քաղաքը։ Հայաստանը, — թեև շրջապատված ժողովուրդներով, վորոնք ընդունել են մահմեդական հավատքը և կամ վերադարձել կռապաշտության, — հավատարմորեն կապված է քրիստոնեության, թեև միաժամանակ հպատակ մահմեդական իշխաններին։ Ապա հեղինակը խոսում է հայերի պատմության մասին, իր տեղեկությունները քաղելով Մովսես Խորենացուց։ Պատմում է Շամիրամի ու Արա Գեղեցիկի առասպելը, Աննիբալի, Միհրդատի ու Ալեքսանդրի և հռոմեական արշավանքների մասին. եջ 290—295։]

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սաղանլու այժմ Թիֆլիս-Յերևան յերկաթուղու առաջին կայարանն է և 1914 թվին ուներ 605 բնակիչ։

2. Կոդի գտնվում է յերկաթ գծից արևմուտք կոմիս լճի արևմտակողմը խճուղու վրա։ Բնակչության թիվը 1914-ին 1011 եր։

3. Գոլագիր Ալգեթ գետից ներքև գեղի արևմուտք մի փոքր գյուղ 332 շունչ ազգաբնակություամբ (1914 թ.)։

4. Ալգեթ գետը Սանդար կայարանի մոտ կտրում է յերկաթուղագիծը։

5. Կան Մեծ Շուլավեր և Փոքր Շուլավեր գյուղերը։ Ֆրեյդանի այցելած գյուղը մեծ Շուլավերն է, վոր 1914 թվին ուներ 7682 շունչ բնակիչ։

6. Սոմխեթյա վրացերեն նշանակում է հարավ և վրացիները հայաստանստանը անվանում են Սոմխեթիա։

7. Խթամ գետ, վոր անցնում է Փոքր Շուլավերից քիչ հյուսիս։

8. Վրաստանի և Հայաստանի սահմանի մոտ, յերկաթուղու վերջին կայարանը, Սադախլու մեծ գյուղ է 1914 թվի հաշվառությամբ ուներ 2009 բնակիչ։

9. Ախլցխա կամ Ախալցխա, համանուն գավառի գլխավոր բերդաքաղաքը վրացերեն Ախալի ցիխե նշանակում է բերդ, և գավառն էլ կոչվում է Սա Մցխեթ այսինքն Մեսխերի յերկիրը։ Նշանավոր է իր աշխարհագրական դիրքով և պատմական դեպքերով։ Ամանցյներ առաջին անգամ գրավեցին Ախալցխան 1579 թ., սակայն մի ժամանակ վերագտավ իր անկախությունը և 1625 թվին վերջնականապես անցավ ոսմանցիներին և այնուհետև կազմեց առանձին վալայություն, մինչև ռուսական գրավումը (1829 թ.)։

10. Սանահին կայարանի մոտ մի մեծ գյուղ Խորհրդային Հայաստանի սահմաններում, 1931 թվին ուներ 3977 շունչ բնակիչ։

11, Ա՛ս ակնարկում է Սանահնի կամրջին և Սանահնի ու Հաղբատի վանքերին. վերջիս հարկական են և մոչ թե հռետական, ինչպես Ֆրիդտյանն է ասում։ Կամուրջը դեռևում է դյուզից ցած Դեբետի կամ Ձորագետի վրա։ Իսահակ Հարութիւնյանը հետևյալն է գրում Սանահնի կամրջի մասին. —

«Սևբորդյոց ձորը այս պատմական կամուրջը շինել է ավել նահապետի Թագուհին՝ ի հիշատակ իր վաղաժամ ամուսնու, Լոռու Աբբաս Թագավորի և Ջաթարև ու Իմանի սպասալար յևղբայրների։



Սանահինի կամուրջը
(նկար Христ. Востокъ, томъ VI.)

«կամուրջի յերկարութիւնն 28 սաժեն, լայնութիւնը 3 արշին, կամարի բարձրութիւնը ջրի մակերևույթից (մեր դիտած ժամանակը ամառը) 19 արշին. շինված կամարների վրա՝ սրբատաշ բառերից։ կամուրջի մի ծայրը հաստատված է ժայռի վրա, իսկ մյուս ծայրն ամուր վորմի վրա և դեպի հարավ ինկնում է աստիճաններով։ Կամուրջի յերկու կողմը գտնվում են չորս կոփածոյ քարից քանդակված առյուծներ, վորոնք ժամանակի ընթացքում բավականին մաշվել են։

«Կամուրջի ներքևի ծայրում կա մի խաչքար՝ կամուրջը շինել ավող Նահապետ Թագուհու հրամանով կանգնեցրած։ Խաչքարի վրա արձանագրված է հետևյալը.

«Կամաւն Աստուծոյ ես Նահապետ յազգէ Բագրատունեաց դուստր իշխանաց իշխան Սարգսի հոյր Զահարէի եւ Իվանէի կին Աբասայ թագաւորի. որ կիսատ թող վախճանեալ է խավարեցոյց զմեզ շինեցի զկամուրջս, կանգնեցի զխաչս յիշատակ ինձ եւ ի մխիթարութիւն ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց մերոց յիշեցեք ի Քս. Յս»։

«Մայր ճակատը, որ այժմ կոտրված և վայր է ընկած, կրում է հետևյալ արձանագրությունը՝ առաջ տեղուցնական։

Իսկ ակադեմիկոս Ն. Մառը կամուրջի արձանագրությունը կարդում է հետևյալ կերպով. —

«...Ազգին բագրատունականաց։ Ես Վանանի դուստր իշխանաց իշխան Սարգսի որդո Զագարէի կին Աբաս Թագաւորի որ կիսաւարեալ վախճանեալ խաւարեցոյց զմեզ շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ Նմա եւ միխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց։ Յիշեցեք ի Քրիստոս Յիսուս»

ՋԳԻՆԲՍ.
ԳՌԱՐՈՒՆԵԱՑ։ԵՍՎ.
ՆԻԳՈՒՍՏԻՇԽՆԱՑԻՇ
ԽՆԱՐԳՍՈՒՈՋԱ։ՔԱՐ
ԷԻԿԻՆՔԱՍԱ։ԹԱՆԱ։ՒՐԻ
ՐԿԻԱՐԵՊԽՃՆԵՆԼԽՍ.
ՄԵՑՈՅՅՋԼԵՋՇԻՆԵ
ՑԻՋԿՄԲՋԵԻԿՆԳԵ
ՑԻՋԽԱ։ՋՍՅԻՇԱ։ՄՆԿ
ՆԱԼԵՄԽԻԹ։ՄԻՆՋԵՒԻԿ
Ն։Մ՚ՆՈՂԱ։ՑԵԻ։ԵՂԲԱ։ՐՑ
Ք՚ՈՑՅԻՇԵՑԷ։ՔԻ։ՔՍՅՍ։

Սանահինի
կամրջի արձանագրությունը

(Տես Н. Марръ, «Христіанскій Востокъ», Томъ IV. выпускъ II. Изданіе Императорской Академіи Наукъ. Петроградъ. 1915. էջ 161—197. Իսահակ Հարութիւնյան «Սանահինը», տպտտպած «Ազգագրական Հանդեսից», Թիֆլիս, 1898. էջ 41—42. Ս. Ջալալեանց «Ճանապարհորդութիւն ի մեծ Հայաստան» Ա. էջ 38)։

12. Ալեքսանդրովի պղնձի հանքերը։

13. Տես էջ 334 ծանոթ. 9

Բ. ՅԵՐԵՎԱՆԻՑ ԹԱՎՐԻԶ*

[Ամսի] 8-ին, առավոտյան ժամը յոթուքերին ես մեկնեցի Յերևանից։ Մեհմանդարը մեզանից առաջ մի սուրհանդակ էր ուղարկել՝ պատրաստելու համար մեր ճաշը Դավալուում, որ մոտավորապես հինգ վերստ հեռու է Յերևանից։

Պարսիկները հեռավորությունները չափում են աղաջով (agatches), որ հավասար է, մոտ յոթը վերստ կամ գերմանական մեկ մղոնի, բայց վոչ մի բան այնքան անստույգ չէ, որքան յերբ պարսիկները հեռավորության մասին հաշիվ են տալիս։ Հետևաբար չեմ փորձում տալ կայարանից կայարան ընդունված աղաչների ճիշտ թիվը, Յերևանից մինչև Թավրիզ, միայն պիտի նկատեմ այն, որ ամբողջ հեռավորությունը կարելի է հաշվել հինգից վաթսուն աղաչ կամ մոտավորապես չորս հարյուր վերստ։

Յես բաժանվեցի Յերևանի նահանգի դեղեցկություններից։ Մենք անցանք ընդարձակ ու պտղաբեր դաշտից։ Արարատը մեր աչ կողմումն եր, որ այնքան հեռու չեր յերևում. նրա սարածությունը այնքան ընդարձակ է, որ նույն իսկ Դավալուում տակավին [Արարատը] յերևում եր մեր դիմաց։

Հայաստանը շատ բազմաբնակ է և Պարսկաստանի գլխավոր շահմարանը, մանավորապես բրնձի վերաբերմամբ, որ այստեղ աճում է մեծ քանակությամբ։ Ընդհանրապես անտառ չկա և պտղատու ծառերը միայն քաղաքների մոտն են գտնվում, որտեղ կազմում են մի տեսակ պարտեզ և միակ ապաստանն են տալիս շոգի դեմ։ Անտառի բացակայությունը, բացի Կասպից Ծովի կամ Պարսկական ծոցի ափերի նահանգներից, տեղի է տալիս որ յերկիրը ամբողջ ամառ ենթարկվում է անթերի, առիսկել և պարսիկներին ջրանցքներով դարմանելու այս պակասությունը։ Հանների ջրաղացներից չորը տանում են վոչ միայն մարզպետներն ու այլ պետերի համար, այլ նաև նույն ջրանցքներով [ջուր] են հայթայթում պտուղներին և պարզնում են իրենց ջրաղացները։ Եմիր աբ (Emir-ab) կամ ջրի տեր կոչված մի պաշտոնյա այս ջրանցքների վերատեսուչն է։

Յերբ ջուրը բավականաչափ տրվում է արտերին, մանավորապես բրնձի մշակության համար, պտղացին մի թումբ և կանգնեցնում նրա [ջրի] դեմ, որից հաջորդ գրացին իր կարգին ոգտվում է վտակից իր հողերի համար։ Յերբ հանները, յերբեմն շատ բարձր, արգելք են հանդիսանում ջրանցքների ուղղության, մարդիկ գարմանում են այս խոչընդոտը այնպիսի վոլորապտույտ ընթացքով, որ ոտաբոկանին գարմանք է պատճառում։ Ասում են, թե նախապես Պարսկաստանում հինուն հազարից ավելի հորեր և ստորերկրյա ջրանցքներ կային։

Ուղիը ժամվա ուղևորությունից հետո հասանք Դավալու (Diuli), որի գիրքը շատ ուշագրավ է։ Մեհմանդարը ինձ առաջնորդեց մի ամարանոց տուն, որ կառուցված է Աբբաս Միրզայի և նշանավոր ճանապարհորդների ընդունելության համար։ Ճիշտն ասելու համար այս շենքը մի պարզ տախտակամած է, սյուների վրա հենած մի տանիք կտուրով ծածկված, և յերեք կողմից շրջապատված պտղատու ծառերով, որոնք ծառայում են որպես պատհովանոց։ Հոգնած ճանապարհորդի համար վոչ մի բան չի կարող լինել այնքան հարմար ու հրապուրիչ կերպով ընթարմացնող, որքան այսպիսի մի վայր։ Մտնելով այս հովանոցում, ինձ նստեցրին թարմ ու գեղեցիկ վարդերով լցված մի գորգի

* Freygan, էջ 295—331։

վրա. այս ծաղիկը, մանավորապես դեղին վարդը, առատ և Պարսկաստանում։

Հետո, երանք մատակարարելին մի հիանալի վիլավ, զանազան պտուղներ և առն շերբեթի տարբեր տեսակներ։ Պարսկաստանում տաքին պատճառով կանոնավոր ճաշը տալիս են մայրամուտին, [որովհետև տաքը] դժվարացնում է ուտելը։ Մեծ պատրաստությունից ես չկրակացրի, որ իմ ճաշը փոռավոր պիտի լիներ, հակառակ իմ այն խնդրանքին, որ երանք հնարավորության սահմանում շատ համեստ բան տային ինձ։

Մարդ զարմանում է, որ Պարսկաստանում ամեն տեղ գտնում է տառույց, այն էլ այդքան տաք կլիմայում. դա բավական կազդուրիչ է։ Երանք միշտ մեծ քանակությամբ տառույցի պահեստ ունեին, որ բերում են լեռներից և կլիմայով քաղաքներում ծախում են չափավոր գնով։ Ինձ կտրներ առնում են իրենց բերանը և վոչ մի պարսիկ իր ջերբերը կամ այտաները, [բանը], չի խմում առանց մի քիչ տառույց գնելու նրա մեջ. արդարև առանց վորի երանց ըմպելիքը ամրան անկարելի է խմել։ Հին ժամանակներում Հայաստանի թագավորները ունեին մի պաշտոնյա, վորի պարտականությունն եր ձյուն պահել։

Մի քանի ժամ պառկելուց հետո, արթնացա պարսկական կերաժշտության [ձայնից], վոր իմ մեհմանդարը կարգադրել եր նվագել իմ սենյակի մերձ, վորպեսզի հաճելի մի անակընկալ անի ինձ համար։ Իմ մոտ տեսա կերկու պարսիկների, վորոնք պաշտոն ունեին իմ քնած ժամանակ մեծ հովհարներով զովացնել ողը և փշել ճանճերին։ Ձեռնկոչյան կողմը երանք ավին առնվազն կերեսուն տեսակ կերակուր, պատրաստված պարսկական կեղանակով, տարբեր փիլավներ մանավորապես ախորժալի եյին. վոխադարձ քաղաքավարության ցույց տալու համար, ընդհանրի նման կես էլ կերա իմ մատներովը։ Հաջորդ առավոտ ժամը կերկուքին կես կրկին իմ ձեռ վրա եյի, կերկար ճանապարհ կար կտրելիք. մենք պետք եր հասնեյինք մի խանի պատկանող մի փոքրիկ տեղ,

վորին մեհմանդարը մի պատվիրակ եր ուղարկել իմաց տալու իմ գալուստը։ Մեր ընթանից բավական հետու, խանը բազմաթիվ մի խմբով ընկավ դիմավորելու ինձ, և ոգնելու Աբրահամ էյը անցնելու համար, մի արագահոս գետ, վոր մենք պարտավորված եյինք կտրել։

Խանի բնակարանը ժամանելիս ինձ ընդունեցին մեծ պարզությամբ, թեև հոգնած ճանապարհից, պետք եր վոր տակավին չբշարվեյի պարսկական քաղաքավարությունից։ Սակայն, ես հետու եյի պարսկական ուշադրության այդ ցույցին պոհ լինելուց, վորովհետև այդ ժողովրդի նկարագիրը բավականաչափ ծանոթ է ինձ՝ պաշտպանելու համար ինքնիրենս խաբեության դեմ։ Պարսիկները ամեն ինչ ձայրահեղության են տանում, և ամենափոքր ձախողանքի պարագայում նրանք անսահման ամբարտավանությունից անցնում են ամենանվաստ ստորաքարշության։ Խանը, վորի հետ անցկացրի որվան մնացյալ մասը, հաջորդ որը ինձ առաջնորդեց Նախիջևանի կես ճամբան։ Ճանապարհը անցնում է մի գեղեցիկ դաշտից, վորի ձախ կողմում տեսնվում են մի քանի լեռներ, վորոնցից մեկը մանավորապես գրավեց իմ ուշադրությունը, նրանք անվանում են Ոձերի լեռը. շրջակայքի բնակիչները չեն համարձակվում գնալ նրա մոտ, ոձերի բազմության պատճառով, վորոնց մասին տգետ հասարակության մեջ տարածված են հազարավոր պատմություններ։ Իմ ճամբորդության ընթացքում ես տեսա անպակաս մեծությամբ ոձեր և վոչ մեկին վրա չեմ տեսել այնքան թվով շատ կերկար մողեսներ՝ մարդու բազուկի հաստությամբ, վորոնք գեղեցիկ վայլուն կանաչ գույն ունեյին. սրանց խայթոցը վտանգավոր է, վոչ թե թույնի, այլ նրանց սուր ատամների պատճառով։ Այստեղ հանդիպեցի ճանապարհին ամենից ավելի հանդիպեցի մեծ կրիաների, վորոնց մարդիկ համարում են նվիրական կենդանի և չեն ջնջում կամ սրդելիք չեն լինում նրանց ձվանը։

Կեսորից առաջ ժամը տասին քաղաքը կերևաց, թեև բավական մոտ, բայց կես այնքան եյի ընկճվել հոգնությունից ու տաքից, վոր իմ գրպանի կերամաչափով Ռեոմյուրի

հռետոն ասաքեանն եր, սախալեցի ձկուց լջնել և պահել մի աղբյուրի կողքին, վորի ջուրը ծայրահեղորեն սառն եր ու հատակ և ասում են թե բժշկում է ամեն տեսակ հիվանդություն։ Թեև տաղորում եյի ծարավից, բայց չեյի համարձակվում վայելել այս հիանալի աղբյուրից. ամբողջ որվան ճանապարհորդության չգտա վոչ մեկ ծառ, վորի սալերի տակ կարողանայի մի փոքր հանդչել։ Ինձ բերին մի քանի հավկիթ, վոր խաշել եյին մի քանի րոպե թաղելով ավազահողի մեջ. այսպես է կլինան։...

Հաղիվ թե մենք հնծել եյինք [մեր ձիերը], յերբ նշմարեցի բաղմաթիվ մի հնծելազորի մոտեցումը։ Սա բարձրաստիճան մի խանի շքախումբն եր։ Նա, [խանը], կանաչ եր հագել, վորպես Մուհամմեդի ցեղից, և Նախիջևանի (Nakshivan) բաղմաթիվ բնակիչներ հետևում եյին նրան։ Նա յեկել եր մասնակցելու իր հարպանքները, և կարգադրելու համար իմ հանդիսավոր մուտքը այդ վայրը, ուր յերբ ժամանեցի, ինձ վողջունեցին պինվորական յերաժշտությամբ։ Խանը ինձ առաջնորդեց իր պալատը և բնակեցրեց մի հրապուրիչ հարկաբաժնում, վոր բացվում եր մի պարտեզի մեջ. ամեն տեսակ զովացուցիչներ և մի վարդի անկողին սպասում եյին ինձ։ Խանի հետ մի կայլոն ծխելուց հետո, նա ինձ առանձին թողուց՝ հանդչելու մինչև յերեկո, յերբ պիտի վերադառնար նա և ճաշը ինձ հետ։

Յես չեյի հագենում նայելու այն պարտեզին, վոր հրապուրում եր ինձ իր պտղատու ծառերով և խիտ թփաստանով, վորոնց մեջ արևի ճառագայթները չեյին կարող թափանցել. լի եր զեղգեղող թռչուններով, մինչ հազարավոր բույրեր տարածվում եյին ամեն կողմ։

Յեթե մինչև այստեղ յես ընդունվել եյի մեծ հարգանքով, Նախիջևանում ինձ հետ վերաբերվեցին նույնիսկ ավելի մեծ պատիվներով։ Հիանալի մի ճաշից հետո իմ հյուրընկալը ինձ հրավիրեց պարտեզը, ուր մենք անց կացրինք այդ յերեկո [լսելով] ձայնական և գործիքային յերաժշտությունը, վոր սակայն բավական վատ եր. նաև պարեցին։

Իմ մեհմանդարը թեթևորեն տկարացած լինելով, ստիպված եյինք մնալ Նախիջևանում. յես ժամանակ ունեցա շրջելու քաղաքը։ Նախիջևանը մի մեծ վայր է, վոր հաճախ ենթակա յե յեղել ավերումների։ Պարսիկ պատմաբանները հաստատում են, թե նախապես այնտեղ կար տասը հազար տուն։ Քաղաքից մի քիչ հեռու գտնվում է բավական մեծ մի բերդ, վոր Աբրաս Մեծը՝ պահելու համար այն իրեն բավական զորավոր չզգալով՝ քանդեց քաղաքը գրավելուց հետո և անբնակ ու ամայի դարձրեց։ Նա այսպես վերաբերվեց ամեն կողմը, վորպեսզի արգելք հանդիսանա, վոր թուրքերը չամրացնեն և յերկրում ապրուստի հնարավորություններ չգտնեն։ Նախիջևանը շատ քիչ բան ունի իր նախկին փառքից. պարսիկները համարում են այդ նախկին Արտաշատ (Ardashad), վոր հույն պատմաբանները անվանում են Արտաքսատա (Artaxata)...։ Նախիջևանից յերեսուն վերստ այն կողմ հոսում է Արաքս մեծ գետը, բեղմնավորում է յերկիրը, վոր ներկայացնում է առանց ծառի ընդարձակ անընդհատ դաշտերի միապաղաղ մի տեսարան։

Խանը ինձ խնդրեց ներկա գտնվել իր կազմակերպած սպրթաղների մի զորամասի մարզանքին։ Վոչ մեկ զորամաս այնքան անպետք չե, վորքան այս հետևակազորը, վոր վերջերս կազմակերպված և պարսկաստանում։ Յեթե այս ասկյինները վորևե ժամանակ անպատրելի դառնան, դա կլինի չնորհիվ հնծելազորի, վորովհետև մի թնդանոթի հարված բավական և ցրելու բազմաթիվ պարսիկ հետևակներին։

Հաջորդ առավոտ յես շարունակեցի իմ ճանապարհը դեպի Գարգար (Gurgur), մի մեծ գյուղ Արաքսի հարավակողմը։ Հանելով այս լայն ու արագընթաց գետին, գտանք այն անանցանելի շնորհիվ սաստիկ քամու, այնքան խիստ, վոր լաստ վարող պարսիկները չեյին համարձակվում մեզ փոխադրել մյուս ափը, վորքան ժամանակ փոթորիկը շարունակվում եր։ Մենք քաշվեցինք գրեթե ավերակ մի հին աշտարակի մեջ, վոր գտնվում է գետի անմիջական ափում։... Զանազան ժամանակներում կամուրջներ են գցել Արաքսի

վրա Ջուղայում և այլ կետերում, բայց վորքան էլ զորավոր ու զանգվածային են եղել նրանք, ինչպես տեսնվում է նրանց կամարների մնացորդներից, չեն կարողացել դիմադրել հոսանքի ուժին, մասնավորապես ձյունհալի ժամանակ...

Արաքսը բաժանում է Հայաստանը Մարաստանից: [Այստեղ ուղեգիրը խոսում է Մարաստանի պատմության մասին. եջ 304—305:]

Քամին չհանդարտեց մինչև գիշերը, վոր մենք անցկացրինք աշտարակում... Առավոտյան ժամը յերեքին լաստով գետից անցանք, վոր ամենամեծ արագությամբ մեզ տարավ հանդիպակաց ափը և կանուխ հասանք Գարգար: Այս գյուղը գտնվում է մի գեղեցիկ դաշտում և շրջապատված է հրաշալի պարտեզներով, վորոնց տեսարանը ավելի հրճվանք և պատճառում, վորովհետև մարդ միայն շատ յերկար ընդմիջումներով ծառ յերևան է տեսնում: Բուսականությունը թվում է ավելի փարթամ և բույսերի բույրը ավելի հոտավետ: Յես ցանկանում եյի շարունակել[ճանապարհը],բայց տաքը այնքան ծայրահեղ եր, վոր հարկ զգացվեց ամբողջ որը մնալ Գարգարում, այստեղ իմ մեհմանդարը ձեռնարկեց վոխարինել այն ծոմապահությունը, վորին մենք ստիպված եյինք ենթարկվել Արաքսի ափերում: Յերեկոյան կողմ յերբ տաքությունը մեղմեց, յես շրջեցի գյուղում և պարտեզներում,ամենուրեք հիանալով բնության գեղեցկությամբ, այնքան ուշագրավ և պարկատանի յերկինքը, թեև յերկրորդված չէ մարդկային աշխատանքով: Գարգարի շրջակայքը կան ընդարձակ դաշտեր, ուր նրանք մշակում են բամբակ: Այստեղ և այնտեղ, քիչ հեռավորության վրա, տեսնվում են փոքրիկ գյուղեր, նշմարելի նրանց շուրջի ծառերի թավուտներով, նման փոքրիկ կղզիների ծովի մեջ:

Հաջորդ որը հասանք Մարանդ (Marand): Այս փոքրիկ ավանը զետեղված է մի լեռնաստորոտ, մի բարեբեր ու հաճելի հովտի ծայրամասում: Մարաստանի լավագույն պտուղը գտնվում է Մարանդում և ենթադրվում է թե

Պտղոմեոսի Մանդագարանա (Mandagarana) անվանած քաղաքն է: Հայերը հավատում են թե Նոյը թաղված է այստեղ...

Հաջորդ առավոտ գնացինք Սոֆիան (Sofian), բայց կեսորին քաղաքը հասնելու համար, յես տառապեցի հոգնությունից և խիստ տաքից, վոր այս յերկրում անտանելի է, վորովհետև ուղևորը մի տավեր չի գտնում ապաստանելու համար: Սոֆիան գյուղը կամ փոքրիկ ավանը հիանալի դիրք ունի, շրջապատված և պարտեզներով և ջրի առվակներով: Վոմանք հավատում են թե դա հին մարական Սոֆիան (Sofia) է, ուրիշներն ասում են թե այդպես անվանված է պարսկական սոֆիների (sophis) [Սոֆիների] այնտեղ բնակած լինելուն համար: Տեղի բնակիչները դուրս յեկան՝ պտուղներով, ծաղկեփնջերով: Յես պետք է նկատեմ, թե պարսիկները ամենափոքր նվեր անգամ չեն տալիս,մասնավորապես մի ոտառականի, առանց փոխադարձաբար ավելի մի մեծ բան սպասելու, հաճախ ամենաանշան մի բան պետք է վարձատրվի իր կշեռքի վոսկով: Այս բանը շատ թանգ է նստում այն ճանապարհորդների համար, վորոնք պարսկաստան են գնում հասարակական գործով, թեև իմ կանոնավոր ծախքերը ընդմիշտ հոգացվում եյին, սակայն այն արտակարգ բաշխումները, վոր յես ստիպված եյի կատարել, լիուլի պիտի բավեր իմ ուղևորության բոլոր ծախքերին: Վորովհետև այս յերկրում առևտրականները համարվում են շատ առատաձեռն, իրրև լավ քաղաքականություն՝ պետք չէ վիրավորել զգացումները այս արևելյանների, վորոնք արտաքին յերևույթից են միայն դատում: Պարսիկները ընդհանրապես կծծի են և ամեն ինչ հաշիվ է նրանց համար. մյուս կողմից անգլիացիները մոցրել են շռայլության մի սխտեմ, վորով մի ժամանակից ի վեր պարսիկները վարժվել են ամենափոքր մի բան ներկայացնելիս նվերներ ստանալ: Արեվելքում շատ հին սովորություն է նշանավոր մի անձնավորության ներկայանալիս մի վորևե նվեր տալ, վորքան էլ փոքր լինի այդ. նախապես այսպես յեղած է

վորպեսզի ձեռք բերվի բարեացակամություն [այն անձնավորության], վորին հարգանք և մատուցվում

Հաջորդ առավոտը կանուխ, մայիս 14-ին, ճամբա ելա ճիշտ ժամանակին Թավրիզ հասնելու համար։ Իմացանք վոր Աբբաս Միրզան մի քանի որով մեկնել եր վորսորդության համար, վորից հետո նա անմիջապես պիտի վերադառնար իր բնակարանը։ Ձերը քաղաքից բավական հեռու էլի, շատ բարձրաստիճան խաներ պատվել էլին ինձ դիմավորելով. նրանք յեկել էլին իրենց բազմաթիվ հետևորդներով, բոլորը ձիավոր, և բազմաթիվ անգլիացի սպաներ ընկերացել էլին նրանց։ Բնակիչներից մի ամբոխ, հետաքրքրությունից առաջնորդված, շարքով կանգնել եր ճանապարհին։

Ձես իշխանների բնակարանը մի անգլիացի թնդանոթաձիգ հաղարապետի, վոր Աբբաս Միրզայի ռազմական մինիստրն եր։ Նա Թավրիզի թնդանոթի ձուլարանի տեսուչն է, ունի մի քիչ անգլիերեն գիտցող մի յերիտասարդ պարսիկ ոգնական, և Աբբաս Միրզային պինվորական տակտիկայի կրթություն է տալիս։ Հագիվ թե ժամանել էլի, յերբ շրջապատվեցի այցելուներով, վորոնց մեջ առաջինն, վոր յեկավ ինձ տեսնելու, կայմակամ Միրզա Բոզուրկն եր (Kyme Makaum Mirza Bezourk), իշխանի [Աբբաս Միրզայի] առաջին մինիստրը և մի կերպ նրա առաջնորդը, վորին Շահը վստահել է՝ ամեն բանի մեջ ուղղություն տալ իր վորդուն. այս անձնավորությունը տարիքը առած մի մարդ է, սրամիտ ու ներկայանալի. նա մեծ ուշադրություն նվիրեց ինձ։

Որևէն հոգնությունից հետո անգլիացի հաղարապետի և ուրիշ անգլիացի սպաների հաճելի ընկերակցությունը մեծապես հանգստացուցիչ եր ինձ համար։ Քիչ չեր իմ զարմանքը լսելով, վոր բոլոր անգլիացիները շատ հեշտությամբ պարսկերեն են խոսում և նկատի են առնում յերկրի ամենամանրակրկիտ սովորությունները։ Մի խան նշանակեցին, վորպես իմ մեհմանդարը, կամ ավելի ճիշտ՝ հսկելու իմ քաղաքական շարժումների վրա՝ Թավրիզում իմ բնակության ընթացքում. այս և սովորությունը պարսկաստանում, կա-

ռավարությունը բավական մեծ մի գումար հատկացրեց իմ հետևորդների առօրյա ծախքերի համար, մի բան վոր յես մերժեցի.

Իմ ժամանման առաջին գիշերը հագիվ թե յես քնել էլի, յերբ յերկրաշարժի ցնցումներից արթնցա։ Այս բանը բոլորովին նորություն եր ինձ համար, և խոստովանում եմ վոր մեծ շատախանքով բազմության յետևից վազելի դեպի պարտեզ, ուր սովորաբար Թավրիզցիները ապաստանում են այսպիսի դեպքերում, վոր հաճախ և պատահում նրանց մոտ։ [Այստեղ մեր ուղեգիրը խոսում է Թավրիզի յերկրաշարժների մասին. ասում է թե հիսուն տարի առաջ քաղաքը մոխրակույտի վերածվեց և հազարավոր բնակիչներ թաղվեցին ավերակների տակ։ Հեղինակի այնտեղ գտնված միջոցին յերկրաշարժը չորս անգամ կրկնված է։ Տես եջ 310–311։]

Գ· ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ *

Մայիսի 16-ին Աբբաս Միրզան վերադարձավ քաղաքը· մինչև այդ ժամանակը յես չեյի կարող դուրս գալ՝ սովորության պատճառով։ Հաջորդ որը յես ընդունվեցի սովորական արարողություններով։ Պարսկաստանում, յերբ նշանավոր մի անձնավորություն այցելություն և տալիս, նրա առաջից տանում են վորոշ թվով ձիեր, վորոնցից յուրաքանչյուրի սանձը բռնում և մի ձիավոր։ Մի խումբ հետևակներ, վորոնք իրենց տիրոջ աստիճանին համապատասխան թվով ավելի կամ պակաս են, գնում են [տիրոջ] առաջից կամ նրա յերկու կողմերից։ Ոտար դեսպանները հետևում են այս սովորության, յերբ նրանք իրենց հարգանքն են մատուցում Շահին կամ նրա վորդիներին։ Յես նույն բանը արի, յերբ գնում եյի Աբբաս Միրզային. վերցրի լինձ հետ հետևորդների բազմաթիվ մի խումբ, վորովհետև պարսիկները ընդհանրապես յերևույթից են դատում։

Հասնելով պալատը, ձիուց վար իջա և անցա մի մեծ բակից, վորտեղ բոլոր գինվորականները գինված եյին ըստ սովորության պատվելու համար իմ հասարակական դիրքը։ Ապա, մտա պարտեզը, վոր բաժանված եր յերկու մասի. առաջինում հավաքված եյին խաները համազգեստով, յերկրորդում նստել եր գահաժառանգ իշխանը, պալատին կից պատշգամի խորքում, Միրզա Բոզուրկի հետ, վոր նրա մոտ վոտքի եր կանգնել։ Պարտեզը ընդարձակ և, բացի պողպատեձուլ ռերի մի լայն պողոտայից և գեղեցիկ ջրացայտ ավրյուրներից, ուրիշ հարդարանք չունեյիշխանի արարողապետի կողմից

* Freygan, եջ 311—367։

բարձրաձայն հայտարարվելուց հետո, յես մոտեցա և իմ թարգմանի միջոցով մի ժամից ավելի տեսակցություն ունեցա [նրա հետ]։

Ուշադրության արժանի չի նշել, վոր պարսկական պալատում թվում և թե անծանոթ են այն արարողությունների ու արտոնությունների կանոններին, վոր այնքան մանրակրկիտ կերպով նկատի յեն առնում Յեվրոպայում դիվանագիտական անձնավորությունների վերաբերմամբ. կա մի սովորություն վոր նրանք յերբեք չեն գիջել, նույնիսկ ամենաբարձր աստիճանի [մարդկանց]. նույն իսկ անգլիական դեսպանը կատարում և այդ ամենախիստ կերպով։ Պահանջվում և բոլոր պաշտոնական ընդունելություններին կոշիկները հանել, և փոխարեն հագնել պարսկական հողաթափ։ Սրանով վերջ գերազանցության խնդիր և հարուցվում, վերջ ել պահանջվում և ուշադիր լինել կանոնին իրրև պարզապես ցուցամոլություն, այլ արքունիքը պահպանում և այս պարտականությունը, իրրև կրոնական ծագում ունեցող [մի բան], վոր սակայն շատ հին սովորություն և և նպատակ ունի պահպանել՝ պարսկական տան գլխավոր զարդ [կազմող] իրենց գեղեցիկ դորգերը, հետևաբար յես ներկայացա իշխանին հողաթափ վոտիս։

Աբբաս Միրզան քանվեց տարեկան և, ունի ազնիվ ու առնական յերևույթ. նա իր կենդանի ու առնական նկարագրին մնացնում և դատողություն, վոր սովորական չի իր տարիքին և անսովոր և Պարսկաստանում։ Նա ձգտում և գինվորական համբավի և նրա գլխավոր հաճույքը պատերազմն և. արժանավորություն կա նրա զգացումներում և բարձրություն նրա գաղափարներում, վորոնք զանազանում են նրան իր հայրենակիցների ընդհանրությունից, և նա նախանձախնդիր և ամեն բանի մեջ կրթություն առնելու, վորպեսզի կարողանա մոտենալ յեվրոպացիներին։

Նրա առնջանքն և՝ ապագայում բարենորոգել Պարսկաստանը. զորավոր միտում ունի հետևելու պատերազմական արվեստի իր ճաշակին, վորպեսզի ապահովի իր գահ բարձ-

ԳՐԱԴԱՐԱՆ

բանալը, որ նա ժառանգում է միայն այն պատճառով, որ նրա մայրը իրենց մարգարեյի ցեղից է, բայց նրա անդրանիկ տղաքը՝ Մուհամեդ Ալի Միրզան, մի քաջ և ուժեղ անձնավորություն, մտադիր է խլել հաջորդությունը։ Աբբաս Միրզան ցանկանում է պատերազմ, որպեսզի կարողանա միշտ գենքի տակ պահել պատկառելի մի ուժ, և այդպիսի պարագաներում ընդունում է մեծ դումարներ իր հորից՝ Շահից, որ Անգլիայից պատերազմի ընթացքում միայն նպաստ է ստանում։

Ֆաթհ Ալի Շահը (Futteh Ali Shah) թեև իր կյանքի վաղ շրջանում՝ անկարող և, կամազուրկ ու կորովազուրկ, նա իրեն տվել է շվայտանքի, զվում է աշխատանքից, և պետական ու քաղաքական գործերի վարչությունը վստահել է Աբբաս Միրզային, որին իր ճարտար խորհուրդները ժամանակում է Միրզա Բոզուրկը. վերջինս իր կարգին պահպանելու համար իր դիրքը դահաժառանգի աչքին, միշտ համամիտ է իր տիրոջ կարծիքին։ Միևնույն ժամանակ Շահը քաշված իր հարեմի առանձնության մեջ,—ուր ապրում են յերեք հարյուր կանայք,—անդգա յե այն բոլոր խնդիրներին, որոնք վերաբերում են յերկրին։

Յես հաճախ տեսակցություն եյի ունենում իշխանի հետ և գրեթե ամեն որ տեսնում եյի Միրզա Բոզուրկին, որ հաճախ ճաշի եր հրավիրում ինձ։ Ժամանումիցս և ամենատիպողական գործերը կարգադրելուց անմիջապես հետո, յես գոնացում տվի իմ հետաքրքրության քննելով քաղաքն ու շրջակայքը և տեղեկություններ հավաքելով յերկրին ու ժողովրդին վերաբերյալ հարցերի մասին։ Այժմ յես պետք է պատմեմ այն բաները, որոնք ըստ իմ համոզողության արժանի են ուշադրության։

[Հեղինակը այստեղ ընդարձակորեն խոսում է Թավրիզի ու Պարսկաստանի մասին և տալիս է բավական հետաքրքիր տեղեկություններ, որոնք չենք թարգմանում ի նկատի ունենալով այս հատորի ծավալը։ Խոսելով հյուսիսային Պարսկաստանի ցրտի մասին, նա ասում է թե 1812 թ. վերջերին Արաքսը այնպես սառել եր, որ Աբբաս Միրզան-լերը արշավում եր Ղարաբաղ, ետեն անցավ իր թնդանոթ, ներով։ Պարսկաստանը, գրում է նա, հիանալի կլիմա ունի և բարեբեր հող, սակայն յերկրի մեկ տասնյերկուերորդ մասը հաղիվ մշակված է։ Տես հ. 31։—361։]

Արքունիքը և մանավորապես անգլիացիները,—վրոնց հետ անց եյի կացնում որվա մի մասը,—ջանալիս եյին որ իմ ժամանակը անցներ այնքան հաճելի, որքան հնարավոր եր, և հաջորդաբար նրանք ընդունելություններ եյին տալիս ինձ։ Իմ ժամանումից քիչ հետո Աբբաս Միրզան հրահանգեց Թավրիզի Բեկլարբեկին մի մեծ հանդես (fête) պատրաստել ինձ համար։...

Բրիտանական դեսպան սըր Գոր Աուզլեյ Թավրիզ ժամանեց հունիսի 16-ին. նրա հանդիսավոր մուտքից անմիջապես հետո յես մի տեսակցություն ունեցա նորին գերազնցության հետ, և բավական զարմացա տեսնելով որ նա մեծ դյուրությամբ եր խոսում պարսկերեն։ Արդարև, Պարսկաստանում սա մի մեջց և կառավարության վստահություն դրավելու համար, և դեսպանը հաջողություններ է ունեցել, որովհետև նա պետք չունի թարգմաններին, որոնք վճռ միայն վարձկան են, այլ նաև դավաճան։ Դեսպանը, որի շքախումբը շատ մեծ եր, ուներ նաև բրիտանական հնդկաստանի զինվորներից Սիպոյների մի պահակախումբ, վճռ մի բան չի կարող գերազանցել դեսպանի և Լեյդի Աուզլեյի սիրալիրությունը. նրանց ընդունելությունը ինձ պարտավորեցրեց։ Յես զարմացա տեսնելով դեսպանի կնոջն ու նրա փոքրիկ աղջկան այնքան հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հետո։ Մեկնելով Լոնդոնից՝ նրանք հանդիպել եյին Բրազիլիա, որտեղից գնացել եյին Հնդկաստան, և մի քիչ ժամանակ Թեհրան մնալուց հետո յեկել եյին Թավրիզ։ Դեսպանը ծրագրել է վերադառնալ Թիֆլիսի և Սան Պետերբուրգի ճանապարհով և այսպես իր հետաքրքիր ընտանիքի հետ ամբողջացնել յերկրագնդի կեսի շրջանը։

Յես գտա որ սըր Գոր Աուզլեյն նախանձախնդիր եր

իմ առաքելության նպատակների հաջողության համար, բայց Աբբաս Միրզան լավ իմանալով վոր ֆրանսացիները արշավել են Ռուսաստան, այդ հանգամանքից քաջալերված՝ մերժում եր իմ կառավարության [Ռուսաստանի] հաշտության առաջարկները։ Նա վճռել եր հերավի, փորձել մի նոր արշավանք դեպի Վրաստան, հուսալով այդ միջոցով ձեռք բերել ավելի նպաստավոր հաշտություն, և դրանից ավելի՝ տիրանալ այն ընծավորական փառքին, վորին նա այնքան ձգտում եր։ Ճես պարզորեն տեսա վոր նա մեծ վստահություն ուներ իր հանճարի ու քաջության, ինչպես նաև իր սարբազների քաջության վրա։

Յերբ Աբբաս Միրզան կատարելապես պարտվեց ռուսական դեներալ Կոտլերեվսկիի կողմից, նա պետք է վոր ղրկացած լիներ իմ առաջարկած պայմաններով հաշտություն կնքած չլինելուն համար, մի բան վոր նա հետագայում սոխալված յեղավ ընդունել։ Իմ առաքելության նպատակը հաջողեցնելու համար բոլոր միջոցները սպառած լինելով, յես խնդրեցի մի ընդունելություն՝ հրաժեշտ առնելու համար, վոր անմիջապես շնորհվեց։ Նույն որը իշխանի կողմից մի հարուստ խալաթ ուղարկվեց ինձ, վոր պարսկական պատվի հագուստն է. սա մի դեպակ եր յերկու շալի հետ։ Ըստ սովորության այդ հագուստով յես ներկայացա իշխանին։

Աբբաս Միրզայի հետ վերջին տեսակցության [ընթացքում] յես առիթ ունեցա խոսելու Աբբաս Մեծի մասին։ Իշխանը մեծ գոհունակություն զգաց նրա ազգային պատմության հետ իմ ունեցած ծանոթության համար։ «Իմ այդ նախնիքները, — նկատեց նա, — վորոնց հիշատակը հասել է մինչև մեր ժամանակները, նշանավոր եյին իրենց ուժովը։» Յես պատասխանեցի. «Կա ավելի ազնիվ և ավելի արժանավոր միջոց մի իշխանի սիրելի դարձնելու իր հպատակներին արժանի լինելու հաջորդ սերունդների հարգանքին ու հիացման. դա իր յերկրին մշտական խաղաղություն ընծայելն է, վորպեսզի ժողովուրդը յերջանկորեն բարգավաճի արվեստի ու գիտության մշակույթի մեջ։» Նա համաձայնվեց

ինձ հետ, բայց այն ծարավը վոր նա ուներ նշանավոր հանդեսանալու իր սարբազների գլուխն անցած, վորոնց նա անհաղթելի և համարում, դերակշռում և ուրիշ ամեն նկատում։

Բրիտանական դեսպանը ինձ հետ Թիֆլիս ուղարկեց մեծ արժանիքի տեր մի յերիտասարդ դիվանագետի*, վորին նորին գերազանցությունը ցանկություն ուներ պահել այնտեղ՝ հաղորդակցության մեջ լինելու համար ռուսական կառավարության հետ։

Թավրիզից մեկնեցինք հունիսի 18-ին և մեկնույն ուղիով վերադարձանք Թիֆլիս, հաճելի մի ճանապարհորդությունից հետո։

---

* Անգլիացի այս սպան Ռոբերտ Թորդենն եր, վորի մասին խոսում և Ջեյմս Մորիեր, տես եջ 80—82։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՐ ՈՒԻԼԻԷՄ ԱՈՒԶԼԵՅԻ

(1810, 1811 և 1812)

Ուիլիըմ Աուզլեյ (1769—1842) նույնպես Պարսկաստանում գործող անգլիական դիվանագիտական մարմնին է պատկանում։ Նա անձնական քարտուղարն եր և եղբայրը Պարսկաստանի դեսպան և արտակարգ լիազոր սըր Գոր Աուզլեյի, վոր անգլո-պարսկական դաշնագրությունը կնքեց Թեհրանում։ Սըր Ուիլիըմ Աուզլեյ իր ժամանակին ծանոթ արևելագետներից եր։ Նա ծանոթ և պարսկերենի ու արաբերենի և հավաքել և բազմաթիվ պատմական հին ձեռագրեր։

Նրա ուղեգրությունը հրատարակված և յերեք մեծադիր հատորներում, վորոնք կրում են «Travels in various Countries of the East more particularly Persia», By Sir William Ousely, knight, LL. D. London.

Ա. Հատորը հրատարակված և 1819-ին, և նկարագրում և Անգլիայից մեկնումը 1810 թ. հուլիսի 14-ին, ընկերակցությամբ անգլիական դեսպան Սըր Գոր Աուզլեյի, պարսկական դեսպան Միրզա Աբուլ Հասանի և Մր. Զեյմս Մորիերի։ Նրանք նավարկում են Աֆրիկայի շուրջը, գնում են Ռիո դը Յանեյրո, Սելլան, Մալաբաո, Բոմբեյ։ Հնդկաստանում նա մանրամասն նկարագրում և կրակապաշտ փարսիների կամ Գաբրների կյանքը։ Բոմբեյից մեկնում են 1811 թ. հունվարի 13-ին և ժամանում են Բուշիր, Պարսկական ծոցը, մարտի 1-ին։ Այնուհետև մեր ուղեգիրը նկարագրում և դեսպանական շքախմբի ճանապարհորդությունը Բուշիրից Շիրազ։ Այս հատորը ունի 455 եջ, և պարունակում և բազմաթիվ պատկերներ և մի քարտեզ, վոր պծում և կատարված ուղեգիծը։

Բ. Հատորը հրատարակված և 1821 թվին և մանրամասն նկարագրական և տալիս Շիրազի, Պերսեպոլսի հնություններին և այնտեղից մինչև Սպահան կատարված ուղևորությունը, ուր ժամանում են 1811 թ. հուլիսի 19-ին։ Ինչպես Ա., նմանապես այս հատորն ունի բազմաթիվ հավելվածներ (appindex), վորոնցից IX նվիրված և պարսկական ընթացիկ դրամներին (եջ 489—497)։ Հատորում կա հարավային Պարսկաստանի մի քարտեզ, ուր պծված և Բուշիրից Շիրազ և Շիրազից Սպահան ճանապարհը. նկարագրվ և և ունի 544 եջ։

Գ. Հատորը հրատարակված և 1823 թվին։ Ամբողջ աշխատության քսան գլուխներից յոթը մտնում են այս հատորում, հետևյալ բովանդակությամբ.—

Գլ. XIII. Սպահանի նկարագրությունը և Զինդե ռուդ գետը, ըստ արևելյան գրողների։

Գլ. XIV. Բնակություն Սպահանում։

Գլ. XV. Ճանապարհորդություն Սպահանից Թեհրան։

Գլ. XVI. Առաջին բնակությունը Թեհրանում և այցելություն Ռուսի ավերակներին։

Գլ. XVII. Ճանապարհորդություն դեպի կասպից ծովը, Մազանդարանի նահանգի միջից և վերադարձ Թեհրան։

Գլ. XVIII. Յերկրորդ բնակությունը Թեհրանում և ճանապարհորդությունը դեպի Թավրիզ։

Գլ. XIX. Ճանապարհորդություն Թավրիզից կ. Պոլիս։

Գլ. XX. կ. Պոլիս, Զմիւռնիա, և վերադարձ Անգլիա։

Այս հատորից թարգմանել ենք XIX գլուխը Թավրիզից մինչև Աշկալա ամբողջությամբ (եջ 418—471)։ Սըր Ուիլըմ Աուզլեյ մեկնել և Թավրիզից 1812 թ. հուլիսի 1-ին և անցնելով Հայաստանից Աշկալա ժամանել և հուլիսի 29-ին։ Ապա նա ժամանում և Թոքաթ ոգոստոսի 11-ին, ուր նա քաղաք և մտնում անցնելով «հայկական մի ընդարձակ դերեզմանատնից» և լշկանում և նամակատուն, ուր «հայե-

ըից գնում և գինի և ողիս: Սեպտեմբերի 2-ին ժամանում և Կ. Պոլիս և 21-ին Զմյուռնիա և 27-ին մեկնում և այնտեղից Անգլիա, ուր ժամանում և նույն թվի նոյեմբերի 14-ին, վորով նրա ճանապարհորդությունը տևում և յերկու տարի և մոտ չորս ամիս:

Այս հատորը ունի 600 եջ, և հավելվածական 27 եջնոց նկարների մի ալբոմ և յերկու քարտեզ: Պարունակում և նաև հավելվածներ և հատուկ անուննների ցուցակ:

ԹԱՎՐԻԶԻՑ Կ. ՊՈԼԻՍ

Սառնալով կառավարության գրությունները և դեսպանից զանազան նամակներ, յես հրաժեշտ առի Թավրիզի իմ բարեկամներից հուլիսի առաջին որը [1812], և գիշերը ժամը իննից անմիջապես հետո մեկնեցի մայոր Դ'Արսիի տնից (Major D'Arcy) և մի մղոնից ավելի փողոցներից ձիավարելուց հետո մտա դաշտը և անցա շատ պարսեզներից: Այսպես սկսած ճանապարհորդության ինձ ընկերանում եյին Մր. Պրայս, վոր մի ժամանակից ի վեր ցանկանում եր վերադին այցելել Անգլիա, կերակրչապետ Հուսեյին խան, նշանակված իշխանի կողմից ապահովելու համար ինձ վորպես մեհմանդար (mehmandar) մինչև Պարսկաստանի սահմանները, Մուստաֆա, մի թաթար կամ թրքական սուրհանդակ, վոր յերկու ամսից ավելի առաջ յեկել եր Կ. Պոլսից, մեհմանդարի հրամանատարության տակ բազմաթիվ զինվորներ, մեր ծառաները, մի չարվադար, կամ բեռնատար ձիերի ու ջորիների վարիչը, դեսպանի անգլիացի ձիապանը, յերկու պարսիկ ֆիտուդարներ կամ գլխավոր ձիապաններ և յերկու մեհտերներ կամ սաորին ձիապաններ, վորոնք իրենց խնամքի տակ ունեյին այն յերկու ձիերը, վորոնք բազմաթիվ ուրիշ նվերների հետ Ֆաթհ Ալի Շահի կողմից ուղարկվում եյին Անգլիայի խնամակալ իշխանին (Prince Regent), իրրև նվեր: Գիշերը շատ ամպամած եր, մի քանի անգամ տեղատարափ անձրևից, շատ կայծակ կար, և դաշտում ուժը կամ ինը մղոն ձիավարելուց հետո, յերևան յեկավ վոր մենք կորցրել եյինք մեր ճանապարհը. առաջնորդը, վոր բնիկ Մարանդցի եր, շփոթել եր ուղին: Սակայն մենք շարունակեցինք, մինչ մեր մեհմանդարը վրեժխնդրության

ապագա ծրագրեր եր կազմում մեր անվտահելի առաջնորդի դեմ, որի ականջները կամ քիթը, նա չերդվում եր թե, դանակի պիտի հանձնվի...

[Ամսի] 2-ին մոտավորապես արևածագի ժամանակ, յոթը կամ ութը մղոն սխալ ուղղությամբ թափառելուց հետո բարեբախտաբար հանդիպեցինք մի քանի հարյուր պինվորների, որոնք քսանական կամ չերեսնական խմբերով գնում էին Թավրիզ՝ իշխանի բանակին միանալու, նրանք ուղիղ ճանապարհը գուշց ավին մեզ, և շատ քաղաքավարությամբ ու հարգանքով վերաբերվեցին. նրանցից մեծ մասը գեղեցիկ ու բարեկազմ չերիտասարդներ էին, որոնք կրում էին անգլիական արդյունաբերության նշան կրող հրացան ու ավին և նրանք մեզ բարևեցին չեվրոպական ոճով։ Մի ձիավոր ուղարկվեց ծանուցանելու համար մեր մերձեցումը և Սոֆիանի (Sufiáneh) գլխավոր հեղհեղուկ, բնակիչներից շատերի հետ կես ժամն [առաջ] չեկավ՝ մեզ դիմավորելու և բարեգալուստ մաղթելու համար։ Յերբ անցնում էինք գյուղի մի արտի մոտից, որ մի քանի մարդիկ քաղում էին, նրանցից մեկը իր ձեռքում բռնած այնքան հասկ, որքան կարող եր, նվիրեց ինձ շնորհալի կերպով։ Հյուրասիրության նույն նշանը հաճախ ցուցադրվեց մեր հանդեպ, մեր հետագա ճանապարհորդության ընթացքում Հայաստանի ուղուրքիայի մեջ։ Առավոտյան մոտ ժամը վեցին չէվանեցինք Սոֆիանից, մի գեղեցիկ գյուղ, ծառազարդ ու ծաղկավ պարտեզներով։ Ինչպես մարդիկ ինձ հաղորդեցին, այդ [գյուղը], պարզ նակում է հարյուր հիսուն տուն կամ ընտանիք, և այստեղ մենք վայելեցինք պաղ ու հիանալի մի ջրի շռայլությունը... Սոֆիանը Թավրիզից Թերևս քսանչորս կամ քսանհինգ մղոն հեռու չի, և մնջանկյալ չերկիրը տափարակ է և ճանապարհը ընդհանրապես լավ։

Յերեքին [ամսի] առավոտյան ժամը չերեքին հեծանք մեր ձիերը և առաջացանք լավ ճանապարհով, անցնելով մի քարդ բլուրներից և շատ առուներից, իննևորդ կամ տասներորդ մղոնում, անցանք մի մեծ քարվանսարայից, չերբեմն

աղյուսե մի գեղեցիկ շինք, այժմ քայքայման չենթակա։ Սա պահվում եր մեր ճանապարհի աջը, և կոչվում է քարվանսերայի Յամ (caravansera-i-Yam), նրա մոտ կան մի այլ շինքի մի քանի կամարներ և քանդված պատերը։ Մի մղոն առաջանալով տեսանք մոտավորապես չերկու հարյուր վրան, ամառային ճամբարը սերբազների[1] (serbázi) մի վաշտի, Մարանդի ընդարձակ ու բարեբեր դաշտը չերևում եր խառնված սիրված դյուղերով ու ծառերով, պարտեզներով և արտերով բարձր մշակության վիճակում։ Ալնտեղ իջանք բարձր բլուրներից, որոնց չեզերքից հոսում էին մրմնջացող բազմաթիվ փոքրիկ գետեր։ Մարանդը, իր ամբողջով, տեղավորված մի բարձունքի վրա, ներկայացնում է շատ հաճելի մի տեսարան։ Յերկու մղոն հեռու մեզ ընդունեցին կառավարչի վորդին և քանի կամ չերեսուն սպասարկուներ։ Շուտով անցանք մեծ տարածություն մի գերեզմանոցից, վորի մեջ խոյի չերևք ֆիգուրաներ տեսանք, կռատուրեն տաշված քարից և բնականից ավելի մեծ չափով, կոտոշները՝ բավական ծռված, միակ նշանն եր պահպանելու համար այն տույժներից, վոր պահպանում են մի կարգ պարսկական գերեզմանատների մասին։ Մարանդ հասանք ժամը ութից քիչ հետո, քսան կամ քսանմեկ մղոն ճանապարհորդելուց հետո։ Յես ոթևանեցի մի լավ տուն, վորին պատկանում եր մի լավ պարտեզ, առատ խաղողով և ուրիշ պտուղներով, բայց տաքը շատ խիստ եր և մժեղները այնքան բազմաթիվ էին և նրանց խայթոցը այնքան տուր, վոր նրանք ամբողջ որը ինձ զրկեցին հանգստից, թեև նախորդ գիշերն էլ չես չէին հանդչած, և իմ պարսիկ, Թուրք ու հայ ընկերակիցները իմ նախանձին առարկա դարձան, վորովհետև, տարածված սենյակի հատակի կամ մերկ գետնի վրա, թվում եր թե նրանք իշխանության ունեցին տիրելու քնին, քսանչորս ժամվան վորևե բռպեկին։ Արևելքում իմ տեսած գյուղերից Մարանդը գեղեցկությամբ գերազանցում է։ Յերբեմն բավական ընդարձակ մի ավան և չեղել, բայց իր չերևույթին և տեղական ավանդության, վոր փաստը

հաստատում և Շարդինը, ինչպես նա ասում է, թե դա պատահում է (1673 թվին) վոչ պակաս քան յերկու հազար հինգ հարյուր տուն.... Համդուլահ (ԺԴ. դար) ասում է. «կլիման այստեղ բարեխառն է և տեղը վոռոգում է Ջալվիր (Zalvir) գետը։ Արտադրվում է ցորեն և այլ տեսակի հացահատիկներ, բամբակ, խաղող և ուրիշ պտուղներ, վորոնց մեջ գեղձը, ծիրանը և սերկեվիլը ամենից գերազանցում են։ Նրանից կախում ունեցող հողամասը պարունակում է վաթսուն դյուզ, ունի լավ հող, և տալիս է մեծ յեկամուտ։ Շատ լսեցի Մարանդի մերձակայքում գտնված մետալլների մասին, բայց չկարողացա և վոչ մեկ հատ ձեռք բերել։ Բնակիչներից շատերը թվում է թե հավատում են, վոր մեծ քանակությամբ գտնձ կա թաղված այս տեղի մերձակայքում, և մի հարցրեի մարդ վատահացրեց ինձ, թե մի քանի շաբաթ առաջ մի հին պատի տակ գտնված են շատ վոսկի ու արծաթ ղրամներ, վորոշ բանվորների կողմից, վոր քիչ հետո վաճառած են Յերևանցի (of Iraván) մի սառաֆի կամ լումայափոխի, վորի անունը նա տվավ, և յես վորոշեցի այդ մասին հարցնել նրանից։ Մարանդում առատորեն մեզ հայթայթում եին հավեղեն, կաթ, կարագ, ձու և հաց, բայց այլազան տեսակ պտուղներից...։ Մենամնդարը ինձ տեղեկացրեց, վոր մայրամուտից անմիջապես հետո, անհրաժեշտ եր վոր մենք վերսկսեինք մեր ճանապարհը, վորովհետև ինքը գիտեր թե Մարանդի ու Գադգարի միջև վորևե [ուրիշ] մեծգիլ (կայրան) չկար, ապաստան գտնելու համար տաքից, թե մինչև ջանկյալ հեռավորությունը շատ մեծ եր, և թե հազիվ մենք կարողանայինք հասնել մեր կայարանը արևի ծագումից առաջ։ Ըստ այնմ մենք ճամբա յելանք մոտավորապես յերեկոյան ժամը 10-ին, (զանց առնելով այցելել մի վայր, վոր ասում եին թե պարունակում եր Նոյի, նրա մոր և նրա կնոջ վոսկորները), բայց տասը մղոնից ավելի առաջացած եինք, աստղերի պղտոր լույսով, յերբ մեր չարվադարը հաղորդեց, թե մեր բեռնակիր ձիերից մեկը կորած եր, և նա տեղացրեց հազարավոր հայհոյանքներ վրա։

միայն դժբախտ ձիու նախահայրերի վրա, այլ նաև այն գողերի, վորոնց ձեռքն ընկել եր այն, մայրերի, քույրերի, կանանց ու աղջիկների հասցեին. այս հայհոյանքներին բոլոր պարսիկները միացրին իրենց ձայնը, միաժամանակ յես խիստ անձկությունից ազատվեցի, յերբ տեսեցի վոր կորած բեռը պարունակում եր միայն իմ անձնական կապոցները, և, ինչպես յես վախենում եյի, արքայական նվերների մաս չեր կազմում։ Տարբեր ուղղությամբ ձիավորներ ուղարկվեցին, բայց նրանց վորոնումները ի դուր անցան, և մի ժամվան սպասումից հետո գլխավոր խմբի հետ յես ճամբա յելա, մինչ Հյուսեյին խանը և յերկու ծառա քառասմբակ ձիավարեցին յետ դեպի Մարանդ։ Մոտավորապես տասնեորդ մղոնում մենք անցանք մի ավերակ Կարվանսարայից, և հուլիսի 4-ի ժամը տասին, մոտ քառասուն մղոն ամայի ու ամուլ անապատից տհաճելի ձիավարությունից հետո, իջանք Գադգար։ Թե մարդիկ և թե ձիերը գրեթե ուժասպառ եյին յեղել հոգնությունից ու ծայրահեղ տաքից։

Այստեղ բավական ժամանակ սպասինք այրող արեգակի տակ, վորովհետև յերևան յեկավ վոր տեղացիները չեյին կարող կամ լավ կամ չեյին կամենում, ընդունել այնքան հյուրերի, բայց նրանք մեզ ցույց տվին յերկու փոքրիկ գյուղեր, մեկը Ալեմդար (Alemdár) անունով, մյուսը Լուարջան (Luárján), յուրաքանչյուրը յերկաք մղոն հեռավորությամբ։ Մեր խմբից մեկ մասը ուղղվեց դեպի այս տեղերը, թեև յես գիտեյի, վոր Գադգարը նշանակված եր մեր այսօրվան մեծգիլը, սակայն վորովհետև մեր ճանապարհորդության կայարանների մասին իշխանի ռասխրը (rakm) կամ գրավոր հրամանը գտնվում եր Հյուսեյին խանի մոտ, յես չեյի կարող՝ մինչև նրա ժամանումը Մարանդից, իրավացիորեն կամ որևէնասես սոխակել վոր մեզ իջևան կամ հարմարություններ տան։ Մի ժամվան սպասումից և դուր պահանջումներից հետո, յես վորոշեցի վերոհիշյալ գյուղերից մեկում ապաստան վնտռել, շատ դժկամակորեն հնձանք մեր հոգնած ձիերը և դանդաղորեն գնացինք մոտ մի մղոն, (վոր թվում

եր թե հավասար եր մի փարսախ), յերբ նախապես գնացողներից վոմանք հանդիպեցին մեզ և հայտարարեցին թե Լաւարջանի բնակիչները ավելի անհնազանդ են, քան գառլինները, վորովհետև նրանք ձեծած ու նախատած էին ձիապաններից մեկին, և առաջին, վոր սպիտակ էին մի ուրիշին վոր քաշեր իր ատրճանակը ինքնապաշտպանության համար։ Այս տեղեկության վրա մենք դարձա դեպի Գառգառ, վար իջա ձիուց և նստեցի մի պարտեզի պատի սալերի տակ։ Այստեղ, կես ժամից հետո, անասնապետից մեկը յեկավ չքմեղելու ինչ վոր պատահած եր, վերագրելով այն մի սխալի, և ավելացրեց թե իր սեփական տան մի սենյակ պատրաստված եր իմ ընդունելության համար, և թե ամբողջ խմբի համար շուտով պիտի հայթհայթվի թե բնակարան և թե ուտելիք։ Ժամը հինգին մենմանդար Հյուսեյնին խանը ժամանեց և մեզ պատվ հանդստավետ կերպով տեղավորված և լավ պայմաններում։ Այն ձին, վորին նա գնացել եր փնտռելու, պարկեշտորեն ձին ու իր բուռը հանձնել եր Բուզուրգին (Buzurg) կամ Մարանդի գլխավոր մարդուն, և այնտեղ ճնացել եր մինչև մենմանդարը պահանջել եր այն։ Մ'ընդհան յերկար ժամանակ այրող արևի տակ ճանապարհորդելուց նա [Հյուսեյին խան] բռնված եր ջերմով։ Գառգառը թվում է թե անցյալում ավելի մեծ տեղ և յեղել քան ներկայումս, այնպես հիշատակված և Ադրբեյջանի քաղաքների մեջ Համդուլլահի կողմից. «Գառգառ, նրա արտադրությունները՝ յորեն ու բամբակ, խաղող և բավականաչափ այլ պտուղներ։ Այս տեղի մոտ Նախիջևանի Ջիա ալ Մուլք շինեց մի կամուրջ Աւազի (կամ Արաքսի) վրա, մեծ ու գերազանց կառուցվածքով մի գործ»։

Կանոնավ՝ հինգին [հուլիսի] մենք պատրաստվեցինք մեկնելու, յես նախապես հարցրի Հյուսեյին խանի առողջության մասին. նա քնած եր մի բարձր տան տափարակ կտուրի վրա։ [Յերբ այնտեղ գնացի, նա] նստել եր կոշիկները հագնելիս, նույն տեղի վրա, շրջապատված իր ծառաներով ու շատ պլուպացիներով, և կատարում եր խիստ դատավարություն այն մարդկանց, վորոնք նախորդ որը այն տեսակ անհնազանդություն եին ցույց տվել հայտնաբերել մեր հանդեպ։ Հանցավորները լինչ ներկայացրել եին յերիտասարդ, բարձրահասակ ու աշխույժ, բայց նրանք վոր կանգնել եին մենմանդարի առաջը՝ ծերունի ու ակար եին. մեկին նա արդեն մարտկել եր, ինքը լինելով դատավորը ու դահիճը, մի ուրիշ՝ սեֆիդ ռիշ (sefid rish) կամ սպիտակամորուք մի պլուպացի յենթարկվում եր հարցաքննության, և նրա ձեռքերը պարանով կապել եին նրա յետին։ Ինչպես նման պարագաների համար պատահած և, վոր ամենախղճը, ամենաերեսին կամ ամենատորլոնը կրում և պատիժը և վոչ թե ամենից հանցավորը, յես միջամտեցի այս մարդու համար և նա ազատ արձակվեց։ Յեվ ապա մենք առաջ գնացինք Գառգառից յոթը կամ ութը մղոն և ժամը վեց ու կեսին իջանք Ռուդ-ի-ԵՒրազի * կամ նշանավոր Արաքս գետ ափին, վոր այստեղ Մարանդը բաժանում և Հայաստանից։ Դժբախտաբար մի ժամ առաջ այստեղ եր հասել մի Կեշուն (Keshún) կամ մի վաշտ պարսիկ զինվոր, և հանգստավետ կերպով գրավել եր միակ փոխադրանավը. նրանց հրամանատարը նոր եր անցել հետևն կամ վաթսուն մարդկանց հետ և բանակել եր հայկական ափում, ուր մենք տեսանք նրան նստած ծուլլ վիճակում, կալեան (kaleân) եր ծխում իր փառավոր վրանի դրան առաջ։ Միաժամանակ արևը շողում եր խիստ տաքությամբ և շմեցնող փայլով, այն ափը ուր մենք կանգնել եինք ամենափոքր մի ստվեր անգամ չուներ, և յես ծայրահեղորեն ցանկանում եի անցնել գետը և շարունակել իմ ճանապարհը, բայց յերբ նավը վերադարձավ մյուս ափից, այնքան շատ պարսիկ զինվորներ շտապեցին նրա մեջ, վոր իմ բոլոր ջանքերը՝ մի անկյուն գրավելու համար այնտեղ, ի զուր անցան։ Այս անցկության մեջ յես դիմեցի մի սպայի, բայց նրա ջանքերի ամբողջ

* Ռուդ պարսկերեն նշանակում և գետ հետևաբար Ռուդ-ի-Արաքս՝ Արաքս գետը։

հեղինակության արդյունքը, այն չեղավ վոր միայն մի մարդու տեղ ճարվեց, և վորովհետև չես վճռել եվ չկողնել [Անգլիայի] խնամակալ իշխանի ձիերին, վոչ եվ արքայական նվերները, հարմար դատվեց վոր Հուսեյին խանը, ոգտվելով այս առիթից, գնա գեներալին և մեր անցքի համար սառնա մի հրաման։ Այնպես եվ կատարվեց։ Հուսեյին խանը վերադարձավ բերելով հրամանը, սակայն հինգ ժամ անցավ մինչև վոր անհամբեր զինվորները թողլ տվին վոր ձիերն ու բեռները անցնեն մյուս ափը։ Այս ժամանակամիջոցում, հակառակ ծայրահեղ տաքին, չես հրճվում եվ դիտելով այս արտակարգ խմբերը, վոր իմ շուրջը գրավել եին ափը, բազմաթիվ զինվորներ իրենց հրացանները դիզել եին միասին, և քնել նրանց կողքին լիատատ արևի ճառագայթների տակ, ուրիշները իրենց ընկերներին զվարճացնում եին յերգով, և վոմանք պատմում եին հին հերոսների քաջագործությունները, փերիների պատմություններ, կամ ծիծաղաշարժ անեկդոտներ, մինչ շատերը պարծենում եին իրենց կռիվներով և կամ սիրային արկածներով...։ Այս ձանձրալի սպասման չես նկարելի փոխադրանավը, պահապանի մեկուսացած հյուղակը, հրամանատարի վրանը, և Հայաստանի հեռավոր լեռները։ Նավը շատ կոպտորեն շինված եր հատ տախտակներից, վորոնց շատ մասերի միջից ջուրը անցնում եր։ Սակայն, ընդարձակ եր և բավականին հարմարեցրած իր նպատակին ծառայելու համար Արաքսի վրա, այնքան ուժգին իր հոսանքով, այնքան յինթական կատաղի հեղուզուկներ, և այստեղ վախտուն կամ թիերս ուղղություն չկար։... Գետը այստեղ հոսում է արևելյան ուղղությամբ դեպի Որդուբադ[2] (Ardúbád), մի ավան այստեղից հինգ կամ վեց փարսախ հեռու, գալով հյուսիսային արևմուտքից։ Սակայն Նուզհատ ալ Ղալուբ (Nuzhat al Calub) իր լոր ձեռագրներում, վոր յես տեսել եմ և իմ ուշնցած լավագույն ձեռագրում, ծայրահեղ մի սխալով գրում է այսպես. «Արաքս գետը հոսում է հարավից հյուսիս։ Նա սկիզբ է

առնում Կալի Կելանի (Kali Kelán) և Արզին առ' ռումի (կամ Արզերումի) (Arzen ar' rum, Arzerúm) լեռներից, անցնում է Արմենի (Armen) կամ Հայաստանի (Armenia), Ադրբեջանի և Արրանի (Arran) շրջաններից, և իր ջրերը միացնելով Կուրին և Կարասուին Գուշտսաֆի (Gushtsáfi) նահանգում թափվում է Խոզարի ծովը (Khozar = Կասպից ծովը)։ Նա վոռոգման մեծապես առաջացնում է յերկրագործությունը այն յերկրների, վորոնց միջից անցնում է։ Նրա ընթացքի յերկարությունը հարյուր հիսուն փարսախ է»։ Արաքսի] ընթացքի ուղղության մասին ավելի ճշտությամբ նկարագրում է Աջայեբ ալ բելդան (Ajáieb al beldán), ասելով. «Հոսում է արևմուտքից արևելք։ Նրա աղբյուրը գտնվում է Հայաստանի լեռներում և նրա հոսանքը ծայրահեղորեն արագ է։ Սա բախտավոր կամ որհնված մի գետ է»... Յես նախապես նկատել եմ, (Տես, Հատ. II. էջ 328), վոր Սարարոն և Դիոսկորոս Պերսեպոլիսի մի գետ անվանում են Արաքս։ Սարարոնից և Սոկրատես Բյուզանդիոսից իմանում ենք նաև, վոր Պենեոս (Peneus) Թեսալիայում նույնպես կոչվում եր Արաքս։

Հյուսեյին խանը յերբ վերադարձավ պարսիկ հրամանատարի վրանից, գտավ վոր յես գտնորեն գանգատվում եյի կատապի քամու դեմ, վոր ավազի խիտ ամպերով խեղդում ու կուրացնում եր մեզ։ «Մի կարծեր թե դա չարիք է,— ասաց նա,— մենք լավ ևս պարտական ենք քո լավ բախտին, և քո բնիգուշակ ժամադիտակին (horoscope, պարսկերեն t'aliaa), վոր այս քամին պատահած է՝ դովացնելու համար ոդը, վորովհետև առանց նրան, շատ քիչերը պիտի տեսկային արևի ծայրահեղ տաքին, այսպես քեզ նման ժամերով մնացած անասներ ափում»։ Վերջապես յերկար պայքարներից հետո տեղ գտանք նավում, թեև տանուբեր կամ քսան զինվոր բռնությամբ ներս մտան, նավարկեցինք մարտական կամ պարտկական ափից և ցամաք իջանք Հայաստանում։

Պարսիկ ամբոխի առթած ընդհանուր յեռուզեռի ու շփոթության մեջ, մեր մարդկանց հոգի զեկավարության հե-

անանքով, մեր բեռնակիր ձիերից շատերը մոլորվեցին և մի ժամից ավելի տևեց մինչև վոր հավաքեցին նրանց և կրկին բեռցրին։ Այս հապաղման միջոցին չես մղվեցի չերկու կամ չերեք անգամ առատորեն խմելու գետի ջրից, վոր թեև արագ հոսանքի պատճառով ավազախառն եր ու պղտոր, բայց այդ ժամանակ վորովհետև տաք եր ու չես ծարավի, ինձ թվեց ծայրահեղորեն անուրժելի։ Վերջապես ճամբա չկանք և անցանք խորտուբորդ ու ամայի մի չերկրից մոտ չերեք մղոն, ապա սկսանք իջնել մի զառիվայր լեռնային ճանապարհից, և տեսանք Ջուլֆայի (Julfa) [Ջուղա] միացորդները, այժմ կատարելապես ավերակ մի քաղաք, գետեղված Արաքսի ափում, արտակարգ չերևույթով ժայռերի ու լեռների մեջ, և նրա մոտ կան մի ամբողջ ու մի փոքրիկ աշտարակիր ավերակներ։ Մենք զարձանք նրա շուրջը, գետի մոտ, վոր հոսում եր մեր ձախ կողմը, և այ կողմը այս ժայռերի առոտում անցանք վճիտ ջրի մի գեղեցիկ աղբյուրից, վոր կոչվում եր չաշմե-ի-գուլիստան (chashmeh-i-gulistan), կամ «վարդանոցի աղբյուր», և մոտ ժամը չերեքին հասանք Ջուլֆա, նավից հինգ կամ վեց մղոն ձգտավարելուց հետո, վոր ժամանակ Հյուսեյին խանը մատնանշեց հեռու Հայաստանում, Կուհ-ե-Մար (Kuh-e-Már) կամ «ձիերի լեռը», այսպես անվանված այն [հանդամանքից], վոր անասնական թվով, ասում են թե, այդ սողունները վորոշ չեզոնակի հավաքվում են այնտեղ և վորոշ խմբերով, ժարդկանց նման, կռվում են։ Իմ մենգիլը (ոչխարները), լավագույնը վոր Ջուլֆան կարող եր տալ, մի խեղճ հայի խոնարհ բնակարանն եր, վոր ցույց ավեց մեծ հյուրասիրություն և շուտով հայթհայթեց մի ճոխ ճաշ՝ հավկեղեն, հավկիթ, լավ կաթ, կարագ ու հաց, բացի ձկնից, վոր չես տեսա կենդանի, նոր բռնված Արաքսից, ոնից քսան քայլ այն կողմ։ Այս [բնակարանը] բարձրացված եր մի հին ու կիսակործան քարվանսարայի պատի կողքին, վոր տակավին պահում և իր գեղեցիկ քարե դարպասը[3]։

Հաջորդ առավոտը [վեցին] շատ կանուխ չես հետազոտեցի Ջուլֆայի գլխավոր ավերակները, ուր քառասունհինգ

հայ ընտանիք, չերեսուքսանից ամենատարին դասից, կազմում եր ամբողջ բնակչությունը։ Բայց նրա նախկին բնակչության մասին լռվին վկայում և ընդարձակ ու խոնված գերեզմանատունը, գետեղված գեպի գետ իջնող մի զառիվայրի վրա, և ծածկված ուղիղ կանգնած բազմաթիվ գերեզմանաքարերի շարքերով, վոր չերբ դիտվում և մի քիչ հեռվից, նմանում և զինվորական վաշտերի, շարված խիտ կարգով։ Բայց այս շատ սերունդների հիշատակարաններն են, հանրագումարը բազմաթիվ դարերի, և չես շատ համ կասկածում թե այս քաղաքի նախկին մեծության ու փառքի մասին տեղական տեղեկությունները վստահության արժանի լինեն։ Տները կառուցված են գլխավորապես քարից, և ընդհանրապես շատ վոգորմելի բնակարաններ են։ Հին չեկեղեցու մոտ, — ուր մի գեղեցիկ շիրիմի հուշարձանը տակավին մնում և հայերեն արձանագրությամբ և զարդանկարներով, — մի բարձրությունից չես նկարեցի մի կամրջի[4] միացորդները,



Ջուղայի կամուրջի ավերակները, (նկար Սուզեյի)։

վոր վոչ շատ հեռու, քաղաքից ներքև, յերբեմն գտնվում եր Արաքսի վրա, և վոր վերջանում եր մարական կամ պարսկական ափում մի եմարեթով (emâret) կամ մի շինք, վոր վոմանք կոչում եյին ամբոց, և վոր թվում եր թե մի դռան անցք եր (gateway): Սրանից այն կողմը, միացած ժայռերին, տեսարանը ներկայացնում է բաղմաթիվ սեպաձև և բարձր լեռներ, վորոնք տալիս են արտակարգ մի դիրք: Ժայռերի շատ հսկա գանգվածներ վերջերս վայր են ընկել յերկրաշարժի ժամանակ, և հիրավի ամբողջ յերկիրը, շատ մզոններով Ջուլֆայի շրջակայքում, խոսում է բնության հին ու ամենազարհուրելի տատանումների մասին, վոր թվում է թե լեռները բաժանած են անսովոր ձևերի, նրանց տեսքը զարձնելով բեկանված ու անկանոն: Յես անցա շատ ալտերից՝ այցելելու համար գյումբեդ-ի-դուխտերը (Gumbed-i-dukter) կամ «Որիորդի աշտարակը», անսովոր ճարտարապետության մի կառուցվածք, շինված, ինչպես ավանդությունը պատմում է Խոջա Նազարի[5] աղջկան կողմից կամ նրա համար, մի հարուստ վաճառական, վորի ծախքով նույնպես կառուցված է մի քարվանսարա պարսկական ափում և մի ուրիշը դեպի հայկական կողմը, և հասարակական սպասարկման ուրիշ շինքեր: Որիորդի աշտարակը թուխ-կարմիր քարից է, վորի վրա գյուրությամբ կարելի չի փորագրել, նույնիսկ զմելիով, ինչպես յես փորձեցի. փորագրելով իմ անվան սկզբնատառները: Հիմքը քառակուսի չի, յուրաքանչյուր ճակատում յոթը յարդա, իսկ վերի մասը բազկանում է տասնյերկու յերեսներից: Այն զծագրությունը, վոր յես արի, լավագույն կերպով նկարագրում է այս կառուցվածքի պլանը և յերևույթը: Դա գուլյ է տալիս յերկու դրան անցքերը, մեկը, (ամենանշանավորը) շատ ցած, մուտքն է մի կամարակապ սենյակի, վորի ձեղունում կա մի կլոր բացվածք, վորից յես տեսնում եյի վոր վերևի սենյակը պրավել եյին մի քանի աղավնիներ, և թե պատերի վրա վոչ արձանագրություններ կային, վոչ նկարներ, վոչ էլ վորևե առարկա արժանի մանրամասն քննության: Որիորդի աշ-

տարակը դրսի կողմից ներքորեն զարդարված է ծաղկաքանդակներով և մի կարգ բաժանմունքներում ցանցավոր զար-



Որիորդի աշտարակի մնացորդները, (նկար Աուզելյի)

դանկարով, նույնպես մի բորդեր (յեզերք) վերին սենյակի ներքևում, այնքան նման հնագետների Maeander կոչվածին, հաճախակի նկարված հունական կամ հռոմեական վազերի վրա, այսպես [illegible]: Վորովհետև Խոջա Նազարը, վորի աղջկան համար ասում են թե այս շինքը կառուցված է, ժամանակակից եր Շահ Աբբասին, նրա հնությունը յերկու հարյուր տարուց ավելի չի կարող լինել: Սակայն, ուշադրության արժանի համարեցի յես այն, իր յեզակի ճարտարապետության համար: Բացի ավերակ կամրջից, կան նաև հետքերը մի ուրիշի, նմանապես շինված քարից և ավելի մոտ քաղաքին, թե սրանցից մեկը այն է, վոր հիշատակում է Համդուլահը և Շերիֆ ադ'դին Ալին: Ասում են թե Շահ Աբբասը քանդեց յերկրի բոլոր կամուրջները, վորպեսզի թուրքերը կասեցվեն իրենց թշնամական արշավանքներից,

բայց հավանորեն ժամանակից առաջ Արաքսը տեղն ավել և նրանց կործանման, համաձայն այն գեսի անզուսպ նկարագրին, ծանոթ կլասիկների ընթերցողներին Վիրգիլիոսի խոսքերից. «pontem indignatus Araxes». (Յենեական, lib. VIII. V. 728). չես չեմ փորձում գանել թե այն արդի կառուցվածքի տեղում թե մերձակայքում կանգնած եյին այն հին կամուրջները, որոնք «indignant Araxes» անվանած եր կրել Քսերքսեսին, Ալեքսանդրին և Ղուստոսին։

Նախապես հիշատակված եր թե (Ouseley, «Travels» III էջ 47) Շահ Աբբասը Ջուլֆայի բնակիչներին փոխադրեց Սպահանի արվարձաններից մի վայր, որին նրանք իրենց նախկին հայկական բնակավայրի անունը տվին։ Այն մի քանի տնվորներից, որ այժմ ապրում են Ջուլֆայում, հինգ կամ վեցը միայն իմ ծանոթ եյին, որ մի ժամանակ [անգլիական] դեսպանի մոտ, ներկայացնելով իրենց ծայրահեղ աղքատությունը, այն հարստահարությունը որ կատարվում է սերբազների դորանավաքի առթիվ առնված դանձումների պատճառով, և խնդրում եյին նրա միջամտությունը՝ բարելավելու համար իրենց թշվառ կացությունը։ Նրանք ինձ տեղեկացրին, որ քաղաքի մոտ գտնվում է քրիստոնյաների մի հին ադոթավայր, (որ պարսիկները կոչում են Քիլիսիա Լատինի (Kelisiá Latini) կամ «Լատին եկեղեցի». չես հիշատակել եմ մի ուրիշը, կատարելապես ավերակ, և ասին որ ժողովուրդը բնդհանրապես հավաքվում է շատ պարզ ու կոպտորեն կառուցված մի դմբեթի (gumbed) կամ աշտարակի մեջ, կատարելու համար իր կրոնական արարողություններ։ Այստեղ չես նկատեցի որ ամբողջ ընտանիքներ գնում են բացօթյա, որ միայն պարզապես տների կառուցների վրա, (սովորական այլուր տաք եղանակի ընթացքում), այլ թաղիքների կամ կապերտների վրա, սփռված գետի եղերքը։ Թե մարդիկ և թե կանայք, (պետք է ի նկատի ունենալ թե նրանք աղքատ են), թվում է թե չերը նրանք անկողին են մտնում, հագիվ թե փոխում են այն հագուստը, որ կրում են ցորեկվան ընթացքին, և մի կարգ փոքրիկ տղաներ ու աղջիկներ վայելում են գրեթե կատարյալ մերկության շռայլությունը։... Ջուլֆայում չես անհրաժեշտ համարեցի ամբողջ գիշերը իմ անկյակի դուռը ու պատուհանները բաց թողնել, և հետևաբար շատ զարմանք չպատճառեց ինձ, չերբ առավոտ գտա մի ծեր ընտանի կատու, տարածված իմ անկողնու վրա, և հինգ կամ վեց գառնուկ, բացի բազմաթիվ վառելանյութից, հավաքված նրա շուրջը, նրանք հաճախ այցելած եյին ինձ նախորդ որը։

Ջուլֆայից մեկնեցինք չերեկոյան ժամը տասին, և հասանք Նախիջևան (Nakhjuán, Nakhchuán) [ամսի] յոթին, առավոտյան ժամը վեցից քիչ առաջ։ Հեռավորությունը այս չերկու տեղերի միջև կարելի չե համարել քսանվեց կամ քսանութը մղոն։ Ճանապարհը ընդհանրապես շատ լավ է, բայց կտրատված շատ առուներով։ Ձերը կես ճանապարհին եյինք, արշալույսը տակավին չերացված, ճանապարհի կողքից մացառների մեջ թաղնված մի մարդու կանչը սթափեցրեց մեզ։ Մուստաֆան, բարբարոս[6] պատասխանեց, և դրեթե անմիջապես հետո արձակեց իր չերկարափող տոպրակը, (այն որ թուրքերը այնքան ընդհանրապես կրում են իրենց գոտում), ուղիղ այն տեղի վրա, որտեղից ձայնը լսված եր, և հանձնարարեց որ մենք մի քանի հարյուր յարդա քառասմբակ առաջ անցնենք, յենթադրելով որ ավազակները կարող են թաղնված լինել սպասելով մեզ։ Թե ինչ եր իր կրակոցի արդյունքը, մենք չերբեք չիմացանք, բայց հավանական և որ շատ անմեղ մարդկանց կյանքը այսպես զոհվում է թուրքերի արատորանքին ու մեղապարտ պատրաստակամության՝ իրենց չերկար դանակների և սարճանակի գործածության առթիվ։ Այն ճանապարհից, որ մենք մոտենում եյինք, Նախիջևանը չերևում եր մի տափակ դիծ՝ ծառերի ու պարեզների, հողե տների և ավերակ պարիսպների, մի գմբեթով կամ կառուցվածքով, որ հետ այստ ավելի մանավորապես պիտի նկարագրվի։ Բայց այս գծի ձախ կամ արևմտյան կողմը չերևում եր փառահեղ

Արարատը, հիսուն կամ վաթսուն մղոն հեռու, մոր թվում էր մոտ, և այս կետից նմանում էր մի հսկա բուրգի, կատարը և կողքերի մի մասը ծածկված հավիտենական ձյունով, մինչ հիմքը փաթաթված էր և թաղնված մշուշի մեջ...

Բայց մեզ դիմավորիցին ոչխարը կամ տասը ձիավոր, որոնք չեկած նկին բարի գալուստ ասելու մեզ, նրանցից մեկը տեղեկացրեց ինձ որ այդ միջոցին կառավարիչը գտնվում էր Թավրիզում, և նրանք առաջնորդեցին մեզ գերեզմանոցի միջից, և անցանք վճիտ ջրի մի գեղեցիկ գետակից, որի վրա չորրորդն կար մի վայելուչ կամուրջ, (որից տակավին մնում են ութը կամ ինը կմախքները կամարներ) և գնացինք մեր պատկան ոթևանները (mensils): Իմ [ոթևանը] մի լավ տուն էր, ուր պատրաստ էր մի ճոխ նախաճաշ՝ հիանալի հաց, հավկիթ, կաթ ու կարագ, բացի կեռասից, ծիրանից և խնձորից, մատուցված հին գեղեցիկ հախճապակյա ափսեների ու պնակների մեջ, իրական չինական ամանեղեն: Ձերեկոյան ինձ այցելեց կառավարչի լեզվապյորը, մի չորրորդ տարի, որ սարհանգի (sarhang) աստիճանն ուներ, կամ ապա նոր դինվորական Նիզամի (Nizam), ոչինչը չեվրոպական դինակրթության, Մայոր Քրիսթիի (Christie) հրամանատարության: Հնության գլխավոր հուշարձանը այստեղ, նրա տեղեկության համաձայն, մի բարձր գմբեթ (gumbet) կամ աշտարակ էր, անճանոթ տառերի արձանագրություններով, և Նախիջևանի մոտ գտնված են բաղմաթիվ հին գրաճեռ, որանք, նա ասաց, թե Դակիանոսի (Dakianus) գրաճեռ են, մի անուն, ինչպես չես հետաքրքրվի, որ այն տեղի մարդիկ վերագրում են այն մեծ տապանքին, որ նրանք չեն հասկանում. որանք, նա ասաց, սովորաբար տրվում են կանանց կամ չորեքանքերին, որոնք կրում են որպես զարդ: Մեր խոսակցության ընթացքում այս մտացի սարհանգից չես իմացա թե Որդուբադում (Ardúbád) (մոտավորապես տասնչորսու փարսախ հեռու), կենդանի տեսակի մի ծառ կա, որ չենթադրվում և թե հազար տարուց ավելի հին է, (նրա բունը գատարկ է, բայց վերի ճյուղերը տակավին կանաչ), գրնեն պաշտվում և տեղի բնակչությունից, որոնք նախապաշարյալ խնամքով պաշտպանում են ինասի դեմ, և նրա հանդեպ ունեն հարգանք որպես փերի (pir) կամ կրոնական հոչակով ալևոր անձնավորության, և նա ավելացրեց, թե այն անձինք որոնք բռնված են ջերմով և դողով (tab-u-larz), կամ որևե ուրիշ հիվանդությամբ, փուշում են այս ծառի առջև և չերևակայում են թե նայում են մի չինի (jin) կամ գերբնական մի էյակի պատկերին, և ապա դիմում են նրան՝ նրա ճյուղերին կապելով ցնցոտիներ կամ լրենց հագուստի փոքրիկ կտորները: Նա ասաց նույնպես, թե մերձակա լեռներում կան կոշտ քարեր, որոնց հանդեպ գյուղացիները Որդուբադի ծառին հավասար հարգանք ունեն. այս բոլորը նա գատապարտում էր որպես հին բուտ-փերեզտի (but-perezti) կամ կռապաշտության մնացորդները, որոնք մնում են այն ժամանակից ի վեր, յերբ Նոյը և իր ընտանիքը իջան Արարատ լեռնից: Մի ուրիշ անձ խոսեց մի ավերակ աթեշ-խանեյի (atech-kháneh) կամ կրակի տաճարի մասին, Նախիջևանից հինգ կամ վեց փարսախ հեռու, բայց դժբախտաբար, ինչպես վերոհիշյալ ծառը կամ քարը, որ չես ցանկանում եյի այցելել, մոտ չեյին, և չեյին գտնվում իմ ճանապարհի վրա:...

[Հուլիսի] ութին ժամը վեցից քիչ հետո սկսա հետադարձ ճանապարհորդությունս դեպի Նախիջևան, իր անկման շրջանում իսկ ընդարձակ, վորի մեծագույն մասը բաղկացած և ավերակներից, որոնց մեջ կան հիանալի տների մնացորդներ, և ամայացած փողոցներից մեկում մի հստակ վտակ, վորի ձուկը մաս էր կազմում իմ վերջին ճաշին: Նախապես հիշատակված աշտարակը (gumbed) պարունակում է մի ընդարձակ կամարակապ սենյակ, վորի պղյուսյա պատերը ներսից կատարելապես նկարված են, բայց դրսի կողմից կա մի քուֆի (cúfi) արձանագրություն, փայլուն կապույտ կղմինարի վրա, բավական մաշված: Այս չորրու շենքերն էլ չես նկարեցի: Այսքան ավերակների ու ամայության տեսարանի մեջ, բավական հաճույք պատճառեց չորրու-չորեք չորիտասարդ կանանց հանդիպումը,

վորոնք իրենց քաղերը բարձրացնելու մի թեթև կեղծ հաճատություն անելուց հետո, ցուցադրեցին իրենց ծայրահեղորեն սիրուն դեմքերը, բայց թավրիզից մեր մեկնումից ի վեր, չես նկատել նրի կեղծ-համեստության ատելիական նվազումը: Այստեղի կանայք, պարսկաստանի հարավային նահանգների կանանց նման, այնքան էլ շփոթելիքյան չեն մատնվում. երբ մենք անցնում ենք նրանց տան մոտից արևածագին, տեսնում ենք նրանց ծուլած՝ կապերտով կամ թաղիքով ծածկված խուրսիների (cursi) վրա, կամ իրենց կուրծների վրա պառկած լեհաֆների* (lehâfs) տակ: Նախ- ջևան, ուր մենք շատ նեղվեցինք տաքից, ձմռան կարող է տաստիկ ցուրտ լինել: Տորբին դասի մարդիկ, ինչպես ամեն տեղ, այստեղ ու Ղազվինի մեջ, խոսում են միայն թուրքերեն, նույնիսկ աղնվական դասին պատկանող մի մարդ, վոր այստեղ այցելեց ինձ, դյուրությամբ կամ սահուն կերպով չեր խոսում պարսկերեն:

Նախիջևան անունը (Nakhjewán կամ Nakhchuán) հաճախ հանդիպում է Պտղոմեոսի (Lib. V. c. 13) Naxouana-ի տեսքով, այսպես անվանված յերկրորդ դարում:... Պարսիկ աշխարհագիրները Համդալլահ... հիշատակում են կղմինարյա շենքերը, յորենը, բամբակը և պտուղները և այս քաղաքի սպիտակամորթ բնակիչները, վորին, ասում և նա, պատկանում են մի կարգ հողամասեր և դրամավոր բերդերը, ինչպես Ալենջեի (Alenjek) [Յերնջակ], Սուրմարի[8] (Surmari) [Սուրմարու], Մուղան (Mughán) և ուրիշները: Սադրի Իսֆահանիից (Sadek Isfahâni) իմանում ենք վոր Ուչ-Քիլիսեյի (Ouch Kelisia) կամ «յերեք եկեղեցիների» [Էջմիածին] վանքը պատկանում եր Նախիջևանին, և ըստ Մովսես Խորենացու, Մարաց նրա հողամասերի մասն եր կազմում. (Աշխարհագրությունն, եջ 360): Յերկու վայրերն էլ պարսիկ աշխարհագիրները դնում են Ատրպատականի (Azerbaiján) նահանգում, թեև բաժանված իրարից Արաքս գետի այդ մեծ բնական սահմանով, և

* Լեհաֆ նշանակում է վերմակ:

նրանք վորոշ ատելյան միացած են ավանդությամբ, ըստ վորում Նոյը թաղված և Նախիջևանում և նրա կինը Մարանդում, այս յես լսեցի յերկու տեղումն էլ, և նույն բանն հիշատակում և նաև ատանդիերորդ դարում Տավերնիեն (Tavernier, Voyages de Perse, Liv. I. p 43. 1679): Յերբ 1253-ին Ռուբրուք Լուիզ Թ-ի կողմից ուղարկված դեսպանությունից իր վերադարձին այցելեց Naxuam (Նախիջևան), այդ քաղաքը,—յերբեմն շատ գեղեցիկ և մի մեծ թագավորության մայրաքաղաք, — նույնիսկ այդ ժամանակ գտնվում եր այսպիսի ավերակ վիճակում, վոր կատարել ելին թաթարներն ու սարակինոսները, և հայերի ուխտարյուր* եկեղեցիներից միայն յերկուքը մնում ելին, այն էլ ամենափոքրները միայն:

Յերեկոյան մենք վերսկսանք մեր ճանապարհը և ձիավարեցինք Նախիջևանի ավերակների մեջից գրեթե յերկու մղոն, մինչ արևը Աբրահամ լեռնում մայր եր մտնում, կրկին յես հրճվանք ունեցա [տեսնելու] այն հոյակապ տեսարանը, վոր արդեն փորձել եմ նկարագրել: Բայց, յերբ մենք և մենք առաջացել ելինք բազմաթիվ փարախ մեր ճանապարհից, նրա մեծ ու փոքր կատարները վորոշակի կերպով տեսանելի ելին և յես նկարեցի Ջեմեն-ի-Շարուրից (Chemen-i-Shérur) [Շարուրի դաշտը]: Սա մի ընդարձակ ու գեղեցիկ դաշտ է, վոր ասում են, թե պարունակում է քսանվեց գյուղ և վոռոգվում է բազմաթիվ վտակներով, վորոնցից վոմանք կարող են կոչվել բավական մեծ գետ, և բոլորն էլ թվում և թե ունեն բազմերանգ ձկներ. առնվազն հետևյալ ջրանցքներից անցանք և տեսանք հավանորեն մի հարյուրից ավելի, շինված ջրաբաշխության համար, և այս հողամասը այնքան լավին վոռոգված և, վոր արտադրում է ամենաճոխ բուսականություն, և լիառատ բլրենի, յորենի ու գարու, հունձք, բացի բամբակից և հնդկայուղի բույսից[9] (castor plants): Նույնիսկ այն վայրերը, վորոնք մշակված չեյին բուսած եյին մեծ առատությամբ ծաղիկ և զանազան տեսակի թուփեր: Այս փարթամ ու բարեբեր դաշտը, վոր

* Ռուբրուքն ասում և ուխտուն և վոչ թե ուխտարյուր. (տես «Ուղեգրություններ», հատոր Ա. եջ 16):

պատմաբաններից մեկը՝ «Նախիջևանի Շարուրը» համարում և 1531 թվի նշանավոր ճակատամարտի վայրը, յորում հաղթական պարսիկները ջարդեցին քառնհազար թուրքմեններին։ Դյուղերի մեծագույն մասում տեսանք ընտանի արագիլներ և բազմաթիվ շատ խոշոր ու ահարկու շներ։

Մեր մատղաշ մեցգիլը Յեննիջանն[10] եր (Yangijan), բայց այնտեղ բոլոր տները լքված կային, այն գինվորների սարսափից, որոնց մենք թողել էինք Արաքսի [ափին], որովհետև պարսկական և թրքական գինվորների անցքը բարեկամ յերկրի միջից, հաճախ այնքան չարիք և համարում, որքան մի թշնամի բանակի առաջխաղացումը։ Հետաքր հետո, մենք հինգ կամ վեց մղոն ևս առաջ գնացինք և [ամսի] 28-ին կանուխ լքնանեցինք Դուզանգա[11] (Dudangah) նախիջևանից մոտավորապես քառասուն մղոն, տանջված տաքից, լուերից, մժեղներից, մինչև [հուլիսի] սաստիկ ժամը յերկուքը, յերբ առավոտը, տակավին մութ, մենք ճամբա յելանք և հասանք Դավալու[12] (Develú), 28 մղոն։ Ճանապարհորդությունից հետո, ընդհանրապես չոր ու անբերրի դաշտագետնից, ուր վոչ ծառեր կային և վոչ էլ տներ, Դավալուում յես ոթևանեցի նվազ կեղտոտ մի հյուղակում, և ուրախությամբ մեկնեցի այնտեղից կես գիշերից քիչ հետո, և քանի մղոն առաջ յերթալուց հետո հասա Յերեվանի կանուխ տատնմեկին [հուլիսի]։ Այս քաղաքի մոտ հանդիպեցինք հարյուրապետ Մոնտեֆել[13], իր ձիավոր հրետանու մի խմբի հետ, պարսիկները վորոնց նա հետևակորեն մարզած եր յեվրոպական վոճով։ Նրանք ընկերացան մեզ մինչև քաղաքը, ուր մի հարկաբաժին պատրաստված եր Հյուսեյին Խանի (Husein Khán) պալատում, անդամ կաջար (kajar) արքայական ցեղի, այս նահանգի կառավարիչը և սարդար (sardar) կամ գեներալ, հրամանատար հյուսիս-արևմտյան սահմանների, մեծ կարևորություն ունեցող մի դիրք, վորովհետև ուռանները, այժմ թշնամի, իրենց հառաջապահ դիրքերը հաստատել են նրա բանակատեղի մոտ, վոր Յերևանից մոտ քսան մղոն հեռու է։ Անմիջապես յես այնտեղ ուղարկեցի մի պատգամավոր՝ խնդրելով սարդարից վոր ինձ [տրամադրի] այնքան պահակազոր, վոր կարողանամ պաշտպանել ինձ յերկրի այն մասում, ուր ըստ լուրերի վխտում են թափառական քուրդերը (Curds) կամ ուրիշ ավազակներ։ Միաժամանակ տեղեկացա վոր այս գեներալի կառավարության ընթացքում պաշտպանության ու առավելությունների շնորհիվ Յերևանը մի քանի տարվան ընթացքում չորս հազար բնակչությունից բարձրացած է տասնյերեք կամ տասնչորս հազարի։ Այստեղ հանդիպեցինք վիրավորների կեսը լի են ավերակ տներով, բայց մինչնարերդը ամենահատաբյալ վիճակումն է, և համարվում է Շահի տիրապետության ամենաղորավոր բերդը։ Իմ տեղյակի պատուհանից տեսա ներքևում Զանգու գետն եր հոսում. նրա ջրերում կան բավական խոշոր չափով կարմրախայտ և իշխանաձուկ, բայց ասում են թե վարակված է, մերձակա հողամասից վատառողջ ջրի խառնումի պատճառով։

Այստեղի անունը վոր գրվում է՝ Irván և արտասանվում է ընդհանրապես յերեք վանկով, (յերկրորդը կարճ), Iravân կամ Eriván, թեպետ կարողանանք մի հետք գտնել նրա բուն հիմնարկության, յեթե հավատ ընծայվի Մովսես Խորենացուն, վոր Քրիստոսից հետո հինգերորդ դարում գրեց իր Հայոց Պատմությունը. նա ասում է (Գլուխ Բ. գլ. 39) թե Յերվանդ (Eruand կամ Erouand), Պարսկաստանի թագավոր վերջին Դարեհին ժամանակակից մի իշխան, կառուցեց յերեք քաղաք, մեկը կոչված իր անունով՝ Յերվանդակերտ («Յերվանդի քաղաքը»), կարող է հավանորեն լինել այս, վորի մասին խոսում ենք։ Սակայն, հայերը վորոնք քիչ անգամ մոռանում են իրենց մեծ նախահայր Նոյին, յերևակայում են վոր Յերևանը (Eriván), «երևալ» նշանակությամբ, պետք է լինի այն շրջանը, վոր առաջին անգամ յերևաց նահապետին [Նոյին], յերբ նա իջնում եր Արարատ լեռից. («Quia regio esta primo *apparuit* Nöe, cudescenderit ex Monte, Ararat» see «Villote's Dict. Arm. p. 273)։ Հանճարեղ Անքետիլ (Anquetil) Թևադրում է վոր Eriván անունը նմանություն ունի Eeriené

veedjo կամ Iran vedj-ի հետ, մի վայր որ հիշատակվում է Ջենդավեստայում իր անդուգական գեղեցկության ու հնության համար, առաջինը արտադրված Արամազդի (Ormuzd) կամ բարության մեծ սկզբունքի կողմից (Zenda. Հատ. Ա. Մաս. 2. եջ 263, 264, 301)։ Յետ տեղյակ եմ նաև, որ բանաստեղծ Հուիստոնն (Whiston) յեղբայրների կողմից պատրաստված մեծ Հայաստանի աղքատիկ ու անբավական քարտեզում, որ կցված է նրանց խմբագրած Մովսես Խորենացու հրատարակության, — Յերևան նկարագրված է որպես հին Վաղարշապատի (Valarsapata) տեղը։ Սակայն, Շարդենը (Հատ. II, եջ 224, Rouen, 1723) կարծում է որ Յերևանի ծագումը ավելի նորագույն է, որովհետև հնության հետքեր չկան այնտեղ, բայց այս ուղղությամբ նկատված պակասությունը, (ինչպես նկատել եմ նախապես), կարող է սխալ դատանիշ լինել։ Կարծիք են հայտնել թե այս վայրը Պտղոմեոսի (Lib. v. c. 13) Terva-ն (Τερούβα) է, և թեթե մենք չենթադրենք թե նրա ձեռագիր օրինակներում հունարեն T յերկարացնելով նրա հորիզոնական գիծը, դրված է I գրի տեղ, և այնպես դարավոր նմանություն կարող է լինել Ierva-ի և Trava-ի միջև, ինչպես մի շատ հին ու նոր անուններն միջև, որոնց քննությունը չերբեք վնաս առարկա չի յեղած։ Աշխարհագրական դիրքով դուգադիպությունը դրեթե կատարյալ է, Պտղոմեոս, Terva-ն նկարագրում է՝ յերկարության 78·0, լայնության 41—50, և ըստ Շարդենի Iravan, յերկարության 78—20, լայնություն 41—15։... Յերբ տեղումն հին չես չհի խմանում որ Յերևանում վոսկի և արծաթ դրամներ կտրված հին, մի բան, որ հետ Ամասիայում իմ ձեռքս անցավ, հետևյալ արձանագրությունն ուներ. «Կտրված Զուխուր Սահատում, Յերեվան 1225 տարում» (1810), ըստ իմ տեղեկության թրքերեն լեզվով Զուխուր նշանակում է բնակավայր և Սահատ մի նշանավոր անձնավորության անուն և՝ իր մեջ այստեղ չես հարցրի Մարանդում գտնված դրամների մասին, բայց ձիապաններից մեկը ինձ բերեց Յերևանում մի արծաթ մեդալ, որի մի երեսում կար կապադովկիայի Արիարաթեսի (Ariarathes) գլուխը և մյուս կողմը այս բառերը՝ ΕΥΣΕΒΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ։

...Հաջորդ որը [հուլիսի 12-ին], իմ պատգամավորը վերադարձավ և բերեց սարդարի շատ քաղաքավարի հրավերը, և վոր խոստանում եր տալ իմ պահանջած պահակազորը։ Ըստ այնմ, առավոտերեքին մեր խմբի մեծ մասը ծանր բեռների հետ Մուստաֆայի դնկավարությամբ ուղարկած լինելով Ոչ-Քիլիսե կամ «Յերեք եկեղեցիները» [Էջմիածին] յես ճամբա յելա հարյուրապետ Մոնտիեթի, Մր. Պրայսի, մեհմանդարի և յերկու կամ յերեք ծառաների հետ և ուղղվեցի դեպի Աշտարակ (Ashtarek), վորի բնակչությունը ասում են վերջին մի քանի տարիներում նվազել և, հազար ընտանիքից, միայն քսանն են մնացել, բոլորն էլ հայկական հավատքով։ Այս վիպական ու գեղեցիկ վայրում, — Յերևանից մոտ տասնյերեք մղոն հեռու, (և չրված մի սիրուն գետով, վոր առատ կարմրախայտ ունի),—մենք նախաճաշեցինք, և քննեցինք քարաշեն հին եկեղեցիներն ու տները, հետո դնացինք հինգ կամ վեց մղոն, գրեթե հյուսիսային ուղղությամբ, և իջևանեցինք պարսկական բանակատեղը, վոչ շատ հեռու Ալագյազի և Ապարանի լեռներից։

Սարդարը ինձ ընդունեց շնորհալիորեն և իմ տրամադրության տակ դրավ իր յեղբոր պատկանող փառավոր ու բարձր վրանը, հանավորված հարուստ վարագույրներով։ Այստեղ զանազան ուտելիքներ տվին, և շրջապատի զինվորական յեռուզեռը շատ մեծ հաճույք եր պատճառում ինձ։ Բանակած զինվորները բաղկանում եյին՝ հիմնադրույթ պարսիկ և հազար թուրքմեն հեծելազոր, յերկու կեշուն (keshún) կամ վաշտ կանոնավոր սարբազ հետևակ զինվոր, հազար չորս հարյուր հոգի, յերկու հազար անկանոն թուֆանգչի (tufangchis) կամ հրացանակիր, և վաթսունհինգ թնդանոթաձիգ, չորս թնդանոթով։ Այս տեղեկությունների համար յես պարտական եմ հարյուրապետ Մոնտիեթին, վոր յերեկոյան ընկերացավ ինձ սարդարի վրանը դնալու համար, ուր մենք մասնակցեցինք մի հիանալի ճաշի, և նստեցինք մոտ մի

ժամ վայելելու այդ գեներալի և նրա գլխավոր սպաների խոսակցությունը, որոնք շատ հաճելիորեն էին խոսում զանազան նյութերի մասին։ Յես տեղեկացա որ սարդարը կառավարում է այս երկիրը ամենաբացարձակ իշխանությամբ, և բռնադատում է ամենախիստ կարգապահությունը, ոչնչացնելով իշխանությունն վրէ միայն մահապատիժ տալու, այլ նաև փոխանցելու այդ իշխանությունը ուրիշին։ Նկատելով որ մի որ հարյուրապետ Մոնտիեթը անհրաժեշտ եր դահլ թեթև կերպով պատժել մի քանի զինվորների, նա [սարդարը] ամենայն պատարյունությամբ ցանկանում եր որ այդ պարոնը ապագայում սպաններ այդպիսի հանցավորներին, չեթե հարմար գտներ։ Նա թելադրեց մի նամակ ուղղված Կարսի փաշային, և մի հրաման, որ մեհմանդարը պետք եր կրեր, ուղղված Կարա Կալայի[14] (Kara Kaláa) գլխավոր Բասիմ բեկին, որ պիտի սպասարկեր ինձ վորպէս թվով ձիավոր զինվորով, բավականաչափ՝ պաշտպանելու համար ինձ Արաքսի մյուս ափից մինչև Թրքական սահմանագլուխը. վոչ մի վտանգ չեր նախատեսվում գեսի այս կողմում։ Մայրամուտին յերեսուն մարդուց բաղկացած մի պահակախումբ, փաթաթված գիշերային պարտականության վերարկուների մեջ, շրջում էին մեր վրանի հանդիպակաց կողմը, և պահակներ էին հատկացրած իմ դռան մոտ, մի պատիվ որ հավանորեն սարդարի յեղբոր համար պետք է որ լիներ, որին պատկանում եր վրանը։ Բանակատեղում չես նկատելի հարյուրավոր անգլիական հրացաններ ու ավիներ, բոլորը կատարելապես լավ վիճակում, մի պարագա որ հետևանք և այն դրամական տուգանքին, որ դանձվում և նրանցից, որոնք ջնասում կամ կորցնում են, նույնիսկ արկածով, իրենց զենքերի վորևե մասը, և ընդհանրապես այս պատժին ավելացնում են հավասար թվով հարվածներ։ Աշխատանքային մարզանքի սիստեմը, յերեում է վոր պարսիկ վաշտերը սովորել են գլխավորապես ֆրանսացի սպաներից։ Հրամանը յերբեմն արվում եր թրքերեն լեզվով, և բազմաթիվ ռուս գերիներ գործածվում էին սովորեցնելու

թնդանոթներին։ Յես լսեցի վոր Արագած (Aligaz) լեռների մերձակայքում Հնդկաստանի (Hindústân) ամենահեռավոր մասերից շատ կրոնավոր անձեր էին յեկել բնակելու համար այնտեղ։ Այս լեռները արտադրում են գեղեցիկ բուսակություն և արտակարգ բուժիչ հատկությամբ զանազան տունկեր, և այստեղից է բղխում կարա սու (Karású) կամ «Սև ջուր» գետը։ [Այդ լեռները] տալիս են նաև ծծումբ և աղ-բորակ (salt-petre), վոր ծորում է քարից սառնակտորի (icicle) նմանող կտորներով։ Բարեպաշտ հնդիկները իրենց բնակության համար ընտրած են մի կանաչազարդ փոքրիկ վայր և ժայռերի անձավներն ու ճեղքերի մեջ կատարում են իրենց պաշտամունքը։ Արագածի բարձունքներից մի սուր ու կատաղի քամի է փչում ժամերով, և թեև այն վրանը ուր յես եմ քնում, կախված վարագույրներ ունի, այսու հանդերձ գիշերային ցուրտը անհրաժեշտ և դարձնում հագուստների վերմակի պահանջը։ Նախապես շատ գիշերներ նույնիսկ ամենաբարակ սավանը թվում եր ավելորդ։

Տասնչորսին [ամսի] շատ կանուխ հնձանք մեր ձիերը, հարյուրապետ Մոնտիեթը ինձ պարտավորեցրեց՝ ընկերանալով մեզ. մենք անցանք Աշտարակի մոտից, նախապես հիշատակված գեղեցիկ գյուղը, և իջևանեցինք հայ քրիստոնյաների վանքը, ուր վանականների կողմից ընդունվեցինք մեծ հյուրասիրությամբ, տասնվեց մղոն ձիավարելուց հետո. վանքը Աշտարակից հեռու է մոտ տասը մղոն, և գրեթե նույնքան Յերևանից։ Հայերը անվանում են Էջմիածին (Edshmiazhin) և բաղկացած է իր մերձակայքում յերկու ուրիշ [շենքերից], ինչ վոր Թուրքերը վաղուց անվանում են Յուչ կամ Ուչ Քելիսիա (Utch or Outch Kelisiá), «Յերեք եկեղեցիները», վորովհետև այս անունը հիշատակվում է Թիմուրի պատմության մեջ, գրված մոտ չորս հարյուր տարի առաջ Շերիֆ Ալի Յեզդի կողմից։ Այս վանքը լավ նկատված և նախապես ուշիմ ուղեցիրների կողմից, տեսարանը ու պլանը Շարդենի կողմից տրված լինելով, ավելորդ և իմ կողմից մանրամասն նկարագրականը տալ։ Մենք ոթե-

վանեցինք հարմար հարկաբաժիններում, կահավորված աթոռներով ու սեղաններով, որոնք այժմ մեզ թվում էին բավական մեծ պերճանքի առարկաներ։ Իմ սենյակի պատուհանի մոտ կային չորեք մեծ ուռի ծառեր, ճաճած պարտեզում, որից անցնում էր վճիտ ջրի մի առվակ։ Մենք բախտավոր էինք այսպես հանդիպումն ունենալու հայր Սերաֆինոյի (Padre Serafino) հետ, որ իր ուսումը ստացել էր Հռոմում, և խոսում էր իտալերեն ու ֆրանսերեն, նա նույնպես սովորել էր մի քիչ անգլիերեն Բաղդադում Մր. Ռիչից, այնտեղի ներկայացուցիչը Արևելյան Հնդկաստանի ընկերության։ Ժամը մեկին արժանահարգ վանականները մատուցին մի առատ նախաճաշիկ։ Ափսեներն ու պնակները չինական էին, և մեզ հյուրասիրելին համով սեր, հիանալի հաց, կարագ, պանիր ու խավյար և առատ գինի։ Շուշից քիչ հետո, իմացա որ գերազուն եպիսկոպոսը, ընդհանրապես կոչված կաթոդիկոս (catholicus) կամ պատրիարքը, մտադիր է ինձ պատվել իր այցելությամբ։ Նախապես լես լսել այդ մասին, որովհետև նա հազվադեպ է լքում իր նստավայրը Ռուսաստան և գնացել էր մի ժամանակ Հնդկաստանում։ Եվ հետևաբար հայտնելի իմ ցանկությունը՝ պատահելու համար այս պատվական առաջնորդին վրաց եկեղեցու արարողական խնդրի պատճառով, և առաջարկեցի նրան ներկայանալ նրա հարկաբաժնում։ Այս առաջարկը ընդունվեց, և եկեղեցական ժամը յոթին ինձ ներկայացրին պատրիարքին, մի եկեղ ու գեղեցիկ սենյակում, որի վերի ծայրում մի բարձր թիկնաթոռ դրված էր ինձ համար, սրա մոտ կային ուրիշ աթոռներ, ավելի ցածր և ավելի փոքր, բայց պատրիարքը և իր եպիսկոպոսներից չորեքը նստել էին նահանների (nammeds) վրա, պարսկական ձեղանակով, մինչ բազմաթիվ սարքին դասի պատկանող հղերականներն ու վանականները կանգնած էին հարգալից լռությամբ։ Այս առակցության ընթացքում հայր Սերաֆինոն թարգմանիչ դեր էր կատարում, որովհետև պատրիարքը բացի հայերենից ուրիշ լեզու չէր հասկանում, թեև նա ճանապարհորդել էր Ռուսաստան և գտնվել էր մի ժամանակ Հնդկաստանում։



Պարսկական ձեղանակ (նահանի) վրա նստած հայր Սերաֆինոն

Նա շատ հարգանքով հիշատակեց լորդ Քորնուալիսին (Lord Cornwallis)։ Հաճապակյա գեղեցիկ գավթների մեջ լիմոնատ մատուցվելուց հետո, կես վերադարձա իմ սենյակը, ուր ժամը ութին, մեր դերապատիվ հյուրընկալները գիրազանցեցին իրենց հարատև հյուրասիրությունը մի ճոխ ճաշով։ Սեղանը ծածկված եր նրբորեն հյուսված սպիտակ սփռոցով և առատորեն զրված չինական ափսեներ ու պնակներ, անձեռոցներ, պատառաքաղներ և արծաթե դգալներ, ուրիշ խորտիկներէ հետ այս խնճուլքը պարունակում եր հավկեղն, յեփված հնդկահամեմով (curry powder), իշխանաձուկ, գառնուկի փիլավ ու կարկանդակ։ Ադանդերքը բաղկացած եր թարմ պտուղներից ու հիանալի անուշեղենից. շաքարեղեններ շինված Հալեբում և ուրիշները բերված Բաղդադից։ Կար վրացական կարմիր գինի, շատ հաճելի համով, բացի սպիտակից, շինված հայկական սովորական խաղողից, ֆրանսիական ոգի և արտակարգ ուժեղ արաղ, մինչ քաղաքավար ուշադրությունն տալով անգլիական ճաշակին, հայր Սիրաֆինոն մատուցեց հիանալի պորտվեյն։ Բայց այս ճոխությանմեջ նա և վոչ եվ նրա յեղբայրները չեյին մասնակցում [ճաշին], և սա համաձայն իրենց վանական կանոնների, խիստ պահեցողության յեղանակ լինելով։

Հաջորդ որը, հարյուրապետ Մոնտիեթի հետ, վոր հաճախ այցելած եր այս վանքը, յես քննեցի գլխավոր յեկեղեցին, վորի ներսը ծածկված եր խառնիխուռն մի զանգված յուղանկարի ու վոսկեզոծման, վոր հասնում եր մինչև առաստաղը, սակայն ընդհանուր տպավորությամբ բոլորովին զերծ չեր շքեղությունից։ Պատկերները մեծ մասամբ նկարկացուցված եյին սրբերի արտակարգ դեմքեր, ընկերացող գեղով. սուրբերից մեկը յերևում եր վոր մաղերն ածել ու տարածվել եյին ամբողջ մարմնի վրա։ Մենք տեսանք խորանը, մի վատված լապտեր և մի քանի գահեր, ոգուցված գորգաքանքներով։ Այս քրիստոնյա յեկեղեցին, գետեղված գրեթե այն գծի վրա, վոր բաժանում և յերկու ազգերը, ընդհանրապես թշնամի և զանազան ժամանակներ առաջացած թշնամությունների պատճառով, ներկայացնում եր մի տեսարան, վոր ամեն մի ուրիշ տեղ կարող եր ծիծաղելի թվալ, բայց այստեղ ներշնչում եր ակնածություն։ Ամեն կողմից ներս եյին հոսում ուխտավորներ, վորոնք գալիս եյին հեռավոր տեղերից, ոտքով կամ ձիով, ամեն տեսակ զենքերով զինված, ինչպես վոր սովորություն ունեն անել ճանապարհորդելու ժամանակ։ Նրանք մտնում եյին եկեղեցի, ծնրադրում եյին խորանի առաջ, համբուրում եյին սրբերի պատկերները, ապա դուրս եյին գալիս, ձիերի վրա նստում եյին և հեռանում եյին։ Ուխտավորների մեջ կային և կանայք, վորոնք ամենից շատ ուշադրություն եյին գրավում։ Նրանք ծածկված եյին սպիտակ ծածկոցներով, վորոնք ամբողջ մարմինը ծածկում եյին գլխից մինչև ոտները, և միայն մի նեղ ճեղք եյին թողնում, վորից նրանք կարող եյին տեսնել։ Նրանց ոտները ծածկված եյին սպիտակ գուլպաներով, վորոնք ամրացված եյին ծնկների տակ, և ոտները մերկ եյին մնում մինչև կրունկները։ Նրանք ոտքերի վրա կրում եյին սպիտակ կոշիկներ, վորոնք ամրացված եյին ոտների վրա ժապավենների միջոցով։ Նրանց ձեռքերը ծածկված եյին սպիտակ ձեռնոցներով։ Նրանց հագուստի ամբողջ տեսքը ներշնչում եր մեծ մաքրություն։ Նրանց ամբողջ կերպարանքը ներշնչում եր մեծ խոնարհություն։ Նրանք ոչ մի խոսք չեյին ասում, ոչ մի ժպիտ չեյին ցույց տալիս, ոչ մի ուշադրություն չեյին դարձնում ոչ մեկի վրա։ Նրանք ուղղակի գնում եյին իրենց ճանապարհով, ինչպես վոր գնում եյին իրենց նախնիները հազար տարի առաջ։ Նրանք գնում եյին իրենց ճանապարհով, ինչպես վոր գնում եյին իրենց նախնիները հազար տարի առաջ։ Նրանք գնում եյին իրենց ճանապարհով, ինչպես վոր գնում եյին իրենց նախնիները հազար տարի առաջ։

քերից, պարսիկներից և ռուսներից, ազատվել և ամբողջական ավերումից, հավանորեն նախապաշարյալ հարգանքի շնորհիվ։ Վանականները նախկին թագավորներից շատերի համակրանքը վայելած են։ Շահ Աբբասը նրանց վանքին նվիրեց բավական խոշոր մի գումար դրամ, և անիծեց իր այն հաջորդներին, վորոնք կարող են չարիք հասցնել նրանց։ Նրանց հղոր դրացին սարդարը,—վոր ինձ նկարագրեց այս սուրբ հայրերին վորպես բարի ու բարեպաշտ մարդիկ,—միշտ բարեսրտությամբ և վարվել նրանց հետ և արտոնել և նրանց պաշտպանության համար յերկու հարյուր հոգինոց մի պահակախումբ, մերժած և նրանց կողմից առաջարկված նվերները[15], հաճախ այցելած և նրանց և թեև մուսուլման, վորևե կարևոր նախաձեռնության համար դիմած և նրանց աղոթքին։ Իշխանը, Աբբաս Միրզան, նույնպես հայտարարած և իրեն վորպես նրանց բարեկամ, և վերջերս որինակելի յեղանակով պատժեց յերեք կամ չորս սրբազեղծ գողերի, վորոնք մի քանի աննշան իրեր եյին գողացել վանքից, թաղելով նրանց վողջ վողջ գլխիվայր, կամ ինչպես մի պարսիկ արտահայտեց ինձ, անկելով նրանց վոտքերը ոդի մեջ, misl shákh-i-dirakht «մի ծառի յերկճղի ճյուղի նման»։ Սակայն և այնպես, մտերմաբար ինձ ասին, թե վանականները մերժել եյին Աբբաս Միրզայի մի պահանջը՝ ջնջելու կամ նվազեցնելու մի տեղ փոխադրելու մի պատկեր, վոր այստեղ կես մեղադրանքով հիշատակում եմ, անշնորհալի կես դարձնում յեկեղեցու դուռը, վորի վրա գետեղված և, մի պատկեր հավատարատես արհամարհելի, իր վատ նկարման համար, ինչպես նաև նախատական իր նյութով, մի փորձ ցուցադրելու ամենակարողը, վոչ միայն պատասխանատու գեղեցկությամբ, շնորհքով կամ փառավորությամբը, այլ նաև կատարելապես ծիծաղելի, թվում եր վոր նկարիչը, իրեն մոդել և վերցրել մի վողորմելի, ծերունի և զառամած մուրացկան։ Ժամը չորսին պատրիարքը ինձ պատվեց իր այցելությամբ իմ սենյակում, ինը կամ տասը իր կղերականներից ընկերանում եյին նրան, նրանք մնացին միայն մի քառորդ ժամ, վորից

հետո ճաշը տրվեց։ Արժանատարգ հայրերը առաջարկել էին ինձ հյուրասիրել մի խնճույքով այդ նպատակով պատրաստված վրաններում, զարնված չոքը կամ ուխը մղոն հեռու մի վայրում, բայց ես մերժեցի, վախենալով որ այս պատճառ դառնա հապաղման, մինչ անձկանոք ցանկանում էի շարունակել իմ ճանապարհը, հակառակ մեր վայելած լավ ընդունելության։ Բառ այնմ, չերնկոյան մոտավորապես ժամը յոթին մենք մեկնեցինք Եզմիածնից, ուր չորս օրվան ընթացքում ես ներկայում էի լավ-պատկան մի վանքում կամ կոնջում, խաչելության նշաններին, հրապարակում քայլող ծեր ու դեր քահանաների, վեղարավոր վանականների, ուսանողների, իրենց սև վերարկուներով, չերնխաների, որոնք սերտում էին իրենց դասերը, սպասոսերգում, զանգակների հնչյունն ու ուրիշ հանգամանքների ներկայությից դատելով։

Ձորկու կամ չորք մղոն ձիավարելուց հետո ես բախտավորվեցի հարյուրապետ Մոնտիլիից, որ հայր Սերաֆինոյի և հայ կղերականներից մոմանց հետ ընկերացել էր մեզ այնքան ճանապարհ։ Ես շատ պարտական եմ հարյուրապետ Մոնտիլիի, ոչ միայն նրա ընկերակցությունը վայելելու հաճույքին համար, այլ նաև բոլոր պարագաների նրա ցույց տված քաղաքավարի ուշադրության, և Պարսկաստանի հետագա մասերի, որոնք ինք հետազոտած է, և մասնավորապես Խուզիստան (Khúsistán) կամ Սուսիանա[16] (Susiana) հետաքրքիր նահանգի մասին իր հաղորդած արժեքավոր տեղեկությունների համար։

Ամբողջ գիշերը շարունակեցինք մեր ճանապարհը, և մինչև առավոտ ժամը չորեքին, երբ գտան մի քանի տեղից անցնելու վտանգը աչքի առաջ ունենալով, մենք կանգ առինք վորքան ժամանակ որ մոլեր եր, և ապա արշալույսին կրկին հեծանք ձիերը և գնացինք դեպի Արաքսը և նրա մոտ հանդիպեցինք այն պահակախմբին, որ սարդարը հրամայած եր ընկերանալ մեզ մեր պաշտպանության համար։ Նրանք քառասուն գինված մարդիկ եյին Բասխմ բեկի հրամանատարությամբ։ Այս գլխավորի և նրա ձիավոր խմբի հետ անցանք գետը, որտեղ գրեթե չորեք վտակ խոր եր, և Յերեք չեկեցիներից մոտ քառանեկ մղոն հեռու, և [Արաքսը] կազմում և, ինչպես աշխարհագրականապես և բնականապես կարելի է անվանել, Պարսկաստանի և Թուրքիայի սահմանը, բայց թվում է թե այս չի համապատասխանում բաժանման քաղաքական գիծի հետ։ Հետևաբար գետը անցնելով չես դառ որ Շահի գերիշխանությունը, ավելի ճիշտը նրա ազդեցությունը ճանաչվում եր տակավին բազմաթիվ մղոններ այն կողմը, թեև տասը կամ տասնչերկու մղոն տարածությամբ չերկիրը գտնվում եր ավերակ վիճակում, ինչպես սովորական և սահմանների վրա։ Այստեղ քուրդ (curdi) հափշտակիչները վխտում եյին, և չեմթագրում եմ թե Պարսկաստանի հայկական նահանգը, (որովհետև հայկական հին թագավորությունը տարածվում եր բավական հետև դեպի արևմուտքը), այստեղ Արաքս գետը բաժանում է Թրքական Ռումի (Rum) նահանգից, մի անվանում, որ արևելյի գրողները տալիս են շատ ընդարձակ մի հողամասի, հասնելով վրաստանից մինչև Սուրիայի ծայրամասը՝ Յեգիպտոսի սահմանի վրա, և պարունակելով Սև ծովի ու Միջերկրականի մեջ տարածվող շրջանները, հին Պոնտոսը (Pontus), Պաֆլագոնյա (Paphlagonia), Բյութինիա (Bithynia), Կապադովկիա (Cappadocia), Գալատիա (Galatia), Փռուգիա (Phrygia), Պանֆիլիա (Panphylia), Լիդիա (Lydia) և ուրիշները[17]։

Ջիով անցած լինելով Արաքսից մենք չորս կամ հինգ մղոն առաջ գնացինք և իջանք Կարա Կալա (Kara Kalaa) կամ «Սև բերդ», մի արտաքուստ շենք, բարձր ու զառիվայր ժայռերի կեղերքին գետի անմիջական արագ ու վտանգավտանգ մի ձյուղի վրա։ Քարից շարված պատերը հինգ վոտքից ավելի հաստ եյին, այն սենյակը ուր ես ոթևանած եյի ուներ յերեք մուտք, և լույսն ու ոդի համար յերկու մեծ ու քառակուսի բացվածք, բայց վոչ գռներ կային և վոչ էլ պատուհանի շրջանակներ։ Այստեղ մի լավ նախաճաշ

հայթայթեցին, և հավանորեն շռայլորեն պիտի քանանայի հատակին փռված հարուստ դորգերի ու կակուղ նամեգների (nammeds) վրա, սիրեմ միայն անհամար չարչարող ճանճերը և ծայրահեղ տաքը չդրկեցին ինձ այդպիսի հանգստից, հետաքրքիր կես դարս կկա և թափառեցի բազմաթիվ քարաշեն տների ավերակների մեջ, որոնք ապացույց են տալիս թե այս վայրը. այժմ աննշան մի գյուղ, յերբեմն մեծ կոթողություն և ունեցել, և ավանդություններ կերպով նրա հիմնարկությունը համարում է յերեք կամ չորս հազար տարի առաջ, բայց այդքան հնության ապացույցներ չկան, թեև նրա ընդհանուր յերևույթը ասում է որ նա յեղել է մեծ և ինչ որ սովորաբար կոչվում է, վիպական. Անհավանական չէ որ դա դանվում է Պաղամեոսի Armavirra-յի [Արմավիրի] տեղում[18]. Այժմ յես դանվում եյի Քասիմ բեկի պաշտպանության տակ, այս բերդի տերը և տասնյոթի ժամը տասնվեցին հասանք քարաշեն անտերով մի տասանդի գլխավորը, Ֆար-Ալի Շահի հպատակը կամ առավազն նրա բարեկամը, թեև հասկանում է մի միայն թուրքերեն լեզուն և պատկանում է սյունեցի հերձվածին, (ինչպես Շեխ ադանդին պատկանող մի վրդոված պարսիկ ասաց ինձ), բայց այս ամբաստանության հետ դժվար եր հաշտանցնել նրա Ալի անունը:... Ինձ վստահացին թե վերջին դիշերվան մեր անցքը զերծ չի յեղել ավազակների վտանգից, բայց միաժամանակ տեղեկացա թե Քասիմ բեկը իր բերդում հյուրասիրում եր՝ որպես բարեկամ, քուրդ ցեղապետներից մեկին, մի պարագա որ ապահովում եր մեր անվտանգությունը, մինչ մենք գտնվում եյինք այս մասերում:

Կես դիշերից քիչ հետո մենք ճամբա յելանք, և [ամպի] փոքրիկ գյուղ՝ Նախիջեվան[19] (Nakhčuán), (նախապես հիշատակված քաղաքի անունդրվը), ճանապարհորդած լինելով յերեսուն մղոնից ավելի մի ամայի ու անբերրի յերկրից, ուր վոչ ծառ կար և վոչ տուն, և Արաքսից անցանք յերեք կամ չորս անգամ: Յերբ մոտավորապես կես ճանապարհին եյինք, մի կարգ լեռների ստորոտում, որ ասում եյին թե պարսկական կայսրության սահմանն եր մեծամեծ շնորհավորեց ինձ, մի քանի վորոշ կիրճերից անցած լինելու համար, ուր քուրդերը շատ ճանապարհորդների կողոպտել ու սպանել են, և նա տակավին պատմում եր նրանց վայրագ անգթության մի քանի անեկտոտները, յերբ մերձակա լեռան գագաթից թվում եր թե վեր եյին բարձրանում բազմաթիվ նիզակների ծայրերը, և անմիջապես հետո քուրդ ձիավորների մի խումբ յերևան յեկավ, և կանգնեց: Սա մեզ համար կասկածի, սպասման և թերևս նույնիսկ անհանգստության մի րոպե եր, որովհետև թեև մեր տեսածի թիվը տասնյոթը կամ տասնութը չեր անցնում, սակայն կասկածվում եր վոր ավելի մի մեծ թիվ սպասում եր խոշնված լեռան մյուս կողմը: Իմ կասկածները շուտով փարատվեցին. նրանց գլխավորը, մի յերիտասարդ, վորի նիզակը արծաթապատ եր, քառասմբակ առաջ եր գալիս մենյակ. բարեկամաբար բարևեց մեզ և ասաց թե Հյուսեյին Ագան ուղարկած եր նրանց, ինձ առաջնորդելու մինչև Կարս: Այս ուշադրության նշանին համար յես պարտական եյի սարդարին, որ ամուսնական կապերով կապված եր Հյուսեյին աղայի ընտանիքի հետ: Մեր նախնական խմբին, այսինքն Քասիմ բեկի՝ նիզակով, սրով ու հրացանով գինված քառասուն ձիավորներին միանալով ուժանդակ քուրդերը, այժմ ներկայացնում եյինք բազմաթիվ և ահարկու մի ջոկատ: Մենք միասին առաջացանք զառիվայր ու խորտուբորտ մի լեռնային ճանապարհից, ապա մտանք մի դաշտ, որից հետո սկսանք աստիճանաբար իջնել դեպի մեր տանգիլը կամ իջևանը: Մեր ուղեկիցները այս ժամում մեր քուրդ բարեկամները գլարճացրին մեզ կեղծ կռիվներով ու մենամարտով. նրանք կատաղորեն ձիավարում եյին, նետում իրենց նիզակները կամ տեգերը և արձակում սարճանակ: Այս քուրդերը բոլորն էլ կրում եյին արտակարգ գլխանոց, որ ճակատի կողմից յերևում եր որպես փաթաթոց, ընդհանրապես ասեղնագործված, խտորեն միացած ճակատին, յեռանի կողմում կար մի քսակ, շինված

կարմիր կտորից։ Վրանք հագել էին արաբական աբբա (abbá) կամ մոխրագույն սպիտակ շերտավոր թիկնոց, և նրանց ներքին հագուստը շատ չէր տարբերվում թուրքերից։ Շատերը կրում էին թուր՝ թամբի ու ազդրի մէջև, ամեն մարդ զինված էր առնվազն չորս տարճանակով, և մի քանիսը ունեին չորք և մինչև իսկ չորս։ Նրանց նիզակները կամ տեգերը իննից-տասը վոտք չորկար էին, ներքևի ծայրը սուր չերկաթով, վոր նրանք գետին էին զարնում, չերբ կանգ էին առնում։ Նիզակներից վրանց նետը պարապ չէր հագից էր, ուրիշներինը կոպիտ փայտից, բայց քիչերինը հատատուն և լավ հղկված փայտից։

Նախիջևան խղճուկ գյուղում, վոր անունով միայն նմանում է հին քաղաքին, մենք ոթևանած էինք վորքան հնարավոր էր լավագույն բնակարանում՝ մի մեծ ախոռ, վորի մեջտեղում մոտ չերեք վոտք բարձր մի քառակուսի ամբիոն կար, շրջապատված ճաղերով, սա միայն բաժանում էր մեզ կենդանիներից, վորոնք գրավել էին մյուս մասը։ Բայց այս փոքրիկ բաժանմունքում հաճախ մտնում ու դուրս էին գալիս աքաղաղներ ու հավեր, կատուներ ու շներ, փոքրիկ չերեխաներ ու պառավ կանայք, մեր քուրդ պահակները և թուրք ձիապաններից վոմանք։ Ջուրը թվում էր թե վոչ միայն վատ էր, այլ նաև աղակի, և մենք շատ էինք տառապում տաքից ու ճանճերից։ Այս վայրը, սակայն, ուներ իմանալու համար հետևյալ կարճ, բայց լավ հաջ ձու և պանիր։ Այս գյուղը պատկանում է քրդերին, թեև այստեղ բնակում են գլխավորապես հայ քրիստոնյաները։ Այստեղից մի պատգամավոր ուղարկվեց Կարս՝ (Kars) խնդրելու համար Աբդուլլահ փաշայից (Abdullah Pássa), վորպեսզի Թուլլավուբյուն տա վոր մենք իր իրավասության տակ գտնվող Թրքական սահմանը մտնենք։ Միաժամանակ մատուցին ուղեցինք մեր ճանապարհը շարունակել դեպի դորեն չորս կամ հինգ փարսախ, մինչև Հաճի Խալիլ (Hájí Khalil) կոչված վայրը, սակայն հարցաքննությամբ տեղացանք, վոր վերջերս քուրդերը ավերել և անբնակ էին

դարձրել այս գյուղը։ Հետևաբար մնացինք Նախիջևանի ախոռում, մեր ձիերը շատ հոգնած լինելով, մինչև գիշերվան ժամը տասը, չերբ ճամբա չկանք և [ամսի] տասնութին ժամը մոտավորապես ուղին, հասանք Խանե Խոյ[20] (Kháneh kúi), քանլինը կամ Թերևս չհետևուն ձորն ճանապարհորդությունից հետո, անցնելով շատ զառիվայր լեռներից։ Մի քանի ժամ գիշերվան ողից բավական ցուրտ էինք զգում։ Մի քանի անգամ ատազանգ տվին թե Կարա Բեկի (Kara Beig) ավազակախումբը դարանակալ սպասում էր՝ հարձակվելու մեզ վրա, վորովհետև այդ ցեղապետը վերջերս թշնամական պերք էր բռնել Ֆար Ալի Շահի դեմ, վոր պատճառով սարդարը հանդիսավորապես ուխտած էր բնաջնջել նրան։ Կարա բեկը չերեք որվան ընթացքում սարդարին պատկանող մի քանի գյուղեր ավերումի մատնած էր, և սարդարն ի փոխարինություն պարսկական պինվորներին ուղարկած էր հավասար թվով գյուղեր կողոպտելու նրա հողամասում։ Մենք տեղեկացանք նաև թե մեր վերջին չերկու գիշերային ուղեվորության ընթացքում, հետևոր լեռների վրա, հրդեհի բոցեր էին տեսնվել, վոր սարդարի առաջապահներ կամ կիրավելներ (keravel) [կարավուլ] կատարել էին ռուսական առաջին պերքերում։

Չերբ նստած քեոյում էս առարկեցի մեր բնակության հատկացված ախոռի համար, նման նրան ուր մենք ապրել էինք նախորդ գիշերը, բայց ավելի ղզվելի, կեղտ և կենդանիների հոտի պատճառով, Մուստաֆան, թաթարը, պարզապես զգուշացրեց ինձ, թե այստեղ ու Կ. Պոլսի մեջև չես ուրախ պետք լինելի, չեթե այս վայրից ավելի վատ տեղ իսկ ապատան ճարենք։ Այստեղ մինչև չերեկոյան ժամը հինգը մնացինք, չերբ ճոխորեն հագնված մի մարդ մի քանի ընկերակիցներով, վորոնք կրում էին արծաթապատ զենքեր, և չերկու ուրիշները փոքրիկ թմբուկներով, բազանաներ, և չերկու ուրիշները փոքրիկ թմբուկներով, բոլորն էլ ձիավոր, կարսից ժամանեցին, բերելով մի պատգամ, վորով փաշան քաղաքավարիորեն հրավիրում էր ինձ այդ քաղաքը։ Ըստ այնմ, մենք ճամբա չկանք, և ամբողջ ճա-

նապարհի ընթացքին, (մոտավորապես յոթը կամ ութը մղոն), թմբուկների աղմկով, որ զարնում էին շատ անկանոն ընդմիջումներով, իմ թրքական նոր ընկերակիցները, պարսիկ պահակները և քուրդերը մարդանք էին կատարում և մեծապես զվարճացնում էին ինձ՝ ձիարշավ կատարելով, մենամարտելով և գցելով իրենց նիզակները, մինչև կանգ առինք քաղաքի մոտ, ուր Փաշան ուղարկել էր երկու գեղեցիկ ձի, որոնցից մեկը թամբված վոսկյա և արծաթյա սարքով ինձ համար, ի պատիվ անգլիական դեսպանի։ Հեծնելով այս [ձին] յես մուտք գործեցի քաղաքը, մինչ մյուսը հեծնել էր Էյուսեյին խանը, ուղարկված նրան ի պատիվ պարսիկ իշխանի, որ նրան նշանակել էր մեհմանդար ինձ համար։ Մենք առաջնորդվեցինք շատ լայն փողոցներից և նեղ նրբանցքներից, և լավ քարե մի կամրջից մինչև մի հայի տուն, ուր թափորը վերջ գտավ, որ շատ մեծ գոհունակություն պատճառեց ինձ։ Ինձ համար պատրաստված սենյակը փոքր ծավալ ուներ, սակայն պարունակում էր շատ պատուհաններ և պահարաններ, և ամեն կողմից չհղկված լինելով տախտակով, նմանում էր նավի մի խցիկի (cabin)։

[Ամսի] տասնիններին վորոշված էր, վոր ժամը մոտ տասն մեկին իմ հարգանքները մատուցանելի փաշային, ըստ այնմ այդ ժամուն մեհմանդարը, Մուստաֆան, բաբարը, պարսիկ ջիլուդարներ և մեհտերներ, փաշայի բազմաթիվ պաշտոնյաների հետ, հավաքվեցին այն տան մոտ, ուր յես իջևանած էի, և մենք քիչ հետո ձիավարեցինք դեպի ամրոցը, գետեղված մի բլրի վրա, և վորը թուրքերը համարում են աներևակելի, թեև 1386 տարում մի հիշատակելի պաշարումից հետո գրավվեց Թիմուրի բանակի կողմից և «հավասարեցվեց հողին», ինչպես տեղեկանում ենք Շերաֆեդդինից Ալիից։ Մուտքին յես տեսա մի քանի թնդանոթներ՝ մի առաջնորդ կամ արարողապետ ինձ տարավ մի ընդարձակ սենյակ, ուր նստել էր փաշան, հատակի տախտակած մասի վրա, վոր մոտ տասնչերեք ինչեզ գետնից բարձր էր և ծածկված էր կակուղ բարձերով։ Նա ինձ ընդունեց շնորհա-

լորեն, և ցանկություն հայտնեց վոր նստեմ նրա մոտ. բազմաթիվ կրքեր սփռված էին նրա կողքին դրված փայտյա մի արկղի վրա, և իր գլխի վերև պատից կախված էին մի սուր, մի հրացան և մի քանի յերկար փողով ատրճանակներ, փարթամորեն ագուցված արծաթով։ Շքեղորեն հագնված սպասավորներ կանգնել էին դրան առջև, և ուրիշները մատուցանում էին սուրճ ուշարկիլե, վորոնց փողերը կեռասի փայտից էին շինված և հինգից յոթը վոտք յերկար էին. շիշերը, փոքրիկ պնակներում, դրված էին հատակի վրա։ Փաշան թվում էր թե շատ գոհ էր, յերբ կարդում էր դեսպանի նամակը, նա իր համակրանքը հայտնեց անգլիացիների վերաբերմամբ, և ասաց թե ինքը պատրաստ է դյուրացնելու մեր սուրհանդակների միջոցով կատարած հաղորդակցությունը Կ. Պոլսի ու Պարսկաստանի միջև, վորքան վոր ինք կարող է։ «Այս պատմագրությունը, — ասաց նա, — յես միշտ էլ ցույց եմ տվել, և իրըև ապացույց պետի հիշատակեմ, վոր յերբ հինգ կամ վեց ամիս առաջ այդ բաբարներից մեկը իր ձին կորցրեց այստեղ, յես նրա համար գնեցի մի ուրիշը, սակայն այդ սրիկան թեհրանում ձեր յեղբոր՝ դեսպանին ասել էր թե ինքն է գնել իր սեփական դրամով»։ Փաշան հետո կարդաց սարդարի նամակը, և ապա հրահանգեց ներկա [գտնվող] պաշտոնյաներից յերկուսին՝ ինձ հայթհայթել ինչ վոր յես խնդրեմ, և վերջացրեց ասելով թե, յեթե իմ հարմարությունները հայի տան բավականաչափ լավ չեյին, ամբողջ ամբողջ անմիջապես հարկադրաժիններ կը պատրաստվեն ինձ համար։ Գեղեցիկ ապակյա բաժակներում մատուցին սառցրած և ախորժահամ շերբեթ, և այս բարեկամական տեսակցությունից հետո, յես մեկնեցի Աբդուլլահ փաշայից։ Նա յերևում էր բավական տարիքոտ, բայց նրա մորուքը շեկադույն էր։ Վերադառնալով այս յերկար ու բազմաբնակ քաղաքի միջից, յես նկատեցի բազմաթիվ լավ քարաշեն տներ, փայտյա պատշգամբներով, չորս կամ հինգ վոտք դեպի դուրս։ Շրջափեղկերը նույնպես փայտյա էին, ինչպես նաև պատուհանների խաչաձևած մասերը, վորոնց մեջ շատ քիչ

ապակի գործածված եր. շինարարական ընդհանուր վոճը, դարձնում և այս քաղաքը ավելի նման յեվրոպական հնաձև քաղաքների, քան յես տեսել եյի յերկար ժամանակից ի վեր. յեթե մի քանի բարձր ծխնելուղներ [լինեյին], նմանությունը ավելի զորավոր պիտի լիներ։ Մի կարգ շենքերում տեսնվում եյին գեղեցիկ ու լավ կոփված քար. շատ տներ ունեյին յեղերված ճակատ և շատերն յերևում եյին վոր յեղևնի վորմնադրվածքով յեղերված եյին, քչերը միայն չունեյին վերնահարկեր և փայտյա սանդուխներ, թվում եր թե նրանք բարձրանում եյին գահավիժ լեռան կողքի վրա, բավական դեպի վեր մեկը մյուսից վերև։ Յես տեսա յերեք հատ քարի զորավոր ու գեղեցիկ կամուրջներ, և մի չորրորդ փայտյա, բայց ի նկատի ունենալով կարսի մեծ տարածությունը և դեպի զանազան ուղղություննները, հավանական և վոր կան ավելի թվով, յես զանցառեցի տեսնել ճիշտ թիվը։ Այս գետը, Արաքսի մի ճյուղը կամ ավելի ճիշտ Բասենոփոնի Հարփասուսը (Harpasus), ներկա անունով Արփասու (Harpasú), թվում և թե առատ ձուկ ունի։ Ճիշտ իմ պատուհանի տակ մի կարգ յեղեկանները նրա ջրերում լողանալիս տասը րոպեյում բռնեցին տարբեր չափերով մոտավորապես յերեսուն հատ [ձուկ], գործածելով միայն մի փոքրիկ ցանց և կողով, և մի յերիտասարդ հայ ներկայացրեց ինձ մի իշխանաձուկ, նոր բռնված ու տակավին վողջ, վոր կշռում եր յերկու ֆունտից ավելի։

Կարսը բյուզանդական գրողները կոչում են Καρσῆνη, յենթադրվում և թե Chorsa-ն և, մի քաղաք վոր Պտղոմեոս (գիրք V. գլ. 13.) դեռևս 74—40 և յերկարության 42—30 աստիճանի վրա։ Բայց Colsa-ի գիրքը, (վորին տալիս և յերկարության 78 աստիճան և լայնության 39—50), ավելի մերձավորապես համապատասխանում Կարսին, վորպես նկարագրում և Տավարնիե, յերկարությունը 78—40, լայնությունը՝ 42—0 (Voyages, Liv, I. p. 24. edition 1679), և Սպրբք Իսֆահանին ավելի առաջ և տեղնում Պտղոմեոսի Chorsa-ից, վորովհետև նա մեզ տեղեկացնում և թե, «կարսը մի բերդ և Նախիջևանի հողամասում,

և գտնվում և յերկարության 81—0, լայնության 50—0»։ Այս վայրը հիշատակված չե վոչ Նասսար-ադդին-Տուսի ցուցակում և վոչ Ուլուղ բեկի կողմից, սակայն Համդուլլահ զանց առած չե այն։ Նա ասում և. «Մուջմաա ալ Բելդանի (Mujmaa al beldân) համաձայն, մի քաղաք Թիֆլիսից յերկու որվան ճանապարհ հեռու, ողը ժաքուը և, և հացահատիկի հունձքը առատ, հողը բարձրորեն բարեբեր լինելուն համար»։ Բայց պետք չե վոր անուշադիր թողնեմ թե նա կարսը վերչ Հայաստանի քաղաք և համարում և վոչ ել Ռուսի, բայց ասում են թե պատկանում և վրաստանին (Gurjestan) և Աբխազիային (Abkhaz)։

Բերդից վերադառնալուց անմիջապես հետո, դեսպանի նվերները Մուստաֆայի միջոցով ուղարկեցի Արդուլլահ փաշային. դրանք եյին մի նուրբ fusilur շալ, մի կտոր բաց կապույտ ասվի և մի անգլիական հեռադիտակ. սրանց վրա իմ կողմից ավելացրի իմ փոքրիկ մթերանոցից մի շիշ զոբավորապես թորված կենտանի-ջուր, վորից փաշան սպասում եր բժշկական հրաշալիքներ. բոլորը դարսված եր մի ափսեի վրա, փոխ առնված այս պարագայի համար, և սա շատ գոհացում պատճառեց, ինչպես նա հայտնել եր մի շնորհակալության նամակով, և արամադրելով իր ծառայությունը։ Հակառակ սրան բարար աղասին, կամ գլխավոր սուրհանդակը, վորի պարտականությունն եր փոստային ձիեր հայթհայթել, հայտարարեց թե պյուրությամբ բավականաչափ թվով կարելի չե ձեռք բերել, մինչև հաջորդ յերեկո, սակայն, ասաց, փաշան հրաժայել և իրեն ընկերանալ ինձ իմ ճանապարհորդության մինչև Երզրում (Arzerúm)։ Միաժամանակ բազմաթիվ սպաներ ու ծառաներ, դանազան պատրվակներով, խանվեցին իմ սենյակում, բարձր ձայնով պահանջելով բախշիշ (bakhshish) կամ դրամական նվեր, յես նրանց առաջարկեցի դիմել Մուստաֆային, վոր վոմանց դուրս վռնդից խիստ հանդիմանությամբ և վոմանց բաժանից մի քանի կտոր արծաթ դրամ։ Սրան հաջորդեցին ավելի պղնիվ ու հաճելի այցելուներ՝ հինգ կամ վեց հայ կանայք,

վարոնցից մեկը մի յերեխա ուներ իր գրկում և աչքառու կերպով գեղեցիկ եր։ Ծերուկի տանուտերը ներկայացրեց այս տիկիններին, վորոնք խիստ հետաքրքրությամբ դիտում եյին իմ գաշտային անկողնի շրջանակն ու վարագույրները, անգլիական ափսոսակ վերմակն ու սավանները, ըմպելիները և իմ բեռան ուրիշ յեվրոպական առարկաները։

Մենք կարսում մնացինք [ամսի] քսանին, պահանջվող թվով փոստային ձի ու ջորի ճարված չլինելուն համար։ Քաահի բեկին, վոր վերադառնում եր «Սև բերդը», իր պահանջին համաձայն մի հանձնարարական նամակ տվի ուղղված սարդարին, ավի նաև մի կտոր սավի և մի հեռադիտակ, մի նվեր վոր դեսպանի կողմից ուղարկված եր կարա բեկին, բայց վերջինս ներկայումս թշնամական դիրք եր բռնել Մեհմանդարը և Մուստաֆան անհրաժեշտ համարեցին, վոր դրամական մի հատուցում տրվի մեր քուրդ պահակախմբի պլխավորին, վորի ծառայությունը վերջանում եր այստեղ։ Թեև շրջակա լեռները թվում եր կատարելապես մերկ, այստեղ ամենաչնչին քաղաքում յես նկատեցի բազմաթիվ յեղեգնափայտի բեռներ, վոր յեզները քաշում եյին փողոցների միջից, և իմացա վոր սրանք բերված եյին մի անտառից, վորի միջից մենք պիտի անցնեյինք դեպի Երզրում գնալիս, և թեև այս անտառը վոչ սակավ անգամներ ծառայել և վորպես հաճախավայր ավազակներին, բայց մենք վախենալու պատճառ չունեյինք, վորովհետև փաշան հրամայած եր, վոր մեզ բնակերանան Թոփչի բաշին, կամ թընդանոթաձիգների գլխավոր սպան, և տասնյակը զինված ձիավոր, և մեզ առաջնորդեն առաջին յերեք ամենավտանգավոր կայաններից։

Մենք ճամբա յելանք [հուլիսի] քսանմեկին, ժամը յեթին, կեսօրից հետո և հասանք Թոսանի[21] (Tosani) [Թոզանը] գյուղը իննից առաջ։ Այս մոտ քսան մղոն ձիավարության, ճանապարհը, վոր բավականաչափ լավ եր վորևե յեվրոպական կառքի համար, անցնում եր հարուստ ու բերքի, խոր և սև հողի միջից, հիանալիորեն մշակված վի-

ճակում։ Բայց կարսի մոտակա զառիվեր լեռները թվում եյին ժայռոտ ու լերկ, և մենք յերեք կամ չորս ծառեր միայն տեսանք, վորոնք ուռենի եյին և այն եյլ քաղաքի մոտ։ Սակայն, հանդիպեցինք բազմաթիվ յերկանիվ կառքերի, բեռնավորված խոտով և հացահատիկով, և ուրիշների վրա նստել եյին յերևութապես զվարթ կանայք ու յերեխաներ, վորոնք վերադառնում եյին իրենց աշխատանքից, մի տեսարան վոր ինձ հիշեցնում եր այն տոնական յեղանակը, յերբ մեր անգլիացի գյուղացիները տոնում են «հունձքի տոնը» («The harvest home»)։

Կարսի մոտ մյուս կողմում յես տեսած եյի մի քանի դուքանններ, վորոնց լծված եյին տասնչորս և նույնիսկ տասնութը յեզներ, բայց հիմա զարմացա տեսնելով վոմանք քսան, և մեկը քսանչորս լծված միասին դուրս առ դուրս։ Այս դուքաններին կապված յեզներին կառավարում եյին վեց կամ յոթը մարդիկ, հաճախ նստած այն հորիզոնական փայտի կտորների վրա, վորոնց ամրացրած եյին լուծերը։ Մի մարդ քայլում եր յեզևից, պահելով խոփը ուղիղ, սա յես կարծում եմ վոր համեմատաբար մեծ չեր, բայց ամբողջ գուքանը, վոր շարժվում եր յերկու անիվների վրա, թվում եր ծանր ու վատ կառուցված, ոսկայն հողը փորում եր բավական խոր և յերևութապես շատ արագությամբ։ Այս գեղեցիկ դաշտը վոռոգված և զանազան մասերում մեծ ջրանիվների միջոցով։ Այստեղի հացահատիկի մի կարգ արտերը լայնությամբ ու յերկարությամբ անգլիական մի մղոնից ավելի են, Մենք անցանք շատ գյուղերից, ուր գրեթե յուրաքանչյուր տան մոտ տեսնվում եյին ուղղահայեաց ցողեր, խաչաձևող ցողը կազմում եր լծակը, վորի վրա կային շղթա կամ պարան և դույլ՝ հողից ջուր քաշելու համար։ Թոզանում իմ ոթևանը Ասատախալ Հաջիի բնակարանն եր, մի մարդ՝ վորի նշանավոր քաղաքավարությունը մղեց ինձ հարցնել և հուշագրել նրա անունը։ Ժամանակ լինելով իրիկնամուտին, գտանք մի բոցավառ կրակ, վոր կարող եր ոգտակար լինել ձմռան։ Մեր հյուրընկալը նկատեց, թե ընդարձակ

մայրի ծառի անտառի յեղերքին փայտը ավելի արժան եր
քան մոմը. հետևաբար կրակը վառվում եր ավելի լույսի
համար, քան տաքության։ Թոզանլիում,—ինչպես մեր անցած
վերջին հետուն կամ վաթսուն մղոն տարածության վրա
գտնվող գյուղերից մեծ մասում,—տները ծածկված են
փայտյա կտուրներով, որոնց վրա լցրել են հատա շերտ
հող կամ ավազ, և հաճախ առատ խոտ, քարաշեն ճակատ-
ները քիչ պարապաններում յոթը վոտքից բարձր են, յեր-
կու կողմից աստիճանաբար իջնելով։ Յուրաքանչյուր ընա-
կարանի կից կան վառելիքի դեղեր, պատրաստված ձմռան
համար կենդանիի աղբից, խառնված հարդի կամ վոճղի,
փայտի սաշեղի կամ նույնիսկ մի քիչ հողի հետ, ապա
տասնյերկու կամ տասնչորս ինչպես յերկարությամբ կտոր-
ներ կազմելով չորացրած, այնպես վոր նմանում եր Սկով-
տլայի կամ Իրլանդայի տորֆին [կլեպհող] կամ հողածու-
խին։ Վառելիքի այս դեղերը և հաչող շները հաճախ մի
գյուղի գլխավոր նշաններն են, վորովհետև ոտարականները
կարող են անցնել բազմաթիվ այս ցածր ու հողածածկ տնե-
րից, դրանից նման հողի մեծ կուտակների, և յերբեք չկատածել
թե այնտեղ մարդկային բնակություններ կան։ Վորքան
կան կարող եմ դատել, բոլորն էլ շինված են գրեթե միևնույն
նույն յեղանակով, պարունակելով միայն մի ընդարձակ
սենյակ, վորի մեծագույն մասը գլխերևյան ընթացքում,
կամ տաքության կամ ցրտի ժամանակ հատկացված է կեն-
դանիներին կամ հավերին, մինչ սեփականատերը և նրա
ընտանիքը գրավում են մի փոքր տարածություն, շրջա-
պատված ճակերով, և սովորական գետնից բարձր միայն
յերկու կամ յերեք վոտք։ Թոզանլիի իմ բարի հյուրընկալի
բնակարանում այս տարածությունը տախտակամած եր,
ձեղունված յեղևնափայտով, և պարունակում եր մի քանի
դարակներ ու կախարաններ՝ հագուստների համար, և մի լավ
կրակարան, բայց թախտից [բազմոց], մի լայն փայտյա նստա-
րան, վորի վրա փռոցի իմ ներքնակը։ Պատուհաններ չկային,
լույսը և ոդը մտնում էին միակ դռնից և ապտուրներն՝ կտուրի

յերկու փոքրիկ անցքերից։ Անկասկած այդպիսի ընակա-
րանները դուրկ են շատ հարմարություններից, սակայն
պետք է ի նկատի ունենալ թե նրանք պատշաճեցրած են
դիմագրավելու համար ցրտին, վոր այս յերկրում տարվան
բազմաթիվ ամիսներին տեվում է ծայրահեղ խստությամբ։
կով. ձի և վոչխար հավաքված մի տեղ ընտանիքի հետ,
նպաստում են ընդհանուր տաքության. մի տեղ ուր սեփա-
կանությունը այնքան անապահով է, սեփականատիրոջ հա-
մար մի առավելություն է իր աչքի առաջ ունենալ այն
բոլորը, վոր կազմում է իր հարստությունը, և սովորու-
թյունը վարժեցնում է նրան կենդանիների շնչառության ու
նրանց կեղտի հոտին, մի պարագա, վոր յեվրոպացի ճանա-
պարհորդի համար գլխավոր տագտուկն է այս ախոռ կամ
անձավ տներում։ Թոզանլիում չկա վոչ մի ծառ, մենարեհ
(menáreh) կամ դանդակատուն, կամ վերևն տեսակի բարձր
շինք, բայց բարի մարդիկ, ինչպես ուրիշ գյուղերում, կանգ-
նեցրել էլին յերկար ցողեր. ծայրին խաչաձև փայտիկներով,
արագիլների համար, ուր նրանք անխռով հանդարտությամբ
վայելում էլին իրենց բույնների հանգստավետությունը։ Այս
տղի բնակիչներից լսեցինք ավազակության ու մարդաս-
պանության դեպքերի բազմաթիվ առարկու անեկտոտներ,
կատարված ավազակների կողմից, վորոնք վխտում են մայ-
րիների մութ անտառներում, վորի միջից մենք պետք եր
անցնեինք՝ գնալու համար մեր հաջորդ կայանը, և թեև
այս տեղեկություններն հավանորեն շատ չափազանցրած
էլին, սակայն Թոփչի բաշին ավելի խելացի եր համարում,
վոր մենք դիշեր ժամանակ չգտնվեինք սպառնացող վտանգի
վայրում, վորքան էլ տհաճելի լիներ ճանապարհորդել ցո-
րեկվան տոթին։ Հետ այնմ, [ամպ] քսան յերկուսին, առա-
վոտյան ժամը յոթին մենք վերսկսեցինք մեր ճանապար-
հորդությունը Թոզանլիից։ Շուտով նկատեցինք մեր ձախ
կողմը մայրի ծառեր, և մոտավորապես վեցերորդ կամ
յոթներորդ մղոնին հասանք նշանավոր անտառը, և նրա միջից
շարունակեցինք առաջ գնալ տասնվեց կամ տասնութը մղոն։

Ցերկիրը վոր թվում եր թե լավ հող ուներ, ներկայացնում եր յերկու կողմից շատ տեսարաններ՝ լեռներ ու ձորեր պատված անտառով և գետերով։ Բայց շատ կասկածներ արթնացան բազմաթիվ ձիավորների յերևումովը, գինված մեծամեծ մասամբ նիզակներով, վորոնք մեր դուգահեռ ուղղությամբ առաջանում եյին, բայց մղոն առ մղոն միջանկյալ կերպով կանգ եյին առնում հաճախ բարձրությունների վրա, դոգցես դիտելու համար մեր առաջացումը։ Մի քանի պյուղացիներից, վորոնք խոտ եյին հավաքում, (փոցխով, վոր ճիշտ նման եր Անգլիայում գործածվածին), տեղեկացանք վոր այս մարդիկ ավազակներ եյին, վորոնք նախորդ որվանից ի վեր հարատևորեն թափառում եյին անտառում, սպասելով հարուստ կողոպուտի, վոր յենթադրվում եր թե իմ բեռները պարունակում եյին։ Մուստաֆան անմիջապես առաջարկեց Թոփչի բաշին, վոր մենք հարձակում գործենք, բռնենք և սպանենք նրանց և անտառի ճանապարհին տարբեր ծառերից կախենք նրանց դիակները. թուրք սպան ընդունեց վոր այս միջոցը շատ պատշաճ պիտի լիներ, բայց հրաժարվեց գործադրելուց, պաղարյունությամբ հայտարարելով թե իրեն հրամայված և պարզապես ինձ առաջնորդել սպահով կերպով մինչև Աբ-ի-գերմ (Ab-i-garm), տաք ու բուժիչ մի գետակ, ուր վերջանում և Արդալեհ վաշտի սահմանը։ Մենք դուրս յեկանք անտառից և յերեկոյան ժամը ութից առաջ իջանք Մեջենկիրտ[22] (Medjenkirt) [Մժնկերտ], յերբ մենք մտնում եյինք այս գյուղը մեր ձախ կողմում բերդը յերևում եր հեռվից շատ ընդարձակ, բայց իրականում դա զառիվայր մի ժայռ եր, վորի բնական ճեղքվածքները լցված եյին վորմնադրությամբ։ Մեր ճանապարհի վրա մայրի անտառում, (և ուրիշ տեղերում կարսի ու Երզրումի միջև), սփռված կային սև քարեր*, մի քանիսը մարդու գլխի մեծությամբ, սրանցից յերկաթ կամ չորս կտոր բերի Անգլիա։ Մժնկերտում Հյուսեյին խանի ծառաները, թերևս

* Lapis obsidianus:

վոչ դիտավորյալ կերպով, նախատած լինելով [տեղացիներին], տղամարդիկ ձեծեցին նրանց, իսկ կանայքը քարկոծեցին, վորոնք իրենց գայրույթի մեջ հաճախ նրանց անվանում եյին «պարսիկ շներ»։

Մենք ճամբա յելանք [ամսի] քսանյերեքին ժամը ութից առաջ և տասը կամ տասնմեկ մղոն առաջ գնալուց հետո կանգ առինք Աբ-ի-գերմում (Ab-i-garm)[23] տաք ջրի աղբյուրի (ինչպես պարսկերեն անունը ցույց և տալիս), վորին շրայլորեն բուժիչ հատկություններ են վերագրում։ Այստեղ միանում են Կարսի և Երզրումի հողամասերը։ Այս աղբյուրում մեր պահակներից տասը կամ տասնյերկու հոգի, (վորոնց մարմինը մաքրության դգալի պետք ուներ), մերկացան և բոլորը միասին լողացան։ Յես ճիշտ արի առուգիրս այս ջրի տաքության աստիճանը, վոր գրեթե այնքան եր, վորքան մարդկային մարմինը կարող եր տոկալ։ Աբ-ի-գերմում մեր պաշտպանները՝ Թոփչի բաշին և իր դեյի գինվորները մեզ հանձնեցին յերկու սպաներին, վորոնք Երզրումի փաշայից բերել եյին բարի գալստյան և հրաժեշտի քաղաքավարի մի պատգամ։ Թոփչի բաշիի ծառայությունը յես վարձատրեցի մի զույգ գեղեցիկ գրպանի սարճանակով, և վորոշ դումար դրամ բաժանվեց նրա մարդկանց մեջ, վորոնք անմիջապես ճամբա յելան կարս վերադառնալու համար, մինչ մենք առաջ գնացինք տասնվեց կամ տասնյոթը մղոն, և ժամը չորսի և հինգի միջև հասանք Բեդրովաս[24] (Bedrowâs)։ Այս գյուղում, ըստ տեղեկության, կային հունական ծեսին պատկանող յերեսուն ընտանիք, և յերկու հայկական և հինգ նահանգական, կային նաև հունական յերեք յեկեղեցի։ Բայց բնակարանները նույնպես դրսից հողի կույտեր եյին, և ներսից ծառայում եյին վորպես ախոռ, նախապես նկարագրվածի նման։ Սակայն, ճարտարապետական վոճը բավականին բարելավված եր, այնպես վոր յես մղվեցի նկարելու։ Մի տան ճակատը այնպիսի յերևույթ ուներ, վոր գրեթե կարելի յեր «դասական» անվանել, թեև շինանյութը կոպիտ եր և պարզ։ Ծառի յերեք կոպիտ բուները պահում եյին

[իրենց վրա] մի հորիզոնական գերան և նրանց վրա դուրս ելին ցցվել ուրիշ բուներ, կազմելով կտուրը, կամ ավելի ճիշտ ձեղունը, մի կերպ նման կես սատրյերկրյա հին սայլի... Բեզրովասում մոմի տեղ գործածվում եր ուտինային յեղևնափայտ։

24 [հուլիս 1812]. լուսնի լույսով ճամբա յելանք, ժամը յերկուսից քիչ հետո, և տեսանք առնվազն մի հարյուր կառք, վոմանք բևեռավորված ծառի մեծ բուներով, ուրիշները յեղևնափայտի տախտակներով, և շատերը ատնում եյին կանանց ու յերեխաների. իրենց հունձքի գործին, բազմաթիվ գերաններ, արտակարգ յերկարությամբ, յեղներ կամ գոմեշներ քաշում եյին փոքրիկ անիվների վրա։ 17 կամ 18 մղոն առաջ գնալուց հետո կանգ առինք Հասան Կալեյում[25] (Hassan Kalaa), քարե պարսպով մի գեղեցիկ ու ընդարձակ քաղաք. վեհափառ մի ժայռի ստորոտում, վորի կատարում մի գեղեցիկ ու զորավոր յերևույթով ամրոց կա, վորից ինչպես մենք իրավացիորեն յենթադրում ենք, այս վայրը առած է իր անունը։ Մտադիր եյինք այդ որվան մեր ննգիվը այս քաղաքն անել, բայց Ալվարի[26] (Alwar) գլխավորի կողմից ուղարկված մի անձ, (մոտ հինգ մղոն հետու մի պուղտ), հայտարարեց թե մի նոր կարգադրություն անհրաժեշտ եր դարձնում վոր մենք փոխադրվեյինք այնտեղ։ Մի ժամանակ յես քննեցի տաք ջրի մի ուրիշ աղբյուր, ուր հաճախում են բազմաթիվ լողացողներ։ Նրա վրա բավական հարմար կամարակապ մի սենյակ կառուցված և, վորի ներսից քարը տաշված և. այս շենքը գտնվում և Արաքսի մի ճյուղի կամրջի վրա, բերդից ներքև։ Այստեղ մենք այնքան ուշացանք, վոր գրեթե կեսոր եր, յերբ հանապարհորդությունը վերջացավ Ալվարում, մի ընդարձակ գյուղ, վոր պարսպված և բայլ նախապես նկարագրված բազմաթիվ անձավներից, նաև յերեք կամ չորս գեղեցիկ կառուցվածքներ, պատուհաններով և առանձին դռներով։ Մուզելիմը (Musellim), (ինչպես մեր խմբից վոմանք անվանում եյին գլխավորին կամ կառավարչին), ինձ հրավիրած եր բնակվելու այն տանը

վոր մեկում և մանակցելու նախընթրիքին, բայց թվում և թե այս մասին մի կարգ դժվարություններ եյին ծագել, և իմ ոթևանը (manzel) նման եր նրանց վոր յես ապրել եյի Բեզրովասում, Մժնկերտում և Թոզանլիում։ Գլխավորը, սակայն, ժամանումից մի քանի րոպե հետո այցելեց ինձ, և նրա ծառաները բերին սուրճ, ծխամորճ ու շերբեթ։ Նա շրջունակեց նույնպես ամեն ժամու՝ մինչև յերեկոյան ճաշի ժամանակ, նման բաներ ուղարկել. նրա հյուրասիրությունը վերջացավ մի ճոխ ճաշով՝ ձու, պանիր ու սեր։ Ալվարից մենք մի պատգամավոր եյինք ուղարկել Եմին փաշային (Amin Pasha) ծանուցանելու մեր մերձեցումը, և կես գիշերին զնկուցում ստացանք թե Երզրումում (Arzroum) մի հարկաբաժին հատկացված եր մեզ։ Հետևաբար [այսի] 25-ին, մոտավորապես ժամը վեցին, մենք ճամբա յելանք և առաջ գնացինք բարերեր ու բարձրորեն մշակված յերկրից ինչ կամ տասը մղոն, յերբ մենք հանդիպեցինք փաշայի մի սպային, [ընկերակցությամբ] յերեք հոգու՝ թմբուկներով, և մի քանի չավուշների[27] (chiaouses), վորոնք կրում եյին արծաթ գավազան, ճյուղավորված կատարին,... բացի շատ ձիավորներից և ուրիշ սպասավորներից։ Սպան փաշայի կողմից շատ քաղաքավարի մի նամակ հանձնեց ինձ, և հիշատակեց թե ինքը բերած և յերկու ձի, (վորոնք փառավորապես թամբված եյին), մեկը ինձ համար և մյուսը պարսիկ Հյուսեյնի խանի համար։ Բայց յերկու ժամ նստել թրքական թամբի վրա, անհարմար կերպով կախված ասպանդակներով, մի պատիվ եր, վորից հրաժարվեցի մինչև քաղաքից մի մղոն հեռացած։ Մենք անցանք յերկար փողոցներից, ուր կային քարաշեն լավ շենքեր, և իջանք մի հայ ընտանիքի բնակարանը։ Ճանապարհորդել եյինք մոտավորապես տասը ժամ։ Այս ուղևորության ընթացքում, ինչպես նաև նախորդ որը, ճանապարհի յեղերքին անցանք շատ աղբյուրներից, գրեթե յուրաքանչյուր մղոնում մի հատ, խողովակով և ջրորդանով, նրբորեն ագուցված մարմարե մեջ, վոմանք ծածկված եյին կամարով, պահելով ջուրը իր բնական սառ-

նութեամբ, նուէն իսկ այն ժամանակ, յերբ արևը ճառագայթում եր սաստիկ տաքութեամբ։ Այս աղբիւրները, այնքան բազմաթիվ Թուրքիայում, մի շռայլութեան և, վոր անծանոթ է Պարսկաստանում, ուր մի ջրամբարի (ambar կամ haws) ջուրը, յերբեմն մխակն և ամբողջ մի յերկար որվան ճանապարհի համար, և այս անգամ շատ աւելորքար աղտոտում և կեղտոտ ձեռքերի ու մորուքների լվացումով։

Փաշայի մանաւոր բարեացակամութեան շնորհիվ Երզրումում (Arzerùm) մեր բեռները մաքսատան պաշտոնյաների քննութեան չենթարկվեցին, թեև յես անհրաժեշտ գտա գոհացում տալ նրանց աղաղակող պահանջին բաքշիշի(bakhshish) համար, մի բան, վոր մշտապես ծակում եր մեր ականջները Թրքական հողը մուտք գործելուց ի վեր։ Բեռներն անմիջապես պարպեցին իմ հարկաբաժնում, վոր պատկանում եր հայկական մի հին վանքի. խոհանոցը մանաւորապես ընդարձակ եր, կամարակապ վորմնախորշերով, և խոհարարական հարմարութիւններով, և ուներ հիանալի ջուր, մի ծորակի միջոցով։ Ինձ հատկացրած սենեակում կային յերկու կրակարան, յուրաքանչիւր ծայրում մի հատ, տաշված քարով ծխնելուղի մասով, բայց վոչ շատ հատ մի պատ բաժանում եր այս սենեակը, մի խոնաված գերեզմանոցից, վոր դրան մոտ նեխած մի ճահիճի հետ ապականում եին ոդը, և յես յերևակայում եմ թե այս եր Թերևս Մր. Պրայսի տակրութեան պատճառը, մեր այստեղ բնակութեան ընթացքում, թեև նա, ինչպես նաև մեր խմբից ուրիշները զանազան ժամանակներ վատ եին զգում Թավրիզից մեր մեկնումից ի վեր։ Մեր ժամանումից քիչ հետո մենք նվեր ընդունեցինք Թուլլ և վատ գինի, լավ կամ առնվազն զորավոր ոդի (arrack) և մի ափսե աճուշղեն, և քիչ հետո մի այցելութիւն Երզրումի գլխավոր հայերից։ Նրանք ի պատասխան հնութիւնների մասին իմ հարցուփորձին խոստացան ուղարկել մի մարդ, վոր ուներ բազմաթիվ գոհարներ ու մետաղներ։ Միաժամանակ Թաբար Աղասին, (վոր կարսից ընկերացել եր մեզ), գնաց ճամբար, ուր եմին Փաշան (Amin Pasha), վորպես սերասկյար (seraskier) կամ հրամանատար, ապրում եր ընդհանրապես ամառվան յեղանակին։ Թաբարի նպատակն եր, վորոշելու ժամանակը՝ իմ հարգանքը մատուցանելու համար փաշային։ Յերեկոյան մի քիչ տեղատարափ անձրև յեկավ, շատ վորոտումով և գիշերը կատաղի քամին փչում եր։ 26-ի առավոտը կանուխ յես տեղեկացա թե փաշան պատրաստ պիտի լինի ընդունելու իմ այցելութիւնը ժամը մեկին, վոր ժամանակից առաջ մի մարդ բերեց տասնութը կամ տասնինը կտոր Արշակունի (Arsacidan) Թագավորների արծաթ դրամ, ըստ սովորականին հունական շքեղագրով (legend) և վոչ մի պարագայի վրա հազվագյուտ և վրէ ել հետաքրքիր, թեև գնահատում եր նրանց ծանրութիւնից շատ ավելի վոսկու արժեքով։ Հետո, յեկավ մի մարդ, վոր առաջարկում եր տասը կամ տասնյերկու աննշան գոհարներ, գլխավորապես փորագրված սարդիոն (carnelion) և լեղնգաքար, վորոնցից գնեցի մի քանի հատ. նա շատ բարձր գնահատեց, բայց յես մերժեցի.[գնեցի նաև] մի քանի անդեզաքար (bezoars) և ոձաքար (shākh-i-mār կամ «Ոձի կոտոշ») և փոքր առարկաներ, բայց փորձութեան մեծ առարկան պահված եր վերջում. զանազան հայերի կողմից արված զարմանալի պատմութիւնից և սեփականատեր Խոջա Հարությունցի (Khoja Aretún) կողմից նշանակված գնից [գտաեղով]յես ակնկալում եի շատ գեղեցիկ ու հին մի բան,բայց շուտով հուսահատ յեղա,յերբ վերևում յեկավ վոր մի քարաքանդակ (cameo)եր, պատկեր յերեք Թագավորների, վորոնք ընդհանրապես կոչվում են մոգ(Magi), և վորոնք իրենց նվերը տալիս եին մանուկ Հիսուսին։ Այս պատկերը քանդակված եր շատ գեղեցիկ մի sardonyx-ի վրա, (ձևով ձվաձև և մոտավորապես յերեք ինչեղ յերկար և յերկու և մի քառորդ լայն), հիմքը մուգ գորշագույն եր, և ֆիգուրները բարձրաքանդակված, բայց գորշագույն ու սպիտակ։ Այն աստղը, վոր առաջնորդել եր մոգերին, յերևում եր գոմի մի ծայրում, և բավական լավ եյին քանդակված ձիերը, վորոնք կանգնած եյին մի քիչ հեռու, հրեշտակները սավառնում եյին ոդի մեջ և մի հովիվ գառը կրում եր իր շալակում։

Վերոշված ժամուն, ժամը մեկին, ճամբա յելա փաշայի կողմից ուղարկված սպաների, մեհմանդար Հյուսեյին խանի, Թաթար Մուստաֆայի և յերկու պարսիկ ձիապանների հետ։ Ջհավարեցինք քաղաքի միջից և առաջացանք մոտավորա-



Երգրումցի բուրթեր. երկար գլխարկ կրողը յենիչերի .ե։
(Նկար Կեր Փորտըրի)։

պես չորս մղոն դեպի դաշտ, որը ներկայացնում եր շատ կենդանի ու հաճելի մի տեսարան. անկանոն կերպով տեղավորված հին վրաններըը, ընդհանրապես սպիտակ, մի քանիսը ժժգույն կանաչ գույնով։ Ինձ առաջնորդեցին շատ մեծ և փառավոր մի վրան, ուր բարձրաստիճան մի մարդ, ընկողմանած բազմոցի վրա, հրավիրեց ինձ նստելու իր կողքին։ Նրա շուրջը կանգնել հին բազմաթիվ սպասավորներ, ճոխորեն հագնված և զինված արծաթապատ յերկար սառճանակներով. սառը րոպե հետո մի սպա ծանուցեց ինձ փաշան սպասում և ինձ իր վրանում, որը ճակատի կողմից բոլորովին բաց եր և ցույց եր տալիս արևելյան ճոխությամբ

փայլուն մի պատկեր, մինչ քառասուն կամ հիսուն զինվոր, ճոխորեն հագնված, շարքով կանգնած հին յերկու կողմից։ Փաշան շատ քաղաքավարությամբ բարեգալուստ տղեց ինձ։ Նա ծերունի եր յերևում, և նրա դույնը ծայրահեղորեն թուխ եր. նա հագել եր, սակայն, կարմիր կամ ավելի ճիշտ վարդագույն պատմուճան, յեզերված ամենանուրբ ձյունի պես սպիտակ մուշտակով, նա նստել եր մի յերկար բազմոցի վրա, և նրա կողքին դրված եր ավելի փոքր [մի բազմոց] ինձ համար, և անմիջապես դիմացը մեկը Հյուսեյին խանի համար, որը ինչպես թուրքերի հետ ունեցած նախկին տեսակցությունների ժամանակ, կատարում եր թարգմանի գեր, թեև յես հասկանում եյի ասվածների ընդհանուր իմաստը։ Սուրճի, ծխամորճի, շերբեթի և անուշեղենների մատուցումից հետո, յես հանձնեցի դեսպանի նամակը և հրահանգեցի Մուստաֆային բերելու նվերները՝ յերկու շալ և մի անգլիական հրացան, որը փաշայի պահանջով վերցրի տուփից և հավաքեցի։ Նա ինձ ցույց տվավ մի ուրիշ յոթնկրողյա մի ատրճանակ, որը մասին նա ասաց. «իմ ամենաարիածն է, դա մի նվեր է, որը անցյալ տարի ձեր յեղբայրը ուղարկել եր ինձ»։ Հետո, նա հայտնեց իր խոր հարգանքը Անգլիայի Ինամակալ Իշխանի և Պարսկաստանի Թագավորի համար, որը պատճառով նա ազատել եր իմ բեռները մաքսից, և ավելացրեց թե իր սեփական թաթերներից մեկը, որի վրա կարելի յե վերին աստիճանի վստահություն ունենալ, պիտի ընկերանա ինձ ամբողջ ճանապարհի ընթացքին մինչև կ. Պոլիս, և բացի այս ինքը նամակներ պիտի գրե Կարաիեսարի, Թոքաթի և ճանապարհի ուրիշ տեղերի կառավարիչներին, որոնք կարող են դուրս թողնել յունեներ տալ ինձ, և պաշտպանել ինձանից կամ նախատինքից։ Նա վերջացրեց նվիրելով ծաղիկներ, և ամենաքաղաքավարի խոսքերով հրավիրեց ճաշի իր ճամբարում ամսի 28-ին, վոտներից նա ասաց, յերեկոյան յես կարող եյի գնալ Իլիջա (Iligah), առաջին կայանը, հաղիվ յերկու saap (saat) կամ ժամ, (մոտ վեց մղոն) հեռու, յուրաքանչյուր saapը

այնքան ճանապարհ է, որ կարելի չէ կարել բեռնակիր ջորիով կամ ձիով մի ժամում։

Յերկու որվան հապաղումը միջոց տվավ մեզ բաղմաթիվ կարգադրութիւններ անելու, որոնք անհրաժեշտ եյին երթալու համար Կ. Պոլիս կատարելիք ճանապարհորդութեան համար, վորի ընթացքում, (յոթը-ութը հարյուր մղոն), մտադրված չեյինք վորևե տեղ յերկար ժամերով կանգ առնել, վոչ ավելի քան խնամակալ իշխանի ձիուն հանգիստ տալու պահանջին չափ։ Մի քանի հայ կանայք հանձն առին լվալու բավական նաչափ մեր սպիտակեղենը։ Մենք նորոգեցինք զանազան բեռներ, վորոնք ջնասված եյին ձիերի աքացիներից, կամ ճանապարհի անկումներից, և նոր ջորիներ հայթայթեցին՝ կրելու համար մեր բեռները, ղեկավարութեամբ մի զույգ չարվադարի (chárwâdár) և յերկու կամ յերեք ոգնականների, յերիտասարդ ու գործունյա քուրդեր կամ ասորիներ, քյուկի (Carcuk) բնակիչներից։ Ճամբարից իմ վերադարձին՝ կեղտոտ ու կարկատուն ցնցոտիների մեջ փաթաթված մի մարդ դրամական ոգնութիւն խնդրեց ինձնից, խոսելով շատ հասկանալի անգլիերեն, և տեղեկացրեց թե ինք ռուս գերի է, և թե ինք շատ տարիներ ծառայել է վորպես նավաստի մեր պատերազմական նավերից մեկում, Բուբնքում։ Ներանից հետո, յեկավ մի վրացի, վորի յերևույթը արտահայտում եր ծայրահեղ տառապանք։ Մի յենիչերի նրա անիծ հափշտակել եր նրա աղջկան և յերկու տղաներին, և այժմ նա ապառնում եր վաճառել նրա աղջկան և սպանել տղաներին ընդունելու մահմեդականութիւնը, յեթե վորոշ ժամանակում սահմանված դրամական վրկագին չվճարվեր։ Հայ քրիստոնյաները իրենց յեկեղեցիներում բարեգործաբար հավաքել եյին պահանջված գումարի բավական մեծ մասը, և այժմ այդ առթիվ այս դժբախտ հայրը խնդրում եր նաև իմ աջակցութիւնը։ Բոլոր նեղկանները հաստատեցին նրա վողբալի պատմութեան ճշմարտութիւնը, և անուղղակի կերպով մի այլ պարագայից, վոր յես տեղեկացել եյի նախապես մինչ անցնում եյի բազարներից (bázârs) կամ շուկաներից, հիշատակված եր վոր այս տեղերից մեկում բաղմաթիվ վրացի աղջիկներ ցուցադրված եյին հրապարակային վաճառքի, ինչպես նաև մի քանի տղաներ, վորոնք վերջերս թուրքերը ձեռք եյին բերել ռուսական ճակատից ուրիշ կողոպուտների հետ։

Գալով Erzrում մեծ քաղաքի, նրա մի բլրի վրա գտնված քարե պարսպով բերդի, նրա վատորեն մայթած փողոցների, և նրա նեղկա վիճակի մանրամասնութիւնների մասին, յես շատ պանքով միայն մի քանի հուշեր հանձնեցի թղթին, բայց նրանց մասին հետո շատ ճշտորեն նկարագրել է Մր. Մորիեր, և ընթերցողը յեթե ցանկանում է տեղեկութիւն ստանալ այս նյութի մասին, ավելի գոհացում պիտի գտնի կարդալով այդ հանճարեղ ճանապարհորդի գործը, քան վորևե նկարագրութիւն, վոր յես կարող եմ տալ Բնակիչների թվի մասին նույն չափազանցրած տեղեկութիւններն հաղորդեցին նաև ինձ։ Սակայն, նա [Մորիերը] ընդունելով 270.000 կամ 275.000 բնակիչ, նա թերևս չափազանց շատ է պահել տեղական յենթադրութիւնը։ Բոլոր այն մարդկանց համար, վորոնք վերջերս վարժված եյին Պարսկաստանի քաղաքներին, նրանց ուշադրութիւնը գրավում է Երզրումի յեռուղեռը, և մարդկանց բազմութիւնը խռնված փողոցներում, սակայն իմ մակերեսային նկատողութիւնը, հեղինակութիւն չի տալիս ինձ նրանց թիվը նույնիսկ յերկու հարյուր հազար համարելու։ Երզրումի հին կացութեան մասին իմ պրպտումները շատ քիչ արդյունք են ավել։ Դ'Երբելո (D'Herbelôt) և նրանից հետո Դ'Անվիլ (D'Anville), այդ քաղաքի անունը գտնում եր Արծե (Artzé), ինչպես գրել է Սեդրենոս (Cedrenus) տասնմեկերորդ դարում, և նմանապես նրանք հակված են ընդունել նրա անունը արաբական բառերից՝ Arez al Roum, (կամ Aradh ar' Rum), վոր նշանակում է Ռումիների (Rumians) կամ «Հույների յերկիրը», այս վայրը լինելով Հայաստանի և Կապադովկիայի կամ Պոնտոսի սահմանների վրա, բայց նրանց ածանցումը (derivation), թեև բավականաչափ համապատաս-

խան և պարսկերեն պատմական մի ձեռագրի ուղղագրութեան, (որ սակայն բաց և թողնում արաբական al հոդը), և ներկա տառերի գործածութեյանը, դյուրութեյամբ կարելի չե համաձայնեցնել այն ուղղագրութեյան, որ գործածվում եր մեր թվականի տասնյերեքերորդ դարում, յերբ Նասիրադդին Տուսի (Nassiraddin Tusi), իր Յուցակնեղուում այդ անունը գրում և Արզն ել ռում (Arzen al rúm), մի ձև որ պահված և բոլոր հռչակավոր աշխարհագիրների կողմից, Համդալլահ, Ուլուղ բեկ, Սադրէ Խաճաճանի և ուրիշներ։ Կասկածելի յե թվում ինձ, թե Երզրումի վերջին յերեք գրերը պատկանում եյին սկզբնական անվան, բայց յես հավատում եմ որ առաջին յերեք [գրերը], առանց կապակցութեյուն ունենալու վերևի արաբական բառի, ներկայացնում են գլխավոր և հին արմատական տառերը, և յենթադրում եմ որ սրանք, ինչ փոփոխութեյուն որ կրած լինեն ջորգական գրչագիրների ձեռքից կամ ամամուլից, կարելի յե ճանաչել Պտղոմեոսի (Lib. V. c. 13) Azora (Ἄζωρα), որ տեղված և յերկարութեյան 76—30 աստիճանի վրա և լայնութեյան 40—40, մի գիրք՝ որ գրեթե համապատասխանում է Երզրումին. արևելյան աշխարհագիրների համաձայն, նրանցից յերեքը (Նասիրադդին, Ուլուղ բեկ և Սադըք Իսֆահանի) տեղավորում են յերկարութեյան 77—0 և լայնութեյան 39—40։ Համդալլահ տեղեկացնում է մեզ, թե այս քաղաքը «պատկանում է հինգերորդ կլիմային և գտնվում է յերկարութեյան (Յերջանկութեյան կղզիներից) 77—0, և լայն. (հասարակած գծից) 39—30։ Պարտնակում է,—ավելացնում է նա,—մի յեկեղեցի արտակարգ մեծութեյամբ, որ այդ յերկրի բոլոր շենքերից ավելի բարձր է, և յեկեղեցում յերեսին կար մի բարձր գմբեթ (gumbed), որի ծայրը հիսուն հիսուն գազ եր (մոտավորապես հիսունվեց անգլիական յարդա), այս գմբեթի կամարի մի կողմը փլչեց, այն գիշերը յերբ (Մուհամմեդ) ծնավ, կնիքը կամ վերջինը կամ ամենամեծը մարգարեների, որի վրա և որի ընտանիքի վրա թող աստծու օրհնութեյունը լինի, և թեև շատ մեծ ջանքեր թափեցին նորոգելու

համար այն, [սակայն] շարունակվեց փլչել, այնպես որ վերակառուցումը յերբեք չկատարվեց, և յեկեղեցու դիմաց մուսուլման վեհապետներից մեկը շինեց մի մեջիդ(masjed)կամ մզկիթ Քաաբեի, (կամ Մեկկայի քաոակուսի տաճարի), պատով, լայնութեյամբ ու յերկարութեյամբ հավասար այդ շենքին, և հետևաբար այդ մզկիթը կոչվում է Նեմուդար-ի-Քաաբեի (Nemúdár-i-Caabeh) կամ Քաաբեի տիպար, և Արզն ար Ռումի յեկամուտը յերկու հարյուր քսան յերկու հազար դինար (dinar) կամ վոսկի և հաշվում»։

Մեր բեռները պատշաճ պահակախմբով Իլիջա ուղարկած լինելով, հուլիսի քսանութին ժամը յերեքին մեկնեցի Երզրումից դեպի փաշայի բանակատեղը. ինձ առաջնորդում եր նրա սպաներից մեկն և յես հեծել եյի սուրհանդակի ձին, այնպիսին՝ որ ամբողջ քրքական կայսրութեան մեջ կարելի յե ճարել յուրաքանչյուր կայանում։ Մինչև հիմա յես հեծնում եյի դեսպանատան պարսկական ձիերը, և այժմ անհրաժեշտ եր, որ նրանք յես ուղարկեյի Թավրիզ։ Փաշայի ընդարձակ վրանի առջևը ինձ ընդունեցին ճոխորեն հագնված յերկու անձնավորութեյուններ, մեկը գանձապահը, մյուսը փաշայի վորովին։ Վրանը շքեղորեն կահավորված եր. և այնտեղ կար շատյութեյան մի առարկա, որ չափազանց դյուրևկան եր ծայրահեղ տաքութեյան այս յերկանակին։ Մեր նստած բաղմոցի մոտ կար մի աղբյուր տասնվեց կամ տասներեք ինչ խոր գետնի մեջ և գրեթե չորս վոտք քառակուսի։ Նրա ջուրը սառն եր ու հստակ, յերևութապես աղբյուրներից հաղորդակցութեյամբ։ Սովորական զովացուցիչներից և մի քիչ խոսակցութեյունից հետո, մի ծառա ծանուցեց, թե փաշայի ճաշը պատրաստ և, և վորովհետև նրա հյուրասեր հրավերը հասկացվում եր նաև վորևե անձնավորութեյուն վոր յես նախընտրում եյի թերել, մեհմանդար Հյուսեյին խանը և Մր. Պրայս ինձ հետ մասնակցեցին այս արտակարգ խնճույքին, Փաշայի վրանից մի քանի յարդա այն կողմ, բայց քինն, մի մեծ կլոր ափսե գետնվված եր յերկաթ վոտքերի վրա, այսպես կազմելով մի տեսակ ցածր սեղան, վորի

շուրջը մեր հյուրընկալը, նրա վորդին, դանձապահը, յերկու կամ յերեք ուրիշ Թուրքեր, և մենք ոտարականները հավաքվեցինք, և սովորական ձեռքի լվացումից հետո, նստեցինք կապերանների ու բարձերի վրա։ Սպասարկում էին բազմաթիվ ծառաներ, վորոնք կատարում էին իրենց տարբեր պարտականությունները, հավասար լռությամբ, ուշադրությամբ ու հարգանքով։ Նրբորեն հյուսված և ճոխորեն ասեղնագործված անձեռոցներ սփռված էին բոլոր հյուրերի վրից ու նրանց ծունկերի վրա, յուրաքանչյուրին տրված էր մի փայտյա դգալ և դեղեցիկ շերբեթի բաժակներ։ Սեղանի վրա կային պնակներ լի՝ կտրված վարունգ, հացի պանիր, աղ և պղպեղ փոքրիկ բաներ, վորոնք չվերցրին հյուրընկալության ընթացքում, բայց յերկու յերեք րոպեից հետո լեցուն պնակ ապուրին հաջորդեց նույն չափով լեցուն շոգեխ բանջարեղեն, սրա տեղ անմիջապես բերին խորոված գառան միս, չորրորդ՝ պղպեղուշ, հինգերորդ՝ փիլավ, վեցերորդ՝ քաղցրավենիք, յոթերորդ՝ հավկեղն, և բազմաթիվ ուրիշներ, բոլորը տարբեր։ Հյուրերը քիչ անգամ յուրաքանչյուրից վերցնում էին մի պատառ, այսպես մանկլավիկները շարունակեցին մեր առաջ դնել և վերցնել այնքան պնակ, վոր յես մինչև քառասուն հաշվելուց հետո ձանձրացա, բայց կարծում եմ վոր ամբողջ թիվը յոթանասունից պակաս և վոր ավելի լիներ, և նրանք վոր յես ճաշակեցի՝ (քառասուն, թերևս հիսուն), մեծ մասը լավ էր ու ախորժահաճ, և մի քանիսը այնքան մասնավոր գերազանցություն ունեին, վոր կարող էին ավելացնել փարիզյան վճռևե խոհարարի հռչակը։ Շերբեթն էլ նույնպես նրբաճաշակ համ ուներ, և մենք վերջացրինք, ինչպես սկսած էինք լվալով, մեր ձեռքերը։ Այս ընդունելության ընթացքում, վոր բավական ժամանակ տևեց, մեզ պարտավորեցրին գործիքային ու ձայնական յուրաքանչյուր մարդ նվագում էին փոքրիկ ջութակներով, այն տեսակ վոր կոչվում է rebab (rebab); յերկու կոճը կլիճաոի վրա, յերբեմն յերբեմն յերգելով շատ նուրբ ու քաղցրաձայն յեղանակով, և մասնավորապես այդպես,—

առնվազն իմ կարծիքով, — յերբ նրանք նվագում էին Պարսկաստանի յեղանակները, և թեև լրենք Թուրք էին, սակայն թվում էր թե գերազանցում էին սրանց մեջ, հավանորեն իրենցից ավելի նախապատվություն տալով նրանց։ Յես շատ հաճույք զգացի մի անգամ ևս լսելով մի քաղցր յերգ, վոր ընտանի դարձած էր իմ ականջին Շիրազի ու Թեհրանի մեջ։ Սուրճից ու ծխամորճից հետո, փաշան շատ քաղաքավարի խոսքերով մի գեղեցիկ ձի նվիրեց ինձ, և յես մեկնեցի ճամբարից, վոր յերեսում էր թե փոքր տարածություն ուներ և ավելի հաճելի մի ամառանոց էր, քան զինվորական մի բանակատեղ։ Հյուսեյին խանը ընկերացավ ինձ մինչև Իլիջա, ճամբարից հինգ-վեց մղոն հեռու և մոտավորապես այդքան Երզրումից, վոր քաղաքում մեհմանդարի իր պաշտոնը վերջացած էր, և այժմ հրաժեշտ առավ, մտադիր լինելով հաջորդ որը վերադառնալ դեպի Թավրիզ։

Իլիջան յերկար ժամանակից ի վեր հաշմանդամների ապաստարան և դարձել իր բնականից տաք աղբյուրների շնորհիվ, վորոնց մասին յես քաղում եմ մի հատված մի հաղվագյուտ ձեռագրից, Շեջրեթ Մուստաֆեվի (Shejret Mustafevy). «Արզըն ար'ռւմ մի նշանավոր քաղաք է, և այնտեղ կա Այեն ալ Ֆորաս (Aien al Forát), — կամ Յեփրատի աղբյուրները, — կոչված աղբյուրը. ով վոր գարնան ժամանակ լողանում է կամ լվացվում այս աղբյուրի ջրում, զերծ է մնում հիվանդություններից»։ Բաղնիքները յես չայցելեցի, բայց մասամբ լվացվեցի Յեփրատի մեջ, վոր առուն, այժմ շատ ծանծաղ, հոսում է այնպիսի մի լայն հունի միջից, վոր ուրիշ յեղանակում գետը այստեղ պետք է վոր բավական մեծ լիներ, թեև այնքան մոտ է աղբյուրը և այնքան հեռու է վերջին կետից՝ պարսկական ծովից։ Յես նկատեցի վոր վոմանք անունը ճշտորեն էին արտասանում, ինչպես գրվում է Frat կամ Forát, ուրիշները առաջին տառին այնպիսի ձայն էին տալիս, m և v, այսպես Mvorát կամ Mvorád, և թերևս արտասանությունից ծագում առած է Մուրադ (Morad)

անունը, որ մի կարգ քարտեղներում դանագանվում է որպես մի ուրիշ ճյուղ այս նշանավոր գետի։

Գտնում ենք որ Պլինիոսի «Բնական պատմութեան» մեջ Իլիսոն յերկու անգամ հիշատակված է, (և պետք է ասել որ ներկա անունովը)։ Նա նկարագրելով Յեվրատը ցույց է տալիս այս գետի ընթացքը դեպի Տավրոս լեռը, հայկական Elegia-ի մոտ, մի ավան կամ քաղաք, որ Պազոմեոս, Սոլինոս և Ստեփանոս Բյուզանդիոս նույնպես հիշատակում են։ Այս վայրում տեղի ունեցավ մի հիշատակելի կոտորած (162 թվին), յերբ հռովմեական մի բանակ, կապադովկիայի կառավարիչ Սեվերիանոսի[հրամանատարությամբ] բանակած եր այստեղ, կատարելապես բնաջնջվեց պարթևներից հրահանատարությամբ Վազարշակ (Valogaesus) յերկրորդի, որ պաշարած լինելով նրանց, ազեղնահար արեց բոլոր հասարակ զինվորներին և նրանց գլխավորներին, ինչպես յերևում է Դիոնի կամ Դիոյի (Dion or Dio) պատմական գործի մեջ, քաղված Քսիֆիլինոսի (Xiphilinus) կողմից։

Մենք մեկնեցինք 29-ի առաւօտեան և հասանք Աշկալա (Ashkelaah) փոքրիկ գյուղը, Իլիջայից 26 կամ 27 մղոն հեռու, ճանապարհը լավ եր, որի վրա տեսանք շատ կառքեր, բայց միմիայն մի շենք, մի ավերակ խարխուսուրա, գտնվելով դրեթե ճանապարհի կեսին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սերբազ, հոգնակի Սերբազք, կոչվում էին յեվրոպական կարգապահությամբ մարզված զորամասի զինվորները։ Աւուլէյն ասում է, թե սերբազի նշանակում է «Գլխի հետ խաղացողներ», «նրանք որոնք սպորտ են համարում գլուխ կտրել կամ լրենց գլուխը վրա տալ», (Ousely, «Travels», III. p. 405)։ Անգլիացիները քաջալերում էին զինվորական այս կազմակերպությունը և մեր ուղեկիցը հաղորդում է, որ անգլիական դեսպան սըր Գոր Աուզլեյ 1812 թ. հունիսին, յերբ Թեհրանից Թավրիզ եր գնում, իր հետ առնում եր 35.000 փունտ ստերլինգ սերբազների մեջ բաժանելու համար. (ibid, III. 45)։ Բառացիորեն սեր պարսկերեն նշանակում է գլուխ. խակ բազ խոզալ։

2. Որդուբադ, Որդուատ կամ Որդվատ, պատմական Գողթն գավառ, Սիսական նահանգում, այժմ Մորդրդային Նախիջևանի ինքնավար հանրապետության մեջ։ Որդուբադ կոչվում է նաև քաղաքը, ձորի ստորին կողմը յերկու կիլոմետրից ավելի հեռու Արաքսից։ Այս անվան ստուգաբանությունը ու ծագումն անծանոթ է։ Առաջին անգամ հիշատակվում է Ժ.Ա. դարում Սարգիս կաթուղիկոսի կոնդակում, իբրև վիճակ կամ գավառակ։ Քաղաքը գեղեցիկ ու վայրենի մի տեսարան ունի, շրջապատված և պարտեզներով ու առատ բուսականությամբ։ Որդուբադի հայ բնակիչները 1827-ին գաղթել են Պարսկաստանից։ 1873 թ. վիճակագրությամբ այս ավանը ուներ 840 տուն 3500 բնակչությամբ, որի մեծամասնությունը թուրք էին. (Ալիշան, «Սիսական» էջ 318—319)։ Բնակչության թիվը 1926-ի մարդահամարով 3739 եր, ամբողջությամբ թուրք։

3. Ջուլֆա, Ջուղա, յեվրոպացի ճանապարհորդները գրում են Djoulfa, Giulfa, Iulfa, Zulfa, Julfa. Sulfa. Diulfa. Tulfa, Iula, Chiulfa, Zugha, Usulfa: Կոչվում է հին Ջուղա, գանագանվելու համար Նոր Ջուղայից։ Ամենայալում ծանոթ մի մեծ ավան եր, նրա ծագման շրջանը Ժ.Ջ. դարում է, ընորհիվ իր առևտրին, որ ժամանակ ժողովը նրա բնակիչների թիվը համարում են 40.000, բայց ի նկատի ունենալով նրա տարածությունը առնվազն 12.000 բնակիչ ուներ։ Նշանավոր եր Ջուղայի կամուրջը Արաքսի վրա Ժ.Ի. դարի վերջերին, յերբ Լենկթիմուրը անցավ այստեղից։ Ժ.Ի. դարի վերջերին սկսում է Ջուղայի առևտրական կապիտալի զարգացումը. սկզբում խոջաները փերզական եյին, ինչպես գրում է Առաքել պատմիչը. «Պրատուք և լըզուք գիտէր ի դիւցս (երկիան) վաճառել զիտավ, զատար, զչիթ և զալաջայ և զայլ ինչ»։ Այնուհետև առևտուրը սկսավ գարգանալ Ջուղայում և գանվելով Պարսկաստանի ու Անդրկովկասի կարավանի ճանապարհի վրա, գարձավ հայ առևտրական կապիտալի կենտրոնը, յերբ այլևս չկային Արծն, Անի և այլն։ Բնակչությունը զուտ հայ եր։ Ժ.Ի դարի սկզբնավորության, (1606), Շահ Աբբասը Ջուղայի հայ բնակչությունը տեղափոխեց Պարսկաստան և հաստատեց Սպահանի մոտ Նոր Ջուղայում։ Մինում է մինչև հիմա հին գերեզմանատունը, բազմաթիվ հուշարձաններով։ Ժ.Ի. դարի սկզբին գաղթական հայերը հաստատված եյին Ջուղայի ավերակների մեջ, ինչպես հիշատակում են Աւուլեյ, Մորիեր, Կեր Փորտըր և ուրիշները։ Ջուղա 1926 թվի մարդահամարով ուներ 667 հայ և թուրք բնակիչ։ (Տես, «Սիսականում», էջ 409—412. Morier, «Travels», Ker Porter, Kotzebue, այլ ուղեգիրներ)։

4. Ջուղայի կամուրջը գտնվում է Խոջա Նազարի Արաքսի յերկու ափերում կառուցած քարվանսարայների մոտ։ Ալիշանը («Սիսական», էջ 423) ասում է թե ժողովը կարծում են թե այս կամուրջը Պոմպեոսը շինած է և ավերացնում է թե յարդ տեղում են կամարների չորս սյուները։

նները կոփածո քարից. չորս կամարներից յերկուքը ջրի մեջ և յերկուքը ցամաքի վրա։ Կեր Փորտերը ժամանակաւոր նկարագրում է այս կամրջի ավերակները, սակայն նրա ուղեգրութիւնը այս հատորում։

5. Խոջա Նազարին հիշատակում են ուղեգիրներից շատերը։ Նա լեհի և Ջուղայի ամենահարուստ, շինող և քարվանսարայներ, իր աղջկան հիշատակին մի աստարակ և այլ կառուցվածքներ։ Մնում է նրա գերեզմանաքարը, որ այժմ գտնվում է Թիֆլիսի Գևորգեանում, և կրում և հետևյալ արձանագրութիւնը. —

«Այս է հանգիստ Մանուկ Նազարին, թվ. ՌԻԻ (1578 թ.)։ Յիշեցեք և որ Խոջա Նազարը հայրն եր Խոջա Մաչիկի, որ այնքան փառաւոր բնդունելութիւն տուավ Շահ Աբբասին։ Նազարը համարվում և Լազարյան ընտանիքի նախահայրերից մեկը։

6. Թաթար կոչվում եյին թրքական սուբհանդակները. տես եջ 335 ծանոթ 2։

7. Նախիջևան կամ Բոջաչայ գետը բղխում և վայոց ձորի և Ծղկոց լեռների թիկունքից և մեանալով Ճահուկ ու Շահարոն գետակների հետ թափվում և Արաքս՝ Աբբասաբադի մոտ։ Շարդենի ժամանակ Նախիջևան գետի կամուրջը կանգուն եր և ուներ տասնմեկ կամ տասներկու կամար, որանցից մի քանիսը տակավին մնում են։

8 Սուրմարի, Սուրմալու, տես «Ուղեգրութիւններ» Ա. հատոր, եջ 119 ծանոթ. 8։

9. Հնդկայուղի բույս (castor plants)։

10. Ցենգիջան, Ցենգիջե չի գտնվում արաւանի ճանապարհների վրա, այլ Նորաշենից (հա՛) դեպի արևելյան ուղղութիւն, վոչ շատ հեռու Արաքսից և Շահրիար գյուղի մոտ։ 1926 թ. ի մարդահամարով Ցենգիջան ուներ 1921 թուրք աղգաբնակչութիւն։

11. Դուդանգա Շարուրի շրջանում միակը թրքաբնակ գյուղ, վոչ շատ հեռու Յիննիջեվից, Շահրիարից և Բարխանից։

12. Դավալու, տես եջ 319 ծանոթ. 9։

13. Հարյուրապետ Մոնտիեթին հիշատակում են այդ ժամանակամիջոցի դրեթե բոլոր ուղեգիրները և նրանցից շատերը իրենց տեղագրական, աշխարհագրական և հաճախ քաղաքական տեղեկութիւնները քաղում են նրանից։ Նա Հնդկաստանի բանակի անգլիացի սպաներից եր, որ յեկած եր Պարսկաստան վորպես բանակի հրահանգիչ։ Նա յերկար տարիներ ապրած և թափրիզում, յերևանում և ընդհանրապես քաջածանոթ և Անդրկովկասի իր ժամանակի քաղաքական կացութեան և ժողովուրդներին

Անգլիա վերադարձին հարյուրապետ Մոնտիեթը սահմանափակ թվով (100 րնդհակ) տպագրել և իր տեղեկագիրը, վորի մի պատճենն ունենք մեր աբամադրութեան տակ և պիտի տանք նրա թարգմանութիւնը «Ուղեգրութիւնների» հաջորդ հատորում։

12. Կարա Կալա կամ Ջաղակերտ մի փոքր գյուղ և բերդատեղի Սուրմալուի հարավային արևելյան կողմը, Արաքս գետի մոտ։ Բառացիորեն նշանակում և սեվ բերդ, և այսպես կոչված և սև քարով շինված լինելուն համար։ Բերդը, վոր չափավոր մեծութիւն ունի, կառուցված և հրաբխային մի բլրակի գլուխը, Արաքսի ձանձաղուտի վրա, հարավից մի նեղ ցամաքով միանում է գյուղի հետ, ուր կառուցված եյին յերկու ամուր աշտարակներ. պարսպի շուրջն էլ կան շատ հիսակործան աշտարակներ, բայց արձանագրութիւններ չկան։ Բերդը յերեք կողմից շրջապատված եր Արաքս գետով և խոր ձորերով, իսկ նեղ ցամաքի կողմից պարսպով, շինված կոփածո կարմրագույն պորփյուր քարով և սև խանձաքարերով, շատ վայելուչ ու ճարտարորեն կառուցված և և տեղ տեղ կան հայկական խաչքարեր։ Պարիսպների մի մասը նորոգված և վերջին ժամանակներում, խոշոր քառակուսի սև քարերով, բայց հին շինքի վայելչութիւնից զուրկ եւ Գյուղի վարի կողմը յերևում են լքված հին հնձանների ու այգիների տեղերը։ Մինչև ռուս-պարսկական պատերազմները այստեղ բնակում եյին պարսիկներ, վորոնց արձանագրութիւն ունեցող գերեզմաններ կան հայերի հին խոյաձև և այլ տեսակ գերեզմանների մոտ, վորոնց միջումն և նաև սրագմբեթ, տասնյերկու կողմանի մի շինիւմ, կոփածո կարմրագույն քարով։ Հայտնի չե թե հայերը յերբ են լքել այս գյուղը, վոր հին ժամանակներում յեղել և քաղաք-ավան։ Դյուբուա, 1834 թ. ժամա 18-ին այստեղ այցելած ժամանակ, դրում և թե մի քանի հայ ընտանիք դեռ նոր եյին յեկել բնակելու պարսիկների լքած տներում (Dubois, IV. 446) սակայն յերկար ժամանակից ի վեր հայ բնակիչներ չկան այս գյուղում և այնտեղ բնակում են սակավաթիվ քուրդեր։ Բերդի ավերակների մոտ տեսնվում են Արաքսի վրա ձգված մի կամրջի մնացորդները։ Դյուբուա կարծում և թե սա հին Տիգրանակերտն եւ Մի ուրիշը համարում և Արտագերից բերդը, կամ Ստրաբոնի հիշած Արշատը։ Ալիշան ավելի հավանական և համարում Ջաղակերտ ավանը. («Այրարատ», եջ 122—124)։

15. Աուզլեյն ասում և թե սարդարը բարնացակամ վերաբերմունք ունեը եջմիածնի վերաբերմամբ և նյութապես ոժանդակում եր։ Մինչ Մուրիները, Ռոցեբուեն և ուրիշները պատմում են թե Յերևանի սարդարը ուղղակի և անուղղակի միջոցներով կողոպտում եր եջմիածնի վանքը։ Այս յերկուսի տեղեկութիւններն էլ կարող են ուղիղ լինել։ Սարդարը ոժանդակում եր և Թույլ եր տալիս հոգևորականներին հարստանալու և ապա նրանցից առանալու իր բաժինը։

Նջմիածնի Պետ. արխիվում կան բավական փաստաթղթեր պարսիկ խանի կատարած կողոպուտների մասին։

Նջմ. Պետ. արխիվ վավերագիր № 2666. 1821 թ. Հաշվեցուցակ, որի վերնագիրն է. —

«Հանդամանք պարտուցն ամռոյ, թէ որպէս եղև որ յառաջացաւ և դիզուեցաւ, որ անհնարին եղև վճարումն նշանակի համառօտիւ.—

= 1809 ամի Ապաղ Միրզան 3 հզր. մարդով քակել տայ Արևմուտ և Հյուսիսային կողմն բերդի ամռոյս։ Կաշառօք ազատին ընծայական 800 թմն։

= 1811 ամ բռնի պարսիկք ճառիմայ [տուգանք] առին Ամռոէս պարտուք վճարեցաւ — 1000 թմն.։

= 1820 ամի Հասան խանն անծածկաբար բռնի ճառիմայ առաւ ամռոէն 1200 թմն.։

= 1810 ամէ մինչև 1821 ամն ժողմայ տուաք պարտուք տարին 400 թ.ումն.։ Ցամն [դումարն] 4.400 թումն։

Մի այլ վավերագիր. —

Նջմ. Պետ. Արխիվ վավերագիրը №. 2560, 1828 թ.։

Վավերագիրը պարունակում է պարսիկ խանի բռնութեամբ խլած մանր դումարների հաշիվը։ Վավերագիրը բերում ենք ամբողջութեամբ։

«Ի սրյ. Նջմիածնայ տարեալ է բռնութեամբ [անունը անվերծանելի, թվում է Ապազ] Ղուլի Խանն գոր ի ներքոյ նշանակեալն.

= 1810 ամի բռնի առեալ է ի Ներսէս սրբազանէն 50 թմն. նաղդ.

= 1826 ամի Հոկտ. 1-ին բռնի տարեալ և ասպաթակապ փայտ չաքմաչային [արկղ] 50 թ.ումն.։

= 1826 ամի հոկտ. բռնի տարեալ է 45 թմն.։

= 1826 ամի 8 թմն.։

= 1824 բռնի լուսաբար սրբազան Յովհաննես Հօրէն առեալ է 9 թմն.

50 թմն.
45 »
50 »
8 »
9 »

162 թումանս։

Գումարն լինի հարիւր վաթսուն և երկու թումանս։ Զայս գրիչն հանեալ ընդմիածնայ ժուռնալէն գրեցի ասաէն 1828 դեկտ. 4։

Վհպտեն. Յովսէփ վրդ.»

16 Սուսիանա (Susiana) Պարսկաստանի մի նահանգ, ելամ, որի կենտրոնն եր Շոշ կամ Շուշա, Դարեհ Ա.-ի և նրա հաջորդների մայրաքաղաքը, Զանդրոս լեռնաշղթայի տակ, կարևա գետի յիզերք և վոչ հեռու Քարուն գետից։

17. Համդալլահ իր Պարսկաստանի աշխարհագրության յոթերորդ գլուխը նվիրում է Ռումի նկարագրության, և գրում է. «Այս յերկիրը շրջապատված է [հետևյալ յերկրներով]. Արմեն (*Հայաստան*), Գուրջիստան (*Վրաստան*), Սիա (*Կիլիկիա*). Միսր (*Եգիպտոս*), Շամ (*Սուրիա*) և Ռումի ծով կամ Մրջերկրականը». (Ousely, vol. III p. 448, note 28)։

18. Աուզլեյի նման կեր Փորտերն էլ նույն սխալն է գործում, կարծելով թե Կարա Կալան հին Արմավիրն է, վոր գտնվում է Արաքսի այս յեզերք, այժմու Ղուրդուղոլուի շրջանում, Խորհրդային Հայաստանում։

19. Շիրակի Գյումեն լեռան հարավակողմ յերկք կիլոմետր հեռու։ Տիկոր գետից կրկին հեռավորությամբ, կարս տանող կարավանի ճանապարհի վրա Նախիջևան կամ Նախճավան յերբեմնի հայաբնակ մեծ գյուղ։ Այստեղ կան մինչև 1035 թ. կրող լարե արձանագրություններ։ Նախիջևան գտնվում է մի ամայի դաշտում։ Այս վայր հիշում են նաև մի քանի այլ ճանապարհորդներ։ (Ալիշան, «Շիրակ» եջ 135—136)։

20. Խանի գյուղ կազմվանի և կարսի վերևն ճանապարհի վրա՝ կարսից 16 կիլոմետր հեռու։ 1914 թ. պատերազմից առաջ այս գյուղն ուներ 64 տուն հայ բնակչություն։ Այստեղ կան ընդարձակ ավերակներ և յենքաքարվում և վոր անցյալում կոչվում եր Իշխանի գյուղ։

21. Թազանլը, Սարըքամիչ գետի մերձակայքում, գտնվում և մի շարք գյուղերի խմբում, ինչպես Չիրաչլու, Յորթուլու. կարա կալե, Բոյալը, Սալուա, Վևրևշեն, Նալ-Ոդլու, Կատո-Նլը, կալե-քեոյ, Հալերչիկ և այլն։

22. Մժնկերտ, տես եջ 366 ծանոթ. 6։

23. Ջերմիկ պարսկերեն Արիգերմ այսինքն տաք ջուր, ջերմուկ. հին կարավանի ճանապարհի վրա, 5010 վոտք բարձր, ծծմբային հանքաջուր, վորի վրա քարաշեն մի կառուցվածք և յիզել անցյալում, այժմ ավերակ։ Շրջակայքում տեսնվում են մարած հրաբուխի հետքեր։ Մեծ առատությամբ կա ապակե քար, (lapis obsidianus)։ Բարձունքն և ձորը պատված են դեղնակարմիր տուֆի քարով։

24. Ջերմիկից տասնվեց կամ տասնյոթը մղոն հեռավորության վրա Բեկերովա կամ Բետրովաս անուն գյուղ չկա. դառնալով Աուզլեյի նկարագրական հավանորեն խոսքասան գյուղն է, բայն գտնում, Ջարսից չորս ժամ հեռու և Արաքս գետի մոտ. 1829 թ. ռուս թրքական պատերազմից առաջ կարևոր հայկական մի կենտրոն եր, սակայն ռուսական նահանջից հետո, հայերից մեծագույն մասը գաղթեց։ Այժմ, իբր հետևանք իմպերիալիստական պատերազմի այլևս հայեր չկան այնտեղ։

25. Հատած կալե, տես «Ուղեգրություններ» Ա. Հատոր, եջ 118 ծանոթ. 5 և եջ 460 ծանոթ. 6։

26. Այվաթ, տես եջ 103 ծանոթ 4։

27. Զավուշ կոչվում են թրքական բանակի տասնապետները։

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐԸ*

(Ոգոստոս 1811)

Մի քանի հայեր դիմած լինելով բժշկական ոգնութեան, ես ընկերացա վերաբուժ Մր. Շարփին՝ գնալու համար Ջուղա (Julfa), ուր այցելեցինք մի հիւանդոտ ծերուհու, և ուր մենք հյուրասիրվեցինք նրա բարեկամների ու յարեխառնների կողմից քաղցրավենիքով, կարկանդակով և մի կաղնների կողմից քաղցրավենիքով, կարկանդակով և մի կաղ- դուրիչով՝ շինված խաղողից թորված արադից, հագեցված համեմներով։ Մեզ Թուլլաարեցին այցելելու պաշտամունքի վայրեր և կուլսերի վանքը, կամ «դասերց յեկեղեցին» Քիլի- սիա-ի—Դուխտերաճ (Kelisiá-i-Dukhteran), ինչպես պարսիկ- ներն են ասում։ Մենք տեսանք նմանապես այդ բարեպաշտ կուլսերը, թիվով տասնութը հոգի, որոնցից մեկը միայն, իմ կարծիքով, կարելի յե ասել որ չափավոր գեղեցկութիւն ուներ։ Նրանք ևս յեռանդուն կերպով հյուրասիրեցին մեզ։ Նախկին տասնյերեք յեկեղեցիներից, ինչպես իմացա, տա- կավին յոթը մնում են. մեր տեսած յերկուքը կամ յերեքը շուայլորեն զարդարված եյին, կամ ավելի ճիշտ շարված եյին սրբերի պատկերներով, նկարված վոչ վարպետ ձեռքով և մի քանի տարօրինակ նկարներ՝ դժոխքի, սանդարամետային տանջանքների ու դիմանկարներ գլխավոր դեմերի։

Ջուղան գրավում է մի ընդարձակ հողամաս, պարսպ- ներով մեսին, որոնցից մեկը խալիֆայի [պարսպ] կոչ- վածը (Bagh-i-Khalifah) մի քանի տարվան մեջ արտադրած է քսան հազար մանե սերկեվիլ։ Պարսկաստանի բնակչութեան

*) Ousely հատ. III. եջ 46—47։

ընդհանուր նկատմամբ մեջ, այս քաղաքը շատ է տուժել, ինչպես կայմֆեր (Kaempfer) հայտարարում է, 1685 թվին, լինքնաղրվում է, որ պարունակում էր վոչ պակաս քան յե- րեսուն հազար հոգի, և մի տեղացուց իմ ստացած տեղե- կութեան համաձայն՝ Շահ Աբբասի ժամանակ պարունակում էր յերկու հազար տուն կամ ընտանիք, որ թիվը այժմ իջած է յերեք հարյուր յերեսունի, կամ ամենաշատը չորս հարյուրի։ Բնակիչները քրիստոնյա յեն, որոնց նախահայ- րերին այդ միապետը բռնութեամբ փոխադրեց իրենց բնա- վայրից, Հայաստանի Ջուղա [քաղաքից], թուլատրելով նրանց, վորպես փոխարինութեան իր բռնապետութեան, իրենց հին քաղաքի անունը դնելու նրանց բնակութեան համար հատ- կացրած նոր տեղի վրա, սակայն նա ավելի իրական վոր- ձահատուցում կատարեց, տալով նրանց անձնական պաշտ- պանութեյուն և քաջալերելով նրանց իրենց առևտրական գործառնութեյանց մեջ։ Բայց նրա, [Շահ Աբբասի], հաջորդ- ները, հատատաելով ծայրահեղ հարկերի ու տուրքերի կոր- ծանարար դրութեյունը և կամայականորեն կամ ագահորեն բռնադրավումներ կատարելով, այդ յերրեմնի ծաղկյալ ու բազմաթիվ գաղութի սակավաթիվ մնացորդները յենթարկվել են շշլոտ կացութեյան, և նրա ներկա անդամները ամեն որ յենթակա յեն իրենց մահմեդական դրացիների գազանական ամբարտավանութեյան։

Ջուղայում բնակում են նաև տասնութը կամ քսան կաթոլիկներ, որոնց մենք գտանք այնպիսի աղքատութեյան ու տգիտության մեջ, որ նույն իսկ անգլիացի պարոնների կողմից նվիրված մի քանի գինա կամ բուժաց ամենամեծ յերախտագիտութեյամբ ընդունվեց նրանց և նրանց յեպիս- կոպոսի կողմից։ Դեսպանը անմիջապես ոգնութեյուն տվավ, և ի գործ դրավ իր ազդեցութեյունը այստեղի բոլոր քրիս- տոնյաների համար միայն բարվոքում ձեռք բերելու հա- մար։ Ամին ադ Դովլեից (Amin ad' doulch) խնդրեց նրանց պայմանների բարելավումը, և վերահաստատումը այն մի կարգ կարեվոր արտոնութեյունների, որ նրանց շնորհել էր այն միապետը [Շահ Աբբաս], որ առաջին անգամ փոխադրել էր նրանց իրենց բնիկ յերկրից։



Պարսիկ ուղտավոր բնդաւնորածիգ, (Նկար Կոցեբուի)։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՐԻՑ ՖՈՆ ԿՈՑԵԲՈՒԻ

(1817)

Մորից ֆոն Կոցեբու Ռուսաստան ծնած գերմանացի մի սպա եր, որ ծառայում եր ռուսական բանակում և 1817 թվին անդամ եր դեսպանութեյան։ Նա մանրամասն ու ճշդիւթ նկարագրական և տալիս Յերմոլովի դեպի Պարսկաստան կատարած ուղեվորութեյան, և յերևան և բերում դիվանագիտական այն կատակերգութեյունը, որ ռուսական իմպերիալիզմը կատարում եր իր նվաճողական քաղաքականութեյունը առաջ մղելու և իր իշխանութեյունը տարածելու համար դեպի հարավ։ Կոցեբուի ուղեգրութեյունը լույս և տեսել 1818 թվին գերմաներեն և 1819 թ. անգլիերեն լեզուներով։ Հրատարակված և մեծամանակ ֆրանսերեն թարգմանութեյունը։ Մեր ձեռքի տակ ունեցածը անգլիերեն հրատարակութեյունն և, հետևյալ խորագրով «Narative of a Journey into Persia, in the suite of the Imperial Russian Embassy, in the Year 1817. By Moritz von Kotzebue, captain of the staff of the Russian army, Knight of the order of St. Wladimir of Russia, and of the Persian order of the Sun and Lion, London, 1819.

Այս աշխատութեյունը գլուխներ ու բաժանմունքներ չունի, հետևաբար բոլոր բաժանուածները կատարված են մեր կողմից և յուրաքանչյուր գլխին դրված են պատշաճ խորագրեր։

Ա. ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ*

Վերովհետև իմ միակ նպատակն է իմ ուղեվորութեան տպավորութիւնները նկարագրել, ծիծաղելի պիտի լինի Վրաստանի (Grusia) նկարագրութիւնը անել, մանավորապես յերբ այդ նյութի մասին բաղմաթիվ լավ գրքեր կան։ Ամեն վոք գիտե վոր դա գտնվում է Սև ու Կասպից ծովերի միջև, հյուսիսային լայնության 40-րդ աստիճանի վրա։ Նրա գորավոր դրացիները՝ թուրքերն ու պարսիկները բազմաթիվ անգամներ կատաղորեն վոտնակոխ են արել այս դժբախտ յերկիրը, վորովհետև վրացիները քրիստոնյա են։ Վրաստանը չի կարողացել խուսափել նրանց իշխողների արշավանքներից, յերբեք հանգստություն չի վայելել և միշտ ել յեղել է դրացի յերկրների միջև մի buffet։ Դաշնակցությունը պարսիկների հետ, տեղի է ավել պատերազմի թուրքերի դեմ, և յերբ հաշտության մեջ է գտնվել վերջիններիս հետ, կողոպտվել և առաջիններին կողմից։ Յերկիրը չափազանց տկար եր՝ պահպանելու համար իր անկախությունը կամ մինչև իսկ իր չեզոքությունը։ Ընդհանուր աղքատությունն և հուսահատությունը աճում եյին որից որ, հետևաբար ավելի լավ յելք չկար, քան ռուսական կայսրությունից կախում ունենալը, մի յելք, վորի համար նրանք յերբեք չեն ղջացել։ Հակառակ պատերազմի, հունձքի ձախողության, ժանտախտի, և ազատ իշխանների հարուցած ներքին խռովությունների, յերկիրը ավելի բարգավաճ է, քան նախկին շրջանում։ Սեփականությունը պաշտպանված է, հարկատվությունը ավելի մեղմ և ավելի արդար բաշխված բոլոր խավերի վրա, որնեղի

* Kotzebue, եջ 47—64։

առաջ իշխանն ու գյուղացին հավասար են. ժողովուրդը որոշում է Ալեքսանդրին։ Յարի [վրաստանի թագավորի] որով ամեն մի իշխան ու ամեն մեկ ազնվական անսահման իշխանություն ուներ։ Նա թալանում ու կողոպտում եր իր վասալներին, առանց պատասխանատու լինելու վորևե հզորի։ Բայց այդ դրությունը այժմ վերջ է դտել, թեև հավանորեն յերկրի իշխանների մեջ կան վոմանք, վոր ցավում են իրենց ապորեն իշխանության կորստի համար, և չեն սիրում նորկա կարգերը։ Նախապես մարդ չեր կարող հեռանալ Թիֆլիսի դռներից, առանց լեզգիների ձեռքն ընկնելու, ներկայումս ամբողջ վրաստանում մի քանի տեղեր կան միայն, ուր պետք կա ընկերակցող պահակազորի։ Ճանապարհները այնքան անապահով եյին, վոր առևտուրը չեր կարող ծաղկել, նույնիսկ ցարը [վրաստանի] անխղճորեն կողոպտում եր վաճառականներին, ներկայումս կան բավական մեծ թվով առևտրական տներ, վորոնք առևտուր են անում Պարսկաստանի և Աստրախանի հետ։

Ճանապարհները բոլոր նահանգներում անգործածելի եյին, և Թիֆլիսն իսկ թաղված եր ցեխի մեջ։ Այս քաղաքը իր ներկա բարգավաճ վիճակը պարտական է գեներալ Յերմոլովին։ Կարճ ժամանակվա ընթացքում նա կառուցել է տներ, մայթել և փողոցներ, և բացել է հրապարակներ, վորպեսզի ողը շարժի քաղաքի նեղ ու ադտոտ փողոցներից։ Կարճ խոսքով, ով վոր մի տարի առաջ հեռացել է Թիֆլիսից, հիմա չպիտի ճանաչի այդ։ Յերբ ընակիչները վերջապես ղգացին թե շատ ավելի հաճելի և ապրել տների քան ցեխակուտի մեջ, յերբ դուրսը դիտելու համար լուսամուտների պերճանքը բանտարկյալ կանանց համար ընդարմացան առել դարձավ, կառուցման մոլի տենչանքը հանկարծակի այնքան արագությամբ տարածվեց, վոր վոչ մեկ հատ անգործ բանվոր իսկ չեր ճարվում։ Ընդհանուր հրամանատարի նախկին տունը՝ յեվրոպական և ասիական ճարտարապետության ծիծաղելի մի խառնուրդ, քանդված և և նրա տեղը շինված և մի արդիական շենք, մի պեղեցիկ նա-

խագավիթով (piazza)։ Բնակիչները սկզբում ծուռ նայում այս նախագավիթին, բայց շուտով վոչ վոք գոհ չէր առանց մի նախագավիթի։ Յեթե այս մոլի տենչանքը շրջունակվի մի քանի տարի, Թիֆլիսը պիտի դառնա մի գեղեցիկ քաղաք։ Այնտեղի տաք բաղնիքները դեղագանցորեն լավ են, և յեթե նրանք ավելի պատշաճորեն դասավորեն, մարդը կարող է փորձել՝ ամբողջ որը այնտեղ անցկացնելու համար, բնակիչների նամանավանդ, վորոնք շարաթ որը ամբողջովին անցնում են այնտեղ։ Նրանք բաղնիք են տանում իրենց հետ ճաշատրճ, դինի, պանիր ու կիլիա, և շրջում ժամանակ են անց կացնում ամբողջ որը։ Նույնն են անում և կանայք, միայն նրանք ավելի ուշադրություն են դարձնում իրենց անձին։ Նրանք իրենց մազերն ու հոնքերը սև են ներկում և իրենց յեղունդները կարմիր։ Նրանք իրենց գինքը ապխտակ ու սև, և ապա նմանվում են մեր Օննդյան պռոպրիկներին։ Դուրս են գնում փաթաթված սև քողերի մեջ, և յուցադրում են միայն իրենց հոնքերը։ Նախապես, յերբ մի կին տեսնում եր վոր հեռվից մի ուրիշ և գալիս, և չեր կարող հեռանալ նրա ճանապարհից՝ փողոցները նեղ լինելու պատճառով, նա կանգ եր առնում յերեսը դարձնում դեպի պատը, մինչև անցներ վտանգավոր մարդը, սակայն կատակասեր ապտնները շուտով մի ուրիշ խորհեցան վերջ տալու համար այս վատ սովորության։ Յերբ նրանք հանդիպում եյին ուրիշներին, թաշկինակներով ծածկում եյին իրենց յերեսը և նրանց նման դառնում եյին դեպի պատը։ Յերկու կողմն էլ բազմաթիվ բողոքներ կանդնում եյին այս կերպ, խնդալով, և ապատևով թե վոր կողմը նախ տեղի պիտի տա, մինչև վոր ձանձրանային, և դլուխ տալով իրար հետևանալին։ Սակայն, այժմ այնքան վոխվել են կանայք, վոր ընդհակառակն, հնարավոր և վոր նրանք չափազանցության յերթան։ Միակ շեղումը վոր տղամարդիկ թույլատրում են իրենց կանանց, այն և կատուրին բարձրանալ կերակուր ու առնական որերին՝ թարմ ոդ ծծելու համար, և յերբ այս առթիվ շատերը հավաքվում են միասին, պարտք

են թմբկի ձայնով։ Նրանց թեվերի շարժումները հետաքրքիր են, բայց մի ջազզեսանների լայնությունը թագցնում է նրանց քայլերը։ Այս, սակայն, վոչ միայն արգելք է նրանց պարին, այլ նաև նրանք հազիվ թե կարող են քայլել։ Վրացի տիկնոջ քայլվածքը հիրավի խայտառակ է։

Մի ուրիշ հրապարակային զվարճություն կա, վորին կանանց թույլ և տրվում ներկա լինել, վորպես դիտող։ Բոլոր մեծ առնական որերին, գրեթե քաղաքի ամբողջ բնակչությունը քաղաքից դուրս և գնում մի վայր, ուր յերկու մասի են բաժանվում և դիրք գրավում։ Յերկու կողմի նպատակն է իրար քշել իրենց գրաված դիրքերից։ Շատ բնական է վոր այս տեսակ շարժումներին բնակիրանան կռիվը և իրար քար նետելը, և նրանք սովորություն ունեցին կարողանալ իրար փայտյա սուսերով։ Թեև փոքրիկ յերեխաները չեյին համարձակվում այս խառնակության մեջ մտնել, սակայն թիկունքից նրանք քարեր եյին նետում հակառակորդին, և փոխադարձաբար ընդունում, այնպես վոր վերջավորության վրանք կապում եյին, ուրիշները ընդունում եյին ճակատները և վրանք հաշմանդամ յեյին դարձնում վրա, վորքան էլ, սակայն, ընդհանուր լինի մայրական սերը, բոլոր բնակիչները պատրաստ եյին համարում, վորևե բողոք չդարձնել, նույնիսկ այն պարագաներում, յերբ հետևանքը մահացու լիներ։

Վորովհետև այս խաղերը յերբեք չեյին վերջանում առանց այդ բնույթի մեկ կամ յերկու դեպքերի, գեներալ Յերմոլովը ժամանակ համարեց միջամտելու, և բան այնմ այլևս թույլ չեր տալիս վոր կրկնվեն, միայն պայմանով վոր վոչ մեկ անձ չհամարձակի քար նետել կամ վայրկյան առաջացնել։ Մարդիկ խոստացան հարգել այս պայմանը, բայց չպահեցին իրենց խոսքը, վորովհետև յերբ կողմերից մեկը տեսնում եր վոր իր դիրքերից պիտի քշվի, տաքացած՝ վարկենական ապավորության տակ դիմում եր ամեն հնարավոր միջոցի՝

պահպանելու համար իր դիրքը, և վոչ մի բան այնքան բնական չեր այս պայմաններում, քան ապավինել քարին՝ ջանի վոր թվում եր թե ուրիշ մի բան չկար վերջ տալու համար այդան, խոպերը բոլորովին արդելվեցին, և կես համոզված եմ, վոր շատ մայրեր պատճառն այդ կարգադրությունը։ Այս խաղը կոչվում եր Թամաճա (Tamacha), և շատ հաճախ կիրկի առաջնակարգ պտղավաճառները մասնակցում եյին դրան։

Գեներալ Յերմոլովը ժողովրդին զրկելով այս արյունռուշտ զվարճությունից, առաջարկեց ավելի պիտելի մի խաղ, վոր պիտի բավական զժգոհություն պատճառեր Թաղաքի կենարոնում կար մի հին գերեզմանատուն, շատ հարդված հին գերեզմանաքարերի պատճառով. դա բավական տալածություն եր դրժում, և շրջապատված եր տեղի ամենակիզտոտ աղբերով։ Գեներալը հրամայեց վոր պատերը քանդվին, և գերեզմանաքարերը վերապարձվին այն ընտանիքներին, վորոնց պատկանում եր վորպեսզի կարելի լինի գտնել տինը հարթել։ Հարևան տներից գեղեցիկ ճակատներ ավելացրին և այդ վայրը այժմ պատիվ կրելի յեվրոպական վորևե քաղաքի։ Կատարված բարեփոխությունը նպաստում և մաքուր ոդի հայթայթման։ Մի յերեկո յերաժշտությամբ ու հրավառությամբ այս հրապարակի հանդիսավոր բացումը կատարվեց և քաղաքի բոլոր կանայք մերձակա տներից դիտատես յեղան առնակատարության։ Վորովհետև ընդհանուր հրամանատարը մտադիր և շարաթվան ընթացքում շատ անգամ կրկնել այս վայելքը, չեմ կասկածում վոր բնակիչները, վորոնք խորապես սիրում են յերաժշտությունը, շուտով պիտի մոռանան իրենց բամաճան։ Այն կարողությամբ, վոր գեներալ Յերմոլովն ընդհանրապես վարում և իրեն վստահված կառավարական բոլոր ճյուղերը, հույս և ներշնչում ինձ թե մի քանի տարվան ընթացքում վրաստանը պիտի իրագործե իր ընդհանուր բարեկարգությունը, ավելի քան ակնկալվում և։ Անկասկած պայմանները շատ խոչընդոտներ են ստեղծել այդ բարեկարգությունների ճանապարհի վրա, բայց

պետք և ընդունել թե մինչև հիմա շատ քիչ կամ կամ վոչինչ չի արված այս նպատակի համար։ Կայսրը շնորհում և, ինչվոր պահանջվում և, և յուրաքանչյուր ընդհանուր հրամանատարին տրված և գրեթե անսահման իշխանություն։

Կլիման ունի արտակարգ արևի մի պարգև, վոր գրեթե մշտական և։ Ասում են թե ամառվան տաքությունը անհանդուրժելի յե, բայց մերձակա բարձունքները զով ապաստան են տալիս։ Հյուսիսային քամին շարունակաբար փչում և Թիֆլիս քաղաքում, և բարեխառնում և այրող մթնոլորտը, բայց ոտարականները կարող են ամեն վտանգավոր ցրտառուքյուն ստանալ։ Ինակիչները չեն ազդվում, վորովհետև նրանք իրենց մանկությունից սովորել են ոդի շարունակական հոսանքին, և իրենց տների բոլոր կողմերը կան դռներ ու պատուհանները, վորոնցից հարատև մի հոսանք և ներխուժում։ Ամբողջ ձմրան ընթացքում, ձյունը միայն յերբեք շաբաթ և մնում գետնի վրա, և ցուրտը յերբեք 8° Ռեոմուրից չի անցնում։ Փետրվարին պաշտոնը կրկին ծածկվում են կանաչությամբ, և նշենիները լուրին ծաղկում են. անձրևը ընդհանրապես տեղում և մարտին, տաք յեղանակը հետևում և և խանձում ամբողջ բուսականությունը։ Զոր խոտերից դուրս են գալիս կարիճներ ու թունավոր սարդեր։ Այս միջոցին խայթումը քիչ անգամ մահացու յե, և յերբեք՝ նրանցի վնասված մասը, անմիջապես շրվիվ ձեթով, բայց յերբ ցեթե վնասված մասը, անմիջապես շրվիվ ձեթով, բայց յերբ նրանք սողոսկում են պատերի վրա, առաջ են բերում վտանգ պիտի հուզում, վոր ավելանում և յերբ գիշեր ժամանակ բզզում են անկողնու շուրջը։ Նրանց պատճառով վտանգավոր և տարածվել ընթարմացնող պաղ կանաչության վրա, ինչպես մենք սիրում ենք անել մեր կլիմայում. կարճ խոսքով նրանք կիրկի ժանտախտն են։

Պարահզները այստեղ բոլորովին անկանոն են, և պատրաստում են գլխավորապես վորթատունկ։ Գինին թեթև և, նմանում և Ջրանսայի լավ vin du pays-ի, բայց վոլբալի յե վոր բնակիչները չեն սովորում տակառ շինել։ Նրանք ավելի հարմար են գտնում վերցնել խոզի կաշին, և ներքնամասը

քարյուղով շփելուց հետո, լցնում են դինոիով, որը նրանք պահում կամ ուղարկում են այս կերպով։ Բարյուղը այնքան ոտաճելի համ և տալիս դինուն, որ առաջին անգամ խմելը դժվարին է, և միայն ժամանակ ու միայն սովորությունն պետք է ունենալ վարժվելու համար համին։ Ռաչետիկոնի (Racheticon) նահանգում, ուր յուղագործությունը պատրաստում, բնակիչները պահում են այն մեծ կարասներում, և միայն տեղի վրա խմվի, ասում են թե հետևալի է, բայց նրանք ևս հետու տեղեր ուղարկելու համար նմանապես լցնում են Բուրդուկ (Burduk) կոչված խոզի մորիների մեջ։ Գետը շատ առատ է, և գրեթե տարվան ամբողջ ընթացքում խոզով կարելի է գտնել։

Հերկրագործական մեքենան, և ընդհանրապես հողամշակությունը բավական պետք բարելավվի և հառաջադիմի շնորհիվ վաւերներգի գաղթականների, որոնք ընդհանուր հրամանատարի հրամերով գաղջալերված են հաստատվելու այս կերկրում։ Նրանք արդեն ժամանել են, և Թիֆլիսից քիչ հետու նրանց համար տներ են կառուցվում. նրանց կոչվի կենդանիներ, սերմացու, գրամական ոժանդակություն, ու մեկ խոսքով ինչ որ նրանք պետք ունենն, և կես շաբաթով դադարացում պետք ունենում տեսնելու մի գերմանացի գյուղացու, որ Թիֆլիսի շուկան է բերում լավ կարագ, պանիր և թերևս նույնիսկ պարենջուր։ Այս բարի մարդիկ ասում են թե Գերմանիայում ուտելիքի պակասության կա, և թե Հոլհանդիա հայտնության մեջ գրված է թե իրենք պետք է թափառեն մի ուրիշ կերկրում, իրենք էլ կայսրության անդամներն են և չեն կարող կրել այդքան թշվառություն։ Ինչ որ էլ լինի, նրանք պարկեշտ մարդիկ են, նրանց ընթացքը արժանի է որինակելի դառնալու, նրանք կերախտագիտությամբ ընդունում են ինչ որ [ուսա] կառավարությունը արել է ինդպատա իրենց, և հաստատորեն վոշոնել են խնդացի կերպով և հնազանդությամբ արժանի լինել այն պաշտպանության, որ նրանք վայելում են։ Ձեռ համոզված եմ, որ այս փոքրիկ գաղութը բավական մեծ

աղդեցություն պետք ունենա վրացիների բարոյականի վրա։ Դա շատ ցանկալի պետք լինի։

Հողը նշանավոր կերպով հարուստ է, և պետք ունի միայն թևեռներն փորելու։ Սերմը մեկին կերեսուն է տալիս և նույնիսկ ավելի, բայց բնության այս առատաձեռնությունը պատճառ է դառել, որ մարդիկ լինեն որոշ աստիճան անհոգ։ Վորովհետև գյուղերը միայն հողագործներ են, գինվորները լավ բնակարաններ չունեն, թեև գյուղացիները լավ են վարվում նրանց հետ։ Նախապես վոչ մեկ չի մտածել զորանոցներ կառուցանել վրաստանում, բայց նկերկա ընդհանուր հրամանատարը լրացրել է այս պահանջը, և նաղիը է եղել որ այս շինվերի առողջապահական դիրքի հետ միասին, նրանք գտնվեն ջրազացների մոտ, որ պետք պատան կառավարության պետք խնայի բավական մեծ ծախք, վոր նախապես կատարվում էր բանակի ցորենը աղալու համար։ Հերավել, գեներալը ստիպված էր Աստրախանից պահանջել և ստանալ կացին, թի, մուրճ և այլ բաներ, վորովհետև այդ ոչ այդ տեսակ առարկաները չեր կարող վորևե կերպ ճարել։ Թեև հունձքը այս կերկրում ընդհանրապես լավ է, և հետևարար հացահատիկը առատ, առատահնայնիվ կառավարությունը մինչև հիմա ստիպված էր մթերքները բերել Աստրախանից, ընդհանրապես ահագին ծախքով և մեծ դժվարությունով։ Այդ դրությունը այժմ վերջ է գտել, հացահատիկը գնվում է տեղի վրա, և մի փոքր ժամն է միայն ներածվում։

Նոյեմբեր ամսում ընդհանուր հրամանատարը այցելից ճակատը և այն վայրերը, ուր բնակում են Ռուսաստանի հարկատու տարրեր խաները։ Այս գլխավորները սովորություն ունեն տալու բավական նվերներ, որոնք մերժելը անկարելի է, առանց վիրավորելու նրանց։ Գեներալը մինչդեռ գտավ մերժելու սովորական նվերները, առանց վիրավորելու նրանց գնից վորևե մեկին. նա պարզապես պահանջից որ բացի վոչխարից, ուրիշ նվեր չտրվի իրեն, և վոչխարը կազմում է խաների գլխավոր հարստությունը։ Նորին գերազանցությունը անմիջապես կենդանիներին ուղարկեց գինվորներին,

այնպես վոր հնարավոր չեղավ պահել իրենց սեփական զավարները, վորովհետև արոտավայրի ընդհանուրի իրավունքը ընդհանուրի համար է և կենդանիները ամբողջ տարվան ընթացքում գտնում են կանաչություն։ Ձմեռը՝ վոչխարի նվիրատվութեան մեջ, մրցումի չկան իրար դեմ, այնպես վոր նվիրված վոչխարների թիվը վերջում հասավ 6000-ի, բոլորը բաժանված բանակի մեջ։ Այսպես զինվորը գրեթե ամեն որ ստանում է թարմ մսի իր պահիկը, առանց նվազեցնելու հոտի թիվը, վորովհետև վոչխարը այստեղ բազմանում է արագորեն։ Զինվորները ոգտվում են նաև մորթիներից։

Այս յերկրում վորսը նշանակալից կերպով առատ է։ Նապաստակ, յեղջերու, վայրի այծ և այլն շատ բազմաթիվ են. նաև փասյանը։ Վայրի գազաններից մեջ կա շնագայլ (jackall) մի տեսակ, վոր կոչվում է չեկալկա (tshekalka)։ Նմանում է գայլի, բայց ավելի փոքր և շատ ավելի կատաղի մի յերևույթ ունի, նրա հաչոցը ցնցում է հոգին, բայց այդ, շատ հանդուգն է, և զիշերը սողկում է ճամբարում՝ գողանալու համար զինվորի կոշիկները։ Յերբ շատ անօթի յե, մոտենում է վերեզմանատուն և փորելով դուրս է հանում նոր թաղվածների դիակները։ Բուրենիներ շատ բազմաթիվ են, բայց քիչ անգամ է լսվում վագրի մասին, թեև յեղակի մի պարագա առիթ ավալ տեսնելու մեկին։ Զինվորները հաճախ գնում են վորսորդութեան,— մի վարժութեուն, վոր վաշտերի հրամանատարները չեն վարանում թույլատրել, վորովհետև զինվորները այսպես ավելի լավ նշանառու են դառնում։ Պատահեց վոր յերկու նորակոչիկներ, վերջերս ժամանած Ռուսաստանից, ցանկութեուն ունեցան մի որվան սպորտ վայելելու։ Բավական ժամանակ թափառելուց հետո, նրանք տեսան մի մեծ կենդանի, վոր մեծ արագութեամբ վազում եր դեպի իրենց կողմը։ Նրանց հրացաններից մեկի կրակը վրիպեց, մյուս զինվորը պաղարյունութեուն ունեցավ, թույլ տալու վոր կենդանին բոլորովին մոտենա իրենց, և այնքան հաջող կերպով կրակեց նրա ճակատին, վոր նա

մեռած ընկավ իրենց վոտքի առաջ։ Անգիտակ այն վտանգին, վորին նրանք յենթարկվել եյին, զինվորները միմիայն հետաքրքրում եյին նրա մորթի գույնորով, և իրենց հետ բերին քաշ տալով հսկա մեծութեամբ մի վագրի։ Յերբեք յես չեյի տեսել այնքան գեղեցիկ մորթ։ Արժանավոր նորակոչիկը վրչ նվազ զարմացավ՝ լսելով վոր ինքը կատարել է հերոսական մի գործ։ Կարող է լինել վոր այս վագրը Բաղդատի շրջակայքից յեկել եր անօթութեան պատճառով։... [Այստեղ մեր ուղեգիրը պատմում է կովկասյան մահմեդականների մեկնկե ուխտագնացութեան մասին, վորին առիթ և տվել ուխտավորների մի կարավանի անցքը Թիֆլիսից։ Այս մասի թարգմանութեունը դանց ենք առնում]։

Բ. ՅԵՐՄՈԼՈՎԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒՄԸ

Դեսպանութեյան անդամները հետևեան հավաքվեցին Թիֆլիս և մենք հաճելի կերպով անց կացրինք մեր ժամանակը։ Նոր տարու որը դեսպանի [Յերմոլովի] համար հաճելի մի անակնկալ յեղավ մեր ներկայացում, որ շատ կարող կերպով կատարեցին դեսպանութեյան անդամներից վոմանք։ Բազմաթիվ վրացիներ, որոնք նախապես յերբեք այսպիսի բան չեյին տեսել, նախ շատ ծիծաղեցին, բայց շուտով սկսան հորանջել և ի վերջս քնեցին։ Մեր նորութեի այս դիմաբութեյան թվումը ամբողջացնելու համար, պետք է ավելացնեմ թե միևնույն պարոնները, մի քանի որ հետո, ավելի մի պարահանդես, որի ընթացքում մենք զոհունակութեյուն ունեցանք լսելու մի դաշնամուր (piano-forte), որ Պետերբուրգից անվնաս վոխադրված եր Կովկասի քայքայիչ ճանապարհներից։

Մեր ժամանումը պարսից կառավարութեյան տեղեկացնելու համար, խորհրդական Մասարովիչ (Masarowitsh) և Պ. դը Ռիկարդ (de Ricard) ուղարկվեցին Թեհրան, բայց մեր մեկնումը տակավին հետաձգվեց, դեսպանի տկարութեյան պատճառով, մինչև 1817 թ. ապրիլ 17, որ որը մենք մեկնեցինք Թիֆլիսից։

Թերևս հաճելի լինի այն պարոնների ազգականներին ու ծանոթներին, որոնք ընկերացած եյին դեսպանութեյան դեպի Պարսկաստան, տալ նրանց անուններն մի ցուցակ։ Մի ուրիշ դրդապատճառ ևս համոզում և ինձ այս դժվարությունը հաղորդել հասարակութեյան։ Վերջերս Համբուրգի թերթերը

* Kotzebue, եջ 65—95։

հաղորդում եյին թե Գեներալ Յերմոլովի շքախումբը կազմված և պլխավորապես ֆրանսիացի սպաներից, և նույնիսկ նրանք համարձակութեյուն եյին ունեցել տալ անունները։ Բայց, դեսպանութեյան կողմից, ես կարող եմ հայտարարել թե ցուցակը ապացույց և, որ մենք նույնիսկ ֆրանսիացի մի խոհարար անգամ չունեյինք։

[Այստեղ հեղինակը զետեղում և Յերմոլովի դեսպանութեյան անդամների ցուցակը, որ զանց ենք առնում արտատպել]։

Մայոր-գեներալ իշխան Կուտուսովի (Prince Kutusoff) կողմից արված մի փառավոր ճաշի մասնակցելուց և ցնկեցում մեր ճանապարհորդութեյան համար աստվածային որնութեյունը խնդրելուց հետո, դեսպանութեյունը մեկնեց Թիֆլիսից ապրիլի 17-ին կեսորից հետո, յերբ բոլոր զանգակները հնչում եյին և քաղաքի ամբողջ բնակչութեյունը ընկերանում եր։ Դր. Միլլերը, որ յերկար տարիներ ապրել և վրաստանում, և տեսել և բազմաթիվ բարեկամներին ժանտախտին զոհվելը, վորից ինք հրաշքով և աղատվել, առաջարկեց ինձ Կոդի (Kodi) դնալու համար հետևել ավելի կարճ մի ճանապարհի, վոր անցնում եր դժվարամատչելի մի լեռնից, սակայն խնայում եր տասնհինգ վերստ։ Դր. Պրիբել (Pribel) և մեր հարգելի դեղապործը, Ուիլիըմս (Williams) ընկերացան մեզ։ Լեռը բարձրանալու մեր նեղութեյունը վարձատրվեց Կովկասյան շղթայի հիանալի տեսարանով և Գուբի արծաթյա ընթացքով։ Յերեկոյան հասանք մեր առաջին իշխան Կոդի[1], ընկերակցութեյամբ Սահլ (Stahl) ու Կուտուսով զորավարների և բազմաթիվ վրացի իշխանների։ Մեր ճանապարհորդութեյան սկզբնավորութեյունը բոլորովին ել հրապուրիչ չեր։ Խոհանոցը ուշ հասավ և մենք յերկինքի ծածկոցի տակ քնեյինք։ Սաղանլուղի (Saganlug) ավերակները գտնվում են Թիֆլիսի ուղիղ ճանապարհի վրա և տեսնվում են Կոդիից։ Սաղանլուղ այժմ բնակավայր և կալմիկների ու թուրավոր սարդերի, և Կոդիի նման, ունի միայն մի քանի ցեխե հյուղակներ, վոր պատկանում և իշխան Աբրեխանովին։ Յեկատերինոսլավի

բինն կայսրուհին մեծ հաճույք եր զգում յերկրի ամեն մի աղնվականին իշխան տիտղոսը շնորհելու, և հետևաբար այն և յեղել վոր գրեթե այնքան իշխան կա, վորքան գյուղացի։ Յեթե կայսրուհին դիտեներ նրանց թիվը, և թողեր միայն յերկրում գործածության մեջ սովորական տիտղոսը, ապա ամեսամեն մի քանի հազար իշխան պակաս կունենար։

Ապրիլի 18, 1817 թ. — Բացի դեսպանից, վոր իր վիրավորված վոտքի համար ճանապարհորդում եր մի փոքրիկ կառքով, վոչ վոք արտոնված չեր կառք նստելու, վորովհետև ճշգրիտ կերպով չեյին իմանում թե Պարսկաստանի ճանապարհները հարմար եյին այս յեղանակի ուղևորությանը։ Ես հետագայում համոզվեցինք թե կառքով կարելի չեր անցնել այդ ճանապարհներից, արգին ուշ եր, ուղղելու համար մեր սխալը։ Այսօրվան մեր ուղևորությունը դեպի Եմիր-Այվազիլ չե (Emir-Aivasli), դեպի վրան (Hram) դեպի վրան։ Առավոտ ճնշիչ մի տաքություն և միջատների հուլլեր դեմավորեցին մեզ։ Այսոր կեսորին անցանք Ալգեթի (Alget) դեպից, մեծ հնություն ունեցող քարե մի կամուրջից։ Բնակիչները չեյին իմանում թե ովքեր կամ թե ով և կառուցել այն. հավանորեն հռոմեացիներն եյին շինել, իրենց յերկարաձիրպատուության մի վորևե շրջանում։ Բորչալուի (Bartshalinish) լեռներն մեր առաջն եյին, ծածկված ձյունով. աջ կողմը՝ բավական մեծությամբ մի ամրոց կոլագիվի (Kolagivi) անունով, ուր ասում են թե ոդը այնքան վատառողջ է, վոր մարդիկ ու կենդանիներ զոհվում են նրա թունավոր ազդեցության։ Արամի անցքը բոլորովին զերծ չի վտանգից. ջուրը հասնում եր կենդանիների փորին, և հարկ եղավ բավական թվով մարդիկ կանգնեցնել մեկ ափից մյուսը, ոգնելու համար մեր անցքին, վորովհետև մի քայլ սայթաքում այս կամ այն կողմը կարող եր աղետալի հետևանք ունենալ։ Փառք աստծո, վոչ մի պատահար տեղի չունեցավ, և մենք հասանք մեզ համար պատրաստված ճամբարը։ Դա բաղկացած եր թաթար հյուղակներից՝ կիսակլոր տամբյուղներ, վոր ճակատում ունեն մի բացվածք և ծածկված փսխաթով, պաշտպանվելու համար անձրևից։ Նույնիսկ յեթե մերձակայքում մի գյուղ լիներ, մենք պիտի նախընտրեյինք քնել այսպես կոչված կիբիտկաների (Kibitkas) մեջտեղ, քան թաթարների այս զզվելիորեն աղտոտ տներում։ Յերբ մենք ճաշում ենք մի ծառի տակ, մի հետաքրքիր թաթար յեկավ, իր հետ բերելով ուշագրավ մի կապիկ, վոր տվորական խաղեր եր կատարում, և վոր սակայն, իր յերկար գորշ մազերով և մեկ գավակով՝ ինձ յերևում եր թե պատկանում եր հազվադյուտ տեսակի։

Ապրիլի 19. — Գեներալ Շտահլ (Stahl), վրաստանի քաղաքացիական կառավարիչը, և գեներալ Կուտուսով, վոր բազմաթիվ վրացի իշխանների հետ ընկերացած եր մեզ մինչև այսոհեղ, բաժանվեցին մեզնից վերադառնալու համար Թիֆլիս։ Բազմաթիվ գյուղեր և հին ամրոցների ավերակները զարդարում եյին մեր այսորվա ճանապարհը։ Հաճելի մացառների միջից անցնում և ճանապարհը և առաջնորդում է մեզ մի դաշտ, յեղերված անտառով, ուր բանակել և վրացական բանակը ամառվան ընթացքում, խուսափելու համար Թիֆլիսի առջորող տաքից։ Մենք մեր վրանները նախապես զարկինք սակերտա մի տեղ, մի մրմնջող առվակի կողքին, և միաժամանակ խոհանոցը զորթի գրվեց և շուտով ճաշը պատրաստ եր։ Այստեղից յերկիրը ավելի վիպական և զառնում. մի ճանապարհ տանում է դեպի պղնձի հանքերը, ձյուղավորվում և ձախի վրա դեպի սակերտա մի լեռ։ Մենք առաջ գնացինք ուղիղ դեպի Աքկորփի (Ackhörpi), Աղբրեկյուք (Achsebejuk) լերան տորոտը, ուր մեր կիբիտկաները վհատեցված եյին մեր բնակության համար։ Բարձր ծառեր, սիրուած մի անավոր մթության շուրջ, արձագանքում եյին մեր ձայները, վոր ձորի մեջում կրկնվում եր բազմապատկված արձագանքներով։

Ապրիլի 20. — Յեթե յերեկվան մեր տեսած դեղեցիկ տեսարանները ամենաարարձր հրճվանք պատճառեցին մեզ, բնությունը այսոր ներկայացնում և նույնպես իր գերազանցորեն գեղեցիկ տեսարանները։ Ճամբարից մեկնելուց հետո մոգական արտադրություններ։

ճանապարհը աստիճանաբար վոլորվում է դեպի վեր մեծ Աղզըբեյուկ (Achsbejuk) լեռնից։ Անտառի խուռթյունը նախ ծածկում է աչքից անմիջապես մերձակա առարկաները, բայց աստիճան առ աստիճան մութ ստվերը պարզվում է և մենք մոնում ենք բավական լայն մի ճանապարհ, մի նկարագեղ գահավանդի եզերքից, վոր տարածվում է բազմաթիվ ձորերի մեջից։ Բիչ ժամանակ շարունակելով այսպես, մենք հասնում ենք մի պողոտայի, գեղեցկորեն կազմված բնությունից, վոր վերջանում է բարձունքի գագաթին, վորտեղից մենք կարող ենք դանագանել Թիֆլիսի լեռները, Կովկասի, և բոլոր այն տեղերը, ուր մենք նախապես գարված եյինք մեր վրաննները։ Բազմաթիվ գետեր վոլոր մոլոր անցնում են տարբեր ուղղությամբ և ապա անհետանում են անծայր կապույտ հորիզոնում։ Դեսպանը [Յերմոլովը] ճիշտ կերպով նկատեց. «մենք տեսնում ենք մի յերկրի ընդարձակ տարածություն, և տակավին դա վոչինչ է բացդատելով այն աքանչելի կայսրության հետ, վոր կառավարում է մեկ մարդ»։ Գաղափարը արդարև մեծ է, և հետագա դարերում, այսպիսի անսահման իշխանության գոյությունը, առաջվանի պիտի համարվի։ Մենք հրաժեշտ տվինք Կովկասյան լեռներին, մեր յերկիրը բաժանող պարապին, և այս յերկինայինն վայրերից հեռացանք վշտի դգացումով։ Ճանապարհը վոլորվում է մացառների միջից, մի դեղեցիկ լեռնաշղթայի վրայով։ Վերջապես հասանք նրա ամենաբարձր գագաթը. անտառը այստեղ ավելի ցանցառ եր և շուտով բոլորովին անհետացավ։ Ճանապարհի վրա հանկարծ բարձրանում են յերկու գրանիտյա լեռներ, թողնելով միայն մի նեղ անցք, վորից փչում է մի հաբատև ու սոսկալի քամի։ Լեռը այս մուտքից մինչև Սատանայի բնակարանը, իր անունը առացել է Աղզըբեյուկ (Achsebeyuk), վոր թաթարական լեզվով նշանակում է «Սև բերան»։ Սակայն, ճանապարհորդները դժվարությամբ են անցնում այստեղից, քամին այնպիսի ուժ ունի, վոր մարդիկ ու ձիերը հազիվ թե կթոտելով առաջ են գնում անցքից։ Ցես յերբեք տեսած չեմ այդպիսի կատաղի քամի, բացի

ճապոնական ծովից, ուր մենք հանդիպեցինք մի փոթորկի, վոր կոտրեց մի նավի կազմվածքը։ Այս անցքից դուրս գալուց հետո, ճանապարհը իջնում է շատ զառիվայր դեպի մի հովիտ։ Յերկիրը մերկ է, շատ ցուրտ, և գիշերվան մեր ոթևանը վատ։

Ապրիլի 21. — Ճանապարհը մեզ առաջնորդեց մի գեղեցիկ ընդարձակ հովտից դեպի Կամենայա (Kamenaja) գետը, վոր ահավոր մի յերևույթ ունի։ Նրա ափերը յեղերված են դրանիտի մութ գորշագույն ժայռերով, ուղղահայեաց բարձրանալով քառասուն գրկաչափ վեր։ Կամուրջը իջնելու համար պետք է անցնել մի զառիվայր անցքից, վոր ծածկված է քարի մեծ դանդվածներով, այնպես վոր առիպված եյինք կրել մեր բեռան ամեն մեկ առարկա առանձնապես, մի աշխատանք, վոր չորս ժամ խլեց մեզնից։ Այս անցքը բացված է վառոդով պայթեցնելով։ Շատ աշխատանքի յե կարոտել նույնիսկ իր ներկա վիճակին բերելու համար, և կարոտ է շատ մեծ ծախքերի ավելի լավ վիճակում դնելու համար։ Այս ժայռերի ուշագրավ մի հակապրություն են Լոռվի մերձակա ավերակները։ Լոռին Փոքր Հայաստանի[?] հին մայրաքաղաքն է, վոր նախապես պարունակում եր վեց հազար տուն, ապաստարան եր թագավորների, և ասում են թե դիմադրել է յոթը տարի մի պաշարման ժամանակ[2]։ Այժմ մնում է միայն յերեսուն տուն։ Ընդհանրապես տակավին մնում են հայկական մեծության բազմաթիվ մնացորդները։ Այս ազգը տարածված է ամբողջ աշխարհի վրա և նրա մնացորդները միացել են վրացիներին, վորոնք հայերի հետ վարվում են անգթորեն։ Յերկրի դիրքը և զանազան ուղղությամբ յերկարող լեռնաշղթաները առաջ են բերում վրաստանում կլիմայական այնպիսի զանազանություններ, վոր կարելի է մի որում վայելել տարվան չորս յեղանակները։ Գիշերը մենք մատնված եյինք ձմեռվան ցրտին, ցորեկը ճանապարհորդում եյինք ամառվան տաքությամբ, և հասնելով Բեսաբդալ (Besabdal) լեռան ստորոտը, հանդիպեցինք գարնան հրապուրիչ թարմությանն։

Ապրիլի 22. — Ճանապարհը բարձրանում է լեռնից։ Ներքևում թողնում ծաղկած ծառերը, ճվղողղ թռչունները և կանաչ դաշտերը, բայց յերբ մոտենում ես կատարին, բնությունը աստիճանաբար մեռնում է։ Ծառերը մերկ են, բուսականությունը դեղին և ծակող քամին դողացնել է տալիս մեզ ցրտից։ Փառք աստծո, հասել ենք կատարը և ուրախ ենք վայրկյքի համար, մինչև իսկ բազմաթիվ վերստ վանդավոր մի ճանապարհից, հաճախ անցնելով գետակներից։ Մի ժամ այսպես ճանապարհորդելուց հետո, հանեցինք մեր վերարկուները։ Գարունը վերադառնում է և քաղցրաբույր զեփյուռը վողջունում է մեզ, յերբ մենք առաջ ենք գնում։ Փամբակ գետը և նրա կամուրջը շուտով տեսնվում են, և հետևից Ղարաքլիսե[3] փոքրիկ ավանի յեկեղեցին, շրջապատված լեռներով և բարձր յեղևնի ծառերով։ Սա առնում է իր անունը Կարա (սև) և քլիսա (յեկեղեցի) բառերից։ Յեկեղեցին տակավին մնում է։

Թեև այս վայրը գետեղված է լայնության 40 աստիճանի վրա, բայց կլիման նման է հարավային Ռուսաստանին։ Նշանավոր է իր գեղեցիկ կարմրախայտ [ձկն]-ով և իր մեղրով։ Ջինվորները այնպես հանգստավետորեն հարմարեցրած են իրենց բնակությունն այստեղ, որ մարդ մոռանում է թե սա թաթարական մի ավան է։ Այն հարմարությունները որ մենք վայելեցինք և կամ ավելի ճիշտը մեր ուղևորության հոգնությունը՝ համոզեցին դեսպանին յերկու որ հանգըստանալ այստեղ, որովհետև չեյինք սպասում գտնել նման օթևան թե՛ Վրաստանում և թե՛ Պարսկաստանում։

Ապրիլի 25. — Ղարաքլիսեյում մեր պակասները լրացնելուց հետո ճամբա յելանք դեպի Բեկանի (Bekanti) [Մեծ Պարնի] հայ գյուղը։ Յեվ այստեղ պետք է հիշատակեմ, թե կա ուղիղ և ավելի կարճ մի ճանապարհ, լեռների վրայից դեպի Յերևան, բայց որովհետև [այդ լեռները] ծածկված են ձյունով և յերեք որվա ճանապարհի ընթացքում վոչ մեկ գյուղ չկա, դեսպանը նախընտրեց Գյումրիի ավելի յերկար, բայց ավելի լավ ճանապարհը։ Մեկնելով Ղարաքլիսեյից

ճանապարհը անցնում է ժայռերի մեջից Փամբակ գետի յերկարությամբ, վորը մենք կտրում ենք բազմաթիվ անգամներ։ Մոտավորապես կես ճանապարհին դանվում է մի ընդարձակ քարայր, վոր հաճախ գիշերները ապաստան է տալիս ճանապարհորդներին և մինչև իսկ կենդանիների հոտերին։ Նրա մուտքի մոտից հոսում է գետը բարձր աղմուկով, վոր սրճապանքում է այրում անհնչելիորեն։ Հիրավի, այս կետը մեկն անարկու կարող է լինել։ Ճանապարհորդը կանգ առ, և հարգանքով հանե գլխարկը։ Անուշադիր մի անցնող մարմարե մի պարզ շերմից, վոր արձանագրում է մի հերոսի անունը, վորի գործերը ապահոված են նրա հիշատակի անմահությունը։ Այնտեղ սպիտակ խաչը մատնանշում է այն վայրը, ուր նրա մնացորդները թաղված են։

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում 1805 տարում, վրաստանի ընդհանուր հրամանատար իշխան Ցիցիանովը, վորին դավաճանությամբ սպանեցին պարսիկները, պաշարած եր Յերևանի բերդը, վորի պահակազորի թիվը հավասար եր ռուսական բանակին։ Պարսիկները գահավանդի հրամանատարությամբ ոգնության գալով, մի արագ շարժումով պաշարեցին ռուսական դիրքը։ Վերջիններիս [ռուսների] կացությունը հավանորեն ավելի կրիտիքական եր քան իշխան Եռժենի դիրքը Բելգրադի պարիսպների տակ։ Ցիցիանովը անհրաժեշտ կարգադրություններ արեց պաշարումը վերացնելու համար. պարսիկները տպավորություն չեյին գործում նրա վրա, և նույնիսկ նա վոխոխություն չկատարեց իր հարձակման պլանում։ Վերջը, սակայն, սկսավ նեղվել պարենի սակավությունից, և անհրաժեշտ դարձավ Ղարաքլիսեյից մթերք բերել, վոր թեև 160 վերստ հեռու եր, բայց ամենամոտ պահեստն եր իր համար։ Վորովհետև իր բանակը բազկացած եր մի քանի հազար մարդկանցից, չեր կարող տակաքացնել իր դիրքը՝ հեռացնելով իրենից մի մեծ խումբ։ Հետևաբար նա ընտրեց քաջ Մոնտրեզորին (Montresor) և նրան տվավ յերկու հարյուր ռմբաձիգ և մի դաշտային թնդանոթ, հրաման տալով վոր նա կռվելով ճամբա բանա մինչև Ղա-

բաքլիսե և վերադառնա բանակը՝ բերելով իր հետ պարեն ու ռազմական ուժ։ Դիլիջանի ընթացքում Մոնտրեզորը անցավ պարսկական գիծը և արշալույսին բավական հեռու էր թշնամուց, և թեև պարսիկների զորավոր մի խումբ՝ բաղկացած մի քանի հազարից, հետապնդում էր նրան, սակայն, այնքան կարող կերպով նահանջից, որ ամբողջ որվան ընթացքում չեղ մոց նրանց հարձակումները։ Փիշերը նրանից մի փոքր բարձունք, որ նա արագորեն պատնեշեց քարերով, որպեսզի անակնկալի դեմ ապահովի իր դիրքը։ Հաջորդ առավոտը կանուխ ճեղքեց պարսիկների գիծը, որոնք արդեն պաշարել էին նրան, և շարունակեց նահանջել, բայց հարատև ընդհարումների պատճառով, նա գտավ որ ավելի առաջ չէր կարող գնալ այս չարագուշակ այրից։ Ցերեկը չկր, երբ նա դիրք գրավեց այստեղ, և տեղեկացավ որ իր մարդիկ միայն մեկական փամփուշտ ունեն։ Իր դժբախտ դիրքը ավելի խախտվեց, երբ փիշերը մի թաթար դասալիք բերավ, գնաց պարսիկներին և տեղեկացրեց նրանց այս հուսահատական դրության մասին։ Պարսիկները տեղեկանալով որ մեկայն մի համազարկ էր մնում իրենց դեմ, հարձակվեցին ամեն կողմից այդ փոքր խմբի վրա և շուտով կոտորեցին նրանց։ Միաժամանակ, Ղարաքլիսեյից լսվեց հրացանի ձայներ և մի զորախումբ ուղարկվեց իրենց հայրենակիցների ոգնության, բայց նրանք հասան, երբ արդեն ուշ էր։ Այսպես ընկավ Մոնտրեզորը, հաղթության պսակը դրեթե իր ձեռքում։ Նրա համեստ շրիմը շրջապատված է իր զինքի քաջ ընկերակիցների գերեզմաններով։

Պարսիկների դեմ մղած պատերազմներում շատ հերոսական գործեր են կատարվել, որոնք փայլ են տալիս ռուսական անվան, և չեմ իմանում թե ինչու մինչև հիմա դրանք թաքուն են մնացել աշխարհից, մինչ որևե ուրիշ երկրում զրվելի չափազանցություններով պիտի հրապարակվեին։ Ցես երջանիկ եմ համարում ինձ առաջինը լինելով երկու հերոսական գործեր արձանագրելու համար, որոնք հաստատում եմ ամբողջ վրացական բանակի վկայությամբ, և որոնց հեղինակները տակավին կենդանի են։

1805 թվին, մայոր (այժմ մայոր գեներալ) Լիսանեվիչ հրամայում էր յերկու հարյուր հոգուց բաղկացած մի զորամասի և ուներ մի թնդանոթ։ Փերզուլի խանի (Perculichan) հրամանատարության ներքո գտնվող տասը հազարնոց առաջապահ մի զորախումբ հարձակվեց նրա դեմ։ Նա մի քանի ժամ դիմադրեց Արաքսի վրա և ապա կռվելով նահանջեց և ապահով կերպով յերեկոյան հասավ Շուշու (Shushain) ամրոցը։ Պարսիկները տակավին անվանում են նրան Գեղի մայոր, իսկի մայոր։

Ավելի կատաղի մի գործ կատարվեց նույն տարում։ Գնդապետ Կարեգին (Karegin) հրամայում էր վեցհարյուր հոգինոց մի զորամասի, մի դաշտային թնդանոթով և Մայոր Կոտլերեվսկին (Kotlerefsky) ծառայում էր նրա հրամանատարության տակ։ Ցես արձանագրում եմ այն իրողությունները, որոնք ինձ պատմել են անառարկելի ճշմարտախոս մարդիկ, և ցես ստիպված եմ արժանիքը վերագրել մայոր (այժմ մայոր գեներալ) Կոտլերեվսկուն, թեև նա գտնվում էր գնդապետ Կարեգինի հրամանի ներքո։ Այս զորամասի դեմ հարձակում գործից յերեսուն հազար հոգինոց մի բանակ, որը գտնվում էր անձամբ գահաժառանգ Աբբաս Միրզայի հրամանատարության տակ։ Ցերեք որ նրանք կռվեցին Ասքերան (Askeran) գյուղի գերեզմանատունում, ապաստանած գերեզմանների և բարձր գերեզմանաքարերի հետև։ Նրանք ջուր չունեյին և ստիպված եյին գիշերները կռվել՝ ջուր ձեռք բերելու համար։ Յերրորդ գիշերը գնդապետ Կարեգին այնտեղ թողնելով մի թմբկահարի և մի քանի պահակների, հրաման տալով որ ամբողջ գիշերը նրանք թմբկահարեն և կռվի հրավեր կարդան, նա հաջողեց նահանջել իր բանակով, առանց նկատվելու թշնամուց, և արագ առաջացումից հետո մեկ հարվածով (coup de main) գրավեց Շահբուլաղի (Shahbuch) բերդը, որի տիրապետությամբ՝ պաշտպանողական դիրքի մեջ դրավ ամբողջ պարսկական բանակը։ Աբշալույսին քաջ թմբկահարը և իր ընկերակիցները կո-

առաջնեկին։ Պահակելու համար այս նախաձեռնությունը, զեներալ Յիլիանովը տասնչորսու հազար մարդոց հետ և մի քանի թնդանոթներով գնաց Աբբաս Միրզայի դեմ և կատարյալ պարտության մատնեց նրան։ Թագավորը, [Ջաթ Ալի Շահ], վոր մի մեծ բանակի գլուխ անցած գտնվում եր Արաքսի այս կողմը. ծայրահեղ շտապանքով նահանջեց դեպի մյուս ափը, և նույնիսկ քանդեց Հուդերապինի (Huderapin) դեղեցիկ կամուրջը, վոր տակավին ավերակ եր։ Պարսկաստանում Յիլիանովի անունը տակավին դործ են ածում վորպես սիրևման՝ յերեխաներին վախեցնելու համար։ Սակայն, պետք և հիշատակել թե պարսիկները այդ ժամանակ հրեւտանի կոչվելու արժանի [գնդք] չունեյին. նրանք ընդհանրապես դործ եյին ածում առանցավոր թնդանոթ կապված ուղտերի [կռնակի] վրա։

Դժբախտ Մոնտրեզորի այրում կարճ ժամանակ հանգստանալուց հետո, շարունակեցինք մեր ճանապարհը և Համամլու (Amamli) գյուղից անցնելուց հետո, յերեկոյան հասանք Բեքանդի, անձրևի տեղատարափի մեջ։ Այստեղ եվ մերձակա մի բարձունքի վրա տեսանք մի խեղճուկ բերդ, վորի մեջ հարյուր հետևն գինվոր, միայն մեկ թնդանոթով պաշտպանվում եյին Թշնամու մի զորաբաժնի դեմ, բաղկացած վեց հազար հոգուց, վորոնք վոչ միայն չեյին կարող ջնջել բերդին, այլ նաև անկարող եյին նեղել բնակիչներին, վորոնք իրենց կենդանիների հետ միասին ապաստանել եյին նրա պարիսպներից ներս։ Հակառակ վոր շարունակում եր անձրևել, մենք նախընտրեցինք բանակել բաց դաշտում, քան քնել տեղի հյուղակներում, ուր միջատները մեզ պիտի ուտեյին։

Ապրիլի 26. — *Աժայի ու տխուր մի դաշտ տարածվում և դեպի Գյումրիի բերդը[4], ուր յերեք յերկրների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի սահմանները միանում են։ Ղարաքլիսեյից այս կողմ մենք այլևս ծառ չտեսանք, վորի պակասը առաջ եր բերում մի ձանձրալի միօրինակություն։ Ճանապարհին յես նկատեցի դաշտերում աշխատող*

գլուղացիները. նրանց արորները տասը յեզ քաշում են մեծ դժվարությամբ. հողը այստեղ պինդ է, մինչ նրանք աշխատում են ամենանեղպաշնակ կոպտությամբ։ Փոխանակ յերկրում, ինչպես մենք ենք անում մեր սեփական յերկրում, նրանք պարզապես քաշում են գետնի վրա ծառի մի մեծ ճյուղ, վորի վրա հաճախ տեսնվում է ամբողջ ընտանիքը միաժամանակ նստած։

Դեսպանի տկարությունը և ճանապարհների վատությունը մեզ պահած են այստեղ յերեք որ։ Շարունակ ձյուն է գալիս։ Ջերմաչափը զրոյից 2 աստիճան վեր է, և ասում են թե մի քանի որից ցերմությունը պիտի բարձրանա 25 աստիճանի։ Բնակիչների բնակարանները վողորմելի յեն, նրանք մի հին յեկեղեցու ավերակները վերածել են հարդանոցի։ Ասում են թե կլիման վրաստանի վորևե ուրիշ վայրից ավելի առողջարար է։ Ջեմ ցանկանում վիճել փաստի դեմ, բայց մենք շատ ուրախ եյինք, վոր ազատվեցինք անձնական վորձառությամբ ստուգելու իրողությունը։

Ապրիլի 29. — *Նպաստավոր յեղանակով այսոր մենք շարունակեցինք մեր ուղին։ Ճանապարհը հետևում է Արփաչայի (Arpatshai) ընթացքին։ Ձախ կողմում գտնվում է Արագած (Alages) բարձր լեռը, վորի ստորոտում նկատեցինք հեռուն մի այլ սրածայր լեռ, վորի յեռևից նշանավոր Արարատ լեռան ձյունապատ գագաթը մի պահ վողջունեց մեզ, և ապա անմիջապես անհետացավ։ Ցեղանակը շատ տաք եր։ Ճանապարհի կեսին մենք կանգ առինք և զարկինք մեր վրաններըը գետ ափին։ Այստեղ կարաքդինի իշխանը զարկավ մի հավալուսն (pelican) հսկայական մեծությամբ։ Առաջին պարագայում անհոգության յերեսից, և հետո զրոսնելու համար վառեցինք խոտը, վոր այստեղ յերկար չեն կարում. շուտով ամբողջ դաշտը բոցերի մեջ եր, և մուխը ստիպեց վոր մենք փոխենք մեր իջևանը։ Ծրագրված կերպով հաճախ ալպես են անում այս յերկրում, վորովհետև հետագայում ավելի լավ խոտ և բուսնում։ Կանուխ կեսորից հետո մենք հասանք մեր ոթևանը, վոր պատրաստված եր մեզ համար*

Շիրփուլուի (Shirpulu) քարվանսարայում։ Քարվանսարայները շենքեր են, որ նախապես կառուցված են ճանապարհորդող վաճառականների սպասարկման համար. նրանք այնքան ընդարձակ են, որ ամբողջ կարավանները, իրենց ձիերով ու բեռներով ապաստան են գտնում նրա պատերից ներս։ Ներքնք բոլորն էլ քարից են կառուցված և շատերի ճարտարապետությունը զեղեցիկ վոճով է։ Շիրփուլուի քարվանսարան այնքան հին է, որ այլևս չեն հիշում թե ո՞րը և կառուցվել։ Վոչ էլ ծանոթ է թե վո՞ր շրջանին պետք է վերագրել մերձակա հիանալի կամրջի կառուցումը, որ մի կամարով տարածվում է Արփաչայի վրա, որի ափերը ուղղահայաց բարձրանում են բավն որիակափ։ Ժամրախտաբար մի յերկրաշարժ խորտակել է կամարի կենտրոնը, և յերկու կիսաքանդ ծայրերը միայն մնում են, բայց սրանք կատարելապես ցույց են տալիս թե կամարը շատ բարձր և յեղել։ Մերձակա բլուրների վրա նկատում ենք զերեզմանատարեր, որոնց վրա արձանագրությունները մեզ տանում են ավելի քան տասը դար յետ և ապացուցում են թե այնտեղ բնակում եյին հայերը։ Դիշերվան ընթացքում մենք վորոշեցինք մի քար, որի վրա արձանագրված եր Ալեքսանդր անունը։ Շատ խոշոր մեծությամբ գանկեր ու վոսկորներ գտնվեցին, որոնք անխոսով եյին մնացել հազար տարիներից ավելի։ Այստեղից տասը վերստ հեռու գտնվում են Անի (Anna) քաղաքի ավերակները, հին մայրաքաղաքը Մեծ Հայաստանի, յերբեմն մի փառավոր արքունիքի բնակավայրը։ Հունաստանի վեհապետները հաճախ բնակել են այստեղ[3], և ամբողջ ազգերի բախտները վոչ սակավ անգամ վճռված են նրա պարիսպներից ներս։ Այժմ, այստեղ ապրում են միայն տասը ընտանիք, թեև նրա շրջապատը ութը վերստից ավելի չեր։ Այստեղ ու այնտեղ գտնվում են նրա պարիսպների կոտրատած մնացորդները, բազմաթիվ յեկեղեցիների ավերակները, և տեսնվում են տակավին պալատների հետքերը։ Պարսիկների սկսած քանդումի գործը ամբողջացրել են յերկրաշարժները։

Յերեկոյան կողմը ընդունեցինք Թրքական մի սպայի

այցելությունը, որին ուղարկել եր կարս քաղաքից Ալի փաշան (Pashaw-Ali), վողջունելու դեսպանին և բարեմաղթելու մեզ բախտավոր ճամբորդություն։ Վորովհետև ալ փաշան գլխավոր հրամանատարությունն ուներ սահմանի նահանգներին, և վոչ նման իր նախորդների պահպանում և խիստ կարգապահություն, նրա սպան դեսպանի կողմից ընդունվեց մեծ պատվով, և ճանապարհվեց թանգագին մի նվերով։

Վաղը մենք կմտնենք պարսկական հողամասը։ Մի պաշտոնյա արդեն յեկած է մեզ մոտ, ստուգելու համար ճշտորեն մարդկանց ու ձիերի թիվը, վորպեսզի ըստ այնմ պատրաստություններ տեսնվին։

Ապրիլի 30. — Հեռու մեր աչ կողմ թողինք Արփաչայ գետը, ճանապարհը անցնում է մի ամայի յերկրից։ Այս է Պարսկաստանի սահմանը։ Մեր ճանապարհին հանդիպեցինք Ասկեր-խանին (Asker-Chan). նախապես փարիզի դեսպան, ընկերացած մի քանի հազար ձիավորների, որ յեկել եր թագավորի [Շահի] անունով բարի գալուստ ասելու դեսպանին, և միաժամանակ ծանուցանելու, թե ինք նշանակված է դեսպանության մեհմանդար (memandar)։ Մեհմանդարը մի պաշտոնյա չե, որին պարտականություն և հանձնված ընդունելու մի դեսպանություն կամ նշանավոր մի անձնավորություն և հայթայթելու նրանց պետքերն ու պահանջները։ Պարսից կառավարությունը անկասկած քաղաքավարության ավելի մեծ նշան չեր կարող ցույց տալ, քան ռուսական դեսպանության նշանակել մի մեհմանդար, որ ինք անձամբ վարել եր լիազոր դեսպանի պաշտոնը։ Ասկեր-խան տարիքն առած մի մարդ է, շատ առաջ նա յեղել է պարսկական բանակի ընդհանուր հրամանատարը։ Փարիզում Նապոլեոնը նրան շատ լավ է ընդունել։ Նա խոսում է մի քանի բառ ֆրանսերեն։ Դեսպանը[Յերմոլովը] ի հարգանս նրա տարիքին, և այն բարձր դիրքին որ Ասկեր-խան գրավել է, մեր պարսկաստան գտնված ամիսոցին նրա հետ վարվեց ընդհուպ նշանակալից ուշադրությամբ և յերբեք չհամաձայնվեց, որ խանը

կատարել այն բոլոր գործերը, որ մտնում են մեհմանդարի պաշտոնի պարտականութիւնների մեջ։ Այդ փոքր գործերը կատարվում էին նրա յեղբորորդի Նաջար-Ալի բեկի (Najar-Ali beck) կողմից, որ նրան ընկերացել էր մինչև Փարիզ, և որ մի քիչ ավելի էր խոսում ֆրանսերեն լեզուն։

Նաջար Ալի բեկը արժանապատվ դեսպանութեան բոլոր անդամների սիրալիր հարգանքին, իր քաղաքավարութեան համար, և տակավին ավելի շնորհիվ իր մխիթարական ընթացքին ու անկեղծութեան, հատկութիւններ, որոնք իրականապես հազվագիւտ են պարսիկների մեջ։

Փոխադարձ վողջույնի արարողութիւնը վերջանալուց հետո, Սակեր-խանի հեծելազորը մի շրջանակ կազմեց մեր շուրջը և մենք ճամբա յելանք։ Յերբ մենք առաջ էինք գնում, պարսիկները ըստ սովորութեան կատարում էին հեծելազորի զանազան շարժումներ, ինչպես ընդհատում, հետապոտում և նիզակով հարձակում իբր դեմ, և նշանի մանրվրաններ, որոնք սակայն նպատակ չունէին զվարճացնելու մեզ, այլ կատարվում էին որպես նշանավոր պատիվ։ Այս յեղանակով վերջապես հասանք Թալին[6] (Taline), ուր ամենագեղեցիկ տեսարանը պարզվեց մեր աչքին։ Յերևանի նահանգի դաշտը տարածվում էր մեր առաջ, յեղերված Արաքս գետով. Արարատի յերկու լեռները բարձրանում էին կապույտ հորիզոնում, վիթխարի վեհափառութեամբ. Յերկատարյա տաճարդական տպավորութիւններ կենդանի ազդեցութիւն են գործում յերևակայութեան վրա։ Արարատ լեռան տեսարանը անմիջապես արթնացրեց մեր ժոքում Նոյի տապանը նրա կատարի վրա, և կենդանիները դույգ դույգ առաջ քայլում այն տեղից, տարածվելու համար յերկրի վրա .... Տակավին ցույց են տալիս մի վայր, ուր ասում են թե Նոյը տնկել է առաջին վորթատունկը։ Ժամանակները բոլորովին փոխվել են. շատ ապարդյուն փորձերից հետո, անկարելի յեղած է լեռան կես ճանապարհից ավելի վեր բարձրանալ։ Արարատը ծածկված է հավիտենական ձյունով և բրգաձև բարձրանում է շաքարի գլխի նման։

թե նրա կատարին կա մի կետ, որ յերբեք ձյունով չի ծածկվել, մի կարգ բարեպաշտ քրիստոնյաներ կարծում են թե դա Նոյի տապանն է, ուրիշները, նվազ կրոնասեր, հաստատում են թե այդ այն տեղն է, ուր տապանը հանդչեց։

Թալինում մենք գտանք որ պարսիկները վրաններ էին կանգնեցրել, որոնցից մեկը հատկապես փառահեղ էր, և դրշեր էին փռել։ Առաքելութիւնը հավաքվեց նրա կտուրի տակ և զովացուցիչներ մատուցին դեսպանին։ Սրանք էին բավական քանակութեամբ անախորժ շաքարեղեն և չերքեք, մի խմիչք բաղկացած ջրից, շաքարից և ասիից, որ թեև վատ համ չուներ, մանավորապես տաք յեղանակին, յերբ սառույց դրված է մեջը, սակայն, կարելի չէ բաղդատել յեվրոպական լիմոնատին։ Յերկու կողմից քաղաքավարական մի շատ խոսքերից հետո, մեր մեհմանդարը դիշեր բարի մաղթեց մեզ, և առաջին անգամ մենք քնեցինք պարսկական հողի վրա։

Թալինը թաթարական մի գյուղ է, մի ամրոցով, կառուցված հազար տարի առաջ, որ հետևյալ յեղակի արձանագրութիւնն ունի իր պարսպի վրա. — «Մի ապերջանիկ հայր կտակում է այս ամրոցը, որպես իր նախասիրած բնակավայրը, իր յերջանիկ վորդուն»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողի, տես եջ 411, ծանոթ. 2։

2. Լոռի, գավառ ու բերդը, պատմական Գուգարաց Տաշիր գավառի մեկ մասը։ Լոռու բերդը Գուգարաց մայրաքաղաքն եր, այժմ փոքրիկ մի գյուղ Սանփանավանից, (նախկին Ջալալ Ողլու), յերեք կիլոմետր դեպի արևելք, լեռնաձև ու ժայռոտ մի հարթութեան վրա, ուր Դերևտ գետին միանում է Մեհրանա վտակը։ Լոռին ծովի մակերևույթից 1490 մետր բարձր է։ Լոռի անունը վոմանք ասում են թե ծագում առած է լոռ բառից, որ լոռավետ մի վայր։ Տեղացիք Լոռին անվանում են նաև Սմբատա քաղաք, հավանորեն Որբելյան Սմբատ անունովը, որի մի արձանագրութիւն կա բերդի վրա։ Վարդան պատմիչը հիշելով Կյուրեկների, ասում է. «Ամա՛ հայրն Դաւիթ չընկաց դլոռէ և այլ ևս յերկոտասան բերդ, որից յերևում է թե կառուցողն է Աշոտ Ողորմածի թոռը Դավիթ Անհողին (Ծորդենի վորդին), որոնց պայազատութիւնը Կորիկյան կոչվեց։ Լոռու

բերդը թաւեբավայը և յիզել պատմական դեպքերի, անչուք-թաթարական արշավանքների և թուրք-պարսկական պատերազմների ընթացքում։ Ժբ. դարի սկզբից Լոռին անխափանութեան և յիզել Որբելյան տոհմին։ Կիրակոս Գանձակեցին պատմում է Զաղատա թաթարների հարձակման և Լոռու բերդի գրաւման մասին և թե ինչպես կողոպտեցին Շահնշահի դանձերը, բնակիչներին կոտորեցին և բերդը ավերակ դարձրին (1228 թ.)։ Ամբրոսիս Կոնդարինի 1474 թվի հուլիսի 25-ին անհանել է Լոռում և դովեստով է խոսում հայ բնակիչների հյուրընկալութեան մասին, իսկ բերդի պահակների մասին ասում է թե թուրք են։ (տես, «Ուղեգրութեւններ», Ա. Հատ. եջ 226—228)։ Բերդի և պարիսպների ավերակները մնում են մինչև հիմա։ (Տես, Ջալալյանց. Ա. եջ 121—122)։

3. Ղարաթիլիսե, տես եջ 334, ծանոթ. 9։

4. Գյումբի, Կումայրի, Ալեքսանդրապոլ, այժմ Լենինական։ Առաջին անգամ հիշատակվում է 771 թվին, յերբ Արտավազդ Մամիկոնյան Արաբանդամ հիշատակվում է 771 թվին, յերբ Արտավազդ Մամիկոնյան Արաբների ճնշումից խուսյ տալով «... Հասանները ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի, և սպանաներ զերամանատար հարկին։ Եւ որ ինչ գտաներ ի ձեռին նորա առեալ՝ հաւրառնայր ամենայն տամբ իւրով, դնայր ի կողմանս վրաց աշխարհին...»։ Գյումբի հայերից հետո գրավել են պարսիկները, վրացիները, օսմանցիները և 1828-ից յետո վերջնականապես անցել Ռուսաստանի տիրապետության տակ։ 1830 թ. բնակչության թիվը 8 հազարացած է երդրում, Կարսի, Բայազիդի և Բաղեզի հայ գաղթականներով։ Ներկա բերդի հիմքը գրված է 1836 թվին։

5. «Հունաստանի վեհապետները հաճախ բնակել են Անիում», ինչպես Միքայել կայսրը պաշարեց Անին, բայց չհաջողվեց գրավել։ Ցերկրորդ անգամ Մոնոմախոսի զորքերը 1040 թվին և ապա 1046 թվին պաշարեցին և տիրեցին քաղաքին, և սակայն հուլները կորցրին Անին 1064 թվին։

6. Թալին գյուղ հին Արտաշատ Արտաշատան գավառում, Ամասիա գյուղի հարավ, վոչ վերստ հեռու։ Թալին հիշատակվում է մեր թվականից առաջ, և այնտեղ կան մի քանի հնությյան հուշարձաններ, վորոնք նշանավոր են ճարտարապետությամբ։ Պատմիս հիշատակում է այս գյուղը և անվանում է Թալինա (Θαλίνα)։ Թալին արաբական շրջանում քանիցս յիշատակվել և հարձակման ու կոտորածի, սակայն հպարտությամբ շրջանում բարգավաճ վիճակ ունեցել։ Հին կամ վերին Թալինի հարավակողմն չորս վերստ հեռու գտնվում և Ներքին կամ նոր Թալին գյուղը։ Անցյալում յիզել և բերդաքաղաք և տակավին մնում են ամրոցի պարիսպների և աշտարակների մնացորդները։ Հայերեն մի արձանագրություն կրում է 1267թ. և գրողն և պարոն Ալպուղա, «Որդի Իվանէի և թոռն Շահնշահի»։ Կա նաև թուրքերեն մի արձանագրություն 1583 թվի։ Ցերևանի Սարդար Հուսեյին խանը 1812 թվին մի յերդորդ պարիսպ կառուցելով ամրացրեց այս բերդը։ Հին և Նոր Թալինների մեջտեղում կա ավերակ քարաշեն մի քարվանսարայ։ (Տես, Այրարատ, եջ 137—141։)

Գ. ՅԵՐՄՈԼՈՎԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 1. — Յեղանակը գգալիորեն ավելի տաք եր գիշերվան ընթացքում քան նախորդ որը։ Այս որվան մեր ճանապարհը մեզ պիտի տանի դեպի դաշտը։ Կոզակ գնեերալ Սխալով և բաղմաթիվ ուրիշ սպաներ, վորոնք ընկերացել եյին մեզ մինչև այստեղ, վերադարձան Գյումբրի, և մենք մեկնեցինք շարունակելու մեր ճանապարհը, առանց նրանց պաշտպանության։ Որը շատ տաք եր, և գետինը լինելով քարքարոտ, ժամերով մեր առաջացումը նեղացուցիչ եր։ Այստեղ անցյալին բնության մեծ վայրվերումներ են կատարվել, վորովհետև վորքան վոր աչքը կարող է տեսնել, գետինը խորհեն ծածկված է մեծ ու փոքր քարերով, վորոնց վրայից ձին դժվարությամբ է անցնում։ Այս ամայի տեսարանը քիչ ժամանակ հետո վերջ գտավ, և Յերևանի դաշտը, Արարատ լեռան հետ միասին, հետաքրքիր մի տեսարան պարզեցին մեր առաջ։ Բայց ինչպես նկարագրեմ այն հաճելի զգացումը, վոր արթնացավ մեր մեջ, յերբ խավարման մի յերկրում հոգնեցուցիչ ճանապարհից հետո, հանկարծ յերևացին մի փառավոր վանքի գմբեթներն ու պարիսպները։ Սա նշանավոր Եջմիածինն եր (Iatshmiasin), հայ պատրիարքների բնակավայրը, — անպաշտպան մի գառ գայլերի մեջ։ Այս նվիրական վայրը վերջին հազար հինգհարյուր տարվան ընթացքում, դիմագրավել և պատերազմի և նրա քայքայիչ հետևանքներին. վոչ մի բան չի ցնցել նրան, վոչ էլ այս յերկար շրջանի ընթացքում, նրա բարեպաշտ բնակիչները

* Kotzebue, եջ 95—128։

չեն դադարեցրել իրենց աղոթքը։ Պատկառելի պատրիարք Յեփրեմը (Efremkam), շրջապատված վարդապետներով, անձամբ կնկալ դիմավորելու դեսպաններին, և առնելով նորին գերազանցության ձեռքը, զանգակների հնչյունի և մեծաքանակ հավաքված ժողովրդի ծափահարությանց մեջ, առաջնորդեց նրան այն բնակարանը, որ պատրաստված էր նրա համար։

Մեզ բոլորիս տարին կոկիկ ու մաքուր հարկադրեցնում այնպիսիք վորոնցից մենք չկրկար ժամանակից ի վեր զրկված ելինք, և չպիտի ունենանք նորից մեր կրկար ճանապարհորդության ընթացքին։ Փառավոր ընթրիքին այնպիսի մի գինի տվին մեզ, վոր կես կատարելապես համոզվեցի թե Ներսեսի հայր Նոյը իսկապես այստեղ է տնկել առաջին վորթատունկը։ Հաճույքով տեղեկացանք թե մենք այստեղ պիտի մնայինք մի որ։

Եջմիածնի վանքը, վոր հայկական լեզվում նշանակում է «Ասածու վորդու իջումը», մի փառավոր շինք է։ Պարսպակում է բազմաթիվ բակեր, վորոնք մայթված են սալաքարով և անկված են դեղեցիկ ծառեր. որանցից վոմանց մեջ կան ավազաններ և աղբյուրներ, այնպես վոր տաք եղանակին հաճելի է մանդալ այստեղ։ Նրա ճարտարապետական վոճը կես եվրոպական է և կես ասիական, բայց լավ է և պատշաճեցրած ոգտակարության նպատակներին։ Հին եկեղեցին վոր վանքի կենտրոնում է և վոր կանգնեց և մեացել հազարհինգհարյուր տարիներից ի վեր, ուշի վազուտ և գեղեցիկ ճարտարապետություն, հոյակապն ու պարզը միացրած։ Ս. Գրիգորն և (Gregorius) վանքի հիմնադիրը, և կառուցել է այն վայրում, ուր նա տեսել է ս. հոգուի իջնելը։ Ասում են թե նա բազմիցս վորձել է բարձրանալ Արարատ լեռը, Նոյի տապանից մի կտոր ձեռք բերելու նպատակով, բայց ի զուր, ի վերջո ամենակարողը երազում նրան տվավ իր փափաքի առարկան, վոր մինչև հիմա պահվում է։ Անսահման գանձ հավաքված է այստեղ աշխարհի զանազան մասերից, վորովհետև այստեղ է միայն

վոր հայեր կարող են ս. մյուռոն դնել, վորովհետև պատրիարքը անձնապես և տաճարներու յեպիսկոպոս պետք է ներկա գտնվին դրա պատրաստության, և վանդալին և միայն, ուր լերկը հարյուր քահանաներ կան հավաքված։ Եջմիածնին պատկանող գյուղերը ուշադրության արժանի են իրենց հարստության համար։ Հիրավի, այստեղ վաղուց մի ծաղկյալ քաղաք պիտի գտնար, յեթե պարսկական կառավարությունը թույլ չտար Ներսեսի նահանգի կառավարչին քան կամ կողոպտելու վանքը։ Յես համոզված եմ վոր թագավորը, վոր մեծ ու պատվավոր մարդ է, անտեղյակ է այս հրեշի, [Ներսեսի սարդարի], արարքներին, յեթե վոչ մինչև հիմա նա այս շրջանի խեղճ բնակիչներին ազատած եր նրա կատաղի բռնություններից։ Այս սարդարը իր իշխանության շրջանում հավաքել է անսահման հարստություն, վոր չի կարող վայելել իր ներության պատճառով։ Սակայն, ըստ սովորության նա շարունակում է կողոպտել ժողովրդին և վանքին՝ իր սրտի իրական գոհունակության համար։ Նա այս դրության ենթարկեց նաև մեզ, վոր սպասում է վանքին մի մեծ գումար վճարել, յերբ իմանում է վոր մի քրիստոնյա ճանապարհորդ մի պիղծ այստեղ է միացել վորքան տատապած են այս մարդիկ, մեզ ընծայած հյուրընկալության համար։ Նա չի ամաչում ասելու. «Եջմիածնի այս շենքը ուրախ կը լինեին յերբ տերեր են ունենում ընդունելու մի նորեկ քրիստոնեայի, նրանք հաճույքն ունեն, իսկ յես պետք է ունենամ զրամը»։ Յերբ նա իր ամենօրյա հարստահարությունների համար պատրվակ չունեն, կարգադրում է վորսորդության գնալ Ներևանից և ճանապարհին այցելում է վանքը։ Այս պատրվակը պետք է վոր շատ թանգ վճարվի։ Իր մարդկանցից շատերը, վոր ուրիշ տեղ գինեն չեն կարող ճարել, որերով խմբովին հաստատվում են այնտեղ, վորպեսզի արբեցողությամբ անկարգ կյանք անցնեն, մի բան վոր նրանց կրոնը վորոշապես արգելում է. Յեթե նրանց բոլոր պահանջներին գոհացում չտրվի, նրանք սպառնում են սուտ տեղեկանք տալ կառավարչին, վոր ի հարկե անմիջապես դրամական տուգանքի է ենթարկում։ Այսպես

հայ քրիստոնեության սրբավայրը հարատևորեն մատնված և մի անարգ մարդու բռնապետական հարստահարությունների, մի մարդ, որ մեծամամանակ նահանգի ամենից տխրահռչակ արբևցողն և: Ինձ պատրիարքը շատ վշտացած և տեսնելով որ բարեպաշտ քրիստոնյաների նվիրատվությունները ամեն որ քամվում են այդպիսի անարժան նպատակների համար: Արդեն պետք և դադարվում գործածել վանքի հին գոնդերը, առարկա ծախքեր կատարելու համար, բայց նրա բոլոր անդամները վճռել են համբերությամբ տառապել, և յերբեք, նույնիսկ յերբ բոլոր աղբյուրները ապավեն, չլքել այս նվիրական բնակավայրը, որքան ժամանակ տալած ուժ ու կարողություն տա Լրենց: Այս հանգամանքները ի նկատի ունենալով և որ դեսպանության վերադարձին, գնելով Յերմոլովը որոշեց ուրիշ ճանապարհով գնալ և վերստին չայցելել Եջմիածին:

Մեր ժամանման յերկրորդ որը ի պատիվ մեզ յեկեղեցական արարողություն կատարվեց: Պատրիարքը, որ նորից այս առթիվ, մի շատ պատշաճ քարող խոսեց, և յեկեղեցականները ուրախությունից բարձր ձայնով լաց եղին լինում, իրենց միջում տեսնելով այնքան թվով հավատակից յեղբայրներ: Մենք բոլորս հուզված եյինք, և պատրիարքը այնքան դգածված եր, որ հազիվ թե կարողացավ վերջացնել իր ուղերձը: Ամեն ինչ վերջացավ մի ապրեշումով, որի մեջ Ալեքսանդրի և Ծաթ-Ալի Շահի (Պարսկաստանի թագավորի) անունը յեղակի կերպով արտասանվեց միասին: Յերբ արարողությունը վերջ գտավ մենք համբուրեցինք ս. Գրիգորի և Հակոբի ձեռքը, ինչպես նաև գեղարդը, որ ծակած եր մեր փրկչի կողքը: Կապված այս նվիրական մասունքներին, վոսկի շղթայով կախված եր Նոյի տապանի մի կտոր, որից նախապես փոքր կտորներ կարելի յեր գնել, սակայն այժմ շատ դժվար խնդիր եր: Պատրիարքը, որպես հիշատակ, մեզ նվիրեց սուրբ գեղարդի մոմյա կաղապարը: Գեղարդը հաճախ ժանտախտի ժամանակ տարված եր Թիֆլիս, և հրաշքներ եր գործել: Յեկեղեցուց

դուրս գալուց հետո մեզ անհատապես ներկայացրին պատրիարքին, և թուլատրվեցինք համբուրելու նրա ձեռը: Անմիջապես մի ճոխ ճաշ տրվեց, որին նա ներկա չեր: Մեր ներժշտախոսությունը նվագում եր, և քրիստոնյաներ ու խալամները լսում եյին հաճույքով: Մենք բոլորս յերախտագիտությամբ հիշում ենք մեր ընդունելությունը Եջմիածնում:

Մայիսի 3. — կեսորից հետո պատրիարքի որոնությամբ սկսնեցինք վանքից. գանգակները հնչում եյին տխրորեն: Եջմիածնի և Յերևանի ճանապարհի մեջ, նահանգի հրամանատարի յեղբայր Հասան խանը յեկավ՝ դիմավորելու դեսպանին, չորս հազար հեծելազորի գլուխն անցած: Զինվորները մահատարի յեղբայր Հասան խանը յեկավ՝ դիմավորելու դեսվորպես քաջ ժողովուրդ, պարսկական ծառայության մեջ: Դենեռալը գծի ճակատից վեր ու վար քառասմրակ գնում եր: Յեզակի մի տեսարան եր: Զինվորները պեղոցիկ եյին, և նույն իսկ փարթամորեն սպառազին: Մարդիկ, մանավորապես քուրդերը, հեռվից յերևում եյին նման անկարգ պառավ կանանց, նրանք շատ են ծավում, յերբ ձիու կռնակին են, ծածկված են զանազան գույնի մետաքսներով, և նրանց գլուխը նույնպես շատ կոպտորեն փաթաթված և ամեն գույնի կտորներով, վորոնք վերջանում են ծոպերով: Այս ծիծաղելի զինանոցի տակից յերևում և թուխ բեխավոր մի դեմք: Ամբողջ գլխի ատմկում եր ամենասարսափելի կերպով, և նրանց անհնարագնակ ատմուկին վհանում եր յերկու թմբուկի և բազմաթիվ ճչացող սրինդների ձայն: Նրանց գլխավոր գենքը յեղեգնա մի տեգ և: Պարսիկների նման, նրանք հեռաողում եյին իրար, և քառասմրակ առաջանալիս մեծ վարպետությամբ զարնում եյին իրենց հակառակորդին: Նրանց հրացանները, սարճանակները և թրերը շինված են արտակարգորեն նուրբ յերկաթից. արտորեն ձիավարելիս կարող են շուռտով լցնել իրենց հրացանը և հաճախ զարնել իրենց նշանակետին: Դեսպանը նրանց մասին Հասան խանին շատ գովեստներ անելուց հետո, զինվորները շրջանակ կազմեցին և մենք առաջ գնացինք սովորական շարժումնե-

բով։ Զանգու (Sanga) պետից վոչ շատ հեռու մի սոսկալի տեսարան տեսա, որը ավելի ցանկալի չեր, որպեսզի մենք հարկ եյինք մեր ճանապարհը, և մտադիր եյինք կերաժշտությամբ հանդիսավոր մուտք գործել Յերևան։ Զանգուն անցնելիս, որը թեև շատ լայն չե, բայց խոր և ու արագընթաց, ես չեյի ապատում որ անցնենք առանց պատահարի, բայց բարեբախտաբար բոլորը անցան, բայց ահռելյամբ մի պարսիկի, որի ձին, տեսար լինելուն պատճառով, վարկենտաց իր տիրոջ հետ հոսանքից քշվեց։

Յերկու հազար սարբազների, (կանոնավոր հետևակազոր), մի զորամաս, վեց հազար ձիավոր հրետանու հետ, Յերևանի բերդի պարիսպներից դուրս կանգնել եյին։ Դեպանի մերձենալուն, զինվորները բարևեցին, թմբուկները զարկին և արքունական ազգային երգը (որը նաև՝ «God save the King» (աստված պահը թագավորին)։ Գնդի հրամանատար Յերևանի սարդարը (ընդհանուր հրամանատար) Հուսեյին Ղուլի խանը (Hussein-Kuli-Chan) ձիով առաջացավ դիմավորելու մեզ։ Եչմիածնի բռնապետը սա ե։ Նրա առաջից վազում եյին վեց հետևակ. կարելի չե ասել ճոխորեն հագնված, և մի ոտը, որը կրում եր իր ուսին մի տասար, — կյանքի ու մահվան վրա սարդարի ունեցած իշխանության խորհրդանիշը։ Նրան հետևում եյին ճոխորեն հագնված վոտոշ թվով պարսիկներ։ Նա կրում եր շալ հագուստ, նրա գլխանոցը (turban) նույնպես շալից եր կազմված, նրա դաշույնը զարդարված եր ադամանդներով, և նրա ձիու սապատները վոսկուց եր։ Դեսպանը նրան առաջարկեց իր ձեռքը, փոխադարձ քաղաքավարական խոսքեր փոխանակեցին, և սարդարը հրաժեշտ առավ, պատվիրելով իր ցեղերը առաջնորդել մեզ արարողությամբ։ Բնակիչները բոլորը զարմացել եյին, որ այս հպարտ մարդը հանձն եր առել դուրս գալ բերդի պարիսպներից, դիմավորելու համար բացի քրիստոնյաներից, մի ուրիշ անձնավորության։ Սակայն, արարողության այդ կետի կատարման վրա եր որ հատատապարհ եր պնդում եր դեսպանը, և իր բախտից առաջին անգամն եր

թերևս, որ իր կյանքում այնքան կատարյալ կերպով թրջվել եր անձրևից։ Միաժամանակ նրա ցերեկը մեզ առաջնորդեց այն տունը, որը պատրաստված եր դեսպանի ընդունելության համար, և ինպանոմի արձակուրդները ծանուցին մեր ժամանումը։ Այդ տունը ուներ միայն չորք հարկաբաժին և հարևան տներում ոչխան հատկացրին մեզ։

Պարսկաստանում տները շատ թխթխուրին չինված են, և ընդհանրապես պարունակում են միայն մի քանի սենյակ, ձեռ մատամբ բացված գետի հյուսիս, այնինչ փոխանակ պատի՝ կա մի մեծ լուսամուտ, նախշուն ու գունավոր ապակիներով։ Գիշերը փակում են, բայց ցորեկը բաց են թողնում։ Սենյակում կան բազմաթիվ քիվեր և վորմնախորշեր, վորոնք պղպտանները ապխտակ են ներկում, իսկ հարուստները զարդարում են գեղեցիկ ծաղիկներով ու վոսկեզոծումով։ Յուրաքանչյուր սենյակում կա մի կրակարան, ընդհանրապես պատուհանի հանդիպակաց կողմը. հատակը քարից է, և ծածկված գորգերով հարուստների կողմից և թաղիքով՝ պարքանչների։ Միքանի բառով այս և պարսկական տների նկարագրությունը։ Նրանց սենյակները վոչ աթոռ ունեն, վոչ սեղան, վոչ հայելի և վոչ էլ վորևե կահկարասի։

Պարսիկները նստում են ծալապատիկ՝ գետնի վրա, նրանք երկնց հոգալիները թողնում են հարկաբաժնի դրան։ Նրանց ճաշը մատուցում են ափսեների վրա, և յեթե մի պարոն դիշերը չի գնում իր տարեմը, նրան բերում են փիլավ, և նա քնում է մենության տեղը։ Պատյա կատարելը համարվում է շատ ծիծաղելի և նույնիսկ զռեհիկ։ Յերբ պարսիկները տեսնում են մի մարդու, որը մաղ և գալիս գետի առաջ ու լվա, կարծում են թե նա մի վորևե գործ է վրա չե, կամ զարմանքով նայում են նրան և նույնիսկ կարծում են թե խելքից պակաս է։ Ըստ նրանց հայեցողության մարդ իր գոնից դուրս գալուն պես պետք և ձի հեծնի։ Ծանր պետք և նստի վրա նետաձգությամբ կերպով և ձեռքը շարժի ամեն քառորդ ժամ՝ մի անգամ բարձր ձայնով կանչելով, «ղայրո» (Kallion) հո-

Պարսկաստանում քաղաքներն ունեն նեղ նրբանցքներ, որոնց կողքերին պատեր են փոքրիկ դռներով։ Պարտեզներում բացի ծաղիկներից ու պտղատու ծառերից, ուրիշ բան չի տեսնվում։ Մեր ժամանման հաջորդ որը տակավին շաբաթ էր անձրևել, մի պարագա, որ պատճառ է թե՛ տարվան այս եղանակի համար աննախընթաց և՛ բացառիկ քաղաքավարական փոխադարձ պատգամների փոխանակության, ոչինչ չկատարվեց դեսպանի և սարդարի միջև։

Յերրորդ որը եղանակը հիանալի էր։ Առավոտ ժամը տասին սարդարը այցելության եկավ դեսպանին։ Նա անշարժ կերպով նստեց աթոռի վրա, շատ ծխեց, շատ քիչ բան ասաց, և հազիվ թե շարժեց իր գլուխը, երբ մեզ ներկայացրին նրան, բայց հակառակ Մուհամմեդի որինքին իրեն մատուցված խմիչքները մեծ փափաքով խմեց։ Արդարև, նա պաղանի չի պահում իր սիրը զորավոր խմիչքների համար, և բացորեն հայտարարում է թե լինք առանց նրանց չի կարող ապրել։ Մի ժամ տևելուց հետո հրաժեշտ տվավ ու ճաշի հրավիրեց բոլորիս։ Ըստ այնմ շուքով մենք գնացինք բերդը, ուր նա ապրում է։ Շարդենի ժամանակներում շատ մարդիկ եին ապրում այնտեղ, բայց սարդարը ամենքին քշել է աչնաեղից, և այժմ նա մենակ է, շրջապատված զորանոցներով։ Մեր թափորը շքավոր եր. առաջից գնում եին կողակները և նրանց հետևում եր նվագախումբը, հետո դեսպանն եր գալիս, նրանից հետո շքախումբը, և թիկունքում կողակների մի այլ խումբ։ Ժողովուրդը, որ յերբեք այդ տեսակ բան չեր տեսել, ամեն կողմից խռնվում եր մեզ վրա։ Վոսուխկանական պաշտոնյաները քար եին նետում նրանց վրա, և նույնիսկ գավազանով ծեծում եին նրանց։ Մի մարդ կար մասնավորապես, որ ուզում եր քայլել դեսպանի առջևից, և որ կրում եր իր ձեռքում յերկաթյա մի ձող, որով նա անզթորեն զարնում եր բազմությանն։ Յես իրապես հավատում եմ, որ այս մարդիկ պիտի սպանեյին շատ անձերի, յեթե դեսպանը պետասրտությունից դրդված չպահանջեր

բանջող սպասավորներին, որոնք ամբողջ որը դրսում կանգնած են։ Յերբ նա հրավիրում է հյուրերին, շատ պայմանները են քերում, որոնցից վամանք զարդարված են վոսկով ու նուշխիկ ապամանդով, մեջ ընդ մեջ վոչխարի ճարպից պատրաստված քաղցրավենիք են մատուցում հյուրերին, շերբեթի ու պտուղի հետ։ Հյուրը սանտիրոջ վատահացնում է, թե նա յերևում է այնքան կարմիր, որքան իր խնձորը, այնքան վայլուն որքան արևը, այնքան հանդարտ, որքան լուսինը, և նրանք բաժանվում են մաղթելով մեր յերջանկությանը վարդեր փթթին նրա բախտի պարտեզում։ Հյուրընկալը շնորհակալություն է հայտնում բարեկամական խոնարհությունն անելով, վորում թե ինք այդ բոլորից դժբախտ պիտի լինի, վորովհետև իր ականջը վարժված եր սոխակի քաղցր ձայնին. ապա նա առանում է իր նախկին դիրքը, հյուղանակին. ապա նա առանում է իր նախկին դիրքը, հրամայում է սպասում է արևմուտքին, վորպեսզի կատարի իր ադոթքը և կարող լինի ասել, թե մեկ որ ևս անց է կացրել։ Միևնույն ժամանակ մեկնող հյուրերը նախասենյակում փնտռում են իրենց հոդաթափը, և քաղաքավարությամբ մի քանորդ ժամ սպասում են՝ վորպեսզի թե առաջինը ոտքի պիտի դնա, նախ ամենից հարուստ կամ ամենանշանավորը, և ընդհանրապես տեղի չի տալիս խոնարհության անելով, և շնորհալի կերպով հեծնելով իր ձին խոնարհության տեղատարափով։ Նրա անդործ սպասավորները, քանի հոգի կամ ավելի, շրջապատում են նրան, բռնում են նրա ձիու սանձը և անչափ պատվով մեծ մարդուն առաջնորդում են իր տունը։ Բարձր դասերը ընդհանրապես լի չեն կողոպուտի կատարի արամադրությամբ, մասնավորապես ընդունակ են իրար մասին վատ խոսելու, որ իրենց ընթերամացմանը պետավոր աղբյուրն է։ Նրանք հաճախ մեծ թվով հավաքվում են իշխանների և ուրիշ մեծ մարդկանց տներում, ուր նրանք կանգնում են բակերում ու հորանջում նոքին դիրապանցության թյուններին ներկայության, ապա վերադառնում են իրենց տները, հաճախ չարժանանալով նրանց ամենափոքր ուշադրության անգամ։

չեր նրանցից, որ վերջ տան բռնութեան։ Ժողովրդին թուլ չափին հետեվելու մեզ բերդի դռներից ներս։ Բազմաթիվ նոր փողոցներից անցնելուց հետո ձիերից վար իջանք ամրոցի գրան մուտքին, որի վրա նրա սպասավորները առաջ եկան՝ պահապանելու մեզ։ Անցնելուց հետո բազմաթիվ բակերից, որոնց երկու կողմերում կանգնել էին մարդիկ զեն ի ձեռին, մենք մի բաց տարածութեանից ներս մտանք, զարդարված մարմարյա սվաղանով և աղբյուրներով։ Մարդը առաջացավ մինչև դուռը և առաջնորդից մեզ մի ընդարձակ դահլիճ, որի բաց կողմը նայում էր դեպի այս բակը, ուր հավաքվել էին Յերևանի ամենանշանավոր մարդիկ։ Վոչ վոք արտոնված չեր մտնելու դահլիճը, բացի սարդարի յեղբորից և մեր մեհմանդարից։ Ուշադրութեան նվազ մի նշան չեր սարդարի կողմից մեզ համար սեհոններ հայթայթելը, որովհետև պարսկական յեղանակով դեսերնատելը մեզ համար անկարելի եր. ինքն էլ նստեց մի սեհոռի վրա։ Պատերից կախված էին տարբեր ձևի փոքրիկ հայելիներ, և նրանց մեջտեղում պատան դուրս ծորիկներ և փոքրիկ նկարներ։ Մուտքի հանդիսակաց կողմը նկատեցինք թավոռի և նրա վորդու, Աբբաս Միրզայի, կենդանագիրները, մի պատկերի հետ, որ ներկայացնում եր վորսորդութիւն, բայց այնքան բոլորովին դուրկ պերսպեկտիվից, վոր մեկ դեմքը խառնվում եր մյուսի հետ և թվում եր թե ամենքը պարում էին ոդի մեջ։ Կային նաև մի քանի կանոնդ դիմանկարներ, վորոնց վերևը թվում եր թե վոլորված էին։ Ընդհանրապես լուսո կարները դուրկ են լուսից ու սովրից, բայց դույները նշանակելի կերպով փայլուն են և դամասկուն։ Դահլիճի բաց կողմի վերևում կազմած եր լարաձև մի հովանոց, մարմարյա մի ավազանով, վորի մեջ կան աղբյուրներ։ Սա նույնպես բաց և և նայում է դեպի մի շատ գեղեցիկ պարտեզ, վոր վերջնես անկված եր։ Զանգուռ գետը հոսում է մերձ պատուհանի տակից, նրա ափերը լցված են բարձր ծառերով և մի քանի կամարով քարե կամուրջ տանում է դեպի մյուս ափը, վորտեղ

հորիզոնը ձևանում է Արարատ լեռան։ Ամարանոցի համար ավելի լավ բնակարան չի կարող հարդարվել և պատշաճեցվել ոդի մի մեղմ հոսանք և աղբյուրների ջրերը հաճելիորեն մեղմացնում են տաքը, և նույնիսկ ձյունապատ Արարատի տեսարանը առնչում է զովության զգացում։ Այսու հանդերձ, ասում են թե ամառը այնքան տաք է Յերևանում, վոր բնակիչները գնում են մերձակա բարձունքները, և սարդարը ինքն էլ տախտված է գնալ ճամբար։ Յերբ մենք ամենքս նստած էինք, ներս բերին պայտոններ, և մի փոքրիկ սեղան, ծածկված շերբեթով և քաղցրավենիքով, դրվեց յուրաքանչյուրիս առաջ։ Յես արդեն հիշատակած եմ վոր վերջին առարկան պատրաստում են վոչխարի ճարպից, և դյուրին և յենթադրել թե ինչ ախորժակով մենք համտես արինք, մանավանդ ճաշից առաջ։ Միգնից վոչ վոք չեր կարող վճռել մի կարճ անգամ վերցնելու սրանից, և հետևաբար անսիրապես տարին։ Այն ժամանակ բազմաթիվ սպասավորներ ներս մտան հնգկական կարից սեղանի ծածկոցներով, տեղ տեղ զարդարված ծաղկանկարով։ Անկյուններում պարսկերեն պատշաճ նախատասութիւններ տպագրված էին սև տառերով, որինակի համար. «Այն ամեն պտուղ ու կերակուր, վոր սրա վրա ներկայացվում է ձեզ, լավ է, և մատուցվում է ձեզ բարեացակամութիւնից»։ Յուրաքանչյուրը տեսնելով վոր այս բարեացակամութիւնը այնքան ճշմարիտ եր, վոր հազար անձինք կարող էին կատարելապես գոհացում տալ իրենց ախորժակին։ Յես պիտի հիշատակեմ այն բաները միայն, վորոնք իմ և դր. Մյուլլերի դիմացն էին, և սրանից կարելի չե մի գաղափար կազմել մյուս կերակուրների մասին։ Նախ մի մեծ լավաշ (pancake), վոր ոչ միայն ծածկում եր ամբողջ սեղանը, այլ նաև վար եր կախված իր բոլոր կողմերից կես յարդալի չափ։ Դա կոչվում է չուրեկ (tshurek), և պարսիկները գործ են ածում թե՛ վորպես հաց և թե վորպես անձեռնոց, ապա մի վոչխարի կեսը, մի յեղջյուր ազդր, յերկու պնակ լի զանազան խորոված ժոզ, հինգ պնակ պորանի (ragout) համեմված քրքումով (saffron), յեր-

կու պնակ խաշած բրինձ [փիլավ], յերկու խաշած հավեղեն, յերկու խորոված հավեղեն, յերկու խորոված սագ, յերկու պնակ ձուկ, յերկու սկահակ մածուն, մեծ քանակությամբ շերբեթ և յերեք սրվակ գինի, բայց այս բոլորի հետ վիշ դանակ կար, վիշ պատառաքաղ և վոչ ել դգալ։ Պնակներն այնքան արագությամբ դիզեցին իրար վրա, վոր դժ. Մյուլլը և յես հանկարծակիորեն ծածկվեցինք կերակուրների մի պատնեշի յետև, և այնպես վոր չկրինք կարող տեսնել վոչ վոքի, միայն դիմացի կողմը նատողները մասամբ տեսանելի եյին բազմապատկված պնակների արանքից։

Այս բացվածքներից մեկից ջանացի նկատել թե ինչ եր անում սարդարը։ Իր ձախ ձեռքը դրած դաշույնի վրա, — վորովհետև պարսիկները յերբեք չեն ուտում ձախ ձեռքով, — նա լրջորեն յերկարում եր իր աջը յուղալի բրնձի մի պնակի մեջ, վորտեղից յերեք մատով բարձրացնում եր մի քիչ, և մեծ ճարպիկությամբ տանում եր բերանը, քիչ անգամ աղտոտելով իր մորուքը կամ ընչանցքը։ Այս գործողությունը բազմից կրկնելուց հետո, նա հանկ լավաշից մի կտոր կտրեց, և իր մատները սրբելուց հետո, կուլ տվեց մի քաղցր դոհուանակությամբ։ Նույն յեղանակով իր ձեռքը խոթեց իր հանած զանազան պնակների մեջ, և ի վերջո վերցրեց մի բաժակ շերբեթ և խմեց, ժպտելով իր շուրջի զարմացող հյուրերին։ Հաղիվ թե հրավիրյալներից վորևե մեկը ճաշակեց վորևե բան, վորովհետև անկարելի յեր վերցնել մի բան, առանց շուռ տալու ամբողջ դեղը։ Վերջապես նշան տվեց մաքրելու սեղանները, և սպասավորները, ինչպես նաև դրսում սպասող պարոնները, վորոնք նախանձով մեզ եյին նայում, անկասկած մեզ համարել եյին նշանավոր անձնավորություններ, վորովհետև սովորություն և Պարսկաստանում պետական ընդունելությունների ժամանակ, մարդիկ իրենց բարձրության աստիճանին համապատասխան հրաժարվում են մասնակցել սեղանի հաճույքներին։ Պնակները վերցնելը տեղի տվավ հետաքրքիր տեսարանների, պորանու պնակը չեր պոկվում մածունի ափսեից, վորի վրա դրված եր, կարպեզ խառնված պնակ խաշած բրինձ [փիլավ], յերկու խաշած հավեղեն, յերկու խորոված հավեղեն, յերկու խորոված սագ, յերկու պնակ ձուկ, յերկու սկահակ մածուն, մեծ քանակությամբ շերբեթ և յերեք սրվակ գինի, բայց այս բոլորի հետ վիշ դանակ կար, վիշ պատառաքաղ և վոչ ել դգալ։ Պնակներն այնքան արագությամբ դիզեցին իրար վրա, վոր դժ. Մյուլլը և յես հանկարծակիորեն ծածկվեցինք կերակուրների մի պատնեշի յետև, և այնպես վոր չկրինք կարող տեսնել վոչ վոքի, միայն դիմացի կողմը նատողները մասամբ տեսանելի եյին բազմապատկված պնակների արանքից։

վելը լավաշի հետ և ձուկը չեր ուզում բաժանվել հավեղեններից։ Սակայն, վերջապես ուժով հաջողեցան, և ուտելիքները սկսեցին դրսում սպասողներին։ Սովորություն և Պարսկաստանում խնճույքի մնացորդները տալ սպասավորներին, կամ այնպիսի անձերի, վոր պատահաբար այնտեղ են գտնվում, ինչպես նաև հաճախ ծուլորեն սպասողներին։ Այսպես, մի մեծ անուն, ուր խորովում ու եփում են յերեք աքսամ ավելի քանակությամբ, քան ինչ վոր բավական և տնեցիներին, մնացորդները տրվում են անթիվ ծողովներին։ Այսպես մեր պատնեշը բարեբախտաբար քանդվածլինելով, մենք վերատին կարող եյինք սկսել շունչ քաշել։ Սպասավորները ջուր բերին ձեռքերնիս լվանալու համար, բայց առանց անձեռոցի. պարսիկները սպասում են վոր իրենց ձեռքը չորանա, և մենք սոխակած եյինք սրբվել մեր թաշկինակներով։ Այս գործողությունը հաղիվ թե վերջացել եր, ուր սարսափ. նորից անթիվ պնակներ ներս բերվեցին, բայց այս անգամ դյուրությամբ աղատվեցինք, վորովհետև պետք պատվ և քաղցրավենկ եյին, և ի մեծ դոհունակություն, միայն մի մի պնակ դրվեց յուրաքանչյուրիս առաջ. հակառակ պարագայում մենք չպիտի կարողանայինք տեսնել պարոններին, վոր նոր եյին դահլիճից ներս մտել և շարքով կանգնել դրան մոտ։ Ներանց յերաժշտությունն եր կլեթաու, մի տեսակ ջութակ յերեք լարով, յերկու թմբուկ, և մի յերգիչ։ Վերջինս ահռելի ծամածռություններով ուժ եր տալիս իր կոկորդին, յերևույթապես զորավոր ջանգությունների մեջ, սակայն, բարեբախտաբար հաճախ մի կտոր թղթով նրա բերանը խցում եր իր յերեսը, յերկրի սովորության համաձայն, և ծածկում եր իր յերեսը, յերկրի սովորության համաձայն, և խնայում եր մեզ ղղվելի ծամածռությունների տեսարանից։ Յերաժիշտները յեղանակից չեյին շեղվում, բայց այսուամենայնիվ ամբողջությունը կատուների համերգից չեր տարբերվում, Յերեք սերուն տղաներ, յերկայն հագուստ հագած, վարդապետած գունդգունդ ժապավեններով, այնքան նեղընչեցված եյին այս աններդաշնակ յերաժշտությունից և յերգչի ձիչերից, վոր նրանք սկսան պարել և զանազան դիրքեր

ասնել։ Երանք ունեին մեծագլխա փորրիկ բամբիռներ, վորոնք պարելիս գարնում եյին ժամանակ առ ժամանակ։ Հավատում եմ վոր այս պատանիներից չերկուքը ներկայացնում եյին կանացի ոխեր, վորովհետև նրանց շարժուձևերը դանդաղ եյին և ավելի համեստ, իսկ չերկրորդ տղան ամենակատաղի թավալումներ եր գործում՝ գարձնելով փոխն փոխ նրանցից չուրաքանչյուրին։ Այս հյուրասիրության ամենահաճելի մասը, սակայն, սկսավ չերբ չերաժշտությունը հասավ հանկարծ բարձր աղմուկի, չերգիչը ճչում եր անդիմադրելի, և չերեք տղաները թավալում եյին գլխի վրա մինչև դահլիճի ծայրամասը, վորոնցից չերկուսը ետում եյին շնորհալի կեցվածքով, մինչ չերրորդը կանգնում եր իր գլխի վրա, ցուցադրելով իր վարպետությունը և մերկ վոտները։ Մի արարք կար, վոր պարտիզները կատարում եյին մեծ ճարպիկությամբ, նրանք բազմից պտտվում եյին ոդի մեջ, առանց դիպչելու գետնին, վոտքով կամ ձեռքով։ Մեր ականջը լեցված և մեր աստամբաը պարապ, վերջապես մենք վոտքի չելանք. դեպանը հրաժեշտ առավ իր առատաձեռն հյուրընկալից, և ամբողջ շքախումբը նույն չեղանակով վերադարձավ տուն, — ճաշելու։

Վորովհետև դեպանը ի վիճակի չեր իր բնակած տնում վերադարձնել տարտարի քաղաքավարությունը, նորին գերազանցությունը խնդրեց վոր տրամադրվի նրա պարտեզը, վոր շնորհվեց մեծ պատրաստակամությամբ։ Մեկնելց առաջ ուզեցինք մեր չերաժիշտներին և խոհանոցի կազմվածքը, և առավոտ ժամը տասին դեպանությունը մեկնեց դեպի պարտեզը, ուր տարտարը սպասում եր մեզ մի տաղավարում։ Մեր ճանապարհը անցնում եր բերդի պարիսպների չերկարությամբ և Զանգու գետի կամրջի վրայով. մերձակա չերկիրը գեղեցիկ մի չերևույթ ուներ։ Զանգին մոտ ափում մենք անմիջապես մտանք մի պարտեզ, վերջերս տնկված, վորի պլանավորությունն ստանում եր գեպի տաղավարը, վորտեղից չերևում եր քերդն ու տարտարի բնակարանը։ Ծառուղին չերկարում եր մինչև մի բարձունք, վորի վրա ուսանները, պատերազմի



ժամանակ հաստատած եին մի մարտկոց, բայց քաղաքավարութիւն եին ունեցել հարգելու սարդարի բնակարանը։ Տաղավարը կառուցված և ասիական ոճով, և շատ գեղեցիկ և ու հարմար։ Շրջապատված և ապրյուրներով, և նեռում կա նաև մի մարմարյա ավազան, մի շատրվանով (jet d' eau), որ զարնում և փոքրիկ դանդակներ, և այսպես արտադրում մեղմ ձայներ, որոնք հաճելի են սարդարի ականջին։

Շենքը բարձր և, և ունի բազմաթիվ հարկարաժիններ, որոնք բոլորն էլ մեջտեղում ունեն մի բացվածք, այնպես որ բոլոր սենյակները հաղորդակցության մեջ են գիշատիչ հարկարաժնի հետ։ Ներքին բաժանմունքները բավական ճաշակավոր կերպով նկարազարդված են, և գրան բաժանմունքներն ունեն զանազան գունեղով վերնատներ։ Այս վայրը ամառվան համար հաճոյալի բնակարան և, և անտարակույս, որովհետև զովություններ ցույց և տալիս եվրոպական վարպետություն, որ մի բան չի պակասում այս վայրը միքանի տարուց զարձնելու մի երկնային առանձնարան։ Մեր նվագախումբը նվագում եր և պարսիկները խմում եին շոկոլադ ուլկորներ, նրանք մեծ ախորժակով եին ուտում պաղպաղակը, որի պատրաստությունը նրանք լավ չեն հասկանում։ Յերեկվա պարտղները վերստին ներկայացան և խնդրեցին թույլատրել պարելու ուսական յերաժշտությամբ, որ նրանք շատ եին սիրել։ Ճաշին գինին լավ եր. և պարսիկները լափեցին, ինչպես նաև խմեցին խմիչքներ անպին քանակությամբ։ Արդարև յեղան շատ պարագաներ, յերբ մարդիկ ոռմի մի շիշ կուլ ավին մի անգամից, առանց վորևե դժկամակության նշանի։ Այս քաջարի խմողներից յերկուսը մրցման եին մտել նաստած տաղավարում. նրանցից մեկը սարդարի բժիշկն եր, և մյուսը մի գնդապետ, որի բնակարանումն եր ապրում դեսպանը։ Զափազանց ծիծաղելի եր լսել բժշկին, որ աշխատում եր ապացուցել թե Մուհամմեդ հիմար եր գինին արգելելու համար։ Իր տեսը [սարդարը] ասում եր նա, միայնուչն կարծիքին և. և թե ինք կարող և պարծենալ որպես բժիշկ, որ ինքը գտել և ալկոհոլական դեղը, դա ամ-

կոհոլն և, որ ինք հանձնարարում և իր հիվանդներին։ Գնդապետը հաստատում և այս բոլորը զվարթ և համախ վոչ նժարական գլխի շարժումով, և նա նկատեց թե այս տիեզերական դեղը այնքան ընդհանուր հավանություն և գտել, որ Լաֆոս (Lafosse), մի եվրոպացի բժիշկ, որ ապրում և այստեղ, կորցրել և իր բոլոր հաճախորդներին։ Դր. Սանգրադոն (Dr. Sangrado) անտարակույս չգիտի կարողանա վաճառել իր բախտը Յերևանում։ Սարդարը դուրս նայեց մի պատուհանից և ժպտեց, նա կորցրել եր իր լրջությունը, և զեպանից պահանջեց, որ իրեն թողնի մեքանի շիշ լիկոր ու ռոմ։ Նա վաճառուն կին ունի։ Հյուրերը մեկնեցին գոհ, և մեր մեկնումը վորոշվեց հաջորդ որվան համար։

Սարև տալիս եմ այնպիսի մանրամասն տեղեկություն, որ յես կարողացա իմանալ այս տեղի մասին։ Յերևան հասերեն մի բառ և, որ նշանակում և՝ «այն որ յերևեց կամ տեսնվեց», սա ակնարկում և այն ավանդության, թե այս առաջին տեղն և, որ յերևեց Նոյին, յերբ նա իջնում եր Արարատից։ Լեռը գտնվում և սասը վերստ հեռավորության վրա, Քաղաքը ընդհանրապես դուրկ չե գեղեցիկ դիրքերից, բայց շենքերը չեն տեսնվում, գետեղված լինելով պարտեզների յետևը։ Մոտից հոսում են յերկու գետ, մեկը Զանգուն, և մյուսը կոչվում և Կվերբուլակ (Kverbulak = քսան բազուկ), [պետք և լինի Կըրկըռլաղ = քսան աղբյուր]։ Առաջինը բղխում և Յերևանի լճից [Սեվանից], անցնում և Հայաստանի միջ մասից և մխանում և Արաքսին, վոչ շատ հեռու Կասպից ծովից[?]։ Պարսկաստանի պատմությունը լուռ և այս քաղքի ծագման մասին, և այդ պատճառով բնակիչները յենթադրում են թե աշխարհի ամենահին քաղաքն և, և թե Նոյը հաստատվեց այնտեղ։ 1582 տարում Ջրհեղեղից հետո Նոյը հաստատվեց այնտեղ։ 1582 տարում Թուրքերը տիրեցին Յերևանին և Մուրադ Գ.ի ժամանակ այնտեղ շինեցին մի բերդ, որ տակավին կանգուն և, և այս տեղից մի թնդանոթի հարվածի հեռավորության վրա և 1607 թվին պարսիկները Շահ Աբբասի առաջնորդությամբ վերադրավեցին և ընդարձակեցին սմրությունը

նները։ Տաճկաց սարի հետ նրա հոգի պարիսպները չէին ամէն պիտոյքերին Քուրդերի հարձակմանը, որոնք սովորած եղեն վերցնել պաշարումը։ Աբրաս մեծի մահից հետո, Քուրդերը վերսին պաշարեցին ու գրավեցին Յերևանը, բայց հետագայում, 1636 թվին, Սոսին (Sosi) [Սեֆին] նորից խլեց նրանցից, Մուրադ Դ.-ի թագավորության ժամանակ և ամբողջ պահակատորը սրախողխող եղավ։ Հետո, նորից ընկաւ Քուրդերի ձեռքը 1721 թվին, Սոսին [Սեֆին] տան խռովութիւններին պատճառով, բայց նշանաւոր Նադիր Շահը վերադրավեց այն 1724 տարում։ Թամասայի (Tamassa) [Թամասպ] ժամից հետո Վարակասանցոց տերող քայքայիչ խռովութիւններից ոգուտ քաղելով Հերակլ թագավորը (Czar Heraselius) գրավից Յերևանը, բայց շուտով կորցրից իր ամբողջ կայսրութեան հետ միասին, և վերջապես ռուսները կոմս Գուդովիչի (Count Gudowitsch) հրամանատարութեամբ փորձեցին հարձակումով գրավել այս վայրը, բայց պարտվեցին։

Արարատ անունը հիշեցնում է ինձ իմ քրիստոնեական փոքրիկ պատկերները, որոնք իմ ուշադրութեան ենթին գրավում, երբ ես փոքր եի։ Այս լեռը, որի աշխարհագրական ծավալը այնքան էլ ճիշտ պատկերացված չէին այդ նկարներում, և որի գագաթին հանդչում եր Նոյի տապանը, երկու անգամ ավելի մեծ քան Արարատը, հիմա իր վահեղութեամբ կանգնել է իմ դիմաց։ Դա բարձրանում է Արաքսի ձյուն կողմը, որ վոլորվում է նրա տորոտի երկայնքից, երկու բարձունքներ են, որոնցից մեկը նվազ մեծ է քան մյուսը, և հետևաբար կոչվում է այսոկ Արարատ Սադագ (Sadagh), Արարատի որդի։ Մեկ խոսքով պատված է Հայաստանում, Աղի լեռների (Salt mountains) շղթայի մոտ, ուր քուրդերը պահում են իրենց բանակատեղին։ Կենտրոնից մինչև վեր պատված է ձյունով և ընդհանրապես ծածկված ամպերով։ Այս լեռան մասին շատ առասպելական պատմութիւններ են պատմում, բայց ճշմարիտ է որ կարելի չէ բարձրանալ նրա գագաթը, հետևյալ հայտնի

պատճառով, — անչափից մինչև կատարը կատարելապես զառիվայր է և ծածկված սառույցով։ Թրքական հարուստ մի փաշա, ճամբորդութեան սերտանալ, փորձեց բարձրանալ նրա կատարը, բայց կենտրոնը հասնելուն պես, ցրտի ատակութիւնից և քամու կատաղութիւնից սոսկված եր հրաժարվել իր մտադրութիւնից։

Յերեք տարի առաջ, [տասուլյի] մի ահագին զանգված բաժանվեց ու վար գլորվեց, և հարևան մի գյուղի բնակիչները փնթաղրում են վար Նոյի տապանի մի գերան գտնվել և ձյունի մեջ։ Արդարև հավանական է վար լեռներից հաճախ փլատակորներ վար գլորվին։ Արարատում գտնվում են բազմաթիվ գագաններ և հատ առ հատ ոձեր։ Նրա տորոտում գտնվում է մի վանք, որ կոչվում է Առաքելավանք (Arakilvank), վար հայերենով նշանակում է «առաքելոց վանք»։ Հայ ժողովուրդը այդ վայրը համարում է սրբություն, և հաճախում են քիչ նոյը առաջին անգամ այդ անտառում շնորհակալություն և հայտնել առաջուն, և կատուցել և իր առաջին բնակարանը։

Դ. ՅԵՐԵՎԱՆԻՑ ՔԱՎՐԻՋ*

Մայիսի 7. — Ձեզ արդեն ասել եմ, թե այն որից է վեր ցերը դեսպանությունը մուտք և գործել պարսկական հողի վրա, նրա փոխադրության ու ապրուստի համար կատարված բոլոր ծախքերը ամբողջությամբ թագավորի [Շահի] հաշվին են։ Թամբված ձիեր հայթայթեցին մեզ, և մեր բեռները ուղարկեցին ջորիներով ու ուղտերով. սրանք բոլորը զարդարված էլին զանգակներով, որոնք ահռելի մի աղմուկ էլին բարձրացնում։ Այս ջորիներից մեկի կրած ծանրությունը զարմանալի չե, վոչ էլ նվազ զարմանալի է նրանց հրաշեկությունն ու արագ քայլերը։ Ուղտերն ընդհակառակն առաջ են գնում իսկական փիլիսոփայական պաղարյունով, վոր վոչ մեկ բան աշխարհում չի կարող խռովել Նրանք բնազդական յեզակի զգացումն ունեն՝ թե վորքան կարողություն ունեն [բեռ] կրելու և իմաց են տալիս թե բավականաչափ բեռնավորված են, վոտքի կանգնելով առանց վորևե նշան տրվելու։ Թերևս չկա մի կենդանի վոր ավելի եժան և ավելի դյուրին կերակրվի քան ուղտը. նրանք կերակրվում են անապատում, ուր հազիվ թե մոլեւե կանաչություն և տեսնվում, հակառակ դրան աճում են, բայց այս կենդանիներին հեծնելը բացարձակ տանջանք է, նրանց սարսափ շարժման պատճառով։ Վորովհետև, բոլոր պարագաներում, Պարսկաստանում փոխադրությունները կատարվում են ձիով, եշով և ուղտով, իրական ճանապարհներ գոյություն չունեն և նույն իսկ շատ պարսիկներ կան, վորոնք երբեք

* Kotzebue, եջ 128—148։

կառք չեն տեսել։ Հետևաբար, ճանապարհորդները պետք է հետևեն վոտնակոխված կանաչությունների վրա բացված նեղ ուղիներին, բայց քարքարոտ տեղերում հազիվ թե վորևե հետք նշմարելի է, և անհրաժեշտ է ունենալ առաջնորդներ՝ ճանապարհը ցույց տալու համար։ Պարսիկները ընդհանրապես ձիով են ճանապարհորդում և կանայք միայն ունեն մի տեսակ կառք, վոր կոչվում է փոխադրական կառավան, վոր բոլորովին էլ հարմար չե։ Դա բաղկացած է փայտե շրջանակներից, վորոնք կազմում են մի տեսակ մեծ վանդակ, նստած յերկու փայտերի վրա, բավական յերկար՝ թե դեպի առաջ և թե դեպի յետևը կապելու համար յերկու ջորիներ, վորոնք շատ լավ են կրում։ Ամբողջ կազմվածքը սովորաբար ծածկված է կարմիր կտորով, կարված այն տեղ ուր ջորիները են կանգնում։ Այս մեքենան [պատգարակը] այնքան ցածր է, վոր մարդ միայն պարսկական յեղանակով կարող է նստել նրանց մեջ։ Նրանցից շատերը հատկացվեցին մեր հյուանդներին, վորոնք պետք էլին դրում պառկելու։ Սկզբում մենք սրամտորեն չէինք վստահելու պարսկական ձիերին, բայց փորձով տեսանք վոր նրանք գառան նման հանդարտ են, և հյուսալիորեն հարմար ճանապարհորդության, շնորհիվ նրանց հաճելի անսայթաք քայլվածքին։ Այդ քայլվածքը չունեցող ձին Պարսկաստանում վաճառվում է կես գնով։

Այսորվան մեր դնացքը դեպի Դուգին[1] (Dugin) [Դվին] դյուղն եր, վորի մերձակայքում տեսանք Յերևանի նահանգի հիանալի հովիտը, վոռոգված Արաքսով։ Բազմաթիվ գյուղերը սփռված են նրա մեջ։ Պարսկաստանում ամեն մեկ դյուղ գրեթե մի փոքրիկ ամրոցի յերևույթն ունի, շրջապատված լինելով բարձր պարիսպներով, վորոնց անկյուններում կազմում են աշտարակներ, վորմածակերով։ Այս կամաները կապում են վոր ինքնաբերաբար ծագում առած և պարսկական հաճախակի պատերազմներից ու հեղափոխություններից, բայց ընդհանրապես կարելի չե վերագրել նախանձոտության, վոր նրանց մեջ կատաղի աստիճանների չե հասնում։ Գառնի չայ (Gar-

ni tshai) փոքրիկ գետն անցնելուց հետո,— բայց առանց տեսնելու այն մարմարյա սյուները[2], որոնք Շարդենը նկարագրում և հարյուր տարի առաջ,— հասանք այն ճամբարը, որ պատրաստված էր մեզ համար, [Դվինի] գյուղին մոտ։ Այստեղ մենք ավելի մոտ եյինք Արարատին։ Յերևկոյան մեր ընթերցքը կերանք բացօթյա և լեռան ձյունապատ գագաթը յերկար ժամանակ վարժմամարին լուսավորված էր մարմանող արեգակով։

Մայիսի 8. — Մեր ձախ կողմը կար մի լեռնաշղթա, որ ուղղություն էր տալիս մեր ճանապարհին, և ավելի դեպի առաջ մեր աջ կողմում Արարատը հարատևորեն մեր աչքի առաջն էր։ Գետի ափերի վրա տեսանք մի վանքի ավերակները, ուր Եջմիածնի հիմնադիր ս. Գրիգոր (Gregorius) այնտեղ ապրել շատ տարի դերեզմանի նման, որպեսզի աշխարհից հեռանա կատարելապես զերծ մնալով տեղերից հայերը ապաստան են գտել, և մոտենալով դերեզմանին, ինչպես կարծում են, բժշկվում են վատնդավոր ախտերից[3]։ Յերկիրը խաչաձևում են բազմաթիվ ջրանցքները, որոնք վտոռում են բրնձի ու բամբակի արտերը, բայց արտադրում են տհաճելի շոգի, որ պղծի ցավ և պատճառում։ Մոտենալով Դավալու գյուղը[4] ուր վորոշված էր այս գիշերվան ոթևանը, մեզ դիմավորեցին նրա բնակիչների շատերը, որոնք հավաքված եյին մեզ տեսնելու հետաքրքրությունից։ Նրանցից բազմաթիվ կանայք յերևում եյին այնքան կեղտոտ, ագեղ ու վատ հագնված, որ մեզ բացարձակ զզվանք առթեցին։ Մի արտակարգ անձ մեզ այցելեց մեր իջևանում, որին մենք նախ խոնթ համարեցինք, բայց յերևան յեկավ որ նա մի դերվիշ եր, տարօրինակ հագուստով. մի վոչխարի մորթի հագիվ ծածկել եր նրա մարմինը, նրա ձեռքն ու վոտքը մերկ եյին, մի ծաղկեպսակ զարդարում եր նրա գլուխը, աջ ձեռքով բռնել եր մի տեղ, ձախ ձեռքում մի սան. նա արձակում եր սոսկալի ճիչեր, շարունակ կրկնելով Ալիի անունը, և մեզ ասին թե նա աղոթում է մեր յերջանկության համար։ Թեև նա վտտրմության

չնդրեց մեզնից,— մի վարմունք վոր շատ գովեստի արժանի է Զաքսկասանում,— մենք մի քիչ դրամ նետեցինք նրա առաջ, վոր վերցրեց, առանց շնորհակալություն հայտնելու մեզ։ Դերվիշների բազմաթիվ կարգեր կան, այս մարդը պատկանում է այն կարգին, որոնք իրենց ամբողջ կյանքը անց են կացնում բացօթյա։

Մայիսի 9. — Յերկիրը այլևս հաճելի չի. անցնում ենք լերկու բարձունքների միջից, որ կազմում է մի նեղ կիրճ, և փակում է մեր յետևը թողած հովիտը տեսարանը։ Ճանապարհից քիչ հեռու գտնվում են բազմաթիվ փոքրիկ գյուղեր. տաքությունը խիստ հանդուրժելի եր, այստեղներով ուրախ եյինք. որ մեր վրանները զարկել եյին ծիրանի ծառերի տակ, Նուրաշեն[5] (Nurashin) գյուղում։ Յեվրոպայում մարդիկ յերևակայում են թե Պարսկաստանը դրախտ է, և պարսիկներն էլ այդպիսի հավատ ունեն [իրենց յերկրի մասին], սակայն, թեև հիմա գարուն է, բայց վոչ ծաղիկ կա, վոչ կանաչապարդ դեղեցիկ դաշտեր և վոչ էլ վիրաժնվող բնության ընդհանուր տեսարանը, որոնք հյուսիսային կլիմայում այս յեղանակի պարգևներն են։ Շրջապատի լեռները մերկ են, դաշտերը դեղին, և ծառերը հազվագյուտ։

Մայիսի 10. — Նուրաշենից մեկնելուց անմիջապես հետո, անցանք Արփաչայ գետի առնվազն տասը տարբեր բազուկներից, որ [Արփաչայը] կազմում է Յերևանի նահանգի և Նախիջևանի (Nakatshevan) կալվածների սահմանը։ Յերբ գետը լեցուն է, անցքը շատ վտանգավոր է։ Ճանապարհը վոլորվում է բարձունքների յերկայնքին, որոնք կազմում են դեղեցիկ տեսարաններ դեպի Արաքսը։ Հոյ[6] (Hoye) ավանը դտնվում է ալտեղ, որ նշանավոր է վորպես գահաժառանգի ամառանոց։ Հեռվից յեզակի ձևով մի ժայռ բարձրանում է մեր առաջ, դա կոչվում է Ոձերի լեռը, որովհետև ասում են թե ալտեղ վխտում են ոձերը։ Այս լեռնից վոչ շատ հեռու, ճանապարհը դառնում է դեպի Ղարաբաղի (Carabach) նահանգը։ Մեր ճանապարհին հանդիպեցինք վճիտ ջրի մի դեղեցիկ աղբյուրի, որի նման այլևս չդտանք։ Ընդհանրա-

պես լավ ջրի մեծ սակավություն կա լերկրում. ամեն տեղ [ջուրը] շատ պղտոր և և հողի տհաճելի համ ունի։ Այս ժամանակ մենք դժբախտություն ունեցանք կորցնելու մեր ծառաներից մեկին, որը դիշերը մեռավ կաթվածից։ Նրա մարմինը խոր թաղեցինք հողում, և ծածկեցինք մեծ քարով, բայց վերադարձին գտանք ամեն ինչ քանդված, որովհետև իսլամները լերբեք թույլ չեն տալիս, որ հանգիստ մնա մի քրիստոնյայի դիակը։ Այս պարագան շատ խոր տպավորություն գործեց բոլորիս վրա. լերբ հետու ենք մեր հայրենիքից, մի ընկերակցի մահը վշտաբեր հուզում և տառապանք է պատճառում։

Մայիսի 11. Վերջին լուսնաշրջիկի այս կողմը, որտեղից ճանապարհը ուղղվում է դեպի Նախիջևան քաղաքը, լիրկիը այնքան ամայացած է, որ կարելի չի նկարագրել։ Ոչ մի տուն և ոչ մի տեղ՝ հանգստացնելու համար հոգնած աչքը։ Կրահոդի մերկ լեռները, ճաթռտած արևի կիզիչ ճառագայթներից, կորատում են իրար զանազան ուղղություններով և պատում են ճանապարհորդին մռայլությամբ։ Նախիջևան շրջապատող լերկիրը հավասարապես ամայի է, բայց քաղաքի մերձակա ծառերի տեսարանը նորից հոգեցնում է աչքը։ Այնտեղ խանը, մի կույր մարդ, մլքանի հազար ձիավորներով գլուխն անցած, առաջ լկավ դիմավորելու մեզ, դեպանության անցքին, փողոցներն ու տները, լի եյին զինվորներով, և պատիվ դեսպանի։ Ետեզ ալևոր Ղամբարի խանը (Kamparei-Chan), որ թևրևա իր ժողովրդի լավագույն մարդն և, նախապես Նախիջևանի սեփականատերն եր։ Կառավարության դժգոհ թողնելու դժբախտությունն ունենալով, նա դատապարտվեց կորցնելու իր աչքը, մի պատիժ որ այնքան հաճախակի է Պարսկաստանում։ Միաժամանակ զրկվելով իր կալվածից, քանի տարի ինքն ու իր ընտանիքը ապրեցին ամենավողորմելի ապքատ վիճակում։ Ձեվ միայն լերկու ամիս և, որ կառավարությունը՝ զրկված գիտությունից և տեղի տալով իր ժողովուրդի դիմումներին, — վորոնք հարատահարված եյին նրա շնորհազրկումից իվեր, — համաձայնվեց նշանակելու նրան իր հայրենական կառավարության մեջ...

Մենք իջևանեցինք մի մեծ տուն, վոր հատկապես մեզ համար դատարկված եր։ Իմ սենյակը հարևան մի հարկաբաժինն եր։ Մեզ տրված լավ հարմարությունները, վոր մենք չլինք վայելած Յերևանից մեկնելուց իվեր, հարկադրեցին դեսպանին մի որ հանգստանալ այս տեղում։ Մեր բնակարանը, նման սպրատների բոլոր տներին, բաղկանում է անթիվ փոքրիկ բակերից ու սենյակներից, բոլորն իրար միացած փոքրիկ նեղ միջանցքներով։ Յուրաքանչյուր սենյակ միայն մի մուտք ունի։ Հարեմում յուրաքանչյուր գլխավոր միայն մի մուտք ունի։ Հարեմում յուրաքանչյուր գլխավոր կնոջ հատկացված և մի առանձին հարկաբաժին, և միացած կանանցից շատերը ապրում են միասին։ Այս տները փողոցից միայն մեկ մուտք ունեն, և առաջին բակում բնակում և ընտանիքի գլխավորը։ Պատերը շատ բարձր են, և այնքան լայն, վոր մարդիկ ու շները կարող են հանգիստ կերպով քայլել նրանց վրա՝ պահպանելու համար ներսի գոհարները։

Քաղաքը նախապես գրավվել եր ռուս գեներալ Նեբոլսին (Nebolsin), սակայն սա այն ծայրատահմանն է, վոր ռուսները տարածեցին իրենց գրավումները Պարսկաստանում։ Եջմիածնի վանքում պահված հայկական պատմության հիշատակարանները հավաստում են, թե Նախիջևանը հին նշանավոր Արտաշատն է (Artaksad), և Հայաստանի ամենահին քաղաքներից մեկը[7]։ Իր նախկին բարգավաճ որերում, ասում են թե յերեսուն հազար տուն ուներ, բայց այժմ հազիվ թե այս թվի մեկ յերրորդը միտում է։ Այս յերկրի ամեն մի անկյունը պատիվ և հավատում իրեն հավաստելու թե Նոյը հաստատվել է այնտեղ, և հայերը պնդում են թե Նոյը հիմնել և այս քաղաքը։ Նախիջևան փոքրիկ գետը, վոր մի ջրվեժ է կազմում, քաղաքը բաժանում է յերկու մասի։ Այն մասը վոր դանվում է արևմտյան կողմը հին ժամանակներում պարսպապատ մի բերդ եր, վոր ռուսները բազմաթիվ կռիվներում հաջորդաբար քանդել են։ Ուշադրության արժանի յերբում հանդիպում են մի քանի հին մզկիթներ, որոնցից մեկը

կու քաներ կան, մի բարձր, բայց վոչ քառակուսի, աշտարակ, վորի վրա նշանագիր արձանագրություններ կան, և նրան կից մի դուռ, այժմ ամբարակ, սակայն վորի յերկու սյուները, առանձին վարպետությամբ կառուցված, տակավին կանգուն են։ Ասում են սրանք Լենկթիմուրի հուշարձաններն են։ Դեսպանը այցելից Ղամբարի խանին՝ շնորհակալություն հայտնելու նրա հյուրասիրության համար։

Մայիսի 13.—Այսոր մենք մեկնեցինք քաղաքից, ընկերացած բազմաթիվ ախանավոր պարսիկների։ Շրջապատի յերկիրը ամայի չի, կրահոդի լեռները դեղնավուն գույն ունեն, վոր հոգնեցնում է աչքը, և վոչ մի բան դյուզանկարի նուիրությունը չի փոխիր, բայց հեռավոր Ոձերի լեռան գագաթից։ Մի քանի վերստ քաղաքից այն կողմ դժվարավ անցանք գետի հունից, վոր անցյալում ավելի լայն և յեղել ինչպես յերևում է մի փառավոր կամրջի ավերակներից, վոր մի անկյուն և կազմում գետի դեմ։ Նախապես դա կանգնած և յեղել տասնյերկու կամարների վրա, վորոնցից վեցը մնայուն են։ Կես որից հետո հասանք Արաքսին*, վոր հավասարմորեն հեռուում եր մեզ Յերևանից մի մղոն հեռու վորության վրա, և այժմ թեքված, վորից անհրաժեշտ եր վոր մենք անցնեյինք։ Նրա ծայրահեղ արագընթացությունը դժվարանցանելի եր դարձնում, իրար կապված բազմաթիվ ծփացող խոզի տերևների վրա պետք եր վոր անցնեյինք, սակայն բացառությամբ չորս նոր անիվների, վորոնք անհետացան պատճառով կորավեցին, մարդիկն ու բեռները ապահով կերպով հասան մյուս ափը։ Այս գետը հավանորեն իր անունն առած և Արարատ լեռնից, վորից ծագում և [?]։ Նրա կամուրջները այլևս չկան։ Յեվրոպացում հազիվ թե հավասան, վոր Արաքսը՝ գտնվելով լայնության 39 աստիճանի վրա, բազմաթիվ անգամներ ձմռան ընթացքում սառել և այն աստիճան, վոր անվտանգ կերպով պինդ վորների ու հրետանին

* Սարապոն սուտ և թե Արաքսը թափվում և ուղղակի կասպից ծովը։ Ներկայումս միանում և Կուրի հետ, ծովից բավական մեծ հեռավորության վրա. վորոշապես տեղն վում և նրա հին հունը, (Kotzebue, հտ 140)։

անցել են նրա վրայից։ Մի ուրիշ հետաքրքիր փաստն այն և, վոր մինչ ժամանակը Ամանյան հարևան հողամասում կատաղորեն տարածված և, յերբեք իր ափերները չի տարածել Արաքսի դեմից այս կողմ։ Անհրաժեշտ և ավելացնել, թե պարսկական կառավարությունը, յերբեք ամենաչնչին տեղագրական մեջբացներ ձեռք չի առել այս սոսկալի հիվանդության հանդեպ։ Հակառակ Թուրքիայի հետ [կատարված] շրջանակական առևտրի, ժամանակը յերբեք այժմ չի թափանցում այս կողմ, վորովհետև շատ տարիներից ի վեր հազվադեպ տարածվել և մինչև Արաքսը։

Այստեղից մի քանի վերստ հետու գտնվում են Հին Ջուղա նշանավոր քաղաքի ավերակները, վոր յերբեմն Հայաստանի առևտրի գլխավոր կենտրոնն եր։ Շահ Աբբասը՝ Սպահանը անմիջապես ծաղկյալ քաղաքի վերածելու համար, Ջուղայի բոլոր բնակիչներին տեղափոխեց այնտեղ, ուր նրանց սերունդները բնակում են մի արվարձանում, վոր իրենց բնիկ քաղաքի անունն և կրում։ Վերջինիս մնջ [Հին Ջուղայի] այժմ ապրում են միայն քսանչորս հայ ընտանիք։

Մայիսի 14.—Այսոր յերկար ճանապարհորդություն ունեցանք, վեց ժամ, (մոտ քսան չորս անգլիական մղոն), վոր սակայն ավելի հաճելի եր, ամայի կրահողային լեռների անհետացումով։ Արաքսից մի քանի վերստ հետու, Ալամդար (Alamdar) և Գարդար (Gerger) գյուղերից այն կողմ, մտանք մի նեղ ձոր, շրջապատված անապին պատնեշ ժայռերով, ճանապարհը հաճելիորեն անցնում և վոլոր մոլոր ձորակներից, ներկայացնելով հաջորդական նոր գյուղանկարներ, պերմանական մի մղոն զգալիորեն բարձրանում և կարևոր, գիշերվան մեր ոթևանից վոչ շատ հետու, հասնելով լեռը։ Գիշերվան մեր ոթևանից վոչ շատ հետու, հասատասված մի հին քարվանասարայի մոտ, գտնվում և զառիվեր անմատչելի մի բարձունքի վրա մի մեծ գյուղ, վորի բնակիչները միշտ բանակցության մնջ են կառավարության հետ։ Վերջինս ստիպված և պրամական գումարներ վճարել, վորպեսզի համոզի նրանց, վոր չկողոպտեն անցորդ-

նեբին։ Քարվանսարայի դուռը զարդարված է կապույտ խորաքանդակներով։

Մայիսի 15. — Մենք վերջապես կորցրել ենք Արարատ լեռան տեսարանը։ Այսօր անդադարորեն իջանք, այնքան վրան բարձրացել էինք երեկ։ Յերկրի տեսարանը ծայրատիճան ծածկված էր մինչև հասանք Գուլուս (Gulus) գետակին մի մղոն մնացած, որ հանկարծակի մի յերկնային գյուղանկար բացվեց մեր առաջ, կենդանացած քառասունից ավելի գյուղերով և հեռավոր Մարանդ (Maranda) քաղաքով, բոլորն էլ շրջապատված գեղեցիկ ծառերով։ Մարանդի կառավարիչ Նասար—Ալի խան (Nasar-Ali-Chan) հեծելազորի գլուխն անցած, ըստ սովորականի պիտավորեց դեսպանին, և նորին գերազանցության առաջարկեց ոթևանել իր տեղ[ական տունը], թեև տակավին ամբողջացած չէր, [տակայն] պատրաստած հարկաբաժինը ցույց էր տալիս բավական ճաշակ և փարթամության ապացույց։ Մարանդը ընդհանրապես գերազանցում է մինչև հիմա մեր տեսած ամեներն ու գյուղերը. փողոցների պատերը մխաձև են, ու մաքուր, կան մի քանի ծառազարդ պողոտաներ, որոնք միայն կարող են փարատել պարսկական քաղաքի անկենդանի ու մելամաղձոտ տխրությունը։ Աննշան մի գետակ, Սելու (Selu-lu) կոչված, անցնում է այս տեղից։ Պարսիկները մեծ վարպետություն ունեն ջրային հնարագիտության մեջ, և Մարանդի յուրաքանչյուր բնակիչ ի վիճակի է մնքենայով ջրելու իր այգին այս գետակից։ Խանձող տաքությունը, գետերի սակավությունը և ընդհանրապես անձրևի քիչությունը այս յերկրում՝ տեղի են տվել որ պարսիկները ժամանակներից իվեր ծանոթանան ջրային սխտեմի գործնական սկզբունքներին։ Յուրաքանչյուր գյուղացի, ուր որ էլ հաստատված լինի, վարպետություն ունի բազմաթիվ մղոն հեռու գտնելու մի աղբյուր, և նա կարող է ամենապարզ յեղանակով ջուրը տանել իր հողի վրա, և դարձնել այն միշտ տրամադրելի, գործածելով միայն համապատասխան իր պահանջին։ Ասում են թե Մարանդում ամառվան ամիսներին ջուրը այնքան հազվագյուտ է, որ ամեն մի տան տերը ստիպված է լինում իր հերթը սպասել, և ամեն մի հերթ տևում է մի ամբողջ գիշեր։

Մայիսի 16. — Մարանդի շրջակայքում հանդիպում ենք մեծ քանակությամբ վարդենիների, որոնք ծաղկած են։ Վարդի ջուրը և յուղը այստեղ մեծ առևտրական ապրանք են։ Ասում են թե Մարանդում ամեն տարի 500 ուղտ վարդի ջուր է արտահանվում։ Վարդենիները մշակում են հիմնավորապես Ղարաբաղի նման։ Ամեն գարնան ծաղկի ժամանակ, ամեն առավոտ կանուխ, ամեն տան տերը իր ընտանիքով գնում է իր վարդենիների մոտ, և ամբողջ օրը զբաղվում է ծաղիկները հավաքելով։ Ծաղիկները հավաքելուց հետո, անմիջապես տանում են գործարանը, որ ամեն տան մոտ կա, և ուր ամեն ընտանիք իր ծաղիկները թորում է։ Ամեն տարի մայիսի 17-ին Մարանդում տոնական հանդես է լինում, որ կոչվում է «Գյուլ-գաշտ» (Gul-gasht), այսինքն՝ վարդերի զբոսանք։ Այդ օրը ամեն ոք, ով կարող է, գնում է վարդենիների մոտ, և ամբողջ օրը անցկացնում է ուրախ զվարճությամբ։ Ասում են թե այդ տոնի ժամանակ Մարանդի շրջակայքում ամեն տեղ վարդենիների տակ սփռոցներ են գցում, և ամեն ոք, ով կարող է, ուտում է տերևը, իր որբանը, և վոչնչանում։ Պարսիկները վարդան կարմիրը (cochineal) անվանում են կրմիզ (Kermis)։ Մարանդում ևս նմանապես հայերը հավատում են թե Նոյի անմիջական հաջորդները այնտեղ հաստատվեցին, և նույն իսկ նրա կինը թաղված է այնտեղ։ Ով կարող էր գանգատվել այդպիսի նվիրական մի վայրի տեսարանը։ Հետաքրքրությունը տանում է մեզ այդ կետը և գտանք վոր մուսուլմանները Նոյի կնոջ այսպես կոչված գերեզմանի տեղում մի խորան են կառուցել, գաւարկ պատերով, վորոնք այնքան անմաքուր են, վոր Մուհամմեդի կրոնը չի թույլատրում։ Յերբ խորանի կառուցումը վերջացավ, սակայն, վոչ վոք չէր կարող ցույց տալ բուն տեղը, ուր թաղված էր։ Մի հրաշք լուծում տվավ նրանց կասկածներին։ Յերեսուն ուղտ առաջ, մի յերկրաշարժի ժամանակ հողը բացվեց և յերկու մոլլաներ (իսլամ քահանաներ), վորոնցից մեկին տեսանք խորանում, և բնակիչներից շատերը տեսան մի մեծ քարի գերեզմանի հանկարծական բացումը, վոր սակայն շուտով անհետացավ բացվածքում։ Այդ ժամանակից իվեր, ճշմարիտ հավատացյալները համոզված են թե Նոյի կինը թաղված է այնտեղ, թեև թվում է թե վեճի առարկա չէ նրանց գերեզմանը նրանն է թե Նոյի մորը, վորովհետև Մարանդ հայերենով նշանակում է «մայրը այստեղ է», թերևս այս շրջումը պատճառ դարձավ, վոր դեսպանը մի որ հանգստանա այստեղ։

Մայիսի 17. — Մի փոքր ամրոցից, վոր գրեթե Մարանդի մոտն է, անցնելուց հետո, բարձրացանք մի բարձր լեռ, վորտեղից ձորը ուներ մի այլ գեղեցիկ տեսարան, և մենք կարող եյինք նույն իսկ վորոշել հեռավոր հորիզոնի վրա, այնտեղ ուր մենք հանգստացանք 14-ին։ Այս լեռը կոչվում է Մեշաու (Meshau), մինչև ժամ ճամբորդելուց հետո մտանք մի գեղեցիկ հովիտ, վոր ջրում է Զագրա (Sagra) գետը։ Ասում են թե այստեղ աճում են արտակարգորեն

ապրելիք բժշկական խոտեր։ Կիրսա, Դիսա և Միրսասատ (Kirsa, Disa, Mirsasat) գյուղերից անցնելուց հետո, անցանք մի հին քարվանսարայից։ Մեր ի՛ջևան Սոֆիան (Sofian) գյուղը ժամանելուց մեքենի վերստ հեռացած հովիտը հետզհետե ավելի ու ավելի կը փոքրանար։ Նկատեցինք մի լեռ, որ գրեթե ապառակ եր, այնտեղից բղխող ապի ապրյուրից։ Սոֆիան գտնվում է մի ընդարձակ հովտի մուտքին, որի վերջավորության մի սև շերտ ներկայացնում է Թավրիզ քաղաքը։ Նույը իր բնակութիւնը մինչև այս վայրը տարածած չվինելով, վոտանք կարծում են թե Սոֆիան, իր անունը առել և Սեֆեվիններից (Safis), ուր հաստատել նրանց բնակութիւնը, չորը Իսմայիլը իր արքունիքը Արդաբիլից Թավրիզ փոխադրից, բայց գյուղը ամբողջովին այնքան անարժան և ուշադրութեան, որ ժամանակի վատնում կլինի նրա անվան ծագումը փնտռել։ Յերեկոյան չորկու պարսիկները՝ Աբբաս Միրզայի և նրա առաջին մինիստրի կողմից վոզջունելու դեսպանին։ Նրանք նվեր բերին մեծ չկան վոզնունելու դեսպանին։ Նրանք նվեր բերին մեծ ձկներ և նարինջ։ Յավում եմ ասել, որ առաջինները հոտած եին, իսկ վերջինը թթու։

Մայիսի 18. — Վորովհետև Սոֆիանից մինչև Թավրիզ մեր ճանապարհը չորկար եր, և պարսիկները պատրաստութիւններ եին տեսել մեր հանդիսավոր ընդունելութեան համար, մեր վրանները զարկին Սեգիլան (Segilan) գյուղում, քաղաքից քան վերստ հեռու։ Յերեկոյան տեսանք պարսկական բանակի բազմաթիվ կրակները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դուգին (Dugin), Դվինն է, որ գրվում է նաև Դուին, իսկ արաբ ժամանակագիրները անվանում են Դաբիլ (Dabil), պատմական նշանավոր քաղաք։ Այժմ կան Դվին անուն չորկու գյուղեր։ Արտաշատի ավերակների մոտ գտնվողը կոչվում է Ստորին կամ Հայ Դվին, իսկ մյուսը՝ Ագաթ կամ Գառնի դեսի մերձակայքում՝ Վերին կամ Ասորի Դվին։ Յերկու գյուղերը իրարից հեռու չեն մոտ չորկու կիլոմետր։ Պատմական Դվինը գտնվել է Արտաշատի անչքացումից հետո, ե. դարում և չինթադրվում է Քեհ հիմնվել է Դ. դարում, և կոչվում եր «Ոստան կամ Բուն Ոստան Հայոց»։ Դվինն պարսիկներն նշանակում է բլուր և արդարև վերին Դվինի մոտ կա մի բարձրավանդակ, վոր համարվում է պատմական քաղաքի վայրը։ Այս քաղաքը Հայաստանի պատմության փիզոպական շրջանում կենտրոնական տեղ եր գրավում և հիշատակվում է հայ մատենագրներից։ Արաբական տիրապետության շրջանում, մասնավորապես Բ. և Թ. դարերում և հետագայում ևս արևելքի և արևմուտքի առևտրի կենտրոն եր և այնտեղ եր կատարվում ապրանքափոխանակություն Հնդկաստանի ու արևելյան այլ երկրների և Յեվրոպայի մեջ և կոչվում եր Շահաստան։ Հինգ գլխավոր ճանապարհները միանում եին Դվինից և կարավանները արևելքից ու արևմուտքից մուտք ու ելք նրան գործում այնտեղ։ Նշանավոր եր Դվինի կատեդրոնը և գորգի արտադրությունը։ Դվինը ժԴ. դարի երկրորդ կեսից հետո այլևս չի հիշատակվում մեր մատենագրության մեջ։ Թաթարական արշավանքների շրջանում մենք հիշատակվում են Հայաստանի մյուս քաղաքների անունները Դվինի մասին մեզ մի ակնարկություն չկա։ Հավանական և որ առևտրական այլ կենտրոնների ուժեղացման հետևանքով Դվինը կորցրել է իր կարևորությունը և ապա ամայացել երկրաշարժների հետևանքով (Տես, «Այբրատաս» էջ 404—414. Ստորագրություն Հայաստ. 462—469, Le Strange, «The Lands of the East Caliphate, p. 182. Ritter. «Erdkunde» IX. 616. Tournebize. «Hist. polit. et relig. de l'Arménie, p.868)։

2. Շարդինը խոսում է «Տրդատի գահի». այսինքն Գառնիի հեթանոսական տաճարի կիսախարխուլ չորս շարք սեպաձև մարմարյա սյուների մասին, «այնքան մեծ որ յերեք մարդով չեն կարող գրկել»։ Սակայն Շարդինը միայն լսելով և խոսում այդ սյուների մասին, ինքը անձամբ չի տեսել Ալեքսանդրի մանրամասն նկարագրություն տալիս են Մոսքեսը (տես էջ 346—348) և նոր Փոքսըրը, որոնց տեղեկությունները գետնված են այս հատորում։

3. Սա ակնարկություն է Խոր Վիրապին, տես էջ 319, ծանոթ 11։

4. Պավլու, տես, էջ 319, ծանոթ. 9։

5. Նորաշեն, տես էջ 318, ծանոթ, 7։

6. Հոյ, Խոհն է, տես, էջ 318, ծանոթ, 6։

7. Նախիջևանը հետու չի գտնվում Արտաշատից և չի կարող մեկնույն վայրը լինել, ինչպես ասում է Կոսիբուն։ Նախիջևանի մասին տես, էջ 318, ծանոթ. 5։

Ե· ՅԵՐՄՈԼՈՎԻ ՅԵՎ ԱԲԲԱՍ ՄԻՐԶԱՅԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ*

Մայիսի 19. — *Թավրիզից քիչ հեռու հոսում է Աջկասու (Adgasu) գետը, որ տասը կամարով մի հին կամուրջ ունի։ Այստեղից պարսկական դինվորները տարածվում են գրեթե մինչև մեր ճամբարի մոտ, ուրեմն ավելի քան տասը վերստ. նրանց ձախ թեվը կամուրջի վրա է, ուր մի որ առաջ ուղարկած էլին՝ մեր նվագախումբը, նռնաձիգները և կողակները, վորովհետև քաղաքի մուտքի մեր հանդիսավոր թափորը պիտի սկսեր այդ տեղից։ Յերբ դեսպանը մոտեցավ Աջ թևին, դինվորական հրամանատարը բարևեց, թնդանոթներն արձակեցին և ամբողջ դինվորությունը բարև բռնեց։ Աջ [թևը] բաղկացած էր քառասուն ուղթ ձիավոր հրեաներից, ուղթը խումբ կաղամախիպսված հնծելազորից, և ուղթ հազար կանոնավոր հետևակից, քրդական և վոստիկանական դումարտակների հետ։ Հասնելով կամուրջը, Թավրիզի դինվորական կառավարիչ Թաթ Ալի խանը (Tat Ali Chan) առաջացավ դեպի մեզ, և դահաժառանգի անունով նվիրեց մի դեղեցիկ մարտաձի, զարդարված վոսկու և ականակուռ քարերի մի ծածկոցով։ Նորին գերազանցությունը մերժեց նվերը, հայտարարելով, թե ինք վորևե պարագայի չի կարող ընդունել վորևե բան, մինչև վոր չընդունվի հրապարակով Թագավորից և նորին վեհափառությունը չընդունի կայսեր նվերները։*

Նվագախմբի յեռանից կանոնավոր կարգապահությամբ ձիավորների թափորը շարժվեց դեպի առաջ։ Տաքը անտա-

* Kotzebue *էջ 148—174։*

նելի եր, և մենք տակավին ավելի էլինք նեղվում փոշուց վոր միքանի րոպեյում կատարելապես ծածկել եր մեզ։ Ժողովրդի խռնումը այնքան մեծ եր, վոր զինվորները ստիպված էլին իրենց հրացաններով յետ մղել, վորպեսզի ճանապարհ բանային անցքի համար։ Գորշ փոշին ամեն ինչ ծածկում եր մեր աչքից և մենք չէլինք կարող նշմարել վոչ քաղաքը և վոչ էլ նրա արվարձանները։ Մի յերկար ժամվան չարչարանքից հետո, հասանք այն տունը, վոր պատրաստված եր մեր ընդունելության համար։

Մուտքի բակում կանգնել եր պատվո պահակը, և դեսպանի հարկաբաժնում կային ամեն տեսակ զովացուցիչներ։ Տունը պատկանում է Թավրիզի առաջին մինիստրին, Միրզա Բեյուրկին (Mirza Bejurk) [Միրզա Բոզուրկ], վոր կայմակամի (տեղակալ) տիտղոսն էլ ունի, վոր համապատասխանում է Թագավորության փոխ-վարչապետի։ Նա նշանակված է վորպես դահաժառանգի ոդնական, և նրա վորդին ամուսնացած է նորին վեհափառության աղջիկներից մեկին, վոր ասում են թե շատ դեղեցիկ կին է։ Միրզա Բոզուրկը ճարտար մարդ է, այնքան փառասեր, վոր կարելի չէ անձնվեր համարել, և շողոքորթում են նրան անվանի։ Նրա ազատությունը ծայրաստիճան է։ Ժողովուրդը այնքան դժգոհ է նրանից, վորքան գոհ է գահաժառանգի վարչությունից։ Նրա տունը, նման բոլոր պարսիկ նշանավոր անձնավորությունների ընակարանների, բակերի և փոքրիկ հարկաբաժինների մի լաբյուրինթոս է։ Մեր ժամանման որը նա այցելեց դեսպանին, նորին գերազանցությունը վերադարձրեց այցելությունը ճաշից հետո։ Այս տեսակ այցելությունները վաստվում են անվերջ մեծարանքներով և փոխադարձ հարգանքի ու հավակրանքի արտահայտություններով։ Մենք հիացանք դեսպանի համբերության. և պարսիկները հիացել էլին նրա ճարտարախոսության վրա, վորովհետև նա բոլորին գերազանցում եր մեծարանքի արվեստի մեջ։

Մեր ժամանման հաջորդ որը արհիդուքս Կոստանդինի անվան տարեդարձն եր, և այդ որն եր վոր Աբբաս Միրզան

նշանակել եր մեր ընդունելության համար։ Հրապարակային մաղթանքներ կատարելուց հետո, Աբրաս Միրզայի կողմից չերկու ազնվականներ չեկան, մեզ առաջնորդելու ընդունելության վայրը։ Ժողովրդին արգելված եր չերևալ, և պողնեղում չերկշարք զինվորներ եին կանգնել մինչև պալատը։ Մենք ձիերով իջանք մի ընդարձակ ու գեղեցիկ բակում, և անցանք բազմաթիվ նման ընդարձակ ուրիշ բակերից, շրջապատված փոքրիկ անչափահասներով, ուր նստած եին քաղաքի պլխավոր անձնավորությունները, որոնք վոտքի չեկան ու բարևեցին, չերբ դեսպանը մոտեցավ։ Մենք շարունակեցինք մինչև մտանք մի պարտեզ, որի ծայրում գտնվում և գահաժառանգի պալատը։ Ցերեսը դեպի մեզ դարձրած բազմած կողմից կախված և կարմիր կտորից մի մեծ վարագույր, որ հաճելի մի տավեր և ձգում ապրյուրի չրի մեջ։ Նրա չախում առանձին կանգնած և Աբրաս Միրզան, կռթնած պատուհանի վրա։ Նրա աջ կողմում, բավական հեռու ատանք նախարար Միրզա Բոզուրկին, կանգնած պատի դեմ, և նրա ձախ կողմը կային չերեք չերեխաներ, վոսկով ու թանկագին քարերով զարդարված հագուստներով։ Նրանցից մեկը իր չեղբայրն և, չերկրորդը իր վորդին և չերրորդը իր չեղբորորդին։ Բացի այս անձերից ու մեզնից, ուրիշ վոչ վոք չկար։ Աբրաս Միրզան, որ դեմ և պնբճանքի, հագել և պարզ կարմիր մի հագուստ ժապավենով, բոլոր պարսիկների նման վոչխարի մորթից մի գլխարկ և կրում, և նրա գաշուկը միայն հարստորեն զարդարված և գոհարներով։

Ցերբ դեսպանը մոտեցավ, իշխանը մի քանի քայլ առաջացավ դեպի նա, և քաղաքավարությամբ ձեռք տվավ, վորից հետո նորին գերազանցությունը նորին բարձրության հայացրեց մի նամակ կայսրից, որ ըստ արևելյան սովորության, նա խոնարհությամբ բարձրացրեց գլխի իր գլխից ապա դրավ իր մոտ պատուհանի մեջ։ Աբրաս Միրզան չերեսուն հինգ տարեկան եր, և իր գեղեցիկ անձնավորության միացնում և արժանավայել կեցուածք. նրա խոսակցությունից վից եր և նրա ժպիտը տիպին։ Նրա աչքերը լի են բարությամբ,

նա արդար է նաև, և չերբեք հավանություն չի տալիս այն անգթություններին, որոնք արտոնված են պարսկական պրինցներով, և մեղմացնում և իր ազդեցությամբ։ Քաղաքավարական ձևերի կատարումից հետո, նա ցանկություն հայտնեց՝ ծանոթանալու համար բոլորիս հետ։ Բոլորին մի պատշաճ բան ասաց. համաձայն մեր դիրքին։ Դեսպանին նա ասաց. — «Թե քաջության վարձատրությունը, որով ինքն ղում է Թե նորին գերազանցությունը զարդարված է, հաստատում է իրեն Թե նա լավ ծառայած է իր վեհապետին»։ Միաբարությամբ հարցրեց Թե, արդյոք նա վիրավորված չե՞, այս վերկար պատերազմի ընթացքում։ Դեսպանը պատասխանեց, Թե իր վոտքի վերքը այլևս տհաճելի հետևանքներ չունի, և բացի, այն լավ ընդունելությունը վորով պատվել են իրեն Պարսկաստանում, բավական և մոռացնել տալու տխուր անցյալը։ Աբրաս Միրզան ավելացրեց, Թե իր իշխանության սահմանում ինք վոչ մի ջանք չպիտի խնայե Թավրիզում մեր բնակության ըստ հնարավորության հաճելի դարձնելու համար։ Դեսպանը շնորհակալություն հայտնեց այս ուշադրության համար և հրաժեշտ առավ։ Ցերբ գրեթե մոտեցել եինք շենքին, նորին գերազանցությունը նկատեց, վոր իշխանը քաղաքավարության համար կանգնել եր իր տեղում, վորի վրա բոլորս դարձանք դեպի նորին բարձրության և հարգանքով խոնարհություն արինք վերջինն անգամ։ Հակառակ նրա չերկար մորուքին և սոսկալի ընչացքին, Աբրաս Միրզան շահեց բոլորիս սիրտը։ Նրա Թիկնապահը, վոր ընկերացավ մեզ մինչև մեր տուն, շատ լորեն գովում եր իր տիրոջ, վորին նա պաշտում և։

Անգլիական արևելյան Հնդկաստանի ընկերության (English East India Company) պատները, վորոնք ապրում են Թավրիզում, այցելեցին դեսպանին և հրավիրեցին ճաշի։ Նրանց մեջ կային՝ հազարապետ Լինդսեյ, հազարապետ Մոնտիեթ, կինթոշ, հաբյուրապետ Հարթ, հաբյուրապետ Մոնտիեթ, (վոր գեներալ Մարկոմին ընկերացել եր Պարսկաստանում), Դր. Կորմիք և տեղակալ Ուիլլոք (Major Lindsay, Major

Mackintosh, Captain Hart, Captain Montieth, Dr. Cormick and Lieutenant Willock)։ Նաև հարյուրապետ Ուիլլոք (Captain Willock), Անգլիայի դեսպանական դործակատարը, և Դր. Կամբել (Dr. Campbell), վորոնք Թեհրանում ծառայում եյին Թագավորին։ Այս պարոններըը, վորոնք բազմաթիվ տարիներից իվեր դանվում են Պարսկաստանում, մեծապես ուրախ եյին ճաշելու եվրոպացիների ընկերակցությամբ, և յերաժշտության ձայնը վերստին լսելու համար բարձրորեն հրճվում, վորովհետև յերկար ժամանակից իվեր լսած չեյին։ Նրանք քոլորն էլ նախապես ապրել են Հնդկաստանում, վորի կլիմայի մասին նրանք խոսում են սարսափով։ Ճաշից հետո Աբբաս Միրզան ուղարկեց բազմաթիվ թամբված ձիեր և հրավիրեց դեսպանին ընկերանալու իրեն մի պտույտի համար։ Վորովհետև պալատից պիտի անցնեյինք, նորին բարձրությունը յեկավ հանդիպելու մեզ դրան մոտ, և մենք միասին առաջացանք քաղաքից դուրս։ Բազմաթիվ քուրդեր, տաուլած արվարձաններում, հյուրասիրեցին մեզ իրենց սովորական յերաժշտությամբ։ Նրանց նվագախումբը բաղկանում էր քսան յերաժիշտներից, հագնված ամենավառ գույներով. նրանք կրում եյին կոնաձև կարմիր գլխանոց, [յերաժշտական] դործիքներն եյին փոքրիկ թմբուկներ, կապված ձիերի թամբին, և մի տեսակ սրափող (clarionet), կոպիտ ճռնչացող ձայնով։ Բազաքից դուրս գալուց անմիջապես հետո, գտանք քրդերի մի խումբ և տասնութը կտոր հնձյալ հրետանի, և իշխանը մեր ներկայության կամենում եր ռազմափոթ կատարել։ Աբբաս Միրզան գծից դեպի վար ձիավարելուց հետո, ճակատում կանգնեց, բանակի դրեթե կեսը կոնում, (ունենալով դեսպանին իր կողքին, իսկ մենք միացինք նրանց յետևը), և հրամայեց վոր հնձելազորը զորատես կատարե։ Սա առաջ բերեց մի ծիծաղելի տեսարան։ Թիկնապահը, — վոր կանգնել եր հետևն և վոր հրամանատար նպատակը, — հետևակ եր և հոդնաթափով։ Դեպի առաջ ու յետ վազելու իր յեռանդի մեջ, նա նմանում եր մի չարացած

ջատուկի, վոր հալածում և իր ամուսնուն։ Քրդերը կազմեցին բազմաթիվ զորամասեր և հարձակվեցին իրար վրա։ [Հրացան] լցնելու նրանց արագությունը և ձիավարժության մեջ նրանց նշանավոր ճարտարությունը՝ իրապես հիանալի յեին։ Սակայն, նրանց հարձակման նախընտրած յեղանակը նիզակով է, վոր շատ վեր են բարձրանում, ուժով ճոճելով, վորպեսզի ավելացնեն իրենց հակառակորդին ուղղված հարվածի արագությունը։ Նրանք իրենց ձիերին խնայելու գաղափարը չունեն, և այնքան կատաղությամբ են կանգնեցնում, վոր նրանք արագ վազում են, վոր մարդ ապասում է թե նրանք պիտի նետվեն իրենց կռնակի վրա. հանկարծ յեն դարձնում և քառասմրակ գնում նույն արագությամբ։ Ուրիմն, դարմանալի չե, վոր ձիերը Պարսկաստանում սրունքի կողմից տկար են։ Պարսկական ձին շատ են գովում, բայց, յես վոր անկասկած ձիավարիկ (jockey) չեմ, պետք է խոստովանեմ թե անդլիական ձիերը, նման նրանց վոր պատկանում են կոմսուհի Որլոֆի, կոմս Սավադսկիի և ուրիշ շատերի Ռուսաստանում, ավելի լավ են ինձ համար։ Պարսկական ձիերը ունեն յերկար վիզ, իրենց գլուխը կրում են ցցված առջևից, ունեն նեղ կուրծք և յերկար սրունք, բայց նրանք շատ դանդաղ բնավորություն ունեն և հեշտությամբ են կառավարվում։ Պարսիկներն իրենք էլ նախապատվություն են տալիս արաբական ձիերին։ Յերբ զորատեսը վերջացավ, Աբբաս Միրզան քրդերի հրամանատարին պարգեվատրեց մի նիզակով, վոր նրան հանձնվեց թիկնապահի միջոցով, և վոր նա յերկաք անգամ բարձրացրեց իր գլխին և համբուրեց։ Ապա, մենք ձիավարեցինք դեպի հրետանին, վոր իր տեղից շարժված չեր։ Աբբաս Միրզան դեսպանին խնդրեց մնալ աչ թեվում, ինքը մորակեց իր ձին և կանգնեց կենարոնի յետևը, վորպեսզի անձամբ հրամայի։ Անգլիացի սպան, վորին պարտական են պարսկական հրետանու կազմությունը, աշխուժորեն ձիավարեց գծի յերկարությամբ, ընկերացած մի բնիկ պահակի հետ։ Զինվորները հետևվեր մի նշանակետի նշանավոր վարպետությամբ նշան եյին

առնում, և թեև նրանք չեյին խփում, սակայն գնդակը ընկնում եր նշանակետին շատ մոտ։ Աբբաս Միրզան շատ դժգոհ եր, վոր նշանակետը շուռ չեյին ավել, բայց դեսպանը ճիշտ կերպով գովեց նորին գերազանցության, և նկատեց թե, չեթե նշանակետի փոխարեն, — վորին խիելը միայն պատուհության խնդիր եր, — թշնամու մի մարտկոց կանգնած լիներ այնտեղ, շատոնց տեղահան եր արված։ Աբբաս Միրզան ավելի գոհ մնաց այս ակնարկությունից, վորովհետև դեսպանը թնդանոթաձիգ սպա եր։

Յես ոգավում եմ այս պատեհությունից ասելու, թե կանոնավոր կարգապահության ներածումը պարսկական բանակում և նրա հրետանու կազմությունը՝ ամրողջովին Աբբաս Միրզայի շնորհիվ եր, և պետք է ավելացնել, թե այսքան կարճ ընդհանում շատ բան և կատարվել, հիրավի, անդիմացիկ կարող սպանների աջակցությամբ։ Նրանք վոր ծանոթ են պարսիկների համակոր համառության, և նրանց սարսափին ամեն նորության վերաբերմամբ, նրանք միայն կարող են դաղափար կազմել այն խոչընդոտների մասին, վորոնք իշխանը պետք է հաղթահարեր, իր տեսակետը հաջողեցնելու համար։ Կարող եմ ասել, թե պարսիկ ժողովրդի մեջ այսպիսի սավորյալ մի իշխանի ելևեջը միայն կարող է այդպիսի մի բարենորոգում մտցնել բանակում։ Նրա գլխավոր ուշադրությունը կենտրոնացած է եղել հետևակազորի ու հեծելազորի կազմության վրա... Թագավորը կատարյալ աջակցություն է տալիս նրա տեսակետներին, և վորին նա հպատակել և գահաժառանգ, նրա դաստիարակության ու նկարագրի մեղմության համար, և ավելի նրա համար վոր նրա մայրը կաջար ընտանիքից է, վորին պատկանում է նաև Շահը։ Անդրանիկ եղբայրը, վոր կառավարում է Թադավորության հարավային բազմաթիվ նահանգները, դեռ չե այս ընտրության համար։ Նա մի կոպիտ ու անգութ մարդ է, և հաճույք է զգում բարբարոսական պատիժներից, ինչպես աչքը հանելը և սիրտը պոկել և այլն։ Նա հաջողած է վարկաբեկել իր եղբորը Պարսկաստանի գլխավոր ընտանիքներում, վորոնց վորդիները

ները բոլորը գտնվում են նրա ծառայության մեջ, և նա խաբեությամբ նրանց հավատացրել է թե, կարգապահության կանոնավոր սիստեմի մուտքը բանակում՝ վոչ միայն ծիծաղելի է, այլ նաև մի մեղապարտ նորություն, վորովհետև դա շփման մեջ է դնում չեվրոպացիների հետ, վոր համապատասխան չե պարսիկների կրոնին։ Նա ասում է նրանց, թե իր չերբոր քայլերը միանակար են ազգային պատվին, թե նրա ոտար նախասիրությունները թերևս մղեն նրան [Աբբաս Միրզային] ընդունելու չեվրոպացի սովորությունները, հագուստը և մինչև իսկ կրոնը, և այսպես վերի վերը խոսքերով, այս մարդը սիրաշահում է շատ պարսիկների, վորոնք նրա ծառայության մեջ գտնում են մի մեղկ կյանք, վոր ավելի համապատասխան է իրենց հակումներին, քան լենթարկվել ամենօրյա զինվորական մարզանքի և Աբբաս Միրզայի կարգապահության։

Վերջինս, այսուամենայնիվ, համառորեն շարունակում է իր նախագծած ուղին, և իր չերկու վորդիներին ուղարկել է Անգլիա՝ կրթելու համար այնտեղ, և նա կարող է մի որ պարսկաստանի համար լինել այն, ինչվոր Պետրոս Ա. եր Ռուսաստանի համար։ Հետևակազորը, ինչպես նաև հեծելազորը հագնված են թեթև ու պատշաճ կերպով։ Առաջինը [հետևակազորը] ունի կապույտ, և նաև կարմիր բաճկոն (jacket), չեզերված բամբակյա ժապավենով. սպաները ունեն վոսկի և արծաթ ժապավեն, և կրում են կարմիր մետաքսյա գոտի, ճիշտ նման անգլիական բանակում գործածվածին։ Ընդհանրապես հագնում են լայն սպիտակ տաբատ և պարսկական ազգային գլխանոց, վոր լավ չի չերևում։ Հողաթափի տեղ զինվորականները հագնում են չերկար կոշիկ, վոր նրանք չեյին հագնում, մինչև վոր քաջալերվեցին Աբբաս Միրզայի որինակից։ Հրացանը սառցվում է Անգլիայից, բայց թավրիզում ունեն թնդանոթի ձուլարան և շինում են լավ վառոդ։ Նրանց ռազմափորձերը պարզ են, և միմիայն ծառայում են զինվորներին խմբովին շարժելու և կանոնավոր կրակելու համար։ Ձիավոր հրետանին և հեծելազորը

կրում են անգլիական թուր, իսկ հետևակազորը միայն յաթաղան ավին։

Իշխանը իր հրեաներին ցույց տալուց հետո, առաջարկեց վոր գնապանը և նրա շքախումբը ընկերանան իրեն մինչև իր նոր պարտեզը, վոր ռազմափորձի վայրից շատ հեռու չեր։ Դրան մոտ իշխանք ձիերից և բացի Աբբաս Միրզայից վոչ վոք ներս չմտավ։ Ազատված իր ժողովրդի նկատողությունից, — վոր բարձրաստիճան մարդու համար ժպտերը վոճիր և համարում, — նորին գերազանցությունն իր բնական տրամադրության մեջ մտավ, և համոզում ներշնչեց մեզ թե նա առողջ պատրաստություն ունի և բարձրորեն քաղցը նկատի։ Գլխավոր պողոտան, վորից մենք առաջանում եյինք, մեզ տարավ ուղիղ մի քանի հարկանի բարձր մի տաղավար, շինված ասիական վոճով, և վոր տիրապետող տարան ուներ ամբողջ քաղաքի վրա։ Այս պարտեզը վերջերս անկված և եվրոպական վոճով, մայթերով և ծաղկանոցներով. ծառերը տակավին մատղաշ են, և ամեն ինչ նոր վերջացածի տպավորություն և թողնում, բայց ապագայում մի վայելուչ վայր պիտի լինի։ Այստեղ էլ Աբբաս Միրզան ապացույց տալիս իր ջանքերին, իր որինակով ավելի լավ ճաշակ ստեղծելու իր ժողովրդի մեջ։ Տաղավարի առջև կա մի ընդարձակ ավազան, վորի ջուրը հայելացվում և շատ հնուից։ Ձերը մոտեցանք տաղավարին պարտիզպանը ամենագեղեցիկ յերկու փունջ մատուցեց իշխանին, վոր նրանցից ամենաընտրյալը տալ դեսպանին։ Մի նեղ անդնակից բարձրացանք մի սլորուն փոքրիկ հարկաբաժին, վորտեղից քաղաքի ամենատարածուն տեսարանն ունեյինք։ Հատակը տարական նման ծածկված եր գորգով և պատերը զարդարված եյին փոքրիկ նկարներով։ Զարմացանք տեսնելով մի վորիմատ խորշում, սենյակի վերին մասում, Ալեքսանդր կայսեր դիմանկարը, և մի ուրիշ բոնապարտի, վերջինս աչքառու կերպով նման։ Քաղաքի տեսարանը հետաքրքիր չեր, միայն պատերն ու ծառերն եյինք տեսնում, տները բոլորը ծածկված եյին մեր աչքից։ Քաղաքը հյուսիսից յեղերված և լեռներով, վորոնց

փալուն կարմիր գույնը կապած չեր տալիս նրանց հրաբխային նկարագրի մասին, նույն իսկ յերեք մարդ խոլ լինելը նրանց ստորերկրյա վորոտումներն ձայնին, վորոնք ցնցում են քաղաքի հիմքերը։ Թավրիզում մեր գտնված ժամանակ վորևե յերկրաշարժ չպատահեց, թեև ասում են թե բնակիչները այս յերևույթը շատ հաճախադեպ և ալատեղ, և բնակիչները ասում են, թե ամեն քառասուն տարին մի անգամ շատ կատաղի յերկրաշարժ և տեղի ունենում, քաղաքի մեծագույն մասը վերածելով ավերակի։ Ներանք այս սոսկալի աղետը սպասում են չորս տարի հետո, և սակայն հուզումի նշանները ցույց չեն տալիս... Մենք տեսանք մի ծերունի պարսիկ, վոր վերջին յերկրաշարժի ժամանակ չորս որ թաղված և յեղել ավերակների տակ, ուր պատահաբար եյին գտել նրան։ Ալլահես Թավրիզի կլիման յերկնային և, և ասում են թե բուժում և ջերմը։ Նորին բարձրությունը նախ հարցրեց դեպպանին, թե նա չեր ցանկանում, վոր առաքելության պրոնները առանձնանային մի ուրիշ հարկաբաժնում, վորտեղ հետև այնտեղ, ուր հավաքված եյինք, շատ խռնված եր և դժվար եր դուացուցիչներ բաժանել, բայց նորին գերազանցությունը հայտարարեց, թե ուր իցիվ եր գտնվում, այնտեղ պետք և նեղիա լինելին նաև իր պաշտոնյաները։ Իշխանը յերբեք անհարմար չդգաց այս պատասխանից, այլ ընդհակառակն խոսեց մեզնից շատերի հետ։ Առաքելության մի քանի պարոններն այս ընթացքը համարեցին աղնվականության ու քաղաքավարության պակաս, բայց նույնիսկ յերեխան կնկատեր թե նա սենյակի խռնումին պատճառով եր վոր կանգնեցնք մեզ նրա հասցեյին։ Ներանք մոռանում մենում եր բաժանվել մեզնից, մինչև կարելի յե սա մեզ պրանքի նյութ հաստատել նրա հասցեյին։ Ներանք մոռանում են, վոր նա իր մանուկ հասակից սովորած և տեսնել՝ պետության մեջ բարձրագույն անձնավորություններին վոտքի կանգնած պատասում, կամ յերեք իր հարկաբաժնում, հարյուր յարդա հետու իրենից։ Նրա տեղը գտնվող վորևե անձնավորություն անհարմար չեր զգում խռնված մի սենեկում։ Իշխանը իր ներքնակատարությունը այնքան հետու տարավ, վոր

չուզից նկատել, որ մենք մեր կոշիկներով կոխոտում էինք նրա գորգը, մինչ անգլիացիները չերբեք մուտք չէին գործում նրա հարկաբաժինը, առանց հագնելու կարմիր գուլպաներ։ Այս մասին մեր սովորության պահպանումը թուլացրած էր իսպահով դեսպանի, ինչպես նաև ռուսական առաքելության անդամների, և պետք է մասնավորապես հիշատակվի, որ ամբողջ [պարսիկ] ազգի արհուն հպարտությունը այս սովորության մասին ծայրահեղորեն զգայուն է։ Մեր կոշիկները հանելը պետք է խոստովանել թե աննշան մի հարց էր, մի հարց որ բացարձակապես ձախողացրեց մեր բանակցությունները Շահզնիայի և Չինաստանի հետ։ Աբբաս Միրզան խոսում էր սովորական քաղցրությամբ, մինչ թեյ ու քաղցրավենիք էին մատակարարվում, և մենք պատահաբար գտնում էինք նրա նկարագրի պատվավոր գծերը, որ Պարսկաստանում գարմանք էր պատճառում մեզ։ Դեսպանը պարտեզում նկատեց մի անկյունում դուրս ցցված մի հին պատ, որ խանգարում էր շրջապատի առարկաների դեղեցկությունը և ոգեղացնում տեսարանը։ Նորին գերազանցությունը իշխանին հարցրեց. ինչո՞ւ համար նա չի հրամայում որ պատը քանդվի։ «Միայն նկատումը, — պատասխանեց նորին բարձրությունը, — մեծ տարածությամբ մի պարտեզ կազմելու համար՝ գնեցի շատ սեփականատերերի կալվածները։ Այն մասին տերը, ուր պատն է, մի ծերունի դյուղացի է, որ բացարձակապես մերժիլ է իր կալվածը ծախել ինձ, որովհետև նա չի ուզում բաժանվել իր ընտանիքի հողենական հին կալվածի վրևև մասից, որևև գնով։ Յես ընդունում եմ, որ նրա հաժառությունը ծայրահեղորեն նեղություն է պատճառում ինձ, սակայն յես ուրիշ բան չեմ կարող անել, քան հարգել նրան իր նախնիքների հանդիպ տածած կապին համար, և ավելի շատ այն հանդգնության համար, որ նա մերժում է ինձ [վաճառել] իր հողը։ Պետք է որ սպասեմ մինչև որ նրա ժառանգորդը, թերևս ավելի չափավոր լինի, Մ՛ով կարող եր սպասել այնքան զգացում բռնապետական Ասիայում,

Աբբաս Միրզան մեծ դատողությամբ խոսեց ֆրքական բանակի կազմակերպության մասին։ Նա շատ վատ գաղափար ունի նրանց հնծելազորի վերաբերմամբ, և մանավորապես քննադատում է պատերազմի դաշտ այնքան շատ անպետք բեռներ տանելու սովորությունը։ Վոչ էլ նա խուսափեց այդ առթիվ մեղադրելու համար ինքն իրեն, նա կարծում է որ միևնույն առարկությունը վերաբերում է, թերևս ավելի շատ պարսկական բանակին, որովհետև նրանք որ սովորություն ունեն կայլոն ծախելու, նրանց հետևում են մի խումբ սպասավորներ՝ ածխատար կոչված, որոնք առանձնապես բավական են կազմելու մի փոքր բանակ, և որոնք վոչ միայն անոդուտ բերաններ են, այլ նաև խոչընդոտ վինվորների շարժումներին և հաճախակի առիթ են տալիս հրդեհի դեպքերի։

«Ծախելը, շարունակեց իշխանը, ինքնին առարկելի մի բան չե, բայց իմ կերկրում չափազանցության է տարված, դա գրավում է գրեթե ամբողջ որը, և այդ պատճառով հաճախ զանցառվում են ոգտակար գործերը։ Յես պարտականություն համարեցի որինակ հանդիսանալ և ամբողջովին վերջ եմ տվել մի դյուրևկան սովորության, բայց դժվար մի գործ եմ ձեռնարկել, մի գործ որ թվում է թե շատ ծանր է այս պարոնների համար, ծախելը այնքան կապված է նրանց հնդկ սովորությունների հետ, որ նրանք քայլ չունեն հետևելու իմ որինակին»։

Մի իշխան, որ այս կերպ է մտածում ու գործում, անկասկած արժանանում է իր ժողովրդի սերին, որով նա կարող է իրագործել իր մեծ ծրագրերը։ Տարօրինակ է որ շատ մարդիկ հավատում են թե Աբբաս Միրզան իր լուսավորված կրթության համար պարտական է փոխ-վարչապետ Միրզա Բոզուրկին, որ վորևե կրթությունից զուրկ մի խորամանկ ժողով եր, Իշխանը իր ծանոթությունները ու տեղեկությունները քաղում է բոլորովին տարբեր աղբյուրներից. նա լավ ծանոթ է Յեվրոպայի պատմության և սովորությունների, և սովորել է պատերազմական արվեստը,

մատեմատիկա և անգլիերեն լեզուն։ Մի ամբողջ ժամ նորին բարձրութեյան ընկերակցութեյունը վայելելուց հետո, մենք միասին մեկնեցինք պարտեղից, և անցանք մի գեղեցիկ հին մեծքիրի ավերակների մոտից, որ կործանված եր յերկրաշարժից։ Մի ծերունի գերվիշ ամենածիծաղելիորեն հագնված, նստած ավերակների վրա, բարձր ձայնով պոռաց. «Ալիս։ Իշխանը բաժանվեց մեզնից իր պալատի դրան և մենք վերադարձանք տուն։

Հաջորդ որը յերեկոյան հրավիրված եյինք գնալու ու տեսնելու հրավառութեյունը, որ Աբբաս Միրզան հրամայել եր [կատարել] ի պատիվ դեսպանի։ Մտանք մի մեծ բակ, ուր յերել եյին զանազան շրջմանակներ և պատրաստված իրեր։ Կենտրոնում կար մի ոդապարիկ, որ թվում եր թե չեյին հասկացել նրա պատրաստութեյունը, վորովհետև կանգնած եր ուր վոր եր, և չեյին կարող բարձրացնել։ Բակի ծայրամասում մի մեծ տան՝ մեզ ընդունեց Միրզա Բողուրկը, և մերձակա շենքերի պատերի ու կտուրների վրա անսահման մի բազմութեյուն խռնված եր, համբերութեյամբ սպասելով հանդիսին, բայց նրանք ավելի գրավված եյին մեր նվագախմբից, որ դեսպանը ուղարկել եր այնտեղ Աբբաս Միրզայի համար։ Ձայնութեյամբ, ժողովրդի հետաքրքրութեյունը գոհացնելու միևնույն ժամանակ զանազանութեյուն ստեղծելու համար, իշխանը ներկա չեր, և նրա ընթացքը հետևանք եր լավ դգացման, վորովհետև յեթե նա այնտեղ գտնվեր, նրա առաջին մինիստրը, ինչպես նաև քաղաքի զինվորական կառավարիչը և ուրիշ անձնավորութեյունները պետք եր վոր կանգնեյին դրսում, պատուհանի առաջ, մինչ մենք բոլորս պիտի գտնվեյինք հարկաբաժնում։ Նորին բարձրութեյունը շատ ևրբանկատ վերաբերմունք ունեցավ իր հետևորդների ու հպատակների զգացումների հանդեպ, մի պարագա վոր վարկ և բերում նրան։ Նա ուղարկեց իր չքմեղանքը և կարգադրեց վոր իր առաջին նախարարը պատվե տոնակատարութեյունը։ Տակավին մութը չկոխած զովացուցիչներ բերին, և քիչ չզարմացա բակում ֆրանսիական համազգեստ տեսնելով

մեզնից շատերը վար գնացինք խոսելու այդ համազգեստով կրողների հետ, և պատանք վոր նրանք իտալացի եյին, վոր թվում եր թե չեյին հաջողել իրենց յերկրում։ Թեև նրանք պակաս աստիճան եյին կրում, բայց յերևում եր վոր ստորին ծագում ունեյին, և նրանցից մեկն ասաց թե ինք գարնան եր յեկել, վորովհետև Սիկիլիա շատ տաք եր։ Մենք բաժանվեցինք այս պարոններից, վորոնց այստեղ գալու նպատակը թվում եր թե լավագույն վճարողին իրենց ծրագրերն եր։ Շուտով նշան տրվից թե հանդեսը պիտի սկսի։ Նախ արձակեցին բազմաթիվ մեծ չափի հրթիռներ, վորից հետո, մի սխալ հետևանքով հրավառութեյան առաջին շարքը կրակի տրվեց, վորի վրա անիվներն ու ջրվեժները բռնկվեցին սոսկալի աղմուկով։ Բակի նեղութեյան պատճառով հրթիռները այնպես խռնված եյին իրար վրա մինչև վերջին շարքը, վորին կրակ տրված եր շատ կանուխ, բռնկեցրեց մերձակա դյուրավառ նյութերը, ապա տարածվեց ճնշող մի ծխով, վորի վրա ամբողջութեյունը բռնկվեց մի անգամից, մորմոքալի վրա և ամբողջ տեսարանը ծածկվեց ահռելի աղոտ ու շփոթութեյուն, նման դժոխքի բանաստեղծական նկարագրութեյան, և այլն և այլն։ Ամեն ինչ թռչում եր, ատրճելով կրակ ու շփոթութեյուն ամեն ուղղութեյամբ, մարդիկ պատերից ու տների կտուրներից վար վազեցին, և մեր դեղագործը, վոր դրա նման բան չեր տեսել, բացականչեց զարմանքով, թե Լայպցիկի ճակատամարտը միայն մի թենդանուն եր հարված եր բաղդատելով սրա հետ։ Այսպես, այս հանդեսը վոր մի ժամ պիտի տևեր, վերջ գտավ տասը րոպեյում, և Միրզա Բողուրկը, վոր նախ այլայլված եր, իր սովորական ճարտարութեյամբ ասաց մեզ, թե նպատակավոր կերպով ամբողջ հրթիռներն արձակված եյին մի անգամից, վորպեսզի դեսպանի թանկագին րոպեները այսպիսի վոչինչ բաների համար չվատնվեյին։ Յերբ տուն հասանք տակավին աղմուկը հնչում եր մեր ականջներին։ Անգլիացի սպաները յեկան ու ընթրեցին մեզ հետ, և վորովհետև նրանց վնհապետի ծննդյան առիթ եր, մենք խմեցինք նրա կենացը։

[Ցերմոլովի դեսպանությունը 1817 թվի մայիսի 26-ին մեկնեց Թավրիզից Սուլթանիե, ուր հանդիպում պիտի ունենար Ֆաթ Ալի Շահի հետ, հաշտության բանակցություն վարելու համար։ Մենք չենք թարգմանում ուղեգրության այդ մասը, թեև հետաքրքիր տեղեկություններ կան այդտեղ Պարսկաստանի մասին, բավականանում ենք միայն տալով ուղեգիծը, իսկ մանրամասնությունների համար կարելի է դիմել հեղինակին, եջ 185—244։ Նույն որը կեսօրին դեսպանությունը իջևանում է Վասմիչ (Vasmitsh) գյուղը, ուր գյուղացիները Աբբաս Միրզայի հրամանով ծառեր են տնկել և մեր ուղեգիրը ասում է թե Պարսկաստանում փայտը չափազանց թանգ է։ Մայիսի 27-ին դեսպանությունը իր վրանը զարնում է Սեյդաբադ (Seidabad) մոտ «ճահճային մի դաշտ վրա»։ 28-ին նրանք բարձրանում են մի լեռնային ճանապարհից և իջնում են մի դաշտ, ուր գտնվում է Ուջանի (Udgani) ամրոցը, որ շրջապատված է նարնջի ծառերով։ Աբբաս Միրզայի այս ամրոցի դահլիճում չորս նկարներ կային, — Ռուսաստանի ցար Ալեքսանդր Ա.-ի, Նապոլեոն Բոնապարտի, Աբբաս Միրզայի և մի ճակատամարտի, որի մեջ գահաժառանգը և մի անգլիացի սպա պարսկական բանակը առաջնորդում են ռուսների դեմ և հաղթանակում։ Միքանի որ ոտքասելուց հետո հունիսի 5-ին դեսպանությունը մեկնում է Ուջանիից, հանդիպում մերձակայքում ավերակների, որ ասում են թե անցյալում եղել է մի մեծ քաղաք, և իջևանում է Թեքմեդաշ գյուղի մոտ։ Ամսի վեցին իջևանում են Զենջիլաբատ (Sengilabat), ծառազարդ մի գետակի ափերը։ Հեղինակը խոսում է այս շրջանի թունավոր սարդի մասին, որի խածվածքը մահացու չէ ոտարականների համար, մինչ անձնաս և տեղացիների վերաբերմամբ։ Կեր Փորտըրը և Ջեյմս Մորիյերը գրում են նույնպես Միանայի այս թունավոր միջատների մասին։ Ցերմոլովի շքախումբը դժվարանում է գինի ճարել, որովհետև այս շրջանում, «բացի Հայաստանից, ուրիշ տեղ գինի չեն շինում և գտնվածն էլ վատ է,

այնպես որ հատկապես մարդ են ուղարկում Թիֆլիս գինի բերելու համար։

Այստեղ ռուսական դեսպանությունը հանդիպում է երկու անգլիացի ճանապարհորդների՝ գնդապետ Ջոնսընի և հարյուրապետ Սալտըրի։ Առաջինի ուղեգրությունը տալիս ենք այս հատորում։ Միքանի որ այստեղ մնալուց հետո հունիսի 20-ին դեսպանությունը մեկնում և կանգ է առնում նույն որը վերսականում (Versagan), առատ ծիրանիներով և գեղեցիկ գյուղանկարով։ Ամսի 22-ին ռուսական դեսպանությունը իջևանում է Թուրքմանչայ (Turkmantshai), որ մի քանի տարի հետո պատմական մի վայր հանդիսացավ ռուս-պարսկական դաշնագրությամբ։ Այս վայրից երկու որվան ճանապարհ հեռու է Միանա (Miana), որ հայտնի է մահացու թունավոր միջատներով, որոնց մասին ընդհանրապես բոլոր ուղեգիրները հիշատակում են և ուր ոտարական ճանապարհորդներ զգուշանում են կանգ առնել։ Հունիսի 23-ին իջևանում են Ավանլուզ (Avanlug), նույնպես լի է թունավոր միջատներով։ 24-ին նրանք անցնում են բազմաթիվ ամայի գյուղերից, որոնց բնակիչները փախչել են թունավոր միջատներից, և իջևանում են Միանայից չորս վերստ հեռու, Կարլանկու (Karlanku) գետի եզերքը, կապված Կապլանտա (Caplanta) լեռների սառրոտով։ Նրանք վախենում են մոտենալ Միանային, որպես թունավոր միջատների կենտրոնի։ Այստեղ գետի վրա գտնվում է քանդերեք կամուրջ, որ Շահ Աբբասն է կառուցել։ Միանա, մարդերով մի կամուրջ, որ Շահ Աբբասն է կառուցել։ Միանա, ասում է մեր ուղեգիրը, բացի իր վտանգավոր միջատներից, նշանավոր է նաև ուղտի բրդից շինված գորգի արդյունաբերությամբ։ 25-ին իջևանում են Ջամալապատի քարվանսարայում, որ թեև 520 տարվա մի հնություն է, սակայն մակավին գտնվում է լավ վիճակում։ Ամսի 26-ին սկսում է մի ամայի անապատ, վոչ մի բուսականություն չի երևում և փոշին խեղդում է ուղևորին. տաքությունն անտանելի է և ոդը չի շարժվում. դեսպանությունը իջևանում է Սարջամի (Sardgam) քարվանսարայի մոտ։ Հաջորդ որը իջևանում են

Նիպկեյլ (Nipke) քարվանսարայում, որ Բագադիր (Bagadir) Շահը կառուցել է Յերևանի պաշարումից վերադարձին։ Այստեղ Թավրիզի շրջանի սահմանն է։ 28-ին ճանապարհը նահանջ ավազուտ անապատ է, մինչև Զինգիջ գյուղը (Jengidge), ուր թե ջուր կա և թե ծառ, և այս պատճառով էլ Յերմոլովը վորոշում է յերկու որ մնալ այնտեղ, հանգստանալու համար։

Հունիսի 30-ին ժամանում են Սանդան (Sangan), ուր Շահի վորդիներից Ավգուլա Միրզան է բնակում և նա սիրալիր ընդունելություն է տալիս ռուսներին։ Այս շահզադեն նամանում է իր յեղբոր Աբբաս Միրզային և պահում է յերկու գումարտակ կանոնավոր զորք և հատուկ զորանոց է կառուցել։ Հուլիսի 5-ին Ավգուլա Միրզան մեկնում է դիմավորելու համար Շահին, իսկ Յերմոլովի շքախումբը մեկնում է դեպի Սուլթանին, վորտեղից տասներկու մղոն հեռու Սամանարխի (Samanarchie) գյուղի մոտ հատկապես տեղ պատրաստված էր, ուր ռուսները պիտի սպասեին մինչև Շահի ժամանումը, վոր արդեն մեկնել էր Թեհրանից Սուլթանիե գալու համար։

Ե. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖԱՔ ԱԼԻ ՇԱՀԻ ՀԵՏ*

Հուլիսի 19. *1817 թ.*—Վերջապես թնդանոթի հարվածները ծանուցին Թագավորի ժամանումը Սուլթանիե։ [Դեսպանությունից] բազմաթիվ պարոններ, վորոնք պատահաբար այն ժամանակ այնտեղ էին գտնվում, ականատես եղան նորին վեհափառության մուտքին։

Դղյակից մինչև մեկ մղոն հեռավորության վրա ճանապարհի յերկու կողմը կանգնել էին յերկշարք հետևակ վիներ, վորոնց մեջտեղից թափորը առաջանում եր հետևյալ կարգով. —

Մի փող, վոր կրում եր մի շքեղ ամպհովանի։

Հիսուն ուղտ, նվագածուներով, վորոնք կրում էին սրածայր կարմիր գլխանոց, նրանց նվագարանները բաղկացած էին թմբուկներից և յերկար փողերից։

Հինգ հարյուր ուղտ, վորոնք կրում էին փոքրիկ թընդանոթներ, ծածկված ղրոշակներով։

Բահաե ձի՝ փարթամորեն թամբված։

Բառասուն վազող հետևակներ, վորոնք կրում էին թագի նման գլխանոց, զարդարված զանազան գույնի փետուրներով։

Թագավորը, պարզ հագնված, հեծել եր մի ձի, վորի սանձակները ճոխորեն զարդարված եր ադամանդով։ Մինչև հարյուր յարդա վոչ վոք չեր հետևում նրան։

Նորին վեհափառության տասնյոթը վորդիները՝ շքեղորեն հագնված, և հեծած շատ գեղեցիկ ձիերի վրա։

Ականատեսների ուշադրությունը կենտրոնացած եր մասնավորապես Ֆաթ Ալի Շահի վրա։

* Kotzebue, էջ *244—302*։



Թագավորը Շահի տաճարում (Ասիա 26-ին Սաֆիրին):

նավորապես Մահմեդ Ալի Միրզայի վրա, որ իր հոր ընկերացել եր 15.000 հեծելազորով, որով վերջանում եր թափորը։

Թագավորը նկատեց դեսպանության պարոններից շատերին, որի վրա նրանք հանեցին իրենց գլխարկը, յերբ նորին վեհափառությունը թեթև բարձրանալով ասպանդակի վրա, բազմիցս բացականչեց, խոշկելդի (khoshkeldi = բարի գալուստ)։ Պարսիկները վստահացրին մեզ թե նորին վեհափառությունը յերբեք նման պատիվ չեր արել վորևե մեկի։

Պարսկաստանի սովորության համաձայն, յերբ թագավորը հասավ ամրոցը, մի ուղտ մորթեցին, յերբ նա ձիուց վար իջավ հինգ հարյուր դաշտային փոքրիկ թնդանոթներ արձակեցին և ուղտի գլուխը դրին նրա վոտքի առաջ։ Անմիջապես նա առաջացավ դեպի պալատի բաց դահլիճը և յերբ նստեց, հրետանին նորից արձակեցին։ Նրա Սուլթանիե ժամանման հետևանքով Սուլթանիեյի ամբողջ շրջակայքը ծածկվեց մի ընդարձակ ճամբարով. վրանները այնքան խռնված եյին, վոր միայն յերեք կամ չորս անցքեր եյին բաց թողնված։ Ամրոցի և մեր բնակության հատկացված տեղի միջև չորս վերստ տարածություն բաց եր մնում, և ամբողջ ճամբարում միակ տեղն եր, վոր գրավված չեր։ Հրաման եր տրվել վառելանյութ հավաքելու ճամբարի շրջակայքում գտնվող գյուղացիներին, վոր ամեն կողմից գան Սուլթանիե. և մեր բանակած տեղի մոտ մի մեծ բազար եր հաստատված, վոր սակայն, ինչպես գտանք, դնելու արժանի մի բան չուներ։

Թագավորը բազմիցս մարդ եր ուղարկել, հարցնելու համար դեսպանի առողջությունը, և հայտնելու համար թե ամազանի ափունը արդեն եր հանդիսանում անձամբ ծանոթանալու նրա հետ։ Այս պահեցողությունը վերջանում է նոր լուսնի յերևումով, այսինքն հուլիսի 31-ին։

Ամսի 26-ին նորին վեհափառությունը ուղարկեց Սաֆիր Խանին (Safir Chan) դեսպանությունը առաջնորդելու Սուլթանիյեի բանակատեղը, վոր վերջացրած եր մեր ընդունելության համար, մինչև որվան տաքը անցնելը ապահովելու

հետո, մենք անկնեցինք Սամանարխիից կես որից հետո ժամը յերեքին, հետևյալ կարգով. —

Կազակների մի Ջոկատ.

Ալարոզապետ, յերկու պահակներով։

Նվագախումբը.

Ընդհանուր հրամանատարության վից սպաներ.

Յերկու թեթև հեծելազոր (feldjägers), ընկերակցությամբ սենատի պատգամախոսների.

Դեսպանը, հեծած շքեղորեն թամբված մի ձի, վոր թագավորն իր ուղարկել նրան.

Դեսպանության յերկու խորհրդականները.

Դեսպանի ամբողջ շքախումբը.

Յեվ կոզակների մի այլ Ջոկատ։

Ճանին բարձրացնում էր փոշու մի սոսկալի ամպ, վոր պատել էր մեզ։ Սաֆիր խանը յեղանակի տհաճելի կացությամբ էր, բայց մեր տանջանքը թյան մասին ներողություն խնդրեց, բայց մեր տանջանքը բազմապատկվեց, յերբ Սուլթանխնեից կես որվան ճանապարհ հետու, մեր խմբին միացավ Բուրդխանի վալին, վոր մի քանի հազար քուրդերի գլուխն անցած յեկավ պիմավորելու դեսպանին։ Այս մարդիկ շատ ավելի լավ սպառազինված էին և ավելի փորձ ձիավոր, քան նրանք, վորոնց մենք տեսել էինք Յերևանում և Թավրիզում։ Նրանցից շատերը հագել էին զրահ, և ունեյին հին ասպետների յերևույթը։ Նրանք հեծել էին արաբական ձի և կրում էին նիզակ։ Վոմանք իրենց սաղավարտների վրա կրում էին մեկից ավելի փետուրներ, վորոնցից յուրաքանչյուրը շնորհված էր նրանց թշնամու մի գլխի փախարեն։ Մեքսանի ձիավորների յես համբերի մինչև հինգ։ Հետաքրքիր և վոր ձին վայելում է իր հեծնողի պատիվը, և կրում է այնքան փետուր, վորքան նա։ Սակայն վորքան էլ գեղեցիկ յերևնային, վորևե ուրիշ պարագայի, նրանց յերևումը մեզ տհաճություն պիտի պատճառեր։ Տաքը անտանելի էր. նրանք նեղ շրջանակ էին կազմել մեր շուրջը, և այնքան խիտ փոշու ամպ էին բարձրացրել, վոր քամին ուժ չուներ ցրվելու։ Վերջապես մենք

ազատվեցինք նրանցից բազարում, վորի մուտքը այնքան լայն չէր նրանց ընդունելու համար։

Թագավորը և նրա պալատականները դղյակից նայում էին մեզ վրա։ Յերբ ձիերից իջնում էինք մեր վրանի առաջ, վոր պատրաստված էր վորպես ընդունելության սրահ, յերկար տալուց հոգուց պարսկական պահակախումբը բարև բռնեց, իսկ մենք պարզեցինք ռուսական արծիվը։ Վրանում զովացուցիչներ պատրաստված էին մեզ համար, և հյուրասիրությունից հետո Սաֆիր խանը գնաց թագավորին ծանուցելու մեր ժամանումը։

Մեր ճամբարը (camp) բաղկացած էր տասնվեց մեծ և վորոշ թվով փոքր վրաններից, յուրաքանչյուրը բավականաչափ յերեք կամ չորս անձի բնակության։ Գնդապետ Իվանով, Դր. Մյուլլեր, Մ. դը Ռեննենքամֆ և յես մինչև հիմա անբաժանելի սենեկակիցներ էինք յեղել, բայց այստեղ Ռեննենքամֆ անհավատալիս գանվեց իր հին սեղանակիցներին, վորոնք միացին առանձին վրանում։ Բացի վրանից, դեսպանը ուներ մի կիբեհակա (Kibitke), վոր նա բերել էր Թիֆլիսից, և վոր յեզերված լինելով մոմլաթով, միակ վայրն էր պաշտպանված քամու և փոշու դեմ, վոր այնքան էր լցվում մյուս վրաններից ներս, վոր մենք անհրաժեշտ էինք գտնում որական բազմաթիվ անգամներ ավելու։

Ճամբարի կենտրոնում կային յերեք մեծ վրան, նվերների համար, վոր այնքան գեղեցիկ մի յուցադրություն էր, վոր մեզ հիշեցնում էր երմիթաժը (hermitage) Սան Պետերբուրգում։ Այս վրանները զարձան մի հանգստավայր, և մենք կորցրինք ամենահաճելի մի ժամանց, յերբ նրանք արվեցին թագավորին։

Նվերները պարունակում էին հետևյալ առարկաները.—

Մի ամբողջական հղկված ապակուց սեղանի սպաս (սերվիս)։

Մի սպաս, ամենանուրբ հախճապակուց, արտադրված Սան Պետերբուրգում, զարդարված Ռուսաստանի հպատակ Սան Պետերբուրգի շքեղ տարբեր ազգերի տարազով, Սան Պետերբուրգի շքեղ

Չակալքի տեսարաններով և կից դղյակներով։ Այս սպասի մեջ կային յերկու հախճապակեա վազ, որոնք իրական գլուխ գործոց եյին։

Մի հղկված ապակյա ափսե, յերեք վոտք վից ինջիզ յերկար։

Բազմաթիվ հղկված ապակյա կայլոններ։

Մի արդուզարդի հայելի. միակտուր, յերեք յարդա յերկար, յերկու բրոնզյա հրեշտակների վրա հենված աշտանակներով։ Պարսիկները մեծապես գործածում եյին տեսնելով այս պատկերները, և հարցնում եյին, թե արդյոք մեր յերկրում թեվավոր մարդիկ կան։

Մի կանացի արդուզարդի սեղան, բրգաձև, շինված Ռուսաստանում գտնվող բոլոր [տեսակի] փայտերով, իրենց բնական գույնով։ Այս առարկան շատ արժանի եր հիացմանը թե իր ճաշակի և թե վարպետության համար։ Ներսումկար մի մեքենա, որով կարելի եր առանց ձեռքի ոգնության հյուսել և վոլորել։

Մի ժամացույց, վոսկյա փիղ, վոր շարժում եր պատիճը, ականջներն ու աչքերը։ Պատվանդանը, պատված ադամանդով, պարունակում եր գյուղանկարներ, շարժող պատկերներով։

Ներքագույն վարպետությամբ հրացաններ, ատրճանակներ ու թրեր։

Յերկու հայելիներ, յուրաքանչյուրը միակտուր, մոտավորապես յերկու վոտք բարձր։

Մի վոսկյա կայլոն։

Յերեք դաշույն, զարդարված ադամանդներով։

Ադամանդյա քթախոտի տուփ, մատանիներ և բազմաթիվ ժամացույցներ։

Սև սամույրի յերկու մուշտակ, յուրաքանչյուրը 30.000 ռուբլի արժողությամբ, և բազմաթիվ ուրիշներ, նվազ արժեքով։

Յերեք ադամանդ զարդափեթուր, արտակարգ վարպետության գործ։

Յերկու վոսկյա հեռադիտակ, զարդարված ադամանդներով։

Անսահման քանակությամբ վոսկյա և արծաթյա կտորներ, կերպասներ և այլն։

Իրապես կայսերական նվեր եր։ Բազմաթիվ նշանավոր պարսիկներ, որոնց ցույց տրվեցին նվերները, կատարելապես վերացան և չեյին կամենում հեռանալ վրաններից։ Այս ժողովրդի գնահատումով ապակին մասնավոր արժեք ունի, և վորովհետև նրանք բացի իրենց կայլոններից ուրիշ ապակյա առարկա տեսնելու յերբեք պատեհություն չեն ունեցել, անտարակույս պետք և վոր նրանք հմայվեյին ադամանդի փայլով շողացող շքեղ բյուրեղյա սպասի տեսքով։

Հաջորդ որը տեսանք ամբողջ ճամբարը, վոր նրանք խոնել եյին իրար վրա մեծագույն խառնակությամբ, տալով ամբողջության մի յեզակի, թեև վոչ հաճելի մի տեսարան։ Բազարը մի ուղիղ պողոտա եր դղյակի ու մեր ճամբարի միջև։ Յուրաքանչյուր վաճառական ուներ մի վողոմակի փոքրիկ վրան, վորի մեջ դրված եր մի տուփ, վոր պարունակում եր նրա ամբողջ հարստությունը, և վորի վրա նա նստում, ուտում և քնում եր։ Հետևաբար, այս բազարը բոլորովին վողոմակի եր, և հինգ յարդա կտորի գնումը ամբողջացնելու համար, անհրաժեշտ եր վոր հինգ վաճառական մեկտեղ հավաքվեյին։ Ընդհանուր տեսարանը տխուր եր ու վիրավորական, վորովհետև բացի դղյակից և մի հին մեջիտից, տեսնում եյինք միմիայն վրանների կատարները, վորոնք ընդարձակ սպիտակ մի դաշտի յերևույթն եյին տալիս։

Մեր ժամանման յերկրորդ որը դեսպանը այցելեց վարչապետ Միրզա Ջեֆֆին (Mirza-Jeffi), վոր անմիջապես վերադարձրեց այս մեծարանքը, ընկերացած բազմաթիվ խաների, վորոնց թվում գտնվում եր Սան Պետերբուրգի նախկին դեսպան Միրզա Ավդուլ Հասան խան (Mirza Avdulasan chan)։ Դեսպանության անդամներին անհատապես ներկայացրին մինիստրին։ Նորին գերազանցությունը ուշադրությամբ

և, և վոքը կազմվածքով։ Նրա ձայնը կարծես գալիս է գերեզմանից։ Նա ունայնամիտ և, շպարված և կանացի վարվելակերպի վայելչությունն ունի։ Այլ կերպ, իրապես նա մի չերևույթ է, որովհետև նա վարել և վարչապետի պաշտոնը վերջին քառասունհինգ տարիներին։ Նա ասաց. հարկառակ իր տաժանելի պրագմունքներին, ներկա թագավորի նման մի իշխանի ներքո, կառավարական վարչությունը մի հաճույք է, թեև շատ ծանր իր առաջացած տարիքին համար. ընդհակառակն նորին վեհափառության նախորդը՝ Ագա Մահմեդ խանը (Aga-Mahmed-Chan), մի ներքինի, հաճախ այնքան է չարչարել իրեն, վոր ինքը հակառակ իր հայրենիքի համար ունեցած անսահման սիրուն, շատ անգամ իր պաշտոնից հրաժարելու և մինչև իսկ Պարսկաստանից հեռանալու վճռակամն է եղել։ Մենք դժվարությունը չենք չհավատալու նորին վերազանցության, վորովհետև այն վարքերմունքը վոր նրա նախկին տերն ունեցել է, ճշմարիտ բարբարոսական է։

Ագա Մահմեդ խանը ներքինի եր, վոր հաջող մի պատվավորությամբ ապորինաբար սիրացել եր գահին, և վորպեսզի պահպանե այդ, կատարեց չերևակայելի ամեն անպիտանություն։ Նրա վճռակը, հավանական և, վոր զարգացրել եր նրա բնական ատելությունը մարդկության դեմ։ Ունենալով վճռական դժգոհություն, նա չերբեմն անվերապահ վատահություն ուներ ամենքի հանդեպ, և չերբեմն վոչ վոքի, և ի վերջո չեր վստահում նույն իսկ ինքն իրեն։ Անձնատուր արբեցության, նա հաջորդ որը մոռանում եր իր այսորվան աված հրամանները, և խնդիր նման նա մռնչում եր դժբախտ արարածների տեսքին, հաճախ իր մտերիմների, վորոնց նա դատապարտել եր մահվան։ Զարմանալի չե վոր այդ տեսակ նկարագրի հետ դուրընթաց նա ուներ պատերազմի կիրքը, վոր սակայն նա վարում եր խայտառակ կերպով։ Ի վերջո նա սպանվեց իր սեփական պահակների ձեռքով։

Միրզա Ջեֆին չերկար ժամանակ այս հրեշի վարչապետն եր։ Նա ստիպված եր մշտապես նրա մոտ գտնվել և հաղվադեպ եր վոր նա նախատինքի ստորացումից ազատվեր, ինչպես ցույց է տալիս հետևյալ անեկդոտը։ Մինիստրը պարտականություն ուներ ամեն որ բռնապետի հրամանները դրի առնել։ Որը վերջինս թելադրում եր ընկերոջ մի գորգի վրա։ Յեթե նա վատ տրամադրության մեջ գտնվեր, ընդհանրապես մինիստրի անձին (ուղղված) նախատական արտահայտություններ եր անում, և մի պարագայում, մինչ հավանորեն արբած վիճակում եր, նա կշտամբեց Միրզա Ջեֆին,—չերբ նա նստած նրա առաջ գրում եր,—ասելով թե նա շարունակ ստնջում է իրեն, հանդիսատ չի տալիս իրեն, թե նա հաճույք է պզում չարչարել իրեն և խլում է իր քունը և այլն։

Մինիստրը շարունակեց գրել մինչև վոր նորին վեհափառության բարձր գլուխը վերջին, վախից կիսամեռ, շարունակեց գրել, ազատանք կայլոնը հետևեց բարձին, վորից հետո լինչ վոր անցավ նրա ձեռքը, և բռնապետը վերջացրեց կրակելով ատրճանակը իր կառապետը վերջացրեց կրակելով ատրճանակը իր կառապետ թյան առարկայի դեմ։ Գնդակը անցավ մինիստրի մորուքից և պարտնվեց նրա ուսին. նա ընկավ և դուրս սարին.— Շահը մրափեց։ Բազմաթիվ ամիսներ անցան մինչև բուժվեց մինիստրի վերքը, և հետևաբար չեր կարող պալատ գալ։ Միևնույն ժամանակ Շահը մի անգամ իսկ չհարցրեց նրա մասին, և չերբ նա ապաքինեց, վերադարձավ պալատը և սովորականի նման շարունակեց իր վարչական աշխատանքը։

Մի այլ անգամ պարանը պատրաստ եր նրան կախելու համար, չերբ բարեբախտաբար նա իր ծոցից հանեց ալ դուրանը, վոր միշտ պահում եր իր մոտ, և տեսնելով նվիրական գիրքը, Շահը թույլ տվավ վոր նա հեռանա։

Հակառակ այս բոլորին, ծերունի մինիստրն ասաց. «Յեթե ինք ընկերացած լիներ Ագա Մահմեդին, նրա պատրաստությունները չէին սպանվիր»։

Պարսկաստանը շարունակ կենթակա է եղել պատերազմներին, անկասկած նա չվիտի սպանվիր։

Պարսկաստանը շարունակ կենթակա է եղել պատերազմների և ներքին հուզումների։ Յերբ մեծ մարդիկ չեղել են նրա պարծանքը. Նադիր Շահը, Աբբաս Մեծը և ներկա թա-

գավոր Ֆաթ Ալի Շահը։ Առաջին լերկուքը ընդարձակել են Պարսկաստանի սահմանները, և բարձրացրել են նրա դէնքի փառքը։ Ֆաթ Ալի Շահը սիրում է խաղաղութիւնը և արտաքին ցանկանում է իր ժողովրդի լերջանկութիւնը։...

Մինիստրի տեղեկութեան վերջաւորութեան, նա և նրա շքախումբը առաջնորդվեցին այն վրաններըը, ուր նվերներն էին ցուցադրված։ Զարմանքից հմայված, նրանք չէին իմանում նախ վոր առարկայի վրա կենտրոնացնելին իրենց ուշադրութիւնը։ «Պահ, պահ», և «վոհ, վոհ», զարմանքի ու հիացումի բացականչութիւնները, բարձր ձայնով դուրս թռան բոլոր բերաններից։ Շարժվելով ամեն կողմ, և զարմանքի ու հրճվանքի հուզումով լցված, նրանք շտապում էին մի առարկայից դեպի մյուսը, առանց քննելու վորևէ մեկը, և վերջապես մեկնեցին վրաններից, այնպես ինչպես ներս էին մտել։ Պետք կար միայն ելեկտրականութեան մի քանի ցնցուղներ տալ, ամբողջացնելու համար շփոթութիւնը։ Այս տեսարանը անպին աղմուկ հանեց և համբավը տարածվեց չափազանցութիւններով ու առասպելներով։ Մի քանի դարակաշրջիկ մարդիկ, վորոնք վրանների ծակից մի ակնարկ էին նետել, լերևակայում էին թե իրենց տեսածը պատմանդ եր, մինչդեռ նրանք միայն բյուրեղ էին տեսել, և ամբողջ ճամբարում լուր էին տարածել թե Ռուսաստանի կայսրը Շահին ուղարկել եր պատմանդյա սպաս։

Անգլիական գործակատար (Chargé d'affaires) հարյուրապետ Ուիլոքը, ընկերացած Դր. Կամբելին, այցելեց դեսպանին։

Ճամին շարունակում եր փչել կատաղորեն ամեն որ, բարձրացնելով փոշու ամպեր, վոր գրեթե մթագնում եր ոդը։ ...Ամեն առավոտ և յերեկո դղյակի դրան առաջ մի թնդանոթ էին արձակում, վորպես նշան պահեցողութեան սկզբնավորութեան։ Ռամազանի վերջանալուն, այս բանը վերջ գտավ։

Միաժամանակ Թագավորը հաճախակի մարդ եր ուղարկում, հարցնելու համար դեսպանի առողջութեան, և վերջապես վորոշեց հուլիսի 31-ը վորպես իր առաջին ընդունելութեան որը։

Առավոտը ժամը 11-ին, պարսկական կանոնավոր հեծելազորը, կարմիր համազգեստով, յերկշարք կանգնել եր դղյակից մինչև մեր ճամբարը։ Շուտով յեկավ տեղակալ Թիկնապահ—գեներալ Մահմուդ Խան (Mahmud Chan), ընկերացած պալատական մի քանի սպաների հետ։ Նրանք կրում էին կարմիր շալ իրենց գլխանոցի շուրջը, և բոլորն էլ ուներին մեծ գավազան։ Նրանք առաջացան Թագավորի անունով ճանապարհ բանալու համար, քշելով մի կողմ ամեն ինչ, վոր կարող եր խոչընդոտ հանդիսանալ թափորին։ Դեսպանը Մահմուտ խանին ընդունեց ընդունելութեան վրանում, և փոխադարձ քաղաքավարութեունից հետո, մենք սկսանք մեր առաջացումը դեպի բերդը։

Մի դեղեցիկ մարտաձի, վոսկով և թանկագին քարերով զարդարված թամբով, Թագավորի հրամանով բերին դեսպանի ղործածութեան համար, և Պարսկաստանի սովորութեան համաձայն, հետագայում [այդ ձին] մեց նորին գերազանցութեան սեփականութեյունը։

Մի վոսկի ափսե հատկացված եր կայսրի նամակը նորին վեհափառութեան ներկայացնելու համար։ Մենք առաջ գնացինք այն կարգով, վոր յես նկարագրել եմ նախապես, այն տարբերութեամբ միայն, վոր դեսպանական սպասավորներից մի քանիսը հագած հարուստ սպասազգեստ, քայլում էին դեսպանի ձիու առջևից։ Զիավորները բարև էին բռնել և թմբուկները զարնում էին։

Վորովհետև Թագավորը մեզ չընդունեց դղյակում, կարվոր և մի գաղափար տալ տեղի մասին։ Ինչպես հիշատակված և նախապես, պալատը շրջապատված և ծառերով, վոտոնք տնկված են շարքով, իրարից քիչ հեռու։ Դղյակի ու ծառերի միջի տարածութեյունը բաժանված և բարձր կարմիր վարագույրներով, և նույն կերպով բաժանված յերկու հրապարակի։ Յերկրորդ հրապարակում գտնվում և Թագավորի վրանը, վորտեղում նա ընդունեց դեսպանութեյունը։

Առաջին հրապարակի մուտքին կար մի վրան, ուր դեսպանին ընդունեցին Թիկնապահ-գնդապետը և Թագավորի փեսան՝ Ալաջար խան (Alajar-chan). և արքունիքի միքանի պետավոր անձնավորութիւնները։ Դեսպանութեան համար մասնավորապես պատրաստված էին կարմիր թավիշով ծածկված աթոռներ։ Մինչ դեսպանը վստահացնում էր Ալաջար խանին, թե սա բոլորիս համար մեր կյանքի ամենաերջանիկ օրն է, քանի որ պիտի տեսնեինք այնքան հզոր ու մեծ մի միապետ, մեզ հրամցնում էին վարդի ջրով թեյ։ Այդ պահին, Ալաջար խանն վստահ կանգնեց և ասաց, թե Շահը պատրաստ է ընդունելու դեսպանին։ Բացի դեսպանութեան չորս խորհրդականներից, վերոնշյալ մեկը վախկոտ ափսէի վրա կրում էր նամակը, վոչ մի այլ անձնավորութիւն չէր ընկերանում նորին գերազանցութեան։

Դեսպանը իր ձեռքով նամակը ներկայացրեց Թագավորին, և արտասանեց հետևյալ կարճ ուղերձը.—

«Ռուսաստանի կայսրը, իմ ողջամիտ տերը, հավատարիմ իր սկզբունքներին, ինչպես նաև իր զգացմունքներին, պատվելով այն նշանավոր հատկութիւնները, որոնք զարդարում են ձեզ վեհափառութիւնը, և իր սրտում ունենալով ձեր փառքը, ցանկանում է հավիտենական հիմքերի վրա հաստատել իր բազմասիրական հարաբերութիւնները Պարսկաստանի հետ, որ իր բարգավաճումը պարտական է ձեր վեհափառութեան կառավարութեանն։ Այս չերջանիկ իմ առիթով ցանկութիւնները ձեր վեհափառութեան հայտարարելու պարտականութեան պատիվն ունենալուն համար, թե նրա ցանկութիւնները անկեղծ են, ասված թող իմ վկան լինի»։

Պետական խորհրդական Նեգրին (Negri) այս ուղերձը կարդաց թրքերեն լեզվով, որ Թագավորը հաճոյք և զգում դրսեն շարունակ խոսելու։

Նորին վեհափառութիւնը առաջարկեց դեսպանին նստել աթոռի վրա, որ դրված եր գահի դիմացը, մի պատիվ, ինչ-



Ալաջար խան (Alajar-chan)։

պես նաև կոշիկով ներս մտնելու թույլտվությունը, ներքնազուլց տրված չէ մի անձնավորության։

Մոտավորապես մի քառորդ ժամ դրսի վրանում սպասելուց հետո, Մահմուդ խանը հրավիրեց մեզ ընդունելության։ Անցանք վարագույրի դռնից, որի վրա մի ահագին վիշապ կար նկարված, և մտանք առաջինն բակը, ուր շարված էին պարսկական զինվորները և քուրդերը։ Ներկրորդ բակի դուռը պահպանում էր զինվորների մի մեծ խումբ, որոնց մեկ մեկը կրում էր մի արծաթե գավազան։ Ներք մտնում էինք այստեղ, որի ծայրամասում կանգնած էր Թագավորի վրանը, ինձ թվեց թե հրապարակը լի էր զինվորներով, բայց սա պարզապես առաջին տպավորությունն էր, վարագույրների պատկերներից առաջացած, և այնտեղ ներկա էին միայն մի քանի գլխավոր խաներ, որոնք կանգնել էին ներկու շարքով, մի ահռելի արևի տակ։ Դռնից մինչև վրանը հեռավորությունը մոտավորապես մի հարյուր յարդա է։ Այս հեռավորության մեկ ներորդին թիկնապահ գեներալը կանգ առավ և խոր խոնարհություն արեց, ներկու ներորդում հասնեց իր հոգաթափերը և ներկրորդ անգամ խոնարհություն արեց, (մենք միայն գլուխ ավինք), և ներբ նա անցավ մարդոց տարածությունը, անշարժ կանգնեց, և նորից խոնարհելով, բարձր ձայնով գոչեց.—

«Ռուսական դեսպանի շքախումբը ցանկանում է ունենալ ներջանկությունը՝ թույլատրվելու մերձենալ ձերդ վեհափառության վոտքի հողին։ Ձեր վեհափառության հրամանը»։

Թագավորը դանդաղորեն իր ներեսը դարձրեց դեպի մեզ և բացականչեց. «խոշկելդի, խոշկելդի», որի վրա հանեցինք մեր գլխարկները և մտանք վրանը։

Դեսպանը բարձրացավ իր աթոռից և խնդրեց նորին վեհափառության արտոնությունը՝ թույլ տալու ներկայացնել անձնապես դեսպանության անդամներին։ Թագավորը համաձայնվեց, հետաքրքրվեց մեր առողջությամբ, և հարցրեց թե մենք վերևս անհարմարություն ունեցած ենք

ներկար ճանապարհորդության ընթացքում։ Յուրաքանչյուր անուն արվելուց հետո, մենք առաջ եկինք քայլում և խոնարհություն անում թագավորին ներք անգամ, որի վրա նա ընդհանրապես բացականչում էր, «խոշկելդի»։

Ներբ իմ կարդը ներկավ, դեսպանը ասաց. «նա եղել է աշխարհի շուրջը, և այժմ ներկել է Պարսկաստան՝ ձեր վեհափառության տեսնելու միակ նպատակով»։ «Ճանկանում եմ նրան առողջություն», ասաց թագավորը, «նա այժմ տեսել է ամեն բան»։

Նա խոսեց կայսեր հետ իր ունեցած բարեկամության մասին, և վստահացրեց մեզ, թե մենք կարող եկինք մեզ համարել իր ծառայության մեջ, և հույս հայտնեց թե մենք իրեն պիտի ծառայեինք այնքան հավատարմորեն, վորքան մենք ծառայում ենք մեր սեփական կայսրին։ Դր. Մյուլլերին ասաց, «Դուք այժմ իմ բժիշկն եք»։

Նա հիշատակեց այն սովորությունը, որով Ցեվրոպայի վեհապետները այցելում են իրար»։ Ցես ուրախ պիտի լինեմ, — ասաց նա, — եթե Ռուսաստանի կայսրը գա և այցելի ինձ, կա անկասկած կգնամ և կհանդիպեմ նրան»։

Թագավորի վարվելակերպն ու ընթացքն այնքան գրավիչ ու քաղցր են, վոր կարելի կե ասել առանց շողոքորթության, թե նա միակ հարմար անձն է լինելու Պարսկաստանի Շահը։ Շարունակ շրջապատված պալատականներով, վորոնք վարվելակերպի ու հասկացողության տեսակետից, պարզապես ապուշներ են բաղդատելով նրա հետ, դժվար է ներկակալել թե ինչպես նրա միտքը կարող է պահել այնքան թարմություն ու կորով։

Նորին վեհափառությունը միջահասակ է, իր դեմքի վրա տեսնվում են ներկու դեղեցիկ աչքեր, մնացյալը ծածկված է նրա մորուքով, վոր իջնում է մինչև նրա ծունկը։ Ասում են թե ամենափղեցիկ [մորուքն] է Պարսկաստանում, և ամենից նվիրական վկայության համար նրանով են ներդրվում։

Նա նստել էր վոսկյա գահի վրա, փարթամորեն զարդարված

պարված իրական քարերով։ Նրա ձեր նմանում եր մեր հին աթոռներին։ Առաջին ասպիճանի վրա, խոր քանդակված եր վոսկուց մի վագր։

Նրա հագուստը վոսկի կաորից եր, վորի վրա նա կրում եր մի շալ։ Թագը գեղի դագաթը լայնանում եր, և վորից բարձրանում էին յերեք ագամանդյա վեսաւրներ։ Իր թեքարձրանում էին յերեք ագամանդյա վեսաւրներ։ Իր թեվերի վրա, ուր բոլոր պարսիկները կրում են իրենց ալ դուրան, այնտեղ կային յերկու ագամանդներ, վորոնք հանրագիտորեն Յեվրոպացում, շրջապատված ուրիշներով, վորոնք շատ մեծ են։ Նրա դաշույնը և նրա գոտին խոտորեն զարդարված էին քարերով ու մարգարիտներով։

Վրանը կախված եր կարմիր մետաքսով, և գահի աջ կողմը վարագույրի տակ կարդով կանգնել էին նորին վեհափառության սասնյոթը վորդիները, նրանք միակ անձնավորությունները, վորոնք մեզ հետ ներկա էին գտնվում վորությունները էին, վորոնք մեզ հետ ներկա էին գտնվում ընդունելության։ Գահի ահմիջական կողքին մի գեղեցիկ յերիտասարդ կար, սակայն էին թե թագավորի յեղբորորդին և, վոր կանգնած սպասում եր մի գորգի մոտ, գործված իրաքան մարգարիտներով, վորի վրա նեսված եր մի կլոր բարձ, վորի ծոպերը զարդարված էին ահագին մեծությամբ մարգարիտներով։ Նրա գորգի վրա դրված և մեծ կայլոնը, վորի վրա խոնված կան մեծ շողակներ, և մի գավաթ, վոր թվում եր թե շինված և մխակուռ գոհարից։ Անմիջապես վրանի առաջ կանգնել էին յերեք սպա, առաջինը կրում եր ճոխրեն ասեղնագործված մի բարձի վրա մի թագ, յերկրորդը մի թուր և յերրորդը մի վահան, վորոնց վրա այնքան թանդարժեք քարեր կային, վոր արքայական գանձի ամենաժեքավոր առարկաներն էին։ Այս համառոտ նկարագրությունից տեսնվում է, վոր յուրաքանչյուր առարկայի արժեքը անսահման է, բայց խոստովանում եմ վոր աչքի առաջ ունենալով ամբողջությունը, չկար ասիական շքեղության այն յելևույթը, վորի գովեստն են անում յեվրոպացի ճանապարհորդները։

Ընդունելության վերջավորության, թուլլատրվեց վարչապետին վրանից ներս մտնել, և կանգնել դեսպանության անդամների յետևը։ Թագավորը բարձր ձայնով նրան գովեստներ արեց դեսպանի մասին, և մասնավորապես հիշատակեց նորին գերազանցության նրբանկատությունը՝ այն բանում վոր ամեն անգամ, յերբ խոսք և ուղղում նրան, բարձրանում է իր աթոռից։ Սա համոզում եր նորին վեհափառության թե, յեթե նորին գերազանցությունը գիտեր պնդել իր իրավունքների վրա, նա միաժամանակ նրանց գործադրության մեջ գիտեր հայտնաբերել նաև ճաշակ։

Թագավորը շատ շնորհալորեն արձակեց մեզ, և հրամայեց մինիսարին՝ հոգալու դեսպանության բոլոր պահանջները։ Մենք վերադարձանք այնպես, ինչպես յեկել էինք, յերեք անգամ խոնարհություն անելով բակում, ուր թիկնապահ-պենսիոները վերստին հագավ իր հոգաթափը, այն վայրում, ուր նա թողել եր։ Մահմուդ խանը ընկերացավ մեզ մինչև տուն, ուր դեսպանը ճշտորեն գովեց Շահի ազնիվ տաակությունները, վոր առթիվ խոսացանք նաև թե նա իր ազգի առաջին բանասեղծն է։

Վորովհետև մուսուլմանները ամսապանի ընթացքում արգելված են վորևե տեսակ զվարճություններից, թագավորը չեր կամենում տեսնել նվերները, մինչև տոներից հետո։ Նրա վերջավորության նախընթաց որը նա հրամայեց, վոր մեզ վրան կառուցվի ընդունելության վրանի կողքին, և բոլոր նվերները ուղարկվեցին այնտեղ։ Մինչ կատարվում եր այս գործողությունը, նորին վեհափառությունը նրանց վրա եր նայում դիակից, և շատ անգամ մարդ ուղարկեց՝ շնորհակալություն հայտնելու այն հոգնության ու խնամքի համար, վոր մենք գործադրում էինք այս առթիվ։ Սակայն, մենք ցավով նայում էինք մեր եռամիաժի քանդումին, վոր այնքան զվարճություն եր պատճառում մեզ։

Նույն յերեկոյան, ամբողջ ճամբարը յեռ ու գեռի մեջ եր։ Բոլոր արաբածները իրենց ձեռքը բարձրացնում էին դեպի

յերկինք, վոզջունելու նոր լուսինը, վորի տեսքը ազատում
եր յուրաքանչյուրին պահեցողությունից։ Հաջորդ որը մեծ
տոն եր։ Առավոտ կանուխ բոլոր զինվորները հավաքվեցին
դղյակի շուրջը, և դեսպանը ընկերացած միայն պետական
խորհրդական Նեգրիին, գնաց Թագավորին, վորի հետ նա
յերեկոյ պալատի բաց կողմը։ Քսան Թնդանոթ յերեք անգամ
համազարկ տվին։ Մինչ դեսպանը խոսում եր նորին վեհա-
փառության հետ, պարսկական նվագախումբը նվագում եր.
դա բաղկացած եր մի յերկտասնյակ չափազանց յերկար փո-
ղերից և մոտ քսան թմբուկներից։ Յերկու պարողներ բա-
վական ճարպիկությամբ խաղում էին մի պարանի վրա,
վոր ձգված եր հրապարակից մինչև դղյակի կտուրը, ընդու-
նելության սենյակի վրա։ Ապա, յերեք վիթ առաջ բերին։
Թագավորի վորդիները և գլխավոր խաները, կանգնել էին
բակում, արևի այրող ճառագայթների տակ, յերջանիկ էին
նրանք յերբ նորին վեհափառությունը մի ակնարկով կամ
մի խոսքով պատվում եր նրանց։ Վերջապես նա առաջարկեց
դեսպանին, վոր կես ժամում ցույց տա իրեն նվերները,
վորովհետև այն ժամանակ ազոթքի պահն եր։ Ըստ այնմ
նորին գերազանցությունը հրաժեշտ առավ և գնաց այն
վրանը ուր նվերները բերված էին։

Այժմ չեկավ նորին վեհափառությունը, և թերևս առա-
ջին անգամ իր կյանքում տեսավ իր պատկերի անդրադար-
ձումը։ «Այս հայելիները, ասաց նա ավելի թանգ են ինձ
համար, քան իմ բոլոր գանձերը»։ Այնուհետև յերբ նա
դիտում եր մի առարկայի, «պա՞խ, պա՞խ» և «հո՞ւպ, հո՞ւպ»,
շարունակական բացականչությունները լսվում էին ամբողջ
վրանում։ Բյուրեղյա սպասը ծայրահեղորեն հաճույք պատ-
ճառեց նրան։ Նա ցանկանում եր վոր գրեթե յուրաքանչյուր
առարկան առանձին առանձին նվիրվի իրեն, հարցրեց թե
ամեն մեկը ո՞ւր և շինված և միշտ ասում եր թե այդ
ավելի հաճելի յե իրեն քան իր ամբողջ գանձերը։ Դեսպանը
ասաց թե Պարսկաստանի գանձերը ծանոթ էին ամբողջ
Յեվրոպային, վոչինչ չկար զարմացնելու նորին վեհափառու-

թյան, կայսերական նվերների շքեղությամբ, բայց այս առար-
կաները բոլորը ռուսական արտադրության արդյունքն են,
և այս նշանակներով կայսրը ցանկանում և ձանոթացնել
նորին վեհափառության նրանց հետ։ «Նրանք շատ ավելի
թանգ են ինձ համար, քան իմ բոլոր գանձերը», նա նորից
բացագանչեց։

Նա խոսում եր շնորհալի դյուրությամբ, և ցույց եր տալիս
թե գիտեր դնահատել յուրաքանչյուր առարկան։ Նա վերցրեց
բյուրեղյա մի բաժակ, և ասաց նորին գերազանցությանը.
«Իրապես այս բաժակը այնքան գեղեցիկ է, վոր կարող է
ինձ հրապուրել՝ գինի խմելուց»։

Նվերների վերակացուին թույլատրվեց տալու ամեն մի
առարկան նրա ձեռքը, մի պահով վոր բացի վարչապետից
ուրիշ անձի չի տրվում, — վոր ապացույց է թե Թագավորը
հպարտ է այն պարագային միայն, յերբ իր յերկրի սովո-
րությունը պահանջում է վոր այդպես լինի։

Սամույր մուշտակները այն աստիճան հիացում պատճա-
ռեցին նրան, վոր նա կասկածում եր թե ներկված էին, մի
վարանում վոր պարմանք չտեղծեց, վորովհետև ամենահա-
րուստ խանների հագածը կարմրագույն է։ Յերբ դեսպանը
նրան հանդուցյալ թե գույնը բնական է, ավելացնելով թե
կայսրը անձամբ կատարած է ընտրությունը, նա հանկարծ
իր ձեռքը դրավ մուշտակների վրա, և այդպես թողած, ասաց.
«Յերանի թե իմ ձեռքը դպչեր այնտեղ, ուր կայսրի ձեռքը
դպած է, իմ բարեկամությունը անկեղծ է, և կտևի հա-
վիտյան»։

Նա հաճույք եր զգում հաճախակի նայելու հայելիների
մեջ, և իվերջո ասաց ժպտելով. «Սա, ինձ ունայնամիտ պիտի
դարձնի իմ անձի վերաբերմամբ»։ Նա ցանկություն հայտնեց
վոր փիլի մեքենան [ժամացույցը] շարժման մեջ դրվի, և հիա-
ցավ մեքենականության վրա։ Նա գովեց ռուս տիկինների
հագուստը, և այնքան լավ տրամադրության մեջ եր, և այնքան
աշխույժ, վոր հրամայեց [ամեն կողմ] ամբողջ ճամ-
բարում իր պիտավոր սպաներին՝ «գալու և հիանալու նվեր-

նների վրա, որոնք կայսրը ուղարկել է իր բարեկամ մեծ Շահին», և մինիատյորին հրամայեց անմիջապես սուբհանդակները ուղարկել Թեհրան, հրաման տալով շինելու մի սրան, հատկապես ընդունելու համար նվերները, ավելացնելով. «Նա վոր առաջին անգամ լուր կբերի նրանց ապահով ժամանումին, մեծ ընդունելի հաղար թումանի վարձատրություն, բայց ով վոր անտարբեր կանվի իմ հրամաններին, իր պատժության համար պատասխանատու պիտի լինի իր գլխով»:

Նորին վեհափառությունը գիշերը անցկացրեց իր հարեմում, — (նա իր հետ բերել է միայն վաթսուն կին), — նվերների մոտ, և հաջորդ առավոտը հրամայեց վոր պրանք անմիջապես կապվեն և ուղարկվեն Թեհրան, առանց հապաղման: Նա պահանջեց վոր այն անձնավորությունները, վորոնք բերել էին Սան Պետերբուրգից, արտոնվեն ընկերանալու պրանց մինչև Թեհրան, հակելու համար նրանց տեղը վորման: Ամեն որ լուր էր ուղարկում, առուգելու համար թե կապվածք էին. ի վերջո յերբ ամեն բան պատրաստ էր ճանապարհորդության համար, իր աստղագետների մեկ խաղով հետաձգվեց յերեք որով: Նույն իսկ յերբ յերկար սպասված որը հասավ, այս պարոնները պնդում էին վոր այս բուռը ուղարկվի Թեհրանի ճանապարհի հակառակ ուղղությամբ, հավատալով, թե այն յերջանիկ աստղը, վորի տակ այս ճանապարհորդությունը վճռված և, այդ ուղղությամբ է ընթանում:

Մի որ կեսորից հետո ականատես յեղա մի պրոսանքի, վորին մասնակցում էր Թադավորը: Պալատից բավական մեծ հեռավորության վրա կապված էր մի վոչխար, այնպես վոր նա չէր կարող շարժվել, և նորին վեհափառությունը, յինչպես նա և նրա վորդիներից վոմանք, նետեր էին խփում դժբախտ կենդանուն: Վոչ վոք նրա չափ լավ չէր խփում: Նրա վորդիներից մեկը, գեղեցիկ փոքրիկ մի տղա, կանգներ էր նրա կողքին, և իր հորից սովորում էր աղեղի գործածությունը:

Նորին վեհափառությունը ամեն որ վորսորդության էր

գնում, և միշտ գեսպանին ուղարկում էր ձեռքով սպանած վորսի միս: Մեծ քանակությամբ պատուղ ևս բերում էին մեզ, բայց ընդհանրապես խակ:

Պարսիկները շատ վարպետ են ամենատաք յեղանակին սառույց պատրաստելու գործի մեջ: Նրանք սառցատուն չունեն, և յես գաղափար չունեմ, թե ինչպես են ձեռք բերում:

Ամեն յերեկո մեր ճամբարի դիմաց մեր նվագախումբը նվագում էր, և մեծ թվով պարսիկներ էին հավաքվում լսելու Թագավորի նվագախումբը ածում էր միևնույն ժամանակ և նրանք միասին յեզակի մի ազմուկ էին բարձրացնում:

Պարսկական հետևակազորը մշտապես ամեն որ մարզանք էր կատարում մեր ճամբարի դիմաց, բայց կարելի չեր բաղդատել նրանց Թավրիզի գինվորների հետ:

Մեր ճամբարին հատկացված պահակները, յերբ մի տեղ էին գնում. իրենց զենքը տալիս էին մյուսին, և շատ հաճախ տեսնվում էր մի գինվոր բռնած բազմաթիվ հրացաններ: Բացի այդ, նրանք հաճախ ի չարն էին գործ դնում իրենց իշխանությունը, և կանգնեցնում ու կողոպտում էին անհատներին, վորոնք չգիտենալով նրանց կարգախոսը, փորձում էին անցնել ճամբարից. և հաճախ մեզ դուրս էին կանչում մեր վրանից, այս անձերի ինչքերը իրենց վերադարձնելու համար:

Այս խեղճ արարածները, սակայն, յենթակա էին շատ ժվարին ծառայության. նրանց սպանները հաճախ ծոռանում էին նրանց և թողնում էին իրենց պարտականության մեջ մինչև ամբողջ որը, սակայն պահակներից շատերը, վոր լիովին գոված չէին յեվրոպական կարգապահությունից, գնում էին իմաց տալու սպաններին թե ժամանակը յեկել է, վոր իրենք ազատվեն.....

Սուլթանիյե քաղաքն, — վոր ասում են Շարդենի ժամանակ յեղել է ծաղկյալ ու բազմաբնակ, — ավերակներից միա-

յած են միայն յերեք մզկիթ, վորոնցից մեկը նշանավոր է իր մեծությամբ ու գեղեցկությամբ։ Դա մի ուրախկյունի աշտարակ է, վորի վրա բարձրանում է գմբեթ, վոր ճարտարապետական մի դյուտ գործոց է։ Ամբողջ շենքը կարող է լինել մոտավորապես քառասուն յարդա լայն և ութսուն բարձր։ Ներսը զարդարված է նշանադրիերով, և շենքի վերևի մասում կան բազմաթիվ սենյակներ ու անցքեր, նախապես առաջնորդող դեպի չորս փոքրիկ այուններ, վորոնք շրջապատում են գմբեթը, բայց սրանցից մեկն և միայն մնում, վոր ներսի կողմը ունի վոլորապտույտ մի սանդուխ, և վորի դյուտը հավասար է գմբեթի կատարին։

Մյուս ավերակները կավե տգեղ զանգվածներ են, վոր անձրևի տակ այնպիսի յեղակի ձևեր են ստացել, վոր մի յեվրոպացի չի կարող հավատալ թե դրանք բնակարանի մնացորդներ են։

Ա.յնտեղից վոչ շատ հեռու կա մի փոքրիկ վայր, շրջապատված մի գեղեցիկ պատով, վոր այժմ պիտի վերածվի պարտեզի։ Մեջտեղում կանգնած է մի շենք, վոր պարունակում է սուրբ Հասան-Կաշիի (Hassan-Kashi) մասունքը։ Ամբողջ շրջակայքում բնակած ժամանակ հաճախ գնում է այստեղ առանձնության մեջ կատարելու իր պաշտամունքը։ Ամբողջ շրջակայքում քրիստոնեյության վորևե հետք չկա, ինչպես հավատում են հայերը, թեև այս ժողովրդից վոմանք, — վորոնք այժմ ցրված են ամբողջ Պարսկաստանում, ինչպես հրեաները Ցեղբոպայում, — կարելի չի վոր բնակիլ են այստեղ։

Մենք տակավին չենք տեսել Ասիայի շքեղության մասին այնքան հեռուներ տարածված համբավի հետքը։ Տները, ինչպես վրաններըը, հարմարեցված են ամենապարզ վոճով, և բացի այստեղ ու այնտեղ գտնված մի քանի գեղեցիկ գորգերից, առատապես վոչ մի բան կա վոր գրավիր մեր ուշադրությունը։ Պարսիկ ազնվականը բավական ճոխ և հագնվում. նա ունի մի քանի նուբրե շալեր, մի թուր և մի գաշուկն, վոր նա ժառանգել է իր հորից, և նրա ձիու ասպագենը վոսկուց է,

բայց նա այլևս ուրիշ բան չունի, և նրա ծառաները գրեթե ցնցոտիների մեջ են։ Մեզանում փարթամության գաղափարը կազմվում է մի մարդու տան ընդհանուր վոճից և նրա ապրելակերպից, բայց ասիական մեծության ամենաբարձր աստիճանը, վորևե կապակցություն չունի ընտանեկան վիճակի հետ, և ես կարծում եմ, թե արևելյան շքեղության մասին ձևավորություն տվրող կեղծ կարծիքը, մենք ժառանգել ենք մեր նախնիքներից, վորոնք [այդ ժամանակ] տեսակցին յեին մնացել քաղաքակրթության մեջ։

Թագավորի գանձը ծայրահեղորեն արժեքավոր է, բայց բոլորովին անճաշակ։ Մի քանի մեծ անձնավորություններ շատ հարուստ են, բայց մնացյալները վոդորմելիորեն աղքատ, Ուրիշ կերպ ել իրապես չի կարող լինել, վորովհետև այս յերկրում նրանք գաղափար չունեն, թե ինչպես դրամական մի գումար կարող է շահ բերել։ Դրամի փոխանակություն չկա։ Վոչ պետական սահմանադրություն և վոչ ել պարկեշտության մասին նրանց ունեցած գաղափարները՝ թույլ են տալիս ներմուծելու մի այլ սիստեմ։ Հետևանքն այն է, վոր հարուստ մարդը թաղում է իր դրամը, և ուտում նա առ մաս, բացի յերբ ավելի շահելու պատճառություն ունի, բայց յեթե նա ապրի ավելի յերկար, քան ինքը շահել է, նա գերեզման կերթա մուրացկանի վիճակով։

Այն վախը, վոր կարող է մեկը ավելի [յերկար] ապրել, քան իր ունեցած դրամը, մի պարսիկի դարձնում է զգվելիորեն ագահ։ Նրանք վոր ծառայում են կառավարության, թաղում են իրենց աշխատավարձը, վորպեսզի ապագայում կարողության չենթակա չլինեն, և մինիստրները միևնույն սկզբունքով են առաջնորդվում, վորովհետև նրանք չեն կարող վստահ լինել թե վերջքան ժամանակ ի պատվի պիտի մնան։

Թագավորը ինքը տեր է անսահման մեծ դանձի, վոր յեթե և պահում է ժողովրդի մեջ ոգտավետ շրջանառությունից, և վորից իր հպատակները վորևե ոգուտ չեն ստանում, բացի պատերազմի ժամանակից։ Ցեթե կալվածատերերի գործը չհանգարվի յերկրի կրոնով, նրանց վիճակը

կարող և ավելի յերջանիկ լինել, քան մյուս հպատակներին, վորովհետև նրանք միակ դասակարգն են, վոր շահ են ստանում իրենց դրամապլխից։

Մի յեզակի սովորութիւն կա պարսիկների մեջ, ըստ վորում մի առարկա արվում է, յեթե գովեստ լինի այդ մասին։ Այս գաղափարը, սակայն պարզապես ծագած է նրանց քաղաքավարական ասացվածքի տառացի թարգմանութիւնից, և այս սովորութիւնը հավասար է այն ընդունված ձևին, վոր տան տերը ընդհանրապես ընդունում է մի հյուրի, ասելով, — թե ամբողջ տունը պատկանում է նրան, վոր իրականապես ուրիշ նշանակութիւն չունի, քան յերբ մենք դրամ ենք մեկին ավելացնելով թե մենք նրա ամենախոնարհ ծառան ենք, առանց մտադրութիւն ունենալու այդպիսին լինելու։ Սակայն, իրերը գովեստ անողին նվիրելու սովորութիւնը, յերբեմն հեշտութեամբ չի գործադրվում, և յերբեմն այն պարագային միայն յերբ նվիրատուները վստահ են թե արժեքի կրկինը կստանան, վորովհետև կարելի չէ խուսափել փոխ նվերից։ Նույնպես յերկրի սովորութիւնն է և բավական նվերներ տալ ծառաներին, գրեթե ամեն աննշան պարագայի։ Մարդիկ սովորութիւն ունեն իրար նվեր ուղարկել՝ ծաղիկ, խնձոր և այլն, և նրանք պետք է վճարվեն իրենց կշռի չափ վոսկով։ Հետևաբար, Պարսկաստանում ճամբորդի ծախքերը իրականապես վրդովեցուցիչ են, և կարելի է գաղափար կազմել մի դեսպանութեան որական ծախքերի մասին, այսպիսի պարագաներում։

Մինչև հիմա Թագավորը սովորութիւն ուներ «բաղնիքի դրամ» անունով մի գումար տալ իր արքունիքը այցելող յեվրոպացիներին։ Բայց, դեսպանը խնդրեց մերժել այդ, հայտարարելով թե մեր յերկրում սովորութիւն չկար բացի մեր վեհապետից, ուրիշ վորևե մեկից դրամական նվեր ընդունել։ Բավական դժվար կեղավ պարսիկներին համոզել թե տարբերութիւններ կան նվերների տեսակների մեջ։ Նրանց պաշտոնյաները, վորոնք վոչ մի բան այնքան չեն սիրում վորքան դրամը, շուտով պարտավորված եղեն մերժել դրամական նվերները, վորոնց փոխարեն դեսպանը ստիպված եր այլ իրեր նվիրել։

Բանակցութիւնները արագորեն առաջ եյին գնում։ Դեսպանը հաճախ տեսակցութիւններ եր ունենում Թագավորի և նրա մինիստրների հետ, վորոնք բոլորը, և հատկապես նորին վեհափառութիւնը, այնքան կապվեցին նորին գերազանցութեան, վոր ցանկանում եյին վոր նա միայն Պարսկաստանում, և ասում եյին, թե իրենք պիտի առաջարկեն կայսրին, ընդունել համաձայնվելու այս կարգադրութեանը։

Մի անգամ, յերբ նորին գերազանցութիւնը գնում եր Թագավորին, պատահեց վոր չես լինելի այդ որվան սպան, և հետևաբար պետք եր ընկերանայի նրան։ Մենք գնացինք դղյակի մեծ պատշգամը, ուր նորին գերազանցութիւնն ընդունվեց մի վրանում վարչապետի և թիկնապահ-դիներալ Ալաջար խանի կողմից։ Թագավորը անմիջապես յերևաց իր գահի վրա։ Թիկնապահ-դիներալը դեսպանին առաջնորդեց ընդունելութեան սրահը, մինչ յես միացի մինիստրի մոտ, վոր ստիպեց ինձ նստել։ Ներքևում, դղյակի առաջ յերևացին մի քանի հազար քուրդ, վորոնք Թագավորի ներկայութեան իրենց անունով կանչվելով, սկսան քառամբակ ձիավարել, մի ժամանակ խոնարհութիւն անելով։ Մինիստրը շարունակ հարցնում եր ինձ, թե հավանում եմ հեծելազորին, և յես գովեստ արի, վորքան կարծում եյի թե արժանի են։ «Այո, ասաց նա, մեր հեծելազորը յեվրոպականի նման չի կռվիր։ Ձեր հեծելազորը կռվում է միասին, մեր ձիավորները քաջութիւնը կայանում է նրանում, վոր յուրաքանչյուրը կռվում է առանձնապես։ Ձեզանում քաջութիւնը սրվեստ է»։ Յես չեյի ցանկանում հուսահատ անել ծերունի աղնվականին, և պարզապես մատնանշեցի շարքային կռվի առավելութիւնը։ «Այո, դուք յեվրոպացիներդ, ասաց նա, միշտ մի նոր բարենորոգութեան եք ձեռնարկում, իսկ թուրքերը կարող են պարծենալ միայն իրենց յերկար տաբատներով»։

Թուրքերի մասին այս յերկրում այնքան նվաստացուցիչ

գաղափար ունեն, որ թագավորը մի անգամ ասաց. «Թուրք լինելը նշանակում է ոչինչ չլինել»։ Մինիատորը նույնպես հիշատակեց մի դեպք, (սակայն առանց թվականի), երբ 500 պարսիկ միայն գավազանով հաղթել էին միքանի հազար թուրքի։

Ցերբ զորաւոր վերջացավ, ախոռապետը (master of the horse) առաջ անցավ կանգնած մի կատարի արաբական [ձիու] վրա, և շուրջը դարձավ, երբ ձին ամեն ուղղութեամբ սրընթաց գնում էր։ Ցերբեմն նա կախվում էր այս կամ այն վոտքից, մինչ իր գլուխն ու վենքը գետնին էին գնում, և ապա ճոճելով ձիու վրա. նա կանգնում էր թամբի վրա մեկ կամ յերկու վոտքով. կարճ խոսքով նա զանազան խաղեր կատարեց, վորոնց վրա նայելը սարսափ էր պատճառում։

Այս մարդու կատարածները անտարակույս գերազանցում էին վերևում նման բան, վոր յես տեսել էի իմ սեփական յերկրում, և յերբ մինիատորը այդ մասին հարցրեց իմ կարծիքը, յես նրան վստահացրի թե Ցեվրոպայում դրանց հավասարող բան չկա։ «Ցեվ սակայն, ավելացրեց նա, դա մեր լավագույն ճոպարորը չէ, լավագույնը հիվանդ է»։ Սակայն, յես չհավատացի այս հավասարումին. հետագայում տեղեկացա վոր միայն այս մարդն էր թագավորի արքունիքում և պարտավոր էր գերազանցում նրան։

Շուտով գեսպանը յերևաց և գնաց հանդիպելու թագավորի անդրանիկ վորդուն, Մահմեդ Ալի Միրզային, վոր ամենաշնորհալի ընդունելությունն ավավ նորին գերազանցության և շատ մեծ գովեստով խոսեց նորին վեհափառության մասին։

Դղյակի առաջ հավաքված պետվորների միջից, յերկու հոգի սկսան վիճել իրար հետ թագավորի ներկայության և դաշնահարել մեկը մյուսին։ Ուրիշ վերևի պարագայի այդ պետի հանդուգն վարմունքը պետի պատժվեր վարկենական մահով, բայց նորին վեհափառությունը ներեց նրանց ասելով. «Ռուսական գեսպանության ներկայությունը պետք չէ աղարտվի արյունահեղությամբ, միայն պետք է վոր մենք

ուրախ լինենք»։ Սա մի ապացույց էր վարկենական զգացմունքի չենթարկման, մի բացարձակ միապետի կողմից, վոր սովոր էր դրանից շատ ավելի աննշան մի հանցանքի համար մահվամբ պատժել անմիջապես։

Վարչապետը ամբողջ գեսպանության ճաշի հրավիրեց, վորին մենք գնացինք կեսորից հետո ժամը հինգին։ Վրանում աթոռներ էին պատրաստել մեզ համար, և նստելուց հետո, մեզ մատուցին թեյ վարդաջրով, և կալյոն, յերբ միաժամանակ մինիստրի բոլոր սպասավորները, պարսկական սովորության համաձայն, կանգնած մեզ էին նայում։

Քիչ հետո գնացինք մի ուրիշ վրան, վորի կենտրոնում հողի մի թումբ էին բարձրացրել, վոր ծառայում էր վորպես սեղան, բայց այնքան բարձր, վոր դիմացի կողմը նրա ոտղների քիթը հազիվ էին տեսնում։ Այս սեղանը, վոր չափազանց լայն էր, ծածկված էր զանազան կերակուրի պնակներով և պատուղներով։ Մեջտեղում մի փոքրիկ նեղ ձիջոց էր բաց թողնված, և չէլի կարող յերևակայել թե ինչու համար, մինչև վոր յերբ նստեցինք, տեսա վոր ծառաները ցատկեցին սեղանի վրա, և կանգնեցին այնտեղ, բաժանելու համար պնակները։ Յես ամեն ինչ պատրաստ էի տալու, յեթե միայն կարողանայի կուշտ ձիծաղել, բայց ստիպված էինք զսպել ծիծաղելու մեր զգացմունքը։ Ներանձին մեկը, սակայն, վոտք կոխած լինելով մածունի մեջ, և նրա ընկերը յերբ փորձում էր ազատել նրան, գրեթե գլորվեց մի այլ պնակի մեջ, այլևս չէլինք կարող զերծ մնալ ծիծաղելուց...։ Անուշադիր ծառան համեստորեն հեռացավ, սեղանի վրա թողնելով իր վոտքի հետքերը։ Սրանից դուրս, մի կարգ ծառաներ կանգնել էին մեր յետևում, քշելու համար ճանճերին։

Յես սպասում էի մինիստրի սեղանի վրա գտնել պարսկաստանի լավ պտուղը, բայց շատ վատ եր։ Մինիստրը իր պնակից բազմաթիվ պարոնների ավավ լավ պատառներ, վոր մի հյուրի ցույց տրված ամենամեծ պատիվն է համարվում. նա պարզապես նետում էր պատառը նրանց բերանը,

և նրանք մեծ ճարտարութեամբ բռնում էին։ Յետեւ պատահի որ մի մեծ մարդ համակրի իր դրացուն, նա սիրուն կերպով իր ցերեկ մատների մէջ և առնում մի քիչ յուղալի փիլավ և բարեհաճ ժպտալով դնում է այն բերանում, որ բաց և ընդունելու համար այդ պատրաստ։

Սեղանից հետո ջուր բերին, լվալու համար մեր ձեռքերը. ապա վերադարձանք առաջին սրահը, ուր կայսրն և սուրճ սպասին...

Հաջորդ որը դեսպանութեան մի այլ ճաշ սովոր թագավորութեան պանծապահ՝ Նիսամութ-Դեվլե (Nisamut-Dewle). Սպահանի կառավարիչը, և Պարսկաստանի ամենահարուստ անձերից մեկը. նա ամեն տարի քանի ֆունտ խակաման մարգարիտ և նվիրում թագավորին։ Սեղանի մի կարգ ապահանները վոսկի էին, և Սպահանի լավ դինի կար։ Շիրազի դինին հաղվագեպ և Պարսկաստանում. ի միջի այլ պատճառների, որովհետև շատ քիչ են շինում, մի փառ որ բավական հեռավոր պիտի անի այն պարոններին, որոնք Յեվրոպացում կարծում են թե Շիրազի խակական գինին են խմում։

Դեսպանը այս հյուրասիրութիւնները վերադարձրեց հրավիրելով բոլոր սատրապներին մի խնճույքի։ Մեր ճամբարը զեղեցկորեն լուսաւորված եր այս պարապմունքին, և հյուրերը նստեցին սեղանի շուրջը... Միքանի որ հետո թագավորը դեսպանութեանը հրավիրեց հրավառութեան հանդեսի։...

Մի որ նորին վեհափառութիւնը վորոշ գնաց և հրամանք տվավ թիկնապահ գեներալին իր գանձերը մեզ ցույց տալու համար։ Ըստ այնմ, Ալաջար Խան մեզ ընդունեց պատշաճաւորութեամբ և առաջնորդեց գոհարեղենի սենյակը։ Այնտեղ սանդուղք վոսկյա գահը, զարդարուն մեծ գոհարներով, մարգարիտով հյուսված զեղեցիկ գորգը, նրան վերարկող բարձը և ադամանդ կայլոնը։ Շալից շինված մի կապերտի վրա կային յերկու թաս, մի գլխանոց ադամանդյա փետուրով, չորս դաշույն, որոնցից մեկի լերախակալը մարգարտով

ից կը, յերկու թուր. ադամանդների մի գոտի, մի մարգարտյա մանյակ, որ թե մեծութեամբ և թե գեղեցկութեամբ հազվագյուտ և, բազմաթիվ նիզակներ, նշանավոր վահանը, մի զավազան զարդարված ադամանդներով, և յերեք հազուստ թագին ասեղնագործված մարգարիտով ու շողակով։

Սակայն, այս առարկաներից և վոչ մեկը կարելի եր բաղդատել մի զույգ ապարանջանի հետ, որ պարունակում եր յերկու ադամանդ, շրջապատված գրեթե նույնքան մեծութեամբ ուրիշներով։ Ներանցից մեկը կոչվում է դարիանուր (փալլուն ծով) և թագավորը կրում է իր ձախ թևերին, իսկ մյուսը կոչվում է կուհինուր (փայլուն լեռ), որ նորին վեհափառութիւնը կրում է ձախ սրունքին։...

Տեսնելով այս գանձերը, մարդը զորավորապես զգացվում է այն նկատումով, թե հազարավոր ընտանիքներ կարող են յերջանիկ լինել դրանցով, և վորոնք անուգուստ կերպով ապրում են մի փոքրիկ սենյակում։ Ասում են թե Նադիր Շահն ունեցել է մի փոքրիկ սենյակում։ Ասում են թե Նադիր Շահն և բերել այս գանձերը Հնդկաստանից, որ Դելհին գրավելիս առավ Մոնղոլ [կայսրից]։...

Ե. ՎԵՐԱԴԱՐՁԸ *

Բանակցութիւնները հաջողութեամբ վերջացած լինելով, առանց շողոքորթելու դեսպանին, կարող եմ ասել թե նորին գերազանցութեան կարող ու յեռանդուն ջանքերի շնորհիվ եր վոր ոգոստոսի 27-ին բոլոր կետերը վերջնականապես ճշուեցին, և կոնուենտութիւն կերկու պետութիւնների[1] և թագաւորը այդ կետերից հետո նշանակեց հրաժեշտի ընդունելութիւնը։

Պարսկաստանի արքունիքը կերբեք թույլ չի տալիս, վոր այցելուները մեկնեն առանց նվերներ ընծայաբերելու նրանց։ Սրանք ընդհանրապես տրվում են հրաժեշտի որը, և անհրաժեշտ է այդ նվերներով ներկայանալ թագավորին։ Այս պարագայում սովորութիւն է նաև հագնել պատվո խալաթը (Khelaat), վոր նվերների մասն է կազմում, բայց դեսպանը հայտարարեց, թե մեր կերկրում նախատինք է համարվում, մեր վեհապետի համազգեստի վրա ուրիշ հագնելը։ Նորին վեհափառութիւնը այս պարագայում պատրաստակամութիւն ունեցավ տեղի տալ մեր ազգային պատշաճութեան դաղափարին և առաջին ու թերևս վերջին անդամ լինելով բացառութիւն արեց ի նպաստ ռուսական դեսպանութեան։ Հետևաբար մենք չընդունեցինք խալաթը։

Առավոտյան ժամը տասնմեկին ընդունվեցինք ունկընդրութեան վրանում, թագավորի նվերները ստանալու համար։ Դանդաղաշարժ թափորով դրանք բերին պալատից։ Գլխավոր խաններից շատերը առաջնորդում էին, վորոնց հետևում էին վորոշ թվով մարդիկ, կրելով իրենց գլխի վրա նվերներ պարունակող ափսեները, վորոնք ծածկված էին սպիտակ կտորով։

Ժողովուրդը հարգանքով խոնարհութիւն եր անում, ինչպես սովոր են անել այն ամեն բանի համար, վոր գալիս է թագավորից։ Դեսպանութեան մի քանի պարոններ առաջացան ընդունելու թափորը, և կերբ հասան վրանը ափսեները վար դրին։

Ասներից մեկը տեղեկացրեց դեսպանին, թե այս նվերները թագավորն է ուղարկել առաքելութեան բոլոր [անդամների] համար, վորպես նշան իր հարգանքի և ի հիշատակ Պարսկաստանի։ Յուրաքանչյուր նվերի վրա մի տոմսակ կար, առարկայի նկարագրականը պարունակող, և այն անձի անունը, վորին հասկացված եր։

Բացի բազմաթիվ թանգարժեք նվերներից, դեսպանը ընդունեց Արևի ու Այուժի առաջին կարգի պատվանշանը, մեղնից շատերը կերկրորդ կարգի և վոմանք կերրորդ կարգի։

Նվերները շատ անհնչուն էին, վորովհետև բացառութեամբ դեսպանութեան կերկու խորհրդականների, յուրաքանչյուր պարոնը ընդունեց միայն մի շալ և կերկու կտոր կերպաս։ Շալերից շատերը ծակծկված էին ու կարիքատնած։ Արդարև շատ փափաքելի եր, վոր թագավորը տեղեկանար թե ինչպես խաբում են իրեն, այսպիսի պարագաներում իր պաշտոնյաները, վորոնք սովորութիւն ունեն նորին վեհափառութեան նվերների փոխարեն տալ ստորին արժեքով այլ առարկաներ։ Այսպես, մի շալ անցնելով ձեռքից ձեռք փոխվում է հինգ կամ վեց անգամ, մինչև վոր հասնի այն մարդու ձեռքը, վորի համար թագավորը ուղարկել է։

Կետորից հետո ժամը հինգին նախապես նկարագրված կարգով թափոր կազմելով գնացինք հրաժեշտի ունկնդրութեան։ Վայրը և ներկայացման ձևերը նույնն էին, ինչ վոր մեր առաջին ընդունելութեան։ Թագավորը ծայրահեղորեն շնորհալի եր, և իր սովորական լրջութեամբ վստահացրեց թե բոլորս վայելում ենք իր համակրութիւնը, և մեր ընթացքով շահել ենք իր ժողովուրդի հարգանքը, և ինքն էլ մեր ժամանման

* Kotzebue, եջ 303–328։

առաջին բոպեից բոլորովին տարբեր դաղափար և կազմել ուրուրների մասին: «Յես չեմ ճանաչում ձեզ մինչև հիմա, իմ սիրելի հարևաններս», նա կրկնեց մի քանի անդամ:

Դեսպանը ասաց թե մեղմից յուրաքանչյուրը խորապես տպավորված և նորին վեհափառության բարությամբ, և թե այնքան շնորհալի ընդունելություն, այդպիսի մի մեծ միապետի կողմից՝ հավիտյան տպավորված պիտի մնա մեր յիշատակարանում: «Այսպես և իմ ցանկությունը, բացատրեց թագավորը, մենք այժմ բարեկամներ ենք մշտապես: Վերադառնալ դուք առաջինն եք, որ ինձ տվել եք այնքան դոհունակություն, և վերադառնալ դուք այնքան ուժանելի ճանապարհորդության եք կատարել ինձ գալու համար, խնդրում եմ որ իմ մեծ բարեկամը, ձեր կայսրը, վարձատրի բոլորիդ: Դուք, — խոսքը ուղղելով դեսպանին, — մասնավորապես հաճույք պատճառած եք ինձ, խնդրում եմ որ դուք Սան Պետերբուրգից ինձ ուղարկես մի զույգ ձի. թող մեծ լինի և ամենանուրբ բյուրեղից»:

Իր ձեռքով դեսպանին տվավ մի նամակ կայսրի համար, և ավելացնելով իր հանդիսավոր վստահացումը իր անկեղծ բարեկամության համար, թվում եր թե նա ղգացված եր: Նորին գերապանցությունը նույնպես ղգացված եր, և թագավորը քանիցս նկատեց իր վարչապետին. «դեսպանը լավ սիրտ ունի»:

Մի րոպե կանգ առավ, որ ժամանակ յերևում եր թե թագավորը պայքարում եր իր ղգացումների հետ, և ի վերջո ասաց. «Ձեմ կարող տանել ձեզ վողջերթ ասելու համար»: Ապա, դեսպանը հրաժեշտ առավ. թագավորը մի քանի անդամ բացագանչեց. «խոշկելդի, խոշկելդի», և շարունակեց բարեցակամ ու ղգացված ակնարկներ ուղղել մեզ, մինչև որ մենք անցանք արծաթ գավազանով մարդուց:....

Մեր վերջին որը Սուլթանևկում անցկացրինք վոխադարձ այցելություններ տալով մինիստրներին, որոնք բոլորը վատահացրին դեսպանին թե թագավորը, ինչպես նաև իրենք, այնքան հրապուրված են նորին գերազանցությամբ, որ խորապես ցավում են բաժանման համար: Նույնիսկ ասում են, թե վարչապետը մի կաթիլ արցունք եր թափել, կարգաշնիք տալու համար իր վշտի արտահայտության, հարկավոր դրան ռուսական դեսպանության մեծաժախս պահպանությունը Սուլթանևկում, ըստ տեղեկության, թագավորը բարդել եր նրա վրին: Բայց, ասում են թե մինիստրների մեջ ամենահարուստն է:

Յերբ թագավորը նկատում է, որ իր հպատակներից վորևե մեկը չափազանց հարստանում է, հակառակ իր արքայական կամքին ու հաճույքին, նա շատ սիրալիր մի հնարքի և դիմում, հանցավորին աղքատության ու մուրացկանության վիճակին հասցնելու համար: Դա, այն է որ ամեն որ նրան վիճակին հասցնելու համար: Դա, այն է որ ամեն որ նրան մի պնակ, մի պատիվ, իր խոհանոցից ուղարկում է նրան մի պնակ, մի պատիվ, վորի փոխարեն դանձապետը հազար դուկատից պակաս դումարով չի գոհանար: Յեթե այս գործողությունը շարունակվի շաբաթներով, բնական է որ ամենահարուստ անհատն անգամ կդատապարտվի աղքատության: Բայց, յեթե թագավորը վճռապես որոշված լինի այդ անձի բացարձակ կործանման, նա նշանակում է մի որ ճաշելու իր հետ, մի շատ պատվավոր հյուրանք, վոր չենթակա անձնավորությանն գործնում է բացարձակապես աղքատ:...

Ոգոստոսի 29-ին դեսպանությունը մեկնեց Սուլթանիեյի ճամբարից, և նույն յերեկո հասավ Սանդան: Հաջորդ որը այնտեղ մենք կանգ առինք՝ տոնելու համար սուրբ Ալեքսանդր Նևսկու տարեդարձը. այս պարագայում մենք ունեցանք յերաժշտություն և լուսավառություն, և ժողովուրդը ավելի տրամադիր եր մասնակցելու մեր այս ուրախությանը, վորովհետև նրանք տեղեկացել էլին, վոր թագավորը մեզ տվել եր հատկապես շատ շնորհալի ընդունելություն, և թե բարեկամական ճիշտ հարաբերություններ հաստատված էլին [Ռուսաստանի] կայսրի հետ:

Սեպտեմբերի 9-ին հասանք Թավրիզ: Զինվորական

կառավարիչը, և անգլիացիները, որոնց մեջ կային Մր. Ուիլոք և Դր. Կամպել, որոնք մեզնից առաջ մեկնել էին Մուրթանիեյից, չեկան դիմավորելու դեսպանությանը:

Դեսպանը տակավին շատ կեսեր ուներ կարգադրելիք այստեղ, կապված յերկու յերկրների սահմանների հետ, և մենք ստիպվեցինք այդտեղ մնալ տասնմեկ որ:

Հիանալի անգլիացիների հետ մենք այնքան հաճելի ժամանակ անցկացրինք, որ հաճախ մոռանում էինք, որ գտնվում էինք Պարսկաստանում: Մր. Կամպել մի անգամ քաղաքավարությունն ունեցավ վատահեցնելու ինձ, թե քիչ անգամ մարդ հանդիպում է մի դեսպանության, որ բաղացած լինի ընդհանրապես այնքան գուրեկան ու բանիմաց մարդկանցից, որոնցիսին մերն եր, բայց մենք կարող ենք մյուս կողմից, առանց շողոքորթության, վատահացնել այդ պարոնին, թե մենք յերբեք չենք հանդիպած այնքան շատ հաճելի և ընկերական անգլիացիների, որոնցիսիք դուանք թավճել և ընկերական անգլիացիների, որոնցիսիք դուանք թավրիզում:...

Սեպտեմբերի 15-ին, անգլիացիների ընկերակցությամբ, մենք ուղեգնինք կայսրի թագադրության տարեդարձը, որ պարագային Աբբաս Միրզան քաղաքավարությունը ունեցավ մեզ ուղարկելու հրթիռներ:

Մեր մեկնումի նախընթաց որը խլհանը մեզ յուրաքանչյուրիս ուղարկեց մի շալ, և գնդապետ Յերմոլովին, դեսպանի զարմիկը, նվիրեց մի մատանի, որ իր ձեռքից հանեց:

Յերբ դեսպանը Աբբաս Միրզային մատուցեց կայսրի նվերները, որոնց մեջ կային հախճապակյա մի սպաս, ադամանդե փետուրներ և այլն, նա պարզապես ընդունեց մի հոյակապ հրացան և մի թուր, ասելով. «Սրանք պատկանում են ինձ, ինձանից յալները չափազանց զեղեցիկ են ինձ համար և պատկանում են թագավորին»:

Սեպտեմբերի 20-ին մեկնեցինք Թավրիզից, ամենանպաստավոր յեղանակով. տաքությունը չափավոր եր և յերկինքը պարզ:

Սեպտեմբերի 24-ին անցանք Արաքսից, և թեև նախընտրական ուղիղ ճամբան չի անցնում դեսի յեղերքից, մեր խմբից շատերը վճռեցին գնալ այդ ուղիով, այցելելու համար Հին Ջուղայի ավերակները, և մենք գործադրեցինք մեր մտադրությունը, առանց պարսիկների գիտության կամ նրանց նկատառման: Մի կամուրջի ավերակները, մի փոքրիկ աշտարակ և մեծ տարածությամբ գերեզմանատունը, տեսնելու միակ առարկաներն են[2]: Գետը վիպականորեն վոլորվում է ավերակների շուրջը, սխրալի ժայռերի գահավանդով: Այս հնության գոլշ խորտակման մեջ մնում է առանձնակի մի փոքրիկ հայ գյուղ. նրա բնակիչները ուրախությամբ ընդունեցին մեզ, որովհետև քիչ անգամ բախտ ունեն տեսնելու քրիստոնյաների: Նրանք ծանրորեն գանգատեցին կառավարության հարստահարության դեմ: «Մենք միակ քրիստոնյաներ չենք, ասին նրանք, որոնք փախչում են ընության դիրկը՝ պաշտպանվելու համար. գետը անցնում է ժայռերի միջից մինչև մի ահռելի թագաստոց, ուր մեզ նման բարեպաշտ քրիստոնյաներ համբերությամբ տառապում են, և մեզ նման հույս են տածում փրկության համար»:

Վորովհետև շատ չեյինք հեռանում մեր ճանապարհից, վճռեցինք հետևել Արաքսի ընթացքին, մինչև մի քիչ հեռու Նախիջևանից, ուրնա հոսում է մի հարթ գետնի վրայից: Մի փոքր արահետ մեզ առաջնորդեց գետի զառիվայր ափերից, որ հետզհետե բարձրացնում եր և կամաց եր կապում մեզ վրա, այնպես որ ծածկում եր արևը մեզանից, և դա ներկայացնում եր Կովկասի Դարիալին [նմանող] կատարյալ մի տեսարան: Գետի մյուս յեղերքում տեսանք մի վոդոմելի գյուղ, բայց գետի արագընթացությունը թույլ չեր տալիս անցնելու մյուս կողմը: Բնակիչները ուրախության նշաններով ընդունեցին մեզ, և յերբ հեռացանք նրանցից, կանգնեցին գետի ափին նայելով դեպի մեզ վշտի ակնարկներով:

Մեր առաջնորդը վատահացրեց մեզ, թե մի բարձր ժայռի մյուս կողմը գտնվում է մի վանք, մատչելի նրանց համար, վորոնք ծանոթ են ճանապարհին և ճարտար մագլցող են:

Տեսարանը շարունակում էր մնալ անարկու, և հաճախ ստիպված եյինք ձիուց իջնել, վարպետի ցասկեյինք ժայռերի մութ անդունդների վրայից։ Գետն հանկարծակի մի դարձվածքով, զարմացանք տեսնելով մի դեղեցիկ վանք, մերձ մի փոքր գյուղի։

Բնակիչները, որոնք սկզբում կարծեցին թե մենք պարսիկ ենք, շփոթությամբ սկսան վազել, բայց իրենց առաջին անվստահությունից հետո, երբ գտան որ մենք քրիստոնյա ենք, բոլորը առաջացան դեպի մեզ, գլխավորած մի պատկառելի յեկեղեցականով, որ բարի գալուստ մաղթից մեզ, արցունք թափելով իր աչքից։ Զանգակները սկսան հնչել և ամբողջ խումբը առաջացավ դեպի յեկեղեցին, ուր աղոթքներ կարդացին, որին բոլոր ժողովականները արձագանգում եյին արցունք թափելով։

Յեկեղեցական արարողությունից հետո, մենք նստեցինք հանաչների վրա և ամեն մեկ գյուղացի իր բաժինը բերավ, հյուրասիրելու համար։ Բահանան, ըստ սովորականի, ուներ լավագույն դիմելի։ Վերջապես ուտքի յեկանք և բաժանվեցինք այս բարի մարդկանցից, որոնց հանձնարարեցինք համբերության, և մխիթարեցինք վերջան կարող եյինք։

Յերկար նրանք նայեցին մեր յետևից, մինչև բարձրացանք մի բլուր, որտեղից յերկիրը հարթ և մինչև Նախիջևան, և որի ստորոտում գտնվում է Բեսարաբասի (Besarabas) բերդը։ Ապա, կորցրինք վանքի տեսարանը, և պիտի հասանք մեր ոթևանը, շատ ցոհ մեր ընդունելության։

Քրիստոնյաների փոքրիկ հասարակությունը, որ ապահովության համար փախած է Արաքսի յեզերքը, ապրում է ձկնորսությամբ և անասնապահությամբ։ Կինդանիները արածեցնում են ժայռերի գառիվայրերում, այնպիսի տեղեր, որ յես յերբեք չեյի կարծում, որ մարդը կարող է ոտք կոխել, ավելի նվազ անկառավարելի յեզը։

Բավական ուշագրավ է որ Արաքսի ափերը, որ ամեն տեղ հարթ են, այստեղ կազմում են զրանիտյա մի անդունդ։

Սեպտեմբերի 29-ին դեսպանությունը հասավ Յերևան,

որ գետի յեզերքը, Սարդարի այգում, վրաններ եյին զարկած մեր ընդունելության համար։

Սարդարը թավրիզումն եր։ Նրա ամառային տունը, ավազանի շուրջը գտնք բազմատեսակ պտուղ, որ շատ զովացուցիչ եր այս յեղանակում։ Նրա տունը գտնվում եր գետի հանդիպակաց կողմը, և մեր ոթևանի մոտ, և ուրեմն, զարմանալի չեր որ նրա կանայքը, որոնց թիվը վաթսուն և, իրենց հետաքրքրությունը գոհացնելու համար պատուհանից մեզ եյին նայում։ Մենք եյ ամեն կերպ նայում եյինք նրանց մեզ եյին նայում։ Մենք եյ ամեն կերպ նայում եյինք վոր վշտի հայացքներով եյին նայում դեպի մեզ։ Ներանցից տեսանք բազմաթիվ պզտիկ բանտարկյալների դեմքը, վոտանք ճաշակավոր եյին հագնված։ Այս հետաքրքիր տեսարանը տևեց մի քանի ժամ, յերբ մի ներքինի յեկավ մեր ճամբարը, ազուշ մտադրությամբ՝ վորպեսզի արգելի մեզ նայելու տիկիններին, բայց տեսնելով վոր միայն ծիծաղում են նրա վրա, նա հեռացավ, և շուտով տեսանք վոր նա անդիմորեն մտրակում եր խեղճ կանանց։ Ներանք բոլորը անհետացան, բացի մեկից, վոր կարող եր լինել կամ նախասիրվածը, կամ մեծ ուժի տեր, վորովհետև նա խլեց գավազանը ներքինու ձեռքից և լավ ծեծ տվավ նրան։ Ապա, նա գավազանը պատուհանից դուրս նետեց և շարունակեց նստել այնտեղ մի քառորդ ժամ, վորից հետո վոտքի յելավ և հեռացավ։ Բոլոր փեղկերը փակվեցին, և այս դրոսանքը վերջ գտավ։

Հոկտեմբերի 2-ին, ուրախության բարձր ազազակների մեջ հասանք մեր յերկրի սահմանը։ Գտանք կոզակների մի խումբ, նռնաձիգների մի գումարտակի և դաշտային թնդանոթների հետ՝ պատրաստ ընդունելու մեզ, և պարսկական պահակախումբը ճամբվեց մեծ նվերներով։ Նաչար Ալի բեկ խանը մի քանի որ առ մեզ հետ, վորովհետև դեսպանը և դեսպանության անդամները շատ կապված եյին նրան։....

Դեսպանությունը Թիֆլիս հասավ հոկտեմբերի 10-ին, այդ որը լինելով այդտեղ ժամանման տարեդարձը, մի տարի առաջ։

ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոցեբուն պարծենում է թե ընարհիվ Յերմոլովի ջանքերին բոլոր նեաները վերջնականապես ճշտվեցին, մինչ Յերմոլովը վոչ մի դրական համաձայնություն ձեռք չբերեց և պարսիկները ընդհանրապես կասկածանքով ու անվստահությամբ էին վերաբերվում ռուսական դեսպանության հանդեպ։ Ջոնսընն, վորի ուղեգրություններ տալիս ենք հայորդ գլխում, ասում է թե, «... անբառնին հետապնդում էին նրանց [ռուսներին] և հսկում նրանց բոլոր շարժումների վրա, և արդելված եր ամեն հարաբերություն պարսկաստանի բնիկների հետ։ Սայքս իր «Պարսկաստանի պատմության» B. հատորում գրում է. Յերմոլովը առաջարկեց՝ կազմել մի դաշնակցություն Թուրքիայի դեմ, թուլյատրել վոր ռուսական մի բանակ անցնի Աստրապատից և Խորասանից՝ արշավելու համար Հնդկաստանի վրա, հատատել ռուսական մի զորաբանակություն Ինջուում և պարսկական բանակի կազմակերպման համար տրամադրել ռուս սպաներ. «Այս բոլոր առաջարկները քաղաքավարիորեն մերժվեցին և ռուսական պատվիրակը հեռացավ ընդունելությունից հետո մեկնեց բնականոնավորած նվերներով։ (Sykes, «History of Persia», հատոր B. էջ 414—415)։

Անգլիացի մի ուղեգիր, Ռոբերտ Լայալ, վոր այդ շրջանում Անդրկովկասումն եր գտնվում, նա հաջողել և ձեռք բերել գեներալ Յերմոլովի ձեռագիրը և հրատարակել իր ուղեգրության յերկրորդ հատորում։ Յերմոլովը իր հուշագրում ամենը մորոշ կերպով խոսում է կատարված բանակցությունների մասին։ Լայալի ուղեգրությունը սակայն հաջորդ հատորում Յերմոլովի հուշագիրը տես. Robert Lyall, «Travels in Russia, the Krimea, the Caucasus and Georgia», հատ. B. էջ 77—155։

2 Ջուլայի կամրջի ափերակներին. աջտարակի և գերեզմանատան մասին խոսում են մանրամասնորեն Ուզլեյն ու կեր Փորտերը, վորոնց ուղեգրությունները գետեղված են այս հատորում։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԴ. ՋՈՆ ՋՈՆՍԸՆԻ

(1817 Թ.)

Գնդ. Ջոն Ջոնսընն Հնդկաստանի բրիտանական բանակի սպաներից ե, և վոր ինչպես ինքն ե ասում իր ուղեգրության առաջաբանում, յերեսուն հինգ տարի Հնդկաստան ապրելուց հետո այցելում եր Անգլիա՝ անցնելով Պարսկաստանից և Հայաստանից։ Մենք տալիս ենք նրա ուղեգրության այն մասը, վոր վերաբերում է Հայաստանին և Անդրկովկասին։ Գնդ. Ջոնսընին ընկերանում եր հարյուրապետ Սալտըը, և նրանք Սուլթանիեյի մերձակայքում հանդիպեցին Յերմոլովի դեսպանության, վորի մասին հիշատակում է Կոցեբուն իր ուղեգրության մեջ։ Գնդապետ Ջոնսընի ուղեգրությունը հրատարակված է Լոնդոնում 1818 թվին, հետևյալ խորագրով.—

A Journey from India to England through Persia, Georgia, Russia, Poland and Prussia, in the Year 1817. By Lieut. Col. John Johnson C. B., London, 1818.



Ջուլֆայում գտնվող վանքեր։

Ա. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՅԵՐՄՈԼՈՎԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ*

Հուլիսի 13 [1817] — *Մեկնեցինք դեպի Թուրքմենչայ։ 22 մղոն հեռու։ Ճանապարհի մեկ երրորդ մասը վատ եր...։ Մենք մի նամակ ուղարկեցինք ռուսական դեսպանի [Ցիցիանովի] քարտուղարին, հայտնելով թե մենք նրանց մոտ կլինենք հաջորդ առավոտը։...*

Մեր նամակի պատասխան ստացած լինելով ռուսական դեսպանից, վոր ասում եր թե ուրախ պիտի լիներ տեսնելու մեզ, մենք ուղղվեցինք դեպի Շեհնգուլաբադ (Shaingulabad) մերձակայքը, ուր բանակում եր նա, պլիսավոր ճանապարհից մոտ չորս մղոն դեպի հյուսիս, բարձր լեռներով շրջապատված մի խոր ձորի մեջ, վորտեղ նա ընտրել եր տաքից ապաստան գտնելու համար։

Մեր իջևանից մեկնելուց հետո սկսանք բարձրանալ մի լեռ, և շարունակեցինք [անցնել] կանաչութեյամբ ծածկված մի յերկրից մինչև Ուսդենշի (Usdenshee), տասնյերկու մղոն [հեռու] մի գյուղ, ուր բնակում են ավելի աշխատասեր հայեր։ Այստեղ մշակութեյան տեսակետից վերջապես նպատակահարմար փոփոխութեյուն եր նկատվում, և մենք պատահութեյուն ունեցանք տեսնելու քրիստոնեութեյան ունեցած գերազանցութեյունը մահմեդական կրոնի վրա, հասարակութեյան վիճակի բարելավման ու ներդաշնակման տեսակետից։ Գյուղի կենդանի ու զվարթ յերևույթը, ուր տեսնվում եյին կանայք, վորոնք գնում եյին ամեն ուղղութեյամբ և աշխատում ոգտակար պարթևրում, համեմի մի հակադրութեյուն եր կազմում մուսուլման բնակչութեյան պերիզմանական անշարժութեյան, վորին մենք վերջերս ականատես եյինք։...

* Johnson, եջ, 198 — 208։

Ուսումնասիրելով մեզ հետացանք գլխավոր ճանապարհից և հետևեցինք մի ուղու, [որ անցնում էր] լավ մշակված մի ձորից մինչև մի բնակված գյուղ, չորս մղոն այն կողմ։ Այն տեղից առաջ անցանք մի խոր մշակված ձորից մինչև պետի ճամբարը, հաստատված Շենգուլապատ գյուղի մոտ։ Փառնք որ ամբողջ գյուղը գրավված էր պետական մարդկանց և կամ պարսիկ պինվորների կողմից, որոնք ընկերանում էին նրան, և գրավել էին գրեթե բոլոր տները։ Պետին ընկերացող մեհմանդարը (mehmandaur) գյուղի բոլոր կանանց կամ հետացրել էր և կամ փակել պատով շրջապատված ծակերի մեջ, ուր նրանք ամենափոքր աստիճան անգամ չէին տեսնվում։ Մենք կանգ առինք մի պարտեզի ծառերի տակ, ուր մենք նախաճաշեցինք և լուր ուղարկեցինք իմանալու համար, թե կարելի կլինի տեսնել նորին գերազանցությունը։ Բիչ հետո մի թիկնապահ չեհավ բերելու պետական հրավերը՝ ճաշելու նրա հետ ժամի մեկին։ Ըստ այնմ, մենք որոշված ժամին նրան գնացինք ամբողջական հագուստով և ընդունվեցինք ամեն հնարավոր բարեացակամությամբ։ Ասաց, թե ինք լսած լինելով որ մենք վրանները չունենք, հրամայել է որ մի քանի հատ վրան զարնվի իրեն մոտ մեզ համար, և հույս հայտնեց որ մեզ իրեն հյուրը պիտի համարենք, որքան ժամանակ կամենանք մնալ այստեղ, ավելացնելով թե ինչ որ մենք ցանկանում ենք, և ինչ որ իր ձեռքումն էր, նա ուրախությամբ պիտի կատարի մեզ համար. այս բարեացակամությունը վերաբերում էր անցագրի, հանձնարարականների և այլնի մասին։ Մենք կանգ առինք այստեղ հաջորդ օրը. արդար և նկատել թե չես կարող նման պարագայում այնքան պարտավորված չեզ իմ կյանքում մինչև պետի՝ գիշերել Ջերմոլովի բարությամբ։ Նա մեծ արժանիքի տեր մի սպա է, վայելում է իր վեհապետի վստահությունը, որ նրան ոգտագործել վերջին պատերազմներում Ջրանսիայի դեմ, տալով նրան մեծ պատասխանատվություն ու վստահություն պահանջող հրամանատարություն։ Նա հրամանատար էր 8000 զինվորի,



բաղկացած Ռուսաստանի կայսեր և Բրուսիայի թագավորի թիկնապահներից, նրը առաջանում էին Փարիզի վրա վճռ միայն նա, այլ նաև այս մեխանի բոլոր սպաները, ինչպես նաև դեսպանության երկու խորհրդականները՝ Մ. դը Նեզրի և պարոն Սոլոլով, նշանավոր արժանիքի տեր անձնավորություններ են, որոնցից շատերը ստացել են զանազան խոչեր և պատվանշաններ։ Գեներալը ունի տասնութը տարբեր կարգերի պատվանշաններ, որոնց շարքին նրանք տասը, բայց վորովհետև նա միշտ պարզ և հագնվում, վորևե [պատվանշան] չեր կրում։ Դեսպանության այս պարոնները բոլոր Ռուսաստանի առաջնակարգ ընտանիքների սերնդից են, և դատելով նրանց խոսակցություններից, վոր ֆրանսերեն լեզվով և, երևում է, վոր նրանք շատ լավ կրթություն ունեն։ Դեսպանությունը բաղկացած է [հետևյալներից]՝ գեներալը, դեսպանության երկու խորհրդականները, մոտ երեսուն տարի, մի նկարիչ, մի բժիշկ, մի երկրաչափ, ռուսական հեծելազորից քսանչորս գնդապետներ, չորքեղ և այլն։ Խորհրդականներից մեկը, Մ. դը Նեզրին, մի հոյակապ պարոն (կարծում եմ կ. Պոլսից), մեզ տեղեկացրին թե պետական խորհրդի անդամ է, և նրա ազգականները կարևոր տեղ են գրավում Ռուսաստանում։ Ռուսական կառավարության մեջ շատ աչքառու մի երևույթ է, այն վոր վորևե ազգի անհատ՝ դաշնակից կամ հպատակ այդ իշխանության, տալու ապագա կարիք ունի պետական ծառայության և կարող է հասնել ամենաբարձր պաշտոնի։ Գեներալ Յերմոլովը ապացուցելու համար ինձ, թե վերջին տիրապետող և այս քաղաքականությունը, շատ պարագաներ մատնանշեց, և հայտարարեց թե ամբողջ Լեհաստանում չորսից ավելի ռուսներ չկան պետական ծառայության մեջ, Մեծ Դուքս կոստանդին միասին հաշվելով, թեև նրա կառավարության կենտրոնը, մայրաքաղաքը գտնվում է վարշավայում։

Յես չեմ կարող չանդրադառնալ այն փաստին, վոր ձիշտ դրա հակառակ քաղաքականությունն է գործադրվում մեր հնդկական կառավարության մեջ, թեև տարբեր պատճառնե-

րից առաջացած։ Այս քաղաքականության հետևանքների մասին, առիթներ ունեցած եմ մի գաղափար կազմելու, վորպես պինվորական իմ կյանքի անձատուկն մասը՝ [երեսունհինգ տարի] անցկացրած լինելով Հնդկաստանում. համաձա, ավելի շուտ ավելի շուտ կերպով, նկատած եմ դրա ընդհանուր հետևանքները, և նշանավոր բնիկների անհպատա տրամադրությունը մեր [անգլիացիների] հանդեպ։ Հասկանալի դարձնելու համար, թող թույլ տրվի ինձ բազմատիպ հնդկական քաղաքականության մեքանի կետերը, խորհրդածության առարկա լինող պետության քաղաքականության հետ։ Ռուսական կառավարությունը, երբ նոր կալվածներ և ձեռք բերում, ինչպես օրինակի համար վրաստանը, և կյանք կայունության, շատ զգույշ և զգոն չգիտե այն կարևոր անձնավորություններին, վորոնց գտնում է իշխանության գլուխ, կամ վորոնք դիրք են գրավել կյանքից առաջ։ Նրանք պաշտոնանկ չեն անում հասարակական պաշտոնյաներին, ճամբա բանալու համար ռուսական պալատի խամաճիկներին կամ նախասիրածներին, ընդհակառակն նրանք բոլորին թողնում են իրենց տեղում. իրենց պաշտոնների մեջ, ինչպես կհաստատում, քիչ բացառությամբ, նրանք [ռուսները] քալերում են քան խախտում հասարակական դիրքեր գրավող պանդան անձնավորությունների փառասիրական ձգտումներն ու ապագա բարձրացման հեռանկարները... [Հեղինակը հպատակ ժողովուրդների հանդեպ ռուսական քաղաքականության գովեստն անելուց հետո, քննադատում է անգլիական քաղաքականությունը Հնդկաստանի ժողովուրդների հանդեպ, և ասում է թե ամեն մարզերի մեջ անգլիացիները զգայնել են տալիս կիվրոպացիների գերազանցությունը և բնիկներին պահում են տարական վիճակում. այսպես անգլիացիները իրենց ձեռքն են պահում վճռ միայն պինվորական, վարչական և դատական բոլոր դործերը, այլ նաև առևտուրը։ Ձեվ այս քաղաքականությունը, ասում է նա, տեղի չի տալիս դժգոհության և հարատև կռիվների։ Մանրամասնությունների համար տես Johnson, էջ 202—205։]

... Դեներալ Յերմոլովը, առաջին րոպեյից, յերբ նրան ներկայացվեցինք վորպես բրիտանական սպաներ, մեզ կողմ թողեց պաշտոնական ամեն վերապահում մեր հանդեպ, և մեզ հետ վարվեց շատ սիրալիր ու բարեացակամ կերպով, վորպես թե մենք վաղուց վայելած լինեյինք նրա ծանոթությունն և նույն իսկ արժանացած նրա հարգանքին։ Նա ցանկություն հայտնեց, վոր մենք առանց քաշվելու դիմանք նրան մեր ճանապարհորդական հագուստով և յերեկոները անցկացնենք նրա վրանում։ Նա ամեն կերպ ցանկանում եր պարտավորեցնել մեզ։ Նա անկեղծորեն պահանջեց, վոր մենք իրեն տեղեկացնենք այն ուղեգծի մասին, վոր մենք մտադրված եյինք անցնել Ռուսաստանից, և հուշ հայտնեց, վոր չեթե հնարավոր և, մի որ ևս մնալ նրա մոտ։ Այս հրավերը մենք չեյինք կարող մերժել, և ի վերջոյն խնդրեցինք, վոր նա և իր շքախմբի պարոնները թույլ տան մեզ տանել այն նամակները, վոր նրանք ցանկանում են ուղարկել իրենց ընտանիքներին կամ բարեկամներին, վորոնք գտնվում են մեր անցնելիք ճանապարհի վրա, և մենք գիտեյինք վոր նրանք միջոց պիտի ունենային ընդունելու մեր այս առաջարկը, [այն պարագայում] միայն, չեթե մենք մեկ որով հետաձգեյինք մեր մեկնումը։...

Վորովհետև հաջորդ առավոտը մենք կանուխ պիտի մեկնեյինք ճամբարից, ցանկություն հայտնեցինք յերեկոյան հրաժեշտ առնել գեներալից, վորպեսզի խուսափենք նրա սովորական հանդուցյան ժամը խանգարելուց։ Սակայն, նա վստահացրեց մեզ, թե ինքը կանուխ և վեր կենում, և հայտնեց թե տակավին վերջացրած չև իր նամակները։ Վորովհետև մենք համոզված եյինք վոր այս նամակները անհատական բնույթ եյին կրում և գրված եյին հանգստացնելու համար Ռուսաստանի իր բարեկամների միտքը իր կացության մասին, մենք պատրաստակամությամբ ու սիրով հանձն առինք այս հապաղումը, և առավոտ ժամը յերեքին՝ ուղարկելուց հետո մեր ծառաներին ու բեռները, սպասեցինք մինչև ժամը վեցը, յերբ մեզ իմացրին, թե նորին գեներալ-

պանությունը վեր և կացել և պատրաստ և ընդունելու մեզ։ Հետևաբար գնացինք հրաժեշտ առնելու նրանից, յերբ, ի մեծ զարմանս, գտանք վոր նա ճիշտ նոր եր փակում նամակները մեծ ծրարը և գիշերվան մեծագույն մասը նա անց եր կացրել գրելով, վերջացնելով, նա բերեց և հանձնեց մեզ՝ հաջորդաբար հիշատակելով այն սպաների անուններըր, վորոնց մենք պետք եր տայինք [նամակները]։ Այժմ միայն հասկացանք, վոր դրանք հասցեագրված եյին՝ Ռուսաստանի այն գլխավոր վայրերի հրամանատարներին, վոր տեղերից մենք պետք եր անցնեյինք, սկսած Պարսկաստանի սահմանի ռուսական կայանից, և վերջանում եյին յերկու նամակով վարշավայում, Լեհաստան, վորոնք ցանկանում եր, վոր մենք հանձնեյինք մեր ձեռքով — մեկը ուղղված եր մեծ դուքս Կոնստանդին բանակի ընդհանուր հրամանատարին և մյուսը նորին կայսերական բարձրության մեծ դուքսին։ Այս նամակներում իր անձնական շահերին վերաբերող վոչ մեկ բան չկար։ Յես պարտական եմ ասելու, այն րոպեին յերբ դրանք տրվեցին ինձ, յես ազդվեցի ու չփոթվեցի մեր հանդեպ ցույց տրված բարեացակամության համար...։

ԹԱՎՐԻԶՈՒՄ *

Հունիսի 23. — Վեղբերին այցելելուց հետո, այցելեցինք Աբբաս Միրզային, կարմիր դուլպայով և պալատական տոլորական զգեստով։ Տեսակցության ընթացքում երկու կամ երեք անգամ խոնարհության արարողությունը կատարելու։ Իշխանը շատ սիրալիր եր, և շատ հարցուփորձեր արեց Հնդկաստանի, Անգլիա մեր վերադարձի և ուրիշ պատահական հարցերի մասին։ Պահանջեց, որ ես խորհրդակցեի հարուրապետ Մոնտիեթի հետ սահմանի պաշտպանության մասին, և քննեի այդտեղի ամրությունները. հաջորդ որը ես ընդառաջեի այդ առաջարկներին։

Հունիսի 24. — Ցերեկոյան թնդանոթաձիգ հարյուրապետ Լինդսեյի և ճարտարապետներից հարյուրապետ Մոնտիեթի ընկերակցությամբ ձիավարեցինք քաղաքի պարիսպների շուրջ, որոնք իշխանը հնարավորության սահմանում այժմ ամրացնում է, բայց վողբալի են նկատել թե, փոխանակ լսելու հարյուրապետ Մոնտիեթի խորհրդին, նա վարվում է ըստ կամս, և թվում է թե քաղաքի պաշտպանությունը մնում է նրա գլխավոր մոլլայի աղոթքի և խալաթների չանքերին, որոնք, սակայն, ի դուր են ռուսական թնդանոթների դեմ։

Քաղաքը շրջապատված է երկու պարսպով, առաջինը կամ ներքինը ցեխից է, պաշտպանված աշտարակներով, ամբողջը մոտավորապես քսան վոտք բարձր, ունի մի հողակույտ, որից ծակերը բացված են քարեր նետելու համար։ Այս, ինչպես նաև պատնեշը և աշտարակները, բոլորը դասալիք են և արդեն ամեն ուղղությամբ վերից վար

* Johnson, էջ 210—215։

խախուտ են ու ճեղքված, մանավանդ պատերակները, այնպես որ մի քանի հարված բավական և ամեն ինչ խորտակելու։ Նույնիսկ իր ներկա վիճակում ավելի վտանգավոր և զինվորների համար, որոնք թշնամի կրակի տակ պիտի գտնվեն, որովհետև աղյուսներ ու քարեր առաջին հարվածին պիտի ցրվին ամեն ուղղությամբ։ Այս տեսակ պաշտպանությունն, բարձր ու նեղ պարիսպներով, ավելի առարկելի չի այս տեղի համար, քան ուրիշ տեղի, որովհետև ներկայ շարժը այնքան սովորական և ամեն տարի, այդ պատճառով հաճախ խախտվում են այս պարիսպները, որոնք այնուհետև ուրիշ բանի չեն ծառայիր, բացի արգելք լինելուց թշնամու համար։ [Ապա, մեր միայն թնդանոթ չունենալով թշնամու համար։ [Ապա, մեր ուղեկիրը նկարագրում և արտաքին պարիսպն ու խրամը, և դնում և որ իրր ամրություն ներկուքն ել վոչ մի արժեք չեն ներկայացնում։ Նմանապես մերձնաբերդը զուրկ և վորևե նշանակությունից և դյուրությամբ կարող և գրավվել թշնամու ձեռ։ Սրահների վրա հողով ծածկված փայտյա կամուրջներ կան, և ավելացնում և, թե պարսիկները, հնդիկների նման սպետ են պաշտպանության արվեստի մեջ։]

Մեծ մզկիթը և ամրացրած պալատը, շատ բարձր ու դանդվածային հին շինքեր, ներկուքն ել խախտված են և վերջին երեք տարվա ընթացքում մեծապես քայքայված յերկրաշարժից. այսու ամենայնիվ բնիկները շարունակում են շինել ամեն ուղղությամբ շենքեր բարձր պատերով։

Հունիսի 25. — Միևնույն պարոնի հետ գնացինք ամբրացած պալատը, տեսնելու համար հրանոթային կայանը, և ցավում եմ ասելու, թե նա գտնվում և շատ վողորմելի վիճակում,...

Այսօր վարձու ձի չգտնելով և տրամադիր չլինելով սպասելու մինչև վոր Թիֆլիսից կամ Թեհրանից ձի հասներ, ուղիից ոտավեցինք այցելելու Կայմակամին (Kaima Khaum) կամ մինիստրին՝ պահանջելու համար, վոր նա հրաման անի վորպեսզի հայթայթվի վեց փոխադրական ձի, Յերևան տանելու համար մեզ։ Մի ուրիշ դժվարություն առաջ չեկավ

ընթացիկ դրամի վերաբերմամբ. կերևում եր, որ ինչ դրամ
ել որ մենք վերցնեյինք մեզ հետ այս տեղից, պիտի կոր-
ցընեյինք, միայն մենք նախընտրում եյինք Բաջոգլիճ
(Bajoglee) կամ հոլանդական դուկատը, որ վոսկի լինելուն
համար ընթացիկ և ամենուրեք։

Այս միջոցին պարսիկները մեծ հուզումի մեջ եյին՝ ռուսա-
կան մատակարարությունների պատճառով, և դանելով որ Հնդկա-
տանի մեր կառավարությունը թույլ չի տալիս, որ իր սպա-
ռներից կամ մարդկանցից որևե մեկը մնա պարսկական ծա-
ռայության մեջ, նրանք իհարկե ցանկանում եյին ընդունել
մեր հակառակորդներին՝ ֆրանսիացիներին։ Ներկայումս,
այսինքն մեր ճանապարհորդության շրջանում, այդ ազգից
հինգ սպաներ կային և չորս [հոգի] Իտալիայից կամ Միկի-
լիայից, վերջերս ընդունված իշխանի [Աբբաս Միրզայի]
կողմից, որ նրանց նշանակել և վաշտերի հրամանատար
բության, և այլն։ Մի կարճ ժամանակ ընդունված եր անգլիա-
կան մարզանքը, բայց վերջերս այդ դանցառել են։ Անգ-
լիացի սպաներին արգիլել որ բնիկ իշխանությունների
ծառայության մտնեն՝ շատ առարկելի մի քաղաքականու-
թյուն և, վորովհետև դժվար և համոզվել, որ եթե նրանք
այդ կերպ չոգտագործվին, նրանց պատկանությունը այլապես
ոգտակար պիտի լինի անգլիական շահերին. անտարակույս
այդպիսի հանձնառությունները վոչ միայն պետք և թույ-
լատրվին, այլ նաև պետք և քաջալերվին այնքան, որ կա-
մեցն ռուսաստանցիներին, իշխանի [Աբբաս Միրզայի] ծառա-
յության մեջ կան մոտավորապես 1000 ռուս և վրացի զին-
վորներ, վորոնք ժամանակ առ ժամանակ դասալիք են լինել
իրենց սեփական [բանակից] և ընդունվել են նրա կողմից։

Յերևում և որ նա [Աբբաս Միրզան] անուշադիր չե այն
միջոցառումներին, վորոնք նպատակ են բարելավելու իր
կառավարած նահանգի կացությունը։ Նա վարձել և Մր. Ար-
մըստրոնգին (Armstrong), մի գիտնական մարդ և հիանալի
մեքենագետ, վերահսկելու համար գործարաններին և ուրիշ
հանրային գործերին, տարեկան 800 թուման կամ ֆունտ

ստերլինգ ռոճիկով, և նրա ծառայությունը շատ արժեքա-
վոր և յերկրի համար։ Գարսիկները արագ ըմբռնում ունեն,
և ընդունակ են սովորելու վորևե արվեստ կամ գիտություն,
կասկած չկա վոր նրանք պիտի ոգտվին այնքան կարող մի
հրահանգչից։ Մր. Ու. Ուիլիըմսըն (W. Williamson), մի հան-
քարան, ինչպես նախապես հիշատակել ենք, այժմ աշխա-
տում և պղնձի հանքերում, շահի կեսը ստանալու խոստու-
մով, կամ յեթե նա նախընտրություն տա, տարեկան 1200
թուման վարձահատուցում։ Բայց, պարսկական կառավարու-
յան գործունեության մեջ կորովի պակասը կա, վոր ար-
գելք և հանդիսանում նրան տալու պահանջված ոժանդակու-
թյունը, այնպես վոր նրա բնակությունը այստեղ ապար-
դուն և, և անհավանական չե վոր նա զզված շուտով վերա-
դառնա, վոչ իլ յենթադրվում և վոր նրա մեկնումից հետո,
պարսիկները նեղություն պիտի կրեն իրենք շարունակելու
[հանքերի շահագործումը]։ Այս ընթացում կան պղնձի, կա-
պարի, քարածուխի, աղի, ծծմբաթթվի (մինդեղ) և ծծմբի հան-
քեր, ինչպես նաև մարմարի արժեքավոր քարահանքեր և
այլն, վորոնք խելացի ու հարատև մի վարչություն ներքո
կարող են արտադրել մեծ հարստություն։ Բայց կառավարու-
թյունը՝ անգործունեության ազգային հատկանիշի արտա-
հայտությունն և. պարսիկը տարվում և հաճույքով ու վա-
յելքով. նա ծայրահեղորեն անհոգ և, հետևաբար հավանական
չե, վոր նա հաջողվի հարատև գործունեություն պահանջող
ձեռնարկությունների մեջ։

Բանակը, ասում են թե բաղկացած և տասնյակու վաշ-
տից, բայց նրանք զենքի տակ են տարվան մեջ միայն յե-
րեք ամիս, զինվորները միացյալ ժամանակը անց են կաց-
նում գյուղերում։ Սեպոյի (Sepoy) կամ բնիկ զինվորի ռոճիկը
տարեկան տասը թուման և, յերբ զենքի տակ և, նա ստա-
նում և որական ուրը հարյուր գրամ հաց, յուրաքանչյուր
զինվորին տարեկան մեկ թուման և տրվում հագուստի հա-
մար, և ամեն յերեք տարին մի անգամ մի մեծ վերարկու։
Սա կարելի յե բավականաչափ համարել։ Հետևակ թնդանո-

թաղիքը սառնում և տարեկան տասնհինգ թումանի Պարսիկ սպանների վճարումը տարբեր և տարբեր անձերի վերաբերմամբ. յուրաքանչյուր [սպա] կառարում և իր սակարկութեյունը, այնքան նպաստավոր վորքան կարող և, և նրա հետ քանակցողը իսարկե աշխատում և այնքան չափավորել վորքան կարող և։ Մեր հնդկական բանակից հետևակազորի և հրետանու յերկու բարձրատիճան սպաներ առանում են տարեկան 850 թումանի, փոխանորդները ունեն 350. փաստորեն մի թումանի կամ մի ֆունդ ստերլինգ որական արժում և վորևե անդլիացու, վոր կարող և կատարել սպայի պարտականութեյունները։ Իշխանին պատկանող մոտավորապես 24 թնդանոթներ կան, բայց լեռնային հրետանուց, բայց ռազմամթերքը, ինչպես ասել ենք, շատ պակասավոր և։

Այստեղի գլխավոր անձնավորութեյունների անունը և տիտղոսը հետևյալն և.—

Կայմակամ, կամ *Միրզա Բոզորգ Իսաա* (Khym Mekam, or Meerza Boozoorg Issau):

Աբուլ Քասիմ (Abool Kaussim), *իշխանի մինիստրը*։

Միրզա Մոհամեդ Ալի (Meerza Mahomed Ally), *գլխավոր Մուստոֆի կամ քարտուղար*։

Միրզա Թուքի (Meerza Tucky), *յերկրորդ Մուստոֆի*։

Միրզա Հասան (Meerza Husaun), *յերրորդ Մուստոֆի և պատերազմական քարտուղար*։

Ֆութեհ Ալի խան (Futteh Ally Khaun), *հիշատակված գեներալ Մալկոլմի կողմից՝ իբր Պարսկաստանի պատմութեյան մեջ, քաղաքի կառավարիչն և։ Այս պարոնը Թեհրեդ ընտանիքից և։*

Գլխավոր վաճառականներն են՝ Սեյիդ Ահմեդ (Syed Ahmed) *և Սեյիդ Աբդուլ Գանի* (Syed Abdool Gauny):

Հոլանդական դուկանն այստեղ անցնում և վեց ռուբլի, նվազ մեկուեքսրորդ, և յերեք մի ճանապարհորդ ղրամ պահանջև, 15—18 տոկոս շահ կա Հնդկաստանի վրա փոխանակելիս տալով, վորպեսի փոխանակագրերի մեծ պահանջ կա։

Վորովհետև իշխանը այստեղ իբր սեփական փողերանոցն ունի, մենք հետաքրքրվեցինք տեսնելու նրա արտադրութեյունը, վորոնցից մի քանիսը յես պահել եմ։

Ոսկի, պտուղ և զրեթե բոլոր առարկաները, բացի թեյից, շաքարից, մեղրամոմից և յեվրոպական ապրանքներից, շաքարից, մեղրամոմից և յեվրոպական ապրանքներից, կարելի յե ձեռք բերել այստեղ չափազանց չափավոր գներով։

Գ. ՔԱՎՐԻՋԻՑ ՅԵՐԵՎԱՆ *

Թեև պարսիկները ռուսական դեսպանությունը ընդունել էին հարգանքի նշաններով, սակայն չես մեծ ցավով տեղեկացա, որ մխիթնի սպաներին և նույնիսկ գեներալ Յերմոլովի հետ առանձնապես չէին վերաբերվել այն հարգանքով ու ուշադրությամբ, որին նրանք արժանի էին։ Հիբալով, երբ մենք նրանց հետ էինք Շենգուլապատի մոտ, մենք որոշ գանգատներ չլսեցինք իրենց որպահիկի համար պահանջված պարենամթերքի հայթայթման թերությունների վերաբերյալ։ Նույնպես, հայտնեցին թե սերտորեն հետապնդում են նրանց և հսկում նրանց բոլոր շարժումների վրա, և Պարսկաստանի բնիկների հետ ամեն հարաբերություն արգելված է։

Յես նկատում եմ, որ պարսիկները շատ ամբարտավանորեն են խոսում, իբր թե իրենց գինվորական հիմնարկությունների վերջին աճումը՝ նրանց դարձնում է բավական զորավոր՝ ուղղակի և բացորեն հակառակելու ռուսական տեսակետներին։ Նրանք հիշում են միաժամանակ, որ իրոք նախապես հաջող կերպով դիմադրել են ռուսներին. նրանք ներկա դիպլոմատիկական գործը համարում են վախի արդյունք. վոչ ել նրանք համոզվում են, որ ներկա դեպանությունը [Յերմոլովի] պետք է բոլորովին այլ կերպ նկատել, քան նախապես ուղարկված [մխիթնները], և թե նրա հետ պետք է վարվել մեծ հարգանքով։ Թվում է թե նրանք գիտակից չեն իրենց պառակտված վիճակին, իրենց քաղաքական հետամնացության, վոչ ել թվում է թե նրանք տակ են այն փոփոխության, որ կատարված է ռուսական քանակի մեջ, կարողանալ այն գերազանցությունը, որով ռուս սպաները ընդհանրապես նշանավոր են, և մասնավորապես այն բարեդեպ հատկությունը, որ բարձրասիճան սպաները կատարել են վերջին պատերազմի ընթացքում։ Նրանք [պարսիկները] բնավ տրամադրություն չունեն հավատ ընծայելու այն տեղեկություններին, ըստ որում Ռուսաստանը այժմ իր տրամադրության տակ անսահման ուժ ունի, բայց այս լուրերը համարում են լոկ քաղաքական անապարծություններ՝ ազդմամթերքի մի տեսակ, որից առատորեն ունեն իրենց իշխողները։...

Մեր թավրիզ գտնված միջոցին, հակառակ բարեկամների բոլոր ջանքերին, մենք չկարողացանք ձեռք բերել վոչ ձի, վոչ ջորի և վոչ ել նույնիսկ ուղտ, մեր բեռների փոխադրության համար։ Վեց [ձիուց] ավելին չէինք ուզում և հավանորեն դժվարությունը սրանումն եր, որովհետև այդքան փոքր թիվը չէր թափդրել եր տալիս որ մենք բավականաչափ ապահովություն չլինենք՝ պաշտպանվելու համար այս վայրենի յերկրում, այնքան մոտ ռուսական սահմանին և այնքան վխտացող քուրդ և ելիաթ ավազակախմբերով։

Այս պայմաններում, Մր. Կորմիքի բարի միջամտությամբ՝ Աբբաս Միրզայի հրամանով մենք ձեռք բերինք վեց չուփեր (chupper) կամ թղթատար ձի, որ մեզ պիտի հայթայթվեր կայարանից կայարան։ Իշխանը նույնպես պարտավորեցրեց մեզ՝ տրամադրելով իր ջորիներից վեց հատ, կրելու համար մեր բեռները առաջին քառասունչերեք մղոն յերկար ճանապարհի վրա, Թավրիզից մինչև Մարանդ (Mehraund), նաև մեզ շնորհեց մի պաշտոնական հրաման, հայթայթելու բավականաչափ մթերք մեզ և մեր ձիերի համար Թավրիզից մինչև Յերևան, նույն անունով շրջանի մայրաքաղաքը, ուր մի այլ մեծ անձնավորություն գտնվում է իշխանության գլուխը։...

Հունիսի 27. — Ճաշից հետո, ժամը մոտ իննին, մի գե-

* Johnson, եջ 216—230։

գեղիկ լուանի լուսով գիշեր մենք Թավրիզից մեկնեցինք դեպի Մարանդ, քառասուն վերստ մղոն հեռու։ Նախ, անցանք տների ավերակների միջից, և մոտ վերկու մղոնից անցանք Ալի գետի վրայից մի նեղ կամրջից։... Այս կամրջից տասը-վերստ մղոն այն կողմ, ճանապարհի ձախ կողմում գտնվում է մի աղային ու ճահճախուտ դաշտ, և ալ կողմում մի չոր հողամաս և մի քանի բլուրներ։ Այս հողամասը ինքնին լավ է, բայց կտրատված է առվակներով՝ վատոգման համար։ Այժմ մենք անցանք մի ուրիշ կամրջից վերկու կամարով, մի գետից վոր հոսում է դեպի ձախ, և մերձակայքումն է գտնվում Սահալին (Sahalin) գյուղը։ Մինչև այստեղ ջուրը աղի չէ։ Մենք տասնվերկու մղոն առաջ վերթալով եկանք Սոֆիան (Sophiana)։ Այս գյուղի ավերակներից հեռանալով և մի քանի փոքրիկ վտակներ անցնելուց հետո ուժը մղոն անցանք լեռների միջից, վոր քիչ անդամ կես մղոնից ավելի լայնություն ունի և պատված է արոտով։... Այստեղ գտանք մի ավերակ քարվանսարա և մի չիմաճ (chummun) կամ աղտաշեն, տավարը Յեն (Yain) անունով, բավականաչափ ուղտ կամ այլ կենդանիների մի մեծ հոտի համար։ Այս վայրը հասնելուց առաջ մենք նկատեցինք մեր բարեկամ Ելվարների (Ilyauts) վրաններըը, զարնված բարձունքներում և պատապարված վայրերում։ Նրանց նախիրները տեսնվում էին ցրված լեռների վրա։ Այնտեղից վերկու մղոն կամաց կամաց մի ձորի միջից իջանք Մարանդ գյուղը շրջապատող մշակված հողամասը։ Մարանդն ունի անջատ մի բերդ, մի բարձրության վրա, տների հարավ-արևելակողմը, վոր թվում է թե հարմար և վերկրի պաշտպանության համար։ Քառասունչորս մղոնի մեր ճանապարհորդությունը տևեց տասնուվեց ժամ։ Մեզիլ խանայում (իջևանում) մեր հարմարությունները լավ էին և այստեղ առաջին անգամ իշխանի հրամանով ուղևորներին մատակարարված պարենավորման փոքրն ունեցանք։ Ըստ հրամանի մեր մթերքները հայթայթվելին նրա [իշխանի] հասարակաց ծառաների կողմից, ամեն որ հետևյալ չափով. — միս 7 փունտ, հաց 21 փունտ, բրինձ,



կարագ, կաթ, ձու, և հավեղեն մեր պահանջից շատ ավելի մեծ քանակությամբ։...

Ցերը պարսկական ծառայության մեջ գտնվող մի սպա կամ վորևե ուրիշ անձ ճանապարհորդում է կառավարական գործով, ստանում է իր որվան ծախքերին համապատասխան մի գումար, վոր հաշվում է իր աստիճանի և իր մարդկանց թվի համեմատությամբ, մասնավորված վորպես արժեք այն կենսամթերքների, վոր պետք է հայթայթվեն նրան իջևանած տեղերում, և ընդհանրապես նա ազատ է ընտրելու մասնավորված պարենը կամ դրամը։ Որինակի համար, վաշտի մի հրամանատար, կամ բժշկական բաժանմունքի մի պարոն, յերբ ճանապարհորդում է պաշտոնապես, տրվում է յերկու թուման կամ յերկու ֆունդ սոերլինգ որական, կամ այդ գումարին հավասար մթերք։ Նրա իջևանած գյուղի գյուղապետը, յերբ հրամանը ներկայացվի, կամ վճարում է նրան կանխիկ կամ հայթայթում է նրան կենսամթերք։ Հաճախ նախասպասավորություն տրվում և դրամին։ Յեթե ճանապարհորդն որական յերկու կայան իջևանի, նա յուրաքանչյուր տեղում պահանջում է սահմանված գումարը։ [Գնդապետ Զոնսընը այստեղ պատմում է, թե ինչպես գյուղացիները ընդհանրապես դժկամությամբ են կատարում կառավարական այս հրամանները։ Ճանապարհորդներին հայթայթված մթերքը ընդհանրապես վատ տեսակի է, մեծ դժվարությամբ տալիս են ձի, հաճախ աշխատում են դրացի գյուղերից ձեռք բերել և շատ հաճախ թագցնում են լավ կենդանիներին և տրամադրում նիհար ու անպետք ձիեր և այն էլ ընդհանրապես շատ մեծ դանդաղությամբ ու ուշացումներով, այս պատճառով ճանապարհորդը ստիպված է ժամերով սպասել իջևանում։ Նա ասում է թե բեռներից կորուստները անպակաս են։ Տես Johnson, էջ 220—222։]

Հունիսի 28.— Մարանդից մեկնեցինք յերեկոյան ժամը տասին դեպի Գարդար (Gur-gur) կամ ավելի ճիշտը Ալհունդար (Alhundar), [Ալհմդար] յերեսունչորս մղոն հեռու, ուր հասանք 20-ի առավոտ ժամը յոթն ու կեսին։ Առաջին վեց մղոնին

մենք առաջացանք Մարանդի դաշտից, և ապա մոտենալով լեռներին սկսանք բարձրանալ դեպի վեր։ Այստեղ, ինչպես նաև յերեկվա մեր ճանապարհի վերջին մասում, նկատելի է արոտի պակասությունը, բացի ջրի յեզերքների խոտերից։ Տասնվեցերորդ մղոնում մի լեռնային հովտում յերևեց մի ավերակ քարվանսարա, վորի շրջակայքում բլուրները կազմում են ձանապարհը մինչև այստեղ և չորս մղոն դեպի առաջ միօրինակ կերպով լավ են, բայց հետո սկսավ քարքարոտ դառնալ, անցնելով բլուրների ու ձորերի միջից։... Քսանչորսերորդ մղոնում հասանք մի շատ զորավոր կիրճի գագաթին, բարձր ժայռոտ և լերկ լեռների մեջ, վորի միջից հոսում է մի վտակ, վոր գալիս եր իր աղբյուրից, հարավ արևելակողմ մի մղոն հեռու մի փոքրիկ ճախճախուտից, և դեպի ստորոտը ուռճանում և մեծանում։ Քսանյոթերորդ մղոնում լեռների շղթան վերջանում է և սկսում է մի դաշտ, վոր լավ և մշակված և ունի շատ առվակներ ու ջրաղացներ։ Քսաներեքերորդ մղոնում, գլխավոր ճանապարհից բաժանվում և մի փոքր ուղի դեպի Գարգար, վոր գտնում է դեպի ալ, կամ հյուսիսային-արևելք և արևելք, լեռների ստորոտից մինչև հասնում են Գարգար, յերեսուներկու մղոն ու կես Մարանդից։ Այստեղ մեր մեհմանդարը հարմարություններ չգտնելով, մենք անցանք դեպի հյուսիս, դեպի Ալհունդար [Ալհմդար], լերևույթով ավելի վողորմելի մի գյուղ, ուր մենք իջևանեցինք մի ախոռում, ավելի վատ ապաստան՝ քան մենք հանդիպել եյինք Թեհրանից մեկնելուց իվեր։ Այսորվան ամբողջ ճանապարհն ընթացքում առատ ջուր գտանք, վոր վտակներով անցնում և յերկրից։....

Հունիսի 29.— Մեկնեցինք մեր մոտի ու նեղացուցիչ ընակարանից գիշերը ժամը տասնմեկին և ճանապարհ ընկանք դեպի Նախիջևան (Nuckshywaun), 32 մղոն հեռու կանք դեպի Նախիջևան (Nuckshywaun), 32 մղոն հեռու Անցնելով գյուղի միջից և առաջ գնալով կես մղոն այն կողմ, դարձանք դեպի ալ՝ մի զառիվայր անդունդի հյուսիսակողմը, և ձիավարեցինք նրա խորքում տափարակ գետնի վրա։ Հինգերորդ մղոնում նկատեցինք Սույա (Sooya) գյուղ, շատ մոտ

դեպի աջ, և նրանից մեկ մղոն դեպի հյուսիս մի բարձ
գետնի վրա գտնվում են միևնույն անունով մի գյուղի ավե-
րակները: Ճանապարհը այստեղ նեղ և ու վատ, բայց նո-
րից անցնում է տափարակ գետնի վրայով, անկասկած
Յերբեմն հայտնված Արազ կամ Արաքս (Arras or Araxes) գե-
տով, որից մենք անցանք ուխտավորդ մղոնում, և որ հո-
սում է արտաքուն դեպի աջ և այս մասում մոտ վաթսուն
յարդա լայն և: Փոխադրանավը կառուցված է շատ կոպիտ
կերպով, ունի քանդելիքու վոտք յերկարութիւն և տասնը-
յերեք լայնութիւն կենտրոնում, որտեղ մոտ մեկ ու կես
վոտք ավելի խոր է քան յերկու ծայրերում: Դա ունի շի-
ղանկյուն ձև, յերեք կողը գերան կազմում է ամբողջ յեր-
կարութիւնը, որոնց տակ ամրացրած են հաստակի ու
կողքերի տախտակները: Սրանք յերեք վոտք բարձր են և
կազմում են յերեք հաստ գերաններ: Ներքեի ու ամենա-
վերի գերանները մոտաված են ուղղահայեաց, որոնց միջև
մեխված են ավելի բարակ գերաններ: Այս անպեկ լոտոր
քշում են գետի մեկ ափից մյուսը՝ հաստ յողերով, որ խոր
ջրում դրծ են ածում վորպես թի: Մենք մտանք նրա
մեջ սպասավորներով, կենդանիներով ու բեռներով. մեկ
նախզուշութիւնը որ կատարվեց, այն եր որ ձիերի բեռ-
ները վար առնվեցին: Նրանք այսպես բեռնաթափ ներս
մտան, մեկ ծայրից յերկու տեղով, պաշտպանված մի վան-
դակորմով, որ վերցրին ձիերի մուտքի համար:...

Թեև մենք ունեցինք [նույնքան] մարդ, սա-
կայն գետից անցքը տևեց մեկ ու կես ժամ: Հանդիպակաց
յեղերքում ձիերը բեռնելուց հետո, շարունակեցինք մեր
ճանապարհը դանդաղորեն բարձրանալով մինչև ուխտ մղոն.
սպա մտանք մի զորավոր կիրճ, որ գտնվում եր լերկ ժայ-
ռերի գահավանդի միջև, կենտրոնում ունենալով մի վտակ,
որի քարքարոտ հունից մենք յերբեմն յերբեմն անցնում
եյինք, որովհետև ուրիշ գործնական ճանապարհ չկար: Այս
կիրճից դուրս գալուց հետո, որ մի մղոն յերկար եր, մենք
գնացինք դեպի լերկ բարձունքներ, և նորից վայրկյան, ան-

յանք միևնույն վտակից, որ այստեղ ավելի մեծ եր, ավելի
խոր և անցնում եր լավ արտասով մի նեղ հովտից: Մենք անցանք
սարի լեռների մի այլ շղթայից, և յերեսուներորդ մղոնում
հասանք մի լայն գետի յեզերքը, որից կարելի յեր անցնել,
տասնյերեք պղպատե կամարով մի կամրջի ավերակների մո-
տից: Յերեսունյերկուերորդ մղոնում, պարտեզներից և նա-
խիջևան քաղաքի մեծ մասից անցնելուց հետո, իջևանեցինք
մի հայի տան պարտեզում, ուր մենք ընդունվեցինք ծայրաս-
տիճան լավ, խաղաղ ու մեկուսի հարմարութիւններով: Մեր
հյուրընկալը նշանավոր կերպով ուշադիր եր և հյուրասիրից
մեզ յերկու ափսե խնձորով, շատ փոքր ու համեղ, արդարև
համի տեսակետից գերազանց քան Անգլիայում աճող խըն-
ձորներից մեծ մասը: Նա կապերտներ փռեց, բարձեր դրավ,
մեզ բերից ջուր, հաց և այն ամեն բան, ինչ վոր յենթա-
դրվում եր թե մենք ցանկանում եյինք:

Հայերը, հունական յեկեղեցու քրիստոնյաներ, թվում
են, — ինչքան կարճ ժամանակում յես տեսել եմ նրանց, —
աշխատասեր և հանդարտարար: Յերկրագործական պարապ-
մունքների, չուլհակութեան և ուրիշ ոգտակար արհեստների
մեջ նրանք շատ են գերազանցում մահմեդականներին: Ընդ-
հանրապես նրանց մահմեդական դրացիները շատ արհամար-
անքով են նայում նրանց վրա, մինչ իրենք [մահմեդական-
ները] անարժեք են, ծուլ, մեծախոս, բայց առաքին ցեղ,
նշանավոր իրենց խարդախութեամբ, և նախապաշարումով
կապված իրենց ցեղին ու ազանդին: Նրանք կարծում են,
թե գերազանց են բոլորից, ազիտութեամբ ու նախապաշա-
րումով ուռճացած իրենց հանձնապաստան ամբարտավանու-
թեամբ, իրենց իրավունքն են համարում շատ պարագաներում
վերաբերելու քրիստոնյաներին, վատահում են իրենց հավատ-
քի կատարելութեան՝ արդարացնելու կամ ավելի ճիշտը քա-
վելու համար իրենց սեփական ղղվելի մոլութիւնները:

Նախիջևանից մոտավորապես ութ մղոն այն կողմ կա
վայրկյան դեպի մի գեղեցիկ դաշտ, լավ վոռոգված և մշակ-
ված, տարածված մղոններով դեպի արևելք ու արևմուտք,

այստեղ ճանապարհորդը առաջին անգամ նայում է Արարատ լեռան, իր ամբողջ վեհանդիսությամբ, բարձրացնելով իր գլուխը նման կոնաձև մի ամպի ամեն բարձրությունից վերև, շրջապատի ընդարձակ տարածության մեջ. Դա նմանում է միացման մի կետի, կերկրի ու կերկնքի միջև։ [Այս, տես Johnson էջ 226—227]։

Նախիջևանում տեսնվում են շատ ընդարձակ մի քաղաքի ճեացորդները, նկատելի՝ ամրությունների, քարվանսարանների և մինարեթների ավերակներից։ Կա մի կործանված աշտարակ, վաթսուն վոտք բարձր և կերեսուն վոտք գծով, սա մեծ հնություն է։ Թվում է, թե ներկա քաղաքը կանգնած է հնին վրա, վոր պարզ կերևում է շենքերի մնչ նկատելի փոսերից, կամարներից և պատերի բեկորներից։ Այս տեղից Արարատ լեռը տեսնվում է մեծ հեռավորության վրա։

Հունիսի 30. — Մեկնելով այստեղից ճանապարհը առ չին ուղի մղոնի վրա անցնում է ամայի բլուրներից, զուրկ բուսականությունից, ապա խոտավետ մի դաշտի միջից։ Տասնութը մղոն ճամբորդելուց հետո տեսանք Խորգ (Khorg) [Խոք] գյուղը, մի հովտում, մոտ մեկ ու կես մղոն հեռու, և քսաներորդ մղոնին մերձ դեպի աջ մի ավերակ քարվանսարա և Կարաբաղլու (Karabaughlu) գյուղը։ Ձախ կողմից իջանք մի զեղեցիկ հովիտ, լավ մշակված ու լի գյուղերով։ Քսաներեքերորդ մղոնում գտանք մի ավերակ գյուղ, և հովտի այս մասում նկատեցինք բազմաթիվ վտակներ, վոր հոսում են դեպի ձախ։ Ճանապարհը այտեղ վերստին խոտորվեց հյուսիս արևմուտքից դեպի հյուսիս, ունենալով իր աջ կողմում լերկ բարձունքներ ու բլուրներ և մշակված հողամաս։ Յերեսուն ու կես մղոնում մենք սկսանք անցնել բազմաթիվ արագընթաց վտակներից, վորոնք գրավում եյին յերեք քառորդ մղոն լայնություն և միասին կազմում եյին Արփաչայ գետը, վոր ծագում և Արագածից և Ղարաբաղ (Karabaug) լեռնից։ Այստեղ ճանապարհը դառնում է դեպի արևմտակողմ։ Յերեսունչերկուերորդ մղոնում մենք կանգ առինք Նորաշեն

Սուլթա (Noorasheen Soofla) գյուղում, զետեղված մոտավորապես մեկ մղոն դեպի ձախ Դուդունգայից (Doodhungea)։ Դեպի աջ մերձ ունի մի վտակ, վոր հոսում և այդ բաղղուեյամբ։ Գյուղը, վոր երեքեք նոր է, հազիվ թե ավարտած ունի մեծ քանակությամբ պտղատու ծառեր, և տալիս է լավ հարմարություններ։...

Հուլիսի 1. — Գիշերը մեկնեցինք դեպի Դավալու (Dairulloo), բավական ժամանակ վոթորկի, վորոտումի, կայծակի, անձրևի ու քամու պատճառով սպասելուց հետո։ Մենք անմիջապես անցանք գետակը, վոր հոսում է ձախից, և առաջին չորս մղոնում առաջացանք ցած, ցեխոտ գետնի վրայից, հաճախ կտրատված վոռոգման ուղակներով։ Հետո աստիճանաբար սկսանք բարձրանալ մի կողմից լերկ ու քարքարոտ բլուրների միջից և տասնչորսերորդ մղոնում նկատեցինք Շադատեք (Shadatek) [Սադարակ] գյուղը, զետեղված մոտավորապես յերեք քառորդ մղոն դեպի աջ։ Այնուհետև ճանապարհը անցնում է մի գեղեցիկ տափարակ դաշտից, վորի աջ կողմ բարձրանում են բլուրներ, և ձախ կողմ ճահճային դաշտեր, տարածված մինչև Արարատ լեռը։ Հասանք Դավալու, մի ցրված գյուղ, մի քարաժայռ բլուրի ստորոտում, վորի յետևի կողմը մի բացդաշտ և մինչև Արաքս գետը և Արարատ լեռը։... Նախորդ գիշերվան խստ անձրևի հետևանքով գետինը ծայրահեղորեն թաց եր ու ցեխոտ։ Դավալուում իջևանեցինք մի բաց հյուղակում, վոր թեև հարմար չեր, բայց ընդունելի յեր այս յեղանակին, և վոր կեսորին շատ տաք եր ու դիշերը ցուրտ, թեև վոչ տհաճելի։ Այստեղ մեզ ընկերացավ Մր. Սարաչին. ուրախությամբ տեղեկացանք թե նա հրաժարած եր Թուրքիայի ճանապարհով գնալու իր մտադրությունից, այդ յերկրի ներկա անկայուն վիճակի հետևանքով, մասնավորապես Երզրումի վերաբերությամբ, վոր տեղի վշտան նախորդ ամսին մեռել եր և նրա գանձը այժմ Յերևանումն եր։ Այդ տեղում անգլիական կապոցի բացվելն ու կողոպուտը, որանից մոտ տասը տասնյերկու որ առաջ, մի յերևույթ եր, վոր չեր սպասվում,

և լինելով աննախընթաց, մեծ հուզման պատճառ և ճանապարհորդների համար։

Հուլիսի 2. — Գիշերը ճամբա ելանք դեպի Յերևան, յերեսուն մղոն հեռու, առաջանալով մի հարթ յերկրից, լավ մշակված ու ամենուրեք խաչաձևված գետակներով ու վտակներով, վորոնք պղտոր էին։ Տասնչորսրդ մղոնում անցանք ընդարձակ ամրությունների մնացորդներից, դանդաղանկի միայն բլրակներով հավասար հեռավորությամբ և քարե պարիսպներով, վորով տարածվում են ճանապարհի մեկ կողմից մյուսը։ Այս վայրը այժմ կոչվում է Թոփրա կիլա (Topra Keella) [Թոփրակ կալե = Հողաբերդ] և վոմանք կարծում են թե հների Արտաշատն (Artaxita) է, բայց ավելի ճիշտը համապատասխանում է Տիբերումին (Tibirum), Դավալուից իր ունեցած հեռավորության հետևանքով։ Ջրա մղոն ավելի առաջ գնալով անցանք Ահաս Խուշ (Ahas Khoosh) հայ գյուղը և ապա անցանք Գառնիից, մի շատ արագընթաց գետ, գյուղից յերեք քառորդ մղոն հեռու, ճահճային յերեսույթ ունեցող մի հովտի հանդիպակաց կողմը։ Գետը բաժանվում է յերկու ճյուղերի, յուրաքանչյուրը յերեսուն յարդա լայն, բայց անցանելի։ Այս ամբողջ որվան մեր ճանապարհը անցնում էր ճահճային հովիտից, ծածկված արոտով, տարածված մեր ձախ կողմ մինչև Արարատի ստորոտը։ Այս հովտից անցնում և Արաքսը։ Մենք մի քիչ բարձրացանք դեպի աջ և շարունակեցինք անցնել դաշտից շատ լավ մի ճանապարհով։ Բանուխերորդ մղոնում հասանք անորի, վորտեղ կազմում են Յերևանի արվարձանը, վոր շատ մեծ տարածված քաղաք է, ունի անջատ ամրություն, կրկնակ պարիսպներով, աշտարակներով, և դեպի հարավ մի ծածկված ճանապարհ, և նրա [բերդի] հյուսիսը՝ քաղաքը, վոր նույն ուղղությամբ յեղերված է բլուրներով։ Մենք գարձանք դեպի աջ, այն թաղամասը, ուր բնակում են հայերը, վոր կոչվում է Անապատ (Aunabad), ուր հայ եպիսկոպոսն ունի բնակարան ու եկեղեցի։ Այստեղ մենք ստացանք հյուրանոցի հար-



Արարատ լեռը, (նկար Ջոնսթոնի)

մարութիւններ և առաւօրեան հայթայթեցինք ուտելիք և ուրիշ անհրաժեշտութիւններ։

Ցերևանի գլխաւոր մարդը՝ Հուսեյին Խան (Hoossein Khaun) անուշով, մեզ հրավիրեց այցելելու իրեն, վոր մենք խոստացանք կատարել յերբ սարդարը մեզ ուղարկեր կենդանիներ՝ մեր բեռների փոխադրութեան համար։ Այս այն մարդն է վոր բերդը պաշտպանեց 1808 թվին գեներալ Գոդովիչի (Godovitch) [Գուդենիչ] հրամանատարութեան տակ գտնվող ռուսների դեմ, մի ծառայութիւն վորի համար նա շատ հպարտ է զգում։ Ռուսները ներխուժել էին բերդում և պալատում, [սակայն] նրանք կամ սպանվեցին և կամ դուրս քշվեցին։

Ցեղանակը շարունակում էր լինել՝ ցերեկը շատ տաք և գիշերը հաճելիորեն զով։ Քաղաքն ունի բազմաթիվ գեղեցիկ պարտեզներ ու աններ և շատ բնակիչ։ հայերը համեմատաբար ավելի շատ են քան մահմեդականները։ Ցերևում և վոր հուն չեկեղեցու պատկանող այս քրիստոնյաները այստեղ ապրում են մեծ ապահովութեամբ, վորովհետև տեսանք մեծ թվով կանանց ու յերեխաների չեկեղեցու շուրջը։ Կանայք ծածկվում են այստեղ, բայց այնքան էլ խուլա չեն տալիս տեսնվելուց, սակայն նրանց բերանը ծածկված է մի լաթով։ Դրսում գործ են անում պարսկական հագուստ։ Հայերը ընդհանրապես խարտյաշ գույն ունեն և յերևում են առողջ ու թարմ։

Վորովհետև մեր մեհմանդարի հրաժանը մինչև այստեղ էր, մենք նրան պատեցինք տասը թումանի նվեր տալով, վորի համար թվում էր թե նա գոհ էր։ Մի այլ մարդ ուզեցավ առաջնորդելու մեզ։

Հուլիսի 4. — Գիշերվա ժամը տասին թարմ ձիեր տացանք և մեկնեցինք դեպի Աշտարակ (Ashterrek). անցանք մերձակա բերդի տակից, և կամրջից անցնելուց հետո սկսանք վար իջնել հանդիպակաց կողմ [Ջանգուի] մյուս ափից, վորի բարձրութիւնը հավասար է բերդի հողամասին, և կարող է նպատակավոր կերպով ոգտագործվել՝ մի գործուննյա թշնամու

կողմից։ Այնտեղից դարձանք դեպի հյուսիս և անցանք բարձունքներից, վորոնք տիրապետում են քաղաքին։ Շարունակեցինք քարքարոտ ճանապարհից և բռնվեցինք կարկուտի, անձրևի և կայծակի՝ մի խիստ փոթորկի, վորի ընթացքում այնքան մթագնեց, վոր մեր ձիավոր առաջնորդները կորցրին ճանապարհը։ Ցերկրի մի ջից զգուշով գնալով մինչև լուսաբաց, տեսանք հայկական Աշտարակ գյուղը, նույն անունով գետակի աջ ափում, վորից անցանք մի կամրջով, կառուցված բազալտ քարաժայռի մի ուղղահայաց պահվանդի կողքին, վորից մենք իջանք կամրջին գնալու համար։ Անցնելով հանդիպակաց ափը, իջևանեցինք գյուղի գլխավոր բնակչի բնակարանը, և գերազանցորեն լավ հարմարութիւններ ստացանք, բայց վորովհետև ձիու, կենդանիների և այլնի հրամանը այս տեղի վրա տրված չէր, մենք պարտավորված եյինք նախապատրաստվել մի այլ տեղի վրա, մենք պարտավորված եյինք նախապատրաստվել մի այլ տեղի վրա, մեր ճանապարհը, մեր հագուստները հատկապես պատրաստված կրակի վրա չորացնելուց հետո։ Այստեղ նկատեցինք չեկեղեցիների բազմաթիվ ավերակները, բոլորը ամրացրած, վորոնք մերձակա գերեզմանատների նման, ուրույն կառուցվածք ունեյին։ Ասում են, թե այս ավերակները վոմանք հազար տարվա հնություն ունեն։ Այստեղ, ինչպես բոլոր պարսկաստանում, քայքայման ակնհայտ նշանները կան. տներից մեկ քառորդն անգամ բնակված չէ։ Ներկա պարագայում այս լքումը մեծ մասամբ վերագրելի է պարսիկներին, վորոնցից վոմանք Ցերևանի դևլաթի [սարդարի] թելադրութեամբ հարձակվեցին մերձակա գյուղերի վրա, վորպես պատիժ այն բանին, վոր նրանք այդ քաղաքի վերջին պաշարման ժամանակ միացել եյին կամ ոգնել ռուսներին։ Ցերը ռուսական ուժերը նահանջեցին դեպի Թիֆլիս, պարսիկ գինվորները կողոպտեցին և ավերակ դարձրին իրենց սեփական հողամասը։ Բնակիչներից շատեր, այր ու կին, վախան ռուսների հետ, հաստատվեցին նրանց սահմանում և տակավին ճնում են նրանց վասար։ Այս խեղճ մարդկանց գյուղերը այժմ ծառայում են

վորպես ձմեռանոց հյուծվածների համար, վորոնք արածեցնում են իրենց հոտերը մերձակայքում։ Նրանց մեջ պատահաբար գտնվում են մի քանի թշվառ հայ փախստականներ, վորոնք համարձակություն են ունեցել վերադառնալու։

Այստեղ և մերձ շրջաններում գտնվող մեծ ու լավ կառուցված եկեղեցիների ավերակներից պարզ երևում է, վոր քանակությունը երբեմն շատ ավելի և խոշոր է, քան այժմ վոտտա չէ, այն վոր [գտանվով] այս ընդարձակ ավերակների հետաշրջանակ կամարներից, թե նրանց հիմնապիրները գծելու աղնիվ արվեստի մեջ վարպետ էին և հետևաբար հավանորեն կուլտուրական մարդիկ։ Այս շինքերը սրբատաշ քարից են, երկու կամ երեք տարբեր գույներով, ինչպես կարմիր, գորշ ու սև, այնպես դասավորված, վոր նկարագրություն են պատկերներ. հիմքերը հաճախ ավելի ամուր նյութից են, բազալտ կամ գրանիտ։ Դրանք բոլորը կառուցված են բարձրությունների վրա, ամբացրած և գիրքով բնական բարձր մերձակա բնակարաններից, վորոնց նկուղները առավել կամ նվազ չափով գետնի տակն են, այնպես վոր երևում և թե նրանք պաշտպանված են մինչև երկնակցույց։

Յերևկոյան մեկնեցինք և գնացինք նույն պահավանդի աջից բարձունքների վրայից Անավանք (Anavank) [Հովհաննավանք], մի գյուղ վոր ուներ մի քանի թշվառական հյուրանոցներ՝ մի մեծ ավերակ եկեղեցու կողքին, մոտավորապես հինգ մղոն հեռու Աշտարակից։ Իջևանեցինք մի խղճուկ հյուղակում, ուր անձրևի պատճառով ամբողջ որը, գիշերը և հաջորդ որը բանտարկված մնացինք։ Մենք միշտ մի պատվիրակի հետևից սպասում Իրրահիմ բեյի կողմից, մի քուրդ ցեղապետ, վորին Յերևանի սարդարը հանձնարարել էր մեզ, բայց վորովհետև վոչ վոք չեկավ, մենք մի ձիավորի վարձեցինք Յերևան, ավելի ըրական հրամանն ձեռք բերելու և մեր վիճակը նկարագրելու համար նրան, [Սարդարին]։

Այստեղ սկսանք իրազեկ լինել, վոր Յերևանի սարդարը գնավ կամ շատ քիչ իշխանություն ուներ այս վայրերի ու

ամայի երկրում գտնվող թափառական քուրդ ցեղերի վրա։ Այս քուրդերը սերունդն են նրանց, վորոնք Քսենոֆոնի հետ քաշվեցին, և դժվարացրին Ալեքսանդրի առաջացումը։ Նրանք ժառանգել են իրենց նախնիքների անկասելի վոգին և կողոպուտի սովորությունները։ Բավական ըրավոր զգալով իրենք իրենց, վորևե հաստատված կառավարության իշխանություն անտեսելու, նրանք անվանապես հպատակ են Պարսկաստանին, վորպեսզի երբ կամենան կողոպտեն ռասական հողամասը։ Այն հողամասը, վոր նրանք գրավում են, չեզոքիորեն հարմար է իրենց հետապնդումներին, գետեղված Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի անմիջական սահմանի վրա, մի տեսակ անորոշ չեզոք հողամաս, թեև քաղաքականապես խոսելով Պարսկաստանի թագավորության մասն է կազմում։ Պահանջվում է շատ ավելի ազդեցիկ մի իշխանություն ճնշումն ու կարգապահությունը՝ այս քուրդերին կարգի բերելու համար։ Նրանց ասպատակային ներխուժումները ռուսական հողամասում, հավանորեն ամենահանդիսանան մի կարգ կարևոր փոխհարաբերություններ, և կարծում և վոր կայսերական կառավարությունը [Ռուսաստան] սա պատճառ պիտի համարի հավելվածական գրավումներ կատարելու համար։ գրամանալի չպիտի լինի վոր նրանք իրենց սահմանները տարածեն դեպի հարավ, մինչև Արաքս գետը։

Հունիսի 5. — Այսոր ժամը տասնմեկին մեր ձիավորը վերադարձավ, և նրա ազդեցության շնորհիվ մեր ձիերից յուրաքանչյուրը փոխած լինելով, հեծանք մեր ձիերը և ճամբա ելանք դեպի Ապարան (Abberhaun), թեև չիպանակը տակավին անկայուն եր և սպառնալից։ Առաջին ուղեկիցը մզոնին ճանապարհը անցնում եր Աշտարակի հեղեղատի աջ ափերից, բազմաթիվ քարաժայռ մի պահավանդից։ Անցանք բազմաթիվ ավերակ եկեղեցիներից, և տեսանք հունական տոհմական, ճամբար Արագած (Ally Guz) ձյունապատ լեռան տեսարանում, մեր ձախ կողմը։ Մենք այժմ գտնվում էինք մի բարձր

լեռնային շղթայի վրա, որ այդ լեռը մխացնում եր մի ուրիշին, յերևութապես մեկուսացած մեր աչ կողմը Գառնը Յարաք (Karni Urreh) անունով [Արայի լեռը]։ Նախապես մենք անցել եյինք Աշտարակ գեսի յերկու ճյուղերից, որոնք ծագում են Արագածից, և որոնցից մեկի վրա կա մի կամուրջ, կիսաշրջանակ մի կամարով՝ քառասուն վոտք լայնութեյամբ։ Թեև այս կամուրջի վորմնադրութեյունից վոչինչ չի մնացել, բայց կամարը կազմող քարերի մեկ շարքից, որու մեջ շատ տեղեր բացվածքներ ու ճեղքեր կան, սակայն բնավորված կենդանիներ անվտանգ անցնում են նրա վրայից։ Մեր ներկա ուղին գլխավոր ճանապարհը չեր, վորից մենք հեռացել եյինք վոթորկի պիչերը, յերբ մեկնեցինք Յերևանից և գնացինք գեպի արևմուտք, Աշտարակը վնտռելու համար։ Սակայն և այնպես մենք գոհունակութեյունն ունեյինք անցնելու լեռների ու ձորերի մի հոդամասից՝ փարթամորեն ծածկված ամեն տեսակ բուսերով և ցանուցիր տաղավիտ ու դուշդզուշն ծաղիկներով։

Պաշտպանութեյան կայանի համար մի հիանալի վայր կա կազմված Աշտարակի խոր քարայրն խորխորատի մերձակայքում, և վոր վերջանում է այս անունով գեսի ճյուղերի միացման վայրում։ Յերկրի այս լեզուն բնական մի ամրոց է, վոր կարելի յե մեծապես բարելավել՝ կառուցելով ամբարտակներ, պահելու համար ջուրը հեղեղատների մեջ, այսպես վերածելով այդ տեղը մի թերակղզու, վորի ցամաքային մուտքը կլինի շատ նեղ մի պարանոց։ Տիրապետող մի բարձրութեյուն է, և կենտրոնական գետեղված է յերկու լեռների միջև կամ փաստորեն մի կիրճի կենտրոնում, սահմանների մոտ, թեև վոչ գլխավորը։ Այսպես շարունակեցինք մինչև մղոն բարձունքներից, և ապա սկսանք աստիճանաբար իջնել գեպի շատ ընդարձակ դաշտեր, շրջապատված լեռներով, վորտեղից բոլորը ծածկված հարուստ արոտով։ Այստեղ կարելի յե մի կայան հաստատել և հովիտը կարող է գրավել յերկու կամ յերեք վաշտ հեծելազոր, վորովհետև բոլոր ողղութեյամբ լեռները տիրապետում ու պաշտպանում են այս դիրքը, վոր

անասունների կերի անսպառ արտադրութեյուն ունի, մի բան վոր գոյութեյուն չունի Պարսկաստանի մեծ մասում։

Անտարակույս ավելի հարմար մի ճանապարհ կա Գառնի Յարաքի արևելակողմը։ Մենք մտանք այդ ճանապարհի վրա Աշտարակի գլխավոր ճյուղի ձախ ափում, մոտավորապես հինգ մղոն հեռու Ալարանի ավերակ յեկեղեցուց։ Այստեղից մինչև յերկու լեռների բացվածքը, վորտեղից գետն է անցնում, յերեք մղոնի չափ յերկարը հարթ է և ծածկված արոտով։ Այդտեղ հաստատված են եվրոպների ու քուրդերի ապիտակ ուսևվրաններըը, վորոնցից վոմանց պատերը կտրված ու ներկված յեղեգից են, ուրիշները սև մազե կտորից։ Ինչպես նաև վրանի մյուս մասերը։ Մենք տեսանք մի քանի վրաններ, յեղեգյա հյուսված պատերով և կտուրը ծածկված թաթար վրանների նման թաղիքով։ Այստեղ մեկ հանդիպեցին և մեզ հետ խոսեցին հեծյալ քուրդեր, հագնված ու զինված թուրքերի նման։ Ամբողջ ցեղը ձիավոր է, ճանապարհից մոտավորապես յերկու մղոն դեպի աջ կա մի պղնձի հանք, վոր շահագործում են մասնավոր անհատներ, վորոնք այս արտոնութեյան համար վճարում են. քուրդերը, վորոնք շատ ազատ ու դյուրահաղորդ են իրենց վարմունքի մեջ, կրում են յերկար կարմիր գլխանոց, կամ ավելի ճիշտ մի պարկ, վորի ծայրերը նրանց գլխից կախվում են վար։

Վերջին չորս մղոնում մենք անցանք յերկու ժայռոտ կիրճերից, յերկու լեռների միջև, ունենալով գետը մեր ձախ կողմում և յերեսուն մղոն առաջանալուց հետո հասանք գլխավոր քուրդ խանի կամ ցեղապետի չադրը (chaddor) կամ վրանը։ Նա գեղեցիկ դիմագծով, թիկնավետ մի անձնավորութեյուն եր և մեզ ընդունեց կանգնած դրսում, թրքական ծխամորճն իր բերնում, շրջապատված սպասավորներով, վորոնց գլխի վերևից նրա կանաչ քը վրանի կողքերից դողունի նայում եյին։ Վրանը շատ մեծ է ու հարմար, վարագույրներով բաժանված յերեք հարկաբաժնի, և ամբողջությունը մոտ քառասուն վոտք յերկար և քսան վոտք լայն։ Հատակի

մեկ կողմը ծածկված և թաղիքներով, վորոնց վրա մարդիկ նստել են, մյուս կողմում տեսանք կանանց, վորոնք մանում և հյուսում են, ուրիշները ակնապիշ նայում են դեպի մեզ՝ ռուսաստանցիներիս։ Միջին հարկաբաժինը ծածկված և թաղիքով ու կարպետով, այցելուների ընդունելության համար, բայց վոչ վոք չկա այնտեղ։

Մեր առաջնորդը քուրդ ցեղապետին հաղորդեց Յերևանի հրամանատարության հրամանը, վոր նա ընդունեց ըստ յերևույթին պահանջության մի ժպիտով, բայց յերբեք չխոսեց մեզ հետ և վոչ էլ առաջարկեց նստել։ Նույնիսկ երկրները այդ քաղաքավարական վերաբերմունքը պիտի ունենային։ Նա ասաց մեր մարդկանց, թե յալում և վոր այժմ չափազանց ուշ է (ժամը յոթը) մի վրան զարնելու մեզ համար, և թե մենք բավականաչափ հարմարություններ պիտի գտնենք մերձակա մի յնկեղեցու ավերակների մեջ, ուր յերեք մենք հարմար գտնենք իջևանելու դիշերը, նա պիտի ուղարկի մեզ ինչ վոր պահանջենք։ Բայց հետագայում նա մերժեց փոխել մեր ձիերը, կամ առաջնորդներ տալ և հրաժարվեց վորևե ոժանդակություն ընծայելուց, վոչ էլ յերբ մենք իջևանել ելինք, ավավ նույնիսկ դրամով՝ կաթ, հավկեն և ուրիշ կենսամթերքներ։ Անկասկած, այս մարդը և իրան շրջը զորավոր ու շատ հպարտ են կարևորության ընծայելու համար Յերևանի սարդարին, վոր անշուշտ գիտակից և վոր ինք չի կարող յենթարկել այս ասպատակներին, նույնիսկ յերբ նա պատրվակում էր թե դրական հրամաններ էր ուղարկում նրանց։

Մենք գարձանք մի փոքրիկ բլուրի շուրջ, վոր տեղ մի փոքր ճահճում Աշտարակի աղբյուրներն են, և այսպես գնացինք այս կիրպ խուսափած լինելով, հասանք Ալարանի յնկեղեցու ավերակներին։ Այստեղ հանգստանալու վայր չկար։ խոնավ էր ու աղտոտ, ծածկույթ չկար, բայց սպառնացող համարների մասերից, մեր վերևում ճեղքված էր 20 վոտք բարձրության վրա, ցուրտ էր ու թաց, թե մեր վոտքերի տակ և թե վերևում. մեզ տրված փայտը այնքան թաց էր

վոր կարելի չէր վառել, և յերկար ժամանակ մենք դողում ելինք ու տառապում ցրտից այս անհանգիստ վայրում։ Վերջապես, սակայն, դիշերը, մոտ ժամը տասնմեկին, կրակը վառվեց, պատրաստեցին թեյ և մեր յերեքի համար խաշած հավից մի ճաշ, վորից հետո անկողին մտանք, թեև խոնավ, սակայն յերբ քիչ տաքացանք, քնեցինք շատ խոր կերպով։

Քուրդը իր վերաբերմունքով այնքան կամակոր եր մեր հանդեպ, վոր նույնիսկ մի առաջնորդ անգամ չտալով մեր հաջորդ որվան ճանապարհորդության համար։

Պարսկաստանից բաժանվելուց առաջ թույլ տվիք ասել, վոր այս յերկրի բնակչությունը բաղկացած է յերկու վորոշ դասերից. [առաջին] նրանք վոր բնակում են քաղաքում ու գյուղում, վոր կարելի է անվանել պարսկական բնակչություն, և [յերկրորդ] թափառական կամ խաշնարած ցեղեր, վորոնք թեև կոչվում են ելվաթներ, կամ ինչպես՝ Մամասունի (Maumehsunies), Լուր (Loor) և Բախթիար (Baktiaries), բոլորը ապրում են հովվական կյանքով, ունեն թաթար ծագում և խոսում են թրքերեն լեզուն։ Պարսիկ բնակչության արագ նվազումը արդեն հիշատակված է, ինչպես յերևում է գյուղերի գրեթե լքված վիճակով և քաղաքների վատթարացումով, վորոնք առավել կամ նվազ չափով ավերման ու քայքայման ճանապարհի վրա են։ Բայց յես պատճառները կարծելու, վոր թափառական ցեղերն էլ նույն կերպով քայքայման մեջ են. նրանց այդ բախտից դերծ մնալու պատճառը պետք է վերագրել կառավարության մոտ, վոր կարող է ճնշել ամենայն քաղաքներում և գյուղերում հաստատված բնակիչներին։ Ելվաթների բոլոր ցեղերը դերծ են ամենաեական ճնշումներից, և նրանց միակ պարտականությունը վոշ թվով հնձելագոր հայթայթելն է նորին վեհափառության [Շահին]։ Սրանք ընդհանրապես պատկանում են Բախթիար ցեղին։ Փաստորեն այս ցեղերի սովորությունները հավանական և վոր ապահովեն նրանց սեփականությունները և յերկրում ճնշուն բնակությունը, մինչդեռ պարսիկները թվում են թե զատապարտված են գաղթականությամբ ցրվելու, և կարող

և վոչ հեռավոր ժամանակներում նրանք գտնվեին միայն հյուսիսային արևելյան նահանգներում, վոր այժմ պատկանում է նրանց, բայց կարող է այն ժամանակ [երկիրը] բաժանվի փոքրիկ պետություններին և թերևս կցվի ուրիշ մերձակա կառավարություններին:

Հուլիսի 6. — Առավոտ ժամը չորսին շարժվեցինք դեպի Ղարաքլիսա (Kara Klissia) յերեսուն մղոն հեռու: Մեր թողած յեկեղեցուց վեց կամ ութը մղոն այն կողմ սկսանք բարձրանալ լեռները, վորոնք կազմում են պարսկական սահմանը: Նրանց սորոտում կա մի ավերակ յեկեղեցի և մի բերդ, ուր մենք թողնք Պարսկաստանը և մտանք ռուսական հողամասը: Այստեղ լեռների վրա ու ձորերի մեջ արոտը առատ է, բայց գառնվայրերը բարձր են և ուղիղ, և ճանապարհները նեղ: Մեր ձախ կողմում ունեցինք մի ուրիշ, հավատում եմ վոր շատ ավելի լավ մի ճանապարհ, թեև հանորեն վոչ այնքան լավ ծանոթ մեր մարդկանց, բայց մենք ընտրեցինք ավելի կարճը, վոր սակայն, տանում եր վեր ու վար մի լեռնից մի այլ լեռ մինչև տասնվեց մղոն, և ապա շարունակում եր մի ձորի հատակում, մի արագ գետակի յերկարությամբ, վորի ընթացքին մենք հետևեցինք: Յերկու կողմից բարձրանում եյին ժայռոտ լեռներ, և նրանք, վոր հանդիպեցինք ճանապարհի վերջի մասում, ծածկված եյին անտառներով, ամենափարթամ յեղանակով: Գետինը շրայլորեն ծածկված եր ծաղիկներով, վորոնց մեջում արտակարգ մեծությամբ ու գեղեցկությամբ գեղին շուշանը: Ծառերի մեջ գտանք Յելրոպայում աճող բոլոր պտղատու ծառեր և թուփեր, վորոնք թեև անտառային, սակայն բնիկները ուտում են նրանց պտուղը: Սրանք են բավական մեծությամբ յեղակ, կեռաս, տանձ, կաղին ու ընկույզ: Այս ձորը տարածվում եր մինչև Հաջի Կարա (Hajee Kaura), ուր ձորը ավելի լայն եր, և մշակության վիճակը ու ճանապարհները ցույց եյին տալիս ավելի գերազանց մի կառավարության ազդեցություն: Այժմ մեր աջ կողմից մենք անցանք մի բլուրի շուրջը և մտանք հովիտ, հյուսիսից յեզերված

բարձր լեռներով, և կտրված մի արագընթաց գետով՝ Հաջի Կարա ժամանումից մի ժամ առաջ մենք նկատեցինք այն վտակը, վորին հետևում եյինք, այժմ իր ուղղությունը առավ դեպի մեր ձախը: Մենք Ղարաքլիսա մտնելուց առաջ կրկին հանդիպեցինք նրան: Ղարաքլիսա վեց մղոն եր վերջի հետ շատակված տեղից և յերեսուն՝ մեր վերջին կայարանից:

Ղարաքլիսա ժամանումից հետո, հանձնեցինք հրամանատար սպային ուղղված նամակները, բայց նա բացակա եր: Գտնվելով այժմ ռուսական հողամասում, մենք ուրախ եյինք վոր դեպանի [Յերմոլովի] հանձնարարությամբ յուրաքանչյուր կայարանում ձիեր պիտի տրամադրվեյին մեզ: Այս կայարանները, նշանակված զանազան հեռավորությունների վրա, կազմված են կոզակներից, վորոնք ծառայեցվում են վորպես հանրային սուրհանդակներ: Ձերը ճանապարհի վրա են նրանք [կոզակները] քայլում են և առաջնորդում՝ իրենց ձիերի սանձերից բռնած, վորոնք թղթատարական ձիերի նման բեռնավորված են:

Մենք ռուսական դրամ չունեյինք, և հետևաբար մեր դուկատները փոխանակեցինք արծաթ ռուբլով, մի դրամ վոր նմանում և դոլարին, և յուրաքանչյուր դուկատի համար տացանք յերեք ռուբլի:

Վորովհետև այստեղից և Կովկասյան լեռներից այնկողմ մինչև Մոզդոկ իսկական Ռուսաստան չի համարվում, սուրհանդակային ձիերի համար պետք և վճարել արծաթ ռուբլով և վոչ թե թղթադրամով, վոր այնքան արժեքազրկված է, վոր մեկ արծաթ ռուբլին արժե չորս թուղթ ռուբլի, թեև սկզբնապես վերջինս միևնույն արժեքն ուներ:

Ղարաքլիսա մի վողջմելի գյուղ և, բացի ռուսական բանակի կայան լինելուց, ուրիշ կարևորություն չունի: Այստեղ գտնվում են բանակի մի վաշտ և կոզակների մի խումբ: Վայրը ցածր և ուռեխոտ. տները շինված են փայտից, իրար ափսեցված՝ կազմելու համար ղորավոր պատեր. կտուրները ծածկված են հողով: Բոլորի գետնի հատակները, նույն իսկ այն [բնակարանների] ուր գինվորներն են ապրում, յերեք

վոաք խոր են։ Ընդհանրապես մենք այստեղ ավելի վատ [վիճակում] եյինք, քան նույն իսկ Պարսկաստանում։ Վեչ մի ապաստան չկարողացանք գտնել, մինչև վոր հրամայեց նահապետը մեզ տեղավորել մի բնակարանում, ուր մի կրասեր սպա եր ապրում, բայց այստեղ վոչ վոք չեր հասկանում մեզ, և միայն մի պարոն կար, վոր խոսում եր ֆրանսերեն և վորի հետ մենք կարող եյինք մի բառ փոխանակել։ Սակայն և այնպես առացանք մեր անցագրերը, ուձիու համար հրաման, և ի վիճակի եյինք հաջորդ առավոտ ժամը յոթին մեկնելու։

Ի միջի այլ դժվարություններն, կար մեկը վորի համար մենք նախապատրաստված չեյինք. մեր արկղերը պայուսակների մեջ չեյին, վոր կարելի լիներ կոզակների թամբերի վրա դնտեղել։ Հետևաբար պարան և թել գնեցինք՝ կապելու համար դուլպ դուլպ և դնելու ձիերի վրա, բայց ամենաթեթև բեռան անգամ թույլ չեյին տալիս, վոր մեր ծառաները հեծնեն։ Այս պատճառով վորոշեցինք այնպես դասավորել մեր բեռները, վոր յերկու ձի ազատ մնան, և վարձել մի ուձուր մենք փոխում եյինք [ձիերը]։ Այս կարգադրության համար մենք դժվարություն չունեցանք։

Այն յերիտասարդ սպան, վոր մի քիչ ֆրանսերեն եր խոսում, մեզ հետ ուղարկվեց Թիֆլիս, և Դարաքիլիսայի հրամանատարը ամեն ինչ արեց մեզ ոգնելու համար։

Գեներալ Յերմոլովը նամակներ եր տվել մեզ Լշխան Սեմիցավարադինի (Semitzawaradin) համար, (կարծում եմ վրացի), բայց մենք չտեսանք նրան, և մեզ ասին վոր նա գնացել եր Գյումրի (Gomry)։ Այստեղի հացը սև և ծանր, մեզ տվին հավելեն ու ձու, բայց լավ միս ու պաուղ չկար։

Հուլիսի 7. — Առավոտը ժամը յոթին մեկնեցինք դեպի Ուզունլար (Oozunlar) քսանչորս մղոն հեռու։ Անմիջապես քաղաքի մոտ անցանք գետից, յերկկապ մի կամրջի մոտից, և նրա ձախ ափից առաջ գնացինք, նեղ ու հաճախ վտանգավոր գահավանդներից։ Այս ճանապարհը շարունակվեց

մինչև առաջին փոստային կայանը, տասնյերկու մղոն հեռու, վորտեղ հասանք չորս ժամից, գետնի անհարթությանը պատճառով։ Այստեղ փոխեցինք ձիերը և տասնյերկու մղոն ճամբորդելուց հետո, յերեք ժամում հասանք Ուզունլար։ Առաջինն կայարանից մի քանի մղոն այն կողմ անցանք մի խոր ու արագ գետից, լավ կառուցված կիսաշրջանակ մեկ կամրջով մի կամրջից, փաստորեն հայկական կառուցվածք, վորովհետև կային յերկու խաչ, մեկը կամրջի վրա և մյուսը հենց քարաժայռի բարձրության վրա։ Ուզունլարին հինգ մղոն մնացած, ճանապարհը մտնում է լավ մշակված մի դաշտում, վոր յերկարում է մինչև գյուղը, վոր մեծ է և գտնի մեջ մի ընդարձակ ավերակ յեկեղեցի։ Բնակիչները հայ են։ Այ կողմում նկատեցինք մի խոր հեղեղատ, վորից հոսում է մի արագընթաց վտակ. հետաքրքիր եր նկատել վոր այս հեղեղատի մի կողմը բաղկացած է բաղալտ ժայռի մի պանավանդից, դրեթե չորանարյուր վոտք ուղղահայաց, մինչ հանդիպակաց կողմը գրանիտ է, և կանոնավոր կերպով զառիվայր լցնում է մինչև գետի մակարդակը։

Ուձական ճանապարհի չափը վերստն է, հավասար մոտավորապես մի մղոնի յերկու յերրորդին։ Յուրաքանչյուր վերստի համար այստեղ գանձում են յերկու արծաթ կոպեկ։ Բոլոր կայարաններում ճարում ենք հաց, հավկեթն ու հավկիթ, վոր կոզակները մեծ բարությամբ յեփում են մեզ համար։ Այս պինվորներին հիշելիս, կես պետք չե զանց առնեմ ասելու, յերևում է վոր այսպիսի մի յերկրում ուրիշներից շատ ավելի ոգտակար են։ Թե սպանները և թե պինվորները հարգանքով են վերաբերվում հրամանատարությանն հետ, և գոհանում են քչով։... Պինվորները զվարթորեն բեռցրին իրենց ձիերը մեր բեռներովը և ճանապարհի ընթացքում շատ ուշադիր եյին։ Նրանք չանտրիր եյին գոհացնելու մեր պահանջները, նույնիսկ մեր ցանկությունները. պտուղ ու ծաղիկ եյին հավաքում մեզ համար, յերբ նկատում եյին թե դրանք գրավում են մեր ուշադրությունը։

Հուլիսի 8. — Մեր հաջորդ օրվան ճանապարհորդու-

թյունը դեպի Շուլավերներ (Sholavera), յերեսունչորս մղոն հեռու։ Մեկնեցինք արշալույսին, ընկերացած կողակ սպասին, և գյուղից անցնելուց հետո, այն կողմ յերեք քառորդ մշակված դաշտ եր, ապա սկսանք ուղղահայաց բազալտի մի դանգվածի կողքից իջնել քարաշեն մի ճանապարհով։ Իմարկի մինք վար իջանք և առաջնորդեցինք մեր ձիերին մի մղոն տեղ. նախապես հիշատակված գետը մեր աջ կողմումն եր։ Մոտ մի մղոն առաջանալուց հետո անցանք մի վտակից մի կամրջով և այնուհետև սկսանք բարձրանալ մի բարձր լեռ, վերջորդ մղոնում անցանք դեպից հայկական կառուցվածքի մի կամրջով, և ապա նրա յեզերքից սկսանք առաջ գնալ մինչև տասնվեց մղոն, այստեղ բավական դժվարությամբ անցանք, վորովհետև գետը խոր եր, արագ և հարյուրհատուկարդա լայն։ Վեր յելանք մի բարձրությունից և տասներորդ մղոնում հասանք Չիչկանի (Cheechkaun) կայարան, մի բարձր դիրքի վրա։ Այնտեղ, մոտ վեց մղոն հեռու արծաթի հանքեր կային, վոր կոնտրակտացիայով եյին աշխատում, և շահարեր չեյին գտել։ Յերկիրը ծածկված է անտառով, և ծառերի մեջ կան՝ վայրի կաղինի, ընկուզի, սալորի, կեռասի և տանձի ծառեր։ Այս ճանապարհորդության պատեհություն ունեցա նկատելու այն մեծ տարբերությունը, վոր կա դրանների ու բազալտի լեռների մեջ։ Այս թյունը, վոր կա դրանների ու բազալտի լեռների մեջ։ Այս բարձունքների վրա անկարելի և մի ժամում յերեք մղոնից ավելի առաջ գնալ։ Վեց մղոն ևս դեպի առաջ՝ լեռները վերջացան և ճանապարհը անհամեմատ ավելի լավ եր։ Այս կայարանի մոտ մի մեծ գյուղում գտանք գերազանցորեն լավ հարմարություններ. այնտեղ կա մի բազար, ուր պարենավորման բոլոր առարկաները կարելի յե գտնել առատությամբ և լավ վորակով։

Հայ գյուղերում տները կառուցված են փողոցից յերկու կամ յերեք վոտք ցածր, հողն կտուրները կամ տափարակ են և կամ կլոր, վորովհետև նրանք մի կողմից բաց են, վորոնց հաջորդը անհանգիստ և տնում նրանց, վորոնք սովոր չեն։

Այս յերկրի սայլերը տարօրինակ կառուցվածք ունեն։ Նրանք մոտ տասնյերկու վոտք յերկար են, յեռանի կողմից լայն և ճակատի կողմից սուր։ Անիվները փայտից են, մոտ չորս վոտք տրամագծով, առանց յերկաթ անվագոտու, անվրգելներն ու առիղները (անվամատ) մեծ են և սովորական փայտից են, ամրացված և անիվին ու նրա հետ դառնում։ Առիղները բռնված են փայտյա գոտիներով։

Հողե ամանները, վոր գործ են ածում և շատ կանայք կրում են իրենց ուսերի վրա, շատ վայելուչ ձև ունեն, և նմանում են այն հնագույն նմուշներին, վոր մենք յերբեմն յերբեմն ավերակներից պեղում ենք։ Ամանի նյութը սպիտակ է և շատ լավ տեսակ։

Մարդիկ ու կանայք յերբ մեծանում են, կամ քանի տարեկանից հետո, կոշտ կերպարանք են առանում և մորթը կնճռոտում։ Կանանց վզերը բարակ են, հոթիներ նման. նրանք իրենց յերեսը կարմիր ու սպիտակ են ներկում և ծակծկում են իրենց մորթը զանազան պատկերներով, բայց նրանց զավակները մինչև տասնյոթը կամ տասնութը տարեկան մեծ չափով գեղեցիկ են, և նույնը վերթում ունեն իրենց այտերի վրա։ Հովիվները, վորոնք լեռներում արածեցնում են իրենց հոտերը, խմելու ջուրը կրում են իրենց կռնակի վրա փայտյա սրվակի մեջ։

Վորովհետև կողակները սովոր չեն ճանապարհորդել գիշերը, կարելի չե վստահել նրանց՝ ճանապարհորդին նշանակված ժամին արթնացնելու գործում։ Մենք շատ անգամ փորձեցինք նրանց և միշտ ուշ մնացինք։ Յեթե նրանց թողնվի, յերբեք նրանք չեն բերում ձիերին մինչև վոր ցերեկ չինի։

Հուլիսի 9. — Մեր հաջորդ ճանապարհորդության նպատակակետը Թիֆլիսն եր, յերեսունյոթը մղոն հեռու։ Տասնութը մղոն ու կես առաջ գնալուց հետո հասանք Քոդի (Kodi), չորս ժամում. վորովհետև այստեղ միայն մի յեն-

քաղաքի մի մասին, և փութով աչքակից մեզ
ամեն հնարավոր ուշադրութիւն, և անմիջապես սկսավ հար-
մար հանդիպ ունեցած հարցանքի համար, ցույց տալ
և ավելացնել, թե պարզապես բրիտանական սպա լինելուն
ճաշի, որ մենք ընդունեցինք։ Ներախոհութեամբ պետք
վոտ մեծ քաղաքավարութեամբ ընդունեց ինձ և հրավիրեց
ներն ուղարկեցինք գեներալ Կուտուսովին, որ հաջորդ առա-
գանվում էինք վրաստանի մայրաքաղաքում, մեր նամակ-
դամասում և նրանց բնակարաններում մոտ վորովհետև մենք
հրանալի չեր. զեռնվաճ եր գեներալի ու կառավարչի թա-
մով տեղեկացանք վերջնս կայծակնահար եր չեղել։ Տունը
մի մարդ, վորին մենք նամակներ ունեցինք, և որ հուզու-
յիններն վերաբերմամբ մասնավորապես լավ տրամադրված
Արութուն Իսայա խանի (Arratoon Issaya khaun), անգլիա-
բոլ տունը, ուր հրավիրված իջևանեցինք։ Նա վորդին եր
խավոր հայ բնակչի ծառան, վոր մեզ առաջնորդեց իր տի-
այս կարճ հեռավորության վրա անսովոր կերպով լավ եր։
Անցնելով քաղաքի միջից մեզ դեմավորեց քաղաքի գըլ-
քաղաքին մի մղոն մնացած քառասուն բոպե մեզ պահեցին
կերանաինալի մի կայանում։ Հեռավորությունը Սողանլու-
խից Թիֆլիս գառանք վոր ութը և կես մղոն եր. ճանապարհը
աջ ափից և նրա ու բլուրների միջից մինչև Թիֆլիս։ Այդ
մարության չունի։ Ճանապարհը այստեղից գնում եր կուր
կուր գետ մոտ։ Այս վայրը ճանապարհորդների համար հար-
գեղի առաջ հառանք Սողանլուխի (Soganlook) կայարանը,
բարձրանալ անշշակ ու լերկ բարձրությունից և ինը մղոն
և չորս մղոն լայնություն։ Այդտեղ անցնելուց հետո, սկսանք
պատված եր բլուրներով և ուներ ութը մղոն երկարություն
թվում եր թե ոչ ոք չեր, մի կողմ միայն ունենալով ջուր։
կես մղոնից հասանք մի բնական ավազան կամ լիճ, վոր
նախաճաշեցինք մի պարտեզում։ Նորից ճամբա իջանք և
Անցնելով քաղաքի մեջից մեզ դեմավորեց քաղաքի գըլ-
խավոր հայ բնակչի ծառան, վոր մեզ առաջնորդեց իր տի-
բոլ տունը, ուր հրավիրված իջևանեցինք։ Նա վորդին եր
Արութուն Իսայա խանի (Arratoon Issaya khaun), անգլիա-
յինների վերաբերմամբ մասնավորապես լավ տրամադրված
մի մարդ, վորին մենք նամակներ ունեցինք, և վոր հուզու-
մով տեղեկացանք վերջնս կայծակնահար եր չեղել։ Տունը
հրանալի չեր. զեռնվաճ եր գեներալի ու կառավարչի թա-
դամասում և նրանց բնակարաններում մոտ վորովհետև մենք
գանվում էինք վրաստանի մայրաքաղաքում, մեր նամակ-
ներն ուղարկեցինք գեներալ Կուտուսովին, վոր հաջորդ առա-
վոտ մեծ քաղաքավարությամբ ընդունեց ինձ և հրավիրեց
ճաշի, վոր մենք ընդունեցինք։ Ներախոհությամբ պետք
և ավելացնել, թե պարզապես բրիտանական սպա լինելուն
մեր հանդիպ ունեցած հարցանքի համար, ցույց տալ
ամեն հնարավոր ուշադրություն, և անմիջապես սկսավ հար-
ցընել մեր ցանկությունների մասին, և փութով աչքակից մեզ
նրանց իրականացման համար։ Հիրավի, չեմ շատ հաղվագեպ
պարոն փորձառությունն եմ ունեցած վայելելու այնքան ան-

չանխնդիր քաղաքավարություն... Թիֆլիս գտնված մի-
ջոցին ամեն որ նա մի նոր նշան ցույց տալ իր սրտի բա-
րության և պատասխանեցնել տրամադրության։ Յերեկոյան,
այս առաջին ծանոթության, գեներալը՝ յերեսակայելով վոր
մենք բավական հարմարություններ չունենք մեր հայ հյու-
րընկալի տան, մեզ առաջարկեց մի տուն, վոր այդ միջոցին
պատրաստել տվին իր համար, և վոր բարի յեղավ անձամբ
մեզ ցույց տալ. քայլեց մեզ հետ բազարներում և քաղաքի
լավագույն մասում, մատնանշելով ուշադրության արժանի
ամեն բան։ Սակայն, մենք չկրնք կարող ընդունել իր հյու-
րընկալ հրավերը այդ տան համար, մեր հայ հարբընկալի
հանդեպ ունեցած հարգանքին պատճառով, վոր միշտ նպաս-
տավոր եր յեղել անգլիացիներին և մասնավոր խնամք եր
տանում մեր բարերարության համար։

Հուլիսի 11. — Մենք կրկին ճաշի հրավիրվեցինք գեներ-
բալ Կուտուսովի կողմից, վոր ասաց թե մենք պետք և վոր
մեզ համարեյինք իր հյուրերը։ Յերեկոյան այցելեցինք կա-
ռավարչին, վոր նոր եր վերադարձել գավառից. ժամը վե-
ցին, գնացինք վրացի մի իշխանի, իշխան Բեյբուդովի բնա-
կարանը, ուր տեսանք նրա ընտանիքը, և մեզ մեծարեցին
կովկասյան շքյաններին տարբեր ցեղերի տարօրինակ պարե-
րով։ Այս պարերից մի քանիսը կատարեցին վրացի յերի-
տասարդներ, և նրանց հետ յերկու տիկին, վորոնք զանգա-
դրեն կատարում էին ձևական շարժումներ, վոր հետաքրքիր
չեր։ Այս պարերը տեղի ունեցան տիկիններին ու պարոնների
կողմից գեներալ Կուտուսովի պահանջով, վորպեսզի մեզ
ցույց տար վրացական պարի կերպերը։

Կանանց հագուստը մեծ չափով անհարմար է. զա մեր
ամենահին նորաձևություններին վոճին և նմանում, ցույց
դրելով յերկար բաճկոններ և տափակ կուրծքեր, փաստորեն
կանացի կազմվածքը չեր յերևում, բացի մի տեսակ նեղ
շալից կապված մեջքին։ Նրանց կերպարանքը այլակերպված
և շինված կամար հունքերով և նրանց գլխանոցը բոլորո-
վին անշնորք է. զա նմանում է մի տեսակ շրջված սկա-

հակի կամ սանդի, պարզապես մի ծայրատ կոն։ Ներանց հագուստը մետաքսից և, և նրանց բարձր կրունկով կոշիկները ներկված են կանաչ ու կապույտ։ Այս տիկիններն ընթացքը բոլորովին սառն և, պարզ վերապահությունից ավելի, նպատակավոր կերպով դիրք բռնած այս պարագայում, որ նրանք կարծում են թե պետք չէ ազատությունս տալ իրենց, անկասկած նրանք ուրախ պիտի լինեին այս ձևականն վերապահումից ազատվելու։...

Ջորս հինգ մարդ կինտաի կամ ջուքակի նմանող չինական գործիքով և յերկու թմբուկով նվագում էին պարողների համար, և յերբ պարը ընդհատվում եր, նրանք յերգում էին։ Բոլոր ներկաները ծափ էին տալիս շարժման համաձայն և թվում եր թե կատարելապես վայելում էին յերաժշտությունը։ Ներկաները բոլորը, ազատորեն գինի խմում, և մի յերկար սեղան ներս բերին, բեռնավորված պտուղներով, հյուրասիրության համար։... Գալով վրացի կանանց գեղեցկության, որ արևելյան առակախոսներն ու բանաստեղծները, ինչպես նաև նրանց նմանողները, ընդհանուր համաձայնությամբ գովաբանում են, չես ավելի նվազ չափանցրած գաղափար էլի կազմել, հետևաբար շատ հուսահատ չեղա՝ գտնելով որ իմ տեսածները վոչ մեկ գեղեցկություն չունեին։

Ե. ԹԻՖԼԻՍԻՑ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ*

Շարունակ ամառոգության մեջ եյինք հնարավորության սահմանում մեր ճանապարհորդությունը անհապաղ վերսկսելու համար, և շտապում եյինք ընկերանալու սուրհանդակին, վոր պիտի մեկներ Թիֆլիսից կիրակի, ամսի 13-ին։ Վորովհետև սուրհանդակին միշտ ընկերանում է կոզակների պաշտպանությունը, վորպեսզի նրանք չկարողանան նրա պաշտպանությունը չպատճառաբանել վոր մեզ տրվեր անջատ մի պահակախումբ։ Մենք նույնպես հույս ունեցինք հասնելու Մր. Սարաչինին, վոր Ղարաքիլիսայում մեզնից բաժանվելով մի քանի որ առաջ հասել եր Թիֆլիս, առաջել եր իր անցագիրը, և յերկու որ հետո սուրհանդակն մի պահակախմբով մեկնել եր Մոզդոկ։ Անհրաժեշտ պատրաստություններ տեսնելու համար, մնացած մի քանի որը, ամսի 12-ը, հատկացրինք մեզ. դիմում կատարեցինք մեր անցագրի համար, և մեր դուկատները փոխանակեցինք այնքան թղթադրամով, վորքան անհրաժեշտ եր մեզ Ռուսաստանից անցնելու համար։ Դուկատը այստեղ արժե տասնըյերկու ռուբլի, մինչ կայսրության այլ մասերում, ուր թղթադրամի ավելի պահանջ կա, տասում են թե տասը ռուբլի վաթսուն կոպեկ եւ վորպեսզի բոլորովին ազատ լինեյինք, ճաշում եյինք ճաշարանում, ուր ֆրանսական վոճով հիանալի ճաշը արժեր մարդագլուխ յերկու ռուբլի և յերկու կոպեկ, (կամ մոտ հինգ շիլին), ներառյալ մրգանուշ, պտուղ և յերկու շիշ գինի։

* Johnson, եջ 245—266։

Սպասելով մոր ուսական կայարաններում ավելի լավ հարմարություններ պիտի գտնենք, քան Պարսկաստանում մեր անցած ճանապարհորդության, վճռեցինք ազատվել անկողնից և ուրիշ այնպիսի առարկաներից, որոնց բացակայությունը պիտի չունենայինք ճանապարհի ընթացքում, և հանձնարարեցինք պահ մը դադարեցնել մեր ծառաներին։ Մենք արկղներ ձեռք բերինք՝ մեր բեռները պատրաստելու համար կոպակների ձիու թամբին հարմար. մեզ համար առողջության վկայական առինք, և մեր ծառաների համար անցագիր՝ Պարսկաստան վերադառնալու համար։ Նաև գնեցինք, շաքարի, թեյի և ուրիշ մթերքների մի փոքր ամբարում կատարեցինք, ճանապարհորդության համար։

Կարևոր է նկատել, որ Պարսկաստանի նման՝ վրաստանում և Կովկասում նախորդ ձմեռը չեղել էր շատ խիստ և այնքան խոր ձյուն էր տեղացել, որ աննախընթաց և շատ տարիներով. մինչդեռ պատճառով ձյունհալը բարձրացրել էր գետերի ջուրը այնքան, որ քառասուն տարիներից իվեր այդպես հորդում չէր պատահել։ Մեզ տեղեկացրին, թե շատ պարոններ ճանապարհորդել էին [ռազմական] կառքով, և մենք էլ շատ ելինք ցանկանում գնել մեկը [կառք] մեզ համար, որովհետև մինչև հիմա՝ մոտավորապես չորկու հազար մղոն, մենք ճանապարհորդել էինք ձիով։ Ջանազան կառուցվածքի բազմաթիվ կառքեր առաջարկեցին մեզ և մենք համաձայնվեցինք [գնել] մի հինական կառք (barouche), գնված Սան Պետերբուրգում [Լենինգրադ] և այժմ լավ վիճակում, չորկու հազար ռուբլով։ Չորս մեզ տեղեկացրին թե վարձիկավկազի մոտ թերեքի կամուրջը կիսովին փլած է հեղեղից, և նամակներս քարե քայքայված են ճանապարհները, որ այդ միջոցին կառքով ճանապարհորդելը անգործնական և, և թե նրանց վերանորոգման համար չորկու-չորեք ամսու պետք կա, մենք վճռեցինք ձիով շարունակել մեր ճանապարհորդությունը։ Դա մենք ավելի նպատակահարմար համարեցինք, որովհետև այդ կերպ ավելի ազատով եյինք Ոս ավազակներից, որոնք

Կովկասի շրջաններում ավարառություններ են կատարում։

Շատ բարեփոխություններ են կատարված Թիֆլիսում, որոնք սկսել են դիմերալ Յերմոլովի կառավարության որով, և կարող կերպով շարունակվում են նրա արժանավոր հաջորդի՝ գիներալ Կուտուսովի կողմից, որ բոլոր պարագաներում իր ազդեցությունը ի գործ և դնում կանոնավորելու փողոցները, հրահանգներ և տալիս տների ճակատների և նոր տների կառուցման վերաբերմամբ։ Թաղաքի դիրքը շատ նպատակավոր է. գտնվում է մի մեծ բլուրի կողքին, որի ամենացածր մասումն է կուր գետը։ Փողոցների ընդհանուր ուղղությունը հյուսիսից արևմուտք և հարավից արևելք է։ Նրա նշանավոր տաք աղբյուրները մի առվակ են կազմում, որ հոսում է քաղաքի մի կողմից, և այնտեղ վրացական տող ջուրը ամեն տեսակ մարդիկ գործ են ածում լվացվելու և լվանալու իրենց հագուստները։ Տաք ջուրը շարունակաբար վազում է բաղնիքների մեջից։ Առավոտ կանուխ գնացինք բաղնիք և գտանք շատ հաճելի, սակայն, ջուրը ծծմբայինն է, և մի փոքր նմանում է Ջելտենհամին (Cheltenham)։ Ցավալի է նկատել, որ բաղնիքների շենքերը զանցառված ու քայքայման վիճակումն են։ Պատուհանները կոտրած են, որից ցուրտ ողը ներս է խուժում. սա անհարմար է լվացվողների համար, որովհետև պատճառ է դառնում շուտ ցրտառության։ Գլխավոր ջրամբարը հատակի մակերեսից ցածր է. լվացվողը իջնում է այնտեղ, և կարճ ժամանակ հետո, հեռանում է, և սպասավորները շփում են նրան, ճիշտ ինչպես անում են Պարսկաստան՝ թեհրանում։ Հետո, նա մտնում է ավելի պաղ մի բաղնիք, և ի վերջո վերադառնում է այնտեղ, ուր սկսավ։ Ամեն անգամ ջուրը մարդը մտնում է, ջուրը ավելի տաք է քան հաճույքով կարելի է դիմանալ։

Ամառվան ջեղտակում Թիֆլիս քաղաքը շատ տաք է. խմելիք ջուրը, որ վիշ հատակ է և վիշ էլ ախորժահամ, տառնում են կուր գետից, և անկասկած խառնված է հանքային ջրերի

հեռ, վորոնք վազում են նրա մեջ քաղաքի վերև, և առում են թե այգպիսիները շատ են։

Գետի հանդիպակաց ափում գտնվում են արվարձանները, բաղկացած ավելի աղքատ մահմեդականների կամ թաթարների տներից։ Նրանք կապված են քաղաքին գետի վրա բավական բարձր փայտյա մի կամրջով։

Այն մեծ ուշադրությունը, վոր այժմ նվիրվում է վրաստանի բարենորոգության, անտարակույս պիտի ավելացնի շատ արդյունաբերական առարկաներ՝ արտաձման համար. նրա մեջ այլևս ծրագրվում է [հիմնել] ապակու և կաշվի [արդյունաբերություն]։ Ներկայումս հայթայթվում է մեծ քանակությամբ գինի, ասեղնագործ, պղպեղատյա գինք ու զրահ, ձիու սարք, մանավորապես նշանավոր նռերը մուշտակներ, և յափունջի, — մի տեսակ թափք-թիկնոց, — վոր գրեթե յուրաքանչյուր ոև մարդ ունի. սա վաճառվում է իր գործվածքի ու ներքնքյան համաձայն, հասը հինգից տասը ռուբլի։

Վորովհետև Վրաստանը առատ պղնձի հանքեր ունի, վորոնք այժմ աշխատում են, կառավարությունը մտադիր է քաջալերել պղնձի ամանեղենի արդյունաբերությունը թիֆլիսում, վորպես առևտրի առարկա։ Փաստորեն պղնձի քանակությունը այնքան շատ է, վոր նրանք՝ բավական արժանավոր իռալյան մի արտադրի վկայությամբ, արձաններ են ձուլում. նա իր ոռճիկը ստանում է կառավարությունից։ Կարծում եմ վոր սկսած են ձուլել նաև փոքրիկ դաշտային թնդանոթներ։

Այս շրջանում են տեսա յերկար մեռաքանման մազ ունեցող այծի մի ցեղ, գրեթե Քեմանի այծի հատկությամբ, և կարծում եմ թե նման նաև Քաշմերինն։ Վորովհետև կովկասյան լեռների կլիման ու արոտը անկասկած նպաստավոր են այս կենդանիներին, բրդի արդյունաբերությունը անտարակույս այս խնդրի ու ուշադիր կառավարության խնամքին արժանի առարկա է։ Ներկայումս կոշտ բրդյա կտորներ են արտադրում, այնպես վոր գործը նեղմռծված է, և միայն ՀՀՈՒՄ է վորակի ու հյուսվածքի կատարելագործումը։

Այս յերկրի վերաբերմամբ Ռուսաստանի տեսակետն է՝ Եվրոպական ապրանքների մթերանոց (entrepôt) դարձնել, վորպես շուկա շրջակա յերկրների, մանավորապես Պարսկաստանի և Թուրքիայի մատակարարման համար։ Այս տեսակետը իրականացնելու համար, կարող անձնավորությունները նշանակված են շրջելու յերկիրը և տեղեկանալու ամենից նպատակավոր հարմարությունը գտնով, մի կողմից Սև ծովի և մյուս կողմից Կասպից ծովի հետ, նկատի ունենալով միջամտական գետերի ընթացքի գործածությունը։

Բարենորոգությունների ծրագրերի արագ հաջողության ըստ յերևույթին մեծ խոչընդոտ է [հանդիսանում] տեղական կացությունը և բնակչության տարբեր ցեղերի նկատմամբ որինաղանց ընթացքը։ Գտնվելով Թուրքիայի ու Պարսկաստանի սահմանի վրա և կրճատած կովկասյան լեռներին՝ հավանական է և վոր նրանք [այդ ցեղերը] յերկար ժամանակ անկախ մնան, մանավորապես վորովհետև նրանք շրջապատված են քուրդերով (Khords), լեզգիներով (Lesguays), չերքեզներով (Circassians) և ուրիշ ցեղերով, վորոնք այնքան ազատ են, որինազանց և պատերազմասեր, վորքան նրանց նախնիքը քսան դար առաջ, հռոմեացիների ժամանակ։

Հավանական է և վոր Ռուսաստանի առաջին ջանքը պիտի լինի տիրանալ Պարսկաստանի և Թուրքիայի հողամասերից այնքան, վորքան պետք է ապահովելու համար յերկրի անմիջական ամրողջականությունը։ Յերկրորդ քայլը պիտի լինի ապահովել հունդավան քրիստոնյաներին, այսինքն հայ ու վրացի բնակչության գերակշռությունը, յերկու յերկրներից՝ [այսինքն] Պարսկաստանից ու Թուրքիայից։ Յեթե այսպես անելով ռուսները կրթության համար ազատ սահմանեին հաստատուն, ժամանակի ընթացքում կարող է պատահել վոր նրանք համոզեն չերքեզներին՝ իրենց յերիտասարդներին ուղարկել այնտեղ՝ գրել ու կարդալ սովորելու համար, այսպես դառնան քրիստոնյա ու բարեկամ, փոխանակ մնալու մահմեդական և համառ թշնամի։

Վրացական ճանապարհները այժմ ժառանգած են լեզ-

պինների ասպատակային ներխուժումներին, որոնք հանդուգն են, որովհետև ծաղրում են նատակյայ կյանքի ներքնություններն ու պերճանքները, և արհամարհում գինու և վոդկիից բմպելիների առարկելի հաճույքը։ Նրանք շղթայազերծ են այնպիսի հրապույրներով, որոնք այնքան զորավոր կերպով ազդում են բնության ուրիշ վորպինների վրա։

Ի պատիվ ռուսական կառավարության պետք է ասել և անտարակույս ներքին խաղաղության ու համաձայնության համար, բազմաթիվ ականավոր վրացի սպաներ ռուսական բանակում առաջին աստիճանի դերքերի են հասել, և աշխատում են այդ կայսրության մեջ վատահության պահանջող գործերում և իրրև հրամանատարներ։ Ներկայումս կան բազմաթիվ ներհատարպ տպաններ, Կովկասյան գեղերի գլխավոր ընտանիքների զավակներ, որոնք ապրում են Թիֆլիսի հրամանատար սպայի թևարկության տակ, վոր զորք և ածում։ Նրանց վորպես տոորպաս, վորպեսզի նրանց կապի իրենց Առաջնյանի ասպարեզը կատարելապես բաց և նրանց համար, և նրանք կարող են հույս ունենալ բարձրագույն դիրքերի, այն աստիճան, վորքան չեթե նրանք ծնունդով ռուս ծագումով ռուս լինեյին։

Արդեն ակնարկված և վոր ռուսական թղթադրամը պետք է գնել այստեղ նպաստավոր պայմաններով, և ճանապարհորդը պետք է այս քաղաքում այնքան ձեռք բերի, վոր բավականանա մինչև ռուսական սահմանից դուրս գնալը։ Մենք ընդունեցինք յուրաքանչյուր դուկատի համար յերեք արծաթ ռուբլի կամ տասնյերկու թղթադրամ, կամ ավելի ճիշտը 26 արծաթ ռուբլին արժե 100 թղթադրամ ռուբլու։ Բայց, պետք է հիշել վրաստանը պետք ունի պարսկական դրամի, հետևաբար փոխանակափիը այդ յերկրի վրա միշտ ընդունելի չե, և մի կերպ նպաստավոր։ Նույն կերպ պարսկաստանը պետք ունի կանխիկ դրամի Հնդկաստանում, և ի հարկե հնդկական փոխանակագրերը ընդհանրապես շատ հավոր կերպով վաճառվում են Պարսկաստանում, վերջին յերկրում [Պարսկաստանում] վճռական դուկատը արժե

վից ռեալ կամ պարսկական ռուբլի, մինչ այդ դրամը հնդկական շուկայում հաճախ առնվում և շատ ավելի ցածր գնով, մոտավորապես 4 3/4 Բոմբեյի ռուբլի։

Վրաստան մտնելու համար պահանջվում է Պարսկաստանի բրիտանական ներկայացուցչի անցագիրը։ Թիֆլիսում այս փաստաթուղթը քննվում և, և մի ուրիշն և տրվում հանապարհորդին ռուսերեն լեզվով. յերեք փափագի վոր իր հագուստները և արժեքավոր իրերը կարանտինում մնալից չանցվեն, անհրաժեշտ և քննության յենթարկել ամենամոտիկ պետավոր քաղաքում, կամ այստեղ [Թիֆլիսում] կնքել Մի պատրոժնա (padrojna) կամ ճանապարհի անցագիրը և սուրհանդակի ձիերի համար հրամանը նույնպես պետք է այստեղ ձեռք բերվի, ռուսական ադրատության բոլոր ճանապարհների համար։ Այն վոր մենք ստացանք պետի ծառայի Մոզդոկից Լեմբերգ, վորի համար մի հանդամից վճարեցինք, յուրաքանչյուր վերստի համար 2 կոպեկ (ընդ թադրամ), ամեն մեկ ձիու համար։ 1902 վերստի համար վճարեցինք 152 ռուբլի 20 կոպեկ։

Հուլիս 13, կիրակի, սուրհանդակը մի պահակախումբով Թիֆլիսից մեկնեց Մոզդոկի համար, և մենք հետևեցինք նրան, գնեցրել կուտուսովի մոտ ճաշելուց հետո, վոր հատում եմ քաղաքավարության համար մի քիչ ուշացրեց նրա [սուրհանդակի] մեկնումը, և մեզ ավավ առանձին պահակախումբ մի ապահ հրամանատարությամբ։ Չի հեծած հրաժեշտ առինք նրանից ժամը յերեքին, նախապես չորս թղթատարական ձիով մեր բեռները ուղարկված լինելով, վորի համար մենք վճարեցինք՝ յուրաքանչյուր վերստ ամեն մեկ ձիու համար յերկու արծաթ կոպեկ, բացի այն վոր մենք նախապես վճարած հինք... Մոզդոկից Լեմբերգ ճանապարհի համար, միացյալ միջանկյալ ճանապարհը Մոզդոկից—Թիֆլիսը համարվում և իսկական Ռուսաստանի սահմանից այն կողմ, և վճարվեց, ինչպես ասինք, ար-

ծաթի ռուբլով, արժիքով մոտավորապես չորս անգամ ավելի քան թղթապրամ։

Բաղաքից մոտ չորս մղոն այն կողմ, կուր գետի մի ճյուղից փայտյա մի կամրջով անցանք։ Ճանապարհը շրջանակվում է կուր գետի յերկարութիւնը աչ ափից։ Տասնհինգերորդ մղոնում անցանք մի կամրջով մի այլ գետից, Արագվա (Arragua) անունով, և մոտ մի քառորդ մղոն այն կողմ, անցանք վրաստանի նախկին մայրաքաղաքի Մծխեթի (Mschetta) ավերակներից, որ գտնվում է կուրի ու Արագվայի միացման վայրում։ Բաղաքի կենտրոնում շատ մեծ մի հին յեկեղեցի կա և նրա մոտ մի գերեզմանատուն, որ պարփակում և վրաստանի թագավորների շիրիմները։ Յեկեղեցու արևելքը, մի գոնաձև լուսամուտից մի վանքի ավերակները կան և նրանցից կես մղոն [հեռու] ճանապարհի ձախ կողմում, մի այլ յեկեղեցու ավերակները։ Անկասկած նախապես նրանք բոլորը քաղաքի սահմանների մեջ էին։ Տասնութերորդ մղոնում հասանք Հարցիսկել (Hartsiskel) կայարան, ուր փոխեցինք մեր ձիերը։ Դեպի այդտեղ տանող ճանապարհը ծայրահեղորեն լավ էր և [ընթանում] էր կուր գետի աչ ափի յերկարութեամբ, որ յերբեմն կես մղոն հեռու էր մեզնից և նրա պղտոր ջրերը փրփրալով արագ առաջ էին ընթանում։ Այս ճանապարհին գետի Դուշեթի (Duchett) անցանք բազմաթիվ փոքրիկ ու վակներից, որոնցից յերկուքը հանքային ջրեր էին և ունէին թթվուտի ու ծծմբի համ։ Կայարանից մոտ մեկ մղոն հեռու գաշտերի մեջ անցանք կուրի մի փոքր ճյուղից, որ հոսում է ձախից։ Մերձակա բոլոր լեռները խառնարան ուռած են, և գաշտերը ծածկված են բուսականութեամբ ու ծաղիկներով։

Հարցիսկել գեղեցիկ և հինգ մղոն տրամագծով մի գաշտում, տարածված արևելքից արևմուտք։ Բարձունքների վրա հաճախ տեսնվում են վանքերի ու յեկեղեցիների ավերակները. բոլորն էլ ամրացրած լինելու յերևույթն ունեն։ Այս կայարանը ունի մի քանի հյուղակներ ու ախոռներ, և

շատ քիչ կամ բնավ հարմարութիւններ չունի ճանապարհորդների համար։ Այստեղ հասանք չորս ժամ քառասունհինգ րոպեում, ճանապարհորդած լինելով մոտ վեց վերստ մի ժամում։

Թեյով կազդուրվելուց հետո, գիշերը ժամը տասն ու կեսին մենք կրկին ճամբա յելանք և առաջացանք դեպի Դուշեթ։ Ճանապարհը լավ եր, բացի այդ կայարանին յերեք քառորդ մղոն մնացած, յերբ մի բլրից իջանք և բարձրացանք մի ուրիշը, որի վրա և գտնվում [Դուշեթ]։ Այստեղ մենք տեղավորվեցինք հարմար մի տան, որ նախապես շատ ընդարձակ և յեղել։ Այս կայարանը ամրացրած և, ուր մնում է մի խումբ զինվոր, զաշտային մի թնդանոթով, հրամանատարութեամբ մի սպայի, և դրսում ունի մի լավ բազար։ Մենք այստեղ հասանք ժամը յերեքին և մնացինք մինչև վեցը, յերբ նախաճաշեցինք և սպա շարունակեցինք մեր ճանապարհը։

Հուլիսի 14. — Մեր հաջորդ ճանապարհը դեպի Կաշաուր (Kashaoor) հիսուն մեկ վերստ հեռու եր կամ մոտավորապես յերեսուն չորս մղոն։ Մեկնելով Դուշեթից սկսանք բարձրանալ մի կարգ բարձր բլուրներ, մասամբ լերկ, մասամբ ծածկված կանաչութեամբ և մի կարգ տեղերում սովորական թուփերով։ Տեսարանը յերբեմն նմանում եր այգու։ Թեև յերկիրը պտղալից եր ու խորդ ու բորդ, [սակայն] նկատելի կատարի ճանապարհներ անվն ուղղութեամբ։ բազմաթիվ հյուղակներ կային գանազան գիրքերի վրա, և բարձունքների վրա կային ամրացրած գյուղեր ու յեկեղեցիներ։ Մենք տեսանք բնիկ վրացիների յերկրագործութեան նմուշները։ Նրանք վարում են վեց զույգ յեզով ու գամեշով, որը դարձը դժվարացնում է, հետևաբար նրանց հացահատիկի գաշտերը գծավարաձև են, այսինքն համեմատած լայնքին, և յերբեմն դրանք մի քառորդ մղոն յերկար են...։ Արորը յերկու անիվ ունի, մեկը յերեք վոտք տրամագծով և մյուսը ասես լինչից. առնակը յերկար է և վոտքը անիվը գտնվում է բարձրացած կողմը, վորպեսզի ընթանա մեծ անիվի հետ,

վոր վարի կողմից և գնում։ Ջուրը ամբողջած չի առնա կենտրոնում, այլ ավելի մոտ մեծ անիվին, վոր մենակ գառնում է նրա վրա։ Այս դյուռով նրանք մի կերպ վարում են բլուրների կողքերում։ Մենք անցանք բազմաթիվ փայտյա կամուրջներից. ճանապարհը ընդհանրապես լավ եր. սակայն ընդմիշտ յերթևեկ, յերթևեկ վայրկյան։ Անանուրի (Annaanour) կայարանին մեկ մոտն մնացած, մեր վերջին կայարանից մոտ տասնյերկու վերստ հետու, մենք անցանք ձախից հոսող մի գետից։ Ամբողջ յերկիրը հորդառատորեն ոռոգված է։

Անանուր գյուղը գետնված է մի փոքր գաշտում, շրջապատված բլուրներով ու լեռներով. մի բարձրության վրա մի բերդ կա, ուր ապրում է սպան, սա լինելով կողակից մի հնձելազորի կայարան։ Այստեղ գուցե ավինք մեր անցագիրը, ինչպես արել եյինք նախապես նման կայարաններում, և սովորականի նման ձիեր փոխելուց հետո, շարունակեցինք...

Վրացիները գյուղերում ու ճաղկավետ դաշտերում ունեն մեծ թվով մեղվի փեթակներ։ Նրանք շինված են ուռի ճյուղերից, յերկար և կոնաձև, նման ծայրատված բուրգի, ծայրում ունենալով մի ծակ մեղուների մուտքի ու յելքի համար։ Նրանք դրված են տափարակ քարերի կամ քարահատակի վրա։ Թվում է թե այստեղ մեծ ուշադրություն են նվիրում այս ժրաջան ու արդյունավետ միջատների զարգացմանը։

Ցերկրի ամեն կողմ տեսանք բազմաթիվ ջրաղացներ, վորոնք Պարսկաստանի նման աշխատում են մի վտակի ջրով, դառնալով կոմիսակի մի հորիզոնական անիվի վրա։

Մեկնելով Անանուրի փոքրիկ դաշտից, մտանք մի խոր ձոր, յերկու բարձր լեռների մեջ, ճանապարհը անցնում է ձախ կողմի լեռան ստորոտից և գետը գտնվում է աջ կողմում։ Այս մեծ կիրճը յերկարում է մինչև Պասանուրի (Passanoor) կայարանը, վորի ընթացքում անջատված բլուրների ու լեռների կատարում տեսնվում են աշտարակներ կամ յեկեղեցիների ավերակներ։ Կան նաև բազմաթիվ գյուղեր կամ ամրոցներ, ուր մի կամրջից անցնելուց հետո, յերեք մղոն հետացած,

վեր կամ ավելի ճիշտը հյուղակներ, գետնված բարձունքների վրա, ճանապարհից հարյուրավոր յարդա վերև, ունենալով իրենց մեջ խոր գահավանդներ, վորոնց միջից վազում են փոքրիկ հեղեղատներ, ապիտակ փրփուրով, այսպես ընծայելով պաշտպանության դյուրություն և ապահովելով ջրի մատակարարումը։ Այս շրջանի մարդիկ նմանում են վայրի կենդանիներին, ապաստանած անմատչելի վայրերի և շրջապատին տիրապետող դիրքերի. վորպեսզի կարողանան հեշտությամբ հսկել և պաշտպանվել։ Այդպիսի մի վորևե դիրք ընտրվում է հյուղակի համար, յերեք բավականաչափ ղուրկ և ծառից և բավական տափարակ և տան համար, վոր սակայն շատ պարապանների բարձրանում են մեկը մյուսի վրա։ Այս բարձրությունների թիկունքում գտնվում են բարձր լեռներ, ծածկված մութ կանաչ ծառերով, և բլուրների գառիվայրերը պարարտացվում են հալչող ձյուներից. մշակում են կամ ծածկվում են բուսականության կանաչ կապերտով. ինչպես ձորերում. Աչքառու քարաժայռերը գրանիտ են, բազալտ, կրաքար և սալաքար, շատ խառնված են, բազալտ և սալաքար, շատ խառնված և ներկայացնում են մակերևույթ ու գույնի զանազանություն, վորոնք ավելացնում են այս վիպական տեսարանի գեղեցկությունը։...

Կայարանի մոտ մեր ձախ կողմն անցանք յերկու բավական մեծ վտակներից, վորոնք հոսում են դեպի հյուս, բացի բազմաթիվ առվակներից, վորոնք կտրում են ճանապարհը։ Բոլորի վրա փայտյա կամուրջներ կան, զորավոր պարսը։ Բոլորի վրա փայտյա կամուրջներ կան, զորավոր կերպով կառուցված և լավ ապրված. հավանորեն սրանք ռուս պինվորների գործն են։ Լեռների վրա տեսնվում են կենդանիների բազմաթիվ հետքեր [հոտեր] և խոր ձմակներ ու խորշեր լի են բարձր ծառերով։ Պասանգունի (Passangoon) մոտ ճանապարհը գառնում է դեպի հյուսիս-արևմուտք, ունենալով մեր աջ ու ձախ կողմում լեռներ։ Այս կայարանից շարունակեցինք նման ճանապարհից, ունենալով Արագվա [գետը] մեր աջ կողմ, մինչև Կաշաուրի կայարանին։

ականք բարձրանալ շատ դառիվեր մի ճանապարհից, վորի ձախ կողմը գահավեժ եր.... Լեռան կատարներում ու կողքերում շատ ամրացրած գյուղեր կան։ Կաշաուրի մոտ կան մի բերդի մնացորդներ, վոր ասում են թե Հերակլեսն է շինել։ Ռուսական ներկա կայարանը մի շատ բարձր դիրքի վրա կե, բայց առայժմ շատ հարմարություններ չունի։ Մենք քնեցինք շատ փոքր մի վրանում, վոր գիշերվան ընթացքում տեղացած խիտ անձրևի պատճառով թաց եր և մենք շատ անհանգիստ եյինք։ Ցեղանակը ցուրտ եր, մանավանդ ձյունապատ լեռների միջձավորության պատճառով։ Այս տեղից այն կողմ ճանապարհն յերկու կողմում բնակում ե oss (Ooss, Oossetians) ցեղը, շատ հանդուգն, անվեհեր և անկատարելի մարդկանց մի ցեղ։ Նրանց սովորություններն տարբեր են վրացի գյուղացիներից, վորոնց մենք հանդիպել եյինք նախորդ օրերին՝ հունձքի դաշտից վերադառնալիս։ Նրանք յերգում են, ռուսական գյուղացիների նման նրանց յերաժշտությունը վայրենի և, բայց տարբեր ձայները լավ են ներդաշնակվում։ Վրացիները սովոր են ամեն որ խմել մեծ քանակությամբ տեղական գինի, վոր թուլ և և ճիշտ ասած թմրու ոտարականի ճաշակին, ասում են թե վրացիներից վոմանք որական յոթը շիշ գինի են խմում և չեն արբենում։

Առավոտ ժամը հինգին մեկնեցինք կայարանից, շատ խիտ մշուշով կամ կաթիլոտ անձրևով, վոր վոչ միայն թրջեց մեզ, այլ ճանապարհը դարձրեց ցեխոտ ու սահուն, հետևաբար գժվարանցանելի, յերբ շարունակում եյինք բարձրանալ։ Մենք այս վերելքը շարունակեցինք յերկու ժամ կամ մոտ վեց մղոն, ունենալով խոր գահավանդներ մեր ձախ. և լսում եյինք ներքևից մռնչող ու սուրացող անտեսանելի Արագվա գետի ձայնը։ Լեռան գառիվայրից դառնալուց հետո, անցանք նրա յերկու կատարների միջից և այնտեղ ճանապարհն ձախ կողմում նկատեցինք քարե պատվանդանի վրա յերկաթյա մի խաչ։ Սրանից այն կողմ կան մի կարգ բարձր լեռներ տարածված խաչի ձախ կողմը,

ուր գտնվում և Բայդար (Baidar) գետի աղբյուրը։ Այժմ սկսանք իջնել դեպի Քոբիի (Koby) կայարանը, մեր վերջին կայարանից տասնվեց վերստ կամ տասնմեկ մղոն հեռու։ Այս ճանապարհի վրա անցանք ձյան ու սառույցի զանգվածներից՝ դիզված անդունդներում. նրանցից անցնելուց հետո, սկսանք գետակներ արագորեն վազում եյին այս բնական կամուրջների տակից. սառույցի կամարներ են կազմված ջրերի ընթացքի վրա, վորոնք պահում են դիզված ձյունը։ Տեսանք ամբողջ անդունդները, լցված ձյունով հատակից մինչև նրանց ուղղահայաց կողքերի ծայրը։ Այս ճանապարհը ամբողջովին լավ և ու լայն.... Քոբիի կայարանից մի քառորդ մղոն այն կողմ, առաջին անգամ թերեկ դեսը մոտենում և ճանապարհի ձախ կողմը, մի ձորից յերկու լեռների միջև դեպի հյուսիս։ Այս կայանը լավ կառուցված և հարմարություններ ունի շատ պինվորների ու ճանապարհորդների համար։ Մասնավոր ուշադրության արժանի և այն, վոր ռուսական պինվորները, ուր վոր ել հաստատված լինեն, ոգտակարապես աշխատեցվում են հանրային գործերի, ինչպես ճանապարհների, կամուրջների, պինվորական կայանների և այլնի շինության։ Նրանք այս աշխատանքը կատարում են առանց դժվարության։

Այս յերկրում կայարանները հետևյալ ընդհանուր ծրագրով են կառուցվում։ կազմվում և մի քառակուսի, վորի մի ուղղանկյունում, կամ միացած յերկու կողքերում, գտնվում են պինվորների և սպաների տները և կողակների ձիերի ախոռները, մյուս յերկու կողմերն ունեն բարձր ցանկապատեր և մի դուռ։ Այս քառակուսի [տեղի] տարածությունը վորոշվում և կայարանում հաստատվելիք պինվորների թվի համեմատ։ Այս կայարաններից մեծագույն մասում կա դաշտային մի թնդանոթ, և յերբեմն ավելի։ Պատուհաններն ու դռները բացվում են ներսի կողմից, և առաջինները ապակու փոխարեն ծածկված են թղթով։...

Մեկնեցինք դեպի կարմրակ (Kassy-Beg), տասնվեց վերստ կամ տասնմեկ մղոն հեռու, [անցնելով] լեռների ստորոտից,

գաշտերի միջից և ունենալով վրիժառուի թևերին ճանապարհի ձախ կողմում, կաղնիկ գյուղը գետեղված է կրաքարի, գրանիտի և սալաքարերի ուղղահայաց լեռների ստորոտում, վորոնք մի մղոն բարձրություն ունեն։ Նրա ձախ կողմից հոսում է Թերեկը, վորից այն կողմ գտնվում է կանաչ լեռների մի շղթա։ Մեկուսացած մի լեռան կատարին կա մի վանք կամ ցիկղեցի. հեռուն տեսնվում է հակա բարձրությամբ ձյունապատ կաղնիկ լեռը, վոր ասում են թե բարձրությամբ հավասար է Մոն Բլանին։ Այս գյուղի դիրքը վերին աստիճանի վիպական է։ Դեպի այն կողմ ճանապարհը անցնում է մի նեղ անդունդից Թերեկի մոտից, վորի ցեղերքից խիզախորեն վեր են կանգնում մեծ բարձրությամբ քարաժայռ լեռներ։ Ցերկու ժամ ճամբորդելուց հետո հասանք Դարիալի (Dariel) կայարանի հանդիպակաց կողմը, գետեղված շատ նկարագեղ և հրաշալի վիճակած մի դիրքում։ Այստեղ պնակ համար մենք անցանք մի գետակից, մի բարձր վայրկամրջով։ Ճանապարհը անցնում է գետակի ու Թերեկի միջտեղից։ Թերեկի կամուրջը ամրացրած է ուղղահայաց մի քարաժայռի վրա, վոր տաշված է՝ կամրջին մոտեցումը հնարավոր դարձնելու համար. դա քանի յարդա լայն է և շինված է հաստատուն....

Հասանք Լարսի (Lars) կայարանը, Դարիալից հինգ մղոն ու քառորդ հեռու, գետեղված մի բարձունքի վրա. տիրապետում է նույն անունով ավանին, մի քարաժայռի ցիրկարած թևի վրա, վորի շուրջը գառնում է Թերեկը։ Մոտենալով կայարանին, անցանք մի գետակից, վոր մերձակա լեռներից հեղեղների բերած քարերով լցված եր։ կայարանը ընդարձակ է և լավ ամրացրած ցցապատնեշով. ունի համար շինքեր և տալիս է լավ հարմարություններ։ Նկատեցինք, վոր շատ տեղերում լեռան մասերը ճեղքված եյին, ցիրքեմն 950 յարդա լայն, գլորվել ու հաստատվել եյին, ցիրքեմն հասնելով մինչև ներքևի ձորը և գետի կողքերում. գետակի միացման տեղում տեսնվում է հակա քանակություն քար, ծառ և ուրիշ նյութեր, վորոնք լեռներից վար

գան գլորվել ճանապարհի վրա, վերջերը վերստում, չորս մղոն, անցանք Քարտաշ (Cartash) կայարան գյուղից։

Այս տարի Թերեկը վողողել և ամբողջ ձորը և նուխիսկ եր հունն և փոխել, այս պատճառով այստեղ ճանապարհը այլևս գործածական չե, և վորովհետև ժամանակը անբավական է և լեղել դարմանելու համար վնասը, մենք ստիպված ենք լեռների դառնալքերի յեղերքից գնալ և անցնել հենց լեռների գոյացած անդունդներից, վոր կատարում են ջրհեղեղից գոյացած անդունդներից, ընկերացած՝ վերջին կայարանի սպասի ձեռ դժվարության համար, հետևակների զորավոր մի պահակություն համար հետևակների զորավոր մի պահակություն համար։ Տակավին բարձր են լեռները, և ամբողջ յերկիրը խմբել։ Տակավին բարձր են լեռները, և ամբողջ յերկիրը Թվում է մի ամբություն, նպատակավոր սպասակ ցեղերի համար։ Մեզ ցույց տվին շատ վայրեր, ուր ռազմ հարձակում են գործել՝ գերիներ վերցնելու կամ կողոպտելու համար ճանապարհորդներին։

Նախորդի նման այս ճանապարհն էլ հաճախ ընդհատվում է՝ լեռներից բաժնված ու վար գլորված զանգվածային քարերով և գետ ընթացքի փոփոխումովը, վորով սովորական տեղերը անանցանելի են դարձել, և այս խոչընդոտների մեջ, յերբեմն չրերից անցնելով հասանք Բալտա (Balta), մի վատ կայարան, նախկինից չորս մղոն հեռու։ Այստեղ հարմարությունները քիչ են. և [կայանը] ծառայում է գյուղի բնակչության պաշտպանության համար միայն։ Նկատեցինք մեծ թվով շարժական չրաղացներ, վորոնք նման են հյուղակների. մոտ վեց վոտք քառակուսի, շինված տեղինք մեծ թվով շարժական չրաղացներ, վորոնք նման են հյուղակների. մոտ վեց վոտք քառակուսի, շինված ջրանցներից և հաստատված չորս ձողերի վրա։ Ներանք գերանների և հաստատված չորս ձողերի վրա։ Ներանք գերանների վրա, վորոնց ջուրը վաղում է հոլիզոնական անիվների վրա և ծառայում գլխավորապես հացահատիկ աղալու պինվորների համար։

Այստեղից ճանապարհը անցնում է ընդարձակ ու խոնավ դաշտերի կամ կանաչների միջից, ուր գյուղ մինչև մի կամուրջ Թերեկի վրա, վլադի կավկազի (Vladi Caucass) գիմաց։ Մեզ տեղեկացրել եյին թե այս քարաշեն կամուրջը գլխավին անանցանելի յե, կիսովին քանդված լինելով հեղեղներից։

դից· փորձով տեսանք վոր այդպես եր։ Ճամբորդների դյուրության համար յերկու պարաններ ամբացրած են մի յերկաթ շրջանակ, վերջից մյուսը, վորոնցից կախված և մի յերկաթ շրջանակ, նման մի ասպանդակի, վոր ծառայում և վորպես նստարան մի անձի համար և կենտրոնում կապված մի պարանով քաշվում և դեպի առաջ ու յետ, և այս յեղանակով մենք և մեր անասունները փոխադրեցինք այս խոր ու արագընթաց գետ վրայից։ Մի քանի կողակներ ձիերը անց կացրին բավական հեռու նեղքեում, շատ մեծ դժվարությամբ և վտանգելով իրենց կյանքը։

Վլադիկավկազի ճանապարհի վրա հանդիպեցինք բազմաթիվ ձիերի, վոր Կաբարդայից (Kabarda), (Զերքեզիատանի մի շրջան, Կուբան գետի վրա), տանում եյին Թիֆլիս վաճառելու համար։ Նրանցից մեծագույն մասը ռուսական հեծելազորի համար և. կային մի քանի բնաբուծներ՝ մանավոր անհատների համար։ Այդ շրջանի չերքեզ ձիերը խոշոր են, և շատ են գնահատվում իրենց աղնվացեղության, դեղեցկության ու արագության համար։ [Գնդ. Ջոնսըն յերկար բոլեն խոսում և չերքեզ ձիերի մասին և ասում և թե լավ ձին վաճառվում և հինգ հարյուր արծաթ ռուբլի կամ մոտավորապես հարյուրհնգհնգ ֆունտ ստեռլինգ, վոր նա ճիշտ և համարում։]

Կրթության դուրկ ռահ, վորոնք ապրում են վլադիկավկազի շրջակայքում, դարանակալ սպասում են ճանապարհորդներին, վորոնց նրանք տանում և գերի են պահում, մինչև վոր ռուսներից փրկագին ստանան նրանց համար։ Դրան կորզելու այս յեղանակը գոյություն ունի նրանց մեջ քառասուն տարիներից ի վեր, և նրանք այնքան հարատև վորին հետապնդում են, վոր յերկաթ ամիս չի անցնում վոր մի աչքառու անցորդ նրանք չփախցնեն։ Ամենավատանգավոր տեղերը, վոր մատնանշեցին ինձ, դեպի բարձր լեռները տանող նեղ կիրճերն են։...

Չ. ՀԱՅԵՐԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ *

Մայիսի 18. — Գնացինք այցելելու հայերի յեկեղեցին Ջուղայում (Joolfa), նախ անցնելով Չհար բազի (Chaur) այլինների, անցանք յերեսունյերեք կամարով կամրջից, վոր կառուցել և Ալլահվերդի Խան (Allawurdee khaun), թեև դա մանում և Շահ Աբբասի անունը։ [Այստեղ ուղեկիրը ճանապարհում և Շահ Աբբասի անունը, վորի թարգմանությունը դանց ենք չանում. տես Johnson, եջ 110—111]։

Անցնելով այս կամրջով Զեյնդերուդ (Zainderood) գետի, վոր Ջուղայի արվարձանը բաժանում և Սպահանից, մենք առաջ գնացինք մոտ մի քառորդ մղոն, շատ նեղ փողոցների միջից, վորոնց յերկու կողմերում կան բարձր պատեր, և մեջտեղում հոսուն ջրի մի առու, և ի վերջո հայկական գլխավոր յեկեղեցու և արքյեպիսկոպոսի բնակարանի առաջ։ Յեկեղեցու դուռը, փողոցի վրա, ծածկված եր յերկաթ թերթով. նախ գնացինք մի քանի գիտակ անգլերից, ըստ յերեույթին կառուցված պաշտպանության նպատակով, և յեկանք այն տարածությունը, ուր փոքրիկ պանդոկներով դանդակատունն եր. սա քառակուսի մի շինք և, կանգնած չորս քարե սյուների վրա և գետեղված յեկեղեցու դրան առաջ։ Այստեղ և գետեղված և վոչ թե յեկեղեցու վրա, վորպեսզի շինքը ավելի բարձր չերևի մզկիթներից։ Յեկեղեցին փոքր և, և ծածկված և իր կառուցման ժամանակի պատկերներով, նկարված մոտավորապես յերկուհարյուրհնգ-

* Johnson, եջ 110—113։

սուն տարի առաջ, Շահ Աբբասի իշխանության որով։ Պատկերները ներկայացնում են գլխավորապես մեր փրկիչը, կույս Մարիամը, սուրբերը և առաքյալները։ Այդ նկարները տալիս են արքայական պատմության նշանավոր դեպքերը, ինչպես խաչ կրելը, Բրիստոսի հարության և այլն, և այլն։ Ամենամեծ պատկերի նյութը դատաստանի օրվան ընդհանուր հարության է, և այստեղ ինչպես նաև կաթոլիկ եկեղեցիների նման շատ դործերում, գլխավոր խմբերը յերկրի վրա նականների պատկերն է, որոնք թափորով գնում են դեպի յերկինք։ Վարի մասում տեսնվում է մռայլության ու կրակի անդունդը, բերանաբաց վիշապներով, որոնց կղակներից ու մարմնից տեսնվում է անցքը թշվառական մեղավորների, դատապարտված հավիտենական բոցերին։ Վանականների վերև ներկայացվում են շատ հրեշտակներ, որոնք հնչեցնում են իրենց վոսկյա փողերը։ Մի պարագա, որ չես չեմ կարող նկատողության չանել, այն է որ դատաստանի օրվան հարության պատկերի մեջ վեչ մի կնոջ ու վեչ մի յերեխայի դեմք չկա։ Այս տարամերժումը թերևս կատարված է ի դոհուցում պարսիկների, որոնք հավատալով որ կանայք հոգի չունեն, ի հարկե նրանք չեն կարող դյութության ունենալ յերկինքում։ Վորքան անգութ, յերբ յուրաքանչյուր մահմեդականին, ինչպես նաև շատ քրիստոնյաների, յերկրային դրախտը կնոջ սերն է։....

Շահ Աբբասի ժամանակ Ջուղայում տասնյերկու հազար հայ տներ կային և քսանչորս յեկեղեցի։ Այժմ վեցհարյուր տնից ավելի չկա և տասնյերկու յեկեղեցի։ Նրանք մի վանք ունեն, տասնյերկու կուլսերով և մի վանք, ուր ապրում են արքեպիսկոպոսը և յեպիսկոպոսները, որոնք չեն ամուսնանում։

Հայ բնակիչների այս նվազեցումից մենք կարող ենք հաշվել Շահ Աբասի ամայացումը և արդարև Պարսկաստանի ընդհանուր անկումը։ Հայերը տարամերժորեն վաճառականներ են ու արհեստավոր, և յերբեք պինդ տեղ չեն յեղել, նման

նպես ամեն հնարավոր միջոցներով նրանց արգելվում է վերկրից հեռանալ։ Սակայն, նրանք նվազել են քսանից տասնինը, և ինչ պիտի լինեն յերեք նրանք պինդ տեղ ծառայության մեջ մտնելին և նոսրանալին պատերազմով։ Վոչ ել մենք պետք է յենթադրենք վոր Շահ Աբասի այն արվձաննները, ուր բնակում են հրյանները, ավելի բախտավոր են յեղել, վորովհետև Եահուդիան կամ հրեական թագավորությունը մի քանի տներ ունի միայն մնացած։



Արբաա Միրզա, (նկար Կեր Փորտրրի)։

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՌՈԲԵՐՏ ԿԵՐ ՓՈՐՏԵՐԻ

(1817—1820)

Սըը Ռոբերտ Կեր Փորտըը աեցյալ դարի սկզբնավորուԹյան հայտնի անգլիացի մի նկարիչ եր ու հնագետ, որ մինաույն ժամանակ նշանավոր եր իր կատարած ճանապարհորդուԹյուններով։ Նա ծնվել և Անգլիայի Դյուրհամ քաղաքում 1775-ին, և ժ.Հ. դարի վերջավորուԹյան նրա նկարչական համբավը տարածվել եր իր յերկրի սահմաններից դուրս։ 1804 Թվին Ռուսաստանի միապետ Ալեքսանդր Ա. ցարը նրան հրավիրեց Պետերբուրգ (այժմ Լենինգրադ), վորպես պատմական նկարիչ։ 1808-ին նա վերադարձավ Անգլիա և ընկերակցուԹյամբ Սըը Ջոն Մուրի այցելեց ՓորԹուգալիա և այլ յերկրներ։ 1811 Թվին նա վերադարձավ Պետերբուրգ և այնտեղ ամուսնացավ ռուս իշխանուհի Մարիա Շչերբատովի հետ։ 1813 Թվին գնաց Անգլիա և 1817-ին սկսավ իր ծանոթ ճանապարհորդուԹյունը դեպի Անդրկովկաս, Պարսկաստան, Միջագետք և Թուրքիա, վոր տևեց մինչև 1820 Թիվը։ Նրա յերկու մեծագիր ու սուլար հատոր կազմող ուղեգրուԹյունը հրատարակվեց Լոնդոնում 1822-ին, հետևյալ խորագրով. «Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Bobelonia, etc. During the Years 1817, 1818, 1819, and 1820. By Sir Robert Ker Porter»։ Նա մի ժամանակ հյուպատոսական պաշտոն վարեց վենեզուելայում և 1841 Թվին նորից վերադարձավ Պետերբուրգ, ուր մեռավ մինաույն տարում։

Ռոբերտ Կեր Փորտըը մեկնում է Պետերբուրգից 1817 Թվին, ոգոստոսի 6-ին (Հ. Տ.), մտադրված լինելով գնալ

Ոդեսսա և այնտեղից կ. Պոլիս և Փոքր Ասիայից ճանապարհորդել դեպի Պարսկաստան, սակայն, այդ որերում Պոլսում տիրող համաճարակ ժանտախտի պատճառով, մեր ուղեգիրը փոխում է իր ուղղությունը, և ուղղվում է դեպի Վրաստան, այնտեղից Հայաստանի վրայով անցնելու համար դեպի Պարսկաստան։ Սև ծովի ցեղերից ճանապարհորդելով հանդիպում է Նիկոլաևի, Խերսոն, Մարիուպոլ, Ռոստով. Ջերկեսք, Հանքային ջրերը և ապա Վլադիկավկազ։ Այս տեղից մինչև Թավրիզ կատարած ուղեգրությունը մենք թարգմանել ենք գրեթե ամբողջությամբ, միայն զանց առնելով ընդհանրապես տեսարանների նկարագրականները, որոնք այնքան առատ են կեր Փորտերի նկարում։

Թավրիզից մինչև Թեհրան ուղեգիրը ընկերանում է գահաժառանգ Աբբաս Միրզային, և Պարսկաստանի մայրաքաղաքում նա ներկայանում է Ցաթ Ալի Շահին և նկարում է նրան։ Այդ պատկերը զարդարում է նրա գրքի առաջին հատորի առաջին էջը։ Թեհրանից նա գնում է Սպահան, շրջում է գրեթե ամբողջ Պարսկաստանը. չորկար կանգ է առնում Պերսեպոլիսում, ընդօրինակում է բոլոր բեկեռագրերը, նկարում է բոլոր պատկերները և մանրամասն նկարագրում բոլոր հնություննները։ Ապա կեր Փորտերը գնում է Միջագետք, նույն համբերատարությամբ ուսումնասիրում է բաբելոնի ավերակները, նշանակելով բոլոր պատմական ու հնագիտական արժեք ներկայացնող իրերն ու արձանագրությունները։

Ապա կրկին վերադառնում է Պարսկաստան, այս անգամ իր ուշադրությունը նվիրելով քրդաբնակ շրջաններին և քուրդ աղգաբնակության, Քրդական պատմությունը, կենցաղը, սովորությունները և ժամանակակից կյանքը ուսումնասիրելի համար առատ նյութ կա կեր Փորտերի ձեռքում հատորներում։ Ուրմիայի լճի ավազանը ուսումնասիրելուց հետո նա վերադառնում է Թավրիզ։

Թավրիզից 1819 թ. հոկտեմբերի 19-ին մեկնում է վերջնական Ջուլֆա, Ցերևան, Էջմիածին և սակայն նա այս անգամ ուղևորվում է դեպի Կարս, և երզրումի ճանապարհով դեպի կ. Պոլիս։ Նրա վերադարձի ուղեգրությունը մենք նույնպես թարգմանել ենք, շատ աննշան հապավումներով։ 1820 թվի հունվարին նա կ. Պոլսումն է և ասում է, թե ցրնք ամսվա ընթացքում ժանտախտը 80.000 մարդկային զոհ է տարել։ Հունվարի 30-ին մեկնում է կ. Պոլսից և ճանապարհորդելով Ռումելիայից, անցնում է վալաքիա և Մոլդավիա, ապա Լեմբերգից նա արագորեն մտնում է ռուսական սահմանը, և յերեք տարվան ուղեվորությունից հետո Պետերբուրգ է վերադառնում 1820 թվի մարտի 14-ին։

Բ. հատորի վերջում նա գետեղել է վորպես հավելված իր կատարած ճանապարհորդության ուղեգիծը, նշանակելով բոլոր քաղաքների ու վայրերի հեռավորությունը մղոնով ու վարսախով։ Գիրքը ունի նաև հատուկ անունների ու նյութերի ցանկ (General index of names and subjects)։

Հետաքրքիր են նաև կեր Փորտերի հատորներում զետեղված պատկերներն ու քարտեզները, վորոնք ընդհանրապես նկարված են հեղինակի կողմից։

Անդրկովկասում և Հայաստանում կատարված ճանապարհորդությանն ուղեգրությունը տալուց հետո, անկարևոր չենք համարել տալ նաև հատվածներ Պարսկաստանից և Թուրքիայից, մասնավորապես այնպիսի տեղեկություններ, վորոնք կապ ունեն Անդրկովկասի ու Հայաստանի հետ։ Կարևոր ենք համարել թարգմանել նաև Հայաստանի հնագիտական կյանքի ու պատմության ուսումնասիրության հետ կան արժեք ներկայացնող ավերակների նկարագրականները, վորոնք թեև անմիջապես կապ չունեն նույն շրջանի պատմության հետ, սակայն կարևոր են մեր յերկրի ուսումնասիրության տեսակետից։

Ա· ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ ԹԻՖԼԻՍ*

Կովկասյան լեռների ստորոտում ռուսական տիրապետության ամենակարևոր զինվորական կայանն է Վլադիկավկազը։ Ռուսաստանն ընդհանրապես այդտեղ է պահում վորպես պահակատոր մի ամբողջ դունդ, և այդ վայրը ծառայում է վորպես պահեստ՝ լեռներում գտնվող մերձավոր կայանների փոքր բերդերի մատակարարման համար։ Վլադիկավկազը զետեղված է Թերեկ գետի հովտում, բավական բարձր հողամասի վրա. տիրապետում է կիրճի մուտքին և այնքան էլ մոտ չէ վորևէ ուրիշ բարձունքի ընդհկների կողմից հրդեհի ենթակա դառնալու համար։ Քաղաքը արագորեն աճում է, ինչպես նաև հարևան ազգաբնակությունը, վորովհետև այստեղ, ինչպես նաև սահմանի յերկայնքում այլ վայրեր, առատում է այն նկատողությունը, թե ուր վոր ռուսները բերդ են շինում, հարյուրավոր թաթարներ են հավաքվում նրա շուրջը և հաստատվում փոքր գյուղերում։ Այս կամավոր շարժումը, վոր բարեկամական շփման մեջ է դնում նրանց յեվրոպացիների [ռուսների] հետ, նամանավանդ նպաստել է քաղաքակրթելու թաթարական ցեղի այս ճյուղը, և հետևաբար հուսացվում է, վոր այդ ազդեցությունը պիտի տարածվի ավելի հեռաբնակ ցեղերի վրա։ Այս հաստատությունները, [գյուղերը], ընտանեկան սովորությունների մեջ զգալի հառաջադիմություն են գործել, և նրանց դարձրել են փոքրիկ հանգրստավետ վայրեր, մինչ քաղաքակրթի կյանքի հասարակ անհրաժեշտությունների վերաբերմամբ նրանց ազգակից ցեղերը դաղափար անգամ չունեն։ Թաթար կոչված ժողովուրդը

* Ker Porter, Հատ. I. էջ 66—102։

Հոների ինայսորդներն են, վորոնք դարեր առաջ հեղեղի նման վողողեցին Յեվրոպան։ Այս ազգի հին հետքերը կարելի յե գտնել տակավին նրա տիրապետած յերկրների սահմաններում, վորպեսզի նրա ժողովրդին։ Նրանց տիրապետությունը տարածվում եր Խրիմի և Դոնի ու Դնեպրի մեջ ընկած յերկրի վրա, յերկարելով մինչև Սև ծովը, և ուղղվելով դեպի Կասպից ծովը։ Նրանք հիմք դրին քաղաքների թերեկի ու կուբանի վրա, և թե նրանք արժանի եյին մեծ ժողովուրդ լինելու փառավորապես վկայում են Մաչառի[1] (Matschar) ավերակները։

Վլադիկավկազի այս կետից մեր ճանապարհը պիտի լիներ ուղիղ լեռների սրտից, վերելքի և վայրէջքի զառիվայրներից, վոր կարելի յե կոչել դահավեժներից։ Այստեղ մենք թողինք մեր հրետանին, ինչպես նաև մեզ ընկերակցող կառաչուի ցածր մասը, և թեթևացած այս յերկու ծանր բեռներից, ճամբա յելանք ավելի թեթևաշարժ գնացքով, ունենալով ուղեկից մուտավորապես քառասուն զինվոր, մի սպա և մի քանի կոզակ։ Յերբ մեկնում եյինք, բերդի մեր բարի հրամանատարը մասնավոր պատվեր տվեց մեզ միշտ հառաջ ընթանալու համար։ Հիրավի վնաս մեկ պահումբ առաջ ընթանալու համար։ Հիրավի վնաս մեկ պահպակի պետք չեր թույլ տալ, վոր խմբից վորևե մեկը յետ ձնաբաց, վորովհետև ճանապարհը լի յե դարանակալ ավազակներով, թագնված ժայռերի ամեն մի անկյունում, վորպեսզի զոհ դարձնեն վորևե հետամնաց ուղևորի, առնելու համար փրկագին նրա ազատության համար, յեթե յերբեք խնայեն նրա կյանքին։

Առավոտյան ժամը 6-ին մենք սկսանք մեր ուղին, ձեռք առնելով զինվորական այն բոլոր նախազգուշացումները, վոր ճանապարհի բնույթն եր պահանջում։ Մենք անցանք թեկ գետը քաղաքի մոտ մի կամրջից։ Գետը այս վայրում տարվան այս յեղանակին սովորաբար լայն չե, բայց ժայռաշատ ափերի պատճառով նրա ընթացքի դեմ բազմաթիվ ժայռաձան արագ է, և նրա ընթացքի դեմ բազմաթիվ ժայռաձան պատնեշելով, աղմուկը վոր նա հանում է պայքարելով իր

անցքի համար, կարող է լավել մեծ հեռավորութիւնից։ Գետի հյուսիսային ափի յերկայնքին հաստատված թաթարների հյուղակներն ու փոքրիկ պարտեղները՝ իրենց ձևերի հաճելի պատկերավորումով՝ մեղմացնում են շրջապատի բնութեան ահարկու տեսարանը։

Այն ձորը, որից Թերեկը հոսում է, անցյալում կոչվում եր Կովկասյան Դուռը (Porta Caucasia), լեռների յերկու կողմերում ապրող ազգերի հաղորդակցութեյան դուռը լինելուն համար։ Յեկատերինա Բ.ը առաջին յեվրոպացի վեհապետն եր, որի դինվորները հյուսիսից անցան այդ տեղից, որոնց մի մասը զորավոր Թոտտլեբենի (Tottleben) հրամանատարութեյամբ մուտք գործեցին Վրաստան, և ճանապարհ բացին այդ հաջողութեյուններին, որ զրգեցին կայսրուհուն այս անցքից Թիֆլիս ուղիղ ճանապարհ հաստատելու։ Սակայն, այս ծրագիրը, իր հետևանքներով այնքան հզի, թողնվեց նրա թոռան, այժմու կայսերական վեհափառութեյան, սկսելու և վերջացնելու այդ, որ ուղարկեց զորավար Ցիցիանովին[2] (Tchicianof) սկսելու այս ձեռնարկը մոտավորապես 1804 թվի սկզբնավորութեյան և բանվորների անխոնջ աշխատանքի ու նրա ուշադիր յեռանդի շնորհիվ, հիմա ավարտած և մի գործ, որ վոչ միայն իր անհամար ոգտակարութեյամբ, այլ նաև իրր հիացումի առարկա, արժանի յե բոլոր նրանց յերախտագիտութեյան, որոնք վայելել են նրա ապահովութեյունը։

Յերբ մենք դեպի առաջ ենք գնում դեպի աջ ափի յերկայնքից, շատ տեղերում մի քառորդ մղոն լայն և, և ուրիշ տեղերում, ուր քարաժայռերը մոտենում են, հազիվ յերեսուն յարդա։ Հիրավի, ինձ տեղեկացնում են թե կան կետեր, ուր հանդիպակաց ժայռերը այնքան մոտ են, որ դեպի լայնքը դրա կխփից էլ պակաս կլինի։...

Վլադիկավկազից առաջին ուրը-տասը վերստ, Թերեկի յերկու կողմերը, լեռների լանջերը ծածկված են ժայռերով և խիտ մացառներով, բայց յերբ մտանք ձորի խորքերը, աստիճանաբար կանաչութեյունը նվազեց և ամեն կողմ ժայռեր

կին ու լերկ։ Տանկերկու վերստ առաջանալով հասանք Բալթի (Balty), մի փոքրիկ բայց զորավոր բերդ. լեռները ավելի խիզախ յերևույթ ունեն, դեպի վեր բարձրանում են ժայռերի զանգվածները, շատ քիչ կետերում միայն կա մի պուրակ կամ մի ծառ։ Ճանապարհը այստեղ վտանգավոր և վատողի ոգնութեյամբ միայն պետք է վոր բացված լինի։ Նա անցնում է ժայռերի կախված կամարի տակից, վոր այնքան նեղ է վոր հազիվ թե յերկու մարդ կարողանան քովեքով քալել կամ իրար անցնել, յեթե պատահի վոր նրանք դժբախտութեյուն ունենան դեմ դիմաց գալ, և ճանապարհի մի կողմը յեղերքն է մի անդունդի, վոր վորոշ տեղերում վաթսուն վոտք խոր է. և այլ տեղերում հարյուր իից ավելի։ Այս անդունդի խորքում Թերեկի մռնչող ջրերն են։ Յեվ դարձնելով աչքը դեպի վեր, ավելի սև և ահարկու անդունդներ կան այնտեղ։ Մենք տեսնում ենք լեռներից կախված ժայռեր, հազարավոր թոն ծանրութեյամբ, վորոնք սպառնում են ներքևում՝ ամենքի վոչնչացմանն։ Հանկարծական ձյունհալի հետևանքով այս զանգվածներից շատերը վայր են ընկել տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում, և այնքան կատարելապես փակել են կանոնավոր ճանապարհը, վոր ճանապարհորդը պարտավորված է անցնել նրանց շուրջով, հաճախ այնքան մոտ անդունդի յեղերքին, վոր վտանգ է սպառնում նրա կյանքին։

Մի ուրիշ զինվորական կայարանում, Լարս (Lars) անուն, ուր մենք պետք եր վոր փոխեյինք պահակախումբը, տեսարանը դառավ ավելի վայրենի և ավելի սխրալի։...

Ամբողջ ռուսական կայարաններից մեծ մասը, նույնն են ինչ վոր հներն ունեյին միևնույն նպատակով, և նոր հիմքեր փորելիս հաճախ յերևան են գալիս հին բերդերի միացորդները։ Լարսում, և մոտ մի վերստ նրանից հեռու մի տիրապետող բարձրունքի վրա, տակավին միում են պարսից ու աշտարակների միացորդները, վորոնք իշխում են ձորի անցքի վրա։ Վոմանք ասում են թե, այս այն վայրերից մեկն է ուր կանգուն եյին հնագույն ժամանակներից

բում այնքան սովորական դռները կամ պատնեշները։ Հիբալի, կլորճի այս մասը բնականից այնքան փակված է, որ շատ քիչ աշխատանք և հարկավոր մեկ կոպեկից մյուսը պրանոներ դնելու և ամրողջությամբ փակելու դռներով։

Յերեկո չեղավ, և մենք բավական հեռու եյինք մեր իջևանից։ Յես ավելի եյի ցավում, որ մութը կզրկեր մեզ դիտելու անցքի տեսարանները, բացի նրանից որ կար հավանական վտանգը։ Հետզհետե աճող աղջամուղջը, շրջապատի առարկաների անորոշությունը, պատմությունը այդ վայրի, — որից այժմ մենք լուռ ու վարանումով ճամբորդում եյինք, — վազող ջրերի խռպոտ կարկաչը և անորոշ խոհումները, — որ մարդ ունենում է յերբ ուղևորվում է շերվան ձիթենյան մեջ, ամայի ու տխուր ոտար յերկրների միջով, — այս բոլորը ծնունդ են տալիս սրտում ավելի սարսափ քան վախ, անծանոթ մի ահավորության։

Դարբիալը գիշերվան մեր կայանն եր։ Յերբ մենք մոտենում ենք նրան, մեր ճանապարհը ավելի խավար և դառնում, որովհետև բավական տեղ մենք անցնում ենք ներքնուղու մի անցքից, որ փորված է մի ժեռ քարի միջից։ Ներսից մոտավորապես մի մղոն եր։ Մենք իջանք դեպի յեզերքը շատ ուղղահայաց մի խորխորատի ստորոտը, այնտեղից դեպի անցանք մի փայտյա կամրջի վրայով, և պաշտպանված բերդից [ուղարկված] մի զորամասով, ապահով հասանք մեր կայանը։ Այսպես փակվեց մեր առաջին որվա առաջացումը Կովկասում։

Տեղեկությունն ստանալով, որ բնիկների մի ապստամբական խումբ գրավել և մի վայր, որտեղից մենք պիտի անցնեինք հաջորդ որը կարավանի ապահովության համար՝ բերդի սպան հաջորդ առավոտը ուղարկեց հետևակների մի խումբ, հեռացնելու համար նրանց այն տեղից։ Մեր մեկնումը հետաձգված լինելով, մինչև վոր արշավախմբի հաջողության լուրը հասներ մեզ, յես ժամանակ ունեցա դիտելու այն վայրի մի մասը, վոր մենք անցել եյինք նախորդ գիշերը։ Դարբիալի ռուսական կայանի ամրոցը գտնվում է համանուն հսկա անդունդի խորքում, և նրա վերև կախված են ժայռերի այն պիսի վիթխարի զանգվածներ, վորոնք նրա դիրքը դարձնում են սոսկալի։ Բարձունքներից մեկի կատարին, Թերեկի ափերին սերտ, տեսնվում է մի հին ամրոցի մնացորդները։ Բավական դժվարությամբ մագլցեցի այնտեղ և գտա վոր ավերակները ներկայացնում են մի քառանկյուն զորավոր ամրոց, շրջապատված հաստ պանդվածային պարսպով, և պարփակելով բացի դրանից մի տարածություն, վոր բավական և հարյուրավոր զինվորների պահպանման համար։ Թվում է թե, դա կրճի միջնաբերդն է, բայց յես նկատեցի վոր այն բոլոր տեղերում, — ուր ժայռերը կարող են հարմար լինել թե իրենց, [պահակազորին], և թե կենդանիների պիտի լինի թե իրենց, [պահակազորին], և թե կենդանիների համար, չի կարող ուրիշ ավելի հարմար տեղ լինել այս նպատակի համար, քան այս կայարանը։ Մի ներքնուղի իջնում է բերդից մինչև գետի յեզերքը, հավանորեն ներքևում գտնվող ուրիշ կայաններին հետ հաղորդակցությունն պահելու համար, և ավելի անմիջականորեն փակելու համար ձորի մուտքը։ Անցքը այստեղ յերեսուն յարդայից ավելի լայն չէ և բնությանը ընծայած դյուրությունը, համաձայն իր առմանների նշաններին, իմ մտքում կասկած չի թողնում, թե հնագույն ժամանակներից այս վայրը վրաստանից հյուսիս ազգերի հետ հաղորդակցության գլխավոր դռներից մեկն է յեղել։ Պլինիոս այսպես և նկարագրում կովկասյան այս կիրճերը և նրանց պահպանության յեղանակը. «Յուրաքանչյուր անցք փակված է մեծ գերաններով, վորոնց ծայրերին սուր յերկաթներ կան։ Նեղ ձորի միջից հոսում է մի գետ։ Հարավային ծայրամասը պաշտպանվում է բարձր ժայռի վրա կա-

ռուցված մի բերդով։ Այս պաշտպանությունը հյուսիսից
յեկող արշավանքների արգելման համար եր. (Lib. VI. C. 11)։

Ըստ Պտղոմեոսի՝ այսպիսի յերկք մեծ անցքեր կան,—
Pyle Sarmatae, Pyle Albanie et Via Caspia։ Համանական և
վոր առաջինը՝ Pyle Sarmatae միևնույնն և, ինչ վոր Սարբարոն
հիշում և՝ Porta Ibericae, or Porta Caucasia. այսինքն այս
անցքը, Թիրևկի ձորը։ Վերջին յերկուսը Pyle Albanie և Via
Caspia, պարզապես մեկ տեղի յերկու անուն և տալիս, վոր այն
անցքն և վոր այժմ Դերբենդ և կոչվում[3]։ Բայց կա մի ուրի-
շը Porta Cumana, վոր ավելի դեպի արևմուտքն և գտնվում։
Պլենիոսը մասնավորապես նշում և այն, նկարագրում և նրա
բերդը անվանելով Կումանիա (Cumania)։ Այս կիրճերը, վոր-
պես արևելքի բանալիները, միշտ արժան կերպով պաշտ-
պանվել են նրանց արժեքը գնահատող տերապետողների
կողմից։

Դարիալի, ինչպես նաև Դերբենդի առաջին վանկը ասիա-
կան լեզուներում նշանակում և դուռ կամ նեղ անցք, վոր
հաստատում և մյուս փաստը, թե այստեղ եր ձորի գլխա-
վոր պատվարը և թե Լարսի ամրացրած բարձունքները, և
ցածրի փոքր դիրքերը, հավանորեն այս մեծ կայարանից
հաղորդակցության շղթաներն եյին դեպի տարբեր մեծության
այլ [ամրություններ], բայց բոլորը ծառայող միևնույն նպա-
տակի՝ պաշտպանության դռներ բարբարոսների դեմ։

Զորամասի վերադարձից առաջ փորձեցի մի յերկու պատ-
կերներ գծել իմ շրջապատի տեսարաններից։ Յեվ տեսարանը
վերցրի բարձունքի հին ամրոցից և ներքևի ռուսական ամ-
րություններից, բայց տեսարանի վեհությունը վոչ մարդ կա-
րող և նկարել և վոչ էլ գրիչը նկարագրել... 1781 թվին
կովկաս այցելող Դր. Ռեննիգսի (Dr. Renniggs) հաշվառման
համաձայն՝ Դարիալի ամրոցի հանդիպակաց լեռները 1786
վոտքից պակաս չեն։ Այս չափումը արդյունք և բազմաթիվ
նկատողություններից, և պետք և ընդունել վորպես ստույգ-
կան բարձրություն, թե արևելքի և թե արևմուտքի լեռնա-
շղթային, բացառությամբ Ելբրուսի և Կազբեկի։

Դարիալից մեր ճանապարհը պահում և իր տեքստերի
վեհությունը մինչև մի տեսակ կապան, վորտեղ գինվորներն
ուղարկված եյին՝ վտարելու համար այդ տեղի անբաղձալի
հյուրերին, և այնտեղ գտանք մի վայր վոր առանձնապես
վայրի եր, և հարմար իր վերջին բնակիչների նպատակնե-
րին։ Ընդարձակ քանակությամբ ցածր ու խիտ մացառներ
և խիճեր գրավում եյին մեր ձախ կողմ գտնվող կասկա-
ձելի յերևացող մի խոռոչ, բնական մի խրամատ, այնքան
լավ թագնված աչքի տեսողությունից, վերջանում եր մի
կետում, վորի յելքը կապված եր լեռան ճանապարհի հետ,
բայց այնքան դժվար եր թվում, վոր միայն մեկն եր տե-
սանելի, վորից յերևում եր թե ամենահանդուգնը միայն կա-
րող եր վար իջնել։ Բայց նրանք իջնում են և բավական
մեծ թվով, թագնվում են մացառներում, մինչև վոր պա-
տեհություն ներկայանա հարձակվելու իրենց զոհի վրա։ Նա-
խազգուշացում ձեռք առնելուց առաջ,—նախասեր գինվոր
ուղարկել, մացառները կտրատել, և ճանապարհը բանալ,—
այս ուղին ավազակության ու արյունահեղության հարատև
մի տեսարան և ներկայացնում։ Այս լեռնային ավազակները՝
ունենալով ճանապարհների ծանոթություն ու թեթևաշար-
ժություն, վատահ իրենց փախուստի վրա, մշտապես սպառ-
նում են մոտեցող յուրաքանչյուր կարավանին և թագնված
մացառների կամ ժայռերի յետև, կրակում են անտեղյակ
անցորդների վրա, սպանում են նրանց և կամ վիրավորում
նետով ավարը հաղթականներին։

Մեր պահակախումբը զորացավ այն ուժերով, վորոնք
նախորդ գիշերը ուղարկել եյին ճանապարհ բաց անելու հա-
մար, բոլորս առաջ շարժվեցինք առանց խանգարվելու, թեև
շատ անգամ մենք նկատում եյինք ավազակների տարբեր
խմբեր, վորոնք վերև բարձր ժայռերի մեջ եյին... Բայց
ճանապարհը նրանցից բոլորովին ազատ չլինելուն պատճա-
ռով, թեև հաճախ արգելք եր լինում, բայց յերբեմն կանգ
էլ առնում շտապով նկարելու համար։ Պահակախմբի սպան

թուլլ չեր տալիս ինձ, վորովհետև վորևե չետ միացողը կարող եր մի րոպեում ապանովել, անհայտ թաքստոցներից [կատարված] հանկարծական հարձակումից։ Բայց չես չեխի կարող հրաժարվել պատեհությունից և մի յերկու անգամ ինձ հետ պահեցի մեկ կամ յերկու ձիավոր գինվորի, յերբ վորձում եյի թեթև նկարներ գծել այդ փառավոր լեռների, վորոնք կարող և պատահել վոր չես յերբեք չպիտի տեսնեյի վերատին։ Յերբ մենք առաջանում եյինք, ձորում տեսնում եյինք բնության ամենատպավորչի ցնցումների [հետքերը]։...

Տարվան այն յեղանակին, յերբ արևը ամենամեծ ուժն ունի, ձյունը հալչում և և առվակներ, վորոնք խուժելով ժայռերի ճեղքերից, պոկում են լեռների [բեկորներ] և քշում՝ գլորելով դեպի վար, դեպի ձորը, սրբելով ամեն ինչ իրենց առջևից, վորտտալի նման ադմուկ հանելով, բայց այնքան բարձր, վոր ոչը ցնցվում և այն աստիճան, վոր խախտում են մերձակա ժայռերի հիմքերը և շարժում ուրիշներին, այսպես ավելացնելով ցածրի ավեր քանդումները։ Նման պատահարների հետևանքով ճանապարհը սպասված եր ծռվել այդպիսի զանգվածային ժայռերի շուրջը, և յերբ այդ հնարավոր չեր անդունդի մերձավորության պատճառով, գնում եր նրանց [ժայռերի] վրայից։ Իսարկե բարձրանալ ու իջնել դժվար եր ու վտանգավոր։ Այս ժայռերից մեկից անցնելիս իմ կառքի նիզը կոտրվեց։ Յերկասլրի զբաղվարությունը մեծ եր. կառքը նորոգելու առիթով ժամանակի կորստի հետևանքով, և հետո, մինչև վոր հասնելինք մի վայր, ուր կարելի լիներ կատարել այդ, կաղնիկով առաջ գնացինք։ Կաղրեկ դյուղը, վեց վերստ հետու, մեր նպատակակետն եր։ Յեվ պարանների ոգնությամբ, ճարպիկությամբ և շնորհիվ գինվորներից վոմանց բարեացակամ յեռանդին, վորոնք իրենց ուսերը անիվներին տվին, մենք հասանք ցանկալի վայրը կեսորին՝ ժամը յերկուսին։

Ձորը այժմ սկսեց բացվել, ներկայացնելով աքանչելիորեն գեղեցիկ մի տեսարան, — անհունության լեռների, ամեն ձևի ու ոլայնի ամեն դույնի, մեկը մյուսի վրա բարձրացող

և պսակված կազբեկի ժպտուն գլխով։ Այս լեռան բարձրությունը, վոր մրցում և Ելբրուսի հետ, Դր. Պարրոտ (Dr. Parrot) հաշվում և 14.400 վոտք Սև ծովի մակերեսից բարձր։... Գյուղը, վոր այժմ կազբեկ անունն և կրում, նախապես կոչվում եր Ստեփան Ծմինդա, այդ սուրբի յեկեղեցու անունովը, վոր շատ մոտ և նրան։

Այն տունը, ուր մենք իջևանեցինք, իմ կառքի անհրաժեշտ նորոգության համար, տեղի գլխավորի այրի կնոջ բնակարանն եր, վորին, [գյուղի գլխավորին], մայոր գեներալ Ասիեվան եյին ավել կայսերական բանակում, ռուսական ստիճան եյին տվել կայսերական բանակում, ռուսներին իր մատուցած ծառայությունների ու համակրության համար։ Յեվ վորովհետև ազգանունները անծանոթ են այս ժողովրդի մեջ, իր նոր տերերի սովորության հարմարվելու համար՝ կազբեկ անունը առավ իր վրա ասիատիպատ լեռնեցի, վորն ասվերն տակ, ինքն ու իր նախնիքն եյին ապրել, և սովորության համաբար ընդունեց նաև այն անունը։

Այս շրջապատի բնիկները ոսա ցեղից են, խառն հավանքով մի ժողովուրդ՝ քրիստոնյա, մահմեդական և հեթանոս։ Կազբեկ գյուղում, ինչպես նաև մերձակա մի քանի ուրիշ [գյուղերում], բնակում են քրիստոնյաներ, վորոնք վրացիների հետ մի լեզուն հավասարն ունեն։ Վերջերս վախճանած նրանց գլխավորը նշանավոր եր և իր որինակով խթանած նրանց գլխավորը նշանավոր եր և իր որինակով խթանած ուշադրություն դարձնելով կրոնական արարողություններին՝ աղոթքի, պահեցողության և սուրբ տոնակատարությունների, նա գործ եր դնում իր իշխանությունը բոլոր նրանց վրա, վորոնք իր իրավասության տակն եյին գտնվում, բացի ավերակ կառուցվածքները, ուր իրենց հայրերը մատուցել եյին իրենց առաջին աղոթքը։ Ինքն էլ շինեց մի նոր ու շքեղ յեկեղեցի իր քրիստոնյա յեղբայրների համար ճիշտ այն տեղը, ուր գտնվում եր հինը, քանդված աշտարակներով։ Այդ պատկառելի կառուցվածքը, ինչպես նաև

հանդիպակաց բլրի վրա գտնվող մի ուրիշը, վրաստանի նշանավոր իշխանուհի Թամարայի[1] գործն են, մոտավորապես վեց հարյուր տարի առաջ...

Ասում են թե քրիստոնյա ոսսերի այս ցեղը լեռնականների մեջ ամենից քաղաքակրթվածն է, սակայն հակառակ նրանց ավելի լավ հավատքին և ավելի լավ որենքներին, նրանք չեն թողնում նվազ փորձառու չեն գողության ու մարդասպանության մեջ, որքան իրենց մահմեդական հարևանները։ Մարդիկ հուժկու են, գործունեյա և վայելչակազմ, թխամորթ և առանձնապես խոժոռ նայվածքով, որ ավելի համապատասխան է իրենց նկարագրին, քան իրենց գեղեցկությունը։ Մարդկային կյանքին։

Նրանք ապրում են չերքեզների նման, և չերքեք չեք տեսնում դուք նրանց առանց չերկրի սովորական զենքին՝ մի պարույր իրենց գոտում։ Ներախակալի մոտ լայն և, հետզհետե բարականալով մինչև ուր ծայրը, ամբողջ տասնուվեց ինչ որ տեսնում ենք պաշտպանողականի և հարձակողականի ներուժյուն ունի,... ամեն մարդ զինված է, ամեն տուն մի տեսակ փոքրիկ ամրոց է։ Հանդուցյալ գիներալ կազբեկի բնակարանը շինված է քարից, քառանկյունաձև, մի կերպ նման քառակուսի մի բերդի, պաշտպանված բարձր պարսպով, որ ունի հրածերպեր (ծակեր) և փոքրիկ աշտարակներ։ Միայն մեկ մուտք կա և այն էլ մի շատ նեղ դռնից, որ չերը փակվում է, կատարելապես ծածկում է ամբողջը։ Ընտանիքը բնակվում է քառանկյունի մի կողմը, նայելով դեպի ներքը, և հակառակ անկյունում կան մի կարգ գեղեցիկ սենյակներ, հատկացված նշանավոր ճանապարհորդների ընդունելության համար։ Իմ ժամանումիս ինձ պատվեցին հյուրասիրելով այս հարկաբաժնում, և բարեգալուստ մաղթեց մեզ տանչերկու տարիական մի տղա, հանդուցյալ գնդապետ-ցեղապետի զավակն ու ներկայացուցիչը, որ տան հյուրընկալության պարտականությունը կատարեց իր տարիքի

կրկինն ունեցողի շնորհքով։ Նրա մայրը, բնակարանի տիրուհին, չերեսաց տկար լինելուն պատճառով, բայց նա կարգադրել եր վոր կերակուր տրվի ինձ, չորացած ձուկ, մի քիչ խորոված միս, հիանալի հաց ու կարագ և վերջապես լավ սուրճ։ Իմ ուղեկիցներից չերկուսը մասնակցեցին ճաշին, և ինձ նման զարմանում էին մեր սպասավորների անհարիր կերպարանքին ու սպասարկության։ Նրանց մարդասպանական դեմքն ու հագուստը՝ նրանց տալիս էին ավելի ավազակի քան սպասավորի չերևույթ, վորովհետև նրանք ամենքը զինված էին, և իրենց կրծկալները լի էին փամփուշտով։ Հիրավի, թվում եր թե նրանք կարող էին լինել այնքան վայրենի, վորքան չերևում էին։ Վորովհետև անհնար չեր վոր այս մինուճար մարդիկ, վորոնք այնքան խոնարհությամբ սպասարկում էին ինձ, կարող եր պատահել վոր մեր դեպի կորի առաջացման, չեթե առիթ ներկայանար, կտրեին ճապարը ու կողոպտեին, չեթե վոչ բացարձակապես սպանեին ինձ. վողջերթի մի չեղանակ՝ կարճ ժամանակ առաջ նկին ինձ. վողջերթի մի չեղանակ՝ կարճ ժամանակ առաջ հյուրասիրված հյուրերին, այնքան էլ անսովոր չէ այս դիշատիչ լեռնականների մեջ։ Նրանց կարծիքով հյուրասիրությունը տարբեր է ներսում և [տարբեր] դրսում,

Ինձ ասին վոր ծերունի գեներալը մեռավ հարուստ և թե իր հարստության մեծ մասը դիզել եր իր կյանքի առաջին շրջանում։ Քանդինգ կամ չերեսուն տարի առաջ քրիստոնեյություն վերաբերմամբ իր չեռանդը հայտնաբերվեց, չերբ ռուսական զինվորական կայաններ առաջին անգամ հաստատվեցին այս ձորում, և այդ ժամանակ նա սկսեց առաջնորդել ճանապարհորդներին և ապրանք [փոխադրել] վտանգավոր անցքերից։ Այս շրջանից առաջ վաճառականի բախտը կախում ուներ այն ցեղապետի կամեցողությունից, վորի սահմաններից նա պետք եր վոր ճամփորդեր։ [Ցեղապետից] եր ապասվում պաշտպանություն, առաջնորդներ և մարդիկ,— քայց վոչ բնական կենդանիներ, — ապրանքը փոխադրելու Ցեվրոպայից, [Ռուսաստանից], Վրաստան։ Ամեն մի ապրանք տեղափոխվում եր բնիկների կռնակով։ Սրանց վարձքը,

հակա դեմարների եր հասնում, բացի սրանից, յուրաքանչյուր անկախ ցեղապետ, իր հողից անցնելու արտոնության համար կոթողում եր մեծ դեմարս վճարվում եյին նաև ուրիշ տուրքեր՝ հաղուստ, կտորեղեն, կաշի և այլն, որքան որ կարդողները կամենային պահանջել։ Արդարև այս բոլոր հարկադրանքները կամայական եյին և կախում ունեյին պահանջողի խղճից, թե խնդիր ու անպաշտպան ճանապարհորդը իր սեփականության վրա մասը պետք է վճարեր։ Հաճախ պատահած և վոր նա իր ապրանքի կեսն ապահովության ու վոխադրության դնել և՝ տալով մյուս կեսը։ Յեվ սակայն, այդ չի յեղել ամենամասսը, որինակի համար պատահել և վոր յերբ հարուստ մի կարավանի անփականաները այս տեսակ դիմ և վճարել ճնշածի ապահով վոխադրության համար, ցնդապետը ինքը. վոր ընդունել և պաշտպանության դիմը, գաղտնորեն իր մաքսականից խումբեր և ուղարկել ապասելու ճանապարհին, և դժբախտ վաճառականների ժամանումին, և հարձակվել, կողոպտել ու սպանել են նրանց։ Զարմանալի չե ուրեմն, վոր այս վաճառականներից վոմանց կառավարությունները ապահովություն իրենց վրա առնելին և անցքի հին տերերին ցույց տային, թե նրանց հափըտակություն ընդունում եր մորթել վոսկի հավկիթով քըրչունին։ Այն որից իվեր, յերբ ռուսները ճանապարհները գործածելի յեն դարձրել կառքի ու ձիու համար և հարմար հասարությունների վրա հաստատած են պետական կայաններ, փոստատներով և լավ պետված պահակախմբերով, այլևս այս դժվարանց ցեղապետների ու նրանց մարդկանց ժողովրդական պետք չի պատահում։ [Ռուս] կառավարությունը այս հաստատությունները անարգել հիմնելու համար, հարկ եր ճանապարհը այս ցեղապետներից՝ վորոշ գումարով գնելով վաճառականներից ու ապրանքից տուրք վերցնելու իրավունքը։ Հիմա [տուրքը] դանձվում և վլադիկավկազում, (վոր նշանակում և Կովկասի բանալի), վոչ միայն տուրք և դրվում յուրաքանչյուր բեռնված կառքի վրա, այլ նաև յուրաքանչյուր առևտրով զբաղվող անձը վճարում և տասից քսան

հինգ ռուբլի, վորպես իր անցագրի գինը, բոլոր մյուս ուղևորները ազատ են։

Իմ դժբախտ կառքի նորոգումը շտապեցնելու հույսով գնացի վոլկան դյուղի այն տունը, ուր նորոգվում եր, և ալսպես պատեհություն ունեցա ավելի մոտից դիտելու այս ժողովրդի ստորին դասը և նրանց բնակարանների վոճը։ [Դարբինը] կոպիտ, վայրենի կերպարանքով մի մարդ եր, սև ինչպես իր գործն և, տխուր կատաղության մի արտահայտություն, վոր լավ եր ներդաշնակում իր մուրճի [հարվածի] տակ դանվող շիկացած յերկաթին։ Նրա բնակարանը, ինչպես իր գլուխներից մեծ մասին, կառուցված եր ցեխից, քարե հիմքերի վրա, շատ ցածր ու տափակ կտուրով։ Ճակատին մի տեսակ ծածք կար, հենված ոդիով դերաններով վրա, սրա տակ դանվում և արհեստանոցը, և առաստաղի ամեն մեկ ծայրում կախված եյին ձիու գանկեր, իսկ կենդանու մյուս վոսկորները ցրված եյին դռան մոտ։ Այս կոպիտ անդաստակի (portico) մեկ ծայրում գործիքները գրաված եր իր գործով. քննելուց հետո ինչ վոր նա կատարում եր, յես համարձակեցա մոտենալ տնից նկարը։ Գտա մի մեծ սենյակ, ծայրահեղորեն մութ ու ապուռ, առանց կարասիի։ Լուսը մուտ եր գործում միմիայն դռնից և մի կլոր ծակ [կաք] կտուրի վրա, վոր միաժամանակ ծառայում եր վորպես ծխնելույզ. այս վոդորմելի հարկաքաժնի մեջտեղում ծխում եյին մի քանի փայտե ու աքաղի կտորներ։ Մի քանի հողե ամաններ, մեկ կամ յերկու կոտրած թաս տեղավորված եյին նրա շուրջը, բայց [չկար] և վոչ մի նստարան։ Սակայն, մութի մեջից վերջապես յես նկատեցի սենյակի մեկ անկյունում մի հին փայտյա արկղ, վորի մոտ մի կին եր կանգնել, բայց այն վայրկյանին յերբ նկատելի դարձա, նա քաշվեց ավելի մութ մի անկյուն՝ ավելի հեռու իմ կանգնած տեղից։ Ցնծեի լինձ թաւլատրվի մի կարճիկ կազմել ոսկերի գեղեցիկ սեռի մասին, դատելով այս նմուշից և նրանցից վոր յես տեսել եյի դեռևերալ կազբեկի տան բակում, բայց այն յերկու յերեքից վոր հանդիպել եյի ման գալիս, թե նրանք գե-

ղեցիկ չէին։ Նրանց հասակը կարճ և, դեմքը՝ լայն այտերով, տափակ քթով, թխամորթ, և այլասեռ տգեղ, բացի աչքերից, որոնք անտարակույս նրանց լավագույն մասն էին։ Կեղտ, ցնցոտի, և աղտոտ մերկ վոտներ, ամբողջացնում է նրանց անհաճո նկարագրականը, միայն յերբեմն տարբերություն կա ցնցոտիների մեջ։ Իմ տեսած յերկու-յերիք կիները կրում էին մի տեսակ վոչ այնքան մաքուր սավան վորպես զոդ, բայց չէլին ծածկել իրենց յերեսը։ Ուրիշները վոտաթաթված էլին մի տեսակ դիշերաշապիկի մեջ, վրացականն յերկար թևերով։ Նրանք բոլորն էլ հագել էլին լայն անդրվարտիկ։ Տղամարդկանց հագուստը, զարդարված պատերազմական զենքերի վայրի տեսակներով, նրանց տալիս և մի նկարագեղ տեսք, մինչ կանայք յերևում են աղքատ ու թշվառ։

Դարբնի խանութի խումբը հարմար եր նկարչի վրձնին. հիրավի շատ հետաքրքիր մի տեսարան եր։ Դարբինը աշխատելիս շրջապատված եր տասը-տասնյերկու դիտողներով, վորոնց հանած ազմուկը աննկարագրելի եր։ Բոլորը գոռում էլին, կանչում ու դոզդոռում միասին, կատաղի շարժումներով, (և խոսակցության նյութը կատաղած յերկաթի նորոգությունն եր), այնպես վոր սպասում եր թե վեճը պիտի վերջանար կռիվամարտով։ Մի պարոն, վոր այդ միջոցին ինձ հետ եր, (և վորպես հանապարհների քննիչ լավ ծանոթ եր բնիկների նկարագրին), ինձ ասաց թե սա նրանց խոսակցության սովորական յեղանակն եւ Նրանք այժմ բարեկամաբար վիճում էլին նյութի մասին, բայց յերե փաստը համոզիչ չեր, իմ տեղեկատուն ասաց, աղմուկը յետևակայել կարելի չե.— անավոր սպառնալիքներ, մերկացած դաշույնները, կարճ խոսքով ամեն տեսակ աղմուկ ու սպառնալիք, բայց բոլորը վերջանում է վոչնչով և նրանք խմում են։ Թեև շատ քիչ անգամ է պատահում վոր կռիվ վարտով և արյունահեղությամբ վերջանան այս տարակարծությունները, սակայն մի որինք, ավելի ճիշտ մի սովորություն գոյություն ունի նրանց մեջ, վոր ցույց է տալիս թե վեճերը միշտ չեն վերջանում խաղաղորեն։ Յերե պատահի վոր մի անձնավորությունն սպանվի իր դրացու ձեռքով, սպանվածի ամենամոտիկ ազգականը վրեժխնդիր է լինում մարդասպանից։ Սակայն, դեպքեր են պատահել, (և նրանք հիմա ավելի հաճախակի են), յերբ վնասված կողմը համաձայնում է մյուսի հետ դրամական մի գումարով, կամ խնամությունը վերջանում է, և հաճախ ավելի սերտ բարեկամություն միացնում է յերկու ընտանիքներին։

Մոտավորապես յերկու ժամում իմ կառքի նորոգությունը վերջացավ, բայց միաժամանակ, իմ ուղեկիցներից շատերը մեկնել էլին, թողնելով վոր յես հետևեմ նրանց իմ ուղած ժամանակը, ինչ վոր յես արի հնարավորության սահմանում շտապով, քանի՞նդ պինվորների ուղեկցությամբ, վորոնցից տասնինգը պինված էլին հրացանով, իսկ մյուսները պարտականությունն եր ոդնելու գառիվեր լեռներից կառքը տանելու համար, և ինձ ասին ճանապարհները վատն են մինչև Կոբի։ Այս կայանը կարող է տասնվեց վերստ հեռու լինել գագրեկ գյուղից։ Այժմ կեսորից հետո ժամը չորսն եր, յերկինքը ւլի չարագուշակ ամպերով, այնպես վոր յես հնարավոր չունեյի մութից առաջ առանց անձրևի հասնելու մեր պիշերվան ոթևանը։ Սակայն և այնպես, յես յերկընտրանք չունեյի և հանդուցյալ գնդապետի տնից իմ փոքրիկ հյուրընկալից հրաժեշտ առնելով, հեծա իմ ձին և քշեցի առաջ։ Կառքն ու պահակախումբը գնում էլին իմ առջևից։ Աստիճանաբար իջանք մի լայն ձորի մեջ, անցնելով թերեկը մի գյուղից վոչ շատ հեռու փայտե կամուրջից։ Այստեղ գետը կորցնում է իր արագությունն ու կատաղությունը, մեղմորեն հոսելով ձորի մեջից, վոր նրա կենսարար ջրի շնորհիվ ծածկված է գեղեցիկ բուսականությամբ, Այս մասում մերձակա լեռներն էլ ցուցադրում են շատ կանաչություն, ծածկելով բազմաթիվ հեղեղատներ, վորոնք ծռվում են իրենց կողքերի վրա և ապաստան են տալիս պատկերավոր հյուղակների խմբավորումների, վորտեղ բնակում են ոսեր և

սովորաբար նրանք խմբված հին քարե աշտարակների ավերակների շուրջը, որ անցյալ ժամանակներում հրամայում ու պաշտպանում էին այս փոքր անցքերը՝ Քշնամի ցեղերի արշավանքից։...

Լեռների գագաթները կլանված էին ու ամպերով, որոնք վար էին կախվել, տարածելով այնպիսի մութ սավերներ ամեն առարկայի վրա, որ խավար եր մեր ճանապարհի կեսը չկտրած։ Անձրևը, որ այնքան ժամանակից խլեր սպառնում եր, սկսավ տեղատարափ իջնել և սաստկացնել մեր ճանապարհի խոտ գառվույտների վառնդները։ Անձրևը խառն եր կարկտախառն ձյունի հետ, և ծակող մի քամի նեռի նման անցնում եր մարմնի մեջից։

Թեև ճանապարհը իջնում ու բարձրանում եր, սակայն ընդհանրապես վեր էինք բարձրանում վլադիկավկազից մեկնելուց իվեր. այնպես որ հույս ունեցինք որ մեր գիշերվան ոթևանից հետո, հաջորդ որը մենք պիտի հասնեինք մեր լեռնային ճանապարհի ամենաբարձր կետին։... Մուքը սաստկանում եր և խոտ ձյունը իջնում, այնպես որ մի յարդա հետու չհեինք կարող տեսնել։ Վերջապես մաքառելով այլապան խոչընդոտների դեմ՝ բարձունք, խորխորատ և մթություն, հասանք մի կամուրջ և վերջին անգամ անցանք Թերեկից, որ այժմ շատ նեղ եր և այնքան հանդարտ իր ընթացքում, որ ես դատում եյի Թե ձորի բոլոր ժայռերի կտրատանքը մեր ճանապարհի վրա եյին։ Այս կետից մեր ճանապարհը անցնում եր մի զառիթ, կտրտված փոքրիկ ծանծաղ վտակներով, բայց լի ձյունով ու ջրով, որոնք կատաղելապես թրջեցին ինձ ու մարդկանց։ Մենք հասանք Կոբի (Kobi) ժամը տասնմեկին, ցրտից ու խոնավությունից կիսամեռ։

Այս կայանը, ինչպես բոլոր մյուսները, պարսպակում և մի քառակուսի բերդ, պաշտպանված հոգի պատվարներով և մի ծանծաղ խրամատով։ Մի քանի կեղտոտ սենյակներ, ամբողջովին զուրկ կահկարասիներից, հատկացված են ուղեվորների ընդունելության համար։ Սրանցից մեկում, շնորհիվ նախապես ժամանող մեր ընկերակիցներին, վառված եր շատ լավ մի կրակ. և չորացվելուց ու թարմանալուց հետո, ես անցա իմ հոգնած կառքի մեջ՝ քնանալու համար, նախընտրելով նրա բոլոր անհարմարությունները, քան նեղսիրտ հարկադրանքի մեջ տանջվելու ու ժանրահոսության։ Փիշերը ձյունահեղուկն ցուրտ եր և Ռեմյուրի չերմաչափը 9 աստիճան ցրտից վար։ Ինձ տառնամանիքը հաջորդել եր ավելի մեղմ ջերմից վար։ Ինձ տառնամանիքը հաջորդել եր ավելի մեղմ ցեղանակի, և առավոտը կառքից դուրս գալով, տեսա միայն բարձր լեռները, ծածկված ձյունով։ Ձմրան այդ հազուստը հագել եր Կոբիի դաշտերին։...

Կոբիից վոչ շատ հեռու այն կողմ, մեր վաղեմի ընկերակիցը՝ Թիրեկը ուռճանում և Տիտրի Ծկալիի (Titri Dzkali) ջրով, և ճիշտ նրանց միացած տեղից շրջվում և և հոսնում արևմուտքից մոտավորապես կիլոմետր հինգ վերստ դեպի հյուսիս արևելք ուղղությամբ։... Ձորերի այս մասում սիրված են շատ զվարճասեր գյուղեր, որոնք մի առանձին տեսարան են տալիս Կոբիի շրջակայքին, և ուր բնակում են մահմեդական և հեթանոս ոսս ցեղեր։ Բայց նրանք որ իրենց անվանում են մյուսուլման, նման իրենց քրիստոնյա անունը կրող ցեղերին, հազիվ Թե տարբերվեն իրենց կապալող ազգակիցներից, բացի մի քանի կրոնական սովորություններից, կամ ավելի ճիշտ ձևերից, որոնցից վարդապետությունը վոչ մի կապ չունի այս բարբարոսների հետ։ Հետզհետե մոսացվում և վրաստանի իշխանության կողմից հաստատված սովորությունների սովորեցրած բաների հետ։ Հետզհետե մոռանում անձնավ

մասնավոր յերկնային մի վոգի վորպես պաշտպան, վորին նրանք դիմում են կատարում, յերբ մտքի կամ մարմնի նեղություն ունեն, նրա ողնությանն են դիմում, ընտանեկան թշնամության վճռի համար, պատերազմի համար, ապաստակային արյունքի համար, նույնիսկ կարավանի կամ առանձին ճանապարհորդի կողոպտման հաջողության համար:

Ամեն ինչ պատրաստ լինելով, Կոբիից ճամբա յելանք ժամը վեցին, հոկտեմբերի 7-ի առավոտը (հին տոմար): Մեր պինվորներն ու կոզակները լավ ծանոթ եյին [ձյունով] ծածկված ճանապարհին. ապահով կերպով առաջ անցան, թեև շատ ծուռ ու մուռ և զառիվեր, դեպի արևելք Քրիստավայլի (Kristawaja) կամ Աչի լեռան կողքից: Սառնամանիքը բարելաված եր ճանապարհը, վոր այլապես, վերջին խոնավ յեղանակից պիտի լիներ սահուն ու վտանգավոր: Մենք հարատևորեն առաջ եյինք գնում, և կարավանը աստիճանաբար, բայց վոչ առանց մեծ դժվարության հասավ մեծ սահմանի գագաթին: Մարդիկն ու կենդանիները կանգ առին անսահման ուրախությամբ նայելու համար իրենց շուրջը, և առնվազն մի քանի րոպեյի համար՝ «հանդչելու և շնորհակալ լինելու» համար:

.... Լեռան ձորերից մեկի կողքին ժայռերի ծոցում ճանապարհից վոչ շատ հեռու ապաստան եր գտել արծիվի քնի նման մի բնակարան, վոր այդ տեղերի հյուղակներից տարբերվում եր իր մեծությամբ: Հարցնելով իմացանք, վոր այնտեղ բնակում եր մի ոսկի ընտանիք, վորի գործն եր ուժանդակել և ողնության հասնել ձմռան ընթացքում այն ճանապարհորդներին, վորոնք բարձրանում են այս ահարկու լեռան ճանապարհով: Յեթե պատահի վոր [ճամբորդը] կորչի գիշերվան մթության մեջ, նա այնտեղ կգտնի ապաստան և ուտելիք: Յեվ յերբ փոթորիկ պատահի, Զուիցերիայի հոսպիցների (hospices) նման, այս մարդիկ ամեն միջոց ձեռք են առնում՝ փրկելու համար վորևե դժբախտ անցորդի, այսպիսի մի շրջանի վտանգներից ու տառապանքներից:... Այս տան բնակիչները իրենց բնակարանի կողքին տարածվող բավա-

կանաչի հողը ժլակում են և սրա, ինչպես նաև նրանց արտամաղրված վոչխարների ու այծերի փոքրիկ հոտի արդյունքը և ամբարված ալյուրն ու ողին, միշտ պատրաստ են այս գիշերյան նպատակի համար: Ուղեկիցներից մեկի հետ ձիավարեցի դեպի այս տունը, հետաքրքրվելով տեսնելու այս բարի մարդիկ, վորոնք ինչպես ինձ ասին, շատ խղճմտորեն են կատարում իրենց վստահված պարտականությունը:

Ընտանիքը բաղկացած և մի ծերունի յեվ յերկու յերիտասարդ տղամարդուց, բազմաթիվ յերեխաներ, մի պառավ ու մի յերիտասարդ կին. այնտեղ եր տղամարդկանցից մեկի մայրն ու կինը, բայց չկային շներ, ինչպես Սան Բեռնարդուի, ձյան մեջ կորած ճանապարհորդներին փնտռելու և գտնելու համար: Նրանք տեղեկացրին ինձ, թե միայն ձմռան խորքում եր, վոր առիթներ եյին ներկայանում իրենց պարտականությունը կատարելու համար, և հետո անկախ իրենց անձնական չանքերից, հաճախ պատահում է վոր թափառականն ու սովահար ճանապարհորդները փրկվում են սպառնացող մահից, պարզապես ցուցադրված նշաններից առաջնորդվելով: Վորոշ հեռավորություններ վրա ցողեր են բլնկված և յերբ փոթորիկը ծածկում է նրանց փոքրիկ բնակարանը տեսողությունից, շատ բարձր փայտի մի ցողի վրա շորեր դրոշակ կամ ձիու թիակներ են կախում, և այս մեկնցով շատ խելոք ու թշվառական կորածները գտել են ցանկալի ապաստանը: Սակայն, ցավում եմ ասել, հակառակ այս բոլոր նախազգուշացումներին, ճանապարհորդների ամբողջ խմբեր հանկարծական ձյունի փոթորկից անհետացել են, և կամ պիշերվան մթության մեջ կորցնելով իրենց ճանապարհը ընկել են գարնան հեղեղատների խորխորատներում և այլևս դուրս չեն յեկել:

Քրիստավայի կատարին, ճիշտ այն վայրը, վորտեղից վայրէջքը սկսում է դեպի Արագվայի ձորը, կանգնեցրել են քարե մի խաչ, քարե մի պատվանդանի վրա:... Հարավից առաջանը բացվում է մեր առաջ Թուիլլետի (Thuillete)

հաբեաս հովիտը, որի շուրջ կանաչութեան միջից հազար վտակներ են վազվզում...

Սկսանք մեր վայրէջքը: Մեր անցած ճանապարհներից ամենից ավելի զառիվայրն էր: Բոլոր կառքերի անիւները կապված էին, և բացի այս նախազգուշական միջոցից, տասը կամ տասներկու ղէնուր պարտաւորված էին գործածել իրենց անձնական ուժը՝ պարանով յետ պահելու համար յուրաքանչիւր անիւը, որպէսզի թեւայ չտան որ մղեն ձիերին, որոնք դժուարութեամբ էին պահում իրենց յետևի վագքերի վրա ահեղաց դեպի վար ամբողջ ճանապարհով: Այս դժուարութիւնը հաղթահարելուց հետո ամենի մեծ մի դժուարութեան առաջ կանգ առինք: Գետը էր որ մեզից բարձրանայինք մի լերան վրայից, որ կոչվում է Դոբրա Գարա (Good Gara): Ջրուն չկար նրա վրա, բայց Դոբրա Գարայի մանանահատուկ ձևը, նրա անցքը դարձնում էր մինչև հիմա մեր տեսածներից ասան անդամ ամենից սոսկալին: Մի քանի վայրկեան կանգ առինք՝ ոչ նուազ զարմանքով նայելու, որովհետև մեր կռնակը դարձնելով դեպի ձգտնապատ հսկա լեռները, սկսեցանք յերևակայել եղինք թե հասնելով բլրի տակաւին կատարը, մենք անց եղինք կացել ամբողջ բոլոր դժուարութիւնները: Բայց մենք շուտով տեսանք վոր վրատանից այնտեղ հասնող ճանապարհորդները նուազքան դժուարութիւններ եղին կրում:

Ոչ մի բան չէ կարող նկարագրել ճանապարհի այն ահաւոր կացութիւնը, որ մեր առջևը բացվում էր Դոբրա Գարայում: Սա չէր տարբերվում ուղղահայաց ժայռից անցնող մի ջրից, որից վայր ընկնողը վարկենապես վոչնչանում է: Ուղին փոստորին տասը տասնչերկու վոտքից ավելի լայնութիւն չուներ, որտեղից էր լեռան շուրջը ամբողջ ճանապարհի ընթացքում և նրա կողքին դանվում էր հարյուրաւոր Ֆարոս (գրկաչափ = 6 վոտքի), խորութեամբ մի անդունդ: Ձերը անցնում եղինք այս վտանգաւոր ճանապարհից, տեսանում եղինք բարձր բլուրների կատարները, պլուղոր և տասքածուն անտառներ՝ ներքևում այնքան խոր, որ աչքը

մի վայրկեան կարելի չեր հառել այն կողմը առանց գլխապտոյտ կանաչ անդունդի խորքում, Արագվան (Aragua) ներևում, որպես արծաթեայ մի գիծ: Ձեզի համարձակվում էր յերևում, որպես տեսարանին, որ այնքան փառահեղ էր վերևում նայել այս տեսարանին, որ այնքան փառահեղ էր և միաժամանակ ահաւոր: Բայց առաջնորդելով իմ ձին վտքան կարելի չեր մոտ ճանապարհի կողքին, վորտեղից դէպ Դոբրա Գարան բարձրանում և դեպի յերկինք, անդունդի մյուս կողմը, անձկութեան նայեցա իմ ուղեկիցներին, որոնք նագիտում եղին դեպի ժայռի ցցուածները այս սոսկալի անցքը նանամանն վերեւքից: Իսկ վոր մենք ամենից ավելի սասկում եղինք, այն եր վոր կառքերը քաշող ձիերը կարող եղին մի սխալ քայլ առնել, կամ խրտչել, և յերկու պարագային էլ վոչ մի բան չկարողանար փրկել նրանց գլորվելու անդունդի մեջ: Բայց մեծ եր իմ հիացումն ու զարմանքը, տեսնելով ղինվորների պատրաստութիւնը և անձնական անվախութիւնը, յերբ նրանք այնքան մոտ եղին կանգնում իմ կառքին, հազիվ մի վոտք հետու անդունդի յեղերքից, բռնելով իրենց ձեռքով անիւները, վորպեսզի ճանապարհի վրա ընկած մեծ ժայռերին զարնվելով չկորցնեն հավասարակշռութիւնը: Նվազագույն յերեք անգլիական մղոն մենք քաշող ավինք այս կերպով, մինչև վոր անց կացրինք վտանգը: Բայց վտքան վտանգավոր դառնք այս վճռաեցուցիչ վերելքը, վոչինչ և բաղդատելով ձմեռվան անցքի վտանգներին: Այդ յեղանակին, ամեն ինչ թաղված ձյունի տակ պեղել ուղղահայաց և թվում լեռան կողքի հետ: Այդ պատյանին կարելի չե գնալ ձիավոր վտքով, և ուղեվորները ժամանակ ղինվորներն և իմ ընկերները գնում են նրանց յետ առաջ, վորպեսզի գտնեն ճանապարհը և մի արահետ [ձյան] կարծր ու չվտանգավորված մակերեսի վրա: Նրանք բարձրանում են շարքով, և առաջինը առաջ յետ: Նրանք բարձրանում են շարքով, վոր բռնում են իր նում և իր մեջքից կապած պարանով, վոր բռնում են իր ընկերները իրարից վորոշ հեռավորութեան վրա, յերբ մեկը հեռանում և մյուսին: Այս արվում և փրկելու համար առաջնորդի կյանքը, վոր անվտանգ ճանապարհից կարող է սայ-

թաքեր։ Բայց հակառակ ձեռք առնված այս բոլոր զգուշացումներին, մոչ մի ձմեռ չի անցնում, երբ բազմաթիվ գինվորներ, կոպակներ ու ընկերներ ուղեվորների հետ միասին վայր չընկնեն այս անարկու պատվարից։

Իմ ուղեկիցներից մեկին, որ տեղացի եր, հարցրի թե ինչ են անում այն պարագային, երբ այս ճանապարհի վրա յերկու կառներ իրար հանդիպեն. նա ինձ տեղեկացրեց թե այդպիսի դեպքեր պատճած են անհնար։ Յերբ կառավանները պիտի անցնեն յերկու ուղղությամբ էլ, կանոնից մարդիկ են ուղարկվում, արգելելու համար մեկի մեկնումը մինչև նյուսը անցնի ճանապարհից։ Անցնելով այս տեղից, յես զտնում եյի սա մեր ամբողջ ճանապարհի ամենավտանգավոր մասը, սակայն ամենից ավելի զանցատված։ Անկախ ծայրահեղորեն նեղ լինելուց, ամեն յերեսուն յարդահեռավորության վրա ընկած են մեծ քարեր, վոմանք կիսաթաղված, վոմանք գետնի վրա, և վոմանք անդունդի յեզերքին, այսպես ավելցնելով ճանապարհի վտանգը։ Դատելով լեռան մակերեսի բնույթը, վոր մի տեսակ կակուղ քարից է, ուղին կարելի յե լայնացնել և հարթել շատ քիչ դժվարությամբ կամ աշխատանքով։

Յերբ հասանք լեռների ստորին հարթությանը, նրանք դարձան նվազ վայրի, առնելով մի տեսակ կլոր ձև, անտառապատված ու ծածկված հարուստ բուսականությամբ, շատ քիչ անգամ ցուցադրելով այն կոշտ ու կոպիտ ժայռերը, վորոնք վերջերս յես սովոր եյի տեսնել։ Կեսորից հետո ժամը 4-ին հասանք Կաշուրի (Kashour) բերդը, վոր տիրապետում է հովիտին և այն ճանապարհին, վորը տանում է դեպի Թիֆլիս։ Մասամբ շինված և վրացական հին ամրոցի ավերակների վրա, վորի բարձր աշտարակներն ու հզոր պարիսպները պահում են անցյալի փառավոր հիշատակները։ Շատ դարերից ի վեր փոշիացած կայսրությունների այս լուռ վկաները կարելի և տեսնել նույն մոռացության մատնված շրջակա բլուրների գրեթե ամեն մեկ կետի վրա...

Հոկտեմբերի 7-ի (Հ. Տ.) առավոտ, ժամը 6-ին, մենք

մեկնեցինք Կաշուրից, ապատարկված մեր հետևակների ու կողակների սովորական պահակախմբով, և քիչ հետու անցանք Արագվա [գետը] մի փոքրիկ, բայց լավ կառուցված քարե կամրջից։ Այս կետում գետը քսանից յերեսուն վոտքից ավելի լայն չե և հոսում է հանդարտորեն։ Հովիտը յերկու կողմից ճոխորեն անտառապատված է. արևելյան յեզերքում բացվում են բազմաթիվ ձորեր, վորոնք յերկարում են դեպի լեռների այն մասը, ուր բնակում և աշխատասեր, տոկուն ոսա ցեղը։ Այս փոքրիկ ձորերը ամեն տեղ ծածկված են դուղերով... Ընդարձակ մշակության ապացույցները նկատելի են։ Նրանք մշակում են վոսպ, գարի, սոխ ու ծխախոտ, և պահում են վոչխար ու այծ, այնքան մեծ թվով, վոր ամենամոտ բարձունքները ծածկված են նրանց հոտերով։ Մեր տեսած մարդիկ, վորոնք պահում են այս հոտերը, ըստ յերևույթին լավ տպավորություն են թողնում։ Նրանք յերևում են կուշտ ու խաղաղ։ Բայց, մարդասպանության հին նշանը տակավին կախված է նրանց գոտուց, և մի հրացան կախված է նրանց ուսերից։ Մենք հանդիպեցինք նույն ցեղից ուրիշների, վորոնք գիտի ծանծաղուտից անցնում են դլխավոր ճանապարհին գնալու համար. նրանց հագուստը ավելի հին [որերի] պատերազմիկի յերևույթն ուներ։... Ինձ ասին, թե այս լեռնականները շատ վարպետ են դաշույնի գործածության մեջ։

Նրանք մահմեդական ու հեթանոս ոսսեր են։

Ամբողջ որը մենք հետևեցինք Արագվա գետի ընթացքին, կանգ առնելով շատ կարճ ժամանակ մի այլ ամրացրած կայան՝ Պասանուր (Passanour) անունով, ուր մենք վոխեցինք մեր ձիերն ու պահակախումբը։

Այս և հաջորդ իրիկան մենք ճանապարհորդությունը ավելի դանդաղ եր, բազմաթիվ փոքրիկ բլուրների վերելքի ու վայրէջքի և ճանապարհի քարքարոտ լինելու պատճառով։ Սակայն, մեծ հովիտը, վոր տակավին մեր ուղին և, պահում և իր հովվական նկարագիրը, վորքան ժամանակ մենք հետևում ենք գետի վոլորուններին։ Յերբ մենք դանդաղորեն

առաջ եկինք գնում, ցրեկվա յոգով, բայց չհինք ցավում այդ ցերեկվան [վերջավորության] համար։ Մի գեղեցիկ լուսին, ցերկնքում ավելի պայծառ, քան վորևե այդ ժամին Ցիվրոպայում, իր ճառագայթները սփռում եր ամեն մի առարկայի վրա։...

Հետաքրքիր տեսարանով և թարմ ոդով հասանք Անանաուր, վորտեղ խոնավ եր ու մութ։ Այստեղ նշանակված և այն վայրը, վոր կովկասից յեկող ու վրաստան մտնող ճանապարհորդները չորս որվան կարանտինային են յենթարկվում, իրենց ուղեվորության շարունակելու թույլատրվելուց առաջ։ Այն խոտոչները, վորոնք մեզ հանկացրին, կեղտոտ եկին ու վոտքմանվել, և կարելի յեր յերեվակայել թե ինչ պիտի լիներ գիշերվան մեր ոթեվանքը։ Հատակը չոր գոմեշ, խոնավ ու անախորժ. պատուհանները վրէ ապակի ունեյին, վոչ ել փեղկ, և այն խորշը, վոր վորպես թե կրակարանի պիտի ծառայեր, այնպիսի քանդված վիճակումն եր, վոր վոչ մեկ հույս չկար օգտագործելու։ Այս խորշերից մեկը հատկացվեց ինձ ու իմ յերկաք ընկերակիցների համար։ Հատակը շատ տեղերում առնկեր եկին բուսել իրար մեջ պահանջեցինք ավելի հարմար մի վայր՝ այդ գիշերվան համար և չորս որվան արգելարանի համար։ Տեղի վրա հեղինակավոր մի անձնավորություն չկար, այդպիսի մի հրամանատարը ապրում եր Անանաուր ավանում, մոտավորապես յերկու մղոն հեռու, և վորովհետև շատ ուշ եր՝ լուր ուղարկելու համար նրան, առիթվեցինք հարմարվել մեր թշվառական ոթեվանի հետ։ Մեր ապատվորները մեզնից ավելի վատ պայմանների մեջ եկին...

Հաջորդ առավոտ յես ուղարկեցի մի պինվոր՝ պինվորական հրամանատարին և քաղաքի բժշկին, խնդրելով վոր ավելի հարմար մի տեղ տրվի ինձ և իմ ընկերակիցներին։ Այս յերկու հեղինակավոր անձերը շուտով պատվեցին իրենց ներկայությամբ, և նրանք միացան՝ վստահացնելու համար ինձ թե յես գտնվում եկի լավագույն հարկաբաժնում, ցեկ ինձ համոզելու համար իմ բախտավորության մասին, նրանք

ավելացրին թե գեներալ սպաներ նույն տեղում անց են կացրել իրենց կարանտինան, և դա այնքան հանգստավետ է, վոր միշտ պահում են այդ աստիճանավոր ճանապարհորդների համար։ Հանգստավետության մասին իմ գաղափարը մի կերպ տարբեր լինելով, յես ցանկությունս հայտնեցի վոր պատուհանները փակվեյին, և չոր գետնից տարբեր մի բան տրամադրվեր, վորի վրա մենք կարողանայինք նստել, ուտել և պառկել։ Սենյակի մի անկյունում կար մի հին ու հոտած մահճակալ, բայց շատ վտանգավոր եր նրա գործածությունը։ Քիչ ժամանակ հետո, թուղթ փակցրին պատուհաններին և ուղարկեցին մի քանի առարկաներ, վորոնց մենք այնքան շատ պետք ունեյինք։

Կարանտինային տեղը բաղկացած է ցած շենքերից, քառանկյունի մի կտոր հողի վրա։ Ունի յերկու մուտք, խստորեն պաշտպանված, այն վոր տանում է գեպի քաղաքը՝ ավելի լուրջ հսկողության տակ է. արգելքի տակ գտնվողներից վոչ վոքի չի թույլատրվում անցնել այդ սահմանից, սակայն հատակ ուղղությամբ կարող ենք դուրս գալ և բաց դաշտի մեջ շրջել։ Հակառակ իմ հարկաբաժնում կատարված բարեփոխության, գիշերը յես վերստին կառչեցի կառքի մեջ քնելու իմ հին սովորությանը։ Թեև ցուրտ եր և կրակի կարիք եր զգացվում, բայց առնվազն մաքուր եր ու չոր։ Բայց, Անանաուրում քնելու իմ առաջին փորձին, ամբողջ գիշերը յես խանգարվեցի ամենազղվելի վոռնոցներով և կպչուն կանձներով։ Չկարողանալով հասկանալ պատճառը, առավոտյան հարցրի և գտա վոր գրանք գայլերի ու շնագայլերի ձայներ եկին, վորոնք վխտում են շրջակայքի անտառներում և հաճախ անհրաժեշտությունից մղված մտնում են այս հատատուների [կարանտինայի] հրապարակը։ Տհաճ այցելուներ խեղճ անտուն բնակիչների համար, վորոնք, ինչպես մեր ծառաները, այդ մրջյունին անպաշտպան պառկել եկին բաց գետնի վրա։

Անանաուր ավանը գտնվում է Կումլիս (Kumlis Zighe) լեռների հարավ-արևմտյան շղթայի ստորոտում,

Արագվա գետի ափին։ Հնավանդ մի վայր է, և կար ժամանակ մոր նշանավոր եր իր բնակչությամբ ու գինվորական ուժով։ Այժմ վերածված է մի քանի տղոբանվի հյուղակների, որոնցից մի քանիսը խանութներ են։ Բայց, ավելի մոտ շրջումով դառ մոր բնակիչներն ավելի քաղաքակրթված են և ավելի հասարակական հարաբերություններ ունեն իրենց մեջ, քան մորևե ուրիշ տեղ։ Ասիա իմ մուտք գործելուց հետո, և ինչ մոր լավագույն փաստն է, այստեղ միայն դառ լինելու մի ժողովուրդ, մոր կողոպտուն ու ավարառություններ իր ապրուստի միջոց չի համարում։ Անհանդուրժում տակավին մնում են մի հնավանդ չկիզեցու մնացորդները, որոնք գտնվում են ամրոցի պարիսպների մեջ, մոր չերբևնի հպարտ աշտարակներն արագորեն քայքայում են։ Ճարտարապետական զարդանկարները (decorations) ներկայացնում են մեծ վարպետության ու աշխատության արդյունք. խաչեր ու քանդակներ հանճարեղորեն են կատարված, զարդարելով շինքի ամբողջ արտաքինը։ Կիսաբոլորաձև դռան մուտքի չերկու կողմը, մոր առաջնորդում է դեպի ներսը, գանազան արձանագրություններ կան, հին վրացերեն տառերով. այս լինելով այդ ժամանակներում վրաստանի նախասիրած ամրությունը կամ սրբավայրը։ Յերբ Պարսկաստանի կամ Թուրքիայի կողմից Թիֆլիսը հարձակում կրելու սպառնալիքի տակ եր, Անանուր ընդհանրապես այն վայրն եր, մոր համարվում եր ամենից ապահով, ուր ուղարկվում եյին իշխող տան կանայքը և նրանց հետ վհատահատի ամենաարժեքավոր իրերը։...

Մեր ժամանման չերրորդ որը մեր ծառաներին ու մեր բեռները հասցնելուց, որպես նախապատրաստություն հայորդ որվա մեր ազատ արձակման։ Այս չարչարանքն անցնելուց հետո, մենք առողջության վիճակներս սատացանք։ Ազատությունն ձեռք բերած լինելով, այցելեցի քաղաքն ու բերդը։ 1817 թ. հոկտեմբերի 11-ին (Հ. Տ.) վերադանք մեր ճանապարհորդությունը։ Անանուրի հարավից բարձրացանք դեպի լեռը և անցանք նրա անտառապատ կատարից,

գրեթե քաղաքի վերևից։ Այս որվան ուղևորության կես որին Դուշեթի տեսարանը պարզվից մեր առաջ։ [Դուշեթը] մեր հաջորդ իջևանը պիտի լիներ, որ Անանուրից չորս ժամ հեռու է։ Գտնվում է լեռան ստորոտում, տանտիկ վերստ հեռու է։ Գտնվում է լեռան ստորոտում, վորից մենք իջնում եյինք, մի ընդարձակ հովտում, հարուստ մշակության և պտուղներով։ Բնիկներից շատերը զրաղված եյին մշակությամբ, բայց այն մեքենան [խոփը], որ նրանք գործ են ածում, չափազանց ծանր է. նրա ծայրին շատ քիչ երկաթ կա, և այնքան անհարմարորեն չերկար, որ նա չերկաթ կա, և այնքան անհարմարորեն չերկար, որ նա չերկու վոտք լայնությամբ խրամ է բաց անում և չափազանց ուժով է պետք նրան տանելու համար։ Հողը հարուստ է, սև և ծանր, այնպես որ պանց խոր

բակ, շրջապատված քարե բարձր պարսպով, անկյուններում դրաված աշտարակներով։ Այս հրապարակի նեղսը մի կողմ պարսպի մոտ գտնվում և արքայական շենքը, ցածր ու անշուք մի կառուցվածք, բաղկացած մեկ հարկից և բաժանված և փոքր սենյակների, առանց վորևե զարդարանքի, բացի առաստաղի փայտերի կոպիտ քանդակներից։ Վոչ վոսկեզոծում և վոչ էլ վորևե տեսակ նորկ էլերքեք դպած չեն նրա պարզ պատերին։ Ունի մեկ միայն մեկ վերանոգա, և նրա ուղիղ կառուրը ծառայում է վորպես տերրաս, վորտեղից լեռների կատարներն են տեսնվում։

Վրաստանի այս մասը այժմ կոչվում է Քարթելանիայի (Kartelania) դավառ, և անցյալի Իբերիան և (Iberia)։ Պրոդոմոս նկարագրում է նրա սահմանները՝ հյուսիսից Սարմաթյան լեռները, հարավից մասամբ Հայաստանը և մասամբ Աղվանք (Albania) և արևմուտքից Կողքիս (Colchis), ներկայումս Իմմերեթիա։ Նա հիշատակում է նրա մի շարք ավաններ ու դյուղեր։ Բայց, Սարաբոն, վոր ճանապարհորդել է այս էլերկրներըը, խոսում է ավելի վորոշ կերպով այս շրջանի ծագման և մինչև իսկ ճոխության մասին։ Վ՞րքան տխուր է հակադրությունը նորկայի հետ։

[Ապա մեր ուղեգիրը խոսում է Վրաստանի քաղաքական անկման մասին, ոտար արշավանքների, պատերազմների հետևանքների մասին, և ապա լեզգիների և վերագրում վերջին քայքայումը, վորոնց միջամտության հետևանք է համարում նորքին պատակառումների։ Զանց անելով առաջին մասերը, տալիս ենք լեզգիների միջամտության մասին հետևյալ ասածները]։

Քաղաքացիական պատակառումների ժամանակ, վոխադարձ նախանձով լցված Իբերիայի պետերը կաշառեցին այս պատերազմիկ բարբարոսներին [լեզգիներին], կռվելու իրենց համար։ Այս հաղթական դաշնակիցները մի անգամ ճանապարհը սովորելով, սկսան գալ ըստ հաճույքի և արհամարհելով մեծ իշխաններին, — իրենց նախկին վճռողներին, — շուտով ընկճեցին այն ժողովրդին, վոր այնքան անկարող առաջնորդներ ուներ։ Այդ ժամանակից էրեքան աճեցավ ավելի ցածր, հարստահարության ծանրության ներքո, մինչև վոր դյուղացիությունը անձնատուր եղավ մի տեսակ ծուլ հուսահատության և էլերկրի նորկա տիրապետողները նրանց գտան մարդկային մաքի մահացու վիճակում. նորից նրանց մեջ մտցնելու համար հասարակական ու քաղաքական նոր կյանք, հարկավոր և տարրների յիվրոպական կրթություն, որինակ և համբերատար յեռանդ։

Մեկնելով Դուշեթից, մի քանի վերստ վրա հովիտը բավական լայնանում է, անցնելով բավական լավ մշակած բաղմաթիվ ցածր բլուրներից։ Ճանապարհի արևմտակողմը գտնվում է մի լիճ, վորը, ինչպես լինձ տեղեկացրին, պարունակում և գանագան տեսակի լավ ձկներ. մի տեսակը շատ մեծ է, լոքի (Salmon) ձև ունի, բայց միսը միևնույն գույնը չունի, սպիտակ է՝ փոխանակ դեղինի։ Հետևանքով ուղղություններից, մեկ-էլերկու ժամվան ճանապարհորդությունից հետո, նորից մոտեցանք Արագվայի յեզերքին, վորտեղով մենք առաջացանք ամբողջ որվան ճամբորդության ընթացքում։ Լինձ ցույց տվին մյուս յեզերքում մի ձոր, վորտեղից թվում է թե լեզգիները կարող եյին վերստին կրկնել իրենց արշավանքները։ Ռուսական մի պահակախումբ, բաղկացած մի քանի հետևակներից և կազակներից, հատուկ է այստեղ և բավական է անցքի սովորական պաշտպանության համար. հին արշավողները այժմ այլևս չեն վորձում։ Նրանք տեսնվում են էլերբեմն ասպատակելին վոքրաթիվ խմբերով, հետապնդումից խուսափելու համար։ Միայն պատերազմի ժամանակ է, վոր էլերը ռուսական զինվորները տարվում են ավելի հեռու տեղեր, նրանք հարյուրներով վար են իջնում, ամեն կողմ սիրելով թշվառություններ ու թալան։

Յերևկոյան մեյն ժամանեցինք Աբթիսկալի կայանը, ուր փոխեցինք մեր ձիերը։ Թողնելով մեր հնձելատերը, վերցրինք վորպես առաջնորդ մեյն կողակներին, ուննալով շատ կարճ ճանապարհ հասնելու համար գիշերվան

մեր իջևանը։ Հազիվ մեկ ներկու վերստ առաջացած եյինք երբը բոլորովին մթնեց, սակայն աչքը սովորած լինելով, կես կարող եյի նկատել մեր խավարի սաստկացումը հետևանք եր ձորի նեղնալուն։ Վերջում լեռան պատերն այնքան մոտեցան իրար, որ հնարավոր չեր տեսնել ճանապարհը. վոչինչ չկար որ մեզ ղգուշացներ, որ չընկնեյինք գետի մեջ, որի ջրերը մեր կողքում մաքառում եյին ժայռերի հետ...

Ժամը լիննին հասանք Մծխեթ (Mskett), երբեմն վրաստանի մայրաքաղաքը, այժմ խղճուկ մի գյուղ։ Սա հետևանքն է՝ տերերի հաճախակի փոփոխության, պատերազմի ավերությունների, իշխանության թշվառության և հարստահարության ու աղքատության... Ես իջևանեցի բերդի ավերակների մեջ, ու հյուրընկալվեցի մի քահանայի խցում, հին մայր եկեղեցուն պատկանող, որ տակավին գոյություն ունի բերդի պարսպներից ներս։ Միայն մի կարճ որվան ճանապարհ հետու եյինք Թիֆլիսից։...

[Այստեղ մեր ուղեգիրը մանրամասն նկարագրում է Մծխեթի հնությունները և մասնավորապես հնագույն շրջանի պատմությունը, վկայություններ բերելով հին հեղինակներից։ Ապա, խոսում է Ռիոն և Կուր գետերի մասին, տալով մանրամասնություններ։ Այս մասի թարգմանությունը կարևոր չենք համարում, սակայն ուսումնասիրողը կարող է դիմել բնագրին, Ա. Հատ. եջ 104—114]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Matschar, Մաջար (*Մաջարի*), կամ Մաճար *թաթարական շրջանի առևտրական քաղաք, Կումա գետի ափին, այժմյան Գեորգիևսկի մոտերքում, որի ավերակների ժամանակ նկարագրությունը տալիս է Կլապրոթ.* (J. Klaproth, «Reise in den Kaukasus und nach Georgien, I. Band, Halle und Berlin, 1812, s. s. 402—434. *անգլ. թրգմ.* «Travels in the Caucasus and Georgia, in the years 1807 and 1808, London 1814. ch. XXI, p. *224—231*)։ *Պրոֆ. Լ. Մելիքսեթբեկ մի նամակով մեզ հաղորդում է, որ Մաջարը հայտնի է* XIII-XIV *դարերի թաթարերեն արձանագրություններով, գրված արաբական տառերով։ Այս քաղաքը կործանել է Թոխթամիշ* 1400 *թվին։ Նույն գարերից հայտնի է լեռել ռուսներին, Մամայի անունով, լերեսին* Кумалжар (Կում-Մայար) *և* Мамайский город (*Մամայի քաղաք*)։ *Այս Մայարից են ծագած Կումա գետին գյուղ՝ հյուսիսում հոսող և նույնպես կասպից ծով թափվող Գյուղուլի գետ՝ ակունքում գտնվող մի տեղանուն* Маджарская застава, *նաև լճի անունը* Маджарское озеро:

2. Պավել Դմիտրիևիչ Ցիցիանով (1754—1806), հայտնի զինվորական գործակալ ցարական կառավարության։ Նա վրացի եր և ազգակից թագավորական տոհմին։ Ցեկատերինե Բ-ի ժամանակ զլխավոր զինակիցն եր Ռումյանցևի և Պոտյոմկինին, և ակտիվ մասնակցություն է ունեցել 1794 թվի լեհական շարժման ճնշման։ Վորպես զինվորական գլխավոր հրամանատար վրաստանում, Ցիցիանովը արատավոր գաժանությամբ և վերաբերվել թե ազգային-քաղաքական բարոստացումներ և թե վանական կան լուսնարնականների դեմ նա ի գործ դրեց ծայրահեղ դաժան անգթություն։ Ալեքսանդր Ա. ցարին գրած իր նամակում նա այդ լեռնականներին անվանում է «անասուն»։ Իսկ 1804 թվին վրացի ապստամբ գյուղացիներին մի գրությամբ հետևյալ վայրագ սպառնալիքն եր ուղղում.—«Դուք, որ ես վրացի չեմ։ Ես ծնվել եմ Ռուսաստանում, այնտեղ մեծացել և հոգիս ռուս է. դուք կ'արժանանաք իմ գալստյան ձեր յերեխաների ու կանանց փորոտիքը կթափեմ։ 1804—1805 թ. Ցիցիանովի պաշարման ընթացում նա կողոպտեց Հայաստանի գյուղացիներին և թալանեց Էջմիածնի վանքը։ Ցիցիանովը սպանվեց Բագվում 1806 թվին։

3. Գերբենդ, *Տես «Ուղեգրություններ» Ա. Հատոր, եջ 13 ծանոթ. 1 և եջ 54 ծանոթ 3։*

4. Թամարա, Վրաստանի ֆեոդալ թագուհին (1184—1212), բազմաթիվ տոհմից և Գեորգի Գ-ի աղջիկը։ Վրաց մատենագիրները խոսում են նրա գեղեցկության, խմաստության ու ընարարության մասին։ Հակառակ իր դեմ ծառացող հին աղնվականության թշնամական դիրքի և իր առաջին ամուսնի Բոգոլյուբսկոյի լուխանության տիրանալու փորձերին, Թամարը զորացրեց կենտրոնական իշխանությունը և սպասալար Զաքարեի և Իվանեյի զեկավարությամբ հաղթեց ընդարձակել վրաստանի սահմանները զեպի կասպից ու Սև ծովերը և Հայաստանի տերիտորիան։ Նրա բանակները գրավեցին Կարսը և արշավանք գործելով Գարսկաստան և գրավելով Արդաբիլը, Միանան, Ղազվինը՝ վիրադարձան կոտորելով տասնյակ հազարավոր բնակիչներ և իրենց հետ բերելով հարուստ ավար և հազարավոր գերիներ։ Թամարայի որով կառուցված են բազմաթիվ բերդեր և յեկեղեցիներ (*Տես*, W. E. D. Allen «A History of the Georgian People». London 1932, *եջ 103—108*)։

Բ· ԹԻՖԼԻՍ *

Անցնելով քարե փոքր մի կամուրջից, հասանք կարանալնալի պահականոցը, Թիֆլիսից յերեք վերստ հեռու, բայց մեր առողջության վկայականները ցույց տալուց հետո, արտոնեցին մեզ առանց վորևե արգելքի շարունակելու մեր ճանապարհը դեպի քաղաքի դռները: Ներս մտնելով յես իշխանների Հոջա Արաթունի տունը, մի հայ վորի հայրը ծառայել եր մեր նախկին դեսպաններին վորպես դանձապահ, յերբ բնակում եր Պարսից արքունիքում[1], Մեծ հաճույք պատճառեց ինձ յերբ իմ հյուրընկալից լսացա, վոր Վրաստանի կառավարիչ գեներալը Յերմոլովը Թիֆլիս եր վերադարձել Պարսկաստանի մի ապստամբն իր կատարած դեսպանության[2], հետևաբար, հաջորդ առավոտ նախկին նորին գերազանցության, և հանձնեցի իմ թղթերը: Նրա ընդունելությունը իր մայրաքաղաքի նման սխալ չեր·

Թիֆլիսը Սեն Պետերբուրգից 2627 վերստ հեռու է... Քաղաքը միայն մի քանի դարի հնություն ունի, հիմնված լինելով 1063 թվին Լևան[3] (Liewang) թագավորի կողմից, վոր ցանկանում եր շրջակայքի ջերմուկներից անձնական շահ ձեռք բերել: Մինչև այդ ժամանակ վոչ մեկ բնակարան չկար, բացի թերևս մի քանի հողե հյուղակներից փոքրիկ բերդի բնակիչների դյուրության համար, վոր [բերդը] գտնվում եր մերձ բլուրի վրա և պաշտպանում հովիտը: Այս հին ամրոցի ավերակները տակավին տեսնվում են քաղաքի հարավակողմը մի բլուրի վրա, մի քիչ հեռու արդի միջնաբերդից, վոր Թուրքերն են կառուցել: Բնիկ թագավորների ամրոցի դիրքը

* Ker Porter, հատ. I· էջ 114—149:

կատարելապես տիրապետում և կուրի արևմտյան ձեղերքի ճանապարհին, և նրա մոտյլ ու խոժոռ աշտարակները թեև ամայի, բայց թվում և թե սպառնում են ներքևի ճանապարհին: Ավելի ծանոթանալով քաղաքի հետ, մարդուն տալիս և տխրատեսիլ տպավորություն և շրջակայքն ընդարձակ մի բանտի [տպավորություն] և թողնում:... Մի ձորի մեջ ընկած քաղաքի դիրքը կարելի չե համարել [բնակության] հարմար մի վայր այն անձերի համար, վորոնք վարժվել են ազատ տարածության և ավելի լայն տեսարանի: Այս պատճառով կառավարիչը իր բնակարանն ընտրել և քաղաքի կենտրոնից հեռու մի բերդի կողքին, դեպի դիմաց, կովկասյան լեռների գեղեցիկ տեսարանով:...

Այս շենքը, ինչպես նաև պետարանը, հիվանդանոցը, յեկեղեցիները ու շրջակայքի մի քանի վիլլաները՝ միակ շենքերն են քաղաքի մեջ, վորոնք հիշեցնում են վորևե կերպով Յեվրոպա: Մնացածը զուտ ասիական և, բայց բոլորովին տարբերը այն դաղափարից, վոր Յեվրոպայում ունեն Արևելքի մասին. — գլարթ մինարեթներ, գունավոր գմբեթներ և վոկեզոծ վորմներ: Այստեղ կա միայն ցած հողե կտուրներով տներ հավաքածու, կառուցված հողե ապյուսից, խառնված քարի ու ցեխի հետ, դռներն ու պատուհանները չափազանց փոքր, վերջիններս ծածկված թղթով, վորովհետև ապակի շատ քիչ են գործածում, թանկությունն ու հաղվագյուտ լինելուն պատճառով, հերավի բնիկներն այնքան վարժված են ապրելու մի տեսակ կես մթության մեջ, իրենց լեռների սավերներից ու բնակարանների անձկությունից, վոր նրանք վորևե կերպ լուսի պահանջ չեն զգում:... Փողոցները առանց բացառության նեղ են և ճանապարհի նախնական վիճակի հետևանքով, անհանդուրժելիորեն ցեխոտ են՝ անձրևոտ և փոշոտ՝ չոր յեղանակին: Սակայն, նորին գերազանցության, կառավարիչը, չանպղիր և վերջ տալու այս անհարմարության, հրամայելով վոր փողոցները մայթեն. և այս լավ գործը արդեն սկսել են: Նույնպես նա ուրիշ բարեփոխություններ և կատարում, հրամայելով վոր բոլոր կիսա-

քանդ տները վերանորոգվեն և կամ բոլորովին քանդվեն և նրանց տեղը նորերը շինվեն վայելուչ և ավելի առողջապահական պլանով։ Այս բնութեի գործերի մեջ, որ կատարվել և նրա Պարսկաստան գտնված միջոցին, վաճառականների շուկայի՝ բազարի փոփոխութիւնն և։ Այս ամբողջովին ծածկված և, բայց կատարում կլոր բացվածքներ են թողնված, լուսի ու ոդի համար։ Յերկար այնունաշարքեր միանում են քաղաքի պահականոցի հրապարակին, որի յերկու կողմում նույնպես խանութներ կան, ծածկված գեղեցիկ այնունազարդ մի կամարով, որով պաշտպանվում են անձրևից կամ խանձող արևից, և այսպես բնիկները սկսած են հասկանալ թե փոփոխութիւնները՝ բարենորոգումներ են։ Բազարը մի նեղ փողոց և, ծուռ ու մուռ և յերկար։ Նրա յերկու կողմերում կան ամեն տեսակի խանութներ, ինչպես պողավաճառ, նալարավաճառ, սափրիչ, խոհարար, մեսաքսավաճառ, թամբագործ, դինագործ և այլն և այլն, բոլորը բաց, որոնց դանազան առարկաները ափված ու ցուցադրված են հարմարազույն յեղանակով։ Հակառակ մի կարգ ապրանքների արժեքին, այս վայրը ազատ և անցուդարձի համար, միայն հետիոտների համար, այլ նաև ձիերի, բեռնավորված հնձերի և նույնիսկ գոմեշների սայլերը արգելված չեն։ Այս պատճառով հետիոտն անցորդների համար հաճախ տհաճելի կ ու վտանգավոր, սակայն շարունակ յեռուզեռի մեջ և բազմութեամբ լի առավոտից մինչև մթնշաղ։ Բազարից վոչ շատ հեռու գտնվում և հասարակաց քարվանսարան, ուր իջևանում են առևտրական ճանապարհորդները։ Այստեղ դուք կարող եք տեսնել՝ մուճ ու կամարակապ հարկաբաժիններում, հողե կամ քարե հատակների վրա ցուցադրված այն ապրանքները, որ վաճառականն ունի։ Յուրաքանչյուր խանութի սեփականատերը նստում և ծալապատիկ, լուրջ ակնկալութեամբ սպասելով հաճախորդների յերևման, կամ սակարկում և յեկողների հետ։ Այնտեղ մի հարկաբաժնում յես հանդիպեցի մի հին ուղեկցի, մի հայ վաճառականի, որ Կովկասից անցել եր ինձ հետ միասին։ Նա ուրախ եր

այս հանդիպման համար, և կայլոն, անուշեղենի ու Յերևանում շինված մի ոդի (brandy) հրամցրեց ինձ։ Այս շինքը շրջանաձև և, յերեք հարկ բարձր, և գոնների շարքի առջև յերկաթուղի և մի տեսակ պատշգամ, որից քարե սանդուխները բարձրանում են դեպի վերև կամ իջնում ներքև։ Բակում լիքն են քարվանատարատում իջևանող վաճառականների ձիերն ու ջորիները։

Բազարի ծայրամասում մարդ գտնում և մի կամուրջ, մի խոր հնդեզատի վրա, որի խորքից հոսում և մի լեռնային վտակ, իր աղբյուրում պաղ ու հատակ, բայց այստեղ նա վտակ, իր ափերում պաղ ու հատակ, բայց այստեղ նա խառնվելով ջերմուկների հետ, որ մերձակա բարձունքից են բխում, դառնում և տաք և ընդունում և իր մեջ բոլոր բժշկական այն հատկութիւնները, որոնց համբավը ծնունդ և տվել Թիֆլիսին։ Այս ջերմուկները վոչ միայն բնիկների ու այցելու ճանապարհորդների ապավենն են հիվանդութեան դեպքում, այլ նաև յերկաթե ժողովրդի պերճանքի ու հաճույքի վայրը։ Կամրջի մի կողմ գտնում և այն [բաղնիքը], որ հատուկ և տղամարդկանց, և մյուս կողմում մի ընդարձակ ախուր պատերի անմիջական սահմանում՝ կանանց համար։ Այս նշանավոր բաղնիքներին հայթայթված ջուրը, որ պարզապես խառն և ծծումբով և նման աղբյուրների սովորական ձանր հոտն ունի։ Շատ ավազաններում նրա ջերմութիւնը Ռեոմյուրի 16—36 աստիճան և։ Վտակի աղբյուրում 42 աստիճան։ Ավազանները փորված են այն ժեռքարի մեջ, որի յերեսից ջուրը նախապես հոսել և, և սրանք մի մեծ կամարակապ կտուրի տակ բաժանված են տարբեր հարկաբաժիննների, որտեղ ամենափոքր լույսն մի անցք չկա, և փոքրիկ լամպարներ են գործածում, որոնց ազոտ լույսը մաքառում և առվակից բարձրացող շոգիի հետ։ Տեղի պարշահոտութիւնը և ազոտ լույսով տեսնված կեղտն ու անկարգութիւնը, բավական են ապացուցելու թե ամեն ինչ թողնված և ստվերի մեջ։ Յեվ վոչ մեկ հարկաբաժնում յես չտեսա մի կնա, ուր հնարավոր լիներ լվացվողի համար՝ դնելու իր հագուստը և վերցնելիս վստահ լիներ որ այն

Թրջված ու կեղտոտած չեն։ Սակայն, երբ ի նկատի ունենա
վոր այս բաղնիքների մուտքը ազատ և ամենքի համար և
բոլոր սենյակներում էլ անխտիր խոնավում են միօրինակ
կերպով, այլևս զգալուց՝ կարգ ու կանոնի և
մաքրության մեծ պակասության համար։...

[Մեր ուղեգիրը տղամարդկանց բաղնիքը նկարագրելուց
հետո անցնում է կանանց բաղնիքը, որ գտնվում է կամրջի
մյուս կողմը]։... Զարմանալի չէ որ մուտքի վոչ մեկ
դժվարություն չունենա։ Մի պատառ կին որ կանգնել դրան
մոտ, և նա առանց վարանումի, վոչ միայն ցույց տալով
ճանապարհը այլ և ծառայեց իբրև մեր առաջնորդ։ Դռան
ամենամոտ սենյակներից մեկում դանդ մեծ թվով մերկ
կերևանան, տարբեր տարիքների, սենյակի մեջտեղում գտնը-
վող կլորաձև ավազանի մեջ լցված, ուր նրանց մայրերը
զբաղված էին լվալով և շփելով նրանց։ .. Յերեխաների մայ-
րերը վորևե զարմանք կամ ահաճություն չցուցադրեցին և
մենք հեռացանք այս հարկաբաժնից և մտանք ավելի մեծ
մի սենյակ, լավ լուսավորված և ավելի բարձր կամարով։
Ջուր չկար այստեղ, այլ սենյակի շուրջը գրված եր քարե
մի բազմոց, վորի վրա նեղքնակներ՝ ու կապերտներ էին
փռված, և նրա վրա պառկած կամ նստած էին ամեն գա-
սակարգի պատկանող կանայք։ Վոմանք կլուսամերկ էին և
ուրիշները հագիվ թե վորևե ծածկոց ունեին իրենց վրա։
Նրանց սպասարկում էին ծառաներ, վորոնք չոր լաթով
շփում էին այս կանանց գեղեցիկ մարմինները կամ չորա-
ցնում էին նրանց մազերն ու հոնքերը կամ ներկում նրանց
գնդերը։ Մեկնելով այս հարկաբաժնից, (վոր այնքան պա-
րզությամբ կատարեցինք, ինչպես մտել էինք, մեր հանդիսու-
թյան համար առանց նվազագույն շփոթություն կամ զար-
մանք առթելու), անցանք այնտեղը, ուր չրից [կանայքը]
դեռ նոր էին դուրս եկել։ Այստեղ գտանք ընդարձակ այրի
նման մի սենյակ, աղոտ լուսավորված և լի ծխմբի շոգիի
զորավոր հոտով, վոր բարձրանում և գրեթե քսան փոսերից,

Այս շոգիի միջից կարող ենք զանազանել կանանց ֆիգու-
րաներ։...

Այն անձերը, վորոնք լվացվում են առողջության հա-
մար, մի քանի րոպեից ավելի չեն մնում, բայց երբ հա-
մար են բաղնիս առնում, այս մարդիկ այնքան
ճոլքի տաքացած են նրանով, ինչպես թուրքերն աֆիոնով, վոր
պնտեղ մնում են այնքան երկար ժամանակ, վոր խաթար-
վում և նրանց ուժն ու դիմադիծը։ Վոմանք ամեն որ երկար
ժամեր են անցկացնում այդ վատառողջ մթնոլորտի մեջ,
բացի շաբաթական մի ամրողջ որից, վորի մեծագույն մասը
հատկացվում է վոչ թե լվացվելու, այլ հարգարելու իրանց
լերեսը, նեղկելու մազերը, հոնքերը և արտևանունքը։...
Այս արևելյան դիցուհիները, այսպես զբաղված կամարակապ
սենյակում, իրենց սպասուհիների ձեռքով գեղեցկանալով,
հավաքվում են միասին՝ պատմելու ընտանեկան անեկդոտ-
նեը և կամ իրենց ծանոթների փոքրիկ սկանդալները։...
Ասում են, թե շաբաթվան մեջ կան որեր, երբ վորևե՝ մե-
կին կարող և վարձել բաղնիքը միմիայն իր համար կամ
ընկերակցաբար, վորոնց հետ վոր կամենա։

Քանի տարվա ընթացքում Թիֆլիսի բնակչության վերին
խավերը շատ բան են կորցրել իրենց ասիական սովորու-
թյուններից, և այս փոփոխությունը սպասվում եր՝ կեվրո-
պական կայսրության [Ռուսաստանի] քաղաքային ու պին-
վորական պաշտոնյաների հետ ունեցած հարաւոե շփման
հետևանքով։ Այս փոփոխությունները իր սկզբնական շրջա-
նում ճշտորեն չեն հասկացվում նրանց կողմից, վոր ընդու-
նում են, այս պատճառով այն աղջերը, վորոնք երկար ժա-
մանակ ստրկական վիճակում են գտնվել, երբ առաջին
անգամ խորտակում են իրենց շղթաները, սովորական ազա-
տության շփոթում են անձարձակության հետ, և միևնույն
կերպով արևելյան հարեմի գեղեցիկ բանտարկյալները, երբ
առաջին անգամ թուլատրվում են ցույց տալու իրենց դեմքը
ամուսնից զատ ուրիշ մարդկանց, թեև նրանց ներելի

լինի, կերը նրանք կարծեն թե այլևս պետք չկա պարկեշտության քողին։

Թիֆլիսի առորին խավերում կնվրոպական բնակարկության հետևանքները ավելի շեշտված են։ Նրանց տներում բազմաթիվ առևտրական գործարանների բնակության հետևանքով, ընտանեկան սովորական բաժանումը այլևս չեր կարող պահպանվել, և տնատերերը պարտավորված եյին ցույց տալ իրենց կանանց այս առարկան հյուրերին։ Կանանց նկատմամբ գործարանների բարոյականը այնքան էլ խիստ չի, և այս պարոնները բացառության չկազմելով, իրենց տրված պատիվներ շահագործելին ոգտվելով ամուսինների պատահական բացակայություններից... Յերբ կանայք մեն են գալիս դրսում, նրանք տակավին պահել են ծածկվելու հին սովորությունը, գլխից մինչև ոտքը փաթաթվում են մեծ ասիական քողի մեջ, որ կոչվում է չադրա (chadre), և միայն պատահի որ այս կանանցից մեկը կանգնած լինի դռան և տեսնի որ մի մարդ ուշադրությամբ նայում է իրեն, շատ անգամ տեսել եմ թե ինչպես շտապով քաշվում են տուն, Չի կարելի վիճել վրացի կանանց գեղեցկության մասին, նրանք ունեն գեղեցիկ աչքեր, շատ կանոնավոր դիմագիծ և հաճելիորեն մեզմ արտահայտություն։ Բարձր դասի [կանանց] հագուստը շքեղ է և խնամքով հարմարեցրած, բայց առորին դասի կանայքը, հակառակ որ նրանք ևս ունեն արարողության մեկնուն ճաշակը, և կանոնավորապես գնում այնտեղ [բաղնիքը], նրանց հագած հագուստը շատ քիչ անգամ ոճառի կամ ջրի կերես է տեսնում, հետևաբար նրանք հաճախ կրում են ցնցոտիներ և միշտ կեղտի մեջ են։

Յերբ գնում եյի բազարից դեպի մշնարկերդը, տեսա տարբեր դասի բազմաթիվ կանանց, որոնք շարժվում եյին անթափանցելի չադրայի մեջ, և այդ մշջոցին հեշտ չեր որոշել թե նրանք հարուստ եյին թե ոպքատ։ Յերբ անցնում եյի, իմ ուշադրությունը գրավից մի հայագործի փուռը, ուր կեզակի կերպով հաց եյին թխում։ Հայագործը բանում եր խոռը առորական կերեսարկչի կերկարությամբ ու

կայնությամբ և գրկին նույնքան հաստությամբ, և ապա իր ձեռքերի ափերի մեջ առնելով հնանալի ճարտարությամբ քնում եր հնոցի կողքին։ Հնոցի պատերը շարունակաբար տաք եյին պահվում, միշտ փայտ ավելացնելով կրակին, և ներկու րոպեում հացը կափված եր և մի գավազանի սուր ծայրով դուրս եր հանվում։ Ախալի մեծ մասում այս տեսակ հաց և գործածվում, վոչ միայն վորպես ուտելիք այլ նաև վորպես պնակ ու անձեռոցք ամբողջ ճաշի ընթացքում։

Հասնելով հին միջնաբերդը, կես այն կեղրակացության եկա թե արժեր անցնել այնքան շատ վտանգավոր դարպասներից։ Նա ավերակների մի զանգված եր ներկայացնում, բայց նրանք մեծ հին ու տպավորիչ, և այն դիրքում, վոր գտնվում եր այն, ավելացնում եր այս արևելյան աշտարակների վեհությունը։ Յերբ թուրքերը գրավեցին Վրաստանը 1576 թվին, շինեցին այս բերդը, վորպեսզի մայրաքաղաքից ամ ապդեն նահանգին, և յերբ կերկու դար հետո պարսկները վերագրավեցին, նրանք մերկացրին այս պատկառելի կառուցվածքը և թույլ տվին վոր աստիճանաբար վերածվի, ավերակների ահ կույտերի, վորոնք հիմա խառնված են ժայռերի բնական պահպանդների հետ։ Լավ և ընտրված նրա դիրքը մի բարձունքի գագաթին, վորը կազմում է վերջավորությունը այն լեռան, վոր քաղաքի հարավ-արևելյան կողմն է գտնվում, հին ամրոցների մեջում տակավին տեսնվում է այն մզկիթը, վոր Շարդենը հիշատակում է, և վոր այժմ վերածվել է բանտի՝ չարագործների համար և պահպանվում է մի պահակախմբով ու մի սպայով։ Բացի այս դղեակը րոպեկ, նույն շրջանում թուրքերը քաղաքում իրենց դիրքը զորացնելու համար, շինել են մի շարք պարիսպներ ու աշտարակներ, վորոնք շրջապատում են քաղաքը ամեն կողմից, բայց բոլորն էլ աստիճանաբար անհետանում են, (բացի այն պարիսպից վոր գետի դիմացն է, և վոր տակավին մնում է), վորովհետև այս ավերակներից, ինչպես վերևի մշնարկերդից, շինանյութ են վերցնում քաղաքում տներ շինելու կամ նորոգելու համար։

[Ապա, մեր ուղեգիրը մանրամասն նկարագիր է տալիս Թիֆլիսի բնական տեսարաններին. հիշատակում է մի քանի վտակներ, որոնք թափվում են Կուր գետի մեջ և հրապուրիչ կանաչութիւնը: Նկարագրում է նաև բրքական դերեզմանոցը և հինգ նշանավոր թուրքերի շիրիմները. եջ 125-126:]

Բրիտանական տարբեր դավանանքի պատկանող բազմաթիվ գեղեցիկ եկեղեցիներ կան Թիֆլիսում. այն որ պատկանում է Հռոմեական կաթոլիկ հավատքին, ամենից գեղեցիկն է: Հայկական մեծ եկեղեցին՝ Սուրբ Սիոնի մայր եկեղեցին, ավելի ընդարձակ է, բայց չի հավասարվում իր հարստութեամբ ու ճարտարապետութեան շնորհով իր մրցակցին, բայց ունի դիրքի առավելութեան՝ նրա բնական դիրքի վեհութեունը թվում է թե համապատասխանում է իր անվան: Նրա առջեից հոսում է արագ ու ադմկալից Կուրը:... Այս նեղ վայրում մի կամարով կամուրջը կապում է քաղաքը մի ընդարձակ արվարձանի հետ, որ կոչվում է Հավլաբար (Avlabar): Այնտեղ բնակում է գլխավորապես հայերի մի գաղութ, որոնք փախել են Յերևանի շրջակայքից ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Այստեղ տեսանք նաև մի հին բերդի, մի եկեղեցու և տների ավերակներ: Բաղաքի այս կողմից, գրեթե կերկու մղոն հեռու, գտնվում է հնավանդ մի արքայական ավերակները, մի բլուրի գագաթին, այնքան բարձր, որ ամենաընդարձակ տեսարանը ունի, քան ուրիշ որևե տեղ Թիֆլիսի շրջակայքում:... [Այստեղ հեղինակը խոսում է Ելբրուս լեռան և նրա շուրջ տարածված ժողովրդական ավանդութիւնների մասին, որ կարևոր չենք համարում թարգմանել. եջ. 127-130:]

Յերբ Թիֆլիսումն եյի, շարունակ անձրևում եր և եղանակը աննպաստ եր՝ այցելելու համար Կախեթիայի գավառի ավելի ներսերը, անցյալի նշանավոր Աղվանքը (Albania): Սակայն, ինչ որ տեսա ավելի քան համապատասխանում է այն տպավորութեան, որ ես ստացել եմ նրա հովիտների անծայր գեղեցկութեունից: Բլուրները և նույնիսկ լեռները ծածկված են ամենագեղեցիկ անտառներով՝ կաղնի, հացի,

փեկան և կնձնի ծառերով, խառն հազարավոր տրապուրիչ վայրերով, արտադրում է ամենաախորժահամ խաղող, թեև վայրենի և ընտիր պտուղներ: Այս բնական վորթատունկներից և ընտիր պտուղներ: Այս բնական վորթատունկներից շինված կարմիր ու սպիտակ գինիները գնահատվում են իրենց թեթևութեան, մեղմութեան և փափկաճաշակութեան համար, վորոնք ավելի բարձր են քան Վրաստանի վորևե ուրիշ գավառի գինի: Կախեթիայի հովիտները առատորեն արտադրում են կանեփ, ուշ, բրինձ, վոսպ, գարի և ցորեն, այնքան քիչ աշխատանքով, վոր կարելի է ասել թե նրանք բուսնում են ինքնաբերաբար: Փասյան և ամեն տեսակ վայրի թռչուններ, յեղջերու, վոչխար և ամեն տեսակ ընտանի կենդանիներ հարստացնում են նրա փարթամ արոտավայրերը: Գետերն ել իրենց կարգին ավելացնում են բնական հարստութեունը: Նրա լեռների կրծքում կան ամեն տեսակ հանքային գանձեր, և կլիման հիանալի է: Հիրավի, յերկիրը թվում է թե այս յերջանիկ վայրում հավաքած է այն ամեն բան, ինչ վոր անհրաժեշտ և մարդկանց պահանջների համար: Բայց ափսո՜ս, այն մարդիկ վոր տեղավորված են այս յերկրային դրախտի մեջ՝ ապրելու, հագնվելու և վայելելու համար, վչչ կամք ունեն և վոչ ել ճաշակ՝ վորոնք հատիկից գտնելու համար: Թաղված անգիտութեան մեջ, նրանց հոգը չե թե արևի ճառագայթներն են փայլում գետնի վրա, թե անձրև և գալիս. անձնատուր յեղած անփութութեան ամեն տեսակ մեղքերին և նրանց համար...:

Դր. Ռենիգգս (Dr. Reniggs), վոր բավական ժամանակ ապրել և վրաստանում, գժբախտ Հերակլի իշխանութեան որով, նա նույնն ե գրում վրացական նկարագրի մասին, վոր ի հարկե վերաբերում է նաև կախեթիային, վոր վրաստանի մի գավառն է:... Նա նկատում է. «Վրաստանի թե ազնվականները և թե գյուղացիները ծայրահեղորեն ծուլ են. նրանք խորշում են այն ամեն պարապմունքից, վոր պահանջում է ուշադրութեուն ու աշխատանք, և ի մեջ այլոց հողի մշակութեունը: Նա կատարելապես գիտակից է իր պահանջներին, իր վսեմ ազգատութեան, և գիտե մեջոցները

այդ վիճակից ազատվելու համար, բայց նա հույս չունի
դիմելու աղբյուրներին, որոնք կարող են իր աշխատու-
թյան, Հարաւահարութիւնն իր դրան վրա է՝ ճնշելու իր
ճիգերը, և հափշտակութիւնը պատրաստ է խլելու իր աշ-
խատանքի արտադրութիւնը: Նա աչքի առջև է, ձեռքի տակ
և կրկնակի լծի ներքո, առաջին իր սեփական գլխավորների
և ապա նրանց վերև գտնվող իշխանութեան. մինչև բեռը
այնքան ծանրանում է, որ չի կարող կրել ուղիղ կանգնած,
և տապալվում է գետին, — մի թշվառական անպետք սոբ-
րուկ: Այսպես ազատութիւնը սահմանափակում է իր սեփա-
կան կեղեքումը, կարելով բոլոր աղբյուրները»: Հարաւա
թշնամութիւնները ազնվականութեան մեջ, որինքն ու ար-
դարութեան բացարձակ բացակայութեան պատճառով՝ հու-
սահատական վիճակի հասած, լեզգինների արշավանքը, և
թուրքերի ու պարսիկների դեմ մղված արյունահեղ պատե-
րազմները, — այս բոլորը միացած մղեցին ժողովրդական
մեծ զանգվածը ծայրահեղ հուսահատական մի վիճակի, որ
հետևեան վերածվեց կամավոր ծառութեան, ոտիւրթեան և
աղքատութեան... Բայց, մոտավորապես քսան տարի առաջ
վրաստանը Ռուսաստանի սահմանների մեջ մտավ և արդեն
կերևում է, որ ժողովուրդը գտնվում է մի կանոնավոր կա-
ռավարութեան ներքո ու վայելում է ապահովութեան: Ֆա-
ջաերվում է արդյունաբերութեյունը, և որինքը պաշտպանում
է աշխատութեան պտուղները: Ռուսաստանին կցվելուց հետո
զանազան կեվրոպացի [ռուս] կառավարիչները, որոնք
կանգնել են այս տեղի գործերի գլուխը, ամեն կերպ ջանացել
են սերտաշահել թե՛ ազնվականներին և թե ժողովրդին, բո-
լորի վերաբերմամբ գործադրելով հավասար[?]արդարութեյուն,
և աստիճանաբար կազմակերպելով այն ամենը ինչ որ կազ-
մալուծվել եր և ամեն կարգի անձերին դարձրել աղքատ,
վայրենի ու թշվառ: Այժմ, ազատ կերպով պաշտպանված
վիճելով լեզգինների արշավանքից և կամ ավելի ճնշող թրքա-
կան և պարսկական ներխուժումներից, բարձր դասա-
րը սկսան զգալ թե իրենք նորից մի դերք են գրավում իրենց

վերկրում, և վերահաստատել իրենց մտքերում վերազարթնող
գիտակցութեյունը և հարգանքը ժողովրդի աչքում ընդհան-
րապես: Նորին կայսերական վեհափառութեյունը բնիկ ազնը-
վականութեյան շնորհել և կարգեր և շքանշաններ, գինվորա-
կան տիտղոսներով ու աստիճանով... Ռուսական դրոշակի
տակ նրանք հոգով ու սրտով կռվել են այս շրջանում, և նրանց
գլխավորները այնքան աչքառու դեր են կատարել, որ շա-
տերը բարձրացել են գեներալի աստիճանին: Հիրավի, որոշ
և թե որքան դյուրութեյամբ նոր կառավարութեյունը զար-
թեցնում է իրերիացիների և ազնվանների հին վոգին, նրանց
վրացական սերնդի կրծքում, քան ներշնչել նրանց առևտու-
րի ու ձեռնարկության մեջ, Բայց լավ ժամանակներում
ամեն ինչ պիտի գա, և նրանց դրացի հայերը մի վոգևո-
րիչ որինակ են ցույց տալիս արդյունաբերութեյան մեջ-
ների ու ճանապարհների մեջ, և ցույց են տալիս շատ հա-
մողիչ առավելութեյուններ, որ հետևանք և նրանց ծայրա-
հեղ գործունեյութեյան:...

Մի ձերակո, նորին գերեզանցութեյան ընդհանուր կա-
ռավարիչի տված մի ընդունելութեյանը, ես պատահութեյուն
ունեցա տեսնելու վիչ միայն ձերկսեռ բնիկ ազնվական-
թեյանը, այլ նայել կովկասյան մյուս ձերկրների նշանավոր
անձնավորութեյուններին: Վրացի ազնվականը զանազանվում
և մասնավորապես իր թափածալից դիմագծով, թեև այնքան
խոժոռ, սակայն նուրբ շրջագծով, որ ներդաշնակում է նրա
առնական տեսքին և հազուստի ոճին: Նրա հագուստը, հար-
մարացրած շարժումի ազատութեյան, կազմում է՝ նախ նուրբ
վարդագույն ներքնահագուստը, որ ծառայում է շապիկի
տեղ: Բաճկոնը, նույնպես կտորից, շապիկից տարբեր գույն
ունի և թեվերով ե, նրա վրա կրում է վերնազգեստ կամ
վերարկուն, որը իջնում է մինչև ծնկները, բայց բաց
առջևի կողմից, մեջքին կապում է կտորից մի գոտի, ընդ-
հանրապես սպիտակ, որից կախված է սուրը: Այնուհետև
ոտղիքները շարունակում է մանրամասնորեն նկարագրել բո-

լոր դասակարգի մարդկանց ու կանանց հագուստները. տես Ker Porter, Հատ. I. էջ 134-136։]

Այդ չերկեզյան նորին գերազանցության բնակարանում վրացի մի քանի չերխառարդ աղնվականները ցուցադրեցին իրենց ազգային պարի տեսակները, սակայն վոչ մի տիկնոջ կարելի չեղավ համոզել վոր մասնակցի [պարին]։... Դա ավելի մի մարզախաղ է քան պար։ [Կարևոր չենք համարում թարգմանել պարի և չերաժշտության մասին հեղինակի տված մանրամասնությունները։]

Այս ընդունելության կալին նաև վեց չերքեզներ, վորոնք ընկերացել էին նորին գերազանցության գեներալ Յերմոլովին, նրա Պարսկաստան կատարած վերջին դեսպանության ընթացքում։ Նրանցից մեկը իշխան էր, աչքառու արժանիքի տեր մի մարդ և մեծ կշիռ ունեցող իր ժողովուրդի մեջ, և չեթե դասելու լինենք անձնական առավելությունները՝ գեմքի ու ազնիվ կերպարանքի, ինչպես իր հինգ ընկերակիցների գեմքը, գեղեցկության տեսակետից չերքեզ արական սեռը վար չի մնար նույն չերկրի գեղեցիկ սեռի համբավավոր հրապույրից։ Այս մարդիկ բարձրահասակ են, պնդակազմ և կազմվածքով ներդաշնակ. պայծառ արտահայտությամբ, վորով նրանք չերևում են բոլորովին տարբեր ցեղ, քան իրենց կատաղի դրացիները՝ չեչեններն ու ոսսերը, և նույն իսկ նույնքան զատորոշված կախ աչք ու թխամորթ վրացիներից։ Այս ժողովրդի հագուստը հարմարում է նրա գեմքի գերազանցության։ Նա գինվորական և ու շնորհալի։ [Այստեղ հեղինակը շատ մանրամասնորեն նկարագրում է չերքեզ տղամարդկանց ու կանանց հագուստները. Հատ. I. էջ 139]։

Յերկիրը, վորին պատկանում է այն իշխանը, տարածվում է Կովկասի հյուսիսային ճակատում և նրա անունը ծանոթ է բոլոր չեվրոպացիների ականջին։ Բայց այդ արդյունք է ավելի վաղուց հայտնի կանանց մասնավոր գեղեցկության, քան ուրիշ վորևե այլ պարագայի։ Մի գժբախտ համբավ այդ ապերջանիկ գեղեցկությունների համար, վո-

րովհետև այդ պատճառ է դառել դարերից իվեր չերքեզ չերիտասարդ կանանց հավաքակության։ Մերձակա թշնամի ցեղերը բռնությամբ կամ գաղտնի գողանում են նրանց և վաճառում մեծ գնով Արևելքի մահմեդական հարեմներին։ Բայց չերքեզ ցեղը արժանի չե ուշադրության ուրիշ գիտնի վրա, քան այս վիպական ճակատագրին կամ ավելի ճիշտ ժառանգական ադետին, կապված այս ժողովրդի աղջիկների [բախտին] հետ։ Կովկասի ամենից անկախ ազգերից մեկն է, և բաղկանում է բազմաթիվ ցեղերից, վորոնք տարբերվում են իրարից։ Համեմատաբար հարազատ չերքեզների թիվը սակավ է, վորոնց գերազանցությունը, սակայն, աչքի չե ընկնում այլասերված ցեղերի տեսքի հետ համեմատած, վորոնց նախնիքները իրենց արյունը խառնել են Զինգիզ խանի թաթարների արյան հետ։...

Նրանք [չերքեզները] բաժանված են չերեք դասերի, — իշխաններ, ազնվականներ և ճորտեր։ Իշխանի անձը հարգվում է նվիրական և տոնական որերում ազնվականները սպասարկում են նրան։ Բայց ամեն ինչ կատարվում է այնպես ինչպես վորդիները ծառայում են հոգատար հորը։ Թեև ազնվականը թե իրեև տուրուքների կամ ծառաների։ Թեև ազնվականը մեծ ակնածանքով սպասարկում է իր գլխավորին, բայց իր անձի և իր սեփականության ազատությունը կատարելապես անկախ է այդ գլխավորի կամքից. գլխավորը նրա ամենավոչ իրավունքն անգամ չի վոտնակոխում։ Նրանք գրավոր որենքներ չունեն, բայց կառավարվում են մի տեսակ հասարակական իրավունքով, կամ հին ժամանակներից իվեր հաստատված սովորություններով։ Չերքեզ անվան արժանի պատվական ցեղը, վոր գերազանց քաղաքակրթություն ունի, հավաքվում է անհրաժեշտ պարագաներում՝ խորհրդակցության համար, ուր լինչ եվ լինի այս հավաքման պատճառը, իշխանը բաց է անում ժողովը և առաջարկում է այն միջոցները, վոր լինք կարծում է թե լավագույնն է խնդրի լուծման համար։ Այն ժամանակ ամբողջ ազնվականությունը խորհրդակցում է առաջարկված խնդրի մասին, և արդյունքը

հայտնում և մի խումբ լուրջ անձնավորություններին, որոնք կոչվում են Ամատներ և որոնք ընտրվում են այսպիսի պարագաներում ժողովրդի կամ ճորտերի կողմից, որպես իրենց ներկայացուցչի: Այս պատկառելի մարդիկ իրենց կարգին խորհրդակցության առարկա են դարձնում խնդիրը և տալիս են իրենց կարծիքը: Եթե ցարևք խորհրդակցությունները համաձայն լինեն առաջարկված միջոցին, ընդունվում է, և ցեթե հարցը վերաբերի հասարակական իրավունքի, վորոշումը դառնում է նախընթաց և ծառայում է վորպես աղբյուր որենք: Այս հավաքույթները կատարվում են բացօթյա, իշխանի բնակարանի մոտ:

Իշխանի ու աղնվականների սահմանած կրթությունը նման է մեր Սաքսոն նախնիքների մեծ մարդկանց, այն է գիտակցել վորաբար մարդանք և զենքի գործածությունը: Միայն իշխանին են սովորեցնում կանոնավորաբար կարդալ ու գրել: Այս բացառությունից դուրս նա իր մանուկ հասակից աղնվականների զավակների հետ միասին վարժվում է՝ ձիավարության և նրանց ծանոթ բոլոր զենքերի գործածության: Վորոշ տարիքի նա ընկերանում է իր վարժիչներին և նրանց հետևողներին՝ արշավելու համար հարևան ցեղերի վրա, քաջությամբ դիմադրավելու վտանգը, ապահովելու կողոպուտը կամ վրեժխնդիր լինելու թալանին. ապա նրան ծանոթացնելու համար այն անցքերին, վորից ավելի հեշտությամբ կարելի չի գնալ թշնամիների հողամասը, և ճանապարհներին, վորոնք տանում են դեպի սեփական շրջանը:

[Այստեղ մեր ճանապարհորդը խոսում է չերքեզ կանանց, նրանց սովորությունների և ընտանեկան հարաբերությունների մասին: Ապա նկարագրում է Կովկասում պատահած հեղեղումների և նրանց հետևանքով առաջացած ավերումների ու վնասների մասին: Նա մանրամասնորեն նկարագրում է այդ հեղեղումներից մեկը, պատահած 1776-ին, և յերկրորդը վոր տեղի էր ունեցել իր Թիֆլիսում գտնված միջոցին (1817 թ. նոյեմբերին), Հատ. I. եջ 143—148]:

... Յես գտնվում եյի մի քաղաքում, [Թիֆլիս], վորի

փողոցների ցեխը այնքան խոր և, վոր մարդ չի կամենում դրանից դուրս գալ: Բայց, այստեղ ներողություն եմ խնդրում նկատելու՝ թե մի կարգ տներում ներսի ցեխը գրեթե հավասար և դրսին, այնպես վոր յես նախընտրում եյի մնալ իմ ավելի հանգստավետ հարկաբաժնում: Թիֆլիսի բնակիչների սովորական վոճը դուռ ասիական և, ինչպես սահմանի սովորական վոճը դուռ ասիական և, ինչպես սահմանի սովորական վոճը դուռ ասիական և, ինչպես սահմանի

հի պաշտոն Պարսկաստան ու զարկված անգլիական դեսպանու թյուններին: Նրան հիշատակում են Մորբերը և Մալկոլմը. անս, եջ 73, ծանոթ 3:

2. Ցերմոլով, Ալեխեյ Պետրովիչ (1772–1861), ցարական հին աղնվական տոհմից, Ալեքսանդր I-ի և Նիկոլա I-ի դահակալության շրջանում խոշոր ռազմա-քաղաքական դործիչներից. դեկավար մասնակիցը եր հականապոլեոնական պատերազմներու: Ցերմոլովի գործունեությունը հատկապես ծավալվում և կովկասում, որտեղ և նա 1817 թ. նշանակվում և Վրաստանի գլխավոր կառավարիչ և Կովկասյան հատուկ զորաբանակի հրամանատար: Դառը, ինքնահավան և հանդուգն, — հետու համապետական կառավարական կենտրոնից, — համառորեն և ինքնագլուխ վարում և ցարական աշխարհակալական ընդհանուր քաղաքականություն: Ավարտել Կովկասի նվաճումը, «խաղաղեցնել» անհնազանդ լեռնականներին, անթեկել - ճնշել դյուղացությունը, ռազմագրավել մերձարևելյան և միջին— ասիական յերկրամայրերը, պայքարել անգլիական ազդեցության դեմ, ապահովել ռուսական կապիտալի հաժար նորանոր շուկաներ և այլն, — սրանք են յեղել Ցերմոլովի Կովկասյան գործունեության հիմնական սկզբունքները: Վորպես արտակարգ լիազոր — դեսպան անցնում և Պարսկաստան մեծ շուքով ու հանդիսավորությամբ: Ցերմոլովի հաստատած բռնակալական դաժան կարգերը պատճառ են դառնում բազմաթիվ ապստամբությունների Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում, վորոնք և նա անողոքաբար ճնշում եւ Պարսկաստանի դեմ ատրված դավերը առիթ են ծառայում ռուս — պարսկական պատերազմի, վորը դեռ չավարտված նա հարկադրված և լինում թողնել Անդրկովկասը: Ցերմոլովի հետագայի գործունեությունը յեղել և անհայտ. թեև նշանակվում և պետական խորհրդի անդամ, սակայն չեր մասնակցում նիստերին անդամ: Ցերմոլովը վայելում եր «լիբերալ — ազդեցիկոնների» հաժբավը, ուներ անձնական կապեր դեկաբրիստների հետ, վորպիսին նրա հակառակորդները չհանդուրժեցին նրան վարկաբեկելու նպատակով. դեկաբրիստներն ևս՝ (Պեստել, Մուրավյով, Տրուբեցկոյ և այլն) վորոշ ակնկալություններ ունեին, սակայն Ցերմոլովի «լիբերալիզմը» առերևույթ — բովանդակազուրկ եր, և նա հեռու մնաց վորևե իրական, նույնիսկ լեհալ ընդդիմադրությունից կառավարության դեմ:

3. Liewang թագավորը վախտանգ Բ. Որենգիր կոչված արքայի հայր՝ Լևվան թագավորն է, վորի մասին վրաց տարեգրություններ հաղորդում և հետևյալը. «Այս Լևվանը պատանեկությունից սովորած եր ուտել և հեռանալը. «Այս Լևվանը պատանեկությունից սովորած եր ուտել և յեկեղեցիներ կառուցող ու զարդարող», (Քարթլիս Ցխովրեբա, յերկրորդ հրատ. Դ. Ջուբինովի, Պետերբուրգ, 1854, եջ 70. M. Brosset, «Histoire de Georgie„ II. p. 99–100), և հետո. «Լևվանը Քարթլիի բոլոր ավերակ տեղերը վերանորոգեց, և նրա Քարթլիում 15 ամիս. ապա թողնելով

Քարթլիի կառավարիչ իր որդի վախտանգին՝ [մյուս] որդի Յեսեյին տարավ Սպահան, — սեպտեմբերի 26-ին քրիստոնեական 1702 և մահմեդական 1116 թվին», (ibid, վրաց. 71. ֆրանս. 100): Վախտանգ արքայազնը այս Լևվանի թագավորության շրջանը 1703–1704-ով և սահմանափակում. (Ibid, վրաց. 252. ֆրանս. 399), իսկ վերջինս, ինչպես նաև բուն տարեգրության նշած 1701–1702 թ թ., չեն համապատասխանում կեր Փոքրերուքյան նշած 1063 թվին, վորը իհարկե հիջրայի պիտի համարել, թեև սխալմամբ հաշված: (Ծանոթ. պրոֆ. Լևոն Մելիք-Սեթ բեկի):

4. Թիֆլիսի կանանց կենցաղի և ռուսական գրավման նրանց վրա գործած ազդեցության մասին խոսում և նաև Կոցեբուն, տես, այս գրքի եջ 502 և շարունակություն:

Գ. ՔԻՖԼԻՍԻՑ ՅԵՐԵՎԱՆ*

Նոյեմբերի 7-ին (հին տոմար) յերկինքը սկսեց պարզվել. այդ որը կես վորոշել էի շարունակել իմ ճանապարհորդությունը, և սկսա պատրաստություններ տեսնել մեկնելու համար այն տեղից, ուր կես ծանոթացել էի այնքան հետաքրքիր առարկաների հետ, ընդունել էի ընկերային վկայականներ՝ շնորհիվ ընդհանուր կառավարչի բարեացկան և նրա հետևորդների ուշադրության։ Կոպիտ ու վտանգավոր էր իմ անցած ճանապարհը, ավելի վտանգավոր էր այն, վոր պիտի գնայի, հետևաբար անհրաժեշտ էր իմ կառքը թողնել Թիֆլիս և կարգադրել վոր իմ բեռները տարվին ձիերի կռնակով։ Կոզակների գիմերալը, վորին մասնավորապես հանձնարարել էր իմ ապահովությունը իմ հարցերի բարեկամ Աթամանը, տվավ մի պահակախումբ ինձ առաջնորդելու համար ռուսական սահմաններից դուրս...

Այն վերջին [Յերմոլովի] ռուսական դեսպանությունը, վոր վերադարձել էր Պարսկաստանից պիտի գնար նույն որը, — նոյեմբերի 7-ին, — Պետերբուրգ. վորովհետև սովորական հյուսիսային ճանապարհը Կովկասից տակավին անանցանելի էր, վերջին ձյան հյուսի հետևանքով, վորոշված էր վոր նրանք գնան Դերբենդի և Կիզլարի ճանապարհով։ Յեվ վորովհետև նույն որը միևնույն ուղղությամբ էր գնում այդ ճանապարհը, կես միացա նրանց։ Այդ որը մոտ ժամը յոթին մեկնեցինք ընդհանուր կառավարչի տնից։ Յեղանակը գեղեցիկ էր և նորին գերազանցությունը ընկերացավ մեզ ճանապարհ դնելու համար։

* Ker Porter, հատ. I. էջ 149—194։

Այդ ճանապարհը, վոր նրա [կառավարչի] շնորհիվ շատ խոչընդոտներից ազատվել է, — անցնում է Կուր գետի արևմտյան ափից, բլուրների մի շղթայի ստորոտից մինչև Նումա և Սողանլուխ (Saganlook), մեր ծրագրած իջևանը։ Յետ նայելով դեպի Թիֆլիսը, այդ քաղաքը տալիս է բոլորովին այլ տեսարան այս կողմից, քան ինչ վոր տեսնում է յերբ ճանապարհորդը մոտենում է Մծխեթի ճանապարհից։ Այստեղ տեսարանը ավելի բաց է....

Քաղաքից հինգ վերստ հեռու ընդհանուր կառավարիչը բարի ճանապարհ մաղթեց իր հայրենակիցներին ու ինձ։ Մենք նայեցինք նրա կառքից մինչև վոր ճանապարհի դարձը ծածկեց նրան մեր աչքերից... [Այստեղ հեղինակը գովաստներ և շռայլում գեներալ Յերմոլովին, և ապա ասում է]. Նա ամեն կերպով ցանկալի նպաստություն է, և կառավարելիս հասկնալով այն ժողովրդին, վորի կառավարությունը իրեն է հանձնված, նա կառավարում է մեղմ միջոցներով՝ նկատի ունենալով նրանց հակասական սովորությունները, վորոնք ձեռք են բերել այլազան տարատեսակությունների ներքո և այնքան հետևողականորեն, վոր հպարտ ու վատասիրտները որից որ պիտակից են դառնում այն առավելության, վոր իրենց օրենքների գործադրությունը հանձնված է այսպիսի մի ոտար ձեռքի։ Բնական և վոր նրանք [վրացիները] կապված են անցյալին, հիշում են քաջ ու առատաձեռն իշխանների հին ժամանակների փառքերը, նույն իսկ անվանական, դժվամակում են բաժանվել նրանից։ Բայց, վրացիները Ռուսաստանի հետ միացումից շատ տարուներ առաջ պահելով այս անունը, — այսինքն անկախ թագավորության անունը, — նրանք տառապած են ծայրահեղ թշվառությամբ, իրենց ազգային կառավարիչների տակ. բռնության պատճառով, և այն սոսկալի չարիքները, վոր մուտք էին գործում իրենց անպաշտպան հայրենիքում, մահմեդական պետություններից և լեռնական բարբարոս հորդաներից։ Ռուսաստանի մաս կազմելով, դուռը փակվեց այս հարստահարիչների դեմ, և ազատագրված ժողովուրդը

շուտով տեսալ բարգավաճման և խաղաղության մեջ ապրելու շոշափելի դերապանցությունը: Նա տեսավ վոր մի մեծ կայսրության գավառը լինելը, ավելի արժեր, քան թագավորություն կոչվելու ունայն փառքը: Նրանց անցյալի մեծ պահանջները միայն վնասվածության սովերներ էին՝ նստած դահի վրա, մինչ իրական բռնապետները լեզգիներն և ուրիշ արշավողները վոտնակոխում էին յերկիրը և հափշտակում պետության հզորնակությունը:

Յերբ առաջանում էինք դեպի Սողանլուխ, վոր Թիֆլիսից մոտավորապես տասնյերկու վերստ հեռու յե, շատ նկատելի առարկաներ էինք տեսնում, և նրանց մեջ՝ վրացական վերջին թագավորների մեռնող հարստության և նրանց ավելի նշանավոր նախորդների հին հուշարձանները: Գետի արևելյան ափում, ամենամեծ բարձունքի վրա տեսանք մի հին բերդի ավերակները և նրանց կից նույնքան հին յերկու աշտարակներ, և նրանց ստորոտում մի կամրջի ավերակները, վոր նախապես կապված եր անցյալում, մեր անցած ճանապարհի հետ: Հասնելով Սողանլուխ, գտանք վոր վրաններ էին զարնված մեր ընդունելության համար, և հիանալի մի ընթրիք պատրաստ՝ ընդհանուր կառավարչի հրամանով: Գյուղը մեր իջևանից մոտ կես մղոն հեռու եր, բայց կառավոր կայարան չլինելով քիչ անգամ ճանապարհորդներ իջևանում են այստեղ, բայց այն պարագայից յերբ իրենք հոգան իրենց պետքերը, ինչպես մեր պարագան եր: Այդ գիշերը մենք քնեցինք մեր վրաններում. հաջորդ առավոտը մեր յերկու խմբերը պետք եր վոր բաժանվեյին:

Ռուսական բարեկամներից բաժանվելուց հետո, վորոնց ճանապարհը հակառակ ուղղությամբ եր, յես և իմ փոքրիկ խումբը յերեսնից դարձրինք դեպի հարավ-արևմուտքը...: Մեկնելով Սողանլուխից մենք մեծ բարով ասինք կուրի ափերին, թողնելով այդ գետը մեր ապագա ճանապարհից հեռու, դեպի արևելք: Մոտավորապես տասը վերստ ճանապարհորդելուց հետո, իջանք մի նեղ ու ժայռոտ հեղեղատից դեպի մի փոքրիկ բարեբեր հովիտ, յեզերված աննշան, բայց

վիպականորեն դետեղված մի լճով: Արևմուտք մեր աչ կողմը, բլուրները նմանում էին փլչող աշտարակների, և այստեղ ու այնտեղ հոդե հյուղակների խմբավորումներ, գյուղացիների տներ և [գյուղացիները], վորոնք զբաղվում էին աշխատանով: Յուրաքանչյուր գոմշի լծված եր մի զույգ նանացանով: Յեզ կամ գոմեշ:

Անցնելով հովիտը, մի զառիվեր բարձրանալուց հետո յեկանք մի ընդարձակ սարահարթ, կոդի (Kodi), մեր առաջին կայանը, ուր մեր բեռների համար նոր ձիեր վերցրինք: Չին կայանը, ուր մեր բեռների համար նոր ձիեր վերցրինք: Մի փոքրիկ տեղ և, բայց գեղեցկորեն դետեղված մի սիրուն հողաշեղուտում, վոր տարածվում և դեպի արևելք գրեթե մինչև Կուրի յեզերքները: Մի ժամ կանգ առնելուց հետո, շարունակեցինք դեպի Շուլավեր (Shoulavar), վոր ժըվեցինք դեպի առաջ, տասնհինգ վերստ հեռու եր մեզնից: Ճանապարհավին մոտ քսանվեց վերստ հեռու եր մեզնից: Ճանապարհավին մոտ քսանվեց վերստ հեռու եր մեզնից: Ճանապարհը բավական լավ պետք լիներ, յեթե միայն բնիկները ջրաքաշական նպատակով ամեն ուղղությամբ առուներ փորած չլինեյին: Տասնհինգ մղոն ճանապարհորդելուց հետո Կուլագարի (Koulagar) բերդն ու կայարանը թողինք մեր աջ կողմը և անցանք Ալգեթ (Alget) [գետը]: Տարվան այդ յեղանակին այս գետի ջուրը բարձր չեր և հազիվ եր հասնում մեր ձիերի փորին, բայց անձրևոտ յեղանակներին, ինչպես աշխարհի այս մասի ուրիշ գետակները, ուռճանում են ու վարարում: Յերկու մղոն ավելի առաջ մենք անցանք Ղրամ (Gramm or Ktzia) գետը, վորի ճուղն և Դիբեռը (Tabate) և նրանց միացման մոտն և գտնվում Շարդենի հիշատակած կամուրջը: Այս մեջտեղին Ղրամի ջուրը ծանծաղ եր, թեև արագընթաց:

Մենք հասանք Շուլավեր, մեր վնտռած ոթևանը, ճիշտ ժամանակին, յերբ մթնում եր: Ամեն ինչ կատարյալ լռության մեջ եր և տալիս եր մի տեսակ խորհրդավոր տպավորություն: Լեռների շղթայի մի մութ խորշումն եր գտնվում, տարածված դեպի արևելքը, վորի մութ կիրճերից մենք պետք և շարունակեյինք հաջորդ առավոտ մեր ճանապարհը: Մտնելով այս կիրճը մենք գտնում ենք վրատանի այն գա-

վառը, որ կոչվում է Սոմխեթիա (Somhetie)։ Ժամանակի ընթացքում սևացած հին քարաշեն մի բերդ և գիշերվան սավերները կանգնել էին խոժոռ առանձնութեան մեջ, բարձունքի վրա կիրճի բերանում, որ անցյալում իր դիրքով ահրապարակում էր այդ անցքին։ Նրա ստորոտում գտնվում էր ռուսական պահակատորի կայանը, ուր ՀՀում են մի քանի կողակներ և մի փոքր չոկատ հետևակ։ Կրոնական մի հին շենքի ավերակները ավելացնում են տեսարանի մռայլ հանդիսավորութիւնը։

Առավոտ ժամը 8-ին բարձրացանք լեռներից, որոնք բավական խորտուբորդ են, թեև ոչ այնքան շատ բարձր։ Այս ճանապարհը, որից մենք անցնում ենք, հազիվ թե սովորական վոտքի ճամբից ավելի լայն է, և չափազանց անհարթ մինչև կատարը։ Հետո հանդիպակաց կողմից սկսանք իջնել, մեկնում դժվարութեամբ, բայց աստիճանաբար մեր աչքի առջև բացվեց մի ճոխ հովիտ, որ գտնվում է լեռների ստորոտում, հարուստ մշակութեամբ, և որի միջից անցնում է Փամբակը, մի գեղեցիկ գետ, որի արգասավոր ճամբան գնում է վոլոր վոլոր գեղի հյուսիս-արևելք, և հետզհետե ուռճանում Թիլեսի և Ուրամի (Ktzia) ջրերի միացումովը։ Գեղջկական գեղեցկութեամբ այնքան նշանավոր այս հովիտը կերկարում է արևելք և արևմուտք, և ամեն տեղ ցույց է տալիս լուսատու հանդարտ Փամբակի շնորհները։ Գետի ափերը արոտներով կանաչել են և սավերված են ծառերով. բազմաթիվ գյուղերը, որոնք սփռված են նրա հարուստ դաշտերում, լավագույն ապացույցն են տալիս բարգավաճման ու հանգստավետութեան։ Դաշտավայրի կենտրոնում, մուտքից մոտավորապես տասը մղոն հեռու, տակավին ՀՀում են մի կարգ ուշագրավ ավերակներ, որից թվում է թե այնտեղ եղել և շատ զորավոր մի բերդ։

Մի չորացած գետի հունից անցնելուց հետո, հասանք Սաղախլու, մի մեծ ու բազմամարդ գյուղ, Փամբակի արևմտյան ափի վրա։ Բնակիչները զբաղված էին գարին հարմից գառնելու աշխատանքով. սա կատարվում էր մի տեսակ

փայտյա սահնակով, որին լծված էին մի զույգ եզ։ Նրա ներքևի երեսը ծածկված էր դուրս ցցված սուր քարերով, խիտ շարքով տեղավորված։ Մի մարդ կանգնել էր նրա վերևի երեսում, և վարում էր եզները, որոնք շրջում էին տակավին չբաժանված հատիկի կույտի վրայով։ Մի կին սպասարկում էր ձեռքին բռնած մի փայտե թի, որով խուրձեր էր նետում սահնակի տակ, երբ նա դառնում էր։

Մեր ճանապարհը գնում էր դեպի հարավ-արևմուտք և աստիճանաբար մենք հեռանում էինք այս գեղեցիկ գետից։ Նրանից երկար վերստ հեռու մենք թողինք հովիտը. սկսանք նորից բարձրանալ և կորցրինք Փամբակի տեսարանը։ Առջևն բարձունքում մեր ուղին նեղ էր և խորտուբորտ. ամբողջ որը մենք անցանք խառն զառիվայրերից ու մացառներից։ Մայրամուտի մոտ հասանք Ջուշքարի (Tchuskar) կայանը, մի փոքրիկ կոնաձև բլուրի ճակատին։ Այստեղ մի հյուրընկալ տեսարան բացվեց այն գետին [Փամբակ], որին կորցնելու համար առավոտ մենք ցավ էինք զգացել. մի խոր հեղեղատի խորքում, ժայռերի միջից նա [գետը] գնում էր վոլոր մոլոր, երկու ուղղաձիգ հակայական ժայռերի դեզերի միջև։ Կայանում ապրում էին մոտավորապես երեսուն կամ քառասուն կոզակներ շատ նեղ բնակարաններում, և հետևաբար բնակության հարմարություն չգտնելով ինձ և ինձ հետ գտնվող մարդկանց համար, տեղավորվեցանք մի մղոն հեռավորության վրա, մի բավական մեծ գյուղում, որ ընկած էր լեռների միջև, մի բավական մեծ գյուղ, որ տեղ հավանական էր որ ոթևան գտնեյինք։ Թեև մութը բավական առաջացած էր, [սակայն] մենք վարձատրվեցինք մեր այս երկարաձգված ուղևորության համար, վայելելով Կովկասի գեղեցիկ տեսարաններից մեկը...։ Գյուղում մենք գտանք տաք ու հարմար բնակարան։ Այս բարի մարդիկ առատորեն հայթայթեցին կաթ, ձու, կարագ և այլն, ինչպես նաև ընտիր մեղր։ Երկրի նպաստավոր դիրքից գտնվով մեղրի արտադրությունը մեծ շահ է բերում բնակիչներին։

րին։ Հիրավի, ինչ վոր կես տեսա, խոսում և հողի բարեբերութեյան և բնակիչների հյուրասիրութեյան մասին։ Նրանք ունեն կենդանիների բազմաթիվ հոտեր, առատ ցորեն, գարի, վոսպ և այլն, և ինչ վոր ամենից լավ է, ալն է վոր նրանք գոհ են։

Առավոտը ժամը ութին մենք թողնենք գյուղն մեր բնակիչներին և ուղղվում մեր քայլերը դեպի կայանը, շուտով մենք նորից գնում ելինք անդունդի յեզերքից, վոր կազմում է մի բարձր ու ուղղահայաց խոր ձորի մի կողքը, վորի միջից գետն և հոսում։... Լեռների կողքերում ցուցադրված են հաղար ու մի ձևերով կարմիր ու գորշ գրանիտ քարի զանգվածները։ Ալեբակներ, բերդեր, յեկեղեցիներ՝ նրանց գոթական գմբեթների շարանը՝ խառնվում են խիտ անտառների սաղարթներին, վորոնք կախված են զառիվայրից և պճնում են լեռները մեծ տարածութեյամբ։

Յերբ մենք ճանապարհորդում ելինք դեպի հարավ-արևելք, ինձ ցուցց տվին հողաշերտեր, ուր նախապես ոգտագործում ելին արծաթի հանքերը, վորտեղ բազմաթիվ հորերի բերանները տակավին տեսնվում ելին։ Ժայռերի կազմվածքները դեղնավուն ավազի գույն ունեն։ Արդարև, Վրաստանի այս ամբողջ մասը հարուստ է զանազան տեսակի մետաղահանքերով, և մասնավորապես պղնձահանքով, վորի շատ լավ տեսակն արտադրվում է Լոռի մոտ[2]։ Թողնելով այս սպառած հարստութեյան հետքերը, կամ ավելի ճիշտ, վորտեղ ապագայում նոր հարստութեյուններ կարելի յե հայտնաբերել, Փամբակի ձորից մոտավորապես չորս մղոն այն կողմ անցանք այդ գետից, վորտեղ խոր եր ու արագընթաց...։ Անցնելով մյուս ափը, հետևեցինք նրա վոլորապտույտ ընթացքին, ժայռերի ձորից, յերբեմն ճանապարհը դրեթե ծածկվում եր դուրս ցցված քարաժայռերից և կամ սակրաձիտ ծառերի շարքից, վորոնք յերկու կողմից իրար ելին միանում, այս իսկապես դեղեցիկ ձորում։ Դեպի հարավակողմ մեր գլուխների վերև բարձրանում ելին լեռների շարքը և ամենից բարձր կատարին տեսանք Հաղբատի (Akpet) վանքը,

ընդարձակ մի շենք, վոր պատկանում է Դոմինիկյան վանականներին։ Նրա կողքին կա մի գյուղ՝ ուռճացած ու ծունեութեյանն ու աշխատասիրութեյանը մերձակա փոքրիկ դաշտը և հարևան լեռներն ու ձորակները հիանալիորեն մշակված են։ Ի հարկե այս գյուղացիները գանվում են վերև հիշատակված բարի վանականների իրավասութեյան տակ։ Սանահնում։

Մի քանի վերստ առաջ գնալուց հետո վերստին անցանք գետից, ամենատոկալի անդնդախոր մի լեռան դիմաց, վորից պիտի անցներ մեր ճանապարհը, բայց այս անգամ անցանք մի կամրջից։ Դա շինված է քարից և պարունակում է մի կամար, անպայման հայ վեհապետների գործ, յերբ Վրաստանի այս մասը գտնվում եր նրանց քաղաքական ու կրոնական իշխանութեյան տակ։ Կամրջի ճարտարապետութեյունը հետաքրքիր է, և փորագրված խաչի նշանները թույլ են թե վոր շրջանում և կատուցվել։ Յերկու ծայրերն այնքան բարձր են, վոր անգործնական պիտի համարվեր, յեթե չլինելին սանդուղները։ Այս սահմաններին արևմտյան կողմի վերջավորութեյանը՝ կես նկատեցի մի բարձր, ուղղահայաց ու հղկված քար, վոր քննելով գտա վոր քրիստոնեական նշաններ ելին փորագրված այդ քարի վրա։ Ամենաաչքառուն խաչն եր, և նրա շուրջը հարթաքանդակը և այլ զարդարանքները, փորագրված շատ վարպետորեն։ Կամրջից անցնելով առաջ, յես նկատել ելի նման յերկու ուրիշ քարեր, վորոնց վրա բացի փորագրված խաչից, կային արձանագրութեյուններ, հին հայկական գրերով, մյուս քարը քանդակված նույն կերպով, ձգված եր գետնի վրա նրանցից վոչ շատ հեռու[4]։

Մենք առաջ գնացինք մոտավորապես մի մղոն գետի ափից, լեռան սորոտում, յերբ սկսանք բարձրանալ, վորի հեռանկարը սոսկալի յեր։ Մենք տեսնում ենք՝ շարունակա-

կան մի նեղ, լերկ ու կտրած ժայռերի միջից անցնող մի ճանապարհ, չափազանց մոտ դրեթե ուղղահայաց անդունդին, որի ստորոտում հոսում են խոր ու արագընթաց փամբակի ջրերը, սևացած լեռան ստվերից։ Ձերը սկսանք բարձրանալ, գտանք ավելի տաժանելի քան այդ թվում եր, ճանապարհը ամբողջ միակտուր քարից և, խորտուբորտ ու կտրտած, և ցերեկն ինչքան նեղ, որ հազիվ մի շուղի չափ բաժանում կա վտաքի և ամենաահավոր անդունդի միջև։ Ձերը մենք գառիվերից գառիվեր եյինք բարձրանում, ի հարկե այս անդունդը ավելի խոր եր գառնում, խորխորատ հաջորդում եր խորխորատի, մեկը մյուսի վրա, մինչև որ այլևս չեյինք լսում ներքևի գետի ձայնը։... Մի կետում անդունդը հարյուրավոր վոտք խոր եր... և անհավատալի տաժանքից հետո վերջապես հասանք լեռան կատարին, և տեսանք ձմեռը մեր աչքի առջև։ Ընդարձակ մի դաշտ տարածվում և կատարի վրա, որի մեկ կողմից բարձրանում են ուրիշ լեռների կույտեր։ Նրանք կոչվում են Ալգեթի (Algat) շղթա և նրանց հյուսիսի կողմը ձածկված և ձյունով. բոլորովին տարբեր պատկեր այն կանաչ ու ժպտացող հովիտներից, որոնցից մենք դեռ նոր եյինք հեռացել։ Սուր ու ցուրտ քամու միջից կարճ առաջացումից հետո, ճիշտ ժամանակին հասանք Ուզունլար (Uzunlar), մեր գիշերվան հանգրվանը։ Այստեղ մենք ճանապարհորդել եյինք յերեսունհինգ վերստ։

Անցյալում Ուզունլարը կարևոր մի ավան եր, բայց հիմա պարզուկ մի գյուղ է, կամ ավելի ճիշտ է ասել, թշվառական հյուղակների մի կույտ, որի հողե ցած պատերը և մութ մուտքերը, հազիվ գետնի յերեսից մեկ յարդա բարձր, ավելի ճազարանոցի տպավորություն են թողնում, քան մարդկային բնակարանի։ Թերեկից հեռանալուց հետո իմ տեսած բոլոր գյուղերը, առավել կամ նվազ չափով մրենուկն նմանություն ունեին, համաձայն քաղաքակրթության աստիճանի և բնիկների աշխատասիրության։ Ուզունլարի լավ որերի հետքը ներկայացնում են նախապես յեկեղեցական մի մեծ յեկեղեցու ավերակ պատերը։ Նրա ճարտարապետությունը

նմանություն ուներ Թիֆլիսի նման հուշարձանների ճնացորդներին. արդարև, կովկասյան շղթայի հարավակողմ գտնվող բոլոր նման ավերակների մեջ ընդհանուր մի նմանություն կա։ Ամենից կարևոր տարբերությունը, որ իմ ուշադրությունը գրավեց, մայր յեկեղեցու և նահանգի ուրիշ հին յեկեղեցիների միջև մի տեսակ արտասրահը կամ գավիթն եր (piazza or cloister), որ դրսից շրջապատում և շենքը։ Այս բարձրորեն վայելուչ, բայց անսովոր շենքի կամարները սրածայր են, բայց նվազ քան գոթականը։ Այս ձևն ընդհանրապես տիրապետում և պատուհանների, դռների և առաստաղ յեկեղեցու բոլոր մասերում, ուր որ կամարաձևը անհրաժեշտ և համարվել։ Ծոփորների (freizer) և ուրիշ զարդարանքների արվեստը թե ճաշակով և թե գործադրությամբ շատ վար և ցնում քան ինչ որ յես նկատել եյի հայկական այն հին կամրջի յերեք քարի վրա։

Մեկնեցինք մեր հանգրվանից առավոտյան ճամբորդական սովորական ժամին, պայծառ յերկնքով և վեց աստիճան ցրտի մեջ։ Մեր ճանապարհը դեպի հարավ-արևմուտք եր, մի դաշտի միջից, մեր թիկունքը դարձրած հյուսիսային սառնամանիքին, որ ավելի սուր եր փչում անցնելով լեռների ձյունապատ կողքերից...։ Մոտավորապես վեց վերստ դաշտի միջից անցնելուց հետո, մենք սկսանք անընդհատ բարձրանալ մի բլուր դեպի հարավ. անցնելով նրա կատարից, իջանք հակառակ կողմը՝ նեղ, անհավասար, բայց հրապուրիչ մի ճամբա դեպի փամբակ, որը իր վոլորապտույտ ջրերի մեկ-յերկու դարձուցիներից հետո, հանդիպեց մեզ այստեղ հարավում, թեև մենք վերջերս թողել եյինք նրան արևելքում։ Գետի տեսարանը հազիվ թե վայելած եյինք, մի նոր առարկա ևս ավելացրեց տեսարանի նկարագրությունը. մի քանի դեղեցիկ ավերակներ յերևում եյին ժայռի կատարին, այն վայրում ուր Լոռի գետը խառնվում է Փամբակին։

Իջնելով դեպի գետը, կամ ավելի ճիշտն ասելով դեպի ժայռերի գառիվայր խրամը, — որ բնությունը փորել է

լեան կողքին, — մենք մոտ մի մղոն հետևեցինք նրա վո-
լորումներին, և մի անգամ ևս անցնելուց հետո նրա վրայից,
մոտանք մի շատ խոր անտառ։ Գետինը կամ ցածր մացառ-
ները, որոնց միջից մենք գնում էինք՝ հասնելու համար
մի նոր վերելքի, յերկու մոտք խոր ձյունով ծածկված եր և
դժվարացնում եր մեր ձիերի առաջացումը, որ վտանգավոր
եր, ամեն մեկ շարժման։... Տասնութը վերստ առաջացումից
հետո հասանք կոզակների կայան վականց (Vaganz), ուր
պետք եր որ փոխեյինք մեր բեռնակիր ձիերը։ Այդ անե-
լուց հետո, շարունակեցինք մեր այդ օրվան ճանապարհը
նման դժվարություններով մինչև վեց վերստ, յերբ նորից
մոտեցանք գետին։ Անցանք նրանից և բռնեցինք արևմտյան
ուղղություն, գետի հյուսիսային ափից մինչև Ղարաքիլիսայի
գինվորական մեծ կայարանը։ Այս վայրը գետեղված է մի
նեղ հովիտի կրծքում, նրա մուտքից մոտավորապես յոթը
վերստ ներս և մերձ փամբակին, ուր մի լեռնային հեղեղատ,
որ կրում է ավանի անունը, թափվում է գետի մեջ։ Ձմեռը
իր կնիքը դրել և ամեն բանի վրա։ Բացի խոր ձյունից, որ
պատել և ամեն բան, լեռներից իջնող վտակները կանգ են
առել և գետը սառել է։

Ղարաքիլիսայում կա մի վաշտ հետևակազոր և կենա-
բոնն և սահմանապահ բանակի հրամանատարության, բայց
այս վայրը շատ վոզորմելիորեն ամրացրած է, թեև հրամա-
նատարությունը միջոցներ ձեռք է առել կանոնավորելու
ամրություններըւ

Իմ հաջորդ օրվան ուղին ձյունապատ եր. լեռ, ձոր ու
դաշտ միապաղաղ անապատ, սթափնած յերկնքով, որ
սպառնում եր խոր ձյուն։ Այդ գիշերվան իմ հանդրվանը
պիտի լիներ Համամլու (Amamloo), մի այլ գինվորական
կայան, մոտավորապես քսան վերստ հեռու, հովիտի վերե-
վում դեպի հյուսիսային-արևմուտք։ Ճանապարհը լավ եր,
հետևաբար յերեկոյան կանուխ հասանք մեր ոթևանը։ Բեր-
դին կից գյուղը նույնպես նման եր ճագարանոցի, ինչպես
յես տեսել եյի ուրիշները մինչև այստեղ։ Սակայն, այս վայրե-

գյուղական բնակիչներին արդարություն անելու համար,
պետք է ասել թե հակառակ իրենց բնակարանների խղճու-
թյան, նրանք նեղսում պահում են մի պատրաստակամ
աղնվություն, որ յերախտագիտությամբ հիշում և կովկասի
վատակարեկ ուղևորը։ Նրանց բնակարաններից մեկի նկա-
րագրությունը, բավական ճիշտ պատկերը պիտի տա բոլորին։
Ներսը մի սենյակ է տասնվեցից տասնութը վոտք լայն և
հաճախ նույնքան և ավելի յերկար, մի տարածություն որ
համեմատական չե տան դրսի ցածությանը, բայց գետնի
վերևից չորս վոտք խոր փորված և, որ տալիս է բնակա-
րանին բավական բարձրություն, թեև դրսից աննկատելի։
Մի ծայրում, սովորաբար դրան մոտ, որ տարածությունը
չի փորված, բավականաչափ կազմելու համար մի առանձին
սենյակ, բայց այլապես բաժանված չե տան մյուս մասից,
բացի իր բարձր հատակով։ Վերևի մասում գետեղված է
ոճախը, իր ծխնելույզով և նրա դիմաց կառուցի վրա մի փոքր
ծակ, լույսի համար։ Հատակը հող է կարծրացրած, բայց
կոպիտ կապերտներ փռված են կողքերում, որոնց վրա
մարդիկ նստում են ու քնում։ Վիճ սեղան կա և վոչ ել
աթոռ։ Պատերը պարզապես չորացած են, որոնց մեջ կան
բացված փոքրիկ պահարաններ, ընտանիքի փոքր սեփակա-
նությունները պահելու համար։ Կրակարանի ճիշտ վերև նույն
տեսակ շատ փոքրիկ մի խոռոչ կա, ուր դնում են ձեռքի
լամբարը, որ միշտ վառված եր, յերբ յես իրենց հյուրն եյի,
թեև այդպիսի պարագաների յես իմ մոմն եյի վառում։
Այսքան գերեզմանանման այս մարդկային բնակարանի հա-
մար, ինացյալ մասը, այսինքն փոսը հատկացված է խոզերի,
վոչխարների, ձիերի և այլնի համար։ Մի բան կա վայրենի
այս պատմվածքի մեջ, սակայն յես վախենում եմ թե շատ
պետք չկա հեռու գնալու իրլանդական ծովից, նույն տեսակ
բնակարաններ գտնելու համար, նույնիսկ բրիտանական
կալվածներում։

Մենք մեկնեցինք Համամլուից նոյեմբերի 13-ին (Հ. Տ.).
Առավոտ ձյուն եր գալիս, և թողնելով փամբակի ջրանցքը

անցանք մի քանի բլուրներից, որոնք կազմում են Մոսքյան (Mosschian) լեռների փոքր ճյուղերը, դեպի հարավը մի ճյուղավորումը կոչվում է Ղարաքլիսայի լեռը, մինչ մի ուրիշը ներքևում դեպի հյուսիս՝ փամբակ անունով։ Միացյալ շղթայից իջնելով մեր վերջին հանգրվանից, մենք հասանք Բեկանտի (Beckant) [Պարնի] փոքրիկ ամրոցը և գյուղը, որ շինված է մի բլուրի կողքին, և դիմվորական կայանը գտնվում է նրա կատարին։ Ստորոտում հոսում է Ջիչխանա (Tchitchiana) փոքրիկ գետը։ Մեր ճանապարհը այսօր դեպի հարավ արևմուտք էր։

Հաջորդ առավոտը վերսկսանք մեր ուղևորությունը հյուսիս-արևմտյան ուղղությամբ հովիտից դեպի վեր։ Ճուրտը Ռեոմյուրի ութը աստիճան ըրտյից վար և, բայց ցերկինքը պայծառ և ու զեղեցիկ։ Մեր ցնծակատից ցոթը մղոն հեռու սկսանք բարձրանալ մի լեռ։ Բամին շատ սուր էր և ավելի խստացավ ցերը վեր ելանք ավելի բարձր շրջաններից, քևև ողը կազդուրիչ էր։...Ցերկու ժամից հասանք մի կիրճ, և ինչպես նախատեսել էինք, դիրքի փոփոխությունը՝ բարձունքից խորքը իջնելը, մեզ բերեց ավելի մեզմ կլիմա, առնվազն բազդատությունը այդ էր զգացնել տալիս մեզ։ Ցերկինքը պայծառ էր...։

Մեր ուղին գնում էր դեպի հարավ-արևմուտք և մի ժամվան ճանապարհորդությունից հետո հասանք Գյումրու քաղաքը, Թրքական սահմանի դիմաց, ռուսական մի զորավոր կայան[5]։ Դա գտնվում է քիչ բարձր հողամասի վրա, լավ դիրքով, ունի բավական մեծաթիվ պահակատուն, և արագորեն ամրացվում է։ Դաշտը տարածվում է նրա շուրջը բազմաթիվ մղոններով, և ապա շրջապատված է լեռներով։ Հարավ-արևելյան շղթայից բարձրանում է Արագած (Allaguz) հսկա մի կույտ, որ մասամբ ամայանակից է և Շիրակին (Shuragyll), և իր լանջերի ժայռերից ու խոռոչներից հեղհեղաձներ վազում են ցածը ու միանում ավելի խոր չրաղբներին, որոնք շուտով հավաքվում են մի լայն հունի մեջ և մի գետ են կազմում, որ կոչվում է Աշտարակ (Ashtarick)

կամ Արփասու [Ախուրյան][6]։ Հետո, առաջ հոսելով մտնում է Հայաստան, և անցնելով Եջմիածնի պատկառելի շենքի մոտից, վտոռգում է դաշտը։ և թափվում է Արազի կամ Արաքսի մեջ։

Գյումրիում պետք եր վոր ես փոխեի իմ եվրոպական կամ կոզակների պահակախումբը և վերցնեյի [ուրիշներին] ամրողջովին բնիկներից։ Գեներալ Յերմոլովը հոգատար եր դած եր հրահանգ տալու վորպեսզի ամեն դյուրություն ընծայվի ինձ ամեն տեղ, ուր վոր իր ազդեցությունը տարածվում եր։

Գիտակցելով վոր Անի, Հայաստանի հին մայրաքաղաքներից մեկը, Թրքական սահմանից ներս շատ հեռու չեր գտնվում, իմ հետաքրքրությունը արթնացավ այցելելու համար այնտեղ, և ես իմ ցանկությունը հայտնեցի բերդի հրամանատար սպային և խորհրդակցեցի նրա հետ, թե ինչպես կարելի կեր այդ անել, առանց Թրքական անցագրի պաշտպանության։ Նա քաջալերեց ինձ. ասաց, վոր Անին միայն քառասուն վերստ սահմանից այն կողմն է և թե ինձ հետ պետք գտնվեն այնպիսիները, վորոնք պետք ծառայեն անցապրի փոխարեն։ Հետևաբար հաջորդ առավոտը շատ կանուխ մենք բարով ասի իմ բարի հյուրընկալին, և դուռ խոստացված պահակախումբը արդեն պատրաստ։ Նա բաղկանում եր տասը ձիավորից, վորոնք իմ հրամանի տակ պետք գտնվեյին մինչև Յերևան։ Մենք պետք գնայինք նախ Անի։ Այս մարդիկ լավ պինված եյին, և չեմ կասկածում վոր կեթե առիթ ներկայանար, նրանք կարող եյին վտանգավոր լինել այլոց համար։ Անվազն դատելով նրանց զեմքից ու հագուստից, կովկաս վտոք կոխելուց ի վեր ես կերպիք տեսած չեյի մարդասպանի նմանող արիկանների մի այլ խումբ։ Նրանց գլխավորը մի մարմնեղ, վճռական զեմքով մարդ եր, և իր վրից կախել եր Ալեքսանդր կայսեր Ս. Գևորգի շքանշանը, իբրև զերազանց քաջության նշան, վերջին ռուս-պարսկական պատերազմի ընթացքում։ Նրա մեջքին կապված եր մի զույգ Թրքական կերկար տարճանակ. գոտուց կախ-

ված եր իր թուրը և մի մեծ դանակ։ Բայց սրանից մի կարաբինա կախված եր նրա ուսից։ Նրա հագուստը վրացական ու թրքականի խառնուրդ եր, և նրա ձին հավասարապես ասպազեն, թվում եր թե իր տիրոջից վար չեր մնար։ Նրա հրամանի ներքո գտնվող ամբողջ պահակախումբը նույն կերպով զինված եր, և յուրաքանչյուրը կրում եր չորս կամ հինգ կաշեպարկ, լի գնդակով, փամփուշտով և այլն։ Առաջնորդը ցուրտ եր, և նրանցից շատերը փաթաթված եյին իրենց յափունջիների մեջ (bourkas), որ ավելացնում եր նրանց վայրենի տեսքը։ Իմ բարեկամ հրամանատարից բաժանվելիս, նա ինձ ասաց, թե այս մարդիկ ունենալով վորպես պահակ, կարող եմ ինձ ապահով համարել թրքական սահմանից այն կողմ այնքան, վորքան Դյումբրի բերդում։ Նրանք ծանոթ եյին մեր անցնելիք բոլոր տեղերին։...

Մենք ճամբա յելանք։ Յուրաք 12 ասաիճան ռեամյուր, բայց իմ վոգևորությունը ավելի լավ տաք պաշտպանություն եր թերևս, քան իմ ընկերակիցների յափունջիները։ Ջիավարելով ընդարձակ հովտի մեջից դեպի հանդիպակաց սահմանը, լուսների շղթան, վորոնց մեջից բարձրանում եր ամպամած Արագածը, մնում եր մեր ձախ կողմը։ Մոտ հինգ վերստ դեպի առաջ անցանք Արփաչայից, և մտանք թրքական սահմանը։ Այս գետը բխում է Կարսից վոչ շատ հեռու և թափվում է Արաքս Հաջի-Բայրամլուի մոտ (Hadjy Baramlu), վոր կազմում է թրքո-պարսկական արևմտյան սահմանը։ Սահմանը անցնելուց հետո արագացրինք մեր քայլերը և շուտով հասանք մի թրքական գյուղ, վորի դիրքը ավելի նկարագեղ եր գառնում հարևան բարձունքների վրա յերևցող աշտարակներով։ Սրանք, ինչպես վրաստանում, հին ամրոցների և կրոնական շենքերի մնացորդներն եյին, շինված անցյալում յերկրի վեհապետների կողմից։ Այստեղ հովիտը բավական նեղ է, և յերբ մենք առաջ անցանք նկատեցինք ուրիշ ավերակներ։ Նրանք նույնպես աշտարակներ եյին և հավանորեն պատկանում եյին կայարանների մի շղթայի, հին ժամանակներում հաստատված՝ անցքը փակելու համար։

Մի քանի վերստ այն կողմ անցանք կարա գետից, վոր Արփաչայ անունն է առնում. այստեղ վոչ լայն է և վոչ էլ խոր, բայց մոտենալով Խոշավանք (Kotchivan) մենաստանին, դառնում է մի փոքրիկ գետ, Ախուրյան (Akhoor) անունով, վիանում է մի փոքրիկ գետի, Ախուրյան (Akhoor) անունով, և դառնում է բավական մեծ գետ, անցնում է բազմաթիվ գեղեցիկ հովիտներից և խառնվում է Արաքսին։

Լեռները մեր բոլոր կողմերից կլորաձև եյին յերևում. նույն իսկ վոչ մի ժայռ չեր խանգարում հղկված ձյունապատ մակերեսը։ Մենք, սակայն, անցանք մի շատ նեղ ձորից, ուր մեր ճանապարհի վրա բավական քար կար և պարտավորված եյինք բարձրանալ խորտուբորտ և զառիվայր մի լեռան կողքից։ Այդ ճանապարհի ընթացքում հանդիպեցինք լքված մի գյուղի ավերակներին, մի տեսարան, վորին յինք լրված մի գյուղի ավերակներին, մի տեսարան, վորին իմ ընկերակիցները կատարելապես ընտանի եյին։...

Հասնելով լուրի կատարյին, մենք մուտք գործեցինք մի ընդարձակ սարահարթ, վորի միջից մենք սկսանք առաջանալ դեպի արևմուտք, մինչ իմ բեռնատար ձիերը գնացին մի այլ ուղղությամբ դեպի Խոշավանքի մենաստանը, ուր պետք եր վոր իջևանեյինք այդ գիշերը։ Յերբ այս բաժանումը կատարեցինք իմ առաջնորդն ասաց թե պետք եր վոր մենք մոտավորապես տասը մղոն ձիավարեյինք Անի հասնելու համար։ Որը բավական առաջացած եր, և նախանձախնդիր վինելով վոր շուտով տեղ հասնենք, վորպեսզի մի քանի ժամ կարելի լինի քնելու կատարել, շտապեցրինք մեր քայլերը։ Ճանապարհը չափազանց անհարթ եր, ցածր բլուրների վրայից. ուր ճանապարհի հետքը հաճախ հազիվ թե նկատելի յեր, բայց վերջապես անհարթ մի դաշտի ծայրում յերևացին հնավանդ քաղաքի աշտարակները, տարածված բավական ընդարձակ մի հորիզոնի վրա։ Անհամբեր յես խթանեցի իմ ձին և ավելի մոտ տեսա նրա հարավային ու արևելյան ճակատները պաշտպանված մի խոր ու անանցանելի խորխորատով, վորի միջից հոսում է Արփաչայը։ Արևմտյան ու հյուսիսային ճակատները պաշտպանված են յերկվարդ պարիսպների շղթայով և հիանալի վարպետորեն

կառուցված աշտարակներով։ Հյուսիսից կերևք մեծ մուտքեր
կան, կենտրոնի դռան վրա քանդակված և մի ընձառյուծ
կամ առյուծ, և նրա մոտ կողքի աշտարակների վրա բազ-
մաթիվ խաչեր կան փորագրված քարի մեջ և վարթամորեն
զարդարված ընտիր քանդակներով։ Մանելով քաղաքից ներս
դուս ամբողջ մակերեսը ծածկված՝ ասչված քարերով, խո-
յակներով, սյուներով, խորտակված, բայց վարպետորեն
զարդանկարված ծոխորներով, և հին փառքի այլ ցնացորդ-
ներով։ Տեղի դանադան մասերում տակավին ցնում են բազ-
մաթիվ եկեղեցիներ, որոնք իրենց անցյալ վեհությանն
ավերակից մի բան ավելի են պահում, բայց նրանք այնքան
ամայի են, որքան մյուս շենքերը, որոնց վրա ժամանակը
և քանդումը ավելի ծանր են ազդել։ Այս մեծ քաղաքի
արևմտյան ծայրամասում, ուր վոչ մի մարդկային արարած
չկար, բացի մեղնից, տեսանք Հայաստանի յերբեմնի թա-
գավորների պալատը, մի շենք, վոր արժանի է այս հին
մայրաքաղաքի հարգանքին։ Նա տարածվում է քաղաքի պա-
րսպից, վոր վոչ մի նկարագրական չի կարող տալ ճիշտ
գաղափար՝ քարերի նուրբ քանդակների գանազանություն
ու ճոխություն, վորոնք գանվում են շենքի վրա, և կամ
նրբորեն կատարված մոզայիկ նկարներ, վորոնք զեղեցկաց-
նում են նրա անթիվ սրահների հատակները։ Քաղաքի կենտ-
րոնի մոտ յերկու մեծ ուղանկյունի աշտարակներ կան հակա-
բարձրությամբ, վորոնց կատարը բոլորված և աշտարակիկ-
ներով (turrets)։ Նրանք սիրապետում են շրջապատին, նուշ-
իսկ միջնաբերդին, վոր գտնվում է հարավ-արևմուտք, մի
բարձր ժայռի վրա և մի գահավանդի յեզերքին։ Վերքան
հեռու եյի գնում, և վերքան ավելի մոտից եյի քննում այս
յայնածավալ մայրաքաղաքը, այնքան ավելանում եր իմ
հիացումը այս հաստատուն ու կատարելագործված ճարտա-
րապետության հանդեպ։ Կարճ խոսքով, սյուների խոյակ-
ներն,բարդ զարդարանքների սիրուն քանդակների և արաբեսկ

ծոխորների սիրական վարպետությունը գերազանցում եր
իմ տեսած վորևե նման գործ թե արտասահմանում և թե
Անգլիայի ամենանշանավոր մայր յեկեղեցիներում։ Յես նկա-
տեցի մասնավորապես մի կլոնական շենք, ավելի փոքր
ծավալով քան մի կարգ ուրիշները, բայց ընտիր ճարտա-
րապետությամբ։ Շատ մոտ եր այն ուղանկյունի աշտարակ-
ներին, և նրա բարձր կամարակապ առաստաղը մի գե-
ղեցիկ նմուշ եր մոզայիկ գործի մաքուր եղրաձկյան յեզերք-
ներով ճոխացած, կազմված կարմիր, սև և դեղին քարից։
Շենքի սյուները և բոլոր զարդարանքի մասերը այնքան
սուր ու թարմ եյին, վոր կարծես թե յերեկ եր կառուցվել։
Հիրավի, ամեն տեղ թվում եր թե ժամանակը ավելի զթա-
ծրերությամբ և վերաբերվել այս քաղաքի հետ, քան մարդ-
կային ձեռքը։ Պատերազմը խորտակել և նրա պատնեշները,
և դարձրել և նրա պալատները, յեկեղեցիները ու բնակավայ-
րերը անմարդաբնակ և հաղար ու մեկ կերպով թողել և
իր ամայացնող նշաններն։ Բայց, ժամանակը կամ կլիմայի
ազդեցությունը, ավերման շատ քիչ նշաններ են ցույց տալիս։
Նուրբ և մինչև խակ փայլուն մոզայիկ, — առավել կամ նվազ
չափի ճշտությամբ գործված, — տարածվում է քաղաքի վրա,
և ընդհանրապես յերևում է թե խաչի ձևը արմատն և կազ-
մում, վորից ծագում են դանազան պատկերներ։ Տները, յեկե-
ղեցիները, աշտարակները, պարիսպները, ամեն մեկ շենքը,
ցածր կամ բարձր, ունի ընդհանուր ճաշակ, և բոլորի վրա
տեսնում ենք սև քարի մեջ քանդակված ուրույն նշանը։ Բացի
այս նշաններից, յես գտա հին հայկական տառերով վո-
րագրված յերկար արձանագրություններ, յեկեղեցիների գլխա-
վոր մուտքերի վրա, և նրանցից մի քանիսը յես պիտի
ընդօրինակեի թղթի վրա, յեթե որը առաջացած չլիներ և
այնքան ցուրտ չլիներ, վոր կարողանայի բռնել մատիտը։
Յեթե այդպես չլիներ իսկ, իմ առաջնորդի անհամբերությունը,
թույլ պիտի չտար, վոր մի տող իսկ գծեի։ Հակառակ պա-
հակների թվին և նրանց քաջության, հավանական եր վոր
մուտքի մեջ նրանք հանկարծակիի գային ավելի բազմաթիվ

մի ուժի կողմից. ավազակները կարող էին դուրս գալ քաղաքի մուտի ու դերեզմանման կուլտերի տակից, ուր ցորեկ ժամանակ տիրում է միայն լռությունն ու ամայությունը։ Ասիական շատ քաղաքների նման, փողոցները չերևում էր որ տանտիրուհուց տասնչորս վոտքից ավելի լայն չէին։ Տները, ընդհարապես այս նեղ բայց լայնորեն տարածված դծի չերկայությամբ, բաժանվում էին զանազան փոքր հարկաբաժիններով. որոնք անկուսր պատերից շատ հեշտությամբ կարելի էր զանազանել։ Յերբ անցնում էինք նրանց դրսեից անձև, բայց ավելի ընդարձակ ավերակների կույտերի վրայից, մտածում էի հնության այն զանձերի մասին, որոնք թաղված մնում են կոթողների կտորների, պատերի ու քարերի դեղերի տակ։ Նույնիսկ մի քանի որում չերեսից հավաքվածովը, ճանապարհորդը կարող էր ձեռք բերել զարմանալիության ամենագեղեցիկ զարդանկարների շատ նուրբ նմուշներ, — չեմ ասում ոսկեղենների, — հավաքման փորձը կատարելու համար։ Քաղաքի ռազմական ուժը, — որքան որ իր ամրությունները կարող էին անառիկ դարձնել, — պետք է որ շատ մեծ լիներ, որովհետև այն ձորը, որ նախապես հիշատակեցի, պաշտպանված է պարսպով և տարբեր բարձրության աշտարակներով։ Ջորի մեջից հոսող գետի վրա մի հոյակապ քարե կամրջի մնացորդները տակավին տեսնվում են։ Յերբ արևը թաղված էր լեռների չետև, այլևս ժամանակ չէիր դանդաղելու այդպիսի մի վայրում. չես անսահման մի վշտով հնազանդվելի իմ առաջնորդների հրամերին և մի վերջին հայացք նետելի Անիի վեհափառ ավերակների վրա, անսահման ամայության մեջ, դորշ ու ձմեռային մի դաշտի վրա։...

Այն վանքը, որ դիշերվան մեր ոթևանը պիտի լիներ, գտնվում էր հինգ մղոն դեպի արևելք և դեպի այն կողմ այժմ դարձրինք մեր չերեսը։ Յերբ ձիավարում էինք, նկատեցի հին պարիսպների ցածր դիրքերը, և ուրիշ շինքեր ցրված բավական հեռու, քաղաքի անմիջական շրջակայքից։ Մի կողմում կանգուն էին տակավին չերկու փոքրիկ եկեղեցիները, Անիի չեկեղեցիների նման, և մի ուրիշ կետում, նկատեցի մի զույգ վիթխարի չափով պատվանդան, որոնք պահում էին քառակուսի քարի զանգվածներ՝ ծածկված հայերեն արձանագրություններով։ Այս պատվանդանները և այն շինանյութը որով հին մայրաքաղաքը կառուցված է Մոշավանքի ընդարձակ քարհանքներից հանված են։ Նրանք պարունակում են ժայռի մի գեղեցիկ տեսակ, որ նախապես նկարագրված չերեք գույներն ունի, որոնք կազմում են Անիի պարիսպները և ճարտարապետական զարդերը։ Այդ քարը խիտ է և կարելի է կտրել ամենանուրբ ձևերի, առանց դժվարության կամ կոտրվելու, մինչ չերբ ծնում է բայց ոդի մեջ հետզհետե կարծրանում և կլիմայական փոփոխությանց դիմադրում է։

Դիշեր եր, չերբ մենք տակավին չէինք հասել վանքը, և հակառակ մուտ լինելուն, չես նշմարում էի ճանապարհի հետաքրքիր տեսարանները, որոնց մեջ մի բարձր ուխտկլունի աշտարակ, որ նմանում եր այն չերկուսին, որ չես տեսել էի Անիում։ Նա կանգնած եր մի բարձունքի վրա, մոտ այն կիրճի ճանապարհին, որից մենք պետք եր անցնեինք դեպի վանքը։ Յերբ հասանք, բացվեցին նրա պատկառելի դռները և գտա որ իմ բեռնատարը և ձիապանները հանդստորեն տեղավորված էին ժամերից ի վեր, և վանականները շատ սիրով ընդունեցին մեզ։ Բացի իմ քրիստոնյա ղեկավարներն այս ուշադրությունից, գյուղի քրքական գլխավորը պատվեց ինձ իր այցելությամբ։

Արշալույսը բացվելուն պես չես վոտքի վրա էի և դժվարությամբ ի մի հավաքեցի իմ պահակախումբը։ Ապա, ինձ բարով ասի չերախտապիտությամբ իմ բարեպաշտ հյուրընկալներին։... Ժամը իննն եր, չերբ առաջ շարժվեցինք և անցնելով վանքի ձորից, իմ ուշադրությունը գրավեց նրա աշտարակների վիպական դիրքը։ Նա գտնվում է մի խոր ձորի գահավիժի կողքին, որի խորքից հոսում է Ախուրյան գետը, որի արագությունը և կատաղի բաղխումը ժայռերի հետ, չրվեժի տպավորություն և թողնում։ Մոշ-

ման գյուղը մոտ և վանքին և նրա յածր անակները, մի նկատելի խումբ են կազմում մյուսի բարձր պարիսպների տակ։ Նրանց ճարտարապետությունը ունի նույն վոճը և պատկանում է նույն շրջանին, ինչ վոր Անիի եկեղեցիները, և հետաքրքիր է նկատել թե, թեև նրա պալատները հողին են հավասարվել կամ լքվել իրենց սեփականատերերից, բայց տակավին հին թագավորների հավատքը մնում է տեղի վրա։

Համաձայն մեր նկարագրի, մենք անցանք Ախուրյանից մի վայր, ուր մի լեռացող ագրյուր է բխում գետնից, շրջուն գույներով։ Նրանք պայքարում էին սպիտակ ամպերի նման, այնքան ցուրտ առավոտյանները ու ջինջ ոդի միջից։ Ձերը մենք մեկնեցինք վանքից, ցուրտը Ռեոմյուրի 14 աստիճան եր։ Անցնելով այս գետը, մտանք Պարսկական սահմանը։ Ապա մենք առաջացանք գետի հյուսիսային ափից, վոր շուռով դուրս եկավ հարավ-արևելք, և սկսանք բարձրանալ խորտուբորտ ճանապարհով դեպի մի մասը այն լեռնահովիտի, վոր մենք թողել էինք մի որ առաջ, և նայելով դեպի հյուսիս-արևմուտք, նորից տեսա Հայաստանի հին մայրաքաղաքը, նրան շրջապատող վեհապանծ լեռներով, վորոնք միացած են Արագածի շղթայի հետ...

Մեր ճանապարհը շարունակվում եր դեպի հարավ-արևելք, հարթ ձյունի վրայով, նեղ կիրճերի միջից և չերքեզի յածր բլուրներից. չկա վոչ մի ծառ և վոչ իսկ մացառ։ Այս կերպով տասնհինգ վերստ ճանապարհորդելուց հետո հասանք Թալիս (Talys) անունով մի ուրիշ հին քաղաքի մոտերը՝ վոր այնքան ամայի եր, վորքան Անին։ Ճանապարհից չէինք վեցի՝ գնալու և տեսնելու համար այդ քաղաքը, բայց հետո վից կես կարող եյի տեսնել շատ մեծ եկեղեցիներ, տների ավերակներ, ուրիշ շենքեր և ընդարձակ պարիսպներ։ Միևնույն ժամանակ տեսա Արարատի դուրգ գագաթները և բազմաթիվ լեռներ, վորոնք խանդարում եյին տեսարանը։ Արարատը ինձ վրա թողեց այն ազդեցությունը ինչ վոր սպասում եյի։ Բայց իսկական ազդեցությունը կես ասացյալ հետո։

Մոտավորապես քառասուն վերստ առաջանալով դեպի հարավ-արևելք մի չերկար ձորի ծայրամասում, հասանք մի քարվանսարայի ավերակներին, ուր մենք մի ժամ կանգ առինք, հանգիստ տալու համար մեր ձիերին։ Այստեղ մի հաճելի փոփոխություն կար թե բնության և թե մթնոլորտի մեջ։ Մեր վերջին որվան ճամբորդության ընթացքում համատարած ձյունի պատկերը հետզհետե անհետացել եր, և բարձունքների վրա տեսնվում եր մի քիչ կանաչություն։ Այստեղ հովիտը մուգ գույն ուներ, և շատ կանաչ, և ոդը թեև ցուրտ, բայց զարնանային եր, վոր ուղեվորի համար հաճելի և մտալկոտ ճամբաներից անցնելուց հետո։

Քոշավանից մինչև քարվանսարան մեր ճանապարհին փոխանորեն մենք վոչ մեկ մարդու չեյինք հանդիպել և վոչ էլ կենդանու, բացի մեր փոքրիկ խմբից. շրջապատի մեռած պատկերը ավելացնում եր մեր այն տպավորությունը, թե մենք մի անմարդաբնակ ամայության մեջ ենք գտնվում։ Ցերկրի ամեն կողմը ցրված նախկին բազմամարդ բնակչության անբնակ հետքերը՝ համեմատելով ամեն տեղ ներկա ամայության հետ, կես զգում եյի թե ամենաբացարձակ ամայության մոտ։ Այդ ամայությունները պիտի ոդ-ուսատանի ամենավայրի տեսիլներն անգամ վոչնչ եյին մոտալ ճանապարհն եր այս իմ անցած բոլոր մյուս տեղերից։ այս ամայության մոտ։ Այդ ամայությունները պիտի ոդ-տապատվեին մարդկանց կողմից, մինչ սրանցից մարդիկ վտարված են, բազմամարդ չերկիրը վերածելով անապատի։ Զրեթե իմ անցած ամբողջ ճանապարհը այս վշտաորի նկարագրեցին ինձ, փառաները ավերված եյին ամենուրեք, թե բազկերն ունեին, փառաները ավերված եյին ամենուրեք, թե այստեղ ապրում եր չերբեմն մի բարգավաճ ժողովուրդ, հիմա սրբված չերկրի չերեսից։ Միայ քաղաքների, ավանների և գյուղերի միայորդները՝ դաշտերում ու ձորերում, իրենց հպարտակության գծերով, հակոդության աշտարակներով տակավին մնում են այստեղ։ Այն կացությունը վոր մենք տեսնում ենք, հետևանք և ճնշող արշավանքների, վորոնք անցան առաջես վորպես «քանդումի ցախավել» (the besom of destruction) ամբողջ չերկրով։ Այս աղետը պատահեց մոտ

տավորապես հինգ հարյուր տարի առաջ, յերբ Անի և մյուս քաղաքները թալանվեցին ու քանդվեցին. ավաններն ու գյուղերը վոտնակոխ յեղան և բնակիչները կոտորվեցին կամ քշվեցին անտերից։ Վոմանք ցրվեցին Թուրքիայում, ուրիշները փախան Կովկասից այն կողմ և հաստատվելով Դոնի յեզերքը հիմնեցին այժմու Նախիջևան քաղաքը։ Կործանիչ պարագաների հալորդությունը ծառայից բնաջնջելու հին ժողովրդի մնացորդները, վորոնք մնացել էլին իրենց հյուղակներում և քարայրներում։ Այն ժամանակ ամեն ինչ լքված եր, և մինչև վոր ռուսները չքշեն Թուրքերին դեպի ավելի հարավ և դեպի արևմուտք և չտարածեն իրենց կայսրությունը մինչև Արարատի ստորոտը, այս շրջանը... պիտի շարունակե մնալ ավազակների ժամադրավայր և անվտանգ։

Մեկնելով մեր հանդրվանից, Արարատյան դաշտի ավելի լիակատար մի տեսարան բացվեց մեր առջև և լեռը իր ամբողջ վեհությամբ բարձրացավ յերկնակամարի վրա։ Մեր քարվանատարի դծից դեպի հարավ արևելք եր գտնվում։ Այժմ մենք սկսանք վայրջք դեպի արևելք, քարոտ ու դժվար ճանապարհի վրայով, վոր տևեց տասը վերստ, բազմաթիվ նեղ ու ժայռոտ կիրճերից և տառած վտակներից մինչև մենք հասանք մի մահմեդական գյուղ, Մոսկյան (Moschion) լեռների կողքին։ Իմ առաջնորդները շուտով ծանոթացան այս բարի մարդոց հետ, վորովհետև գյուղի ճանապարհին նրանցից մի քանիսը նկատեցին վոչխարների մի հոտ իրենց հովիվով միասին, և մեղնից բաժանվելով խոյացան նրանց վրա։ Զկռահելով նրանց մտադրությունը, յես կարծում եյի թե նրանք նկատելով ավազակների մի խմբի մոտեցումը, առաջ անցան հանդիպելու նրանց։ Հետևաբար, չափազանց զարմացա, յերբ տեսա վոր նրանք մտան հոտի մեջ, հովիվը փախավ՝ փրկելու համար իր կյանքը, և մի քանի րոպեյից խումբը վերադարձավ իր հետ բերելով ժողթված յերկու վոչխար, վոր շուտով կաշին հանեցին, յեփեցին ու կերան։ Նրանց կարծիքով սա վոչ այլ ինչ եր, յեթե վոչ

միայն մի մարդանք իրենց ձիերի համար, մի ասպատակություն, վոր այնքան իրենց իրավունքն եր, վորքան ոդ շնչելը, և տերն այնքան իրավունք չուներ տրտնջալու, վորքան դրացու արտից մի քանի շաղգամ վերցնելը, թեև սա մի նորություն և ծ. դարու մի անգլիացու համար։

Նոյեմբերի 17-ին (Հ. Տ.).— Առավոտը բաժանվեցինք մեր հյուրասեր մյուսուլմաններից, նրանք իրապես այդպես էլին, թե գտնվում էլին իմ ընկերակիցների կատաղի յերևույթի ու նրանց շողացող զենքի ազդեցության տակ, յես չեմ կարող ասել, բայց պատճառ չունեմ դանգատվելու նրանց քաղաքավար վերաբերմունքից։ Մեր ճանապարհը նախորդ որվան նման վատ եր. գնում եյինք դեպի հարավ-արևելք և աստիճանաբար իջնում եյինք մեծ բարձունքից, թեև շատ ընդարձակ զառիվայր յերկիր դեպի Արարատյան անապատն դաշտը։ Մեր ճանապարհին անցանք Թալիշ[8] (Talish) անունով բնակատար մի ավան ավերակներից։ Մի քիչ հեռուն տեսանք մի մեծ քարվանատարի ավերակները, լինելից իջնող մի վտակի կողքին, և նրա փլած պատերի միջից նկատեցինք, վոր մի քանի կիսաքանդ թրվառները սողոսկում եյին դեպի վեր։ Գետնի վրա կանաչություն վոչ մի հետք չկար, ամեն կողմ ծածկված եր հրաբխային քարով, կամ ավելի ճիշտ կլիներ ասել աճյունների զանգվածով։

Ավելի ցածր, այս յերկար զառիվայրի վրա հողի ու ժայռի մի բլուր և բարձրանում, վոր վորևե այլ տեղ, բացի Արարատի մերձակայքում, պիտի կոչվեր լեռ։ Այստեղ դա հազիվ թե նման և բլրի։ Նրա ձևն ու կազմությունը ավելի մոտ եր հրաբուխի նման և, բայց թե վոր շրջանում և նա բռնկել, մինչև չունենք կարծիք հայտնելու, վոչ մի վստահելի հին կամ նոր հեղինակ մի բառ չի ասած Արարատի շրջանում հրաբխային բռնկումի մասին։ Բացի վերոհիշյալ աճյուններից, մեր վայրկյան ընթացքում կային կարմիր ու կակուղ ժայռամասեր, վորոնք կրացման նշաններ եյին ցույց տալիս։

Մեր վայրկյանին, յերբ հովիտը բացվեց մեր առջև, իմ

ամբողջ ուշադրությունը գրավից տեսարանը։ Ընդարձակ դաշտը, անթիվ գյուղերով, որոնց միջից բարձրանում էին Եջմիածնի եկեղեցիների աշտարակներն ու գմբեթները, Արաքսի փայլող ջրերը, որոնք հոսում էին հովի թամբ կանաչութեյան միջից և յինթալևոնաշղթաներ շրջագծում էին անդրկովկասյան աշխարհի ահավոր հուշարձանի հիմքը։ Բայց, տափարակ դաշտը հասնելուց հետո ես միայն վոր տեսա Արարատն իր լիակատար մեծությամբ... [Այստեղ հեղինակը նկարագրում է Արարատը. ասում է վոր վոչ վոք չի հաջողած բարձրանալ նրա կատարը, հերքում է Դր. Ռինեպախի այն հաղորդագրությունը թե Արարատի հրաբուխը բռնկել է 1783 հունվար և փետրվար ամիսներին, ինքը այդ մասին հարցրել է Եջմիածնում վարդապետներին և նրանք նույնպես հերքել են, և ցույց են տվել այն ժամանակագրությունը, վոր մխիթարությունը պահում է, և այդպիսի կարևոր մի դեպք չէր կարող վրիպած լինել ուշադրությունից։ Նա ասում է թե Արարատի հրաբուխը կարող է պատահած լինել շատ դարեր առաջ նախապատմական շրջանում։ էջ 182-186։]

Մեր վերջին օթեվանից՝ Թրքական գյուղից, մոտ քսան վերստ ճամբորդելուց հետո մոտավորապես ժամը 3-ին հասանք վանքը [Եջմիածին]։ Պատրիարքին նամակներ ունեին Թիֆլիսի հայոց եպիսկոպոսից, ուստի սպասում էին քաղաքավարի վերաբերմունքի, մինչ նրանք ցույց տվին հնարավոր ամենաբարեացակամ ընդունելություն։ Պարիսպներից ներս մտնելու րոպեից չես զգարիցի ռասրական լինելուց. չես կարող էլ նույնիսկ կարգադրել ամեն ինչ այնպես, ինչպես իմ սեփական տունս, այնքան հանգստանում հարմարություններ էլին տրամադրել մեզ համար։ Ամեն ինչ պատրաստված եր նախապես Եջմիածնի կամ Ռէքիլիսայի միաբանության կողմից, և չես միայն պիտի վայելելի իմ հանգիստը, ուղիր որևան հոգևոր ճանապարհորդությունից հետո։

Պատկառելի մի մարդ և Յեփրեմ կաթողիկոսը (patriarch Epheme), մոտ յոթանասուն տարեկան, անզուգական առողջությամբ և լուրջ կերպարանքով, աչնպես վոր նա ավելի յերիտասարդ և յերևում։ Նա մեծ համբավ ունի վորպես բանիաստուր և ուսումնական մարդ։... Նա ճանապարհորդել է Աթոսի գլխավոր յերկրները և մի ժամանակ յեղել է Հնդկաստանում Լորդ Կորնուալիսի կառավարության որով։ Նա աշխարհիս բոլոր մասերում գտնվող հայկական յեկեղեցական հիմնարկների գլուխն է։ Նա ընտրվում է գանազան վանքերից հավաքված վանականների ժողովով, վոր կոչվում է կարդինալների սինոդ (Synod of Cardinals), և նրանք ընտրում են պատրիարքին յեկեղեցու ամենապատվական եպիսկոպոսներից մի մից։ Նա պահում է իր պաշտոնը գերագույն արժանավորության մինչև մահը. ինարիգները և կամ իր սայթաքումներ կարող են պատճառ դառնալ հրաժարեցման, բայց այս դեպքերում պարապանքն էլ քիչ անգամ են պատահում։ Եջմիածնի վանքը հիմնված է 304 թվին և Լուսավորչի և մի ընդարձակ քաղաքի, Վաղարշապատ (Valarsapat) անունով, վոր հին ժամանակներում շրջապատում եր այս կենտրոնական հիմնարկությունը՝ շատ մղոնների շրջագծով։ Նրա մեծության հետքերը կարելի յե տեսնել գանազան վայրերում, վանքից բացի վանական հետևում և մասնավորապես դեպի հյուսիս-արևելքը, բայց նրա պարիսպների անմիջական շրջակայքում միայն մի քանի ցածր հողե տներ են գտնվում և նրանք բնակարանները են խեղճ հայ քրիստոնյաների Լուսավորչների, վորոնք սուրբ գմբեթների պաշտպանության տակ կամ ավելի ճիշտ կլիներ ասել իրենց խեղճ ու կրակ յերևույթի շնորհիվ, ապրում են խոնարհ աշխատավոր կյանք և գոհ են։ Նրանց վորդիները սովորում են մի դպրոցում, վոր հաստատել է յեկեղեցին, և ուր ուսուցանում է միաբաններից մեկը։

Իմ ժամանման հաջորդ առավոտը նորին բարձրագույն պատրիարքը հրամայել եր իր քարտուղարին սպասարկել ինձ՝ տեսնելու համար մայր յեկեղեցին, վոր այնքան ճշդությամբ պետրեն նկարագրել է Շարդենը։ Ճարտարապետությունը Անգլիայի յեկեղեցիների, յեթե համեմատելու լինենք Անգլիայի յեկեղեցիների

ցինների գոթական վոճի հետ։ Ձերեք կամարով մի մուտք, — վորի վրա բարձրանում է մի ծանր ու սուր գմբեթ, — առաջ-նորդում է դեպի գլխավոր դուռը։ Շատ աշխատանք է թափ-վել այս ծանրաբեռ նեոքննագավիթի անճաշակ քանդակված զարդերի վրա, վոր փաստորեն ավելի հետագայումն է կա-ռուցվել քան մայր եկեղեցին։ Մանելով սրբազան շենքը, գտա ծայրահեղորեն մութ ու մռայլ. պատերի վրա վատ նկար-ված ու վատ ներկված են սրբերի պատկերներ, աղոտ վորմ-նանկարներ, վորոնք բոլորը ավելացնում են մռայլու-թյունը, [սակայն] առանց ավելացնելու լրջությունը։

Խորանը տակավին փայլում է վոսկով ու գոհարով, թեև մի քանի տարի առաջ միաբաններից մեկը հափշտակել եր նրա հարստության մեծ մասը։ Նրա [այդ վանականի] ուրիշ վատ արարքները մի ժամանակից ի վեր թեև դիտել եյին ներողամտությամբ, հուսալով վոր նա կը զղջա ու կուղղվի, բայց նա ամբողջապես իր սխալների շարքը մարդասպա-նության ու սրբապղծության վոճրագործությամբ։ Սրբ-բավայրի գանձերին տիրանալու համար՝ գտնելով վոր անհր-ժեշտ եր մեջտեղից վերցնել մի քանի անձնավորություն-ներ, նա թունավորեց նրանց, և իր նպատակին հասնելով սուրբ անոթները գաղտնաբեն ուղարկեց Ամստերդամ ու վա-ճառեց։ Բայց գողությունը և նրա կատարողը անմիջապես յե-րևան գալով, նա դատապարտվեց ցկյանս բանտարկության մի խուցի մեջ. սա իր դատավորների խղճմտության ու զգայ-տության արժանի մի գործն եր։... Այս մարդը հիմա շատ ծերունի է և տակավին գտնվում եր արգելարանում, յերբ յես Եջմածնում եյի։ Սուրբ նշխարներն այլևս առատորեն շահարեր առարկա չլինելով, միաբին անխախտ և նրանք ունում են այն վիճակում, ինչ վոր Շարդենը նկարագրել է, տալով այնքան մանրամասն մի ցուցակ, վոր չես հարկ չեմ զգում կրկնելու այստեղ և պետք հիշատակեմ միայն մի քանի ամենանշանավորները։ Այն քարը, վորի վրա Ս. Գրիգորը նստել է կամ քնել է, իր յերազ տեսած ժամանակը, և այն գեղարդը, վորով զինվորը ծակեց մեր տիրոջ կողքը։ [Այս-

տեղ ուղեգիրը մանրամասն կերպով խոսում է գեղարդի մասին, պատմում է թե վոր յերկրներում կան գեղարդներ, հիշատակում է հին աղբյուրները, ջրում է գեղարդի գոյու-թյան առասպելը և յենթադրում է, թե այս գեղարդը կ. Պոլսից բերված է Եջմիածին, և այլն և այլն։ Այնուհետև խոսում է Նոյան տապանի կտորի մասին և պատմում է Ս. Հակոբի պատմությունը, ինչ վոր հիշատակում են նաև Ռուբ-րուք ճգ-րդ դարում և հետագա ուղեգիրները։ Այդ մասերի թարգմանությունը ավելորդ ենք համարում։]

Հակառակ տարվա յեղանակին այս տեղն կլիման գոտ մեղմ ու հաճելի։ Ամեն մի առարկա ավելի գարնան յերևույթ ուներ, քան մտածեցող ձմռան։ Ողը պարզ եր, յերկինքը անամպ, այնպես վոր լեռների ամբողջ պանորաման տեսանելի եր, և ինչ գեղեցիկ ու վեհաշուք։ Մի կողմից տարածվում եյին մեղմ վարդագույն և մի ուրիշ կողմից վոսկեզօծվում եյին վոսկի գույներ, կամ նրանց ոպալին ճակատների վրա կախվել եյին արծա-թափայլ քողեր։ Յերբ արևը մայր եր մտնում և կամ արևն եր ծագում՝ այս հավիտենական բոլոր գույների հզոր մոգա-կանությունը շարժվում եր այս կամ այն կողմը։ Բայց բոլոր փոփոխությունների մեջ Արարատը ցնում եր անդուզական իր վեհափառությամբ և խլում երկնքի բոլոր գույները։ Բա-ցարձակ ձմեռը այստեղ սկսվում է հունվարին և այն ժա-մանակ անտեսոր չի ցուրտը 16-18 աստիճան Ռեոմյուրի։ Դաշ-տում քիչ ձյուն է տեղում։ Ապա հետևում է մարտի ու ապ-րիլի անձրևային յեղանակը և անմիջապես հետո գալիս է ամառը՝ հարուստ, անուշահոտ ու պայծառ, վորի տաքու-թյունը մի քանի ամիսներում թեև շատ է, բայց յերբեք այնքան խեղդիչ չէ, ինչպես Ձերևանում։

Այստեղ առաջին անգամ լինելով յես տեսա ուղտի կա-րավանը։ [Ուղտերն] անցնում եյին դաշտից, և նրանց ձևն ու խմբավորումը, մորուսավոր ուղտապաններով վորոնք այն-քան մասնահատուկ են Ասիայի, ամբողջացնում եյին իմ աչքի պատկերը։ Վոչ մի բան չկար, վոր ինձ հիշեցներ Ձևվրո-պան։... Այս դաշտի բնակչությունը յերկրագործական բոլոր

նպատակներն համար գործածում է դամիշ, մինչ մենք գործածում ենք կեղ կամ ձի։ Նրանք այստեղ ավելի մեծ քան վրաստանում, շատ համբերատար աշխատանքի և զբաղվոր։ [Այնուհետև հեղինակը մանրամասն նկարագրում է դամիշը, նրանց լվանալու արարողությունը, վոր ինքը տեսել է կանդնած Եջմիածնի դռան առջև և այլն, և այլն։]

Յերեք Արարատյան դաշտի ընդհանուր առատությունը դասելու լինենք այն հյուրասիրությունից, վոր ինձ ու իմ խմբին ընծայվեց վանքի պարիսպներից ներս, կյանքի ամեն անհրաժեշտությունը առատ և աչքառու, նույնիսկ շռայլություններ չկային խնայվում, այն կերեք որում, յերբ կես պաուլի ունեցա ապրելու պատրիարքի մոտ, և նա ինձ ասաց, թե ըղձակա վայրերում առատ վորս կա, ազատ ամեն մարդու հրացանի համար, մինչ Յերևանի լիճը, (բավական ընդարձակ, վոչ շատ հեռու հյուսիս-արևելքում), նրանց առատ և հիանալի ձուկ՝ (կարմրախայտ, ծածան և ուրիշ ձկիններ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սոմխեթիա, տես եջ 411, ծանոթ. 6։

2. Սա ակնարկում է Ալլահվերդիի պղնձի հանքերին։

3. Հաղբատի վանքը գտնվում է պատմական Ուտի և Տաշիր (Լոռի) գավառների սահմանի վրա, և այս պատճառով էլ մատենագիրներից վոմանք դնում են Ուտիքում, իսկ վոմանք Տաշիրքում։ Թրեյդոնը սխալմամբ Հաղբատը համարում է հունական, (տես եջ 399), մինչ հայկական է և հիմնել է Աջոտ վոգորմածի կին Մոսրովանուշը 961 թվին, իսկ Սամուել Անեցին հիմնարկության թվականը համարում է 967։ Ժա. դարում Աղվանից խոտավոր կոթին Բաղրատունին կատարում է հիմնական նորոգություն։ Հաղբատը Ժա. դարից գառնում է յեպիսկոպոսանիստ և Ջևոդա-կրնեցական կուլտուրայի կենտրոն, ուր գոյություն ուներ դպրոց, արտագրվում հին ձեռագրեր և շատ մատենագրություններ ուսել են աշնաեղ։ Հաղբատում կար յերկու յեկեղեցի, վերջինիս տեղը ըստ կերակոս Գանձակեցի «համազոտ եղ. ընծայ եկեղեցի ի տեղին հրաշալի և զանգակատուն և ժամատուն մեծ և աքանչելի»։

4. Սանահնի կամուրջը, տես եջ 412—413, ծանոթ. 11։

5. Գյումրի, տես եջ 526 ծանոթ. 4։

6. Կեր Փորտերը Աչտարակի գետը չփոթում է Արփաստւի, Ախուրյանի հետ։ Աչտարակի գետը Քասախ գետն է։

7. Թալին, տես եջ 526 ծանոթ. 6։

8. Թալիշ հին Արուն ավանն է, պատմական Այրարատի Արագածոտն գավառում, Արագածի հարավային սարորոք, համանուն գետակի ժոտ։ Աբուռը հիշատակվում է հինգերորդ դարում, վորպես արքունի զորքերի ձմեռանոցներից մեկը։ Բագրատունյաց շրջանում Թալինի նման բարգավաճ էր 654 թ. Արաբ կուսակալ Հարիքը իր կենտրոնն ուներ այս ավանում։ 670 թ. հայ փեոդալ Գրիգոր Մամիկոնյան Աբուռում չքեղ կառուցումներ կատարեց։ Այս առթիվ Հովհ. Կաթողիկոս պատմագիրը գրում է. «Բաբեպատ իշխան Գրիգոր Մամիկոնեան սատուածային այցելութեամբ հիմնապրեալ գյքնատպեղ եկեղեցին՝ որ ի մեծ գաւառակըտին Արուճ, չինէ գնա սուրպով, երկնային ինն ճեմարան հաստատեալ ի վերայ երկրի եւ ի հարաւոյ կողմանէ գնէ զարքունեան իւր յերդ քարաժայռ ձորակին յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպ վիմարդ քարանցն, որ զեկերս ունի իրեւ զպատկ պատուարի. և ապա հաստատեղոյց քարաժերք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ։ Թէ հեկեղեցու և թէ պալատի ավերակները տակավին մնում են Յեկեղեցում կան արձանագրություններ, վորոնցից նորագույնը կրում է 1275 թվական (Տես, Այրարատ, եջ 143—145. Ստորագրություն հին հայատառների եջ 440—441)։

Ե. ՅԵՐԵՎԱՆ*

Իմ պատկառելի հյուրընկալից և Էջմիածնի բարեկամաբար տրամադրված մխթարանքյունից բաժանվելուց հետո, յես իմ ճանապարհը ուղղեցի ուղիղ դեպի արևելք, դեպի Յերևանի դավառը, Պարսկական կայսրության ամենաբարեբեր շրջաններից մեկը։ Իմ ուղին դաշտի միջից եր, ունենալով մի գեղեցիկ տեսարան աջ կողմից՝ Արագած վոտրապատյա անցքը։ Արարատը ուղիղ հարավակողմն եր և փոքր Արարատը հարավ-արևելքը։ Ճանապարհին յերկիրը շարունակաբար բազմաթիվ վերտաերով լավ մշակված եր ու հարուստ։ Մի մասում մենք անցանք մի փոքրիկ նկարագիր վանք, մի բաժանմունք Էջմիածնի պատրիարքական աթոռի և այն տեղ մեզ ցույց տվին պարտեզներ ու այգիներ, վորոնք ամբողջ միաբանության համար պինդ ու պտուղ են հայթայթում։ Պատրիարքի հրամանով ճանապարհի համար առատ գինի ու պտուղ եյին բարձել իմ կենդանիների, հետևաբար վորքան յես վայելում եյի այն իմ ճամբորդության ընթացքում, յերախտագիտությամբ եյի հիշում Արարատի գեղեցիկ ու բարերար դաշտերը։ Այս ամբողջ կանաչության դարձնելով մեր կոնակը, սկսանք վայրկյ և աստիճանաբար մեր յետևում եր Ձնում բարերարությունը։ Անցնում ենք ցամաք հողամասից ծածկված ժայռի ու քարի կատարներով.... Գտնվելով Պարսկաստանի սահմանում և ունենալով միայն քան վերստ ճանապարհ վանքից մինչև Յերևանի մայրաքաղաքը, Էջմիածնում յես ազատեցի իմ պահակներին, անտարակույս վճարելով նրանց իրենց ծառայության համար, և ուղարկելով շնորհակալության մի պատգամ Գյումբրիի ռուսական հրամանատարության։

Բայց իմ անձնական ծառաներից ուրիշ պահակ չունեյի, վորովհետև այս անմիջական շրջանում ավազակների մասին այլևս չի լսվում։ Ճաղատրեն շարունակեցի իմ ճանապարհը և վոչ մի բան չխոտրեց իմ ուշադրությունը, վոր կենտրոնացած եր Արարատի հարաւն փոփոխական լույսի ու ըստվերի վրա, յերբ որը առաջանում եր և մենք մոտենում եյինք Յերևանին։

Նախկին Շահի պրավոսմից հետո Յերևանը յեղել է Պարսկաստանի մայրաքաղաք [?], Յերբեմն մասն եր կազմում հայկական թագավորության և այս իսկ պատճառով բնիկ ազգաբնակությունը ընդհանրապես կոչվում է հայ։ Դեպի հյուսիս և դեպի արևելք մինչև Ղարադաղ (Karadagh) սահմանակից և ռուսների գրաված հողամասին և կառավարվում է մի պարսկի ազնվականի կողմից, վոր սարդար տիտղոսն ունի, այսինքն գեներալ։ Նա բնակում է մայրաքաղաքում, վոր նահանգի անունն և կրում։ Ձիշտ մայրամուտից առաջ յես հասա այնտեղ Նոյեմբերի 21-ին (Հ.Տ.)։ [Քաղաքը] գետեղված է մի մեծ դաշտի անկյունում Մոսյան (Mossian) [?] բլուրների ստորոտում։ Ասիական քաղաքների մեծագույն մասի նման շատ մութ և նրա անցյալը։ Բայց Արարատի մոտ գտնվելուն պատճառով ուրիշ մերձակա քաղաքների նման ասում են թե Նոյն և հիմնել։ Իսկ յես կարծում եմ վոր նրա ծագումը այդքան հին չի, և իր ներկա անունից դատելով յենթադրում եմ, թե հայ թագավորներից մեկը, Յերվանդ (Envandus), վոր ապրում եր վաթսուն հինգ տարի Քրիստոսից առաջ, տվել է իր անունը այս նահանգին և կառուցել է այս քաղաքը։ Այս յերկիրը [Յերևանի նահանգը] ունի բնության այն բոլոր գեղեցկությունները, ինչ վոր լեռ, հովիտ և ջուր կարող են շնորհել, և Յերևան քաղաքը ունի այս բոլոր առավելությունները։ Զանգու (Zengay) գետը, վոր բղխում է նահանգի մեծ լճից [Սևանի], քաղաքի մոտ յերեում է նեղ, բայց արագընթաց մի վտակ, վոր հետո իր մեջ ընդունելով

* Ker Porter հատ. I. էջ 195–203։

բազմաթիվ փոքր գեաներ, գրավում է ավելի մեծ ջրանցք և դնում դեպի հարավ-արևելյան ուղղությամբ՝ յերկար ժայռի մի անդունդի միջից, վորտեղից անցնում և դաշտի մեջ և շարունակում և իր ոձապտույտ ընթացքը մինչև Արաքսին միանալը, գրեթե Արարատի դիմաց և Յերևանից մոտ քսան մղոն հեռու։ Մի ուրիշ ավելի փոքր գետ, Քըրք-բուլաղ անունով, վորի ափյունը նույնպես մեծ լճաձև է, հոսում և այն տեղից դեպի հյուսիս-արևելք, բայց հասնելով քաղաքը, դուռով ամրոցջրելյամբ կոչում է, բաժանված լինելով անթիվ փոքրիկ առուներով, վորով ջուր են մատակարարում փողոցներին, ջրելու համար շրջակա պարտեզները և գործածելու բոլոր պահանջների համար։

Յերևան քաղաքը բացառություն չի կազմում բոլոր նման այն տեղերից, վոր ես անցել եմ վլադիկավկազից սկսած իմ ճանապարհի վրա մինչև այստեղ. քաղաքի բնակելի մասերի հետ խառնված են ավերակներ։ Բավական ընդարձակ է՝ բայց տարածություններով և հին ցեխե տներով։ Քաղաքի մի մասը գտնվում է Զուլ Միչի (Chool Mitchy) [պետք է լինի Զամլիքչի, վոր նախապես կոչվում եր Նորք] բլուրի վրա, վոր ավելի հին քաղաքի տեղն է և այնտեղից ամենից տեսարժան տեսարանն ունի Արարատը, վորը յես նկարեցի և վոր պիտի ապագայում իմ յերկրորդ հատորում։ Շարդենի նկարագրած բերդը տարածվում է բավական մեծ հողամասի վրա։ Ամբացրած և ասիական հին ու նոր յեղանակով և վերջերս վերակառուցված և յեվրոպացի ճարտարապետների կողմից։ Բայց վեչ մեկ բան չի կարող նրա գերդքը անառիկ դարձնել, վորովհետև ամեն կողմից շրջապատված է սերտ-պետող բլուրներով, տալիս վեց հարյուր յարդա հեռավորության։ Հյուսիս-արևմտյան ճակատը գտնվում է մի ուղղահայաց ժայռի կատարին, վոր յոթանասուն վոտք խոր է, և վորի տարորոշում հոսում է Զանգուն, ձևացնելով մի բնական խորխորատ, վոր հին ժամանակներում պետք է վոր լիներ պաշտպանողական մի մեծ գիրք։ Այս յերկրներում վոչինչ չի կարող գերազանցել բնության այս պատ-



Յերևանի գեղեցիկ տեսարանը Նորքից (Զուլ Միչի) բլուրից։

վարներին, որոնք հաճախ գտնվում են ամբացրած տեղերի շուրջը։ Մարդկային ուժից վեր է [կառուցել] մի բան, որ ունենա նրանց ընդարձակութիւնը, պարզութիւնը և անառիկ դիրքը։ Հիրավի, կոթե [մարդկային] աչք չի նայի Յերևանի մինչևաբերդին սիրապատող բարձր բլուրներին, այդ հսկա ժայռի ուղղահայաց դիրքը, որի վրա դնվում է բերդը, թվում է թե տալիս է այն ապավորութիւնը թե անառիկ է։ Պարիսպները իրենց բազմաթիվ աշտարակներով, ընդգըրկում են երկու հազար յարդայից ավելի պաշտպանութիւն մի պիծ։ Մի կողմից նրանց սահմանից ճիշտ այն կողմը մի դեղեցիկ քարե կամուրջ կա դնած վրա, և չես կարող եմ ասել թե մեկ բանն է քաղաքում, որ քայքայման ու ավերակ վիճակում չի գտնվում։

Յերևանն այնքան անգամ փոխել է իր տերերը և այնքան հաճախ քանդուել, կողոպտուել և կոտորածի է ենթարկվել, որ զարմանալի չի որ նրա անցյալի վառավորութիւնը վերածվել է խղճութեան. ապստամբութիւնը, որ այս արյունահեղ արշավանքներից առաջ այնքան բազմաթիվ եր, այժմ մնում է միայն նրա ցանցառ ու անորոշ բնակիչը։ Արդարև, այնքան ընկած է նրա ժիծութիւնը, որ կարելի է համարել այն որպես ավելի պարզ սահմանային մի բերդ, քան մի մեծ նահանգի մայրաքաղաքը։ Ինձ ասին թե քաղաքի նորիկ բնակչութեան թիվը 15.000 անձից ավելի չե։

Այն հին առանձնակի աշտարակը, որ Շարդենը այնքան մանրամասնորեն նկարագրում է, չես հետաքրքրվեցի քննելու և նկարելու, հետևաբար չես գնացի մի հայ վանականի մոտ, որին չես հանձնարարված եյի Եջմիածնի իմ քարեկամների կողմից, — խնդրելու նրան, որ ինձ առաջնորդե այդ վայրը։ Նա ինձ տեղեկացրեց, թե այժմ հիմքերն են միայն մնում։ Մի քանի տարի առաջ կայծակը զարկել եր աշտարակին և մեծապես վնասել, ուստի քանդել եյին այն և քարերը հատկացրել քաղաքում [տների] նորոգութիւնների համար։ Խոսակցութեան ընթացքում նա շատ հետաքրքիր տեղեկութիւններ տվավ Արարատյան դաշտերում և հովտում,

ինչպես նաև սխրալի լեռան ստորոտի շրջակայքում, ցրված շատ գեղեցիկ հին հուշարձանների մասին։ Այստեղ է արդարև որ մենք մոտենում ենք աշխարհի հնագույն շրջանին։ Ցավրոպայի շատ հին քաղաքների թվականները յերևում են յերեկ, յերբ համեմատելու լինենք այն դարերին, որ անցել են այս փառավոր ավերակների վրայից, որոնք տակավին դոյութիւն ունեն այս նախնական յերկրներում։ Իմ մտացի տեղեկատուն ասաց, թե չենթադրվում է որ Յերևանը յոթանասուն վերստ է, (կամ քառասուն յերկաթ մղոն) Արթանասուն վերստ է, (կամ քառասուն յերկաթ մղոն) Արտաշատի ստորոտից, և թե շատ նշանավոր քաղաքների միջոցորդները,— վոմանք այնքան հին վորքան Յերևանը և ուրիշները, վորոնց ծագումը թաղված է [անցյալի] մթութեան մեջ,— տարածված են Արաքսի յեղերքի յերկայնքում։ Դրանցից նա հիշատակեց Արտաշիր և կարս կալա, որոնք հուն ու հռովմեացի պատմաբանների Արտաշատը (Artaxata) և Արմավիրն (Armavra) են։ Արտաշիր կամ Արտաշատ գտնվում է [Արաքս] գետի հյուսիս-արևելյան կողմը, շատ քիչ հեռու Նախիջևանից, իսկ կարս կալան կամ Արմավիրը եջմիածնից մոտավորապես հիսուն վերստ դեպի արևմուտք, և տարածվում է [գետի] հարավ-արևմտյան յեղերքում. այնտեղ յերևում են վարպետ վորմնադրութեամբ պարիսպներն ու աշտարակները և մի հոյակապ կամուրջի ավերակները։ Այս յերբեմնի նշանավոր քաղաքի [այժմու] բնակիչներն են միայն մի քանի ընտանիքներ։ Յես ստորին դասի ամենաաղքատ մի քանի ընտանիքներ։ Յես վորոշեցի Յերևանից մեկնելիս այցելել այս հետաքրքիր տեղերից առաջինը։ Նահանգի լիճը [Սևանը] նույնպես անցյալի նշանավոր ժամանակների անկորուստ հիշատակն է, վորովհետև չենք կարող կասկածել վոր դա Պտղոմեոսի Palus Lychnites-ն է։ Հիմա կոչվում է՝ նահանգի անունով կամ Սևանա լիճ։ Նրա ամենահեռավոր կամ հյուսիս արևմտյան ծայրը, (վորտեղից սկսվում է Զանգուն), քաղաքից հյուսիս արևելք մոտավորապես վեց* վերստ է։ Նա ունի մոտ յերեսուն մղոն

* Ակնհայտ սխալ. հավանական է վոր հեղինակը գրել է վաթսուն, վեց կամ վաթսուն վերստ և սխալմամբ տպագրված է վեց։

շրջապատված են լճի ափերը գրեթե ամբողջովին շրջապատված են լեռներով։ Ջուրը հստակ է, առանձնահատուկ մի կապույտ տով և ունի առատորեն տարբեր տեսակի ձկներ։ Լճի հյուսիսային ծայրում, յեղերքից վոչ շատ հեռու, մի փոքր վիպական կղզի է տեսնվում։ Այնտեղ կա մի պատկառելի շենք, ուր բնակում են հայ յեկեղեցու քահանաներ։

Պարսկաստանի սահմանը մտնելուց հետո, Յերևանը ամենահեղինակավոր կենտրոնն է, և քանի վոր չես արձակել եմի Գյումրիի իմ պահակախումբը՝ Թրքական սահմանից դուրս դանվելուս համար, անհրաժեշտ եր վոր չես դիմում կառավարչի այս նահանգի կառավարչին, վորպեսզի տովորական դյուրություններ տրվեյին ինձ դեպի Թավրիզ կառավարչի ճանապարհորդության համար։ Այս տեսակետից իմ ժամանումից քիչ հետո լուր ուղարկեցի սարդարին՝ իմանալու համար թե յերբ պատիվ պիտի անե ընդունելու ինձ։ Չորրորդ առավոտը նշանակված եր և չես ժամադրությունը կատարելի ճշտությամբ։ Մի անձ եր ուղարկված ինձ առաջնորդելու համար. հեծնելով իմ ձին հետևեցի իմ առաջնորդին դանազան նեղ ու վողոմփալի փողոցներից, մինչև հասանք քերդը, ուր անցնելով դարպասից վոչ մեկ պահակ չտեսա և վոչ ել վորևե նշան պահակատրի գոյության։ Մարակոցի վորմնաձերպը, վոր պատնեշված եր կրկնակ մուտքով, լցված եր հարդով։ Իմ առաջնորդը ինձ տարավ բազմաթիվ կողմնակի նրբանցքներից մինչև կառավարչի պալատը։ Մուտքին ձիից վար իջա և առաջնորդվելով յերկու քառակուսի բակերից, վորտեղ անցնելով մի շատ փոքրիկ դռնից, բարձրացա մի քանի քանդված աստիճաններից, խռնված քնիկներով, վորոնց ապտոտ տեսքը համապատասխանում եր ավելի քնակարանի կիսաքանդ վիճակի հետ, քան նրա նեղկա բնակիչ [սարդարի] աստիճանի հետ։ Այս մարդկանցից մեկը վերցրեց վարագույրը իր ձեռքով, վորի տակից յես պետք և վոր անցնելի, և այդպես անելով, ես սարդարի նեղկայության մեջ։

Նա նստել եր մի գորգի վրա, սենյակի վերին մասում մի պատուհանի մոտ։ Նրա դեմքը նստել եր իր ցերեկույթը,

մի պարսիկ խան։ Մի աթոռ ելին պատրաստել ինձ համար և սովորական խոշ Ոմեդի (Hoche Omedi) կամ բարեգալուստի բարևից հետո, սարդարը նշան արեց ինձ նստելու։ Այն անձը վոր իմ թարգմանը պիտի լիներ, բավական ուշ յեկավ և յես ժամանակ ունեցա դիտելու իմ հյուրընկալին. նա յերեսուն եր մոտ յոթանասուն տարեկան, խելահաս ու կոկորդի կերպարանքով, բավական գորավոր ու հուժկու կազմվածքով. թվում եր թե նա տակավին յերկար տարիներ պիտի ծառայեր։ Նրա աչքը աշխույժ եր ու արագ, նրա դեմքը ժժգույն եր ու մորուքը մեծ, բայց վոչ յերկար, թեև կատարելապես սև ներկված, վոր նրան տալիս եր ավելի յերիտասարդի տեսք։ Տարիները չեյին տկարացրել սարդարի միտքն ու մարմինը։ Քաջածանոթ և նրա նախաձեռնության նկարագիրը և համառ քաջությունը։ Պարսկաստանի ու Ռուսաստանի վերջին դանազան պատերազմների ընթացքում նա միշտ հայտնաբերել և իր կարողությունը, վորպես կորոշ գորավար, և հիրավի նրա շնորհիվ և վոր մեծ թագավորի [Շահի] յերկրամասերի սահմանը չի հասել մինչև Արաքսը, նրա հյուսիսային հակառակորդների կողմից։ Յերբ խորհում եյի իմ դիմաց գտնվող անձի նկարագրի վրա, վոր այնքան ալլազան եր ու ուժեղ, յերբեմն մեր լուռ հայացքներից յես ուղղում եյի իմ աչքերը դեպի պատուհանը, խորհրդածելու Թյան Թարմ նյութեր գտնելու համար։ Ներքևում ահավոր պատժի դահավեժն եր, Յերևանի Տարպյան ժայռը. այն կողմը սարդարի փարթամ այդիները, ամառային տունը և նրանց վերև դեպի փառահեղ բարձունքը, վոր կամ պիտի ահարևկե և կամ պաշտպանե նրա կառավարությունը։

Յերբ Թարգմանը հասավ, դտա վոր մեր միջնորդ լեզուն պետք և լիներ ռուսերեն, վորովհետև այս լեզվագետը, կարող եր խոսել միայն այդ և իր սեփական լեզուն։ Յեվ այս խոզովակով յես շուտով սարդարին ծանոթացրի իմ այցելության նպատակը և նա խոստացավ իր իշխանության սահմանում ինձ տալ ամեն ապահովություն։ Նա խոսք տվավ անմիջապես ուղարկել մի վեհմանդար և հրաման տալ վոր

ամեն դյուրություն տրվի իմ ուղևորության։ Այս գործը կարգադրելուց հետո մենք սկսանք ընդհանուր խոսակցություն, որ նա տանում եր բավականին աշխուժ և ճարտար։ Յերևում եր որ նա հետաքրքրվում եր ավելի գինվորական նյութերով, և յերբ յես խոսեցա նրան Ալեքսանդր կայսեր հիանալի գինվորների մասին, նա բորբոքվեց և նկատեց թե նրանք գերազանց չեյին Աթթոտտականում նորերս կազմակերպված պարսկական գինվորներից։ Իմ մուտքին կայլոն (kalion) եյին բերել, ապա փոքր գավաթներով թեյ հրամցրին, ապա մի յերկրորդ կայլոն, և այդ եր ամբողջ պատվասիրությունը, ու յես հրաժեշտ առի։

Սարդարի կառավարությունը տարբերվում է կայսրության մյուս մեծագույն մասերից։ Նա տուրք չի վճարում Թագավորին. ունի մի տեսակ գինվորական ավատ, պարտավոր լինելով պատերազմի ժամանակ արքայական բանակին հայթայթել որոշ թվով գինվոր։ Յեվ նրան են վստահացել Յերևանի նահանգի ամբողջ սահմանների պաշտպանությունը, միմիայն իր սեփական ծախքով։ Կարճ խոսքով կարելի յե նրան անվանել Յերևանի իշխանը, քանի նշանակված մի կառավարիչ, որովհետև բնիկները նրան վերաբերվում են որպես հպատակի, և նա վայելում է իրավունքներ, որոնք մնացյալ արքայական են։ Նրա կանայքը ճամբորդում են ծիրանի հագած, մի գերազանց տեսակի պատմուճան, որ չի թույլատրվում Պարսկաստանում վոչ մի կնոջ, բացի Թագավորի կամ նրա որդիների ընտանիքից։ Նա նույնպես արտոնություն ունի իր ջորիների բեռները ծածկել նուրբ ասեղնագործված կապույտ կամ կարմիր կտորով, որ արքայական գնացքների նշաններ են։ Նրա հավատքած հարստությունը անսահման է, և նա հոգային կալվածներ ունի շատ նահանգներում, բայց մասնավորապես Գիլանում, որտեղ նա ունի բազմաթիվ գյուղեր։ Նրա իշխանության տակ գտնվող Յերևանի նահանգի շրջաններն են՝ Գյոգչա (Gookchah), Սևան (Sevan), Գառնի (Gurney), Ապարան (Aberan), Կարբի (Kerpay), Զիրզադիլ (Zirzadill), Շարագիլ (Sha-

ragill). Շարուր (Sherroor), Մակու (Makoo), Սաութ[?] (Saut): [Ղարդուղարու շրջանի մեկ մասը]։ Նրա յերկարությունը ընդգրկում է մոտավորապես 200 մղոն և լայնությունը 100։ 1814-ին կատարվել է գնդ կրելու կարող մարդկանց մարդահամարը և նրա թիվը յեղել է 18.000։ Նահանգի յեկամուտն է մոտ 150.000 թուման, որի մեջ չեն Մակուի շրջանի յեկամուտները։ Թուման, որ ընթացիկ վոսկի դրամն է Պարսկաստանում, շատ դուռ մետաղ է և արժեքով կարող է հավասար լինել մեր կես գինային [10 շիլին 6 պենս]։

Հաղիվ թե իմ ոթևանն եյի հասել, յերբ մեհմանդարը յեկավ, որ կարգադրիչը պիտի լիներ իմ ուղևորության սարդարի իշխանության սահմաններում։ Նա հրաման եր ստացել իր գլխավորից, ըստ որում ինձ պիտի հայթայթեր վիր ջորիներ, ոթևան, պարեն և ամեն բան, որ յես պահանջ եյի դրում նրա իրավասության տակ գտնվող բոլոր ավաններում ու գյուղերում։ Սա Պարսկաստանում մի հաճելի բարեպատում եր ինձ համար, բայց յես հարցրի պահակազորի համար, որ մեզ պիտի ընկերանար ճանապարհին։ Սակայն, իմ մեհմանդարը տեղեկացրեց ինձ՝ ժպտալով ու պոռնադ նայվածքով, թե դրան այլևս պետք չեր դիմում պարսկական տիրապետության գրեթե բոլոր մասերում, որովհետև նորին մեծության գահակալությունից հետո, այնպես խիստ վերաբերմունք և ցուցադրվել հին ավազակների և կամ որևե նոր ավազակախմբի դեմ, որ հանդգնություն փորձել նման ավարառություններ, և դժվար թե որևե ավազակ կամ նույնիսկ գող համարձակվի մեջտեղ գալ մեծ Թագավորի յերկրում։ Յեթե ճիշտ եր այս, անտարակույս շատ հաճելի մի տեղեկություն եր, և առնվազն հավատք ընծայելով դրան, մինչև որ փաստը հակառակն ապացուցեր, ուրախ եյի կարգադրությունն անելու իմ ճանապարհորդության, շահունակության, առանց կապվելու կիսավայրենի պահակների հետ, որ շրջաններից ի վեր անձնական ապահովության համար անհրաժեշտ են յեղել։ Հիրավի, ենթադրելով պարսկական հոգամասում, իմ վերջին գինվորները այլևս իրավասություն չունեյին մնալու, ուստի յես նրանց ազատեցի), մինչև Յերևան ճանապարհը յես պետք եյի բոլորովին ապահով։

Զ. ՅԵՐԵՎԱՆԻՑ ԹԱՎՐԻԶ*

Նոյեմբերի 23-ին (Հ. Տ.) ժամը 9-ին ես վերսին ճամբա ելա ընկերացած իմ պարսիկ մատակարարին (մեհմանդարին), մտադրված մեր ճանապարհին այցելել Արտաշիր [Արտաշատ] հին քաղաքը, ինչպես ցանկութիւն ևի հայտնել նախապես։ Ուրախ ևի որ դա գտնվում ևր մեր ճանապարհի վրա, և մեկնելով Յերևանից, մեր ճիրանը դարձրինք դեպի հարավ-արևելք, ձիավարելով լեռնային ու քարքարոտ յերկրից, ուշնշնալով դաշտը մեր աջ կողմը։ Յերեք ժամվան հարատև վերելք ճանապարհից գնալով սկանք բլուրից իջնել և մի ժամից հասանք հին Հայաստանի ամենամեծ քաղաքներից մեկի ընդարձակորեն տարածված ավերակները։ Արտաշիր, ինչպես մի շատ ուրիշ քաղաքներ, յեղել և այդ յերբեմնի յերևելի յերկրի մայրաքաղաքը։

Հասնելով Արտաշիրի ավերակներին, սկսա վոր հողը ծածկել եր հսկա տարածութիւն, և ամեն կողմ անկանոն բլրակներ կային, վորոնք ժամանակի ընթացքում կազմվել եյին ավերակների դեղերի վրա։ Սրանք և յերկար խրամատների շարքերը պատճառ եյին տալիս, թե ես գտնվում եյի մի քաղաքում, վոր վոչ ևս ևր... Այդ տարածութիւնը վորի վրա աչքն եր դեպիրում, ամեն ինչ ցուցց եր տալիս անցյալի հիշատակներ, բայց ուր այլևս չկային վոչ կոթող, վոչ գմբեթ և վոչ ել վորևե բնակարանի պատ. ամեն ինչ խորտակված եր և վոչ մի բան չկար ներկայումս պատճառ տալ նրա գոյութիւնը։ Այստեղ ամեն ինչ վերջացել ևր և ծածկվել հողի թումբերի տակ, — շերիմներ՝ վոչ միայն ժողովրդի, այլ նաև

* Ker Porter, հատ. I. եջ 201—220։

նրանց տների, տաճարների, պալատների, ամեն ինչ թաղված մահանման լռութեան մեջ։ Անհուն յես գտա ինձ շրջապատված հայկական մեծութեյան գերազույն հուշարձաններով, Արտաշիրում՝ յես կանգնեցի նրա գերազմանի վրա։... Մեր մուտքի արևելակողմը, հողը վեր եր բարձրանում [կազմելով] բավական մի բլուր և նրա գագաթի յերկարութեյան պետք և վոր լիներ մի գորավոր ու բարձրադիր միջնաբերդ։

Այն տեղից ուղիղ գծով դեպի արևմուտք յերեք ամբողջ վերստ յերկարութեյամբ տարածվում եյին նախապես հիշատակված անհաղթ բլրակների շարքերը, վորոնք ծածկում եյին քաղաքի աշտարակների ու խրամատների մնացորդները։ Այս գծից ներս կային անթիվ բարձրութիւններ, վորոնց շատերի մակերևույթի վրա յես գտա ցան ու ցրիվ այրած աղյուսի քարի կտորներ և կապույտ ու կանաչ կղմինտրի բեկորներ։



Արտաշատի ավերակների հատակագիծը. (Տես կեր Փորտերի)։

կրնանք։ Զուր վնասակի վրան տաշված մի քար, կամ մի շենքի ակնհայտ հետք, կամ կանոնավոր ճարտարապետական կառուցվածքի շինանյութ։ Բադափի շրջանում ձիավարելով դեպի հարավ-արևմուտք ավելի մոտից քննելով կես անվարձ չմնացի։ Միքանի փոսերից ու դեռևի անկանոն բարձրութիւններից կես վորոշապես կարող եմ զատել բնակարանների կանգնած տեղերը, և այս վայրում կարելի կե տեսնել հակա հաստութիւնամբ մեծ պարիսպների շատ մասերը։ Նրանք շինված են արևով չորացրած աղյուսով, վոր նույնիսկ այնքան դարերից հետո տակավին տեսնվում են կանոնավոր շարված։

Դառնի կոչված վոտքիկ գետը անցնում է այս ավերակների ամայութեան միջից։... Այս գետը իր սկիզբն առնում է լեռներից բղխող չորս արծաթ վտակներից, քաղաքի հյուսիս արևելյան կողմ, և հոլի տակ թաղված պարիսպներից վոչ շատ հեռու միանալով՝ առնում է մի արագ ընթացք միջնաբերդի հյուսիսային սահրոտից և վոլորվելով բարձունքների շուրջը, քաղաքի կերբևնի խրամատից ծռվում է դեպի հարավ և հոսելով դեպի առաջ, շարունակում է իր ուղին դեպի հարավ-արևմուտք և ապա թափվում է Արաքսի մեջ, Զանգուից միքանի մղոն դեպի հարավ։

Իմ դիտակով կես կարող եմ տեսնել բարձունքների շղթաները, վորոնք կազմում են քաղաքի արևմտյան ճակատը, բայց չեմ կարող ասել թե նրանցից ավելի հեռուն ուրիշ ամրութիւններ կա՞յին թե վոչ։ Յես հարցրի իմ մեհմանդարին, թե վոր քան և չենթադրում Արաքսի հովտում վոչ ավելի քան կես ժամվա ճիու ճանապարհ, վորից դառնալ թե պետք և լինի մոտավորապես յեղեք մղոն։ Բայց հաղարդապետ Մոնտիեթն (Major Montieth) հետագայում ինձ վստահացրեց, թե ինքը գտել և վոր այդ հեռավորութեան չափում անգամ եւ։ Հիրավի, քաղաքի մի կողմից կատարված դիտողութիւնից թվում է թե անհնար չեր վոր նրա արվարձանները հակառակ կողմից կարող եին տարածված լինել մինչև դեպի [Արաքսի] յեզերքը, վոր ճշտութեամբ համապատասխանում է Արտաշիրի դիրքի մասին հին հեղինակների ասած տեղեկութեան, անվանելով այն Արտաշատ (Artaxata)։

Արտաշիրի ավերակներից մեկնելիս իմ մեհմանդարը հաղորդեց, թե ուրիշ ավերակներ պարունակող բազմաթիվ ուրիշ հետքեր կան, նորից ամայութիւնից վոչ շատ հեռու, և տակավին ուրիշներ հարևան լեռներում։ Յես ժամանակ չունեցի շնորհվելու գլխավոր ճանապարհից, բայց յեթե վերադառնամ դեպի արևելք իմ ուղևորութիւնից, կես վորոշել եմ այցելել նրա հիշատակած վայրերը։

Մեր ճանապարհը կերկարում եր դեպի հարավ-արևելք, լավ մշակված դաշտի միջից, շրջապատված բազմաթնակ գյուղերով, բայց մեր որվան ճանապարհի վերջավորութեան մենք անցանք անհամեմատ ժայռոտ բլուրների խմբից, վորոնք բարձրանում են դաշտի մեջ, առանց վորևե կապակցութիւն ունենալու շրջակայքի լեռների շղթաների հետ։ Ճանապարհը նենալու շրջակայքի լեռների շղթաների հետ։ Ճանապարհը հարթ չեր,... բայց մենք շարունակեցինք մինչև Դավալու (Devaloo), կերեսուն մղոն հեռու Յերևանի մայրաքաղաքից։

Հաջորդ առավոտ ժամը 9-ին մենք վերսկսանք խորտուկ ճանապարհով, տակավին ուղղված դեպի հարավ-արևելք մոտավորապես չորս ժամ, յերբ հասանք մի նեղ քարավանի կիրճ, բլուրների այն շարքում, վոր տարածվում է դեպի արևմուտք. անցանք այնտեղից և մտանք դաշտ մինչև վոր արևը սկսավ լոյսնել մեր վերևի լեռների վրա։ Այս տարվա հողամասը մշակութեան տեսակետից և իր գյուղերի թվով վատ չեր ինում բլուրների մյուս կողմ գտնվող դաշտերից. ժամը հինգին հասանք մի մեծ գյուղ։ Այդ գիշերը պետք ենք անցկացնինք այս տեղ և իմ մեհմանդարը հրամայեց ավելի վոր հարկ յեղած հյուրասիրութիւնն ընծայվի մեզ։ Տեղի անունն է Յենգաշիլա (Yengashah), Դավալուից վեց աղավ կամ քառասուն վերստ հեռու։ Գտանք վոր գյուղացիները ղրղզացած եին ցորենը կալսելով։ Այս գործողութիւնը կատարվում է չորս կամ հինգ գոմեշով, վորոնք կլոր դառնում են ոտքերի [ցորենի] քանակութեան վրա. այսպես ժողովուրդը

բոլորովին տարված եր իր աշխատանքով, և առնվազն յուրաքանչյուր ժամ հետո կատարելին մեր հրամանը։ Արևելյան սահմանապահ մի յերկրում չեր սպասվում վոր մեր կամայական հրամանի վերաբերմամբ այնքան գեղջկական անտարբերություն հայտնաբերվեր. մենք վորևե կտուրի տակ չմտանք մինչև վոր այլևս լույս չկար և դյուղացիները այլևս չեյին կարող աշխատել։

Հարուստ եյին յերևում այս դյուղացիները հողի արտադրության տեսակետից, և անտարակույս կեա չեյին ենում անհատական աշխատասիրության կողմից, հետևաբար ըղձալի եր հասկանալ, թե հակառակ այս առավելություններին ինչու՞ այնքան ստոր պղքատություն և տիրում նրանց տներից ներս, և այնքան [թշվառ] տեսք ունեին նրանց կանայքը։ Բավական և ասել թե յերբ նրանք դուրս եյին գալիս իրենց տներից՝ նմանում եյին գերեզմանից մեկնող դժվելի ֆանտոմների, ծածկված չադրաների մեջ... Այս հանգամանքը դյուղացի կանայք այնքան էլ չեն ծածկում իրենց յերեսը, ինչպես քաղաքացիները. այնպես վոր պատահություն ունեցա դիտելու շատերի կերպարանքը, բայց չկարողացա մեկ հատ իսկ գտնել վոր ամենափոքր աստիճան գեղեցկության հավակնություն ունենար. նրանք վորոնք անցրել են յերիտասարդությունը, դարձել են ջադուկ... Թվում և թե մարդիկն ավելի խնամք են տանում իրենց հագուստին քան կանայքը, և պահում են իրենց թարմությունը յերևութապես այնքան ժամանակ, վորքան յեվրոպացիները իրենց շատերը։ Դժվար և բացատրել այնքան անհամեմատելի տարբերություն յերկու սեռի կազմվածքի ու տեսքի մեջ, վոր աչքի և ընկնում աշխարհի այս մասում, բայց բարձր դասի կանանց այնքան շուտով թառամելը կարելի յե վերագրել բաղնիքի չափազանց շատ գործածության և մարդանքի սովորական բացակայության, և թերևս առաջին դասի յերիտասարդության կանխագուշակ վոչնչացումը կարելի յե բացատրել նույնպես տաք ջրի ու շոգիի գործածությամբ

և սրա վրա ավելացնելով վատ հագուստ, վատառողջ ու փակ բնակարանը և այս բոլորի հետևանքները։

Նախապես ակնարկել եմ այս բնակարանների վողորմելի նեղքնամասերին, բայց յերբ հեռվից տեսնվում են պետական բնակարանները, այն տպավորությունն են թողնում թե նրանք ընդարձակ են, ոդավետ և հանգստավետ, մի բան վոր յերբեք գոյություն չունի նրանց պարիսպներից ներս։ Վորովհետև պարիսպներ ունին նրանց գյուղերը, նմանապես աշտարակներ չորացրած ցեխից, վորոնք շրջապատում են մի լայն քառակուսի տարածություն։ Բայց յերբ ուղևորը մոտենում և, յերևան և գալիս վոր այս պատվելի պատվարները ավերակ վիճակումն են գտնվում... Սակայն փաստն այն և վոր ներկայի ապահովության դիտակցությունը, սարդարի հզոր զենքի շնորհիվ, — վոր պաշտպանում և նրանց ոտար թշնամու դեմ և մաքրում և ճանապարհներն ավազակներից, — իրական պատճառն և վոր գյուղացիները կան այս պարիսպները լքված են ավերակ վիճակում... Միակ ծառերը, վոր մենք տեսանք այս դաշտում, այս պարիսպների ներս կամ նրանց շուրջն եյին, բայց ընդհանրապես պղտատու ծառեր եյին և այստեղ ու այնտեղ մի քանի խաղող թփեր, վորոնք ծռվել եյին իրենց արմատների վրա։

Այս վողորմելի ոթևանից վախչելով հաջորդ առավոտ շատ կանուխ շարունակեցինք մեր ուղին դեպի հարավ-արևելք, տակավին դաշտերի միջից, յերեք կամ չորս մղոն լավ մշակված տարածության վրա, բայց ապա սկսանք քիչ առ քիչ բարձրանալ բլուրներից, ծածկված այնքան խիտ քարեբով, վոր վոչ մի մշակություն հնարավոր չեր։ Յերբ անցանք այդ տեսից կրկին հարթ դաշտումն եյինք, մինչև հասանք յերբեմնի մի մեծ գյուղի ավերակները, Ուջարի (Oujary) անունով, և վոչ շատ հեռու նմանապես ավերակ ընդարձակ մի քաղվանսարա։ Ապա, մի քիչ բարձրացանք մինչև Խոյիկ (Khoig) [Խոք] գյուղը, ուր պետք եր վոր իջևանեյինք այդ գիշերը։ Աբարտա լեռը գտնվում եր հյուսիս-արևմուտք. հետևելի եր յերբ արևը թաղվից նրա թիկունքում։ Խոք այնպես

Ցերեւանի կառավարչի իրավասութեան ներքո չի գտնուում, ինչպես Դավալու, այնպես ալ նրա ֆերմանը այլեւս ոչ մի չուներ մեզ համար։ Նախորդ տեղում, թեեւ ուշացրին, բայց հնազանդվեցին նրա հրամանին, բայց Խոթում նրա հրամանը ազդեցութեան տակ չուներ, և բերդ գյուղացիները համառորեն ժխտում էին ապաստան և մարդկանց ու ձիերի համար ուտելիք տալը։ Սակայն, անհամեմատելի ապառնալիքից և իմ այն խոստումից հետո, թե պիտի վճարվի մեզ հայթայթված ամեն բանի համար, վերջապես մի վորջի դուռը բացվեց մեր առաջ, լի վատ ոգով, կեղտոտ և ամեն տեսակ պղծութեամբ, վորքան կարելի է յերեւակայել։

Հաջորդ որը մեր ուղին դեպի հարաւ-արեւելք եր, դաշտի մէջից, վորը շուտով կորցրեց բարեբերութեան իր յերեւոյթը, քարոտ և լերկ հողը հաջորդում եր այն լաւ մշակելի հողերին ու արոտավայրերին, վոր նախապես նկարագրել եմ... Ամեն ինչ մեր առջև աւե եր ու անպտուղ, մինչ մեր ձախ կողմը գտնվող բլուրները, ուր բուսականութեան վոչ մի նշան անգամ չեր յերեւում, ունկնդրեցին ծծումբի ու ծխրանի դուրս, չոր ու տխուր։ Աստղ են թե այս լեռները լի են ոսկերով, վորոնք վիտում են այնտեղ մասնավորապես տարման տաք յեղանակին, այնպես վոր վոչ մի ճանապարհորդ չի համարձակվում անցնել այն տեղից...

Գիշերը մենք ոթևանեցինք Նախիջևանում, մի փոքր շրջանի կամ կառավարութեան կենտրոնը, վոր մինչեւ այն ունեն։ Նախապես դա բավական մեծ քաղաք եր, բայց պատերազմի ավերները փոքրացրել են այնն տեսակետից, նույնիսկ Շարդենի ժամանակից իվեր։ Նրա հներկա նվազած շրջագծի շուրջը գտնվում են մեծ տարածութեամբ աշտարակների, մզկիթների, տների և այլ ավերակները, վորոնք յերբեմն նրա պարիսպներից դեպ եչին [գտնվում]։ Նույն խոկ յերբ քաղաքին մոտեցանք, անցնում եչինք բոլորովին կործանված անբնակ տեղերից, մինչեւ ներկա մուտքին հասնելը։ Յերբ Աբբաս մեծը այս նահանգն իր կայսրութեան կցեց, նա գլխավոր քանդողն յեղավ այս քաղաքի. այդ շրջանից

իվեր դա շատ հաճախ զոհվել է պայքարող բանակների։ Յերկու հոյակապ մզկիթների մնացորդները տակավին վեր են բարձրացրած իրենց փառավոր գմբէթները՝ ավերակների վրա, հին մայրաքաղաքի ամայացած թաղամասերից մեկում։ Նրանցից մեկը, վոր կոչվում է Զավիա (Zavia), հետաքրքիր կերպով ազդեցված է կանաչ, կապույտ և վոսկեզոծ կղմինդրով, դարպասների մի գեղեցիկ վոճ, վոր յերեւում է իրրև Արեւելքի մասնավոր ճաշակ։ Հին ամրութիւնների տիրապետող դիրքը և այն ռազմական նշանակը, — վոր տրվել է նրանց հասկանալի [դարձնում] թե ինչու Շահ Աբբասը քանդեց ապա կառուցման, — դեռեւ են տալիս նրա կարեւորութիւնը և դա հակառակութեան այս վայրը։

Պաղտասոս հիշատակում է Naxuana քաղաքը, վոր իր անունով ու դիրքով բոլորովին համապատասխանում է Նախիջևանին, և յես համարում եմ մինչեւ այն վայրը։ Նախապես ալստեղ շինված գինին լավագույնն եր համարվում Հայաստանում, և նրա վորթատունկերը ամենից հարուստն եչին ու ընտրականը։ Բայց այլեւս չեն տեսնվում վորթատունկերի այս առատութիւնը, բացի քաղաքի պարիսպների այս տեսակետը, ուր խաղողի մնացորդները դեռ յերկու յերեք այգուց, ուր խաղողի վորթերը կարելի է գտնել...

Այս փոքրիկ շրջանը կառավարում է մի պարսիկ խան, վոր ապրում է քաղաքում. նրանից շուտով յես ձեռք բերի մի հարմար մեհմանպար, վոխարինելու նրան, վոր ինձ ընկերացել եր Յերեւանից, վորի պարտականութիւնը վերջացել եր խանի իշխանութեան շրջանում։

Հաջորդ առավոտ արեւածագից անմիջապես հետո ճամբա յելա իմ նոր մեհմանպարի հետ, և քաղաքից մոտ մի մղոն հեռու անցանք Նախիջևան գետից, վոր տարվան այս յեղանակին շատ ծանծաղ է, այն գեղեցիկ կամրջի մոտից, վորից անցել եր Շարդենը, յերբ տակավին կանգուն եր։ Դա բաղկանում է տասնմեկ կամարից, և գեղեցկորեն կառուցված աղյուսից ու քարից։ Մեր ճանապարհը անցնում եր մի դաշտի միջից, վոր ջրի պակասութեան պատճառով մասամբ միայն

մշակված եր։ Այս շրջաններուն հոպպործները չորը վոր բավական ջուր են գտնում, այնքան անհրաժեշտ չորկրագործության համար, այն ոռոգարծելու համար միջոց չեն խնայում։ Արդարև, վոչ մի չորկրում չկա այն հակասությունը, վոր այս չորկրի մարդիկն ունեն բաղդատելով նրանց աշխատանքը գաշտում, իրենց տան ներքին կյանքի հետ։ Առաջին պարագայում նրանք ամբողջ գործունեություն են ու աշխատանք, և մյուսում գրվելի անհոգություն։ Նրանց աշխատանքի ընդհանուր արտադրանքն են բամբակ, գարի և կտավատ։ Վերջինիցս նրանք հանում են ձեթ, վոր մասամբ իրենք են գործածում և մասամբ վաճառում են։

Չորը շարունակում եյինք մեր ուղին, նկատելի շատ հատաքրքիր մի ժայռ, վոր հարավ-արևելակողմ բարձրանում եր բլուրների միջից, վեց կամ յոթը հարյուր վոտք բարձրությամբ և կատարելապես նման շաքարի գլխի ձևին։... Նրա մոտ գտնվում են բավական մեծ չորկու գյուղ։ Մեկը կոչվում է Կեստնուզ (Kestnooz), և մյուսը, վոր մի քիչ մյուսի չափի կողմն է գտնվում, կոչվում է Յամադին (Jamadeen)։ Մեր ճանապարհը գնալ այս ժայռն եր գնում, չոր ու ցամաք մի հողից։ Հետզհետե առաջանալով գաշտը թագնվից բլուրների մեջ և շուռով մենք մի նեղ ձորում եյինք, վոր աստիճանաբար վերածվեց մի ժայռոտ կիրճի, ուղղահայաց զառիվայրով, վորի ստորոտում հոսում է մի գետ, վորի ջուրը գարնան, կամ անձրևային չեզոնակից հետո ուռճանում է անցանելի բարձրության, բայց այժմ մի վտակ եր, վոր կարկաչում եր ժայռերի միջից, չորը մենք ճամբորդում եյինք նրա կողքից, խորհելով կարմիր ու կանաչ ծերանաբարի ծաղրանիզ գեղեցկության մասին, վոր կիրճի ուղղահայաց բարձր գահավանդն և կազմում։ Մոտ մի մղոն ճեմալարեցինք նրանց միջից և ապա չեկանք մի վոտքրիկ գաշտ, վոր շրջապատված եր լեռներով։ Դեպի արևմուտք մի հսկա անդունդի միջից, չես հատակորեն տեսնում եյի Արաքսի վոլորումները և նրա ափում Հին Ջուղայի (Eski Julpha) ավերակները։ Այդ քաղաքը նման չեր Նախիջևանին, վոր կոդոպատած ու պլոկած

եյին հաղթական Շահ Աբբասի բանակները, այլ հիմնահատակ կործանել և նրա վերապրող բնակիչներին փոխադրել եյին Սպահան, հաղթականի մայրաքաղաքը, — ուր նրանք կազմեցին այդ քաղաքի մի արվարձանը, վոր տակավին կրում է Ջուղա (Julpha) անունը։ Ջանազան տեղեկություններ կարդում եյինք այդ ժողովրդի մասին, վոր թեև չորկու չեզերքում ապրում են տակավին, բայց գեռ չորկրում ցրված են տասնյակ գյուղեր, վորոնք ցույց են տալիս նրա նախկին կարևորությունը։ Մի կամուրջի հիմնարանները տակավին կարելի յե տեսնել, վոր հավանորեն միացնում եր Ոզոստոսը հրամայեց կառուցել Արաքսի վրա այս մեծ ձակայքում։ Այս հոյակապ գետը հոսում է կոր ուղղությամբ դրեթե մանգաղաձև, արևմուտքի իր ծագումից մինչև այն վայրը ուր միանում է Կուբրին արևելքում։...

Մի քիչ ձիավարելուց հետո լեռնագաշտից իջանք գետի չեզերքը։ Մենք պիտի անցնեյինք այն կետից, ուր գետը ծռվում է դեպի արևելք։ Գտանք մի լաստանման նավակ, շեղանկյունաձև, վոր մեզ պիտի տաներ մյուս ափը, Ադրբեջանական (Azerbijan), հին Մարաստանի մի մասը, Փարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի չորկիրը։ Արաքսի նավարկելի վայրը հիսուն յարդա լայնությունից ավելի չեր, բայց ջուրը արագընթաց եր և նավազ գժվարություն չէր ներկայացնում մեր կենդանիներին նավի վրա հանելիս։ Ձերը բոլորս նավի վրա եյինք, նավը հրեցին դեպի ներս և նավավարները սկսան դյուրությամբ թիավարել մինչև հասանք հոսանքին, վորտեղ մենք քշվեցինք բավական դեպի վար։ Բայց նավավարները ղգուշ եյին և բավական աշխատանք թափելով մեզ տարին մինչև մի ծանծաղ վայր։ Նրանցից մեկը բռնեց ցատկեցին կելով գետի մեջ՝ կապեց նավը, ձիերը նմանապես ցատկեցին ջրի մեջ, և ուշադրությամբ տարվեցին չեզերքը, և այսպես նավը բավական թեթևանալով, հնարավոր չեղավ մոտենալ ափին և դուրս չելնել։ Նավավարները վերադարձան այն կետում վոր մենք եյինք չեկել՝ բավական տեղ նավը քաշելով դեպի վեր գետի հարավակողմը և հանդիպակաց չեզերքի այն կետից, ուր մենք նստել եյինք, բավական վե-

բնել։ Գնաց այստեղ հոսում է դեպի արևելք... Ջմեռը կերբեմն Արաքսը այնքան սառում է, որ ամբողջ կարավաններ անցնում են նրա վրայից։

Գնան անցնելուց հետո, յերեք մղոն տարածությամբ մի դաշտից յեկանք մի բարձունքի առորոտը, որ սկսանք բարձրանալ. անցնելով Սուջայի (Souja) ավերակներից չորս մղոն այն կողմ, վերսին սկսանք բարձրանալ և նրա գագաթին տեսանք տարածված բազմաթիվ մեծ պյուղեր։ կանգ առինք Գարզարում (Gurgur), ամենամոտ պյուղը։ գիշերը այնքան խիստ ցուրտ եր, որ մենք ուրախ եյինք մի ապաստան գտած լինելու համար, թեև մի փոքրիկ խեղճ հյուղակում։

Հաջորդ որը մոտ յերեք մղոն մեր ճանապարհը դեպի արևմուտք եր, որից հետո գարձանք կրկին մեր հին ուղղության, դեպի հարավ-արևելք։ Ճանապարհի ընթացքում անցանք մի քարքարոտ հովիտից և մտանք մի ընդարձակ դաշտ՝ չոր ու ամայի և շրջապատված մի շարք բլուրներով, վորոնց մութ կատարների վրեն բարձրանում եյին հետաքր լեռներ, ծածկված ձյունով։ Մեր ինչանը պիտի լիներ Մարանդ, վորին ուժ մղոն մնացած եր նակատեցի բավական հետ մի փոսոտոտ քարքարանարա ճամբու վրա։ Իմ առաջնորդն ասաց, թե դա մեծ Շահ Աբբասի կառուցած բազմաթիվ նման շենքերից մեկն եր։ Բայց մոտենալով դառ կատարելապես լրված, նման այն քաղաքներին, վոր նրա սուրը ավերակ եր դարձրել։ Ամբողջ կառուցվածքը լավագույն վորմնադրության գործ եր և գանազան գույնով կղմինտրներով կատրները, վորոնք իր զարդն եյին յեղել, անհետացել եյին մեծ դարբասի առաջ։ Հետևներս թափառող առևտրի այս ազատատանից սկսած մինչև մեր ինչանը յերկիրը ավելի հաճելի մի տեսք ուներ. առատ բուսականության և մի բարեր հովիտ, վոր տարածվում և բլուրների միջև։ Այս հարուստ հովիտը թեև հագիվ յերեք մղոն լայնություն ուներ, յերևում եր մղոնից ավելի յերկար և, և ուներ աշխատասեր ու Ջանադիր մի բնակչության բոլոր նշանները։ Գյուղեր են

յերևում ծառերի ու պարտեզների մեջ, վորոնք արտադրում են ախորժահամ պտուղ։ Մարդիկ մի տեսակ հանգստավետության յերևույթն ունեին, մի բան վոր յես չեյի տեսած վրաստանից մեկնելուց իվեր։

Մարանդ քաղաքը, վոր գտնվում և հովիտի գրեթե կենտրոնում, մեծ ու բարգավաճ մի վայր եր, վերջերս մի բերդ և կառուցվել այնտեղ, վոր գտնվում և քաղաքի մոտ մի բարձունքի վրա։ Պատմիսոսը Մարտատանի քաղաքների ցուցակում հիշատակում և այս անունը, և համապատասխան միևնույն տեղն և։ Հովիտը նպաստավոր կերպով ոժտված և բնության Թյունից, և անտարակույս այնտեղ միշտ հարմար և յեղել բնակության համար։ Ասիայի մասին հների աշխարհագրական անունները հաճախ համեմատելով նկատել եմ, վոր յերկրորդական նշանակության ունեցող շատ քաղաքները պահել են իրենց նախնական անունը։...

Շարդենը շատ հին ծագում և վերագրում Մարանդին և ասում և թե այնտեղ և թաղված Նոյը։ Բնիկները կորցրել են ավանդությունը։ Բայց հանդիպեցի յես միրանի հայերի, վորոնք նույնն եյին պատմում։ Նրանք ասում են, թե այս այն վայրն և ուր նահապետը [Նոյը] վորթատունկ անկեց և պնդում են թե այստեղ և նրա կնոջ գերեզմանը, թե նրա անունը Մարիան եր (Marianne) և դրա հետևանքով կոչվում և Մարանդ։

Հաջորդ առավոտ ժամը տասին մեկնելով քաղաքից և անցնելով հովիտից դեպի հարավ-արևելյան լեռները, յերկու ժամ չափ սկսանք աստիճանաբար բարձրանալ մինչև վոր յեկանք մի նեղ կրճի մուտքը։ Յետ նայեցի դեպի գեղեցիկ հովիտը. թեև չեյի կարող տեսնել իր առատպտղական վորթատունկերը կամ նռաձիների անտառները, [սակայն] բնության կանաչ անտառապատ հագուստը, վոր ամենուրեք պատկերում եր տեսարանը, ճանապարհորդին դրախտի ապավորություն եր թողնում։ Մոտավորապես յերկու ժամ անցանք վոլորապտույտ կիրճից դեպի հարավ - արևելք և նրա վերջավորության մոտ մի հովիտ, վոր նման չեր Մարանդին, և աշխատավորների ցան-

ցառ հյուղակները տարածված էին բլուրների կողքին, աննըշան մշակութիյան փոքրիկ կտորների մոտ, որոնք դժվար աշխատանքի կարոտ էին արդյունք ստանալու համար այս խոպան հողից։ Մեր ճանապարհի ընթացքում այս ցանցառ կանաչութիյամբ հովտում և մոտավորապես տասնչրեք մղոն հետու Մարանդից անցանք մի այլ քարվանսարայի ավերակներից։ Այս չերկրորդ լքված շենքը գտնվում է բավական մեծ մի ձորակի մուտքին, որտեղից հոսում է արագընթաց Տուրիան (Tourian). որի լայն ու խոր հունը ցույց է տալիս թե ապրիլ ու մայիս ամիսներում որքան հսկա քանակութիյամբ հորդում է դեպը։ Այստեղ կան ագի հանքեր, որ բնիկները փորում են և ապ են հայթայթում Թավրիզ քաղաքին ու շրջակայքին։

Տուրիանի ահարկու ձորը բացվում է մի հրանալի հովիտ մեջ, ձգվելով ամեն կողմից անսահման տարածութիյամբ։ Վոտանք անվանում են Զալդիրանի (Kardiran) դաշտ, որ նշանավոր է Շահ Իսմայիլի պարտութիյամբ Սուլթան Սելիմի կողմից 1514 թ. (Հիջրա 920)։ Նրա արևելյան ծայրում գտնվում է Թավրիզ, նահանգի մայրաքաղաքը։ Բայց տակավին շատ հետու եր այդ գիշերը [այնտեղ] հասնելու համար. գիշերվան մեր ոթևանն եր Սոֆիան (Sofian) գյուղը։ Այս փոքրիկ ավանն էլ ունի իր համբավը, լինելով վայրը այն տոկալի ճակատամարտին, որ 1585 թ. տեղի ունեցավ Թուրքերի ու պարսիկների միջև, յերբ Համզա Միրզան, պարսկական բանակի հրամանատարը, հաղթանակ տարավ Թուրքերի դեմ։

Սոֆիանից Թավրիզ քանչորս մղոն է. բավական լավ ճանապարհով դեպի հարավ-արևելք։ Կհասրվան մոտ անցանք բավական մեծ մի գյուղից, մեր աջ կողմը, և շուտով անցանք մի փոքր գետից։ Ձորս մղոն այն կողմ հասանք Աջի (Augi) գետի վրա գիղեցիկ մի կամուրջի, որ քայքայված վիճակումն եր գտնվում։ Այս գետի ջուրը կատարելապես աղի է։ Նրա ափերից մի քիչ այն կողմ յես տեսա Թավրիզի աշտարակները ու մինարեթները, որոնք բարձրանում էին վերև հովիտի արևելյան ծայրը բլուրների միջից։ Մայրամուտից քիչ առաջ հասանք քաղաքի դռներին, մի ժամվան արագ ձիավարութիյունից հետո։ Իմ ժամանումին ինձ դիմավորեցին իմ սեփական արի հայրենակիցները մի փոքրիկ խումբ, որ այնտեղ են գտնվում պահպանելու իշխանի քանակը յեվրոպական մեթոտներով կազմակերպելու համար։



Պարսիկ սարբազ, Արբաս Միրզայի զինվորներից, (նկար կեր Փորտրրի)։

Է. ՆՈՐ ՋՈՒԼԱ*

Անցանք կամուրջից և մտանք Ջուղա։ Վոչինչ կարելի չե ասել ավելի արտահայտիչ կերպով այս յերբևիցե բազմաբնակ վաճառանոցի (mart) վիճակի մասին, քան այն վոր նրա ճակատագիրը Սպահանում իմ տեսածի մի մանրանկարն ե։ Նրա տասը հազար բնակչությունը վերածված և յերեք-հարյուր թշվառական ընտանիքի, սպասելով տարից տարի՝ թե պատվի և թե թվի տեսակետից։ Նրա տասներեք յեկեղեցիները, — վորոնց շքեղությունն ու հարստությունը դրդում էր իրենց մահմեդական դրացիներին նախանձը, — վերածվել են միայն յերկուսի և նրանք էլ մութ, աղտոտ ու սխրատեսիլ. նրանց խորաններին տորին և նույնիսկ պատուհանն զարդարանքները շատ լավ են հարմարվում այն ընդհանուր աղտոտ թշվառությանն հետ, վոր տիրապետում է այս անհետացող զազրության ամբողջ շրջանի վրա։

Ջուղայի արվարձանը իր գոյությունը պարտական է Շահ Աբբասին, վոր մի խումբ հայերի վտիտ իրենց յերկրից և հիմնեց այս զազրությը։ Հայաստանի գլխավոր մասը յերկար ժամանակից ի վեր գտնվում էր թուրքերի տիրապետության տակ, և պարսկական մի սպանիսի ու սուր թանի մի մղվող պատերազմների ընթացքում [յերկիրը] ահռելիորեն տուժից յերկու պայքարող պետությունների միջև։ Աբբասը քանդեց նրա շատ քաղաքները և իր նախորդների յեղանակով նրանց բնակիչներին փոխադրեց իր սեփական յերկիրը, բայց վոչ թե հին բարբարոսական ծրագրով տեղահանել նրանց մահմեդականացնելու և սրկացնելու համար։ Նա հասկացավ հայերի առևտրական տաղանդը և ընդունելով այն ոգուտները, վոր Պարսկաստանը կարող եր ստանալ, նա քաղաքներ ու գյուղեր հիմնեց իր նոր հպատակների համար, և յերկից նրանց կայսրության [պանազան] մասերում։ Արաքսի վրա գտնվող Ջուղա (Julfa) քաղաքի (վորի ավերակները չեն հուշագրած իմ այս հատորի սկզբնավորության), բնակիչները մասնավորապես պրավել եին իր բարեացակամությունը։ Յերբ նրա բանակը մոտեցել եր, նրանք վտարել եին թրքական պահակազորը և բացել եին իրենց դռները նրան ընդունելու համար։ Շաղթականը [Շահ Աբբասը] նրանց հետ վարվեց իբրև բարեկամների, բայց չուզեց այսպիսի արժեքավոր հպատակներին թողնել վոր նորից հարստացնեին իր թշնամին։ Հետևաբար, նա կործանեց քաղաքը, և բնակիչներին բերավ Պարսկաստան, ուր հատուկ նրանց այս մեծ արվարձանում, անմոռանալով այն Ջուղա, իբրև հիշատակ իր հաղթանակի, իր պետության, իր իմաստության և նրանց ծագումին։ Նա շնորհեց նրանց և նրանց բոլոր յեկեղեցիներին իր նոր հպատակներին կրոնի կատարյալ ազատություն, արտոնություն շինելու յեկեղեցիներ, և վորպես վաճառականների, ավել նրանց արժեքավոր առանձնաշնորհներ։ Այս պատահից մոտ 1603 թվին և մի դարից ավելի պատվի շարունակից պարզանալ արվեստի, արդյունաբերության ու վաճառականության մեջ։ Քաղաքը քայքայել առաջացավ այս բարեկամության հետ, և բնավ կասկած չկա վոր նույն այս աշխատասեր, հարուստ, նախաձեռնող ու ազատական հայերին և պարսկական Սպահանը իր առևտրական մեծ հատկանիշով, և հետևաբար իր հարստության, շքեղության ու կրկնապատկված ուժով։ Քանի և վոր այնտեղ ուր առևտուրն և ավելի ծաղկում, այնտեղ յերկիրը ավելի բազմամարդ և, ավելի հարուստ, ավելի յերջանիկ և ամենամեծ ազնվությունն ունի ազգերի վրա։ Բայց յերբ առևտուրը չի ծաղկում, այնտեղ ուր շահն ապահովված չի արտաքինին ու վաճառականին, այն ժամանակ վոչ մի բռնակալական կառավարություն չի կարող լինել հարուստ և հետևաբար զորավոր, վոր չի հա-

* Ker Porter, Հատ I. եջ 420—431։

տառում որինքները՝ պաշտպանելու համար իր հպատակի առաջվածքը, նույնիսկ իր [վոտնձգության] դեմ։ Աբբաս մեծը այսպես վարվեց՝ ժառնավոր արատներ շնորհելով, և ուժասիա արդյունքը բացահայտ եր։

Այդ ժամանակից մինչև Հուսեյին Շահի վողբալի ապիկարության, ավղանական արշավանքի շրջանին, պատճառ եղավ լքելու նրանց [հայերին] և իրեն, — այս վաճառականները առաջնակարգ ոգուտ եին տալիս պետության։ Հիրավի, ավղաններն առաջնորդ Մահմուդի Սպահանի կերկարատև ու ահռելի պաշարման ամբողջ շրջանում, այս մանավոր դաղութի [Ջուղայի] ընթացքը վայել եր մի քաջ ու ազնիվ ժողովրդի, և սա թելադրում և մեզ խորհել թե, չեթե այս դժբախտ պարսիկ միապետը իր մայրաքաղաքի պաշտպանությունը վստահեր այս չերախտապետ ու անվեհեր մարդկանց, ամենահավանականն և, վոր Սպահանը պիտի վերկվեր, և վոչ մեկ ավղան պիտի վերադառնար իր կերկիրը պատմելու իր սիրոջ պարտությունը։ Բայց թագավորի պալատը լի եր ապիկարությամբ ու դավաճանությամբ. նրա ամեն մի քայլը մատնվեց։ Բազաքի ժողովուրդը մատնված եր սովի կամ սուրի, և Ջուղայի արվարձանը լքված եր՝ իր բոլոր բնակիչներովը առաջին ավարը դառնալու ավղանների արյունոտ կողոպտիչ ձեռքին։ Մտնը, այն ժամանակ, սպանդից աջ ու ձախ, և վորովհետև նման հարձակումների դեմ ամենատպավինը ու ամենապատվականն են, վոր կուրծք են տալիս, քիչեր վերապրեցին՝ պահպանելու համար Ջուղայի հայ վաճառականի հին լավ անունը։ Իզուր փնտրում ենք այս ավերակների մեջ մի քաղաքի ու իր ժողովրդի վաճառականության ճշմարիտ վոգու նման մի բան. խարիսխյան վողորմելի մի սկզբունք, չափից ավելի չերևում և ամեն մի գործառնության մեջ, և վորովհետև մի մարդ կարող և խարել միայն մի ապուշի, այն էլ մի անգամ, իր պատիվը ու խիղճը վաճառող թշվառականը շուտով դատապարտվում և սովամահության, և կամ չեթե այդպիսի սուր միջ-ցներով դրամ և դիզում, նա ծախսում և անարժեքաբար, ինչպես շահած

եր անարժեքաբար։ Բայց պարսկահայի պատվավորության այս փոփոխությունը Սեֆիվի տան անկումից ի վեր պետք չեր միայն վերագրել ավղանների կողմից նրանց կրած տապանքին ու նվազումին։ Հաջորդ բնիկ իշխաններից վոչ վոք չի փորձել այս կենսունակ հպատակները վերահաստատել իրենց նախկին ստեղծանին կայսրության մեջ, և իշխանության ներկայացուցիչները շատ հաճախ այդ զանցառության չարիքը ավելացնում են կեղեքումով։ Այս տեսակ վերակազմման ճանապարհը ու միջոցը և նրա լայնորեն վարձատրող հետևանքը՝ կարելի չե հեշտությամբ սովորել Շահ Աբբասի վերաբերմունքից, երբ նա տեղափոխեց այս աշխատասեր ժողովուրդը իր իշխանության մեջ։ Վոմանք, վոր խստասուն անձնատվությամբ ազատվել եին ավարառության, գտել եին մի միջոց շարունակելու համար իրենց արդյունաբերությունն ու առևտուրը, բայց նրանք վոր կորցրել եին իրենց դրամագլուխը կամ ավելին պետք ունեին ընդարձակելու իրենց գործերը, ապրիսխներին առաձեռն ու քաղաքագետ միապետը, [Շահ Աբբասը], բաց տվեց իր սեփական գանձը, և լայնորեն փոխ տվավ նրանց, չափավոր տոկոսով այնքան դումար, վորքան անհրաժեշտ եր գործառնությունները։ Այսպես, գտնելով վստահություն, ժրաջանկություն ու կերաշխավորություն՝ վայելելու համար իրենց վաստակը, նրանց հարգության հետ զուգընթաց եր նաև գործառնությունների պատվավորությունը, և Աբբաս Մեծի ժամանակ հայ վաճառականը նկատվում եր վորպես ամենից կարող գործակատարը Ասիայի ու Յեվրոպայի մեջ, հաղվագյուտ ապրանքների և նրանց արժեքը նկատող վոսկու փոխանակության հաստատ։ Կարճ խոսքով նա [հայը] արդար կերպով քաղաքակիրթ ազգերի հասարակության մեջ գնահատվում եր վորպես ամենապատվավոր նկարագիր։ Ամեն կերպով նա այն եր ինչպիսի վենետիկի ու Ջենովայի վաճառականներն եին, և այժմ Անգլիայի վաճառականներն են, այսինքն պարոնը (the gentleman)։ Բայց Ջուղայի ամայացումից և նրա հա-

վաստրիմ պաշտպաններուն վերեզմանի մոռացումէն հարյուր տարի հետո, այնքան ջնջված են այս հիշատակները, որ Շահ Աբբասի ազգեցիկ գործակատարներուն արհամարված հաջորդները [հայերը] չեն համարձակվում աչք բարձրացնել՝ հուսալով որ ուշադրության արժանանան նրա [Շահ Աբբասի] արքայական հաջորդներից, որոնք զուրկ պիտության լույսից, դաղափար չունեն մի հանգի մնացորդ արժեքի մասին, որ թեև ծածկված ավերակով ու ապրով, կարող է միայն այսուհետև բացվել ազատական ձեռքով ու վստահության վոգով, ցույց տալու նրա յերակներում տակավին մնացած վոսկին: Բայց, ընդհակառակն Պարսկաստանի հայերը ամեն տեղ խեղճ են, կասկածելի ու արհամարված ցեղ. և արհամարանքն առաջ և բերում խուսափման խարեություններ. մարդկանց նկարագիրն ընկել և իրենց հարստության հետ, ինչպես նաև հարդանքը հասարակաց մտքում: Բացի առևտրական կյանքում խարեբա լինելուց, այս յերբեմնի հարգելի ժողովուրդը ընկել և ամենաստորին կերպով արբեցողության ու վարկրամոլության զղվելի մոլորությունների մեջ, նույնիսկ նրանց կանայքը մասնակցում են այս նողկալի չափազանցություններին: Բայց, ավելի վատ մի պիծ պետք է հիշատակել: Փոխանակ կանացի անարատության այն նուրբ զգացման, որ մղել եր Ջուղայի մայրերին մեռնելու իրենց կույս աղջիկների կրծքի վրա և չտեսնելու նրանց վոտնակոխումը ավազան հալածականների կողմից, նեղկայի ազատ մայրերը, որոնց մենք հանդիպում ենք Պարսկաստանի քաղաքների հայկական արվարձաններում, նախընտրում են իրենց աղջիկներին՝ անկումի համար, և ծախում են նրանց տասնյակով տասնյակներ ապրևկան մատաղ հասակում, այն մարդուն, որ վճարում է դինը: Այս տեսակետով, նրանք սպասում են ամեն մի յեվրոպացու ժամանման, և անհրաժեշտ տեղեկություններ հավաքելուց հետո՝ նրա քաղկի հարստության և նրա յերկրում մնալու ժամանակի մասին, քիչ որ և անցնում յերբ մայրերը մոտենում են նրան, առաջարկելով իրենց աղջիկներից մեկին: Յեթե

պատահի վոր նա ըստ Արևելքի սովորության, իր համաձայնությունը տա և ընտրե մի աղջիկ, սակարկությունը կատարվում է ծնողաց կողմից: Նախ, նրանք պահանջում են տալիք ծառայության գինը. հետո թե պաշտպանը [ինչ պիտի տրամադրե հագուստի և ալյուի համար, յերբ նա ապրում է նրա հետ. թե [ինչ գումար պիտի թողնի նրան, յերբ հեռանա յերկրից, վորպեսզի նա կարողանա մի հարգելի ամուսին գտնել իր սեփական ժողովուրդից, յեթե նա տրամադիր լինի ամուսնանալ:

Այս ժամանակավոր կենակցությունից ծնած զավակները բազմաթիվ են ամբողջ յերկրում, և վոչքան կացության մեջ, Հայրը շատ քիչ անգամ մինչև ուներ նրանցից մեկը կամ յերկուսը տեղափոխել Յեվրոպա, ուր թեև որինավորության իրավունքը ժխտվում է նրանց, սակայն առնվազն նրանք պատվավոր կերպով են մեծանում: Բայց, շատ հաճախ նրանց ծնունդ տվող մարդը վոչ մինչև ուներ և վոչ էլ տրամադրություն տեղափոխելու մի կապակցության պատճառը, վոր նկատում և վորպես մի զարդ ժամանցի դրած: Այսպես, այս դժբախտ հայրերը, վճարելուց հետո իրենց պարտքն այն կանանց, վորոնց մասին այլևս չպիտի լսեն, հեռանում են յերկրից և լքում այն յերեխաներին ամենաթշվառ ու նվաստացուցիչ մի ճակատագրի, մինչ նրանց վրա պիտի դուրս դուրային և նրանցով պիտի հպարտանային, յեթե յերբեք նրանք որինավոր ամուսնության ծնունդ լինեին: Յերբ աղջիկները վաճառելի ապրանք են իրենց մայրերի կողմից, նրանք վաճառվում են նման պատկության, այն մարդուն վոր տալիս է նրանց այդ թշվառ ապրուստը. և աղաները շատ հաճախ ավելի անպատվաբեր ճակատագրի դեմ են դառնում...

Այսպիսի պարագաներում պետք է ասած վոր կղերականության պիտի միջամտեր, թե՛ արգելելու համար այդ տեսակ ապօրինի կապակցությունը և թե, յերբ կատարված իրողություն կար, միջոցներ ձեռք առներ, վորպեսզի արդարություն լիներ անմեղ զավակին: Բայց նրանք շատ

հաճախ անհոգությունից ավելի վատթար են, և այս կամ այն կերպ նրանք ավելի քաջալերում են այս ընթացքը, այս ապօրեն կապակցությունից առանալիք վարձքի սիրուն, որ չեմ հասկանում թե ինչպես են առանում։ [Ապա հեղինակը դառապարտում է կղերականներին և ասում է թե այս խայտառակ ընթացքը, մանավանդ մանուկների լքումը իրենց հայրերի կողմից, առաջացրած է արհամարանք մահմեդական հոգևորականների կողմից քրիստոնյաների հանդեպ]։

Ներկա պարսկահայը անհատապես, թե՛ կին և թե՛ տղամարդ, չունեն այն արժանավորությունն ու քաղցրությունը, ինչ որ հատկանշում է իրենց պարսիկ հարևանը։ Վոչ էլ նրանք ցուցադրում են կերպարանքի այն բաց պայծառությունը, որ ունեն չերքեզները, վոչ էլ այն քաջ, խոհուն կեցվածքը, որ հատկորոշիչ է զարձնում վրացուն։ Այսպես զանազանությունը վորոշիորեն մարել և նրանց վոգին, և հետևաբար նրանց ինքնատորացումը խաթարել և նրանց ձևն ու կերպարանքը. նրանք չեն կարող լինել այն ցեղից, վորի նախնիքը Շահ Աբբասի հետ սերտ եղին նստում։

Տղամարդկանց հագուստը սովորաբար պարսիկների նման է։ Իսկ կանայք բավական տարբերվում են մահմեդական տիկինների հագուստից։ Հայերը վաթաթում են իրենց գլուխը զանազան գույնի մետաքս թաշկինակով, որ յուրաքանչյուր կողմից ազատ վար է ձգվում. այս տեսակ գլխանոցի տակից կապում են սպիտակ քաթանից մի ուրիշ թաշկինակ, որ անցնում է ականջների ետևից կզակի վրայով և կախվում կրծքի վրա։ Յերբ նրանք դուրս են գնում, յերեսին այս կտորը վեր են քաշում բերնի վրա, այնպես որ տեսնվում է միայն նրանց աչքը և շատ հաճախ նրանց փայլող քիթը։ Մի տեսակ բաճկոնակ (jacket) հասնում է գրեթե նրանց ծնկին, տարբեր կտորներից շինված և զարդարված ժապավենով ու ասեղնագործով, համաձայն ամուսնու հարստության։ Ծաղկյա թավիշից նեղ տաբատը, նույնպես ժապավինված և մեջքին մի նուրբ շալ՝ ամբողջացնում են հայ տիկնոջ հագուստը։ Բայց, յերբեմն պառավ կանայքն ու յեղբայրները կրում են հին ազգային գոտի, այսինքն մի լայն մեջքի կաշ զարդարված և կոճկված առջևի կողմից ձվաձև արծաթի կտորով, վոր շատ խոշոր է ու ծանր և բարդորեն բարձրաքանդակված։ Ձախրայի կտորը, վորով ծածկվում են յերբ դուրս են գնում, սպիտակ է։ Ամառվան ընթացքում նրանք վոտորորիկ են, ձմեռը՝ հագնում են գուլպա։ Նրանք քիչ անգամ ընդօրինակում են պարսիկ տիկինների կոշիկը, վոր գեղին է, հեսսական (Hessian) ձևով և հասնում է սրունքի կեսին։ Յերկտեղ մանուկները հագնում են իրենց ծնողաց նման, միայն այն տարբերությամբ, վոր աղջիկների գոգնոցները զարդարված են դուգաճի ու թումանի շարքերով։

Հայերի հարսանիքը արբեցության մի տեսարան է։ Նրանց վորկրամոլությունը անչափ է, և խոզենին նրանց ամենասիրելի ուտելիքը լինելով, նրանց գյուղերը վխտում են խոզերի հոտերով։ Բայց բոլոր արարողությունները՝ ուրախության թե սրամության, առիթ են տալիս նրանց ուտելու և խմելու։ Պահոց շաբաթների ընթացքում այցելում են իրենց ազգականների ու բարեկամների շիրիմները։ Յեվ վերջապես, նրանց հավատալիքներից մեկն է թե, «մեռելոցների հոգիները հանգչում են մի տեղ յերկնքի կենարանների շրջանում մինչև պատահանի որը», վերապրողները խունկ են ծխում և մոմ են վառում գերեզմանների վրա, աղոթելով նրանց խաղաղ հանգստի համար։ Վրացի ու հայ ննջեցյալների գերեզմանաքարի գլխի կողմը քարի մեջ փորված մի ծակ կա, ուր այրում են այս անուշահոտությունը։ Այս հուղարկավորական հիշատակությունը տևում է մինչև Համբարձումը, յերբ կրոնական արարողությունների շրջանը վերջանում է մի առատ խնճույքով։ Գինին հոսում է ջրի նման, նվիրված ննջեցյալի հիշատակին, մինչ խրախճանքի պատճառները խառնվում են նրանց լացուկոծի հետ։ Կանայքը միշտ մասնակից են լինում բազոսի այս տրակտոն գինարբուքին։ ... [Այստեղ հեղինակը խոսում է հայերի կրոնական հավատալիքների և մասնավորապես մի

քնութեան վարպետութեան մասին, որի թարգմանութիւնը ավելորդ ենք համարում]։

Յետ լայնորեն խոսել եմ այս ժողովուրդի, թե կղերականների և թե աշխարհականների ներկա կացութեան մասին, և ասել եմ թե բնիկների աչքին վրքան կորել և նրանց պատիվը։ Թեև այս նկատողութիւնը ընդհանրապես և, սակայն, պետք չէ ընդունել բացարձակապես, կայսրութեան մեջ այս ժողովրդից կան բարձրերին դնահատված նկարագրի տեր որոշ թվով մարդիկ, թե կղերական և թե աշխարհական դասին պատկանող։ Հիրավի, վերջիններից շատերը, նույնիսկ ամենախոնարհ վիճակի տեր, փոխանակ հետևելու իրենց միևնույն արյունը ունեցող ստորնացած ցեղակիցների խաբեբայութեան ու կեղծիքին, որոնց ապրի փոփոխած բախտը կրում են համբերատարութեամբ, և լրջորեն ու համառորեն հետապնդում են իրենց աշխատանքները։

Ջուղայի սրբավայրի վանահայրը ինձ ընդունեց հարդանքով և քաղաքավարութեամբ. ինչ որ ցես ապատում եւ նրան [ուղղված] պատիւորքի նամակից։ Բայց, իմ ընդունելութեան վայրը դանվում եր այն փլփլած պատերի մեջ, որ միաժամանակ դաղութի պատկերն եր տալիս, ուր մի քանի տխրատիպ խոսքեր միայն խոսակցութեան առիթ կային ընծայում, որ բոլորովին տարբեր եր, երբ իմ մտքում պատկերանում կային Եջմիածնի ալևոր գմբեթները, ուղիղ ու պայծառ, Արարատ լեռան վեհ առանձնութեան մեջ։ Այս մգլոտած դեղերի առջև ցես վերստին հնծա իմ ձին ու սկսք մտածել մայրեկի ավերակ Ջուղայի պատկառելի վանահոր։

Այն ֆերաշներ (feroshes) կամ կառավարութեան ծառաներ, որոնք նշանակված կային սպասարկելու ինձ, տարբեր ճանապարհից ինձ տարին իմ բնակարանը, առաջնորդեցով Սպահան քաղաքի ամենահետաքրքիր մասից, որ տակավին ավան ավերումներից ետում եր քարուքանդ վիճակում։



Սպիտակյան պարսկուհի

(Ըստ Ker Porter-ի)

Կ. 793-ի դիմաց

Ա. ԹԱՎՐԻԶԻՑ ՅԵՐԵՎԱՆ *

Հոկտեմբերի 19. 1819 թ. — Ատրպատականի մայրաքաղաքի իմ բարեկամներին մնաք բարով ասելուց և Աբբաս Միրզայից ընդունվելուց հետո, այն ծրարը, որ նորին վեհափառությունը [Շահը] և նա պատիվ եկին արել ինձ տանելու իմ վեհապետին, [Ռուսաստանի ցարին], վերջին հրաժեշտ առի այս շնորհալի իշխանից...

Մեկնելով Թավրիզից առավոտը ժամը ութին, մենք շատ կարկար ճանապարհ ունեցինք մեր առջև մինչև գիշերվան մեր իջևանը։ Մենք պետք եր հասնեինք Սոֆիան ժամը կարկուտին և Մարանդ՝ մեր ութևանը, ժամը յոթին։... Մարանդում իջևանեցինք Մեհման խանա (Mehman khanah), կամ ճանապարհորդների տունը։ Այստեղի հեռավորությունը Թավրիզից ասում են թե տասը փարսախ է, բայց ուղեչափի ցուցմունքով քառասունը կարելի մղոն է։

Սեպտեմբերի [պետք է լինի հոկտեմբերի] 20. — Այս առավոտ ժամը վեցին թողինք մեր ութևանը. ճանապարհը քարոտ եր ու տաժանելի և հասանք Գարգար (Gurgur) ժամը կարկուտ ու կեսին, հեռավորությունը հաշվվում է ութը փարսախ և ուղեչափով կարեսունկերկու մղոն։

Սեպտեմբերի [հոկտեմբերի] 21. — Այս առավոտ սկսանք յոթ ու կեսին և կարկու ժամից հասանք Արազի կամ Արաքսի ափը։ Գետը շատ եր նվազել, բայց չափազանց արագ եր, վտանգավոր նրա դեպի արևելք ընթացքում հետզհետե իջնում եր։ Հարավային ափում խոռված ուրվականների նման մոտ մի ժամ թափառելուց հետո, վերջապես անցանք մյուս ափը

* Ker Porter, հատ. Բ. էջ 609—634։

այն շեղանկյուն նավերից մեկով, որ կոչ էին նախորդ անգլին յերկու տարի առաջ նկարագրել եմ։ Մերձակա կամուրջը մոտավորապես յերկու գարից իվեր անանցանելի լինելուն պատճառով Արտպատականի կառավարությունը իր ծախքով հաստատել է նորկա գետանավը՝ վաճառականների ուղևորների դյուրության համար։ [Գետը] անցնելուց հետո պատվիրեցի իմ բեռները առաջ տանել և ինքս ճանապարհից դուրս յեկա լերկ բլուրների վրայից, որոնք տարածվում են գետի ափից չորս մղոն արևմտյան ուղղությամբ և ապա հանկարծ վերջանում մի ընդարձակ տափարակ տարածությամբ, որ յերբեմնի Հին Ջուղայի (Eski Julfa) բարերը զարդարում և պարունակում, բաժանված պատարիր զարդերով և ծաղկավոր պարտեզներով։ Այս կետում Արաքսը ծռվում է և այստեղ վերև հիշատակված կամրջի ավերակները կազմում են մի նկարագեղ ու մեծամեծ առարկա։ Նրա մնացորդները յերևում են մի քանի հարյուր յարդա հեռու այն կողմից, որ յերբեմն պահպանում էր քաղաքի արևելյան դռան մեկ կամարը։ Կամրջի ճարտարապետությունը առաջնակարգ է. քարերը նրբորեն տաշված և հիանալիորեն միացված են։ Գետի վրա մնալու համար պակասում են նրա յերկու հակակամարները, որոնց բարձր ու զանգվածային պատվարները տակավին դիմադրում են ամենակատաղի հոսանքին։ Յերկու ուրիշ [կամարները] ցամաքի վրա են, յուրաքանչյուր ափում մեկ հատ։ Յուրաքանչյուր ցամաքի բացվածքը յերկարում է մոտ իննսուն վոտք, և ամբողջության հաստատուն ու ընտիր կառուցվածքից, որամադրված եմ ասելու թե, յեթե մարդկային փառասիրության պաւքարները պատճառ չդառնային նրա խորտակման, այս հարյուր գետի ցասկոտ ջրերը, լճանանման հեղեղներով կարող էր անցնել նրա տակից դրերով, առանց մի քար անգամ շարժելու նրա հզոր կառուցվածքից։ Ներկա համեմատաբար չոր յեղանակին Յուրը հոսում է միայն նրա հյուսիսային կամարի տակից, այնպես որ այս յերբեմնի անհաղթելի գետը, հիմա այնքան լայն չէ, ինչպես այնտեղ ուր գետանավն է, և մեկ մղոն ավելի դեպի

վար, ասում են, թե կարելի յե անցնել։ Կամուրջի առաջին քանդումը վերագրվում է Շահ Աբբասին, որ հրամայեց նրա խորտակումը, յերբ տեղափոխեց քաղաքի բնակիչներին Սպահանի մեծ արվարձանը, որ հետագայում ընդունեց հայկական [Նոր Ջուղա] անունը։ Կամուրջից մոտ յերեսուն յարդա վերև, գետը արագընթաց ընթանում է մի նեղ ժայռոտ ձորի միջից կամ ավելի ճիշտ լեռան կողքի մի խոր անդունդից։ Նրա հյուսիսային զառիվայրի վրա տներն, յեկեղեցիները, պարիսպների և ուրիշ ընդարձակածավալ մզկիտած դանդվածների մնացորդները խառնվում են պատառոտուն դահանդներին։ Հին ժամանակներում քաղաքը դպչում էր գետի յեղերքին, և այդ կողմից կազմում էր նրա պաշտպանության գիծը, մինչ մյուս կողմից բարձր լեռները որոնց զառիվայրում տարածվում էր քաղաքը, կազմում էին անառիկ պատվար։ Յերկու ծայրամասերը միայն պետք ունեին մարդու արվեստական պաշտպանության, և [այդ կետում] դանդնք զորավոր պարիսպների ավերակները, և մուտքի ընդարձակ ու զանգվածային տեղերում նրանք տակավին կանգուն են մնում։ Դրա յետևում գեպի արևելք յերևում է շատ գեղեցիկ մի հուշարձան՝ մի հին մատուռ ու գերեզմանոց։ Վերջինս մեկ կողմում քարե մեջ լավ փորագրված մի խաչ կա, շրջագծված ամենակնճռոտ հարթաքանդակով, և գեպի վեր զանազան հյուսված տերևներ, որոնց ամբողջությունը պարփակված և սարակինոսյան մի կամարով, ցուցադրելով հայկական ճարտարապետական վոճի հարուստ մի որինակը։ Ունի թվականը, հավանորեն մոտ տասնմեկերորդ դարի կամ տասնյերկուերորդ դարի։ Մի ծերունի գյուղացի, մեր առաջնորդը, (որին պատահաբար հանդիպած լինելով կամրջի մոտ, առաջարկել էր ցույց տալ ավերակները), ասաց թե այս վայրում թաղված է մի սուրբ կին, որի անունը այլևս չեն իմանում, բայց ավանդությունը միշտ դա անվանում է Կույսի Շիրինը։

Հայաստանը յերկար ժամանակ թուրքի իշխանության տակ էր գտնվում, յերբ Շահ Աբբասը իր ոսմանցի մրցակ-

ցի գանձարանից խլեց Ջուղայի հարստութիւնը, ինչպես նաև նրա փարթամ բնակիչների արդիւնաբերութիւնը։ Մոտավորապես 1603 թվին էր, երբ այս գործողութիւնը տեղի ունեցավ, թողնելով քաղաքը բոլորովին ամայի։ Այն ժամանակից հետո ամբողջութիւնը վերածվել է ամայի ավերակների մի զանգվածի, ուր դիշերվան թռչունների արձագանքն է միայն լսվում և կամ երբեմն երբեմն ինձ նման մի քանի ճանապարհորդների ցնցող ձայնը...

Մոտ հարյուր տարի այս վայրը գրեթե մոռացված ամայության մեջ մնալուց հետո, յոթը խոհ հայ ընտանիք



Կաչյսի գերեզմանը Ջուղայում, (նկար կեր Փորտըրի)։

ապատեղ է եկել և լրիվ մնջիկ հաստատվել նրա լքված պարիսպների մեջ։ Այդ ժամանակից իվեր ապրելով այստեղ նրանց հաջորդները ներկայացնում են յերեսունհինգ տուն, և լինելով խաղաղ ու աշխատասեր, նրանք ապրում են անվրդով գոհունակութիւնամբ։ Այստեղ բնակող ընտանիքներից մեկի հայրն էր այն բարի մարդը, որ ծառայում էր մեզ վորպես առաջնորդ, և որ այդ մեկուսի տեղը վայրից, որ պարուսնակում էր սրբի շիրիմը, առաջնորդեց մեզ քաղաքից մինչև նրա արևմտյան դռան այն կողմը, ուր գտանք հին բնակիչների մեծ գերեզմանոցը... Դա պարունակում է բավական բարձր յերեք բլուրներ, վորոնք բոլորն էլ խառնված ծածկված են [շիրիմներով], յուրաքանչյուրն իրարից մեկ



Տապանաքար Ջուղայում, (նկար կեր Փորտըրի)։

վոտք հեռու, յերկար ուղղահայաց քարեր, վոմանք ութը-տասը վոտք բարձր. հավիտ էին գտնվի նրանցից մեկը, վորը խնամքով զանգակված չլիներ զանազան պատկերներով՝ խաչերի, սուրբերի, հրեշտակների, թռչունների, կենդանիների և այլն, բացի նրջեցյալի անունից։ Ամենից վտառավոր շիրիմները, վոխանակ տափակ քար ունենալու, ունեն խոյի կոպիտ մի արձան, վոմանք ունեն պարզ ձև, ուրիշները նրբորեն քանդակված՝ տարօրինակ պատկերներով ու զարդարանքներով։

Ներևում և Թե քրիստոնեության Հայաստան մուտք գործելուց հետո այս կենդանու արձանը նախապատվություն է ունեցել։ Բայց, Ուրմիայի մոտ մի քանի գերեզմանատներում նկատած լինելով այդ [խոյաձև գերեզմանաքարը] և ուրիշները Թավրիզից այն կողմ, կես կարծում եմ Թե դրանք մահմեդական շիրմաքիները պետք է որ լինեին, հավանորեն վերջին հանգստարանը Սև և Սպիտակ Ոչխարավոր հակառակորդ ցեղերի մի քանի հերոսների, բայց այսպես գտնելով Ջուղայում, կես չեմ վարանում կենդրադրել Թե այդ կապակցություն ունի քրիստոնեական հավատքի հետ։ Ամենամեծ և ամենից շատ զարդարված այս գերեզմանաքարերից մեկը գծագրեցի, որ բավական պետք է լինի մի գաղափար տալու համար այս անճոռնի ձևի մասին, բայց դա միաժամանակ ունի զարդարանքի անխոնջ աշխատանք, ցուցադրված ննջեցյալի այս տարօրինակ հիշատակարանի վրա։ Մեկ կողմի վրա ամենահետաքրքիր կերպով փորագրված և վիշապին սպանող Ս. Գևորգի առասպելը, կերկրորդի վրա մի կերկրորդ ախոյան, որին հետևում են կերկար մի ցող կրող կերեք անձեր։ Պոչը նույնպես պատված և մի ձիավոր սրբի պատկերով, շուրջ կապված հայերեն տառերի մի պատառով։ Մի տեսակ ցանց ծածկում և կենդանու վիզը։

Կես չափազանցրած չեմ լինի, կեթե ասեմ Թե հազարավոր գերեզմանաքարեր աչքի եյին ընկնում հայկական հին ցեղի այս հանգստարանում։ Հիրավի, Արևելքի այս մաս նավոր հոգամասում զանազան հիշողություններ, որ ներկայանում են մտքին, հարատևորեն թեկտրում են այն գաղափարը Թե մարդ քալում և մի լայնածավալ գերեզմանոցից։ Ձեվ այսպես և, որովհետև կերկրի բոլոր ընտանիքների առաջին հայրերը այստեղ են Թաղվել, այստեղ հսկա կայսրություններ են բարձրացել, այստեղ գտնում ենք քաղաքների ավերակները, որոնց հիմնադիրները մեռել են մարդկության մանկության որերին, և ժողովուրդների հուշարձանները, կերկար Թաղված ժամանակի խորքում, այնպես որ այդ ազգերի անուններն այլևս չեն հիշատակվում։

Ջուղայի հայոց գերեզմանատունը տակավին այդպես չեր, Թեև այնտեղ պառկող անհատները խառնված են իրրև մի հասարակության, բայց պիտի գա ժամանակ, որ այդ բլուրների խոլը, այնքան նրանց հատկանիշ լինի, որքան նրանք որ տևսա Թավրիզից այն կողմ գերեզմանների վրա...։

Այս մելամաղձոտ վայրից իմ առաջնորդը ինձ տարավ մի ուրիշ տեղ, փարատելու համար այս տխուր պատկերը. դա իր փոքրիկ բնակարանն եր՝ ամբուր, զով ու զվարթ. և Թե ինչպես նա կարողացել եր այդպիսի պայմաններ ստեղծել, կես չեմ կարող ասել, բայց իմ մուտքին գտա մի լավ ճաշ պատրաստված՝ ձուկ, հավկիթ, հաց, կարագ և մածուն։ Այս բարի քրիստոնյաների մեծարանքը սրտովին վայելելինք կես ու Սեսաք (Sedak) և հրաժեշտ առնելով այս հյուրընկալ գլխավորից, այսինքն մեր ալևոր առաջնորդից, և հայտնելով մեր շնորհակալությունը ու տալով հարմար մի նվեր, ձիավարեցինք դեպի առաջ Հին Ջուղայի ավերակներից։ Մեր ուղեցույը Նախիջևանն եր (Nackshivan), ուր հասանք ներեկոյան ժամը հինգին, կարած լինելով չորք փարսախ ճանապարհ, կերեսուն մղոն չափված հեռավորություն, իմ մարդիկը նոր եյին հասել, և գտա որ նրանք սաստիկ վեճի մեջ եյին Մեհմաճ խանայի տիրոջ հետ, բայց մեր միջամտությունը շուտով խաղաղեցրեց ամեն ինչ, և մենք առանձնացանք հանգստանալու։

Հոկտեմբերի 22. — Մոտ վեց մղոն Նախիջևանից դեպի հարավ-արևմուտք, Արապի ափի մոտ, գտնվում է Աբրասապատի բերդը, առաջին անգամ կառուցված գեներալ Գարդանի ղեկավարությամբ, կերբ ֆրանսական դեսպանությունը գտնվում եր այս կերկրում, նրանից հետո բարեփոխված և մեր քաջ հայրենակից հարյուրապետ Մոնտեթիի կողմից։ Նախիջևանի բանակից մի զորամաս միշտ հաստատված է այստեղ։ Այդ քաղաքի մեր օթևանից մեկնեցինք այսօր բավական ուշ, ձի ձեռք բերելու դժվարության պատճառով, բայց ի վերջո կարելի լինելով բավականաչափ Թվով [ձի] հայթայթել, մենք ճամբա կելանք կեսորից հետո ժամը կեր-

կուսին։ Յերբ դանդաղորեն անցանք անհարթ յերկրից, վոր ինչուա և Արաքսի հովիտը, հասանք մի կետ, վորտեղից Արարատը յերևում եր... բայց ծածկված եր մութ ամպերով, վորոնք հետզհետե ամբարձվում էին կուտակվելով, վոր լեռան և վոչ մեկ գիծ իսկ չեր յերևում։ Բայց յերբ մենք առաջ անցանք հավաքված փոթորիկը պայթից մեր գլխի վերև և սկսավ սաստիկ տեղատարափ մի անձրև, ընկերացած կատաղի մի քամու, մինչ մինչանկյալ մեր ձախ կողմի սև խավարը պատրաստում եր կայծակի ամենահիանդանի և լայն գետերով վորին հետևում եր ցնցող վորոտումը։...

Ուշ եր յերբ անցանք Հոյդ կամ Հոյգ (Hoig or Khoig) [Խոք], մի վայր վոր նշանավոր և իր բնակիչների լրութեյամբ։ Յերբ շուտով Արփաչայի ձյուներից մեկին հանդիպելով, մենք սահմած եյինք հաճախ անցնել, այնպես վոր բավական դժվարանայնալի եր մեր ուղին պեղելման մեծութեյան մեջ ճանապարհի սահերայն, հետևաբար խարդ յերեկույթի պատճառով։ Մեր վեցերդը Նորաշենի (Noorhasham) կայարանն եր, Նախիջևանից ութը վերստ հեռու։

Հոկտեմբերի 23. — Այս առավոտ ժամը յոթին հեծե եյինք մեր ձիերը, շուտափութ կերպով կենդանիները հայթհայթված լինելով։ Թարմավարտին հրամանով գյուղացիները պարտավոր են ձի տրամադրել, յերբ պահանջ լինի, յուրաքանչյուրի գործածութեյան համար յերկու ռուբլի վճարով, վոր գումարը կառավարութեյունը վերդնում և նրա տարեկան հարկից, և հետևաբար միշտ վճառ լինելով վոր իր կենդանիների ծառայութեյան համար վարձատրվում և, շատ քիչ անգամ այսպիսի պարագաների նա դժկամութեյուն և յուզ տալիս։ Բայց մեծ քաղաքներում, ուր բանութեյամբ վերցնում են ռնառականներից ու առևտրականներից, դժկամութեյամբ են տրվում, այն պատճառով վոր տերերը հաճախ հավանական չե վոր վճարվին։ Տեղի գառավորը պարտավոր և նշանակել յուրաքանչյուր կենդանու համար յերկու ռուբլի, վոր հաճախ պատրաստ դրամ չունեն, և նույնիսկ հարուստ բնակիչները կրկնակ գումար են ծախսում՝ կաշառելու այն փե-

բաշներին կամ հանրային պաշտոնյաներին, վորոնք ուղարկվում են ձի հավաքելու, վորպեսզի նրանք խնայեն իրենց լավագույն նժույգներին և փոխարենն վերցնեն խեղճ ու կրակ բեռնակիր կենդանիներ։ Առավոտը հաճելի յեր և չրջապատի տեսարանը վերջին անձրևի պատճառով փայլում եր կանաչութեյամբ... Հիրավի, սա ամենագեղեցիկ յեզանակն և թե Թավրիզում և թե Արաքսի այս ձոխ հովտում. աշնանային ամիսներն են հոկտեմբերը, նոյեմբերը ու դեկտեմբերը։...

Սադարաք (Sadarak) սիրուն գյուղն անցնելիս, հանդիպեցինք յերկու հոգու, վորոնք զբաղված եյին մի ոձ սպանելով։ Վորովհետև Պարսկաստանի այս մասի համար այդ [ոձը] շատ մեծ եր յերևում, յես կանգ առի քննելու համար. չափելով պտա վոր քառասուն ինչից յերկարութեյուն ուներ, և մարմնի հաստութեյունը մուսքեթ [հրացանի] փողի չափ, նրա գույնը կանաչ եր, սև շեշտերով։ Նկատեցի վոր փորի կենտրոնում տարօրինակ կերպով ուռած եր, վոր աստիճանաբար ճնշելով ներքևից շարժվեց դեպի վերևի կողմը և այսպես շարունակաբար, մինչև հասնելով կոկորդին, վորի շրջապիծը իմ մատից ավելի չեր, այս մասը հեշտութեյամբ ձգվեց և մենք դուրս քաշեցինք մի մեծ կաքավ, վորի գլուխը միայն մի քիչ վնասված եր. սողունը անկասկած թքուն չունը կուլ եր տվել ամբողջութեյամբ։ Նրա փետուրները ծածկված եյին մածուցիկ մի հեղուկով և այսպես մենք մեր աջին ունեյինք բուռ ոձի մի մանրանկարը։ Գյուղացիները տեսել եյին ոձին քնած, մի յածր մացառի տակ, և անտարակույս այդպես պիտի մնար մինչև վոր բնութեյունը լրութեյամբ մարսեր գժբախտ թռչունին։ Վեց ժամից հասանք Դևալու (Devaloo) գյուղը. Նորաշենից 24 մղոն հեռու։

Հոկտեմբերի 24. — Այս առավոտ ժամը յոթին սկսանք, մանավոր արագութեյամբ, այն ճանապարհից վոր մեզ տարել եր կրկին այցելելու Արտաշիրի (Ardashir, Artaxata) ավերակները, վոր յերկու տարի առաջ դեպի հարավ իմ ուղևորութեյան համառոտագրին հուշադրեցի։ Գանվում և նույն անուն գյուղի մոտ, Խավալուից մոտ տասնութը մղոն հեռու։

Ցերը հասանք տեղի վրա, գտա նախկին բնակչութեան առ-
վորական հետքերը, — ադյուսի, կղմինարի և այլնի կտորներ,
ընդարձակորեն տարածված դեպի ներս ու դեպի դուրս այն
ակոսաւոր գծերից, որոնք ներկայացնում են պարիսպ-
ներն ու աշտարակները: Մի տարածուն բլրդի թաղված ավե-
րակները բարձրանում են դեպի հյուսիս, կոնաձև մի բլուր,
կանգնած հարյուր վոտք բարձրութեամբ: Նրա գագաթի արե-
վելյան կողմը, ավելի մեծ մի զանգված վեր և բարձրանում,
կլորաձև, վորոշ կերպով ցուցադրելով պարիսպների հետքերը:
Նրա ներկա տարածութիւնը հիսուն քայլաչափ և, վոր հա-
վանորեն իր նախնական տրամագիծն և: Նրա գահավեժ-
բերը տարիճանաբար իջնում են արևելակողմ, դեպի մի հար-
թութիւն, վոր նախապես պարիսպների ու աշտարակների
մի գծով շրջապատված և յեղել: Դեպի արևմուտքն ամբողջ
բլուրը տիրապետում և բավական ընդարձակ մի տարածու-
թյուն և շրջապատված և մի լայն խրամատով, վոր կտրում
և քաղաքը հարավից: Այն միջնաբերդը հյուսիսից հավասա-
րապես լավ պաշտպանված և յեղել պարիսպներով, աշտա-
րակներով ու խրամատով, վորոնք տարածվում են ուղիղ
դեպի արևելք ու արևմուտք, մինչ քաղաքը ընդհանրապես
յերևում և վոր պաշտպանված և յեղել դույզ պարիսպով, աշ-
տարակներով և նույնպես խրամատներով, վորոնք դյուրու-
թյամբ նկատելի են դրեթե ամբողջ տեղի շուրջը: Դեպի
արևելք և հարավ, ամենից ամբողջական զանգվածներ կան,
բայց բարձր բլուրներ, և պարիսպների գտած կտորները
յերևում են միայն արևմտակողմը: Այս դրսի պատվարների
յերկարութիւնը մեկ ու կես մղոնից ավելի այն կողմ չեն տա-
րածվում. արդարև աշտարակները այնքան խիտ են, վոր
հազիվ թե քսան վոտք հեռու յեն իրարից, և բոլորի մնա-
ցորդները շինված են արևի չորացրած քառակուսի աղյուսով:

Արտաշիր կամ Արտաշատ քաղաքի մասին գրող բոլոր
հին հեղինակները և մանավանդ Սարբոսն ասում և թե
կառուցված և յեղել Արաքսի ջրերի մոտ: Նրա հիմնադիրն
և Արտաշես (Artaxes or Artases) հայ թագավորը, մոտա-

վորապես ինը տասնհինգ տարի քրիստոնեական թվականից
առաջ, և նրա ծագումը վերագրում և կարկեռոնի մեծ Ան-
նիբալին, վոր այս ժամանակ ապաստան եր գտել հայ իշ-
խանի մոտ...

Մի կարգ գրողներ յենթագրում են թե փոխրիկ գետը
Զանգուն և, վոր Սևանա լճից հոսում և Արաքսի մեջ բավա-
կան հեռու հյուսիս արևմուտք, այն տեղից, ուր մի այլ փոքր
գետ, վոր անցնում և այդ ավերակների միջից, խառնվում և
Արաքսի հետ: Բայց Զանգուն Արաքսի հետ խառնված վայրի
անմիջական շրջակայքը քննելով, հին շենքի վոչ մի հետք չի
գտնվում, վոր յերևում և թե հաստատում և այն փաստը,
թե այստեղ յերբեք [շենք] չի յեղել... և հետևաբար պատմա-
բանների փոխրիկ գետը Գառնին և (Gurney), վոր լվանում և
բլուրների և արևմուտքից փլած պարիսպները:... Հին ժա-
մանակներում կարող և պատահել վոր Գառնին ավելի մեծ
և յեղել, բայց այժմ հողագործության պատճառով այնքան
շատ առուներ առնված են նրանից, վոր նրա շատ փոքր
մնկ մասը միայն հոսում և Արաքսի մեջ: Արտաշատը նշա-
նավոր և պատմության մեջ այն շրջանին, յերբ բնիկ հայ
իշխանները, հռոմեացիները ու պարթևները պայքարում
հին կայսրության համար: Հաճախ նա հիմնովին կործան-
վել և, և կրկին բարձրացած և նոր կարևորությամբ ու հա-
րստությամբ. որինակի համար մեր թվականի յերրորդ դարի
վերջում Սեպրիայի կառավարիչ Կորբուլա (Corbula) նրա պա-
րիսպները հողին հավասար դարձնելուց հետո, Ներոնը վե-
րահաստատեց իր գահի վրա նրա գահազուրկ վեհապետ Տըր-
դատին, վոր վերաշինեց Արտաշատը նախկինից ավելի փա-
ռահեղ, և իրրև յերախտագիտության նշան իր բարերարին,
նրա անունը Ներոնիայի փոխեց:

Յերևանից ավերակները մոտ ինը վերստ հեռու են, մի
ճանապարհով վոր վատ և ու քարոտ. մշտապես բարձրանում
ու իջնում ես... և մոտավորապես ժամը յերկուսին հասանք
քաղաքը [Յերևան]: Այնպես պատահեց վոր Ալիխ նահապետ
վերդիների՝ Հասանի ու Հուսեյնի տարեդարձն եր, և տեղի

ամբողջ այուններ (պետք է լինի շիա) բնակիչները մզկիթներում ապաստանում էին իրենց վողբը և սուգ էին մատուցում Յերբ գնում էի դեպի իմ ոթևանը, տպավոր մի ամբողջ ժողովրդի այս սոսկալի ապաստանների միջից, չէի կարող չզարմանալ մարդկային բնության այս տեսակ բնազդի վրա։

Յես իջևանեցի մի հայի տուն, իմ հարկատուժինը չեզակիրներն մաքուր եր, կարող եմ ասել յեզակիրեն, վորովհետև այդ ժողովուրդը Ասիայում նկատվում է վորպես ամենակեղտոտը, բայց մարդը Ասիա այցելած պետք է լինի այդ համեմատության դերապրականը հասկնալու համար։ Տունը հրանալորեն դետեղված եր Ջանդուի ափին գտնվելու վրա, և նրա կտուրից յերևում եր ամենագեղեցիկ ու ընդարձակ տեսարանը մյուս ափի բարդավաճ յերկրի, նրա պարտեղներն ու պուրակները, Սարգարի ամրացրած բնակարանը և բոլորից այն կողմ հեռուն տարածվող դաշտ, փակված յերկրկլխանի ու վեհապանծ Արարատով։

Հոկտեմբերի 25. — Այս առավոտը յես հրավիրված եյի վեհերան պլխավորի (սարդարի) կողմից մի փառավոր նախաճաշի, իմ այս յերկրորդ այցելության նա բարեգալուստ տալիս եր իրապես արքայական վոճով։ Իմ առաջին այցելության յես անփորձ եյի ասիական վարվելակերպին, բայց դրանից յերկու տարվան բացակայությունը առիթ եր յեղել ծանոթանալու ժամանակակից կառավարչական պալատների հետ, Պարսկաստանի հարավ-արևելքից մինչև նրա հյուսիսային սահմանները. նրա նկարագիրը այժմ ծանոթ լինելով ինձ, յես խոսում եյի նրա հետ մի հին ծանոթի նման, և ստացա պատրաստակամ համաձայնությունը՝ ստանալու համար ամեն դյուրություն մերձակա լեռների նշանավոր հնություններն քննելու համար։

Հոկտեմբերի 26. — Ժամանակ չկորցնելու համար այս առավոտ զորավոր մի պահակախմբի ընկերակցությամբ համբա յելա դեպի լեռների ամայությունները։ Քաղաքի հյուսիս-արևելյան պլխավոր ճանապարհը կարճկինք, և ընթանալով այդ ուղղությամբ, մոտավորապես չորս ժամ աստիճանաբար բարձրացանք։ Այս միջոցին անցանք մեկ-յերկու անբնակ գյուղերից, վորոնց բնակիչները տակավին չեյին վերադարձել ամառանոցից։ Չորս ժամից հասանք նմանը չտեսնված ամենաարտակարգ ու ցցուն մի ձոր... Խորքից անցնում եր նեղ, բայց արագահոս Գառնին, և կախված հսկա ժայռերից մեկի վրա, յերբեմն կանգուն և յեղել Տրդատի պալատը, կամ ինչպես բնիկներն են անվանում Թախտ-ի-Տիրիդատ, վորի մնացորդները իրապես կործանվել են ժայռերի պանդխտների ընդարձակ կույտերի մեջ, վորոնք կարող և պատահել վոր սխալմամբ ավերակների տեղ ընդունվեն։ Հսկա գահավանդի վերևի մասերը, վորոնց վրա նրա աշտարակներն են կանգնած, մեծ մասամբ բազալտի այուներից և կազմված.... [Այստեղ ուղեգիրը մանրամասնորեն նկարագրում է ձորը, վոր ավելորդ ենք համարում թարգմանել]։

Բերդի համար ընտրված դիրքը մի հսկա ժայռի լայն դագաթի վրա և, վոր ցցված և դուրս սարավանդի նման։ Հյուսիսից միանում և լեռան, վորի կատարին կա մի ընդարձակ հարթություն, այդ ուղղությամբ մյուս լեռան կատարին, սակայն, ցցված ժայռի հարավային յերեսն ունի 150 վոտք ուղղահայաց բարձրություն, մինչ արևելյան ու արևմտյան կողմերը կորցնում են իրենց կորությունը աստիճանաբար միանալով ձորի զառիվայրերին։ Փոխարինելու համար այս բնական պատվարի պակասը, պարիսպներ ու աշտարակներ են կառուցված, կազմված ժայռի հսկա չտորներից, զետեղված կորեն տաշված ու միացված հռոմեական բանվորների վարպետությամբ, վորոնք ասում են թե յեղել են ճարտարապետները։ Նրա պաշտպանության հյուսիսային գիծը բաղկանում և կիսաշրջանակ պարսպի ու աշտարակների մի շղթայով, վոր միանում և արևելյան և արևմտյան զառիվայրերին։ Միայն մի դռան հետքն և տեսնվում և հավանորեն ուրիշ դուռ չի յեղել. և պա շատ հեռու չէ յերկրորդ կամ արևելյան աշտարակից։ Պարիսպներից ներս գետեղված և արքայական պալատը, վորի ավերակներից տակավին շատ



Գառնիի հեթանոսական տաճարի ճարտարապետական բեկուցներ, (նկ. կեր փորտրքի)

վորոնց մնացորդները հիրավի, նկատելի չեն ամեն կողմից։ Սյուների արամագիծը մոտավորապես քսանչորը ինչից և, առանց փորվածքների, շքեղ և յերբեմն հարուստ մանրամասնություններով, վորոնք զանազանվում են գրեթե ամեն մեկ սյունի վրա։ Յերբեմն ծոփորները կազմված են վոլորուն ծիլերից, այծատերևներից (honeysuckles) և ուրիշ շատ տերևոտ ծաղիկներից, վորոնց միջոցները բաժանված են առյուծի գլխով։ Հիրավի, յերևում է վոր ամբողջ շենքը շրջապատող ծոփորը (friez) միևնույն պատկերներն ուներ, քայց այդ զարդարանքները չեն յերևում յեռանկյունաձև կամներում։

Վերոհիշյալ նկատողություններից յես գալիս եմ այն յեզրակացության թե, բնիը և սյունազարդ հավելվածը ներկայացնում են մի տաճար և վոչ թե պալատի բնակելի մի վայր։ Նրա մոտ կան քարե հինգի բավականի զանգվածներ, վոր տարածվում են դեպի հյուսիս և արևմուտք, բայց նրանց մեջ զարդարուն բնակորներ չեն տեսնվում։ Ամենից ուշագրավը հայոց թագավորի պալատի մասն է։ Պաշտպանության պարիսպներից ներսի տարածությունը մեծ չեր, յերկարած հարավից հյուսիս հարյուր յարդայից վոչ ավելի, և արևելքից արևմուտք մոտ հարյուրքսան։ Անտարակույս այստեղ բավական տարածություն կա արքայական բնակարանի համար, վոր կարող և ծառայել ամրոցի տեղ պաշարման ժամանակ, բայց անբավական Տրդատի սովորական շքեղության համապատասխան մի պալատ [լինելու] և ավելի հավանական և վոր նա չեղել և մի ամրոց։ Վորովհետև այս իշխանը, ժամանակակից եր Դիոկղետիանոս կայսեր, (մոտավորապես մեր թվականի յերրորդ դարի վերջավորության), ստում են թե հռոմեացի վարպետներ և գործածել վերաշինելու համար քայքայված Արտաշատը, շատ հավանական և վոր այս շքեղ բերն զարդարված տաճարը, նույն ձեռքերի գործն եւ Մովսես Խորենացին մանավորապես հիշատակում և թե Տրդատը Գառնի գետի վրա շինեց մի ամրոց, վոր, — ավելացնում և նա, — զորավորապես ամրացրեց, և նրա կենտրոնում բարձ-

բացրեց մի փառավոր պալատ իր սիրելի քրոջ համար, մինչ պարիսպների վրա հռոմեական տառերով գրել տվավ իր անունը։ Ուրիշ պատմագիրները հիշատակում են Գոռնեոս (Gorneas) անուն մի բերդ, վոր յերկար ժամանակ գոյություն և ունեցել այս յերկրում, վորից յեզրակացնում եմ թե նույնն և, ինչ վոր հիշատակել և հայ գրողը, և թե թագավորը վոչ թե շինել և, այլ նորոգել և և զարդարել և այն հավելվածական շենքերով։ Տիգրան Բ.-ի անհրաժեշտ միության ժամանակ, այս անունով մի ամրոց ապստամբության մեջ փակվեց, վոր համարվում եր անառիկ իր դիրքի պատճառով և ուներ հռոմեական մի պահակախումբ։ Դեպի հյուսիս, փլփլած պարիսպների մոտ տակավին նկատելի չեն հաբձակման հին գործիքների տարորինակ մնացորդները, այսինքն քարե կոպիտ գնդակներ, վորոնք մեր ամենամեծ ռումբերի տրամագծից ավելի խոշոր են։ Դրանք յերբեք չեն կարող թնդանոթից արձակված լինել, հետևաբար նրանք պետք են ընկել ավելի բարդ մեքենաներից, վորոնց մասին մենք կարդում ենք պատերազմի ամենահին գործերում։

Հյուսիսային պատից այն կողմ, դեպի լեռան հարթությունը յերևում են խոր հետաքրքրության արժանի ավերակներ, մի քաղաքի մնացորդներ, վոր յերկրի ժողովուրդը անվանում է Գառնի։ Այս հնավանդ ավերակները յերկարում են մեծ տարածությամբ, ցուցադրելով յերկար ու այլազան շարք առների հիմքերը և հինգ եկեղեցիների ավելի աչքառու ավերակները, վորոնց կառուցման վոճը պատկանում է տաբրեր շրջանի քան բերդին։ Այս սրբատաշ շենքերի ճարտարապետությունը ճիշտ նման է Եջմիածնի վանքին, վորից յերևում է թե ժայռի վրայի այսունազարդ շենքից մի քար հետո է կառուցվել։ Պաշտպանողական պարիսպները և աշտարակները, վորոնք հավանական է վոր լինեն քաղաքի սահմաններները, հազար յարդա են։ Անցյալ փառքի այս մնացորդների կամարների տակ ապաստան են գտել մոտ ընտանեքի լեռնական վոչ նստակյաց բնակիչ, վորոնք իրենց և իրենց կենդանիների հարմարության առնդնելու համար,

ազատել են հին ճարտարապետության հոյակապ կերևույթը: Մարդիկն էլ այնքան կոպիտ են, որքան իրենց ճաշակը, վէմ բարի գտնվելին և վէմ էլ շահով հրապուրվելին մի պատառ ուտելիք տալու միտ: Սակայն, նրանց մեծ ախոռներից մեկում ժամանակավորապես տեղավորվելիս, և նրանց ու իմ առաջնորդի մէջև բավական հեռաստական բառերի փոխանակությունից հետո մի քանի հավկիթ և մի քիչ վառ հաց ձեռքս բերվեց: Բայց, հոգնած մարդու համար սա մի շնորհք եր, որ վայելելուց հետո, փռմաթվենի վերարկուս ինչ և գլուխս դնելով քամվի վրա, անցկացրի գիշերը....

Հոկտեմբերի 27. — Առաուն կանուխ արուսյակ հետ արթընցանք և չափից ավելի ուրախ եյինք վիր կենալու մեր մթին հանգստից և շնչելու առողջ ոդը: Շուտով հնձանք ձիերը, և ավերակների միջից մեր ճանապարհը անցնում եր լեռան կողքից խորդուբորտ մի արահետով և դեպի հյուսիս արևելք հետևելով դեպի վոլորապատույտ ընթացքին, մոտ ժամ ու կեսից հետոյ մի յերկար բազալտի անդունդ, վորից հոսում և ջուրը: Նրա ապրյուրը այնտեղ և, և վոչ շատ հեռու, ձորի հարավային կողմը, ուր բարձրանում և մի բլուր, վորի կատարին յերևում են մի ուրիշ բերդի մնացորդները: Ժողովուրդը Բուրսա (Bursa) կամ Բուրս (Burs) և անվանվում և նմանապես վերագրվում և Տրդատին: Նրանք ասում են թե [Տրդատը] այս ամրոցումն եր պահում իր գանձը: Ջորի հյուսիսային կողքի զառիվայրից մի քանի հարյուր յարդա լծելով տեղանք Գեղարդը (Kayargast) կամ յոթն յեկեղեցին, ամենատարտակարգ մի գանգված փորված լեռան արտաքին բարձրացրած իր նկիրական տաճարը, իր վոտքի ավերակներն ու շրիմների մեջ: Կանգնած իոր առանձնության մեջ, և շատ մասերը անխախտ թողնում են՝ «անապատի յեկեղեցու» տպավորությունը, անծաշուք ու ազդու: Հայերը մանգական յերկրում կարող են նայել նրա վրա վորպես իրենց տիպարի. նրանք այնտեղ համարում են ուխտատեղի: Շատ հին մարտիրոսներ են թաղվել այնտեղ, վորոնց անունը հիմա միայն յերկնքի գրքում և գտնվում, բայց նրկրա հավատացյալների շահագրգռության գլխավոր կետը այն և, որ նրանք հավատում են թե ս. Գևորգը, (Հայաստանի լուսավորիչ հրեշտակը), այս սուրբ վայրի քարանձավում ապաստանց խուսափելով հալածանքից:... Իմ պահակներից շատերը, ծնունդով ու հավատքով հայ լինելով, յերկու պարտականություն ունեյին կատարելու՝ մեկը պինվորական, և մյուսը իրենց ուխտը սրբազան խոստանում: Սա կատարվում և մատաղով. ուխտավորները տանում են մի վոչխար կամ այծ յեկեղեցու դուռը, ուր կտրում են նրա գլուխը, և միսը բաժանելով իրենց մեջ տուն են տանում ու տալիս իրենց բարեկամներին: Այս սովորությունը փաստորեն հրեական և, կամ հեթանոսական ծագում ունի, հավանականությունը այն և որ նրանք այս հովիտն հեթանոս նախնիքներից են ստացել այս սովորությունը, վորի մասին բնիկները չեն կարող բացատրել թե ինչու այդպես են անում, և վոչ էլ դա իրենց կրոնական ծիսակատարության մասն և կազմում:

Այս հնավանդ գանգվածի արտաքին սահմանները ամրացրած են, վորի մի կողմը կազմված և լեռան բարձր ժայռից: Պարիսպներից ներս բարձրանում և մեծ յեկեղեցին, պատրաստակելով իր գմբեթի տակ յոթը [խորան], վորից հատուկ և իր անունը: Ներս մտնելով դուք կգտնեք բաժանման մի գիծ, վոր վերածում և յերկու խորաններին: Նրանք պահպանվում են դորավոր սյուներով և բոլորաձև կամարներով, վորոնք ճշտորեն իրենց ձևով ու զարդարանքով նման են մեր սաքսոն ճարտարապետության: Սրբավայրի կողքերը ատրաժված են մեծ ատիտակներով, ամրացրած պահական տաճարի զանազան վարք սրբոցներ: Խորաններից ամենից մեծից մի դուռ առաջնորդում և դեպի մի յերկրորդ, բոլորովին տաշված լեռան միակտուր քարից: Կտուրը գմբեթի նման փորված և, և վերևից լուսավորվում և բոլորակ մի բացվածքով: Այս ընդերկրյա խորանի ներսը ամրողջությամբ քանդակված և կիսասյուներով (pilaster) միացնելով կամարներ, խաչեր և վոլորուն զարդարանքներ: Բարձրու-

թյուններ գնահատից մինչև գմբեթի կատարը մոտ յերեսուն վոտք և, և նրա լայնքն ու յերկարություններ մոտ տասնյոթը քառակուսի վոտք, բայց ունեն նաև ութ վոտք տարածութեամբ հավելվածական մի մաս, բաժանված յերկու կամարներով, վորոնց ներքև հատակի վրա կան յոթը կամարակապ շերիմներ, լի ժարգկային վոսկրներով: Այս փոքրիկ ժայռե մատուռների կողքերը, ինչպես նաև մեծերը, ծածկված են փորագրված խաչերով, վարք արդյոք, և ծաղկանմանզարդարանքներով: Յերկու կամարների ճիշտ վերև, մի յեզակի արձան ներկայացնում և վեթխարի չափով այծի մի գլուխ, իր բերանում բռնած մի ոպակ, վորին կապված են պարաններ կամ շղթաներ, վորոնք պահում են յերկու առյուծ, պահաններից ներքևում յերևում է մի արծիվ, բայց բերանով, բռնած իր ճիրանում մի գառնուկ:...

Ժայռի խորքում ապա բացվում է մի չորրորդ մատուռ, նույնպես փորված, ունի գմբեթ և սյուներ: Նրա վոճը մյուսից զերազանց է, և ամբողջացած չլինելու յերևույթն ունի, հղկված քարի վրա շատ կարմիր գծեր նկարված են. ուր կարծես թե ցույց են տալիս թե այնտեղ պիտի շինվելիք կիսասյուներ, կամարներ և հարթաքանդակներ: Այս սրբության սրբության մեջ մի մեծ խորան և տաշված, գնահից բարձր և ունի սանդուխներ: Բոլոր այն մասերը, վորոնք վերջացած են, առատորեն ծածկված են սովորական նվիրական խորհրդանշաններով, հայկական տառերով և այլն. վորովհետև ամեն մի վայր և ամեն մանրամասնություն փորված ու քանդակված է մարդկային ձեռքով, չես կարող ծածկել իմ հիացմունքն այն անխոնջ աշխատանքի և համբերատարության համար, վոր նրանք գործ են դրել:

Կրկին անցնելով այս բոլոր մատուռներից և հասնելով մուտքին մենք մի քիչ առաջ գնացինք յեկեղեցուց դուրս ժայռե պատի քովից, և ապա բարձրացանք մի քիչ տեղ գահավանդից, կողքին գտանք մի փոքրիկ դուռ, վոր տանում էր դեպի մի ուրիշ փորված սրբավայր, մյուսի նման գմբեթավոր, բայց շատ ավելի ընդարձակ: Սրա չափը յերեսունհինգ վոտք քառակուսի, բաժանված չորս զանգվածային սյուներով, և լույսը ընդունում էր վերևից, գմբեթի մի մեծ կլոր բացվածքից: Այն բնիկները, վորոնք ինձ հետ էին, շատ վատահարին էին խոսում այն մասին, թե ինչպես էր փորված. նրանք նկարագրեցին թե աշխատանքի էին սկսել վերևի ժայռից բանալով նախ կլոր ծակեր, վորտեղից վարպետները փորելով վար են իջել և շարունակել մինչև վոր ընդունել և մեր տեսած ձևը. սա մի անհող և, վոր կարծում եմ թե շատ հավանական է: Այս հինգերորդ մատուռի վերև, խուցերի մի շարք կա, նույնպես փորված գահավանդի կողքին, յերևելիթափոս վանականների բնակության համար, և դառն յուրաքանչյուր կողքին, վոր տանում և մեծ յեկեղեցու բակից դեպի ձորը, կան յերկու մեծ անցյակներ: Պահպանների դուրս, և ժայռի զառիվայրերի գանազան մասերում կան բնական հակա քարայրներ, բացի այլ պեղումներից՝ դռներով և լույսի համար բացվածքներով, բայց դեպի նրանց տանող ճանապարհը քանդված է ու գահավեժ, այնպես վոր վոչ մեկ հնարավորություն չկա բարձրանալու այնտեղ: Իմ առաջնորդները ասին, թե այս տեղերից մի քանիսը յեղել են ճնայուն կացարան վորոշ բարեպաշտ ճգնավորների, մինչ ուրիշները սուրբ ուխտավորների աշխատանքի արդյունք են, վորոնք կարճ ժամանակ ապրելով ս. Գրիգորի քարայրներում, ոգնել են պատրաստելու համար բնակարաններ, ավելի թվով այցելուների համար:...

Մեկնելով Գեղարդից կամ Յոթը յեկեղեցիներից, մենք ուղղ գծով գնացինք լեռների վրայից և հասանք Յերևան 6 ժամից:

Հոկտեմբերի 28. — Յես կանգ առի այսոր սարդարի մոտ, վորպեսզի ստանամ անհրաժեշտ թղթեր, ինչպես նաև առնելու համար մի գրություն ուղղված կարսի փաշային ու Երզրումի սերասքյարին: Բայց իմ պատկառելի հյուրընկալը կամենում եր մի ժամանակ ևս ինձ պահել այնտեղ, ժամանակ տարաձայի պատճառով, վոր ինձ լսել եր թե տիրում եր կարսում և զգուշացրել եր բոլոր հաղորդակցությունները ամանման այդ կողմի հետ: Յերախտապարտ եի նրա մտահոգության համար, բայց ստիպված լինելով շտապել, ստացա իմ վկայականները և պատրաստվեցի մեկնելու հաջորդ որը:

Բ. ՅԵՐԵՎԱՆԻՑ ԵՐՋՐՈՒՄ

Հոկտեմբերի 29. — Յերևանից մեկնեցի այսօր ժամը մեկ ու կեսին, և Արարատյան հոյակապ դաշտից հաճելի ձիավարությունից հետո հասա Էջմիածին, կամ ինչպես յերբեմն ասում են Ուչքիլիսա, յերեք լեհերի, մի հեռավորություն որ յերեք փարսախ է կամ տասնյերեք մղոն։ Պատկառելի պարբիարք Յեփրեմն (Epheme) ինձ ընդունեց ամենայն բարությամբ, ինչ որ նախատեսնում ես, մի տեսակ հայրական բարեգալուստ, որ անտարակույս հատուկ է վանականներ...։ Որը ուրբաթ լինելով, նա տեխված եր քնելու տալ որ յես ճաշեմ առանձին։ Բայց, նա հրահանգ տված իր մատակարարին պատվելու ինձ և տալու պատշաճ ճաշ։ Յերկու հրահանգներին էլ նա հնազանդվեց. ինձ տված սքանչելի ճաշ և թեև նա մատնակից չեղավ մսին, սակայն առատորեն խմեց։ Վանականներից մի ուրիշը, որ անուշկին բերավ, ինքնաբերաբար առաջարկեց մի սաղմոս յերգել, որի խոսքը նա ասաց իրեն եր, իսկ յերաժշտությունը անգլիական։ Ի հարկն ընդունեցի այնքան բարեացակամությամբ, որքան առաջարկված եր և յերը յերգից, յերևան յեկավ որ մեր ազգային յեղանակն եր՝ «Աստված պահեր թագավորին» («God save the king), բայց այսքան հետու ճանապարհորդելով կատարելապես խեղաթյուրված եր... Հետո մեն յեկա յերեք յեկեղեցիները։ Առաջին, կամ մեծ յեկեղեցին վանքի պարիսպներից ներս և, և ձոնված կույս Մարիամին, յերկրորդը մոտ կես մղոն դեպի հարավ, նվիրված և մի սրբուհու, որին անվանում են Գայանե (Kayi-Ann), և ինձ վատահացրին թե ծագումով բրիտոն եր (!)։ Յես հավատք չը նծայեցի այս գեղեցկացման։ Յերրորդ յեկեղեցին հետու յի վերջինից մոտավորապես յերկու մղոն դեպի հյուսիս-արևմուտք, և նվիրված և սուրբ Հռիփսիմեին (Saint Ripsima)։ Նրա գանգը, Ս. Գրիգորի աջի հետ պահվում և մի արծաթյա տուփում՝ եջմիածնի ամենանվիրական մասունքների հետ, Գողգոթայի Գեղարդի գլուխը, որ ավելի յի հարգվում քան սրանք, բոլորը միասին դուրս են բերում ժողովրդի առաջ հանդեսին մեծ պատանների առթիվ։ Այսպիսի մի պատճառով յես նորից չկարողացա տեսնել Գեղարդը, որովհետև մի քանի որ առաջ ուղարկված եր Յերևան՝ ամոքելու համար Յերևանի բնակչության մեջ ավեր գործող մի սոսկալի ջերմ...

Հոկտեմբերի 30. — Յերեկ պարիսպներից ներս պահք լինելով բացի ինձնից, այս առավոտը մի ճոխ նախաճաշ արի պատրաստվեցավ պարբիարքի հետ, բայց «աղն ու համեմը» անտարակույս նրա խոսակցությունն եր՝ մտացի, մեղմ և կիրթ։ Անգլիացի ճանապարհորդից մի փոքրիկ հիշատակ թողի ներան յերախտագիտությամբ, և նա ինձ նվիրեց մի քանի հետաքրքիր հին դրամներ, պեղված այդ մերձակայքից և մի մատանի, որ յես շատ եմ գնահատում, մանավորապես պատկառելի նվիրատվի համար։ Վերջին նվերին մյացրեց իր որոնությունները իմ յերախտին, — որովհետև յես ասել եյի թե ունեմ մի տղա... Կհատուցին հրաժեշտ առի միաբանությունից, և հեծնելով իմ ձին, կրկին ճանապարհի վրա եյի...

Վանքից քիչ հետանալուց հետո անցանք մի փոքր գետակ, ծանոթ յերեք տարբեր անուններով. Արփա-սու (Arpa-sou), Կարա-սու (Kara-sou) կամ Աշտարակ (Achtorick), բայց հողագործական կարիքների համար հազարավոր ճյուղերով բաժանված լինելով, շատ քիչ ջուր և հոսում իր սովորական հունից։ Ժամը յերեք ու կեսին հասանք Քերիմ Արքլի (Kerim Arklee) գյուղը, մի նկարագեղ վայր, անհուսացած մի բլրի կողքին, — որի վրա գտնվում են Լեվաննա (Lewanna) կոչված բերդի ավերակները, Էջմիածնից հեռավորությունը յերեք փարսախ և։ Իմ ոթևանը Քերիմ Արքլի շրջանի կառավարչի տունն եր, մի շրջան որ տարածվում և մինչև Արփաչայ գետ, այդ ուղղությամբ Պարսկաստանի սահմանը։

իմ հյուրընկալը լռվին պատվից սարդարի ֆերմանը.— դզում էլի վոր շուտով պիտի հեռանամ Պարսկաստանից և ցավում՝ վոր բաժանվում էլի ծանոթներից, վորոնք արդեն բարեկամներ էլին դարձել, և այդ կերկրում իմ անցկացրած որերը կեղել էլին շատ հաճելի։

Հոկտեմբերի 31. — Այս առավոտ ժամը ութին հրաժեշտ առի իմ հյուրընկալից, և վերսկսանք մեր ուղին միևնույն ուղղությամբ ինչ վոր կերեկ։ Ձերը առաջանում էլինք անմիջապես մեր առջև կանգնեց մի բարձր ու սրածայր լեռ, վոր պատկանում եր Արարատի արևմտյան շղթային։ Նա կոչվում է Թաքաթ (Tackat).... և կոչվում է նաև Քուրդ Ոգլի (Courd Ougly) [Քոր Ոգլի?], ուր կերբեմն ամբացած և կեղել այդ անունով մի ավազակապետ։ Ինձ հետ կեղող մարդիկ պատմում էլին վոր այս ավազակախումբը ապրելիս և կեղել լեռան խորքում, և տակավին ճնում են Նրա բնակած բազմաթիվ ընդարձակ սենյակները, փորված ժայռի մեջ, վորտեղից նա տիրապետող տեսարան ունի շրջապատի վրա։ Գյուղացիների բերնում նույնիսկ հիմա հազարավոր արտառոց պատմություններ կան՝ նրա արտակարգ արարքների, ավազակությունների, աղնվության և բարեսրտության մասին. վերատրեն նա Արարատի Ռուբին Հուդն է կեղել։ Բայց այս շրջաններում մանդատը սուրի վերածելը միմիայն մի քուրդի գործ չեր, ինձ տեղեկացնում են թե այս լեռների հյուսիսային կողքերը վիսում են նույն ցեղի մարդկանցով, վորոնք կողոպտում են ամեն տեղ ամենորինապանց հարստությամբ։ Նրանց ֆիզիկական ուժը անագնությունը սարսափի մեջ և պահում սահմանամերձ շրջանները, և նրանց կողմից կառավարիչներին տրված ամուր պատշաճի նվերները, արդելք են հանդիսանում սահմաններից ներս նրանց անհանգստացնող քննության կենթարկվելուն, կերբ վորևե արտակարգ կողոպուտ կամ սպանության դեպք պատահի նրանց սահմաններում։ Կարճ խոսքով՝ այս լեռնականները ինչ վոր էլին Բաենոսլոնի անցքի ժամանակ, այժմ էլ միևնույնն են, — աննվաճ, անկրթի,

կատաղի և անհյուրընկալ, ինչպես իրենց սահուն ժայռերը անդունդի կեզերքին, և այսպես նրանք տարածվում են բոլոր լեռնաշղթաների վրա, նույնիսկ մինչև երզրումից այն կողմ։

Մեր մեկնումից մոտ մի ժամ հետո անցանք Շահարգար (Shahargar) գյուղի մոտից։ Հաջորդ ժամին հասանք Քալեգ-արքլի (Kaleg-arkli), վորտեղից մենք դարձրինք մեր ուղղությունը դեպի հարավ-արևմուտք՝ այցելելու համար Կարա-Կալա (Kara-Kala) գյուղը, կամ ավելի ճիշտը հին Արմավիր (Armavira) քաղաքի մնացորդները, վորոնք ներկայացնում են ավերակների կույտեր։ Նրանք տարածվում են Արաքսի ափերի վրա, և մոտենալով նրանց, գտանք տափարակ ամայի մի կերկիր, շատ քիչ մշակություն։... Ժամը մեկին հասանք Արազի հյուսիսային ափը.... Ձերը մոտենում ենք Արմավիրին, կերկիրը բոլորովին փոխում է իր նկարագիրը, դաշտավայրը անհետանում է մեր կեռևում, և դարուփոս գետինն ու զառիվայրերը ներկայանում են մեր առջև ու մեր կողքերին, ասես նեղ ձորի մեջ, և գետը պարփակվում է ուղղահայաց ժայռերով։ Տարվան այս կեղանակին ջուրը ցածր է, բայց չի կորցրել իր արագությունը։ Կարա-Կալեյից մի մղոն այն կողմ մենք անցանք գետից, վոր քառասուն յարդայից ավելի լայնություն չուներ, և այնքան ծանծաղ, վոր ջուրը հազիվ թե հասնում եր մեզ ձիերի կրծքին։ Անցնելով հարավային ափը, քիչ ճանապարհ գնացինք նրա ընթացքով և հասանք մի հակա հեղեղատի հունին, վոր իր մեծությամբ հավասար եր Արաքսի մեծ հունին, և այն կեռանկյունում, վոր կազմում է գետն հետ, տեսանք Արմավիրի ավերակները։

Այստեղ գտնվում է Հայաստանի մի ուրիշ ընդարձակ ամայություն, ուր հազարավոր կերջանիկ ընտանիքներ հավաքված են կեղել իրենց ընտանեկան ոջախի շուրջը... այժմ այս հազարավոր բնակիչները, ինչպես տեսնում եմ, պատկեր են անմարդաբնակ լռության մեջ... Քաղաքի բոլոր կողմերում բարձրանում են բավականաչափ ամրացրած պաշտ-

պանութեան բեկորները, մինչ զարմանալի մեծութեամբ մի քանի աշտարակներ ցույց են տալիս հայկական հին ընդարձակ վորմնադրութեան մի նմուշը, վոր բաղկացած է սպիտակ ու կարմրագույն քարերից, գեղեցիկ սրվեստի փոփոխական գծերով միացած։ Անցնելով ավերակների միջից, տեսանք հարևան ցեղին պատկանող մոտ քառասուն մահմեդական ընտանիքներ, վորոնք ապրում են ամենից ավելի բնակելի մասերում, մինչ նրանց գլխավորը իր գերազանց բնակարանը ընտրել է պարիսպների քանդված անկյունի մի աշտարակում, վոր անցյալում հին բերդի մասն է կազմել, և վորի փլփլած հիմքերը այժմ կախվել են գետի վրա։ Վախ մի տեսակ ուրիշ մեծ շենք չի մնում։ Ներքևում, ուր ջրերը հոսում են նեղ ձորից, կանգուն են բարձր հենարաններ, վորոնք յերբեմն կազմում էլին մի գեղեցիկ կամուրջ։

Մեկնելով ավերակներից, մեր ճանապարհն անցնում է մի գերեզմանատան միջից, բայց նրա շրջիններն մեջ չկա և վոչ մեկ հատ հնության պատկանող։

Այնտեղից ձիավարեցինք դեպի առաջ մոտ յերկու մղոն, մի ամայի ու նկարագեղ ճանապարհից, մինչև վոր իջանք Արաքսի հովիտը, ընդարձակածավալ մշակութեամբ, վորի գլխավոր արտադրություններն են հացահատիկ ու բամբակ։ Մենք անցանք մի փոքրիկ ու արագ գետակից Աղի (Augi) անունով, հովիտի մեծ գետ ճյուղերից մեկը։ Նա բղխում է այն լեռներում, ուր գտնվում են նշանավոր աղի հանքերը, վոր այժմ իր արտադրությամբ Յերևանի կառավարչին տարեկան 10.000 թուման յեկամուտ է տալիս, մոտավորապես 5000 ֆունտ ստերլինգ։ Բացի անմիջական շրջակայքի [բնակիչներից], թուրքերն ու վրացիները ստանում են աննահման բեռներով [աղ]։ Հիրավի, մենք հանդիպեցինք հարյուրավոր յեղների, բեռցրած աղի զանգվածով, ջրակիճի (alabaster) մեծ տախտակների նման։ Լեռների այն վայրերը, վորտեղից հանում են աղը, ընդարձակ գալերիաներ ու քարայրներ յեն ներկայացնում, վորոնք թողնում են արտա-

կարգ ու գեղեցիկ տպավորություն, մակերեսի այն ցոլացումներից, յերբ լույսը ցայտում է նրանց վրա։ Այս հանքը շահագործվել է շատ հին ժամանակներից և տակավին անսպառ պաշար ունի, վերտին անցնելով Արաքսից, յես միացա իմ բեռներին և շարունակեցինք մեր ճանապարհը նրա հյուսիսային ափից մինչև ժամը յերկուքը, յերբ անցանք Հաջի-Բայրամլու (Hadjy-Baramloo) գյուղը, Ալփաչայի արևելյան ափում և Արաքսի հետ միացման կետից մոտ յերկուսուկես մղոն վերև...

Նոյեմբերի 1.— Այս գյուղը վերջինն էր պարսկական սահմանի կողմում։ Նրանից անմիջապես այն կողմ, դեպի թրքական գիծը տարածվում է մի չեզոք հողամաս, մի տարածություն, վոր լքված է ու ամայի, և հաճախ վխտում է ամենավայրենի ու ամենակատաղի կենդանիներով և ավազահնդուզակ տականքներով։ Այսպես, մենք պետք էր վոր գնայինք Հաջի-Բայրամլուից բավական զորավոր մի պահակախմբի ընկերակցությամբ մինչև վոր անցնեյինք վտանգավոր սահմանները։ Յերբ հեծել եյինք մեր ձիերը, մեր շարքն ուներ անպատկերելի տեսք, վորովհետև բացի իմ խմբից, վորի գլխին գտնվում էր մի յենիչերի, կային նաև մի քահանա ու նրա սպասավորները, յերկու-յերեք ուղևոր վաճառական-ուխտավորների հետ, վորոնք ընդմիանում իմ պաշտպանության տակն եյին մտել, մինչև վոր ապահով կերպով նրանց հասցնեյի Երզրում ու Թոքաթ։ Նրանք վերադառնում եյին այս քաղաքները, նվիրական վանքի տաճարներին այցելություն տալուց հետո։... Մենք ճամբա յելանք առավոտ ժամը ութ ու կեսին և Արփաչայի խորտուբորտ ափից իջնելուց հետո, անցանք դեպից և հրաժեշտ առինք Պարսկաստանից։ Գետը այս վայրում արագ է ու բավական խոր, իսկ լայնքը միայն քսան յարդա։

Ճանապարհը ընթանում է աստիճանաբար դեպի վեր մի կոր գծով, և յերբ բարձրացանք ձորից վերև, մեր աչքի առաջ պարզվեց յերկու գետերի ոճապատուկ ընթացքը և նվիրական

լեռան հիանալի տեսարանը... Այսպես մոտ մի ժամ առաջ գնալուց հետո, ծռվեցինք ավելի դեպի հյուսիս և չափազանց զառիվայր ու ատամնաձև մի ճանապարհից դեպի վեր, մինչև ժամը տասն անց կես, երբ հասանք Արագած լեռների այս ճյուղի կատարին... Մի կարճ ժամանակ լեռնաշղթայի այս մասում մենք հանգիստ առինք, ապա սկսալ մեր վայրէջքը և շուտով կորցրինք Ցերևանի դաշտի տեսարանը, նրա դեմ արծաթյա գալարումները և տապանի պատկառելի լեռը:

Հասնելով մի հարթ հողամասի, ճանապարհն անցնում է մի սերուն կանաչության միջից, մինչ ժայռոտ անդունդը, որի միջից հոսում է Արփաչայը, տարածվում է բավական յերկար սեղ աջ կողմը: Կորցնելով այն, իջանք մի մռայլ փոքրիկ գաշտ, շրջապատված ամեն կողմից զարմանալի զառիվայրերով, որոնցից մեկի ստորոտում գտնվում է Նախիջևան (Nakshivan) գյուղը, մի խեղճ տեղ, ուր բնակում են թշվառական մարդկանց մի խումբ, որոնք իրենց անվանում են քրիստոնյա, բայց ունեն մի զզվելի նկարագիր ստորնության ու ավազակության: Մեր ժամանմանը այնտեղ վխտում էին փաշալի զինվորները, որոնք չիկել էին հարևան մի գյուղի համար, որի բնակիչները թալանվել էին քուրդ մի ավազակախմբի կողմից, որոնք պատկառում էին մի ցեղի, որ անվանապես գտնվում է Ցերևանի կառավարության տակ: Այս զինվորական պատգամավորները փաշալի կողմից ուղարկվել էին տարբերից հատուցում պահանջելու համար, բայց նրանց գոհացում տրված չլինելով, նրանք ձեռնարկել էին վրեժխնդիր լինել չարագործների հանդեպ, և հետևաբար տեղի եր ունենալ արյունահեղություն ու կողոպուտ: Մեզ պատմել էին այս ճանապարհի վտանգների մասին և այժմ ականատես էինք կատարված իրողության: Շարունակ այս տեսակ սանձանային կռիվները տեղի են ունենում և հարատև նոր խուժումների սերմերն են ցանում՝ կողոպտելով գյուղերը, քշելով կենդանիներին ապահովի պահապաններին, մինչ ընդհանուր խառնաշփոթության մեջ վոչ վոք չգիտե վորոնք են ավազակները. հաճախ ընկերա-

կից ճանապարհորդները ամենաառաջ մարդասպաններ են: Զինվորների ներկայությունը վրէ միայն ավելացնում եր մեր դժվարությունը ոթևան ճարելու համար, այլ նաև շատ քիչ հույս ունեինք մի բան գտնել ուտելու համար: Համոզված եինք, վոր վրէ սպառնալիքը և վրէ ել իմ յենիչերիի դեղը գուր եր. վրէ սպառնալիքը վորևե տպավորություն թողին համառ շինականի մարակը վորևե տպավորություն թողին համառ շինականների մաքի վրա: Այն պայմանագրությունը, վոր նախորդ օրը կապել եյին նրանց հետ հատարակից գործով ճանապարհորդներին պարեն հայթայթելու համար, ճիշտ հիմա վերջացել եր, և հավատում եմ վոր յեթե սահմանված գումարից ավելի չառաջարկվեր նրանց, մենք պիտի մնայինք այնտեղ առանց նոր ձիերի, նույնիսկ մինչև նոր համաձայնության կնքումը: Սակարկությունը վերջացավ ամեն մեկ ձիու համար հինգ դահեկան (piastre) վճարելով: Այն վիճաբանության ընթացքում, վոր տեղի եր ունենում այս մարդկանց և իմ աղմկարար խմբի մեջ, ես զարմացա վոր մեր ոսմանցի պահապանի վրէ սպառնալիքները ազդեցություն ունեցան և վոչ ել նրա մարակը, յերբ նրա զինվորական յեղբայրներն այնքան մոտ եյին, բայց շուտով լսացա վոր նրանք [զինվորները] կողմնակից եյին գյուղացիներին, և այս պատճառով նա չեր համարձակվում ավելի առաջ գնալ:

Նոյեմբերի 2. — Ցերը բառերի պատերազմը վերջացավ, և մեր ճանապարհորդության համար անհրաժեշտությունները քավական կլոր գումարով գնվեցին, այս առավոտ ժամը յոթին ճամբա յելանք, վորպես պահակ առնելով կեսյերկատանյակ հրացանակիրներ, բայց տակավին մենք հեռացած չեյինք յերբ լսեցինք ընկերների վոխորկը, վորոնք կռվում եյին իրար հետ դրամի բաժանման համար: Բոլոր այն զզվելի տեղերից վոր յես գտնվել եմ, — և քիչ չեն այդպիսիները վոր տեսել եմ Արևելքում, — սա ամենից գարշելին եր՝ կեղտի, վրդովության և կավարարության կողմից... Գիշերը ոդը սառցե պես ցրտել եր և առավոտը յերկինք նայեցինք, մութ եր ու ամպամած և փչում եր սառեցնող մի քամի: Մեր ճանապարհը դեպի հյուսիս եր, կեսը արևմուտք ու հյուսիս ոճապտույտ

լեռներից ի վեր, և մեկ ժամից պակաս ամպերը պայթեցան և սկսավ սաստիկ անձր կարկուտ տեղալ, որ քամին փչում էր մեր երեսին, երբ աղոներով գժվար մի վերելք ունեինք։ Այս կիսակուլը վիճակում ճանապարհորդելիս, մի ժամից ավելի առաջ գնալուց հետո, անցանք մի գյուղից (անունը մոռացել եմ), որ գտնվում է մի խոր անդնդի յեզերքին, որի ստորոտից անցնում է Բազարչի (Bazar Joh) արագընթաց գետակը, որ թափվում է Արփաչայի մեջ։ Մթնոլորտի խառնյան,— որ այսպես շարունակվից կարկուտ գալ ամբողջ որը,— ինչպես նաև գետնի թրջվելուն պատճառով, որ տեղ տեղ շատ կարծր էր ու սահուն, մեզնք հազիվ յերեք մղոն եյինք առաջանում մի ժամում և դրեթե կորել եյինք ցրտից։ Սակայն, յոթը աղաչի [փարսախ] վերջավորության թվում էր թե փոթորիկը մոռնում էր վերջավորության։ Իջնում եյինք բարձունքներից և ժամանակ լինելով Մարաջուք (Marajuck) փոքրիկ գյուղը՝ յերկինքը ավելի պարզ էր, և ներքևում հիանալի մի տեսարան էր պարզվում։ Ընդարձակ տարածությամբ մշակված էր և գտնվում էր Չիլդըր (Tchilder) լեռների հյուսիս-արևելյան ղեկալի մոտ, որոնք կոչվում են Մոսյան լեռներ (Mossian hills), որ այս կողմից կազմում և նրա սահմանը։ Այս հիանալի հովիտի ծայրամասում գտնվում և Կարս քաղաքը։ Մոտենալով գետ նրա դիրքը տիրապետող, կառուցված լինելով մի հսկա ժայռի բարձունքի կողքին, որի գագաթի վրա դեպի արևելք բարձրանում է նրա հնավանդ միջնաբերդը։ Քաղաքի պարիսպներն ուղիղ գծով տարածվում են դեպի արևելք ու արևմուտք գաշտի յերկարությամբ, ապա գնում են ժայռի յերկու կողմից զառիվեր մինչև հասնում են կատարին, ուր կլոր ու քառակուսի մարտկոցներով զորավորապես պաշտպանված են, և միանում են բերդի մեծ աշտարակներին։ Թերևս վոչ մեկ ուրիշ վայր չի ներկայանում ավելի կատարյալ և ավելի հետաքրքիր ասիական ամրացրած քաղաքի մի նմուշ։ Պարիսպներից այն կողմը բավական ընդարձակ մի արվարձան տարածվում է արևելակողմը, բայց յերեք կամ չորս մարտ-

կոցներ, յուրաքանչյուրը հինգ թնդանոթով, թվում է թե միակ պաշտպանողականն են արտաքաղաքին, և միայն այնտեղ և որ տեսա թնդանոթներ եյին դետեղված։ Բացի վեհ յերևույթից, որ նշմարվում է հեռվից, նրա տպավորիչ միջնաբերդի դիրքի ու պարիսպների տարածության պատճառով, տները մի քանի հարկ բարձր են թվում, մեծ մասամբ շինված քարից, տալով մասնավոր շքեղության մի կերպարանք։ Բայց այն րոպեին, յերբ նորա մոտենք նրա հարավային դռնից, պատրանքը փարատվեց. փոխանակ պալատների և պողոտաների, համապատասխան վեհաշուք դղյակին,— ինչ որ հավատում եյի յերբ մոտենում եյինք, կախարդված՝ մի յերկրի խարկանքով տարված մի ասպետի նման,— գտա շրջապատն այնքան տխրատեսիլ, որ կարող եր լինել միայն մի բանտ. մինչ կատաղի կերբերոսը [շուն], որին վերջերս յես շատ լավ եյի ծանոթացել,— կեղտ, ավերակ և գանգատություն,— նետել եր փողոցների անկյունը և մրմռում եր մեր մերձեցման։ Բայց, ճիշտն ասած, զզվելի կենդանին այնտեղ չեր որպես մի պարզ տիպ, ամեն դուռ ու նրբանցք վխտում են հարյուրավոր կմախքացած շներով, ամեն տրիքի ու ամեն տեսակի, և որոնց թրքական տերերը վոչ ուտելիք են տալիս, վոչ ապաստան և վոչ էլ գթառատ մահ։

Բարձրանալով քաղաքի միջից, գանազան ծուռ ու մուռ ճանապարհներով՝ բազարների միջից ու նրբանցքներից, կանգ առինք վոստատանը, մի շենք վոր զորանոցի չափ ընդարձակ եր, բայց իր բազմաթիվ ու բարձր սենյակներն արագորեն քայքայվում են։ Սենյակների պատերը տախտակամած են, ունեն գանազան պահարաններ, բայց ամենից հաճելին այն մեծ կրակարանն եր, նման մեր բարոններն դահլիճներում գտնվածին Անգլիայում, վոր յերբ տեսա բոցավառ խուրձերով դարսված, զգացի անգլիական հանգստավետությունն։ Քաղաքին մոտենալուց շատ առաջ յես մոռացել եյի սարգարի ինձ արած նախազգուշացումը, բայց վերհիշելով նրա աղաչարությունը, թե ժանտախտը «կիսաբը-

նակ և դարձրել այդ վայրը», այն բոպեին լուրը տեսա նրա ամենամեղսատու բնակիչներին, որոնք փոստատան մեջ անցուդարձ եյին կատարում, հարց ու փորձ արի այս տարաձայնության ճշտության մասին, և ինձ ասին, «լուրերիդ ճշմարիտ չեն այդ տեղեկությունները»։ Բայց, իրական փաստը յես գտա վոր հետևյալն եր. դա հին սիստեմն և ամեն դոհողություն անել ագահության համար, և նորին գերազանցության [սերդարի] ճշմարտությունը բացատություն չեր կազմում.... Ժանտախտի տարածայնությունը արդելք և հանդիսանում՝ կարսի դաշտից հայտահատիկ ու բամբակ գնելու Յերևանում վաճառելու համար, վորտեղ այս միջոցին դրանց համար մեծ պահանջ և զգացվում, և հետևաբար նրանք վոր այդ յերկու արտադրությունների համար մենավաճառ ունեն այդ կառավարության մեջ, վաճառում են արտակարգ գներով՝ սարսափահար ու տագնապահար մարդկանց։ Բայց, վերադառնանք քաղաքին։

Անտարակույս Կարսը Պոդոմեոսի Կարսան (Charsa) և, յերկար ժամանակից ի վեր թրքական սերտպատության ամենազորավոր ամրոցներից մեկն և համարվում, և հյուսիսային սահմանի փաշայի բնակավայրն և։ Իր դիրքին պատճառով, վորպես Հայաստանի հյուսիսային բանալին, բազմաթիվ անգամներ դիմադրել և պաշարումների, և պատերազմական դեպքերի հետևանքով յենթակա յե յեղել փոփոխությունների։ Մուրատ Գ. վերականգնեց բերդի գլխավոր ամրությունները, այնպես ինչպես վոր մենք տեսնում ենք այժմ, և մոտավորապես յերեսուն տարի առաջ մի հնգանկյուն ամրոց ևս են ավելացրել։ Ներկա կառավարիչ Մուստաֆա փաշան շատ և հարգվում թե ոտարականների և թե տեղացիների կողմից, վորովհետև անցյալ պատերազմին գերի լինելով ռուսների ձեռքում, այն վերաբերմունքը, վոր նրանք ունեցել են նրա հանդեպ, փարատել և նախապաշարումը վոր սովորաբար նրա ատելճանի թուրքերն ունեն յեվրոպացիների վերաբերմամբ։ Քաղաքի բնակչությունը կազմված և մոտավորապես 10.000 ընտանիքից, վորոնք

բաղկանում են ժամեղականներից, քրիստոնյաներից և հրեաներից, այսինքն թուրք, քուրդ, հայ, վրացի, խորանելացի և մի քանի պարսիկ վաճառականներ։ Անտարակույս այսքան ազգերի մեջ առևտուր չի պակասում, բայց բարգավաճման ներկայությունը վոչ մի տեղ չի նկատվում։ Այստեղ առատ և փայտ՝ վառելիքի ու այլ նպատակների համար, քաղաքի արևմուտք գտնվող մեծ անտառներից բերվում և մեծ սայլերով։ Նույն անտառային տեսարանը ներկայացնում և նաև Յերևանը, և նույն ուղղությամբ ուրիշ քաղաքներ։ Արփաչայի վրայով փոխադրում են փայտ։ Այս գետը, վորի յերքումն և բերդը, քաղաքի արևմտյան կողմից հանկարծ ծռվում և և ապա հոսելով ընդարձակ միջնաբերդի ժայռի հյուսիսային կողմի շուրջը, վոլորվում և հարավ-արևելք մինչև հասնում և Հաջի Բայրամլու և շուռով թափվում և Արաքսի մեջ։ Կարսից հարավ-արևելք մոտավորապես չորս աղաջ [փարսախ] տարածվում և մի փոքր լիճ, մոտ յերեք մղոն լայնության, նշանավոր և ամենահամեղ ձուկ արտադրելուն համար և ունի այնքան շատ անուններ, վորքան նրա հատակի ձկան ցեղերը։ Վոմանք անվանում են այն Բալա-Կացիո (Bala Katsio) կամ Իզուր-գյոլի (Izur-Guely), կամ Չինգլու (Chinglu)։ Ժամանակը հասել եր վոր յես համարվեյի իմ յենիչերի Ահմեդ Ագայի հյուրը, քանի վոր այժմ մենք գտնվում ենք բոլորովին թրքական սահմաններում, հետևաբար նա ակսավ մատակարարել իմ ճաշը. յես թե անոթի եյի և թե հետաքրքիր տեսնելու համար թե ինչ պիտի տա Կարսի չափար-խանաճ (choppar-khanah) կամ փոստատունը։ Մեր ժամանումից մոտ յերկու ժամ հետո խնջույքը հայտարարվեց։ Նա իր մուտքը գործեց [ներելով] Պարսկաստանի անձեռնոցի նման մեծ հացը, ապա մի ցածր աթոռակ (stool) դրվեց հատակի վրա, և մի լայն անագյա կլոր ափսե գետեղվեց նրա վրա, բազմաթիվ մեծ պնակներով և մի մեծ [պնակ] կենտրոնում՝ լի մի տեսակ փիլավով՝ շինված ցորենից, փոխանակ բրինձից և խառնված առատորեն վոչխարի մսի կտորներով, ընդհանրապես համով կերակուր։ Նրա կողքին կար մի դեզ

տավարի մսի քաբաբ (kababs), վրան դրված ջարդված հում սոխի կտորներ...

Նոյեմբերի 3. — Երդրում գնալու համար առացած լինելով անհրաժեշտ բոլոր արտոնութիւնները, այս առավոտ հանդարտորեն թողինք մեր ոթևանը, առանց վորևե անախորժութեան։ Ձիերը շտապով դուրս բերվեցին և նուէնքան շտապով բեռցրին, և ամեն ինչ նպատակաւոր լինելով, առավոտ ժամը մոտ տասը մեկին մեկնեցինք կարսի դռնից։ Ճանապարհը շատ լավ եր, և շուտով թողնելով արևելյան արվարձանը, ուղղվեցինք դեպի արևմտակողմ և դեպի ափը մեր աջ կողմում։ Այդ ուղղութեամբ տարածվում և դաշտը, վոր ցույց եր տալիս գործունեյա հողամշակութեան բոլոր նշանները, մինչ Արփաչայի, — այստեղ կոչվում և Կարս,— առատ ջրերը զարկ են տալիս արդիւնաւետութեան, ոժանդակութեամբ բազմաթիվ վտակների, վորոնք հոսում են մերձակա լեռներից։ Մեր ճանապարհ կտրելուց հետո հասանք Կումբաթ (Koombat) գյուղը, վոր կերևում եր շատ հեռվից և մի հին ցեղեղեցուկ ավերակները վեր էին բարձրանում շրջապատի հյուղակներից։ Մեկու մղոն այն կողմ գտանք Թամբուրա (Tamboora) գյուղը, և մի քիչ դեպի աջ Մուչա (Mucha)։ [Այստեղ ուղեկիցը նկարագրում և բազմաթիվ սայլեր, վորոնք փայտ էին կրում դեպի քաղաքը]։

Ամեն տեղ աշխատութեան նշաններ են կերևում, և ամենուրեք ցրված են բազմաթիվ գյուղեր, փակչած գետնին։ Այսպես ասել կարելի է գյուղական հյուղակների համար, վորովհետև նրանք վորված են գետնի մեջ, և բացի նրանց կտուրներից շատ քիչ բան և կերևում գետնի երես։ Դուռը մի պարզ ծակ և, վորից ընակիչը ծռելով, կեթե վոչ սողալով դուրս և գալիս։ Ներսում կա մի ընդարձակ մռայլ վորջ, կտուրից լուսավորված կերկու կամ կերեք ուրիշ ծածկերով, և ընակիչները ներդաշնակ են տեղի հետ. մարդ, կին ու կենդանի թավալում են միասին, կամ վորևե զանազանութեյուն անելու համար, գնում ենք կենդանիներին մի քանի վոտք ցածր իրենց տեղերից ու տիրուհիներից, վորոնք իրենց համար մի բարձրութեյուն են շինել և անկյունում մի կրակարան, վորի շուրջ կան մի քանի կեղտոտ կապերտներ, անա, այնտեղ են ապրում նրանք, սա պարզ փաստ և, այնքան կերջանիկ, վորքան նրանց թուրք իշխանավորները իրենց հարեմներում։ Այս տեսակ տներով գյուղեր ելին և շատ հավանորեն Հայաստանի այս մասնում դաշտում, կերբ Քենոփոն ու իր հոգնաբեկ զինվորները առաջին անգամ տեսան և ապա կռվեցին՝ ապատան գտնելու համար։ Ժամը յերկուսին մենք անցանք աջից Բաղլի Համմոտ (Bagley Hammot) գյուղը, և յերեքին վերատին անցանք Արփաչայից (կամ Կարս գետից), թողնելով նրա ընթացքը դեպի հյուսիս-արևելք. ասում են թե նրա աղբյուրը ուրը ժամ հեռու և այստեղից։ Ժամը չորսին հասանք մեր ոթևանը Զավալուք (Zow-walake) գյուղը, ի հարկե նմանապես գետնափոր։ Հեռավորութեյունը կարսից համարվում և հինգ աղաչ, կարծում եմ վոր քսան մղոնից պակաս չե։

Նոյեմբերի 4. — Այս առավոտ ժամը ուրից հետո թողինք մեր նապաստակի վորջը, վորովհետև մեր ղեկավարը պահանջեց վոր հավաքեր, այդ որվան ճանապարհորդութեան յենթադրված վտանգների դեմ. այստեղից գրեթե մինչև երդրում վխտում են ամենավատ տեսակի քուրդ ավազակները։ Իմ համբերութեյունը սպառած եր, կերբ մեր յենիչերին յերևեց անցած իր ընտրած պահակախմբի գլուխը, վոր բաղկացած եր հարևան գյուղից [հավաքած] մի յերկուսանյակ հրացանակիրներից։... Նրանք [պահակները] պատրաստ ելին, կտրել մի պլուխ, ինչպես մի քսակ, իսկ լուրջ դիմադրութեան պարագայում վախուստ տալու, թեև իրըև նրանց հիմնական հատկանիշ անհիշատակ ժամանակներից դողութեյունն ու սպանութեյունն ամենայն հավանականութեյամբ յեղել են նրանց ցեղի կոչումը։ Խոստովանում եմ վոր այս տեսակետից կասկածանքով եյի դիտում նրանց, բայց մեր յենիչերին թվում եր թե կատարելապես գոհ եր, [հետևաբար]

յես չեյի կարող այլ բան անել, այսպես մենք շարժվեցինք դեպի առաջ այս տեսակ վողորմելի պաշտպաններով՝ դիմագրաելու «Սողանլուի լեռերական կիրճի» վտանգները։ Մեր ճանապարհը գրեթե նույն ուղղությամբ եր, ինչվոր յերեկ և տակավին բարերեր, ու բազմաթնակ դաշտի միջից մոտ ժամ ուկես ձիավարումից հետո, հասանք նրա արևմտյան սահմանը, և այստեղ սկսում է ահավոր ձորը։ Այդ կետում իմ վարձկացներէ խումբը նստեց ու լցրեց իր հրացանները... կարճ խոսքով յես բավական վատահ եյի, վոր յեթե իրական մի վտանգ պատահեր, պետք չեր վոր յես կախում ունենայի նրանցից, իրրև պաշտպանների։ Այս շրջանայց գործողությունը կատարվելուց հետո Ահմեդ աղան [յենիչերին] դասավորեց մեր ուժը և կազմելով բավական խիտ շարք, սկսանք առաջ գնալ։

Մեր առաջ բացվող տեսարանը ներկայացնում եր բնության վերին աստիճանի մի վեհություն... ժամը յերկուսին հասանք Սողանլու Դաղ (Saganloo Dagh) կիրճի բարձրագույն կետը, վոր Չիլդըր (Tchilder) կամ Մոսյան (Mossian) լեռների ճյուղն եև Արաքսի հովիտի հյուսիս-արևելյան սահմանն եր։ Շրջապատի բոլոր բարձրությունները, մեր անցած ճանապարհի նման, ծածկված եյին հավիտենական անտառներով... Իրար կարող ձորերից այն կողմ տեսանք մի մեծ խանի ավերակները և մի քանի յարդա նրանցից այն կողմ նկատեցինք մի ուրիշ աղբյուր, վորի հատակ ջրերը կազմում են բավական մեծ մի վտակ, վոր լեռների միջից անցնում և վոլորապտույտ և հեռուհեռ մեծանում ու թափվում է Արաքսի մեջ։ Մեր ուղին այժմ ծռվում եր դեպի հարավ... [Ջանց եմ առնում բնության ու ճանապարհի մանրամասն նկարագրականը, ինչ վոր հեղինակը տալիս է, չմոռանալով ամեն մեկ ժայռ, բարձունք կամ վտակ։ Նա ասում է թե այնտեղ ապրում են միայն ավազակներ և անց ու դարձ կատարողներն ամեն րոպի վտանգի տակ են գտնվում։]

Մեր վերջում գյուղը գտնվում եր լերան ստորոտը։ Այս շրջանի բնակիչներն այժմ կոչվում են «ընտանի քուրդեր»։ Այս ամբողջ լեռնաշղթայի բնակիչները պատկանում են այդ ցեղին և բաժանված են բազմաթիվ աշիրեթների։ Մենք վար իջանք ձիերից մեր ոթևանի կատուի վրա ժամը չորս ու կեսին։ Ջավալուքից հեռավորությունը տասնյերկու ժամ են հաշվում, բայց իմ գատողությամբ քառնուքը մղոնից ավելի չե, և կամ յոթը փարսախ... Մեր ներկա մեծգիլի անունը Մազենգութ (Mazengutt) [Մժնկերտ] եր։ Նրա մանուկ լուն պես գրավեցինք ճանապարհորդներին հատկացրած տան բավական խոշոր մասը, վոր արդեն լի յեր բազմությամբ, բայց կարելի չե նկարագրել այս չափար-խաճայի տաքությունն ու խեղդիչ ոդը... Մարդիկ, ձիեր և այլն բոլորը միասին խռնված են միևնույն ծածկի տակ, փչ անգամ յերեսունից կամ քառասունից պակաս չորքոտանի կենդանիներ կազմում են նրա բնակչությունը, այնպես վոր կարելի չե բավական գաղափար կազմել ապականիչ արտաշնչության, ինչպես նաև տեղի տաքության մասին։ Բացօթյա ժայռերին ապաստանելը՝ թվում է բնական փոփոխակը, բայց տարվան այս յեղանակին, վոչ մեկ ճանապարհորդ չի համարձակվում ընտրել այդպիսի մի ոթևան, և վոչ ել շարունակել իր ճանապարհը այնքան մութ ու ցուրտ գիշերվան մեջ, յեթե միայն գործով պարտավորված չե, ինչպես յերբեմն թաթարը (փոստատար յենիչերին) շարունակում և մայրամուտից հետո և իրեն մատնում և այս ավազակների լեռների, ձյունի ու սառուցյալ անդունդների վտանգին։

Այստեղ մեզ միացավ կարսից յեկող թաթարներից մեկը։ Նա վերադառնում եր կ. Պոլիս։...

Նոյեմբերի 5. — Յերեկ գիշերվան մռայլ գետնափորի յերևույթը վորքան կոպիտ եր, այս առավոտ իմ քուրդ ձիավորների յերեվելը միացած շրջապատի տեսարանի հետ, նույնքան վայրի ու կատաղի պատկեր եր հատկանշում։ Նիզակ, կլոր վահան, դանակ, աղեղ, ատրճանակ, ռազբոյնիկական ձանք, հին ու նոր, ամբողջացնում եյին նրանց բարբարոս շորքը։... Ավազակապետի ավերակ բերդը բարձրանում և անմիջապես նրանց վերև. գորշ բարձր լեռան խոր ստվերի

ռակ:... Մենք սկսանք արևածագից անմիջապես հետո և Մժնկերաի անդունդն անցնելուց հետո, սկսանք բարձրանալ լեռը դեպի հարավ արևմուտք, բարձր ձորերի մի անցքից, իրար խառնված ծմակներից և վտանգալից ու ապառնացող հեղեղատներից։ Ավելի բաց տեղերում հանդիպեցինք բազմաթիվ յեղներին, բեռնված յեղևնի փայտով, որ հարևան անտառներից կրում էին դեպի հովիտները։ Սրանք Երզրումի համար էին. ապահովության համար նրանք մեծ խմբերով են շարժվում. փոքր խմբերը քիչ անգամ խուսափում են կողոպուտից, այսինքն կենդանիներին հափշտակում են և քշողներին մերկացնում։ Այս թալաններր սովորաբար կատարում են Յերևանի իշխանության տակ գտնվող քուրդերը։ Արդարև այդ նահանգի լեռնականների խմբերը հաճախ արշավում են այսքան հեռու, սակայն տեղացի ավազակներն էլ առիթից ոգտվում են և թալաններ են կատարում, թագնված նրանց քողի տակ։

Բավական ժամանակ դեպի հարավ-արևելք գնալուց հետո, տեսանք Քոս դաղ (Kuss Daghe) [լեռան] բրգաձև գագաթը, և մոտ մի ժամից հասանք Զեբին (Zebeen) գետը, որի աջ բյուրը տեսել էինք Սոպանլու լեռներում, հին փլփլած խանի մոտ։ Նրա յեզերքից մի քանի յարդա այն կողմ, տեսա մի մեծ քարե շենք, հիանալիորեն կառուցված, այժմ ավերակ, որ նախապես տաք ծծմբային ընդարձակ մի բաղնիք և յեկել։ Իմ ձեռքը ջրի մեջ դրի և դուս վոր շատ մեծ տաքություն ուներ, բայց ատելճանաչափ չունենալով չէին կարող ճշտել նրա աստիճանը։... Այնտեղից անցանք գետը և շարունակեցինք մեր վտանգավոր ճանապարհը բլուրների մեջից։ Ժամը տասնմեկից քիչ հետո անցանք Որդուզ (Ordooze) գյուղը և գետակը, և կես ժամ ևս մենք յեկանք հյուղակների մի այլ հավաքածու Ազուբ (Azub) անունով, որտեղ բնակում են նեստորականներ։ Հեռանալով այն տեղից սկսանք աստիճանաբար իջնել մի զեղեցիկ հովիտ.... ծածկված արածող հոտերով ու նախիրներով, իմ ընկերակիցները ասին վոր շատ գյուղեր կան այնտեղ, բայց նրանք այն

քան ներքևում էին, վոր նկատելի չէին։ Ժամը յերկուսին մենք այնքան մոտեցանք վոր տեսանք նրանցից մեկը, վոր իմ տեղեկատուն Արան (Aran) անվանեց։ Ժամը յերեքին հասանք մեր վայրեջքի անկանոն վերջավորության, վոր կատում ճանապարհը բաժանվում է՝ մեկը դեպի ձախ, դառնալով մի բարձր բլրի շուրջ և վերջանում է Քյուփրի — Քեոյ (Kupri — Kiey) գյուղով, Արաքսի մոտ, ուր մի զեղեցիկ քարե կամուրջ կա, և ունի նաև մի մեծ խան հիանալի յերևույթով։ Մեր բարձր դիրքից յերկուսն էլ տեսա, ինչպես նաև գետը, [Արաքս], վոր հոսում է հարավ-արևմուտքից, և այնտեղից նշմարում էի նրա մանվածապատ ընթացքը գրեթե մինչև նրա աղբյուրը։ Նրա բղխած լեռների հատուկ անունը Շու-վելուն-դաղլար (Shoo-welun-dagler) է կոչվում։ Նրանք շատ բարձր են, և նրանց հարավակողմը (Արազի աղբյուրի գրեթե հակառակ կողմը, նրանց հյուսիս-արևելյան ճակատում) Բին-Գյոլն է (հազար աղբյուրներ), Յեփրատի արևմտյան գլուխներից մեկը։ Ճանապարհի բաժանման տեղը հայ քահանան և նրան ծառայող մարդիկ բաժանվեցին մեզանից, գնալու համար իրենց վանքերից մեկը, նվիրված ս. կույսին...։ Մեր ուղին անցնում էր մի հարթ զառիվայրից, հեշտ անցնելի և շուտով մենք յեկանք մի ընդարձակ հովիտ, ինչ վոր յես նկատել էի վերևից։ Լեռները բոլորովին շրջապատում են նրան, բացի արևելքից, ուր բացվածքը անցք է թողնում Արաքսի համար, բայց հովտի տարածությունը լեռնից լեռ քան մղոն է։ Մենք մոտեցանք [մեր ոթևանին], յերբ գիշերը մոտենում էր, բայց շուտով ավելի մթնեց քան որվան այդ ժամանակը, ամպեր հավաքվեցին լեռների վրա...։ Ժամը հինգ ու կեսին հասանք Հասան Կալեյի շրջակայքը, վոր յենթադրվում է, թե հին Թեոդոպոլիսն է[?]։ Ժայռոտ բլուրի տորոտի շուրջը դառնալուց հետո, վորի վրա յերևում է թե քաղաքը շինված է, մի զռնից ներս մտանք, և մոտ յերեսուն յարդա առաջ գնալուց հետո, անցանք մի յերկրորդից, յերկուսն էլ ավերակ վիճակում, բայց տակավին պա-

հում եկին հին դանգվածային դռները, զորավորապես ծածկված յերկաթով։

Մեր օթևանը մոայլութեան ու խեղդող բազմութեան տեսակետից մի քիչ ավելի եր քան նախորդ գիշերվանը, թեև չոփար-խանայի տերը ավելի քաղաքավարի եր, և ընդհանրապես Հայաստանի ոսմանցիներն ավելի ընտելացած են քրիստոնյաների հետ, քան պարսիկների տորին դասերը։ Ոսմանցիները պատրաստ են մինուչև ամանից ուտել ու խմել, — մինչ պարսիկները դա սիրտ են համարում։ Այստեղ մենայնիվ մեծ թագավորի [Շահի] սովորութիւնները թուլ են տալիս հիասւսի հետևողներին հարվածի դեմ հարված տալ այն անձերին, վոր իրենց վրա են հարձակվում, մինչ թուրքերի կառավարութիւնը կամ կորում է նրա ձեռքը, կամ դրկում է կյանքից վորևե քրիստոնեայի, վոր հանդգնում է դարնել Մարգարեյի մի առաքյալին։ Մժնկերտից մինչև Հասան-Կալե հետավորութիւնը տասնյերկու ժամ է համարվում,... այնպես վոր ամենից շատ քառասուն մղոն եկինք անցել։ Հասան-Կալե քաղաքն ու բերդը շինված են լեռներից դուրս ցցված մի կետի վրա, վորտեղ արդարև ամենահարմարն է, բնականից յերեք կողմից անառիկ լինելուն համար։ Գագաթին բնաբլած է ամրոցի համար և ըստ այնմ շրջապատված է աշտարակավոր կրկնակ պարսպով... Թրքական Հայաստանում ամենազորավոր տեղերից մեկն է համարվում, բայց ինչ վոր կես կարող եի նկատել, մի թնդանոթ անգամ չկար։ Ձես ցանկանում եի ավելի մոտից քննել, բայց ինձ թուլ չտվին մտնել ամրոցը. կառավարիչը, վոր Երզրումի սարասքյարի հրամանատարութեան ներքո է, խիստ հրամաններ տվել։ Քաղաքը կառուցված է ժայռի հարավ-արևմտյան գագաթի վրա, շատ հարմար դիրք մի քաղաքի համար աշխարհի այս մասում, և անտարակույս շատ տպավորիչ է ուներևագետ։ Կրկնակ պարիսպներն ու աշտարակները շրջապատում են ամբողջութիւնը։ Նրանք քարից են և հիանալիորեն կառուցված։... Ժամանակը շատ ավեր է գործել, այնպես վոր յերեք հունական կամ հայկական արձանագրութիւններ յե-

ղել են, նրանք բոլորովին մաշած են։ Դրսի դռան վրա կա քրքերեն մի գրութիւն։ Այս յերբեմնի նշանավոր տեղի բնակչութիւնը այժմ 3000 չի անցնում, բայց նրանց մեկլերըորդը հրեա է։ Ձերկու անունով, Արազդ-չայ (Arast-chai) և Նեբբի-չայ (Nebby-chai), մի փոքրիկ գետ հոսում է քաղաքից քիչ հեռու արևելյան ուղղութեամբ և միանում է Արաքսին Ջևոփրի քեոյից մի քիչ վերև։ [Ապա մեր ուղեգիրը յերկարորեն պատմում է Քսենոփոնի անցքը Հայաստանից և աշխատում է ճշտել նրա հիշատակած անուններն իր ճանապարհորդած ու տեսած վայրերի հետ. էջ 663-666։]

Նոյեմբերի 6. — Այս առավոտ ժամը յոթին մենք ճանապարհի վրա եկինք, արագորեն անցնելով մի դեղեցիկ հարթ ուղուղ։ Ձերկու մղոն գնալուց հետո անցանք Ելիման (Eliman) գյուղը, և ութը ժամու ձիարշավից հետոնք կարայոք (Karajok), վոր ասում են թե Հասան Կալեի ու Երզրումի կես ճամբան է, կարայոքից սկսանք ավելի դանդաղ առաջանալ յերկու մղոն մինչև ստորոտը այն լեռան, վոր արևմտակողմից սահմանն է մեծ հովիտին։ Այժմ մենք սկսանք բարձրանալ լեռնից վեր։ Ճամփն խայթող սառն եր, բայց յերկինքը պարզ եր ու անամպ, և յուր նայելով մեր թողած հեռավոր յերկրին, յես կրկին տեսա վեհաւոր Արարատը...։

Մեր դիմաց գտնվող բարձունքը անհարթ եր ու խորտուբորտ,... մինչ այն կիրճը վորից վոլորապտույտ գնում եկինք դանդաղորեն, յերկար եր և մասամբ ձառիվեր։ Մոտ յերեք ժամ տեվից մինչև անցանք այդ տեղից։ Մյուս կողմից մեր վայրէջքին Երզրումը (Arzeroom) ամբողջութեամբ եր մեր աչքի առջևն եր, կանգնած ներքևում ձորի կենտրոնում և ամբողջութեամբ շրջապատված լեռներով։ Ձերը տեսանք այն, մեզանից յերեք մղոն հեռու եր։ Քաղաքը մեծ եր յերեվում, և նրա քարե մեծ տները, շքեղութեան մի յերևույթ եկին տալիս, վոր թեև ամբողջութեամբ անհետացավ, յերբ մոտից ծանոթացանք։ Սակայն և այնպես թե հեռվից և թե մոտից նրա ամբացած միջնաբերդը, հաճախակված ու վայելուն մզկիթները և գերազմանատները լի հուշարձաններով,

աչքի ելին ընկնում բաղդատելով Պարսկաստանի մի նոր քաղաքի նման կառուցվածքներին։

Ժամը տասնմեկ ու կեսին մտանք [Երզրումի] արվարձանները և քիչ հետո անցնելով մի ընդարձակ բազարի կերկայնքից, ներս մտանք կերկրուղ դարբասից, որոնք զորավորապես ծածկված եյին կերկաթով և [ժամանեցինք] քաղաքը։ Մի քանի րոպե նս՝ յեկանք փոստատուն, ամենավողորմելի մի վայր՝ կեղտի ու ավերի տեսակետից. այնքան լքված, որ հազիվ թե մի անձ կերևում եր նրա բակում և ոչ իսկ մեկ ձի նրա ընդարձակ ախոռում։ Բայց ամեն ինչ յեռուն եր, թե մարդու և թե կենդանիի կողմից, մեր ճանապարհին մինչև այս լքված օթեվանը, որի պատճառը շուտով Սեդաքը (Sedak) [Սատըք] բացատրեց ինձ։ Կարճ խոսքով, իմ բարեկամ սարդարի քուրդերը նորից իրենց ուժն եյին փորձում Թրքական հողամասում, և առաջացած լինելով՝ ավարի եյին տվել մի դյուղ Երզրում քաղաքից վոչ այնքան հեռու։ Կառավարիչը շտապով ուղարկում եր ձիավորներին ու նրանց ավարը։ Փաստորեն սուլթանի արևելյան հողամասերը թվում և թե գտնվում են յերկու կրակի միջև.— Քերևանի սարդարը՝ դեպի հյուսիս արևելք և Բիբմանդահի Մահմեդ Ալի Միրզան՝ դեպի հարավ արևելք, որովհետև առաջինն պատմությունը լսելուց հետո, յես տեղեկացա մի ուրիշ աղեղի մասին։ Վերջին իշխանը մի պատրվակով արշավել եր Բաղդատի փաշայության վրա...

Նախատեսելով ճանապարհորդելու դյուրության պակասությունը, հավանական և վոր յես ստեպվեյի Ջոլ Երզրումում. հետևաբար զատեցի փոստատնում գտնված ամենից հարմար հարկաբաժինը և պատրաստվեցի համբերությամբ տանել վորևե պատահականություն, վոր կարող եր տեղի ունենալ։

Նոյեմբերի 7 — Այս առավոտ սարդարի նամակը Սեդաք բերի և Ահմեդ աղայի հետ ուղարկեցի սերասքյարին, խնդրելով վոր արագորեն ինձ տրամադրվեն ձիեր և պահակներ՝

ճի ճանապարհորդության համար։ Նա այս պատվիրակներին ընդունեց մեծ քաղաքավարությամբ, հակառակ վորին նախակ դրոշի հպատակները այնքան հայտնորեն թշնամաբար մնջ եյին թրքական պետության հետ, և յերբեք չվարանց անմիջապես ինձ ուղարկել բոլոր անհրաժեշտ վկայականները, թեև նա միաժամանակ նկատել տվեց թե հապաղումի համար բոլոր ձիերը դուրս եյին տարված և յես չեյի կարող շարժվել մինչև նրանցից մի մասի վերադարձը, վոր հավանորեն յերկու որից առաջ չեր կարող լինել։ Ուրիշ լեռ չինելու պատճառով յես խաղաղորեն ենթացի իմ ոթևանում, ջանալով հնարավորության սահմանում տեղեկություններ հավաքել իմ թուրք ու հայ այցելուներից։ Վերջիններից [հայերից] տեղեկացա թե քաղաքի բնակչության թիվը՝ մոտավորապես 6000 քրիստոնյա եր և 50.000 մահմեդական։ Կան քառասունհինգ մզկիթ և յերկու եկեղեցի։ Ամենահին մզկիթներից յերկուսը դեղեցկորեն զարդարված են աղյուսով և գունավոր կղմինտրով, վորոնք ուրիշ փայլուն մինարեթների հետ վեր են բարձրանում կառավարչի պալատի ամուր պարիսպներից, և վորոնք հեռվից փառավոր յերևույթի պատրանքն են տալիս քաղաքին։ Բացի այս, ներքին ամրություններից, քաղաքը դրսից պաշտպանված և կրկնակ բարձր պարսպով, լավ կառուցված և հավելվածաբար զորացված բարձր աշտարակներով։ Դրսի պարիսպը պաշտպանված և խոր խրամատով, բայց բոլորն էլ այժմ զանցառված են, և հետևաբար ավերակ վիճակում։ Փոստատունը արտաքին պատնեշից բարձր լինելով, յես լավ պատկերություն ունեյի դիտելու արվարձանների բավական մասերը, վորոնք տարածվում են պարսպի շուրջը։

Նոյեմբերի 8. — Ճանկանալով մի քիչ մոտ լինել դեպի կառարներին և նաև տեսնել պարսպից ներսի քաղաքը, յես մարդ ուղարկեցի նորին Թրքական գերազանցության, խնդրելու վոր թույլատվություն տա մեզ դալու քաղաքի սրտում, բայց այստեղ մի տեսակ նախանձախնդրություն հայտնաբերվեց, վոր յես յերբեք չեյի տեսել Պարսկաստանում. պատ-

գամավորի ընդունած պատասխանը այս եր. — «Ցեթե քո տերը ցանկանում է վորևե բան գնել արվարձանի շուկայում, վոչ մեկ առարկություն չկա վոր նա գնա այնտեղ, իսկ բացի իր գտնված տեղից, քաղաքի ուրիշ մասեր տեսնելը, վորևե դոհացում չպիտի տա նրան, քանի վոր մի տուն նման է մի այլ տան, և այդպես են բոլոր փողոցները»:

Այս վճռական պատասխանը վերջ տվավ քաղաքը դիտելու իմ վորձին, բացի այն ինչ վոր կես կարող եի տեսնել իմ պատուհանից, վոր Թուչունի մի ակնարկ եր տալիս և պատկերություն եր ներկայացնում բնիկների նկարները դծելու: Թուրքի սովորական հագուստը ծանոթ է գրեթե բոլոր եվրոպացիներին, այնպես վոր հարկ չկա կրկնել մարդամանություններըը, բայց տարբեր աստիճանների և տարբեր պրոֆեսիաների հետ կապված մասնահատկություններ կան, վոր համառոտակի պիտի նկարագրեմ: Գլխանոցը ընդհանրապես ճշտորոշում է կրողի կոչումը. ձիավորներն ու պինվորական բանակալինները հեռվից ճանաչվում են իրենց բարձր գլանաձև գլխարկով: Այս աշտարակաձև սպասվարտի ճակատի շուրջը փաթաթված և նեղ ու չերկար բազմագույն կտավե կամ մետաքսե կտորով, մինչ նրան ընկերացող համազգեստը մի դորշ կարճազգեստ է, համան հասարակ ժողովրդի հագուստին, միայն գլխի չեռնն ու ուսերը ավելի զարդարված կարմիր, կապույտ ու գեղին ժապավենով: Բացի սրանից, չափազանց լայն տաբատը իջնում է մեծ կոշիկների վրա, բայց նրա հագուստը այնքան էլ պարզ չէ, — մի լայն ասեղնագործված գոտի կապված է նրա մեջքին, վոր պարունակում է մի զույգ չերկար տաբճանակ. նրա ուսերից մի պարանից կախված է մի սուր, մինչ մի կես չերկտասնյակ կաշեպարկեր ուրիշ այլ և այլքի հետ ավելացնում են նրա տեսքի նկարագեղությունը և պաշտոնական կեցվածքը:

Ժողովրդի վորոշ կարգերը կրում են քրդական կարմիր ապարոշ, բայց նրանց աստիճանը թվում է մի քիչ վեր և պլուզացիներից կամ տնային սպասավորներից, վորոնք իրենց պլուվը ծածկում են վորևե գույնի մի գոտկով, վորի շուրջը փաթաթում են մի մեծ կտոր՝ պարզ կամ նկարուն մի լաթ: Թուրքի հանրածանոթ լայն փեշը և մեծ փաթաթոցը սովորական են առևտրականների և բարձր դասերի մեջ, գլխարկը վոր տարբերությունը միայն գույնի և կտորի մեջն է, բայց նրանց պատրաստությունը և նույնիսկ չրեղությունը հաճախ կերևակայության վեր են, և այնքան կատարելագիս խառնում են աչքը, վոր մի փորձառու ոտարական, չկրե նայում և այս պերճաշուք անձնավորությունների թափորին, նրանց խայտաբղետ հանդերձանքով, չի կարողանում զանազանել մեկի աստիճանը մյուսից: Հիշում եմ, չկրե մտնում եի կարս քաղաքը, հանդիպեցի շատ ճոխորեն հագնված մի պարոնի, վոր իր ծանր ու իշխանական քայլվածքից կարող եր պատանել վոր չես շփոթելի փաշայի վեզիրների հետ, չկրե նա իր մի ձեռքում չունենար փոքրիկ ճրագալ մոմի աշտանակ և մյուսում մաճունի մի ամաո, վոր նրա խոնարհ աշխատանքի հանգամանքն եր հայտարարում:

Թաթարները կամ յենիչերինները հագնում են մութ գեղնավուն կարմիր գույն. Նրանց սովորական գլխանոցը սև, գառնուկի մորթից շինված բարձր վակերն է, վորի կատարը վերջանում է մի հակայական բարձով, գեղնագույն կտորից: Յերբ նրանք բանակ են մտնում, այս վակերը նրանց գլխավորն և նվիրում, և կարող և համարվել սահմանավորում, վորովհետև կրողը չեթե իր պատկանած մարմինին անպատվաբեր մի գործ կատարե, գլխանոցը առնվում է նրանից, և այդ որից նա այլևս յենիչերի չե:

Երզրումը փաշայություն է, բայց չերբ չես այնտեղ հասա այժմու փաշան բացակա եր, կ. Պոլիս գնացած լինելու համար, և այսպես իշխանությունը գտնվում եր սարասքյարի ձեռքում: Քաղաքը Հայաստանի հին մայրաքաղաքներից մեկն է, հին ժամանակ կոչվում եր Արծն (Arze):

Նոյեմբերի 9. — Այս առավոտ շատ կանուխ բերին մեզ հատկացված ձիերը, բայց զանազան պատճառներով ժամը հինն եր չերբ մենք ազատվեցինք մեր ամենակեղտոտ մեհ-

գիլից, Արևելքի սովորական դանցառութ յան մի չափազանցութ յուն, և մասնավորապես աննեղի այտեղի համար, քաղաքի ունեցած առատ ջրի պատճառով, որը գալիս և վոչ միայն լեռների անհամար աղբյուրներից, այլ նաև քաղաքի ու արվարձանների դանազան մասերում բազմաթիվ աղբյուրներ կան։ Արևմտյան դուռը դնալու համար, որտեղից մենք պետք եր որ մեկնեինք, մենք գարձանք դրեթե ամբողջ քաղաքի շուրջը, բայց մեկն ելիու պարիսպների միջից, և այն տեղից կերը դուրս եկանք մենք այլևս ճանապարհի վրա եյինք, որ անցնում և մի կերկար փոսից, ուր գտնում են բնակիչների դերեզմանները։ Այս անվրդով հանդստի լուս բնակարանների շուրջ տեսա բազմաթիվ կանգնած քարեր, որոնց գեմքերը ծածկող կերկար սպիտակ բոցերը և նրանց վրան ու ոտների այլազան կեցվածքը, մատնացույց արձանների կերևույթ եր տալիս, որոնք դրված եյին վրացույցի պերքով, մեկնած մյուսների վրա։ Երդրումի սովորական չափրան գտնազանում և Պարսկաստանի ու Բաղդատի քաղից, որոնք դլխավորապես կարմիր, կապույտ, ու գեղին նշանեներով գորշ գույն ունեին։

Մեր ուղին հարթ եր ու շատ լավ, և ստիճանաբար իջնում եր հովիտի կենտրոնում։ Բարերեր և, ջրաղբի և ամենապայն տեղը ստար մղոն եր։ Հյուսիսակողմի լեռները շատ բարձր չեն, բայց հենց ստորոտում ապատան են տալիս բազմաթիվ գյուղերի։ Ձերկու մղոն բայնելուց հետո կանք մի փոքրիկ հյուղակ խան. կերկու մղոն ևս հասանք Գուզ (Guz) և քիչ հետո մի արագ ու սիրուն գետակ, որին ընկերացանք մինչև Իլիջա (Elija), որ Երզրումից կերկու աղաչ հեռու եր։ Գյուղից մի քիչ հեռու տեսնում եյինք կարա-սուն։ Սա Յեփրատի արևմտյան աղբյուրներից մեկն եր... Գետի աջ ափը անցնելուց հետո, — որի ափին գտնվում և Աշ-կալա] գյուղը, հասանք մեր իջևանը։ Այժմ մենք դուրս եյինք եկել հին Հայաստանից, որի արևմտյան սահմանը կերեսին կարա-սուն եր։

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Հնագետների մեծագույն մասը համաձայն է թե Թավրիզի հին անունը Գանզակա (Ganzaca) [Գանձակ] եր, բայց վորևե տեղ հիշատակություն չկա, վոր դա յեղել է Ազրբեյջանի մայրաքաղաքը, հին պատմագիրների Ատրպատականը (Antropatia) մինչև քրիստոնեական շրջանի չորրորդ դարը, յերբ Պարսկաստանի թագավոր Նարսուսի (Narsus) և Գալերիոս (Galerius) կայսրի հետ կնքված մի դաշնագրության համաձայն, այդ նահանգը Տրդատի իշխանության տակ անցավ, և հայ իշխանը աղղված Գանզակա [Գանձակ] բերդի տիրապետող ուժից, վոչ միայն ընդարձակեց քաղաքը, այլև նաև զարդարեց նրա շենքերը, իբրև հպարտ մրցակցություն Մարատանի մայրաքաղաքի շքեղության։ Այս շրջանից այս վայրը՝ Գանզական, Թավրիզ (Tauris) կամ Թաբրիզ (Tabreez) այդ նահանգի մայրաքաղաքն է համարվել։ (Ա. Հատոր, եջ 226)։

2

Մր. Մ'Դոնալդ (M'Donald) իր քարտեզի վրա Խոյ [քաղաքը] նշանակել և վորպես Արտաշատ (Artaxata), բայց, թե անցյալին լինչ անուն և ունեցել Ատրպատականի այս քաղաքը, ապահովաբար վոչ մեկ կապակցություն չունի հայկական այդ նշանավոր քաղաքի հետ, կարճ խոսքով, նրա դիրքը վոչ մի կերպ չի համապատասխանում հին հեղինակների Արտաշատի տեղագրության։

Ուրմիայի լիճը գտնվում և Խոյի հարավ-արևելք, վոչ

շատ հեռու քաղաքից և ընդհանրապես համարվում է Սարաթոնի և Պաղոմեոսի Spauto-ին և Marcianus-ին։ Իբն Հաուկել (Ebn Haukel), մի պարսիկ գրող, ասում է թե նրա յայնութիւնը մոտավորապես հինգ որման ճանապարհ է և ավելացնում է թե նրա ջուրը այնքան աստիկ ազի է, որ ձուկ չի կարող ապրել նրա մեջ։ Հանդուցյալ Մր. Բրաունի կատարած փորձով պահված է որ պարունակում է մեկ-երորդ անգամ ավելի ազ քան ծովը։ Սևանա, Ուրմիայի և Վանի լճերը միակ ընդարձակ ջրերն են, որ գտնվում են Սև, Կասպից և Հորմուզի ծովերի միջև տարածվող ընդարձակ հողամասում, և նրանք գրեթե հավասարապես հեռու են իրարից։ Վանը լերկուսի արևմտակողմն է, և նրա ափերի մասին ներկայումս շատ քիչ բան կարելի է ասել, [որովհետև] քուրդ բնակիչների կատաղությունը անկարելի է դարձնում որևէ յեվրոպացի ճանապարհորդի մուտք գործել նրանց սահմաններում։ Սևանի շրջապատի գեղեցկությունը արդեն նկարագրված է, և Ատրպատականի կլիման, որ շրջապատում է Ուրմիայի [լիճը] ասում են թե Պարսկաստանում ամենաառողջարարն է։ Այս նահանգը իմ այցելած ժամանակ ձմեռ էր, և չեմ կարող եմ խոսել ընդհանրապես տարուվա մթնոլորտի մասին, բայց խիստ ցուրտ դեկտեմբեր ամսում, հավասար նրան որ Սան-Պետերբուրգում համարվում է չափավոր։ (Ա. Հատոր, եջ 245)։

3

Այս շրջանի [Շիրազի] հայերը միակ մարդիկն են որ հանդգնություն ունեն արտադրելու [գինի], բայց միշտ գաղտնի են կատարում, ինչպես նաև [գինին] վաճառվում և գաղտնի և խմվում է գաղտնորեն, այնպես որ մարդ չի կարող մի առանձին տեղ գնալ, առանց կասկածի առարկա լինելու թե գնում է ճաշակելու արգելված բաժակը։ (Հատ. Ա. եջ. 707)։

Շիրազում իմ մնալը յերկարաձգվում եր իմ և իմ ռուս ծառայի առողջական վիճակի պատճառով... Անկարելի լինելով վերցնել նրան [ռուս ծառային] ինձ հետ, յես կարգեցի մի արժանավոր հայ քահանայի հետ, որ նա միասր նրա խնամքի տակ մինչև ավելի գով յեղանակը և նա գտներ իր հոգեկան վիճակը ու կարողանար ապահով կերպով հետևել ինձ։ (Ա. հատ. եջ 719)։

4

Մարդասպանության վերաբերմամբ պարսկական որենքը տարածվում է թե քաղաքների և թե գեղերի վրա։ Մարդասպանը պատասխանատու է սպանվածի ընտանիքին և պարտավոր է վճարել իր կյանքով իր թափված արյունը, և այս պատասխանը կատարում է սպանվածի ամենամոտ ազգականը։ Սակայն, այդպիսի արյունոտ վրեժը միշտ չի գործադրվում, վոճրագործը կարող է իր կյանքի փոխարեն սպանված անձի ընտանիքին մի գումար տալ, որ սովորաբար 50-100 թուման է լինում։ Բայց յեթե պատահի որ մի քրիստոնյա սպանեն մի մյուսուլմանի, և վոսկիին նախընտրություն տրվի արյունից, սովորաբար 200 թուման է առնվում։ (Հատ. Բ. եջ 75-76)։

5

Բերմանշահի իշխանը յեվրոպական վարժությամբ բանակի կազմակերպության գործում ցանկանալով հավասարել իր յեղբոր՝ Աբբաս Միրզային, այս վերջին մի քանի շաբթվան ընթացքում իր ծառայության մեջ ընդունել է յերկու ֆրանսիացի սպաների, վորոնք նախապես Ատրպատականի իշխանի սպասարկության մեջ եյին գտնվում։ Նրանք վարժեցնում են մի վաշտ զորք, այսուհետև (Բերմանշահից) մի քանի վարպետ հեռու։ Բայց իմ այստեղ տեսած հետևվակազորը, տակավին շատ յետ է մնում Թավրիզում յեվրոպական դիսցիպլինայի տակ գտնվողներից։ Բերմանշահը ունի չորս թընդանոթ, զետեղված անճոռնի ու անշարժելի մի կառքի վրա, վորոնք ինքներին հիշատակության արժանի չեյին լինի, յեթե

նրանք իշխանի խոր ուշադրության չարժանանային, վոր յերկու Ֆրանսիացի սպաներ և Պոլսի Ինգանոֆի ձեռքից նոր յեկող մի հայ վարպետի հետ ծրագրել են զարգացնել ու բարեփոխել այն։ (Բ. Հատոր, եջ 181)։

6

[Բաղդատի] ներկա փոչան Նամուսը [Դավիթ] շատ իսկական իշխանների նման ծագումով ազգուկ է։ Նա ծնվել և Թիֆլիսում և շատ վաղ հասակից բազմաթիվ բնիկներից-ների հետ վաճառել է, վորպես դիցե մի անձ, վոր նախապես իր ներկա աստիճանն ունեցել։ Ինչը յերիտասարդ եր, Բաղդատի փաշայի վրացի բիզնեսմաններից մեկը զարձավ Սա առաջին բայն եր ազատության իր վաճիկիչ պատվին ու վատանության, և յերբ իր տերը [Բաղդատի-ուսակը] իր ախոռը վաճառելն անհնազանդ ու ճարտար վրացին բավական ապրելու ձևեր եր բերել դիվանի [Բ. Դրան] մոտ, վոր նրան նշանակից նաչորդ։

Մր. Ռիչն բնակարաններ ժամանելուց մի յերկու որ հետո, նա [Ռիչ] ինձ ընկերության դնալու համար պատասը և ներկայանալու այս գրքի անկախ վոճաբանին։ Նա գրավում եր ինքնիշխան մի դիրք։ Նրա վարվելակերպը հանգիստ եր, կերպարանքով դեսպանի և մտածկոտ։ Յերբ խմացավ վոր յես իր մայրաքաղաքը յեկել եյի անցնելով Վրաստանից, բնական դդացումներ արթնացան նրա սրտում։ Շարունակ հարցումներ եր տալիս այդ յերկրի վիճակի մասին, նրա խաղաղության հարաբերության հնարավորությունների մասին, և շարունակ հայտնում եր իր հետաքրքրությունը, իմ այն պատասխանին մի ուշադրական կատարելության տակ յերկրորդ վայրկյան հանդատավետության ու բարեկամություն։ Հետո, նա ինձ ասաց և հարցրեց. «յերի ինչը գրքեր Վրաստանի մասին կառավարչին, հանձնարարելով իր ընտանիքը այդ ախտավոր անձնավորության մասնավոր պաշտպանությանը, ինչ եր իմ կարծիքը, նա ուշադրություն պիտի դարձներ դրանց։ Յես ասի. «Անտարակույս, շատ բարի սիրտ ունի գեներալ Յերմոլովը...»։

[Փաշան ուղարկում և մի նամակ և նվերներ գեներալ Յերմոլովին՝ հանձնարարելով իր ծնողներին, սակայն սուրհանդակը ճանապարհին՝ Մերդենի մոտերը քուրդերից կողոպտվում և և վերադառնում։] (Հատ. Բ. եջ 248-250)։

7

Քիրքուկի (Kirkook)] տները խառնված են իրար վրա և բազարները նեղ են ու մռայլ, թեև այնտեղ յուցադրված են ամեն տեսակ առևտրական ապրանք ու մթերք, բնակիչների պետքերի համար։ Նրանք ներկայացնում են դլխավորապես քուրք, հայ, քուրդ, արաբ և մի քանի հրեա և նրանց թիվը տասնից-տասնհինգ հազար կարելի և հաշվել։ (Հատ. Բ. եջ 439)։

8

[Սուք Բուլաղի (Sook Boulak)] մեր սիրալիր հյուրընկալներից բաժանվելուց առաջ, յես հարց ու փորձ արի այդ մերձակայքում գանվող արտակարգ մի քանի ավերակների վերաբերմամբ, վորոնց մասին հիշատակել եր Բաղդատում մի ձերունի Բիլբոսի (Bilbossi) շեյխը։ Նա ասել եր վոր Բարինջ (Karinj) գյուղից շատ հեռու չեյին գանվում մի հին քաղաքի ավերակները, վորոնց մեջ անթիվ քարե դեմքեր կային. այսպես նախկին բնակիչները քարացել եյին, վորովհետև յերկինքը զայրացել եր նրանց վրա, համառորեն մերժած լինելով ընդունել Մուհամմեդի ճշմարիտ հավատքը։ Յես հույս ունեյի այստեղ գտնել հետաքրքիր ավերակները, և իմ ներկա ոթևանը Բարինջից արևելք յերեք փարսախից ավելի չեր, և ակնհայտորեն եյի յերևան բերել այն իրական վտանգները, վորոնց վրա այս առասպելական պատմությունը հիմնված եր։ Ամեն յերևույթը տղան շատ ամիսներ անց եր կացրել վորսորդության մեջ գյուղի մերձակայքում, վորի մասին դերվիշը [շեյխը] խոսել եր, և նա ինձ ասաց վոչ ավերակներ կան այնտեղ և վոչ էլ նրանց մասին լաված է,

և վոչ ել քարե արձաններուն մասին վերևե ավանդություն կա։ Բայց, ասաց նա, ինքը տեսել և մի վայր, վոր հավանական և այդ Բիլբուսի ուղևորի հիշատակածը լինի. մի ցածր բլուր, Բարինջից վոչ շատ հեռու, խիտ կերպով ծածկված չորսից հինգ վոտք բարձրությամբ ուղիղ քարերով, թեև նրանցից և վոչ մեկը մարդու կամ կնոջ նմանություն չունի և վոչ ել տաշված լինելու վերևե նշան։ Նրանք գրավում են կես մղոն քառակուսի և վոչ վոք չգիտեր թե երբ կամ ինչու նրանք այդպես դասավորված են։ Յերիտասարդ քուրդի նկարագրականը ինձ յենթադրել և տալիս թե այս յերկրի նախկին բնակիչների գերեզմաններն են, և քարերի կանգնման ցեղանակից, անհավանական չե վոր հայ քրիստոնյաներին և պատկանում, վոր կարող և պատահել վոր կոտորվել են մահմեդականության առաջին քարոզիչների կողմից, և հետո նրանց քաղաքը կործանվել և...։ (Հատ. Բ. էջ 488-490)։

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Կարա Կուլակ (Kara-koulak) մի փոքր գյուղ և, ուր բնակում են մոտ յոթանասուն մահմեդական ընտանիք և քսան հայ քրիստոնյաներ։ (Բ. Հատ. էջ. 678)։

Միևնույն ժամանակ կես ծանոթացա մի հայ վիրաբույժի ու բժշկի հետ, վոր ապրում էր մեզվիլի, այսինքն փոստատան կողքին։ Վորպես քրիստոնյա յեղբայր նա առաջինը յեղավ վոր իր հարգանքի այցելությունը տվավ ինձ, և ապա յերեկոյան բազմիցս փոքրիկ նվերներ ուղարկեց ինձ՝ չորացած պտուղ, պանիր և այլն։ Յես չգիտեի թե ինչպես փոխարինեմ նրա բարեսրտությունը։ Գրպանում յես ունեյի մի նշդրակ (fellow-lancet) և յերբ իմ բարի հայի ձեռքը տվի այն, նա այնքան հուզվեց վոր չեթե նրա ձեռքը վա ամբողջ պաշարն ինձ հետ տանեյի, նա ուրախությամբ պիտի տար ինձ, այնքան յերախտապարտ էր դուռ այդ նվերի համար։ Ասաց, թե մի անգամ տեսել էր այդ դրծիքը այս յերկրից անցնող մի յեվրոպացու մոտ, և տասնհինգ տարիներից ի վեր փնտռում էր և հարցնում այդ ճանապարհից անցնող բոլոր ուղևորներին, բայց միշտ հուսախաբվել էր, իմ այստեղ գալուց շատ առաջ նա այլևս կորել էր ամեն հույս։... (Բ. Հատ. էջ 680)։

2

Կոյլա-Հիսարը (Koyla Hisar) դ'Անվիլ կարծում է թե հին Կոլոնիան (Colonia) և... Յերեսուն մահմեդական և հինգ հայ ընտանիք կազմում են նրա բնակչությունը։ (Բ. Հատ. էջ 695)։

3

Սամսոն (Samson) *քաղաքն ունի շատ լավ կառուցված տներ, յոթը մզկիթ և մեկ հայկական եկեղեցի, և 500 մահմեդական ու 200 քրիստոնյա ընտանիք բնակչություն։ (Բ. Հատ. եջ 696)։*

4

Այս վայրը [*Ամասիա*] *նշանավոր և վորպես Մարաբոնի ծննդավայրը։ Մոնելով քաղաքը հետաքրքրության առաջին առարկան քրիստոնեական մի եկեղեցու ավերակներն եյին, մի գեղեցիկ նմուշ նույն վոճով, ինչ վոր յես տեսել եյի Անիում նվիրական ճարտարապետության ամենագեղեցիկ հնացորդների։ (Բ. Հատ. եջ 707)։*

5

[*Բյուկդարի — Վոսփոր*] *այնտեղ սիրված եյին Սուլթանին պատկանող պալատներ, կային ուրիշներ, վոր մնում վեհապետի մի քրոջ սեփականության եյին, և դանազան արժեքավոր բնակարաններ՝ թուրք ու քրիստոնյա հարուստ անձնավորությունների ամառանոցներ։ Միապետի այս դյուղական տները սովորաբար սպիտակ են, պոռոտ գույներով արաբեսկ ճոխացրած վոսկեզույնով։ Իսկ ոսմանցի հարուստներինը ընդհանրապես մուգ կարմիր, մինչ հայերը, վորքան էլ նրանք հարուստ լինեն, պարտավորված են ապրիլ մռայլ պատերից ներս, դագաղի նման սև։ (Բ. Հատ. եջ 743)։*

6

Թեկտիբեր. — *Կ. Պոլսում պատահող հրդեհները այնքան աչքառու են, վորքան նրա ժանտախտը։ Բրիտանական պալատը, [Կ. Պոլսի դեսպանատունը], ապրած մի ջոկ յես տեսա այս ահռելի հրդեհներից մեկը։ Դա բռնկվեց խոր գիշերվա մեջ, քաղաքի կենտրոնում և հսկայական բոցերը տարածում եյին իրենց լուսավորությունը խավարի վրա։ Ինչպես բոլոր նման պատահարները, այս էլ զայրացած չենիչերիների գործն եր, այդ լինելով նրանց սովորական միջոց իրենց տհաճությունը ցույց տալու համար սուլթանի դեմ։ Նա [*Սուլթանը*] վիրավորել եր ամբողջ մարմնին, հրամայած լինելով վոր նրանց յեղբայրներից չորսը կախվեն, և այսպես նրանց հոգիների համար հուղարկավորության խարույկ վառելով, վերապրողները սովորական ազդարարությունն եյին տալիս իրենց բռնապետական վեհապետին, թե իր պահապանները կարող են վրիժխնդիր լինել այնքան, վորքան կարող են պաշտպանել նրան։...*

Յերևում է վոր արքայական վճռով այդ յենիչերիները մահվան եյին պատապարտվել, վորովհետև հրապարակով դահավան եյին պատպարում իշխանությունը, վերջերս մայրաքաղաքի հին բնակիչներից մի դժբախտ հայ ընտանիքի դեմ կատարված ծայրահեղ խստությունների համար։ Նիքի դեմ կատարված ծայրահեղ խստությունների համար։ Սրանք կոչվում եյին Դյուզ ողլի (Dooz-Oagli) և աշխատասեր ու բարդավաճ լինելով, ժամանակի ընթացքում այնքան հարստացան, վոր գրավեցին սուլթանի ուշադրությունը, վոր իբր հետևանք ընտանիքի պետավորներին չորս յեղբայրներին նշանակեց իր փոխերանոցի կառավարիչ։ Մի դժբախտություն պատահեց նրանց, վորովհետև մի ժամանակ հետո հայտարարվեց 1.000.000 դահեկան պահանջավոր, և կարված գրամի վոսկին բավական նվազ։ Վորպես սրա հետևանք, չորս յեղբայրները, վորոնք իրենց ընտանիքներով ապրում եյին ճոխ ու հանգստավետ մի կյանք, անմիջապես ձերբակալվեցին և նույնքան արագությամբ պատժվեցին. յերկուքը պլխատվեցին պալատի դռան առջև, և յերկուքը իրենց անների պատուհաններից կախեցին։ Նույն ժամին նրանց բոլոր ծանոթ տղամարդկանց՝ տղամարդ, կին ու յերեխա դուրս տարին սպիտականներին՝ Յեդի-Կուլեի (Seven Towers) ըզբոսավայրը։ Այս վերջին գործողությունը մի քանի յենիչերիների հրապարակով քննադատեցին, և այսպիսի մարդկային

կարեկցության համար նրանք կորցրին իրենց կյանքը։ Բայց, նորին ամանյան վեհափառության [սուլթանի] վրեժխնդրությունը այս հանցավորների բարեկամների դեմ, կամ զրպարտված հայերի դեմ տակավին հագեցած չեր։ Դյուզ-Ողլի ընտանիքի մահավճիռները և նրանց սեփականության վաճառումից դիզված գումարները պակասավոր համարված դրամի կրկնին հավասար, տակավին բավական չի համարվում, կարճ խոսքով ամեն ձևով հալածանքներ շարունակվում են քաղաքի հայերի դեմ, այն պատրվակով իբր թե բոլորը մասնակից են վերագրված հանցանքին, նրանց կրոնակից լինելու հանգամանքով։ (Բ. Համ. եջ 746-748)

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

1

Պարսկաստանում բոլոր ավանների ու քաղաքների դռները փակվում են մայրամուտին և բացվում են արևածագին։ Այս հրամանի խիստ գործադրության, և անհոգության կամ անխուսափելի ուշացման պատճառով շատ հաճախ պատահում է որ [ճանապարհորդը] դռան մոտ հասած ժամանակ փակվում է։ Հետևաբար նրանք պետք է մնան դուրս մինչև առավոտ։ Յեվ դժնդակ յեղանակին, դռները բանալիս, շատ հաճախ մահվան սոսկալի տեսարան է պարզվում շեմքի առջև՝ ձերունի ու յերիտասարդ, կենդանիները ու յերեխաները անշունչ պառկած իրար վրա։ Բայց, մի մասնավոր դեպք, որ հիմա պիտի պատմեմ, վերաբերում է մի առանձին ճանապարհորդի, որ իր ձիով յերկար ճանապարհ էր կտրել։ Յերբ նա թավրիզ հասավ, փեղկերը փակել եյին։ Շատ խիստ սառնամանիք կար և խեղճ մարդն իրեն փրկելու համար ճակատագրական հետևանքից, որ ինքը շատ լավ ըմբռնում էր, իր դաշույնով ծակեց իր հավատարիմ ձին և ճեղքելով նրա մարմինը, մտավ նրա մեջ, այն դուր հանելով որ նրա տաքությունը վողջ պիտի պահե իրեն մինչև առավոտը։ Բայց առավոտը, յերբ դռները բացվեցին, նա սառած մեռել էր այս սոսկալի պատանքի մեջ։ (Ա. Հատոր, եջ 247—248)։

2

Պարսկական դրամը զուտ մետաղից է, — վոսկի, արծաթ և պղինձ։ Վոսկի դրամը կոչվում է թումանի (tamauns), *որի*

քուն արժեքը կարող և այժմ հավասար լինել անգլիական տասը շիլինգի, նախապես նրանք ավելի արժեին, բայց վերջին հինուն տարիների ընթացքում նրանց չափն ու կշիռը աստիճանաբար նվազել են։ Յուրաքանչյուր ոսկե արծաթ դրամ կա, — արժեքով ամենաբարձրն ռեալի (real) և, մոտ հավասար և մեկ թումանի։ Փոքր արծաթ դրամը կոչվում է սպիտակ-շահի (white-shy), մոտ ուժը հավասար և մեկ ռեալի։ Պղինձ դրամը անվանվում է սեվ-շահի (black-shy) և նրանցից քսանչորսը արժե մեկ ռեալ։ Թումանը կարում են պրեթե բոլոր մեծ հանդիսություններում, բայց իրական արժեքով նրանք տարբերվում են, թեև բոլորն էլ հավասարապես ընթացիկ են։ Կեղծ դրամը նույնպես գտնվում է այս տեսակ դրամներում, բայց դրամանենգները, որոնք բռնվում են, մահվան են դատապարտվում։ Ոսկե դրամը կարողները կամ այլապես մասնահատուցներն անդամահատության են դատապարտվում։ Ոսկե դրամներից միայն մոտ դուքսը անցնում է, և նրանք ավելի չեն կեղծվում քան բնիկ թումանը, մոտ հավասար և նույն բանի։ Տեսնում ենք մշտական գործածության մեջ իրենց բուն ձևից փոփոխած քառակուսի, ուժանկյուն, հնգանկյուն, և մոտ դիտողություն չեն անում նրանց մասին։ Պարսկական ծագում չունենալուն համար նրանց հետ վարվում են ըստ կամս, և դանցառումը հավասար և անպատիժ մնալու։ Դուքսի ընթացիկ արժեքը հավասար և մեկ ռեալի։ Յերբ այդ դրամով մեծ գումար և վճարվում, այն ժամանակ կշռում են, և մոտ չափից ավելի կտրատված դուքսը չի ընդունվում, և ապա հաշվում են թիվը և վճարում գինը։ Դրամը ծածկում են հալած մոմով՝ կշեռքում հավասարակշռությունը պահելու համար։ (Հատ. Ա. եջ 251)։

3

Կես որից առաջ ժամը 10-ին հասանք Նազիրաբադ (Nazirabad)...: Այս տեղ շրջապատված և բազմաթիվ ցիրուցան բազմարնակ գյուղերով։ Մարդիկ մեծագույն ուրախությամբ մեզ եկին, խնճույք եկին անում այս գարնան այնքան

անձրև տեղալուն պատճառով։ Հիրավի, նման ուրախ ցուցքեր չեմ տեսել մի ճանապարհի ընթացքում սկսած Թեհրանից, թե քաղաքներում և թե գյուղերում։ Ցավ ի հարկե նրանք պետք և որ արտահայտեին այդպիսի զգացում, որովհետև մի տարի առաջ անձրևի պակասության պատճառով՝ նրանք ազեատալորեին տառապել եին սովից ու հարակից թշվառությունից։ Իրենց նորին իրախճանությունների մեջ, նրանք դադրեմ եին պատմելիս 1817 թ.-ի ամոսն ահռելի տեսարանները։ Անթերրիությունը տարածվել եր կայսրության այս մասերում և չերկարել մինչև Աստրապատ կանի սահմանները։ Ցերկու հայորդական տարիներն առանց սովորական անձրևի՝ ստեղծել եր սիեզերական չորություն և չերրորդ տարում սովն այնքան սաստիկ եր, որ կատուներ, շներ, եշ, ջորի և ձի լափված եին սովատար բնիկներից։ Բացառում մի փոքրիկ գյուղ սովից ու թշվառությունից ազատել եին ու կերել իրենց չերկու մանուկ աղջիկներին։ Նույն քաղաքի ճանապարհի վրա մի մեռած կին եր գտնվել, մի փոքրիկ պարկ նրա կողքին. քննությունից պարզվեց, որ դա պարունակում եր նրա միակ զավակի մնացորդները, որին նա ազատել եր իր վողջմտի կյանքը պահպանելու համար։ Գարու մանր (maun) [յոթը ֆունտ ու կես] այդ ժամանակ վաճառվում եր մեկ ռեալ, սակայն մեկ տասիկ մի ջոգին վաճառվում եր մեկ ռեալ։ Պարսկաստանի այս մասում դրա սովորական գինը մոտ չեր ճարվում։ Պարսկաստանի այս մասում դրա սովորական գինը մոտ յերեք շահի յեր և քսանհինգ շահին անում է մի ռեալ, ուժը ռեալ հավասար և մեկ թումանի, վեց թուման մեկ դուքսա. ռեալը ներկայումս հավասար և բրիտանական դրամով մեկ շիլինգ և յերեք պենսի։ Բայց, դառնանք սովի սխրագործ նյութին։ Այդ սոսկալի շրջանում Աբբաս Միրզան ցույց տվավ իր իշխանական հատկությունը, և ինչ որ կարելի յեր խնայել իր նահանգից հավաքելով մեկ տեղ, մեծ քանակությամբ հայտնաբերիկ ուղարկից արքայական ճամբար Սուլթանիե, և այդ առատաձեռն աղբյուրից Թեհրանի կառավարիչն ի վիճակի յեղավ մի հարյուրհատվար (culvert) մատակարարել Քաշանի սովատար բնա-

կիչներին։ Ընդհանուր թշվառության մեջ շատերը փորձել եյին փախչել ուրիշ վայրեր, ուր նրանք խորհում եյին թե սովը նվազ սաստիկ է, բայց ուժասպառ լինելով ճանապարհները ծածկվել եյին մեռելներով ու մեռնողներով (Հատ. Ա. եջ 385—386)։

4

Բաշան գնում է մի պաշտոն.... Ներկայումս, ինչպես անցյալում, նրա մեռաքսյա դիպակները նշանավոր են ամբողջ Պարսկաստանում, և շատ շահավոր են այս տեղին։ Մանավորապես հարուստ շորը, հյուսված մեռաքսից, նույնպես այստեղ են շինում, և մեծ պահանջ կա նրա համար։ Հում նյութ արտադրող շերամը ուշադիր կերպով են խնամում հարևան գյուղերի բնակիչները, և մեշտ շահավոր են իրենց գործից։ Պղնձյա անոթների արտադրությունը նույնպես առևտրի առարկա է այս քաղաքի և շրջակա նահանգների մեջ, և ընդհանրապես կարծում եմ որ Բաշան ամբողջ կայսրության մեջ բարգավաճ վայրերից մեկն է։ (Հատ. Ա. եջ 388—389)։

5

Հասարակական [պետական] եկամուտները ստացվում են երկրագործության ու կենդանիների վրա դրված հարկից, վաճառականության վրա դրված ծանր տուրքից և այլն, բայց որքան էլ մեծ լինի այս միջոցով ստացված շահը, որչինչ և համեմատելով այն հարստության վտակներին, որոնք նվերի ձևի տակ հոսում են արքայական գանձը. նվերը [որ տալիս են] պետության նախարարները, կուսակալները և ուրիշ պետականները։ Սրանք արվում են Նեվրուզին, ամեն հնարավոր ձևով՝ մանուֆակտուրա, բնական արտադրություն և մինչև իսկ վոսկի ու արծաթ։ Եվ այս կամավոր տուրքի արժեքը որքան խոշոր լինի, այնքան պարտականության նվիրաբերում է յենթադրվում ավելի կոպիտ, և բնական

հետևանքն այն է լինում, որ ավելացնում է արքայական ընդունողի շնորհը։ Այս դյուրին միջոցով կառավարիչներն ու ամեն տեսակ նախարարները գիտեն թե ինչպես պետք է ձեռք բերել ու պահել ամենից աչքառու դիրքերը, և դարձնելով դրանք շահաբեր, միջոցների մեջ խորություն չեն դնում, համաձայն իրենց ազահության աստիճանի, ավելացնելու համար իրենց ապրեցությունը։ Այս աղետալի դրությունը պարսկական կառավարության առանցքն է, և այդ հին սովորությունը բաց է թողել դարմանումի մի դուռ, որ ծառայում է միայն ջախջախելու հարստահարվողը։ Այս միակ դուռը բողոքները լսելու որենքն է, և մի բեկլերբեկ, վերքան էլ առատաձեռն լինի թագավորին արած իր նվերներում, նա նվազ յենթակա չէ իր շուրջիններն կամ իր դիրքին աչք ունեցող հակառակորդների ամբաստանություններին, որևե արտակարգ հարստահարության համար։ Նրա դատը հանձնվում է Դերրա-խանային (Derra-khanah)։ Հետևաբար իր ճանապարհից հեռացնելու համար այդպիսի խաչընդոտները, նա միշտ պատրաստ է լցնելու դատավորի գրպանը, որ չլինի գոհացում տրվի, շատ քիչ անգամ է պատահում որ նա դատարանից չվերադառնա «ձերմակ ձիերես», որ Պարսկաստանում նշանակում է անմեղություն։ Դատավորը վախենալով որ հայտնաբերվի դատավճռի իր վաճառումը, նա պահեստի ունի իր վոսկեղեն պատճառաբանությունը՝ սիրաշահելու համար վճռաբեկ ատյանը։ Բազաքի և գյուղի հարկահավաքը, քալանթարը (kalantour), որ ունի բազմաթիվ յենթակա պաշտոնյաներ, որոնք բոլորն էլ նման պատճառներ ունեն մեծ հարստություն դիզելու, շատ հաճախ քամում են բազարի ու դաշտի բնակիչներին, մինչև որ վոչինչ չմնա, և այսպես շարունակվում է անարդարության շղթան ամբողջ հասարակության պահելով թշվառության մեջ, որոնցից մի մասը քաշվում է լեռը ավազակության անելու համար... (Հատոր Բ. 504—506)։

6

Աբբաս Միրզան արդեն ձեռնարկել է իր նահանգում մի քանի ցանկալի գործերի, յեվրոպական պլանով և յեվրոպացիների ղեկավարությամբ։ Ներկուսը, հիրավի, ձախողած են, Քոֆլան-Քուի [Koflan-Kou] հանքերը, որ փորձից շահագործել, և մի անսակ թղթի արտադրություն, որ ձեռնթափ յեղավ հումուլքի պակասության պատճառով։ Թղթի համար շինված գործարանը հիմա վաղուց մի խեղանդամ է։ Ծրագրված է ունենալ ապագրական մամուլ, որ պիտի աշխատեցվի Կ. Պոլսից յեկած յերկու վարպետ հայերի կողմից։ Անգլիական օրենսգրով կառուցված դինանոցը մինչև հիմա յեղած հիմնարկներից ամենահաջողն է, գոնվելով Մր. Արմսթրոնգի անմիջական անդրինության ու հսկողության տակ, որ շատ կարող վարպետ ու խելացի մարդ է... Հույսս իշխանը վերջերս շինել և տվել մի ասվիճանի գործարան։ Սկզբում մարդիկ զարմանում էին մեքենային, բայց իր գործածության ընթացքում գնահատելի դարձավ, երբ կոպիտ կտորների արտադրությամբ... Նա իր ծախքով վեց հոգի Անգլիա է ուղարկել բժշկության և ուրիշ գիտությունները սովորելու համար։... (Հատոր Բ. էջ 506—607)։

7

Իմ Թավրիզ ժամանումից մոտ վեց շաբաթ հետո Պ. Նաղարովիչ և իր հետևորդները՝ յերկու քարտուղար, յերկու թարգման և բաղմաթիվ ուրիշ պարոններ, — այս քաղաքը հասան Թեհրան գնալու համար, մասնավոր առաքելությամբ Շահի մոտ։ Պ. Նաղարովիչ նշանակված է գործակատար, և հավատում եմ թե հյուսիսի կայսրությունից [Ռուսաստանից] առաջին դիվանագիտական ինայուն ներկայացուցիչն է։ Նա տաղանդի ու գատողության տեր մարդ է։... Պարսկաստանի սահմանակից ռուսական հոդամասի և Պարսկաստանի գործող առևտրական հարաբերությունները՝ անհրաժեշտ են դարձնում մի մնայուն ռուսական ներկայացուցչի ներկայությունը այստեղ։ Հաճախ վեճեր են ծագում նրա վրացի հպատակների և պարսկական առևտրական տուրքեր գանձող պաշտոնյաների միջև, և ձեռնհասս մի հեղինակության պատճառով շատ դժվարություններ ու կորուստներ են պատահում պատվավոր առևտրականների համար։ Ցերկու յերկրների միջև առևտրական հարաբերությունների առավելությունները քննության առնելով, դրամական շահ բաղանը, անտարակույս է նպաստ Ռուսաստանին և. բամբակ, աղվեսի ու գայլի մորթի, հում և գործված մետաքս, դիպակ և այլն ուղարկված Պարսկաստանից, համեմատաբար շատ քիչ են Թիֆլիսի ու Աստրախանի շուկաներից բերված ապրանքներ (քանակից ու արժեքից)։ Բացի այս, ռուսական առևտրի տարածման համար թվում է թե որեցոր նոր ուղիներ են բացվում, դյուրություն ընձայելով կապույտ յեվերքնեղի ապրանքը փոխադրելու իր յերկրի ներսերը։ Այստեղից, հետ կուրը այլևս պատրաստ է նավարկելի լինելուց, հիմնական ճանապարհներ են շինում, և այնտեղ ուր այն ապրանքները որ առացված են կասպից ծովից, նավից պիտի հանվեն ու տարվեն Թիֆլիս, և այնտեղից Իմերեթիայի մայրաքաղաք Քութայիսից մինչև Ռիոնի նավարկելի մասը, որ հարմար նավեր պիտի ընդունեն և տանեն նոր հիմնված Փոթիի նավահանգիստը Սև ծովի վրա։ Այստեղից փոխադրվում են դեպի Ոդեսա և կայսրության ներքնամասերը... (Հատ. Բ. էջ 509—510)։

8

Ամին-ե-Դովլայի (Ameen-a-Dowlah) կամ յերկրորդ նախարարի պաշտոնը ազատ եր, և այն կարծիքն եր տիրում թե այդ պիտի վիճակվի նոր սարդարի անդրանիկ վորդի Աբդուլլա խանին։ Նա կարողության տեր մարդ է, և նրա հոր միջոցներ չեն պակասում՝ ոգնելու համար նրան [իր վորդուն] բարձրանալու բանտի սանդուղից։ Ավելի քան յերեսուն տարի սարդարը կառավարել է Սպահանի հարուստ

նահանգը, և նրա դիրքից ստացված շահը կարելի չի չեն-թադրել, — հիմնված մի անառարկելի աղբյուրի վրա, — թե տարեկան չեկամուտը, որ նա ներկրում է արքայական գան-ձին ամեն Նեվրուզի օրը, հավասար է 500.000 թումանի, որից 200.000 իր անձնական նվերն է, թեև ճիշտ է այս թիվը, բայց չես ի վիճակի չեմ ճշտորեն ասել չերկրի չեկամուտի ամբողջական գումարը։ Շարդեն մատնանշում է, թե իր ժա-մանակը արքայական տարեկան չեկամուտը 700.000 թու-ման էր և չերկրի բնակչության թիվը քառասուն միլիոնից անցնում էր։ Այս թիվերի անհամաչափությունը անհավա-տալի է թվում, և այնքան տարբեր է ներկայից, որ կաս-կածում եմ թե մեր հարցերի ուղղիրը սխալվում է։ Ամե-նամոտ հաշվառումը, որ չես կարող եմի կատարել, ներկա Շահի հանրային չեկամուտը չերեք միլիոն ու կեսից ավելի չի, և այս ստացվում է հարկի տասնչերկու միլիոն հոգուց բաղկացած մի ազգաբնակության։ (Հատ. Բ. եջ 526—527)։

ՑԱՆԿ

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ*

Ա

Աբաբդի, 143.
Աբբասաբատ, 24, 309—311, 316, 318ծ, 492ծ, 799.
Աբբաս Միրզա, 21—25, 30, 50—51ծ, 57—58, 107—108, 110—111, 118ծ, 127, 132, 139, 227—228, 265, 268—269, 273, 305, 310, 313, 318ծ, 331, 355—356 ծ, 374—377, 379—381, 393, 395, 406, 415, 423, 424—428, 461, 494ծ, 519—520, 536, 556, 558—566, 568—570, 572, 574, 608, 622, 624, 629, 676, 678, 779, 793, 841, 851, 854.
Աբբաս, Շահ, 50ծ, 119ծ, 220, 318ծ, 355ծ, 367, 409, 419, 428, 445—446, 461, 491ծ—492ծ, 497, 543—544, 553, 573, 583, 673—674, 776,—778, 780, 783—788, 790, 795.
Աբդուլ Ազիմ Շահ, 45.
Աբդուլլահ, 174.
Աբդուլլահ խան, 855.
Աբդուլլահ, Միրզին, 151.
Աբդուլլահ փաշա, 271, 277—278, 335, 358, 466, 469, 471, 476.
Աբ-ի-գերմ, 476—477, 495ծ.
Աբխազիա, 471.
Աբովյան, Խաչատուր, 355ծ.
Աբուզ դյուզ, 830.
Աբուլ-քասիմ, 626.
Աբուչիր, 73ծ.
Աբուշիր, 137.
Ագանես, տես Ականց.
Ագրակ, 361—362, 365ծ.
Ադինե-բազար, 298.
Ազրբեյջան, տես, Ատրպատական.
Աթաբեկ, 311.
Ալադաղ, տե՛ս, Արագած.
Ալադաղ, 87, 272, 282ծ, 492ծ.
Ալակու, 272.
Ալամդար դյուղ, 437, 553, 632—633.
Ալանջիկ, տես, Ձերնջակ.
Ալաչկերտ տե՛ս, Թութրակ-կալե.
Ալաջա, 289.
Ալաջար, խան, 586, 599, 602.
Ալավիր, տե՛ս, Ալվար.
Ալդաթ, Ալդեթ, 397, 411ծ, 512, 733, 738.
Ալեքսանդր Ա. ցար, 6—7, 17, 20, 359, 501, 530, 566, 572, 677, 711ծ, 728ծ, 743, 768.
Ալեքսանդր, Մեծ, 219, 246, 411, 446, 643.
Ալեքսանդրևա, 106.
Ալի, 126, 464, 548, 803.

* Հատուկ անուններն այս ցանկը կազմել է Հովհ. Մանվելյանը։

Ալիապատ, 120.
Աբբանդյու, 299.
Ալբագեզ, 311.
Ալի Մահմեդ, 61.
Ալի Շահ-աբբաս, դյուզ, 236, 256—257, 259.
Ալի փաշա, 313, 523.
Ալի փաշա, Յանիայի, 146ծ.
Ալի-քեոյ, 107.
Ալլահվերդի, 413ծ, 758ծ.
Ալլահվերդի խան, 673.
Ալհունդար, տե՛ս, Ալամդար.
Ալուր դյուզ, 240ծ.
Ալչամուլը, 119ծ.
Ալպյան լեռներ, 206.
Ալվար, 98, 103ծ, 202, 208—209ծ, 257, 279, 280, 478, 479, 495ծ.
Ալփ-Արսլան, 215ծ.
Ալթաթի, 212, 215ծ.
Ալթյախա, 399, 402, 411ծ.
Ալթքալակ, 406.
Ախուրյան, տե՛ս, Արփաչայ.
Ականց, 232, 237, 240ծ.
Ակ-գոկան, 292.
Ակ-կալե, 289, 292.
Ակոռի, 353, 356ծ.
Ակը, 144.
Ահաս Խուջ, դյուզ, 638.
Ահար չայ, 385.
Ահմեդ, 128.
Ահմեդ ագա, 825, 828, 834.
Ահմեդապատ, 227.
Ահմեդ բեկ, մարտագիտ, 142—145, 147, 191.
Ահմետ բեկ, բայազիդեցի 181—184, 187.
Ահմեդ խան, բեկլերբեկ, 112.
Ահմեդ խան, դյուզ, 231.
Ահմեդ խան, մարտագայի, 357.
Ահմեդ Շահ, 76.
Ագա Մահմեդ խան, 10—12, 38, 74—76, 134ծ, 227, 260, 315, 369, 582—583.
Ագա Մահմեդ Քոպիմ-վարա, 53, 54.
Ագա-Մըր, 69—70.
Ագաջիկ, դյուզ, 266—268.
Ագաջ-կապի, տե՛ս, Աչկապի.
Ագրակ, 239ծ.
Ագրաչ, 315.
Ագրաչ, ներքին, 319ծ.
Ագրաչ, վերին, 318ծ.
Ագրեթակաց գաչա, 103ծ.
Ագրուզա, 526ծ.
Ադդը բեյուբ լեռ, 513—514.
Ադմանք, 708, 720.
Ադրի գագ, տե՛ս, Արտաշատ.
Ամասիա, 86, 283, 293, 454, 846.
Ամենաչատ դյուզ, 240ծ.
Ամերիկա, 3, 36.
Ամերնոի գաղնագրատիպուն, 4.
Ամիր Ջաման Շահ, 14—15.
Ամրա քեոյ, 278—279.
Այաս, 88.
Այրարատյան նահանգ, 154ծ, 195ծ. 759ծ.
Անանուն Վանանական, 317ծ.
Անանուր կայան, 666, 704, 705, 707.
Անապատ, թաղ, 638.
Անգլիա, 1—2, 4—5, 8—9, 16—21, 32, 35, 49ծ, 50ծ, 64, 69, 72ծ, 73ծ, 77—78, 137, 228, 251 298, 300, 355, 383, 426, 430, 432, 433, 440, 476, 483, 493ծ, 565, 613, 622, 635, 677, 679, 747, 755, 787, 823, 854.
Անգլ, գետ, 239ծ.
Անգորա, 88, 102ծ.
Անգրիկովկաս, 2, 9, 12—13, 20, 118ծ, 119ծ, 139, 255, 295ծ, 491ծ, 492ծ, 612ծ, 613, 677, 728ծ.
Անի, 215ծ, 240ծ, 491ծ, 522, 526ծ, 743, 745, 748—750, 752, 771, 846.
Անձևացյաց գավառ, 239ծ.
Անձավանք, 240ծ, 642.
Անթիթալ, 86, 318, 411, 803.
Անվի, Անվիլ, 198, 199, 243, 485, 845.
Անքետիլ, 453.
Աչաբի հովիտ, 86.
Աչկապ, 95—96, 102ծ, 202, 207, 209ծ, 241, 242, 431, 490, 838.
Աչտա, վոզորմած, 525ծ, 758ծ.
Աչտարակ, 329, 334—335, 455, 457, 640, 641, 644—646, 742.
Աուդլեյ, Գոր, 19, 21, 254, 300, 317ծ, 380, 395, 427, 430, 490ծ.
Աուդլեյ, լեյդի, 427.
Աուդլեյ, Ուիլիըմ, 19, 119ծ, 134ծ, 135ծ, 430—431, 443, 445, 490ծ, 491ծ, 493ծ, 495ծ, 612ծ.
Ապազ-դուլի խան, 494ծ.
Ապարան, 330—331, 334ծ, 335, 338, 340—341, 353, 455, 643, 645—646, 768.
Ապարան, բաչ, 334ծ.
Ապենինյան լեռ, 206, 239.
Աջայեր-ալ-Բելդան, 441.
Աջի-սու, 110, 118ծ, 119ծ, 257, 300, 558, 630, 782, 818.
Առավլուտյ դյուզ, 282ծ.
Առաքելավանք, 545.
Առաքել Դավրիժեցի, 491ծ.
Առաքելոց յԻսկեցոց, 366ծ.
Առքերանի, 239ծ.
Առնիս, 232, 237.
Ախթա, 1, 29, 84, 108, 115, 117, 149ծ, 194, 195, 203, 219, 226, 374, 410, 568, 596, 706, 719, 755, 757, 781, 787, 804.
Ախթա, Փոքր, 146ծ, 241, 678.
Ալանդուզ, 21, 384, 385.
Ակիր խան, 523—524.
Ասուջ, 239ծ.
Աատախալ Հաջի, 473.
Աատապատ, տե՛ս, Արքաատապատ.
Աատարա, 25.
Աատրախան, 24, 114, 247, 394, 501, 507, 756, 855.
Աատրապատ, 15, 22, 24, 36, 51ծ, 52ծ, 612ծ.
Աքբերան, 519.
Ամանես, 215.
Ամանուզ, 573.
Ամանց, 221.
Ամզուլա-մըրզա, 574.
Ամզանիատան, 14, 20, 249.
Ամստերդամ, 5, 107, 192.
Ամստերիա, 2, 4—7, 84.
Անանականց դյուզ, 240ծ.
Աորպատականի, 118ծ, 133, 227—228, 248, 265, 317ծ, 378, 438, 441, 768, 779, 793—794, 839—841, 851.
Արաբ-Դալիսի, 106, 107.
Արաբիա, 171.
Արագած, 289, 330, 334ծ, 335, 337—338, 362, 400, 402, 455, 457, 521, 636, 643—644, 742, 744, 750, 759ծ, 820.
Արագածոտն, 334ծ, 526ծ, 759ծ.
Արա Գեղեցիկ, 411.
Արագվա, գետ, 664, 667—668, 701, 706, 709.
Արագվայի ձոր, 699, 703.
Արազ, տե՛ս, Արաքս.
Արազդ-Ջայ, 833.
Արածանի, տե՛ս, Մուրադ-Սու.
Արմազդ, 454.
Արայի լեռ, 334ծ, 341, 355ծ, 644—645.

Արան, 831.
Արարատ, լեռ, 100, 147, 150, 161, 179, 195ծ, 267–270, 282, 302, 309, 311–313, 315, 343, 351–354, 354, 356ծ, 362, 365ծ, 403–404, 414, 448—449, 451, 453, 458, 521, 524, 526ծ, 528, 537, 541, 543—545, 548, 552, 554, 636—639, 750, 752—754, 757, 760—763, 765, 775, 792, 804, 816, 833.
Արարատյան գաշտ, 753, 758, 800, 814.
Արարատ, փոքր, 353—354, 760.
Արաքս, 2, 11—13, 21, 24—25, 53, 76, 98—99, 103ծ, 118ծ, 148, 149ծ, 151, 161, 182, 195ծ, 206, 208, 232, 238, 239, 260, 279, 288, 298, 308—311, 314—316, 318ծ, 319ծ, 326, 329, 334, 343—344, 350, 354, 357, 360, 361, 362, 364, 366ծ, 383—386, 389, 419—420, 427, 438—440, 442, 444, 446, 450, 452, 456, 462—464, 470, 478, 491ծ, 493ծ, 495ծ, 519—520, 524, 543—544, 547—549, 552—553, 609—610, 634, 637—638, 643, 743—745, 754, 760, 762, 765, 767, 772—773, 778—780, 785, 793—794, 799—803, 817—819, 825, 828, 831, 833.
Արբիլյանով, իշխան, 511.
Արդաբիլ, 11, 227—228, 257, 390, 556, 711.
Արզ-աբ, տե՛ս, Արծափ.
Արզն, 293ծ, 491ծ.
Արթխակալի, 709, 837.
Արխարաթեա, 455.
Արխանգելսկ, 50ծ.
Արծափ, 147, 151—153, 154ծ.
Արծն, 485.
Արծրունի, Թովմա, 318ծ.
Արղուն, 72ծ.
Արճեշ, 221, 237, 240ծ.
Արմավիր, 464, 765, 817.
Արմատրոնգ, մեքենագիտ, 624, 854.
Արնաթ, 275.
Արշակունիք, 215ծ, 246, 481.
Արչաուս, 493ծ.
Արութիւն, Բայայ խան, 654.
Արութիւն, խոճա, 62, 73ծ, 481, 712, 727ծ.
Արուճի, 288.
Արջակ, 232, 234, 237, 240ծ.
Արսալի, 258.
Արսաոխա, տե՛ս Արճեշ.
Արսի, մայոր, 433.
Արսունջև, 279.
Արտագերից, բերդ, 493.
Արտաշատ, 309, 315—317, 319ծ, 419, 551, 557ծ, 638, 765, 770—771, 773, 801—803, 808, 839.
Արտաշես, թագավոր 316—317, 802.
Արտաշիր դյուղ, տե՛ս Արտաշատ
Արտավազդ, թագավոր, 309, 317 348.
Արրան, 441.
Արքանլի, 106.
Արփա-չայ, 298, 314, 316, 318ծ, 326, 359—360, 362, 402, 417, 470, 521—523 549, 636, 745, 759ծ, 800, 818—820, 822, 825, 826, 827.
Արքեոյ, 114.
Արևելյան կայսրութիւն, 6.
Ավազ, Ջաքարյան, 356ծ.
Աք-բուլաղ, 265.
Աք-գաղ, 208, 210ծ, 232, 238.
Աք-գիգհ, 265—266.
Աքեդ, 298.
Աք-թափհ, 383—384.
Աք-կորփի, 313.
Աք-Սերայ, 86—87.
Աֆրիկա, 1, 147, 430.

Բ

Բաբախան, տե՛ս, Ֆաթ-Ալի-Շահ.
Բաբա փաշա, 358, 363.
Բաբելոն, 678.
Բաբերդ, 242.
Բարխրաա, 309, 348.
Բադաոխ, 95, 295ծ.
Բադավան, տե՛ս Ուչ-Քիլիսա.
Բադու, 12, 15, 21—22, 283, 317ծ, 711ծ.
Բագրատունի, Աբբաս, 366ծ.
Բագրատունի, Աբբաս, (Լոռվա թագավոր), 412ծ, 413ծ.
Բագրատունի, իշխան (վրացի) 387.
Բագրատունիք, 366ծ, 413ծ.
Բագրեւանդ, 102ծ, 104ծ, 154ծ, 195ծ, 281ծ, 282ծ.
Բադարչի Գետ, 822.
Բադար Քեոյ, 91.
Բաֆման Քեոյ, 279.
Բաֆու, Խան, 366ծ.
Բալա-կացիս, տե՛ս Իզուր-Գյոլի.
Բալհչեոկ, 89.
Բալթի, բերդ, 683.
Բալտա, կայան, 671.
Բախթիարներ, 647.
Բահալիլ թափհ, 257.
Բահրեն, 300.
Բադադիր, Շահ, 574.
Բադդատ, 49ծ, 82, 126, 130, 133, 142, 211, 230, 394, 458, 460, 503, 834, 838, 842—843.
Բաղլի-Համամատ, դյուղ, 827.
Բայազիդ, 101, 106, 138, 147, 149, 151, 153—154, 160, 162, 164, 166ծ, 168, 172ծ, 177, 179—192, 195, 202, 208, 237, 254, 268—269, 281ծ—282ծ, 358, 359, 526ծ.
Բայազիդ, Սուլթան, 102ծ.
Բայդար գետ, 669.
Բաչու նաւ, 366ծ.
Բասեն, 190—191, 195ծ, 196ծ, 207, 210ծ, 215, 495ծ.
Բասեն, վերին, 103ծ.
Բասրա, 75.
Բավարիա, 4.
Բարբարո, Ջոզեֆա, 317ծ.
Բարդենշտայն, 6.
Բարեհուսո գլուխ, 7.
Բարսեղ, Մխայնավոր, 356ծ.
Բարսեղ, յեպիսկոպոս, 104ծ.
Բաֆրա, 198.
Բեգլե-Ջան, 76.
Բեդրովա, 477—479, 495ծ.
Բելասու—272.
Բելդրատ, 517.
Բելուբ, 288.
Բելգաշի, 294ծ.
Բելբադար, 87—88.
Բելբուդով, իշխան, 655.
Բենգալ, 125.
Բենգեր-Աբաս, 125.
Բենգե-Մահու,—, 220, 240ծ.
Բեչ-Կեֆելուա, 258.
Բեսաբդալ լեռ, 515.
Բեսարաբաս, բերդ, 610.
Բեսամ, 129.
Բերդաթաղ, 334ծ.
Բերլին, 5.
Բերկրի, տե՛ս Առաքեալ
Բերնար, 108.
Բեքանա, տե՛ս, Պարնի, 742.

Բիթլիս, 154ծ, 209, 214, 220, 526ծ.
Բիլբասի չեմք, 843, 844.
Բին-Գյոլ, գետ, 240ծ.
Բին-Գյոլ, լիճ, 98, 103ծ, 210ծ, 231, 279, 288.
Բյուզանդիոն, 293ծ.
Բյուֆանիա, 85, 463.
Բյուկպարև, տե՛ս, Վասքար.
Բյուրակնյան լիճ, տես, Բին-Գյոլ լիճ.
Բոգոլյուբակա, 711ծ.
Բոմբեց, 35ծ, 49ծ, 84, 355, 376, 430, 663.
Բոյալը, 495ծ.
Բոնապարտա, Ժոզեֆ, 7.
Բոնապարտա, Լուսիեն, 17.
Բոնապարտա, Նապոլեոն, 1—9, 14, 17, 22, 53, 73ծ, 77, 82, 97, 101, 103, 137,—138, 228,—229, 375, 395, 523, 566, 572.
Բոջան, 116—117, 133.
Բորչալու, 400, 512.
Բուլա-բան-կապի, 86.
Բուլանըխ, 154ծ.
Բուլանըխ, Ներքին և վերին, 210ծ.
Բուլոնիա, 5.
Բուխարա, 19, 123, 139.
Բուխարեստ, 138.
Բուչիր, 14, 430—431.
Բուլբոններ, 3, 7.
Բուրսա, 819.
Բրազիլիա, 427.
Բրայթըն, 253.
Բրանտ, 240ծ.
Բրաուն, 840.
Բրիտանիա, տես, Անգլիա.
Բրուեր, 106.
Բրումերի Հեղափոխություն 4.
Բրուսիա, 618.

Գ

Գաբրի գետ, 81, 430.
Գալերիա, 839.
Գանգարա, 463.
Գայանեյի վանք, 104ծ, 105ծ.
Գանզակա, տես, Գանձակ.
Գանձակ, 12, 21—24, 317ծ, 382, 839.
Գանձակեցի, Կիրակոս, 526ծ, 758ծ.
Գառնի, 255, 315, 319ծ, 346—348, 350, 356ծ, 557ծ, 638, 768, 807, 809.
Գառնի, գետ, 315, 319ծ, 326, 345, 346, 547, 772, 803, 805, 808.
Գառնի-յարիք, լիճ, տե՛ս, Սրա-յի լիճ.
Գամմլոյու, 331.
Գարահիսար, 292.
Գարգար, 334—335, 344—345, 354, 357, 419—420, 436—439, 559, 632—633, 780, 793.
Գարգան, գեներալ, 16—18, 73ծ, 82, 97ծ, 101ծ, 103ծ, 106ծ, 109ծ, 132ծ, 134ծ, 135ծ, 281ծ, 305, 310, 333ծ, 406, 799.
Գելիջ-ապա, 265.
Գեղամ, 317.
Գեղամա լեռներ, 319.
Գեղարդի վանք, 255, 329ծ, 345—346, 348, 350, 356ծ, 810, 813.
Գեյվե, 87.
Գեորգ, XIII, 20.
Գեորգ, Գ, 711ծ.
Գեորգիևիչ, 710ծ.
Գեոք-Բելիան, 341, 555ծ.
Գեոքչի, 190, 191, 272, 275.
Գեղզնյա կիրճ, 277.
Գեմմանիա, 9, 138, 506.
Գիրքըն, 57, 71—72ծ.
Գիզ, 288.

Դիլման, 21, 134, 248, 768.
Դիլիջիպի, 85.
Դյավոլ-գազ, 93.
Դյոլլու, գյուղ, 240ծ.
Դյուզակ, 711ծ.
Դյուլստան, 22, 254, 317ծ, 382.
Դյումբեխանե, 95, 241, 243—244.
Դյումբի, 334ծ, 400, 403, 516, 520, 526—527, 650, 742—744, 759ծ, 761, 766.
Դյունե, լիճ, 495ծ.
Դյուջիր, 200.
Դյոքչա, 23, 768.
Դոզդաթ, լիճ, 815.
Դոզքըն, գավառ, 491.
Դոռնիա, բերդ, 809.
Դորզըն, Ռոբերտ, 380—382, 429ծ.
Դուզարք, 334ծ, 544, 640.
Դուզ, 838.
Դուլուս, գետ, 554.
Դումեք, 280.
Դուրգան, 37.
Դուրգին, 525ծ.
Դրեզդր (լուսավորիչ), 86, 315, 327, 329, 350, 528, 548, 756, 815.

Ե

Եաթե-խան, 275.
Եահար, 277.
Եաղիանոս, 418.
Եամբեմ, 144.
Եանիմարկա, 8.
Եանուբ, 5, 147.
Եանուբյան նահանգներ, 6.
Եավալու, 315, 319ծ, 357, 414—415, 452, 492ծ, 548, 557ծ, 637—638, 773, 776, 801.
Եավիթ-Աղհողլին, 525ծ.
Եավիթ, Քանաքեացի, 355ծ.
Եավուտ փաշա, 842.
Եարալագյազ, 318ծ.
Եարեհ, 113, 453, 494ծ.
Եարխալի կիրճ, 609, 670.
Եեբեհա գետ, 412ծ, 525ծ, 733—734.
Եեբուս, 356ծ, 493ծ.
Եեզեն, գեներալ, 143.
Եելա Վելա, Պիտարո, 72ծ.
Եելի Ամեղ, սպիտան, 363.
Եելի-բաբա, 99, 103, 191, 277—279, 282ծ.
Եելիջե, 89—90.
Եելիլեր քենտ, տես Եելի-բաբա
Եելնի, 603.
Եեհկզեհանոս, 348, 808.
Եեվե-Բոյնու, 208, 293ծ.
Եերբենա, 12, 22, 24, 228, 317ծ, 686, 711ծ.
Եերևչիչակ, 334ծ, 342ծ, 356ծ.
Եերհանոսան, 133.
Եերվիչ ապա, քարվանսարա, 142.
Եերվիչ բեկ, 218—219, 232, 234, 236—237.
Եըրդմար, 317ծ.
Եիադին, 100—101, 103ծ, 149 154ծ, 270—273, 281ծ, 282ծ.
Եիաբեկբիր, 200, 220, 239, 410.
Եիզդե, 270, 556.
Եիզդե-կիզիլ, 270.
Եիզե-խալիլ, 227, 231.
Եիլայա, ժան, 106.
Եիլիջան, 334ծ.
Եիլիջե, 90.
Եիոգենես Հռոմանոս, 215ծ.
Եիոդոս, 246, 441.
Եիոն (Գասխ), 490.
Եիսաջիզ, գյուղ, 260.
Եիբեհատոբիա, 2—3.
Եիցաման, տես Ալչ-քիլիսա.

Դյուբրև, 192, 231, 245.
Դյուզ-Ոպլի, 847—848.
Դյուբհամ, 677.
Դնեպր, 681, 730.
Դոբրա-գարա, լեռ, 670—671.
Դոմինիկյանք, 369, 737.
Դոն, 389, 681, 752.
Դուայթ, 366ծ.
Դուգանկա, 452, 492ծ, 637.
Դուկան, 35ծ.
Դուպրիլ, 293ծ.
Դումբեկու-ցեզ, 309.
Դումֆրեսյայր, 49ծ.
Դուչեթ, 664—665, 707, 709.
Դուրնով, 105ծ.
Դվին, 547—548, 556ծ—557ծ.
Դվին, Ասոր և հայ, 319ծ, 556ծ.

Ե

Երեվր, 115.
Եզբիզկրլեր, 215.
Ելամ, 494ծ.
Ելբուրզ, լեռ, 119ծ, 134ծ.
Ելբրուս, լեռ, 686, 689, 720.
Ելիման, 833.
Ելիս, 341, 344—345, 354—355.
Լմաֆներ, 263, 266, 270, 281ծ, 324, 326, 378.
Եմին, ագա, 285.
Եմին, փաշա, 479, 480.
Եմիր-Ալվադլու, 512.
Էնզելես, 92—93, 187, 192, 195—196ծ, 202, 209, 215—216, 222, 225.
Էոկյուրի-սու, 102ծ.
Եչկի-մեյտան, 334ծ.
Եսժեն, Խլհան, 517.
Եոնջալի, Յոնջալի, 99—100, 103ծ.
Եջմիածին, 21, 24, 101, 104—105ծ, 139—140, 153, 327, 329ծ, 333ծ, 338—339, 343, 359, 393, 403—405, 450, 455, 457, 462, 493—494ծ, 527ծ, 532, 548, 551, 678, 711ծ, 743, 754—758, 760, 764—765, 769, 792, 809, 814—815, 819.
Եվկլիդես, 222.
Եվքլիդես, 308.
Երբիլ, 485.
Երզրում, 91, 94—96, 98, 102—103ծ, 114, 139, 141—142, 145, 147, 149ծ, 154ծ, 166ծ, 173, 187, 190—192, 194, 202, 206—208, 210ծ, 215, 218, 231—232, 239, 242ծ, 244—245, 254—256, 261, 267, 278, 280, 281ծ, 283ծ, 285, 287—289, 291, 293ծ, 295ծ, 334ծ, 358, 364, 410, 441, 471—472, 476—477, 479—480, 484—487, 489, 526ծ, 637, 814, 817, 819, 826—827, 830—834, 837—838.
Երփուրդ, 7.
Էքս, բադաբ, 137.
Էրբիկ, տե՛ս Ագրակ.

Զ

Զապրա, գետ, 555.
Զալմիր, գետ, 436.
Զանդու, գետ, 323, 326, 343, 409—410, 457, 532, 536, 540 543, 640, 761—762, 765, 772, 803—804.
Զանթա, կղզի, 394,
Զավխա, մզկիթ, 777,
Զաքարիա, սպասալար, 293ծ, 356ծ 402ծ, 413ծ, 711ծ.
Զաֆրա, 198.
Զեբեն, գետ, 830.
Զեյդի, 262.
Զեյնեկրուդ, գետ, 673.
Զենգե-Իուդ, գետ, 431.
Զենդ, Քարիմ խան, 11, 15.
Զիա-ալ-մուլք, 438.
Զինջիրլի, 302.
Զինջիլսպատա, 572.
Զոբի խան, 75.
Զիլ (Զիլի), 93.
Զինջան, 114.
Զիրզանդիլ, 768.
Զմյուռնիա, 88, 91, 93, 431—439.
Զորնդա, 1193.
Զորավանք, 107—108.
Զուկխան, 178.
Զվիցերիա, 2, 72ծ, 245, 698.

Թ

Թաբանա, գետ, 88.
Թաի Ալի, խան, 558.
Թաիաբխաան, 19, 54.
Թաիթիա, 123, 128.
Թաիու, 238.
Թալին, 365ծ, 524, 525, 526ծ, 750, 759ծ.
Թալիշ, 22, 23, 25, 317ծ, 753, 759ծ.
Թալիա, տես՝ Թալին.
Թահիր փաշա, 197, 199—200.
Թահմասպ խան, 11, 52ծ, 126, 128, 544.
Թահմասպ, Ս, 119ծ.
Թամար, թագուհի, 293ծ, 690, 711ծ.
Թամբուրա, գյուղ, 826.
Թաղկուն, 212—213, 232, 237, 240ծ.
Թաուրիա, 266.
Թաուշ, 227, 231, 258—260.
Թավրիզ, 24, 60, 72ծ, 109—112, 118—119ծ, 127, 142, 145, 154ծ, 174, 216, 227, 231, 247, 254, 256—259, 261—262, 295ծ, 297, 300, 310, 318ծ, 335, 341, 344, 354—355, 357, 379—381, 383, 391—395, 403, 405, 407, 409, 414, 422—423, 426—427, 429, 431, 433—434, 448, 450, 480, 487, 489—490, 492ծ, 546, 556, 558—559, 561, 565, 567, 572, 574, 578, 595, 607—608, 611, 622, 628—630, 678, 766, 770, 782, 793, 798—799, 801, 839, 841, 849, 854.
Թաթախ, 816.
Թեհրան, 15—19, 23, 35, 46, 49, 59—61, 72ծ, 82, 107, 116—120, 123, 125, 127, 129—130, 132—134ծ, 227—231, 248, 273, 268, 293, 297, 355, 390, 392, 427, 430—431, 469, 489—490, 510, 562, 574, 576, 594, 623, 633, 659, 678, 851, 854.
Թեոդոսիոպոլիս, տե՛ս Երզրում.
Թեսալիա, 441.
Թեվթոն, 114.
Թերթերլի, 87.
Թերեք, 389, 658, 669—671, 680—683, 685—686, 695—697.
Թերջան, 215.
Թերսուչ, 109.
Թեք-գազ, 232, 239.
Թլսիա, 6—8, 16—17.
Թլսիաի պաշտպրութիւն, 16, 17.
Թխմուր բևկ, 273—276.
Թխմեի գալ, 113, 572.
Թիֆլիս, 12, 22—23, 73ծ, 104ծ, 105ծ, 139, 177, 220, 228, 327, 333ծ, 335, 339-340, 380-382, 395, 397—398, 411ծ, 413ծ, 427, 429, 471, 492ծ, 501—502, 505, 506, 509—511, 513—514, 530, 573, 579, 611, 623, 650, 653—

655, 657, 659 — 660, 662 — 663, 672, 680, 682, 702, 706, 710, 712, 715, 717—718, 720, 726—727, 729ծ, 730—732, 739, 754, 842, 855.
Թագավոր, 472—475, 478, 495ծ.
Թոզպաղեա, 232, 238.
Թոխթամիշ, 711ծ.
Թոսուն, 240ծ.
Թոտալբեն, զորավար, 682.
Թորբալի, 87.
Թուխ, 45.
Թուխլեա, 699.
Թուս, 132ծ.
Թուբխալ, 293.
Թուրքիա, 6—7, 9, 53, 95, 97, 101, 107—108, 113, 128, 138—139, 151, 187, 189ծ, 195, 207, 215ծ, 223, 225 227, 236—237, 242, 268, 271, 284—285, 292, 355ծ, 359, 374, 382—383, 393, 402, 434, 463, 480, 520, 553, 612ծ, 637, 641, 643, 661, 677, 679, 706, 752, 845.
Թուրքիա, Ասիական, 79, 82, 203, 236.
Թուրքիա, Եվրոպական, 146ծ, 203.
Թուրքմենիա, 410.
Թուրքմեններ, 113.
Թուրքմենչայ, 24, 615.
Թուրքմենչայի դաշնագրությունն, 24, 118ծ, 119ծ, 573.
Թոփրակ-կալե, 99, 103ծ, 149, 154ծ, 182, 184, 190, 210ծ, 273—275, 282ծ, 638.
Թրանսկովկասիա, 138, 332.
Թրաֆալգար, 8.

Ժ

Ժակոբիններ, 3.
Ժիմիխան, 207.
Ժողկր, 101ծ, 105ծ, 136—140, 146ծ, 154ծ, 156, 162ծ, 168, 172ծ, 184ծ, 227—228, 231, 240ծ.
Ժուանին, 101ծ, 132ծ, 241, 248ծ.

Ի

Իլխիա, 708.
Իրն-Հակել, 840.
Իրրահիմ, 102.
Իրրահիմ բեյ, 642, 646.
Իրրահիմ խան, 44.
Իրրահիմ փաշա, 155, 177, 181—182, 184—188, 190, 237, 268—269, 271, 273, 276, 358.
Իրրահիմ փաշա, Փենդիման, 365.
Իգկրդ, 133.
Իդմիդ, 85—86.
Իդմիդ, գետ, 85.
Իդնիկ, 86.
Իզուբ-գյոլի, 825.
Իլան-գագ, 308, 417, 442, 549—552.
Իլիջա, 96, 202, 206—207, 241—242, 287—289, 295ծ, 487, 489, 490, 838.
Իլլիրիական նահանգներ, 5.
Իմերեթիա, 708, 855.
Իոպիլանդի, իշխան, 138.
Իսմայիլ խան, 124.
Իսմայիլ Շահ, 119ծ, 306, 558, 782.
Իսմայիլով, քաղաք, 147.
Իսուֆ փաշա, 93, 95—98.
Իտալիլ, Ճարտարապետ, 103ծ.
Իսքեր-սու, 292.
Իվանե, ամիրաբեկ, 293ծ, 366ծ, 412ծ, 413ծ, 526ծ, 711ծ.
Իվանով, գնդապետ, 579.
Իտալիա, 4—5, 203, 624.
Իրաք, 72ծ, 248.
Իրաք Աջեմի, 132—133.
Իրլանդիա, 474.
Իրման քեոյ, 92.
Իչ-քիլիսա, տես՝ Նշմարեն.
Իքերիան, 95.

Լ

Լագարյաններ, 492ծ.
Լագարով, գեներալ, 21.
Լաժաս, 131.
Լանդո, 74.
Լայալ, Ռոբերտ, 612ծ.
Լայպցիգ, 9, 571.
Լաբա, կայան, 670, 683, 686.
Լաֆոս, բժիշկ, 543.
Լեհաստան, 8, 618—619, 621.
Լեմբերգ, 663, 679.
Լինինական, 334ծ, 526ծ.
Լենկթիմուր, 102ծ, 108, 309, 349, 366ծ, 385—386, 457, 468, 491ծ, 552.
Լենքորան, 22—23, 25.
Լեոպարտ, լիս, 113.
Լեվան, Թագավոր, 712, 728ծ—729ծ.
Լեվանտա, բերդ, 815.
Լեհեր, Բռնաբիմ, 108.
Լենգակ, 19, 376, 561, 622.
Լիանովիչ, 335, 519.
Լիսիա, 463.
Լոզան, 72ծ.
Լոնդոն, 77, 253—254, 427, 613, 677.
Լոռի, 94—95, 412ծ, 515, 525—526ծ, 736.
Լոռի, գետ, 739.
Լոբիտան, 132—133.
Լուարջան, 437—438.
Լուդովիկոս, ԺԴ. 106.
Լկուլլոս, 316.
Լուր, ցեղ, 647.

Խ

Խալիլ ապա, 158, 161.
Խալտիա, 215ծ.
Խանակյա, 307—308, 317ծ.
Խանե քեոյ, 467, 495ծ.
Խաչատուր, 104ծ.
Խաչիկ, խոջա, 492ծ.
Խաչիկ, կաթողիկոս, 318ծ.
Խարակ, կղզի, 18.
Խարպին, 240ծ.
Խարեմ, 19.
Խարկովսկի, գեներալ, 24.
Խերսոն, 678.
Խիվա, 22, 612ծ.
Խլաթ, տես՝ Ախլաթ.
Խնուս, 208, 209, 210ծ, 214, 215, 240ծ, 274, 279.
Խոմիս, 258.
Խոյ, 108—109, 118ծ, 216, 222, 224—225, 227, 231, 234, 254, 256, 259—262, 265, 275, 300, 304—307, 311, 839, 854.
Խոշար, 232, 234—235, 239ծ.
Խոշար, ներքին և վերին, 239ծ.
Խոշավան, գյուղ, 749, 751.
Խոշավանք, 745, 749.
Խոշք-Սկարայի, 302.
Խորովաբերդ, 348.
Խորովանոց, 758ծ.
Խորասան, 12, 14, 22, 75, 115, 132—133, 223, 248, 495ծ, 612ծ.
Խորև, գյուղ, 263.
Խորենացի, Մովսես, 103ծ, 195ծ, 219, 317ծ, 347, 348ծ, 411, 450, 453—454, 808.

Խոթ, 307—308.
Խոր Վիրապ, 315, 319ծ, 350, 557ծ.
Խուզխատան, 248, 462.
Խոք, 312, 318ծ, 549, 557ծ, 636, 775—776, 800.
Խրամ, գետ, 397, 411ծ, 512, 733, 734.
Խրիմ, 139, 198, 365ծ, 681.

Ծ

Ծագիկածոր, տե՛ս Դևերևշչակ.
Ծագիկանց լեռներ, տե՛ս, Սյա-գագ.
Ծագիկատ գավառ, 282ծ.

Կ

Կաթարտա, 672.
Կաթարտինի իշխան, 521.
Կաթևրա, տե՛ս Սմպադ.
Կապրևի, գետակալ, 689—690, 693.
Կապրևի, գյուղ, 688—689, 695.
Կապրևի, լիս, 669—670, 686, 689.
Կալևջիկ, բերդ, 318ծ.
Կալե-քեոյ, 495ծ.
Կալի-Կիլան, 441.
Կալկաթա, 61.
Կախեթիա, 720—721.
Կահիրե, 143—144.
Կապղվան, 495ծ.
Կամբեզ, գր. 562, 584, 608.
Կան, Կյան, 207, 218, 232, 239, 240ծ, 241, 242.
Կանգահար, 79, 128, 133.
Կաչաուր, 665, 667—668, 702, 703.
Կապադովկիա, 199, 205, 455, 463, 490.
Կապանակ-Ձոյ, 298.
Կապլանատա լիս, 573.
Կաջար ցեղ, 11, 36, 51ծ, 127, 305, 564.
Կասպից ծով, 15, 22, 25, 76, 133, 139, 161, 206, 317ծ, 410, 414, 431, 441, 500, 543, 552ծ, 661, 681, 711ծ, 810, 855.
Կատրանյը, 495ծ.
Կարաբաղլու, գյուղ, 636.
Կարա-Ջիաղին, 308.
Կարա-Լիճ, 107, 264—266.
Կարախան, տե՛ս Կարգու.
Կարա-Կալա, 456, 463, 472, 493ծ, 495ծ, 765, 817.
Կարա-Կուլակ, 845.
Կարա-Հիսար, 93, 205, 241, 482.
Կարա-Հիսար, Շարքին, 196ծ.
Կարամանիա, 133, 195.
Կարամուսալ, 86.
Կարա-Ճալ, 114.
Կարա-Չիոյան, 220.
Կարա-Չորան, 232, 238, 240ծ.
Կարապետ, յեպիսկոպոս, 295ծ.
Կարաջոր, 833.
Կարա-Սու, 95, 288, 293ծ, 441, 457, 815, 838.
Կարաբլխան, Բահանի, 103ծ, 147, 274, 281ծ.
Կարա-քուլակ, 291—292.
Կարբի, 768.
Կարբուգաղաա, 117, 118ծ.
Կարգու, 237, 240ծ.
Կարեգին, Գնդապետ, 519.
Կարլանկու, գետ, 573.
Կարկառոն, 803,
Կարնո գավառ, 196ծ.
Կարուց թագավորության, 766ծ.
Կարս, 97, 293ծ, 361—363, 365ծ—366ծ, 402, 456, 465—467, 470—473, 476—477, 480, 495, 523, 526ծ, 679, 711ծ, 744, 822, 824—827, 829, 837.
Կարս, գետ, 362, 745, 827.
Կաֆկան-պագ, 308.
Կելկի գետ, (Գայլգետ), 93.
Կենե, 143.
Կեսարիա, 90, 91, 410.
Կեսարիա, Նոր, (Դիվկաթ) 91—92, 292.
Կեսիք, 275.
Կեսանուց, 778.
Կերենիա, 133.
Կերտեկ, 268.
Կեր-Փորտըր, 119ծ, 135ծ, 319ծ 356ծ, 481, 491ծ, 492ծ, 495ծ, 557ծ, 572, 612ծ, 676—679, 729ծ, 759ծ, 763, 771, 783, 796—797, 806—807.
Կրզըլ-բրմագ, գետ, 91, 197—198.
Կիզիլչիկ, 90—91.
Կիզլար, 730.
Կիզ-կալե, 309, 348.
Կիլիկիա, 366ծ, 410, 495ծ.
Կիամիսոր, 292.
Կիբասան, 197.
Կիբրա, գյուղ, 556.
Կլապրոթ, 710ծ.
Կլավբեր, 72ծ, 103ծ, 282ծ, 317ծ.
Կլեբեր, 96, 193, 204.
Կլերակ, լա Մամժի, 106.
Կյոզ-Թեփե, 87.
Կյուբիկե, 525ծ.
Կյուբրու, 107.
Կոբենհագենն, 8.
Կոբի, 691, 695—698.
Կոզովիա, 154ծ, 282ծ.
Կոզի, գյուղ, 397, 411ծ, 511, 525ծ, 653, 733.
Կոլագիվի ամրոց, 512.
Կոլոնիա, 845.
Կողբ, 325ծ.
Կողբիա, 708.
Կոմբա, լիճ, 411ծ.
Կոլյա-Հիսար, 845.
Կոնդարինի, Ամբրոսիո, 526ծ.
Կոչա-փունար, 141, 242.
Կոսպիկ, 143.
Կոստանդիանոս, 86.
Կոստանդին, արքեպուբա, 559.
Կոստանդին, մեծ գուբա, 618, 621.
Կոստանդնուպոլիս, 7, 17, 72ծ 82—84, 86, 93, 125—126, 137, 139, 141, 144, 146—147, 153, 157, 163—164, 173—174, 186—187, 1 2, 193, 195, 199, 204—205, 209, 213, 217, 219, 231, 236, 241, 243, 247, 254, 272, 285, 287, 292, 295ծ, 341—365, 383, 393, 402, 431—433, 467, 469, 483—484, 618, 678—679, 757, 829, 837, 842, 846, 854.
Կովկաս, 1, 23, 53, 141, 206, 353, 395, 510, 514, 609, 658—659, 684, 686, 704, 711ծ, 714, 724—726, 728ծ, 730, 735, 741, 743, 752.
Կովկասյան գուռ, 682.
Կովկասյան լեռներ, 649, 660—661, 713, 739.
Կոտայք, 319ծ, 355ծ.
Կոտկաևիֆսկի, գեներալ, 428, 519.
Կոտուր, կբրծ, 223 224, 231—232, 234,
Կորբուլա, 803.
Կորզվաց, լեռներ, 410.
Կորզվաց, յերկիր, 359.
Կորիկե, Բացատուն, 758ծ.
Կորիկյանք, 525ծ.
Կորմիք, գր. 561, 629.
Կորնուալիս, լորդ, 775.
Կոցեբու, Ֆոն Մորից, 119ծ, 135ծ, 493ծ, 498—499, 526ծ, 541, 557ծ, 612ծ, 613, 729ծ.
Կուբան, գետ, 672, 681.
Կուզեք-դունար, 258.
Կուլմա, գետ, 116.

Կուամանիա, բերդ, 686.
Կումբար, գյուղ, 826.
Կումլխա-Զրգի լեռներ, 705.
Կում-մաջար, տե՛ս, Մաջառի ափերակները,
Կուռանեաց վանք, 368, 370.
Կուտուլուֆ, իշխան, 511, 513, 654-655, 659, 663.
Կուր, գետ, 332, 395, 441, 511, 552ծ, 654, 659, 664, 667, 710, 713, 720, 731—733, 778, 855.
Կուրա, 74.
Կրաոսս, 106.
Կրետե, կղզի, 144.
Կրիտաևրվենա, 86.

Հ

Հարկեր, կուսակալ, 759ծ.
Հագտանան, 88—89.
Հալեր, 50ծ, 93, 106, 125, 205, 460.
Հալիձկի, 495ծ.
Հալի, 258.
Հախվերդով, գնդապետ, 389.
Հաղբատ, 412ծ, 736—737.
Հաղբատի վանք, 412ծ, 758ծ.
Համադան, 52ծ, 247, 390, 394.
Համադասպ, յեպիսկ, 758ծ.
Համամլու, 331, 400—401, 520, 740—741.
Համբուրդ, 395, 510.
Համգուրան Ղազվինի, 436, 438, 445, 450, 486, 495.
Համգուլլահ, Մուսթաֆի, 134ծ.
Համզալու, 318ծ.
Համզա, Մխրզա, 782.
Հայաստան, 2, 9, 11, 18—20, 98, 118ծ, 139, 147, 151, 166ծ, 187, 192, 194, 206, 208, 210, 214, 219, 225, 255, 330, 334, 359, 361—362, 410, 411ծ, 414, 416, 420, 431, 434, 439—441, 454, 471, 485, 495ծ, 497, 543 544, 551, 553, 557ծ, 572, 613, 678—679, 708, 711ծ, 743, 746, 750, 770, 777, 784, 795, 798, 811, 817, 824, 827, 832—833, 837—838.
Հայաստան, Խորհրդային, 254, 411ծ, 495ծ.
Հայաստան, Մեծ, 199, 205, 410, 413ծ, 522.
Հայաստան, Փոքր, 410, 512.
Հայդար Ալի խան, 382.
Հայդար Տուրա, 76.
Հայդելու, 265.
Հայրի-Քևոյ, 88.
Հայք, Բարձր, 103ծ, 196ծ.
Հանմիլ, Զոնաս, 36—37, 51ծ, 134ծ.
Հապսբուրգներ, 265.
Հաջի-Ապատ, 231.
Հաջի Բայրամլու, գյուղ, 359—361, 365ծ, 744, 819, 825.
Հաջի Իբրահիմ, 15, 27—29, 39—41, 46, 49, 68, 75.
Հաջի Իբրահիմ ապա, 84.
Հաջի Խալիլ, 466.
Հաջի Խալիֆա, 149ծ, 212.
Հաջի Կարա, 648—649.
Հաջի Մահամեդ Հուսեյին, 60, 68.
Հաջի Քևոյ, 90.
Հասան, 803.
Հասան Ալի Միրզա, 123.
Հասան ապա, 358.
Հասան, Թաֆար, 173.
Հասան խան, 324, 494ծ, 531.
Հասան կալե, 98, 103ծ, 148, 208, 279—280, 364, 478, 495ծ, 831—833.
Հասան-Կաշի, 596.
Հասան, Ուզուն, 119ծ, 311.
Հասարապատ, 117.
Հաստիր խան, 108.
Հավլարար, 720.
Հարթ, Հարյուրապետ, 561.
Հարությունյան, Խանհակ, 412ծ—413ծ.
Հարուն-ալ-Ռաշիդ, 119ծ, 130.
Հարցիսկիզ, կայան, 664.
Հարք գավառ, 240ծ.
Հեմուտ, Յ., 366ծ.
Հելվետական Հանրապետություն, 2.
Հեմուս, լեռ, 239.
Հեսէյ, 145.
Հեր, 118ծ.
Հերաթ, 15, 115, 143, 249, 300.
Հերակլ II, (Վրաստանի թագավոր) 11—13, 20, 127, 544, 668, 721,
Հերակլ, իշխան, 100.
Հերակլ, կայսր, 103ծ, 293ծ.
Հերբերտ, Թոմաս, 134ծ.
Հերմանխանի, 114.
Հեքիաթի լեռ, 222.
Հեքնարի ցեղ, 234.
Հիսան, 98—99, 103ծ, 279.
Հիպպոկրատ, 106, 125.
Հնդկաստան, 1—2, 7, 14 20, 29, 31 33, 35, 49ծ, 50ծ, 51ծ, 53—54, 61, 72ծ, 74, 76—77, 121, 125—126, 134ծ, 157, 157, 171, 203, 247, 253, 410, 427, 430, 457—458, 492ծ, 557ծ, 561—562, 603, 613, 619, 622, 624, 626, 662, 727ծ, 755.
Հոհենլինդեն, 4.
Հոներ, 681.
Հովհաննեսավանք, 642.
Հովհաննես, արքեպիսկոպոս, 104ծ, 105ծ.
Հովհաննես, կաթ. պատմագիր, 759.
Հովհաննես Հայր, լուսաբար, 494ծ.
Հովհան, Վսակեբերան, 91.
Հովսեփ, Բ. 127.
Հովսեփ, վրդ, 494ծ.
Հորմոզի ծոց, 125, 840.
Հորչուն, 232, 237.
Հուգան, 113.
Հուգերաբենի կամուրջ, 520.
Հուխտան յեկրայրներ, 455.
Հուլաու 119ծ.
Հունաստան, 130, 522, 526ծ,
Հունգարիա, 138, 332.
Հուսեյին Ալի մզրզա, 132.
Հուսեյին Աղա, 320, 336, 465.
Հուսեյին խան, Կնդրևայ, 433, 437—438, 440—442, 468, 476, 479, 481 482, 487, 489.
Հուսեյին դուլի խան, սարդար, 75, 319, 333ծ, 400, 402, 406, 452, 526ծ, 532, 640.
Հուսեյին Շահ, 79, 786.
Հուսեյին փաշա, Ծովակալ, 191.
Հուքնավար, 257.
Հաննոս, 98.
Հոխփսիմե, 329.
Հռոմ, 2, 106, 368, 458.
Հռոմեական Այսան, 88.
Հրազդան, տե՛ս, Զանգու.

Ձ

Ձորաշեն, 399, 412ծ.

Ղ

Ղազախ, 333ծ.
Ղազվին, 72, 115—117, 118ծ, 216, 231, 450, 711ծ.
Ղամարլու, 319ծ.

Ղամբարի խան, 550, 552.
Ղարաբաղ, 21—22, 298, 308, 317ծ, 382, 386, 393, 402, 427, 549, 636.
Ղարադաղ, 227, 317ծ, 384, 761.
Ղարաբիլիսա, 149, 159ծ, 320, 330—332, 334—335, 400—401, 516—518, 520, 526ծ, 648—650, 657, 740, 742.
Ղափզաբյան կ, 404ծ.
Ղուշ, 126.
Ղունի, 257—258.
Ղուրդուրլի, 495ծ, 769.

Ճ

Ճանուկ, 492ծ.
Ճանուկ, գետ, 492ծ.
Ճապոնիա, 568.

Մ

Մագագիրդ, տե՛ս, Մժնկերտ.
Մագեն, 187, 205.
Մագրաս, 376.
Մագանդարան, 11, 37, 132, 134ծ, 248, 431.
Մագնեզիա, տե՛ս Մժնկերտ.
Մալաթաս, 430.
Մալաթիա, 292.
Մալկն, Բոլան, 149ծ.
Մալկոմ, գեներալ, 14—15, 17—19, 26, 32, 34ծ, 45ծ, 49ծ, 50ծ 51ծ, 68ծ, 72ծ, 73ծ, 74, 178ծ, 121, 134ծ, 135ծ, 248ծ, 561, 626, 728ծ.
Մակու, 769.
Մակսիմիլիանոս, 85.
Մահմեդ Ալի խան, 132.
Մահմեդ Ալի մրզա, 50ծ, 51ծ, 75, 377, 426, 577, 600.
Մահմեդ բեկ, 379.
Մահմեդ Հուսեյին խան Դուդալի 41—43, 51ծ.
Մահմեդ Հուսեյին խան Մեմի, 45.
Մահմեդ Ղուլի Մրզա, 132.
Մահամեդ Միրզա Ճան, 23.
Մահամեդ Վելի Մրզա, 132.
Մահրա, արմաթան, 118ծ.
Մահմուդ, 786.
Մահմուդ, ագա, 164, 167—168, 170, 172ծ, 173, 177, 180—189, 237.
Մահմուդ, Բ. 149ծ, 294ծ.
Մահմուդիյե, 222, 224, 234.
Մահմուդ խան, 585, 588, 591.
Մահմուդ Ճան, 117.
Մահմուդ փաշա, 125, 155—156, 158, 162ծ, 163, 173, 175, 177—178, 181—182, 184ծ, 185 187—188.
Մադաթա, 358.
Մամախաթուն, 290—291.
Մամբռունի գետ, 647.
Մամիկոնյան, Արտավազդ, 526.
Մամիկոնյան, Գրիգոր, 759ծ.
Մամիկոնյան, Վահան, 103ծ.
Մայրան, 95,
Մայրագան, 356ծ.
Մանազկերտ, 154ծ, 210ծ, 212, 215ծ, 238, 240ծ.
Մանգաշարանա, 421.
Մանթևլի, 117.
Մանչի կռնակ, 5.
Մանփալաի, 143.
Մաջաոի ափերակներ, 681, 710, 711ծ.
Մաո, Ն. 413ծ.
Մասաբալչ, 510.
Մասիս, տե՛ս Արարատ,
Մաստարա, 298, 526ծ.
Մարագա, 392.
Մարանդ, 227, 300—301, 357, 381, 420, 433, 435—438, 450—451, 454, 554, 575, 629—630, 632—633, 780—782, 793.
Մարաջալ, 8.2.
Մարաստան, 133, 420, 439, 779, 781, 839.
Մարգաստան, 239ծ.
Մարևնդո, 4.
Մարխան, 781.
Մարիոպոլ, 678.
Մարսելլ, 106, 125, 139.
Մարտին, Հենրի, 393.
Մ'գռնալդ, 839.
Մելլեմ, դյուք, 92.
Մելկե, 101, 14 , 162, 487, 509.
Մենդի Ալի խան, 14, 35ծ.
Մենմեդ խան, 231, 237, 241.
Մեղրի, 298, 308.
Մեյան, դյուք, 257.
Մեյանե, 113—114, 572—573.
Մենշիկով, 23.
Մենուաս, 215ծ.
Մեջաուլ, լեռ, 555.
Մեչետ, 15, 129, 132.
Մեսխանա, գետ, 525ծ.
Մերգեն, 843.
Մերգին, 220.
Մժնկերտ, 363—364, 366ծ, 402, 476, 478, 495ծ, 829, 830, 832.
Մթանա, 711ծ.
Մխայեն, դյուք, 280.
Մխրպատ Գնաատայի, 85, 96, 411, 809.
Մենդո, լորդ, 17—18.
Մխչեի, դյուք, 258.
Մխչախաթ, 117, 410, 677—678.
Մխկերկրական ծով, 463, 495ծ.
Միրզա Աբդուլ Հասան, 254, 298, 430, 581.
Միրզա Աբդուլ Քասիմ, 384.
Միրզա Բաղերը, 305.
Միրզա Բաղարզի, 71, 300, 305, 380, 422, 424, 426, 559—560, 569 571, 626.
Միրզա Թաքի, 626.
Միրզա Կուլի, 47, 128.
Միրզա Հասան, 110—111, 626.
Միրզա Հայրատ, 74.
Միրզա Մահամեդ Ալի, 626.
Միրզա Մահամեդ Խան Գավալու, 75.
Միրզա Միրանչա, 309.
Միրզա Շեֆի, 70, 117, 120—121, 129, 229.
Միրզա Ջեֆի, վարչապետ, 581—583.
Միրզա Ռեզա խան, 16.
Միրզա Ռեզա Կուլի խան, 228—229.
Միրզա Սեֆի, 47.
Միր Ղոլամ Ալի խան, 128.
Մլլեր, Դր, 511, 537—538, 579, 589.
Մխայել, վայոր, 526ծ.
Մծխեթ, 664, 710, 731.
Մոզդոր, 649, 657, 663.
Մոզինույք, գետ, 197.
Մոլա Սուլեյման, դյուք, 277,
Մոլդավիա, 6, 679.
Մոկք, 334ծ.
Մոնտանա, 526ծ.
Մոն Բլան, 670.
Մոնտիեմ, 19, 316, 344, 348, 356ծ, 452, 455 457, 460, 462, 492ծ, 49-ծ, 561, 622, 772, 799.
Մոնտիգոր, 517—518, 520.
Մոս, 291.
Մոսկյան լեռներ, 742, 752, 822, 828.
Մոսկվա, 9, 50ծ.
Մոսյան բլուրներ, 761.

Մարմիկ, Ջիմմ, 18 19, 73ծ, 118ծ, 119ծ, 134ծ, 135ծ, 154ծ, 179, 230, 251, 253—255, 292, 303, 305, 318ծ, 319ծ, 322, 325ծ, 329ծ, 330, 333ծ, 334ծ, 336, 343, 345, 347, 351, 356ծ, 366ծ, 370ծ, 381—392, 394, 396, 429ծ, 430, 459, 485, 491ծ, 493ծ, 557ծ, 572, 576, 728ծ.
Մոթա, գեներալ, 4.
Մուժամբար, 119ծ.
Մուկամբար գալա, 11—12, 298, 450.
Մուկնի, 334ծ.
Մուշ, 209, 214, 220.
Մուշեղ, Բագրատունի, 366ծ.
Մուշա, 826.
Մուսա բեկ, 222—225, 232—234.
Մուսուլ, 91, 220.
Մուսաֆիա, 205.
Մուսաֆիա, Ա. 294ծ.
Մուսաֆիա Ապա, 214.
Մուսաֆիա, սուրհանդակ, 433: 447, 455, 468, 467, 471, 472, 476, 481, 482.
Մուսաֆիա, փաշա, 824.
Մուսաֆիի, Շևջրևի, 489.
Մուրադ, Ա. եմիր, 293ծ.
Մուրադ, Գ. սուլթան, 543, 824.
Մուրադ, Դ. սուլթան, 119ծ, 211, 489, 544.
Մուրադ սու, 195ծ, 211, 240ծ. 282ծ,
Մուրաջա Դ'Ոհսոն, 146ծ.
Մուրավյով, 728ծ.
Մուր, սբր Ջան, 677.
Մուրց, 366ծ.

Ն

Նակուբ, 134ծ.
Նազան, տես Հյուհան,
Նամ, 381, 435.
Նամագին, 778.
Նեգիպատոս, 7, 91, 142—144, 149, 193, 203—204, 463, 495ծ.
Նեգի-բուլաք, 298.
Նեգի-գուլի, 847.
Նեգդ, 81.
Նեկատերինա, II, թագուհի, 6. 11—12, 511—512, 682, 711ծ.
Նեկոփիմ, գետակ, 265.
Նեղոսաբերդ, թագուհի, 27—28.
Նեն, բարմանապետ, 630.
Նենա, 5, 102.
Նեոպլիա, 452, 49 ծ, 773.
Նեսև, 729ծ.
Նեսիչերիներ, 293ծ.
Նեվրոպա, 2, 4, 6, 16, 18, 22, 36—37, 50ծ, 54, 77 78, 108, 111 156, 170, 197, 204, 207, 242, 318ծ, 369, 425, 549, 552, 557ծ, 565, 569, 589 590, 592, 596—597, 600, 602, 648, 650, 681, 691, 704, 713, 715, 757, 765, 769, 770, 787, 789.
Նեվրոպա, կենտրոնական, 6 7,
Ներսեսյան, 196ծ,
Ներգնկա, 202, 205 206, 215,
Ներիքով, 108,
Ներմոլով, գեներալ, 22—24, 51ծ, 72ծ, 135ծ, 139, 499, 501, 503—504, 510—511, 514, 523, 527, 530, 558, 572, 574, 608, 612ծ, 613, 615—616, 618, 620, 628, 649, 659, 712, 724, 728ծ, 730—731, 743, 842—843,
Ներսես, կաթողիկոս, 308, 311, 317ծ, 450,
Ներսեսապատ, 86, 142,
Ներվանդ, թագավոր, 453, 761,
Ներվանդակերտ, 453,
Ներվանդաշատ, 239ծ,
Ներսես, 11—12, 21, 23 25,

105ծ, 138, 144, 151, 153, 155—156, 158, 161, 173—174, 185, 248, 254—255, 277, 297, 312—313, 319ծ, 321, 323—326, 333, 335, 341, 344, 349—350, 352—353, 355ծ, 357—359, 362, 397 399—400, 402—404, 409, 411ծ, 414, 452 455, 457, 492ծ, 493, 516 517, 524, 526ծ, 527, 529, 531—532, 536—537, 541, 543—547, 549, 551—552, 574, 578, 610, 623, 628 629, 637, 638, 640—642, 644, 646, 678, 711ծ 720, 730, 743, 757, 760—769, 773, 776—777, 793, 803 813—815, 818, 820, 824—825, 830, 834.
Նեփրատ, գետ, 95, 98, 103ծ, 104ծ, 142, 147, 149—151, 206 211, 232, 238, 240ծ, 267, 272, 274, 382ծ, 288, 410, 489—490, 831, 838.
Նեփրատ, արևելյան, 271.
Նեփրեմ, կաթողիկոս, 338, 404, 527, 754, 814.
Նոգդատ, 89 90.
Նոնջալի 99—100, 103ծ, 272—275, 281—282ծ.
Նորթուլու, 495.
Նուգուբ, հայր, 368—370.
Նունկալի, տես Նոնջալի.
Նուսուբ խան, 306.
Նուսուբ փաշա, 157, 185, 187—188, 190, 192—195, 197, 199—205, 208, 216, 218, 239, 241, 243,

Շ

Նարեքինդի, 265.
Նադիր Շահ, 583, 603, 761.
Նադար Ալի բեկ, 229, 301.
Նադար, խոջա, 444—445, 491—492ծ.
Նազարովբ, 854.
Նազիկ, գյուղ, 308—309.
Նազիրապատ, 850.
Նալե-խան, 87.
Նալ-թեփե, տես Գեղամա լեռներ.
Նալ-գյուղ, 495ծ.
Նախիջևան, գետ, 551, 777.
Նախիջևան, գյուղ, 464—467, 495ծ, 820.
Նախիջևան, Խորհրդային, 318, 491.
Նախիջևան, Նոր, 752.
Նախիջևան քաղաք, Հին, 25, 29ծ, 308—312, 317—319ծ, 344, 357, 381, 417—419, 438, 447—452, 470, 549—551, 557ծ, 609—610, 633, 635—656, 765, 776—778, 790, 800.
Նանա, թագուհի, 412—413ծ.
Նաջար Ալի բեկ, 524, 611.
Նասար-ադդին-տուս, 471, 486.
Նասար Ալի խան, 554.
Նասրեդդին Շահ, 134ծ.
Նարդիբան, գյուղ, 289.
Նարսես, թագավոր, 839.
Նեբրե-Չայ, տես Արազդ-Չայ.
Նեբուխն, գեներալ, 551.
Նեգրի, խորհրդական, 586, 592. 618.
Նեղոս, 2, 143.
Նեղոսի Նավամարտ, 2.
Նեմուզար-ի-քաասի, 487.
Նեգնեֆ-կուլի խան, 261.
Ներգիվան, 215.
Ներոնիա, տես Արտաշատ.
Նեսես, Աշտարակեցի, 139—140.
Նեսյա, Ոդյուտ, 108.
Նիլսոն, Ժոզեֆին, 2, 8.
Նիկոլա, Ա. 93, 728ծ.

Նիկոլայեվ, 678.
Նիկոպոլ, տես, Կեսարիա, Նոր.
Նիպկե, 574.
Նյուրնբերգ, 196ծ.
Նոյ (Նահապետ), 100, 267, 284, 301, 311, 404, 410, 421, 436, 449, 451, 453, 524, 525, 528, 530, 543–545, 551, 555, 761 781,
Նորաշեն, 240ծ, 312, 314, 318ծ, 492ծ, 549, 636, 637, 800–801,
Նորաշեն, Սուքիա, 636–637.
Նորամանց, 240ծ.
Նորք, 762–763.
Նուհդամա-ալ-Ղարբ, 440.
Նուխ, 22–23, 317ծ.
Նու Ռոզ խան, 55–56.
Նպատ, լիս, 103ծ, 282ծ.

Շ

Շալիք, ցեղ, 197.
Շահարեն, գետակ, 492ծ.
Շահանշահ, Զաքարյան, 356ծ, 526ծ.
Շահարզար, դյուզ, 817.
Շահբուլաղ բերդ, 519.
Շահքեալդի, 240ծ.
Շահխախթ, 318ծ.
Շահսավաններ, 23.
Շահ Սևիի, Ա. 373, 409, 544, 576.
Շահրխար, 492ծ.
Շամախի, 317ծ.
Շամբրամակերտ, 219.
Շամբրամ, թագուհի, 219, 411.
Շամխոր, 23.
Շապուհ, 119ծ.
Շապուհ Մրջրանյան, 103ծ.
Շաուաքլի, 205.
Շարադիլ, 768.
Շարգին, 54, 106, 246, 301, 316, 318ծ, 319ծ, 329, 367, 373, 436, 454, 457, 492ծ, 535, 547, 557ծ, 595, 719, 733, 755, 756, 762, 764, 776, 777, 781, 856։
Շարուր, 312, 314, 318ծ, 319ծ, 325—326, 451—452, 769.
Շարփ, վիրաբույժ, 496.
Շափուր, Բ. 119ծ.
Շաքաքի, ցեղ, 234.
Շեբեսաեր, 109, 258.
Շեմսի, 262.
Շենգուլապատ, 615—616, 627.
Շերիֆ-ադ-դին Ալի, 445, 468.
Շերիֆ Ալի Յեզդ, 457.
Շերխ, Անթոնի, 27, 50ծ.
Շերխ, Ռոբերտ, 50ծ.
Շիրազ, 258.
Շիրակ, 26, 45, 50ծ, 65, 67, 73ծ, 75, 107, 116, 122, 127, 132, 393, 430, 431, 489, 602, 840.
Շիրակ, 298, 495ծ, 526ծ, 742.
Շիր Ահմեդ, դյուզ, 366ծ.
Շիրվան, 22—23.
Շնորհալու, դյուզ, 522.
Շոգուն-գետև, 292.
Շոշ, Շուշա, 494ծ.
Շորակալ, 401,
Շուլավեր, 397, 411ծ, 652, 733.
Շուշի, 12, 23, 41, 74, 382, 519.
Շուվելուն-գաղ, 831.
Շչերբարով, Մարիա, 677.
Շվեյցիա, 6.

Ո

Ոզոսաինյաններ, 369.
Ոզոստոս, կայսր. 446, 779.
Ոզևսա, 139, 678, 855.
Ոթթեր, 106.
Ոթուր, գետ, 260.
Ոլանա, հին քաղաք, 309.
Ոլեարիուս, 72ծ, 106.
Ոլիվիե, 106
Ոյուզ բեկ, 471, 486.
Ոմար, թաթար, 164, 169.
Ոմար, խալիֆա, 164.
Ոչական, 334ծ.
Ոչան, 391, 572.
Ոսեր, 658.
Ոսման, Բ. 294ծ.
Որբելյաններ, 526ծ.
Որբելյան, Սմբատ, 525ծ.
Որբելյան, Ստեփանոս, 317ծ, 318ծ.
Որգուբաթ, 311, 440, 448—449, 491ծ.
Որգուզ, 830.
Որնոգոր պալատ, 3.
Որոփ, կոմսուհի, 563.
Ուելսլեյ, լորդ, 49ծ.
Ուզան, դյուզ, 94.
Ուզունլար. 399—400, 650 651, 738.
Ուիլիամ, 511.
Ուիլիամսին, Ռ. 625.
Ուիլլոք, 355, 561—562, 584, 608.
Ուլմ, 5.
Ունդև, 198, 200.
Ուչ-Քիլիսա, 101ծ, 103ծ, 104, 154ծ, 272—273, 282ծ, 327, 450, 455, 457.
Ուչարի, 775.
Ուսպենսկի, 615—616.
Ուտու, գավառ, 758ծ.
Ուրմիայի լիճ, 109ծ, 118ծ, 227, 257—258, 300, 678. 798, 839—840.
Ուքուզ, քուրդ ցեղապետ, 337.

Փ

Փալպերանի գաշտ, 782.
Փապաիայ, 526ծ.
Փայ-փերև, հովիտ, 308.
Փանախչի, գետ, 319ծ.
Փապան ողլու, 89—90, 195.
Փելեքյան, 228.
Փելտենհամ, 659.
Փեհլ-խանե, լիս, 307.
Փերքեզիատան, 340, 672.
Փերքեսք, 678.
Փիլպրը լեհներ, 822, 828.
Փինասատան, 568.
Փյունգալու, տես, Իզուբ-գյոլի
Փինդիզ խան, 54, 725.
Փինիկիա, 86.
Փինդել, հովիտ, 154ծ.
Փիչիանա, 742.
Փիչկան, կայարան, 652.
Փիրազ Ալի խան, 26, 65.
Փիրաքլու, 495.
Փիֆիլիք, 241—242, 292.
Փհար-բազի, 673.
Փոպան-Քյոփրու, 364, 366ծ.
Փուխար, Սաատ, 454.
Փուչքար, 735.

Ֆ

Ֆանտիլենոմով, 105ծ.
Ֆանֆիլիա, 463.
Ֆասանուբ, 666—667, 703.
Ֆասիֆիկ, հայր կապուչին, 106.
Ֆակհվեչ, 24.
Ֆավել, կայսր, 15.
Ֆավուչի, դեներալ, 406.
Ֆաբիհատան, տես, Իրաք-Աջեմի.
Ֆարնի մեծ, 400—401, 516. 520։
Ֆարսկական ծոց, 414, 430, 489.
Ֆարսհայք, 118ծ.
Ֆարսհատան, 1—2, 7, 9. 11—25, 27—28, 32—34, 36, 38—39, 44, 46, 50, 51ծ, 53—55, 58—62, 64—67, 69—70, 72ծ, 73, 82, 84, 101, 106—108, 113, 114, 116, 118ծ,

119—122, 125—128, 131—135ბ, 137—142, 157, 161—164ბ, 174, 182, 185, 187—188, 190, 193, 205, 214, 216—223, 227—228, 231, 241—243, 246—248, 250, 253—254, 256, 258, 260, 262, 264—265, 267—268, 279, 284—285, 287, 293ბ, 297, 302, 304, 309, 313—314, 317ბ—321, 325—326, 331—332, 341, 358—359, 365ბ, 369, 373—375, 377, 380, 383, 388, 395, 400—402, 406, 414—416, 419—422, 424—52, 430—431, 433, 450, 453, 462—463, 469, 480, 482, 485, 489, 491ბ, 492ბ, 495ბ, 496, 499, 501, 510, 512, 516, 5 0, 523, 530, 532, 535, 538—539, 543, 541, 546, 547, 549—551, 561—565, 568, 571, 572, 577, 582—586, 589, 592, 596, 598—602, 604, 605, 608, 612ბ, 613, 621, 626, 628, 641, 643, 645, 647, 648, 650, 658, 659, 661—666, 674, 677—679, 706, 711ბ—713, 724, 726ბ—728ბ, 730, 760, 761, 766—769, 785, 788, 801, 804, 815, 816, 819, 825, 834, 835, 838—840, 849, 851—855.

Պարսկաստան, Արեմտյան, 79.

Պարսկաստան, Հյուսիսային, 221.

Պարքաս, գր., 689.

Պեգե, 262.

Պենեաս, 441.

Պետիգապիտում, տես՝ Փենաթիկ.

Պետակ, գնդապետ, 335.

Պետակ, զնդաբրխտ, 728ბ.

Պետերբուրգ, 51ბ, 84, 137, 231, 427, 510, 579, 581, 594, 606, 658, 677, 679, 712, 728ბ, 730, 740.

Պետրոս, Ա. 6, 565.

Պերա, 294.

Պերսեպոլիս, 38, 133, 312, 431, 441, 678.

Պերսիչ, Տոմ Մերմիս, 88.

Պինկերտըն, 79.

Պլեհնյան, յես, 239.

Պլինիոս, 490, 685, 686.

Պլուտարքոս, 106, 149ბ.

Պոմպեյ, 88.

Պոմպեոս, 96, 491ბ.

Պոլպիդիս, գյուղ, 86.

Պոնտոս, 199, 403, 485.

Պոտոմակին, 711ბ.

Պուբիուն, 288—289.

Պապոմիոս, 421, 450, 454, 464, 470, 526ბ, 686, 708, 765, 777, 781, 824, 840.

Պրայս, 433, 455, 480, 486, 490.

Պրեվել, գր. 511.

Պրոմանս, 122, 137.

Պրուսիա, 5.

Ջ

Ջամալապատ, 573.

Ջանիկ, 187, 195, 197—201, 240ბ.

Ջավարտ, 827, 829.

Ջավար, 363.

Ջաֆար կուլի խան, 229, 309.

Ջեզդա, 142.

Ջեզար փաչա, 144.

Ջեզբեհ, 177, 211.

Ջեմիլի, ուզբեկ, 366ბ.

Ջեննեհ, 202, 207, 215, 242, 289.

Ջենկինսըն, 50ბ.

Ջեռոմա, 366ბ, 787.

Ջեվիզլիկ, 241, 245.

Ջիրաչեն, գյուղ, 240ბ.

Ջոնս, 106.

Ջոնս, Հարիսթրդ, 17—18, 72ბ, 73ბ, 253.

Ջոնսըն, դնդապետ, 573, 612—614, 617, 631—632, 639, 672.

Ջորջ, III, 34.

Ջուջան, 272, 282.

Ջուղա, 81, 420, 442—444, 446—447, 491ბ, 497, 553, 609, 612ბ, 678, 778, 784—785, 787, 794, 796—799.

Ջուղա, Նոր, 367—368, 370, 372, 491ბ—492ბ, 496—497, 673—674, 779, 784, 787, 792, 795.

Ջրպետյան Հակոբ, Ծառան, 139—140.

Ռ

Ռաչտիկոնի Նահանգ, 506.

Ռեյիզ Սեփր, 305.

Ռեյ, 117, 130, 316, 431.

Ռեննել, 106.

Ռեննենկամփ, 579.

Ռեննենկագ, գր. 686, 721, 754.

Ռեջա, 21—22, 612ბ.

Ռբրուլ, 99.

Ռիզա կուլի խան, 42, 70.

Ռիկարդ, 510.

Ռիս գր Յանկյու, 430.

Ռխան, 127, 710, 855.

Ռիչ, 458, 842.

Ռնգամալ, 356ბ.

Ռոբին-Հուդ, 816.

Ռոգոլի, 373.

Ռոմիո, գնդապետ, 16, 128, 228.

Ռուն, 98.

Ռուսաստ, 678.

Ռուբրուք, 215ბ, 451, 757.

Ռուխ, Ծառ, 12.

Ռումելիա, 146ბ, 679.

Ռումի Նահանգ, 463, 471, 495ბ.

Ռումյանցև, 711ბ.

Ռուսահայաստան, 103ბ, 154ბ.

Ռուսաստան, 1—2, 4—9, 11, 14—16, 18, 20—22, 25, 50ბ, 53, 77, 108, 125, 127, 137, 173, 297—298, 300, 313, 317ბ, 326, 331, 382, 395, 406, 428, 458, 499, 507—508, 512, 516, 520, 526ბ, 563, 565, 572, 579—580, 584, 586, 589, 607, 618, 620—621, 629, 643, 649, 657, 661, 663, 677, 680, 691, 711ბ, 717, 722, 731, 751, 767, 793, 855.

Ռուսաս, 120, 122, 130.

Ռուստամ, 19, 34.

Ռուստամ, Ուլխամ, 181—182.

Ռուֆեն, 193, 204, 242.

Ռուխչև, 297, 380, 389, 392.

Ս

Սաադաստապատ, 367.

Սաաֆ, 769.

Սաբակտեր, 93—94.

Սադախ, դետ, 94.

Սադախլու, 397, 399, 411ბ, 734.

Սադաբակ, 314—315, 319ბ, 657, 801.

Սադըք 834.

Սադըք Խափանախ, 450, 470, 481.

Սադըք խան Ծաբաքի, 74—75.

Սաֆթալա, տես՝ Յեփթեղա.

Սալահան, 300, 357.

Սալմաստ, 261.

Սալուա, 495ბ.

Սալմասորի, բժիշկ, 113, 117—118, 122, 130.

Սալտրը, Տարյուրապետ, 573, 613.

Սակաբխա, գետ, 87, 102ბ.

Սահակիան, դյուց, 630.
Սապանլուզ, 397, 411ծ, 511.
Սամանաբերի, 574, 578.
Սաման-սու, 207, 211, 243.
Սամարղանդ, 19.
Սամուել Անեցի, 758ծ.
Սամսոն, թագավոր, 340.
Սամսոն, քաղաք, 91, 198, 200, 846.
Սայիդի հովիտ, 143.
Սային-կալե, 231.
Սայքա, 612ծ.
Սանահին, 411ծ, 737.
Սանահնի կամուրջ, 759ծ.
Սանահնի վանք, 412—413ծ.
Սան-Բերնար, 699.
Սանդրագո, դր. 543.
Սանդար, կայան, 411ծ.
Սաս, դր. 107.
Սավագաֆի, կոմս, 563.
Սավալան, 312.
Սավալով, 618.
Սավանլու-գազ, 363.
Սավոյ, 245.
Սարայ, 239ծ.
Սարգիս, կաթողիկոս, 491ծ.
Սարգիս, Զաքարյան, 413ծ.
Սարգսամիշ, 495ծ.
Սարմաթյան լեռներ, 708.
Սարջամ, 573.
Սաքսոններ, 726.
Սաֆեր խան, 577 579.
Սեբաստիա, տես Սվազ.
Սեգիլան, դյուց, 556.
Սեգիլս, 140.
Սեգրինոս, 485.
Սելաման, դյուց, 263.
Սելիմ, I. 119ծ.
Սելիմ, սուլթան, Գ. 138, 145ծ—146ծ, 192—193, 199, 782.
Սոլու-սու, գետ, 554.
Սեմբցամարագին, իշխան, 650.
Սեյդաղատ, 112—113, 227, 572.
Սեյդավար, դյուց, 118ծ.
Սիլյեղ-Արգալ-դանի, 626.
Սելյան, 430.
Սեն-Գոթարտ, 98.
Սենա Պրյուտ, 88.
Սեռերուլ, 119ծ.
Սեվաստապոլ, 105ծ.
Սեվերիանոս, 490.
Սեվորդյաց Ձոր, 412ծ.
Սեսաբ, 799.
Սեսիլ, դյուց, 265.
Սեր-աբ, 228.
Սերաֆինո, հայր, 458, 460, 462.
Սերչեմբի, գետ. 288.
Սիրիկ, ցեղ, 151.
Սիդոն, 125.
Սլեյա, 3.
Սլիվիցա, 6.
Սիկիլիա. 571, 624.
Սիճագհուն, 231.
Սին, Քուրգիստանի մայրաքաղաք. 133.
Սինդ, 123, 128.
Սիսպնակներ, 427.
Սիս, 410, 495ծ.
Սիսական, նահանգ, 317ծ—318ծ, 491ծ.
Սիսայիվ, գնդապետ, 527.
Սիմրի-Հիսար, 87.
Սիսնիք, տես Սիսական նահանգ.
Սիփան-դաղ, 212, 215ծ.
Սլիվան, 160, 166ծ, 191.
Սլիվանլի, աշիրեթ, 166ծ.
Սկյութաց, 84—85, 90, 293.
Սկոտիա, 49ծ, 474.
Սմբատ, 366ծ.
Մնադրաս, 355,
Սոլիդոս, 490.
Սոզանլուզ, 654, 731, 732, 828, 830.

Սոմխեթիա 397, 411ծ, 734, 758.
Սոսե-բուլաղ, 843.
Սոզդան լիճ, 288.
Սուլեյման ագա, 222—223, 225—226.
Սուլեյման խան Կաջար, 28—29, 33, 38, 40—44.
Սուլեյման, սուլթան, 119ծ.
Սուլթանիյե, 22, 55, 60, 67, 72ծ, 114—115, 229—232, 238, 246—247, 572, 574—575, 577—578, 587, 595—596, 606—608, 613, 851.
Սուխում, 201.
Սուչա, դյուց, 633.
Սուջայի ավերակներ, 780.
Սուսիանա, 462, 494ծ.
Սուրբ Հովհաննես, վանք, 1035.
Սուրբա, 1, 137, 463, 495ծ, 803.
Սուբ-Կուն, 90.
Սուրմալու, 450, 492ծ—493ծ.
Սոքեր, շրջան, 309.
Սոֆենի լեռներ, 187.
Սոֆյան, 227, 300, 381, 421, 434, 556, 650, 782.
Սպանան, 27, 51ծ, 68, 72ծ, 74—75, 80—81, 106, 115, 119ծ, 126—127, 129, 133, 228, 246—247, 300, 368, 370ծ, 431, 446, 491ծ, 493ծ, 553, 602, 673—675, 678, 729ծ, 779, 784—786, 792—793, 795, 855.
Սպանիա, 5—7.
Սվազ, 205, 410.
Սվիզ, 143.
Տահլ, զորավար, 511, 513.
Տավրոս, 241, 244.
Տաճիանավան, 525ծ.
Տաճիան Ծմբնդա, 689.
Տաճիաննոս Կարապետ, 216, 219.
Տաճիանոս Բյուզանդիոս, 441, 490.
Տաոբին կայսրություն, 84, 89.
Տարսոն, 106, 198, 309, 316—317, 353, 441, 552ծ, 686, 708, 802, 840, 846.
Տարաչի, 637, 657.
Տարտվ, 396.
Տևանա լիճ, 23, 255, 315, 330, 341, 355ծ, 409, 543, 758, 761, 765, 840.
Տևանա կղզի, 343.
Տևան, գավառ, 768.
Տև ծով, 91, 141, 198, 241, 243—244, 285, 409, 410, 666, 678—681, 689, 711ծ, 803, 840, 865.

Վ.

Վալաքիա, 6, 679.
Վալդիան, դյուց, 302.
Վախուշտ արքայազն, 729ծ.
Վախտանգ, Բ. արքունիքի, 728ծ 729ծ.
Վահաբիներ, 192.
Վաղարշակ, 490.
Վաղարշապատ, 334ծ, 454, 755.
Վաղարշավան, 366ծ.
Վայոց Ձոր, 492ծ.
Վան, 139, 202, 209—214, 216—222, 225, 231—232, 234, 236—237, 239ծ—240ծ, 265, 274, 840.
Վանա լիճ, 109, 209—211, 214, 215ծ, 234, 237, 239ծ, 840.
Վանանդ, 196ծ, 365ծ.
Վանատուր, 103ծ.
Վանեն, Բալբատունի, 413ծ.
Վան թագավոր, 219.
Վանք, դյուց, 104ծ.
Վասպուրական, 240ծ, 282ծ.
Վարագա վանք. 240ծ.

Վաթաժնունյաց գավառ, 354ծ.
Վարդան պատմիչ, 525ծ.
Վարդան վարդապետ, 104ծ.
Վարդո, 210ծ.
Վարչամա, 618, 621.
Վենետիկ, 677.
Վենեփկ, 317ծ, 318ծ, 787.
Վերջին, 495ծ.
Վերտաման, 573.
Վերտայլ. 97, 115.
Վիեննա, 5, 127.
Վիրահի, կամս, 127.
Վլադիսլավիզ, 657—658. 671—672, 678, 680—682, 692, 696, 762.
Վոլկան, դյուզ, 693.
Վոսկեանք. 263.
Վոսփոր, 6, 194, 217, 546.
Վուրնմրկեզ, 506.
Վրաստան, 11, 13, 16—17, 21—22, 76—77, 100, 105ծ, 127, 130, 132, 193, 240ծ, 293ծ, 297—298, 309, 317ծ, 323, 326, 341, 361—362, 380, 383, 390—391, 410, 411ծ, 428, 471, 495ծ, 500—501, 504, 507, 511, 513, 515—517, 521, 619, 654, 658, 660, 662—664, 678, 682, 685, 690—691, 697, 670, 704, 706—708, 710, 711ծ, 712, 719—722, 727 728ծ, 733, 736—737, 744, 758, 781, 842.

Տ

Տայք, 196ծ.
Տաշիր, գավառ, 334ծ, 525ծ, 758ծ.
Տավառնիկ, 72ծ, 106, 318ծ, 329ծ, 451, 470.
Տավրոսյան լեռներ, 202, 206, 410, 490.
Տարպյան ժայռ, 757.
Տեսին, 172ծ.
Տերմի, 198.
Տիրեռւմ, 638.
Տիգրանակերտ. 493ծ.
Տիգրան, 103ծ, 209, 348, 803.
Տիգրիս, 206, 239, 410.
Տիկոր, 365ծ.
Տիկոր, գետ, 365ծ, 495ծ.
Տիտաբենացի, 197.
Տիտոս Ասլիման, 14.
Տիտրի Ծկալի, գետ, 697.
Տլրոս, 95.
Տոնածառ, 88, 100, 312, 354.
Տուրբա, գետ, 782.
Տուրուբերան, 103ծ, 196ծ, 240ծ.
Տրապիզոն, 50ծ, 94—95, 118ծ, 138, 141, 187, 192, 199—200, 231, 241, 243—245, 285, 295ծ.
Տրդատ, 119ծ, 348.
Տրդատա գահ, 315, 805—806.
Տրեզել, 129.
Տրիպոլիս, 147.
Տրուբեցկոյ, 728ծ.

Ր

Րիզա, խոռմ, 132ծ.

Ց

Ցիցիանով, գենեռալ, 21, 104ծ, 105, 333ծ, 517, 520, 682, 711ծ.

Փ

Փազվան պղու. փաշա, 146ծ.
Փալան Դյոքան, 293ծ.
Փամբակ, 298, 342, 334ծ, 400.
Փամբակ, գետ, 332, 399, 402, 516—517, 734—736, 738—742.
Փառնակես, տես, Կիրառան.
Փաքիզ, 9, 82, 108, 121, 137. 140, 247, 523, 524, 618.
Փարպեցի, Ղազար, 356ծ.
Փարսեղ, ագա, 341—343.
Փենդիկ, 85.
Փերե, 261, 263, 265.
Փեքեալչ, 252, 295ծ.
Փիրզուլի խան, 519.
Փյունիկիա, 125.
Փոքիր, 855
Փոթոսզալիա, 8, 677. 707.
Փոսդիա, 463.

Ք

Քաբուլ, 61.
Քաղի-Քեոյ, 273.
Քամիր-ուռնու, 89.
Քանիր-արքին, 817.
Քալին, 215.
Քամրեկ, 381.
Քամհնաձոր, գետ, 400.
Քայումարս, Քազամոր, 358, 365ծ.
Քայ-գաղի, 85.
Քանաքեռ, 341, 355ծ.
Քանիրեկ, Ուլիրմ, 393.
Քաշան, 851—852.
Քաշմիր, 125, 139, 660.
Քասախ, գետ, 326, 330, 331, 334ծ, 335, 759ծ.
Քաղիմ բեկ, 456, 463—466, 472.
Քարաջա, 292.
Քարիմլլանթա, 708.
Քարիմլի, 728ծ, 729ծ.
Քարինջ, դյուզ, 843—844.
Քարուն, գետ, 494ծ.
Քարվանսարա, 355ծ.
Քարաոջ դյուզ, 671.
Քեղրան, 292.
Քեղի-Մլինար, 305—306.
Քեմալաղա, 118, 120.
Քեչիբ-բեկ, 201.
Քեչ-Քալասի, 302ծ.
Քերիմ Աբդլի, 815.
Քերիմ խան, 127, 311, 357.
Քերման, 248, 660.
Քերմանշահ, 132, 834, 841.
Քեսքյուղ, 484, 843.
Քրրք-բուլաղ, 409, 543, 762.
Քյաղնա, դյուզ, 147.
Քյուլ, աման, 91.
Քյոնել, Ֆ., 294ծ.
Քյատպհանե, 138.
Քյոպրի-Քեոյ, 279, 364, 365, 366ծ, 831, 833.
Քյոսե-զադ, 147, 149, 195.
Քյուլլի, դյուզ, 202, 208.
Քյուլլի-Տատոս, 232, 238, 240ծ.
Քոդլի, 208, 210ծ.
Քոլաքար, 397, 411ծ, 733.
Քոմուլշա, 272.
Քոչասար, 493ծ.
Քոչանի, 240ծ.
Քոս-զադ, 830.
Քոփնուալիա, լերդ, 460.
Քոր-սղլի, 816.
Քուրեք, 484.
Քուքայիա, 855.
Քուլհեյ-Ֆերաթ, 92.
Քուրդիստան, 95, 133, 173, 223—224, 243, 248, 578.
Քուրսուռ, 89.
Քուրքինգե, 265.
Քոփ, կայան, 669.
Քանոփան, 106, 114, 191, 207, 246, 359, 361, 470, 643, 816, 827, 853.
Քանքանա, 446.
Քանիֆլլինոս 490.
Քրիստիոզերբեր, 92.
Քրխմիր, 376, 377, 448.
Քրիստոփայա, լեռ, 698—670.

Ե

Եագ, 201.
Եամի Ալի Շահ, 13—18, 20—22, 28, 31—32, 35ծ, 38, 50, 51ծ, 60, 72ծ, 74, 78, 121, 126—127, 132, 134ծ—137ծ, 137—139, 188, 227, 229, 426, 433, 464, 467, 520, 530, 572, 575—576, 584, 678.
Եամման, 126, 132ծ.
Եամման քաղաք, 198.
Եասան Ալի խան, 305.
Եաղուբյան, 66, 133, 248.
Եեզդ Ալի, 40—41.
Եեզդ-ալլահ փաշա, 216, 217—219.
Եելբուհրան, Բարտեմի, 29ծ.
Եիզիթրա, 196.
Եինպանդիա, 6, 9.
Եինհինչաքի, 116.
Եյրզարաբ, 132ծ.
Եյրզարան, 116.
Եորգաներ, 106.
Եուխիե-Ալի խան, 626.
Երանսիա, 1—2, 4—8, 16, 76—77, 82, 122, 125, 132ծ, 137, 139, 154, 188, 193, 229, 505, 616.
Երիվանի, 380ծ, 395, 398, 408, 411ծ, 412ծ, 758ծ.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	տող	տպված է	պետք է լինի
37	18	Հանովեյի	Հանովեյի
42	12	ոտ	մոտ
101	28	Ժուբեր	Ժոբեր
101	28	Joubert	Jaubert
370	15	քաղիերեն	քազդիերեն
450	20	Համզալլահ	Համզաւլլահ
556	28	Պուզին	Պուզին
575	1	Ե.	Զ.
604	1	ԵՒ.	Է.
622	1	—	Բ.
640	28-րդ տպից	Տեսո գետիզիլ.	Գ. ՅԵՐԵՎԱՆԻՑ ԹԻՖԼԻՍ
677	20	Bobelonia	Babelonia
769	1	[?]	
953	1	ուեանդն	Տեուեանդն
858	35	Ամմեա բեկ, Բայազիդցի,	Ամմոզ բեկ, Բայազիդցի

ՄԵԼՔՈՆԵԱՆ ՅՈՒՆԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ.—Ներքոները և չափերը հնագույն հայ ապրյուրներում . . . . . ապառած
2. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ.—Հայոց լեզվի պատմությունը . . . ապառած
3. Պրոֆ. Հ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայկական արմատական բառարան, Դ. հատոր, 1350 եջ . . . . . .
4. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Հին Յունաստան (նկարազարդ) . . . ապառած
5. ՅԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ.—Դամբանների պեղումները Եղեգիսի Հայաստանում, (բազմաթիվ նկարներով) . . . . . ապառած
6. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայկական Արմատական բառարան, Ե. հատոր 1294 եջ . . . . . .
7. Պրոֆ. ՀՈՎՀ. ՀԱԿՈԲՅԱՆ.—Ուղղագրություններ, Ա. հատոր ԺԹ.—ԺԶ. դար. 510 եջ. (լաթակազմ) . . . . . ապառած
8. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Մխիթար Նալբանդյանի Դիվանը, (լաթակազմ) . . . . . ապառած
9. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ.—Մանր հետազոտություններ 2 ռ. 50 կ.
10. ՍԳ. ՄԵԼԻՔՅԱՆ.—Կոմիտասի ստեղծագործության անալիզը . . . . . 1 ռ. 50 կ.
11. Ճարտ. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ.—Շինանյութերի գործածությունը հին Հայաստանում . . . . . 1 ռ. 50 կ.
12. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայկական Արմատական բառարան, Զ. հատոր, 1626 եջ . . . . . .
13. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ.—Հայոց լեզվի տարաչափությունը (լաթակազմ) . . . . . 12 ռ.
14. Ճարտ. Ն. ԲՈՒՆՅԱԹՅԱՆ.—«Գառնիի հեթանոսական տաճարը», չափագրություններ և լուսանկարներ, (լաթակազմ) . . . . . 23 ռ.
15. Պրոֆ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ.—Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, (լաթակազմ) . . . . . 15 ռ.

16. Պրոֆ. ՀՈՎՀ. ՀԱԿՈԲՅԱՆ. —Ուղեգրություններ. Հ. Առաջ. 1800—1820. 884+VIII եջ. բազմաթիվ նկարներ, քարտեր և գունավոր նկար և կից Անգրկովկասի քարտեզը XIX դարակզբին 20 ռ
17. ՉԱՎԷՆ ԿՈՐԿՈՏՅԱՆ. Մարշրգայբն Հայաստանի ազգաբնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931) 18 ռ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

18. Պրոֆ. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹԵԿ. «Վրաց ազգությունը Հայաստանի և հայերի մասին». Ա. հատոր, Ե. ԺԲ. գար.
19. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ. Հայ պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը.
20. ՍԳ. ՄԵԼԻՔՅԱՆ. Ուրվագիծ հայ յերաժշտության պատմության.
21. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ. Հայերեն Արմատական Բառարանի Համիլմածը:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ա. ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0423348

22159